RAA

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

6

# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ














ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մութաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ժ. Փիփըր (Աախեն), դր. Գ. Գևոնյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Սուրուզյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Զեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաթյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք Զ

# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# NORTHERN ARTSAKH

SAMVEL KARAPETYAN

# СЕВЕРНЫЙ АРЦАХ

САМВЕЛ КАРАПЕТЯН

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ-294

*Խմբագիր*
*բանասիրական գիտ. թեկնածու*
Անուշավան Զաքարյան

Կ-294 Կարապետյան Ս.
**Հյուսիսային Արցախ**
Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատ., 2004, 616 էջ (32-ը՝ գուն.)

Աշխատությունը ներկայացնում է Պատմական Հայաստանի հյուսիսարևելյան հատվածը կազմող Հյուսիսային Արցախի գրեթե բոլոր բնակավայրերի պատմությունն ու պատմական հուշարձանները:
Հասցեագրվում է Պատմական Հայաստանի Արևելից Կողմանց, նրա բնիկների և օտարամուտ ցեղերի ու ժողովուրդների պատմությամբ հետաքրքրվող մասնագետներին, ինչպես նաև հայրենիքի գերյալ հատվածի մասին ճանաչողության պաշարն ու գիտելիքներն ավելացնելու պահանջ զգացող մեր ընթերցասեր հայրենակիցներին:

The present work treats the history and historical monuments of almost all the settlements of Northern Artsakh, constituting the northeastern section of Historical Armenia.
It is addressed to specialists in the history of the Eastern Parts of Historical Armenia, the natives, foreign tribes and peoples as well as all our compatriots longing to increase their knowledge of the occupied part of their homeland.

Կ $\frac{0503020913}{703(02)-2004}$ 2004 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-0566-3

©Սամվել Կարապետյան, 2004
©«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հասարակական կազմակերպություն (RAA)

# ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ

Երախտիքի և շնորհակալության խոսքս եմ փոխանցում տարիների ընթացքում Հյուսիսային Արցախում իրականացրած բազմաթիվ ճամփորդություններին մշտապես աջակցած թանկագին արցախցիներին, Ազգային արխիվի, Ազգային գրադարանի և Գրականության ու արվեստի թանգարանի աշխատակիցներին, բազմաբնույթ նյութերը գիտական պատշաճ մակարդակով մշակելու գործում օժանդակած Էմմա Աբրահամյանին, շուրջ 1350 լուսանկար, քարտեզ, չափագրություն ու գրչանկար պարունակող ծավալուն այս աշխատությունը ձևավորած Արմեն Գևորգյանին, Պարգև Ֆրանկյանին և Մարինե Նազարյանին, ինչպես նաև՝ անհրաժեշտ լուսանկարներ տրամադրած Արտակ Ղուլյանին, Հովհաննես Բաղալյանին, Հովհաննես Զաքարյանին, Հակոբ Սանասարյանին և Ռաֆայել Աբգարյանին, գրքի խմբագիր Անուշավան Զաքարյանին և սրբագրիչ Հասմիկ Հովհաննիսյանին:

Շնորհակալություն եմ հայտնում 2003 թ. «Հյուսիսային Արցախ» նախագիծը գիտական դրամաշնորհի արժանացրած Հայ Օգնության ֆոնդի (ՀՕՖ) «Գիտության և կրթության Հայկական Ազգային հիմնադրամ»-ին:

Երախտագիտությունս եմ հայտնում նաև աշխատության ստեղծմանը սատարած և գիրքը բարձր որակով լույս ընծայած «Զավեն և որդիներ» հրատարակչատանը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ....9
Երկրամասի աշխարհագրական միջավայրը ....9
Երկրամասի պատմական ժամանակագրությունը ....9
Գանձակը՝ Աղվանից կաթողիկոսության նստավայր ....12
Գանձակի փոխանորդություն ....12
*Խաչատուր վրդ.* ....12
*Հարություն (Արտեմ) եպս. Տեր-Բարսեղյան Պողոսյանց* ....12
*Վարդան վրդ. Օձնեցի* ....13
*Սարգիս վրդ. Դավթյանց* ....13
*Կարապետ վրդ. Տեր-Հովհաննիսյանց* ....13
*Գրիգոր վրդ. Մուշեղյանց* ....13
*Հակոբ արք. Տեր-Ավետիսյանց* ....13
*Գրիգորիս վրդ. Տեր-Հակոբյան* ....13
*Գրիգոր վրդ. Տեր-Ստեփանոսյան* 13
*Թադեոս վրդ. Տեր-Դանիելյանց* ...13
*Անանիա վրդ. Համազասպյանց* ...13
*Գրիգորիս վրդ. Տեր-Հակոբյան* ....13
*Գրիգորիս եպս. Աղվանյանց* ....13
*Պողոս վրդ. Տեր-Մարգարյանց* ....13
*Գարեգին արք. Սաթունյան* ....13
*Հովհաննես վրդ. Շիրակունի* ....13
*Բագրատ վրդ. Թավաքալյանց* ....13
*Անանիա եպս. Համազասպյանց* ..14
*Բենիկ վրդ.* ....14
*Սահակ վրդ. Բաղդասարյան* ....14
*Կորյուն վրդ.Սահակյանց* ....14
*Լևոն վրդ. (եպս.) Փսերյան* ....14
Ազգաբնակչություն ....14
*Հայեր* ....14
*Թուրքեր* ....14
*Թուրք-այրումներ* ....16
*Ռուսներ* ....18
*Գերմանացիներ* ....18
Առևտուր ....19
Պատմական հուշարձաններ ....20

ԳԱՆՁԱԿ ....23
*Տեղադրություն* ....23
*Հիմնադրում* ....23
*Գանձակը Ժ-ԺԱ դարերում* ....24
*Գանձակը մինչև ԺԲ դարի 30-ական թվականները* ....25
*Երկրաշարժ* ....25
*Գանձակը երկրաշարժից հետո և մինչև ԺԳ դարը* ....25
*Անվանի գանձակեցիներ* ....26
*Գանձակը ԺԳ դարում* ....26
*Գանձակը ԺԴ-ԺԵ դարերում* ....27
*Գանձակը ԺԶ դարում* ....27
*Գանձակը ԺԷ դարի առաջին կեսին* ....28
*Գանձակը ԺԷ դարի երկրորդ կեսին* ....29
*Գանձակը ԺԸ դարում* ....29
*Գանձակի գրավումը 1804, 1826 թթ.* ....31
Գանձակը ԺԹ դարի երկրորդ կեսին ....31
1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումները ....32
Գանձակը 1918-1920 թթ. ....33
Կառուցապատում ....34
Քիլիսաքյանդ ....35
Չայլու ....35
Բաղմանլար ....35
Նորաշեն ....35
Երևանցոց ....36
Կորյունապատ ....36
Մոլլաջալու ....37
Հայ-Կովալյովկա ....37
Հրապարակներ ....38
Ջրամատակարարում ....38
Հասարարական հաստատություններ ....38
Բաղնիքներ ....38
Հիվանդանոցներ ....39
Թատրոն ....39
Գանձակի աթոռապատկան կալվածները ....39
Քաղաքագլուխներ ....40
Բնակչություն ....41
*Հայեր* ....42
*Թուրքեր* ....43
*Ռուսներ* ....43
*Այլ ազգություններ* ....43
Հայոց դպրոցներ ....43
*Սբ. Հովհաննես եկեղեցու «Մեսրոպյան» արական հոգևոր դպրոց* ...43
*Սբ. Հովհաննես եկեղեցու «Հռիփսիմյան» օրիորդաց դպրոց* ....45
*Գանձակի արական մասնավոր դպրոց* ....45
*Նորաշեն թաղի Սբ. Աստվածածին եկեղեցու արական դպրոց* ....45
*Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական դպրոց* ....46
*Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «Մարիամյան» օրիորդաց ուսումնարան* ....47
*Կորյունապատ թաղի երկսեռ դպրոց* ....47
*Գանձակի հայոց գրագիտական դպրոց* ....47
*Օր. Վարդուհի Տեր-Սահակյանի կար ու ձևի և ձեռագործի ուսումնարան* ....47
*«Ժամհարյան» եղբայրների գյուղատնտեսական դպրոց* ....47
*Գանձակի պետական դպրոցներ* .47
*«Գանձակ» կայարանի դպրոց* ....47
Գանձակի Հայոց եկեղեցիները ....47
*Սբ. Հովհաննես մայր եկեղեցի* ....47
*Սբ. Աստվածածին եկեղեցի* ....51
*Սբ. Գևորգ եկեղեցի* ....52
*Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի* 52
*Գերեզմանատան Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղի* ....56
*Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցի* ....57
*Սբ. Կիրակոս և Յուղիտա ուխտատեղի* ....59
*«Գանձակ» կայարանի աղոթատուն* ....59
*Կորյունապատի Սբ. Սարգիս*

*աղոթատուն*.................................59
Հայոց գերեզմանոցներ..................59
*Հնագիտական հուշարձաններ*.....61
*Գանձակի բերդ*..............................61
*Խոսրով նահատակի մատուռ*.......61
*Մզկիթներ*.........................................63
*Ռուսական եկեղեցի*.......................63
*Կամուրջներ*.....................................63
Հուշակոթողներ..............................63
*Պ. Կոտլյարևսկու հուշարձանը*.....64
*Մարշալ Հովհաննես Բաղրամյանի հուշարձանը*.......................64

ԳԵՏԱԲԵԿԻ ՇՐՋԱՆ....................65
Աթախալ..........................................66
Ալի-Իսմայիլի.................................66
Աղամալի (Ղազանչի)....................66
Ամիրասլանլի.................................66
Այիթալա.........................................66
Առըղդամ.........................................66
Արաբաչի.........................................66
Արիղռան..........................................67
Արիսու............................................68
Բեյդեմիրլի.....................................67
Գետաբեկ (Գետաբակ)................67
Գյարգյառ (Կարկառ)...................79
Գյոդակղերե...................................79
Գորելսկ..........................................79
Գրեմու բազար..............................79
Դաղըմանդաղ.................................79
Դայա-Ղարաբուլաղ......................79
Դարյուրտ.......................................80
Դիքդաշ...........................................80
Դյուզյուրտ......................................81
Ենիքենդ.........................................81
Ենիքենդ (Պապաջան)..................81
Զահմետքենդ................................84
Զամանլի........................................84
Էմիր...............................................84
Էյրիվանք.......................................84
Իներբողան (Կովախեղդ)..............85
Լեշքար...........................................85
Խարխար (Ալեքսեևկա)................85
Կոմինտերն (Մոլլալի)..................85
Կումլու............................................85
Կումլու Աշաղի (Ներքին)..............85
Հաջիալեքպերլի.............................85
Հաջիլար.........................................86
Հեյդարլի.........................................86
Հերիքնազ.......................................86
Ղարաբուլաղ..................................86
Ղարադաղ.......................................86
Ղարամամեդլի...............................86
Ղարավուլտոմբա...........................86
Ղարըքենդ......................................86
Ղոշաբուլաղ (Կորխ).....................86
Ղուռուղերե.....................................88
Մաարիֆ..........................................88
Մեծ Ղարամուրատ........................88
Մորուխլու.......................................98
Մուսայալ.........................................98
Յաղուբլի..........................................98
Նովո-Գորելովկա............................98
Նովո-Իվանովկա.............................98
Նովո-Սարատովկա.........................99
Նովո-Սպասովկա..........................101
Շեքերբեյ (Շաքարբեկ)................102
Շուրաքենդ (Այքենդ)...................102
Շուրաքենդ....................................102
Չալբուռուն...................................102
Չալդաշ (Չալդաղ).......................102
Չայ-Ռասուլլու.............................103
*Չարեք վանք*..............................103
*Չարեք բերդ*...............................118
Չոբանքենդ...................................120
Ջաֆարլի.......................................120
Ռուստամ-Ալիև (Ղարաբուլաղ)...120
Սաբաթ-Քեչմազ..........................120
Սամանլու (Սամանլըղ)...............120
Սարիկյոյնակ...............................121
Սլավյանկա (Վարդանապատ)...121
Սոզութլու......................................122
Սոնալար.......................................123
Փառիսոս (Ղալաքենդ).................123
Փարաքենդ...................................130
Փոլադլու.......................................130
Փոքր Ղարամուրատ....................132
Քեսաման......................................135
Քիլսալի.........................................135
Քյոլաման......................................135
Օրջոնիկիձե (Մրեջուր)...............135
*Տեղադրությամբ անհայտ գյուղեր*
Լուցովկա......................................136
Սարդարի թալա...........................136
Ֆրեզևկա.......................................136

ԴԱՇԿԵՍԱՆԻ ՇՐՋԱՆ..............137
Ալախանչալի................................138
Ալմալու.........................................138
Ահմադլու......................................138
Բանանց........................................138
Գարդման (Գրթմանիկ, Ամրվար)203
Գետամիջ (Գյադամիշ)................205
Գետիշեն.......................................206
Գյոլխլի..........................................207
Դաշկեսան....................................207
Դաստափոր..................................207
Դարդերե.......................................211
Թափան.........................................211
Խաչակապ (Ղուշչի).....................213
*Թարգմանչաց վանք*..................217
Խաչբուլաղ...................................233
Կիրանց.........................................234
Կոբալտ.........................................240
Հարսնաքար (Գալին-գայա).......240
Հարցհանգիստ (Չովդառ)...........240
*Շատախ գյուղատեղի*...............249
Հացտափ (Աստաֆ).....................250
Ղաբաղթափա..............................251
Ղազախլի.......................................252
Ղազախյոլչուլար..........................252
Ղարաքաղլար..............................254
Ղարակուլլար (Բալլուջա)............254
Ղոթյուլ..........................................254
Մուշավախ...................................255
Շահվելեդլի...................................255
Շահումյան....................................255
Չանախչի (Համասարաբակ).......256
Ցնծահալ (Զինզաղալ)................257
Փիր (Զագլիկ)...............................257
Քարհատ (Ներքին).....................268
Քարհատ (Վերին).......................274
Քյոլլու (Գուլլար).........................276

ԹՈՈՒԶԻ ՇՐՋԱՆ......................277
Աբասկուլլար...............................278
Աբդալ...........................................278
Ազապլի........................................278
Ալակյոլ........................................278
Ալիբեյլի........................................278
Ալիմարդանլի..............................279
Ալմալիթալա................................279
Ահմեդաբադ.................................279
Աղաջ-դալա.................................279
Աղբաշլար....................................282
Աղբուլաղ.....................................282
Աղդամ..........................................282
Աղդերե.........................................282
Աշաղի-Այիփլի.............................283
Աշաղի-Ղուշչու............................283
Աշաղի-Մյուլքյուլյու....................283
Աշաղի-Օքսյուզլյու......................283
Աշրալար......................................283
Ասրիկ-Ջրդախան........................283
Արան (Արանդուր).......................284
Բակկալի......................................284
Բայրամլի.....................................284
Բեյուկ-Ղշլաղ..............................284
Բոզալղանլի.................................284
Գազկուլու.....................................284
Գյուվանդիկ..................................285
Դյուզ-Ղըրխլի..............................285
Դյուզ-Ջրդախան..........................285
Դոնդարլի.....................................285
Դոնդար-Ղուշչու..........................285

Եղունբուլաղ ... 285
Թոուզ քաղաք ... 285
Իբրահիմ-Հաջիլի ... 285
Իսաքենդ (Իսախան) ... 285
Լազիլար ... 285
Խաթինլի ... 285
Խննադռան ... 285
Կեջավենդ ... 285
Կովլար (Կովլար-Սարլի) ... 286
ՆասիբլիԿրզեն (Կռզեն) ... 286
Հաթամլար ... 297
Հաթինջան ... 298
Հաջիլար ... 298
Հաջիհասանլի ... 298
Հասանլի ... 298
Ղալաբոյուն ... 298
Ղարաբաղլիլար ... 298
Ղարադաշ ... 298
Ղարիբլի ... 298
Ղոզղերե ... 298
Ղոշա ... 298
Ղռան ... 298
Մեշադիլար (Թոմախլի) ... 299
Մյուլքյուլու ... 299
Մոլլա-Այրում ... 299
Մունջուխլու ... 299
Յանխլի (Խաղխաղ, Խիլխինա) ... 299
Յուխարի-Օքսյուզլյու ... 300
Նամխոշ ... 300
Նասիբլի ... 300
Շամլուղ (Շմեղ) ... 300
Շամլուղ Բալա (Փոքր) ... 300
Շամլուղ Բեյուկ Մեծ) ... 300
Շըխեյբաք ... 300
Չաքախ ... 300
Չեշմալի ... 300
Չոբան-Սղնախ ... 301
Ջիրդեկ ... 301
Սարիբալա ... 301
Սաֆարլի ... 301
Սոֆուլար ... 301
Վայիթլի ... 301
Փալեքլի ... 302
Քյազիմլի ... 302
Քյոխանարի ... 302
Քյոհնադալա ... 302
Քոչդերե ... 302
Օսգյան (Ոսկյան) ... 302

ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ ... 303
Աբլահ ... 304
Ազատ (Սուլուկ, Սուլուք) ... 310
Ազղիլի ... 316
Ալաբաշլի ... 316
Ալի-Բայրամլի ... 317
Ալի-Բայրամլի (Ահմեդբեկլի) ... 317
Ալինջալի ... 317
Ալիուշաղի ... 317
Աղասիբեկլի (Ներքին և Վերին) ... 317
Աղեխուշ ... 317
Աշըղլի (Հատիս) ... 317
Աչադայա ... 318
Բոլչալու ... 318
Բրաջուր (Ղարաքեշիշ) ... 318
Գետաշեն ... 321
*Եղնասարի վանք* ... 354
Դամժալի ... 358
Դանայեր ... 358
Դոզուլար (Բիրզյոզ) ... 359
Ենի-Ալիբայրամլի ... 360
Ջազալի ... 360
Ջիյադլի ... 360
Թաթլի ... 360
Թողանալի ... 360
Թոփալհասանլի ... 361
Թուլալլար ... 362
Լահիճ ... 362
Լյաք ... 362
Խանլար (Հելենենդորֆ) ... 363
Խաչակապ-Արմավիր ... 366
Կամո (Բախշիք, Հաջիշեն) ... 367
Կիյասլի ... 373
Կովլարսարլի ... 373
Հաջալի ... 374
Հաջիշեն (Հաջիքենդ) ... 374
Ղադիլի ... 377
Ղարաբաղլար ... 377
Ղարայերի ... 377
Ղզլջա ... 377
Ղոխլի ... 378
Ղուշկարա ... 378
Մարտունաշեն (Ղարաբուլաղ) ... 378
Միխայլովկա ... 393
Միրզիկ ... 394
Մուռուտ ... 401
Յալղշլաղ ... 406
Նադել ... 406
Ոսկանապատ (Զուռնաբադ) ... 406
Չայլու ... 418
Չոբան-Աբդալի ... 418
Չրաղիձոր (Ճրագիձոր) ... 418
Սարիդամիշ ... 419
Սարիսու ... 419
Սարքյար ... 419
Սաֆար-Ալին (Նաբի-Աղալի) ... 419
Ուչքեփե ... 419
Փաղիլի ... 419
Փանահլար ... 419
Քյուրակ-բասան ... 419
Քոլայիր ... 419
Քոշկ ... 419
Ֆիզուլի (Սուննիլար) ... 420

ԿԱՍՈՒՄ-ԻՍՄԱՅԻԼՈՎԻ (ԳՅՈ-ՐԱՆԻ) ՇՐՋԱՆ ... 421
Ազատ (Արանի-Ազատ) ... 422
Ազար-Ահմեդլի ... 422
Ազիզբեկով (Դալամամեդլի) ... 422
Ալփոուտ ... 422
Ահմեդաբադ ... 422
Աղամալիօղլու (Սաֆիքյուրդ) ... 422
Բալըղայա ... 423
Բախչաքյուրդ ... 423
Բորսունլու ... 423
Գամանլի ... 423
Գյոյնիյան ... 423
Գյորանլի ... 423
Գյուլմամեդլի (Միսկինլի) ... 423
Դալմամեդլի ... 423
Եգարչի-Ղազախլար ... 423
Ելփակ (Յոլփախ) ... 424
Երևանլի (Կարակոյունլի) ... 424
Էյվազալիլար ... 424
Խանքարվենդ ... 424
Խասադարլի ... 424
Խինալի ... 424
Խոյլի (Խոյլար, Ջարկյալար) ... 424
Կասում-Իսմայիլով ... 426
Կարկուջակ ... 426
Կյուրակչայ ... 426
Կուրբանզադե ... 426
Հաջալիլի ... 426
Ղազախլար (Մոլլա-Իսմայիլի) ... 426
Ղազանբուլաղ ... 426
Ղազանչի ... 427
Ղասումբեյլի ... 427
Ղարադաղլու (Խանքենդ) ... 427
Ղարամուսալի ... 429
Ղարասուլեյմանլի ... 430
Ղարասունչու ... 430
Ղարափիրիմլի ... 430
Ղզլհաջիլի ... 430
Ղըրխլի (Միսկինլի) ... 430
Ղուշչուլար ... 430
Մեշադիդարալար (Ջինլու) ... 430
Միխայլովկա ... 430
Մուզուդուլար ... 430
Յոլդուլուլար ... 430
Նադիրքենդ ... 431
Նիզամի (Մոլլա-Ավազլի) ... 431
Շադիլի ... 431
Չելաբերտի (Ջրաբերդ) ... 431
Ջինլի-Բոլուսլու ... 431
Ջինլի-Ջեյնալի ... 431
Ռահիմլի ... 431

Սամեղաբադ (Կարկուջակ).........431
Սարով.........431
Սարով (Թուրք-Սարով).........433
Սաֆիքյուրդ.........433
Տափ.........433
Տափ-Ղարադոյունլու.........433
Քյալաք.........433
Ֆախրալի.........434

ՂԱԶԱԽԻ ՇՐՋԱՆ.........435
Աբասբեյլի.........436
*Գավազան (Գավարզին) բերդ*.........436
Ազիզբեյլի (Հյուսեյնինբեկլի).........438
Ալի-Բայրամլի (Ասլանբեկլի).........438
Ալփոուտ.........438
Աղկյոյնակ.........438
Աղստաֆա.........438
Աշաղի-Ասկիփարա.........438
Աշաղի-Սալահլի.........438
Բալա-Ջաֆարլի.........439
Բաղանիս-Այրում.........439
Բարխուդարլի.........439
Գյոյջալի.........439
Դաղ-Քյասաման.........439
Դաշ-Սալահլի.........439
*Գագա Սբ. Սարգիս վանք*.........440
*Գագ բերդ*.........443
Դեմիրչիլյար.........445
Դեմիրչիլյար.........445
Դյուզղշլաղ (Դյոզխալֆալու).........445
Ենիգյուն.........445
Ենիքենդ.........445
Ջելիմխան.........445
Էյնալի.........445
Թաթլի.........445
Խեյրիմլի.........446
Խիլխինա (Խուլխինա).........446
Կայմաղլի.........446
Ղազախ.........446
Ղազախբեյլի.........449
Ղարահասանլի.........449
Ղարափափախ.........450
Ղզըլ-Հաջիլի.........450
Ղրաղ-Քյասաման.........450
Ղըրխլի.........450
Ղուշչի-Այրում.........450
Մազամլի.........450
Մարքսովկա.........451
Մոլլաջաֆարլի.........451
Մուսաքեյ (Խանումխլար Մեծ).........451
Յարադուլու.........451
Յուխարի-Ասկիփարա.........451
Յուխարի-Սալահլի.........451
Շըխլի-1.........451
Շըխլի-2.........451
Չայլի-Քոսալար.........452
Չայլի-Կոմունա.........452
Ջանալի.........452
Ջաֆարլի.........452
Սոֆուլու.........452
Ուրկմազլի.........452
Փոյլու.........452
Փիրիլի.........452
Քեմերլի.........453
Քեչասկեր.........453
Քելխալաֆլի.........453
Քյոհնաղշլաղ.........453
Քոսալար.........453
Քոլաիր (Քոլագիր).........453
Օմարաղալի.........453
Օրթա-Սալահլի.........453
Ֆարահլի.........454

ՇԱՄԽՈՐԻ ՇՐՋԱՆ.........455
Աբասլի.........456
Աքաբեկ.........456
Ահմեդլի.........456
Աշաղի-Սեյֆալի.........456
Բաղա (Բաղենք, Լղարակ).........457
Բարսում (Բարսումաշեն).........467
Բարսում-սար.........476
Բարում (Նոր, Սարի Բարում).........476
Գառնակեր (Բարումշեն).........476
Գյոյմամեդլի.........485
Գյոլամբար.........485
Դալլյար.........487
Դալլյար-Ջեիր.........487
Դալլյար-Ջրդախան.........487
Դաշբուլաղ.........487
*Հուսկան նահատակ վանք*.........488
Դաշբուլաղ.........491
Դյուհարլի.........491
Ենիաբադ (Բիտտիլի).........492
Ենիհայաղ (Հին Աննենֆելդ).........492
Երրորդ Ինտերնացիոնալ.........492
Էնգելսքենդ (Իրմաշլի).........492
Թազաքենդ.........492
Թաթարլի.........492
Թալիշ.........492
Լեղան.........493
Լենինաբադ.........493
Լենինքենդ (Գեորգիևսկ).........493
Լյազգիլյար.........493
Կասում-Իսմայիլով (Ղարա-Արխ) 493
Կոլխոզքենդ.........493
Կոմսոմոլ.........494
Կոսալար (Մեշաղի-Հուսեյինլի) ..494
Հաջիալիլար.........494
Ձեգամ (Զակամ).........494
Ձեգամ-Ջրդախան.........494
Ղասումալիլար.........495
Ղարաղոջալի.........495
Ղարանույ (Ղարաղոյունլու).........495
Ղարաջամիրլի.........495
Ճլիան.........495
Մահմուդլու (Թաքնալի).........495
Մամեդալիլար (Ղափանլի).........495
Մարտունի (Նովո-Տրոիցկոյե).....496
Մեհրալի.........498
Միսկինլի.........498
Մուխտարիյաթ.........498
Յուխարի-Սեյֆալի.........498
Յուխարի-Քյոնյուլլյու.........498
Նիզամի.........498
Նուկզար.........498
Շամխոր.........504
*Աննենաֆելդ (Աննինո)*.........504
*Մորուլ*.........505
*Շամքոր քաղաքատեղի*.........505
Շեհդլար.........510
Շիշքեփե.........510
Չայլի.........510
Չարդախլու.........510
Չափարլի.........518
Պլանքենդ (Քեչիլի).........518
Պրավդա (Ալաբաշլի).........518
Ջագիր.........519
Սաբիրքենդ.........525
Սալեր.........525
Սամեդ Վուրղուն (Թաքնալի).....525
Սպիտակշեն.........525
Սոսոուտ.........525
Տիկ-Խուլուֆ (Խուլուֆ).........525
Քամանդար.........525
Քյոնյուլլյու.........528
Ֆիզուլի.........528
Օրջոնիկիձե.........528

ԱՐԾՎԱՇԵՆ.........529

ՀՅՈՒՍԻՍԱՐՑԱԽՅԱՆ ՀՈՒՇԵՐ .539

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.........548

ՑԱՆԿԵՐ.........552
*Անձնանուններ*.........552
*Տեղանուններ*.........566
*Գունավոր լուսանկարների*
*ցանկ*.........580
*Բաժանորդների ցանկ*.........582

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ադրբեջանի Հանրապետությունը ստեղծման օրվանից ոչ միայն քաղաքական նկատառումներով յուրացրել է հարևան Իրանի հյուսիսային հատվածում գտնվող Ատրպատական նահանգի անունը, այլև ի սկզբանե ձևավորվել է մեծավ մասամբ Պատմական Հայաստանի հողերի վրա (Կուրի ողջ աջափնյա հատվածը):

Ստալինյան իշխանությունների որդեգրած՝ Հայաստանը Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև մասնատելով տարրալուծելու ծրագիրը, ճիշտ է, ամբողջությամբ կյանքի չկոչվեց, սակայն, այնուամենայնիվ, Պատմական Հայաստանի հայահոծ մի շարք երկրամասեր՝ Նախիջևանը, Լեռնային և Դաշտային Ղարաբաղն ու Հյուսիսային Արցախը, բռնակցվեցին «եղբայրական» Ադրբեջանին, իսկ Ջավախքն ու Գուգարքի մի շարք գավառները՝ Վրաստանին:

Արհեստականորեն մայր հայրենիքից կտրված և Ադրբեջանի տիրապետության ներքո հայտնված արցախահայությունը, կրելով տեղի իշխանությունների վարած մոլի ազգայնական, հակահայկական քաղաքականության ազդեցությունը, զուրկ ազգային կրթական և հոգևոր արժեքներից, տասնամյակների ընթացքում հայտնվեց ծանր կացության մեջ:

Երկրի խորք զավակների կարգավիճակ ունեցող հայաբնակ գյուղերը քայքայվեցին նաև տնտեսապես, և 1988 թ. բռնագաղթի նախօրեին լքված և միայնակ մնացած արցախահայերի հյուսիսային հատվածն անզոր գտնվեց պայքարել հարազատ բնօրրանում հարատևելու համար: Արդյունքում՝ հազարամյակներ հայաբնակ երկրամասում պատմության մեջ առաջին անգամ մարեց հայ կյանքը: Որբացան հայ մշակույթի անքակտելի մաս կազմող մեծաթիվ ու բազմաբնույթ պատմական հուշարձանները:

Սույն աշխատությունը ստեղծվել է Հյուսիսային Արցախի հարյուրավոր բնակավայրերի պատմությունն ու արդեն իսկ մասամբ ջարդարարության զոհ դարձած մշակութային արժեքները մոռացումի փրկելու և սերունդներին ավանդելու մտահոգությամբ:

Հարկ է նշել, որ սույն աշխատության մեջ զանց է առնված ըստ էության Հյուսիսային Արցախի մաս կազմող ներկայիս ԼՂՀ Շահումյանի վարչական շրջանը (1992 թ-ից հայաթափ և բռնազավթված), որը ԼՂՀ մյուս շրջանների հետ մեկտեղ նախատեսել ենք ներկայացնել հաջորդիվ:

# ՆԱԽԱԲԱՆ

**Երկրամասի աշխարհագրական միջավայրը.** Հյուսիսային Արցախը Սևանի ու Մռավի ջրբաժան լեռնաշղթաների և Կուր գետի միջակայքում ընկած երկրամասի, ըստ էության, պայմանականորեն տրված անվանումն է:

Վաղ միջնադարում տարածաշրջանը ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից մի քանի գավառներ, ինչպես, օրինակ, Կողթ, Քուստ-ի-Փառնես, Գարդման, Շակաշեն և այլն: Միջնադարում տարածքն ավելի հայտնի էր Գարդման անունով, իսկ ուշ միջնադարում կազմում էր Գանձակի (Գյանջայի) խանությունը: Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո հայտնի էր Ելիզավետպոլի նահանգ անվամբ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո երկրամասը միացվեց Ադրբեջանի Հանրապետությանը և տրոհվեց վարչական մի քանի շրջանների մեջ: Դրանք են՝ Գետաբեկի, Դաշկեսանի, Թոուզի, Խանլարի, Կասում-Իսմայիլովի (Գյոքչայի), Ղազախի, Շամխորի և ներկայիս ԼՂՀ մաս կազմող, սակայն Ադրբեջանի կողմից բռնազավթված՝ Շահումյանի շրջանները:

Երկրամասն իր մեջ ներառում է Սևանի և Մռավի լեռնաշղթաներից սկիզբ առնող և աջ կողմից Կուր գետի հետ միախառնվող՝ Ասրիկ, Զակամ, Շամքոր, Արթինաջուր (Կոշկար), Գանձակ, Կուրակ և Սևջուր գետերի ջրհավաք ավազանները, ինչպես նաև Զողաս, Աղստև և Տավուշ գետերի ստորին հոսանքի շրջանները:

**Երկրամասի պատմական ժամանակագրությունը.** Պայմանականորեն Հյուսիսային Արցախ կոչված երկրամասն ըստ «Աշխարհացոյց»-ի՝ ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից 3-ական գավառներ. Արցախից՝ Քուստ-ի-Փառնես, Կողթ և Մեծ Կողմանք, իսկ Ուտիքից՝ Տուս-Քուստակ, Գարդման և Շակաշեն:

Մթա Ը-Է դարերում նշված տարածքը մտել է Վանի (Արարատյան) թագավորության կազմի մեջ, իսկ մթա Զ դարում՝ Երվանդունիների թագավորության կազմում:

Ի դարի սկզբին Բանանց գյուղի մոտ հայտնաբերվել է սեպագիր արձանագրություն, որը Հայկական Լեռնաշխարհում եղածների մեջ ամենից հյուսիսարևելյանն է:

Արտաշես Ա-ի և նրա ժամանակակցի՝ Ծոփքի թագավոր Զարեհի մասին հույն աշխարհագետ Ստրաբոնը հաղորդում է, որ նրանց ժամանակներում իրենց երկրների բնակչությունը միալեզու էր, այսինքն՝ խոսում էին միայն հայերեն: Սրանից հետևում է, որ Մեծ Հայքի հյուսիսարևելյան շրջանների, այսինքն՝ Արցախ-Ուտիքի բնակչությունը իրենց մասնակցությունն են բերել հայ ժողովրդի կազմավորման ընթացքին և դարձել նրա անքակտելի մասը: Ինչպես Արտաշեսյանների, այնպես էլ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում Արցախն ու Ուտիքը կազմում էին Մեծ Հայքի անբաժանելի ու հիմնական մասերը: Իբրև Հայաստանը կազմող մասեր-նահանգներ՝ վերջիններս հիշատակվում են Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի, Ստեփանոս Բյուզանդացու և այլոց երկերում: Այս ու բազմաթիվ այլ հեղինակներ նշում են, որ Հայաստանի սահմանը հյուսիսարևելքում անցնում էր Կուր գետով:

428 թ. Սասանյանները, որոնք նվաճել էին ամբողջ Այսրկովկասը, ստեղծում են երեք մարզպանություն. Արմինիա, Իվերիա և Ալբանիա (Առան): Մինչև 451 թ. Ալբանիա մարզպանության կազմի մեջ մտցվեցին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Վարչական այս փոփոխությունները, սակայն, չխաթարեցին նշված երկրամասերի բնակչության ազգային կազմն ու պատկերը:

Ե դարի վերջում Արցախ-Ուտիքի հայ բնակչությունը ձեռք է բերում ժամանակավոր անկախություն: Արցախի Վաչագան իշխանը Սասանյան Վաղարշ թագավորից ստանում է Աղվանքի (Ալբանիա) թագավորի (առանշահիկ) տիտղոսը: Վաչագան Առանշահիկը վերանորոգում է քրիստոնեական հավատը, բաց է անում բազմաթիվ հայկական նոր դպրոցներ:

Է դարում Աղվանքում կազմավորվում է Աղվանից իշխանությունը, որի ներկայացուցիչները Գարդմանացի կամ Միհրանյաններ կոչվածներն էին: Իշխանության կենտրոնը Պարտավ քաղաքն էր:

Արաբների երևալուն պես Արցախ-Ուտիքի հայ բնակչությունը Առանշահիկների և Միհրանյանների գլխավորությամբ անհավասար, սակայն համառ պայքար է ծավալում նվաճողների դեմ:

Ը դարի ընթացքում արաբների գերակշիռ ուժերի ճնշման ներքո երկրամասի բնակչությունը ստիպված է լինում հարթավայրային շրջաններից քաշվել դեպի նախալեռնային ու բարձրլեռնային գոտիները, որտեղ տեղանքը պաշտպանություն կազմակերպելու առումով առավել հուսալի էր:

Թ դարում բնիկներն ուժեղացնում են պայքարը արաբական տիրապետության դեմ: Նշանակալի էին Արցախ-Ուտիքի իշխաններ Կտրիճ Սևորդացու և Ատրներսեհ Առանշահիկի գործողությունները. արաբ զորավար Բուղան վերջիններիս գերելով ուղարկում է խալիֆին: Այնուամենայնիվ, 887 թ. Արցախ-Ուտիքի հիմնական մասերը, ներառյալ Գանձակ և Պարտավ քաղաքները, ազատվում են արաբների տիրապետությունից և մաս կազմում Հայաստանի Բագրատունյաց թագավորության:

Ավատատիրական մասնատվածության շրջանում երկրամասի տարածքում առաջանում են Փառիսոսի և Գարդմանի հայկական իշխանությունները:

970-ական թվականներին Առանշահիկ Հովհաննես-Սենեքերիմը Փառիսոսը վերածում է թագավորության: Վերջինս ճանաչում են Բյուզանդիան և Պարսկաստանը: Փառիսոսի թագավորությունն իր մեջ ամփոփում էր երկրամասի գրեթե բոլոր նախալեռնային և լեռնային շրջանները: Մերձկուրյան հարթավայրային շրջանների մի մասը, որոնք արդեն հիմնականում պարպվել էին հայ բնակչությունից և զբաղեցվել վաչկատուն զանազան ցեղերով, դուրս են մնում թագավորության կազմից:

ԺԱ դարում Փառիսոսի թագավորության տարածքը կիսվում է Հայ Բագրատունիների և Գանձակին տիրացած քրդական Շեդդադյան հարստության ներկայացուցիչների՝ էմիրների միջև: Վերջիններս գրավում են երկրամասի հարթավայրային շրջանների հիմնական մասերը՝ Գանձակ և Շամքոր քաղաքներով հանդերձ:

Փառիսոսն ու Գարդմանը ԺԱ դարում ենթարկվում են սելջուկյան ասպատակություններին, սակայն մինչև ԺԲ դարի սկիզբը շարունակում են մնալ Կյուրիկյան Բագրատունիների հայոց թագավորության կազմում: Այնուհետև դրանք մտնում են Այսրկովկասում սելջուկյան իշխանությունների դեմ պայքարող Վրաց Բագրատունիների (Դավիթ Շինարարի օրոք) թագավորության կազմի մեջ: Նշված ժամանակաշրջանում երկրամասի հայ բնակչությունը ստիպված է լինում էլ ավելի քաշվել դեպի հարավ՝ լեռնային գոտին: Կյուրիկյանների վերջին ներկայացուցիչները իշխում էին Կայեն և Մածնաբերդ ամրակուռ ամրոցներին ու շրջակա գավառներին:

ԺԲ դարի վերջում Զաքարյան իշխաններն ազատագրում են Արցախ-Ուտիք երկրամասը սելջուկներից: Դրա հյուսիսարևելյան հատվածում սկսում են իշխել Զաքարյանների մի ճյուղի ներկայացուցիչները՝ Վահրամյանները:

Վահրամյանների իշխանությունը հարավում ընդգրկում էր ողջ լեռնային գոտին՝ սահման ունենալով Սևանի և Մռավի ջրբաժան լեռնաշղթաները, իսկ հյուսիսում հասնում էր Կուր գետին՝ ներառելով Շամքոր քաղաքը:

Սակայն օտարամուտ ցեղերը չեն հեռանում երկրամասի բարեբեր հարթավայրերից, իսկ հայերն էլ չեն համարձակվում վերադառնալ իրենց պապերի լքած բնակավայրերը. որոշ չափով միայն ավելի հայաշատ են դառնում հարթավայրային գոտում գտնվող քաղաքները:

ԺԱ-ԺԳ դարերում Հայաստանի մյուս մասերի նման Արցախ-Ուտիքում ևս հայ մշակույթը վերածնունդ էր ապրում: Վերաշինվում են քաղաքները, կառուցվում են նոր բերդեր, վանքեր, եկեղեցիներ, նորոգվում են հները (դրանցից շատերը հասել են մեր օրերը): Այդ ժամանակաշրջանում երկրամասում ծնվել և ստեղծագործել են հայ մշակույթի և գիտության կարկառուն այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հովհաննես Սարկավագը, Մխիթար Գոշը, Վանական վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և այլք: Մխիթար Գոշի ջանքերով Շամքոր գետի ափին գտնվող Դասնո անապատում 1184 թ. ստեղծվում է հայոց առաջին Դատաստանագիրքը:

Բնական աղետներից կործանարար է լինում 1139 թ. երկրաշարժը: Այն խլում է տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր:

ԺԳ դարում Այսրկովկասը նվաճում են թաթարմոնղոլները, որոնք քոչվոր ցեղերի նոր խմբերի համար ճանապարհ են բացում դեպի Հայաստան:

ԺԴ-ԺԵ դարերում, ներխուժելով երկրամաս, իրենց ավերիչ գործունեությամբ մեկը մյուսին գերազանցում են Ջալալի, Չոբանյան, Ակ-կոյունլու, Կարա-կոյունլու և այլ ցեղերը:

ԺԶ դարում ողջ Արևելյան Հայաստանին տիրում էր Սեֆյան Պարսկաստանը: Շահերը հովանավորում էին թյուրքական և քրդական ցեղերին ու իրենց քաղաքականությամբ նպաստում զավթված տարածքներում նրանց մշտապես բնակեցնելուն: Այդ քաղաքականության արդյունքը եղավ վերջիններիս գերակշռությունը մերձկուրյան հարթավայրային շրջաններում: Հայ բնակչության համար վտանգ էր ներկայացնում նաև Սեֆյանների կողմից տարվող բռնի մահմեդականացման քաղաքականությունը, որը, սակայն, առանձին փոփոխություններ չկարողացավ մտցնել լեռնային և նախալեռնային գոտու հայ բնակչության շրջանում:

Նշված ժամանակաշրջանում հայ մշակույթը, բնականաբար, չէր կարող մնալ նախկին բարձր մակարդակի վրա: Սակայն այդպիսի ծանր պայմաններում անգամ ժողովուրդը շարունակում է պահպանել, զարգացնել ու սերունդներին փոխանցել իր ձեռքբերումները:

ԺԶ-ԺԷ դարերում երկրամասի տարածքի հիմնական մասն արդեն ընդգրկվել էր Գանձակի պարսից խանության սահմանների մեջ: Այս շրջանում օսմանցիները երկրամասը գրավելու մի քանի փորձ են անում: ԺԶ դարավերջին նրանց հաջողվում է հասնել նույնիսկ Կասպից ծովի ափերը: Սակայն ԺԷ դարի սկզբին պարսից Շահ-Աբասը, մեծ ուժերի կենտրոնացումով ու նաև տեղի հայերի աջակցությամբ (որոնք, համադրելով թուրք և պարսիկ իշխանությունների վերաբերմունքն իրենց նկատմամբ, գերադասում էին վերջինների տիրապետությունը), կարողանում է թուրքերին դուրս մղել ոչ միայն Գանձակի, այլև շուրջ երկու տասնամյակ առաջ գրավված պարսկական բոլոր նախկին խանությունների տարածքից: Այլ խոսքով՝ պարսիկներին հաջողվում է վերատիրել ողջ Արևելյան Հայաստանին:

1639 թ. Կոստանդնուպոլսում Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված պայմանագրին հաջորդած խաղաղ մի քանի տասնամյակները երկրամասի հայ բնակչության համար քաղաքական և մշակութային, լայն առումով՝ ազգային զարթոնքի ազդակ են հանդիսանում: Իշխանական հին տների, ճնշված ու թուլացած որոշ շառավիղների ներկայացուցիչներ, ամրապնդվելով ու վերակենդանանալով, սկսում են կարգի բերել ու միավորել իրենց ուժերը, շահական հրովարտակներով ամրագրել իրենց պատկանող տիրույթների սահմանները: Այսպես, առաջիններից մեկը, որ դեռևս 1601 թ. Շահ-Աբասից ստացել էր մելիքության իրավունք՝ Ոսկանապատի Մելիք-Նազարն էր: Հեռատես ու քաղաքականապես հասուն այս անձը հիմք դրեց կիսանկախ մի իշխանության (մելիքության): Այնուհետև հայկական մելիքություններ առաջացան Շամքոր գետի միջին ավազանում՝ կենտրոն ունենալով Բարսում գյուղը: Այստեղ նստում էին Մելիք-Առուստամյանները: Կուրակ (Քյուրակ) գետի միջին ու վերին ավազանի շրջանում ստեղծվեց Գետաշենի Մելիք-Մնացականյանների մելիքությունը: Ծնունդ էին առել նաև հայկական ավելի թույլ մելիքություններ, որոնց տերերը իշխում էին 1-3 գյուղերի: Դրանցից էին Կրզենի, Բաղայի (Ղարակ), Հարցհանգիստի (Չովդառ) և Բանանցի մելիքությունները: Անհամեմատ հզոր ու ընդարձակ էր Գյուլիստանի կամ Թալիշի մելիքությունը, որը մտնում էր Արցախի Խամսայի մելիքության մեջ:

Հյուսիսարցախյան փոքրիկ մելիքությունները, որոնցից յուրաքանչյուրի տիրույթներում կային մինչև 5 և ավելի գյուղեր, վայելում էին ներքին ինքնավարություն, կախում ունեին միայն Գանձակի խաներից: Տեղին է նշել, որ ԺԷ դարում և մինչև ԺԸ դարի 70-ական թվականների վերջերը հայաբնակ էր երկրամասի ոչ միայն նախալեռնային (ինչպես հիմնականում մինչև 1988-89 թվականներին էր), այլև՝ լեռնային ողջ գոտին: Այլ կերպ ասած՝ հայաբնակ գյուղերի խիտ ու ապահով ցանցով ամրապնդված էր նաև մելիքությունների թիկունքը:

*ԺԸ դարի մեծ արտագաղթը.* Նադիր շահի մահից հետո երկրամասում ստեղծվել էր քաղաքական աննախադեպ անկայուն իրավիճակ: Հարևան խանությունների կամ պետությունների հետ մերթ դաշինքի, մերթ պատերազմների մեջ գտնվող Գանձակի խանությունը ծանր բեռ էր դարձել բնակչության համար: Ռազմական անօրինակ ծախսերի համար խաներն անընդհատ ավելացնում էին բնակչության վրա դրված հարկերը: Դրանք ոչ միայն գանձվում էին անկանոն ու կամայական, այլև հաճախ վերածվում էին բացահայտ թալանի: Հարկաբեռն իր ողջ ծանրությամբ նախ և առաջ ընկել էր Գանձակի խանության հայ բնակչության վրա: Մահմեդական իշխողները հայերին ապօրինի հարկերով կեղեքում էին ոչ միայն այն բանի համար, որ քրիստոնյաներին համարում էին անհավատներ (գյավուր), այլ, որ հայերը մշտաբնակ էին և, ըստ այդմ, արտադրում էին հողագործական ու այգեգործական մթերքներ: Մինչդեռ խանության սահմաններում բնակվող մահմեդական տարրը (գլխավորապես՝ թուրք) վարում էր քոչվոր կյանք և, անընդհատ շարժման մեջ գտնվելով, լավագույն դեպքում հարկվում էր անասնամթերքով:

Գանձակի խանության համար ԺԸ դարի 2-րդ կեսը նշանավորվում է հատկապես նրանով, որ խանն արդեն ասպատակում էր իր տարածքը, որով և հայ բնակչությունը հայտնվել էր անելանելի վիճակում: Հայերը ճարահատ մինչև իսկ դադարեցրել էին վարուցանքը, քանի որ հարկվում էր տարվա ողջ բերքը կամ, ավելի ճիշտ, այն ամբողջությամբ պարզապես թալանվում էր. «...երբ խաները հայերի նկատմամբ տածած *հատուկ սիրուց* սկսեցին նրանցից անսահմանափակ քանակությամբ *մալջաղաք* պահանջել, ապա հայերը, համոզվելով, որ բերքը իշխանավորի սուր աչքից չեն կարող թաքցնել, զանազան պատճառաբանություններով հրաժարվեցին վարուցանքից...: Խաների օրոք ...նրանց (հայերի - Ս. Կ.) ...ողջ կարողությունն իրենց էր պատկանում այնքան ժամանակ, քանի դեռ ուղղահավատի մտքով չէր անցել խլել և դա չէր համարվում անարդար, քանի որ և՛ ինքը՝ գյավուրը, ուղղահավատի սեփականությունն էր համարվում...»[1]:

1. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, "Кавказ", 1865, N 95, с. 512-522 (բնագրում՝ "...когда ханы из *особой любви* к армянам стали требовать с них *малджагат* в беспредельных размерах, то армяне, под разными предлогами начали оставлять хлебопашество, убедившись, что урожая не могут скрывать от зоркаго глаза своих повелителей... При ханах армяне не могли расчитывать на видимую собственность: все их видимое достояние было до тех пор их собственностью, пока правоверный не вздумал отнять; и это не считалось несправедливостью, потому что и сам гяур считался собственностью правовернаго...").

Հայերը ոչ միայն նյութապես ու տնտեսապես էին թալանվում, այլև (իբրև հարկ) նրանցից խլում էին մանկահասակ երեխաներին. «Դրամը հավաքում էին տարեկան երկու անգամ, բայրամի ժամանակ, իսկ 21 հայկական գյուղերը, թեկուզ ցույց չի տրված, թե ինչքան են տվել, բայց խանը վերցնում էր անսահմանափակ, առավելապես որպես թալան: Հարուստ գյուղերից անասուններ վերցնում էր ավելի շատ, հայերից նաև հարկերի թվում վերցնում էր արական և իգական սեռի մանկահասակ երեխաների»[2]:

Պակասը լրացնում էին ժամանակ առ ժամանակ Վրաստանից, Դաղստանից կամ հարևան խանություններից կատարվող ավարառուական արշավանքները:

Չղիմանալով ծայրահեղ դժնդակ պայմաններին՝ 1770-ական թվականներից Գանձակի գավառի՝ առավելապես արևելյան ու հարավարևելյան հայաբնակ հոծ հատվածի տասնյակ գյուղերից ծայր է առնում բնակչության զանգվածային արտագաղթ գլխավորապես դեպի հարևան Շամշադին (Շամշադիլ) և Բորչալու գավառները: Ի դեպ, սրանք էլ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ էին հայաթափ եղել (հատկապես լեզգիների արշավանքների հետևանքով), պատված էին բազում գյուղատեղիների ցանցով, որտեղ էլ հանգրվան են գտնում Գանձակի խանության սահմանները լքած հայերը: Գաղթականների մի մասն էլ՝ Շամքոր, Գանձակ քաղաքներից ու մերձակա գյուղերից, հիմնավորվում են Հավլաբար գյուղում (հետագայում Տփղիսի շրջագծի մեջ)[3] և Քարթլ-Կախեթի տասնյակ այլ գյուղերում, ինչպես, օրինակ, Լիս, Մուխրան, Ախալքալաք և այլն:

Երկրամասի հայաթափ շրջանները հետագայում բնակեցվում են թյուրքական ծագմամբ՝ ղաջար, զուլքադար և այրում ցեղերով:

Ուշագրավ է 1770-ական թվականների գաղթականների սերնդից սերված հայտնի բանահավաք Սարգիս Քամալյանի՝ 1890 թ. պապերի հայրենիք կատարած այցի մասին հուշագրության մեջ գրի առած այս դրվագը. «...Ծատուրը (Ս. Քամալյանի ուղեկիցը - Ս. Կ.) նորից նզովելով իրա անշնորք պապերին, խնդրեց ինձ շտապել, որ կարողանանք գիշերելու տեղ գտնել, այրումների մոտ մնալու հնար չկար: Մեր նախնիների հողի ու ջրի մոտ օթևան չկար *Ղարամուրադի* ներքևից գետի ձախ կողմով վարելահողերի, տափերի միջով անցանք, հանդիպեցինք նորից մրգատու ծառերի՝ թթան, կեռասի, կակալի, սերկևլի, տանձի, խնձորի, մեծ մասով ծերությունից չորուռացած, կայծակնահար եղած, մի մասով էլ այրում հովիվներից ճղակոտոր արած»[4]:

**Գանձակը՝ Աղվանից կաթողիկոսության նստավայր.** Աղվանից հայրապետների համար Գանձակը եղել է կաթողիկոսության կարևոր նստավայրերից մեկը: Հայտնի է, որ հայրապետական աթոռը Գանձակ է փոխադրվել Պարտավ քաղաքից. «...ի զօրանալն Պարսից փոխեցաւ աթոռ հայրապետութեանն (կաթողիկոսանիստը - Ս. Կ.) ի Գանձակ...»[5]:

1088 թ. Բուղա զորապետի կողմից Գանձակը գրավելու դեպքերի առնչությամբ հիշվում է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը, որը ստիպված հեռացել էր Գանձակից և ապաստան գտել Սյունիքում՝ Վահանավանքում[6]:

1103-1104 թթ. Գանձակում կաթողիկոս է ձեռնադրվում Ստեփանոսի եղբայրը:

1195 թ. Գանձակում տեղի է ունենում Աղվանից Հովհաննես կաթողիկոսի (1195-1235) ձեռնադրությունը. «Եւ առեալ բերին զնա ի քաղաքն Գանձակ առ իշխող քաղաքին, որում անունն էր ամիր Օմար, և աղաչէին զան, զի հրաման տացէ ձեռնադրել զնա կաթողիկոս»[7]:

**Գանձակի փոխանորդությունը**

*Խաչատուր վարդապետ.* փոխանորդ է հիշվում 1822 թ.[8]:

*Հարություն (Արտեմ) եպիսկոպոս Տեր-Բարսեղյան Պողոսյանց.* փոխանորդ է եղել 1838-1841

2. “Акты, собранные Кавказскою археологическою коммиссиею” (այսուհետև՝ “Акты...”), т. II, Тифлис, 1868, с. 596 (բնագրում՝ “Деньги собирались в два срока годоваго времени, когда бывает байрам; а с 21 Армянской деревни, хотя и не означено сколько давали, но хан брал неограниченно, а более грабежем. Касательно до скота, то брато им с богатых деревень больше; также брали в числе подати Армянских мужескаго и женскаго пола малолетних детей...”).

3. Ի դեպ, ներկայիս Թբիլիսիի թաղամասերից մեկը հանդիսացող Հավլաբարում իրարից ոչ հեռու կառուցվել էին Շամքորեցոց Սբ. Աստվածածին (Կարմիր ավետարան) և Գանձակեցոց Սբ. Գևորգ (Ջորաբաշ) եկեղեցիները: Հատկանշական է, որ, ինչպես նշել է Չարեք վանքի առաջնորդ Աստվածատուր վարդապետը, գաղթից շուրջ մեկ դար անց էլ ծագումով շամքորեցի հավլաբարաբնակ ծերունիները զանազան պատմություններ ու ավանդություններ էին պատմում իրենց ծննդավայրի մասին. «Հայաստանի Գարդման գաւառի մէջ հին ժամանակ եղել են բազմաթիւ վանքեր ծաղկեալ դրութեամբ, այսօր արդէն նոցա աւերակ դարձած յիշատակներն կմնան մեզ համար և ճանապարհորդների սիրտը կշարժեն: Միայն Չարեքայ անապատը տոկալով շատ անգամ կրկնող յափշտակասէր բարբարոս ժողովրդի ձեռի առջև, կշարունակէ իւր գոյութիւնը: Այս վանքի մասին գեղեցիկ աւանդական պատմութիւններ կանեն Թիֆլիս քաղաքի Շամքոր թաղի ծերունիները, թէ ինչպէս շատ տարիներ առաջ այն բուռն ժողովուրդը հալածված ու յափշտակված օտարների բարբարոսութենից թողել են վանքը և իւրեանց գիւղերն անտէրունչ և գաղթել դէպի Թիֆլիս և ուրիշ կողմերն...» («Արարատ», 1879, էջ 320):

4. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր N 1, VI-11, թ. 32-33:

5. **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 248:

6. Նույն տեղում, էջ 254:

7. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 181:

8. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 26-27:

թվականներին: Ծնվել է 1796 թ.: 1836 թ. վերականգնել է Սանահինի վանքը: Եկեղեցի եմապոլի փոխանորդական պաշտոնը թողնելուց հետո՝ 1842-1844 թթ., եղել է Շաքվա թեմի և Ճալեք վանքի առաջնորդը[9]:

*Վարդան վարդապետ Օձնեցի.* փոխանորդ է հիշվում 1845 թ.[10]:

*Սարգիս վարդապետ Դավթյանց.* փոխանորդ է եղել 1849-1854 թվականներին[11]. «Ըստ հրամանի վեհափառ կաթուղիկոսի ամենայն հայոց տռն. Ներսիսի եղեալ է յաջորդ Եկեղեցի եմապոլու գաւառի ի 29-ն օգոստոսի 1849 ամի ց1854 ամն»: Հետագայում վարել է Չարեք վանքի վանահոր պաշտոնը[12]:

1856 թ. Եկեղեցի եմապոլի հաջորդությունը վերակազմավորման ընթացքում էր[13]:

*Կարապետ վարդապետ Տեր-Հովհաննիսյանց.* փոխանորդ է հիշվում 1858 թ.[14]: 1860 թ. արդեն վախճանված էր[15]:

*Գրիգոր վարդապետ Մուշեղյանց.* փոխանորդ է հիշվում 1860[16], 1861[17], 1862[18], 1863[19], 1864 թթ.[20]: Դրական դեր է խաղացել 1862 թ. Գանձակում Սբ. Հովհաննես եկեղեցու ծխական դպրոցի բացման գործում[21]:

*Հակոբ արքեպիսկոպոս Տեր-Ավետիսյանց.* փոխանորդ է եղել 1865-1867 թվականներին[22]:

*Գրիգորիս վարդապետ Տեր-Հակոբյանց.* առաջնորդական փոխանորդի պաշտոնը վարել է խիստ կարճ ժամանակահատված՝ 1868 թ. մայիսի 1-ից 13-ը[23]: Փոխանորդի պաշտոնը կրկին ստանձնել է 1887-1889 թթ.:

*Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանոսյան. (անվազն՝ 1870-1874 թթ.).* առաջնորդական պաշտոնում հիշվում է 1870-ից[24]: Նրա անունը նշված է 1871 թ. քաղաքում բռնկված համաճարակի դեմ պայքար ծավալած անձանց շարքում[25]: Հիշվում է նաև 1872, 1874[26] թթ.:

*Թադեոս վարդապետ Տեր-Դանիելյանց (անվազն՝ 1877-1882 թթ.).* փոխանորդի պաշտոնում հիշվում է 1877[27], 1878[28], 1880-1881 թթ.[29]: 1882 թ. եղել է եպիսկոպոս[30]:

*Անանիա վարդապետ Համազասպյանց (1883-1885 թթ.).* առաջնորդական պաշտոնում հիշվում է 1883 թ. Գետաշենի նորակառույց եկեղեցին օծելու կապակցությամբ (նոյեմբերի 23-ին)[31]: Հիշվում է նաև 1885 թ.[32]:

*Գրիգորիս վարդապետ Տեր-Հակոբյան (1869, 1887-1889 թթ.).* տարիների ընդմիջումից հետո առաջնորդական փոխանորդի պաշտոնը կրկին ստանձնել է 1887 թ. հունիսի 9-ից մինչև 1889 թ. սեպտեմբերի 14-ը[33]: Վախճանվել է 1912 թ. հունիսի 7-ին[34]:

*Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանց.* առաջնորդական փոխանորդ է հիշվում 1890-1891 թթ.[35]:

*Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանց.* առաջնորդական փոխանորդ է նշանակվել 1892 թ.[36]: Հիշվում է 1893-1894 թթ.[37]: Վախճանվել է 1896 թ. նոյեմբերի 2-ին:

*Գարեգին արք. Սաթունյան.* առաջնորդական փոխանորդի պաշտոնը վարել է 1894-1895 թթ. (այնուհետև՝ Արցախի թեմակալ): Այդ տարիներին Գետաշենի դպրոցի շենքի շինարարական աշխատանքներն ավարտելու նպատակով կազմակերպել էր դրամահավաք[38]:

*Հովհաննես վարդապետ Շիրակունի.* առաջնորդական փոխանորդ է հիշվում 1895 թ.[39]:

*Բագրատ վարդապետ Թավաքալյանց.* առաջնորդական փոխանորդ է հիշվում 1896[40], 1897[41], 1898 թթ.[42]:

---

9. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 12, գ. 533:
10. "Кавказский календарь на 1846 г.", Тифлис, 1845, с. 192.
11. "Кавказский календарь на 1851 г.", Тифлис, 1850, с. 40. "Кавказский календарь на 1853 г.", Тифлис, 1852, с. 543.
12. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 38:
13. "Кавказский календарь на 1857 г.", Тифлис, 1856, с. 548.
14. "Кавказский календарь на 1859 г.", Тифлис, 1858, с. 468.
15. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 122-123:
16. "Кавказский календарь на 1861 г.", Тифлис, 1860, с. 32.
17. "Кавказский календарь на 1862 г.", Тифлис, 1861, с. 338.
18. "Кавказский календарь на 1863 г.", Тифлис, 1862, с. 388.
19. "Кавказский календарь на 1864 г.", Тифлис, 1863, с. 332.
20. "Кавказский календарь на 1865 г.", Тифлис, 1864, с. 37.
21. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 33, թ. 1:
22. "Кавказский календарь на 1866 г.", Тифлис, 1865, с. 43. Նաև՝ "Кавказский календарь на 1868 г.", 1867, с. 16:
23. «Արարատ», 1912, էջ 757: Նաև՝ "Кавказский календарь на 1870 г.", Тифлис, 1869, с. 60.
24. "Кавказский календарь на 1871 г.", Тифлис, 1870, с. 65:
25. «Արարատ», 1871, էջ 470: Նաև՝ "Кавказский календарь на 1872 г.", 1871, стр. 74.
26. "Кавказский календарь на 1875 г.", 1874, с. 63.
27. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 56:
28. Նույն տեղում, գ. 3870, թ. 27:
29. Նույն տեղում, գ. 3872, թ. 32, գ. 3873, թ. 27:
30. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 32: Նաև՝ "Кавказский календарь на 1883 г.", 1882, с. 83.
31. «Մեղու Հայաստանի», 1883, N 121, 29 դեկտեմբերի: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 56-57: "Кавказский календарь на 1884 г.", Тифлис, 1883, с. 79.
32. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29: Նաև՝ "Кавказский календарь на 1886 г.", Тифлис, 1885, с. 77.
33. «Արարատ», 1912, էջ 757-758: Նաև՝ "Кавказский календарь на 1888 г.", Тифлис, 1887, с. 147; "Кавказский календарь на 1889 г.", Тифлис, 1888, с. 195; "Кавказский календарь на 1890 г.", Тифлис, 1889, с. 198.
34. «Արարատ», 1912, էջ 757-758:
35. "Кавказский календарь на 1891 г.", Тифлис, 1890, с. 263: Նաև՝ "Кавказский календарь на 1892 г.", Тифлис, 1891, с. 294.
36. «Արարատ», 1896, էջ 552:
37. "Кавказский календарь на 1894 г.", Тифлис, 1893, с. 324. Նաև՝ "Кавказский календарь на 1895 г.", Тифлис, 1894, с. 342.
38. «Նոր-Դար», 1893, N 193, էջ 3:
39. "Кавказский календарь на 1896 г.", Тифлис, 1895, с. 362.
40. "Кавказский календарь на 1897 г.", Тифлис, 1896, с. 382.
41. "Кавказский календарь на 1898 г.", Тифлис, 1897, с. 425.
42. "Кавказский календарь на 1899 г.", Тифлис, 1898, с. 425.

*Անանիա եպիսկոպոս Համազասպյանց.* առաջնորդական փոխանորդի պաշտոնը ստանձնել է առնվազն 1900 թ.[43]: 1901 թ. օծել է Ղազախի նորակառույց եկեղեցին «Ապրիլի 8-ին, նոր կիրակի օրը, մեծ հանդիսով օծվեց Ղազախի նորակառույց հայոց եկեղեցին: Օծման կարգը կատարում է Գանձակի փոխանորդ Անանիա եպիսկոպոսը տասը քահանաներով...»[44]: 1902 թ. օծել էր Հելենենդորֆի աղոթատունը[45]: Փոխանորդի պաշտոնում հիշվում է նաև 1903 թ.[46]:

*Բենիկ վարդապետ.* առաջնորդական փոխանորդ է հիշվում 1903[47]-1904 թթ.[48]:

*Սահակ վարդապետ Բաղդասարյան.* առաջնորդական փոխանորդ է կարգվել 1905 թ.[49]:

*Կորյուն վարդապետ Սահակյանց.* առաջնորդական փոխանորդ է կարգվել 1905 թ.[50]: Պաշտոնավարել է նաև 1906[51], 1907[52]թթ.:

*Լևոն վարդապետ (եպիսկոպոս) Փսերյան (1910-1926 թթ.).* առաջնորդական փոխանորդ է կարգվել 1910 թ.[53]: Հայտնի է, որ 1914 թ. նրա օծմամբ դրվել է Կորյունապատի Սբ. Սարգիս ուխտատեղիի հիմքը: Հրաժարական է տվել 1926 թ.[54]:

**Ազգաբնակչություն.** ԺԹ դարի 50-ական թվականներին ազգագրագետ, պրուսական ատիճանավոր Ավգուստ Հաքստհաուզենը (1792-1866), այցելելով Գանձակ, նշել է, որ «Բնակիչք գաւառին Գանձակայ են Հայք և Թաթարք. Հայք բնակին ի լերինս և Թուրքք յարգաւանդ տեղիս դաշտայ. առաջինքն պարապին գլխաւորապէս երկրագործութեամբ և այգեգործութեամբ, սերմանեն ցորեն, գարի, կորեակ, եգիպտացորեն և վուշ. վերջինքն՝ տարածութեամբ՝ որք և մեծաւ մասամբ հարուստք են, այլ ծոյլք, իսկ Հայք ընդհակառակն յոյժ աշխատասէրք. գիւղորայք թուրքաց բազմաբնակք են, իսկ Հայոցն սակաւատունք...»[55]:

1904 թ. նահանգն ունեցել է 936629 բնակիչ[56]:

*Հայեր.* դարերի ընթացքում երկրամասի հայ ազգաբնակչությունը պաշտպանական նկատառումներով ամրացել է Հյուսիսային Արցախի առավելապես անտառածածկ նախալեռնային գոտում: ԺԹ դարում և մինչև 1988 թ. բռնագաղթը նշված տարածքում հայաբնակ էին շուրջ 50 գյուղեր:

ԺԹ դարի երկրորդ կեսին Գանձակի գավառի հայ բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | արական | իգական | միասին |
|---|---|---|---|
| 1853[57] | 6583 | 6232 | 12813 |
| 1857[58] | 6674 | 6321 | 13111 |
| 1863[59] | 7313 | 6798 | 14111 |
| 1889[60] | 20881 | 19540 | 40421 |
| 1893[61] | 15580 | 14488 | 30068 |

Հայտնի է, որ 1988 թ. բռնագաղթի նախօրեին երկրամասի քաղաքային և գյուղական բնակավայրերն ունեին մինչև 70 հազար հայ բնակիչ:

*Թուրքեր.* Հյուսիսային Արցախը Պատմական Հայաստանի այն երկրամասերից մեկն է, որտեղ ժամանակի ընթացքում սողոսկել են խաշնարած քոչվորների թյուրքական ծագումով ցեղախմբերը: Կեցության պայման ունենալով գողությունն ու հափշտակությունը՝ մարդկության այս տեսակն արդեն ահա քանի դար է՝ հայի տան մեջ ծծում է հայի արյունը: Այդ երևույթինականատես բազում հեղինակներ թողին են հանձնել անհաշիվ վկայություններ ու փաստեր: Դրանցում, հիրավի դժվար է գտնել մի վկայություն, որտեղ «թուրք» ցեղանվան հարևանությամբ բացակայեն՝ թալան, ավեր, սպանություն, կոտորած և համանման որակումները:

Հարկ է նշել, որ ԺԹ դարի սկզբներից թուրք տարրի ներկայության դառնությունը հայերից զատ «ճաշակել» են նաև գերմանացի և ռուս գաղթականները:

Ցարական իշխանությունները, կայսրության պետական շահերից դրդված, ձեռնարկեցին համալիր միջոցառումներ, որոնց արդյունքում, ի վերջո, կարողացան մինչև ԺԹ դարավերջը երկրամասի թուրք քոչվորների մեծագույն մասին ստիպողաբար վերածել նստակյացների:

Ստորև ներկայացնում ենք Հյուսիսային Արցախի սահմաններում բուն դրած թյուրքական ցեղերի վարքուբարքը, կենցաղն ու զբաղմունքը բնութագրող որոշ դրվագներ:

Այսպես, «Կովկասի» թղթակից, հետազոտող Վ. Մեվեսը 1865 թ. գրել է. «Խաների օրոք և այժմ էլ գրեթե ոչ մի քաքարական հասարակություն չի ունեցել և չունի որևէ հողաբաժին: Հնուց ի վեր թաթարներն իրենց ընտրած տեղում փոս են փորում մեկ կամ մի քանի ընտանիքի բնակության տեղի համար...: Եզակին է տեղ ընտրում հողագործու-

43. “Кавказский календарь на 1901 г.”, Тифлис, 1900, с. 458.
44. «Մշակ», 1901, N 87, էջ 3: Նաև՝ “Кавказский календарь на 1902 г.”, Тифлис, 1901, с. 458.
45. «Արարատ», 1902, էջ 761, 984: Նաև՝ “Кавказский календарь на 1903 г.”, Тифлис, 1902, с. 471.
46. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 12, թ. 31:
47. “Кавказский календарь на 1904 г.”, Тифлис, 1903, с. 494.
48. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 12, թ. 47:
49. «Արարատ», 1905, էջ 497:
50. Նույն տեղում, էջ 780: Նաև՝ “Кавказский календарь на 1906 г.”, Тифлис, 1905, с. 293.
51. “Кавказский календарь на 1907 г.”, Тифлис, 1906, с. 304.
52. “Кавказский календарь на 1908 г.”, Тифлис, 1907, с. 303.
53. «Արարատ», 1910, էջ 586: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 21:
54. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 21:
55. **Բարոն Օգոստոս ֆոն Հակստհաուզենայ** Ճանապարհորդութիւն յայկոյս Կովկասու այն է ի Հայս եւ ի Վիրս, Վաղարշապատ, 1872, էջ 164-165:
56. “Кавказ”, 1904, N 228, с. 3.
57. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 16-18:
58. Նույն տեղում, գ. 3830, թ. 74-76:
59. Նույն տեղում, գ. 3843, թ. 15-16:
60. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 238-239:
61. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 77-79:

թյան և անասնապահության համար. մեծ մասն ընտրում է առավել խուլ տեղերը որպես հարմարագույն թաքստոցներ՝ գողացված անասունների և այլ ունեցվածքի: Այդ գողաորջերում հավաքվում են տեղի, հարևան գավառների, նահանգների, ոչ հազվադեպ՝ նաև Թուրքիայից ու Պարսկաստանից ժամանած ավազակախմբեր: Թաթարների այդ ինքնակամ տեղափոխությունները մի տեղից մյուսը առաջ են բերել հետևյալը: Ընդունենք թե այսինչ հասարակությունում հետախուզվում է այսինչ մարդասպանը: Տվյալ դեպքում նա ոչնչով կապված չէ տեղի հետ, բացի փոսից, որի նմանը ամեն տեղ կարող է փորել, հավաքում է ողջ ունեցածն ու փոխադրվում մեկ այլ խուլ վայր, որտեղ արդեն բնակվում են իր նմանները և շարունակում է իր գործը...: ...անասնապահության պատճառաբանությամբ քոչում են լեռները, սակայն, ըստ էության, քոչում են նրա համար, որպեսզի ավելի հարմարություն ունենան գողանալու, թալանի և ավազակության...»[62]: Նկատի ունենալով թուրք բնակիչների գլխավոր զբաղմունքը՝ գողությունը, նրանց բնակավայրերն այցելած օտարազգի հեղինակները դրանք պարզապես անվանել են գողերի որջեր: Այսպես, օրինակ, Անննեֆելդի մերձաքնակ թուրք գյուղերի բնակիչների ավազակաբարո վարքագծի վերաբերյալ (խոսքը գերմանացի մի երեխայի գազանային խոշտանգումներով սպանության մասին է՝ ընդամենը վերջինիս ծին գողանալու համար - Ս. Կ.) Վ. Մեվեսը նշել է. «...իմանալով, որ առանց աղալարների մասնակցության հազվադեպ է հանցագործություն կատարվում, ինձ մոտ կանչեցի գաղութին հարևան գյուղի (ավելի ճիշտ՝ որջի) աղալարին և հայտարարեցի նրան, որ եթե երեխային սպանողը չգտնվի, ապա ես կներկայացնեմ նրան երկրամասից վարչական արտաքսման, քանի որ երեխային սպանողի հետքերը տանում են այն որջը, որտեղ ինքն ապրում է...»[63]: Թուրք ցեղախմբերի նիստուկացը, բարքերն ու սովորույթները ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրած հեղինակը հանգել է հետևյալ խոսուն եզրակացության. «Ուղեղի անգործության հետևանքով մահմեդականի գործողությունները դարձել են չգիտակցված...»[64]:

Մեկ այլ ռուս հեղինակ, ապրելով Գանձակում, 1869 թ. գրել է. «...և դեռ զարմանում են, որ այս ժողովրդի միջից շատ ավազակներ են դուրս գալիս: Ես այստեղ եմ արդեն մեկ տարի երկու ամիս և ճանաչում եմ այս ժողովրդին, ինչպես մատներս: Ձմեռն առանց որևէ աշխատանքի նստում են իրենց շնաքներում, գարնանը թրև են գալիս այգիներում, ամառը քոչում են լեռները: Տանտիրոջ ողջ ունեցվածքը բաղկացած է ցնցոտիների կույտից և մեկ կամ երկու ցուլերից, որոնց վրա նա բարձում է իր ողջ ունեցվածքը և փոխադրում է դրանք մի տեղից մյուսը: Այդքանից հետո, մի՞թե զարմանալի է, որ ժողովուրդն ավազակ է: Չէ որ քաղցած մնալ չես կարող, իսկ աշխատելու ցանկություն չկա»[65]:

Ցեղային բարքերին համահունչ քոչվորական կյանքը երկրամասի թուրք բնակչությանը հարազատ է եղել նաև հետագա տասնամյակներում: Ահա թե ինչ է գրել հետազոտողը 1880-ական թվականներին. «Գավառի մահմեդական բնակչությունը բաղկացած է «թարաքյամա» ընդհանուր անվամբ հայտնի ցածրադիր մասի քոչվորներից և «այրում» անունը կրող դարձյալ քոչվոր լեռնային թաթարներից»[66]:

62. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 42, с. 231-232 (բնագրում՝ “...Почти ни одно общество татарское не имело при ханах и не имеет тепер никакого надела землею. Искони татары копают для себя ями избранных ими местах, то по нескольку семейств вместе, то по одиначке... Редкий избирает место для хлебопашества и скотоводства; а большая часть выбирает самыя глухия места для удобнейшаго сокрытия награбленнаго скота и другаго имущества. В этих притонах собираются шайки разбойников местных и тех, которые приезжают из других губерних, уездов, а нередко и государств, -Турции и Персии. Этот произвольный переход татар с одного на другое вызвал следующее. Положим, что в обществе NN преследуется такой то убийца. -тогда он, не будучи привязан к месту ничем, кроме ямы, которую везде может вырыть, собирается со всем скарбом и переходит в другую глухую окрестность, на которой уже живет с полдюжины подобных ему, и продолжает свою работу ... под предлогом скотоводства, выкочевывают в горы, а в сущности они кочуют для того, чтобы иметь больше удобства грабить, разбойничать и воровать...”).

63. **Мевес В.**, նշվ. հոդվածը, “Кавказ”, 1865, N 36, с. 204 (բնագրում՝ “...зная что без участия агаларов редко творятся преступления, я призвал к себе агалара из соседней с колониею деревни (или правильнее-логовища), и объявил ему, что если не будет отыскан действительный убийца дитяти, то я войду с представлением об административной высылке его из края-за то, что следы убийца от убитаго дитяти были доведены до логовища, в котором он живет”).

64. **Мевес В.**, նշվ. հոդվածը, “Кавказ”, 1865, N 48, стр. 258 (բնագրում՝ “Вследствие бездействия мозга, мусульманин стал безсознателен в своих действиях”).

65. **Семенов И.**, Народная жизнь в Елисаветполе, “Кавказ”, 1869, N 131, с. 2 (բնագրում՝ “...И удивляются еще, что из этого народа выходит много разбойников! Я здесь уже год и два месяца и изучил этот народ, как свои пальцы. Зимой сидят в своих конурах без всякаго дела, весной шатаются по садам, летом отправляются в горы на кочевку. Все имущество хозяина лачужки состоит из кучи лохмотьев и одного или двух быков, на которых он нагружает все свое достояние и перевозит его с одного места на другое. Удивительно ли после этого, что народ разбойничает? Ведь голодному же не быть, а работать не хочется”).

66. **Абелов Н. А.**, Исследование экономическаго быта государственных крестьян Елисаветпольскаго уезда, Елисаветпольской губернии, Тифлис, 1887, с. 14 (բնագրում՝ “Мусульманское население уезда состоит из кочевников низменности, известных под общим именем “таракама”, и горных татар, кочевников-же, носящих название “айрум”).

Հարկ է նշել, որ երկրամասի տարածքում հաստատված մահմեդական ողջ տարրը քրքախոս էր, սակայն դավանաբանորեն բաժանված էր երկու մասի, այն է՝ սյունիների և շիաների: 1880-ական թվականներին շիա մահմեդականները մեծ մասամբ դեռևս թափառական էին, մինչդեռ սյունի թուրքերի մի մասն արդեն անցել էր նստակեցության: Վերջիններս առավելաբար սփռվել էին մերձկուրյան տարածքներում և կազմել Ալիքենդ, Ալփուտ, Թաղլամաջ, Էլենգյուչ, Իշկյանով, Ղարակովախ, Ղարասախկալ, Մանսուրլու և Սանգյար գյուղական հասարակությունները[67]:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին Գանձակի գավառից հազարավոր թուրք բնակիչներ դիմել էին իշխանություններին՝ Արևմտյան Հայաստանի հայաթափ վայրերում բնակություն հաստատելու թույլտվություն ստանալու ակնկալիքով: Ահա թե ինչ է այս մասին հաղորդում ժամանակի մամուլը. «...Գանձակի թրքաշատ նահանգից 6000 ընտանիք խնդիրք են մատուցել կառավարութեան՝ Թիւրքիա գաղթելու թոյլտուութիւն ստանալու համար: Ի նկատի ունենալով խնդրատուների այդ ահագին բազմութիւնը Կովկասեան իշխանութիւնները միջոցներ են դիմել այդ երևույթի պատճառներն իմանալու: Հնարաւոր են համարում, որ դա Թիւրքիայի նախագծերի արդիւնք է. դուրս քշելով հայերին իրենց երկրից իսկ նոցանից մի քանի տասնեակ հազար հոգի Կովկասումն են ապաստանւած, Թիւրքիան կամենում լինի նոցա գիւղերը և հողերը Կովկասից սպասւող գաղթական թիւրքերին յատկացնել»[68]:

*Թուրք-այրումներ.* այրումների մասին հիշատակումներ պարունակող առկա նյութի հետազոտումը վկայում է, որ այս ցեղախումբը պատմական Հայաստանի տարածքում գոյություն է ունեցել իրարից կտրված ու կղզիացած առնվազն երեք վայրերում. նախ՝ Արարատյան երկրում, մասնավորապես՝ Արագածոտն գավառում, ապա՝ պարսկահայքի Մակու, Խոյ և Սալմաստ գավառներում և, վերջապես, պատմական Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում, մասնավորապես՝ Հյուսիսային Արցախում (ներկայիս՝ Գետաբեկ, Դաշկեսան, Թոուզ ու հարակից այլ շրջաններ) և Քարվաճառի շրջանում (ԼՂՀ):

Ուշագրավ է, որ այս վայրերում այրումների գոյությունը վավերացնող սկզբնաղբյուրներում (վաղագույնները թվագրված են ԺԸ դարի կեսերով) վկայվում է, որ նրանց մի որոշ մասն արդեն հողագործ է և, հետևաբար, նստակյաց: Մի երևույթ, որը Հայաստան ներթափանցած թուրքական ծագմամբ բազմաթիվ այլ ցեղերի համար բնորոշ կենսաձև դարձավ շուրջ մեկուկես հարյուրամյակ անց միայն:

Ի դեպ, գրավոր աղբյուրներում հիշատակությունները ավելի առատ են Արարատյան գոտում հանգրված գտած այրումների մասին[69]:

Մինչև ԺԹ դարի սկզբները երկրամասի հարավարևմտյան լեռնային հատվածը (գլխավորապես ներկայիս Գետաբեկի շրջանի տարածքը), հավանաբար, ԺԸ դարի 2-րդ կեսից սկսած՝ կոչվում էր նաև «Այրումլու»: Ռուսական տիրապետության օրոք, սակայն, այդ անվանման տարածքային ընդգրկումը սահմանափակվում է և սկսում է վերաբերել միայն առանձին գյուղական հասարակություններին. «Այրում. - Երբեմն Ուտի նահանգի նոր գաւառներէն մին էր, իսկ այժմ այս անուամբ զանազան հասարակութիւններ կան Գանձակու նահանգի մէջ»[70]:

Նկատենք, որ սկզբնական շրջանում ռուսական կառավարության համար օրակարգի հարց է եղել այրումների արտաքսման խնդիրը: Այսպես, դա զանց առնելու խնդրանքով, 1810 թ. գանձակեցի (քաղաքաբնակ) 75 թաթարի և 38 հայի ստորագրությամբ դիմում էր հղվել գեներալ Տորմասովին:

67. Նույն տեղում, էջ 15:

68. «Մուրճ», 1898, N 2-3, էջ 378:

69. Արարատյան երկրի այրումներին վերաբերող հիշատակությունները ուղղակիորեն չառնչվելով Հյուսիսային Արցախում հաստատված այրումների պատմության հետ, այնուամենայնիվ, այդ ցեղախմբի պատմության ուսումնասիրության առումով դրանք՝ իբրև օժանդակ նյութ, ուշագրավ են, ուստի ներկայացնում ենք ստորև:

1760-ական թվականների մի փաստաթղթում վկայված է, որ Արագածոտնի գյուղերում հաստատված այրումների գլխավորներից մեկը՝ Թաղի յուզբաշին, իրենց արտերը ջրելու համար մինչև իսկ վեճ ուներ էջմիածինցիների հետ («Ջամբռ, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ կաթողիկոսէ Երեւանցւոյ»**, Վաղարշապատ, 1873, էջ 196): Նույն ժամանակներում այրումներ էին բնակվում Օհանավան գյուղում (ավելի հավանական է՝ գյուղի մոտ). «...Ռահիմ բէկէն գլխաւորին՝ այրումլուաց, որք ի Յօհանավանն բնակէին...» («Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 456): Այրումները բնակվում էին նաև Քյուլթափա (այժմ՝ Մոխրաբլուր գյուղը Վաղարշապատից 4 կմ հարավ) գյուղի մոտ. «...քանի մի խարապայ քեալաւայք եւ տանց տեղիք գոն դէպ ի հարաւակոյսն, յորս երբեմն Այրըմլու Քեօչարի Տաճիկք բնակեալք են յաւուրս ճմռան, եւ երբեմն եւս յամռանն, զցանք եւս են արարեալ ի յոմանս տեղիս, եւ անուն գեղջն եւս ըստ անուան բլրին կոչի Քիւլթափայ» («Ջամբռ...», էջ 195): 1750-52 թթ. մի քանի անգամ հիշվում է այրումների խան կամ սուլթան Ալահվերդին, որը, ի թիվս խանական Հայաստանի մահմեդական նորանկախ իշխողների, բավական ազդեցիկ դեմք էր: Համենայն դեպս, «Այրումների խանը» հիշվում է Երևանի և Նախիջևանի խաների կողքին (**Մելիքսեթ-բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 138): Նույն թվականներին նրան ընդունել էր վրաց թագավորը. «...Մեր թագավորների տեսության էին եկել Երևանի խանի եղբայրն և Այրումների (Այրումլուի) խանը...» (նույն տեղում, էջ 134): Ապա «Իրակլի թագավորի մոտ եկավ մի երևանցի աղրբեջանցի (թաթար)՝ Այրումլուի սուլթանը Ալա(հ)վերդի անունով...» (հիշ. 1752 թ.) (նույն տեղում, էջ 174): Հետաքրքիր է, որ վրացիների հետ դաշնակցող Ալահվերդին բնավ էլ մոլեռանդ մահմեդական չէր. «Իսկ այդ օրերին (վրացոց) հետ էր Այրումլուի սուլթան Ալա(հ)վերդին, որը սքանչել(ագործություն) խնդրեց խաչից և քաջարի էր...» (նույն տեղում, էջ 175):

70. **Էփրիկեան Հ. Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, էջ 164:

Խնդրագրում մասնավորապես նշված է. «Ձերդ բարեծնությանը անհայտ չէ, որ մենք ոչ մեկ անգամ ենք զրկվել մեր ունեցվածքից և գտնվում ենք առանց ապրուստի, և բացի դրանից մենք տեղեկացանք նաև, որ Ձերդ բարեծնությունը կամենում է այրումցիներին վերաբնակեցնել Շամշադիլում: Մենք, ներքո ստորագրյալներս, վստահեցնում ենք Ձերդ բարեծնությանը և երդվում Աստծով և Ե. Ի. Վ.-ի առողջությամբ, որ այրումցի ժողովուրդը ծառայում է մեզ, տարանջատված ամուր պատով, և եթե, վերաբնակեցվեն, ապա մեզ կուտեն գայլերը, շները...»[71]:

Գանձակեցիները նաև տեղեկացնում էին, որ այրումները արտադրում և վաճառելու նպատակով քաղաք էին հասցնում կարագ, պանիր, կաթ, սալ, մեղր, տավար, ոչխար, իսկ բնակարանային շինարարության համար՝ անտառափայտ[72]:

Այրումների ծագման մասին Ե. Լալայանը, օգտվելով Ն. Աբելյանի ուսումնասիրությունից, նշել է. «Թուրքեր են համարվում նաև քափառական այրումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիոնից) գաղթած են համարում և իրենց կոչումն էլ բացատրում են որպես ա՛յ ռում (է՛յ, ուռում) կոչականից կազմված: Սրանք մահմեդական են, շիի աղանդին պատկանող, խոսում են Ատրպատականի բարբառով, մի առանձին արտասանությամբ և ոչնչով չեն զանազանվում մյուս թուրքերից: Սրանք բնակվում են Ամիրվար, Աջի, Բիրգյոզ, Այբենդ, Դաստաֆոր, Դամժալի, Գյունեյդամի, Զաղաղարասի, Ղարաբուլաղ և Ղազախ-Եյլիլախ հասարակությունների մեջ...»[73]:

Խորամուխ լինելով հարցի մեջ՝ բավական հետաքրքիր եզրահանգում է արել Հ. Վարդանյանը. «Լալայեանը իր «Գանձակի գաւառ» գրքում յայտնում է, որ իբր թէ այդ թուրքերը Յունաստանից են գաղթել և դրա համար էլ իրանց անուանում են «այրում. այսինքն «այ յոյն»: ...Յօղուածիս հեղինակը պատահել է այրումների, որոնք հայկական ազգանուններ են ունեցել, օրինակ՝ Ղազար-օղլի, Եաղուբ-օղլի և այլն: Այրումների Եաղուբլի գիւղն ամբողջապէս հանդիսանում է մահմեդականացած հայ Յակոբի սերունդը, որի անունից և կոչվում է Եաղուբլի, Գարամուրադ գիւղի թուրքերը հանդիսանում են հայ իշխանական ցեղից սերվող Ղարամուրադի սերունդը: Այրումների հետ մօտ ծանօթանալուց, ինչպէս ասում են, նրանց ազգն ու տակը քրքրելուց յետոյ, մարդ ակամայ համոզվում է, որ այդ խեղճ ու կրակ մահմեդականները ոչ այլ ոք են, եթէ ոչ մեր Գարդմանայ Ձորի անպարտելի քաջերի սերունդը: Մինչև այժմ այրումների մէջ մնացել են մի քանի հայկական խօսքեր, օրինակ՝ հանդ, հաւալիք (աւելուկ), հախչիխ (աղջիկ) և այլն.... «այրում» ոչ թէ կը նշանակէ «այ յոյն» այլ «հայ-յոյն», և այդ խօսքը ուղղակի «հայ-րում» խօսքի աղաւաղումն է: Քիչ թէ շատ կրթված այրումները հաստատում են իմ այս ենթադրութիւնը: Օր. մի ախունդ ինձ հաւատացնում էր, որ հին գրութիւնների մէջ այրումներն անուանվում են «հայ-րում», և նա էլ ինձ նման համոզված էր, որ այրումները հայերից են ծագում: Ես այրումներից շատերից եմ լսել, որ նրանք բոնի կերպով են մահմեդական դարձել, որի պատճառով նրանք իրանց-անուանում են «գլիջ մուսուլմանի», այսինքն սրի ոյժով մահմեդական դարձածներ: Այրումները կրօնական այն մոլեռանդութիւնը չունեն, ինչ-որ ուրիշ տեղի մահմեդականները: Դէպի կրօնն ու կրօնական ծէսերը շատ անտարբեր են: Նոյնիսկ ամբողջ գաւառամասում աղօթատուն չունեն: Երբ ես այս առիթով նրանց նկատողութիւն էի անում, նրանք ինձ պատասխանում էին. –Սրի ոյժով մահմեդական դարձած ժողովրդից ի՞նչ աղօթատուն, ի՞նչ աղօթք պէտք է պահանջել...»[74]:

Հ. Վարդանյանն այրումներին համարում է բնիկներ: Բազմաթիվ փաստերի համադրմամբ նույն տեսակետի օգտին են արտահայտվել նաև հետագա ուսումնասիրողները: (Կարծիք կա նաև, որ այրումները ԺԸ դարում թուրք-պարսկական պատերազմի ժամանակ գաղթել են Ուրմիա լճի շրջակայքից[75]:

Ինչևէ. դեռևս հստակ չէ, թե ե՞րբ է տեղի ունեցել հայության նշված հատվածի բռնի մահմեդականացումը և, բացի այդ, ինչո՞ւ նրանք հատկապես «այ-

71. "Акты...", т. IV, Тифлис, 1870, с. 92, 493 (բնագրում՝ "В. выс-у не безизвестно, что мы не однакратно лишались своего состояния и находимся без пропитания и при всем том еще известились мы, что выс-у угодно переселить Айрумцев в Шамшадиль. Мы, нижеподписавшиеся, уверяем в. выс-у и клянемся Богом и здоровьем Е. И. В. что Айрумский народ служит нам, разделенным, крепкою стеною и, если они будут переселены, то нас съедят волки, собаки и чекалки...").

72. Նույն տեղում:

73. **Լալայան Ե.**, Երկեր, Երևան, 1988, էջ 329: Նաև՝ **Абелов Н. А.**, նշվ. հոդվ. (оттиск из т. VII "Материалов для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края").

74. **Վարդանեան Յ.**, Մի քանի խօսք այրումների մասին, «Մշակ», 1914, N 154, էջ 2-3:

75. **Каракашлы К.**, Об айрумах, "Известия общества Обследования и изучения Азербайджана", N 8, Баку, 1929, с. 29-42. **Кобычев В. П.**, Айрумы (к вопросу происхождения этнонима), "Советская этнография", 1962, N 3, с. 148. Անհիմն և տարածին է, սակայն, հեղինակի այն ենթադրությունը, ըստ որի այրումները շառավիղներն էին ոչ միայն մահմեդականացված հայերի, այլև՝ հայացած աղվանների: Հանգամանք, որը որևէ սկզբնաղբյուրով չի հաստատվում. չէր էլ կարող հաստատվել, քանի որ այդտեղ երբևէ աղվան բնակչություն չի եղել: Նույն ձևակերպումը, առանց քննության, կրկնվել է նաև այրումներին քոուցիկ հիշած մի հոդվածում (**Карапетян М. М.**, Динамика расселения тюркоязычных кочевых племен в восточной части Армянского нагорья, конец XIV - начало XIX вв. " Взаимосвязь социальных и этнических факторов в современной и традиционной культуре", сборник статей, М., 1983, с. 214).

րում» կոչվեցին: Չէ՞ որ պատմական Հայաստանի տարածքում հայտնի են բազմաթիվ այլ գավառներ, որոնց հայ բնակչությունը ևս բռնությամբ մահմեդականացվել է, բայց դրա պատճառով հետագայում բնավ «այրում» չի կոչվել: Ուրեմն, էլ ի՞նչ առանձնահատուկ պայմաններ էին առկա, որոնց թելադրմամբ գարդմանցի հայության մի մասը, մահմեդականություն ընդունելուց հետո, սկսեց կոչվել «այրում»[76]:

Հարցի լուծումը գտնելու համար փորձենք ի մի բերել առկա նյութն ու կատարել եզրահանգումներ՝ շեշտելով գլխավոր գործոնները.

1. ըստ ամենայնի, Գարդմանքի այրումները բնիկներ են (առկա այն մտայնությամբ հանդերձ, թե նրանց նախնիները Հունաստանից, Ուրմիա լճի ավազանից և կամ մի այլ վայրից են գաղթել):

2. «Այրում» ցեղանվան ծագումը ուղղակիորեն կապված է «հայ» և «հույն» անվանումների հետ:

3. Այրումները համոզված վկայում են, որ իրենց բնակավայրերում և դրանց շուրջ պահպանված եկեղեցիները հունական են և, իբր, կառուցողներն էլ հույներ են եղել: Հույներին են վերագրում նաև ակնհայտորեն հայկական հին գերեզմանոցները:

4. Այրումների նախնիները քրիստոնյա էին: Նրանք բռնի ուժով են մահմեդականացվել:

5. Մոլեռանդությունը, որ բնորոշ էր նորադարձ շատ և շատ այլ վայրերի ծագումով հայ մահմեդականներին, միանգամայն խորթ է այրումներին: Նրանց բնակավայրերից և ոչ մեկում չկա և ոչ մի մզկիթ: Անգամ, ընդհակառակը, հայկական մի շարք եկեղեցիներ ու սրբավայրեր ուխտատեղի են նաև այրումների համար[77]:

6. Հայտնի է, որ հյուսիսարևելյան Հայաստանի տարածք թափանցած թյուրքական ցեղերը նստակեցության են անցել ռուսական կառավարության ստիպմամբ ու պահանջով (մինչև իսկ այդ պայմաններում էլ նրանց զգալի մասը մինչև խորհրդային կարգերի հաստատումը շարունակեց մնալ քոչվոր), իսկ այրումներն արդեն ԺԸ դարի կեսերին հողագործ էին, հետևաբար՝ նստակյաց (Արարատյան երկրում), նույնպես և մեղվապահ (Գարդմանքում, 1810 թ. հիշ.), նման զբաղմունքը ևս ընդհանուր ոչինչ չունի քոչվորական կենսաձևի հետ:

Այս բոլոր գործոնների ուսումնասիրությունը բերում է այն հետևության, որ այրումներն ի սկզբանե հայեր են եղել՝ տեղաբնիկներ, բայց հետագայում դարձել են հունադավաններ, հետևել հունածես եկեղեցուն և միայն ավելի ուշ բռնությամբ մահմեդականացվել: Մոլեռանդ չեն, որովհետև առաջին անգամը չէ, որ կրոնափոխ էին լինում: Հայոց եկեղեցիները հունական են համարում, որովհետև մինչև մահմեդականանալը հունածես են եղել, որն էլ իր հետքն է թողել նրանց պատմական հիշողության մեջ: Հողագործ են ու մեղվապահ, որովհետեւ հայերից են սերում և, վերջապես, ուխտագնացությամբ պատվում են հայկական սրբատեղիները, որովհետև չեն խամրել նաև սերնդեսերունդ փոխանցված ազգային (հայկական) սովորույթները:

Վերոգրյալից հետո էլ դեռևս անպատասխան է մնում շատ կարևոր երկու հարց: Նախ՝ հայության այդ հատվածը ե՞րբ էր ընդունել հունադավանությունը (արդյո՞ք բյուզանդամետ Եզր կաթողիկոսի օրոք՝ Է դարում, թե՞ Վրաստանի հզորացման շրջանում՝ հետևելով, օրինակ, հայ զորապետ Զաքարյան Իվանե իշխանին) և երկրորդ, ե՞րբ էին նրանք ընդունել մահմեդականություն (շիա). արդյո՞ք դա տեղի էր ունեցել ԺԵ-ԺԶ դարերում (քիչ հավանական է), թե՞ 1720-ականներին (ինչը տեղի էր ունեցել նաև Շաքիի, Կապաղակի, Դասանի, Շամախու, Մուսկուրի և այլ գավառների հայերի մի զգալի մասի հետ 1720-1750-ական թվականներին):

*Ռուսներ.* Հյուսիսային Արցախում և մասնավորապես Գանձակում ազգությամբ ռուս վերաբնակիչներ են հաստատվել միայն տարածքի՝ Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվելուց հետո:

1840-ական թվականներից ցարական իշխանությունները ինչպես այլուր, այնպես էլ արդեն կազմավորված Ելիզավետպոլի գավառի ռազմավարական տեսանկյունից կարևոր նկատված վայրերում (առավելապես գլխավոր ճանապարհներին ու լեռնանցքներին հարող շրջաններում) սկսեցին հիմնել տնտեսական բազմաթին արտոնություններով օժտված ռուս աղանդավորների գյուղեր: Արդեն ԺԹ դարավերջին հայաթափ հին գյուղատեղիներում հիմնվել էին ռուսաբնակ շուրջ 10 գյուղեր: Դրանք գոյատևեցին նաև խորհրդային տարիներին. 1988-89 թթ. հայ բնակչության համատարած բռնագաղթից անմիջապես հետո ռուսները ևս ստիպված եղան լքել իրենց գյուղերն ու հայրենադարձվել:

*Գերմանացիներ.* 1817 թ., նեղվելով Նապոլեոնյան արշավանքներից և հարկային ծանր քաղաքականությունից, նախ 31, ապա ևս 1400 ընտանիք թողնում է գերմանական Վյուրտեմբերգի թագավորության սահմանները և Հունգարիայի ու Վալախիայի վրայով մտնում Ռուսական կայսրություն[78]:

---

76. Ի դեպ, «Հայկական սովետական» և «Հայկական համառոտ» հանրագիտարաններն այրումներին ընդհանրապես մոռացության են մատնել, բայց, ահա, «Ադրբեջանական սովետական հանրագիտարան»-ում նշված է, թե այրումները ադրբեջանցիների ազգագրական խմբերից են և բնակվում են Գետաբեկի, Դաշքեսանի, Ղազախի, Քարվաճառի, Շահումյանի, Խանլարի և Թովուզի շրջաններում («Ադրբեջանական սովետական հանրագիտարան» (այսուհետև՝ «ԱՍՀ»), հ. 1, Բաքու, 1976, էջ 197):

77. Օրինակ՝ «Այցելու սուրբ (Փիրնազար)» ավերակ երկու եկեղեցիները Շամքորի հովտում, Տանձուտ (Չանախչի) գյուղատեղիից հարավ (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 305):

78. **Լալայան Ե.**, Գանձակի գավառ, Երկեր, էջ 329-330:

1818 թ. վերջին, գերմանացիները մեծ զրկանքներ կրելով, հասնում են Կովկաս՝ նպատակ ունենալով անցնել Պաղեստին, սակայն «...ռուսաց կառավարության դրդմամբ մնացին այստեղ և հիմնեցին սկզբում 7 կոլոնիա, որոնց թիվը 100 տարվայ ընթացքում բազմանալով հասաւ 15-ի»[79]: Ի դեպ, 1400 գերդաստանից Կովկաս է հասնում ընդամենը 455 ընտանիք, որոնցից 194-ը հաստատվում է Գանձակի գավառում[80]:

**Առևտուր.** 913-914 թթ.՝ ռուսների կողմից Պարտավ քաղաքը գրավելուց հետո, վերջինս «կորցրեց իր նշանակությունը և դարձավ մի անկարևոր վայր»[81] ու իր տեղը զիջեց միայն տասնամյակների պատմություն ունեցող Գանձակին:

Առևտրական կարևոր ճանապարհների հանգուցակետում գտնվող Գանձակն ամենակարճ ժամանակահատվածում դառնում է Այսրկովկասի ամենաբազմամարդ ու վաճառաշահ քաղաքներից մեկը: Այդտեղ էին միանում Տփղիս-Շամքոր-Գանձակ, Դվին-Փառիսոս-Գանձակ, Շամախի-Արաշ-Գանձակ, Շաքի-Արաշ-Գանձակ և Բելուկան-Պարտավ-Գանձակ տարանցիկ ճանապարհները:

Չնայած հետագա դարերում Գանձակը բազմիցս ավերվում է իրար հաջորդած արշավանքների և երկրաշարժերի հետևանքով, այնուամենայնիվ, երկրամասի բազմաթիվ այլ բնակավայրերի ու քաղաքների նկատմամբ երբեք չի կորցնում առաջնային նշանակությունը:

Առհասարակ, Գանձակը նշանավոր էր մետաքսի արդյունահանմամբ. «Հայտնի են Գենջեի ձիու պայտը, երկաթը, ինչպես նաև մետաքսը»[82], բայց ընտիր էին նաև «...նուռը, խաղողը և կաղինը»[83]:

1591-1592 թթ., երբ Անատոլիայի էլայեթի իշխող Խադիմ Հասան փաշան վեզիրության աստիճանով ստանում է Գանձակի էլայեթը, ոչ միայն կարողանում է տեղի մետաքսի վաճառքից ստացված եկամուտների հաշվին իր բազմահազար զորքի աշխատավարձը վճարել, այլ նաև յուրաքանչյուր տարի «150 բեռ ակչեի արժեքով մետաքս էր ուղարկվում գանձարանը»[84]:

Վաճառաշահ մի այնպիսի քաղաք, ինչպիսին Գանձակն էր, անշուշտ, շատ հնուց պետք է ունեցած լիներ իր շուկան: Դրա գոյությունը, սակայն, վկայել են համեմատաբար ավելի ուշ շրջանի ականատեսները: Մասնավորապես 1640 թ. հիշված է, որ Գանձակն ուներ «բարետես շուկա»[85]:

Չնայած հաճախակի տեղի ունեցող պատերազմական գործողություններին՝ Գանձակը վաճառաշահ քաղաքի համբավը պահպանեց ընդհուպ 1827 թ. և միայն դրանից հետո «...քաղաքը կորցրեց իր կարևորությունը իբրև առևտրական կենտրոնի»[86]:

Ըստ ամենայնի, ինչպես միջնադարում, այնպես էլ ԺԹ դարում Գանձակում «...Առևտուրը, ...կենտրոնացված էր հայերի ձեռքում: Ճիշտ է, առևտրով զբաղվում էին նաև թաթարները, բայց գլխավորապես՝ մրգերով»[87]: Ի դեպ, առևտուրն ամբողջությամբ իրականացվում էր քաղաքի թրքաբնակ թաղամասում, որտեղ էլ գտնվում էր այդ նպատակին ծառայող հրապարակը. «Վաճառանոցի մէջ տեղաւորուած են հայերի և թուրքերի բոլոր խանութները: Համարձակ կարելի է ասել, որ վաճառանոցի հրապարակը քաղաքի գեղեցիկ տեսարաններից մէկն է...»[88]:

Գանձակի առևտուրն այն աստիճան էր կենտրոնացված գետի աջափնյա, այն է՝ թուրքաց թաղամասում, որ մի անգամ (1870 թ. հունիսի 26-ին), երբ երկու թաղամասերի միջով հոսող գետը վարարել էր՝ փտանգելով քանդել կամուրջը, հայոց թաղում ուրվագծվել էր սովի մատնվելու հեռանկարը. «...մենք, Քիլիսաքենդի բնակիչներս, մի քանի օր սոված կմնայինք, քանի որ ամբողջ առևտուրը այստեղ կատարվում է Գյանջայում: Զարմանալի է, որ տեղի հայերը որպես համեմատաբար առաջատար և նախաձեռնող ժողովուրդ, Քիլիսաքենդում, որտեղ և ապրում են, առևտուր չեն անում և գրեթե բոլորն այստեղ ծառայողներ են»[89]:

Հատկանշական է, որ արդեն ԺԹ դարավերջին գանձակեցի որոշ առևտրականներ, իրենց գործունեության ոլորտը դուրս բերելով միջազգային ասպարեզ, արտահանվող ապրանքատեսակների հարցում կրկին նախապատվությունը տվել էին երկաթին և մետաքսին, որոնց արտադրությամբ Գանձակը հռչակված էր հարյուրամյակներ շարունակ: Դա է հաստատում նաև լրագրային հետևյալ

79. «Գերմանական գաղթականութիւնը Կովկասում», «Տարազ», 1912, N 11, էջ 192:
80. **Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 330:
81. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», հ. Գ, կազմեց Նալբանդյան Հ., Երևան, 1965, էջ 145, ծանոթ. 97:
82. «Թուրքական աղբյուրներ. **Էվլիյա Չելեբի**», հ. Գ (այսուհետև՝ **Էվլիյա Չելեբի**), կազմեց Սաֆրաստյան Ա., Երևան, 1967, էջ 86:
83. «Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, կազմեց Սաֆրաստյան Ա., Երևան, 1964, էջ 14:
84. Նույն տեղում, էջ 148:
85. **Էվլիյա Չելեբի**, նույն տեղում:
86. **Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 375, ծանոթ. 7:
87. “Кавказ”, 1859, N 9, с. 42 (բնագրում՝ “...Торговля, по обыкновению, сосредоточена в руках Армян. Занимаются, правда, торговлею и Татары, но преимущественно фруктами”):
88. «Կռունկ Հայոց աշխարհին», Տփխիս, 1861, էջ 360:
89. “Кавказ”, 1870, N 76, с. 2 (բնագրում՝ “...мы, живущие на Килисакенте, остались бы голодными на несколько дней, так как здесь вся торговля производится в Ганже. Удивительно, что здешние армяне, народ сравнительно подвижной и предприимчивый не переносят торговли в Килисакент, где живут они сами и почти все служащие здесь”):

տեղեկատվությունը. «Գանձակի հարուստ վաճառական Մահտեսի Քերովբէ Տէր Մարտիրոսեանցը, որի ահագին քանակութեամբ ապահովեցրած երկաթն այս քանի ժամանակներս խորտակուեց Վոլգա գետի մէջ...: Այս դէպքում Մահտեսի Քերովբը բախտաւոր է, քան միւս գանձակեցի (նախկին ռուտիկան) Վ. Ե.-ն, որը Գանձակից Վարշաւ է ուղարկում մի՝ նոյնպէս ապահովեցրած 10.000 րուբլու արկղ մետաքս, սակայն Վարշաւում մետաքսի տեղ քարեր են ստացւում...»[90]:

Ի դեպ, եթե մետաքսի արտադրությամբ զբաղվում էին Գանձակի և մերձակա գյուղերի ինչպես հայ, այնպես էլ թուրք բնակիչները, ապա երկաթի արդյունահանումն իրականացվում էր Գետաբեկի և Քարհատի (Դաշկեսան) հանքավայրերում հայերի և գերմանացի գաղութաբնակների ուժերով:

Ելիզավետպոլի նահանգից Պարսկաստան էին արտահանում հիմնականում հացամթերքներ (տարեկան 8,312 փութ), չորացրած մրգեր (տարեկան 5,428 փութ), կաշվեղեն և կտորեղեն, իսկ ներմուծում թուղթ և մետաղյա գործիքներ[91]:

Հայտնի է, որ միջազգային ասպարեզում գործունեություն ծավալած հայ վաճառականները «ստանում են վաճառելի նիւթերը Տաճկաստանից, Պարսկաստանից և Ռուսաստանի զանազան քաղաքներից–Մօսկվայից, Նիժնի վաճառափողոցից, Թիֆլիզից և Բաքուից և այս նիւթերը սպառում են թէ իւրեանց և թէ շրջապատող հայ և թուրք գիւղերի վերայ»[92]:

**Պատմական հուշարձաններ.** տարիներ շարունակ ադրբեջանցի հետազոտողները ջանք ու եռանդ չէին խնայում Ադրբեջանի Հանրապետության տարածքում եղած հայկական պատմական հուշարձաններն իբրև աղվանական ներկայացնելու համար: Բունիաթովի, Գեյուշևի, Ախունդովի, Նեյմատովայի, Մամեդովայի և սրանց կարգի մի շարք «գիտնականներ» 1970-80-ական թվականներին մեկը մյուսի հետևից հրատարակում էին գրքեր ու հոդվածներ, որոնցում ամեն կերպ փորձում էին աղվանական ներկայացնել այն ամենը, ինչ հայ մշակույթի անքակտելի մասն էր, սկսած՝ Գանձասարից, Դադի վանք ու Ամարաս, Եղիշ Առաքյալ ու Խաչկապի Թարգմանչաց վանք, Ջուղայի մի քանի հազար խաչքարերով գերեզմանոց և մինչև Գագա Սբ. Սարգիս վանք:

Անշուշտ, հայերիս համար առավել քան հասկանալի է զուտ քաղաքական նկատառումներ հետապնդած գիտական այդ կեղծ հորինվածքների նպատակը: Իսկ նպատակը մեկն էր՝ իրենց խաշնարած քափառական նախնիների հետ որևէ կերպ չառնչվող քրիստոնեական ողջ մշակույթն աղվանների (որոնք իբրև եղել են իրենց նախնիները) վերագրելով՝ իրավական տեր ու ժառանգորդ հայտարարել ներկայիս ադրբեջանցիներին: Այդպես, գրչի մի հարվածով «ալբան-քիլիսաների» և «խաչդաշերի» վերածվեցին հայոց հարյուրավոր եկեղեցիներ ու տասնյակ հազարավոր խաչքարեր:

Մեր օրերում ադրբեջանցիները, փոխելով ռազմավարությունը, այլևս իրենց եռանդը չեն վատնում հայ մշակույթի հուշարձաններն աղվանական ներկայացնելու համար: Այսօր նրանք նույնպիսի ջանադրությամբ ոչնչացնում են այն ամենը, ինչը տարիներ առաջ հայտարարել էին աղվանական: Ցավոք, մենք զրկված ենք աննախադեպ ոճրագործության իրական ծավալների մասին որոշակի խոսք ասելու հնարավորությունից, քանի որ, փաստորեն,ականատեսն ենք ոչնչացվող միայն այն հուշարձանների, որոնք, իրենց տեղադրությամբ մոտ լինելով սահմաններին, ինչ-որ չափով տեսանելի են: Մինչդեռ անհայտ է պատմական այն բոլոր հուշարձանների ճակատագիրը, որոնք հեռու են սահմանամերձ գոտիներից:

Արդեն մի քանի տարի մամուլը գուժում էր բուլդոզերներով պարբերականորեն մաս առ մաս ոչնչացվող Ջուղայի պատմական գերեզմանատան մասին: Հակառակ բազմաթիվ ահազանգերի ու դիմումների՝ ավելի քան 3000 կանգուն խաչքարերով գերեզմանատան ոչնչացումը ոչ միայն չկանխվեց, այլև մինչև 2002 թ. շարունակաբար ավերվելով՝ իսպառ ոչնչացվեց:

Իր պատմական հայրենիքում հայ մարդու արարած մշակութային եզակի այդ հուշահամալիրը փաստացի ոչնչացվեց օրը ցերեկով, մի քանի տարվա ընթացքում և քաղաքակիրթ համայն աշխարհի աչքի առաջ: Կատարվածի մասին իմացանք միայն այն բանի շնորհիվ, որ գերեզմանատունը գտնվում էր ուղղակի Արաքսի ձախ ափին և պարզ տեսանելի էր հակադիր՝ իրանական ափից:

Ջուղայի գերեզմանատան ոչնչացմանը հաջորդեց Ղազախի շրջանում գտնվող Գագա Սբ. Սարգիս վանքի քանդումը և այլն:

Ըստ էության, մենք այսօր դատապարտված ենք լինել սեփական մշակույթի ոչնչացման ականատեսը, իսկ ադրբեջանական թուրքն այս օրերին եռանդագին լծվել է այն միակ դերակատարությանը, որն ունեցել է մեր պատմական հայրենիք սողոսկելու առաջին օրվանից սկսած՝ քանդում է...:

1864 թ. Վ. Մեվեսը, ճանապարհորդելով Գանձակի նահանգում, փաստել է տեղում պահպանված բազմաթիվ հուշարձանների հայկականությունը. «Նահանգի լեռներով շրջագայելիս ինձ հաճախ էին հանդիպում... քրիստոնեական բնակավայրերի հետքեր: Անհնար է անցնել տաս վերստ, որպեսզի չհանդիպես, ճիշտ է, ամենակոպիտ ճարտարապետությամբ եկեղեցիների ավերակների: Այդ բոլոր

90. «Նոր-Դար», 1895, N 114:
91. "Кавказ", 1904, N 228, с. 3.
92. **Մաժակ**, Նամակ Գանձակից, «Մշակ», 1873, N 14, էջ 2:

եկեղեցիները շինված են գետաքարից, ինչ որ ցեմենտով, որը քարերն այնպես ամուր է միացրել, որ հիմա էլ դժվարությամբ կարելի է քարը դուրս հանել ավերակներից: Այդ ավերակները քրիստոնյա բազմաթիվ բնակիչների, հավանաբար, հայ պատմական հուշարձաններն են այն նահանգում, որն այժմ համարվում է մուսուլմանական: Այդ հուշարձանները վկայում են նաև այն մասին, որ նահանգի լեռնային հատվածը, որը ներկայումս վերածվել է քոչատեղի, ինչ որ ժամանակ եղել է նստակյաց երկրագործների կյանքի համար ամենալավագույն տեղը: Իսկ հիմա ի՞նչ է: Այժմ քոչվորը դուրս է քշել երկրագործին...: Քրիստոնյա գյուղերի ավերակները ապացուցում են, որ այստեղ եղել է և՛ զարգացածություն, և՛ կարողություն, և՛ աշխատանք, միայն թե վաղուց...»[93]:

Գրեթե համանման կարծիքն է հայտնել մեկ այլ ուսումնասիրող՝ Ն. Աբելյանը. «Գանձակ և Շամքոր գետերի վերնամասի մահմեդական գյուղերում ցրված ԺԶ դարի հայերեն արձանագրությամբ հայ ճարտարապետության հուշարձանները՝ եկեղեցիները, վկայում են, թե որքան նշանակալի է եղել հայ բնակչությունն այստեղ և թե որքան մեծ են եղել այստեղից հայերի արտագաղթի ծավալները»[94]: Ինչ վերաբերում է այդ կառույցների վիճակին, ապա ականատեսը նշել է. «Այդ եկեղեցիներից մի քանիսն այժմ կանգնած են ավերակների մեջ և, ցավալի է ասել, մերձաբնակ այրում մահմեդականների համար ծառայում են որպես անասնագոմեր»[95]:

1889 թ. դրությամբ նահանգում գործում էր 11 վանք և 88 եկեղեցի[96]:

93. **Мевес В.**, Очерки Елисаветопольского уезда, “Кавказ”, 1865, N 46, с. 249 (բնագրում՝ “Во время поездок по горам уезда - мне часто попадались следы поселений, как видно, христианских. Нельзя проехать десяти верст, чтобы не встретить развалин церквей, правда, самой грубой архитектуры. Все эти церкви сложены из булыжного камня на каком то цементе, связывающем камни так крепко, что до сих пор с трудом можно вынуть камень из развалины. Эти развалины, - исторические памятники многочисленного христианского населения, вероятно армянского, в провинции, называемой теперь мусульманскою. Эти памятники свидетельствуют еще и о том, что нагорная сторона уезда, превращена теперь в кочевки, была когда то лучшим местом для оседлой жизни земледельцев. А теперь что? Теперь номад выжил хлебороба!... Развалины христианских деревень доказывают, что здесь был и разум, и умение, и труд, да только давно...”).

94. **Абелов Н. А.**, նշվ. հոդվ., էջ 14 (բնագրում՝ “Церкви армянской архитектуры, с армянскими надписями XVI века, ныне во множестве разбросанныя по мусульманским селениям, у верховьев рек Ганджа-чай и Шамхор-чай, свидетельствуют, как значительно было здесь армянское население и как велики были некогта массовыя переселения отсюда армян...”).

95. Նույն տեղում (բնագրում՝ “Некоторыя из этих церквей стоят ныне в развалинах и, печально сказать, скотными дворами для живущих вблизи айрумов-мусульман.”).

96. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 238-239:


311
305
303.1
312.7
323.7
310.4
361.6
354
321.6
345.5
367.9
402.1
407.6
Գանձակ գետ
359.7
443.3
ԳԱՆՁԱԿ
(ԳՅԱՆՋԱ)
372.6
410.9
473.1
420.6
493.24
436.2
433.6
507.4
1563.4
500.84
558.5
484.1
553
1537
Չոլակի Սբ. Աստվածածին
503.3
ԱՋԻՋԲԵԿՈՎ
ՈՒՉԹԱՓԱ
540.5
638.1
580.7
632.5
579.6
548
594.6

# ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ)

**Տեղադրություն.** գտնվում է Կուր գետի աջակողմով ձգվող առևտրական հին ճանապարհի վրա՝ Գանձակ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 320-500 մ բարձրության վրա:

Հայտնի է նաև Ջանզա[1], Գանջա, Կենջա, Կեչառի[2] անուններով: Մինչև 1804 թ. և 1918-1935-ը՝ Գանձակ, 1804-1918-ին՝ Ելիզավետպոլ, 1935-ից՝ Կիրովաբադ, ներկայումս՝ Գյանջա:

**Հիմնադրումը.** նախապես քաղաքը հիմնվել է ներկայիս քաղաքից շուրջ 3 կմ հյուսիս-արևմուտք և միայն ԺԷ դարի սկզբին Շահ-Աբասի գլխավորությամբ վերաշինվել ներկայիս վայրում:

Մեզ հասած գրավոր աղբյուրներում քաղաքի հիմնադրման ամենավաղ թվական նշվում է 844 թ. («844 թվին Մուհամմեդ իբն Խալիդը հիմնադրեց Գանձակ քաղաքը և բնակեցրեց Դիարբեքիրից բերած արաբներով»)[3]: Այնուհետև մատնանշում են 846 թ. «...եկն արքունի հրամանաւ և գանձուք շինեաց զԳանձակ քաղաքն ՄՂԵ թուին յԱրշակաշեն գաւառի»[4] կամ «Թիւն ՄՂԵ (846) շինեցաւ Գանձակ»[5]: Ըստ Ղազվինու Գանձակը հիմնադրվել է 853-854 թթ.[6]: Խնդրո առթիվ թուրքական աղբյուրը նշել է. «Քաղաքը կառուցել է Ռումի Իսքենդերը, իսկ Կուբադ Բին-ֆիրուզը այն նորոգել է»[7]:

Գանձակի հիմնադրման, նրա անվան վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ: Այսպես, Լ. Լազարևը նշել է, թե մինչև 1804 թ., երբ Գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, այն հայտնի էր Գանջա անունով, սակայն վերջինս ներկայիս քաղաքին չի վերաբերել, այլ դրանից 7,5 վերստ հեռավորության վրա գտնվող քաղաքատեղիին, և իբր այդ քաղաքի պատմությունը սկիզբ է առել Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից[8]: Ի պատասխան Լ. Լազարևի հայտնած սույն կարծիքի՝ Ս. Պատկանյանը նշել է, թե Գանձակի վերաբերյալ ամենավաղ տեղեկությունները սկսվում են 1088 թ-ից, սակայն չի բացառել, որ այն մինչ այդ էլ գոյություն ունեցած լիներ՝ անհիմն համարելով քաղաքի հիմնադրումը Ալ. Մակեդոնացու ժամանակներին վերագրելը: Նա նաև նշել է, որ պարսից բանահյուսական նյութերի հիման վրա հենված այդ տեսակետի ձևավորման համար, հավանաբար, հիմք է ծառայել մեկ այլ Ալեքսանդր (Թավրիզի տիրակալ Ղարա-Յուսուֆի որդին էր), որը գործել է ԺԵ դարում[9]:

«Արձագանք»-ի թղթակիցը հարցի առնչությամբ նշել է, որ ներկայիս Գանձակի տեղում վաղ ժամանակներից քաղաք է եղել, և որ Շահ-Աբասը չի ավերել Հին Գանձակը և հիմնել նորը. «...այդ աւերակները այնքան փոքր տեղ են բռնում, որ հազիւ թէ կարելի է քաղաքատեղ ընդունել. երկրորդ՝ այժմու Գանձակն էլ նոյն հարթ-հաւասար դաշտի վերայ գտնուելով, ինչպէս և աւերակատեղը, Շահ-Աբասի համար ոչ մի ռազմագիտական առաւելութիւն չէր կարող ընծայել, որ նա ստիպուէր հինը կործանել և նոյնպիսի բաց դաշտի վերայ մի նորը կարուցանել. երրորդ՝ ԺԷ. դարու սկզբում անբնակ թողած մի քաղաքի շինութիւնների, պարիսպների և բերդի աւերակներ չէին կարող գետնի հետ հաւասարուելու չափ քանդուիլ, անհետանալ. չորրորդ՝ ..., այդտեղ է Խոսրով նահատակի գերեզմանը, որի աղետալի մահը նկարագրողն ասում է. «հանեն զնա արտաքոյ քաղաքին և ... քարկոծեցին ... զմարմին վկային բարձեալ քրիստոնէից՝ թաղեցին պատուով». Իսկ քաղաքից դուրս քարկոծուած քրիստոնէին պատուով կրկին քաղաք բերել և թաղելը թոյլատրուած

1. ԺԳ դարի արաբ աշխարհագիր Յակուտ-Ալ-Համավին (1178-1229) նշել է, որ Առան նահանգի քաղաքներից էր «...Ջանզան, որն ընդհանրապես կոչվում է Գանջա...» (**Յակուտ ալ-Համավի**, Աշխարհագրական բառգիրք, «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», հ. Գ, էջ 50, 68, 104):
2. «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարերի ձեռագիր հիշատակարաններ», հ. Ա (այսուհետև՝ «ԺԷԱ»), կազմեցին Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1974, էջ 448:
3. **Laurent J.**, L’ Arménie entre Byzance et l’ isiam depuis la conquête arabe, p. 177. **Markwart J.**, Ost-europäishe und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, p. 462. **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Բ, Երևան, 1960, էջ 297:
4. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխաhի (այսուհետև՝ **Մովսէս Կաղանկատուացի**), Երևան, 1983, էջ 331:
5. «Մանր ժամանակագրություններ», հ. Ա (այսուհետև՝ «ՄԺԱ»), կազմեց՝ **Հակոբյան Վ. Ա.**, Երևան, 1951, էջ 391:
6. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», հ. Գ, էջ 153, ծանոթ. 130:
7. «Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, էջ 14:
8. **Лазарев Л.**, Ганжа, “Кавказ”, 1846, N 37, с. 146-147.
9. **Патканов С.**, Замечания на статью: Ганжа, “Кавказ”, 1846, N 41, с. 164.

չէր. նա ուրեմն թաղւում է իր նահատակութեան տեղում, «որ արտաքոյ քաղաքին» է: Վերջապես Գանձակի դարաւոր հսկայ չինարիները, հին շինութիւնների հետքերը պարզապէս ցոյց են տալիս, որ Շահ-Աբասից շատ յառաջ գոյութիւն են ունեցել»[10]:

**Գանձակը Ժ-ԺԱ դարերում.** Թ դարի կեսից Գանձակին տիրել են արաբական Շեդդադյան տոհմի ճյուղերից մեկի ներկայացուցիչները. «Այդ ժամանակ ուժեղացավ Գանձ[ակ]ի ամիրա Փադլոնը, որը սկսեց հպատակեցնել իրեն Հերքի (Հերեթի) և Կախքի (Կախեթի) իշխաններին, ժամանակ առ ժամանակ ավազակորեն և գաղտագողի ավերելով և գերելով այլ և այլ տեղեր»[11]: Ավելի ստույգ. «951-952 թվականներին այնտեղ իշխեցին Շեդդադյանները»[12]:

Հայոց Գագիկ թագավորի գահակալության տարիներին (989-1020) հայերի և աբխազների միացյալ ուժերը հզոր հարված են հասցրել հյուսիսարևելյան Հայաստանը պարբերաբար ասպատակող Փատլուն ամիրային. «Յայնմ ժամանակի զօրացաւ Փատլուն ամիրայն Գանձակայ, և հարկանէր զիշխանսն Կախեթոյ և Հերեթոյ: Եւ առաքեաց Բագրատ՝ թագաւորն Ափխազաց, առ Գագիկ՝ թագաւորն Հայոց՝ երթալ ընդ նմա ի վերայ Փատլայ ամիրային: Եւ նոքան երկոքեան ի Գանձակ և աւառեալ ընդ հարկաւ՝ դարձան աւարաւ»[13]:

Հայտնի է, որ մոտավորապես 1044 թ. «...Խլազիզն ամիրայն Գանձակայ սպանին զնա, և առին զԳանձակ և տիրեցին»[14]:

1054 թ. Գանձակի ամիրան հնազանդվում է սելջուկյան Տուղրուլ բեկին. «Արդեն 1054 թ. արշավանքի ժամանակ Տուղրուլ բեգը հպատակեցրել էր Գանձակի ու Դվինի Աբուլսուվար ամիրային...»[15]: 1054-1055 թ. հիշվում է Գանձակի (Ջանզա) տեր ամիր Աբու-լ-Ասուարը[16]:

1061-1071 թթ. միջակայքում «Հոնք զԳանձակայ դաշտն կոտորեցին...»[17]:

1068 թ. Գանձակի Փատլուն ամիրան ստացել է Ալփասլանի գրաված Տփղիս քաղաքը[18]:

1072 թ. նույն ամիրան Ալփասլանից գնում է քաղաքամայր Անին. «Անիի գնումը Ալփասլանից և

10. «Արձագանք», 1886, N 19, էջ 278:
11. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 203-204:
12. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, էջ 153, ծանոթ. 130:
13. «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ **Ջուանշէրի** պատմչի» (այսուհետև՝ **Ջուանշէր)**, Վենետիկ, 1884, էջ 110:
14. «Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**» (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Վենետիկ, 1862, էջ 100:
15. **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 52:
16. «Արաբական աղբյուրներ. **Իբն-ալ-Ասիր»** (այսուհետև՝ Իբն-ալ-Ասիր), հ. Բ, Երևան, 1981, էջ 215:
17. **Մխիթար Այրիվանեցի** (այսուհետև՝ **Մխիթար Այրիվանեցի**), Պատմութիւն, Մոսկուա, 1861, էջ 59:
18. **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 64:

հանձնումը Գանձակի Փատլուն ամիրայի Մանուչե թոռին»[19]:

1088 թ. Ուռհա քաղաքը գրավելուց հետո Մելիքշահ սուլթանի (1072-1092) հրամանով մեծ բանակով Այսրկովկաս է ներխուժում Բուղա ամիրան, որ պաշարում և գրավում է Շեդդադյան Փատլունյաններին պատկանող Գանձակն ու վերածում աթաբեկության կենտրոնի. «...գնաց սուլտանն բազմութեամբ զօրօք և բանակեցաւ ի վերայ քաղաքին՝ որ կոչի Գանձակ, ի յաշխարհին Հայոց. և արար սաստիկ պատերազմ ի վերայ քաղաքին Գանձակայ և ժողովեաց զամենայն Պարսիկք ի վերայ նորա. և սաստիկ պատերազմաւ փորեալ ընկեցին բուրգն մի, և այնպիսի պատերազմաւ առին զքաղաքն Գանձակ և արարին կոտորած զփոքր մասն քաղաքին. և հրամայեաց Պուզանն և վերացոյց զսուրն և արար խաղաղութիւն: Եւ Տէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից էր յայնժամ ի քաղաքն, և զերծաւ խաղաղութեամբ օգնականութեամբ Աստուծոյ, վասն զի պահեալ եղև ի Հայոց զօրացն, որք էին զհետ Պուզանին»[20]:

Գանձակի առաջին աթաբեկն էր Իսմայիլ ամիրան. «...Մելիքշահը իր կնոջ եղբորն Իսմայիլ իբն Ակութ ամիրային նշանակեց Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի կուսակալ, որ իրեն կենտրոնավայր էր ընտրել Գանձակ քաղաքը»[21]:

1092 թ. Մելիքշահին հաջորդած սուլթան Բարկիարուխը Գանձակի կուսակալ է նշանակում իր եղբորը: Վերջինս 1099 թ. ապստամբում է եղբոր դեմ և իրեն սուլթան հռչակում[22]:

19. Նույն տեղում, էջ 406: Նաև՝ էջ 81:
20. **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 254: Տե՛ս նաև՝ **Վարդան վարդապետ**, էջ 106 («Ի հինգհարիւր երեսուն և եօթն թուին Պուզան ամիրայն հրամանաւ Մէլիք-շահին առ զԳանձակ ի Փատլնեացն որ Շատատիկքն կոչէին»): Նաև՝ **Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ **Սամուէլ Անէցի**), Վաղարշապատ, 1893, էջ 118: «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, էջ 153: **Չամչեանց Մ.,** Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. 3, Վենէտիկ, 1786, էջ 13 («...երևելի էր քաղաքն Գանձակ, այն է Կէնճէ, ուր նստէր Ստեփաննոս կաթողիկոսն Աղուանից, ի յաջորդ ամի յարձակեցաւ նոյն Պուզան սպարապետ պարսից ի կողմանս յայնսիկ. և յետ տիրելոյ մնացեալ տեղեացն՝ պաշարեաց զքաղաքն Գանձակ. և տուեալ ընդ նմա մարտ պատերազմի սաստիկ յոյժ՝ կործանեաց զմի կոտորած մեծ. յորմէ հազիւ զերծաւ Ստեփաննոս կաթողիկոս ձեռնտուութեամբ հայոց ոմանց՝ որք կային ընդ զօրս այլազգեաց»): **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 69: Ի դեպ, Բուղայի՝ Գանձակը գրավելու տարեթվի շուրջ աղբյուրներում առկա են հակասություններ: Այսպես, նշվում է նաև, որ 1082 թ. «Բուղան ամիրա առ զԳանձակ և զՓատլուն կալաւ և ի սուլտանն տարաւ» («Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**», հրատարակության համար պատրաստեց **Ա. Աբրահամյանը**, Երևան, 1942, էջ 15):
21. **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 70:
22. Նույն տեղում, էջ 78:

**Գանձակը մինչև ԺԲ դարի 30-ական թվականները.** հայտնի է, որ 1118 թ. սելջուկյան սուլթան Մուհամմեդ-Տափար սուլթանը «տէր Գանձակայ Հայոց» էր նշանակել իր կրտսեր որդուն՝ Մելիքին[23]: Նույն թվականին վրաց Դավիթ թագավորը «...եհար զՄէլիք զսուլտանն Գանձակայ ի հարուածս սաստիկս...»[24], այնուհետև Գանձակը նվաճում է Աբուլեթի որդի Փատլունը[25]:

1128 թ. Գանձակի Սելջուկյան կուսակալության դեմ մարտեր է մղում վրաց թագավոր Դեմետրե Ա-ն[26]:

1130 թ. այստեղ «...վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկայ որդի»-ն[27]:

**Երկրաշարժ.** 1139 թ. մարտի 17-ին Գանձակը ենթարկվում է Հայկական լեռնաշխարհում երբևէ տեղի ունեցած առավել սոսկալի երկրաշարժերից մեկին: Կործանարար աղետին համառոտ կամ ընդարձակ նկարագրություններով անդրադարձել են ժամանակի ու հետագայի գրեթե բոլոր պատմիչները. «Ի ՇՁԸ թվին՝ ի ԺԷ. արեգ ամսոյ (արեգ՝ մարտի 7-ից ապրիլի 9-ը) շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք. եւ սուրբ վարդապետքն՝ Գրիգոր եւ Սարգիս ընկղմեցան...»[28] կամ «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղև յանկարծակի մէգ և մառախուղ, և լցաւ առհասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ...»[29], կամ «ՇՁԸ (588) թուին շարժմամբ կործանեցաւ Գանձակ»[30], կամ «Շարժ ի Գանձակ սաստիկ»[31], կամ «...յամսեանն արէգի, որ աւր ԺԸ էր ամսոյն, ի գիշերի ուրբաթում ի լուսանալ շաբաթուն, յորում աւուր տաւն էր սրբոյն Գէորգա զարթեաւ ցասումն բարկութեանն Աստուծոյ ի վերայ աշխարհի ի բռնութենէ հողմոց եւ շարժեալ անհնարին դողմամբ սաստիկ կործանումն հասուցանելով աշխարհիս Աղուանից, ըստ գրելումս, թէ՝ «Ո շարժէ զառ ի ներքոյս երկիր ի հիմանց, եւ սիւնք նորա դողան», եւ ըստ միւսումն՝ «Ո հայի յերկիր եւ տա դողալ սմա», որով շարժմամբ բազում աւերումն լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս Փառիսոսոյ եւ Խաչինոյ, առ հասարակ ի դաշտս եւ ի լերինս, յորում եւ մայրաքաղաք Գանձակ յանդունդս կործանիւր՝ խորասույզ անելով զբնակիչսն իւր, քանզի չորս կողմ երեսաց նորա սնոյց, ամփոփեաց զնոսա ի ծոց իւր: Եւ ի լեռնակողմանս բազում դղեակք եւ գեղք տապալեցան հանդերձ վանորայիւք եւ եկեղեցեաւք, որք փլան ի վերայ գլխոյ բնակչաց իւրեանց: Յորում եւ անթիւք սատակեցան ի կործանել շինուածոց եւ աշտարակաց...»[32], կամ «ՇՁԸ (1139) թվին շարժմամբ կործանեցաւ Գանձակ»[33]:

Հատկապես արժեքավոր է Իբն-ալ-Ասիրի վկայությունը, որտեղ պատմիչը նշում ունի նաև զոհերի թվաքանակի վերաբերյալ. «Այդ տարում Գանձակում (Քանջա, Ջանջա) և Ատրպատականի ու Առանի այլ կողմերում երկրաշարժ եղավ, սակայն ամենաուժեղը Գանձակում էր, ուր շատ տներ կործանվեցին: Անհամար ժողովուրդ զոհվեց, ասվում է, որ մեռածների թիվը երկու հարյուր երեսուն հազար էր: Մեռածների թվում էին երկրի տեր Կարասունկարի երկու որդիները»[34]:

**Գանձակը երկրաշարժից հետո և մինչև ԺԳ դարը.** 1139 թ. երկրաշարժից անմիջապես հետո վրաց զորքերը, օգտվելով աղետի ընձեռած հնարավորությունից, արշավում են Գանձակի վրա և կողոպտում փլատակների վերածված քաղաքը, իսկ ողջ մնացածներին սպանում կամ գերեվարում. «...եկեալ ի քաղ(աքն) Գանձակ յառաջնորդութեան զաւրագլխին իւրոյ Իւանէի, որ եկեալք անողորմ եւ գազանային բարուք՝ յարեան ի վերայ մնացորդաց մարդկանն՝ վարելով առ հասարակ ի սուր եւ ի գերութիւն, որ թէպէտ եւ տեսին զքաղաքն զայն, որ յառաջագոյն էր քաղաք վայելուչ, որպէս զդժոխք եղեալ յանկարծակի զի միասին կուտեալ էին ի նմա բլուրք ոսկւոյ եւ բլուրք ոսկերաց մարդկան, յորում եւ անկեալ կային անթիւ բազմութիւնք դիականց, սակայն ոչ կամեցան առնել ողորմութիւն ի վերայ նորա, այլ փորէին՝ հանելով գանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ գերելով եւ տառապանօք առաւել չարչարեցին քան զժամանն»[35]:

Նույն՝ 1139 թվականին էլ կործանված քաղաքը վերաշինվում է Խարասնգուր (Կարասունգուր, մահ. 1141 թ.) ամիրայի կողմից. «...ելեալ յաշխարհէն Պարսից՝ եկն ի գաւառս Առանայ եւ սկիզբն արար շինութեան եւ հաստատութեան այսմ աշխարհի. եւ շինեաց զաւերեալ պարիսպ քաղաքին Գանձակայ. եւ առնէր խաղաղութիւն ամենայն սահմանաց սորա...»[36]:

Գանձակի շահապի օգնական ոմն Խուհտուղտիի գլխավորությամբ իշխանության դեմ 1142 թ. կազմակերպած ապստամբությունը պատճառ է

23. **Վարդան վարդապետ**, էջ 118: Տե՛ս նաև՝ **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 91:
24. **Վարդան վարդապետ**, էջ 1118-119:
25. Նույն տեղում, էջ 166:
26. **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 407:
27. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 116:
28. **Սամուէլ Անէցի**, էջ 132:
29. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 200: Նաև՝ **Վարդան վարդապետ**, էջ 124 («Ի հինգհարիւր ութսուն և ութ թուին կործանեցաւ Գանձակ ի շարժմանէ»):
30. **Աբրահամյան Ա.**, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 133:
31. **Մխիթար Այրիվանեցի**, էջ 61:
32. **Մովսէս Կաղանկատուացի** Պատմութիւն Աղուանից Աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի (հավելված, հեղինակ՝ **Մխիթար Գոշ**), Երևան, 1983, էջ 352:
33. «Մանր Ժամանակագրություններ», հ. Ա, կազմեց՝ Հակոբյան Վ. Ա. (այսուհետև՝ «ՄԺԱ»), Երևան, 1951, էջ 25:
34. **Իբն-ալ-Ասիր**, էջ 250:
35. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 352:
36. Նույն տեղում: Տե՛ս նաև՝ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, էջ 153:

դառնում, որ սելջուկ զորապետ Չոլին 1143 թ. գրավի քաղաքը. «...եկեալ անթիւ զաւրաւք ի դուռն Գանձակա, յորում եւ ապստամբեալ էր Խուխտուղտի: Եւ պաշարեալ զքաղաքն ամիս մի՝ առնոյր զնա, եւ կալեալ զԽուխտուղտի՝ փորեաց զաչս նորա եւ ինքն նուաճեց զամենիսեան ի ՇՂԲ թուականին»[37]:

1146/1147 թթ. հանկարծամահ եղած Չոլիին Գանձակում փոխարինում է Փախրադինը, որն էլ սպանվում է 1147/1148 թթ.: Վերջինիս հաջորդում է Ռովադի ամիրան. նա էլ գլխավորում է քաղաքի վերաշինության գործը. «ՇՂԷ (1148) թվին շինեցաւ Գանձակ»[38]:

ԺԲ դարի 2-րդ կեսին և հատկապես 1165/1166 թթ., երբ վրացիները գրավում են քաղաքը, այն ենթարկվում է ավարի ու ավերի. «...վրացիք (քուրջ) մեծ զորքով դուրս եկան և ասպատակեցին տարբեր գավառներ, մինչև որ հասան Գանձակ (Քանջա, Գանջա) կոտորեցին, գերեցին, շատերին գերեվարեցին և անհաշիվ կողոպտեցին»[39]:

**Անվանի գանձակեցիներ.** ծնունդով գանձակեցիներ էին ԺԲ-ԺԳ դարերում ստեղծագործած հայ մշակույթի խոշոր ներկայացուցիչներ Մխիթար Գոշը («Հռչակաւորն այն և մեծիմաստն գիտութեամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ...»)[40], գրիչ Թորոս Արևելցին («...ծառայ Աստուծոյ Թորոս պիտակաբար սպասաւոր բանի յԱրևելից գաւառաւ, և քաղաքաւ ի Գանձակայ...»)[41], Անիի շրջապարսպի աշտարակներից մեկի հեղինակ, ճարտարապետ Մխիթարիչը[42] և այլոք:

**Գանձակը ԺԳ դարում.** 1220-ական թվականները գանձակեցիների համար իրար հաջորդած պատերազմական գործողությունների աննախադեպ ծանր ժամանակաշրջան էին:

1220/1221 թթ. Քուշխարայի[43] ամիրայի օրոք Գանձակը գրավելու փորձ են անում մոնղոլները, սակայն բավարարվում են տուրքեր գանձելով. «...գնացին Գանձակ (Քանջա) քաղաքը, որը Առան երկրի մայր [քաղաքն] է, սակայն իմանալով նրա բնակիչների բազմամարդության և վրացիների (քուրջ) դեմ հաճախակի կռիվների ընթացքում ձեռք բերած քաջության ու անառիկության մասին, չհամարձակվեցին, այլ լուր ուղարկեցին՝ բնակիչներին պահանջելով դրամ ու զգեստներ: Սրանք ուղարկեցին ինչ որ պահանջվում էր և նրանք (թաթարները) հեռացան»[44]:

1225/1226 թթ. Գանձակի պարիսպների տակ հերթական ջախջախիչ հարվածն են ստանում քաղաքը թալանելու մտադրությամբ այստեղ հասած վրացական զորքերը. «Նրանք իրենց ամբողջ ուժը գործադրեցին, որովհետև Գանձակի ժողովուրդը բազմամարդ էր, շատ ուժեղ և վրացիների հետ հաճախակի ընդհարումների հետևանքով մեծ քաջություն էր ձեռք բերել: Երբ վրացիք հասան նրանց մոտ, մերձեցան ու մի քանի օր կռվեցին բնակիչների հետ, որոնք պարիսպների ետևում էին և նրանցից ոչ ոք չէր երևում: Սակայն մի օր Գանձակի մարդիկ քաղաքից դուրս եկան իրենց զորքերի հետ միասին և վրացիների հետ սաստիկ ու համառ կռիվ տեղի ունեցավ քաղաքից դուրս: Երբ վրացիք այս բանը տեսան, համոզվեցին, որ իրենք ի վիճակի չեն քաղաքը գրավել և հեռացան այն բանից հետո, երբ Գանձակի բնակիչները նրանց պարտության էին մատնել»[45]:

Նույն տարում Գանձակը գրավում է Խորեզմշահ սուլթան Ջալալ-էդ-Դինը. «...եկն նա ի քաղաքն Գանձակ և առ զնա»[46]:

1229 թ.[47] Գանձակն ավերում են մոնղոլ-թաթարները. «Եւ յանկարծակի հասին զօրքն թաթար, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եդեալ՝ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք. և հարին զայգեստանսն, որ շուրջ զքաղաքաւն էին: Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին փիլիկուանօք յամենայն կողմանց. և ոչ ոք եմուտ ի քաղաքն ի թշնամեացն, այլ վառեալ զինու՝ պահեցին զքաղաքն շաբաթ մի: Իսկ բնակիչք քաղաքին իբրեւ տեսին, թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր՝ այրեաց ի վերայ իւր զշինուածն, զի մի՛ անկցի ի ձեռս թշնամեացն. և այլք այրեցին զամենայն, որ ինչ ծախիւր ի հրոյ, և ինքեանք միայն մնացին: Եւ զայն տեսեալ թշնամեացն՝ առաւել եւս ի ցասումն բարկութեան բրդեցան և սուր ի գործ արկեալ, զամենեսեան ճարակ սրոյ ետուն՝ զարս և զկանայս և զմանկունս: Եւ ոչ ոք զերծաւ ի նոցանէ, բայց սակաւ գունդ մի զօրու՝ վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ, պատառեցին զմի կողմ պարսպին ի գիշերի, և գնացին փախստական. և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահեցին և խոշտանգեցին՝ ցուցանել զգանձսն ուր պահեալ իցեն: Ապա զոմանս սպանին, և զկէսն գե-

37. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 353: Դեպքերի ավելի հակիրճ նկարագրությունն ունի Մխիթար Գոշը. «Եւ պաշարեալ զքաղաքն ամիս մի՝ առնոյր զնա...» (**Մովսէս Կաղանկատուացի**, էջ 353): Տե՛ս նաև՝ **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 100, 407:

38. «ՄԺԱ», էջ 25:

39. **Իբն-ալ-Ասիր**, էջ 262:

40. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 207:

41. «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (այսուհերև՝ «ԺԳ»), կազմեց՝ Մաթևոսյան Ա., Երևան, 1984, էջ 313: Ի դեպ, Թորոս գրչի ստեղծագործություններից հայտնի է 1262 թ. Հռոմում գրված «Նոր Կտակարան» ձեռագիրը:

42. «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան...»), պր. 1, Անի քաղաք, կազմեց **Օրբելի Հ. Ա.**, Երևան, 1966, էջ 2 («Մխիթարիչի աշտարակ»-ը կառուցվել է 1215 թ.):

43. **Իբն-ալ-Ասիր**, էջ 310:

44. Նույն տեղում, էջ 303:

45. Նույն տեղում, էջ 317:

46. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 224: Տե՛ս նաև՝ **Իբն-ալ-Ասիր**, էջ 322:

47. Տարբեր աղբյուրներ մոնղոլների կողմից Գանձակի ավերման տարեթիվը ցույց են տալիս 1229-1235 թթ. ընկած ժամանակահատվածում: Այդ տարեթվի հետ առնչվող տարաձայնությունների մասին տե՛ս՝ «ՄԺԱ», էջ 29-30, ծանոթ. N 30:

րի վարեցին. և ինքեանք բրեցին զայրեալ տունսն և հանին զորս գտին թաքուցեալ: Եւ զայս արարեալ զաւուրս բազումս՝ ի բաց գնացին»[48]:

4 ամիս քաղաքը մնում է ամայի, թալանված ու ավեր, մինչև որ «...հրաման ետուն շինութեան քաղաքին: Եւ եկին ժողովեցան առ սակաւ սակաւ և սկսան շինել զնա՝ բայց ի պարսպէն»[49]:

1253-1255 թթ. Գանձակ այցելած ֆլամանդացի ճանապարհորդ, ուղեգրող Վիլլեմ Ռուբրուքը նշել է. «...լեռների ստորոտում գտնվում է մի մեծ քաղաք Գանջե (Գանձակ) անունով, որ ժամանակով նրանց մայրաքաղաքն էր և արգելք էր հանդիսանում վրացիների իջնելուն դեպի այս հովիտը...»[50]:

**Գանձակը ԺԴ-ԺԵ դարերում.** մոնղոլ-թաթարական արշավանքը, ամենայն հավանականությամբ, այն աստիճան կորստաբեր է եղել Գանձակի համար, որ դրանից հետո և հաջորդ երկու հարյուրամյակներում քաղաքի մասին հիշատակությունները գրեթե հազվադեպ են:

**Գանձակը ԺԶ դարում.** 1541 թ. Գանձակը նվաճում է պարսից շահ Թահմազը. «Շահ Թահմազ, որդի շահ Իսմայիլին նստաւ թախտ թվին ՋՀԵ (1526): Եւ թվին ՋՂ (1541) գնաց էառ Երևան, Գանջայ, Շամախի...»[51]:

1552 թ. Գանձակի կուսակալ է նշանակվում Շահվերդ սուլթանը. «Շահվերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) տերը՝ որը դաենից կուսակալ էր նշանակված...»[52]:

1578/1579 թթ. գանձակեցիները զոհ են գնում ոչ միայն տարածված համաճարակին, այլ նաև Օսման զորապետի արշավանքին. «Քրոնիկոնի 266-ին (1578) խոնթքարի զորքն ելավ և նվաճեց Թավրիզն, Երևանը, Գանձակը...»[53]:

1580 թ. սուլթան Մուրադը, ի թիվս Թավրիզի, Երևանի, Արաշի և Շամախիից մինչև Ալանների երկիրը, գրավում է նաև Գանձակը. «Իսկ ի 1029 թուականիս՝ գան զօրք բազումք ի Բիւզանդիոյ հրամանաւ սուլտան Մուրատի կայսեր. որոց եկեալ մտանեն ի սահմանս պարսից տէրութեան՝ և առին զԹաւրէզ, զԵրևան, զԳանձակ, զԱրաշ, զՇամքոր և մինչ յանդր քան զդուռն ալանաց»[54]:

1585 թ. «Ի թվին ՌԼԴ (1585) Օսման փաշան անթիւ հեծելով գնաց իառ ... զԿանճա ...»[55]:

1588/1589 թթ. Մուրադ սուլթանը ոմն Ֆահրադի ուղարկում է Գանձակ՝ «կարմրագլուխներին» պատժելու և տեղում բերդ կառուցելու համար. «Իսկ ի ՌԼԷ (1588) թվականին դարձեալ հրաման ել Մուրատ խոնդկարէն յումեմն Ֆահրատ կոչեցելոյ, ... զզօրապետութիւն կողմանս յարևելից յետ Լալային, ... առաքեաց ի վերայ Գանճայոյ՝ հեռացուցանել զմնացեալ սակաւ Կարմրագլուխքն, որ յանդ և շինել ի նմա բերդ և դառնալ. որ և եկն իսկ ծանր զօրու և արար ըստ հրամանի խօնդքարին...: Եւ ինքն դարձաւ և շինեաց բերդ ի Գանճայ և կարգեաց ի նմա զաւրս...»[56]:

48. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 236-237: Նաև՝ «...յաւելեալ յինքն անհուն բազմութիւն առաջնորդ ունելով զՉարմաղանն կոչեցեալ զօրապետ, գայ ի Գանձակ շահաստանի ի վեցհարիւր եօթանասուն և որս թուին. պաշարէ զնա աւուրս ինչ և առնու. և կոտորէ անողորմաբար, բաց ի մատաղ տղայոց և ի կանանց՝ յորս հաճէին» (**Վարդան վարդապետ**, Երևան, 2001, էջ 192-193): Նաև՝ «ՈՀԸ (1229) անհուն բազմութեամբ ելանէ Թաթարն, որ էր գլուխ զօրուն Չարմաղանն գայ հասանէ ի Գանձակ շահաստան, առնու զքաղաքն և կոտորէ անողորմաբար և զկանայս և զտղայս գերէին» («Մանր ժամանակագրություններ», հ. Բ (այսուհետև՝ «ՄԺԲ»), կազմեց՝ **Հակոբյան Վ. Ա.**, Երևան, 1956, էջ 139): Նաև՝ «Անցան Արաքսն ու գնացին Գանձակ, որը խիստ ամրացված էր, և երեք օր կռվելուց հետո թաթարներն անմիջապես գրավեցին: Ներս մտան քաղաք, ավերեցին ու բազում մարդկանց կոտորեցին, որովհետև Մուհամեդի քարոզած կրոնը հակակրելի համարեցին»» («Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունը Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 71): Նաև՝ «...եկն ազգն նետողաց և զմայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ՝ կոտորեաց զմարդ և զանասուն և զբազումս ի քրիստովնէիցն» («ԺԳ», էջ 183): Նաև՝ «ՈՋ (1231 թվին առաւ Գանձակ քաղաք ի թաթարէն և կոտորեցաւ անչափ մարդ և կանայք և մանկունք, գերեցան քրիստոնեայք և պարսիկք առհասարակ» («ՄԺԱ», էջ 26): Նաև՝ «Թուին ՈՋ թաթարն զԽորազմն կոտորեաց և էառ զԳանձակ» (**Առաքել Դաւրիժեցի**, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 469): Նաև՝ «Եւ ի յաջորդ ամի դիմեալ ի վերա Գանձակայ՝ սկսան պատերազմիլ ընդ նմա ուժգին, և վտանգեցին զպարիսպ նորա: Քաղաքացիքն թէպէտև քաջութեամբ վանէին զնոսա, բայց իբրև տեսին՝ եթէ կարի սաստկացաւ պատերազմ նոցա ի վերա իւրեանց, հատին զյոյս ազատութեան անձանց: Եւ ապա հնարս փախստեան խորհելով՝ նախ թաղեցին զստացուածս իւրեանց զամենայն ի գետնի, և արկին հուր ի տունս, զի մի թշնամեացն յաւարի առեալ՝ լիասցին ընչիւք իւրեանց. և ապա կործանեալ ի ներքուստ զմիւս կողմն պարսպին՝ սկսան փախչիլ: Զայն տեսեալ թաթարաց՝ յարձակեցան ի ներքս, և կոտորեցին զամենայն մնացեալ մարդ՝ բաց ի մանկանց և ի մանկամարդաց. և ապա սկսան պեղել զայրեալ տեղիսն. յորս և գտին ստացուած բազում յոյժ: Եւ թողեալ զքաղաքն այնպէս քանդէալ՝ դարձան ի բանակատեղ իւրեանց ի Մուղան...» (**Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, էջ 206):

49. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 237:

50. **Հակոբյան Հովh.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 12:

51. «Մանր Ժամանակագրություններ», հ. Բ (այսուհետև՝ «ՄԺԲ»), կազմեց՝ Հակոբյան Վ. Ա., Երևան, 1956 էջ 427:

52. **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 111:

53. Նույն տեղում, էջ 137: Տե՛ս նաև՝ **Առաքել Դաւրիժեցի,** նշվ. աշխ., էջ 458-459: Նաև՝ 1578 թ. Լալա փաշան «...էառ զԳանձակ, որ է Կէնճէ...» կամ «...եհաս Օսման փաշայն բազմութեամբ ի կողմանցն Կովկասու և թաթարաց յերկիրն Աղուանից ի Շիրուան. և անցեալ յայսկոյս կուր գետոյ՝ ասպատակ սփռեաց, և յաւարի էառ զամենայն երկիրն, զՊարտաւ, զԳանձակ...» (**Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. 3, էջ 530):

54. **Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ**, Պատմութիւն Պարսից (այսուհետև՝ **Խաչատուր Ջուղայեցի**, Համապատասխան էջերով), Վաղարշապատ, 1905, էջ 101: Տե՛ս նաև՝ «ՄԺԲ», էջ 516:

55. «ՄԺԱ», էջ 173:

56. «ՄԺԲ», էջ 246: Տե՛ս նաև «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1974 (այսուհերև՝ «ԺԷԱ» համապատասխան էջերով), էջ 217: Նաև՝ «Փահրատ փաշէն, որ Գանճայ առաւ. թիւն ՌԼԸ (1589) էր» («ՄԺԱ», էջ 145):

**Գանձակը ԺԷ դարի առաջին կեսին.** հայտնի է, որ 1603 թ.[57] Շահ-Աբասը Թավրիզը գրավելուց հետո Ամիրգունա խանին ուղարկում է Գանձակ՝ թուրքական զորքին դիմագրավելու համար. «...Եւ նա գնացեալ ի Գանջայ եկաց ամիսս երկուս, և իբրև գիտաց թէ տկար են Օսմանցիքն՝ և ո՛չ կարեն զայն առնել, յայնժամ զերկիրն Գանձակայ՝ ուր և կարաց հասանել, հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին Պարսից»[58]:

Պատմական նույն անցքերի վերաբերյալ ուշագրավ վկայություն է թողել իսպանացի հոգևորական Անտոնիո դե Գուվեան: Ըստ նրա, երբ դեռ Երևանը պաշարման մեջ էր, Շահ-Աբասը Շիրվանն ու Ղարաբաղն ասպատակելու համար ուղարկում է իր զորավարներից Հուսեյն խան Զիյադօղլի Կաջարին, որը «...սկսեց այրել գյուղերը, հնձել բերքը և ավերել ամեն ինչ, որ գտնվում էր Գյանջայի շրջակայքում ու այս միջոցով ստիպել ամրոցում ապաստանած փաշային բռնվել մարտի... սպանվեցին չորս հազար թուրքեր... և շրջակա գյուղերի ու ավանների ավարի հետ ներկայացան թագավորին՝ նրան նվիրելով բազմաթիվ այլ իրերի հետ տասներկու հազար ստրուկ կանայք, մեծ մասամբ աղջիկներ»[59]:

1604 թ. «Գէնջոյ դուլն երետ Թէռէտաման խիստ կոտորեց...»[60]: Նույն թվականին քաղաքը հիշվում է նաև գերիների վաճառքի փաստի առնչությամբ. «Տարան ի քաղաքն Գանձակոյ վաճառեցին որդիքն ի վերայ հարցն, կինն ի վերայ յայրսն, որն Ճ (100) մարչիլ, որն Ծ (50), այլ աւել և պակաս»[61]:

1606 թ. գարնանը Շահ-Աբասին հաջողվում է թուրքերից գրավել Գանձակի բերդը և տեր նշանակել Աղսաղ Մահմադ խանին. «...ի ժամանակս գարնան ժողովեաց զամենայն զօրս իւր՝ և գնաց ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ որք տակաւին էին ի քաղաքին Գանձակայ՝ որ է Գանջայ, յորում ամի էր թուականն մեր ՌԾԵ. և ի հասանելն անդր շրջապատեալ զբերդն նստաւ ի վերայ: Եւ զերկիրն ամենայն գրաւեալ ընդ իւրով իշխանութեամբն և պահէր ի խաղաղութեան, հրաման արարեալ իւրոց զօրացն մի՛ զոք խուել՝ և մի՛ զոք բռնադատել ի բնակչաց երկրին, ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք նցա՝ մարդկան և անասնոց: Եւ ինքն շահն ուշ եդեալ գործոյ պատերազմին՝ զի առցէ զբերդն պէս պէս հնարիւք: Եւ մինչ ետես շահն թէ սակաւ ինչ երկարի գործ պատերազմին ձուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս, հզօրս և ուժգնաբաղխս որոց ի ձգելն կարի փլուցանէր զպարիսպ բերդին. և սովաւ յոյժ վտանգ լինէր Օսմանցւոցն: Ի վերջոյ ամենայն պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն Օսմանցւոց հայէին շուրջ զինքեամբ, զի ոչ յուստեքէ գոյր նցա օգնական՝ ոչ յիւրեանց շրջակայ քաղաքացն, նաև ոչ ի դրանէ թագաւորին իւրեանց...: Այլ և փաշայն Գանջայու անկեալ էր ի պատերազմին՝ որոյ անունն էր Չընջիլղռան Ալի փաշայ: Այլ և նոր ձուլեալ թօփն կարի փլուցանէր զպարիսպն. վասն որոյ յամենայն կողմանց ի նեղ անկեալք Օսմանցիքն ետուն զբերդն Պարսից: Իբրև էառ շահն զբերդն Գանձակայ՝ տիրեաց ամենայն երկրին և կարգեաց անդէն իշխեցող զոմն՝ որում անունն էր Աղսաղ Մահմատ խան»[62]:

Շահ-Աբասը քաղաքը գրավելուց հետո ձեռնամուխ է լինում Գանձակի կառուցապատման գործին. «...Գյանջան ընկավ Շահ-Աբասի տիրապետության ներքո, որն էլ հենց ինքը գծեց քաղաքի հատակագիծը, նրա կառուցապատման համար հատկացրեց հսկայական գումար, հրամայեց կառուցել երեք մզկիթ Իտամզաղեում, որտեղ այժմ կանգնած մզկիթն է, և բնակիչներին ազատեց հարկերից ու պարտականություններից: Ապագա սերունդների հիշողության համար քաղաքին տվեց Աբաս-Աբադ անունը, այսինքն՝ Աբասի կառույցներ, իսկ մյուս քաղաքների նկատմամբ գերակշռություն

57. Հարկ է նշել, որ սկզբնաղբյուրների պարունակած տվյալները Գանձակի գրավման տարեթվի առնչությամբ միանշանակ չեն և տատանվում են 1603-1606 թթ. միջակայքում:

58. **Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ**, նշվ. աշխ., էջ 70: Նաև՝ «...1012 (1603) թվականին աջեմները գրավելով Գենջեն ու Շիրվանը...» (**Էվլիյա Չելեբի**, էջ 82): Նաև՝ «ՌԾԴ (1605) թվին Գանջա առաւ» («ՄԺԱ», էջ 146): Նաև՝ «ՌԾԴ (1605)-ին Գանձակ էառ» («ՄԺԲ», էջ 272): Նաև՝ «Գենջեյի բեյլերբեյին՝ Մուհամմեդ փաշան յոթ ամիս պաշարված մնաց: Գիշեր և ցերեկ անդադար կռվեց, բայց ի վերջո, երբ պաշարվածներն օգնություն ստանալու հույսը կորցրին «ամանով» հանձնվեցին» («Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց **Սաֆրաստյան Ա.**, Երևան, 1961, էջ 55): Տե՛ս նաև՝ հ. Բ, էջ 94:

59. Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereures de Turquie Mahomet et Achmet son fils. Par le P. Fr. **Anthoine de Gouvea**, traduit de l'originale portugais. Rouen, 1646, p. 246. Տե՛ս նաև՝ **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 142:

60. «ԺԷԱ», էջ 133:

61. Նույն տեղում, էջ 134:

62. **Առաքել Դաւրիժեցի**, էջ 112-113, նաև՝ էջ 478 («...Շահաբասն գնաց ի վերայ Գանջայու և էառ զնա յՕսմանցւոյ): Տե՛ս նաև՝ «ԺԷԱ», էջ 207 (ի դեպ, ձեռագիր հիշատակարանում Գանձակի բերդի գրավման դեպքերի նկարագրությունը մնացել է անավարտ), նաև՝ էջ 218-219 («...եկեալ նստաւ ի վերայ բերդին Գանջայոյ Դ (4) ամիսս, ապա էառ և կողոպտեաց անխնայաբար»): Նույն դեպքերին է անդրադարձել նաև Դավիթ Գեղամեցի գրիչը՝ 1610 թ. գրած չափածո հետևյալ տողերով.
«Յորժամ յաղթեաց մեծ վազ[րին],
Եկեալ ի վրայ Գանճու քաղքին,
Նըստան բոլոր շուրջ ըզբերդին,
Չորս ամիս ապա առին:
Սուր ի վերայ նցա եդին,
Ումար ազգն կոտորեցին,
Քըսան հազար այլ աւելին,
Որք բնակեալ էին ի մէջ բերդին» («ԺԷԱ», էջ 367): Նաև՝ «Էառ ի ձեռաց Օսմանցոց ... զԳանջայ...» («ՄԺԲ», էջ 428):Նաև՝ «ՌԾԵ (1606) թվին զԳանճայ էառ» («ՄԺԱ», էջ 145):

ունենալու համար այն անվանեց Շիրվանի բանալի»[63]: Պարսկաստան մեկնելիս Շահ-Աբասը Գյանջայի խանության կառավարիչ է նշանակում Աբաս-Ղուլի-Խան Զիատխանովին[64]:

Հայտնի է, որ 1607 թ. գերեվարված շատ մարդկանց «Գանջոյ քաղաքէն» ազատել է պարոնտեր Օհանը[65]:

1612 թ. Թուրքիան ու Պարսկաստանը կնքում են հաշտության պայմանագիր, որը խախտվում է ընդամենը 4 տարի անց[66]:

1626 թ. քաղաքի վրա հարձակում են գործել վրացիները. պարսիկներն առանց դիմադրություն ցույց տալու դիմել են փախուստի. «...ազգն Վրաց՝ Մովրաւ ասին անուն նորայ, վասն մեր մեղաց եկեալ բազում հեծելաւք հասօ ի Գանձակ քաղաք, որ այժ[մ] Գանջայ ասի: Եւ ոչ որ եզ անդ ազգէն ղզլպաշի, քանզի [յ]որժամ լուան գալն Վրաց՝ փախրստական եղէն ի նմանէ»[67]:

Նույն թվականին թուրքերը Էարիֆ փաշայի գլխավորությամբ վերստին տիրում են Գանձակին. «...էառ մեծաւ պատերազմաւ զքաղաքն Գանձակ բայց էր խնամակալ բնակչաց տեղւոյն»[68]:

1633 թ. Գանձակն ամբողջությամբ ավերվել է. «...Թամուրազն [Գ]անջայ աւերեաց»[69]:

1636 թ. Գանձակի խան է հիշվում Մուհամմեդը[70]:

ԺԷ դարի կեսերին քաղաքի ոչ հեռու անցյալին ու ժամանակակից վիճակի նկարագրությանն անդրադարձած տեղագիր հեղինակները նշել են. «Այս քաղաքը Իրանի Շահ Թահմաս խանից 1014 (1605) թվականին ուժով գրավել է Ֆերհադ փաշան և իշխող է նշանակել Մուհամմեդ փաշային: Սակայն աջեմները մեծաքիվ զինվորներով վեց ամիս շարունակ պաշարել են քաղաքը: Մուսուլման ղազիները, օգնություն չստանալու պատճառով, ստիպված են եղել բերդը հանձնել և հեռանալ: Սակայն աջեմները բոլորին ոչնչացրել են: Էյրի Ֆաքիհ սուլթան Մուհամմեդ խանը տեղեկանալով այդ մասին, դիմում է որոշ նախաձեռնությունների, որոնք, սակայն անհետևանք են մնում: Ներկայումս [Գենջեն] աջեմների ձեռքումն է և մեծ քաղաք է: Շահը բերդը քանդել է տվել: Քաղաքն ունի 6000 տուն, այգիներ ու պարտեզներ, ջամի, խան, բարեգործական շինություններ, բաղնիք, բեդեստան և բարեշեն շուկա: Քաղաքը գտնվում է այգիներով ու պարտեզներով հարուստ մի դաշտում, իսկ հարավից լեռներ են: Լեռները ևս ամբողջովին այգիներով են ծածկված: Գենջեի թթի մետաքսը հայտնի է ամենուրեք: ...Այս քաղաքը իշխանության կենտրոնն է: Ունի 3000 ներքեր, քարտուղար, քալանթար, դարուղա, կադի և դատավորներ...»[71] կամ «Գենջեն՝ Երևանից չորս մերհելե դեպի արևելք ընկած հարթավայրում մի քաղաք է այգիներով և պարտեզներով: Ունի շատ առատ թուզ և պտուղներ: Քաղաքը կառուցել է Ռումի Իսքենդերը, իսկ Կուբադ Բին-ֆիրուզը այն նորոգել է: Անցյալում եղել է շատ մեծ և բարեշեն քաղաք: Դեռևս կան մեծ շենքերի մնացորդներ: Շատ ընտիր են նուռը, խաղողը և կաղինը»[72]:

**Գանձակը ԺԷ դարի երկրորդ կեսին.** 1663 թ. Գանձակի խանության կառավարումը ստանձնում է Ուղուրլու խանը. «Թիւն ՌՃԺԲ (1663) էր, որ Մըրթուզա Ղուլի խանն մեռաւ, խանութիւնն տուին Յօղըրլու խանին»[73]:

1668 թ. հունվարի 4-ին երկրաշարժ է գրանցվել նաև Գանձակում. «...ՌՃԺԷ (1668) յաւուր նաւակատեաց Յայտնութեան տեառն մերոյ ի լուսանալ առաւօտին, որ յասելն փառք ի բարձունս, աhագին որոտմամբ եւ սաչիւն դողաց երկիրն Շամախու, Գանձայու եւ Թիֆլիսու եւ Երեւանա»[74]:

**Գանձակը ԺԸ դարում.** այս դարը քաղաքի համար եղել է նույնքան փոթորկալից ու պատերազմաշատ, որքան, թերևս նախորդ բոլոր դարերը: Նախ 1721 թ. քաղաքի վրա հարձակվում են լեզգիները, որոնք իրենց հետ թալան տանելու փոխարեն ավելի քան 1000 սպանված են թողնում քաղաքի փողոցներում և փախչում. «...ազգէն Լազկացն թուով ոչ սակաւ քան զութ հազար, եկն ի վերայ քաղաքին Գանջայու մինչեւ եմուտ ի պողոտայն (այսինքն Քուչան), որ ի կողմն Սութօրուլան անուն գեղջն, թոյլ տալով քաղաքացւոցն: Եւ յորժամ մտին ի ներսն, ապա յարեան քաղաքացիքն և կալան աստի և անտի զանցս գնացից նոցա, և կոտորեցին ի նոցանէ մինչեւ ի հազար քսան և մի ոգիս աւելի կամ պակաս. և ոչ ինչ կարացին առնել. այլ յետս դարձեալ ամօթով գնացին ի տեղիս իւրեանց»[75]:

---

63. "Кавказский календарь на 1850 г.", Тифлис, 1849, с. 48 (ընագրում՝ "...Ганжа подпала подъ власть Шахъ-Аббаса, который самъ начерталъ планъ города, выдал для устройства его огромную сумму, приказалъ построить три мечети въ Итамзаде, гдѣ теперь зеленая мечеть, и освободилъ жителей отъ податей и повинностей. Въ память будущимъ поколѣниямъ онъ далъ городу название Аббасъ-Абада, т. е. постройки Аббаса, а въ преимущество предъ другими городами, назвалъ его ключемъ Ширвана").
64. Նույն տեղում:
65. «ԺէՍ», էջ 283: Ի դեպ, պարոնտեր Օհանը «գերությունից» ազատել է նաև մի շարք ձեռագրեր և նվիրել Սբ. Եղիշէի վանքին:
66. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 264:
67. «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Բ, կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1978 (այսուհետև՝ «ԺէԲ» համապատասխան էջերով), էջ 206:
68. «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 440:
69. «ԺէԲ», էջ 519:
70. «Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, էջ 109:
71. **Էվլիյա Չելեբի**, էջ 86:
72. «Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, էջ 14:
73. «ՄԺԱ», էջ 289:
74. **Հակոբ Կարնեցու** ժամանակագրությունը XVII դ., «ՄԺԱ», 243-244: Տե՛ս նաև՝ **Առաքել Դավրիժեցի**, էջ 522-523:
75. «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի յօրինեալ ի Տ. Եսայի Աղուանից կաթողիկոսէ Հասան Ջալալեանց» (այսուհետև՝ **Եսայի Հասան-Ջալալեանց**), Յերուսաղէմ, 1868, էջ 24:

Էրզրումի կառավարիչ Իբրահիմ փաշան Թիֆլիսը գրավելուց մեկ տարի անց՝ 1724 թ. աշնանը, պաշարում է Գանձակը. «Սկզբում այս արշավանքը իր համար բարեհաջող ելք ունեցավ: Նա նախ առանց դիմադրության հանդիպելու գրավեց հայերի արվարձանը, սակայն քաղաքի բնակիչները գոտեպնդվելով եկան հարձակվեցին մինչև իսկ իր ճամբարը: Այս հանդուգն գործողությունը իր անսպասելի արդյունքն ունեցավ: Բոլոր կողմերից պաշարված թուրքերը թողեցին հրետանին ու իրենց բեռները և բացահայտորեն բռնեցին փախուստի ճանապարհը: Այս ճակատամարտի ժամանակ թուրքերը կորցրին երեք հազար մարդ և խուճապի մատնված նրանց զորահրամանատարն իր բանակի մնացորդների հետ ստիպված նահանջեց Էրզրում՝ իր կառավարչության վայրը»[76]:

1734 թ. Գանձակ է մտնում Նադիր շահը. «ՌՃՁԳ (1734) թվին եկաւ Նադիր շահն Գանջու վերան, աշնան ժամանակին էր, որ եկն»[77]: Նույն թվականին Մուղանի դաշտում գումարված մեծ ժողովին մասնակցում է «Կէնճէու Ուղուրլու խանն»[78]:

1735 թ. Գանձակը հիշվում է թուրք-պարսկական պատերազմների առնչությամբ: Արդյունքում դադարեցվում է պարսկական զորքերի կողմից Գանձակի երկամյա պաշարումը. «Յորում ժամանակի պաշարեալ կայր Կէնճէն ի պարսից»[79]:

Նույն թվականի մարտի 10-ին Գանձակի մոտ գտնվող պարսկական բանակատեղիում ռուս իշխան Սերգեյ Դմիտրիևիչ Գոլիցինը վավերացնում է Մերձկասպյան երկրամասերը Պարսկաստանին վերադարձնելու մասին պայմանագիրը[80]:

Հայտնի է, որ «Թահմազ ղուլին Կանջայ կալավ ՌՃՁԵ (1736)»[81], իսկ «Հաջի չալաբին, որ եկաւ Կանջայ, կուրուն կոխեց ՌՄԱ (1752)»[82]:

1758 թ. սեպտեմբերի 13-ին Ղարաբաղի խանության հիմնադիր Փանահ խանը գրավում է Գանձակը. «ՌՄԷ (1758) թվին Փանահ խանն Գանջայ առաւ սուրբ Խաչին ժամանակն»[83]:

1795 թ. պարսից շահ Աղա Մուհամմադ խանը Թիֆլիսն ավերելուց հետո հարձակվել է Գանձակի վրա և գրավել այն[84]:

1796 թ. ռուս գեներալ Վալերիան Զուբովն առանց դիմադրության հանդիպելու գրավում է քաղաքը. «...խորհուրդ հասարակախնամ կայսերուհի թագուհւոյն ռուսաց հասեալ՝ առաքէ զզունդս զօրաց զօրավարութեամբ Զուպով ճայնեալ զխրագլխի ’ի կողմանս Գանձակայ՝ տիրէ այնմ յամի 1796, յամսեանն դեկտեմբերի...»[85], իսկ Գանձակի Ջավադ խանն իր հնազանդությունն ու հպատակությունն է հայտնում Ռուսաստանին[86]: Նույն թվականին՝ Եկատերինա Ալեքսեևնա թագուհու մահից հետո, Զուբովը վերադառնում է Ռուսաստան, և Գանձակը վերստին անցնում է Ջավադ խանի տիրապետության ներքո. «...օրհասին մահու մեծի թագուհւոյն յաստեացս և յաջորդեալ յաթոռ արքայութեան նորին Կայսերական մեծութեան Աղէքսանդրի առաջնոյ՝ յետս տայ կոչել զայս զինուորութիւն, ’ի քաջայարմար մտադրութեանց. թողլով անդրէն զայնոսիկ ’ի տեղիսն ’ի ձեռս նոյն առաջին աւերչացն»[87]: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ Շուշիի Իբրահիմ խանը Գանձակի վրա համատեղ ուժերով հարձակվելու առաջարկով դիմում է վրաց Հերակլ արքային. «Քանի որ Թիֆլիսի ավերման ու այս բոլոր արյունահեղությունների պատճառը Գանձակի Ջավադ խանն ու Ջրաբերդի Մելիք Մեջլումն էին, դու Վրաստանի զորքով, ես էլ՝ Ղարաբաղի, եկ միասին հարձակվենք Գանձակի վրա ու պատժենք նրանց»[88]: Առաջարկն ընդունվում է: Արշավելով Գանձակի վրա՝ նրանց հաջողվում է զավթել այն. «Գանձակի ամրոցը պաշարում են և որոշ ժամանակ անց այն գրավում: Մելիք Մեջլումը սպանվում է, իսկ Ջավադ խանը անձնատուր է լինում և իր որդուն ու քրոջը որպես պատանդ հանձնում Իբրահիմ խանին»[89]: Այդ դեպքերի մասին արժեքավոր տեղեկություններ ենք գտնում նաև Վարդան Օձնեցու մոտ. «...Իբրահիմ խանն Արցախայ, որ դաշնակից էր Հերակլ արքային վրաց և էր յայնժամ ի Տաղստան, վարձեալ անդէն երկոտասան հազար Կովկասային զօրս դեկաց միաւորեաց ընդ ութ հազար զօրց դաշնակցին իւրոյ Հերակլայ չուեցին ի վերայ Ջաւադ խանին Գանձակայ ի 1796 ամի քսան հազարաւ, վասն հատուցանելոյ նմա զվրէժ աւերման Տփխիս քաղաքի, երեք ամիս պայման եղեալ և վարձ իւրաքանչիւր անձին էր եօթն կամ տասն հատ ղադաք կտաւեայ և մէլ լիտր դմակ ոչխարի: Իսկ Ջաւադ խան պատրաստեցաւ պատերազմաւ դիմաւորել նոցա և հալածել յիւրմէ սահմանաց, բայց ոչ կարացեալ ամրացաւ ի բերդն, պաշարեաց Հերակլ զբերդն և ստէպ ռմբակոծէր զնոսա հուր տեղալով ի բերդն, և բերդականքն ոչ

76. **Mamiye-Clairac**, Histoire de Perse depuis le commencement de ce siecle, t. II, Paris, 1750, p. 121-122. Տե՛ս նաև՝ **Զուլալյան Մ.**, նշվ. աշխ., էջ 199:

77. «ՄԺԱ», էջ 396:

78. **Աբրահամ Կրետացի**, Պատմություն (այսուհետև՝ **Աբրահամ Կրետացի**), քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 94:

79. Նույն տեղում, էջ 47: Նաև՝ **Զուլալյան Մ.**, նշվ. աշխ., էջ 215:

80. “Кавказ”, 1903, N 261, с. 3.

81. **Հախումեան Աշ.**, Նիւթեր ազգային պատմութեան, «Արարատ», 1914, էջ 373:

82. Նույն տեղում:

83. «ՄԺԱ», էջ 396:

84. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն (այսուհետև՝ **Միրզա Յուսուֆ Ներսեսով**), թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Պ. Կոստիկյանի, Երևան, 2000, էջ 69:

85. «Դիւան հայոց պատմութեան» (1780-1834), գիրք Ա-Բ, կազմ. **Գիւտ քահանա Աղանեանց**, Թիֆլիս, 1893, էջ 30:

86. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 72:

87. «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա-Բ, էջ 30:

88. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 73:

89. Նույն տեղում:

պակաս պատասխանէին նոցա, որոց հրամանատար էր հայազգի մէլիք Մէջլում, որ ի վերայ միոյ բրգաց բերդին վէրս ընկալեալ ի զօրաց Հերակլայ մեռանի...: Եւ յետ յիսնօրեայ պաշարման բերդին նուաճեալ ըստ ամենայնի զՋաւադ խան ի հաշտութիւն խօսեցաւ, պարտաւորեցաւ տալ զվարձս վարձեալ զօրականաց ղեկաց Կովկասու, և զքանի հատ գերիս տփխիսեցի, զոր ունէին ի Գանձակ Ջաւադ խանն և մէլիք Մէջլումն և այլք, ապա զմեծ մասն բնակչաց երկրին Գանձակայ վարեաց ի Վրաստան...»[90]:

1800 թ. լեզգիները Օմար խանի գլխավորությամբ, չկարողանալով դիմադրել ռուսաց զորքին, փախչում են Գանձակ, սակայն գանձակեցիները «սրերը մերկացրած» հարձակվում են նրանց վրա և շատերին կոտորում[91]:

**Գանձակի գրավումը 1804, 1826 թթ.** ԺԹ դարի սկզբին Այսրկովկասը վերստին քաղաքական պայքարի թատերաբեմ էր: 1803 թ. վերջերին ռուսական զորքերը, հետևազորի գեներալ Պ. Դ. Ցիցիանովի (1754-1806) գլխավորությամբ շարժվելով Թիֆլիսից Գանձակի ուղղությամբ, պաշարում են և 1804 թ. հունվարի 3-ին տիրում բերդին. «Թէպէտ քաջարի զօրք ռուսաց կառավարութեամբ կուսակալին Տփխիսոյ Դիմիտրիչ Ցիցիանովի պաշարեալ զամրոցն Գանձակայ (Կէնջէ)՝ յորում ամրացեալ է Ջաւատ խան բռնաւոր այլազգի, և մարտ եղեալ ընդ այն սաստկապէս՝ առին մեծաւ յաղթութեամբ 'ի 1804 ամի, 'ի 3 ամսեանն յունվարի, յորում սպանեն զնոյն Ջաւատ խան և զփոքր զորդի նորա հանդերձ ընդ նոսա վառեալ զինուորօք աւելի քան հազար վեց հարիւր արանց յայլազգեաց անտի. այլ 'ի բազմութիւնէ ժողովրդոց հայազն բնակչաց քաղաքին ընդ մեծ և ընդ փոքր իբրև անձինք եօթն 'ի խռան անդ կոտորածի քաղաքին անկան հարեալ'ի հրացանիցն ռուսաց արտաքոյ գտանելով 'ի բոլոր հասարակութենէն՝ որք ժողովեալ յեկեղեցին և 'ի հրապարակ նորա, զերծան անվնաս»[92]: Նույն դեպքերի մանրամասն նկարագրությունը գտնում ենք նաև Միրզա Ներսեսովի երկում. «1803/1220 թ. մի պատկառելի զորախմբով (Ցիցիանովը - Ս. Կ) շարժվում է դեպի Գանձակ: Երբ Ջավադ խանը լսում է իշխան Ցիցիանովի Գանձակին մոտենալու մասին, իր իշխանավորներին ու ավագանուն խորհրդակցության է հրավիրում: Բոլորը, սկսած ախունդից ու սեիդներից, իրենց համաձայնությունն են տալիս [Ցիցիանովին] դիմադրություն ցույց տալու հարցում՝ ասելով. ,,Ռուսաստանի բանակը ինչպե՞ս կարող է Գանձակի բերդը գրավել, երբ անգամ Նադիր շահը իր ողջ հզորությամբ հանդերձ չկարողացավ այն նվաճել,,: Երբ ռուսական զորքը հասնում է Գանձակի շրջակայքը, Ջավադ խանը, տեսնելով նրա զորքի փոքրաքանակ բազմությունը, իր բանակով կռվի է դուրս գալիս: ...Որոշ մարտերից հետո Ջավադ խանը փախուստի է դիմում և, ամրանալով Գանձակի միջնաբերդում, սկսում պաշտպանվել: Այնուհետև ռուսական բանակը մտնելով քաղաք՝ միջնաբերդը չորս կողմից պաշարում է և ամեն կողմից փակում այնտեղ տանող ճանապարհները: [Շուտով ամրոցի] պաշարներից մնում են միայն հրազենի գնդակներն ու ծուխը: Պաշարումից մեկ ամիս անց քաղաքի բնակիչները ծանր վիճակում են հայտնվում: Գլխավոր հրամանատարը հարձակման է նախապատրաստվում և Ֆեթր տոնի գիշերը ռուսաց բանակը ... գրոհի է անցնում և սկսում պարիսպներն ի վեր մագլցել: Հաղթական զորագնդերը երկու կողմից սկսում են պարիսպներն ի վեր մագլցել: Ջավադ խանը խիզախ հարվածներով պաշտպանվում էր, մինչև որ ռուս սպա Լիսանչևի գնդակից սպանվում է, որից հետո ամրոցը ևս գրավվում է: ...Զորավարը տեղի բնակչությանը կոտորելու հրաման է տալիս: Երեք ժամ անդադար սրերը կոտորում ու արյուն են հեղում, որից հետո գլխավոր հրամանատարը կարգադրում է դադարեցնել կոտորածը»[93]:

Պ. Դ. Ցիցիանովը Գանձակը գրավելուց հետո քաղաքի «անունը ի պատիվ Ելիզավետա կայսրուհու վերանվանում է Ելիզավետպոլ»[94]:

1814 թ. դեկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրով քաղաքը մտնում է Գանձայի խանության մեջ՝ Ռուսաստանի կազմում:

Հայտնի է, որ 1826 թ. սեպտեմբերի 4-ին ռուսական զորքով Գանձակ է մտնում գեներալ Վ. Գ. Մադաթովը (1782-1829). «Շամխորի ճակատամարտից մեկ օր անց գեներալ Մադաթովը Գանձակ է մտնում և կազմակերպում նրա կառավարումը: ...Պաշարման ծանր դրությունից հանում է Քիլիսաքենդի հայերին, որոնք իրենց կյանքի ու կայքի համար անհանգստացած ամրացել էին իրենց թաղամասերում: Նրանց մեծամեծները՝ ավագներն ու տանուտերերը ներկայանում են [Մադաթովին] ու ողջունում նրանց»[95]:

**Գանձակը ԺԹ դ. երկրորդ կեսին.** 1861[96] և 1872[97] թթ. երկրաշարժերից (երկրորդ դեպքում, որը տեղի էր ունեցել սեպտեմբերի 2-ին, Գանձակի հայերը ապաստան էին գտել Սբ. Հովհաննես եկեղեցում) քաղաքը չէր վնասվել:

---

90. «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխատասիրությամբ **Ռ. Տ. Տիտանյանի**, Երևան, 1981, էջ 191:
91. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 81-82:
92. «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա-Բ, էջ 174:
93. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 81, 86-87: Նաև՝ **Հախումեան Ա2.**, նշվ. հոդվ., էջ 373 («Ուրուսըն Կանջայ առավ դաքլամ արաւ յունուարի... ումն էր ՌՄԾԳ (1804)»):
94. **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, էջ 87:
95. Նույն տեղում, էջ 131:
96. “Кавказский календарь на 1863 г.”, Тифлис, 1862, с. 74.
97. «Արարատ», 1872, էջ 371:

1868 թ. փետրվարի 19-ին Գանձակը դառնում է նոր կազմավորված Ելիզավետպոլի նահանգի կենտրոնը[97*]:

1870-ական թվականների վերջերին Գանձակ (Ելիզավետպոլ) այցելած «Կովկաս» թերթի թղթակիցը ահա այսպես հանգամանորեն է նկարագրել այն. «Ճարտարապետության տեսակետից դժվար է կամ ավելի ճիշտ հաստատապես անհնարին է Ելիզավետոպոլը քաղաք համարել: Դա ավերակների ինչ-որ անկարգ քաոս է, թաղված այգիների ծովի մեջ: ...Ձախակողմում ... տարածվում է քարե ցանկապատով շրջափակված քրիստոնեական գերեզմանոցը՝ եվրոպական ճարտարապետությամբ աչքի ընկնող մատուռով: Առջևում այգիներ են: Գերեզմանոցից անմիջապես հետո սկսվում է բուն քաղաքը: Այցելուներին ապշեցնում է փողոցների բացակայությունը: Դրանց առջևում ինչ-որ կեռ, անհավանական նեղ նրբանցքներ են՝ կեղտոտ և անհավասար: Այդ նրբանցքները երկու կողմերից եզերվում են հողե բարձր ցանկապատերով: Ցանկապատերից այն կողմ՝ աջ և ձախ կողմերում, երևում են աուլային տիպի խղճուկ հյուղակներ, և ինչ-որ տեղում աչքի են ընկնում չափազանց հինասիական ճարտարապետության տնակներ: ...նրբանցքների անկանոն լաբիրինթոսը ժամանակավորապես անհետանում է՝ իր տեղը զիջելով ինչ-որ դաշտի կամ ամենաանկանոն գծերով հրապարակի: Աջում երևում է հին պարսկական ամրոցը, որը ներկայում կիսովին քանդված է: Նրա ներսում երևում են զորամասային խղճուկ շինությունները, որոնցում գտնվում են Ելիզավետպոլի տեղական կադրային հրամանատարությունը և բանտը: Դրանցից այն կողմ ուղղափառ ոչ մեծ եկեղեցին է: Ամրոցից ձախ, կանգնած է մեծաչափ երկհարկանի անսվաղ մի կառույց, որը Ելիզավետոպոլի շրջանային դատարանի շենքն է: Այնուհետև իր վրա ուշադրություն է բևեռում շուկայական մեծ հրապարակը...: Դա Ելիզավետպոլի հանրահայտ «Շեյթան-շուկան» է: ...Հրապարակի հարավային կողմում Ալիևի մուսուլմանական մզկիթն է՝ բավականին ընդարձակ չափերով, կաթսայաձև գմբեթով և մզկիթի բակի մուտքի երկու կողմերում գտնվող երկու մինարեթներով: ...Այդ հրապարակից է սկսվում ավերակների վրա քաղաքի ոչ վաղուց առաջացած միակ խճուղային լայնարձակ փողոցը՝ անցկացված նախկին նահանգապետ իշխան Ն. Զ. Ճավճավաձեի նախաձեռնությամբ: Այդ փողոցը կոտրատված գծով ձգվում է մինչև Գյանջայի կամուրջը և այնուհետև շարունակվում մինչև հին հայկական եկեղեցին, քաղաքի հայկական թաղամասը, որը տարածվում է գետակի աջ ափին: Այսպես ասած՝ այն ելիզավետպոլյան փողոցների մարգարտահատիկն է և ողջ քաղաքի հպարտությունը: ...Մզկիթից ոչ հեռու գտնվում է քաղաքի միակ հյուրանոցը՝ «Կովկասը», մի շինություն, որն իրականում բավականին ընդարձակ է, սակայն ամենաանձև է, ավելի շուտ ունի արևելյան իջևանատան, քան թե նահանգային քաղաքի հյուրանոցի ոճ»[98]:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** 1905 թ. նոյեմբերի 18-ը Գանձակի և մերձակա թափառական ու նստակյաց թուրք ցեղախմբերի համար դառնում է մշտապես փայփայած, բայց իրագործելու համար հարմար առիթը ոչ միշտ ունեցած երազանքների իրականացման բաղձալի օր. «Մէկ քանի ժամուան մէջ հարիւրաւոր հայ խանութները կողոպտեցին մինչև վերջին թելը, ապա քանդեցին ու հրդեհեցան: Իշխանութիւնները այստեղ եւս անտարբեր հանդիսատես: Ոստիկանութիւնը՝ թուրք: Նահանգա-

97*. **Иксъ**, Губернский городъ Елисаветополь, “Кавказ”, 1880, N 243, с. 1.

98. **Иксъ**, նշվ. հոդվ., N 243, էջ 1-2 (բնագրում՝ “В архитектурном отношении трудно или, вернее сказать, решительно невозможно назвать Елисаветополь городом. Это какой-то безпорядочный хаос развалин, утопающих в целом море садов. ...Слева... расположено христианское кладбище, обнесенное каменным забором, с возвышающейся на нем часовней европейской архитектуры. Впереди сады. Тотчас после кладбища начинается самый город. Въезжающаго поражает отсутствие улиц. Перед ним какие-то извилистые, невероятно узкие переулки-грязные и неровные. Эти переулки обставлены с обеих сторон высокими земляными заборами. Направо и налево, за заборами, виднеются жалкия сакли чисто-аульнаго типа и кое-где попадаются домики допотопно-азиятской архитектуры. ...безпорядочный лабиринт переулков на время исчезает, уступая место чему-то в виде поля или площади с самыми неправильными очертаниями. Справа показывается старая персидская крепость, в настоящее время на половину разобранная. Внутри ея виднеются невзрачныя казарменныя постройки, в которых помещается Елисаветопольская местная кадровая команда и тюрьма. За ними православная церковь. Влево от крепости, одиноко, стоит размером в двух-этажное нештукатуренное здание-помещение Елисаветопольскаго окружнаго кладбища. Далее останавливает на себе внимание большая базарная площадь... Это знаменитый Елисаветопольский “Шайтанъ-базар”. ...На южной стороне площади-мусульманская Алиева учения мечеть, довольно обширных размеров, с котлообразным куполом и двумя, расположенными по обеим сторонам входа во дворе мечети, минаретами. ...От этой площади начинается, недавно возникшая на развалинах, единственная в городе шоссированная и уширенная улица, проложенная по инициативе бывшаго губернатора кн. Н. З. Чавчавадзе. Улица эта тянется ломанною линиею вплоть до моста через Ганжинку и продолжается далее, до старой армянской церкви, в армянской-же части города, расположенной на правом берегу речки. Это, так-сказать, перлъ елисаветопольских улиц и гордость всего города. ...Недалеко от мечети, на продолжении новой улицы, по левую ея сторону, стоит почти единственная въ городе гостиница “Кавказ”-здание, правда, довольно обширное, но в высшей степени безобразное, скорее тип восточнаго караван-сарая, нежели гостиницы в губернском городе”).

պետը՝ նոյն վրացի Տակայշվիլին, որ յայտնապէս կը հովանաւորէր թալանչիները: Կը հովանաւորեր այն աստիճան, որ թոյլ տուաւ քաղաք մտնել անգամ հռչակաւոր ավազակապետ Դալի Ալիին, որ հալածւած էր իշխանութիւններու կողմէն իր բազմաթիւ ոճիրներուն համար: Դալի Ալին ներս խուժեց իր 300 հրոսակներով և միացած իրենց ցեղակիցներուն՝ իրագործեցին արիւնոտ դաւը (նոյեմբեր 18): Թալանի հետ՝ ջարդ, հրդեհ ու աւերած: Կայրուէին հայ հարուստներու հոյակապ տուներ, կը կողոպտուէին անգամ եկեղեցիներ: Կոտորուեցան շատ մը խանութատէրեր, կոտորուեցան մանաւանդ հայ մշակները, որ անհոգ կաշխատէին այգիներու մէջ: 100է աւելի սպանուածներ»[99]: Ոգևորված ձեռք բերած թալանով՝ թուրք խաժամուժը, 3 օրվա ընթացքում համալրելով ուժերը, Դալի Ալիի գլխավորությամբ բուն հայոց թաղը (գետի աջափնյակը) ևս գրավելու ու ավարառելու մտադրությամբ վճռական հարձակման է անցնում նոյեմբերի 22-ի իրիկնադեմին: Սակայն մինչև լուսաբաց տևած համառ մարտերի արդյունքում թուրքերը ջարդվում են ու ետ շպրտվում. «Ժամը 9ին Բաղմանլարի թուրքաց դիրքերէն լսեցան հրացաններու ձայներ, որոնք երթալով բազմացան, դարձան անընդհատ: Մեր դիրքերէն պատասխանեցին արագ և վճռաբար: Մեր ուժերը շարժուեցան ու իրենց օղակի մէջ առին հայկական քաղաքամասը, որ կը բռնէր ընդարձակ տարածութիւն: Պատկառելի ուժեր կեդրոնացան թուրքաց քաղաքամասի հանդէպ գտնուող մեր դիրքերում: Հրամանատար Համազասպը, շրջանապետներ և խմբապետներ՝ ամենքը հանդիսաւոր ու վեհօրէն լուրջ - վայրկեանի լրջութեան համապատասխան - մտեր էին իրենց դերերուն մէջ և սրտատրոփ կը հետևէին դէպքերուն: Քսան հազար հայերու լինել-չլինելու խնդիրն էր դրւած անոնց առջև... Ոտքի վրա էր և շտաբը. Ռոստոմ, Աբրահամ կը շրջէին դիրքերը և անհրաժեշտ կարգադրութիւններ կընէին: Հրացանաձգութիւնը երթալով կը սաստկանար: Թուրքերը կը կրակէին իրենց բոլոր դիրքերէն, որոնք կը ձգւէին գետի ձախ ափի երկայնութեամբ: Մերոնք կը պատասխանէին աջ ափի երկայնքով բռնած իրենց դիրքերէն: Շուտով լսեցան կանոնաւոր զալպեր երկուստեք: Թուրքական զալպերուն հետ կը հնչէր սովորական «Եա՜ Ալի»ն: Թշնամին ճիգ կընէր իր բոլոր ուժերով խուժել հայոց քաղաքամասը: Ժամը 10ին կռիւը ահաւոր ծաւալ առաւ: Ողջ քաղաքը կը թնդար հրացաններու որոտէն: Երբեմն կորոտար և ռուսական թնդանօթը: Մերթ հայոց, մերթ թուրքաց ուղղութեամբ... «Շիտակ», «անաչառ» իշխանութեան կարգադրութեամբ: Աւելի յաճախ, սակայն, թնդանօթը կը գոռար հայ բանակի հասցէին: Ժամը տասն և կէսին թշնամի ուժերու մեծագոյն մասը ողղւեցաւ դէպի Դիք-Քիչա կոչւած փողոցի գլուխը, ուսկից հնարաւոր էր անոնց ներխուժումը: Մեր խումբերէն մաս մը թռաւ դէպի այն կողմը: Թուրքերը յետ նահանջեցին, դիրք բռնելով շրջակայ այգիներու մէջ: Երկու գեղջուկ կտրիճներ՝ Փիբեցի Խաչատուրը և Բանանցեցի Տօնունց Նիկօլը՝ աներկիւղ նետւեցին թուրքական ժխորին մէջ, դուրս քշեցին թշնամին այգիներու դիրքերէն, աջ ու ձախ կոտորելով... և ի վերջոյ իրենք ալ սպանւեցին, զոհ գնալով իրենց արտակարգ խիզախութեան...»[100]: Հայկական կողմը ևս մի քանի զոհեր է տալիս, բայց, ի վերջո, թուրքերի նկատմամբ տանում է լիակատար հաղթանակ:

**Գանձակը 1918-1920 թթ.** հայտնի է, որ դեռևս 1914 թ-ից պանթուրքիստներն ու պանիսլամիստներն ակտիվ գործունեություն էին ծավալել իրենց գաղափարները Այսրկովկասի մահմեդականների շրջանում տարածելու ուղղությամբ: Գանձակում այդ գործում մեծ էր տեղի ուսուցիչ Միրզա Հուսեյն Ռաֆֆի-զադեի դերը[101]:

1918 թ. մայիսի 27-ին, երբ մուսավաթականները հայտարարում են Ադրբեջանի անկախ հանրապետության ստեղծումը, կառավարությունը հաստատվում է Գանձակում՝ մոլի ազգայնական Խան-Խոյսկու (տեղական նախկին բեկերից) գլխավորությամբ[102]: Այդ կառավարությունը, որն իրականում թուրքական բանակի կամակատարն էր, Գանձակից Բաքու է փոխադրվում միայն թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո՝ 1918 թ. սեպտեմբերին[103]:

Թուրքական առաջին զորախմբերը մուտք են գործում Գանձակ 1918 թ. հունիսի 9-ին՝[104] Նուրի փաշայի (Էնվեր փաշայի խորթ եղբայրը) գլխավորությամբ: Դրանք հաջորդ օրը համալրվում են 5-րդ դիվիզիայի ստորաբաժանումներով: Երկու շարասյուներից բաղկացած թուրքական բանակը կազմված էր 257 սպայից և 5576 զինվորից[105]: Տեղակայվելուց անմիջապես հետո թուրքերը սկսում են հայերի նկատմամբ կիրառել արտակարգ միջոցառումներ: Ռյուշտու բեյի վկայությամբ՝ թուրքական հրամանատարությունը նախ և առաջ գրավոր զգուշացմամբ հայերից պահանջել է «անհապաղ հավաքել զենքերն ու հանձնել թուրքերին, հակառակ դեպքում տեղն ու տեղը կգնդակահարվեին նրանք,

---

99. **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 348:

100. Նույն տեղում, էջ 349-350:

101. **Սարգսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը, Երևան, 1964, էջ 110:

102. Նույն տեղում, էջ 375:

103. Նույն տեղում, էջ 422:

104. Ի դեպ, մեկ այլ ականատեսի վկայության համաձայն՝ թուրքերը Գանձակ են ներխուժել 1918 թ. մայիսի 28-ին. «...1918 թուի մայիսի 28-ին տաճիկները մտան Գանձակի քաղաքի հայոց մասը, տեղացի կռուող ույժը գնաց Գետաշենի կողմերը առանց կռուի» (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 23):

105. **Հարությունյան Ա. Հ.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 221-222:




***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). բերդի հատակագիծը (1804 թ.)***

ում մոտ կհայտնաբերվեր զենք»[106]: Հայերը կամ գոնե նրանց հիմնական մասը, սակայն, ոչ միայն չեն հանձնել զենքերը, այլ մինչև իսկ դուրս են եկել անհավասար կռվի: Հիշյալ Ռյուշտու բեյը հաղորդել է. «Այսօրվա մարտերում մեր կորուստները կազմեցին 13 սպանված և 6 վիրավոր, սպանվածների թվում էր նաև մեկ սպա»[107]: Թեև տեղեկություններ չկան հայերի կորուստների վերաբերյալ, սակայն հայտնի է, որ Նուրի փաշայի հրամանով հրետանային ռմբակոծության են ենթարկվել հայկական թաղամասերը[108]: Վկայություններ են պահպանվել նաև թուրքական հրամանատարության կողմից հայերին «խաղաղեցնելու» նպատակով ծախսված արկղերի և արկղերով փամփուշտների թվի վերաբերյալ[109]:

Հայտնի է, որ 1920 թ. հունվարի 9-ին վրաց մենշևիկների ղեկավար Նոյ Ժորդանիայի գործուն մասնակցությամբ մուսավաթականները հարձակվել են ռազմաճակատից տուն վերադարձող և Շամխոր, Դալյար, Աղստաֆա ու այլ կայարաններում կուտակված ռուս զինվորների վրա, կոտորել և տիրացել նրանց զինամթերքին: Միայն Շամխոր կայարանում զոհվել են հազարավոր ռուս զինվորներ. «...գազանաբար գնդակահարեցին Շամխոր կայարանում վագոններում նստած հազարավոր զինվորների: Երկաթուղագիծը ծածկվել էր զինվորների դիակներով: Էշելոնների ամբողջ զինամթերքը և զենքը մուսավաթականները խլեցին: Այդ արյունալի ընդհարումները կրկնվեցին Թիֆլիս, Գյանջա տանող երկաթուղագծի այն կայարաններում, որտեղ կուտակվել էին ռուսական զինվորների էշելոնները և շարունակվեցին մինչև հունվարի 12-ը»[110]: Կատարվածի առթիվ Ստ. Շահումյանը նշել է. «Մեծագույն ոճրագործություն է կատարվել ռուս բանակի դեմ»[111]: Թուրքերի կողմից ռուս զինվորներին կոտորելու դեպքեր են կատարվել նաև նույն թվականի զարնանը բուն Գանձակ քաղաքում[112]:

**Կառուցապատում.** Գանձակի թաղամասերի պատմությունը սկիզբ է առել Նոր Գանձակի հիմնադրման պահից: ԺԷ դարի սկզբին նոր վայրում քաղաք հիմնելու ժամանակ արդեն շատ որոշակի ծրագրված է եղել հայերի և թուրքերի թաղերն իրար կից, սակայն առանձին-առանձին ձևավորելու սկզբունքը:

1804 թ. հիշվում են Քիլիսաքյանդ, Ջրաբերդ, Իգիրմիդորտ և Նորաշեն թաղամասերը[113]:

1858 թ. ռուս ուղեգիր Գ. Տկաչևը Գանձակն ու նրա թաղերն այսպես է նկարագրել. «Ամբողջ քաղաքը փռված է լայնարձակ հարթավայրում և, եթե կարելի է այդպես ասել, իրենից ներկայացնում է ընդարձակ այգի: Գանձակ գետը քաղաքը բաժա-

106. Նույն տեղում, էջ 222:
107. Նույն տեղում:
108. Նույն տեղում:
109. Նույն տեղում, էջ 223:
110. **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 341-342:
111. **Շահումյան Ստ.**, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 545:
112. Մանրամասն տե՛ս **Գրիգորյան Բ.**, Հատված «Հետքերն անհետանում են» հուշագրությունից, «Լրագիր», 3.V.1995:
113. "Акты...", т. II, с. 596.

նում է երկու մասի. մեկը կրում է Քիլիսաքենդ անունը, մյուսը՝ Նորաշեն: Առաջինում առավելապես բնակվում են հայեր, իսկ վերջինում՝ թաթարներ: Քաղաքի ծուռումուռ ու նեղ փողոցները եզրապատված են կավաշեն պարիսպներով»[114]: Գրեթե նույն ժամանակի մեկ այլ նկարագրության մեջ նշված է. «Այս քաղաք բաժանի յերիս թաղս, որք կոչին Քիլիսաքանդ, Երևանցոց թաղ, և Նորաշէն»[115]:

1864 թ. ամռանը Գանձակ այցելած ուղեգիրը քաղաքի հիմնական երկու թաղամասերն ընդհանուր առմամբ նկարագրել է խիստ մռայլ գույներով. «...ծուռ փողոցներ, հաճախ սաժենից (1 սաժենը հավասար է 213,36 սմ) ոչ լայն, տեղ-տեղ ձևավորված հողաշեն ինչ-որ ավերակների մնացորդներ, տեղ-տեղ մինչև 5 արշին (այսինքն՝ մոտ 3,5 մ) բարձրությամբ հողե պարիսպներ, դրանց հետ տեղ-տեղ առուներ՝ լցված կենդանիների և բույսերի փտող մարմիններով: Իրականում փողոցներից տները չեն երևում, դրանք կանգնած են պարիսպների ետևում, դրանք էլ տուն չեն, այլ ավելի շուտ ինչ-որ հյուղակներ՝ հողաշեն կամարներով, առանց վառարանի և պատուհանների, դրանցում խավար է, խոնավ, անմաքուր՝ լցված մարդկային մարմնի պարազիտներով: Այդ տուն-գերեզմաններից դուրս ամենուրեք տեսանելի են մրգատու ծառերի և խաղողի վազերի փարթամ կանաչը...: ...քաղաքի հայկական մասը թաթարական մասի ճշգրիտ լուսապատճենն է միայն այն տարբերությամբ, որ այստեղ Գրիգորյան եկեղեցին գտնվում է ամենախղճալի դրության մեջ, իսկ այնտեղ՝ մզկիթը տանելի վիճակում...»[116]:

ԺԹ դարավերջին ականատեսը նշել է. «Շինութիւններն ընդհանրապէս աղիւսից են, որովհետև քաղաքի մօտերքում քարհանք չկայ: Տներից ները կանոնաւոր, բաւական գեղեցիկ, յարմար և բարձր են, իսկ հները, ինչպէս և թուրքերինը, անկանոն, ցածր և տգեղ»[117]:

**Քիլիսաքյանդ.** Ուշագրավ է, որ պատմական Հայաստանի մի շարք այլ քաղաքների նման, որոնք հայերից զատ ունեին նաև թուրք ազգաբնակչություն (օրինակ՝ Երևան, Կարս, Շուշի, Շամախի, Ախալցխա և այլն), Գանձակում ևս հայերն իրենց համար բնակության առավել հարմար վայր էին ընտրել տեղանքի համեմատաբար բարձրադիր հատվածները, այնինչ թուրքերը սովորականի նման զբաղեցրել էին տարածքի առավել ցածրադիր մասերը: Նոր Գանձակի կառուցապատման համար նշանակված տարածքում առավել բարձրադիր էր գետի ձախափնյակը, և հենց այդտեղ էլ ձևավորվել էր նոր քաղաքի ամենահին կամ հայոց առաջին թաղը: Այդտեղ էր հիմնվել նաև նոր քաղաքի հայոց առաքելական Սբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին (1633), որից և թաղամասը ստացել էր Քիլիսաքյանդ անունը: Հետագայում գետի ձախափնյա հատվածում՝ հայոց Քիլիսաքյանդ մեծ թաղից ավելի ներքև՝ հյուսիս, ձևավորվել էին Չայլու (հայ և թուրք խառը) և Մոլլաջալու (թրքաբնակ) թաղամասերը:

**Չայլու.** հայտնի է, որ Չայլու թաղի հայ բնակիչներն իրենց հոգևոր պետքերը հոգալու համար ԺԹ դ. կեսերին հաճախում էին Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցին: Այդ մասին 1888 թ. նշվել է. «...Չայլուի թաղի 136 տուն ժողովրդին, որ դարերից ի վեր յաճախել է և յաճախում է ս. Յովհաննէս եկեղեցին»[118]: Չնայած դրան՝ նույն թվականին Սբ. Հովհաննես եկեղեցու ծխականները չայլուեցիներին թույլ չէին տվել մասնակցել երեցփոխի ընտրություններին[119]:

**Բաղմանլար.** գետի աջափնյակում էր թուրքերի ամենահին և մեծ թաղը՝ Բաղմանլարը, որին կից էին հայոց երկու փոքրիկ թաղամասերը՝ Նորաշենն ու Երևանցոցը՝ ծխական եկեղեցիներով: Քաղաքի այս մասում էին գտնվում նաև «Բերդը, քարվանսարաները, վաճառանոցը, հիւանդանոցը, պանդոկը և փոստային իջևանը...»[120]: ԺԹ դարի կեսերին քաղաքում կային «Եկեղեցու քուչայ, Դիք քուչայ, Գեթսեմանուտի քուչայ, Սաբանլարի քուչայ, Պատրե քուչայ և Չայլուի քուչայ, բայց ձախ ու ծուռ են և շատ նեղ...»[121] փողոցները:

**Նորաշեն.** գտնվում էր Գանձակի ձախափնյա, այն է՝ գլխավորապես թրքաբնակ հատվածում՝

---

114. **Ткачев Г.**, Путевия заметки, “Кавказ”, 1859, N 9, с. 41 (բնագրում՝ “Весь город раскинулся на огромное пространство и, если можно так сказать, представляет обширный сад. Река Ганжа, на которой расположен город, разделяет его на две части: одна носит название Килисия-кент, а другая Норашен; в первой преимущественно живут Армяне, а в последней-Татары. Город разделен кривыми и узкими улицами, обстроенными по преимуществу стенами, сложенными из глины...”).

115. **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 172:

116. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 35, стр. 198-199 (բնագրում՝ “Кривыя улицы, часто не шире сажени, формируются местами из остатков развалин каких то строений из земли, местами из земляных стен до пяти аршин вышиною, во иных местах из канав, заваленных животными и растительными разлагающимися телами; собственно по улицам домов не видно; они стоят внутри оград, да и то не дома, а чаще всего какия-то конуры с земляными сводами, без печей и окон; в них смрад, сырость, нечистота и паразиты человеческаго тела. За этими домами-могилами везде видна богатая зелень фруктовых деревьев и виноградных лоз... армянская часть города точная фотография с татарской части, с тою только разницею, что здесь церковь Григорианская, находящаяся в самом жалком положении, а там мечеть сносно содержанная”).

117. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական Հանդէս», Թիֆլիս, 1899, N 1, էջ 298:

118. «Նոր-Դար», 1888, N 158, էջ 2:

119. Նույն տեղում:

120. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, Տփխիս, էջ 357-358:

121. Նույն տեղում:




***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Կորյունապատ թաղամասը (1910-ական թվականներ)***

նշանավոր մեյդանից դեպի հյուսիս-արևմուտք: 1890 թ. նշվել է, որ «Նորաշէնի թաղը Գանձակում աչքից հեռացած, մտքից մոռացուած մասն է կազմում, լիովին զուրկ նմանութիւն ունի և չորս կողմից թուրքերով է շրջապատուած, մանաւանդ որ քաղաքից է կտրուած»[122]: 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների հետևանքով թաղամասն ամբողջությամբ ավերվել է. «...շնորհիւ թրքական և Հայկական ընդհարումների 600 տուն Նորաշէն թաղի բնակաց վայրը մնաց հիմնովին աւերակ: Ծխականներս ընկան ցիրուցան՝ ատանդղական և թափառական, որոնցից մեծամասնութիւնը տեղափոխուեցան «Քիլիսքանդ» անուանված Հայոց թաղը...»[123]:

Թաղամասում էին գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին և Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղին: Նորաշենի ծխական քահանաներից 1894 թ. հիշվում է Անանիա ավագ քահանա Շիրակունին[124]:

**Երևանցոց.** գտնվում էր Գանձակ գետի ձախ ափին և Նորաշեն թաղի հետ հանդիսանում էր հիմնականում թրքաբնակ թաղերով շրջապատված հայաբնակ երկու փոքր թաղերից մեկը. «Երևանցոց թաղում գտնւում է ս. Գէորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, Յիրալովի առաջնակարգ, գեղեցիկ և այլ հյուրանոցներ, ամենալաւ խանութները և այլն»[125]:

122. «Նոր-Դար», 1890, N 116, էջ 2:
123. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2679, թ. 8, ֆ. 53, ց. 1, գ. 1270, թ. 17:
124. Նույն տեղում:
125. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 297:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների հետևանքով թաղամասն ամբողջությամբ ավերվել է:

**Կորյունապատ.** 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներից հետո, երբ ավերվեցին ձախափնյա քաղաքամասում գտնվող Նորաշեն և Երևանցոց թաղերը, ապահովության նկատառումներով այդ թաղերի հայ բնակիչները նպատակահարմար գտան հայոց Քիլիսաքյանդ թաղի հարևանությամբ իրենց համար հիմնել նոր թաղ: 1907 թ. ծնունդ առած այդ նոր թաղամասը, ի պատիվ այդ գործի գլուխ կանգնած և աշխատանքները գլխավորող Կորյուն վարդապետի, կոչվեց Կորյունապատ: Ի դեպ, մի քանի տարի անց, երբ նույն վարդապետը ձերբակալվել էր Հայ Հեղափոխական Դաշնակցության հարելու մեղադրանքով, կառավարությունը որոշում է ընդունում փոխել թաղամասի անունը և այն վերանվանել «Եկեղեցական ավան». «Հայթրքական ջարդերից հետո քաղաքի հայկական մասի եզրին տարբեր տեղերից փոխադրվածների շնորհիվ ձևավորվեց մի նոր ավան, որը ստացավ «Կորյունապատ» անվանումը, տեղի վարդապետ Կորյունի անվամբ: Վերջինս, ինչպես հայտնի է, դատվել էր «դաշնակցություն» կուսակցությանը հարելու պատճառով և աքսորվել տաժանակիր աշխատանքի: Ներկա ժամանակում Ելիզավետպոլի նահանգապետը հարմար չգտնելով, որ քաղաքի մի մասը կրի «հանցագործի ամոթալի անուն»-ը, կարգադրեց, որ պաշտոնական բոլոր փաստաթղթերում




*ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). փողոց Կորյունապատ թաղամասում (1910-ական թվականներ)*

ավանը վերանվանվի «Եկեղեցական ավան», այդ մասին հաղորդվում է նահանգի բոլոր իշխանությունների ներկայացուցիչներին»[126]:

Չնայած պետական մակարդակով ձեռնարկված ու իրականացվող միջոցառումներին՝ այնուամենայնիվ թաղամասի անունը մնաց Կորյունապատ: Այդ են վկայում 1912 թ. թաղամասը 20000 ռուբլի ծախսով խմելու ջրով ապահովելու[127], 1914 թ. նորակառույց Սբ. Սարգիս աղոթատան հիմնօրհնեքին[128], դպրոցին և թաղամասի առօրյա այլ խնդիրների հետ առնչվող բազմաթիվ վկայագրերն ու հաղորդումները, որոնցում թաղամասը հիշված է միայն Կորյունապատ անվամբ:

**Մոլլաջալլու.** թրքաբնակ այս թաղամասը տարածվում էր Գանձակ գետի աջակողմում՝ կից հայոց Քիլիսաքյանդ թաղին:

**Հայ-Կովալյովկա.** Հայտնի է, որ դեռևս 1912 թ. Գանձակի 2-րդ քաղաքամասին կից գտնվող Հայ-Կովալյովկա գաղութում աղոթատուն կառուցելու խնդրանքով բնակիչները դիմել էին Էջմիածնի հոգևոր կոնսիստորիային՝ կցելով նաև նախագիծն ու նախահաշիվը[129]: Հաջորդ տարվա ընթացքում ևս թույլտվություն ստանալու ակնկալիքով բնակիչները շարունակել են դիմել Սինոդին[130]: Ի վերջո, 1913 թ. սեպտեմբերի 11-ին «Սինոդը՝ Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալով, որոշեց. Վրաստանի կոնսիստորիայի միջոցով թոյլ տալ Գանձակի նահանգի Հայ-Կովալեովկա գիւղի ծխականներին թոյլ տալ շինել նոյն գիւղում հայոց աղօթատուն»[131]:

Գաղափար կազմելու համար, թե հայոց կամ հայ բնակչություն ունեցող թաղամասերը (ըստ ծխաթվերի և շնչագրության) ինչպիսի փոխհարաբերությունների մեջ էին, ստորև ներկայացնում ենք դրանց վերաբերող վիճակագրական հետևյալ տվյալները.

126. “Закавказье”, 1911, N 181, с. 3 (բնագրում՝ “После армяно-татарской резни на окраине армянской части города образовался из разнаго пришлаго элемента новый поселок, который получил название “Корюнапат”, по имени местнаго архимандрита Корюна. Последний, как известно, судился за принадлежность к партии “дашнакцутюн” и сослан в каторжные работы. В настоящее время Елисаветпольский губернатор признавая неудобным, чтобы часть города носила “позорное имя преступника” сделал распоряжение именовать поселок во всех официальных бумагах “Церковным поселком”, о чем сообщил представителям всех ведомств в губернии”):

127. «Հորիզոն», 1912, N 41, էջ 3:

128. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 22:

129. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11674, թ. 1:

130. Նույն տեղում, թ. 2: Տե՛ս նաև «Արարատ», 1913, էջ 691:

131. «Արարատ», 1913, էջ 1000-1001: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11674, թ. 5, 6:



***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Մեյդան հրապարակը (նկար՝ ԺԹ դարավերջ)***

| **Թաղամաս** | **1804**[132] | **1861**[133] | **1866**[134] | **1888**[135] | **1889**[136] | **1897**[137] |
|---|---|---|---|---|---|---|
| Քիլիսաքյանդ | 792 | 750 | 881 | | | |
| Նորաշեն | 74 | 99 | 124 | | 150 | |
| Երևանցոց | | 53 | 40 | | | 31 |
| Չայլու | | | | 136 | | |
| Կորյունապատ | | | | | | |
| Ջրաբերդ | 15 | | | | | |
| Իգիրմիդորտ | 28 | | | | | |

**Հրապարակներ.** Գանձակի հրապարակներից գլխավորներն էին «Եկեղեցու դուռն և Միջի Մեյդան»-ը[138]: Առանձնապես նշանավոր էր Միջի Մեյդանը, որը հայտնի էր նաև Թուրքի-Մեյդան կամ պարզապես Մեյդան անուններով: Այդ հրապարակն ուներ մոտ 150 սաժեն (320 մ) երկարություն և 50 սաժեն (107 մ) լայնություն[139]:

**Ջրամատակարարում.** Գանձակի ջրամատակարարման ողջ համակարգը հիմնականում սնվում էր համանուն գետից. «Չորս կամ հինգ մղոնաւ քաղաքիցը վերև բաժանվում են գետիցը տասներկու մեծ առուներ, որոնք ևս բաժանվելով քաղաքի մէջ մինչև վաքսունի չափ, համարեա թէ իւրաքանչիւր բակի միջով անց են կենում: Քաղաքի մէջ կան ջրհորներ, որոնց կէսը լաւ է, կէսը աղահամ: Ժողովրդին լաւ ջուր հասցնելու համար շինուած է էլել Տաճկաց տիրապետութեան ժամանակը, ԺԸ դարու սկզբումը ստորերկրեայ ջրանցք, որի մէջ միաւորվել են լեռնային տեղերից բերուած աղբիւրները. այս ջուրը հասնելիս է էլել մինչև բերդը, բայց երկու անգամ մատնվել է աւերման...»[140]:

Ստորգետնյա ջրերը շահագործելի էր դարձրել Պ. Համասփյուռյանցը. «Յայս քաղաք եբեր զբաւական ջուր ընդ ծոց երկրի պարօն Պօղոսն Համասփիւռեանց և ընկալաւ յամէն ողորմած Կայսերէն Ռուսաց պարգև ոսկեայ մեդալ...»[141]:

Հայտնի է, որ Նորաշեն թաղամասի բնակչությունը նույնպես օգտվում էր ջրհորների ջրից[142]:

Նանասյանը սեփական ծախսով ջուր էր հասցրել Սբ. Հովհաննես եկեղեցու բակ. նույն ջրից էր օգտվում նաև հիշյալ եկեղեցուն պատկանող բաղնիքը[143]:

Համանման մեկ այլ բարեգործության շնորհիվ 1912 թ. ջուր էր ստացել նաև Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. «Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Գանձակի փոխանորդ Տ. Լևոն վարդապետին յայտնել գանձակեցի պ. Աղաջան Օհանեանին Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը, որ իւր ծախքով ջուր է տարել տեղի ս. Լուսաւորիչ եկեղեցու գավիթը»[144]:

**Հասարակական հաստատություններ.** 1804 թ. իշխան Ցիցիանովը Գանձակում հիմնել է դատարան, պետական այլ հաստատություններ երկրորդական գործերը վարելու համար և նշանակել քաղաքի պարետ: Հայտնի է, որ 1869 թ. հունվարի 10-ին հաստատվել էր Գանձակի հասարակական ժողովի կանոնադրությունը[145]:

Քաղաքի վարչական կառույցները ԺԹ դարի վերջերին տեղադրված են եղել Գանձակագետի աջ ափին: Այդտեղ էին գտնվում նահանգապետարանը, նահանգային վարչությունը, փոստի գրասենյակը և պրոգիմնազիայի շենքը[146]:

**Բաղնիքներ.** Գանձակի՝ թե հայոց, թե թուրքական թաղերում եղել են մի քանի բաղնիքներ, որոնցից քչերն են ունեցել տաքացնելու հարմարություն: Դրանցից երկուսը պատկանել են հայերին: Հին բաղնիքը, որ եկեղեցապատկան էր, գտնվում էր Սբ. Հովհաննես եկեղեցուց ոչ հեռու, նրա հյուսիսային կողմում. «Եկեղեցու բակի հետ կպած է հիւսիսային կողմիցը նրա աւերակ այգին, որի կէսումը մէկ քանի տարի է, որ եկեղեցական փողով շինվել է բաղանիք. սա իջարայով տրվում է մասնաւոր մարդկանց...»[147]: Մեկ այլ վավերագրից պարզվում է, որ Սբ. Հովհաննես եկեղեցու գումարներից 1854 թ. 2472 ռուբլի էր ծախսվել «վասն շինութեան բաղանեաց...»[148]: Ի դեպ, բաղնիքից ստացվող եկամուտները գործադրվում էին Սբ. Հովհաննես եկեղեցու ծխական դպրոցի կարիքների համար, ուստի, երբ հիշյալ բաղնիքը հնության պատճառով 1892-ից փակվել էր[149], եկեղեցու հոգևոր խորհուրդը որոշել էր ձեռնարկել նոր բաղնիքի կառուցման գործը:

---

132. “Акты...”, т. II, с. 596.
133. ՀԱԱ, 56, ց. 1, գ. 4254, թ. 68:
134. ՀԱԱ, 53, ց. 1, գ. 3848, թ. 57:
135. «Նոր-Դար», 1888, N 158, էջ 2:
136. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 13, թ. 78:
137. «Արձագանք», 1897, N 9, էջ 3:
138. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, Տփխիս, էջ 357-358:
139. **Ткачев Гавриил**, Путевия заметки, “Кавказ”, 1859, N 9, էջ 41:
140. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, Տփխիս, էջ 361:
141. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 172:
142. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 301:
143. «Նոր-Դար», 1902, N 49, էջ 3:
144. «Արարատ», 1912, էջ 870:
145. **Иксъ**, նշվ. հոդվածը, N 245, с. 1-2.
146. **Иксъ**, նշվ. հոդվածը, N 243, с. 1-2.
147. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, էջ 359:
148. ՀԱԱ, 53, ց. 1, գ. 3825, թ. 75:
149. ՀԱԱ, Պ 56, ց. 18, գ. 245, թ. 1-2:

Աշխատանքները սկսվել էին 1894 թ., և նույն թվականին պատերը բարձրացրել էին մինչև կամարները[150]: Ըստ բաքվաբնակ ինժեներ Միքայել Հունանյանի կազմած նախահաշվի՝ շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ էր 17734 ռուբ. 50 կոպ.[151]: Սակայն 1895 թ. այդ նպատակով արդեն ծախսվել էր նախատեսված գումարը և դեռ անհրաժեշտ էր ևս 8282 ռուբլի[152]: Շուտով աշխատանքները բարեհաջող ավարտվել են: Համենայն դեպս, 1899 թ. մի հաղորդման մեջ նշված է. «...Գանձակն ունի երկու տաքացնովի բաղանիք. մէկը՝ Ծիրալեանի, միւսը եկեղեցական (Ս. Յովհաննէս) ...»[153]:

Հայտնի է, որ 1899-1900 թթ. նորակառույց բաղնիքը տրվել է կապալով՝ 2200 ռ.[154], իսկ 1901-1904 թթ. եռամյա ժամկետում՝ 2765 ռ. տարեկան վարձավճարով (կապալառու՝ մահտեսի Հարություն Մարտիրոսյան)[155]: Մինչև 1911 թ. բաղնիքը գտնվել է նույն կապալառուի իրավասության ներքո[156]: Հերթական անգամ բաղնիքն աճուրդի է հանվել 1911 թ. նոյեմբերին[157]:

**Հիվանդանոցներ.** հիվանդանոցի վերաբերյալ առաջին վկայությունը վերաբերում է ԺԹ դարի կեսերին: Այն հիմնվել էր թուրքական թաղում[158]: Հանրօգուտ այս հաստատության հիմնումը Գանձակում խիստ էական էր՝ ոչ միայն սովորական հիվանդությունների, այլ նաև համաճարակների բուժման պատճառով: Հայտնի են, օրինակ, 1848 և 1857 թվականներին բռնկված խոլերայի համաճարակի դեպքերը, երբ «...մայրերն ձգում էին երեխաներին և փախչում սարերը»[159]: Քաղաքի ազգաբնակչությունն այդօրինակ սարսափների ենթարկվել է նաև 1871 թ. սեպտեմբերի 25-ից նոյեմբերի 10-ը[160]:

Քաղաքի ընդարձակման և բնակչության աճին զուգընթաց՝ կարիք է զգացվում նոր հիվանդանոցի: Այդ խնդիրը լուծվում է 1899 թ. Մկրտիչ Աֆանասյանի[161] նվիրատվության շնորհիվ: Վերջինս «...նուիրել է Գանձակին մի մեծ շինութիւն իր բակով՝ հիւանդանոց բանալու համար, 20.000 անձեռնմխելի գումար աղքատ հիւանդներին բժկելու համար և առանձին 8000 ր. այդ շինութիւնը հիւանդանոցի յարմարեցնելու համար»[162]: Ի դեպ, միայն ապագա հիվանդանոցի համար նվիրաբերված այդ շենքը գնահատվել էր ավելի քան 30.000 ռուբլի[163]:

**Թատրոն.** հայտնի է, որ 1908 թ. գանձակեցիները որոշել էին քաղաքում թատրոնի շենքի հիմքը դնել. «...հայ համայնքը որոշել է եկեղեցական հողի վրայ կառուցանել 3 յարկանի մի շինութիւն, որի վերին յարկում զետեղուի Հայոց Թատրոնը: Ամբողջ շէնքի նախահաշիւը 63000 ռ. է»[164]: Նախագիծը, որի հեղինակն էր ինժեներ Մ. Պ. Օհանջանյանը, հաստատվել էր 1910 թ. մարտի 18-ին[165]: 1914 թ. շինարարական աշխատանքներն արդեն ընթացքի մեջ էին, բայց հիմնականը դեռ առջևում էր. «...կառուցանվում է մի եռյարկանի շինութիւն. կրպակները իրանց նկուղներով վերջնականապէս և թատրոնական դահլիճի միայն կմախքը: Մինչև այժմս այդ շինութեան վերայ ծախսուած է 7828 րուբլի, իսկ մինչև աւարտելը պէտք կը լինի ծախսելու 55 հազար րուբլի, որպիսի ծախսի համար եկեղեցին ունի 25 հազար րուբլի, այնպէս որ հոգաբարձութիւնս կարիք ունի պարտք վերցնելու 30 հազար րուբլի: Հենց այդ գումարի համար էլ ծխական ժողովը որոշել է գրաւ դնել եկեղեցապատկան բաղանիքը իր բակով և ակումբի շինութիւնը իր հինգ խանութներով, այն է՝ Ուչիլիշչնի և Չաւչավաձէ փողոցների վերայ գտնուած եկեղեցապատկան կալուածները...»[166]: Շինարարությունն ավարտված չի եղել նաև 1916 թ.[167]:

**Գանձակի աթոռապատկան կալվածները.** Սբ. Էջմիածնի վանքը Գանձակում ունեցել է եկամտաբեր 2 կալված: Առաջինը քաղաքի արևմտյան կողմում 10 դեսյատին մակերես զբաղեցնող և սեփական ջուր ունեցող խաղողի այգին էր, իսկ 2-րդը՝ քաղաքամիջում գտնվող իջևանատունը:

*Այգի.* այս կալվածը Սբ. Էջմիածնի տիրապետության ներքո է անցել ԺԹ դարի սկզբներից. «...այգին Գանձակ քաղաքի առումից յետոյ Ջաւադ խանից 1804 թւականին իշխան Ցիցիանովի Կովկասի կառավարչապետութեան ժամանակ ընծայաբերուած է եղել Ս. Էջմիածնին և ինչպէս պատմում էին գիտակ մարդիք փաստաթղթերը ուղարկուած է եղել իր ժամանակին Մայր աթոռ Ս. Էջմիածին»[168]:

Մինչև 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներն այդ այգին Մայր Աթոռին տարեկան ապահովել է մինչև 1500 ռուբ. եկամուտ: Բայց այնուհետև ավերվել է և օրինակ, 1910 թ., երբ վար-

150. Նույն տեղում, թ. 7, 8-9:
151. Նույն տեղում, թ. 8-9:
152. Նույն տեղում, թ. 6:
153. «Նոր-Դար», 1899, N 81, էջ 3:
154. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 11, թ. 20-21:
155. Նշվ. գործը, թ. 7-8, 20-21:
156. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 26, թ. 4-5:
157. ՀԱԱ, ֆ. Պ458, ց. 1, գ. 122, թ. 2:
158. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, էջ 358:
159. «Նոր-Դար», 1892, N 106, էջ 2:
160. «Արարատ», 1871, էջ 470:
161. Մկրտիչ Աֆանասյանը ԺԹ դ. վերջերի և Ի դ. սկզբների հայտնի դեմքերից էր: Բավական է նշել նրա միջոցներով Գանձակի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված հայոց ուսումնարանի շենքը:
162. «Նոր-Դար», 1900, N 206, էջ 2: Նաև՝ «Մուրճ», 1899, N 6, էջ 724:
163. «Մշակ», 1910, N 127: Տե՛ս նաև «Նոր-Դար», 1899, N 112, էջ 1, 1902, N 49, էջ 3:
164. «Արարատ», 1908, էջ 1046:
165. Այդ շինության մասին մանրամասն տես՝ ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 28, թ. 1-4, 15-17, գ. 34, թ. 1-12:
166. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 918, թ. 6:
167. Նույն տեղում, թ. 25:
168. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 2:



***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). իջևանատան կրպակների նախագծեր***

ծակալության էր տրվել երկու թուրքերի (պայմանավորված թրքաբնակ թաղերին այգու մոտ լինելու հանգամանքով. անապահովության պատճառով հայ վարձակալներ չէին գտնվում), օգտագործվել էր որպես բանջարանոց, ընդամենը՝ 500 ռ. տարեկան վարձով[169]:

*Իջևանատուն (պանդոկ).* ոչ միայն քաղաքում, այլև ողջ Գանձակի գավառում եղել է Մայր Աթոռի առավել եկամտաբեր կալվածներից մեկը: Այն 1804 թ. Քալանթար անունով մեկը ոմն մահմեդականից 25 թումանով և հաստատուն մուրհակով գնել էր Հովհաննես արքեպիսկոպոսը[170]: Գտնվում էր քաղաքի 1-ին մասում: Ունեցել է 59 կրպակ, 2 նկուղ, 2 գոմ, 1 արտաքնոց և 3 դարպաս:

1897 թ. իջևանատունն արդեն ծայրաստիճան խարխուլ վիճակում էր և նորոգության կարոտ[171]:

1910-ական թվականներին տարեկան ապահովել էր 2500 ռուբ. արդյունք: Վարձակալները մինչ 1905-1906 թթ. թուրքեր են եղել: Հայ-թուրքական ընդհարման օրերին իջևանատունը, թուրքական թաղում գտնվելով, անվնաս էր մնացել:

1900-ական թվականների վերջերին իջևանատան կապալառու Աղա Ալի Մահմեդ Իրզա օղլին սեփական միջոցների հաշվին 550 ռուբ. ծախսով կառուցել էր նկուղներով հանդերձ 2 նոր սենյակներ, ընդ որում պատրաստ էր այդ ծախսը Մայր Աթոռից չպահանջել, եթե Սբ. Էջմիածինը հանձն առներ նորոգելու դրա կարիքն ունեցող կրպակները[172]:

169. Նույն տեղում, թ. 3:
170. Նույն տեղում, թ. 8:
171. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 405, թ. 1-2:
172. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 6-7:

1917 թ. վանքապատկան իջևանատան շենքը կարոտ էր նորոգության. պատրաստվում էր նախահաշիվը[173]:

**Քաղաքագլուխներ.** քաղաքի կառավարիչների (միջնադարում՝ ամիրա, ԺԹ-Ի դարերում՝ քաղաքագլուխ կոչումով) մասին գրավոր աղբյուրներում առկա կցկտուր տվյալների համադրումն ըստ ժամանակագրության ներկայացնում է հետևյալ պատկերը.

*Խլազիզ (Ալազիզ).* Ժ դարի 40-50-ական թվականներին քաղաքի ամիրա է հիշվում ոմն Խլազիզ[174]:

*Փատլու.* 1074 թ. հիշվում է Գանձակի ամիրա Փատլուն՝ Գրիգոր Մագիստրոսի որդուն Բաղքի ու Կապանի ամրոցները նվաճելու հանձնարարականի կապակցությամբ[175]:

*Ռովադ.* 1147 թ. Գանձակի շահապ է հիշվում ոմն Ռովադ. «...զամիրայ ոմն Ռովադի անուն շահապ քաղաքին Գանձակա...»[176]:

*Ղահրաման Սերգեյի Հովհաննիսյանց.* Հայտնի է, որ Ղ. Հովհաննիսյանցը հնություններ սիրող անձնավորություն էր: Այսպես, 1880 թ. մի վկայության համաձայն՝ իր անձնական միջոցներով իրականացրել է Գանձակից «3 վերստ» հեռավորության վրա գտնվող «Արաքլուի հողեր» վայրում պեղման աշխատանքներ, որտեղ բացվել են մի քանի դամբարաններ և հայտնաբերվել խեցեղեն ու արձանիկներ[177]:

173. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 1143, թ. 1:
174. **Վարդան վարդապետ**, էջ 100:
175. Նույն տեղում, էջ 146:
176. **Մովսես Կաղանկատուացի**, էջ 254:
177. «Մեղու Հայաստանի», 1880, N 50, էջ 2:

1898[178], 1899[179] թվականներին Ղ. Մ. Հովհաննիսյանցը հիշվում է որպես Քաղաքային խորհրդի պատգամավոր:

*Իվան Օսիպովիչ Կոգնովիցկի.* քաղաքագլուխ է ընտրվել 1896 թ. ապրիլի 12-ին՝ 32 ձայնով[180]: Մյուս թեկնածուներից Աֆանասյանը հրաժարվել է, իսկ Լազարյանը ստացել է 30 ձայն[181]: Նույն ընտրություններում քաղաքային խորհրդի քարտուղար է ընտրվել քաղաքային ոստիկանության հաշվապահ Խոջայանը, իսկ վարչության անդամներ՝ Կ. Մ. Ցիրալյանը և Հովհաննիսյանը[182]:

Ի. Օ. Կոգնովիցկին պաշտոնավարել է նաև 1897[183], 1898[184], 1899[185], 1902[186] և 1904[187] թվականներին:

**Բնակչություն.** մատենագիր աղբյուրները վկայում են, որ առնվազն ԺԱ դարից Գանձակը բազմամարդ քաղաք է եղել, որտեղ հայ հոծ բնակչության հետ բնակվել են նաև մահմեդականներ: Արդեն ԺԲ դարում Գանձակն Այսրկովկասի խոշորագույն քաղաքներից մեկն էր: Համենայն դեպս, մի վկայության համաձայն, 1139 թ. երկրաշարժին զոհ է գնացել 230.000 քաղաքաբնակ[188]:

1231 թ., երբ Գանձակն ընկել էր մոնղոլների իշխանության տակ, բացի մեծաթիվ սպանվածներից՝ նաև «գերեցան քրիստոնեայք և պարսիկք առհասարակ»[189]: Ի դեպ, «քրիստոնեայք» ասելով՝ նկատի է առնվել հայ բնակչությունը, իսկ «պարսիկք» ասելով՝ շիա մահմեդականներին, որոնք թուրքալեզու էին: Այլ ազգությունների պատկանող բնակիչների առկայությունը քաղաքում, անշուշտ, ևս բացառված չէ, սակայն աննշան քանակությամբ:

Գանձակի բնակչության թվաքանակին ու ազգային կազմին վերաբերող մեզ հայտնի տվյալները սուղ են և կցկտուր: Հայտնի է, որ 1640 թ. քաղաքն ուներ 6.000 տուն[190]: Համաձայն 1769 թ. վրաց իշխան Արտեմ Անդրոնիկովի կազմած զեկուցագրի՝ հայերը քաղաքաբնակների թվում նշանակալի մաս էին կազմում. «...նրանում քրիստոնեա բնակչությունը մեծ թվով հայեր են...»[191], իսկ 1804-ին՝ Գանձակը Ռուսաստանին միացվելուց հետո, ուներ միայն 1015 տուն[192]: Այդ նույն վիճակագրությամբ՝ քաղաքաբնակ արական սեռի թվաքանակը 5079 շունչ էր[193]:

ԺԹ-Ի դարերի ընթացքում Գանձակի բնակչության աճի փոփոխությունները կրել են հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **տուն** | **բնակիչ** |
|---|---|---|
| 1835[194] | 2515 | 16200 |
| 1849[195] | | 12996 |
| 1851[196] | | 13000 |
| 1852[197] | | 10938 |
| 1865[198] | 3080 | 15081 |
| 1868[199] | | 16039 |
| 1874[200] | | 18505 |
| 1884[201] | | 18976 |
| 1887[202] | | 20294 |
| 1896[203] | | 27206 |
| 1897[204] | | 33090 |
| 1906[205] | | 36895 |
| 1908[206] | | 46297 |
| 1914[207] | | 59586 |
| 1916[208] | | 57731 |
| 1920/21[209] | | 42500 |
| 1921[210] | | 43502 |
| 1923[211] | | 38880 |
| 1926[212] | | 136000 |
| 1931[213] | | 76000 |
| 1939[214] | | 99000 |
| 1959[215] | | 136000 |
| 1970[216] | | 190200 |
| 1979[217] | | 232000 |
| 1980[218] | | 237000 |

178. “Кавказский календарь на 1899 г.”, Тифлис, 1898, с. 180.
179. “Кавказский календарь на 1900 г.”, Тифлис, 1899, с. 190.
180. «Մուրճ», 1896, N 3-4, էջ 523:
181. Նույն տեղում:
182. Նույն տեղում:
183. “Кавказский календарь на 1898 г.”, с. 171.
184. “Кавказский календарь на 1899 г.”, с. 179.
185. “Кавказский календарь на 1900 г.”, с. 190.
186. “Кавказский календарь на 1903 г.”, с. 198.
187. “Кавказский календарь на 1905 г.”, с. 205.
188. **Իբն-Ալ-Ասիր**, էջ 250:
189. «ՄԺԱ», էջ 26:
190. **Էվլիյա Չելեբի**, էջ 86: Ըստ ավանդության Շահ-Աբասի թագավորության վերջին շրջանում քաղաքն ունեցել է. «...իւր մէջ 40.000 արուեստագործ և քաջ բնակիչ...» («Կռունկ Հայոց աշխարհին», 1861, էջ 358):
191. “Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии”, т. 1, (с. 1768 по 1774 г.) под редакцией Цагарели А. А., СПб., 1891, с. 434 (բնագրում՝ “...в нем народа християнь многое число армянскаго, все места плодовиты, тамо правитель хан самовладетельной...”):
192. “Акты...”, т. IV, Тифлис, 1870, с. 9.
193. Նույն տեղում:
194. **Дубровин Н.**, Закавказье от 1803-1806 года, СПб., 1866, с. 149.
195. “Кавказский календарь на 1850 г.”, с. 48.
196. “Кавказский календарь на 1852 г.”, с. 82.
197. “Кавказский календарь на 1853 г.”, с. 117.
198. **Воронов Н.**, Сборник статистических сведений о Кавказе, т. 1, отдел 1, часть 4, Тифлис, 1869, с. 74.
199. “Кавказский календарь на 1870 г.”, с. 406-407.
200. “Кавказский календарь на 1879 г.”, с. 328.
201. “Кавказский календарь на 1886 г.”, с. 124.
202. “Елисаветопольская губерния. свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа” (այսուհետև՝ Свод...), Тифлис, 1888, с. 76.
203. “Кавказский календарь на 1898 г.”, с. 28-29.
204. “Кавказский календарь на 1905 г.”, с. 22.
205. “Кавказский календарь на 1907 г.”, с. 322.
206. “Кавказский календарь на 1910 г.”, с. 251.
207. “Кавказский календарь на 1915 г.”, с. 123.
208. “Кавказский календарь на 1917 г.”, с. 190-193.
209. «ԱՍՀ», h. 5, Բաքու, 1981, էջ 397:
210. “Большая Советская энциклопедия”, т. 1, М., 1929, с. 642.
211. Նույն տեղում:
212. «ԱՍՀ», h. 5, էջ 397:
213. ”Малая Советская энциклопедия”, т. 1, М., 1933, с. 174.
214. «ԱՍՀ», h. 5, էջ 397:
215. Նույն տեղում:
216. Նույն տեղում:
217. «ՀՍՀ», h. 5, էջ 462:
218. «ԱՍՀ», h. 5, էջ 397:

**Հայեր.** ԺԹ-Ի դարերում հայ բնակչության թվաքանակի աճը տարբեր վավերագրերում ցույց է տրված հետևյալ չափով.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[219] | 909 | 1327 | 967 | 2294 |
| 1822[220] | 828 | 2239 | 1759 | 3998 |
| 1835[221] | | | | 5100 |
| 1839[222] | 957 | 2397 | 2150 | 4547 |
| 1841[223] | | 2412 | 2164 | 4576 |
| 1845[224] | | 2316 | 2129 | 4445 |
| 1847[225] | | 2334 | 2116 | 4450 |
| 1849[226] | | 2531 | 2393 | 4924 |
| 1850[227] | 986 | 2642 | 2551 | 5193 |
| 1852[228] | | 2636 | 2608 | 5244 |
| 1853[229] | | 2650 | 2442 | 5092 |
| 1854[230] | | 2659 | 2470 | 5129 |
| 1857[231] | | 2749 | 2511 | 5260 |
| 1858[232] | | 2754 | 2521 | 5275 |
| 1860[233] | | 2783 | 2524 | 5307 |
| 1861[234] | 902 | | | |
| 1863[235] | 950 | 2780 | 2560 | 5340 |
| 1864[236] | | 2791 | 2574 | 5365 |
| 1865[237] | | 2800 | 2578 | 5378 |
| 1866[238] | 1045 | 3013 | 2689 | 5702 |
| 1870[239] | | 5200 | 4108 | 9308 |
| 1872[240] | | 3805 | 3285 | 7090 |
| 1873[241] | | | | 6506 |
| 1874[242] | | | | 6626 |
| 1875[243] | | | | 6719 |
| 1876[244] | | | | 6759 |
| 1877[245] | | 3562 | 3200 | 6762 |
| 1878[246] | | 3528 | 3178 | 6706 |
| 1881[247] | | 4195 | 3370 | 7565 |
| 1882[248] | | 4297 | 3487 | 7784 |
| 1883[249] | | 4247 | 3403 | 7650 |
| 1884[250] | | 4050 | 3854 | 7904 |
| 1885[251] | | 4038 | 3818 | 7856 |
| 1886[252] | | 4837 | 4077 | 8914 |
| 1887[253] | | 4338 | 3987 | 8325 |
| 1888[254] | | 4408 | 4064 | 8472 |
| 1889[255] | | 4516 | 4166 | 8682 |
| 1890[256] | | 4614 | 4294 | 8908 |
| 1891[257] | | 4751 | 4456 | 9207 |
| 1892[258] | | 4925 | 4482 | 9407 |
| 1893[259] | | 5002 | 5392 | 10394 |
| 1894[260] | | 5103 | 5445 | 10548 |
| 1897[261] | | 5426 | 5799 | 11225 |
| 1898[262] | | 5538 | 5906 | 11444 |
| 1899[263] | | 5754 | 6125 | 11879 |
| 1900[264] | | 5589 | 6270 | 11859 |
| 1901[265] | | 5609 | 6354 | 11963 |
| 1902[266] | | 5887 | 6546 | 12433 |
| 1905[267] | | 5912 | 6570 | 12482 |
| 1906[268] | | 5269 | 4820 | 10089 |
| 1907[269] | | | | 10382 |
| 1908[270] | 1649 | 4736 | 4304 | 9040 |
| 1909[271] | | 6135 | 6484 | 12619 |
| 1910[272] | | 3719 | 3548 | 7267 |
| 1912[273] | | 6213 | 6482 | 12697 |
| 1916[274] | | | | 12125 |
| 1957[275] | | | | 70000 |

Հենվելով աղյուսակներում ներկայացված տվյալների վրա (միայն մի քանի տարիների կտրվածքով)՝ քաղաքաբնակների ընդհանուր թվաքանակում հայ բնակիչների տեսակարար կշիռը կազմել է.

1804 թ. քաղաքաբնակների 49.21 %-ը հայեր էին,
1835 թ. -„- 31.48 %-ը -„-
1849 թ. -„- 37.88 %-ը -„-
1852 թ. -„- 47.94 %-ը -„-
1865 թ. -„- 35.66 %-ը -„-
1874 թ. -„- 35.80 %-ը -„-

219. "Акты...", т. II, с. 596.
220. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1:
221. **Дубровин Н.**, նշվ. աշխ., էջ 149:
222. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 14-26:
223. Նույն տեղում, գ. 3802, թ. 168-169:
224. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
225. Նույն տեղում, գ. 3814, թ. 95-96:
226. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96: Վիճակագրական մեկ այլ տվյալում հայերի թվաքանակը նշված է 4985 անձ ("Кавказский календарь на 1850 г.", с. 49).
227. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 107-108:
228. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 105-106:
229. Նույն տեղում, գ. 2743, թ. 16-18:
230. Նույն տեղում, գ. 3825, թ. 68-69:
231. Նույն տեղում, գ. 3830, թ. 74-75:
232. Նույն տեղում, գ. 3831, թ. 41-42:
233. Նույն տեղում, գ. 3833, թ. 108-109:
234. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 68:
235. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 15-16, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 76:
236. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 23-24:
237. Նույն տեղում, գ. 3848, թ. 50:
238. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
239. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
240. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
241. Նույն տեղում, գ. 3862, թ. 58-59:
242. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
243. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
244. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
245. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
246. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
247. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
248. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
249. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
250 "Кавказский календарь на 1886 г.", с. 124.
251. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
252. "Кавказский календарь на 1898 г.", с. 28-29.
253. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
254. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
255. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
256. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
257. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:
258. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
259. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
260. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 71-72:
261. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
262. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
263. Նույն տեղում, գ. 3903, թ. 125-126:
264. Նույն տեղում, գ. 3905, թ. 89-90:
265. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
266. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
267. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
268. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
269. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
270. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 6-7:
271. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
272. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 55-56:
273. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
274. "Кавказский календарь на 1917 г.", с. 191-193.
275. «Սիոն», 1957, ապրիլ-մայիս, էջ 112:

| | | | |
|---|---|---|---|
| 1884 թ. | -„- | 41.65 %-ը | -„- |
| 1887 թ. | -„- | 41.02 %-ը | -„- |
| 1897 թ. | -„- | 33.92 %-ը | -„- |
| 1906 թ. | -„- | 27.34 %-ը | -„- |
| 1908 թ. | -„- | 19.48 %-ը | -„- |
| 1916 թ. | -„- | 21.00 %-ը | -„- |

**Թուրքեր.** Գանձակի թուրքերի մասին «Մշակի» թղթակից Մաժակը 1873 թ. գրել է. «Թուրք բնակիչների թիւը որ հասնում է 1800-ի, առաւել բարձր է, բայց ոչ նշանակութիւնը. նա այն սովորական տիպն է ներկայացնում ընդհանրութեան առաջ, ինչ որ յատուկ է բոլոր ասիաբնակ այդ ցեղերին...: Նոցա միակ կրթարանը իւրեանց մզկիթն է, որտեղ ամէն մի սոխտայ կամ միրզայ և կամ վերջապէս մի մոլլայ ժողոված գլխին մի քանի մանուկներ, թափված յատակի վերայ խառնիճաղանճ ձայնով անդադար փրփրացնում է և այն տարվա մի քանի մասերում: Այնուհետև նոքա կրթված են, բայց ինչի մէջ...: Շատ սարսափելի յատկութիւններում...: Նոցա բարձր և ազնւական դասը ուղարկում է իւր զաւակը արքունական ուսումնարան, որտեղ նա վայրիվերոյ կերպիւ սնուցանում է մի անհաստատ և երերուն գաղափար, չը կամենալով օգուտ քաղել դորա ընդհանրապէս մատակարարող կրթութիւնից: Նա դուրս է գալիս այնտեղից դուրս բերելով իւր հետ և մի աղճատեալ լեզու, որպէս թէ ռուսերէն և ամենի առաջ պարծանքով կամենում է ցոյց տալ իւր հրաշալի գիտութիւնը»[276]:

Թուրքերը տիրապետում էին պայտագործությանը, հյուսնությանը և մասամբ էլ մետաքսագործությանը: Նաև զբաղվում էին առևտրով, հիմնականում մրգավաճառությամբ, սակայն «առաւել ստոր են այդ գործում»[277]:

Քաղաքաբնակ թուրքերի թվաքանակը 1804 թ. կազմել էր 2.367 շունչ (50,79 %), 1835 թ.՝ 11.100 շունչ (68,51 %), 1849-ին՝ 6.590 (50,70 %), 1865-ին՝ 7.133 շունչ (47,29 %), 1884-ին՝ 10.320 շունչ (54,38 %), 1887-ին՝ 11.139 շունչ (54,88 %), իսկ 1916-ին՝ 35.619 շունչ (61,69 %):

**Ռուսներ.** հիմնական ազգաբնակչությունից (հայեր, թուրքեր) զատ ԺԹ դարի կեսերից աստիճանաբար այստեղ ավելացել է ռուսների թվաքանակը:

Ակնհայտորեն առավելապես մեխանիկական աճի հաշվին ստվարացող ռուսների թվաքանակը 1886-ին կազմել է ընդամենը 131 շունչ, բայց ահա 1906-ին նրանց թիվը հասել է 4261-ի (11,54 %), իսկ 1916-ին՝ 4815 շունչ (8,34 %):

**Այլ ազգություններ.** շատ ավելի փոքրաթիվ էին քաղաքաբնակ այլ ազգությունների ներկայացուցիչները: Օրինակ, 1849 թ. այլազգի բնակիչների թվում արձանագրված է եղել միայն 30 գնչու: 1886 թ. այլազգի քաղաքաբնակների թվում եղել են 103 վրացի (77 ար., 26 իգ.), 3 գերմանացի, 2 հրեա: 1916 թ. Գանձակում արձանագրվել են մինչև 1276 շունչ (2,2 %) աղանդավորներ:

**Հայոց դպրոցներ.** ծխական դպրոցների պատմությունը սկիզբ է առնում 1844 թվականից, այն պահից, երբ Սբ. Հովհաննես մայր եկեղեցուն կից բացվում է «Մեսրոպյան» արական հոգևոր դպրոցը: 1859-ին իր դռներն է բացում արական մասնավոր մի դպրոց ևս: Նույն թվականից իր գործունեությունն սկսում է քաղաքի առաջին օրիորդաց դպրոցը: Ավելի ուշ՝ 1867 թ., հիմնվում է Նորաշեն թաղի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից արական ծխական դպրոցը, 1889-ից՝ նաև Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից արական և իգական դպրոցները:

Առանձին գործող արական և իգական դպրոցները 1906 թ-ից միավորվեցին և վերածվեցին երկսեռ ուսումնարանների:

Մի քանի տարիների կտրվածքով Գանձակում գործած դպրոցների, ուսուցիչների և աշակերտության ընդհանուր թվաքանակը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | դպրոցներ | ուսուցիչներ | աշակերտներ |
|---|---|---|---|
| 1874[278] | 2 | 6 | 201 |
| 1875[279] | 2 | 10 | 210 |
| 1876[280] | 3 | 16 | 210 |
| 1877[281] | 3 | 16 | 223 |
| 1878[282] | 3 | 17 | |
| 1883[283] | 2 | 8 | 221 |
| 1894[284] | 5 | 22 | 622 |
| 1909[285] | 3 | 20 | 560 |
| 1911[286] | 4 | 23 | 722 |

Տարբեր տարիներին Գանձակում գործել է մինչև 10 հայկական (ծխական) դպրոց: Որպես կանոն՝ դրանք բացվել ու գործել են քաղաքի եկեղեցիներին կից: Չնայած տեղի հայ հոգևորականության, մտավորականության և առանձին բարերարների ներդրած ջանքերին՝ այդ դպրոցներից շատերը հաճախակի փակվել ու վերաբացվել են: Հատկանշական է, որ հայոց դպրոցների փակման պատճառը ոչ միայն նյութական սղությունն ու ուսուցիչների պակասն էր, այլև ցարական կառավարության ճնշումները (օրինակ՝ 1885 և 1895-1905 թթ., երբ կառավարության հրամանով փակվել էին հայկական բոլոր դպրոցները):

**Սբ. Հովհաննես եկեղեցու «Մեսրոպյան» արական հոգևոր դպրոց.** Գանձակում հիմնված հայոց ամենահին այս դպրոցը չի կարողացել ապահովել

276. **Մաժակ**, Նամակ Գանձակից, «Մշակ», 1873, N 14, էջ 2:
277. Նույն տեղում:

278. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, թ. 49-50:
279. Նույն տեղում, գ. 3866, թ. 97-98:
280. Նույն տեղում, գ. 3850, թ. 52:
281. Նույն տեղում, գ. 3850, թ. 130:
282. Նույն տեղում, գ. 3850, թ. 178:
283. Նույն տեղում, գ. 3875, թ. 136-137:
284. Նույն տեղում, գ. 3896, թ. 173-174:
285. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
286. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:

իր կանոնավոր գոյությունը և ընդամենը 3 տարի անց (1847-ին) փակվել է ուսուցչի և նյութական միջոցների բացակայության պատճառով. «Հոգևոր ուսումնարանն Եկեղեցական բացեալն ի 1844 ամէ հետէ ի ներկայ ամի խափան եղև ի պատճառս պակասութեան ուսուցչի ռուս լեզուի և անհաստատութեան ի սակս չգոլոյ ռոճկի»[287]: Հետագա 1,5 տասնամյակի ընթացքում դպրոցի գոյության մասին վավերագրերը լռություն են պահպանում: Ըստ երևույթին այն միաժամանակ մնացել է փակ և վերաբացվել է 1862 թ.: Ի դեպ, 1912 թ. մեծ շուքով նշված դպրոցի 50-ամյա հոբելյանի մասին պատմող վավերագրում 1862 թվականը հիշված է որպես դպրոցի հիմնարկության տարեթիվ[288]: Այդպիսով, փաստորեն, հաշվի չի առնվել դպրոցի 1840-ականների գործունեության հանգամանքը: Ի դեպ, այլ աղբյուրներում դպրոցի հիմնադրման տարեթիվ է համարվել 1863-ը կամ էլ նույնիսկ՝ 1864-ը[289]:

Դպրոցի ուսուցիչներից մեծ հեղինակություն է վայելել Երվանդ Ղազարյանը: Վախճանվել է 1899 թ.: Նրա հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողությունը կատարվել է հունվարի 31-ին, Սբ. Հովհաննես եկեղեցում[290]:

Դպրոցի գործունեությանը վերաբերող մի շարք վավերագրերից քաղված տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **այլ տեղեկ.** | **ուսուցիչներ** | **աշակերտներ** |
|---|---|---|---|
| 1844[291] | հիմնադրվել է | | |
| 1845[292] | | 2 | 25 |
| 1847[293] | փակվել է | | |
| 1862[294] | վերաբացվել է | | |
| 1863[295] | | 4 | 115 |
| 1865[296] | | | 80 |
| 1866[297] | | | 135 |
| 1871[298] | | 7 | 166 |
| 1873[299] | | 6 | 134 |
| 1874[300] | գործել է | | |
| 1875[301] | ուսուցիչներ՝ վրդ. Գրիգոր Տեր-Ստեփանյանց, Գրիգոր քհն. Բաբաքևխիյանց, Հովսեփ Թառումյանց, Աղեքսանդր Հովհաննիսյանց, Պողոս Համափյուռյանց, Ավետիս Շահսուվարյանց | 6 | 234 |
| 1876[302] | արական միջնակարգ | 7 | 112 |
| 1877[303] | | 7 | 119 |
| 1878[304] | | 8 | |
| 1883[305] | | 6 | 96 |
| 1884[306] | երկդասյա, արական | | 100 |
| 1885[307] | փակվել է | | |
| 1886[308] | վերաբացվել է | | |
| 1888[309] | երկդասյա | | |
| 1890[310] | | 2 | 67 |
| 1891[311] | եռդասյա | | 131 |
| 1892[312] | երկդասյա | | 135 |
| 1892[313] | երկդասյա | | 114 |
| 1894[314] | գործել է | | |
| 1896[315] | փակվել է | | |
| 1906[316] | վերաբացվել է | | |
| 1907-08[317] | երկդասյա, երկսեռ | | 307 |
| 1908-09[318] | | 10 | 320 |
| 1909[319] | երկդասյա, երկսեռ | 10 | 240 |
| 1911/12[320] | 5-ամյա՝ 5 դասարանով, նշվել է դպրոցի 50-ամյակը ուսուցիչներ՝ Նատալյա Տեր-Զաքարյան, Սիրանուշ Շահսուվարյանց, Վարդանուշ Աղիբեկյան, Շուշանիկ Քալանթարյան, Ալեքսանդր Շահսուվարյան, Գրիգոր Զաքարյանց, Ստեփան Թումանյանց, Արշակ Աղաբեկյանց, Հովհաննես Արզումանյանց, Սեդրակ Զաքարյանց, Կարապետ Ղլպուղյան | 11 | 221(98իգ.) |
| 1912/13[321] | 6-ամյա | 12 | 202 |
| 1914[322] | | 9 | 190 |

Հայտնի է, որ 1916 թ. Սբ. Հովհաննես եկեղեցու հոգաբարձությունը պայմանագիր է կնքել գանձակեցի Գևորգ Բաբասյան Հայրումյանցի հետ, ըստ որի՝ վերջինս 1 տարի ժամկետով (1916 թ. սեպտեմբերի 1-ից առ 1917 թ. սեպտեմբերի 1-ը) Բագրատունյաց փողոցի N 111 տունը վարձակալությամբ պետք է տար եկեղեցական-ծխական դպրոցին[323]:

«Մեսրոպյան» դպրոցը գործել է սովորական երկդասյա դպրոցներից քիչ ավելի ընդարձակ ծրագրով: Այդտեղ դասավանդվել են նաև հիգիենա և քաղաքացիական իրավունք առարկաները:

287. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 96:
288. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 33, թ. 1:
289. **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 472:
290. «Մշակ», 1899, N 21:
291. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 96:
292. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
293. Նույն տեղում, գ. 3814, թ. 96:
294. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 33, թ. 1:
295. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 15-16:
296. Նույն տեղում, գ. 3848, թ. 50:
297. Նշվ. գործը, թ. 115:
298. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 472:
299. Նույն տեղում:
300. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
301. Նշվ. գործը, թ. 45:
302. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 52:
303. Նշվ. գործը, թ. 130:
304. Նշվ. գործը, թ. 178:
305. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 136-137:
306. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 472: «Նոր-Դար», 1884, N 4, էջ 2:
307. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 472:
308. Նույն տեղում:
309. Նույն տեղում:
310. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 13, թ. 19:
311. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 179:
312. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 148:
313. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 120:
314. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 11, թ. 3-4:
315. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 173-174:
316. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 472:
317. Նույն տեղում:
318. Նույն տեղում:
319. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473:
320. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 16, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
321. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 23: Նաև՝ **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473:
322. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473:
323. Նույն տեղում:

**Սբ. Հովհաննես եկեղեցու «Հռիփսիմյան» օրիորդաց դպրոց.** հիմնադրվել է 1859 թ.: Մինչև 1896 թ. փակումը պահպանել է անկախ գոյությունը, բայց 1906 թ. վերաբացումից հետո հանդես է եկել «Սեւրոպյան» արական դպրոցի հետ՝ որպես միացյալ, երկսեռ դպրոց:

Մի շարք վավերագրերից քաղված տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչներ | աշակերտներ |
|---|---|---|---|
| 1859[324] | հիմնադրվել է, բայց հետո փակվել | | |
| 1874[325] | վերաբացվել | | |
| 1875[326] | | 1 Մարիա Սիմեսոն | 22 |
| 1876[327] | | 8 | 54 |
| 1877[328] | | 8 | 58 |
| 1878[329] | | 8 | 66 |
| 1883[330] | դեկտ. 25-ին (1884-ի հունվ. 2) նշվել է դպրոցի 9-ամյակը | 2 | 125 |
| 1884[331] | միջնակարգ, եռդասյա | | 130 |
| 1885[332] | փակվել է | | |
| 1886[333] | վերաբացվել է | | |
| 1888[334] | երկդասյա | | 195 |
| 1889[335] | դպրոցը զետեղված էր Գրիգոր քհն. Թումանյանցի տանը | | |
| 1891[336] | չորսդասյա (միջնակարգ) | | |
| 1895[337] | երկդասյա | | 194 |
| 1896[338] | փակվել է | | |
| 1906[339] | վերաբացվել է նույն եկեղեցու արական դպրոցի հետ միացյալ | | |

**Գանձակի արական մասնավոր դպրոց.** այս դպրոցի գործունեության մասին տվյալները չափազանց աղքատիկ են: Բացվել է 1859 թ.: Գործել է նաև 1874 թ-ին[340]:

**Նորաշեն թաղի Սբ. Աստվածածին եկեղեցու արական դպրոց.** հիմնադրվել է 1867 թ.: Գործել է մինչև հայոց դպրոցների 1896 թ. փակումը: 1905-1906 թթ. ավերվել է հայ-թուրքական ընդհարումների ժամանակ:

Մի շարք վավերագրերից քաղված տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

324. ՀԱԱ, ֆ. Պ461. ց. 1, գ. 41, թ. 10-11:
325. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
326. Նույն տեղում:
327. Նույն տեղում, թ. 45:
328. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 52:
329. Նույն տեղում, թ. 130:
330. Նույն տեղում, թ. 178:
331. Նույն տեղում, գ. 3875, թ. 136-137:
332. «Նոր-Դար», 1884, N 4, էջ 2:
333. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473:
334. Նույն տեղում:
335. Նույն տեղում:
336. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 13, թ. 19:
337. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473:
338. Նույն տեղում:
339. Նույն տեղում:
340. Նույն տեղում:







*ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՁԱ). «Աֆանասյան» դպրոցի շենքը և շինարարության արձանագրությունը (1909 թ.)*

| տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչներ | աշակերտներ |
|---|---|---|---|
| 1867[341] | հիմնադրվել է | | |
| 1871[342] | միդասյա | | 30 |
| 1873[343] | միդասյա | | 22 |
| 1874[344] | գործել է | | |
| 1875[345] | նախակրթարան | | |
| 1876[346] | | 1 | 44 |
| 1877[347] | | 1 | 46 |
| 1878[348] | սեպտեմբերից փակվել է ուսուցիչ չլինելու պատճառով | 1 | 30 |

341. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
342. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 470:
343. Նույն տեղում:
344. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
345. Նույն տեղում, թ. 45:
346. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 46, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 52:
347. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 130:
348. Նշվ. գործը, թ. 178:

| | | |
|---|---|---|
| 1881[349] | գործել է | 20 |
| 1890[350] | վերաբացվել է | |
| 1892[351] | | 30 |
| 1895[352] | միդասյա, 3 բաժանմունքով | |
| 1896[353] | փակվել է կառավարության հրամանով | |

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական դպրոց.** վեհափառ հայրապետի կոնդակի համաձայն՝ դպրոցի բացման թույլտվությունը տրվել է 1890 թ. ուստարվա սկզբին[354]: Նույն եկեղեցուն կից և միաժամանակ բացվել է նաև «Մարիամյան» օրիորդաց դպրոցը:

1895 թ. գանձակեցի Մկրտիչ Դանիելյան Աֆանասյանը, նկատի ունենալով կրթական գործի կարևորությունը, ցանկություն է հայտնել «...կառուցանել սեպհական ծախուք իւրովք զշինութիւն ի գաւթի Սբ. Լուսաւորիչ եկեղեցւոյ ի պէտս երկսեռ դպրոցաց նոյն եկեղեցւոյ, խոստանալով նուիրել զտասնհազար րուբլի, ուստի և խնդրէ հաստատել հոգաբարձու այնր շինութեան զՄիմէօն քահանայն Տէր-Խաչատրեանց, զՄարգիս Աֆանասեանց, զՅաբութիւն Մալեանց և զինքն»[355]: Ըստ նախահաշվի՝ ծախսը կազմելու էր 14-15.000 ռուբ.[356]: Սակայն 1896 թ. ցարական կառավարության կողմից հայոց դպրոցների փակումը անորոշ կացության մեջ է գցում Մ. Աֆանասյանին, և շինարարությունը դադարեցվում է: 1896 թ. դրությամբ բարերարն արդեն «…փլեալ էր եկեղեցւոյ բակի հարաւային կողմի շրջապատն իւր ամբողջ երկարութեամբ և մինչև այժմ չկատարելով իւր այդ բարերար խոստմունքն, միմիայն քարուքանդ թողնելով բակն, նա պրն. Աֆանասեանցն ներկայ տարումս իւր յայտարարութեամբն դիմելով հոգևոր կառավարութեանդ հրաժարուել է իւր խոստմունքից…»[357]: 1898 թ. դրությամբ նվիրատուն մտադրվել էր դեռևս չիրացված 10.000 ռուբ. գումարը ծախսել աստվածահաճո մեկ այլ գործի վրա[358]: Սակայն հայոց դպրոցների վերաբացումից հետո Մ. Աֆանասյանը կրկին լծվում է ավելի քան 10 տարի առաջ սկսած ու թերի թողած գործին: 1909 թ. Մկրտիչ և Եղիսաբեթ Աֆանասյանները կրկին դիմում են հոգևոր կառավարությանը և ստանում համապատասխան թույլտվություն՝ ընդհատված շինարարական աշխատանքները վերսկսելու համար[359]: Ընդամենը մեկ տարի անց՝ 1910 թ. մայիսի 26-ին, Աֆանասյան ամուսինները արդեն ավարտում են կառույցի շինարարությունը[360]: Օծման հանդեսը մեծ շուքով կատարվում է հունիսի 6-ին[361]: Դպրոցի շինարարության վրա վերջնահաշվով բարերար Աֆանասյանը ծախսել էր 35.000 ռուբլի[362]: Հունիսի 7-ին բարեգործ ամուսիններին իր գոհունակության և օրհնության կոնդակն էր հղել Մատթեոս կաթողիկոսը[363]:

1913 թ. դպրոցի բարեզարդությանը նյութապես օժանդակած (1077 ռ.) գանձակեցի Աղաջան Օհանյանն արժանանում է Հայրապետական օրհնության և գոհունակության կոնդակի[364]:

Դպրոցի գոյընթացի մասին մի շարք վավերագրերի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչներ | աշակերտներ |
|---|---|---|---|
| 1889/90[365] | հիմնադրում (միդասյա) | 4 | |
| 1892/93[366] | | | 106 |
| 1896[367] | փակվել է | | |
| 1906[368] | վերաբացվել է որպես երկսեռ | | |
| 1909[369] | երկսեռ | 6 | 120 |
| 1911[370] | 5-ամյա, 7 դասարանով, երկսեռ | 9 | 356 |
| 1911/12[371] | ուսուցիչներ՝ Գևորգ Թումաղյան, Հարություն Երիցյան, Արուսյակ Տեր-Աստվածատրյան, Շուշանիկ Մելիք-Հախիջանյան, Վարսիկ Մելքոնյան, Տիգրան Օհանյան, Սիմոն Տեր-Խաչատրյան, Աստվածատուր Ռշտունի, Եղիսաբեթ Տեր-Մակարյան, Սոկրատ Գրիգորյան | 10 | |
| 1914[372] | | 12 | 358 |

Մինչև 1989 թ. «Աֆանասյան» դպրոցի մուտքի ճակատին պահպանվում էր հետևյալ շինարարական արձանագրությունը.

«Աֆանասյան» ուսումնարան, մուտքից վեր ագուցված մարմարե սալիկին՝ 3 տող.

*Ուսումնարանս զայս կից Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ կառուցաւ արդեամբ եւ ծախիւք Աֆանասեան ամուսնոյ Մկրտչի եւ Եղիսաբէթի, 1909 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

1896 թ., հայկական դպրոցների փակման նախօրեին, դպրոցն ուներ գրադարան՝ 373 կտոր գրքով[373]:

---

349. **Խոդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 470:
350. Նույն տեղում: Նաև՝ ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 5, թ. 18:
351. **Խոդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 470:
352. Նույն տեղում:
353. Նույն տեղում:
354. «Արձագանք», 1890, N 3, էջ 6:
355. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 8, թ. 2:
356. «Նոր-Դար», 1895, N 114, էջ 2:
357. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 8, թ. 16:
358. Նույն տեղում, թ. 13:
359. Նույն տեղում, թ. 18:
360. Նույն տեղում, թ. 22:
361. «Մշակ», 1910, N 127:
362. Նույն տեղում:
363. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 603, թ. 75:
364. «Արարատ», 1913, էջ 8:
365. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 39, թ. 2: «Արձագանք», 1890, N 3, էջ 6:
366. **Խոդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 471:
367. Նույն տեղում:
368. Նույն տեղում:
369. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
370. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
371. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 24:
372. **Խոդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 471:
373. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 178:

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «Մարիամյան» օրիորդաց դպրոց.** հիմնադրվել է նույն եկեղեցու արական դպրոցի հետ (1890 թ.) և գործել մինչև 1896 թ. հայոց դպրոցների համընդհանուր փակումը: Վերաբացումից հետո (1906 թ.) այն միավորվել է նույն եկեղեցու արական դպրոցի հետ: 1892-ին դպրոցն ունեցել է 92 աշակերտուհի[374]: Ի դեպ, 1896 թ-ին՝ մինչև փակումը, դպրոցում գործել է փոքր գրադարան՝ 114 կտոր գրքով[375]:

**Կորյունապատ թաղի երկսեռ դպրոց.** հիմնադրվել է 1908 թ.: 1909-ին ուներ 70 արական և 50 իգական աշակերտություն: Ուսուցչական խումբը կազմված էր 4 անձից[376]: 1911-ին այն միդասյա էր՝ 1 ուսուցչով, 2 ուսուցչուհով, 60 աշակերտով և 42 աշակերտուհիներով[377]:

**Գանձակի հայոց գրագիտական դպրոց.** մեծահասակների շրջանում գրագիտություն տարածելու գործին կոչված դպրոցը պահվել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության միջոցներով: Գործել է ոչ ուշ, քան 1907 թվականից: 1909-ին այդտեղ ուսանում էր 118 աշակերտ (56-ը՝ իգական) և 3 ուսուցիչ-ուսուցչուհի[378]:

**Օր. Վարդուհի Տեր-Սահակյանի կար ու ձևի և ձեռագործի ուսումնարան.** ուսուցչուհու տանը՝ Գոլիցինսկայա փողոցի վրա գործած այս դպրոցի գոյընթացի մասին քիչ տեղեկություն ունենք: Ըստ մի հայտագրի՝ 1907 թ. սեպտեմբերի 25-ից սկսելու էին դասընթացները[379]:

**«Ժամհարյան» եղբայրների գյուղատնտեսական դպրոց.** լրագրային մի հաղորդման համաձայն՝ 1913 թ. Սինոդը Սբ. Հովհաննես եկեղեցու ծխականներին թույլ էր տվել «Արաբլու» կոչված հողամասից 200 դեսյատին վաճառել Ժամհարյան եղբայրներին (1 դեսյատինը՝ 200 ռուբ.)՝ իրենց ծախսով դպրոց կառուցելու համար[380]:

**Գանձակի պետական դպրոցներ.** հայ աշակերտության թիվը նշանակալի է եղել նաև Գանձակի ոչ հայկական՝ պետական (արքունի) դպրոցներում: Մասնավորապես, 1881-ին հիմնված արական գիմնազիայում, օրինակ, 1893 թ. ուսումնառու 209 աշակերտից 153-ը հայ էին, 38-ը՝ թուրք, իսկ 15-ը՝ ռուս[381]:

Նույն իրավիճակն էր նաև 1884 թ. մեծ իշխան Միքայելի հիմնած Արիեստավորաց ուսումնարանում (երկհարկ շենքը գտնվում էր քաղաքային այգու և նահանգապետի տան մոտ)[382]: Հայտնի է, որ 1902 թ. կրոնի ուսուցիչն էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանա Ավետիք Կարապետյան Շահսուվարյանցը[383]:

Զգալի թվով հայ աղջիկներ էին ուսանում նաև Սբ. Նունեի անվան օրիորդաց ուսումնարանում, որը գործում էր 1885-ից ի վեր[384]:

**«Գանձակ» կայարանի դպրոց.** համաձայն մի վավերագրի՝ այն գործել է 1911 թ. (1 ուսուցիչ, 10 աշակերտ և 14 աշակերտուհի): Եղել է միդասյա[385]: Դպրոցի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է:

**Գանձակի հայոց եկեղեցիները.** եթե Հայաստանի փոքր գյուղերն իսկ ունեին իրենց եկեղեցիները, ապա կարելի է միայն ենթադրել, թե հոծ հայ բնակչություն ունեցած Գանձակը, որը Թ-ԺԲ դարերում մինչև իսկ կաթողիկոսանիստ էր, քանի-քանի եկեղեցիներ ունեցած կլիներ: Մինչդեռ 1989 թ. դրությամբ հայտնի ու պահպանված եկեղեցիներից ամենահինը միայն ԺԷ դարի վաղեմությունն ուներ:

ԺԹ դարի ընթացքում, երբ քաղաքն ընդգրկվեց ռուսաց տիրապետության մեջ, հայերը ձեռնամուխ եղան հին եկեղեցիների նորոգման և նորերի կառուցման գործին: Ընդհանրապես, մինչև ԺԹ դարի կեսերը Գանձակն ունեցել է քաղաքներն 4 հայոց եկեղեցի, դրանցից 3-ը եղել են ծխական, իսկ 1-ը՝ գերեզմանատան: 1849 թ. մի վավերագրում[386] Գանձակի եկեղեցիները ներկայացված են անվանապես.

1. Սբ. Հովհաննես Մայր եկեղեցի
2. Սբ. Գևորգ եկեղեցի Երևանցոց թաղի
3. Սբ. Աստվածածին եկեղեցի Նորաշեն թաղի
4. Սբ. Սարգիս գերեզմանատան եկեղեցի:

Հարկ է նշել, որ թվարկված եկեղեցիներից զատ՝ քաղաքում կային և մի քանի եկեղեցի-մատուռներ, որոնք սրբատեղիներ էին և ուխտավայրեր: Դրանցից առանձնապես հայտնի էր Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցին:

1870-ական թթ. վավերագրերում արդեն հիշվում է 4 ծխական եկեղեցի (ավելացել էր Սբ. Գրիգոր Լուսավորիչը), իսկ 1885 թ.՝ 6 եկեղեցի, որոնցից 4-ը ծխական (Սբ. Հովհաննես, Սբ. Գևորգ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Աստվածածին, գերեզմանատան Սբ. Սարգիս և Չոլակի Սբ. Աստվածածին)[387]:

Քաղաքի մեջ հայերն ունեին նաև Սբ. Աստվածածին, Սբ. Կիրակոս և Սբ. Յուդիտա ուխտատեղիներ[388]:

**Սբ. Հովհաննես Մայր եկեղեցի.** Նոր Գանձակի ամենահին եկեղեցին է՝ Քիլիսաքյանդ թաղամասում: Ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Երկթեք ծածկի տակ առնված կիսաշրջանաձև թաղը ներ-

374. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 471-472:
375. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 178:
376. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
377. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
378. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 473-474:
379. «Կովկասի առավոտ», 1907, N 9:
380. «Արարատ», 1913, էջ 114, 1000:
381. «Նոր-Դար», 1899, N 81, էջ 3: «Արձագանք», 1893, N 145, էջ 2:
382. «Արձագանք», 1893, N 133, էջ 1:
383. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 34-38:
384. «Նոր-Դար», 1899, N 81, էջ 3:
385. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
386. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 95-96:
387. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
388. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 51-52:







**ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Յովհաննես եկեղեցի**

քուստ պահում են երեք զույգ սյուները: Արևելակողմի ավանդատները կրկնահարկ են: Երկու մուտքերը բացված են հարավային և արևմտյան ճակատներից: Տարբեր ժամանակներում եկեղեցուն արևմուտքից կցվել են գավիթ, ապա նախագավիթ և զանգակատուն: Ինչպես բուն եկեղեցում՝ առաջին հարկի ավանդատան հարավային կողմում, այնպես էլ նախագավթում ԺԸ-ԺԹ դարերում թաղումներ են կատարվել: Դրանց մի մասի տապանագրերը գրառվել ու հրատարակվել են[389]:

Հարավային պատին, արևային ժամացույցից ցած՝ 4 տող.

*Ի ժամանակն Ովանէս | կ(ա)թուղ(ի)կ(ո)սի, թվին ՌՁԲ (1633) [ս] շինվ(ե)ցաւ ս(ուր)բ Ովանէս եկ|եղեց(իս):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37: Նաև՝ «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 299: «Դիվան...», V, էջ 227:

Ծանոթ. տեղում արձանագրության վերծանության միակ հեղինակը Մ. Բարխուտարյանցն է, մյուսները վերահրատարակիչներ են:

Սբ. Հովհաննես եկեղեցի. հարավային ճակատի արևելյան անկյան մոտ՝ 5 տող.

*Ս(ուր)բ Յովանէսի ծառ|այ Թասալի | Իսրումի Աստ|ապատեցի, | ի ՌՂԲ (1643) թվին:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Հովհաննես եկեղեցի. նախագավթի մուտքի ճակատին՝ 4 տող.

*1860 | շինեցաւ դուռս | արդեամբ Յուէփ Զառ|աք Գրիգորե(ա)նց յիշ(ա)տ(ա)կի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37:

Սբ. Հովհաննես եկեղեցի. հարավային ճակատին ագուցված սրբատաշ քարին՝ 9 տող.

*Ի թուին ՌՅԺԱ (1862). շնորհիւն Ա(ստուծո)յ | ես մահտ(ե)սի Աղաջան Խաչատուրեանս | իմով սեպհական արդեամբ շինեցի | զտանիս ս(ուր)բ Յովհաննէս եկեղէ|ցւոյս սրբատաշ քարամբ ի ներքս | եւ*

389. Սբ. Հովհաննես եկեղեցու որմերին, ինչպես նաև շուրջն ու ներսում գտնված տապանաքարերի վրա պահպանված վիմագրերի առաջին ընդօրինակողն ու հրատարակիչը Մ. եպիսկոպոս Բարխուտարյանցն է: Գիտնականը հնավայրից հավաքել ու հրատարակել է 15 միավոր արձանագրություն (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 36-38): Հաջորդը Էմմանուել քահանա Նազարյանցն է, որի հրատարակած 3 վիմագրերից 2-ը նորույթ էր, իսկ 1-ը՝ վերահրատարակություն («Նոր-Դար», 1889, N 85, էջ 2): Քիչ ուշ դրանցից 4-ը՝ առանց աղբյուրը նշելու, վերահրատարակել է Ե. Լալայանը (**Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական Հանդէս», գիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 268, 299): Ինչ վերաբերում է «Դիվան հայ վիմագրության» 5-րդ պրակին (Երևան, 1982), ապա այդտեղ վերահրատարակվել է 12 արձանագրություն (ընտրողաբար)՝ ոչինչ նոր բան չավելացնելով արդեն եղածին: 1986 թ. տեղում կատարված ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից գրի առնված արձանագրություններից երկուսը նախկինում հրատարակված չեն եղել, ուստի նախկինում հրատարակվածների հետ մեկտեղ ստորև ներկայացվող Սբ. Հովհաննես եկեղեցու վիմագրական ողջ հավաքածուն կազմում է 19 միավոր:

*յարդաքս սպիտակեցուցի ի յիշա|տակ հոգւոյ իմոյ եւ ամ(ենայն) ննջե|ցէլոց եւ կենդանեաց իմոց, | յամի տեառն 1862:*

Հրատ. առաջին անգամ:

Եկեղեցու և կից շինությունների շինարարական ընթացքը լուսաբանում են նաև հետևյալ արձանագրությունները.

Սբ. Հովհաննես եկեղեցի. արևմտյան մուտքից վեր եղել է.

*Հիմնեցաւ ի հիմանէ գաւիթ սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի հայրապետութեան տեառն Եփրեմայ եւ առաջնորդութեան տեառն Ներսէսի սրբազան արքեպիսկոպոսի արդեամբ եւ ծախիւք մահտեսի տէր Գէորգի Տէր Յովհաննիսեան. հայցեմ առ սիրելի եղբարցդ՝ որք հանդիպիք ընթեռնուլ՝ զմէկ բերան զողորմի խնդրեցէք առ Աստուած, 1816 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 299:

Սբ. Հովհաննես եկեղեցի. ներքուստ, հյուսիսային ճակատից բացված լուսամուտներից մեկի վերնամասում եղել է.

*Յիշատակ է լուսամուտս Մայիլեանց Ղահրամանին ու ծնողաց նորին Աւագին եւ Եղիսաբէթին, 1839 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37:

Սբ. Հովհաննես եկեղեցի. նախորդին կից, երկրորդ լուսամուտից վեր.

*Յիշատակ է սուրբ աւազանս եւ լուսամուտս մահտեսի Աղաջան Խաչատուրեանի ... եւ ծնողաց եւ եղբարց, 1839 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթի մեջ բացվող եկեղեցու արևմտյան մուտքի հարավային կողմում եղել է.

*Ի թուին Հայոց ՌՅԺԱ (1862). շնորհիւն Աստուծոյ ես մահտեսի Աղաջան Խաչատուրեան իմով սեպհական արդեամբ կառուցի նորաձեւ կաթուղիկէս սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ամենայն ննջեցելոց եւ կենդանեաց իմոց: Աղաչեմ զհանդիպողսդ յիշեսջիք զմեզ յարժանաւոր մաղթանս ձեր, զի միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ջնջեսցէ Տէր զձեռագիր յանցանաց իմոց, յամի Տեառն 1862-ին, Գանձակ:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 37-38: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 299:

Եկեղեցու մի սյան վրա եղել է.

*Խանի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 36:

Խոյակի վրա եղել է.

*Ղղար էրեց:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 36-37:

Սբ. Հովհաննես եկեղեցու շինարարության և նորոգումների պատմության համար կարևոր լրացում են նաև արխիվային վավերագրերում առկա տվյալները: Հատկապես ուշագրավ են Ի դարի սկզբին կատարված հիմնավոր նորոգումների մասին վկայող այն փաստաթղթերը («Յաղագս վերաշինութեան սբ. Յովհաննէս եկեղեցւոյ Գանձակայ»), որոնց համաձայն՝ 1899-ից այդ նպատակով սկսված գրագրությունն ավարտվել էր 1910 թ.: Աշխատանքները գլխավորել են Հովսեփ-բեկ Մելիք-Բեգլարյանը, Սիմեոն Աֆանասյանը, Միքայել Լազարյանը, Հակոբ Լիսիկյանը, Մարտիրոս Նաբաթյանը և Սիմեոն Բա-







**ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքը, մուտքի շինարարական արձանագրությունը և արևելյան ճակատից բացված լուսամուտը**

բաքևխիյանը[390]: Նախագիծն ու նորոգումների ծախսերի նախահաշիվը 1903 թ. կազմել էր ճարտարապետ Օլտարժևսկին[391]: Հայ-թուրքական ընդհարումների հետևանքով ձգձգված աշխատանքները, ի վերջո, սկսվել և ավարտվել են 1910 թ.[392]:

1920 թ. թուրքական բանակի ղեկավարության հրամանով Սբ. Հովհաննես եկեղեցին հրետանակոծվել է. «Բազում արկեր էին պայթել եկեղեցու շուրջ, բայց դրանցից 5-ը այնուամենայնիվ դիպուկ էին ստացվել, ըստ որում 3-ը հարվածել էին գմբեթին, իսկ երկուսը հիմքից բարձր»[393]:

Սբ. Հովհաննես Մայր եկեղեցու գավթում և ավանդատներից մեկում ամփոփվել են երկրամասի պատմության մեջ նշանակալի դեր կատարած հոգևոր և աշխարհիկ անձինք:

Սբ. Հովհաննես եկեղեցի. հարավային, առաջին հարկի ավանդատան խորանի մեջ, տապանաքարին եղել է.

*Տէր Յիսուս Քրիստոս, ՌՃՂԱ (1742) թվին*
*Այս է տապան սուրբ Ներսէսի*
*Եւ Աղուանից կաթուղիկոսի*
*Եղև վախճան հանղիսի*
*Երկյոբելեան կեանս հասի,*
*Ապա կոչումն տեառն լսի*
*Փոխեալ աստէն յերկինս դասի*
*Հազար երկու հարիւր ամի.*
*ԲԺ (20) թուի*
*Եւ բարադասի*
*Ներ սորա անւոջ յիշատակի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 36: «Դիվան...», V, էջ 227:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում, տապանաքարին՝

*Այս է տապան սուրբ Եղիշէի առաջնորդ Վա... վարդապետին, թվ. ՌՄՁ (1757):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում, տապանաքարին.

*Այս է տապան չարաբերղցի Աբանաս վարդապետի... ՌՄԺԳ (1764):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում, տապանաքարին՝

*Այս տապան Կորգի որդի Մելիք Մնացականին, ՌՄԻ (1771):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում, տապանաքարին՝

*Այս է շիրիմ սուրբ Երուսաղէմայ նուիրակ Թոխաթցի Ֆարաւոն վարդապետի, ՌՄԼԵ (1786):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. նախագավթի արևմտյան մուտքի առջև եղել է.

*Անմոռաց այս տապան քաջ անուանի, հանգչի աստ մարմին Մելիք-Առստամի, յազգէն Բազրատունի Հայկազեան տոհմի՝ տիրող Բարսում Գանձակու նահանգի, ծնեալ 1722 թ., վախճ. 1794 ամի:*

Հրատ. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 268: «Դիվան հայ վիմագրության», էջ 228:

Ծանոթ. վիմագրի առաջին հրատարակիչը Էմմանուել քահանա Նազարյանցն է:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթի արևմտյան մուտքի առջև, տապանաքարին եղել է.

*Այս է տապան Աւագ վարդապետին, որ է Չարապերտու Մեծ-Կունէից, ՌՄԽԵ (1796):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Ծանոթ. հանգուցյալն է ժամանակի ազատամարտի հերոս Դալի-Մահտասին:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթի հյուսիսակողմի պարտեզամիջի զերեզմանատան մի տապանաքարին եղել է.

*Այս է տապան չարաբերդցի Սարգսի որդի Արզուման ուզպաշուն, ՌՄԽԵ 1796 թուին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Ծանոթ. հանգուցյալն է ժամանակի ազատամարտի հերոս Թյուլլի-Արզումանը:

Սբ. Հովհաննես եկեղեցի. նախագավթի արևմտյան մուտքի առջև տապանաքարին եղել է.

*Այս է տապան Մկրտիչ եպիսկոպոսի՝ առաջնորդին Գանձակու, ՌՄԽԹ (1800):*

Հրատ. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:

Ծանոթ. վիմագրի միակ հրատարակիչն է Էմմանուել քահանա Նազարյանցը:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում, տապանաքարին եղել է.

*Այս է տապան Մռուտ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետի, ՌՄԽԹ (1800), յունիս ԺԶ (16)-ին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. հարավային, առաջին հարկի ավանդատան խորանի մեջ՝ տապանաքարին, եղել է.

*Այս է հանգիստ Իսրայէլին,*
*Որ է ազնիւ և գովելին,*
*Նման արդարոյն Աբէլին,*
*Եւ որդի Մելիք Հաքամին,*
*Ուրուտասան կեանք սկալի*
*Առնու անանց պարգևս լի*
*Եւ մեզ եթող տրտմութեամբ լի*
*ՌՄԻԵ (1826) թուի*
*Եւ ԺԵ (15) մայիսի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 36: «Դիվան...», V, էջ 227-228:

Սբ. Հովհաննես եկեղեցի. գավթում՝ տապանաքարին.

*Այս է տապան Սուրբ Ստեփաննոս Նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապետի, ՌՄՁԳ (1834):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 38: «Դիվան...», V, էջ 228:

---

390. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3400, թ. 2:
391. Նույն տեղում, թ. 9:
392. Նույն տեղում, թ. 13: Նաև՝ ֆ. Պ461, ց. 1, գ. 26, թ. 11-12:
393. **Գրիգորյան Բ.**, նշվ. հոդվ.:

**Քահանա.** ծխական քահանաներից հայտնի էր *Հովհաննես Ենգիբարյանը,* որը 1862 թ. դրությամբ վախճանված էր[394]:

*Գարեգին ավագ քահանա Տեր-Գրիգորյան Թումանյանց.* քահանա է ձեռնադրվել 1898 թ. նոյեմբերի 15-ին[395]: Որդիներն էին՝ Տիգրանը (ծնվ. 1887 թ.), Արսենը (ծնվ. 1891 թ.), Ստեփանոսը (ծնվ. 1893 թ.) և Գրիգորը (ծնվ. 1895 թ.): 1908 թ. հովվել է քահանաներ Գրիգոր Բաբաքևխյանցի (վախճ. 1908), Դանիել Տեր-Դանիելյանցի, Մկրտիչ Տեր-Հովսեփյանցի, Շմավոն Բորյանցի հետ[396]: Վախճանվել է 1918 թ. դեկտեմբերին[397]:

**Սբ. Հովհաննես եկեղեցու «Արաբլու հող» կալվածքը.** քաղաքամերձ կալվածքներից էր. «Արափլու գետինը գտնվում է Գանձակ քաղաքի գծի մէջ, ունի սեպհական ջուր և առուակ, տարածվում է քաղաքիս արևելահիւսիսից դէպի հարաւ, գեներալնի մէժէվաննիով բաղկանում է 1560 դեսյատինից»[398]: Դեռևս 1836 թ. հողամասի մի մասը գնել էր գանձակեցի Համասփյուռյան ընտանիքը. («Այդ գետինը յիսուն տարի առաջ հանգոցեալ եղբարք Պետրոս, Պօղոս և Թադվերան Համասփիւռեանք գնեցին Մելիք-Մեջլումի հարս Թամար խանումից Արափլուի կէսը 600 ռուբլով...»)[399], իսկ մնացած մասը նվիրաբերվել էր եկեղեցուն. «...քաղաքիս հինգ բարեհոգի հեռատես անձինք՝ Ճհանբեկ Բալուղեանցը, Յովհաննէս-բեկ Մելիքեանցը, Մահտեսի Յովակիմ Եսայեանցը, Մահտեսի Աղաճան Իսահակեանցը և այլ ոմանք գնելով մնացեալ կէսը 600 մանէթի նուիրում են եկեղեցւոյն...»[400]:

Հայտնի է, որ Համասփյուռյան ընտանիքին պատկանող «Արաբլու»-ի 90 դեսյատին հողակտորին արդեն 1885 թ. տիրանալու մտադրություն ունեին գերմանացի գաղթականները[401]: Դա միանգամայն բնական երևույթ էր, քանի որ գոնե 1886 թ. դրությամբ անտարբերության մատնված «Արաբլուն» վերածվել էր «...եկեղեցապատկան խոպանացեալ գետին»-ի[402]:

1898 թ. Էջմիածնի հոգևոր վարչությունը «Արաբլու» հողամասից վարձակալությամբ 33 դեսյատին տարածք էր հատկացրել հելենդորֆաբնակ հայերին (ի դեպ, այդ հողամասից 3-4 դեսյատինը նախատեսվում էր օգտագործել եկեղեցու և դպրոցի շենք կառուցելու նպատակով), սակայն «...երբ ամեն ինչ պատրաստ էր և երկու կողմի ներկայացուցիչներն էլ գնացին նոտարի մոտ կապակցութեանը ստորագրելու, յանկարծ հոգևոր կառավարութիւնը ոմանց շնորհիւ անտեղի հարցեր յարուցեց և գործը ձգձգուեց մինչև որ 1903 թ. օգոստոսին Արաբլուն եկեղեցական գոյքերի հետ անցաւ պետութեան ձեռքը»[403]: Տարիներ անց՝ 1906 թ., Հելենդորֆի հայ համայնքը նույն խնդրանքով վերստին դիմել է հոգևոր իշխանություններին: Խնդրանքը բավարարվել է, և 1908 թ. կնքվել էր պայմանագիր (մի կողմից՝ Սբ. Հովհաննես եկեղեցու հոգաբարձուներ Աբրահամ Թեմուրյանցի, Սերգեյ Ազիզյանցի, մյուս կողմից՝ հելենդորֆցիներ Ալեքսանդր Սամիկոնյանցի և Գրիգոր Ենգիբարյանցի միջև), ըստ որի՝ եկեղեցապատկան հողից անորոշ ժամանակով և տարին 500 ռուբ. վարձով 15 դեսյատին էր («...այս հողամասի սահմաններն են՝ յարևելքն՝ ս. Յովհաննէս եկեղեցւոյ վարելահողերն, յարևմուտքն՝ Ելենդորֆ տանող արքունի ճանապարհն, հարաւն՝ գերմանացւոց վարելահողերն, իսկ հիւսին՝ գերմանացի Լօքի այգու ցանկապատն...») հատկացվում Հելենդորֆի հայ համայնքին[404]:

1907 թ. Էջմիածնի Սինոդը որոշում է բավարարել Գանձակի ծխական ժողովի խնդրանքը և «Արաբլու» հողամասից 5 դեսյատին է հատկացնում զինվորական շենք («շտաբ-կուարտիր») կառուցելու համար[405]:

1913 թ. «Ժամհարյան» գյուղատնտեսական դպրոցը կառուցելու համար Վրաստանի Հայոց կոնսիստորիան դիմել է նահանգային իշխանություններին՝ նույն հողամասից 200 դեսյատին վաճառելու թույլտվություն ստանալու համար[406]:

«Արաբլու» հողակտորը նաև հայտնի հնավայր էր, որի նախաքրիստոնեական հուշարձանները մասնակի պեղումների էին ենթարկվել դեռևս 1880 թ.[407]:

**Սբ. Հովհաննես եկեղեցու «Թիք-Ղաջ» կալվածքը.** հայտնի է, որ 1906 թ. եկեղեցապատկան կալվածքում տներ կառուցելու և հողամասից օգտվելու նպատակով տարածքը վարձակալությամբ հատկացվել էր հելենդորֆաբնակ հայերին և Կոդյունապատի բնակիչներին[408]:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գտնվում էր Նորաշեն թաղամասում: Մինչև Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը քաղաքի ծխական գլխավոր եկեղեցիներից մեկն էր, ըստ որում, մյուսների համեմատ առավել ընդարձակ. «...յորս առաւել մեծ և գովելի է Նորաշէնցւոցն կառուցեալ ի վերայ վեցից սեանց»[409]: Ավելի ուշ այս եկեղեցու այցելուները

394. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 48:
395. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 28-29:
396. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 5:
397. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 52, թ. 2:
398. «Մեղու Հայաստանի», 1886, N 4, էջ 2:
399. Նույն տեղում:
400. Նույն տեղում:
401. «Մեղու Հայաստանի», 1885, N 94, էջ 4:
402. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 4, թ. 12:
403. Նույն տեղում, գ. 15, թ. 1: Նաև՝ «Մուրճ», 1898, N 4, էջ 565:
404. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 15, թ. 4, 7-8, 11:
405. «Արարատ», 1907, էջ 11:
406. «Արարատ», 1913, էջ 114, 1000:
407. Տե՛ս սույն աշխատությունը, էջ 61:
408. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 15, թ. 3:
409. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ.,մասն Ա, Տփխիս, 1842, էջ 172:

տվել են այլ նկարագրություններ ևս, սակայն դրանցից կարևորությամբ առանձնանում է եպիսկոպոս Բարխուտարյանցի հաղորդումը. «...շինուած է Հայոց ՌՃԿԲ (1713) թուին, քարուկիր, հոյակապ, բարձրաշէն և ընդարձակ է՝ կառուցեալ վեց միապաղաղ սիւների վերայ: Բայց որովհետև արևելքից արևմուտք ճաքած են եկեղեցուս հիւսիսային կողմի կամարներն, վասնորոյ արտաքուստ շինած են նոյն կողմից քարուկիր յենարաններ և մի զաւիթ դրան վերայ: Եկեղեցուս երկարութիւնն է 26 1/2 մետր, լայնութիւնն 16»[410]: Ուշագրավ է նաև ԺԹ դարավերջին Էմմանուել քահանա Նազարյանցի՝ եկեղեցու հետևյալ նկարագրությունը. «...Գանձակի Նորաշեն անունով քաղաքամասն ունի ս. Աստվածածին անունով մի բաւական մեծ եկեղեցի, որ թէպէտ առանց կաթուղիկէի է, սակայն օրինաւոր կամարակապ է, վեց հատ քարեայ սիւներով: Սալարկած հատակը ծածկուած է մաքուր խոտերով որ առհասարակ գործածական է քաղաքի եկեղեցիներում, իսկ ատեանը ծածկուած է կապերտներով: Ժողովրդոց դասերը բաւական ընդարձակ են և, որ յարմարաւորն է՝ կանանց դասը բաւական բարձր է տղամարդոց դասից: Այս եկեղեցին ունի մի կարգին քարաշէն նախագաւիթ՝ մի առանձին սենեակով: Նախագաւիթը, որ միանգամայն և զանգակատուն է, շինուած է Ղազար Թէոսեանցի ծախքով 1889 թուին...»[411]: Պարբերաբար իրականացված նորոգումներից հատկապես նշանակալից են եղել 1854-1859 (գլխավորապես ծածկերը)[412] և 1868 թվականներինը: Վերջինս վկայված է եղել եկեղեցուն նվիրաբերված մի մասնատուփի արձանագրության մեջ. «Յիշատակ է սուրբ խաչս Մնացական Գրիգորեանց Վասակով, որ ետ Նորաշէն սուրբ Աստուածածնայ եկեղեցոյն, որ և այժմ նորոգեաց որդի նորին Գէորգ Վասակով 1868 ամի, ի սմա է ամփոփեալ բոյթն Թադէոսի առաքելոյն Ա. Գ. Թ.»[413]: Ի դեպ, նույն՝ 1868 թվականին, հավանաբար, նորոգումից հետո, եկեղեցին, որի քահանան էր տեր Գրիգորը, կողոպտվել է[414]:

1890-ական թվականների կեսերին հոգևոր իշխանությունների թույլտվությամբ նոր նորոգումներ իրականացնելու նպատակով սկսվել էր միջոցների հանգանակությունը:

1895 թ. լրագրային մի հաղորդման մեջ նշվել է, որ «Նորաշէն թաղի եկեղեցին մօտ ութն ամիս է, որ փակուած է կամարը ճեղքուած լինելու պատճառով»[415]: Անհրաժեշտություն էր ծագել քայքայված եկեղեցու տեղում միանգամայն նոր շենք կառուցել, սակայն մասնագետների քննությունից հետո որոշվել է բավարարվել նորոգումներով[416]: Այդ աշխատանքների իրականացման համար խոշոր նվիրատվություն էր կատարել (500 ռ.) գանձակեցի վաճառական մահտեսի Քերովբե Տեր-Մարտիրոսյանցը[417]:

**Կալվածքներ.** 1907 թ. Սբ. Աստվածածին եկեղեցապատկան կալվածների թվում հիշատակվում են «Դայլար Երի», «Ղուրու-դրբի» և «Ուչ-թափա» տեղամասերը[418]:

**Քահանա.** *Անանիա* (աշխարհական անունը՝ Սմբատ) *Տեր Թեոդորոսյան Շիրակունի.* 1866-1876 թթ. սովորել է Խաչակապի Թարգմանչաց վանքի դպրոցում, հոր՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունու մոտ: Քահանա է ձեռնադրվել 1889 թ. հունվարի 21-ին: Մինչև 1893 թ. դեկտեմբերի 21-ը հովվել է Դաշկեսանի Կիրանց գյուղին: Ապա Տ.Տ. Մկրտիչ կաթողիկոսի հրամանով փոխադրվել է և քահանայագործել Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում: 1892 թ. վարել է նաև նույն եկեղեցու արական միդասյա դպրոցի հոգաբարձուների նախագահի պաշտոնը, 1899-ին դասավանդել հայոց լեզու քաղաքային և օրիորդաց ուսումնարաններում[419]: 1902-1908 թթ. քահանայագործել է *Եզնիկ* (աշխարհական անունը՝ Մկրտիչ) *քահանա Հարությունյան Զրկինյանցի* հետ[420]: Վերջինս Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցին հովվել է քահանա ձեռնադրվելու օրվանից՝ 1902 թ. ապրիլի 28-ից[421]:

**Սբ. Գևորգ եկեղեցի.** Երևանցոց թաղի ծխական եկեղեցին էր: Հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ, սակայն վավերագրերից մեկում հիշված է 1818 թ-ից[422]:

Հայտնի է, որ եկեղեցու ծխականները Երևանից այդտեղ գաղթել էին 1814 թ. և, քանի որ «հողաշէն և անշուք»[423] եկեղեցու կառուցողներն էլ թաղի հայերն են եղել, ուստի, կարելի է ենթադրել, որ նրա շինարարությունն իրականացվել էր 1814-1818 թթ. միջակայքում:

Եկեղեցին, շնորհիվ այնտեղ պահվող Սբ. Գևորգի մասունքի, քաղաքաբնակ հայերի շրջանում ուներ նաև ուխտատեղիի համբավ ու նշանակություն:

Սբ. Գևորգ եկեղեցուն վերաբերող նկարագրականները հակիրճ են և կցկտուր: Դրանցից ուշագրավ է Էմմանուել քահանայի հաղորդումը. «Քաղաքի կեդրոնում, առաջաւոր ու բանուկ փողոցի վրա գտնւում է մեր ս. Գէորգ եկեղեցին լինելով շատ

410. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 46-47: Ի դեպ, Բարխուտարյանցը եկեղեցու կառուցման տարեթիվը նշելիս հավանաբար օգտվել է մեզ անհայտ, բայց հավաստի աղբյուրից, որը ոչ ինքը և ոչ էլ որևէ մեկը չի հրապարակել:
411. **Նազարեանց Էմմանուէլ քահանա**, Տպաւորութիւններ Գանձակից, «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
412. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 8; ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 81-82:
413. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 47:
414. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5085, թ. 1:
415. «Նոր-Դար», 1895, N 147, էջ 2:
416. Նույն տեղում:
417. «Նոր-Դար», 1895, N 116, էջ 3:
418. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1270, թ. 9:
419. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 45-48:
420. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 6:
421. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 52:
422. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 118-119:
423. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 46:

ցածլիկ՝ փողոցի կողմից գրեթէ չէ երևում: Այս եկեղեցին, որ իսկապէս ուխտատեղի է, ամենաhին եկեղեցու նմանութիւն չունի, որովհետև, ինչպէս պատմում են, սկզբում եղած է մի պարսկի բնակարան, որ ապագայում եկեղեցու է վերածուած...»[424]:

Եկեղեցին ժամանակի ընթացքում կրել է մի շարք նորոգումներ: Դրանցից առաջինը կատարվել է 1849 թ. (25 ռ. 10 կոպ., ծախսվել է եկեղեցու կաթողիկեի նորոգման վրա)[425], մյուսը՝ 1854-ին (տանիքը)[426]:

1905 թ. հետո, երբ թուրքերով շրջապատված Երևանցոց թաղի ծխականներին ապահովության նկատառումներով փոխադրվել էին քաղաքի աջափնյա հայոց թաղը, Սբ. Գևորգ եկեղեցին մնացել էր անտեր: Ի դեպ, այդ կացությունն շարունակվել է նաև հետագայում. «...յընթացս տասը տարուայ, իսկ մնում և քայքայւում անտէրութիւնից»[427]:

1913 թ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն միացած Երևանցոց թաղի նախկին ծխականները, չհաշտվելով իրենց ուխտատեղի-եկեղեցու ամայի ու անտեր վիճակի հետ, դիմել էին հոգևոր իշխանություններին՝ Սբ. Գևորգ եկեղեցում ծիսակատարություններ անելու նպատակով[428] շենքը նորոգելու թույլտվություն ստանալու ակնկալությամբ[429]: Խնդիրն այն էր, որ նորոգությունը պիտի կատարվեր Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հաշվին, քանի որ Երևանցոց թաղի նախկին ծխականների եկամուտները միացված էին դրան: Եվ մինչ հոգևոր իշխանությունը ձգձգում էր պատասխանը, Սբ. Գևորգ եկեղեցու նախկին ծխականներից մեկը՝ Նիկողայոս Աղեքսանդրյան-Ղուկասյանցը, անձնական միջոցների հաշվին 1914 թ. սկսում ու 1915 թ. ավարտում է նորոգումների անհրաժեշտ աշխատանքները (ծախսը շուրջ 1500 ռուբ.)[430]: Դրանից հետո ակնկալվում էր կատարել եկեղեցու օծման հանդեսը. «Մտադրութիւն կայ առաջիկա Ս. Գէորգայ տօնին «պղծեալ տաճարի» կարգը կատարել եկեղեցում»[431]: Ըստ այդմ, հոգևոր իշխանություններին ոչինչ չէր մնում, քան միջնորդել, որպեսզի Ամենայն Հայոց կաթողիկոսն օրհնության և գոհունակության կոնդակ հղի Նիկողայոս Աղեքսանդրյան-Ղուկասյանցին՝ որպես խրախույս նրա ազգասիրական ձեռնարկումներին[432]: 1917 թ. օգոստոսի 7-ին Գևորգ կաթողիկոսը Ն. Ղուկասյանցին հղել է հայրապետական կոնդակ[433]:

**Քահանա.** *Արսեն Եսայան. ձեռնադրվել է* 1869 թ. «...ի վերայ սուրբ Գէորգ եկեղեցւոյ Երևանցւոց թաղի Ելիսաւէտապօլու քաղաքի»[434]:

*Հուսիկ* (աշխարհական անունը՝ Թադեոս) *Հովհաննիսյան Վերդյանց.* Սբ. Գևորգ եկեղեցում սպասավորել է քահանա ձեռնադրվելու օրվանից՝ 1892 թ. նոյեմբերի 15-ից[435]: Հիշվում է մինչև 1901 թ.[436]: Ունեցել է 7 որդի՝ Արամ, Հայկ, Սուրեն, Ռուբեն, Տիրան, Պարույր, Գրիգոր:

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի.** ԺԹ դարի կեսերին Գանձակի աջափնյա հայահոծ թաղամասում գտնվող Սբ. Հովհաննես եկեղեցին արդեն չէր բավարարում ծխականների հոգևոր պետքերին, առաջացել էր նույն թաղամասի վերնամասում նոր եկեղեցի կառուցելու անհրաժեշտությունը:1854 թ.





***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսքը մինչ գմբեթի կառուցումը և եկեղեցու հատակագիծը***

վավերագրերից մեկը փաստում է. «...զխնդիր հայազգի բնակչաց Ելիսաւետոպօլ քաղաքի, որով յայտնեն զիւրեանց ցանկութիւն կառուցանելոյ զնորոգ եկեղեցի ի հին զերեզմանատան քաղաքին, յանուն սրբոյ Լուսաւորչի Հայաստանեայց սեպհական արդեամբք իւրեանց առանց ձեռնամուխ լինելոյ ի գումարն հին եկեղեցւոյն և ոչ թէ խնդրելով յուստեքէ զձողովարարութեամբ...»[437]:

424. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
425. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 95-96:
426. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 8:
427. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1582, թ. 2:
428. ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 613, թ. 5:
429. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3458, թ. 1: Տե՛ս նաև **Խօջայեանց Յովս.**, Գանձակի ս. Գէորգ եկեղեցին, «Մշակ», 1915, N 177, էջ 3:
430. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1582, թ. 2:
431. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3458, թ. 6, ֆ. 57, ց. 2, գ. 2018, թ. 4:
432. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1582, թ. 3:
433. «Արարատ», 1917, էջ 675:
434. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10:
435. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 43:
436. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1081, թ. 2, 7:
437. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 15:






***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից և հատվածներ թմբուկից***

Հարկ է նշել, որ նոր եկեղեցու հիմքը (համաձայն շինարարական արձանագրության) դրվել էր դեռևս 1853 թ.: Ժամանակի պահանջների համեմատ այս եկեղեցին նախագծվել է բավականին ընդարձակ չափերով. «Եկեղեցիս, որ հիմնարկուած է քաղաքիս վերի թաղումն բազմամարդ հայոց մէջ, շինուած է հոյակապ, ընդարձակ, բարձրաշէն, չորս սիւների վերայ: Շքեղ և մեծադիր են լուսամուտներն և դռներն: Բացի լուսամուտների մեծութիւնից, տաճարիս ձևն և մեծութիւնն նման է Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակովբեանց վանքին: Եկեղեցիս ունի երեք դուռն - հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից, մէն մի դուռն արտաքուստ ունի փոքր գաւիթ: Տաճարիս երկարութիւնն է 30 1/2 մետր, լայնութիւնն 19 մետր, 70 սանթիմ»[438]: Եկեղեցու շինարարությունը տևել է 16 տարի և ավարտվել (առանց գմբեթի) 1869-ին: Այդ մասին պատմող շինարարական արձանագրությունը փորագրված է արևելյան ճակատին.

*Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն սեպտեմբերի 1853 ամի և յետ աւարտելոյն տրովք բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Ալեքսանդր Բ. և ի հայրապետութեան Տեառն Գէորգ Դ. օծաւ յ9 նոյեմբերի 1869 ամի, ի սրբազան Մակար արքեպիսկոպոսէ առաջնորդէ Վրաստանի և Իմերեթի և անուանեցաւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի մեծի հայրապետին ազգիս: Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի և աւարտեցաւ 1869 ամի:*

438. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 44-45:







***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և թմբուկը, հատված հարավային ճակտոնից, արձանագրությունը հարավարևելյան սյան հյուսիսահայաց երեսին և տապանաքար՝ հարավային պատի տակ***

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 45: «Նոր-Դար», 1899, N 185, էջ 2: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 300-301: «Սիոն», 1957, ապրիլ-մայիս, էջ 112:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. հարավային սյան վրա.

*Շինեցաւ սիւնս արդեամբք Քերովբ Տէր Մարտիրոսեանցի ի յիշատակ ծնողաց իւրոց 1857 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 45:

Ի դեպ, հայտնի է, որ եկեղեցու մեծածախս շինարարական աշխատանքների վերջին փուլն իրականացվել էր Սբ. Հովհաննես եկեղեցու ծխականների աջակցությամբ (500 ռ.)[439], քանի որ նորակառույց եկեղեցու ծխականներն այլևս ի վիճակի չէին շարունակել այն: Հարկ է նկատել, որ եկեղեցին երկար տարիներ անգմբեթ է եղել. «...մաքուր սրբատաշ քարէ մի բարձր շէնք է, որի գլուխը ահա քանի տարի է զուրկ է կաթուղիկէից. սորա փոխանակ մի հողաբլուր է շինուած, որ աւելի նմանում է տաճկական ջամու, մի՞թէ այս տարի ևս բարձի թողի է մնալու այդ գեղեցիկ շէնքը»[440]: Այդուհանդերձ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իրավամբ համարվել է Գանձակի եկեղեցիների զարդը. «Կարմրագոյն սրբատաշ քարից շինուած այս բաւական մեծ ու բարձր եկեղեցին ընդարձակ ու երեք կողմից վանդակապատ գաւթի մէջ, աչքի է ընկնում իր արտաքին ու ներքին գեղեցկութեամբ և թէպէտ առանց կաթողիկէի է ու զանգակատան՝ սակայն Գանձակի եկեղեցիների զարդն է: Ներսից սալարկուած է մարմարեայ քարով, լուսաւոր է՝ ունենալով երկու կող-

439. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5285, թ. 1:

440. «Արձագանք», 1894, N 4, 12 յունվարի, էջ 1:

մից երեք-երեք բարձր լուսամուտներ...»[441]: Ի դեպ, գմբեթի նախագիծը հաստատվել էր դեռևս 1854 թ., իսկ զանգակատնինը՝ 1888-ին[442]: Դրանք, սակայն, չեն կառուցվել սոսկ դրամի սղության պատճառով: Բացը լրացնելու գործին եկեղեցու ծխականներն ու հոգաբարձությունը ձեռնամուխ եղան միայն 1898 թ.: Սակայն եկեղեցին արդեն կարիք ուներ շինարարական այլ աշխատանքների ևս. «1. Եկեղեցւոյ հարաւային և հիւսիսային դռների առաջն կարևոր է շուշապանդ շինել, 2. եկեղեցւոյ յատակն շինել արտասահմանի աղիւսիւ, 3. եկեղեցւոյ մէջի կողմի պատուարն (պատերն) իւր գմբէթներովն և լուսամուտներն ռանգ տալ, մինչև լուսամուտներն, քարի սւթուններն իւր կամարներովն, վերնատունն, բոլոր փայտեայ շինուածքներն, 22 հատ լուսամուտներն և մնացեալ երկաթեայ գործիքներն ներկել խսկապէս ձէթի մարմարեայ գոյնով, իսկ մնացեալ պատերն և բարձր գմբէթներն ներկել սպիտակ մէլով (կաւիճ)...»[443]: Վերոհիշյալ աշխատանքների ծախսը նախահաշվով կազմում էր 2500 ռուբ.[444], իսկ գմբեթի և զանգակատան համար անհրաժեշտ ծախսը բազմապատիկ ավելի էր՝ շուրջ 33000 ռ.[445]: Հայտնի է, որ այդ նպատակին միայն գանձակեցի Մ. Աֆանասյանցը նվիրել էր 5000 ռ.[446]: Ի դեպ, 1904 թ. «...Պ. Մկրտչի Դանիէլեան Աֆանասեան Գանձակեցւոյ՝ վասն օժանդակութեան նորա շինութեան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ տեղւոյն» համար ստացել էր Հայրապետական օրհնությունն[447]:

1901 թ. դրությամբ շինարարական աշխատանքներին հետևելու համար նշանակվել էր ճարտարապետ Մարչենկոն[448]: Հայտնի է նաև, որ 1903 թ. ընտրվել էր գմբեթի կառուցման աշխատանքները գլխավորող հոգաբարձության նոր կազմ[449]: Ըստ ամենայնի, վերջիններիս հաջողվել էր գլուխ բերել գմբեթի կառուցումը, քանի որ արդեն 1900-ականների կեսերի լուսանկարներում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կրում է 12 նիստանի (նույնչափ լուսամուտներով) և սրածայր վեղարով գմբեթը:

1907 թ. Հայրապետական կոնդակ է շնորհվել գանձակեցի Աննա Բալուղյանցին՝ եկեղեցուն «զաւազան արծաթալուխ» նվիրելու համար[450]:

Հայտնի է, որ Սբ. Լուսավորիչ եկեղեցու ջրի խնդիրը 1912 թ. լուծել էր գանձակեցի Աղաջան Օհանջյանը՝ սեփական միջոցներով ջուր անցկացնելով գավիթը: Իր բարեգործության համար արժանացել է Հայրապետական օրհնությանն ու գոհունակությանը[451]:

1936 թ. կառավարության կողմից եկեղեցին փակվել է[452], իսկ վերաբացումը տեղի է ունեցել 1944-1945 թթ. ընթացքում[453]: Գործել է մինչև 1989 թ.՝ գանձակահայերի բռնագաղթը (միակը Գանձակում):

Եկեղեցու գեղեցիկ շրջապարսպի մեջ ներառնըված էին փոքրիկ գերեզմանատունն ու «Աֆանասյան» ուսումնարանը:

**Քահանա.** *Ավետիք Կարապետյան Շահումարյանց.* սովորել է նախ Գանձակի գավառական ուսումնարանում, որտեղ ուսումը թերի թողնելով՝ 1867-1870 թթ. սովորել է ազգային հոգևոր դպրոցում: 1874-1885 թթ. ազգային հոգևոր դպրոցում եղել է կրոնի, 1895-1902 թթ. քաղաքային պետական դպրոցում՝ հայոց լեզվի ուսուցիչ: 1900-1902 թթ. կրոն է դասավանդել նախ քաղաքային ուսումնարանում, ապա՝ Միքայելյան «Արհեստավորաց» ուսումնարանում:

Սբ. Լուսավորիչ եկեղեցում քահանայագործել է ձեռնադրման օրվանից՝ 1900 թ. մայիսի 6-ից: Օրինակելի ծառայության համար 1904 թ. պարգևատրվել է քահանայական լանջախաչով[454]:

1908 թ. Ա. Շահումարյանցը քահանայագործել է *Ղազարոս Ենգիբարյանցի, Հուսիկ Վերդյանցի* և *Հարություն Եղիազարյան Մռավյանցի* հետ[455]: Վերջինս Սբ. Լուսավորիչ եկեղեցում քահանայագործել է ձեռնադրման օրվանից՝ 1902 թ. մայիսի 30-ից[456]:

**Գերեզմանատան Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղի.** Նորաշեն թաղամասի եզրին տարածված հայոց գերեզմանատան մեջ գտնվում էր Սբ. Սարգիս եկեղեցին: Եկեղեցու կառուցման ժամանակին վերաբերող տվյալներ հայտնի չեն:

Հողաշեն ու անշուք այդ եկեղեցին ուխտատեղիի համբավ ուներ: Դրա վերաբերյալ վավերագրերում հիշատակություններին ենք հանդիպում 1881 թ[457]: Արդեն 1890 թ. եկեղեցին գտնվում էր «...խարխուլ դրութեան մէջ»[458]: 1904 թ. վանահայր է նշանակվել Անանիա քահանա Շիրակունին[459]: 1905-1906 թթ.՝ հայ-թուրքական ընդհարումներից հետո, եկեղեցի-ուխտատեղին հայտնվել էր ավեր վիճակում: Շինության նորոգումներին ձեռնամուխ է եղել և բարեհաջող ավարտին հասցրել գանձակեցի Նիկողայոս Ղուկասյանցը: Օծումը տեղի է ունեցել 1917 թ. հունիսի 4-ին: Դրանով իսկ հնարավորութ-

441. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
442. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3363, թ. 35:
443. Նույն տեղում, թ. 2:
444. Նույն տեղում, թ. 10:
445. Նույն տեղում, թ. 28:
446. «Մշակ», 1910, N 127:
447. «Արարատ», 1904, էջ 201:
448. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3363, թ. 35:
449. Նույն տեղում, թ. 40:
450. «Արարատ», 1907, էջ 205:
451. «Արարատ», 1912, էջ 870:
452. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2684, թ. 5-6, 8:
453. Նույն տեղում, գ. 2692, թ. 15:
454. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 34-38:
455. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 6:
456. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 39-40:
457. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 66:
458. «Նոր-Դար», 1890, N 116, էջ 2:
459. «Արարատ», 1904, էջ 738:



*ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Սբ. Սարգիս եկեղեցի*



*ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). Ջրօրհնեքի հանդեսը Գանձակ գետի ափին (Ի դարի սկիզբ)*

յուն է տրվել «...որ հայ հաւատացեալը անմոռաց պահի իւր ուխտավայրերի ճանապարհը»[460]: Ի դեպ, յուրաքանչյուր տարվա «...պահուց ուրբաթ օրը գնում են քաղաքի բոլոր հայ կանայքն և աղջկունքն համբուրելու և փողնդով «թաքախվելու» մոմեր վառելով և մաղթանք բառնալով դէպի նորա պատկերը...»[461]:

Խորհրդային տարիներին Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղն վերածվել էր «Ժողովուրդների բարեկամության պալատի» և գտնվում էր քաղաքի 9-րդ նրբանցքում:

**Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցի.** Չոլակն իբրև տեղանուն կամ վայր՝ հիշատակվում է 1720-ական թվականներին. «...մերձ Գանջայու, ի Չօլակ անուանեալ վայրն...»[462]:

1867 թ. քաղաքից հարավ՝ գրեթե 2 կմ հեռավորություն վրա, Հովհաննես Միրումյանցի ծախսով կառուցվում է եկեղեցի, որն օծվում է Սբ. Աստվածածին անվամբ[463]: Այդ առթիվ փորագրվում է նաև շինարարական սույն արձանագրությունը.

*Կառուցաւ այս տաճար Միածնի / յանուն Սրբուհւոյ Աստուածածնի / արդեամբ Յովհաննէս Միւրումեանցի, / յիշատակ հոգւոյ իւր կենդանի, / ի 1 օգոստոսի 1867 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 51:

Ծանոթ. մեր այցելության ժամանակ (1986 թ.) արձանագրությունը միտումնավոր կոտրատված էր:

Ուխտատեղին բաղկացած էր եկեղեցուց և երկու սենյակից[464]: Ուներ ընդարձակ գավիթ[465]: Սկսած 1879 թ. «Չոլակ» կամ «Յոլակ» վայրի Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում էր Սբ. Հովհաննես և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների քահանաների հովվության և խնամքի ներքո[466]:

1907 թ. մայիսի 11-ին Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանա է նշանակվել Մկրտիչ Աստվածատրյանցը («...ի նկատ առեալ, զի չէ՛ այլ ևս հնարաւոր վերադարձ Մկրտիչ քահանայի յԱրդուին կամ ի Մէյդարի, ուստի պատուիրել կոնսիստորիային Վրաստանի կարգել ընդմիշտ զՄկրտիչ քահանայն Աստուածատրեանց ի քահանայ Չոլակ ուխտատեղւոյն, որ ի Գանձակ») և հովվել առնվազն մինչև 1913 թ.[467]:

Հայտնի է, որ 1908 թ. ապրիլի 8-ին ուխտատեղից կողոպտվել է, տարվել են սրբապատկերներ, գորգեր, պղնձե և այլ իրեր[468]:

1910 թ. կազմվել է ուխտատեղիի շարժական գույքի ցուցակը, ըստ որի՝ տեղում պահվել են նաև արծաթակազմ ավետարան և մաշտոց[469]:

1912 թ. Մկրտիչ քահանա Աստվածատրյանցը, նկատի ունենալով ուխտատեղիի անմխիթար վիճակը, նորոգության թույլտվություն ստանալու և հանգանակություններ անցկացնելու խնդրանքով դիմել էր Գանձակի հոգևոր իշխանությանը. «...ուխտատեղի տաճարի կամարներն և արևելեան ու արևմտեան որմերն ճաքճքած է, անհրաժեշտ է առաջն առնելու վերանորոգութիւններ անելով, ...հանգանակել բարեպաշտ ուխտաւորներից ս. Ա(ստուա)ծածնի տաճարի նորոգութեան համար»[470]:

1931 թ. ուխտավայրի եկեղեցին գտնվում էր արդեն քայքայված դրության մեջ. «...շրջապատուած է Գանձակի հայ քաղաքացիների այգիներով: Վանքը քարաշէն է, տանիքը աղիւս է, կամարաձև, կրով ու աւազով սուաղած, առանց թիթեղի ծածկ ունենալու, որից առաջ է եկել տանիքի երկրաւթեամբ ճեղքուած, որ քանդուելու վտանգ է սպառնում: Վանքը իւր շուրջ ունի լայնատարած գաւիթ, որ ցանկապատած է քարէ ամուր պարիսպով և հարիւրաւոր պտղատու տունկերով զարդարուած: Ունի ուխտավորների և ժամկոչի համար աղիւսից

---

460. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2018, թ. 1:
461. «Մեղու Հայաստանի», 1874, N 19, էջ 3:
462. **Եսայի Հասան-Ջալալեանց**, էջ 42:
463. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
464. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 19, թ. 19:
465. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
466. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8960, թ. 70:

467. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 19, թ. 1, 8, 19, 164:
468. Նույն տեղում, թ. 5:
469. Նույն տեղում, թ. 19, 209-210, 213:
470. Նույն տեղում, թ. 135:





*ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). արձանագրություններ՝ Չոլակի Սբ. Աստվածածին ավերված սրբատեղիում*

շինուած մի յարկանի երկու սենեակ իւր խոհանոցով, որոյ տանիքը հողով է ծածկուած...»[471]:

Հայտնի է, որ 1935 թ. նոյեմբերի 7-ին Չոլակի Սբ. Աստվածածին ուխտատեղի-եկեղեցու պահպանությունը թեմական հոգևոր խորհրդի կողմից հանձնարարվել է Կարապետ Ռուստոմյանին (Առուստամյան)[472]:

1936 թ. օգոստոսի 10-ին Գանձակի (Կիրովաբադի) հայոց թեմական հոգևոր խորհրդի անունից Տ. Հովսեփ ավագ քահանա Հարությունյանի՝ Էջմիածնի հոգևոր գերագույն խորհրդին հղած հայտարարագրից տեղեկանում ենք, որ «...առանց թեմ. խորհրդին տեղեկություն տալու քաղխորհրդի նախագահ ընկ. Կուլիևը քանդել է տալիս Չոլաքի ուխտատեղին, պատճառաբանելով, որ նա արդեն քայքայված է և շատ վտանգավոր...»[473]: Հովսեփ քահանայի այն խնդրանքին, թե քանդելու փոխարեն հնարավո՞ր չէր արդյոք նորոգումներ կատարել, Կուլիևը տվել է հետևյալ պատասխանը. «...նա պետք է քանդել հիմքից, ես երբեք թույլ չեմ կարող տալ այնտեղ մարդկանց հաճախելու...»[474]: Նույն թվականի սեպտեմբերի 14-ին թեմական հոգևոր խորհրդի հերթական ու արտակարգ նիստում քննվել է արդեն քանդված ուխտատեղիի խնդիրը. «...թեմական հոգևոր խորհրդի և մի քանի քաղաքացիների մասնակցութեամբ խառն և արտակարգ ժողով տեղի ունեցավ՝ մասնավորապես Չոլաք ուխտատեղին ապօրինի կերպով քանդելու մասին...»[475]: Այնուամենայնիվ, եկեղեցու քանդումից հետո էլ վայրը, ինչպես գանձակեցի, այնպես էլ մերձաքնակ գյուղերի հայության համար շարունակել էր մնալ իբրև սրբատեղի: Մինչև իսկ 1945 թ., երբ արդեն վերաբացվել էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, հավատացյալ ժողովրդի հոծ խմբերը գլխավորապես այցելում էին Չոլակի ուխտատեղին: Այդ իրողության առնչությամբ 1945 թ. Վեհափառ Գևորգ Զ կաթողիկոսին թեմական հոգևոր խորհրդի նախագահի հղած նամակում նշվել է. «...Այդ մատուռը անցյալում ունեցել է հռչակ և այժմ էլ ուխտի են գալիս այնտեղ Գանձակից և շրջանից շատ հավատացյալներ ու մոմ վառում թափթփված խաչքարերին համբույրներ տալով: Թէև Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցին բացված է, բայց կիրակի օրերը մարդիկ գնում են դեպի «Չոլակ» ուխտատեղին: Այստեղ սպեկուլանտները մոմ վաճառելով, ոչ միայն նորաբաց եկեղեցին զրկում են եկամուտներից, այլև կիրակի օրերը եկեղեցին մնում է առանց աղոթողների ու կորցնում է իր նշանակությունը: Խոնարհաբար հայտնելով այդ մասին ես կարծում եմ, որ ստեղծված դրությունից դուրս գալու միակ միջոցը մնում է այն, որ հիշյալ մատուռի խաչքարերը հանդիսավոր թափորով բերվեն եկեղեցու բակը...»[476]:

Ըստ ամենայնի, խնդիրը լուծել էին ոչ թե Չոլակի խաչքարերը Սբ. Գրիգոր Լուսավորիչ փոխադրելով, այլ կիրակի օրերին քահանայի՝ Չոլակ այցելելու ճանապարհով: Համենայն դեպս, 1948 թ. թեմական հոգևոր խորհրդի ներկայացուցիչ Մելիք-Ստեփանյանի՝ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնի գործերի պատասխանատու Շահբազբեկովին հղած մի գրության մեջ նշվել է. «Սույնով Ձեզ տեղեկացնում ենք այն մասին, որ Կիրովաբադի տարածքում, Չոլակ վայրում եղել է վանք, որն ավերվել էր 1930 թ.: Հավատացյալ ժողովուրդը կիրակի օրերին հաճախում է նշված վայրը, կատարելով զոհաբերություններ, ուր հրավիրվում են Կիրովաբադ քաղաքի քահանաները»[477]:

Չոլակի եկեղեցու ավերումից հետո՝ ընդհուպ 1989 թ. հայերի բռնագաղթը, այն ունեցել է իր ուխտավորների մշտական ու հոծ բազմությունը, «Չնա-

471. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2666, թ. 25:

472. Նույն տեղում, գ. 2679, թ. 37:

473. Նույն տեղում, գ. 2683, թ. 13:

474. Նույն տեղում:

475. Նույն տեղում, գ. 2684, թ. 8:

476. Նույն տեղում, գ. 2692, թ. 15:

477. Նույն տեղում, գ. 2700, թ. 7 (բնագրում՝ "Настоящим ставлю Вас в известность о том, что на территории г. Кировабада в местности Челак имелся монастырь, который был разрушен в 1930 году. Указанное место верующий народ по воскресным дням посещает, устраивая жертвоприношения, куда приглашаются священники города Кировабада...").

յած, որ կառավարության կողմից պաշտոնական թույլտվություն չկա հաճախելու…»[478]:

1986 թ. տեղում հայտնաբերեցինք ևս 2 վիմագիր, որոնք պատմում էին երբեմնի եկեղեցու նորոգման և կատարված նվիրատվության մասին:

Չոլակի Սբ. Աստվածածին. նորաշեն մատուռի մոտ ընկած կոտրատված քարին՝ 5 տող.

*Յիշատակ ի նուէր ս(ուր)բ / Աստուածածնա եկեղեցոյ / Ալեքսանդր, Մարիամ եւ / Նիկալայ Ղուկասիանցներից, / 1895 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ակնհայտ է, որ Գանձակի Սբ. Գևորգ եկեղեցին և Նորաշենի Սբ. Սարգիս ուխտատեղին իր միջոցներով նորոգած Նիկողայոս Ղուկասյանցը միջոցներ չի խնայել Չոլակում ևս նույնպիսի աշխատանքներ կատարելու համար (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1582, թ. 2): Ի դեպ, Ն. Ղուկասյանցը նորոգել է նաև Մուռուտ գյուղի եկեղեցին:

Չոլակի Սբ. Աստվածածին. նորաշեն մատուռի ներսում՝ պատին ագուցված քարին՝ 4 տող.

*Յիշատակ է / Ջաւահիր Միրու/մեան Ըստառն / Եղիեանցի 11.1.1899 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

**Սբ. Կիրակոս և Սբ. Յուղիտա ուխտատեղի.** ուխտատեղիի գոյությունն առաջին անգամ փաստել է եպիսկոպոս Բարխուտարյանցը՝ նշելով, որ այն գտնվում էր Նաբաթյան եղբայրներին պատկանող մի այգու մեջ և իրենից ներկայացնում էր 4 մասի բաժանված մի տապանաքար: Դրա բեկորներին ընթերցվել է.

*Սուրբ Կիրակոս, սուրբ Յուղիտա, թւա, ՆՌԻԹՃ…*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 52:

Ծանոթ. հրատարակիչը նշել է, թե վիմագրի զրչությունն ու խաչքարանղակների ոճը բնորոշ է եղել ԺԱ դարին: Կարծում ենք, որ տապանագրի թվականը հարկ է ընթերցել հետևյալ կերպ (անշուշտ, եթե ընդօրինակումը ճիշտ է). «Թուա(կա)Ն ՌՃԻԹ (1680)»:

**«Գանձակ» կայարանի աղոթատուն.** դեռևս 1899 թ. քաղաքի հյուսիսային արվարձանում, երկաթուղային «Գանձակ» կայանին հարող թաղամասի հայ բնակիչները մտադրվել էին իրենց համար կառուցել առանձին աղոթատուն[479]: Ուշագրավ է, որ կառուցվելիք աղոթատան համար հողամաս էին նվիրել պարսիկ եղբայրներ Մաշադի Մամեդ-Ջաֆար և Մամեդ Ալի-Հյուսեին օղլի Միրաբովները[480]:

Հակառակ այն հանգամանքին, որ գանձակեցի պարսիկ եղբայրները բարյացակամորեն աղոթատան շինության համար նվիրաբերել էին անհրաժեշտ հողակտորը և դրա համար էլ Ամենայն հայոց կաթողիկոսից արժանացել օրհնության կոնդակի, 1901 թ. Գանձակի հոգևորականության ապաշնորհ ու անհեռատես գործելակերպի հետևանքով նպատակը մնում է անկատար[481]:

Համենայն դեպս, 1912 թ. աղոթատունը դեռ կառուցված չէր[482]: Ի դեպ, նախատեսվել էր կից կառուցել նաև ուսումնարանի շենք: Հայտնի է, որ վերջինս գործել է 1911 թ., բայց աղոթատան ճակատագիրը մնում է անհայտ:

**Կորյունապատի Սբ. Սարգիս աղոթատուն.** 1926 թ. Վեհափառ հայրապետին իր հրաժարականը ներկայացրած Գանձակի թեմական փոխանորդը (1910-ից) նշել է, որ 1914 թ. անձամբ օծել է Կորյունապատ թաղամասում կառուցվելիք աղոթատան հիմքը. «...և օծմամբ հիմնարկեցի Կորիւնապատի Ս. Սարգիս աղօթատունը»[483]:

**Հայոց գերեզմանոցներ.** դեռևս ԺԹ դարի կեսերին Գանձակի տարածքում նկատելի են եղել թվով 24 գերեզմանոցներ[484]: Քաղաքի կառուցապատմանը և զարգացմանը զուգընթաց՝ դրանց մեծ մասը ավերվել ու ոչնչացվել է: Արդեն դարավերջին Գանձակում պահպանված հնագույն գերեզմանոցը տարածված է եղել քաղաքի առաջին մասում, այն է՝ Սբ. Հովհաննես եկեղեցու շուրջը (անշուշտ, խոսքը 1606 թ. հիմնադրված Նոր Գանձակի մասին է): Բայց ԺԹ դ. ընթացքում՝ սկսած 1820-ականներից, սկսել էին գոյանալ 3-4 նոր գերեզմանոցներ ևս: 1887 թ. այդ մասին գրվել է. «Սրանից 50-60 տարիներ առաջ, մինչև այժմեան «Բարխուդարանց» և «Ներքի» անուանեալ գերեզմանատների գոյութիւն ունենալը, քաղաքիս մեռելները թաղվում են եղել սբ. Յովհաննէս մայր եկեղեցուց 30 ոտնաչափ հեռաւորութեամբ գտնուող գերեզմանատանը»[485]: Ուշագրավ է և բնորոշ, որ քաղաքի հայոց գերեզմանոցները գոյացել են հատկապես թաղական եկեղեցիներին կից կամ թաղամասերի արվարձաններում: Այդպես էր օրինակ, Նորաշեն թաղի գերեզմանոցը՝ Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղիով, Սբ. Հովհաննես և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներին կից գտնվածները և այլն: Վերջինս, ի դեպ, 1854 թ. մի վկայության համաձայն՝ գոյություն է ունեցել մինչ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը[486]:

1980-ական թվականներին գերեզմանոցների մեծ մասն արդեն ավերված էր: Նախկին «Բարխուդարանց» գերեզմանոցը, որը խորհրդային տարիներին քաղաքի հայոց միակ գերեզմանոցն էր, պարունակում էր ավելի քան 3000 շիրմաքար:

Ստորև ներկայացնում ենք տեղի տապանագրերից առավել հին թվագրումներով միայն մի փոքր խումբ.

478. Նույն տեղում, թ. 1:
479. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 421, թ. 24:
480. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3444, թ. 16:
481. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 421, թ. 24, 32:
482. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3444, թ. 4:
483. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 22:
484. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, էջ 357:
485. «Նոր-Դար», 1887, N 46, էջ 1:
486. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 15:









***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). նմուշներ գերեզմանատան տապանաքարերից***

Տապանաքար՝ 3 տող.

*Այս է տապան Սիարի, որ է սին | Յովհաննէս Քասպարեանց, | 50 ամաց վախճան. 1802 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար՝ 4 տող.

*Այս է տապան | Նազարեանց | Քասպարի կողակից | Մարգարիտին, ՌՄԿ (1811):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար՝ 2 տող.

*Այս է տապան Աւրամ բեկ | Մէլիք Հախիճանօվ, ՌՄԿԹ (1820):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար՝ 5 տող.

*Ընդ հովանեաւ վիմիս ննջէ, | որ կոչեցաւ աստ ի Տեառնէ | Եսայի բէգ յայր Քաջազանց, | մաղթէ զձեզ տալ ողորմի, յամի Տ(եառ)ն | Ա(ստուա)ծ եւ ձեզ ողորմեսցի, 1834:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար՝ 6 տող.

*Այս է տապան մահտես|ի Եղիսապետին, որ է կող|ակից Մկր(տ)չին, քու|րն Տ(է)ր Մակարի, 1849 ամի, եւ էր | որդի Յովանէսի, վաղճան է ի ս(ուր)բ Երուսաղեմի, | որք հանդիպիք տուք | ողորմի:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար, 5 տող.

*Կոթող արձանի է | դանբան մահտեսի | Վիրապ իշխանի | որդւոյ Մկրտչի | Զարկարեանց տոհմի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԹ դարի վերջ:

**Հնագիտական հուշարձաններ.** քաղաքի մերձակայքը, ինչպես և ողջ երկրամասը, հարուստ է բրոնզեդարյան հուշարձաններով ու մասնավորապես դամբարանաբլուրներով:

Մեծ մասամբ պատահականորեն գտնված, երբեմն էլ նպատակային հետազոտությունների արդյունքում ի հայտ եկած այդ հուշարձանները հնասերների և գիտնականների ուշադրությունն իրենց վրա են հրավիրել արդեն ԺԹ դարի վերջերին: Հայտնի է, օրինակ, որ Գանձակից 3 վերստ հեռավորության վրա գտնվող «Արաբլու հող» տեղամասում 1870-ական թվականներին պեղումներ էր կատարել Գանձակի քաղաքագլուխ, հնասեր Ղահրաման Սարգսյան Հովհաննիսյանցը և հայտնաբերել ուշագրավ մի շարք իրեր. «...այդ գերեզմանները իմացվում են մեծ մեծ քարերից, որոնք անխնայաբար թափած են եղել հանգուցեալների դամբարանների վերայ: Այդ գերեզմաններից մի քանիսը քանդել է տուել պ. Ղահրաման Սերգէյիչ Օվանիսեանը իւր հաշւով այն նպատակաւ, որ իմանայ թէ ինչ հնութիւններ է ամփոփվում այդտեղ: Եւ յիրաւի մեծապատիւ պարոնի աշխատութիւնը և գործ դրած դրամը այդ բանի մասին զուր չի անցել, նա գտել է մի քանի հնութեան յիշատակներ, որոնք կարող են մեծ օգուտ տալ այն անձանց, որոց համար ցանկալի և ուսումնասիրելի առարկա է դարձել հին հայոց կեանքը, պաշտամունքը և սովորութիւնքը: Ահա թէ ինչ են խանչալ (դաշոյն), արեգակ, լուսնիակ, երեք հատ ապարանջան, օձ, բարակ քամար, խունկի աման, երկու ծիտ և երկու պուլիկ: Այդ ամենը ոսկեխառն մետաղներ են...»[487]:

1899 թ. Գանձակի մոտ դամբարանների ուսումնասիրության գործին ձեռնամուխ է եղել գերմանացի հնագետ Է. Ռյոսլերը. «Մայիս ամսին ես Ելիսավետպոլի մոտ բացեցի բրոնզեդարյան 12 մեծ, դիահրկիզման նշաններով շատ հետաքրքիր տափաստանային դամբարան»[488]:

**Գանձակի բերդ.** գտնվում էր Գանձակ գետի ձախակողմում՝ թուրքական և Նորաշեն թաղամասերի միջև. «...շինուած է 1712-1724 թուերի մէջ և գտանվում է վաճառանոցիցը մօտիկ արևմտեան կողմումը. սրա հիմնարկութիւնը ընծայում են Տաճիկների երեսնամեայ տիրապետութեանը...»[489]:

Ավելի հանգամանալից է հետևյալ նկարագրությունը. «...գտանվում է Թուրքաց և Նորաշէնցոց թաղերի միջնավայրումը և ունի անուղիղ քառանկիւնի ձև. շինուած է աղիւսից, կրից և գաջից, շրջապատն է 700 սաժէն. անկիւններումը շինուած կան մարտկոցներ հանդերձ պատուհաններով հրազենների համար: Մէկ ժամանակ հիւսիսային և հարաւային կողմերումը կանգնած են էլել մէկ մէկ բուրգեր: Ուղիղ դասաւորութիւնը, հմուտ բանուածքը և նիւթերի ամրութիւնը ցոյց են տալիս, որ բերդի շինութեան մէջ մասնակից են էլել եւրոպացի ճարտարագործներ: Բերդի չորս կողմը փորուած է հինգ սաժէն խորութիւնով և հինգ սաժէն լայնութիւնով. այս փոսը լցնվելիս է էլել կռիւների ժամանակը ջրով և ունեցել է վեր առնովի կամուրջ»[490]: Ընդգրկել է 1 քառ. վերստ տարածք: Ունեցել է 6 աշտարակ:

1869 թ. ապրիլին «Կովկասի» թղթակիցը, շրջագայելով Գանձակով, ամրոցը տեսել է արդեն ավերակ վիճակում. «Այս ամրոցը ինչպես արտաքուստ, այնպես էլ ներքուստ ներկայացնում է ավերակ պատկեր: Այստեղի բոլոր շինությունները կարծես անդրջրհեղեղյան են, խարխուլ»[491]:

1903 թ. դրությամբ արդեն «Գանջայի ինչ-որ ժամանակ ահարկու ամրոցի տեղում մնացել է միայն ոչ մեծ հողաթմբի կտոր, իսկ մնացած ողջ հրապարակը զբաղեցված է մասամբ քաղաքային շինություններով, մասամբ էլ այստեղ բնակվող ասլանդուզյան պահեստային գումարտակի զորանոցներով»[492]:

**Խոսրով նահատակի մատուռ.** գտնվում է Գանձակի հյուսիսային կողմում՝ Հին Գանձակ քաղաքատեղիում: Ըստ 1167 թ. գրի առնված մի վկայաբանության, որի վերնագիրն է «Վկայութիւն սրբոյն Խոստրովու մեծ եւ փառաւորեալ [վկային] որ կոչի Նոր Նահատակ որ վկայեաց յաշխարհն Աղուանից ի մայրաքաղաքն որ կոչի Գանձակ», Խոսրով նահատակը ծննդով քաղաքամերձ մի գյուղից էր. «...Էր սուրբն Խոստրով քրիստովնեայ ի քրիստովնեայ ծնողաց, յաշխարհին Առանայ, հուպ ի քաղաքն, որ կոչի Գանձակ»[493]: Խոսրովը զոհ է գնում մի պարսկուհու խարդավանքին. «...պատանի մի հայ՝ Խոսրով անուն՝ գեղեցիկ յոյժ, սիրեցեալ յաչս ծնողաց իւրոց և ամենեցուն: Եւ էր նոցա դրացի մի պարսիկ. որոյ դուստրն յարեալ ի սէր Խոսրովու՝ ջանայր արկանել զնա յորոգայթ, և հաւանեցուցանել ի կամս ցանկութեան իւրոյ: Այլ յետոյ ինքն աղ-

487. «Մեղու Հայաստանի», 1880, N 50, էջ 2:

488. **Реслер Э.**, Археологические изыскания в Закавказье, “Кавказ", Тифлис, 1903, N 179, с. 2 (բնագրում՝ “В мае месяце я около г. Елисаветполя открыл 12 больших очень интересных степных курганов, частию с признаками трупосожжения, относящихся к бронзовому веку”).

489. «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, էջ 360:

490. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 172:

491. **Семеновъ И.**, Елисаветполъ, “Кавказ”, 1869, 7 (19) ноября, N 131, с. 2 (բնագրում՝ “Крепость эта как снаружи, так и внутри представляет картину разрушения. Постройки тут все какия-то допотопныя, ветхия”).

492. **А. П.**, День въ Елисаветполе, “Кавказ”, 1903, N 121, էջ 2 (բնագրում՝ “На месте же когда-то грозной крепости Ганжинской остался лишь небольшой обрывокъ землянаго вала, а вся остальная площадь занята частью городскими постройками, а частью казармами квартирующаго здъсь асландузскаго резервнаго батальона”):

493. **Տեր-Մկրտչեան Գ.**, Խոսրով Գանձակեցի, «Արարատ», 1896, էջ 591:

ջինն յայլմէ յղացեալ՝ իբրև յայտնի եղև հօրն, ասաց՝ թէ Խոսրով պատանին բռնադատեաց զիս: Ընդ այս սրտմտեալ հօր աղջկանն՝ կալաւ զԽոսրով, և տարաւ առ ամիրայն Գանձակայ. և նա սկսաւ յորդորել զմանուկն՝ դառնալ ի հաւատոց, և ամուսնանալ ընդ աղջկանն. և իբրև ոչ էառ նա յանձն, գան հարեալ զնա՝ էարկ ի բանտ. ապա խոստացաւ նմա բազում ինչ՝ զի հաւանեսցի ուրացութեան. այլ նա ոչինչ անսայր բանից ամիրային: Եկին առ նա ծնօղք նորա, և փոխանակ յորդորելոյ ի հաստատութիւն հաւատոյ՝ հրապուրէին զնա զոնէ արտաքուստ ուրանալ, և ապա գնալ յայլ երկիր, և անդ ապաշխարել, և մի ի մահ մատնել և կորուսանել զզեղեցկութիւն դեռաբողբոջ հասակի իւրոյ: Իսկ նա ասէ. ցանկամ կորուսանել զզեղեցկութիւն մարմնոյս վասն Քրիստոսի, զի գտից ի Քրիստոս զիօգևորն գեղեցկութիւն: Եւ իբրև տեսին պարսիկք՝ թէ նա անշարժ կայ ի հաւատս, յետ բազում խոստմանց և սպառնալեաց՝ հանին զնա արտաքոյ քաղաքին. և կապեալ ի ծառ մի՝ բարկոծեցին զնա անդ. և ապա հատին զձեռն, և կամէին այրել. բայց քահանայ մի առեալ զայն զնշխարս ըստ արծաթոյ՝ արար անտի խաչ. և զմարմին վկային բարձեալ քրիստոնէից՝ թաղուեցին պատուով...»[494]:

Ի դեպ, ԺԹ դարավերջին գանձակեցիների հուշերում դեռևս կենդանի էր Խոսրովի նահատակության առնչվող հետևյալ պատումը. «Հայկական աւանդութեան ասելով, սա եղած է հայոց Խոսրով նահատակի գերեզմանը, որ նահատակուել է՝ չկամենալով մահմեդականութիւն ընդունել: Իսկ պարսկական աւանդութիւնն ասում է, թէ սա մահմեդականութիւն ընդունելու համար քրիստոնեաներից է նահատակուել»[495]:

Նահատակի գերեզմանի տեղում կառուցվել էր մի մատուռ, որի գմբեթին նկատելի էին «կանաչագոյն աղիւսով խաչաձև շինուածքներ»[496]: Մատուռուխտատեղին մահմեդական բնակիչներին հայտնի էր Գյոզ-Իմամ անվամբ:

1893 թ. հնավայր այցելած ֆրանսուհի տիկին Շանթրը նշել է. «Մեզ ասացին, որ քաղաքից մեկ ժամ հեռավորության վրա գտնվում է մի ավերակ պարսկական սրբավայր, որն անվանում են Իմամ-զադե Մահոմետ Իբրահիմ: Փափագելով այն այցելել, մենք վարձում ենք մի լավ ֆայտոն, և մեկնում Ելիզավետպոլից հյուսիս-արևելք՝ հետևելով Գանձա-չային, որի հունը կտրում-անցնում ենք երեք անգամ: ...Իմամ-զադեն, գմբեթների և դռների կապույտ հախճապակիներով պատված լինելու պատճառով կոչվում է նաև «կապույտ մզկիթ»: Պահպանությունը վստահված է մի քանի մոլլաների, որոնք թույլ են տալիս այնտեղ այցելել առանց որևէ դժվարության: Այս կառույցը բարձրանում է ավերակներով ծածկված մի դաշտում, որոնք ասում են, թե Գեզիլ-Ասթալան անվանված պարսկական մի հին քաղաքի մնացորդներն են, որի ընդարձակ գերեզմանոցը շրջապատում է սրբավայրը: Մատուռը շատ փոքրիկ է, կենտրոնում մի սրբի գերեզմանն է: Դռներից, պատուհաններից քուրջեր են կախված, իսկ գետնի վրա երևում են փոքրիկ քարակույտեր, հավատացյալ մահմեդականների համեստ ընծայաբերությունները:

Իմամ-զադեն կավաշեն մի կառույց է, առանց որևէ ճարտարապետության: Այն կանգուն է մեկուսի, ծայրաստիճան տղմոտ, խճածածկ դաշտավայրում: Հինավուրց քաղաքից այստեղ ու այնտեղ տեսնում ենք միայն մնացորդներ:

Շրջապատող գերեզմանոցի այցելությունը ոչ պակաս հետաքրքիր է: Այն բնավ լքված չէ, քանի որ այնտեղ դեռ կատարվում են թաղումներ: Կոթողները ագուցված են դեպի արևելք շրջված մի որմնախորշի մեջ: Մեծամասնությունը պատկերազարդ են և կրում են գեղեցիկ արձանագրություններ, կան նաև այլաբանություններ: Երիտասարդ մի աղջկա կամ կնոջ գերեզմանը ճանաչվում է մկրատով, հայելիով, ջրամաններով, օծանելիքի սրվակներով և կանացի այլ պարագաներով: Մեկ ուրիշի վրա քանդակված է զինավառ հեծյալ: Այս գերեզմանների մեջ աչքի է ընկնում մեկը, որն անզուգական է իր տեսակի մեջ. կոթողը բացակայում է, սակայն այն փոխարինված է ամբողջովին թամբված և սանձած ձիով»[497]:

494. **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 436:

495. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 302:

496. Նույն տեղում:

497. **M. Chantre,** A travers l'Arménie russe, Paris, 1893, p. 6-7 (բնագրում՝ "On nous a dit qu'à une heure de la ville existe un sanctuaire persan en ruine, qu'on appelle imam-zaddeh Mahomet Ibrahim. Désireux de le visiter, nous louons un bon phaéton, et partons dans la direction nord-est d'Élisabethpol, en suivant le Gandja-tchaï, que l'on traverse trois fois à gué. ... L'imam-zaddeh, appelé aussi quelquefois «mosquée bleue», à cause du revêtement en faïences bleues des coupoles et des portes. La garde en est confiée à quelques mollahs, qui la laissent visiter sans difficulté. Cet édifice s'élève au milieu d'une plaine couverte de ruines, qu'on dit être les restes d'une ancienne ville persane appelée Gezil-Astalan, dont le vaste cimetière entoure le sanctuaire. La chapelle est très petite; au centre est le tombeau d'un saint. Des chiffons sont accrochés autour des ouvertures, portes et fenêtres, tandis que sur le sol se voient des tas de petites pierres, modestes offrandes des pieux musulmans. Imam-zaddeh est une construction en argile sans aucune architecture. Elle se dresse solitaire au milieu d'une plaine d'alluvions extrèmement caillouteuse, dernière épave de l'antique cité, dont on voit çà et là les restes. La visite du cimetière qui l'entoure ne manque pas d'intérêt. Il n'est point abandonné, car on y enterre encore. Les stèles sont généralement encastrées dans une niche tournée vers le levant. La plupart sont peintes, et portent de belles inscriptions; on y voit aussi des sujets allégoriques. La tombe d'une jeune fille ou d'une jeune femme se reconnaît aux ciseaux, miroir, aiguières, vases à parfums et autres accessoires féminins; celle d'un guerrier, aux armes et au cheval sculptés sur son monument. Parmi ces tombes s'en distingue une, unique en son genre: la stèl manque, mais elle est remplacée par un cheval en pierre tout sellé et bridé.



***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՁԱ). պարսկական մզկիթը (լուսանկարն արտատպված* **Chantre M.,** *A travers l'Arménie russe, Paris, 1893 գրքից)***

**Մզկիթներ.** գլխավոր և ամենահին մզկիթը կառուցվել է քաղաքի կենտրոնական մասում, Գանձակ գետի ձախակողմում, 1607 թ. Շահ Աբասի նախաձեռնությամբ. «Սա շինուած է Շահ-Աբաս Ա. ժամանակ և գտնւում է հրապարակի հարաւային ծայրում. շրջապատուած է պարսպով, որի գլխաւոր դռան երկու կողմում բարձրանում են երկու մենարեներ. գաւթում կայ ջրի շատրուան...»[498]:

Ինչ վերաբերում է թուրքական 6 մզկիթներին[499], ապա դրանք կառուցվել են ԺԹ դարի վերջին: Դրանցից «Ղըզլ-Հաջալի» մզկիթը կառուցվել է 1877 թ., «Բալա-Բաղմանը» և «Օզանը»՝ 1884-ին, իսկ «Շահ-Սևանը», «Ղըրխլարը» և «Ղազախլարը»՝ 1880-ական թվականներին: Ի դեպ, ինչպես նկատել է ականատեսը, այս մզկիթները «...ճարտարապետական կամ հնագիտական տեսակէտից ոչ մի առանձին նշանակութիւն չունին»[500]:

**Ռուսական եկեղեցի.** գտնվում էր բերդի ներսում: Կառուցվել է ռուսների կողմից քաղաքը նվաճելուց (1804 թ.) հետո: Աչքի էր ընկնում ճարտարապետական զուսպ լուծումներով. «Ամրոցում կա փոքր ռուսական եկեղեցի՝ փոքրիկ այգիով: Արտաքինից այն նման է գետնափոր տան, քանի որ փոքր ինչ խորանում է հողի մեջ, սակայն ներքուստ առանձնանում է մաքրությամբ և գրավիչ տեսքով...»[501]:

**Կամուրջներ.** անկասկած, Գանձակ քաղաքն արդեն միջնադարից համանուն գետի վրա մեկ կամ մի քանի կամուրջ է ունեցել, որոնք ժամանակի ընթացքում հիմնականում ավերվել են ու անհետացել: ԺԹ դարի կեսին ականատեսը Գանձակում տեսել է միայն մեկ բազմաթռիչք կամուրջ, այն էլ արդեն հեռու մնացած գետի հիմնական հունից և հայտնված ցամաքում. «...կամուրջ բազմակնեայ, բայց ջուրն հատեալ ինքեան ոչ ի բացեայ զայլ ուղի, թողեալ է զկամուրջն ի վերայ ցամաքի»[502]:

1870 թ. հունիսի 26-ին Գանձակ գետի վարարման հետևանքով վնասվել էր Գանձակը Քիլիսաքյանդ թաղամասի հետ կապող փայտե կամուրջը[503]: Մինչ այդ՝ նույն թվականի փետրվարի վերջերին, սկսվել էին նոր կամրջի շինարարական աշխատանքները, ընդ որում, կառուցման համար կառավարությունը հատկացրել էր 70000 ռուբ., որից մոտ 20000-ը՝ քարե հատվածի համար: Կառույցը, որը հունիսի վերջերին արդեն գրեթե պատրաստ էր, աչքի էր ընկնում իր հետաքրքիր հորինվածքով. «...կամրջակալները կամրջասյուներից գտնվում էին 12 սաժեն հեռավորության վրա, սակայն չնայած այդքան մեծ տարածությանը, կամուրջը պետք է ունենար ոչ թե սովորական կամարներ, այլ երկաթե վանդակավոր հեծաններ»[504]:

1880 թ. նույն կամրջի մասին «Կովկասի» թղթակիցը նշել է. «Գանջինսկայի կամուրջը՝ երկաթե, ... քարե կամրջակալներով, հոյակապ կառույց է...»[505]:

**Հուշակոթողներ.** տարբեր ժամանակներում Գանձակում կանգնեցվել են մի քանի հուշակոթողներ: Դրանցից էին կապիտան Պ. Կոտլյարևսկու (1850 թ.), մարշալ Հ. Բաղրամյանի (1983 թ.), բանաստեղծ Հ. Հակոբյանի և այլոց հիշատակը հավերժացնող հուշակոթողները, որոնք բոլորն էլ ներկայումս հիմնահատակ ոչնչացված են: Դրանց փոխարեն այժմ Գանձակում վեր են խոյանում ազգային հերոսի համարում ունեցող զանազան ղաչաղների արձանները:

498. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 298-299:

499. **Фатуллаев Ш. С.**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-начала XX века, Баку, 1986, с. 434.

500. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 299:

501. **Семеновъ И.**, նշվ. հոդվ., էջ 2 (բնագրում՝ "В крепости есть небольшая русская церковь съ маленькимъ садикомъ; снаружи она походитъ на землянку, потому что углубляется немного въ землю; но внутри отличается чистотой и привлекательнымъ видомъ...).

502. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 172:

503. "Кавказ", 1870, N 76, с. 2.

504. Նույն տեղում (բնագրում՝ "...устои моста отстоятъ отъ быка въ 12 саженяхъ, но несмотря на такое большое разстояние, мостъ будетъ не на обыкновенныхъ сводахъ, а на железныхъ, решеточныхъ балкахъ"):

505. **Иксъ**, նշվ. հոդվ., էջ 1-2:



***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). կապիտան Պ. Կոտլյարևսկու հուշարձանը (1850 թ.)***

*Պ. Կոտլյարևսկու հուշարձանը.* քաղաքի եզրին՝ մատուռից ոչ հեռու վեր էր խոյանում զորավար Կոտլյարևսկու հուշարձանը, որի վրա ամրացված մետաղե երեք տախտակների վրա ռուսերեն լեզվով փորագրված է եղել հետևյալը.

*Капитану егерскаго грузинскаго полка Котляревскому, герою Асландуза и Ленкорана, раненому въ 1803 г. при взятии крепости Ганжи подъ главнымъ начальствованиемъ генерала кн. Цицианова. Сооруженъ въ 1850 г. бывшимъ въ деле гвардии поручикомъ графомъ Воронцовымъ.*

Հուշարձանին արձանագրված է եղել նաև.

*Реставрированъ въ 1894 году асландузскимъ батальономъ, при участии штаба 2-й кавк. казачьей дивизии, 1-го лабинскаго конно-казачьяго полка, при помощи Михайльовскаго ремесленнаго училища.*



***ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ). մարշալ Հ. Բաղրամյանի (լուս. արտատպված է Կիմ Ղալաչյանի՝ «Փառքի հուշարձաններ» աշխատությունից) և Հ. Հակոբյանի հուշարձանները (լուս. Ս. Դարչինյանի)***

Հրատ. **А. П.**, Денъ в Елисаветполъ, ”Кавказ”, 1903, N 121, с. 2.

*Մարշալ Հովհաննես Բաղրամյանի հուշարձանը.* 1983 թ. կանգնեցված մարշալ Հ. Բաղրամյանի արձանը հազիվ 7-8 տարի անց ոչնչացնելուց հետո նույն պատվանդանին ներկայումս կանգնեցված է ղաչաղ Նաբիի հուշարձանը: Այն Նաբիի, որն իր ողջ կյանքում իր նմանների գլուխ անցած սպանում ու թալանում էր երկրամասի շինական ու մշակ ժողովրդին, ճանապարհորդներին, անցորդներին ու առևտրականներին: Այն Նաբիի, որն իր բազում հանցագործությունների համար հետապնդվելով իշխանությունների կողմից՝ մշտապես գտնվում էր փախստական վիճակում: Ի՞նչ կարող ես անել. երեկվա թափառական խաշնարածներն ու այսօրվա ադրբեջանցի հորջորջվող թուրքերն ունեն բարոյականության իրենց չափանիշները...

# ԳԵՏԱԲԵԿԻ ՇՐՋԱՆ

Գետաբեկի վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 1225 կմ$^2$ մակերես, ունի 112 բնակավայր, որից 111-ը՝ գյուղ: Սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Դաշկեսանի, Թոուզի և Շամխորի շրջաններին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրի, Վարդենիսի ենթաշրջաններին և Տավուշի մարզին: 1918 թ. Ղազախ-Գետաբակ գյուղի հայաթափումով՝ շրջանը պարպվել է հայ բնակչությունից:



## ԱԹԱԽԱԼ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ արևմուտք՝ Զակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1170-2080 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Ի դարի սկզբին ամայի գյուղատեղիում բնակություն են հաստատել մի քանի տուն այրում-թուրքեր:

1908 թ. ունեցել է 234[506], 1914-ին՝ 146 բնակիչ[507]:

Եկվոր խաշնարած բնակիչները իսպառ վերացրել են հայկական հուշարձանների հետքերը:

## ԱԼԻ-ԻՍՄԱՅԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14,5 կմ հարավ-արևմուտք՝ հարավարևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1440-1510 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Ի դարի սկզբից ամայի գյուղատեղիում հաստատվել են մի քանի տուն այրում-թուրքեր:

Եկվորները իսպառ վերացրել են հայկական հուշարձանների հետքերը:

## ԱՂԱՄԱԼԻ (ՂԱԶԱՆՉԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 14,5 կմ հյուսիս-արևմուտք՝ Լղարակ (Բաղաջուր)[508] գետի ակունքի շրջանում՝ Շաքարբեկ լեռան հյուսիսարևելակողմում, արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1550-1660 մ բարձրության վրա:

Նախկինում Ղազանչի անվամբ հայտնի գյուղի պատմական անվանումը չի պահպանվել: Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները, ապա ամայացել ու վերածվել խաշնարած թուրք ցեղերի ամառանոցի: ԺԹ դարի 2-րդ կեսին հայտնի կալվածատեր Զուլղադարովի ամառային նստավայրն էր. «...ձմեռը բնակվում է Խնձալլու կոչվող կալվածում, իսկ ամառը բարձրադիր Ղազանչի կոչվող տեղում»[509]:

Հայտնի է, որ 1890 թ., օրինակ, Ղազանչի ամառանոցում էր Ալլահյար բեկ Զուլղադարովը. «Լսել էի, որ Զուլղադարովները շատ էլ քաղցր աչքով չեն նայում իրանց կալվածների տիրապետութեան խնդրով հետաքրքրվողների վրա, թեև նպատակս միանգամայն անվտանգ էր նրանց տոհմին, անգամ մտադիր էի Ալլահեար բեկին այցելութեան գնալ Ղազանչի եայլաղը...»[510]:

1976 թ. ունեցել է 1824 բնակիչ[511]:

## ԱՄԻՐԱՍԼԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ արևմուտք՝ Շաքարբեկ գետի աջակողմում, ծովի մակերևույթից 1470-1670 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին՝ 1770-ական թվականներից հայաթափ գյուղատեղիում :

## ԱՅԻԹԱԼԱ

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հարավ՝ Շամքոր գետի Այթալի ջուր կոչված ձախակողմյան վտակի ակունքի շրջանում՝ Ղըզլղայա լեռան (1719,9 մ) հարավային ստորոտին, արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1490-1600 մ բարձրության վրա:

Գոյացել է ԺԹ դարավերջին՝ 1770-ական թվականներից հայաթափ գյուղատեղիի տարածքում: Ընդ որում, դեռևս խանական տիրապետության շրջանում որպես ձմեռանոց՝ պատկանել է Չարեք վանքին. «...տեղւոյն Այթալայ անուանեալ, յորում գտանին ձմերայնոցք ի հին ժամանակաց...»[512]:

## ԱՌԸՂԴԱՄ

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս՝ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1450-1580 մ բարձրության վրա:

Գյուղի պատմական անվանումը չի պահպանվել: Գոյացել է ԺԹ դարավերջին՝ բավականին ընդարձակ տարածք զբաղեցնող հայաթափ գյուղատեղիում: Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները, ապա թուրքական ծագումով խաշնարած ցեղերի համար ծառայել է իբրև ամառանոց:

1914 թ. ունեցել է 513[513], 1976-ին՝ 1780 բնակիչ[514]:

## ԱՐԱԲԱՉԻ

Գտնվում է շրջկենտրոնից 21 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1360-1420 մ բարձրության վրա:

Արաբաչին գոյացել է ԺԹ դարավերջին՝ 1770-ական թվականներից հայաթափ գյուղատեղիում:

1914 թ. ունեցել է 189[515], իսկ 1976-ին՝ 509 այրում-թուրք բնակիչ[516]:

---

506. “Кавказский календарь на 1910 г.”, с. 189.
507. “Кавказский календарь на 1915 г.”, с. 92.
508. Գետն իր վերին հոսանքի շրջանում ավելի հայտնի էր Մրեջուր անվամբ:
509. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11: Զուլղադարովին պատկանող կալվածքի սահմանների մասին նշվել է. «Խաչեալի գլխից նայողը հանդիպակաց ձորերի, լեռների և ակնապարար հորիզոնների տեսքով հիանում էր. առջևդ երևում են Թիլքըլու Քեարան գագաթները Հայվալուի ձորով, Ղալաբոյինը իրա տակի Ահմադի Բանդ ձորով, Ելլուդաղը, Իսախանը, իրանց մոտի Աղդարա, Կուճուր Շամլուղ, Մեծ Շամլուղ ձորերով, ամենից վերև երևում է Եանըղ Փայա գագաթը: Սրանք ամենը գըտնվում են Զագամ գետի ձախ ափում ձգվող շղթայի վրա, որոնց մասին ասելիք կունենամ այդ ձորով իջնելիս: Աղ-դարաի դեմը, Զակամ գետի աջ ափին շինած է Մըկըրտչի վանքը՝ Վալիջան սարի փեշում: Չոբան-Սղնախի հարակից Ղարանլըխի ձորում, թուրքերով վերաբնակված շենում գտնվում է վանք, որ և ասվում է Քիլիսա դարասի: Այս անվանած բոլոր ձորերն ու լեռները, ջրերը, շէները պատկանում են Զուլղադարովին...» (Նույն տեղում, թ. 10-11):
510. Նույն տեղում, թ. 17:
511. «ԱՍՀ», հ. 1, էջ 97:
512. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2634, թ. 1:
513. “Кавказский календарь на 1915 г.”, с. 91.
514. «ԱՍՀ», հ. 1, էջ 392:
515. “Кавказский календарь на 1915 г.”, с. 89.
516. «ԱՍՀ», հ. 1, էջ 378:

Գյուղից արևմուտք պահպանվել է միանավ, քառածածկ հորինվածքով կիսավեր եկեղեցի՝ կառուցված անմշակ քարով, կրաշաղախով:

## ԱՐԻՂՌԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևմուտք, Զակամ գետի աջակողմյան արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1400-1520 մ բարձրության վրա:

Արիղռանը գոյացել է ԺԹ դարավերջին՝ մինչև 1770-ական թվականները հայաբնակ գյուղատեղիում:



*ԱՐԻՂՌԱՆ. Զակամ գետի վերին հոսանքի շրջանը գյուղի մոտ (լուս.՝ Ա. Ղուլյանի)*

1908 թ. ունեցել է 168[517], 1914-ին՝ 230[518], 1976-ին՝ 1861 այրում-թուրք բնակիչ[519]:

## ԱՐԻՍՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ Շամքոր գետի ձախ վտակի ձախակողմյան հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1420-1500 մ բարձրության վրա:

Այրում-թուրքերով բնակեցված գյուղը գոյացել է Ի դարասկզբին՝ մինչև 1770-ական թվականները հայաբնակ գյուղատեղիի տեղում:



*ԱՐԻՍՈՒ. տեսքը՝ Փառիսոսի բերդից*

## ԲԵՅԴԵՄԻՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 32 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1600-1680 մ բարձրության վրա, արևմտահայաց ձորալանջին:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԳԵՏԱԲԵԿ (ԳԵՏԱԲԱԿ)

**Տեղադրություն.** գտնվում է Գանձակից 48 կմ, Շամխորից՝ 35 կմ հարավ-արևմուտք («ի հարթավայր տեղւոջ, 'ի գլուխ լայնանիստ ձորոյն Չարեքայ»)[520], ծովի մակերևույթից 1380-1500 մ բարձրության վրա:

Համանուն շրջանի կենտրոնն է, 1935 թ.՝ քաղաքատիպ ավան[521]: Իր մեջ միավորում է երբեմնի հայաբնակ Հին Գետաբակ (ավանի արևմտյան կողմում) և Հայի Գետաբակ (նաև՝ Ղազախ, Ղազախաշեն, Ղազախլի ավանի հյուսիսային կողմում) գյուղերը:

**Անվան ծագումը.** մի ենթադրության համաձայն՝ Գետաբեկն իր (հին ու նախնական անվանաձևը՝ Գետաբակ) անունը ստացել է Շամքոր և Փառիսու գետերի միախառնման տեղից. «Ղալաքենդի միջով անցնում է Շամքոր գետի մի վտակը. իսկ միւսը լերան միւս կողմից հոսելով ներքևում միանում է սորա հետ. այս պատճառով էլ ուրեմն հաւանական է, որ ծագած լինի Գետաբակ անունն. ըստ որում գետի վտակներն այս և այն կողմից գալով բակ են կազմում իրանց մէջ այն տարածութիւնը...»[522]:

**Պատմություն.** ավանի պատմությունը գալիս է հազարամյակների խորքից: Այդ են վկայում ԺԹ դարում հնագետներ Վ. Բելքի և Ա. Իվանովսկու հայտնաբերած դամբարանները, որոնք թվագրվում են բրոնզի և վաղ երկաթի դարերով:

Հայ մատենագրության մեջ տեղանունն առաջին անգամ հանդիպում է Է դարի դեպքերի առնչությամբ՝ իբրև բերդանուն: Հայտնի է, որ քաղկեդոնականությանը հարած Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցու փակակալ Հովհան Մայրավանեցի վարդապետը, Եզր Ա. Փառաժնակերտցի կաթողիկոսից (630-641 թթ.) հալածվելով, նախ հանգրվան է գտնում Սոլակի վանքում, ապա գնում Գարդմանաց Գետաբակ բերդի կողմերը. «Եւ երթեալ Յովհաննու ընտրեաց իւր տեղի լռութեան ի կողմանս Գետաբակս բերդոյ, և անդ դադարեալ՝ հանապազ ընդ աստուծոյ խօսելով»[523]:

Իմաստասեր այրը Գետաբակի առանձնության մեջ «գրել է երեք աշխատություն, որոնց վրա, սակայն, չի վերնագրել իր անունը՝ վախենալով թե ժողովուրդը չընդունեներ. մեկը անվանեց «Խրատ վա-

517. “Кавказский календарь на 1910 г.”, с. 188.

518. “Кавказский календарь на 1915 г.”, с. 91.

519. «ՍՍՀ», h. 1, էջ 392:

520. **Ջալալեանց Ս.**, Ճշվ. աշխ., մասն Բ, Տփխիս, 1858, էջ 360:

521. «ՍՍՀ», h. 6, Բաքու, 1982, էջ 76:

522. «Արձագանք», 1888, N 7, էջ 86:

523. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 55:

րուց», մյուսը՝ «Համատարմատար» և երրորդը՝ «Նոյեմակ»[524]:

Գետաբակը՝ իբրև բերդ, հիշվում է ԺԳ դարի դեպքերի առնչությամբ, երբ հայ-վրացական զորքերը՝ Զաքարե և Իվանե Զաքարյանների գլխավորությամբ, սելջուկ-թուրքերից ազատագրելով Հյուսիսային Հայաստանի գավառները, 1206 թ. ազատագրել են նաև Գետաբակը. «...և 'ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս՝ թագաւորին. և ապա զԳետաբակս և զՉարեքն...»[525]:

Մի քանի տասնամյակ անց բերդը նվաճում են Այսրկովկաս ներխուժած մոնղոլ-թաթարները. Գետաբակը բաժին է ընկնում Չարմաղան Ղատաղան-նոյին զորավարին. «...բաժանեն զանուանի տեղիս գաւառաց, և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն՝ զորս Նոյինս կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ դղեակս գաւառացն՝ վաղվաղակի մատնեալ լինէին 'ի ձեռս նոցա... դատաղա նոյինն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու»[526]: Նույն դեպքերի առնչությամբ հայտնի է նաև, որ մոնղոլները «...հարձակեցան ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանութեամբն Վահրամայ... ի Գարդման, և յայլ կողմանս, ի Չարեքն և ի Գետաբակս այլ ոմն գլխաւոր չոգաւ՝ որում անուն էր Ղատաղան-նուին»[527]:

Այնուհետև աղբյուրներում Գետաբակը հիշատակվում է իբրև գրչության կենտրոն: Տեղի Սբ. Աստվածածին եկեղեցում 1659 թ. Հովհաննես գրչի ընդօրինակած ձեռագիր «Հայսմավուրքի» հիշատակարանում գրչության վայրի մասին նշվել է. «...ի յերկիրս Շամքոր, ի գեօղս Գատապագ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և սբ. հէրձանիս վախմ է յեկեղեցոյս, ձեռամբ յոգնամեղ և բազմավէր, հէզ Յովաննիսի, ի թուաբերութեանն յաբեթականս տոհմի ՌՃ և Ը (1659)-ի. ի հայրապետութեան տեառն Պետրոս կաթողիկոսի տանս Աղուանից սրբոյ աթոռոյն Գանձասարայ վերադիտողի»[528]: Պետրոս կաթողիկոսի մահից հետո սկսված աթոռակալական պայքարին մասնակից են դարձել նաև գետաբակցիները: 1691 թ. հասարակական մյուս խավերի ներկայացուցիչների հետ, ի պաշտպանություն Երեմիա կաթողիկոսի, «Դաշնադրության թուղթն» ստորագրել են Գետաբակից Դավիթ եպիսկոպոսը, Ազարիա վարդապետը, Թամրազը և Խաչատուրը.

«Ինձ Դաւիթ եպիս(կո)պ(ո)սի Կետապակու դապուլ է:

Ես Ազարիա վ(ա)րդ(ա)պ(ե)տ Գ(ե)տ(ա)բ(ա)կա վ(ա)նից կնք(ե)ցի:

Ես Գետաբակցի Գրիգորի որդի Թամրազա դ(ա)պ(ո)ւլ արի:

Ես Գ(ե)տաբ(ա)կցի Խաչատուրս դապուլ արի»[529]:

1702 թ. պարսից Հուսեյն Ա շահը Գետաբակ գյուղն իր բնակչությամբ, մշակովի հողերով ու արոտավայրերով ինչ-ինչ ծառայությունների համար նվիրել է հայազգի Հովհաննես բեկին և կարգադրել Գանձակի կառավարչին «ո՛չ գրչով, ո՛չ էլ գործով» ոտնձգություն չկատարել բեկի կամ նորընծա բնակավայրի հանդեպ, իսկ գյուղացիներին շահը պարտավորեցրել է Հովհաննեսին համարել իրենց տեր, չխախտել նրա խոսքն ու որոշումները[530]:

Մինչև 1770-ական թվականները հայաթափ լինելը բնակավայրի մասին գրավոր աղբյուրներում հիշատակություններ չենք գտնում:

**Գետաբակի վերաբնակեցումը.** 1861 թ.[531] Ղազախի գավառի Կոթ, Ոսկեպար և Ղալաչա գյուղերից փոխադրված շուրջ երկու տասնյակ հայ ընտանիքներ[532], հաստատվելով հայաթափ գյուղատեղիում, վերստին շենացնում են այն: Այնուհետև նորաստեղծ գյուղը, բացի Հայի կամ Նոր Գետաբեկ (Գետաբակ) կոչվելուց, ավելի հաճախ անվանվել է Ղազախ-Գետաբեկ կամ պարզապես Ղազախ (Ղազախլի):

**Բնակչությունը.** Գետաբակի հայ բնակչության թվի մասին վիճակագրական տվյալներն առկա են վերաբնակեցումից ի վեր:

Աղյուսակից հստակ երևում է, որ 1901/1902 թվականներին Գետաբակի հայերի բնակչության թվաքանակը կտրուկ նվազել է, որը, անշուշտ, արդյունք էր բնակչության մի մասի արտագաղթի: Հարկ է նշել, որ վայրը հայտնի էր իր պղնձի հանքերով, բայց արդեն ԺԹ դարավերջին հանքանյութի սպառման հետևանքով շատ հանքավայրերում աշխատանքները դադարեցվել էին, հայ բնակիչներն

524. «**Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական», Ս.Պետերբուրգ, 1885, էջ 87: **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, էջ 801, 811-813:

525. **Վարդան վարդապետ**, էջ 138:

526. Նույն տեղում, էջ 146: Տես նաև՝ **Ինճիճեան Ղ.**, Ստորագրութիւն, Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 339-340:

527. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 242-243:

528. «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Գ (այսուհետև՝ «ԺԷԳ»), կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984, էջ 876: Ձեռագիրը պահվում է Մատենադարանում՝ 4559 թվահամարի տակ:

529. «Արարատ», 1900, էջ 320:

530. ”Тбилисская коллекция персидских фирманов”, т. II, составители: **Тодуа М. А.** и **Шамс И. К.**, Тбилиси, 1989, с. 34-35.

531. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 889, թ. 1: Ի դեպ, 1912 թ. վավերագրում նշված է, թե գյուղը հիմնադրվել է 51 տարի առաջ, այսինքն՝ 1861 թ.: Հարկ է նշել, որ Մ. Բարխուտարյանցը գյուղի հիմնադրման տարեթիվ է համարել 1863 թ.՝ ավելացնելով, որ. «նախ բնակութիւն հաստատած [են] Հին-Գետաբակում, ապա տէրութեան հրամանաւ փոխադրուած Նոր-Գետաբակս» («Հին Գետաբակի արևելեան կողմում սեռի ետևի արևելահայեաց լանջի վերայ») (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղն իր հայ բնակչությամբ վիճակագրական աղբյուրներում հանդիպում է արդեն 1861 թ., միանգամայն սխալ է բնակավայրը հիմնադրված համարել 1863 թ.:

532. «Նոր-Դար», 1889, N 174, էջ 3:

էլ, առավելապես հանքագործներ լինելով, վերածվել գործազուրկների ու սկսել էին դիմումներ հղել կառավարությանը՝ այլ վայր փոխադրվելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Վերաբնակվելու համար գետաբակցիները հատկապես աչքի տակ ունեին իրենց բնակավայրից 3 կմ հեռու՝ Չարեք վանքի կալվածքի սահմաններում գտնվող Մոկոշանոց հին գյուղատեղին[533]:

Հարկ է նշել նաև, որ որոշ տարիների համար (1874, 1914 թվականներ) ներկայացված փոքր-ինչ ուռճացված տվյալները կառավարության իրականացրած մարդահամարի արդյունք են, ուստի դրանցում արտացոլված է Գետաբակի ողջ բնակչությունը:

Ստորև ներկայացնում ենք 1861-1914 թվականների ընթացքում Գետաբակի բնակչության թվաքանակի կրած փոփոխությունները.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1861[534] | 18 | | | |
| 1866[535] | 18 | 96 | 58 | 154 |
| 1870[536] | | 106 | 64 | 170 |
| 1872[537] | | 147 | 109 | 256 |
| 1873[538] | | | | 197 |
| 1874[539] | | | | 653 |
| 1875[540] | | | | 208 |
| 1876[541] | | | | 225 |
| 1877[542] | | 135 | 101 | 236 |
| 1878[543] | 20-25 | 137 | 99 | 236 |
| 1881[544] | | 148 | 107 | 255 |
| 1882[545] | | 151 | 110 | 261 |
| 1883[546] | | 147 | 105 | 252 |
| 1885[547] | 23 | 150 | 125 | 275 |
| 1886[548] | 44 | 178 | 149 | 327 |
| 1887[549] | | 172 | 150 | 322 |
| 1888[550] | | 183 | 159 | 342 |
| 1889[551] | 23 | 188 | 169 | 357 |
| 1890[552] | 33 | 197 | 184 | 381 |
| 1891[553] | | 215 | 202 | 417 |
| 1892[554] | | 230 | 214 | 444 |
| 1893[555] | 30 | 243 | 225 | 468 |
| 1894[556] | | 262 | 252 | 514 |
| 1897[557] | | 309 | 297 | 606 |
| 1898[558] | | 325 | 315 | 640 |
| 1899[559] | 33 | 329 | 318 | 647 |
| 1900[560] | | 337 | 339 | 676 |
| 1901[561] | | 359 | 347 | 706 |
| 1902[562] | | 248 | 228 | 476 |
| 1905[563] | | 250 | 230 | 480 |
| 1906[564] | | 165 | 163 | 328 |
| 1907[565] | | | | 327 |
| 1908[566] | 35 | 300 | 250 | 550 |
| 1909[567] | | 265 | 241 | 505 |
| 1910[568] | | 70 | 60 | 130 |
| 1912[569] | 74 | 280 | 243 | 523 |
| 1914[570] | | | | 669 |

Գետաբակը աչքի է ընկել աղտոտված ու բնակչության առողջության համար միանգամայն վտանգավոր օդով: Ահա թե ինչ է գրել 1890 թ. գյուղ այցելած ականատեսը. «Դեռ հեռու էր հանքը, որ ծուխը մլաց, հետզհետե մքլեց ու գեղի մեջ մտնելով գրեթե աղվես ամուլ կերանք: Վա՜յ տեղում ապրողների հալին, այդ ծուխ ու մուխի ու վատ ջրի հետ է կլինի, որ բնակիչները հիվանդոտ թվացին ինձ բաղարավորները թուրքեր էին, իսկ աչքի ընկնող անձինք և խանութպանները հայեր էին, որոնցից 2 հոգի «Նոր-Դար» լրագիր էին ստանում»[571]:

**Պղնձահանք.** Գետաբակի տարածքը, որ, ինչպես ասվեց, հարուստ է եղել պղնձի հանքերով, «մեծապես շահագործվել» է՝ սկսած ԺԹ դարից: Պղնձահանքի շահագործման սկիզբն ընդունված է

533. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 889, թ. 1: 1912 թ. այս փաստաթղթից պարզվում է նաև, որ վերջին 13 տարում գյուղի հողերն անբերրի էին դարձել: Այդ մասին ԺԹ դարավերջին նշվել է. «Գիւղը միշտ պատած է պղնձահանքի ծխով, որ արտերին մեծ վնասներ է պատճառում, որովհետև այրում է մօտիկ տեղերի հասկերը և խանգարում փոքր ինչ հեռու տեղերինը՝ կանոնաւոր աճման: Ուստի և ժողովուրդը, որ այլ ևս այնքան գործ չի կարողանում գտնել պղնձահանքում, խնդիր է մատուցել կառավարութեան՝ իրենց մի ուրիշ տեղ տեղափոխելու» (**Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 328):
534. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 148-149:
535. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
536. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
537. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
538. Նույն տեղում, գ. 3864, թ. 40-41:
539. "Кавказский календарь на 1886 г.", с. 125.
540. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 44-45:
541. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
542. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
543. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23: «Մշակ», 1878, N 145, էջ 2:
544. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
545. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
546. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
547. Նույն տեղում, գ. 3877, թ. 30:
548. "Свод...", с. 82-83, 88-89 (Գետաբակում թուրքերը կազմում էին 124 տուն՝ 878 շունչ): Ի դեպ, նույն թվականին մեկ այլ աղբյուր վկայակոչել է միայն 23 տուն («Արձագանք», 1888, N 7, էջ 86):
549. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
550. Նույն տեղում, գ. 3882, թ. 132:
551. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3884, 227-228: «Նոր-Դար», 1889, N 201, էջ 2:
552. «Նոր-Դար», 1890, N 148, էջ 3: ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 151:
553. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 150:
554. Նույն տեղում, գ. 3891, թ. 122:
555. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79: «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3:
556. Նույն տեղում, գ. 3896, թ. 175-176:
557. Նույն տեղում, գ. 3899, թ. 148-149:
558. Նույն տեղում, գ. 3897, թ. 170:
559. ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 649, թ. 1: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 127-128:
560. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 93-94:
561. Նույն տեղում, գ. 3906, թ. 99-100:
562. Նույն տեղում, գ. 3907, թ. 24-25:
563. Նույն տեղում, գ. 3912, թ. 267-268:
564. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
565. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
566. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12:
567. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 118:
568. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, 59-60:
569. Նույն տեղում, գ. 3919, թ. 63-64: Նաև՝ ֆ. 56, ց. 4, գ. 649, թ. 4:
570. "Кавказский календарь на 1915 г.", с. 131.
571. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 20-21:



*ԳԵՏԱԲԵԿ. ընդհանուր տեսքը Ի դարի սկզբին: Արտատպված՝ Լեհման Հաուպտի «Հայաստանը նախկինում և այժմ» գրքից (C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910)*

համարել 1849 թ., երբ այն սկսել էին արդյունահանել ազգությամբ հույն Մեխով եղբայրները: Հունական ընկերությունն արդյունահանում և մշակում էր տարեկան մինչև 10.000 փութ (1 փութ=16,380 կգ, այսինքն՝ մոտ 163 800 կգ.) պղնձի հանքաքար: Սակայն գործընկերների միջև ծագած տարաձայնությունների պատճառով հետագայում արտադրությունը կանգնեցվում է, և ընկերությունը, որ բավականաչափ միջոցներ ուներ գործընթացը շարունակելու համար, իր իրավունքները 1864 թ. վաճառում է Կարլ, Վալտեր և Վերներ Սիմենս եղբայրներին[572]:

Վկայություն կա նաև այն մասին, որ գերմանացիներից առաջ հանքի շահագործողները հայեր էին, և նրանք հանքավայրը վաճառել էին Սիմենս եղբայրներին. «Գետաբեկու պղնձի գործարանը 25 տարի առաջ պատկանում էր մի քանի գանձակեցի հայերի, որոնք շահագործում էին անդրջրիեղեղեան սիստէմով, պապական զոյգ ահագին փուքսերով և այդպիսի անկազմակերպեալ հոգևարք դրութեամբ չնչին տոկոս են ստանալիս լինում...»[573]:

«Սիմենս» ընկերության գործունեության ծավալների մասին ուշագրավ է ժամանակակցի հետևյալ վկայությունը. «Գանձակի նահանգում Գետաբէկ անուանուած տեղում գտնւում է գերմանացի «Սիմենս և ընկ.» մեծ պղնձահանքը իր բազմաթիւ կատարելագործուած հալոցներով և վառարաններով, որոնք գործում են ածուխի, փայտի և նաւթի միջոցով: Հանքի բոլոր ծառայողների և բանւորների համար շինութիւնները ընկերութեան սեփականութիւնն են: Ընկերութիւնը ունի ծառայողների թւում ամեն ճիւղի պատկանող մասնագէտներ. բժիշկ, ճարտարապետ և այլն և այլն. ունի ուսումնարան, դեղատուն, հեռագրատուն, երկաթագործարան, հիւսնարան և երկաթուղի թէ գործարանի մէջ և թէ մինչ Ղալաքեանդ և Բայրամ-Ալի, որոնցից առաջինում գտնւում է գործարանի բաժանմունքը, իսկ երկրորդում լինում են ածուխի և փայտի պահեստները: Հում կամ սև նաւթը Բագուից ստացւում է Դալլեար անունով երկաթուղու կայարանում, որին մօտ ընկերութիւնը ունի նաւթի ամբար և առանձին գործարան, այնտեղից նաւթը խողովակներով տեղափոխելու համար մինչև 15 վերստ հեռաւորութեամբ Չարդախլու հայաբնակ գիւղը, իսկ Չարդախլուից մինչև հանքը սայլերով են բերում: Այդ գծի վրայ նոյնպէս կայ հեռագիր: Ինչպէս լսեցինք հանքում ծառայողներին և բանւորներին վարձատրութեան գումարը հասնում է 25-30 հազար րուբլու, բացի զանազան ծախսերի, որ մեծ քանակութեամբ է լինում»[574]: Հայտնի է, որ 1864-1914 թվա-

---

572. **Карапетян С.**, Дашкесанский горно-рудный регион единая экономическая основа торриториональной целостности Арцаха-Гардмана, «Գարդմանք», 1996, N 3, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 12:

573. «Նոր-Դար», 1889, N 174, էջ 3: Հարկ է նշել, որ ընկերության հետաքրքրությունը այս նշանավոր հանքավայրի նկատմամբ պայմանավորված է եղել Գերմանիայում մեքենաշինության ու ռազմական արդյունաբերության մեջ օգտագործվող պղնձի անընդհատ աճող պահանջարկով: Ընկերությունը Գետաբեկում կառուցել էր պղնձաձուլական գործարան (գործել է 1865-1914 թթ.), Ջակամ և Շամքոր գետերի հովիտներում ձեռք էր բերել անտառներ, 1883 թ. Ղալաքենդ գյուղում (Փառիսոս բերդի մոտ) կառուցել էր պղնձաձուլական նոր գործարան (փակվել է 1906 թ.), անցկացրել էր նեղանիվ երկաթուղի, որով Գետաբակը կապվել էր Ղալաքենդ ու Բայրամ-Ալի բնակավայրերի հետ: 1894 թ. դեկտեմբերին գործարկվել էր 45 կմ երկարությամբ և զույգ պոմպակայաններով նավթամուղ՝ Դալյարի և Գետաբակի միջև:

574. Հայտնի է, որ. «Գետաբէկի գործարաններն ունեն նոյնպէս 31 վերստ երկարութեամբ մի սեփական երկաթուղի, որը միացնում է Գետաբակի և Ղալաքենդի պղնձագործարանները միմեանց հետ և Շամխորի անտառի հետ: Այդ երկաթուղին շինուած է 1883 թւից՝ գործարաններին փայտ և ածուխ մատակարարելու նպատակով: Նա անցնում է վերին աստիճանի լեռնուտ տեղերից. ահա մի ապացոյց, որ լեռներն ու երկա-

կաններին գործարաններում արդյունահանել են ավելի քան 1 մլն 700 հազար տոննա պղնձի հանքաքար, որից հալել են շուրջ 58000 տոննա պղինձ[575]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին պղնձի պաշարները Գետաբակում սկսեցին սպառվել: Դա ընկերությանը ստիպեց անցնել ծծմբի հանքաքարի արդյունահանմանը, և տարեկան 100.000 փութ հումք վաճառել Բաքվի «Նոբել» նավթարնկերությանը[576]:

Հանքերի կառավարիչներից հայտնի են պպ. Բեռնուլին (մինչև 1875 թ.)[577], Վիլհելմ Ռիչարդովիչ Բոլտոն (1875-1900 թթ.)[578], Գուստավ Քելլե (1900 թ-ից)[579]:

Ադրբեջանի խորհրդայնացման առաջին տարիներին Գետաբակի պղնձահանքը շարունակում էր մնալ ծծմբաքարի արդյունահանման խոշոր օջախներից մեկն Այսրկովկասում[580], այնուհետև մտավ Դաշկեսանի լեռնահանքային արդյունաբերական շրջանի մեջ, որը կազմվել էր Շահումյանի, Խանլարի, Դաշկեսանի և Գետաբեկի վարչական շրջանների հիմքի վրա[581]: Արտադրության ընդլայնման պատճառով Հայի (Նոր) Գետաբակը՝ իբրև ինքնուրույն բնակավայր, դադարեց գոյություն ունենալուց և ավելի վաղ ավերված Հին Գետաբակի տարածքի հետ մտավ ներկայիս Գետաբակ շրջկենտրոնի շրջագծի մեջ:

**Դպրոց.** հայկական դպրոցը (եկեղեցականծխական) բացվել է 1894 թ. և գործել որպես միդասյա, արական: Ունեցել է մեկ ուսուցիչ և 30 աշակերտ[582]: Փակվել է 1896 թ. ցարական կառավարության հրամանով[583]:

Վերաբացման ստույգ տարեթիվն անհայտ է, սակայն 1909 թ. գործել է[584]:



***ԳԵՏԱԲԵԿ. բնակելի տուն գերմանական թաղամասում***

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** Հայի Գետաբակը մեկն էր Գանձակի գավառի հայաբնակ այն գյուղերից, որն ամբողջությամբ թալանվել, ավերվել ու հրկիզվել էր մերձակա գյուղերի թուրք խուժանի ձեռքով: Խժդժությունները սկսվում են 1905 թ. նոյեմբերի 17-ին, երբ Փարաքենդ գյուղի բնակիչները հրդեհում են գետաբակցի անտառապահ Աբբաս Հաջինի 60 սայլ խոտը՝ տեղի հայերի վրա հարձակվելու պատրվակ ստեղծելու համար: Մի քանի օր անց Ֆրեզնկա ռուսական գյուղի քահանան հայտնում է Սլավյանկայում գտնվող նորանշանակ պրիստավ Ալ. Շեպիլլոյին, որ թուրքերը պատրաստվում են հարձակվել Գետաբակի վրա: Նոյեմբերի 22-ին Սոգութլու, Միսկինլի և այլ գյուղերի թուրքերը շրջապատում են Ղազախ-Գետաբակն ու հանքերի շուկան. «...հայերի բոլոր խանութները փակուած էին, իսկ ժողովուրդը հաւաքուած հայոց եկեղեցու մօտ սարսափով սպասում էր թուրքերի յարձակման, իսկ վերջիններս մեծ խմբերով մօտ 500 հոգի կանգնած էին շուկայում»[585]:

Բազմամբոխ թուրք խուժանի առջև, սակայն, չի ընկրկում գյուղի երիտասարդությունը և դիրքեր զբաղեցնելով՝ դիմում է ինքնապաշտպանության. «Թէև փոքրաթիւ, բայց քաջ երիտասարդների մի խումբ դիրք բռնելով բազարի և գիւղի մէջտեղ ընկած գերեզմանատան քարերի մէջ՝ կարողացաւ մի

---

թուղիները կարող են հաշտվել միմեանց հետ..» («Մշակ», 1891, N 60, էջ 2): Հանքերում այլ ազգությունների ներկայացուցիչների հետ աշխատում են նաև հայ արհեստավորներ ու մշակներ, որոնք գտնվում էին նյութական ծանր դրության մեջ, հատկապես, երբ «հանքի նախկին կառավարիչ պ. Բեռնուլուն փոխարինել էր Վիլհելմ Րիչարդովիչ Բոլտոնը: Վերջինս սկսեց պակասեցնել հայ հանքագործների աշխատավարձն ու զանազան տուրքեր վերցնել: Հայերը, քանի որ խիստ քիչ հող ունեին և հանքի վարձատրութեամբ էին ապրում, ընկել էին նյութապես ծանր կացության մեջ» («Նոր-Դար», 1889, N 201, էջ 2): Սիմենսի պղնձահանքերի մասին տես նաև **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 279-281: «Արձագանք», 1888, N 7, էջ 86:

575. **Карапетян С.**, նշվ. հոդվ., «Գարդմանք», N 3, էջ 12: 1864-1917 թվականներին արդյունահանվել է շուրջ 100 միլիոն փութ պղնձի հանքաքար, որից ձուլվել է մոտ 3 միլիոն փութ պղինձ:
576. Նույն տեղում:
577. «Նոր-Դար», 1889, N 201, էջ 2:
578. «Մշակ», 1900, N 26, էջ 3:
579. Նույն տեղում:
580. **Апресов С.**, Перспективы медной промышленности в Кедабекском районе, ”Экономический Вестник Азербайджана”, Баку, 1926, N 10, с. 11.
581. **Карапетян С.**, նշվ. հոդվ., «Գարդմանք», 1996, N 2, օգոստոս-հոկտեմբեր, էջ 15:
582. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1,գ. 3896, թ. 34, 175-176:
583. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474:
584. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 482, թ. 1:

585. «Նոր-Դար», 1889, N 174, էջ 3:

ամբողջ օր պաշտպանել թէ մէկ թէ միւս տեղը. սակայն գնալով խուժանը աւելի եւ մեծանում էր, որին զուգընթաց դժւարին էր դառնում նաւ կռիւը: Գերեզմանատանը դիրք բռնած երիտասարդները, տեսնելով որ երկու տեղը միաժամանակ այլ եւ անհնար է պաշտպանել, անցան դէպի գիւղ, որից յետոյ ամբոխը խուժեց բազարի վրա մի վանդալական շահատակութեամբ»[586]: Ժամ առ ժամ ստվարացող ընչաքաղց խաժամուժին, ի վերջո, հաջողվում է կոտրել շրջապատման մեջ հայտնված և որևէ տեղից օգնություն չստացող հայերի պաշտպանությունն ու մտնել գյուղ: Ճիշտ է, բնակչության մի մասին հաջողվում է դուրս պրծնել գյուղից (ոտքով մի կերպ հասնում են Չարդախլու), բայց և շատերը զոհվում են գյուղում:

Պրիստավ Ալ. Ի. Շեպիլլոյի[587] տվյալներով տներում ողջակիզվում են շուրջ 50 հայեր՝ կանայք, տղամարդիկ, երեխաներ[588]: Թուրքերն ավերում ու կողոպտում են նաև հայոց Սբ. Գևորգ եկեղեցին[589]:

Ջարդից փրկված հայերը ճանապարհին էլ ենթարկվում են թուրքերի հարձակումներին: Սարսափելով թուրքերից՝ գետաբեկցի հայերի նկատմամբ տմարդի են վարվում Սլավյանկա գյուղի բնակիչները, որոնք հրաժարվում են ոտքով դեպի Չարդախլու փախչող գյուղացիներին սայլեր տրամադրել[590]:

Գետաբակի ողբերգական իրադարձությունների կազմակերպիչներն ու ամենագործուն մասնակիցներն էին պրիստավի պաշտոնակատար Ալին ու Միսկինլիի տանուտեր Մահմեդը[591]:

Հարկ է նշել, որ Գետաբակում տեղի ունեցած ողբերգության մասին մի բավականաչափ մանրամասն տեղեկագիր էր պատրաստել գործարանատեր գերմանացի Ա. Օհրնին, որը հրատարակել է հնագետ Լեհման Հաուպտը և, չնայած այն հանգամանքին, որ այդ տեղեկագիրը աչքի է ընկնում եղելության որոշ դրվագների մեկնաբանությունների ու մանավանդ եզրահանգումների պարզամիտ դատողություններով (օրինակ՝ մարդակեր Ալիևը ներկայացված է իբրև մարդասեր ու խաղաղարար պաշտոնյա), այնուամենայնիվ, ներկայանում է իբրև կարևոր վավերագիր[592]:

586. **Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, 1907, էջ 349-350:

587. Ալ. Շեպիլլոն հեղինակել է երկու կարևոր փաստաթուղթ. մեկը 1905 թ. դեկտեմբերի 7-ին Գանձակի գեներալ-նահանգապետին ուղղված զեկուցագիրն է, 2-րդը “Тифлисский Листок” թերթի խմբագրությանը ուղարկված նամակը (Զեկուցագիրը տպագրվել է «Մշակ» թերթի 1906 թ. հունվարի 22-ի համարում, իսկ նամակը՝ ”Тифлисский Листок”-ի 1906 թ. մայիսի 28-ի համարում (թարգմանաբար արտատպվել է՝ «Մշակի» 1906 թ. մայիսի 30-ի համարում): Երկու փաստաթղթերն էլ վերահրատարակել է Քաջբերունին 1910 թ. (տե՛ս նրա՝ «Բաղա գյուղի աւերումը» հոդվածաշարը. «Արարատ», 1910, յունիս, էջ 528-532, յուլիս, էջ 651-654): Ի դեպ, Ալ. Շեպիլլոն պրիստավ էր նշանակվել ջարդի նախօրեին՝ նոյեմբերի 14-ին, և երեք օր անց արդեն Գետաբակում էր: Սակայն պրիստավի պաշտոնակատար Ալիևի գործադրած խարդավանքների պատճառով չի կարողանում անցնել անմիջական պարտականությունների կատարմանը և, թեև փորձում է վերահսկել իրավիճակը, սակայն ի վիճակի չի լինում ազդել դեպքերի հետագա զարգացման վրա: Գետաբակի կողոպուտի ու ավերման մասին է նաև պղնձաձուլական գործարանի կառավարիչ, հանքային ինժեներ ու դեպքերի ականատես Ադոլֆ Էրնի վկայությունը («Մշակ», 1906, N 59, փետրվարի 3, էջ 2: Նաև՝ N 69, մարտի 17, էջ 3):

588. «Արարատ», 1910, յունիս, էջ 531:

589. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1,գ. 3764, թ. 278:

590. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 354:

591. «Արարատ», 1910, յունիս, էջ 531:

592. Հարկ է նշել, որ ցայժմ հիշյալ տեղեկագիրը ուշադրության չի արժանացել, ուստի ստորև առաջին անգամ այն ներկայացնում ենք Աշ. Հայրունու թարգմանությամբ. «Մի օր պրն. ֆոն Բոլտոնն ինձ տարավ Ալայար-Բեկ Ցուլգադարովի մոտ: Վերջինս հետագայում մեծ համբավի տեր դարձավ, որ նա վաստակել է թաթարների և հայերի միջև ծայր առած թշնամության արդյունքում 1906 թ-ին Գետաբեկում տեղի ունեցած անկարգությունները կասեցնելու՝ իր ցավոք անարդյունք ջանքերի շնորհիվ: Այդ մասին ներքոբերյալ տեղեկությունները ես քաղել եմ այն ժամանակ գործարանի ղեկավարումն իրականացնող պարոն Ա. Օհրնի՝ Գետաբեկից ուղարկված մի տեղեկագրից, որը մի կարևոր փաստաթուղթ է այդ սարսափելի շարժման պատմության վերաբերյալ: Անհրաժեշտ է նախապես հայտնել, որ այնտեղ բազմիցս հիշատակված ոստիկանական պրիստավ Մուսեիբ Ալիևը մի շատ գործուն և աներկյուղ անձնավորություն էր, որը, ծնունդով լինելով թաթար, իր խստությամբ և անկողմնակալությամբ կարճ ժամանակում ձեռք է բերել ողջ բնակչության՝ ինչպես թաթարների, այնպես էլ հայերի և ռուսների վստահությունը: Նա հենց այն ժամանակ, երբ ճգնաժամը սկսվեց, պետք է մեկ այլ պաշտոն ստանձներ և իր տեղը զիջեր մի չափազանց անգործունյա, տարածքին և թաթարերեն լեզվին անտեղյակ անձնավորության, սակայն բարեբախտաբար հաջողվել է նրան պահել Գետաբեկում: «1906 թ. նոյեմբերի 18-ին (հին տոմարով) Ելիզավետպոլում կատաղի պայքար էր սկսվել թաթարների և հայերի միջև: Դրա հետևանքով այստեղ մարդիկ ընկճված տրամադրության մեջ էին. չէ՞ որ պարզ էր, որ միայն մի կայծ էր հարկավոր նաև այս շրջանում, որտեղ հայերն ու թաթարները խառն ապրում էին, կույր ազգային ֆանատիզմի բոցը բորբոքելու համար: Ելիզավետպոլում հայ-թաթարական կոտորածների սկսման անմիջական դրդապատճառն, ինչպես տեղեկացվում է մի վստահելի աղբյուրից, այն հանգամանքն է, որ նոյեմբերի 18-ի առավոտյան քաղաքում լուր է տարածվել (որը նույնիսկ այսօր էլ դեռ չի հաստատվել), թե քաղաքի մերձակայքում, ինչպես և մի կամրջի տակ բազմաթիվ սպանված թաթարների դիակներ են գտնվել: Այնուհետև իսկույնեթ մի թաթարական ամբոխ ներխուժեց հայապատկան խանութները և սկսեց հայ առևտրականներին ռևոլվերներով ու դաշույններով սպանել: Թաթարների խանութները մահմեդական հանգստյան օրվա կապակցությամբ փակ էին: Դրանից հետո խանութները հրդեհվեցին, և փոխադարձ սպանություններն ու թալանը շարունակ ավելի մեծ չափեր ընդունեցին: Ընդհանուր առմամբ փոքր թվաքանակով՝ առկա զինվորականությունը հրետանու հետ միասին ցավոք անմիջապես եռանդուն կերպով չմիջամտեց, ինչը փաստորեն նպաստեց դրսից թաթարների մեծ զանգվածների ներհոսքին: Ավերումներն այսպիսով ժամանակին չկասեցվեցին, և քաղաքի մեծագույն մասը մի քանի օրում վերածվեց փլատակների: Այդ իրադարձությունների լուրը կայծակի արագությամբ շարունակեց տարածվել: Արդեն նոյեմբերի 18-ի երեկոյան Դալյար բնակավայրում հայերին պատկանող կրպակները շրջակայքում բնակվող քրդերի կողմից թալանվեցին: Հաջորդ երեկո նույն ճակատագիրն ունեցան Աննեֆելդ գաղութի հայապատկան կրպակները: Դրանց տերերը փախուստի դիմեցին կամ թաքնվեցին, ինչպես վարվեցին նաև գերմանական գաղութարարների մոտ

Որոշ ժամանակ անց, երբ ղազախ-գետաբակցի (նաև՝ բաղեցի ու չարդախլվեցի) հայերը տեսնում են, որ կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում ջարդերի կազմակերպիչներին և մասնակից-

---

ծառայող հայերը: Թալանող թաթարներն այնպիսի գերակշիռ քանակություն էին կազմում և այնքան սպառնալից էին պահում իրենց, որ ոչ այնտեղ գտնվող ոստիկանական պրիստավն իր ոստիկաններով և ոչ էլ գաղութարարներն իրենք կարողացան միջամտել... Խաղաղության բանակցություններից հետո, որոնք կիրակի օրը՝ նոյեմբերի 20-ին Ալայար-Բեկ Յուլգաղարովի նախագահությամբ տեղի էին ունեցել թաթարական և հայկական պատվիրակների միջև և մնացել էին անարդյունք, հաջորդ օրը դրսից եկած աշխատողների և ծառայողների մեծ մասը լքեցին Գետաբեկը իրենց գյուղերը մեկնելու համար, իսկ ևս մեկ օր անց, կեսօրից հետո հեռացան նաև դրսից եկած վերջին հայերը: Դրան հակառակ, Գետաբեկում դեռ մնում էին մի շարք հայ ընտանիքներ, որոնք ապրում էին գործարանում իրենց կայուն աշխատանքով, և որոնց տներն ու ամբողջ ունեցվածքը գտնվում էին այնտեղ: Կեսօրից հետո ժամը 5.10-ին (նոյ. 22.), երբ սկսում էր մթնել, և գրասենյակում աշխատանքը դեռ շարունակվում էր, հանկարծ շուկայից և հայկական եկեղեցու բակից գործարանի ուղղությամբ կրակոցներ լսվեցին: Գրասենյակն արագ փակվեց: Պրիստավ Ալին և Սուլեյման բեկը կամենում էին գնալ շուկա, բայց ճանապարհի կեսից ետ դարձան, քանի որ կրակոցներն ուժգնանում էին, իսկ դրանց թիրախը կարծես թե նրանք էին: Կրակոցների սկսման դրդապատճառը շուկայից լսվող օգնության ճիչերն էին, որտեղ օտար թաթարները խլում էին մի հայի հրացանը: Հին հայկական եկեղեցու բակում թաքնված հայերը (նրանց թվում կային նաև շատ հումբիներ, այսինքն Թուրքիայից եկած հայկական կոմիտեի անդամներ, որոնք զինված էին նորաոճ հրացաններով) իսկույնևեթ սկսեցին կրակել շուկայի ուղղությամբ, որտեղից անընդմեջ պատասխանվում էր: Հուշարձանի մոտ հավաքված՝ գործարանի գիշերային հսկիչներն ու չափարները (պաշտպանող պահակախումբը)՝ թվով տասը մարդ, կարծելով, թե կրակոցներն ուղղված էին իրենց, ակնթարթորեն, առանց հրաման ստացած լինելու, ուժգին կրակ բացեցին հայկական եկեղեցու բակի ուղղությամբ: Երբ նրանք արդեն նվազագույնը երեսուն կրակոց էին արձակել, հավաքված պաշտոնյաներին մեծ դժվարությամբ հաջողվեց նրանց հանդարտեցնել: Այդ ընթացքում շուկայի վրա կրակոցներն անընդմեջ շարունակվում էին և գնդակներն անընդմեջ սուլում են տնօրինության շենքի և ծառայողների տների այգիների միջով՝ երբեմն-երբեմն հարվածելով շենքերի ծպեղագերաններին: Տներից դուրս գալը խիստ վտանգավոր էր: Դատական քննիչ Լիպսկին, որն այդ ժամանակ հյուրանոցը լքել էր և գնում էր դեպի շուկա, ճանապարհին գնդակահարվեց: Նրա դիակը հաջորդ առավոտ գտնվում էր մի ավերված կրպակի հետևում: Մինչ այս մինչ այն շուկայում հավաքվեցին մոտ 220 հեծյալ թաթարներ (ըստ տեղեկությունների, 180-ը Աիպլիից և 40-ը Հիլիհանլիից) և ետ մղեցին հայերին, որոնք իրենց տներից կրակում էին և ռումբեր էին նետում: Դրանց պայթյունները պարզորոշ զանազանվում էին հրազենային կրակից: Զայրույթն աճում է: Ժամը 7.30-ին շուկայի վրա ի հայտ է գալիս առաջին հրացոլքը: Այն սկզբում այրում է պարսիկ Ալափկերի կրպակը, որը հայերի կողմից կողոպտված և արդեն իսկ կրակի էր մատնված: Այնուհետև հենց իրենց՝ հայերի կողմից հրդեհվում է վաճառական Ավետիս Օհանեսովի կրպակը: Մեկը մյուսի ետևից նույն ճակատագիրն են ունենում նաև մյուս հայկական և մի քանի թաթարական կրպակներ: Սարսափի այդ գիշերը (22-23 նոյ.) շուկայից անընդմեջ լսվում էին հրազենների և ռումբերի ճայթյուններ, ինչպես նաև բարձրագոչ աղմուկ ու բացականչություններ: Թաթարները խուզարկեցին բնակարաններն ու գործարանի բանվորների կացարանները և սպանեցին բոլոր հայերին, որոնք չէին կարողացել փախչել: Այդ ժամանակ սպանված վաճառականների, արհեստավորների, արծաթագործների, պայտագործների, ատաղձագործների և նրանց ընտանիքների ան դամների թվում կային մարդիկ, որոնց ես Գետաբեկում լավ ճանաչում էի: Բոլոր դիերը, որոնց թիվը հասնում էր 35-ի, նետվում են մի մետաղաձուլարանի մեջ և այնտեղ կրակի մատնվում: Դրանց մնացորդները միայն շաբաթներ անց գտնվեցին և ամփոփվեցին հողում: Ծեր ժամագործ Ալեքսանդր Բելախյանցի դիակը՝ կտրված պարանոցով, գտնվեց հաջորդ առավոտյան դեպի ռուսական եկեղեցի տանող ճանապարհի վրա: Թաթարական կողմից պետք է ընկած լինեն մոտ 33 մարդ, որոնց դիերն իսկույն տեղափոխվում էին: Հաջորդ առավոտ միայն մի քրդի դիակն էր ընկած շուկայի կենտրոնում: Նոյեմբերի 23-ի այգաբացին խմբերով եկան շրջակա գյուղերի թաթարները և սկսեցին իրենց թալանը. սկզբում հայերի լքված բնակավայրերում, այնուհետև նաև գործարանի լքված բանվորական կացարաններում: Պարսիկ հանքագործները փախան Կարամուրադ, Գերգեր և Միսկինլի գյուղերը: Հույները և թուրքերը եկան մետաղաձուլարան և այստեղից տեղավորվեցին արտադրամասում: Հանքագործական աշխատանքները դեռ նախորդ երեկոյան դադարեցվեցին: Թալանող թաթարական հրոսակներից փախչելով՝ բովանցքի մոտ, հանքանյութի արտադրամասում ապրող վերահսկիչներն ու բանվորները մտան հանքախորշը, մինչդեռ նրանց բնակարանները կողոպտվեցին: Դինամիտի նկուղի հսկիչը՝ Ավետիս Պապինը, վաղ առավոտյան սպանվեց, որից հետո սկսվեց վերներյան հին բովանցքի մոտ գտնվող հայերի բնակարանների կողոպուտը: Այստեղ ապրող թաթարները և թուրքերը փախան, իսկ նրանց ունեցվածքը կողոպտվեց: Այդ տեղեկությունը ստանալով՝ պրիստավ Ալին մի քանի թիկնապահների հետ արշավեց դեպի հանքախորշը, հալածեց ավազակներին և հարևան Արոխդամ թաթարական գյուղի մարդկանցից 12 զինված պահակներ նշանակեց այնտեղ: Պրիստավ Ալին Միսկինլի և Կարամուրադ գյուղերի ամենածեր մարդկանց՝ Մամեդի և Ռահիմի գործուն մասնակցությամբ անխոնջ կերպով արգելում էր թալանն ու կողոպուտը և շատ կողոպտիչների գնդակահարում՝ միաժամանակ մշտապես վտանգի ենթարկելով իր կյանքը: Կոտորածի այդ երկրորդ օրը սուրհանդակներ ուղարկվեցին Ելիզավետպոլ զինվորական ուժերի աջակցությունը ստանալու համար: Նկատի առնելով ստեղծված անապահով իրավիճակը՝ կեսօրից հետո բոլոր պաշտոնյաներն իրենց ընտանիքների հետ տեղափոխվեցին տնօրինության շենքը և թիվ 2 տունը՝ իրենց բնակարանները թողնելով հսկիչների պաշտպանության ներքո: Գործարանում մնացած և պաշտոնյաների մոտ պաշտպանություն որոնող հայերը նույնպես տեղավորվեցին հիշատակված երկու շենքերում ու հարակից տներում: Նրանք չհետևեցին Ղազախլի գյուղը գնալու մեր ստիպողական պահանջին՝ կարծելով, թե մեզ մոտ նրանց ոչ ոք ձեռք չէր տա: Նոյեմբերի 24-ի առավոտյան բոլոր կողմերից հեծյալ թաթարների մեծ բազմություններ եկան Գետաբեկ և շրջապատեցին գործարանը: Գործարանի աշխատողների խուճապը մեծացավ, քանի որ ոչ ոք չգիտեր, թե թաթարներն ինչ են նախատեսել անել: Պրիստավն իր թիկնապահների հետ արշավեց հանքանյութի արտադրամասի հետնկողմը, որտեղ լեռան լանջին տեղի ունեցավ մի մեծ ժողով: Դրանից հետո թաթարները մեկնեցին Ղազախլի և սկսում են հետապնդել այդ գյուղի փախած բնակիչներին: Միաժամանակ այնտեղ սկսվեց թալանն ու կողոպուտը, որը շուտով ավելի անամոթ կերպով շարունակվեց նաև հանքախորշի վրա, Գետաբեկի շուկայում և բանվորական կացարաններում: Լքված բնակարաններից թալանված առարկաները սայլերով տարվում էին: Կողոպտիչները տանում էին նույնիսկ դռներն ու պատուհանները, որոնք մասամբ նույնիսկ կացնով էին հատվել: Պրիստավ Ալինին միայն ծայրահեղ ջանքերի և իր կյանքի վտանգման գնով հաջողվեց (այն բանից հետո, երբ նա նավթի պաշարների առևանգմամբ զբաղված գողերին անխնա գնդակահարել էր) կողոպուտը սահմանափակել և կողոպտիչներին գործարանից հեռու պահել: Շուկայում դեռ կանգուն մնացած հայա-

ներին պատժելու համար, որոշում են վրեժ լուծել գոնե առավել վայրագ թուրքերից և 1906 թ. հունվարի 1-ին պաշարում են ոճրագործ Սոգութլու գյուղը, որտեղ ըստ հայտնի տվյալների թուրքերը

---

պատկան տները կողոպուտից հետո մեկը մյուսի հետևից հրդեհվեցին և գետնին հավասարեցվեցին: Չնայած այդ ամենին՝ գործարանին պատկանող հյուրանոցն ինչպես կրակից, այնպես էլ կողոպուտից մնաց խնայված: Բանվորների մոտ հացի պակասը շարունակ ավելի զգալի էր դառնում, քանի որ հացի գործարանների մեծ մասը թալանված և փակված էր: Ծառայողների բնակարանների վառարաններում թխված հացը չէր բավականացնում, որի պատճառով Սլավյանկայում հաց պատվիրվեց: Մեր տներում տեղավորված հայերի դրությունը շարունակ ավելի և ավելի դժվարին էր դառնում, քանի որ թաթարները շարունակ ավելի ստիպողաբար էին պահանջում հանձնել նրանց: Չնայած նրանց ամենավճռական կերպով հայտարարվում էր, որ մեզ մոտ պաշտպանություն որոնող հայերն անձեռնմխելի էին, և որ մենք պարտավոր էինք նրանց համար մեր կյանքով երաշխավորել, թաթարները չէին կամենում դրանով գոհանալ և ի վերջո հայտարարեցին, որ իրենք այլևս չեն կարող մեր ապահովությունը երաշխավորել, քանի դեռ մենք «այդ գերիներին» մեզ մոտ էինք պահում: Նրանց դրությունը դառնում էր կրիտիկական, իսկ նրանցով պայմանավորված հոգսերը՝ շարունակ ավելի ճնշող: Սեփական անվտանգության վտանգման անհանգստությունն ու մտահոգությունը միաժամանակ նաև գործարանի ծառայողների մեջ էին ուժգնանում: Պրիստավի հետ խորհրդակցելուց հետո մենք եկանք այն համոզման, որ մեր՝ այսպես կոչված «գերիների» փրկության միակ հնարավորությունը նրանց ըստ հնարավորին շուտ հայկական տարածքի վրա տեղափոխելն էր: Պրիստավ Ալիևը պատրաստակամություն հայտնեց հայերին իր սեփական պաշտպանության ներքո այստեղից հեռացնել: Հարցի մի նման լուծումն առավել ևս այն պատճառով էր հանձնարարելի թվում, քանի որ Ելիզավետպոլից, Թիֆլիսից և երկրի այլ վայրերից եկող տեղեկությունները՝ կապված երկաթուղու, փոստերի և հեռագրատների աշխատակիցների գործադուլի հետ, ի դերև հանեցին շուտափույթ զինվորական օգնության ստանալու հույսերը: Քանի որ այդ ծրագրի իրագործման համար անհրաժեշտ էր ձեռք բերել թաթարների համաձայնությունը, ազդեցիկ թաթարները տեղական մոլլայի հետ միասին երեկոյան հրավիրվեցին զրույցի, և նրանց ներկայացվեց գործարանի բոլոր աշխատակիցների խնդրանքը, այն է՝ հայերին թույլատրել, որ ազատ կերպով հեռանան: Պրիստավի ներկայությամբ տեղի ունեցած դժվարին բանակցություններից հետո ի վերջո թաթարները հանդիսավոր կերպով խոստացան այդ պլանի իրականացմանը չխոչընդոտել: Չնայած դրան՝ ես նպատակահարմար համարեցի դեռ ուշ երեկոյան հայերին այցելել և տղամարդկանց առաջարկել, որ գիշերը փախչեն, քանի որ կանանց և երեխաներին հաստատապես ավելի քիչ վտանգ էր սպառնում: Իմ առաջարկն այնուհանդերձ մերժվեց, և հայերը վճռեցին հաջորդ առավոտ միասին ոստիկանության հսկողության ներքո մեկնել: Հաջորդ օրը լուսաբացին (այդ նոյեմբերի 25-ին էր, ուրբաթ օրը) պատրաստվեցին երեք ֆուրգոններ, և հայերը տեղավորվելով այնտեղ՝ ժամը 7,30-ին մեկնեցին: Նրանք ընդհանուր հաշվով 40-45 հոգի էին, այդ թվում նաև կանայք և երեխաներ: Պրիստավ Ալիևը 8 թիկնապահների և թաթարական գյուղերի երկու ավագների հետ ուղեկցում էր նրանց: Ես նրանց հետ բակով մինչև ճանապարհը գնացի: Սայլերը, սակայն, հազիվ հասել էին ռուսական եկեղեցու մերձակայքը, երբ նրանց վրա դարանից կրակ է տեղում: Վայրի սարսափով սայլերում գտնվողները վայր են ցատկում փախուստի միջոցով փրկվելու համար: Առաջինը խփվում է սայլապան Գրիգորը (նա ինձ մի քանի անգամ տարել էր Անետի մարգագետին և այլ մերձակա վայրեր) և ջախջախված գանգով մնում գետնին ընկած: Պրիստավ Ալիևը մարդասպանների դեմ կռվում է հերոսի պես և այդ ընթացքում իր սեփական ձեռքով գնդակահարում մի դավաճանի: Նրա մոտ պաշտպանություն որոնող մի հայ («Զինգեր» ընկերության շրջիկ առևտրական գործակալը) սպանվում է նրա սեփական բազուկների մեջ: Հսկիչ Համբարձում Թումանովը, ատաղձագործ Պետրոս Խաչատուրովը և ծեր փականագործ Սարգիս Շահնազարովը սպանվում են փախուստի ժամանակ: Դեռ հիվանդանոցի բակում նույնը տեղի է ունենում նաև ջեռուցող Խաչատուր Աղամովի հետ: Տնօրինության շենքի փակված դարպասների առջև կույր ֆանատիզմով սպանվում է նաև մի կին: Շատ տղաներ փախչում են դեպի ճանապարհի ներքևում գտնվող ձորը և փորձում թաքնվել արհեստանոցի կամրջի տակ: Նրանց, սակայն, այնտեղից դուրս են բերում և անխնա կերպով սպանում: Ծեր փականագործ Ամիրովի կրտսեր դուստրը (16-ամյա մի աղջիկ) նույնպես դուրս է բերվում կամրջի տակից և առևանգվում թաթարների կողմից: Ծեր Ամիրովը կարողանում է փախչել, բայց պատմում են, որ հետագայում դեպի Բարսում տանող ճանապարհի վրա զոհ է դարձել թաթարներին: Փականագործ Մելիք Շահնազարովին և ատաղձագործներ Ալեքսանդր Ալթումովին ու Ամիրհանին հաջողվում է փախչել: Նրանք կարողանում են երեք սարսափելի տառապալից օրեր անցկացնելուց հետո փրկություն գտնել Չարդախլի գյուղում: Բարձրաձայն հեկեկալով՝ պրիստավ Ալիևը հավաքում է կենդանի մնացած կանանց և երեխաներին, որոնց թիվը հասնում էր մոտ 30-ի, և նրանց տանում գործարանի հիվանդանոցը՝ տեղավորելով այնտեղ: Դր. ֆոն Ռոզենը և նրա քույրը հանձն են առնում հոգ տանել նրանց սննդի համար: Այնտեղ միաժամանակ օթևան են գտնում նաև մի քանի վիրավորված թաթարներ: Միայն շաբաթ օրը՝ նոյեմբերի 26-ին է վերջապես հաջողվում դադարեցնել կողոպուտը և կազմակերպել բանվորական կացարանների հսկողությունը: Երեքշաբթի օրը՝ նոյեմբերի 29-ի հետմիջօրեին Գետաբեկ հասան նաև հեծելազորայինները: Ռուսական եկեղեցու մոտ նրանց դիմավորեց Գետաբեկի ողջ բնակչությունը: Կարգապահ, պճնված հեծելազորի տեսարանն անասելի տառապանքներ տարած մարդկանց վրա այնքան հաղթահարիչ ներգործություն ուներ, որ շատ տղամարդիկ հեծկլտում էին: Գործարանում աշխատանքները հետզհետե դարձյալ վերսկսվեցին, մինչդեռ հարևան գյուղերը, մասնավորապես Սլավյանկան դեռ շարունակում էին ճնշված մնալ կարմիր դրոշով թաթարական հեծյալ հորդաների կողմից: Շուտով Թիֆլիսից նույնպես խիստ անհանգստացնող տեղեկություններով լի նամակներ եկան: Իրադրությունն ամեն օր շարունակում էր սրվել: Հայերի և թաթարների միջև նաև այնտեղ էին արյունահեղ մարտեր սկսվել: Սպասվում էր պետության սնանկացում, ապստամբություն և համընդհանուր գործադուլ: 1906 թ. դեկտեմբերի 6-ին բռնկվեց երկաթուղայինների համընդհանուր գործադուլը: Երկաթուղու օգտագործման թույլտվությունը տալիս էր ռուսական «սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցության» գործադուլային գրասենյակը: Միայն նախորդ տարվա վերջին օրերին դարձյալ թույլատրվեց որոշ ուղևորատար գնացքների երթևեկությունը: Գետաբեկում ևս իսկույնևեթ հանգիստ իրավիճակ չսկսվեց: Դա, ի միջի այլոց, ապացուցում էր այն տխուր փաստը, որ նոր տարվա գիշերը հայկական կողմից զինված հարձակում տեղի ունեցավ հարևան Սոգութլի գյուղի վրա (Գետաբեկից 4 վերստ հեռավորության վրա): Դիպվածաբար գրեթե ողջ կազմով այնտեղ գիշերող հեծելազորի արագ միջամտության շնորհիվ հարձակումը շուտով ետ մղվեց: Չնայած դրան՝ թաթարական կողմում կար 30 սպանված (այդ թվում 17 կին և փոքրիկ երեխաներ): Նաև գրեթե ողջ անասնագլխաքանակն էր առևանգվել: Հայերը, որոնք դուխոբորցիների Նովո-Գորելովկա գյուղով էին եկել, ունեցել էին մոտ 17 զոհ: Քանի որ, բացի այդ, Գետաբեկը և հարևան ռուսական գյուղերը, նաև Սլավյանկան ու Նովո-Գորելովկան գտնվում են հենց Ելիզավետպոլի և Նոր Բայազեդշենի շրջանների միջև, կարելի էր ակնկալել հայերի հարձակում ճանապարհին գտնվող թաթարական գյուղերի վրա: Մյուս կողմից Չարդախլի հայկական գյուղը հարթավայրի թաթարներին խանգարում

կենտրոնացրել էին գետաբակցի հայերից խլված ողջ թալանը[593]:

Հետագա տարիներին հայոց Գետաբակը շենանում է վերստին. վերաբացվում է դպրոցը, նորոգվում եկեղեցին, կյանքը մտնում է բնականոն հունի մեջ:

1908 թ. Գետաբակի տանուտեր է հիշվում Աղաբեկ Աղասարյանցը[594]:

1915 թ. գետաբակցիներն ապաստան են տալիս Եղեռնից մազապուրծ 196 գաղթականների և տեղավորում շուրջ 25 բնակարաններում[595]:

**Սբ. Գևորգ եկեղեցի**. վերաբնակիչ հայերը, հիմնելով Նոր-Գետաբակը, ստիպված չեն լինում եկեղեցի կառուցել, քանի որ տեղում կանգուն վիճակում գտնում են նույնիսկ երկու եկեղեցի. «Հայերը, որ ժամանակաւոր բնակիչներով մի պատկառելի թիւ են կազմում, կարիք են զգում հոգևոր պէտքերի ևս. այդքան ժողովուրդ հայեր առանց քահանայի և եկեղեցու ինչպէս կարող էին մնալ: Բարեբաղդաբար նախնի պապերից շինուած զոյգ եկեղեցիներ կանգուն պատրաստ են լինում, մէկը փոքրիկ՝ գերեզմանատան մէջ, որ հենց այժմեան եկեղեցին է, միւսը մեծ՝ հեռու արևելեան կողմում: Որովհետև մեծ եկեղեցին վերանորոգութեան պահանջ է ունենում, ընտրում են փոքրիկ գերեզմանատան եկեղեցին և մերձաւոր հոգևոր իշխանութեան տնօրէնութեամբ դա սրբագործւում է հոգևոր պէտքերը հոգալու և նշանակւում է երթևեկ քահանայ հեռու գիւղերից»[596]:

1861 թ. գործել է որպես ծխական եկեղեցի: Վավերագրերում հիշատակվում է անանուն ու քարաշեն (1861, 1877, 1878 թ.)[597], իսկ 1885 թ.՝ իբրև «Կեատաբէկու Սբ. Գևորգ եկեղեցի ծխական»[598]: Գտնվում էր պղնձահանքի մոտ՝ մեծ գերեզմանոցում («...ունէ մի բազմադարեան փոքրիկ եկեղեցի, որ գտնվում է գիւղից փոքր ինչ հեռու, պղնձէ հանքի գործարանի մօտ...»)[599]: Կառուցման ժամանակը հայտնի չէ: 1890 թ. արդեն կարոտ էր նորոգության (հատկապես տանիքը)[600]:

Եկեղեցու նորոգությունն իրականացվել է հանքերի կառավարիչ Վ. Բոլտոնի օժանդակությամբ. «...իր հաշվով [եկեղեցին] կոմինտրով ծածկեց, դուրսը եւ ներսը կրով ծեփել եւ սուաղել տուեց, որ կարժենար առնուազը 400 րուբլի...: Ներկայ տարվայ (այսինքն՝ 1900 թ.) սկզբին 50 ր. նուիրեց հայոց եկեղեցուն՝ կարկատելու, նորոգելու եւ ինչ կարիք լինի լրացնելու»[601]:

1905 թ. նոյեմբերյան ընդհարումների օրերին թուրքերը եկեղեցին ավերել և կողոպտել են:

Նկատի առնելով եկեղեցու անմխիթար վիճակը՝ 1908 թ. Հայի Գետաբակի հասարակությունը կառույցի վերանորոգության հարցով դիմել էր Գանձակի հոգևոր կառավարությանը, ընդ որում, թույլտվություն խնդրելով՝ Սբ. Գևորգ եկեղեցու գումարներից 300 ռուբլի օգտագործել այդ նպատակի իրագործման համար[602]:

Առհասարակ, Գետաբակի հայկական հնությունները տուժել են ավելի շատ ավերիչ ձեռքերից: Զգալի վնաս են հասցրել հատկապես հանքերի կառավարիչները, որոնք, պատմական հուշարձաններին հաճախ վերաբերվելով իբրև անպետք ու անտեր կառույցների, զանազան նոր շինությունների քար մատակարարելու համար քանդել են դարերից մնացած հայկական հուշարձանները. «...եկեղեցին գտնւում է գործարանում: Եկեղեցին հին է և շրջապատած մեծ տարածութեամբ հանգստարաններով, ուր թաղում են նոր հանգուցեալներին, այնպէս որ հին և նոր մի գերեզմանատուն են կազմում: Գերեզմանատունը հարաւային կողմից գտնւում է այժմեան հրապարակի վրայ, ուր և վաճառանոցն է: Պետք է նկատել, որ սրանից մի քանի ժամանակ առաջ բաւական տեղ մասնաւոր գործարանի կառավարչի աւերիչ ձեռքը փչացրել է հանգստարանն՝ թէ իրենց համար շինութիւն և թէ ուրիշների համար խանութներ շինելու նպատակով. դրան ապացոյց հետաքրքիր այցելուն կարող է նկատել շինութիւնների անկիւններում խաչանիշ քարերը, որոնց վրայ գուցէ և եղած լինին արձանագրութիւններ...»[603]:

**Քահանա.** նախապես գյուղին հովվում էր Փիբ գյուղի քահանան, իսկ 1869 թ. քահանա է ձեռնադրվում *Մովսես Տեր-Գալստյան Մամիկոնյանցը*[604]:

---

էր հասնել լեռնային արոտավայրերին: Այդ պատճառով երկյուղ կար, որ հենց այստեղ դարձյալ նոր պայքար կսկվի թշնամի ազգերի միջև, որի կասեցումը հնարավոր կդառնա միայն կայուն, բավականաչափ զինվորական ուժերի առկայության դեպքում» (**Lehmann-Haupt C. F.**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 150-154):

593. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 354: Հայ վրիժառուների կողմից Սոգութլու՝ գյուղ-ավազակաորջը ոչնչացնելու մասին տե՛ս սույն աշխատության Սոգութլու գյուղի բաժինը (էջ 122):

594. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1274, թ. 10:

595. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1058, թ. 1,5:

596. «Նոր-Դար», 1889, N 174, էջ 3:

597. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 148-149, գ. 3870, թ. 22-23:

598. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:

599. «Մշակ», 1878, N 145, էջ 2:

600. «Նոր-Դար», 1890, N 148, էջ 3:

601. «Մշակ», 1900, N 26, էջ 3: Ի դեպ, Վ. Բոլտոնը «...իր ծախքով կառուցեց ռուսաց մի փոքրիկ, բայց շքեղ ու վայելուչ եկեղեցի մօտ 3000 թ. արժողութեամբ»: Նա վախճանվել է 1900 թ. հունվարի 29-ին՝ տնօրինելով Գետաբեկի գործարանը 25 տարի: Նույն պաշտոնում նշանակվում է հանգուցյալի փեսան՝ Գուստավ Քելլեն:

602. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1274, թ. 14:

603. «Նոր-Դար», 1889, N 145, էջ 3: Գրեթե նույնն է վկայել մեկ այլ ականատես. «Գետաբակի պղնձահանքի շինութեանց հիւսիսակողմը կայ մի փոքրիկ անշուք հայկական մատուռ, թաղակապ, որի շրջապատն ընդարձակ գերեզմանատուն է, որ ապացոյց է թէ այդտեղ հնումն աւելի շատ հայեր են բնակվել. մատուռից ոչ շատ հեռու կայ և մի այլ եկեղեցւոյ աւերակ: Զարմանալի չէ, որ այդչափ ընդարձակ գերեզմանատուն և եկեղեցիներ թողնող ժողովրդից բնակութիւնների հետքեր չեն մնացել. ըստ որում կարծելու է, որ պղնձահանքի բազմաթիւ գործարանների պատճառով քանդուել, անհետացել են...» («Արձագանք», 1888, N 7, էջ 86):

604. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10:

1890-1903 թվականներին հիշվում է քահանա *Շմավոն Բորյանցը*[605]:

1907 թ. դեկտեմբերին Գանձակի հոգևոր կառավարությունը Գետաբակի Սբ. Գևորգ եկեղեցու ծուխը հովվելու համար քահանա է նշանակել *Մեսրոպ Ստեփաննոսյանցին*, որն իր պարտականություններին անցնելուն պես մեծ գործունեություն էր ծավալել եկեղեցու անմխիթար վիճակը բարեփոխելու ուղղությամբ: Այդ առթիվ 1908 թ. մի վավերագրում ասված է. «...տեղը գալուն պէս, տեսնելով մեր եկեղեցւոյ թշուառ դրութիւնը, ամենայն աշխատութեամբ ջանաց եկեղեցին պայծառացնել և բարեկարգել և եկեղեցական կալուածոյ իրաւունքները պաշտպանելով տեղոյս գործարանի կառաւարչի և թուրքերի գրաւումների մասին` բողոքներ տալով կոնսիստորիային և կառաւարութեանդ..., որոյ մասին խորին շնորհակալութիւն ենք հայտնում յիշեալ քահանայից»[606]:

1917 թ. հուլիսի 24-ին Սինոդը Գետաբակի համար *Համազասպ Խաչատրյանին* տվել է քահանա ձեռնադրվելու թույլտվությունը[607]:

**Գերեզմանոց**. պատմական մեծ արժեք ուներ, քանի որ տեղում թաղումներն անընդմեջ իրականացվել են բազում դարեր շարունակ (առնվազն միջնադարից): Գտնվում էր Գետաբակի հարավային կողմում:

Ավերվել է 1960-70 թվականներին` Գետաբեկի շրջանային հեռուստատեսության կայան կառուցելու պատճառով:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գտնվում էր Հին Գետաբակի տարածքում: Առաջին անգամ հիշատակվում է 1659 թ. այստեղ ընդօրինակված Հայսմավուրքի հիշատակարանում[608]: Ս. Ջալալյանցն առանց տեսնելու` այն անվանում է «զհոյակապ եկեղեցի կառուցեալ ՚ի վերայ վայելչաղիր սեանց»[609]: Մինչդեռ իրականում Սբ. Աստվածածին եկեղեցին եղել է փոքր և անշուք մատուռ[610]: Հիշատակվում է նաև արխիվային վավերագրերից մեկում. «1885 թ. սբ. Աստվածածին եկեղեցին ի հին գիւղատեղւոջ»[611]: Ի դարասկզբին քանդել է Գուստավ Քելլեն և քարերն օգտագործել այլ շինությունների համար[612]:

**Սբ. Սարգիս վանք.** նկարագրական առաջին վկայությունը խիստ ժլատ է. «Գետաբէկին մօտ անտառի մէջ կայ և մի փոքրիկ վանք Ս. Սարգիս անունով: Սրա շրջակայքում նոյնպէս նշմարւում են շատ տների հետքեր»[613]:



*ԳԵՏԱԲԵԿ. Սբ Սարգիս վանքի տեսքը Ի դարի սկզբին: Արտատպված` Լեհման Հաուպտի «Հայաստանը նախկինում և այժմ» գրքից (C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910)*




*ԳԵՏԱԲԱԿ. Սբ. Սարգիս վանքի հատակագիծը*

Հայտնի է, որ 1883 թ. վանքում մասնակի, սակայն կամայական նորոգություններ է կատարել հանքերի կառավարիչ Վ. Բոլտոնը և սեփականելով շենքը` ծառայեցրել է որպես զբոսավայր. «Այժմեան պղնձահանքից հարաւ 1/2 ժամաչափ հեռաւորութեամբ, անտառի մէջ, մի փոքրիկ մարգագետնի վրայ կանգնած է մի գողտրիկ խաչաձև գմբէթաւոր վանք, ...պատերը սուաղած, գմբէթը ներկած, ընդարձակ գեղեցիկ մուտքով և փոքրիկ փայտէ պատշգամբով. սակայն այս բոլոր նորոգութեանց պատճառը հասկանալի է դառնում, երբ

605. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 21: Նաև` ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1104, թ. 17:
606. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1274, թ. 14:
607. «Արարատ», 1917, էջ 605:
608. «ԺէԳ», էջ 876:
609. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 360:
610. «Արձագանք», 1888, N 7, էջ 86:
611. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
612. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 312: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 328:
613. **Սմբատ Մ.**, Հնութիւններ Գետաբէկի շրջակայքում, «Նոր-Դար», 1893, N 36, էջ 3:







***ԳԵՏԱԲԵԿ. Սբ. Սարգիս վանքի տեսքն արևմուտքից 1980 և 1982 թթ. (վերջինը քանդման ընթացքում) տեսքը հյուսիսից և հատվածներ ներքուստ***

այցելուն տեսնում է վանքի ներսը: Ներսի կողմից ևս վանքը սուաղած և ներկած է, բայց բեմի և պատարագամատոյց սեղանի փոխարէն, որոնք բոլորովին քանդուած են նորոգութեան ժամանակ, դուք կը տեսնէք մի ընդարձակ փայտէ սեղան, մաքուր սփռոցով ծածկուած և նստարաններով շրջապատուած, ...այս նշանաւոր փոփոխութիւն անողը պղնձահանքի գերմանացի կառաւարիչն է. անձամբ ականատես եղանք, թէ ինչպէս նա ճաշից յետոյ սեպհական կառքով, մի քանի տիկինների և օրիորդների հետ ժամանեց այստեղ և սկսուեց նուագածութիւնն ու պարը, և այս բոլորը վանքի ներսում...: Վանքի նկարագրութիւնը վերջացնենք յիշատակելով, որ նորա հարաւ-արևելեան անկիւնում մի փայտէ խոհանոց ևս աւելցրած է: Ժողովուրդը սրան անուանում է ,,Դըրեխտորի,, (այսինքն՝ դիրեկտորի) վանք, բոլորովին անտարբեր և սառնասիրտ վերաբերուելով այս անամօթ վարմունքին ... ազէ՞տ ժողովուրդ. վանքի իսկական անունը կամ որ դարու շէնք լինելը գուցէ պարզուէր,

եթէ սուաղների տակ չլինէին ծածկուած որմերը, որոնց վրայ շատ հաւանական է արձանագրութիւն կարող է լինել: Այս նշանաւոր փոփոխութիւնն արուած է 10 տարի առաջ...»[614]:

Գրեթե նույն տարիներին վանք այցելած մեկ այլ հեղինակ նշել է. «*Սուրբ Սարգիս.* Ուխտատեղի է և փոքրիկ մատուռ Հին Գետաբակի արևելեան հանդէպ, ջրաձորի աջ կողմի բարձր և գեղեցիկ սարայարթում. ունի և փայտաշէն սրահ և անտառապատ շուրջ (այս տեղ բնակած է Յովհան Մայրագոմեցի գիտնական վարդապետն)»[615]:

1900-ական թվականների վերջերին վանքը թռուցիկ հիշատակում է նաև գերմանացի հնագետ Լ. Հաուպտը. «Գետաբեկը մշտապես պատված էր թանձր ծխով և վառարաններից դուրս եկող՝ շնչառությունը դժվարացնող շոգիներով: Սակայն մերձակայքում կար մի վայր, որտեղ անարգել կարելի էր վայելել լեռների մաքուր օդը՝ Անճետի մարգագետինը: Այն շրջապատված է լեռներով ու անտառներով, իսկ կողքին կա մի բավականին հին հայկական մատուռ: Մարգագետնի վրա մինչև վերջերս կար մի հսկա կաղնի, որը շրջակայքում ապրող հայերի կողմից պաշտվում էր որպես սրբազան ծառ: Երբ մենք հասանք Գետաբեկ, հսկա ծառը, որն ընդգրկում էր 4,26 մետր տարածություն, գտանք գետնին պառկած վիճակում: Ինչպես մեզ տեղեկացրեցին, այն վայր էր տապալվել երեք տարի չորացած և տերևազուրկ վիճակում կանգուն մնալուց հետո: Ծառի առջև կար մի քար՝ վրան կատարված մոմազոհաբերումներից միանգամայն սևացած: Դա ակնհայտորեն հեթանոսական և միայն մի փորագրված խաչով քրիստոնեացված զոհասեղան էր, իսկ մատուռը նրա հարևանությամբ է կառուցվել, քանի որ խնդիրն այստեղ վերաբերում էր մի հին՝ ծառի պաշտամունքին ծառայող վայրի: Սակայն հեթանոսական ծառից քրիստոնեական մատուռին պաշտամունքի փոխանցումը չի հաջողվել երբևէ ամբողջովին իրագործել»[616]:

Հ. Ոսկյանը, կրկնելով Ս. Ջալալյանցին և Մ. Բարխուտարյանցին, հուշարձանը նույնացնում է Խորթին անապատի հետ[617]: Ենթադրվում է, որ Է դարում այստեղ է ապաստանել Եզր կաթողիկոսից հալածված Հովհան Մայրավանեցին[618]:

1980 թ. Գետաբեկ շրջկենտրոնից 1 կմ հարավարևելք՝ Գետաբակ վտակի աջ ձորալանջին՝ անտառածածկ սարերով շրջապատված ոչ մեծ տափարակի վրա գտանք քայքայված, բայց միանգամայն կանգուն խաչաձև-գմբեթավոր հորինվածքով մի եկեղեցի: Համադրելով այն վերոնշյալ նկարագրությունների հետ՝ կարծում ենք, որ Մ. Սմբատյանցի, «Արձագանք»-ի թղթակից Նուբոի և Մ. Բարխուտարյանցի նկարագրած եկեղեցին և մեր տեսածը նույն հուշարձանն է: Եկեղեցին ներքուստ և արտաքուստ խաչաձև, միախորան, գմբեթավոր կառույց է: Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթաթմբին իրականացված է առագաստների միջոցով. ճարտարապետական լուծում, որը մեզանում հայտնի է Է դարից: Նեղ ու ձգված լուսամուտները զետեղված են բոլոր ճակատներում: Կառուցված է անմշակ քարով ու կրաշաղախով, ներքուստ սվաղված է, արձանագրություններ չկան:

1982 թ. 2-րդ և, ցավոք, վերջին անգամ այցելելով Սբ. Սարգիս եկեղեցի ականմա ականատեսը եղանք եկեղեցու քանդման գործընթացին (կիսով չափ քանդել էին ուքանիստ թմբուկը)[619]:

**Կիկլոպյան ամրոց.** Գետաբեկի մերձակայքում գտնված կարևոր հնագիտական հուշարձաններից է, որը տեսել և նկարագրել է հնագետ Լ. Հաուպտը. «Մի մեծ բլուր՝ այժմ ծածկված մութ անտառով ու խիստ մացառուտներով, շրջափակված է հսկա քարակտորներով կառուցված յոթնաշերտ կիկլոպյան շրջապարսպով. ժայռակտորներ, որոնք այնպիսի ծանրություն ունեին, որ, ինչպես նախապատմական կառույցների դեպքում հաճախ լինում է, անհնար էր ըմբռնել, թե ինչպես կարող էր մեկ, դեռ չասելով՝ հարյուրավոր այդպիսի քարակոշտերը վեր բարձրացվել և միմյանց կողքին կամ միմյանց վրա տեղադրվել: Երկու կողմից պարիսպներով շրջափակված մի ճանապարհի հյուսիսից հարավ առաջնորդում է ամրոց կառույցի միջով: Բացի այդ արևելքից մի գաղտնի, մասամբ ստորգետնյա անցարան է ձգվում դեպի բերդի կենտրոնը, այնտեղ, որտեղ բլուրն ավելի զառիվայր է դառնում: Նույնիսկ գլխավոր մուտքը խիստ դժվար էր գտնել: Ձիերը սուզվում էին մինչև թամբերի բարձրությանը հասնող փարթամ խոտի մեջ, և բոլորապարիսպների ներսում առաջ գնալը խիստ դժվար էր: Տպավորությունը, որ մենք վայրի անտառաթավուտում գտնվող այդ կառույցից ստացանք, մեծաշուք և գրեթե սոսկալի էր: Վերադարձի ճանապարհին իմ ուղեկիցն ինձ առաջնորդեց իր կողմից նախկինում բացված՝ բրոնզի և նորասկիզբ երկաթի դարաշրջանից սերող մի շարք գերեզմանների մոտով: Դրանցում էին գտնվել նաև այն կենդանական պատկերներով և որսի տեսարաններով պատված բրոնզե գոտիները, որոնք Վիրխովը դարձրել էր մի հատուկ ակադեմիական աշխատության նյութ»[620]:

---

614. «Արձագանք», 1893, N 124, էջ 2:

615. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313:

616. **Lehmann-Haupt C. F.**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 130-131.

617. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 360: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1952, յուլիս-սեպտեմբեր, էջ 424:

618. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, նույն տեղում: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., նույն տեղում: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 347-348:

619. «Գարդմանք», 1996, N 1, էջ 8:

620. **Lehmann-Haupt C. F.**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 133-134.

## ԳՅԱՐԳՅԱՌ (ԿԱՐԿԱՌ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 7 կմ արևմուտք՝ Շաքարբեկ և Ղարամուրատ գետերի միախառնման տեղում, ծովի մակերևույթից 1470-1560 մ բարձրության վրա:

**Պատմությունը.** գյուղի պատմական անվան վկայությունը պահպանվել է 1656 թ. Սրբոռոտ գյուղում Ավետիս քահանայի ընդօրինակած «Մաշտոց»-ի հիշատակարանում. «Յակոբ քահանայն ... որ է ... Կարկառ գեղին աւագ քահանայ...»[621]:

**Բնակչությունը.** հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: Շուրջ 1 դար գյուղատեղին խաշնարած ցեղերի համար ծառայել է որպես ամառանոցավայր: ԺԹ դարի 70-80-ական թվականններին վերջիններս, վերջնականապես հիմնվելով գյուղատեղիում, վերածվեցին մշտաբնակների:

1908 թ. գյարգյառաբնակ թուրքերը կազմել են 355[622], 1914-ին՝ 378 շունչ[623]:

**Պատմական հուշարձան.** 1890-ական թվականներին Գյարգյառում պահպանվել էին բնիկներից մնացած «...կիսաւեր եկեղեցի և հանգստարանը»[624]:

## ԳՅՈԴԱԿԴԵՐԵ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևմուտք, հարավից կից է պատմական Շաքարբեկ գյուղին, տարածված է համանուն գետակի աջ ափին, ծովի մակերևույթից 1500-1580 մ բարձրության վրա:

Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները: Ներկայիս գյուղը, որի թուրք բնակիչներն իսպառ վերացրել են բնիկներից մնացած նյութական մշակույթի բոլոր հետքերը, գոյացել է խորհրդային տարիներին:

## ԳՈՐԵԼՍԿ

Գտնվում է շրջկենտրոնից 7,5 կմ հյուսիս՝ հարավարևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1570-1640 մ բարձրության վրա:

Բնակավայրը գոյացել է խորհրդային տարիներին՝ ամայացած հին գյուղատեղիում:

## ԳՐԵՄՈՒ ԲԱԶԱՐ

Զակամ գավառի այն գյուղերից է, որի տեղադրությունն առայժմ պարզված չէ: Գտնվել է ներկայիս Գետաբեկի շրջանի արևմուտքում կամ էլ Թոուզի շրջանի հարավային մասում: Ի դեպ, Գետաբեկի շրջանի այդ մասում է Քերիմլի անունը կրող մի գյուղ, որը հակված ենք նույնացնել պատմական Գրեմի հետ:

ԺԷ դարում Գրեմու Բազար գյուղում գրիչ Գրիգոր քահանան Պարոնտերի պատվերով ընդօրինակել է ձեռագիր «Աւետարան»[625]:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին գավառի տասնյակ զուտ հայաբնակ այլ գյուղերի հետ մեկտեղ:

## ԴԱՂՐՄԱՆԴԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ արևմուտք՝ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1450-1520 մ բարձրության վրա:

ԺԹ դարի վերջին հայաթափ հին գյուղատեղին բնակեցվել է նստակեցության անցած թուրք-խաշնարած ցեղերով:

1908 թ. ունեցել է 55[626], 1914-ին՝ 205 շունչ[627]:

## ԴԱՅԱ-ՂԱՐԱԲՈՒԼԱՂ (ԲԱԼԱ-ՂԱՐԱԲՈՒԼԱՂ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1430-1550 մ բարձրության վրա:

**Բնակչությունը.** հայաթափ է եղել ԺԸ դարի 70-ական թվականներին: Հետագայում գյուղատեղին խաշնարած թուրք ցեղերի համար ծառայել է որպես ամառանոց, իսկ 1880-ականների վերջերից՝ իբրև գյուղ:

1914 թ. Դայա-Ղարաբուլաղն ունեցել է 840[628], 1977-ին՝ 1031 բնակիչ[629]:

**Պատմությունը.** պատմական՝ հայկական անվանումը մոռացության է մատնվել:

Դայա-Ղարաբուլաղի մերձակայքը հարուստ է հայ մշակույթի բազմադարյան և տարատեսակ հուշարձաններով: Ահա դրանք.

**«Ջոխտակ կամուրջ» գյուղատեղի.** գտնվում է Դայա-Ղարաբուլաղ գյուղից 3 կմ հարավ-արևելք՝ Փառխոս և Շամքոր գետերի միախառնման տեղում:

Հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: Պատմական անունը մոռացվել է: ԺԹ դարավերջին մերձաբնակ հայերին հայտնի էր Ջոխտակ կամուրջ, իսկ թուրքերին՝ Ղոշա-Քյոփրի կամ Բայրամլի (նաև՝ Ալի-Բայրամլի) անվամբ:

Տեղում նոր բնակավայրի հիմնադրման նախապայմանը Շամքորի հովտից Գետաբակի պղնձաձուլարանների համար փայտանյութ մատակարարելն էր: Սկզբում տեղում կառուցվում են սղոցարան, պահեստներ: Ժամանակի ընթացքում աշխատուժի աճող պահանջի համեմատ տեղում ձևավորվում է թրքաբնակ մի գյուղ՝ Բայրամալի անվամբ: Բնակիչները հավաքագրվում են Բայրամլի

621. «ԺԷԳ», էջ 741:
622. “Кавказский календарь на 1910 г.”, с. 224.
623. “Кавказский календарь на 1915 г.”, с. 109.
624. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308:
625. «Ցուցակ Ձեռագրաց», հատոր Բ, Երևան, 1970, էջ 502, ձեռ. N 7299:
626. “Кавказский календарь на 1910 г.”, с. 234.
627. “Кавказский календарь на 1915 г.”, с. 115.
628. Նույն տեղում, էջ 117:
629. «ԱԱՀ», հ. 3, էջ 394:

անվամբ հայտնի խաշնարած այն ցեղերից, որոնք ձմեռն անց էին կացնում Կուրի աջ ափին ցրված մի քանի ձմեռոցներում (ներկայիս Թռուզի շրջանի Աշաղի-Այիփլի գյուղից հյուսիս-արևելք), իսկ ամառն իրենց բազմաքիվ հոտերով հաստատվում էին Շամքոր գետի վերին հոսանքի շրջանում: Ի դեպ, հայտնի է, որ թուրքերից զատ, օրինակ՝ 1886 թ., Բայրամլիում բնակություն էին հաստատել «նորերումս մահմեդականություն ընդունած եօթն հայեր: Դոքա ամուսնացել են և այդ գիւղում բնակութիւն են հաստատել»[630]: 1883 թ. նորաստեղծ գյուղը երկաթուղով կապվում է Գետաբեկի հետ: Այստեղ էին պահվում պղնձաձուլարաններում օգտագործվող փայտի և ածուխի պաշարները[631]: Սակայն հանքերի սպառմանը զուգահեռ՝ Բայրամլին կորցնում է իր նշանակությունը և տարիների ընթացքում խպառ ամայանում: Ներկայումս անասնապահների համար ծառայում է իբրև ամառանոց:

«Ջոխտակ կամուրջ» կամ Բայրամլի գյուղատեղիին կից՝ գետի աջ ձորալանջին, ԺԹ դարավերջին դեռևս պահպանվում էր մի եկեղեցի: Հուշարձանի գոյության մասին առաջին գրավոր վկայությունը հայտնի է 1890 թ-ից «...պղնձհանքի փայտի կույտերի մոտ Շամքոռ գետի երկճղան խառնուրդում: Այդտեղից դեպի ձախ երկուստեք ահագին բարձրությունով սարերով պարսպված ձոր գնում է վեր, դեպի՝ Ղոշա Քյորփի, ուր մի վանք կա: Գետի այդ ճյուղը կոչվում է Ղաշխա-չայ...»[632]:

Գրեթե նույն ժամանակներում մեկ այլ հեղինակ նշել է. «Երկաթուղու գիծն վերջացած տեղի արևելեան հանդէպ, վտակի աջ կողմի բարձրութեան վերայ կայ մի եկեղեցի, որի գլուխն խոնարհուած է»[633]:

«Ջոխտակ կամուրջ» գյուղատեղիում (անունն արդեն իսկ հուշում է) եղել է երկու կամուրջ. «...անուանում են Բայրամ-Ալի կամ Ղօշա-քեորփի (ջուխտ կամուրջ), երևի այն երկու կամուրջների անունով, որոնցից մէկն այժմ կործանուած է, որի միայն մի կողմն է երևում, իսկ միւսը նրանից բաւական բարձր, դեռ կանգուն մնում է...»[634]:

Հարկ է նշել, որ 2-րդ կամուրջը «Ջոխտակ կամուրջ» գյուղատեղիից, իրոք, բավականաչափ հեռու է և գտնվում է Չանախչի գյուղատեղիում: Ուստի առավել հավանական ենք համարում, որ տեղում եղել է հետագայում ավերված ևս մեկ կամուրջ:

**Տանձուտ (Դանձուտ, Չանախչի) գյուղատեղի.** գտնվում է «Ջոխտակ կամուրջից» 4,5 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախ ափին:

Գյուղանունը՝ Դանձուտ տառադարձությամբ, վկայված է 1721 թ. «Ժողովածուի» հիշատակարանում, ձեռագիր, որ Առաքել Դանձուտցու պատվերով ընդօրինակել է Սարգիս գրիչը Քարատակ գյուղում[635]:

Հայտնի է եղել ԺԸ դարի 70-ական թվականներին: Գյուղատեղիի տարածքում ԺԹ դարավերջին պահպանվում էին եկեղեցին և քաղակապ, միաթռիչք կամուրջը: Վերջինս կանգուն էր նաև 1980-ական թվականներին:

Իր չափերով բավականին ընդարձակ էր եկեղեցին. «...Այս կամրջի մօտ կայ մի բաւական մեծադիր եկեղեցի, որի մի կողմի պատը և տանիքի մեծ մասը քափուած են, իսկ միւս մասերը վեց սների վրայ ամրացած դեռ մնում են, մնում է ամբողջութեամբ և աւազանը»[636]: Նույն տարիներին հնավայր այցելած Մ. Բարխուտարյանցը թողել է առավել փաստալից նկարագրություն. «Խիստ ընդարձակ է գիւղիս աւերակն և հանգստարան. Նս առաւել եկեղեցին, որ հիացնում է այցելուները իւր հոյակապ շինութեամբ և մեծութեամբ: Կառուցեալ է վեց սիւների վերայ. ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու գեղեցիկ խորհրդարան, երկու դուռն հարաւից և հիւսիսից. 27 մետր երկարութիւն, 15 մետր 60 սանթիմ լայնութիւն: Այժմ խոնարհուած է աւագ խորանն, ձախակողմեան դասի կամարով միասին և փոքր ինչ տեղ տաճարիս արևմտեան հիւսիսային անկիւնից (ձեղունից). չունի արձանագրութիւն»[637]:

**Փիրնազար (Այցելու սուրբ).** «...երկու աւերակ եկեղեցիներ, որք կան Տանձուտից բաւական վերև...»[638]:

## ԴԱՐՅՈՒՐՏ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևմուտք՝ հյուսիսարևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1440-1510 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին երբեմնի հայաբնակ գյուղատեղին բնակեցվել է նստակեցության անցած խաշնարած թուրքերով:

1908 թ. ունեցել է 139[639], 1914-ին՝ 188 բնակիչ[640]:

## ԴԻՔԴԱՇ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Ջակամ գետի աջ արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1070-1100 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին ամայացած հայաբնակ գյուղատեղիի տարածքը բնակեցվել է խաշնարած թուրքերով:

1907 թ. Դիքդաշն ունեցել է 35[641], 1914-ին՝ 239 բնակիչ[642]:

630. «Մշակ», 1886, N 89, էջ 2:
631. «Մշակ», 1891, N 60, էջ 2:
632. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 24:
633. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 306:
634. **Սմբատ Մ.**, նշվ. հոդվ., էջ 3:
635. «ՑԶԲ», էջ 440:
636. **Սմբատ Մ.**, նշվ. հոդվ., էջ 3:
637. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 305:
638. Նույն տեղում:
639. “Кавказский календарь на 1910 г.”, с. 237.
640. “Кавказский календарь на 1915 г.”, с. 116.
641. “Кавказский календарь на 1910 г.”, с. 379.
642. Նույն տեղում, էջ 188:

## ԴՅՈՒԶ-ՅՈՒՐՏ

Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ- արևմուտք՝ ծովի մակերևույթից 1550-1600 մ բարձրության վրա: 1978 թ. ունեցել է 1100 բնակիչ[643]:

**Դուզի-Յուրտ.** տեղամաս էր Գետաբեկից 7 վերստ հեռավորության վրա. «...որտեղ պետք է բնակեցվեն ռուս գաղթականներ...»[644]:

## ԴՅՈՒԶ-ՌԱՍՈՒԼԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախնջի գետի աջակողմյան վտակի հովտում, ծովի մակերևույթից 1450-1560 մ բարձրության վրա:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ հայաթափ գյուղատեղիում:

## ԵՆԻՔԵՆԴ

Գտնվում է Գետաբակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1500-1570 մ բարձրության վրա, հարավարևմտյան կողմից կից է Գետաբեկ շրջկենտրոնին:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԵՆԻՔԵՆԴ (ՊԱՊԱՋԱՆ)

**Տեղադրություն.** Գետաբեկի շրջանի Ենիքենդ անվամբ 2-րդ գյուղը գտնվում է շրջկենտրոնից 19 կմ արևմուտք՝ Պապաջան կամ Բաբաջան գետակի (ներկայիս՝ Բաջանկա) ձախ ափին, ծովի մակերևույթից 1250-1350 մ բարձրության վրա:

**Գրչօջախ.** գրավոր աղբյուրներում Պապաջանի մասին հիշատակություններ են պահպանվել ԺԷ դարի կեսերից, երբ տեղի եկեղեցում իրար հետևից ստեղծվել են զանազան ձեռագրեր: Կարելի է վստահորեն նշել, որ 1650-1660-ական թվականներին տեղում ստեղծված (անշուշտ, խոսքը պահպանվածների մասին է) ձեռագրերի առատությամբ Պապաջանն իրավամբ համարվում է Վերին Զակամ գավառի գրչության առավել արդյունավետ կենտրոններից մեկը:

1655 թ. պապաջանցի Ավետիս քահանան ձեռնամուխ է եղել «Շարակնոցի» ընդօրինակմանը (ավարտին է հասցրել Խավունիսի Ջուխտակ վանքում). «...եղև սկսանել Շարակնոցիս ի երկրին մերում Վերին Զակամ, ի հայրենական գեօղն իմ, անուն Պապաջան: Եւ այժմ օտարացեալ և փախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերոյ գրեցաք, ի գիւղս որ կոչի Խաւունիս, որ եղև աւարտ Շարակնոցիս, զի ի շէնս այս կայ պատուական Ջուխտակ եկեղեցիս...»[645]:

Հավանաբար, մի քանի տարի անց Ավետիս քահանան վերադարձել է հայրենի գյուղ. նրա գրած և նկարազարդած հաջորդ երեք ձեռագրերը ստեղծվել են Պապաջանում: 1659 թ. պասակերցի Հախումի պատվերով նրա որդու՝ Բարսեղ քահանայի համար Ավետիսն ընդօրինակել ու մանրանկարել է «Կարմիր Ավետարան». «Եղև զրաւ գրչութեան քրիստոսախօս և տիեզերալույս սբ. Կարմիր Աւետարանիս ի թուաբերութեանս հայկազեան տոհմի հազար հարիւր և ութ (1659) ամի, խաղաղութիւն ժամանակի, յերկիրս Վերին Զագամ, ի գեօղս Պապաճան կոչի, ընդ հովանեաւ Դար[ա]մուրատի յանապատի...»[646]: 1661 թ. ընդօրինակել ու ծաղկել է «Ավետարան»[647], իսկ 1668-ին՝ «Շարակնոց»[648]:

Պապաջանի գրչության կենտրոնը չի կապվում սոսկ Ավետիս քահանայի անվան հետ: 1662 թ. այստեղ ձեռագիր է հեղինակել նաև գրիչ Հովհաննես երեցը[649]:

**Բնակչություն.** հայաթափ է եղել 1770-ական թվականներին:

ԺԹ դարավերջին դեռևս ամայի էր ու անմարդաբնակ: Տեղում պահպանվել էին եկեղեցին և գերեզմանոցը[650]:

Խորհրդային տարիներին պատմական Պապաջան գյուղատեղիի հարևանությամբ՝ նրա հարավային կողմում, գոյացել է Ենիքենդ անունը կրող թրքաբնակ գյուղը: Բնակիչները որպես շինաքար շարունակ օգտագործել են գյուղատեղիի հայոց գերեզմանատան տապանաքարերն ու խաչքարերը, քանդել նաև եկեղեցին ու դրանից ոչ հեռու գտնվող մատուռը:



*ԵՆԻՔԵՆԴ (ՊԱՊԱՋԱՆ). եկեղեցու հատակագիծը*

1982 թ. մեր այցելության ժամանակ տեղում պահպանվում էին հիշատակված հուշարձանների մնացորդները:

Եկեղեցին եղել է 20,40 x 12,10 մ արտաքին չափերով, արևելյան կողմում զույգ ավանդատուն-

643. «ԱՍՀ», h. 3, էջ 554:
644. «Մշակ», 1901, N 90, էջ 2:
645. «ԺԷԳ», էջ 691:
646. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 388-389: «ԺԷԳ», էջ 867-868: «Ցուցակ Ձեռագրաց» h. Ա, Երևան, 1965, ձեռ. N 3542:
647. «ՑՁԲ», էջ 587, ձեռ. N 7687:
648. Նույն տեղում, էջ 769-770, ձեռ. N 8549:
649. «ՑՁԱ», ձեռ. N 337:
650. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 312:



***ԵՆԻՔԵՆԴ (ՊԱՊԱՋԱՆ). եկեղեցու և մատուռի ավերակները***

րով, միանավ բազիլիկ, հավանաբար թաղածածկ: Շինությունից փոքրիշատե կանգուն էր հյուսիսարևելյան ավանդատունը: Հարավային ճակատում նկատվում էին մուտքի սրբատաշ անկյունաքարերը: Մնացած մասերը ծածկված էին հողով: Կառուցված է եղել անտաշ քարով ու կրաշաղախով: Եկեղեցուց քիչ ներքև նկատվում էին մատուռի հիմնապատերը, իսկ հարավ-արևմուտքում՝ բլրալան-



***ԵՆԻՔԵՆԴ (ՊԱՊԱԶԱՆ). գերեզմանոցն ու պահպանված մի քանի տապանաքարեր***

ջին, տարածվում էր ընդարձակ գերեզմանոցը, որտեղ կային արձանագրված, խաչապատկերներով ու կենցաղային բնույթի պատկերաքանդակներով տապանաքարեր: Վերջիններս տեղահանված էին և կոտրված:

Տապանաքար. եռատված, (միջնաքարը չգտնվեց), հարդարված կենցաղային քանդակներով, մնացել է 2 տող.

*Ես Վ(ար)դ ... կի ս(ուր)բ խա(չս) որ.., եղբ(աւր) իմոյ... | ՌԼՉ (1587):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքարի բեկոր. 5 տող.

*Ա(ստուա)ծ | ող[որմի] | Միր[զա]|ճա|[ն]ին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

Տապանաքար. պարզունակ խաչապատկերից ներքև անվարժ գրչությամբ փորագրված է 3 տող.

*[Ա]ղ|աճա[նին](՞) | ՋԾԵ (1506) թ(վին):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. անձնանունն ընթերցվում է վերապահումով:





***ԵՆԻՔԵՆԴ (ՊԱՊԱՋԱՆ). արձանագիր տապանաքարի բեկոր և խաչազարդ տապանաքար գերեզմանոցում (1506 թ.)***

## ՋԱՀՄԵՏՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս՝ Ջագիր (Ճկեր) գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1400-1450 մ բարձրության վրա:

Բնակավայրը գոյացել է Ի դարի սկզբներին՝ 1770-ական թվականներից հայաթափ գյուղատեղիում: Պատմական անունը մոռացության է մատնված:

1979 թ. զուտ թրքաբնակ գյուղը ունեցել է 867 բնակիչ[651]:

## ՋԱՄԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 33 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախնջի գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1430-1550 մ բարձրության վրա:

Բնակավայրը հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները: Վերստին բնակեցվել է Ի դարի սկզբներին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերով:

## ԷՄԻՐ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1480-1580 մ բարձրության վրա՝ հարավարևմտահայաց լեռնալանջին, Մեծ Ղարամուրատ, Կարկառ և Հերիքնազ պատմական գյուղերի միջակայքում:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ 1770-ական թվականներից հայաթափ և պատմական անունն էլ մոռացության մատնված գյուղատեղիում:

## ԷՅՐԻՎԱՆՔ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ-արևմուտք՝ Ինեքրողան գետի երկու ափերին, խոր ձորի մեջ, ծովի մակերևույթից 1290-1410 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին՝ 1770-ական թվականներից ի վեր հայաթափ գյուղատեղիում: Էյրիվանք անվանումը ծագում է





***ԷՅՐԻՎԱՆՔ. գյուղի ընդհանուր տեսքը և կիսավեր եկեղեցին (լուս.՝ Ռ. Աբգարյանի)***

մոտակայքում գտնվող միջնադարյան վանքի և թուրքերեն՝ *էյրի* (թեք, ծուռ) բառերի միաձուլումից, այսինքն՝ Ծուռվանք կամ Թեքվանք:

651. «ԱՍՀ», հ. 4, էջ 330:

Գյուղի հարավային եզրին մինչև 1988 թ. պահպանվում էր միանավ քաղածածկ հորինվածքով անանուն կիսավեր եկեղեցի՝ կառուցված անմշակ քարով, կրաշաղախով: Թե՛ եկեղեցու և թե՛ գյուղի պատմական անունները մեզ չեն հասել:

## ԻՆԵՔԲՈՂԱՆ (ԿՈՎԱԽԵՂԴ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 16 կմ արևելք՝ Ինեքբողան գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1230-1360 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի ներկայիս անվանումը ծագում է պատմական Կովախեղդ տեղանվան թուրքերեն բառացի թարգմանությունից (կով՝ ինեք և բողան՝ խեղդել): Կովախեղդից էր Անանիա Մոկացի կաթողիկոսի (946-968) Խաչենում գումարած եկեղեցական ժողովի մասնակիցներից մեկը՝ «Հայր Պետրոս՝ Կովախեղդի վանական»-ը[652]:

Գյուղի ողջ տարածքում պահպանված հնամենի բազմաթիվ շինությունների մնացորդները վկայում են միջնադարում այս բնակավայրի ծաղկուն ու բարգավաճ լինելը: Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները: Մի քանի տասնամյակ խաչնարած ցեղերը անբնակ գյուղատեղին գործածել են իբրև ամառանոց, իսկ ԺԹ դարի վերջերին հիմնել են գյուղը:

1908 թ. Ինեքբողանն ունեցել է 199[653], 1914-ին՝ 144[654], 1979-ին՝ 1444 բնակիչ[655]:

## ԼԵՇՔԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ երկրամասի հայկական պատմական բնակավայրեր Փոքր-Ղարամուրատից 2 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 1340-1400 մ բարձրության վրա:

Գյուղամիջի անհայտ շինությունների ցրիվ մնացորդները վկայում են առնվազն միջնադարում տեղում հայաբնակ գյուղի գոյության մասին: 1770-ական թվականներին՝ գյուղի հայաթափումից հետո, մոռացության է մատնվել նաև բնակավայրի պատմական անվանումը: Ամայի գյուղատեղիում թուրք խաշնարած ցեղերը մշտական բնակություն էին հաստատել ԺԹ դարավերջին:

1908 թ. ունեցել է 267[656], 1914-ին՝ 308 բնակիչ[657]:

## ԽԱՐԽԱՐ (ԱԼԵՔՍԵԵՎԿԱ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս, Շամխոր-Գետաբեկ մայրուղու աջ եզրին, ծովի մակերևույթից 1450-1550 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղամիջի հին շինությունների մնացորդները վկայում են, որ ԺԹ դարավերջին ռուս վերաբնակիչների հաստատումից շատ առաջ տեղում եղել է հայաբնակ գյուղ: Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Մոռացության է մատնվել նաև բնակավայրի հայկական անվանումը:

**Բնակչություն.** ռուս վերաբնակիչները, որոնք 1908 թ. կազմել են 199[658], իսկ 1914-ին՝ 421 բնակիչ[659], գյուղը կոչել են Ալեքսեևկա: Ի դեպ, 1905 թ. գյուղն ունեցել է նաև 5 տուն հայ բնակիչ[660]:

Խորհրդային տարիներին գյուղը վերանվանվել է Խարխար, վերածվել թրքաբնակ գյուղի:

1986 թ. ունեցել է 1187 բնակիչ[661]:

## ԿՈՄԻՆՏԵՐՆ (ՄՈԼԼԱԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 1480-1580 մ բարձրության վրա:

**Խունիսավանք.** գտնվում էր գյուղի հարավային կողմում. «Հիմնուած է Նոր-Գետաբակի արևելեան հանդէպ, Գետաբակ անուն վտակի ձախ կողմում, որին մօտ է Մօլլալու թրքաբնակ գիւղն: Փոքր վանքս ունի կաթուղիկէ և գեղեցիկ շինութիւն. բայց այժմ անմարդաբնակ»[662] է, վկայել է ականատեսը 1890-ական թվականների սկզբներին:

## ԿՈՒՄԼՈՒ

Գրեթե կից է շրջկենտրոնին հյուսիսարևելյան կողմից: Գտնվում է Շամքոր գետի ձախ վտակ Գետաբակի ձախ կողմում՝ ծովի մակերևույթից 1390-1460 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին՝ հայաթափ հին գյուղատեղիում :

1908 թ. ունեցել է 441[663], 1914-ին՝ 589[664], 1977-ին՝ 1022 բնակիչ[665]:

## ԿՈՒՄԼՈՒ ԱՇԱՂԻ (ՆԵՐՔԻՆ)

Գտնվում է շրջկենտրոնից 2 կմ հյուսիս-արևելք՝ Կումլու գյուղի դեմ հանդիման ձորակի հարավահայաց լանջին, ծովի մակերևույթից 1320-1370 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՀԱՋԻԱԼԵՔՊԵՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից արևմուտք, միավորված է Գարգառ (Կարկառ) գյուղական խորհրդի հետ:

652. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», «Արարատ», 1897, էջ 134:
653. “Кавказский календарь на 1910 г.”, с. 261.
654. “Кавказский календарь на 1915 г.”, с. 128.
655. «ԱՍՀ», հ. 4, էջ 452:
656. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 310.
657. “Кавказский календарь на 1915 г.”, с. 152.
658. “Кавказский календарь на 1910 г.”, с. 178.
659. Նույն տեղում, էջ 86:
660. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 378:
661. «ԱՍՀ», h. 10, էջ 59:
662. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 314:
663. “Кавказский календарь на 1910 г.”, с. 230.
664. “Кавказский календарь на 1915 г.”, с. 113.
665. «ԱՍՀ», h. 3, էջ 272:

Թրքաբնակ գյուղը գոյացել է հայաքափ հին գյուղատեղիում Ի դարի սկզբներին:

1914 թ. ունեցել է 143 բնակիչ[666]:

## ՀԱՋԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ արևմուտք՝ պատմական Մեծ Ղարամուրատ գյուղից 2 կմ արևելք՝ արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1290-1400 մ բարձրության վրա:

Պատմական անունը մոռացության է մատնվել: Հայաքափ է եղել 1770-ական թվականներին: Մինչև ԺԹ դարավերջ գյուղատեղին խաշնարած թուրք ցեղերն օգտագործել են իբրև ամառանոց, այնուհետ, մշտական բնակություն հաստատելով՝ հիմնել ներկայիս թրքաբնակ գյուղը:

1986 թ. ունեցել է 576 բնակիչ[667]:

## ՀԵՅԴԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ Շաքարբեկ գետի աջակողմյան վտակի ակունքի շրջանում՝ Ղոզղարալի լեռան հարավային ստորոտում, ծովի մակերևույթից 1710-1780 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ փոքրիկ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ հայաքափ գյուղատեղիում:

## ՀԵՐԻՔՆԱՁ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ Ղարամուրատ գետի աջ վտակի ակունքի շրջանում՝ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1570-1660 մ բարձրության վրա:

Մինչև 1770-ական թվականները եղել է հայաբնակ: Ի դարասկզբին բնակեցվել է նստակեցության անցած խաշնարած թուրքերով:

1914 թ. ունեցել է 173 շունչ[668]:

## ՂԱՐԱԲՈՒԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս՝ Ինեքբողան գետի ձախ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1240-1290 մ բարձրության վրա:

Տարածքում պահպանված հին շինությունների մնացորդները վկայում են մինչև 1770-ական թվականները այս գյուղի հայաբնակ լինելը: Նստակեցության անցած խաշնարած թուրքերով բնակեցված գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ՂԱՐԱԴԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 1540-1660 մ բարձրության վրա՝ հարավարևելահայաց ձորալանջին, Գետաբեկ-Շամխոր մայրուղու ձախ կողմում:

Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականների վերջերը, որից հետո խաշնարած ցեղերի կողմից օգտագործվել որպես ամառանոց: Ի դարասկզբին նստակեցության անցնելով՝ վերջիններս հիմնել են ներկայիս գյուղը:

1914 թ. ունեցել է 40 բնակիչ[669]:

## ՂԱՐԱՄԱՄԵԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք, Ինեքբողան գետի աջ կողմում, ծովի մակերևույթից 1240-1310 մ բարձրության վրա, պատմական Մեծ Ղարամուրատ երբեմնի հայահոծ գյուղից 2 կմ հյուսիս:

Հայաքափ է եղել 1770-ական թվականներին և խաշնարած թուրք ցեղերի կողմից մինչև ԺԹ դարավերջ օգտագործվել իբրև ամառանոց: Ի դարասկզբին նստակեցության անցնելով՝ վերջիններս հիմնել են ներկայիս գյուղը:

1914 թ. ունեցել է 148[670], 1977-ին՝ 770 բնակիչ[671]:

## ՂԱՐԱՎՈՒԼՏՈՄԲԱ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1480-1530 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին հայաքափ հին գյուղատեղիում:

## ՂԱՐԸՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 4,5 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1590-1640 մ բարձրության վրա, հարավահայաց լեռնալանջին:

Գոյացել է խորհրդային տարիներին հայաքափ հին գյողատեղիում:

## ՂՈՇԱԲՈՒԼԱՂ (ԿՈՐԽ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս՝ Ղղարակ (Բաղա) գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1220-1350 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայաքափ է եղել 1770-ական թվականներին: Բնակիչները փոխադրվել ու հաստատվել են Շուլավերում: Բանահավաք Ս. Քամալյանից բացի, տեղագիր հեղինակներից և ոչ մեկը երբեէ չի այցելել հինավուրց գյուղատեղին: Ուստի Կորխին վերաբերող և առանձնակի արժեք ունեցող նրա գրառումները ներկայացնում ենք ամբողջությամբ. «*Աղիզանց բակերի*, քանդ ու քար տների գլխով դեպ հարավ արևելք բարձրացանք սարալանջերով, արտերի միջով ու ձորի ափն ի վեր գնալով հասանք *Կորխ* շէնատեղը, որի ժողովրդի

666. "Кавказский календарь на 1915 г.", с. 106.
667. «ԱՍՀ», h. 10, էջ 155:
668. "Кавказский календарь на 1915 г.", с. 213.
669. Նույն տեղում, էջ 134:
670. Նույն տեղում, էջ 135:
671. «ԱՍՀ», h. 3, էջ 63:

մնացորդները *Շուլավեր* են: Շենատեղում 8-10 թուրք ընտանիք են իրանց տավարներով: *Կորխը Օբուզ դարաի* կամ *Ըյրիզլուի* (լեռան) դեմուղեմի, շենատեղը զառիվայր է և նայում է արևելահարավ, ընդարձակ, փառավոր հանգստարան կա սիրուն տապանաքարեր, բայց վրի գրությունները եղծված: Ջուղադարով կալվածատերը իրա տավարին աղ է տալիս այդ շիրմաքարերի վրա: 100 տարուց ավելի նրա տավարի համար խոնչայի քարի տեղ են ծառայել հիանալի քանդակներով ծածկված տապանաքարերը, որոնց մնացորդներից այսքան կարացի հասկանալ...»[672]: Ստորև բերում ենք դրանք.

Խաչքար. «սրա գրութեան մեծ մասը եղծված է».

*Կողակցին իմոյ պարոն Մա... թվ. ՌԻԳ (1574):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 14:

Տապանաքար. «նույն կերպ նկարներով. գրերը եղծված».

*Թվ ՌԼ (1581):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 14:

Տապանաքար. «նույն կերպ նկարներ գրութիւնից կարդացվում է».

*Այս.... բարեխօս Երքոմին թվ. ՌԼ (1581):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 14:

Տապանաքար. «նույն կերպ նկարներ, վրեն այս գրութիւնը».

*Ես Մելիք Ճալալս իմ կողակից Խամփարս կ(ա)նկնեցինք ս(ուր)բ խաչս բարեխօս որդուն մերոյ Թամուր խանին, թվ. ՌԼԲ (1583):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 14:

Տապանաքար. «փոքր ձիավոր շիրիմ նկարներով՝ թամբած ձի, մարդ, կանայք».

*Ես Մելիք Ճալալս կամովն Ա(ստուծո)յ կ(ա)նկնեցի ս(ուր)բ խաչս բարեխօս որդին իմ Ամի....:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 14:

Խաչքար. «Շենը մտնող ճամբի կողքին հաստատուն պատվանդանի մեջ ցցված դեռ կային երկու հրաշակերտ խաչքար, հազիվ սրանք անվնաս են մնացել՝ նախ՝ որովհետև բարձր են ու տավարին անմատչելի, երկրորդ՝ որովհետև սիրուն և հրաշալի արդիւնքներն են անցեալ դարու ճարտարապետական քանդակագործութեան: Դանակի ծայրով մամուռը մաքրելով կարդացի առաջնի վրա հետևեալը».

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է տէր Յակոբին, Բեկում աղին, տէր Յակոբս դնել ս(ուր)բ խաչս, կանգնեցինք թվ. ՌՉԳ (1634):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 13-14:

Խաչքար. նախորդի մոտ.

*Ս(ուր)բ խաչս բարեխաւս պարոն տէր Յովանի պ... իւր հայր Դաւիք քահանայն ծնողացն Շիրազին, տեր Յ(ա)կ(ո)բին, Միրզա եղեայ կազմողին Թվ. ՌՉԳ (1634):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 14:

Ծանոթ. «Խաչքարերի բարձրութիւնը 3 արշին, քարի գույնը սպիտակ է, բերած Ղարաուլ Թափաից: Սրանց մոտիկ նկատելի են որմեր, քարերի տերբուկ. երևի հանգստարանի մատուռն է եղած»:

Հենվելով տապանագրերի և տեղացիների շրջանում սերնդեսերունդ փոխանցված ավանդազրույցի վրա՝ Քամալյանը նշել է. «Այսչափ հանգստարանի մասին: Ուրեմն *Կորխի* նշանավոր մելիքը և իշխանը Ճալալն է եղել, որին ժողովուրդը կոչելիս է եղել Աղ մելիք, երևի սիպտակ դեմք ունենալու հետի: Ըստ ավանդութեան այս Ճալալը շատ հարուստ ու հուչակավոր մարդ է եղել: *Լղարակեցիք* պատմում էին. դա այնպիսի վարնորդ է եղել, որ դրա տանից 7 գութան է լծվել, լծկանները 7 առանձին գույների: Այս հանգամանքը գեղացիք վերագրում են Հորմաթ օղլունց օջաղին: Երևի մելիք Ճալալի օջաղի անունը Հորմաթ օղլունց էր: Նրա տավարի արոտատեղը *Փալտոու (Կաղնուտ)* սարն է եղել իրա փռված փեշերով: Ասում են՝ նրա տավարն այնքան շատ է եղել, որ ավելորդ համարելով շենամեջ բերելը, մելիքը գունգերք է շինել տվել, որոնց միջով սարի գլխին կքված կաթը եկել է մինչև իրա տան դուռը: Այստեղ են սկսել հարոցը և մերոցը: Ցույց էին տալիս գետնի տակ թաղված գունգերը: Աղ մելիքի մասին փորձ արի, բայց բացի նրա աղետալի վախճանը, ավանդութիւնը ավելի չասեց:

Մի անգամ Աղ-մելիքը նստած է լինում *Մմրքլուի* սարի մոտ *Քեոհնա Ղալաում* սուլթանի թե խանի հետ, պարզ չեն հիշում ինձ ավանդութիւն հաղորդողները: Այդ միջոցին Պարսկաստանից նշանավոր անձ է ներկայանում ու իրանց հավատակիցը, թողած, սխալմունքով առաջ գլուխ է խոնարհեցնում Աղ-մելիքին: Երբ այն առիթով սուլթանը թե խանը նկատողութիւնն է անում դեսպանին, թե ընչի՞ ինձ թողած նրան առաջ ողջույն տվիր, իբրև դեսպանը ներողութիւն է խնդրում իրա սխալմունքի համար, հետո ավելացնում. -իմ տեղ ով էլ լիներ անծանոթ, մելիքի փառավոր պատկերը թողած ամենին ձեզ նախամեծար չէր համարել, լավ կանեք մի անգամ նրա մոտ չնստեք դեսպան ընդունելեն: Այս դեպքից հետ երկար չի քաշում, Մելիք Ճալալը թունավորվել է խարդախ, նախանձոտ սուլթանից ու մահացել: Նրա շիրմի տեղը ոչ ոք չէր իմանում: Ժողովրդի կարծիքով Աղ-մելիքի հետ նստած մարդը եղել է Ալլահյար սուլթանը, այսինքն Մամարզաբեկի հայրը Ջուղադարովների մեծը: Մամարզաբեկը Մամադի հայրն էր եղել, իսկ Մամադ բեկը այժմեան Ալլահյար բեկի հայրն էր»[673]:

Ամառանոցի վերածված Կորխ գյուղատեղիի տարածքում խաչնարած թուրք ցեղերը, նստակեցության անցնելով, ԺԹ դարավերջին հիմնում են ներկայիս գյուղը:

1977 թ. ունեցել է 1636 բնակիչ[674]:

**Ազիզանք (Ջաղա) գյուղատեղի.** գտնվում է Կորխ գյուղից 3 կմ հյուսիս-արևելք: Հայաքափ է եղել 1770-ական թվականներին, և, ինչպես նշել է

672. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 13-14:

673. Նույն տեղում, թ. 14-15:

674. «ԱՍՀ», հ. 3, էջ 221:

հնավայրը հետազոտած Ս. Քամալյանը, գյուղի բնակիչները հաստատվել էին Շուլավերում. «Ձիաները նստեցինք, *Օջաղ դույի* բնատեղից դեպ արևելք ճամբեն գնում էր *Ազիզանց գեղատեղի* վրա, որ ավերակ է, բակեր ունի և մոտն էլ հանգստարան դեպի հանքը գնացող ճամբի ձախ կողմ. խաչքարեր կան, 1. քանդակները ջարդած, գրերը ավրած, 2. ճերմակ ընտիր քարից խաչքար կոտրտած վայրենիների ձեռքով»[675].

Խաչքար. «...ահագին խաչքար ընկած պատվանդանից, գրածից կարդացվում է».

*Պարոն Միրզէս կանգնեցի բարեխոս իմ հ(օ)րն ու մօրս, թվ. ՌԻԱ (1572):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 12:

Խաչքար. «...հանգստարանի կենտրոնում իրար մոտ կան երկու ձիավոր, զանգումի քար, որոնց տերերը քանդակների հետ մաշվել են կամ վայրենի մարդիք ավրել են, մեկի վրա երևում է».

*Թվ. ՌԼ(1581). ս(ուր)բ խաչս բարեխ(օ)ս է մօրն իմոյ Խանին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 12:

Հետազոտողն այնուհետև շարունակում է. «*Ազզանց* գեղին թուրքերը *Ազիզլու* ևս ասում են, նույն տեղին հայերը *Ազազանձ գեղ*, իսկ թուրքերը *Զաղա* են ասում: *Շուլավեր* գաղթած Քալանթարի օջաղին ժողովուրդը *Ըզանք, Ըզանց* տուն է ասում, արդեոք սա կրճատումն չէ՞ *Ազիզանք* բառի: Նույն շուլավերցիք *Ազիզամեա* բառը կրճատած անիծելիս ասում են *Զամիա:* Գուցե *Շուլավերում* բնակվող Քալանթարանց նախնիք գաղթել են *Ազիզանց* կամ *Ազիզլու* գեղից: Գուցէ նրանց գերդաստանի մեջ եղել է Ազիզ անունով հզոր մեկը, ժողովրդի բերանում կա այս խոսքը՝ շեկ Ազիզի օջաղը...»[676]:

## ՂՈՒՌՈՒԴԵՐԵ

Գտնվում է շրջկենտրոնից 8,5 կմ հարավ-արևմուտք՝ Ղարամուրատ գետի աջ հարավարևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1400-1510 մ բարձրության վրա:

Գոյացել է 1770-ական թվականներից հայաբափ գյուղատեղիում՝ խորհրդային տարիներին:

## ՍԱԱՐԻՖ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս՝ Գետաբեկ-Շամխոր մայրուղու աջ կողմում, ծովի մակերևույթից 1510-1550 մ բարձրության վրա:

Գոյացել է Ի դարի սկզբին:

## ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ արևմուտք՝ համանուն գետի ձախ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1200-1270 մ բարձրության վրա:

675. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 12:
676. Նույն տեղում, թ. 13:



*ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. տեսքը հյուսիսից (Հարանց վանքի կողմից)*

**Պատմություն.** գյուղի մոտ պահպանված բրոնզեդարյան ամրոցի մնացորդները վկայում են, որ տարածքը բնակելի է եղել հնագույն ժամանակներից:

Պատմական առավել հարուստ անցյալ ունեցող գյուղերից էր, որ բարգավաճել էր մինչև իսկ գյուղաքաղաքի աստիճան: Առավել աչքի է ընկել ԺԶ-ԺԷ դարերում, երբ, բացի գյուղամիջի զույգ եկեղեցիներից, ունեցել է Կուսանաց և Հարանց վանքերը: ԺԸ դարի վերջին՝ վրաց Հերակլ Բ թագավորի օրոք, տեղի հայ բնակչությունը բռնի տեղահանվել է Շուլավեր (այժմ՝ Շահումյան ավանը Մառնեուլի շրջանում): Այլ վկայության համաձայն, բռնագաղթից խույս տված գյուղամբարցի և ղարամուրատցի շուրջ 25 տուն բնակիչները հիմնադրել էին Շամշադինի շրջանի Այգեձոր (Ղուլալի) գյուղը[677]: Հատկանշական է, որ բնակավայրի հայաթափումից նույնիսկ ավելի քան մեկ դար անց՝ 1890-ին ականատեսը նշել է. «...այս Ղարամուրադը իրոք քաղաք է եղել և ոչ սովորական շեն...»[678]:

677. **Գասպար Յ.**, Գիւղական աւանդութիւններ, «Նոր-Դար», 1889, N 50:
678. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 28: Ուշագրավ են 1890 թ. Մեծ Ղարամուրատ այցելած Ս. Քամալյանի հուշերը իր և ուղեկից Ծատուրի տպավորությունների ու զգացումների մասին. «...գետի ձախ ափին է վանքը ջրից մոտիկ: Ձիուց իջնելեն նկատեցի, որ Ծատուրը շտապ մոտեցավ վանքի պատը համբուրեց ջերմեռանդ սրտով ու օրհնելու փոխարեն անիծեց իրա պապերին այսպիսի դրախտային հողն ու ջուրը, այսպիսի փառաշեն հոյակապ ժամն ու վանքը անտեր թողած գնացել են այս ու այն սռի ու լեռան կրծքին բուն դրել: Ընչի՞, ասում էր, էս վանքը անժողովուրդ մնալով գոմեշ ու կով պատսպարե ու թրիքով ապականվի, իսկ լղարակեցիք, այսինքն Ղարամուրադի թոռները անժամ մնան: Ախր բա սրան մի ճար չբտի ըլե՞լ, վարժապետ ջան: Մորմոքված էր Ծատուրը, մեկ հայհոյում անիծում էր ժամն ու հողը անտեր թողող պապերին, մեկ էլ դառնում նախատում էր այրում բնակիչներին, որ անասունի պես են, Աստծու տան դադրը չեն իմանում, աղբով լցնում են: Ղարամուրադի շրջակայքի մասին հարցրի Ծատուրից: Այն սարը, որի ստորոտում շինած է գեղը, կոչվում է Թբլխի սար, դեպի աջ ծմակապատ սարը՝ Հասան Ալի, սրա հետևը Հազա-դայա է կոչվում մերձակա գլուխ սարը, սրանից արևմուտք՝ Գեոզ-ուրդ-գազաթը: Հասան Ալի ծմակից դեպ արևելք գտնվող սարը կոչվում է Դարվանդ: Դարվանդի ու Հասան Ալի սարերի արանքի ձորի և Հասան Ալի ու Թբլխի սարերի արանքի ձորից հոսող ջրերը միանում կազմում են Ղարամուրադի գետակը, վերջի վտակը կոչվում է Առղսան (թ. 28):



***ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. տեսքը հյուսիսից (Յարանց վանքի կողմից) և հայերեն հիշատակագրությամբ գորգ (1914 թ.) մի թուրք բնակչի տանը***





***ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. Մեծ (Սբ. Ամենափրկիչ) եկեղեցու մնացորդները (1980) և խաչքար՝ ագուցված եկեղեցու պահպանված հյուսիսարևելյան ավանդատան ներսում***

Մեծ Ղարամուրատում հանգրվան գտած խաչնարածները ակամա տիրացել են լայնարձակ հողատարածքների, որոնք մնացել են բնիկներից. «...Արևմուտք թեքվելով անցանք մի դարևանդից ու իջանք հովտի վրա, որի միջով սրընթաց անցնում էր *Ինաք-Բողան* գետակը: Այս գետակի ու հովտի նստվածքը-տարածութիւնը դարձեալ պատկանելիս է եղել ղարամուրաղցեցոց, ընդարձակ տափեր, առատ ջրեր մնացել են խոպան, բարբարոս այրումների ձեռին»[679]:

**Բնակչություն.** հայաթափ է եղել 1770-ականներին: Ինչպես ասվեց, բնակիչների մի մասը հաստատվել է Շուլավերում և հիմնել Ղարամուրատեցոց թաղը:

Մինչև ԺԹ դարի 2-րդ կեսը թուրքական խաշնարած այրում ցեղի համար հայաթափ գյուղատեղին ծառայել է որպես ամառանոց, ավելի ուշ մշտական բնակություն հաստատելով՝ վերածել են գյուղի:

Տեղի բնակիչների ծագումնաբանության մասին հետաքրքիր եզրահանգումներ ունի Հ. Վարդանյանը. «Գարամուրադ գիւղի թուրքերը հանդիսանում են հայ իշխանական ցեղից սերվող Ղարամուրադի սերունդը»[680]:

Հայտնի է, որ 1886 թ. գյուղական հասարակությունը (ներառյալ այրումաբնակ կից գյուղերը) ունեցել է 326 տուն՝ 2176 շունչ (1296 ար., 880 իգ.)[681], իսկ միայն Մեծ (թուրք՝ Բեյուկ) Ղարամուրատը 1908-ին՝ 205[682], իսկ 1914 թ.՝ 395 բնակիչ[683]:

**Սբ. Ամենափրկիչ (Մեծ) եկեղեցի.** Մեծ Ղարամուրատն իբրև բազմամարդ գյուղ՝ ունեցել է մի քանի եկեղեցի: Դեռևս 1890-ական թվականներին կանգուն կամ կիսավեր այդ կառույցներն ականատեսները հիացմունքով են նկարագրել: 1890 թ., օրինակ, այցելուն նշել է. «...Ղարամուրադի եկեղեցու մեծության ու փառահեղության մասին լսել էի Շուլավերի ծերերից, այժմ աչքով տեսնելով մնացի հիացած: Մեծածախս փառավոր շենք է, տեսքը ներսից առավել հոյակապ է քան թե դրսից, արտաքուստ ցածր շենք է երևում, որովհետև սրբատաշ պատերի ներքևի մասը հողում թաղված է: Դուռը ահավրալից դարի ոգու համեմատ փոքր է, բայց ներս մտնելով աչքի առջև բացվում է ահագին տաճարի շենքը՝ 6 հաղթանդամ, սիրուն քանդակած, խաչերով ծածկված սներով: Սներ՝ ամրակուռ, հաստատ սներ, բարձրակառույց կամարները պահում են անխախտ իրանց գլխին 3-4 տխուր, ավերիչ դարերից

679. Նույն տեղում, թ. 33:

680. **Վարդանյան Հ.**, նշվ. հոդվ., էջ 2: Հեղինակը, հավանաբար, նկատի ունի 1610 թ. «Հայսմավուրքի» անթվակիր հիշատակարանում հիշվող Ղարա Մուրատին:

681. “Свод...”, с. 76-77.

682. “Кавказский календарь на 1910 г.”, с. 204.

683. “Кавказский календарь на 1915 г.”, с. 99.

ի վեր»[684]: Այնուհետև ցավով ու կսկիծով ավելացնում է. «Ղարամուրադի այժմեան այրում բնակիչները զարնան սկզբից մինչև աշունքը ճաշվա շոգերին տավարը լցնում են վանքի ներսը, որի հետևանքով գոյացել էր անտանելի կեղտ: Թրիքի ծով էր ներսը, մի կերպ հասա սեղանի մոտ: Պատերի ստորին մասերը ներսից այն աստիճան խոնավ են, որ ջուրը կաթ կաթ ծլծլում է բաղանիքի պատերի նման, իսկ ավազանը բոլորովին թաց էր: Սեղանի վրա ոչինչ չէր մնացել, ամեն ինչ պոկած, պլոկած, բեմի վրա միայն անշարժ ձգված կար երկար տաշած քարը, ձախ կողմի խորանի մեջ պատերում ներքև շարած էին խաչքարեր սիրուն քանդակներով, ուղղահայաց կամ հորիզոնական տեսքով դարսած, 3 արշին երկնուց ունեցող խաչքարեր կային պատի մեջ խորանի ներսը: Շատերի վրա գիր չէր նկատվում...: Հարավից սույն տաճարին կպած է փոքր ժամ, ուր կա մկրտութեան ավազան, սեղան, բեմ...: Պատերի մնացած հետքերից ակներև է, որ այս եկեղեցիքը պարսպապատ են եղել: Մեծ տաճարի ծածկը ամբողջ մնում էր չնայելով հողի սահագին շերտին, պոկած էին սեղանի ծածկի մի քանի քարերը, որտեղից անձրևը թափվում էր ներս»[685]:

Եկեղեցու ճարտարապետությամբ հիանալու առիթն ունեցել է նաև եպիսկոպոս Բարխուտարյանցը, որն իր հերթին գրել է. «...խիստ ընդարձակ, հոյակապ, կանգուն...: Վեց սիւների վերայ շինուած է մեծ եկեղեցին, որի մէջ մնում են վէմ և սեղան քարերն...»[686]:

Հարկ է նշել, որ գյուղում ստեղծված ձեռագրերը վկայում են, որ 1634 թ-ից առաջ էլ Մեծ Ղարամուրատում եկեղեցի է եղել: Ուստի վերը նկարագրված եկեղեցին, ամենայն հավանականությամբ, կառուցվել է ավելի հին, գուցե 1634 թ. դրությամբ ավեր վիճակում գտնված եկեղեցու տեղում:

Եկեղեցու որմերի վիմագրերից տեղագիր հեղինակներին հաջողվել է վերծանել հետևյալը.

Եկեղեցի. խորանի ճակատին եղել է.

*Շինեցաւ ս(ուր)բ տաճարս ձեռամբ անարժան ջուղայեցի ուստա Մուսէսին որդի Եռկարին, զաւակ՝ Սողոմոնին հր(ա)մ(ա)ն(ա)ւ Փիլիպոս կ(ա)թ(ու)ղիկոսին եկի շինեցի սուր(բ) եկեղեցիս Ղարամուրադին հայոց թվին ՌՁԳ (1634) ին, ով որ կարդաք ողորմի Մոսէի յիշեցէք ի Տ(է)ր Ա(ստուա)ծ, ձեզ յիշէ ամէն:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 30:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 326: «Դիվան...», V, էջ 273:

Ծանոթ. Քամալյանը նշել է, թե «Կողքին նկարած է փակագիրը, փրկչական 1634 թ.»:

Եկեղեցի. «Խորանի դրսից դեպի սեղանը, պատի վրա երկար գրութիւն կար, որի վերևի տողերը մթութեան և հեռու լինելու հետի կարդալու հնար չեղավ, կարդացածս սա է» (ըստ՝ Քամալյանցի) և «Ձախ փոքր խորանի ճակատին» (ըստ՝ Բարխուտարյանցի).

*Թվին ՌՁԴ էր (1635) ... և եկեղեցի Սառիկն և հայր Վելիճանն և որդին Ղարա մուրադն, Ղուկասն և դուստրն իւր Գուլաղեն, Զաքարի հայրն՝ Վելիջան, կողակիցն իւր՝ Գուլղանէն, որդին իւր՝ Աջամն, Հ(ա)խն(ա)զ(ա)րն, Ովանէսն յիշեցէք և Ա(ստուա)ծ ողորմի ասէք:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 29:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 326: «Դիվան...», V, էջ 273:

Եկեղեցի. նախորդից փոքր-ինչ ներքև՝ նույն պատի վրա եղել է.

*Ս(ուր)բ սեղանի քարն յիշատակ է ըՌստիմին, իւր եղբայր՝ Էվազին, Պարոնին, իրենց մայր՝ Խաթունին, թվ. ՌՁԴ (1635):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 29:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 326: «Դիվան...», V, էջ 273:

Եկեղեցի. «Սեղանի աջ պատի վրա».

*Շինեցի ս(ուր)բ տաճարս յիշատակ Ղուկասին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 29:

Խաչքար. ագուցված եկեղեցու ներսում.

*Միրզա կազմող:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 29:

Եկեղեցի. «Տաճարի դրսից հարավային պատի լուսամուտի խաչքարին».

*Ս(ուր)բ խաչս բարեխօս աղային ... Հանէսին, Շահզադին»:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 30:

---

684. Եկեղեցին անասնագոմի վերածելու մասին Ս. Քամալյանը նշել է. «Մի քանի ժողովված տեղական այրումների մեջ գտնվում էր մի պառավ, երբ ես հանդիմանել սկսեցի նրանց տաճարը թրիքով, կեղտով լցնելու մասին, պառավն առաջ եկավ և ինքնովին մի խոստովանք ասեց. -աղա, իհարկե աստծու տուն է, ինչ անենք որ հայերն են շինել: Դու էլ գիտես, աղա, որ աստվածավախ աղքատ մարդիկ էտ դալաքը չեն անելու իրանց տավարը եկեղեցու մեջ քշել: Էսպես անողը առաջինը էս մեծ տան տերն էր, անհուն հարստութիւն ուներ և բազմաթիվ որդկերանց տեր էր: Խաբարը գնաց պրիստավին, որ մի հայ մարդ էր, եկավ մտիկ արեց թե քիլիսան ինչ հալի մեջ է: Խալքը հավատացած էր, որ պրիստավը դամշով հարուստին կջարդի որ էդպես անիրավ բան ա արել, բայց նա պատիժը բողեց քիլիսուն: Տարեց տարի մեկ էլ էն տեսար որ կոտորվեցին նրա տնեցիք, իրա մեռնելուց հետո տունն ու տեղը անտեր մնացին: Եվ իրավ այդպես էր ինչպես պառավը պատմեց, երբ մոտեցա հարուստ այրումի տան սահագին սրահին նկատեցի երբեմնի փառավոր տունը կեղտի ու թրքի մեջ կորած մինչև վերի անկիւնը, ավելի վատթար դրութեան մեջ քան տաճարի ներսը: Սակայն ներկա այրումները չուզեցին խոստովանել, որ տաճարի ներսը ապականելու մեջ իրանք էլ մաս ունեն: Քանիցս աշխատում էին միամիտ պառավին խանգարել ընդհատելով, որ հայի տաճարի զորութիւնը չփառաբանի: Բայց պառավը ոչ միայն նրանց սաստին չլսեց, այլ խնդրեց ինձ, որ գնամ անպատճառ սիրուն վանքն էլ տեսնեմ...» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 30-31):

685. Նույն տեղում, թ. 29:

686. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308-309:

Խաչքար. ագուցված եկեղեցու խորանում, քիվին և քիվատակին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բար(էխաւս) Խաթունին, | թվ(ին) ՌԿԷ (1618):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 272:

*Գրչօջախ.* Սբ. Ամենափրկիչ եկեղեցին ունեցել է իր գրատունը, որը համալրվել է ինչպես տեղում ստեղծված, այնպես էլ նվիրաբերված ձեռագրերով: Հայտնի է, օրինակ, որ 1610 թ. ոմն Աղաբաբի պատվերով տեղում ձեռագիր են ընդօրինակել Դավիթ Գեղամեցին և Հովասափ երեցը. «Գրեցաւ ձեռամբ մեղաւոր և տխմար գրչի Դաւիթ սուտանուն եպիսկոպոսի և անարժան Յովասափ երիցոյ, ի թուականիս Հայոց ՌԾ և Թ (1610), ի երկիրն Զակամայ, ի գեղն Ղարամուրատոյ...»[687]: Հիշվում են նաև գյուղի Սարգիս և Ստեփանոս ավագ երեցները. «Աստուած ողորմի ասացէք Սարգիս քահանային, որ աւաք էրէց էր Ղարամուրատ գեղիս, որ միջնորդ էր սկսման գրոյս, և ինքն փոխեցաւ առ Քրիստոս, և որդին իւր Ստեփանոս քահանայն, որ էր աւարտ գրոյս աւաք էրէց այսմ գեղջի, և այլ քահանայքն...»[688]:

Հայտնի է նաև, որ ձեռագրերից մեկը, օրինակ, գյուղի տանուտեր Առուստամն ու այլոք փրկագնել են և նվիրել եկեղեցուն. «Ես Զակամա երկրիս յախսախ Ալուղուլիս, ես՝ Ռստանս, Մեծ Ղարամուրատին տանուտէր Ըռըստումս, Ղարա Մուրատս, Ղազարս, Նաւասարդս, Ամիրպէկս, Աունի որդի Ամիրպէկս, գնացինք աւիղայ, կացանք զիրանքս անաւրինաց ձեռացն ազատեցինք, բերինք: Մեք Ղարամուրատի ճումուխաթս գեղովի Ը (8) թուման տվինք ազատեցինք, Ս. Ամենափրկիչին վախմ արինք»[689]:

Այլ ձեռագիր՝ «Մաշտոց Ձեռացը», հեղինակել է Ղուկաս երեցը 1682 թ.[690]:

**Փոքր եկեղեցի.** «Տաճարի քամակին դեպի հյուսիս 20-25 քայլ հեռու, խարխուլ և փլված տանիքով կանգնած է ուրիշ եկեղեցու սրբատաշ պատերը: Սրա դուռը արևմտյան կողմից է...»[691]: Կարելի է ենթադրել, թե սա 1610 թ. Հայսմավուրքում 2 անգամ հիշատակված պարոն Աղաբաբի կառուցած Սբ. Խորան անվամբ եկեղեցին է[692]: Հիմք ընդունելով ձեռագրում առկա վկայությունները՝ եկեղեցու կառուցման ժամանակաշրջանը որոշվում է 1605-1610 թթ.: Նախ Դավիթ Գեղամեցու չափածո հիշատակարանում շինարարության փաստն արձանագրված է հայոց բռնագաղթի (1605), թուրքերի դեմ Շահ-Աբաս Ա-ի տարած հաղթանակների և 1606 թ. սկսված սովի միջև ընկած ժամանակահատվածի դեպքերը նկարագրելիս.

«Ամէն երկրի խաներ ընտառն,
Եւ շինութեան սկիզբն արարան,
Շատ եկեղեցիք շինեցին,
Բազմաց խորհուրդն կատարեցան:
Մէկն Աղաբաբիս է բազմաց,
Իւր խաչին մօտ վիմէն փորեաց,
Ժամատեղով խորան շինեաց,
Ներքև վիմին զուգ ջրաղաց:
Երբ Օմարաց ազգն հատան,
Սոքա Չաքախ գեղն թողան,
Մեծ Ղարամուրատըն դարձան,
Ներքին շէնըն մընաց ու[ն]այն»[693]:

Ապա ստացող Աղաբաբի հիշատակարանում (1610) եկեղեցին հիշվում է օծված նորակառույց. «Յիշատակ է գիրքս Աղաբաբայ աղին, ի գիւղս Ղարամուրատ <գեղիս> և դուռն նորակնունք ս. Խորանիս: Մի ոք իշխեսցէ սբ. գրոյս ծախելոյ կամ գրաւելոյ և կամ գողանալոյ ի դրանէ և ի ժամատեղաց սորա, ոչ իմոց և ոչ աւտարաց»[694]:

Եկեղեցին ունի հետևյալ արձանագրությունը.

Եկեղեցի. «...բարապանի վրա գրած է».

*Շնորհիւ Ա(ստուծո)յ, ես Օհանէս վ(ա)րդ(ա)պ(ե)տս, որդի ապ(ա)շխ(ա)րողի շինեցի զեկեղեցիս, արդեամբ և տուիք ամ(ենայն) քրիստոնէից յիշատակ ինձ և ծնողացն իմոց և ամ(ենայն) աշխատողաց, ի մայրապետութեան անապատիս Թագուհւոյն և Կայինային, ի ՌՃԾ (1701) թվ.:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 30:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 326-327: «Դիվան...», V, էջ 273:

Ծանոթ. «շինեցի» բառի գործածումը՝ վերանորոգելու, վերաշինելու իմաստով, հաճախակի հանդիպում է նաև այլուստ:

**Կուսանաց անապատ.** գտնվում էր գյուղի «արևելեան հանդէպ, վտակի աջ կողմի հարթի վերայ, որի մօտ կայ հանգստարան և խուցերի աւերակ»:

Հայտնի է, որ Կուսանաց անապատը հիմնադրվել է Ամենայն հայոց Փիլիպպոս կաթողիկոսի գործուն մասնակցությամբ ու հովանավորությամբ. «Յիշատակ է Յայսմավուրքս ի դուռն Ղարամուրատու կուսանաց Ս. Աստուածածնին. զի ի յամին, որում թվական էր Հայոց ՌՁԵ (1636), սրբազան և երիցս երանեալ հայրապետն տէր Փիլիպպոսն ետուր զսա ի դուռն սբ. ու[խտ]իս և հաստատեաց զսա [եր]դմամբ և նզովինք, թէ որ[չափ] այս անապատս հաստատ լինի, ով որ հակառակութիւն անի և հեռացուցանէ՝ նզովեալ լիցի ի սբ. հայրապետաց, զի ինքն հայրն մեր վերոյ գրեալ սբ. հայրապետն

687. «ԺԷԱ», էջ 363:
688. Նույն տեղում:
689. «ԺԷԱ», էջ 364:
690. «ՑՁԲ», էջ 200, ձեռ. N 5868:
691. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 30: Գրեթե նույնպիսի նկարագրություն ունի Բարխուտարյանցը. «Խոնարհուած է փոքր եկեղեցու առաստաղն» (նշվ. աշխ., էջ 308-309):
692. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 4 մարտի 1995, էջ 6: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1952, յուլիս-սեպտեմբեր, էջ 426:
693. «ԺԷԱ», էջ 367-368:
694. Նշվ. աշխ., էջ 363:








***ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. Հարանց վանքի տեսքը՝ հյուսիս-արևելքից, արևելքից, հյուսիսից, հատված եկեղեցու հարավային ճակատից, հյուսիս-արևելքից և ներքին տեսքը դեպի արևելք***

խնամարկեալ հիմն արկեաց և հաստատեաց զանապատս աղջկանց և նախախնամեաց սպասուք և ամենայն զարդուք և կացոյց մայրապետ զՀռիփսիմէ կոյսն, պարկեշտ վ[ա]րուք և միաբանքն ևս նոյնպէս»[695]:

Բազմաթիվ նվիրատվությունների շնորհիվ Կուսանաց անապատն ունեցել է հարուստ գրադարան: Նվիրաբերված ձեռագրերից մեկը 1636 թ. «Շարակնոցն» էր, որի հիշատակարանում նշված է. «Յիշատակ է Շարակնոցս Ղարամուրատի աղջկանց անապատին, ի թվին ՌՁԵ (1636), յառաջնորդութեան Հռիփսիմէ և իւր սրբակրօն միաբանիցն»[696], մյուսը՝ 1671 թ. Վերին Ջակամի Սուլթանեցիք գյուղում ստեղծված ձեռագիր էր. «Ես Եւայս ստացայ զայս աւետարանս և ետու վախմ ի դուռն Ղարամուրատ Կուսանաց անապատի սուրբ Աստուածածնի»[697] և այլն:

Կոթող. «...մի երկար քարեայ սիւն, որ ընկած է գետնի վերայ, բայց կրում է խաչ նշան և հակիրճ արձանագրութիւն».

Սուրբ Սարգիս:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 327: «Դիվան...», V, էջ 273:

**Հարանց վանք (անապատ).** վանական համալիրը գտնվում է Մեծ Ղարամուրատ գյուղից մոտ 1 կմ

695. «ԺԷԲ», էջ 656: Ձեռագիրը պահվում է Մատենադարանում (N 1503):

696. Նույն տեղում, էջ 669:

697. **Բարխուտարեանց Մ.**, էջ 281-282: Ի դեպ, «Ավետարանը» ԺԹ դ. պահվում էր Բանանց գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, հետագայում տեղափոխվել է Երևան:



***ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. Հարանց վանքի զանգակատունը (վերջին երկու լուսանկարները՝ Հ. Զաքարյանի)***

հյուսիս-արևելք՝ երկու ձորակների միջև առանձնացած բլրի վրա:

*Տեղագրական.* 1890 թ. վանք այցելած Քամալյանը նշել է. «...*Դագիրման դաղի* գոգում երևում էր սիրուն կաթողիկե-գմբեթ, սիպտակ մաքուր քարից շինած: Այդ շենքին այրումներն իրանք վանք էին կոչում: Ում ասեք, այդ վայրենի տեղում ավերակների մեջ թափառողին կգրավեր կաթողիկեի հրապուրիչ տեսքը: Չին քշեցի դեպի *Դագիրմու դաղի* կողմը, ճամբին հանդիպում էի շիրիմների ու փլված տնատեղերի, անշուշտ *Շուլավեր* գաղթած մարդկանց բնակատեղերը: Այն տեղը, ուր ճամբին ձորից հոսող վճիտ առուի ձախ ափն է ընկնում, ծմակի բերանն է, այդ տեղից բարձրանալով ծմակն ավելի խտանում է, վայրի ծառերի տեղը բռնում են մրգատու ծառեր՝ նռնի, սերկևլի, տկողնի, տանձի, խնձորի, կակալի ևն: Չորի խորքում ծուխ էր մլում, մոտենալով մտանք խարխուլ պատերի մեջ, որոնք վաղեմի պարսպի մնացորդներ էին: Լայնարձակ պարսպի աջ կողմում կար ճահճանման լիճ, դա հին



***ՄԵԾ ԴԱՐԱՄՈՒՐԱՏ. Հարանց վանքի եկեղեցու որմերում և շուրջը պահպանված խաչքարերը (NN 1, 3, 9 լուսանկարները՝ Հ. Զաքարյանի)***



*ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. Հարանց վանքում Վարդանի և Գիզալի հիշատակին կերտված խաչքարերի արձանագիր հատվածները*

ճիթահանքի տեղն է: Եկեղեցին մեծ, ընդարձակ էր սրբատաշ քարից, ծածկն անվնաս, երկու դռներից մինը արևմտքից էր, միւսը հիւսիսից: Խաչքարեր շատ կան, բայց անգիր, գիր ունեցողը կարծես դիտմամբ վայրենու ձեռքով կոտրտած: Եկեղեցու հիւսիսակողմը կանգնած է սրբատաշ հրաշակերտ զանգակատուն, ճերմակ ու կարմրերակ քարից, սրա գմբեթն էր հեռվից երևին տվողը: Պատմում էին, որ մինչև մոտ ժամանակները, գլխի խաչը մնալիս է եղել, նույն վայրենի այրումները պոկել էին խաչը պատվանդանի հետ: Կոնաձև պատվանդանը թավալ ընկած էր մի կողմ: Զանգակատան բարձր խոյացող կատարը այժմ էլ բարեպաշտ սրտերը հրավիրում է դեպ ինքը, իսկ այդ զանգակատան ստորին հարկում 4 նրբակերտ սների մեջտեղ կանգնած մարդահասակից բարձր քարե խաչը ուղղակի հիացնում է տեսնողին: Խաչը միապաղաղ, միակտուր ճերմակ քարից է, զարմանալի մաքուր հղկած, սազդրած է գետնից 2 ոտ բարձր, շուրջը պատվանդան, նուրբ կերպով, քանդակված, որի նման հոյակապ, գեղեցկատեսիլ խաչ չեմ տեսել իմ այցելած հայկական ոչ մի ուխտատեղում...: Այդ սքանչելի ստեղծագործության մոտեցողը ոտները պետք է թաթախի բարբարոս այրումների անասունների կեղտուքրքի մեջ...»[698]:

Պակաս ուշագրավ չէ նաև Բարխուտարյանցի[699] վկայությունը. «Կառուցեալ է սրբատաշ քարով երկու սիւների վերայ սագաշէն, որ կանգուն է բոլորովին և որի երկարութիւնն 15 մետր 5 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 60 սանթիմ է: ...Վանքս իր հիւսիս-արևելեան անկիւնում ունի երյարկ զանգակատուն շինուած համակ սրբատաշ քարով: Թափուած են ինչպէս վանքիս տանեաց նոյնպէս և զանգատանս սալկապներն: Վերջնոյս գետնայարկում ատտիճանաւոր պատուանդանի վերայ հաստատուած մարդաչափ բարձրութեամբ մի քարեայ խաչ՝ յար և նման Յիսուս Քրիստոսի խաչափայտին»[700]:



*ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. Հարանց վանքի հատակագիծը*

*Եկեղեցի.* ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Երկթեք ծածկի տակ առնված քաղածծկ տանիքը ներքուստ պահում են մեկ զույգ քառակուսի կտրվածքով սյուներն ու որմնասյուները: Կիսաբո-

698. ԳԱԹ, **Մ. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 31:

699. Ի դեպ, Մ. Բարխուտարյանցը Հարանց վանքը նույնացրել է Ջակամ գավառին հարևան Միափոր գավառում (ներկայիս Գետիկ գետի ավազանը) գտնվող Խամշի վանքի հետ (տե՛ս նշվ. աշխ., էջ 309-310 ), որին ցարդ հետևել են բազմաթիվ հետազոտողներ (մենք ևս), մինչդեռ վերջինս, ինչպես ցույց է տրվում ներկա աշխատության մեջ, որևէ կապ չունի Միափոր գավառում գտնվող Խամշի վանքի հետ:

700. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 309-310:





**ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՑ. Հարանց վանքի զանգակատան բևավոր խաչքարը Սբ. էջմիածնում**

լորակ եզրագծով խորանի երկու կողմերում ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատներ են: Թաղակիր բոլոր կամարները սլաքաձև են: Մուտքերը բացվում են արևմտյան և հյուսիսային ճակատներից, լուսամուտները՝ արևելյան (3), հյուսիսային (2) և արևմտյան (1) ճակատներից: Եկեղեցին կառուցված է անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով: Սյուները, որմնասյուները, քաղակիր կամարներն ու անկյունաքարերը սրբատաշ են: Պատերի մեջ ագուցված են խաչքարեր, որոնց մի մասն արձանագիր է:

*Զանգակատուն.* եկեղեցուց մոտ 20 մ հյուսիս պահպանվել է երկհարկ զանգակատունը՝ կառուցված համակ սրբատաշ քարերով: Առաջին հարկը (արտաքին չափերն են՝ 4,0 x 4,0 մ, իսկ բարձրությունը՝ 9,3 մ) բաղկացած է սլաքաձև կամարներով իրար միացած չորս հաստահեղույս սյուներից, երկրորդ հարկը սյունազմբեթ է (ռոտոնդա), որի սրածայր վեղարը պահում են գլանաձև 8 սյուները:

*Այլ կառույցներ.* վանքն ունեցել է բնակելի և օժանդակ շինություններ, որոնք հավելվել են ԺԷ դարի կեսին՝ վանահայր Եղիա միայնակյացի ջանքերով. «...շատ շինութիւնս աւելացոյց ի յանապատին»[701]: Ունեցել է շրջապարիսպ, որի ներսում եղել է խաչքարերով ընդարձակ գերեզմանոց: Դրանք մեր առաջին այցելության ժամանակ (1980) արդեն ավերված էին: Վանքի տարածքը մի ղարամուրատցի թուրք հերկել էր ու այդ ընթացքում բոլոր խաչքարերն ու տապանաքարերը՝ որպես յուրացված խոպանի անպետք մաս, կոտրատել, տեղահանել, հավաքել ու շարել էր հողամասի նոր շրջապարսպին:

*Հարանց անապատը՝ գրչօջախ.* 1659 թ. ստեղծված ավետարանի հիշատակարանում նշված է. «...Աւարտեցաւ եռահրաշ... Ավետարանս ձեռամբ բազմամեղ Գրիգոր լոկ անուամբ իրիցու, ի թւականութեանս Հայոց ՌՃ և Ը (1659)-երորդի, ի մարտ ամսոյ ի (20)... Այսպիսի բիւր գանձուց... յոյզ և խնդիր էր զսրբասնեալ մահդասի միայնակացն Եղիա, որ ... գնացեալ ի մէնարանն Ղարամուրատու ի յանապատն սբ.: Եւ կեցեալ անդ ժամանակս ինչ և հրամանաւ սբ. հօրն իւրոյ տեառն տէր Տէրունի ...գացեալ ուխտ ի սբ. քաղաքն Երուսաղեմ...: Եվ անտի դարձեալ եկն առաջին ուխտն իւր՝ ի անապատն սբ. և ստացաւ բազում գրեանս, և շատ շինութիւնս աւելացոյց ի յանապատին: Եւ յետ ժամանակաց ... հրամանաւ հօրն իւրոյ՝ սրբոյ տէր Տէրունին և կամակցութեամբ եղբարցն ամենեցուն, եկեալ առ մեզ. և խնդրեաց կատարել զցանկութիւնս սրտի իւրոյ: Եւ իմ ձեռն եղեալ աւարտեցի զԱւետարանս սբ., և ծաղկեցի երրներրն զունովք, և ոսկէզօծ որակօք, ի խնդրոյ նորին: ...աղաչեմ զձեզ յիշել զտէր Տէրունին և զմիաբանսն սբ. ուխտին՝ զԳրիգոր եպիսկոպոսն, և զԿարապետ աբեղայն, և տէր Եղիայն և զամենայն միաբանսն սբ. ուխտին...»[702]:

1679 թ. Ավետիս աբեղա Քամալեցու ընդօրինակած ավետարանի հիշատակարանում նշված է. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն ժամանակիս, ի լաւ ընտիր օրինակէ, ի յերկիր Վերին Զակամ ի Ղարամուրատի Հարանց անապատիս ձեռամբ մե-

701. «ԺԷԳ», էջ 851-852:
702. Նույն տեղում:

դուռը զառածեալ Աւետիս աբեղայի, որ եմ յերկրէն Տաւուշու ի գեղջէն Քամալու. h. ի թուականիս Հայոց ՌՃԻԸ»[703]:

1682 թ. ընդօրինակվել է «Մաշտոց Ձեռացը». գրիչ` Ղուկաս երեց[704]:

Խաչքար. ագուցված արևելյան պատին, խորանախաչի թևերի արանքում` 1 տող.

*Թվ(ա)կ(ան) ՌՀ (1621):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. եկեղեցու ներսում, երկատված, քիվին` 1 տող փոքրագիր, թվագրերը` հիմնախաչի վերին թևի երկու կողմերում` ելնդագիր.

*Ս(ուր)բ խաչս բարէխ(աւ)ս Վարդանին, / թվ(ին) ՌՀ (1621):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. հիշատակագրությունը քիվին` 1 տող փորագիր, թվագրերը` հիմնախաչի վերին թևի երկու կողմերում` ելնդագիր.

*Ս(ուր)բ խաչս բարէխա(ւ)ս Գիզալ[ի]ն, / թվ(ին) Ռ/ՀԳ (1624):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. առաջին անգամ (8 ապրիլի 1980 թ.) խաչքարը գտանք երկատված: Երկրորդ այցելության ժամանակ (25 հունիսի 1980 թ.) խաչքարի վերին կեսը արդեն եռատված էր:

Թևավոր խաչ. «Խաչի քանդակների մեջ կարդացվում է».

*Թվ(ին) ՌՁԹ (1640):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 31:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 310:

Ծանոթ. Բարխուտարյանցը վկայում է, որ. «Խաչիս մօտ մի այլ քարի վերայ կայ երկար արձանագրութիւն, բայց մահմետականք ջարդած են քարս և արած միջից երկու բաժին: Անկարող եղանք գտնել կէսը, որ միմեանց մօտ բերէինք և ընդօրինակէինք»: Ի դեպ, թվականը Քամալյանն ունի` ՌՁԵ, Բարխուտարյանցը` ՌՁԸ:

Հայտնի է, որ խաչքարը կանգնած է եղել Հարանց վանքի զանգակատան առաջին հարկում: 1960-ական թվականներին փոխադրվել է Սբ. Էջմիածին և կանգնեցվել վեհարանի շենքի բակում:

Եկեղեցի. մուտքի ճակատակալ քարին, եղծված` 1 տող.

*Սուրբ խաչս Մար...*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 310: «Դիվան...», V, էջ 274:

Ծանոթ. անձնանունը կարելի է վերծանել Մարգար, Մարիան և այլն:

Նախորդի մոտ.

*Սուրբ խաչս Ամիրխանին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 310: «Դիվան...», V, էջ 274:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում, քիվին` 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Կար[ապետին]*

Հրատ. «Դիվան...», V, էջ 272:

Ծանոթ. Արձանագրության վերջնամասը վնասված է:

Խաչքար. ավանդատան խորշի մեջ, քիվին.

*...Գրի[գոր]...*

Հրատ. «Դիվան...», V, էջ 273:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան պատին, քիվին և խորանախաչի մոտ.

*Ս(ուր)բ [խաչս] Ամիրին / ... / ...*

Հրատ. «Դիվան...», V, էջ 272:

Խաչքար. ագուցված խորանի պատուհանի մեջ, խորանախաչի մոտ` ելնդագիր տառեր.

*...այ կազմող:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 273:

**Ղարամուրատցիների այլուր.** ինչպես վերևում ասվեց, 1770-ական թվականների վերջերին ղարամուրատցիների մի մասը հաստատվել էր Շուլավերում և լքյալ գյուղի անվամբ կոչել նոր բնակավայրի կես մասը, որն է` ցայժմ Ղարամուրատեցոց անվամբ հայտնի թաղամասը: Դեռևս ԺԹ դարավերջին Շուլավերում հայտնի էին ծագումով ղարամուրատեցի ութ ազգատոհմեր` Տեր Վրթանանք (Վարդանյաններ), Ղրղաշանք (Ղարղաշյաններ), Ծանունք (Ծանյաններ), Զանունք (Զաքարյաններ, Արզումանյաններ), Պտրոսանք (Մխիթարյաններ), Բըլսանանք (Բալասանյաններ), Քմալանք (Քամալյաններ) և Գյոռխնանք-Մուշտունք (Աղբալյաններ)[705]:

Հատկանշական է, որ գաղթականների առաջին սերնդի տապանաքարերին երբեմն արձանագրվում էր հանգուցյալի ծննդով որտեղացի լինելը: Մասնավորապես Մեծ Շուլավերի գերեզմանոցում պահպանվել է 1798 թ. այդօրինակ մի տապանագիր.

*Այս է տապան Ղարայմուր/այդեցի Քասի որդի / Տ(է)ր Խաչատուր լուսայհոգին, / կարթացօղք դուք ողորմիք, / Ա(ստուա)ծ զձեզ ողորմի, / թվ(ին) ՌՄԽԷ (1798)[706]:*



***ՄԵԾ ՇՈՒԼԱՎԵՐ (ՇԱՅԴՈՒՅԱՆ). 1798 թ. ղարամուրատցու տապանաքար գյուղի գերեզմանոցում***

703. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 281-282: Ձեռագիրը պահվում է Մատենադարանում (N 6708): **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 427:

704. «ՑՁԲ», էջ 200, ձեռ. N 5868:

705. **Ասլանյան Ս., Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 25:

706. Նշվ. աշխ., էջ 43:

Ղարամուրատցիները տարբեր առիթներով մասնակից են եղել հեռու և մոտիկ բնակավայրերում կատարված շինարարական աշխատանքներին: Այս առումով ուշագրավ է ՀՀ Գեղարքունիքի մարզի Զորագյուղ (հնում՝ Շողագա) գյուղի արևելյան եզրին կառուցված Մասրուց անապատի (Թ-Ժ դարեր) արևելյան պատին փորագրված և 1611 թ. իրականացված նորոգության մասին պատմող 5 տողանոց արձանագրությունը.

*Յիշեցէք ի Քս. Ղար|ամուրատեցի Փան|ոսն, որ վասն հոգոյն | եւ իւր ծնողացն | եկեղեցւոս նորոգե|լուն (նպաստեց)*[707]*:*

## ՄՈՐՈՒԽԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս՝ Լղաբակ (Բաղաջուր) գետի աջ արևմտահայաց ձորալանջին. «...Սամանլու և Մըռըխլու գեղերը: Դրանք առուի աջ կողմն էին ձորակողի վրա դարսված»[708]:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Արդեն 1890 թ. ունեցել է թուրքական ծագմամբ մշտաբնակ խաշնարած բնակչություն:

## ՄՈՒՍԱՅԱԼ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1580-1670 մ բարձրության վրա:

Գյուղի պատմական անունը մոռացության է մատնվել: Ներկայիս բնակավայրը գոյացել է ԺԹ դարավերջին՝ 1770-ական թվականներից հայաթափ գյուղատեղիում, նստակեցության անցած խաշնարած թուրքերի կողմից:

1914 թ. ունեցել է 585 բնակիչ[709]:

## ՅԱՂՈՒԲԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 7,5 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1670-1700 մ բարձրության վրա՝ հարավահայաց ձորալանջին:

Նախախորհրդային տարիներին մտնում էր Ելիզավետպոլի 5-րդ ոստիկանական շրջանի մեջ և միավորված էր Մեծ Ղարամուրատի գյուղական հասարակության հետ[710]:

Գյուղի անունը ծագում է Եաղուբ-օղլի (Հակոբի որդի՝ Հակոբյան) ազգանունից. «...Եաղուբլի գիւղն ամբողջապէս հանդիսանում է մահմեդականացած հայ Յակոբի սերունդը, որի անունից և կոչվում է Եաղուբլի»[711]:

## ՆՈՎՈ-ԳՈՐԵԼՈՎԿԱ (ԷՐԵՆԵՑԻՔ, ԱՐԹԱՊ, ԱՐԹԱՓԱ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 11,5 կմ հյուսիս-արևելք՝ Զագիր գետի աջ վտակ Արթափայի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1590-1660 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հնում (ԺԷ դարից առաջ) հայտնի է եղել Էրենեցիք անվամբ[712]:

Գյուղի պատմական երկրորդ անվանաձևը՝ Արթապ, վկայված է 1691 թ.՝ Աղվանից Սիմոն և Երեմիա կաթողիկոսների միջև մղված պայքարի առնչությամբ, երբ տանուտեր Թահիրը գյուղի քահանաների հետ հավատարմության երդում է տվել Երեմիային և երկրամասի աշխարհիկ ու հոգևոր այլ գործիչների հետ ստորագրել «Դաշնադրութեան թուղթը». «Ես Արթապցի տանուտէր Թահիս իմ քահանայիւք դապուլ եմ այսմ բանիս»[713]:

**Բնակչություն.** հայաբնակ է եղել մինչև ԺԸ դարի 70-ական թվականները: 1840-ականներին գյուղատեղիում բնակություն են հաստատել ռուս-դուխոբորները և հիմնել Նովո-Գորելոյե (Նովո-Գորելովկա) բնակավայրը: Սրանց մի մասը՝ շուրջ 19 ընտանիք, ԺԹ դարի 80-ական թվականների վերջերին փոխադրվել է նորաստեղծ Կարսի մարզ[714]:

Բնակչության թվաքանակի մասին վիճակագրական սակավաթիվ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[715] | 61 | 236 | 238 | 474 |
| 1894[716] | 50 | | | |
| 1908[717] | | | | 520 |
| 1914[718] | | | | 743 |

1980-ական թվականներին գյուղում ապրում էին ռուսներ և ադրբեջանցիներ. 1983 թ. կազմել են 404 շունչ[719]:

**Գերեզմանոց.** 1980 թ.՝ մեր այցելության ժամանակ, պահպանվում էր հայկական գերեզմանոցի աննշան մասը. տապանաքարերը անմշակ սալատապաններ էին:

## ՆՈՎՈ-ԻՎԱՆՈՎԿԱ (ԱՂՔԻԼԻՍԱ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1320-1460 մ բարձրության վրա:

**Գյուղանվան ծագումը.** Նովո-Իվանովկայի պատմական անվանումը մոռացության է մատնվել: Մինչ ռուսների հաստատվելը տեղում կանգուն մեծ

707. «Դիվան...», IV, Երևան, 1973, էջ 250:
708. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 17:
709. “Кавказский календарь на 1915 г.”, с. 162.
710. Նույն տեղում, էջ 163:
711. **Վարդանեան Յ.**, Մի քանի խօսք այրումների մասին, «Մշակ», 1914, N 154, էջ 2:
712. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 356-357:
713. «Արարատ», 1900, էջ 320:
714. **Абелов А.**, նշվ. աշխ., էջ 21:
715. “Свод...”, с. 86-87. Նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 357:
716. «Արձագանք», 1894, N 104, էջ 2:
717. “Кавказский календарь на 1910 г.”, с. 335.
718. “Кавказский календарь на 1915 г.”, с. 163.
719. «ԱՍՀ», հ. 7, էջ 281:

եկեղեցու անվանումով խաչնարածները կոչում էին Աղքիլիսա (Սպիտակ եկեղեցի):

**Բնակչություն.** հայաթափ է եղել 1770-ական թվականներից: Միանգամայն ամայի մնացել է շուրջ 7 տասնամյակ, ապա 1853 թ. հայաթափ գյուղատեղիում հաստատվել են Շամախու գավառի Ջիբանի գյուղից, Տամբովի և Սարատովի նահանգներից փոխադրված ռուս աղանդավորներ[720]:

Բնակչության թվաքանակի մասին վիճակագրական սակավաթիվ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[721] | 144 | 542 | 404 | 946 |
| 1914[722] | | | | 1697 |
| 1983[723] | | | | 1631 |

**Հնագիտական հուշարձաններ.** գյուղի մերձակայքում պահպանվել են կիկլոպյան տարբեր կառույցներ:

## ՆՈՎՈ-ՍԱՐԱՏՈՎԿԱ (ՓՆՏԽԼՈՒ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 20 կմ արևմուտք` Ձակամ գետի վերին հոսանքի ավազանում, վերջինիս ձախ վտակ` Մամաջանի ձախ ափին, ծովի մակերևույթից 1200-1280 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** պատմական անունը մոռացվել է: Ամենայն հավանականությամբ, հայաթափ է եղել 1770-ական թվականներին:

1840-ական թվականներին գյուղատեղիում հանգրվանել են Սարատովի նահանգից վտարված ռուս աղանդավորներ, որոնք 1844 թ. նախ հաստատվել են Լոռիում գտնվող իշխան Օրբելյանի կալվածքում, ապա 1850 թ., փոխադրվել ներկայիս Նովո-Սարատովկա, որը մերձաբնակ հայերն ու թուրքերը կոչում էին Փնտխլու[724]: Ենթադրվում է, որ Փնտխլու (Կաղնուտ) անվանվել է շրջակայքում առկա կաղնու ծառերի պատճառով. «...Ինգ-Բողան գետից դեպի արևմուտք գնացինք, յետո մի բլրի վրայով անցնելով դեմ առանք Մամաջանա գետին, որի ձախ ափին արևելքից դեպի արևմուտք տեղավորված են Փնդխլու գեղի շինութիւնները, որի այժմեան բնակիչները մալականներ են: Այս գեղը ռուներից կոչվում է Սարատովկա, թուրքերից ու հայերից Փնդխլու, երևի նրա հետի, որ քիչ վերև տկողնուտ կա: Բայց սրա նախկին բնակիչները հայեր են եղել, որոնք 18-րդ դարի վերջերին դարամուրադեցոց պես զաղթել են բռնութեան երեսից...»[725]:

Հայտնի է, որ ռուս աղանդավորների մի մասը` շուրջ 58 տուն, ԺԹ դարի 80-ական թվականներին փոխադրվել է նորաստեղծ Կարսի մարզ[726]:

Վիճակագրական սակավաթիվ տվյալները վկայում են, որ ԺԹ-Ի դարերի սահմանագլխին շուրջ երեք տասնամյակների ընթացքում, գյուղի բնակչությունը գրեթե կրկնապատկվել է.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[727] | 177 | 591 | 508 | 1099 |
| 1908[728] | | | | 1805 |
| 1914[729] | | | | 2026 |
| 1983[730] | | | | 2115 |

Մինչև Երկրորդ աշխարհամարտը Նովո-Սարատովկան զուտ ռուսաբնակ էր, բայց այնուհետև աստիճանաբար գյուղում սկսում են հաստատվել թրքական ծագումով խաշնարած ցեղեր: 1988-89 թվականներին երկրամասի հայության բռնագաղթից անմիջապես հետո գյուղի գրեթե բոլոր ռուս բնակիչները ևս հարկադրաբար լքեցին իրենց` շուրջ մեկուկեսդարյա հանգրվանը:

**Եկեղեցի և գերեզմանոց.** տեղագիր հեղինակներից Ս. Քամալյանն առաջինն է, որ տեսել է Նովո-Սարատովկայում բնիկներից մնացած պատմական հուշարձանները, մասնավորապես` եկեղեցին ու գերեզմանոցը. «...ապացույց են հանգստարանները, եկեղեցիների որմերը, որոնք գեղի մեջ կամ բնակութիւնից քիչ հեռու աչքի են ընկնում: Գեղի հյուսիսակողմ առվի մոտ երևաց ընդարձակ գերեզմանուտը շրջապատված բանջարանոցներով: Նոր բնակիչները քրիստոնեա լինելով գերեզմանատունը թողել են անձեռնմխելի: Բացի տապանաքարերից, խաչքարերից կան այլատարազ քառանկյունաձև արձաններ 3-5 արշին բարձր: Գրեթե ամենի վրա խաչեր են քաշած, գիր կամ թվական չկա, կամ գուցե եղել են ու ոչնչացել են: Արձանները ամենն էլ կամ քարից են, բայց որովհետև գեղի շրջակայքում քարի հանք չկա, պետք է հեռվից բերված լինեն: Հանգստարանից քաշ այժմյան գեղի փողոցի տակին մի մալականի բակում դեռ մնում է հայ եկեղեցին կիսաքանդ. սեղանի ծածկը անվնաս է քաղերի հետ, սեղանի վրայից քարեր հանած էին: Մալականները հավատացնում էին, որ բաշքենդցի հայերն են տարել նորաշեն եկեղեցու վրա բռնագրել»[731]:

Այս տեղեկություններին Մ. Բարխուտարյանցն ավելացրել է նաև եկեղեցու չափերը. «...մնում է հանգստարանն, որ ունի խիստ երկար մի քար (3 մ

720. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 358:
721. "Свод...", с. 84-85.
722. "Кавказский календарь на 1915 г.", с. 166.
723. «ԱՍՀ», հ. 7, էջ 282:
724. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 358:
725. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 33: Նաև` **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, նույն տեղում):

726. **Абелов Н. А.**, նշվ. աշխ., էջ 21:
727. "Свод...", с. 86-87.
728. "Кавказский календарь на 1910 г.", с. 336.
729. "Кавказский календарь на 1915 г.", с. 166.
730. «ԱՍՀ», հ. 7, էջ 283:
731. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 33-34: Ի դեպ, 1890 թ. Ս. Քամալյանը Նովո-Սարատովկայում գիշերել է մի հայի տանը. «Գիշերը մնացի խանութպանի մոտ, որ գանձակեցի հայ էր, սիրալիր ընդունեց և պատվեց» (թ. 34):

երկար է) տապանաքարեր և կիսաւեր եկեղեցին, որի երկարութիւնն 18 մետր, լայնութիւնն 11 մետր է»[732]: Մեզ անհայտ մի աղբյուր եկեղեցին թվագրել է 1535 թ.[733]: Տեղում գտնված մի խաչքար կերտվել է 1558 թ.[734]:

**Հնագիտական հուշարձաններ.** գյուղի մերձակայքում պահպանվել են «Քյորողլու» քարայրը և երկաթե դարաշրջանին բնորոշ կիկլոպյան կառույց:

**Մելիքզադա (Մելիքզատա) գյուղատեղի.** պատմական հարուստ անցյալով նշանավորված այս գյուղատեղին գտնվում է Նոր-Սարատովկա և Արծվաշեն գյուղերի միջև:

Գյուղի նախնական անունն անհայտ է: Մելիքզադա (Մելիքզատա) անվամբ գրավոր աղբյուրներում վկայված է ԺԷ դարի սկզբներից: Առաջին անգամ հիշատակում է Առաքել Դավրիժեցին ԺԷ դարասկզբի պատմական անցքերի առնչությամբ, երբ Օսմանյան հարստահարությունից ազատվելու և Սպահանում մշտական բնակություն հաստատելու խնդիրքով Պարսկաստան մեկնածների թվում էր նաև «...Մելքիսէթ եպիսկոպոսն ի Վերին Ջակամայ ի Մելիքզատայ գյուղից...»[735]:

Եղել է գրչության կենտրոն. այստեղ 1652 թ. Հակոբ քահանան ընդօրինակել է ձեռագիր «Աւետարան»: Հետագայում ինչ-ինչ հանգամանքներում Բանանցում Մ. Բարխուտարյանցը մատյանը տեսել է գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և հրատարակել գրչի հիշատակարանը. «...Ի ՌՃԱ (1652) թուականիս Հայոց և ի յամսեանն մարտի ի Ա (1) ... եղև սկիզբն գրութեան սբ. Աւետարանիս և կատարեցաւ ապրիլ ամսոյ ԺԵ (15) ... Արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Ջակամ, ի գիւղս Մէլիքզատայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Թովմայ և այլ Ս. Նահատակի, որ աստ է, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յակոբայ յետնեալ քահանայի»[736]: «Ավետարանի» առաջին ստացողը Կիրակոս երեցն է, ապա՝ Մելիք Օվանեսը:

Մելիքզադա գյուղը հիշատակվում է նաև (Այգեձոր) Ղուլալի գյուղի եկեղեցում պահված ավետարանի 1669 թվակիր հիշատակարանում. «Այս սուրբ աւետարանը այլազգի ձեռին գերի էր: Ես Մելիքզադեցի Ովանն և իմ որդի Գաբրիէլս մեր հալալ աշխատանքը, մեր քրտուք դադումն տուինք ազատեցինք. այնպէս դառը դժուար ժամանակ էր...»[737]:

Հայաթափվել է ԺԷ դարի 70-ական թվականներին, իսկ բնակիչները փոխադրվել են Մեծ Շուլավեր. «Թե Փնդխլուի և թե շրջակա տարածութեան տեղը բռնում էր Մելիք զատի մեծ ու շեն գեղը, որի բնակիչները 18-րդ դարի վերջերին գաղթել են Շուլավեր»[738]:

ԺԹ դարավերջին նշվել է, որ «...Մելիք զատի գեղը մալականների ձեռին է իբրև արքունական հող...»[739]:

Գյուղատեղիում պահպանվել են «...մի մեծ և մի փոքր կիսաւեր եկեղեցի և խիստ լայնածաւալ հանգստարան»[740]: Եկեղեցիները, անշուշտ, վերը հիշատակված և 1652-ից վկայված Սբ. Աստվածածին և Սբ. Թովմա անվանյալ կառույցներն են:

**Սուլթանեցիք (Սուլտանե) գյուղատեղի.** ենթադրաբար տեղադրում է Նոր-Սարատովկա գյուղից դեպի Արծվաշեն (Բաշ-գյուղ) տանող ճանապարհի վրա[741]: Պահպանվել են փոքր եկեղեցու (հավանաբար՝ Սբ. Աստվածածին կոչված) և գերեզմանոցի ավերակները: Եղել է Ջակամ գավառի նշանավոր գրչօջախներից մեկը, որտեղ ընդօրինակվել ու նկարազարդվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ:

Առաջին անգամ վկայված է 1647 թ. ընդօրինակված «Ավետարանի» հիշատակարանում: Գրիչն է Մխիթար աշխարհականը. «Գրեցաւ սբ Աւետարանս յորդառատ բխմամբ աղբիւրաբար հոսեալ ի հոգւոյն սրբոյ ... ի յերկիրս Ջակամայ, ի գեօղս որ կոչի Սուլտանեցի, ընդ հովանեաւ Ս. Աստվածածնին...»[742]:

Մխիթար գրչի ձեռքով Սուլթանեցիք գյուղում ընդօրինակված ձեռագրերից մեր օրերն են հասել ևս երկուսը: Առաջինը գրել է Եվա և Ոսկան ամուսինների պատվերով՝ 1671 թ. «...ի յայս ամի սաստիկ մահ յերկիրս Վերին Ջակամայ, որ օր մի ի տան միում եօթն հոգի վախճանեցաւ ... ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան Պարսից Շահ Սուլէյմանին, ի յերկիրս Վերին Ջակամայ ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք, ընդ հովանեաւ սուրբ Աստվածածնիս, ի խնդրոյ բարեմիտ Եւային և այրն (առն) իւրոյ Ոսկանին...»[743]: Պատվիրատու ամուսինները ձեռագիրը նվիրել են Ղարամուրատի Կուսանաց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցուն: 1729 թ. ձեռագիրը ձեռք է բերել Մելիք Սարգիսը (վերջին ստացող): ԺԹ դ. պահվում էր Բանանց գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որտեղ էլ այն տեսել և հիշատակարանն արտագրել է Մ. Բարխուտարյանցը[744]: Այժմ պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

732. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 310:
733. «ԱՍՀ» , նույն տեղում:
734. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 358:
735. **Առաքել Դաւրիժեցի**, էջ 63:
736. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 282: Նույնությամբ վերահրատարակվել է՝ «ԺԷԳ», էջ 276:
737. «Նոր-Դար», 1888, N 95, էջ 3:
738. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 33-34:
739. Նույն տեղում:
740. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 311:
741. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 310:
742. «ԺԷԳ», էջ 247:
743. «ՑՁԲ», ձեռ. N 6759:
744. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 281-282:




*ՆՈՎՈ-ՍԱՐԱՏՈՎԿԱ. խաչքարեր Մելիքզադա գյուղատեղիի գերեզմանոցում (լուս.՝ Հ. Զաքարյանի)*

Մխիթար գրիչը մյուս ձեռագիրը ստեղծել է 1678 թ. (ստացող՝ Թադեոս եպիսկոպոս)[745]:

Սուլթանեցիք գյուղում ձեռագիր է ստեղծվել նաև 1709 թ. (գրիչներ՝ Սարգիս և Վարդան, ստացող՝ Սարգիս)[746]:

Գյուղի և գրչօջախի պատմության համար կարևորվում է նաև 1837 թ. Տփխիսում գրված «Գրիգոր Լոռու-Մելիքեան, Բանք Ոսկիականք» ձեռագիր անավարտ աշխատությունը, որի շարադրանքը հեղինակը շարունակել է 1844 թ. Սուլթանեցիքում[747]: Սա հաստատում է, որ ԺԹ դ. կեսերին գյուղը դեռևս շեն բնակավայր էր: Ավերման ստույգ ժամանակն ու պատճառները հայտնի չեն:

## ՆՈՎՈ-ՍՊԱՍՈՎԿԱ (ԽԱՎՈՒՆԻՍ, ԽՈՒՆԻՍ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք՝ Շամքոր գետի ձախ վտակ Խունիսի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1510-1570 մ բարձրության վրա:

**Պատմությունը.** գյուղանվան միակ հիշատակությունը հասել է մեզ 1655 թ. ընդօրինակված «Շարակնոցի» հիշատակարանում. «...Բայց եղև սկսանել Շարակնոցիս ի երկիր մերում Վերին Զակամ, ի հայրենական գեօղն իմ, անուն Պապաջան: Ես այժմ օտարացեալ և փախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերոյ գրեցաք, ի գիւղս որ կոչի Խաւունիս, որ եղև աւարտ Շարականոցիս, զի ի շէնս այս կայ պատուական Զուխտակ եկեղեցիս... Գրեցաւ ձեռամբ ամենամեղաւոր գրչի Աւետիս անպիտանի, [որ] քահանայ կոչի»[748]:

Ուշագրավ է, որ ձեռագրում հիշատակված Զուխտակ եկեղեցու անունն ու տեղը դեռևս ԺԹ դարավերջին մոռացված չէր. «Զոխտակ եկեղեցի. մօտ առ մօտ կանգնած են երկու եկեղեցիք Նոր-Գետաբակի արևելեան հիւսիսային հանդէպ մի դաշտալագեղ լանջի վերայ, որոց մօտ կայ գիւղատեղի և հանգստարան: Բայց անարձանագիր են տաճարները և հանգստաքարերն»[749]:

**Բնակչությունը.** հայաթափ է եղել ԺԸ դարի 70-ական թվականներին: Շուրջ կես դար անց ամայի գյուղատեղիում բնակություն են հաստատել ռուս վերաբնակիչներ՝ դուխոբորներ, և հիմնել Նովո-Սպասկոյե (Նովո-Սպասովկա) գյուղը: Հատկանշական է, սակայն, որ դրանից հետո էլ գյուղի Խունիս անունը հիշվում էր[750]:

Բնակչության թվաքանակի մասին վիճակագրական սակավաթիվ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[751] | 31 | 108 | 114 | 222 |
| 1894[752] | 30 | | | |
| 1908[753] | | | | 232 |
| 1914[754] | | | | 598 |

Հայտնի է, որ 1880-ական թվականների վերջերին 39 տուն բնակիչներ լքել են գյուղը և փոխադրվել նորաստեղծ Կարսի մարզ[755]:

**«Տանձուտ».** գյուղից ոչ հեռու՝ Զուխտակ եկեղեցուց արևելք, «Տանձուտ» վայրում պահպանվել են գյուղատեղիի, գերեզմանոցի և Սբ. Ստեփանոս անվամբ եկեղեցու ավերակները: Վերջինս դեռևս ԺԹ դարի 80-90-ական թվականներին քանդել էին Սլավյանկա գյուղի ռուս-աղանդավորները. «...քարերը քանդած և տարած են մերձաքնակ Սլաւեանկա գիւղի բնակիչներն: Այժմ մնացած է միայն աւագ խորանի կլորակ մասն»[756]:

745. «ՑՁԱ», ձեռ. N 968:
746. «ՑՁԱ», ձեռ. N 3813:
747. «ՑՁԲ», ձեռ. N 7501:
748. «ԺԷԳ», էջ 691:

749. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 315:
750. Օրինակ, 1886 թ. պաշտոնական վիճակագրական տեղեկատուում գյուղի նոր անվան կողքին նշված է նաև հին անունը, ճիշտ է, փոքր-ինչ աղավաղված ձևով՝ Խունուշ ("Свод..., с. 86):
751. "Свод...", с. 86-87.
752. «Արձագանք», 1894, N 104, էջ 2:
753. "Кавказский календарь на 1910 г.", с. 336.
754. "Кавказский календарь на 1915 г.", с. 166.
755. **Абелов Н. А.**, նշվ. աշխ., էջ 21:
756. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 315:

Խաչքար. «Հարաւային փոքր և աւագ խորանի մէջ եղած պատում մի խաչքարի վերայ...».

*Եկեղեցիս սուրբ Ստեփանն եւ Մովսէս...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 315:

## ՇԵՔԵՐԲԵՅ (ՇԱՔԱՐԲԵԿ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ համանուն լեռան (2281 մ) հարավային ստորոտին: Շաքարբեկ անունն է կրում նաև նույնանուն լեռան հարավային լանջերից սկիզբ առնող ու գյուղի միջով հոսող գետակը[757]:

**Պատմություն.** գյուղանվան հայտնի առաջին հիշատակությունը մեզ է հասել 1633 թվականից: Այդ թվականին շատախեցի[758] հայտնի գրիչ Հովհաննես երեցը Շաքարբեկ գյուղում մի ավետարան է հեղինակել. «Գրեցաւ սբ. Աւետարանս և ի դառն և ի նեղ ժամանակիս, ի լաւ, ընտիր աւրինակէ, ի յերկիրս Վերին Զակամ, ի գիւղս որ կոչի Շաքարբէկ, ձեռամբ մեղաք զառածեալ Յովհաննէս երիցոյս, որ եմ ի յերկրէն Գանջայոյ, ի գեղէն Շատախոյ..., ի հայրապետութեան սբ. յաքոռոյս Էջմիածնայ տեառն տէր Մովսէսին, որ կրկին լուսաւորեաց զՀայաստան աշխարհս. և յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, հայրապետութիւն Աղուանից տէր Յովհաննէսին, որ մատն[եց]աւ ի ձեռս պարսիկ ազգին, տարան ի դուռն շահի, վերջն Աստուած գիտէ. և եպիսկոպոսութեան պարունտէր Բարսեղին, ի թուականին Հայոց ՌՁԲ (1633), ի ժամանակս շահ [Ա]բասին»[759]:

**Բնակչություն.** հայաքափ է եղել մերձակա գյուղերի հետ մեկտեղ ԺԸ դարի 70-ական թվականներին: Շուրջ 1 դար գրեթե անբնակ մնալուց հետո (այդ ընթացքում խաշնարած ցեղերի համար ծառայել է իբրև ամառանոց) 1870-ականներից բնակեցվել է մշտաբնակ թուրք խաշնարածներով:

1908 թ. ունեցել է 179[760], 1914-ին՝ 355[761], 1987-ին՝ 830 շունչ[762]:

**Պատմական հուշարձաններ.** գյուղում և մերձակայքում պահպանվել են գյուղատեղիի, եկեղեցու և գերեզմանոցի մնացորդներ, խաչքարեր: Գյուղի ողջ տարածքով սփռված են նաև զանազան հին շինությունների պատերի մնացորդներ:

757. Մի առիթով ուղեգիրը 1890 թ. նշել է. «Կամրջի մոտ ձի հեծնելով անցանք կորեկի նորաբույս արտերի միջով դեպի ձախ լեռնաշղթայի անցով իջանք այն ձորը, ուր հոսում է Շաքար բեկի առուն: Շաքար բեկը բարձրագագաթ սար է, լայնարձակ կողերով, լանջերով, դրա հարավից է հոսում հիշեալ առուն: Առուի ական մոտ երևում է Գարգար գիւղը...» (ԳԱԹ, **Մ. Քամալյանի** ֆ., ստոր N 1, VI-11, թ. 25):

758. Պատմական գյուղ, գըչօջախ, այժմ՝ գյուղատեղի Դաշկեսանի շրջանի Խաչակապ և Հարցիանգիստ (Չովդառ) գյուղերի միջև:

759. «ԺԷԲ», էջ 531: Տես նաև՝ «Արձագանք», 1886, N 12, էջ 162: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 333-334:

760. “Кавказский календарь на 1910 г.”, с. 419.

761. “Кавказский календарь на 1915 г.”, с. 209.

762. «ԱՍՀ», հ. 10, էջ 498:

## ՇՈՒՐԱՔԵՆԴ (ԱՅՔԵՆԴ)

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան Այքենդի առու փոքրիկ վտակի ակունքի շրջանում՝ ծովի մակերևույթից 1540-1650 մ բարձրության վրա, հարավարևելահայաց ձորալանջին:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին՝ շուրջ մեկ դար առաջ հայաքափ եղած հին բնակավայրի տեղում: Մտնում էր Չարեք վանքին պատկանող կալվածքի մեջ:

1908 թ. ունեցել է 73[763], իսկ 1914-ին՝ 410 թուրք բնակիչ[764]:

## ՇՈՒՐԱՔԵՆԴ

Գետաբեկի շրջանում Շուրաքենդ անվամբ 2-րդ գյուղը գտնվում է շրջկենտրոնից 19 կմ արևմուտք՝ Զակամ գետի ձախ խոշոր վտակ Պապաջանի ափերին, ծովի մակերևույթից 1300-1360 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

Գյուղից 3 կմ հարավ-արևմուտք պահպանվել է կիսավեր եկեղեցի և գերեզմանոց:

## ՉԱԼԲՈՒՌՈՒՆ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1380-1460 մ բարձրության վրա: Գյուղը Փառիսոս գետի ձախակողմյան մի վտակի աջ ափի երկայնքով ձգվում է ավելի քան 2 կիլոմետր: Ունի արևելահայաց դիրք:

Գոյացել է Ի դարի սկզբներին: 1914 թ. ունեցել է 640 թուրք բնակիչ[765], 1986-ին՝ 1385[766]:

Գյուղի տարածքում պահպանված մի քանի հին շինությունների մնացորդներ վկայում են տեղում երբեմնի հայկական գյուղի գոյության մասին:

## ՉԱԼԴԱՇ (ՉԱԼԴԱՂ)

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1460-1550 մ բարձրության վրա: Դիրքն արևելահայաց է:

Հայաքափ է եղել ԺԸ դարում: Ի դարի սկզբներին բնակեցվել է խաշնարածներով, որոնք մինչ այդ մի քանի տասնամյակ գյուղատեղին գործածում էին իբրև ամառանոց: Տակավին 1890-ական թվականներին տեղում պահպանվել էին եկեղեցու և գերեզմանոցի ավերակներ[767]:

1908 թ. ունեցել է 220[768], 1914-ին՝ 193[769], 1986-ին՝ 888 թուրք բնակիչ[770]:

763. "Кавказский календарь на 1910 г.", с. 176.

764. "Кавказский календарь на 1915 г.", с. 85.

765. Նույն տեղում, էջ 204:

766. «ԱՍՀ», հ. 10, էջ 302:

767. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308:

768. “Кавказский календарь на 1910 г.”, с. 410.

769. “Кавказский календарь на 1915 г.”, с. 204.

770. «ԱՍՀ», հ. 10, էջ 302:

## ՉԱՅ-ՌԱՍՈՒԼԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 32 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախնջի գետի աջ արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1390-1480 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հին հայաբնակ գյուղատեղիում՝ խորհրդային տարիներին:

1986 թ. ունեցել է 818 բնակիչ[771]:

### *ՉԱՐԵՔ ՎԱՆՔ*

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ-արևելք՝ Շամքոր գետի ձախ ափին՝ Գետաբակ վտակի և Շամքոր գետի միախառնման տեղից վերջինիս հունն ի վեր շուրջ 3,5 կմ հարավ-արևմուտք, նույնքան և նույն ուղղությամբ հեռու Չարեք բերդից, ծովի մակերևույթից 1070 մ բարձրության վրա[772]:

**Ընդհանուր տվյալներ.** գլխավոր կառույցների (եկեղեցի, գավիթ, զանգակատուն, մատուռ, շրջապարիսպ, միաբանական և օժանդակ այլ կառույցներ) շինարարությունն իրականացվել է ԺԷ դարում: Եղել է գրչօջախ և ուսումնական հաստատություն: Բազմիցս ավերվել ու վերաշինվել է: Շնորհիվ իր հոգատար, երբեմն էլ ապաշնորհ վանահայրերի՝ ունեցել է ինչպես ծաղկման, այնպես էլ անկումային տարիներ: Տիրապետել է ընդարձակ կալվածքների: Խորհրդային կարգերի հաստատումից հետո իշխանությունները բռնագրավել և պետականացրել էին վանքի կալվածները, իսկ վանքում բնակություն էր հաստատել մի խաշնարած թուրք ընտանիք:

**Չարեք վանքի հիմնադրումը.** հետևելով Առաքել Դավրիժեցու վկայությանը՝ ընդունված է վանքի հիմնադրումը (ԺԷ դար) վերագրել Տաթևի Մեծ Անապատում ուսանած և ծննդավայր վերադարձած Դավիթ եպիսկոպոսին. «Եւ Դաւիթ եպիսկոպոսն՝ որ էր ի Շամքոռու ձորէն՝ եւ ի ցեղէ իշխանաց, զոր Ղարամանենց կոչեն, սա եւս եկեալ եկաց ի մեծ Անապատս, եւ ապա ելեալ գնաց ի ձորն Շամքօռու՝ եւ անդ շինեաց Անապատ, զոր կոչեն Չարեքազգետի Անապատ, որ է բազմաժողով եղբարց բնակութիւն, եւ յոյժ հաստատուն ամենայն կարգօք եւ սահմանօք Անապատի մինչեւ ցայսօր. եւ ինքն Դաւիթ եպիսկոպոսն՝ անդէն վախճանեցաւ, եւ անդէն թաղեցաւ...»[773]:

Սակայն կովկասյան լեռնականների կողմից կողոպտված Չարեք վանքին նյութական օգնություն հասցնելու առթիվ Կարապետ կաթողիկոսի (1726-1729) գրած կոնդակում ակնարկ կա այն մասին, թե վանքն ավելի վաղ է հիմնադրված եղել. «...գլուխ ամենայն անապատաց, անուանի և հռչակեալն ցամենայն երկրի մեծ և սուրբ Անապատն Չարեքու, որ է յերկրին Գանջայու, որ կառուցեալ է յառաջնոց թագաւորաց, ի հայրապետացն սրբոց լուսապայծառ եկեղեցիս անուամբ սուրբ Աստուածածնին և հաստատեալ անապատս բազմախումբ կրօնաւորաց: Եւ յօրինեալ են պատարագատեղս երկոտասան: Եւ է սուրբ անապատն այն անուանի և հռչակաւոր բազմահրաշ և սքանչելագործ և գանձեալ կայ ի նմա բազում մասունք սրբոց և սուրբ նշանք տէրունական, յորում տեղւոջ բնակեալ կան բազմութիւնք միաբանից աղօթաւորաց խարազնազգեաց կրօնաւորաց...»[774]:

Կարապետ կաթողիկոսի՝ 1727 թ. գրած մեկ այլ կոնդակում նշված է. «...հռչակաւոր և անուանի Չարեքու Անապատն, որ է աշխարհին Աղվանից Գանձակու ի ձորն Շամքօռու և է կառուցեալ և հաստատեալ ձեռամբ իշխանացն Մամռուտի եւ Ղարամանի որդոց և թոռանց նոցին...»[775]: Համանման վկայության հանդիպում ենք նաև նույն խնդրի առթիվ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր վարդապետի՝ 1730 թ. գրած կոնդակում. «...գլուխ ամենայն անապատաց անուանի և հռչակեալն յամենայն երկրի, մեծ և սուրբ անապատն Չարեքու, որ է յերկրին...:

771. Նույն տեղում, էջ 301:

772. Գետաբեկից Չարեք վանք ձգվող ճանապարհի (կածան) ուշագրավ նկարագրությունը տվել է բանահավաք Ս. Քամալյանը. «...6 ժամին անձրևում էր, ճամբա ընկա դեպի Չարեքա վանք ձորի վայր փրփրացող գետակի ձախ ափով, էշի կամ ջորու կածանով: Շատ տեղ ահալի էր անցնել: Ինձ գրավեց մի փառավոր շատրվանի պես ջրնկեց, որ լեռան կատարից հոսող ջրից էր կազմվում. 2 տեղ քերծին ընդհատվելուց հետ երրորդ տեղը քերծի ծոցից ցնծուղի պես գցում էր, կարծես արհեստական շինած լողարանի համար: Վտանգավոր առապարների վրայից ձիանը զգուշութիւնով վեր բերելուց հետ հասանք վանքապատկան աղբիւրի նովին: Դա կոչվում էր *Միպտակ ջուր*: Այստեղից ներքև պատկանում էր վանքին, թե՝ անտառ, թե՝ լեռ: Մինչև այստեղ անմատչելի ծերպեր, բռնամուտ էր, սարեր պատկանում էին հանքատիրոջ: Պակաս չէր իրա խտութիւնով նույնպես վանքի անտառը: Արդեն գետակի աջ ափումն էինք ու թանձր տկողնուտի ու զանազան մրգատու ծառերի ճեմելիքով անցնում մտնում էինք այնպես ստվերամած ծառուղի, ուր արևի շողքը բոլորովին չի թափանցում: Դիք-դարեդուս է մենք լուռ, շարունակ առաջ ենք գնում, անտառի վերևից լսելի են մարդկանց ձայներ ու ձիանոնց թողած ոտնահետեր: Չին անհամբեր դառած, ինձնից ավելի է ցանկանում հասնել խոսողների հետնից և այդ աջողվեց մինչև դիբի դուրս գալը: Ջորավոր ու իշվոր ածխապանները զարմացան, երբ տեսան քահանայի գդակով մարդ մենակ իրանց հասվեհաս գնում է: Ուղեկիցն էլ հետ էր: Իմ անցնելուց հետ սրանք հարցրել էին Ծատուրին. -էս ո՞վ է էս մարդը: Հնարագետ Ծատուրն ասել էր. -Սա հայր Սուրբի բարեկամն ա, վանքն ա գնում: Ամենն էլ եկան խոր գլուխ տվին ինձ..., իսկ իշվորներից մինը առաջ եկավ, հայտնեց որ ինքը վանքի ծառան է, գնացել էր հայր սուրբի համար բան-ման առնելու: Որտեղ ձիաներից վեր եկանք, դա լեռնաշղթայի անցն էր և կոչվում էր *Ղալի ուս*: Այդ Ղալի ուսովը իջանք դեպի արևելահարավ՝ *Շամքոռա գետը* ու դեպ հարավ թեքվեցինք գետափն ի վեր վանքի ուղղութիւնով: Մեր կանգնած տեղից դեպի հիւսիս գետի ձախ ափին բարձրագագաթ պսպղում է *Մամռոտ ղալեն* իրա կարմրափայլ աղիւսա պատերով (ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 21-22):

773. **Առաքել Դաւրիժեցի**, էջ 218:

774. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 778:

775. «Արձագանք», 1886, N 23, էջ 330-331:



***ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. տեսքը հարավ-արևմուտքից (1980 թ.)***

Գրեցաւ օրհնութեան և ժողովարարի նամակս ի թուին ՌՃՀԹ, ի մարտի ԻԹ, ի սուրբ քաղաքս յԷրուսաղէմ...»[776]:

Ի դեպ, Կարապետ կաթողիկոսն իր կոնդակում նշել է, որ իրենից առաջ Չարեք վանքին կոնդակներ էին ղրկել նաև նախորդ` Փիլիպպոս (1632-1655), Հակոբ (1655-1680), Եղիազար (1681-1691), Նահապետ (1691-1705) և Աղեքսանդր (1706-1714) կաթողիկոսները[777]:

Վանքն իր անունն ստացել է ոչ հեռու (3 կմ հյուսիս) գտնվող Չարեք բերդից: Ի դեպ, Շամքոր գետն էլ, մանավանդ նրա վերին և միջին հոսանքի շրջանը, միջնադարում ավելի հաճախ հայտնի էր «Չարեք» անվամբ և, օրինակ, 1579 թ. լեզգիների արշավանքի մանրամասները նկարագրելիս պատմիչը նշում է, թե ավարառուները հասել էին մինչև «...ի Չարեքի կոչեցեալ գետոյն...»[778]: Դժվար չէ կռահել, որ վանքն ու գետը իրենց անուններն առել են համանուն բերդից, որը, ի դեպ, բազմիցս հիշվում է մատենագիր հեղինակների կողմից` հատկապես ԺԳ դարի սկզբներին տեղի ունեցած անցքերի կապակցությամբ:

Ինչ վերաբերում է Չարեք անվան ստուգաբանությանը կամ իմաստին, ապա այն առհասարակ ցույց է տալիս որևէ մեծության քառորդը[779]:

**Չարեք վանքի գիտական այցելուները.** չնայած վանքի` բնակավայրերից հեռու, կտրված ու մեկուսի դիրքին, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում Չարեքը դեպի իրեն է ձգել տեղագիր ու հնախույզ մի շարք հեղինակների: Վերջիններիս հրատարակած նյութերում գերակշռում են վանքի պատմության ու առանձին կառույցներին, ինչպես նաև վիմագրերին վերաբերող տվյալները: Ավելի հարուստ են անտիպ վավերագիր նյութերը, որոնք, սակայն, գրեթե ամբողջովին վերաբերում են վանքի կալվածքներին ու տնտեսական գործերին:

Չարեք վանքին նվիրված պատմաքննասիրական առաջին համառոտ նյութը հեղինակել է Ս. Ջալալյանցը[780]: Նա ներկայացրել է հուշարձանախմբի նկարագիրն ու թվով վեց վիմագրերի վերծանությունները:

1858 թ. վանք է այցելել ռուս հետազոտող Գ. Տկաչևը: Նրա հակիրճ նկարագրության մեջ արժեքավոր են վանքի ճարտարապետությանը վերաբերող տվյալները. «...խոտածածկ և արդեն քայքայման նշաններով եկեղեցին ունի 20 սաժեն երկարություն և 7 սաժեն լայնություն (42.67 x 14.93 մ): Առաջնային մասը կառուցված է սրբատաշ քարից, իսկ մնացածը հասարակ: Շուրջը տարբեր ձևի ու

776. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 786:
777. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 778:
778. **Առաքել Դաւրիժեցի**, էջ 459: Նաև` «ՄԺԲ», էջ 242:

779. «Կալվածագրեր...», կազմեց` **Հար. Աբրահամյան**, պրակ. 1, Երևան, 1941, էջ 182, ծանոթ. 20: Նաև` **Ավագյան Ս. Ա.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 30 («...ամբողջի չորս մասից մեկը` չարեքը...»):
780. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 163-166:



***ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. գավիթ (1980 թ.)***

չափի կառույցներ են...: Մինչև 1855 թ. բնակվում էին մի քանի հոգևորականներ, բայց ավազակախմբի կողմից կողոպտելուց հետո վանքը լքվել է և ներկայումս ամայի է»[781]:

1872 թ-ին առավելապես վանքի վիմագրերին նվիրված, բայց Զալալյանցի համեմատ քիչ ավելի մանրամասն (10 միավոր արձանագրություն), մի հոդված է հրապարակել Թարգմանչաց վանքի վանահայր Թեոդորոս վարդապետ Շիրակունին[782]:

Տեղում կատարած ուսումնասիրությունների հիման վրա առավել ընդարձակ շարադրանք է հեղինակել Քաջիկյանը[783]: Նախորդների համեմատ (ի դեպ, նաև՝ հաջորդածների) Քաջիկյանի աշխատանքն աչքի է ընկնում մասնագիտական բարձր իմացությամբ (քննության են առնված տպագիր և անտիպ որոշ սկզբնաղբյուրներ, արձանագրությունները վերծանված են հմտորեն ու առավել ամբողջական):

1890 թ. ամռանը վանք է այցելել նաև բանահավաք Ս. Քամալյանը: Հեղինակել է վանքի ճարտարապետությունն ու տնտեսական կացությունը ներկայացնող ցայսօր անտիպ մի աշխատություն, որտեղ կա նաև 6 վիմագրերի ընդօրինակություններ[784]:

Վանքի նկարագրությանն ու վիմագրերի վերծանության խնդրին համառոտ անդրադարձել է Մեսրոպ Սմբատյանցը[785]: Ցավոք, վերջինիս աշխատանքն արդեն տպագրված նյութերի համեմատ ոչ միայն զուրկ էր նոր կամ լրացնող տվյալներից, այլև աչքի էր ընկնում անվարժ, սխալաշատ ու կիսատ-պռատ վերծանումներով և նկարագրությամբ (բազմաթիվ աղավաղումներով ներկայացրել է 4 վիմագիր):

Չարեք վանքը հետազոտել է երախտաշատ Մակար եպիսկոպոսը: Նա իր մեծածավալ աշխատության մեջ միայն մեկ էջ է տրամադրել Չարեք վանքին և կրճատումներով ու սխալաշատ ներկայացրել վանքի գլխավոր հինգ արձանագրությունները[786]:

781. **Ткачев Г.**, Путевыя заметки, “Кавказ”, 1859, N 9, с. 43 (բնագրում՝ “...он зарос травою и уже обнаруживает некоторые признаки разрушения; церковь имеет 20 саж. в длину и 7 в ширину; передняя часть сделана из тесанаго камня, а другая из простаго. Кругом много различнаго вида и величины построек, назначенных, повидимому, для кел; все это обнесено высокою каменною оградою. По словам нашего проводника, монастырь построен в XVI ст. епископом Давидом. До 1855 года в нем жили несколько духовных лиц; но после разграбления разбойнической шайкою, он оставлен и находится в настоящее время в запустении...”).

782. **Թէոդորոս վարդապետ Շիրակունի**, Չարեքայ անապատ կամ մենաստան, «Արարատ», 1872, էջ 269-271:

783. **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան (հողվածաշար), «Արձագանք», 1886, N 23, էջ 330-331 և N 24, էջ 339-340:

784. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 21-24:

785. «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3:

786. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313-314:









*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. զանգակատան տեսքը հարավ-արևմուտքից, սյունագմբեթը, սրնգահար հրեշտակի հողմնահար պատկերաքանդակ և արևմտյան ճակատի շինարարական արձանագրությունը (1980 թ.)*

Թ. Շիրակունուց և Քաջիկյանից հետո, կարելի է ասել, որ միայն Երվանդ Լալայանին է հաջողվել վանքի վերաբերյալ նոր տվյալներ հրատարակել: Իր ընդարձակ ուսումնասիրության մեջ վերջինս տվել է համալիրի կազմում գտնվող շատ շենքերի արտաքին չափերն ու հանգամանալից նկարագրությունը: Առաջին անգամ Լալայանն է, որ հրատարակել է նաև համալիրի ընդհանուր տեսքի լու-



***ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. զանգակատան հարավային ճակատից բացված լուսամուտի երկու կողմերում սրնգահար հրեշտակների պատկերաքանդակներ և խաչքարեր (1980 թ.)***

սանկարը: Ինչ վերաբերում է վիմագրերին, ապա ներկայացրել է միայն վեցը[787]:

1913 թ. վանքի վերաբերյալ հպանցիկ տվյալներ է հրատարակել Մ. Տեր-Մովսիսյանը (ըստ ամենայնի, առանց տեղում լինելու)[788]: Այդ հրապարակումը ոչ մի նոր բան չի ավելացրել արդեն առկա նյութին (հեղինակի «Հայկական արձանագրություններ» վերնագիրը կրող հոդվածում զարմանալիորեն ոչ մի արձանագրություն չկա): Տասնամյակներ անց Տեր-Մովսիսյանը Չարեք վանքին վերաբերող իր այդ նյութը վերահրատարակել է առանձին աշխատության մեջ[789]:

Նույնպես առանց տեղում լինելու, բայց անհամեմատ բարեխիղճ և ամբողջական մի շարադրանքով վանքի համառոտ պատմությունն է ներկայացրել Հ. Ոսկյանը[790]: Վերջինս նախկինում հրատարակված աշխատություններից բացի առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է ընդգրկել նաև պարբերական հրատարակություններում առկա նյութերի մի կարևոր մասը:

---

787. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 336-339: Նոյնը նաև առանձին գրքով՝ Թիֆլիս, 1899, էջ 128-131: Վերահրատարակված՝ Երևան, 1988, էջ 312-314 (**Լալայան Ե.**, Երկեր, հատոր 2):

788. **Մեսրոպ եպիս. Տէր Մովսիսեան**, Հայկական արձանագրութիւններ, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1913, N 2, էջ 74-75:

789. **Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 91-92:

790. **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 166-176:

Խորհրդային տասնամյակներին Չարեք վանքը պարզապես մոռացության է մատնվել: Երկար տարիներ նրա մասին ոչ մի տեղ ու ոչ մի տող չի գրվել: Վերջապես, միայն 1982 թ. լույս տեսած արցախյան վիմագրերին նվիրված ծավալուն մի աշխատության մեջ է տեղ գտել նաև Չարեք վանքը[791]: Սակայն, ցավալիորեն, մեծադիր այդ հատորով ևս ոչ միայն նոր ոչինչ չի մատուցվել գիտական աշխարհին (1960-64 թվականներին կայացած գիտարշավների ընթացքում Չարեք վանքը անտեսվել է իբրև վիմագրեր պարունակող հնավայր և չի արժանացել մասնագետների տեսությանը), այլև հանիրավի անտեսվել են Քաջիկյանի, Քամալյանի և Մ. Սմբատյանի վերծանությունները, իսկ Թ. Շիրակունու ընդօրինակումները վերահրատարակվել են առանց աղբյուրը նշելու:

**Չարեքը՝ վանական համալիր.** պարբերաբար իրականացված նորոգչական փոքրածավալ աշխատանքների շնորհիվ մինչև խորհրդային կարգերի հաստատումը վանական համալիրը գտնվում էր բարվոք վիճակում: Հայտնի է, որ 1862 թ-ին վանահայր Սարգիսն այդ նպատակի համար ծախսել էր 120 ռ. գումար[792], իսկ 1879-ին վանահայր Աստվածատուրը նոր վերանորոգում իրականացնելու համար հատկապես հրավիրել էր թիֆլիսաբնակ շամքորեցի հայերին. «...վանահայրը կխնդրէ Թիֆլիսի՝ Շամքոր թաղի ժողովրդին, որ նա ևս չմոռանայ օգնել իւր հայրենի Չարեքայ Անապատին, որի շրջակայքում ամփոփված են նոցա նախնիները»[793]:

Ի դեպ, Չարեք վանքը մշտապես ենթակա էր ավազակային հարձակումների, որի արդյունքում, օրինակ, 1893 և 1895 թվականներին մենաստանը կողոպտվել է, իսկ վանահայրը հազիվ իր կյանքն է ազատել[794]:

Մինչ 1989 թ. վանքի գլխավոր շինությունները թուրք անասնապահների համար ծառայում էին որպես բնակարաններ, իսկ միաբանական սենյակները՝ անասնագոմեր: Շինությունները թեև քայքայված, բայց հիմնականում կանգուն էին:





*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. օժանդակ շինություններ և շրջապարիսպ*

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** կառուցվել է ԺԷ դարի սկզբին (որմերին կրում է 1617, 1621 թվականների նվիրատվական արձանագրություններ): Եկեղեցին ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Արտաքուստ երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երկու զույգ քառանկյուն կտրվածքով սյուները: Արևելյան կողմում՝ ավագ խորանից աջ և ձախ, կան մեկական ավանդատներ: Մուտքը արևմտյան ճակատից է, որ բացվում է այդ կողմից կից գավթի մեջ: Կառուցված է անմշակ եւ կոպտատաշ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 17,28 x 9.72 մ:

**Գավիթ.** կառուցվել է 1684 թ.: Կից է Սբ. Աստվածածին եկեղեցուն արևմտյան կողմից: Կառուցված է համակ սրբատաշ դեղնագորշավուն քարերով: Ունի նույնպիսի հորինվածք, ինչպիսին որ եկեղեցին (եռանավ): Հարավից գավթի ճակատը ձևանում է ինչպես սյունասրահ՝ եռակամար բացվածքով: Հյուսիսային նավը պահում են զույգ սյուները: Շենքի արտաքին չափերն են՝ 8,0 x 6,48 մ: Գավթի գլխավոր դուռը բացվում է սյունասրահի մեջ: Երկրորդ դուռը, որը վաղուց ի վեր փակված է, բացված է եղել արևմտյան ճակատի հյուսիսային անկյան մոտից: Հարավային մուտքի բարավորը կրում է 1684 թ. շինարարական արձանագրություն:

**Զանգակատուն.** կառուցվել է 1659 թ.: Գտնվում է գավթից մի քանի մետր հյուսիս: Հատակագծում քառակուսի (6.12 x 6.12 մ), արևմտյան ճակատից բացված միակ մուտքով, 2-րդ հարկում ութ բոլորա-

791. «Դիվան հայ վիմագրության», V, կազմող Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 267-268:
792. ՀԱԱ, ֆոնդ 53, ց. 1, գ. 3836, թ. 43-44:
793. «Արարատ», 1879, էջ 320: Վանքի տնտեսական կացության առումով ուշագրավ է 1890 թ. նկարագիրը. «Զանգակատնից արևմուտք զետեղված են միաբանից խուցերը թվով 12-15 ամբողջ մնացած, ուր վանահայրը իրեղեններ է դարսոտում, դրանց դիմաց մեղվանոցներ է 85 փեթակներով: Կան փլված սենեակներ, կրազանգ պատերի մնացորդներ, խողովակների հետքեր: Վանքի հարավից մի քանի սենյակներ մնում են ամբողջ, ուր պաշարեղենն են պահում, բայց նշանավոր է այն երկար, կամարաձև շենքը, որի մուտքը մեծ սրահիցն է և որը ըստ երևույթին միաբանից սեղանատունն է լինելու: Առաստաղը քարից է և թաղակապ: ...Վանքն ամեն բարիք ունի, կարելի է պարապել անասնաբուծութիւնով ու մեղվաբուծութիւնով շատ աջողակ» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 22, 24):
794. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 160, թ. 1, 3, 4, 5, 9, 14: Նաև՝ «Արձագանք», 1895, N 105, էջ 3: Հայտնի է, որ 1893 թ. կողոպուտի ղեկավարն էր Մամետ Հասան Ալլահվերդի օղլին:



*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. Հարանց մատուռ (ԺԷ դ.). տեսքը արևմուտքից*

ճև ու հաստահեղույս սյուներով, սրածայր վեղարով շենք է՝ կառուցված անմշակ քարով, աղյուսով և կրաշաղախով: Մուտքից վեր ագուցված սրբատաշ քարերին փորագրված է շինարարական արձանագրությունը, որից վեր ագուցված են 3 խաչքարեր: Զանգակատան հարավային ճակատին՝ լուսամուտի աջ ու ձախ կողմերում, սրնգահար հրեշտակների հարթաքանդակներ են:

**Սեղանատուն և խոհանոց.** անմշակ քարերով, կրաշաղախով կառուցված թաղակապ շենք է (արտաքին չափերն են՝ 25.0 x 8.64 մ): Լուսավորությունը իրականացված է նեղ ու փոքր լուսամուտների միջոցով, իսկ քարե երկշարք սեղանները արդեն ԺԹ դարի վերջերին ոչնչացված էին: Սեղանատան շենքին կից էր խոհանոցը:

**Պարսպապատ, 2 դարպաս և միաբանության սենյակներ և ջրաղաց.** այս բոլոր շինությունները ներառված են ամրակուռ շրջապարսպի մեջ (բացի ջրաղացից), որը հարավում ունի կամարակապ դարպաս: Վերջինս կրում է 1717 թ. շինարարական արձանագրություն: Շրջապարսպին ներսից կից են միաբանության շուրջ 3 տասնյակ թաղածածկ սենյակները, որոնց զգալի մասը կառուցվել կամ նորոգվել է ԺԹ դարի 2-րդ կեսին: 1847 թ. դրությամբ «Ի մէջ պարսպին գտանի ութն սենեակ, յորս պարունակին անապատական իրք, և միաբանք, բաց յայսմանէ մի ջրաղաց և մէկ ջրատինգ»[795]:

**Հարանց մատուռ.** գտնվում է պարսպից դուրս՝ վանքի հիմնական կառույցներից հյուսիս-արևմուտք՝ ոչ բարձր բլրի գագաթին: Սրբատաշ, թաղակապ փոքրիկ շենք է՝ կառուցված 1667 թ.: Մատուռի մուտքի առջև տեղահան եղած խաչքարն ունի 1740 թ. հիշատակագիր:

**Գերեզմանոց.** վանքի տարածքում մի քանի տեղ թաղումներ են կատարվել: Հատկապես նշանակալի էին Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի տակ ու «Հարանց» մատուռի շուրջ և ներսում կատարված թաղումները:

**Մերձակա հուշարձաններ.** Չարեք վանքի և համանուն բերդի միջև՝ Շամքորի նույն ափին, պահպանվում են միջնադարյան գյուղատեղիի և խաչքարերով գերեզմանոցի ավերակներ, ինչպես նաև համակ սրբատաշ քարով կառուցված ու 1981 թ. դրությամբ քայքայված, բայց կանգուն եկեղեցի:

Չարեք վանքից Շամքորի հունով վեր՝ գետի աջ ափին, նույնպես եղել են մի շարք հուշարձաններ. «Վանքից դէպի վեր, գետի միւս երեսում միմեանցից բաւական հեռու, բարձր անտառախիտ բլրակների վրայ կան երկու կիսաւեր մատուռներ, որոնց մէկի մօտ երևում են շատ խցերի և տների հետքեր. տեղ-տեղ խաչքարեր կան, բայց արձանագրութիւն և ոչ մի տեղ, կայ և մի կիսաւեր եկեղեցի վանքի կողմում, բարձր լեռան լանջում, որի մօտ երևում են գերեզմաններ: Այս եկեղեցին ինչպէս երևում է եղել է ամառանոցի համար շինած...»[796]:

795. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 107-108:

796. «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3:

**Չարեք վանքը՝ գրչօջախ.** երկրամասի հայտնի և արդյունավետ գրչօջախներից մեկն էր: Ցավոք, տեղում գրված կամ նորոգված բազմաթիվ ձեռագրերից միայն քչերն են մեզ հասել: Հայտնի է, օրինակ, որ 1641 թ. վանքի միաբաններից Սարգիս կրոնավորը նորոգել է 1496 թ. մի ավետարան. «...նորոգեցա սբ. Աւետարանս ձեռամբ Սարգիս կրօնաւորի, աշակերտ սբ. Աւետարանիս, ի սբ. անապատս Չարեքայ և առաջնորդութեամբ սբ. ուխտիս Դաւիթ եպիսկոպոսի»[797]:

1655 թ. ոմն Մխիթարի (հավանաբար, միաբանության անդամներից) ձեռքով ևս մեկ ձեռագիր է նորոգվել. «Նորոգեցաւ ձեռամբ մեղսասիրի յոգնապարտի և բշուառակի Մխիթարի, ի մեր թուում հազարում հարիւր և չորրորդում (1655), ի վայելուչ Ս. Աստուածածնում Չարեքայ սբ. անապատում, աղաչեմ յիշել անտրտում»[798]:

Նույն թվականին Ավետիս քահանան Չարեք վանքում ավարտել է Պապաջան գյուղում սկսած (Վերին Զակամ գավառ) ձեռագիրը. «Արդ՝ եղև աւարտ գրչութեան... ի սբ. և ի գերահռչակ ուխտիս, որ կոչի ... Չարեքայ անապատ...»[799]:

Վանքից մեզ հասած հաջորդ ձեռագիրը ստեղծվել է 1659 թ. «...ի մենաստանին Չարեքանն Շամքորու Հ (70) ճգնազգեաց կրօնաւորացն, առաջնորդի տէր Սարգիս րաբունապետի, և առաջնորդութեանն Քարդման գաւառի տէր Դաւիթ արհեպիսկոպոսի»[800]:

1665-ին գրիչ և ծաղկող Գրիգորը (ստացող վանահայր Սարգիս վարդապետ) Չարեք վանքում նոր ձեռագիր է ստեղծել[801]:

Չարեքի վանահայրերն ու սպասավորները ձեռագրեր են հեղինակել նաև այլ վայրերում: Նրանք նաև ջանացել են լրացնել ու հարստացնել վանքի գրատունը: Հայտնի է, որ 1637 թ. վանքի միաբանությունը գնել է մի ձեռագիր. «Ես Արիստակէս վարդապետս, տէր Յակոբս, տէր Բարսեղս վաճառեցաք զայս գիրքս Չարեքայ Անապատին. Դաւիթ պարոնտէրն, տէր Խաչատուրն, տէր Անտոնին և այլ միաբանիցն, ի թվին ՌՁԶ-ին (1637)...»[802]:

ԺԹ դարի վերջերին Շուշիի Ագուլեցոց եկեղեցում պահվում էր մի ավետարան, որի ստացողն էր «Գանձակու Չարեքու ս. անապատի հայր Ներսէս վարդապետ»-ը[803]:

1704 թ. Երուսաղեմում Չարեքի վանահայր Ներսեսը ստեղծել է «Գավազանագիրք» աշխատությունը, որի հիշատակարանում նշված է. «Յիշեցէք ի Քրիստոս զստացող սորին ըզտէր Ներսէս վարդապետն Չարեքու անապատցին... գրեալ իւրոյ մատամբքն, ի վայելումն անձին իւրոյ, ի թուին ՌՃԾԳ, ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն ս. Յակոբայ առաքելոյն»[804]:

1715 թ. Չարեքում «Ժողովածու» է հեղինակել գրիչ Հովհաննեսը[805]:

1818 թ. Բաղդասար վարդապետ Ջալալյանցը Չարեք վանքից Գանձասար է փոխադրել ներկայումս Մատենադարանում պահվող N 4411 ձեռագիրը[806]:

**Չարեք վանքի արձանագրությունները.** հետազոտողները հուշարձանախմբի տարածքում արձանագրություններ են նկատել, ընդօրինակել ու հրատարակել. եկեղեցուց՝ 2 միավոր, գավթից՝ 5 (1-ը՝ փակագիր), զանգակատնից՝ 1, Հարանց մատուռից՝ 1, դարպասից՝ 1, խաչքարերից՝ 5 և տապանաքարերից՝ 2, ընդամենը՝ 17 միավոր, որից 6-ը վերահրատարակել է նաև Կ. Կոստանյանցը[807]: Դրանցից 11-ը վերահրատարակվել է «Դիվան»-ի 5-րդ պրակում[808], որի հեղինակները, նոր բան չավելացնելով հանդերձ, նախկինում հրատարակվածների կամ անտիպ մնացած ընդօրինակությունների ամբողջական քննություն չեն կատարել:

1980 թ. մենք եղել ենք Չարեք վանքում: Ցավոք, վիմագրեր ընդօրինակելու փորձառությունը հեռու էր բավարար լինելուց: Միակ օգտակարը այդ ժամանակ կատարված լուսանկարներն են, որոնց հիման վրա էլ պատրաստվել են ներկայացված գրչանկարները:

Եկեղեցի. տանիքից, ինչպես երդիկ բացված լուսամուտի մոտ. «Ի վիմի սոյն լուսամուտիս խաչաձև գրեալ կայ այս ինչ».

*Սուրբ խաչս բարեխաւս Մանուէլի, թվ(ին) ՌԿԶ (1617):*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 270: «Դիվան...», V, էջ 268:

Եկեղեցի. տանիքին՝ ավագ խորանի վրա՝ մի խարսխաձև քարին. «...բոլորաձեւ, գրեալ կայ այս ինչ».

*Սուրբ խաչս բարեխաւս է Դաւիթ եպիսկոպոսին հաւրն եւ ննջեցելոց, թվ(ին) Ռ-Հ(1621):*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 270: «Դիվան...», V, էջ 268:

Տապանաքար. ուղղանկյունաձև, սրբատաշ երեսին՝ գավազան և 5 տող.

*Այս է տապան | Տ(է)ր Ս(ա)հակ վարդապետ|ին, որ փոխեց(աւ) առ |Քր(իստո)ս, թվին ՌճԻԳ(1674) ամ:*

Հրատ. առաջին անգամ:

797. «ԺԷԳ», էջ 47: Տես նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 144, **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 45:
798. «ԺԷԳ», էջ 663:
799. Նույն տեղում, էջ 691:
800. Նույն տեղում, էջ 876:
801. «ՑՁԱ», ձեռ. N 986, էջ 452:
802. **Ակինեան Հ. Ներսէս վ.**, Մովսես Գ Տաթևացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 161: «ԺԷԲ», էջ 702:
803. **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ..., մասն Բ, էջ 45:
804. Նույն տեղում, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 52:
805. «ՑՁԲ», ձեռ. N 8678, էջ 792:
806. **Եզանյան Օ. Ս.**, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «Էջմիածին», 1971, Դ, էջ 61-62:
807. **Կոստանեանց Կ.**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 183, 187, 190, 196, 205 (օգտվել է Ջալալյանցից և Լալայանից):
808. «Դիվան...», 5, էջ 267-268:

Զանգակատուն. արևմտյան ճակատում՝ մուտքից վեր երեք սրբատաշ քարերի վրա՝ 7 տող.

*Կամօքն Ա(ստուծո)յ շինեցաւ զանկակատունս յանուն ս(ուր)բ Հ(րե)շտ(ակապե)]տացն [Միքայէլի եւ Գաբրիէլի, ի] | հ(ա)յր(ա)պ(ե)տութ(եա)ն Պետ-ր(ո)սի [սրբազան կաթուղիկոսի ի տ]անս Աղուա-նից, յառաջ|նորդութե(ան) ս(ուր)բ ուխտիս եւ [անա-պատիս Չարեքայ] Սարգիս վ(ա)րդ(ա)պ(ե)տի, ձեռնտո|ւթ(եամ)բ եւ աղօթիւք Հ (70) միա[բանիցս*

*ցէ հոգով եւ մարմնով աստ օրն դատաստանի մաէն, որք ընթեռնուք յիշեցեք ի Քրիստոս՝ Պաղտասարն եւ Մելքոն, կազմող սուրբ խաչս:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 331: **Ջալալեանց Ս.**, Ճշվ. աշխ., մասն Ա, էջ 166: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 314: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 338-339: «Դիվան...», V, էջ 268:

Ծանոթ. Առավել ամբողջական է Քաջիկյանի ընդօրինակածը («Արձագանք»):



***ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. զանգակատան շինարարական արձանագրության գրչանկարը (1659 թ.)***

*կատարումն] եղեւ ս(ուր)բ խ(ո)ր(ա)նիս, ի փառս Ա(ստուծո)յ: Ար[դ] | ես Ք(րիստոս)ի ծառա Ս(ա)ր-գ(ի)ս վ(ա)րդ(ա)պետ[ս եւ աղօթաւոր եղբարք]ս շի-ն(ե)ց(ա)ք զս(ուր)բ կ(ա)թ(ո)ղ(ի)կէս ի փրկ[ութի(ւն)] | [հոգ(ո)]ց մեր(ո)ց եւ ամ(ենայն) հ(ա)ւ(ա)տ(ա)ցե-լո[ց, որք ընթեռ]նուք յիշեցէք զմեզ ի Ք(րիստո)ս, թվ(ի)[ն] | ՌՃ եւ Ը (1659):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 330-331: **Ջալալեանց Ս.**, Ճշվ. աշխ., մասն Ա, էջ 164-165: ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 23: «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 314: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 338:

Ծանոթ. հրատարակիչների մոտ էլ կան մեծ ու փոքր վրիպումներ, աղավաղումներ:

Հարանց մատուռ. «արեւելեան» ներքին պատի արձանագրությունը.

*Ի թուականիս Հայոց ՌՃԺԶ (1667) ամի տեառն Պետրոսի կաթուղիկոսին, ես Քրիստոսի ծառա Սարգիս վարդապետս կանգնեցի սուրբ խաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ եւ ծնողացն իմ՝ տէր Յոհաննէսին եւ Եղիսաբէթին եւ միաբանցս, որք աստ են հանգուցեալ եւ ամենայն ողորմածաց մերոց ողորմեսցի ասացէք, Աստուած մեր լուսաւորես-*

Տապանաքար. «արտաքուստ հանդէպ աւագ խորան. երեւի ի վերայ նորա մատուռ են շինեալ ըստ վաղեմի սովորութեան, այժմ փլեալ եւ ընդ հողով էր ծածկեալ. մէք բացաք զերես տապանավիմի, որ եւ զոյգս տապանաքար, յորոց միոյն գրեալ զայն տապանագիր».

*Այս է հանգիստ Դաւիթ եպիսկոպոսի, որ փոխեցաւ առ Քրիստոս, ի թվին ՌՂԲ (1643):*

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Ճշվ. աշխ., մասն Ա, էջ 166: «Արարատ», 1872, էջ 270: «Արձագանք», 1886, N 23, էջ 330: ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 23: «Բազմավէպ», 1891, էջ 39: «Նոր Դար», 1893, N 35, էջ 3: **Կոստանեանց Կ.**, Ճշվ. աշխ., 183: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 339: **Ակինեան Ն.**, Մովսէս Գ..., էջ 92: «Դիվան...», V, 268:

Ծանոթ. Քամալյանը 1890 թ. տապանաքարը տեսել է երկատված. «Վանքի արևելակողմ զետեղված է հիմնադրողի շիրիմը երկմաս եղած փոքր տապանաքարով»:

Գավիթ. մուտքի բարավորին եղել է.

*Շնորհօք Աստուծոյն ամենակալի կառուցաւ ի անուան Ամենափրկչի վերնատունս տեղի հոգոյ ճշմարտի, եկեղեցիս սուրբ եւ գաւիթ գովելի ի հայրապետութեան... շինեցաւ սա ձեռամբ տեառն Ներսէսի հանդերձ Հ (70) եղբարբք ամէն ի փրկութիւն հոգոց մերոց, որք ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս, ամէն, թվ(ին) ՌճԼԳ (1684):*



*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. Սահակ վարդապետի տապանաքարը (1674 թ.)*



*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. գավթի բարավորի վիմագիրը*

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 165: «Արարատ», 1872, էջ 271: «Արձագանք», 1886, N 23, էջ 330: ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 22-23: «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 337: «Դիվան...», 5, էջ 267:

Ծանոթ. «Անուան տեղը քարի վերայ անգիր է թողած»:

Գավիթ. արևմտյան ճակտոնից քիչ ցած ագուցված խաչքարի ստորին մասում՝ 4 տող.

*Սուրբ խաչս բարեխաւս Տէր Մովսէսին, Ներսէսին, Յովսէփանին եւ Պարխուտարին, որք բազում սիրով եւտուն շինել զգաւիթ սուրբ եկեղեցւոյս, թվ(ին) ՌՃԼԳ (1684):*

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, 165: «Արարատ», 1872, էջ 271: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 314: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 337-338: «Դիվան...», 5, էջ 267:

Գավիթ. հարավային մուտքի բարավորից վեր.

*Տէր, հատի զնեղութիւնս Տէր Մովսէսի, Ներսէսի, Օսէփանին եւ Պարխուտարի, ձեզ պահէ անփորձ աշխարհի:*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 371: «Դիվան...», 5, էջ 268:

Ծանոթ. Հիշատակված 4 անձերը գավթի կառուցողներն են, ուստի այս վիմագիրը ևս կարելի է վերագրել 1684 թ.:

Գավիթ. հյուսիսարևմտյան անկյան մոտի փոքր դռան բարավորից վեր, խաչքարանդակի տակ փորագրված է.

*Ով քառաթեւ սուրբ Փրկչին եւ զինարան անմահ զաւրին, աւուր փառավոր արքային, թվի(ն) ՌՃԼԳ (1684):*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 271:

Գավիթ. արևմտյան ճակատում, փակագիր.

*Ես Ներսէս:*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 271:

Ծանոթ. Հավանաբար 1684 թ. գավթի շինարարական արձանագրության մեջ հիշատակված Ներսեսն է, ուստի կարելի է թվագրել ԺԷ դարի վերջերով:

Խաչքար. «Զանգակատան հարավակողմի լուսամտի շուրջը 3 փոքր խաչքարեր կար մեկի վրա».

*Սբ. խաչս բարեխօս Սարգսին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 23:

Ծանոթ. Հավանաբար, խոսքը 1671 թ. վախճանված Սարգիս վարդապետի մասին է, ուստի կարելի է թվագրել ԺԷ դարով:

Դարպաս. շրջապարսպի հարավային կողմում.

*Ի թուին ՌՃԿԶ (1717). ես Մկրտիչ վարդապետս շինեցի պարիսպս, որ եղեւ խարջ :ԻԸ: (28) թուման, Օվանէս վարդապետն տուաւ Ժ (10) թուման, շինեցաւ իշխանութեամբ սորա:*

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 165-166: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 314: «Արձագանք», 1886, N 26, էջ 331: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 338: «Դիվան...», V, էջ 268:

Խաչքար. «...փոքրիկ խաչքարի վրա գրած է».

*Սբ խաչս Վարդանինն է:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 23:

Խաչքար.

*Մինասին վրդպետ:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 23:



*ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. Սարգիս վարդապետի մոր տապանաքարը (1740 թ.)*

Խաչքար. «Ի վերա հարաւային որմոյ արտաքուստ ի ճակատ խաչվիմի գրի այս ինչ».

*Սուրբ (խաչս) բարեխաւս Պետրում բէկին, Մակասարին:*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 270: «Դիվան...», V, էջ 268:

Խաչքար. Հարանց մատուռի մուտքի առջև տեղահան ընկած, քիվին և ստորին մասում՝ 3 տող.

*[Ս(ուր)բ խ(ա)չ]ս բ(արե)խ(աւ)ս ... / որ է մայր Ս(ա)րգ(ի)ս վ(ա)րդ(ա)պ(ե)/տին, փոխ(ե)ց(աւ) ի Ք(րիստո)ս, ՌՃՁԹ(1740):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. գավթում.

*Այս է հանգիստ Չարեքու անապատի Մկրտիչ վարդապետին, թվ. Ռ(Ճ)ՂԵ (1746):*

Հրատ. **Բարխուդարեանց Մ.**, Արցախ, էջ 277: «Դիվան...», V, էջ 250:

Ծանոթ. ընդօրինակության մեջ բացակայում է հարյուրավորը, համարում ենք վրիպած. կարծում ենք, պետք է լինի՝ ՌՃՂԵ (1746):

Տապանաքար. եկեղեցու հարավային դռան մոտ.

*Այս է տապան Դաւիթ վարդապետին, որ փոխեցաւ առ Քրիստոս, ի թվին ՌՄՀԵ (1826):*

Հրատ. «Արարատ», 1872, էջ 270-271: «Նոր-Դար», 1893, N 35, էջ 3: «Դիվան...», V, 268:

Ծանոթ. Սմբատյանցի մոտ թվականը՝ «ՌՄՀԷ» (1828):

**Չարեք վանքի կալվածքը.** Չարեք վանքը ավանդաբար տիրապետել է բավական ընդարձակ կալվածքների: Դրանք ներառում էին ինչպես խոտհարքներ, արոտներ, այնպես էլ գլխավորապես անտառներ:

ԺԹ դարի վերջերին վանքապատկան կալվածքների սահմանների հարևանությամբ նստակեցության անցած մահմեդական խաշնարած ցեղերը հաճախ ապօրինի օգտվում էին կալվածքից՝ առանց վանքին համապատասխան տուրք վճարելու: 1860-ական թվականների վերջերին խնդիրներ են ծագում նաև վանքի ու կառավարության միջև: Հարուցվում է դատական գործ, որը ձգձգումներով ի վերջո լուծվում է ի նպաստ վանքի:

Վանքապատկան կալվածքները մոտավորապես կազմում էին 3.000 դեսյատին: Մի շարք վավերագրեր որոշակիորեն ներկայացնում են կալվածքների սահմանները: 1857 թ. մի վավերագրում մասնավորապես նշված է. «...ունի զիւր սեպհական կալուածս, բաղկացեալս յանտառաց, յանդօրէից, ի մարգագետնից՝ ի դաշտաց կամ յարօտատեղեաց, որք եզրակացուցանեն ի յետագայ սահմանս յարնելակոյս՝ առուն Գետաբակայ, որ թափի ի գետն Շամբօռ, ի կողմն յարևմտեան՝ առուն Այքեանդ անուանեալ, որ անցանէ ընդ ստորոտով լերին Դլիջ դաղ և ի հիւսիս՝ յաղբերէն Չափառլու բուլաղ սկսեալ՝ հանդերձ տեղովն Այթալայ անուանեալ, յորում գտանին ձմերայնոցք ի հին ժամանակաց: Այսորիկ կալուածք գտանին ընդ անվէճ սեպհականութեամբ վերտառեալ վանիցն դեռ ի ժամանակաց հետէ տիրապետող խանիցն Ելիսաւէտոպօլ...»[809]:

Վանքապատկան գոմերի և կալվածքի սահմանների վերաբերյալ արժեքավոր տվյալներ կան նաև 1869 թ. գրված մեկ այլ վավերագրում. «Ես ներքոյ ստորագրեալ վանահայր Չարեքայ Անապատի Սարգիս վրդպտ. Դաւթեանց տալիս եմ այս կապակցական ձեռագիրս քեզ Զագլոյ գիւղացի Միրզայ Միրզախանեանց այս պատճառի, որ ես տալիս եմ կապալաւ քեզ Չարեքայ Անապատին պատկանեալ չորս ձմերանոցները, որ է՝ Մկոշանց գոմեր, Սաբլուղի գոմեր, Քիւքիւրտ գոմեր և Ներքի գոմեր իւրեանց չորս սահմաններն, որ է յարնելեան կողմանէ Գետաբէկու գետն, արևմտեան կողմանէ Չափարլու բուլաղն և իւր վերևի սարն, որ է խոտհարք և հարաւային կողմանէ Դլիճ-տաղն երեք տարւայ ժամանակի...»[810]:

1877 թ. վավերագրից երևում է, որ վանքապատկան և արքունի կալվածների սահմանազատման հարցում վեճն ավելի է խորացել. «Չարեքայ Անապատի կալուածքը և նորա մեծասահման ու թանկագին անտառը վիճելի մնացած է ի մէջ հոգևոր իշխանութեան և արքունական գանձարանի»[811]: Խառնակ վիճակից օգտվել են մերձաբնակ թուրքերը, որոնք անտառի «Դյուզ-յուրտ» կոչված մասում ապօրինի ծառահատումներ էին անում[812]:

1888 թ. վանքապատկան կալվածքում հիշվում են 5 առավել կարևոր ձմեռանոցները, որոնց անուններն էին՝ Օջախվերդի, Քուքուրթ, Վերին Սարղուլ, Ներքին Սարղուլ և Մոկոշանոց-Կիզիլկալա[813]:

1890 թ. ծանոթանալով տիրող կացությանը՝ բանահավաք Ս. Քամալյանը նշել է. «...1875 թվից սկսած անտառի կալվածական խնդիրը նրանով զարթած է ու համարեա վախճանին մոտենալու վրա է: Անտառից օգտվում է վանքը, իրա սեփական անտառապահն ունի, 2 ծառա, էլ ուրիշ ոչ ոք»[814]:

Կալվածքի շուրջ վեճը խորանալով՝ դատական ընթացք է ստացել: 1891 թ. հուլիսի 1-ին նշանակվել է վերջնական քննություն. «Վկաների մեծագոյն մասը թուրքեր էին, որոնք վանքի օգտին ցուցում աւին»[815]:

1893 թ. կազմված վավերագրում կալվածքի սահմանների մասին գրված է. «Անտառք և արօտատեղիք ունի ի միասին ընդ ամէն ցերեք հազար դեսեատին տարածութեամբ. սահմանքն են՝ արևելեան կողմն և հարաւ Կլիջդաղ-Թափանու, որ խառնի ի Շամքոր գետն, արևմտեան՝ Կարմիր-կապ և Սազմազու ի Դլիջ, որ իջանէ ի Փալչխլիբուլաղ, հիւսիսային՝

809. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2634, թ. 1:

810. Նույն տեղում, գ. 2882, թ. 17:

811. Նույն տեղում, գ. 2882, թ. 38:

812. «Մեղու Հայաստանի», 1879, N 37, էջ 3:

813. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2882, թ. 37:

814. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 21:

815. «Նոր-Դար», 1891, N 116, էջ 3:




***ՉԱՐԵՔ ՎԱՆՔ. վանքապատկան կալվածքի սահմանները մինչև Ի դարի 10-ական թվականների վերջերը***

Չախմախաքարի գագաթ և Սատանի սէր, Չաբարլու բուլաղ, որ խառնի ի գետակն Գատաբէգու...»[816]:

1894 թ. լրատվական մի աղբյուր տեղեկացնում է, որ «Հոկտեմբեր ամսի վերջերում նահանգական դատարանում քննվեց Չարեքի Անապատի կալուածների գործը և վճռվեց վանքի օգտին...»[817]:

1860-ական թվականների վերջերին ծագած կալվածքի վեճն իր վերջնական լուծումն է ստանում միայն 1902 թ.: Այդ մասին ժամանակի աղբյուրը նշել է. «...Չարեքի վանքը տիրապետում է իր շրջակայ ամբողջ գաւառակը, հին Գարդման աշխարհը, որի միջնադարեան աւատական տէրերը, Գարդմանաց իշխանները նուիրել են նրան՝ վանքին յաւիտեան տիրապետելու համար: Թուրք վկաները երդմամբ հաստատում էին, որ այդ աւանդական կտակի մասին որդոց որդի պատմվում է նրանց մէջ: Գործը հեշտերից չէր. դատարանական հաստատութիւնները՝ սկսած նահանգական դատարանից (Գանձակի) մինչև սենատը, զբաղեցվեցին նրանով մօտ 20 տարի (1883-1902 թթ.): Չարեքի գործը անթիւ անգամ քննվեց ու վերաքննվեց, վէճը տեղի ունէր վանքի ու գանձարանի մէջ, տեղն ու տեղը կատարվեցին բազմաթիւ քննութիւններ, երկրաչափները տարիների ընթացքում գալիս էին ու գնում, վերջապէս ներկայ թուի ապրիլին կառավարիչ սենատը վերջնականապէս ճանաչեց ու հաստատեց Չարեքի կալուածքը իբրև այդ հինաւուրց վանքի սեփականութիւն...»[818]: Նույն թվականին Չարեք վանքի վրա կատարված ավազակային հերթական հարձակումն ավարտվում է վանահոր՝ Աստվածատուր վարդապետի սպանությամբ[819]: Հանգուցյալը. «...երկու տասնեակ տարիներից ի վեր, կրօնաւորութեան առաջին օրից, կեանքը դրել է այդ վանքի պահպանութեանը և այսօր, ինչպէս հաղորդում են մեզ հաւաստի աղբիւրներից, բարձրագոյն Ատեանը Պ. Բուրգում գործը վճռել է յօգուտ վանքին և շնորհիւ Աստուածատուր վարդապետի տևական և եռանդուն աշխատութեան Չարեքայ վանքի սեփականութիւն է ճանաչուած մի այնպիսի կալուած, որ իւր ընդարձակութեամբ, բերրիութեամբ և անտառների խտութեամբ, կարծում ենք գերազանցում է մեր վանական շատ կալուածներից»[820]:

Նույն 1902 թ. Էջմիածնի Սինոդը պատվիրել է կազմել Չարեք վանքի կալվածների քարտեզը («...զմակարդակ կալուածոց վանուցն Չարեքայ»)[821]:

816. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3892, թ. 40:
817. «Մշակ», 1894, N 144, էջ 2:

818. «Մշակ», 1902, N 199, էջ 1:
819. «Արարատ», 1902, էջ 1024-1025:
820. «Լումայ», 1902, N 4, էջ 256:
821. «Արարատ», 1902, էջ 761:

1910 թ. կալվածքը զբաղեցնում էր 2732 դես. մակերես[822]:

Գանձակի վիճակի վանական կալվածքների 1910 թ. հուլիսի 4-ին կազմված տեղեկագրով վանքի սահմաններն են. «...արևելեան կողմից ձգվում է Ղարադաղ անուանեալ լեառը, բարձրանալով ուղեկցիս հետ անտառապահների առաջնորդությամբ լեռան գլուխը, տեսանք երկրաչափի դրած նշանը՝ սահմանաքար: Ամբողջ երկարաձգվող տարածութիւնը այս կողմից կլինի մօտաւորապէս չորս վերստ: Արևմտեան կողմից գտնվում են՝ Այքենղի ջուր, Ջաջիլի անուանած տեղը, Տօնդուզ գեօլ, Այթալի սար, որի վերայ սահմանաքարն է, Այթալի ջուրը, Սաջին սէր, այսպէս ամբողջ տարածութեամբ այս կողմից է գրեթէ տասն վերստ: Հիւսիսային կողմից տարածվում են՝ Չափար բուլաղի, բարձր թումբը, Չախմախի սըր, Ջաքար բուլաղ (սրա վերայ է սահմանաքարը), Ցագիս երի, Գետաբէգի ջուրը, Մամռոտ ղալի (սրա տակն է սահմանաքարը), ամբողջ երկարութեամբ այս կողմից վեց կամ եօթն վերստաչափ է: Հարաւային կողմից ձգւած են հետևեալ տեղերը՝ Ղարադարա, Թէլէգրաֆի ձոր, Ղզլղայեա լեռ, Քիքիրտի սար, Թափանի ջուր Շամքոր գետի մօտ (այստեղ է սահմանաքարը. мел. знак) ամբողջ գծի տարածութիւնն է եօթն վերստաչափ...»[823]:

1913 թ. հակառակ վանքապատկան կալվածքների ընդհանուր կառավարիչ Լևոն Տեր-Ավետիքյանի ձեռնարկած միջոցներին՝ ապօրինի ծառահատումները, մանավանդ Գետաբեկի պղնձագործարանների համար, դեռևս նշանակալի էին[824]:

Մինչև 1918 թ. վանքը կանոնավոր ստացել է իր կալվածքի եկամուտները, որոնք գլխավորապես փոխանցվում էին Մայր աթոռին: Խորհրդային տարիներին թափուր ու ամայացած վանքը վերածվում է թուրք խաշնարածների կայանի, որտեղ բնակվում էին մինչև 1989 թ. (գուցե այժմ էլ):

**Վանահայրեր.** վանքի առաջին վանահայր-առաջնորդը նրա հիմնադիր *Դավիթ եպիսկոպոսն* էր (1610-ական թվականներից մինչև 1643 թ.): Պաշտոնավարել է շուրջ 30 տարի: Հիշատակվում է 1637, 1641 և 1643 թվերին[825]: Թաղված է եկեղեցու արևելյան պատի տակ:

*Սարգիս վարդապետ* (1643-1671). հիշատակվում է 1659, 1660, 1665, 1667 և 1671 թ. (վերջինը մահվան թվականն է)[826]: Նրա օրոք կառուցվել է զանգակատունը, վանքում ծաղկել է գրչությունը: Սվրեցիք գյուղում ստեղծված մի ձեռագրում վանահորը բնութագրել են այսպես. «...ի առաջնորդութեան սուրբ ուխտին Չարեքա մենարանի Սարգիս երջանիկ վարդապետի, որ է ստուգիւ հայր նմանեալ ըստ առաջնոցն...»[827]: Թաղված է Հարանց մատուռում:

*Սահակ վարդապետ* (1671՞-1674). այս վանահորից հայտնի է միայն մահվան թվականը[828]: Թաղված է Հարանց մատուռում:

*Ներսես վարդապետ* (1675-1700-ական թթ.). հիշվում է 1684 եւ 1704 թթ.[829]: Նրա օրոք կառուցվել է վանքի գավիթը: Թաղված է Հարանց մատուռում:

*Մկրտիչ վարդապետ* (1710-ական-1746). 1717 թ-ին նրա ջանքերով վանքը պարսպապատվել է, իսկ 1730-ին Կարապետ կաթողիկոսի և Երուսաղեմի Գրիգոր պատրիարքի թույլտվությամբ ու կոնդակով ժողովարարությամբ ձեռք բերած միջոցներով շենացրել է լեզգիների արշավանքների հետևանքով թալանված ու քայքայված վանքը[830]:

Ի դեպ, Մկրտիչ վարդապետի գերեզմանը գտնվում է Միրզիկ գյուղի մոտ՝ Քարհանի վանքի գավթում (տապանագիրը տե՛ս սույն աշխ. 400 էջ):

*Դավիթ վարդապետ Ջալալյանց* (առնվազն 1817 թվականից մինչև 1826 թ.). հայտնի է, որ 1817-1819 թվականներին Չարեք վանքում աշակերտել է հետագայում իրեն հաջորդած Սարգիս Դավթյանցին («...հասարակ ընթերցանութիւն և գրութիւն, զբացահայտութիւն հին և նոր կտակարանաց...»)[831]: Վախճանվել է 1826 թ.[832]: Թաղված է եկեղեցու հարավային պատի տակ:

*Սարգիս վարդապետ Դավթյանց* (1826՞-1867): Հիշվում է 1839-ին (աբեղա)[833], 1844-ին (երբ թուրքերը թալանել էին վանքը[834], 1858-ին (ծառայության ցուցակից երևում է, որ վանահայրը ծնվել է 1790 թ.)[835], 1862-ին (120 ռ. ծախսով վանքում նորոգումներ էր կատարել)[836], 1864-ին[837] և 1869-ին (վերջինս հավանաբար, մահվան թվականն է)[838]:

*Գրիգորիս վարդապետ Տեր-Հակոբյանց* (1867-1869). ծնվել է 1842 թ. Էջմիածնի գավառի Սամաղար գյուղում. «...1867 թուին յուլիսի 1-ին Սինօդի հրամանով կարգուել Չարեքայ վանքի վանահայր...»[839]: Հիշվում է 1869-ին, ըստ որում 1867-ից

822. «Արարատ», 1910, էջ 57:
823. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 16:
824. «Մշակ», 1913, N 126, էջ 3:
825. **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ..., մասն Բ, էջ 46: **Ակինեան Հ. Ներսէս**, Մովսէս Գ. Տաթեւացի..., էջ 161: «ԺէԳ», էջ 47: **Առաքել Դաւրիժեցի**, էջ 218:
826. «ԺէԳ» էջ 876: Մատենադարան. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավ. 79: «ՑՁԱ», N 986: Գերեզմանաքարի թվականը միայն Քաջիկյանի մոտ է («Արձագանք» 1886, N 23, էջ 330):
827. Մատենադարան. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավ. 79:
828. «Արձագանք», 1886, N 23, էջ 330:
829. **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ..., մասն Ա, էջ 52: «Արձագանք», 1886, N 23, էջ 330:
830. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 778: Նաև՝ «Արձագանք», նույն տեղում:
831. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 38:
832. Տապանագիրը տե՛ս վիմագրերի բաժնում:
833. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 8:
834. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1687, թ. 1:
835. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 37-38:
836. Նույն տեղում, գ. 3836, թ. 43-44:
837. Նույն տեղում, գ. 3843, թ. 7:
838. Նույն տեղում, գ. 2882, թ. 17:
839. «Արարատ», 1912, էջ 757:

ընկել է պարտքերի մեջ (վանքը՞)[840]: Վախճանվել է 1912 թ.[841]:

*Եփրեմ վարդապետ Ենիկոլոփյան* (մինչև 1875-ը). նրա «...գործունէութեան մասին ճիշտ և մանրամասն տեղեկութիւն հնարաւոր չէր իմանալ»[842]:

*Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանց* (1875, 17 մայիս -1902, 21 օգոստոս). ծնվել է 1850 թ. Կախեթի հայահոծ Սղնախ քաղաքում[843]: Նրա վանահայրության գրեթե ամբողջ ընթացքը (1887-1888 թթ. մի կարճ ժամկետում ազատվել է պաշտոնից) անցել է երբեմնի վանքապատկան, բայց բռնագրավված կալվածները վանքին վերադարձնելու և կառավարությանը հաստատել տալու նպատակին ծառայած պայքարում: Թուրք ավազակները նրան սպանում են, ինչպես ասվեց, ճիշտ այն թվականին (1902), երբ երկար տարիներ ձգձգված դատական ընթացքն ի վերջո վճռվել էր վանքի օգտին[844]: Վանահորը թուրքերը նրան կոչում էին «Կարմիր-Սուլթան» կամ «Շամքոռա ձորերի հերոս»[845]: Վանահայրը մշտապես հոգ է տարել նաև վանքի շենքերի բարեկարգության համար: Ժողովարարություններով, դիմումներով ու խնդրագրերով մշտապես ազգայինների ուշադրությունն է հրավիրել խնամքի կարոտ Չարեք վանքի վրա[846]: Իր անմնացորդ ու սրտացավ ծառայության համար 1877-ին Գևորգ Դ կաթողիկոսից ստացել է լանջախաչ[847], իսկ 1898-ին կոնդակով պարգևատրվել է ծաղկյա փիլոնով[848]: 1899 թ. կոնդակով պատվիրվել է Աստվածատուր վարդապետին վանահոր պաշտոնով թողնել նույն վանքում[849]: Թաղվել է վանքի բակում, որի վրա դեռևս 1911 թ. մի տապանաքար անգամ չէր տեղադրված (հետագա անփույթ ու անհոգ վանահայրերի անփութության պատճառով)[850]:

*Անտոն վարդապետ Վարդազարյան* (1887, 5 հոկտեմբերի - 1888, 24 հոկտեմբերի). պաշտոնավարել է կարճ ժամանակահատված. «5 հոկտեմ. Սինօդը որոշեց Մայր Աթոռոյս ագարակի տեսուչ արժ. Անտօն վարդապետ Վարդազարեանին կարգել Չարէքայ անապատի վանահայր»[851], իսկ 1 տարի անց, «ի 24 հոկտ. ...Անտոն վարդապետն Վարդազարեան արձակեալ ի պաշտօնէ վանահայրութեան Չարեքայ վանից ըստ խնդրանաց իւրոց...»[852]:

Վանահայրության պաշտոնից վարդապետի հրաժարականը կաթողիկոսն ընդունել է, քանի որ վեճի տակ գտնվող կալվածքի դատը հետապնդելու իմաստով Անտոն վարդապետն անպատրաստ էր, մինչդեռ նախորդ վանահայր Աստվածատուր վարդապետը լավատեղյակ էր գործի բոլոր ծալքերին. «...զի կալուածք այնր վանից, որք յանցելում ամի ի ժամանակի երկրաչափութեան անկեալ են վիճովք Արքունւոյ և վանիցն, կարօտին պաշտպանութեան փորձառու հմուտ անձի և նա անկարանա առանց խորհրդի և հրահանգութեան վարել ի դատաստանատունս զյարուցեալ վէճս ըստ այնց կալուածոց: Ուստի հրամայեցին զԱնտօն վարդապետն Վարդազարեան արձակեալ ի վանահայրութենէս Չարեքայ վանից, ի տեղի նորա նշանակել դարձեալ զԱստուածատուր վարդապետն Տէր Յարութիւնեան, որ տեղեակ է զամենայն հանգամանաց գործոց և զսահմանաց կալուածոցն և որ առաւել նշանաւորն է և կարևոր վասն կալուածոց ծանօթ է ընդ բնակչաց շրջակայ գիւղօրէից և հանակրելի յաչս նոցա: Ըստ այսմ հրամանագրել նախ՝ Աստուածատուր վարդապետի Տէր Յարութիւնեան ստանալ ցուցակաւ ի ներկայութեան միոյ յԱնդամոց Հոգևոր Կառաւարութեան Հայոց Ելիսաւէտապօլու յԱնտօն վարդապետէն զամենայն պատկանեալս Չարեքայ վանից, վարել զպաշտօն վանահայրութեան ամենայն հաւատարմութեամբ և ջերմեռանդութեամբ պաշտպանելով զիրաւունս և զօգուտ վանիցն ընդ իւրով պատասխանատուութեամբ և խնամել և կառավարել զվանքապատկան գոյս և կալուածս յամենայնի ըստ հրահանգութեանց Սինօդիս: Երկրորդ՝ պատուիրել վիճակաւոր Առաջնորդի Հայոց Ղարաբաղու նշանակել զԱնտօն վարդապետն վանահայր ի միում վանօրէից վիճակին...»[853]:

840. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 8882, թ. 18, գ. 2860, թ. 8:
841. «Արարատ», 1912, էջ 757:
842. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 18, ֆ. 53, ց. 1, գ. 2882, թ. 38:
843. «Արարատ», 1902, էջ 1024: «Մշակ», 1902, N 199, էջ 1:
844. «Մշակ», 1902, N 187, էջ 2:
845. «Մեղու Հայաստանի», 1879, N 37, էջ 3: Հայտնի է, օրինակ, թե ինչպես մի անգամ Աստվածատուր վարդապետը, լսելով, որ Գետաբեկի մոտ գտնվող վանքապատկան «Դյուզ-յուրտ» կոչված տեղամասի անտառում թուրքերն ապօրինի ծառահատումներ են կատարում, 2 փիբեցիների հետ գնում է դեպքի վայր արձանագրություն կազմելու: Տեսնելով դարանակալ մի թուրքի հրացանի փողը՝ վանահայրն առանց վարանելու ուղիղ գնում է դեպի թուրքը, որն էլ սարսափից չի համարձակվում կրակել:
846. «Արարատ», 1879, էջ 320:
847. «Արարատ», 1902, էջ 1024:
848. «Արարատ», 1898, էջ 283:
849. «Արարատ», 1899, էջ 268:
850. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ 11365, թ.1: Ուշագրավ է Աստվածատուր վանահոր հետ բանահավաք Ս. Քամալյանի հանդիպման մանրամասները. «Օրը մթնելու վրա էր երբ հասա, դիմացի պարտեզի փոքր տախտի վրա մի քանի րոպե հանգիստ առնելուց յետ հրավիրվեցի ներս: Վանահօր վախն ու կասկածը իմ վերաբերմամբ շատ շուտ փարատվեց: Սկսեց սիրալիր կերպով պատվել թեյով, օղիով, գինով և պահունի կերակրների ընթրիքով: Գիշերվա մեծ մասը սլացավ զրույցի ու խօսակցութեան մեջ: Ժամերգութիւն միշտ չի լինում, միայն կիրակի օրերը, երբ ուխտավորներ են լինում: Կովերը 2 էին, եկան կիթ՝ ո՞վ է պահում: -Աստծու ապաստան արածում են, -եղավ պատասխանը: Գիշեր ցերեկ իրանք արածում են, իրանք վերադառնում են» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 21):
851. «Արարատ», 1887, էջ 509:
852. «Արարատ», 1888, էջ 721: ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 37:
853. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 160, թ. 3: Ի դեպ, վանքի շարժական գույքի ավելի քան 100 անուն իրերի ցուցակը, ցավոք, կազմվել է առանց յուրաքանչյուր իրի ե՞րբ և ո՞ւմ կողմից նվիրված լինելու նշումով (տես՝ նշվ. գործը, թ. 32-33), ինչը սովորաբար հանդիպում է համանման այլ ցուցակներում:

*Վահան վարդապետ Գևորգյան* (1902). վանահայր է նշանակվել 1902 թ. դեկտեմբերին: Պաշտոնավարության կարճ միջոցում դրսևորել է ծայրահեղ անհոգություն: Պաշտոնատեղին բարեհաճել է ժամանել միայն 1903-ի փետրվարին, հետո էլ ավելի հաճախ լինում էր Գետաբեկում և ոչ վանքում[854]:

Ի դեպ, 1906 թ. Էջմիածնի Սինոդը պատվիրել է Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիային Վահան վարդապետի դեմ դատ հարուցելու «անտառից ինքնագլուխ փայտ վաճառելու համար»[855]:

*Հովհաննես Ոսկանյան Խոջայանց* (1903). Փիք գյուղի քահանան էր: Չարեք վանքի ժամանակավոր կառավարիչ է նշանակվել 1903 թ. հուլիսի 8-ին[856]:

*Թեոդորոս Շիրակունի* (1903). նկատի ունենալով Չարեքի հեռավորությունը Փիք գյուղից, վերջինիս բազմամարդությունը և Հովհաննես Խոջայանի ծանրաբեռնվածությունը՝ Գանձակի հոգևոր կառավարությունը դիմել էր Վրաստանի և Իմերեթի վիճակային կոնսիստորիային Խաչկապի Թարգմանչաց վանքի առաջնորդ Թեոդորոս Շիրակունուն Չարեք վանքի ժամանակավոր վանահայր նշանակելու խնդրանքով[857]:

*Անտոն վարդապետ* (1906). Էջմիածնի Սինոդի որոշմամբ Չարեք վանքի վանահայր էր նշանակվել նախկինում Ապարանի գործակալ Անտոն վարդապետը[858]:

Վանքում, հավանաբար, այս վանահորն է հանդիպել (անունը չի նշել) գերմանացի հնագետ Լ. Հաուպտը և նշել. «Այդ վանքը նույնպես ամայացած էր: Այնտեղ դեռ բնակվում էր միայն մի վանական, որը գերմաներեն լեզվին տիրապետում էր և մեզ ծանոթացրեց ընդարձակ, ամայի կառույցների, ստորգետնյա նկուղի հետ, որ ծառայում է որպես փախստավայր: Այնուհետև նա վանքի վայրի և խառնիխուռն կերպով աճող այգում, մի լորենու տակ մեզ թեյ, կարագ, հաց և սեփական արտադրության լորենու մեղր հյուրասիրեց, որոնք մենք շոգ միջօրէի արշավից հետո հաճույքով վայելեցինք: Մեղվապահությունը նրա հիմնական զբաղմունքն էր: Լավ տարիներին նա ստանում էր 50-ից 60, իսկ աննպաստ տարիներին միայն 10-ից 15 պուդ (1 պուդը կազմում է 16,38 կգ) մեղր»[859]:

*Տեր-Ավետիքով* (1910). մի վավերագրում վանահայրության պաշտոնում հիշվում է 1910 թ.[860]: Սրա օրոք վանքն անխնամ ու բարձիթողի վիճակում է եղել[861]:

854. «Արարատ», 1902, էջ 1018: «Մշակ», 1903, N 55, էջ 2: «Արարատ», 1903, էջ 161: «Մշակ», 1903, N 124, էջ 1-2:
855. «Արարատ», 1906, էջ 802:
856. ՀԱԱ, Պ461, ց. 1, գ. 12, թ. 69, ֆ. 53, ց. 1, գ. 1104, թ. 18:
857. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1104, թ. 18-19:
858. «Արարատ», 1906, էջ 794: Նաև՝ «Արարատ», 1907, էջ 8, 10:
859. **Lehmann-Haupt C. F.**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 133:
860. ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 250, թ. 1:
861. «Հովիտ», 1913, N 37, էջ 590:



ՉԱՐԵՔ ԲԵՐԴ. *ընդհանուր տեսքեր Շամքոր գետի հովտից*

**Չարեք վանքը՝ աքսորավայր.** բնակավայրերից բավականաչափ կտրված, մեկուսի դիրքը նկատի առնելով՝ Գանձակի հոգևոր իշխանությունները այստեղ ապաշխարելու էին ուղարկում տարբեր զանցանքների համար դատապարտված կարգազանց հոգևորականներին: Հայտնի է, օրինակ, որ 1871 թ. վանքում էր գտնվում Գանձակի քահանաներից մեկը. «Գանձակայ Ստեփաննոս քահանայն Եղեանց զրկեցաւ ի քահանայութենէ վասն զինեմոլ և անզարձ վարուցն, և առաքեցաւ ի վանս Չարեքայ յապաշխարութեան»[862]:

Այստեղ ապաշխարելու է ուղարկվել նաև Կուսապատի քահանան. «22 յունուարի. Ղարաբաղի թեմի Կուսապատ գիւղի Խաչատուր քահանայ Տէր

862. «Արարատ», 1871, էջ 316:











***ՉԱՐԵՔ ԲԵՐԴ. հատվածներ միջնաբերդի պարսպապատերից***

Եղիազարեանցը, գործած ծանր յանցանքների համար, պատժւում է ուղարկուելով յապաշխարութիւն Չարեքայ անապատը երկամեայ ժամանակով»[863]:

*ՉԱՐԵՔ ԲԵՐԴ*

**Տեղադրություն.** գտնվում է Շամքոր (Չարեք) և Գետաբակ գետերի միախառնման տեղում, հրվանդանաձև երկարած լեռնաճյուղի ապառաժ վերջավորության, ծովի մակերևույթից 1110 մ բարձրության վրա (գետափից ունի 100 մ բացարձակ բարձրություն):

**Պատմություն.** Զաքարյան իշխանները 1206 թ-ից հետո «...ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս՝ թագաւորին և ապա զԳետաբակս և զՉարեքն...»[864]: Բերդն ազատագրում է Իվանե Զաքարյանը. «Եւ մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարու-

863. «Արարատ», 1888, էջ 129:

864. **Վարդան վարդապետ**, էջ 138: Տես նաև՝ **Յովհաննէսեան Հ. Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 509-510:





*ՉԱՐԵՔ ԲԵՐԴ. հատվածներ միջնաբերդի պարսպապատերից*

թեամբ՝ առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Զաքարիայ...»[865]: Պատմական այս անցքերին է վերաբերում 1224 թ. «...եւ ի տէրութեան Այրարատեան նահանգին եւ Խաչենոյ, մինչ ի կողմանս Չարեքին աթաբակ Իվանէի...» հիշատակությունը[866]:

Ի թիվս Հայաստանի բազմաթիվ այլ բերդերի՝ Չարեքը գրավում են մոնղոլները. «...Ղատաղա նոյինն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու...»[867]: Այս մասին վկայություն ունի նաև Գանձակեցին. «...ի Չարեքն և ի Գետաբակս...»[868]:

Հետագա դարերում բերդի մասին աղբյուրների լռությունը հուշում է, որ մոնղոլների գրավումից հետո բերդի ռազմավարական նշանակությունն այլևս չի վերականգնվել:

**Տեղագիրների վկայությունները.** ԺԹ դարավերջին Չարեք բերդ են այցելել տեղագիր մի քանի հեղինակներ, որոնք, սակայն, բավարարվել են ամենահամառոտ, մինչև իսկ հպանցիկ նկարագրություններով: Ահա դրանցից մեկը. «Վանքից դէպի Գանձակ տանող ճանապարհի վրայ, երկու վերստաչափ հեռաւորութեամբ, նոյն Շամխոր կարկաչահոս գետի վրայ, շատ բարձր, նոյնպէս անտառապատ ապառաժի վրայ, երևում է բարձր աշտարակներով և ամբողջովին թրծած կարմիր աղիւսով շինուած բերդը ահագին տարածութեամբ պարիսպներով, որին կոչում են Շամխորի բերդ՝ գետի անունով, իսկ թուրքերը՝ Մամուր կալասի...»[869]:

865. **Վարդան վարդապետ**, էջ 140:
866. «ԺԳ», էջ 140:
867. **Վարդան վարդապետ**, էջ 144:
868. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 243:

**Կամուրջ.** Դրա մասին կա հետևյալ հիշատակությունը. «Բերդի տակ, գետի վրայ եղել է քարաշէն կամուրջ, որի կամարը այժմ ընկած է և տեղը



*ՉԱՐԵՔ ԲԵՐԴԻ ԿԱՄՈՒՐՋ. կամրջի աջափնա խելը*

փայտեր գցած, որոնց վրայից անցնողը մեծ սարսափ է զգում: Այդ կամուրջը բոլորովին փտած և խարխուլ դրութեան մէջ է: Մի մարդ որքան էլ կա-

869. **Սմբատ Մ.**, նշվ. հոդվ., էջ 2:

մաց փոխէ քայլերը, անցնելիս բոլոր փայտերը եբերում են, տեսնես ո՞ր անբաղդը մի օր այդ փտած փայտակոյտի խորտակուելուց՝ խոր գետի մէջ պետք է ընկղմուի...»[870]:

## ՉՈԲԱՆՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 19,5 կմ արևմուտք՝ պատմական Պապաջան գյուղատեղիից 2 կմ հարավ-արևմուտք, Զակամ գետի աջ վտակներից մեկի ձախակողմյան արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1290-1350 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ամայացած հին գյուղատեղիում, որը հայ բնակչությունից պարպվել էր ԺԸ դարում: Գյուղամիջում ցարդ նկատելի են հին շինությունների առանձին մնացորդներ, արևելյան եզրին կա ջրաղացի ավերակ:

1986 թ. ունեցել է 1013 բնակիչ[871]:

## ՋԱՖԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1380-1440 մ բարձրության վրա:

Պատմական անունը մոռացության է մատնվել: Հայաթափ է 1770-ական թվականներից ի վեր: Խաշնարած ցեղերը տեղում նստակեցության են անցել Ի դարի սկզբին և նորաստեղծ գյուղը կոչել՝ Ջաֆարլի:

1914 թ. ունեցել է 302 բնակիչ[872]:

## ՌՈՒՍՏԱՄ-ԱԼԻԵՎ (ՂԱՐԱԲՈՒԼԱՂ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1360-1470 մ բարձրության վրա՝ հարավահայաց ձորալանջին:

**Պատմություն.** հայաթափ է եղել ԺԸ դարի 70-ական թվականներին: Մեկ դար անց բնակեցվել է խաշնարած թուրքերով, որոնք մինչ այդ արդեն մի քանի տասնամյակ գյուղատեղին գործածում էին իբրև ամառանոց:

ԺԹ դարավերջին կապված պղնձարդյունաբերության զարգացման հետ՝ գյուղում հաստատվել են որոշ թվով արհեստավորներ, այդ թվում հայեր. «...Անցնելով առջևիս գետակը մտա շենը, որի բնակիչները թուրքեր էին, աչքի էին ընկնում արհեստավորներ, պղնձագործ, դարբին, դերձակ, փափախչի, նալբանտ: Հայ արհեստավորից տեղեկացա, որ կարելի է բարձրանալ Բերդի-դալաի գլուխը...»[873]:

Խորհրդային տարիներին վերանվանվել է Ռուստամ Ալիև[874]:



**ՌՈՒՍՏԱՄ-ԱԼԻԵՎ. գյուղի տեսքը Փառիսոսի բերդից**

**Բնակչություն.** 1886 թ. թրքաբնակ գյուղն ունեցել է 67 տուն՝ 383 շունչ (223 ար., 160 իգ.)[875], 1908-ին՝ 443[876], 1914-ին՝ 923 բնակիչ[877]:

**Հնություններ.** տակավին 1890-ականներին տեղում տեսանելի են եղել հայոց միջնադարյան եկեղեցու և գերեզմանոցի ավերակները[878]:

## ՍԱԲԱԹ-ՔԵՉՄԱԶ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1380-1460 մ բարձրությամբ հարավարևելահայաց ձորալանջին՝ Փառիսոս բերդից 2 կմ հյուսիս-արևմուտք:

Հայաթափ է եղել ԺԸ դարում: ԺԹ դարավերջին գյուղատեղին բնակեցվել է խաշնարածներով, որոնք մինչ այդ արդեն մի քանի տասնամյակ այն գործածում էին իբրև ամառանոց:

1908 թ. ունեցել է 130[879], 1914-ին՝ 280[880], 1983-ին՝ 547 բնակիչ[881]:

**Հնություններ.** տակավին 1890-ական թվականներին տեղում պահպանվել էին եկեղեցու և գերեզմանոցի ավերակները[882]:

## ՍԱՄԱՆԼՈՒ (ՍԱՄԱՆԼԸՂ)

Գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հյուսիս՝ Լղարակ գետի աջ արևմտահայաց ձորալանջին («...Սամանլու և Մըռըխլու գեղերը: Դրանք առուի աջ կողմն էին ձորակողի վրա դարսված»)[883], ծովի մակերևույթից 1320-1400 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Արդեն 1890 թ. ունեցել է թուրքական ծագմամբ խաշնարած մշտաբնակ բնակչություն: 1983 թ. ունեցել է 814 բնակիչ[884]:

---

870. Նույն տեղում:
871. «ԱՍՀ», h. 10, էջ 370:
872. "Кавказский календарь на 1915 г.", с. 119.
873. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 24:
874. Հայատյաց Ռուստամ Ալիևը Շամխորի շրջկոմի 1-ին քարտուղարն էր: Սպանվել է հայ վրիժառուի գնդակից:

875. "Свод...", с. 84-85.
876. "Кавказский календарь на 1910 г.", с. 271.
877. "Кавказский календарь на 1915 г.", с. 133.
878. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308:
879. "Кавказский календарь на 1910 г.", с. 354.
880. "Кавказский календарь на 1915 г.", с. 176.
881. «ԱՍՀ», h. 8, էջ 368:
882. **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:
883. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 17:
884. «ԱՍՀ», h. 8, ջ 277:

## ՍԱՐԻԿՅՈՅՆԱԿ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք՝ պատմական Կարկառ-Մեծ Ղարամուրատ գյուղերի միջակայքում, ծովի մակերևույթից 1440-1490 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին՝ հայաթափ հին գյուղատեղիում:

1914 թ ունեցել է 177 բնակիչ[885]:

## ՍԼԱՎՅԱՆԿԱ (ՎԱՐԴԱՆԱՊԱՏ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 10,5 կմ հյուսիս՝ Գետաբեկ-Շամխոր խճուղու վրա, ծովի մակերևույթից1460-1540 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի պատմական անունը մոռացության է մատնված: Ավանդության համաձայն՝ կոչվել է Վարդանապատ: Թուրքերի շրջանում հայտնի է եղել Ենգիջա-բազար անվամբ:

Բենիկները, 1770-80-ական թվականներին լքելով գյուղը, 1789 թ. հաստատվել են Խրամ գետի ձախ ափին և հիմնել ցարդ հայաբնակ Դաղեթ գյուղը: Հայտնի է, որ 1837-1838 թվականներին 40 տուն հայեր փորձել են վերահաստատվել Սլավյանկայում, սակայն չեն հարմարվել և 1844 թ. վերադարձել են Դաղեթ[886]: «Ռուս աղանդաւորներից առաջ այստեղ եղել են հայեր և մինչև այսօր էլ կան նորանց երկու եկեղեցիները. բայց շրջակայ թուրքերի աւազակութիւնների և ասպատակութիւնների երեսից ցրուել են,–գրել է հետազոտողը,–փորձել են ապա բնակութիւն հաստատել մի խումբ Դաղեղեցի գաղթական հայեր և նոյն պատճառով թողել վերադարձել են իրանց տեղն. բայց ռուս աղանդաւորները հաստատելով այստեղ բնակութիւն, կարողացել են զսպել աւազակութիւնը...»[887]:

Անդրադառնալով պատմական նույն անցքերին՝ 1890 թ. Սլավյանկա այցելած Ս. Քամալյանը նշել է. «Պատմում են, այդ եկեղեցու ժողովուրդը գաղթելուց յետ այդտեղը եկել են բռնել թափառական թուրքեր թե այրումներ, նախկին բնակիչները վերադարձել են, թուրքերը մոտ չեն թողել, կռիվ է ծագել մեջները, թուրքերից 3 հոգի սպանվել են: Հայերը երկիւղ են կրել ու հեռացել գնացել բնակվել Խրամի մոտ, Դաղեթ գեղը հիմնարկել: Մի առժամանակից յետ գաղթական դուխաբորները տիրապետել են այդ ընդարձակ հողերին և բնակվել»[888]:

**Բնակչություն.** հայաթափ գյուղատեղիում ռուս-դուխաբորները բնակություն են հաստատել 1840-ական թվականներին:

Բնակչության թվաքանակի մասին վիճակագրական սակավաթիվ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1874[889] | | | | 1383 |
| 1886[890] | 201 | 759 | 753 | 1512 |
| 1888[891] | 130 | | | |
| 1894[892] | 200 | | | |
| 1914[893] | | | | 1473 |

Դեռևս 1864 թ. գյուղ այցելած ուղեգիրը բնակիչների մասին անթաքույց հիացմունքով նշել է. «...բնակիչները կոկ, մաքուր, բարեհամբույր, ունևոր և աշխատասեր...: Նրանց տները հարմարավետ են կառուցված փայտից՝ ռուսական խրճիթի ոճով: ...Սրանք այստեղ լավագույն ժողովուրդն են»[894]:

Թերևս միայն մեկ արատավոր սովորություն ունեին վերաբնակիչ աղանդավորները, որի մասին էլ ժամանակակիցը նշել է. «...ինչպէս ասում են, արբեցողութիւնը սաստիկ զօրացած է»[895]:

Հայտնի է, որ 1960-ական թվականների վերջերին Սլավյանկան «խաղաղությամբ» զավթեցին ադրբեջանցիները[896]:

**Կառուցապատում.** ԺԹ դարավերջին գյուղն ունեցել է. «...կանոնաւոր, երկար և լայն փողոցներ...»[897]: Հատակագծային հիշյալ առանձնահատկությունը ցայժմ գրեթե անխաթար է:

**Կրթություն.** 1888 թ. Սլավյանկայում հիմնվել է պետական արական երկդասյա դպրոց[898]:

**Տնտեսություն.** ռուս-դուխաբորներն օրինակելի աշխատավորներ էին: Մի առիթով ականատեսը դուխաբորի հողը վարելու ձևի մասին նշել է. «Դաշտում մի հասարակ բան գրավեց իմ ուշքը, 2 դուխաբուր կառավարում էին մի գութան, որտեղ լծված էին 6 լուծ եզներ. մեկը մաճկալն էր, միւսը մի երկար ակոր թեթև մտրակ ձեռին ձայն ձուն հանելով, շվացնելով, մտրակը օդում ճոճելով գնում էր եզների կողքով: Գութանը վարում էր: Եթե հայի, վրացու կամ թուրքի լիներ այդ գութանը, անշուշտ 2 հոգու

885. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
886. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 356:
887. «Արձագանք», 1888, N 7, էջ 86-87:
888. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 19-20:
889. "Кавказский календарь на 1886 г.", с. 124.
890. "Свод...", Тифлис, 1888, с. 86-87. Ի դեպ, 1886 թ. բացի ռուս-դուխաբորներից գյուղում բնակվում էին նաև 7 տուն (19 շունչ) հայեր, 1 տուն (4 շունչ) վրացի, 1 տուն (1 շունչ) լեհ և 1 տուն (1 շունչ) Կազանի թաթար:
891. «Արձագանք», 1888, N 7, էջ 86:
892. «Արձագանք», 1894, N 104, էջ 2:
893. "Кавказский календарь на 1915 г.", с. 181.
894. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, "Кавказ", 1865, N 35, стр. 199 (բնագրում՝ "...жители опрятны, чисты, добронравны, зажиточны и трудолюбивы... Дома у них уютны, построены из дерева по образцу малороссийских хат... Это лучший здесь народ").
895. «Արձագանք», 1888, N 7, էջ 86:
896. **Епископосов Г. Л.**, К истории существующего административно-территориального деления Закавказских республик и продолжающихся нарушений национальной политики КПСС в Азербайджанской ССР, "Белая книга. документы и материалы", книга 1-ая, т. 2, Ереван, 1989, с. 794.
897. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 356:
898. Նույն տեղում:

փոխարեն 5-ը կլինեին ու քթրում մարդի պես եզան ուսին նստած, ճիպոտով վեր հատելիս»[899]:

Հատկանշական է, որ ռուս-դուխաբորներն էլ, հանձինս կառավարական պաշտոններ ձեռք գցած թուրքերի, միշտապես ենթակա են եղել շահագործման ու թալանի: Այդօրինակ մի դեպք է նկարագրում ականատեսը 1890 թ. «Նոր էի հանգիստ առել հայ խանութպանի մոտ, երևացին մի խումբ ձիավորներ ձայն տվին՝ պրիստավն եկավ: Գրեթե ամենը իրարանցով ընկան: Քառորդ ժամ չանցած կոմիսարները զզիրների հետ ընկան տները, գեղից մթերքների ժողովք էին անում, թե պրիստավի և իրա հետերի և կոմիսարների համար: Այդ թալանչութիւնը անում էր Զագամ գավառի պրիստավ Ասլանբեկ Ռուստամբեկովը: Հավատացնում էին, որ նույն բանը անում էր ամեն մի շեն մտնելով»[900]:

**Սլավյանկայի հայկական հուշարձանները.** տակավին 1890 թ. գյուղի հյուսիսարևմտյան եզրին պահպանվել են բնիկներից մնացած եկեղեցու, գերեզմանոցի ու տնատեղերի ավերակները. «...դուխաբուրների բնակութիւնից դուրս նշմարելի եղավ մի ավերակ: Մոտեցա, ոտնակոխ եղած հին տապանաքարեր, գրեթե խամ քարերից, 2 խաչքար կանգնած, շենքը կոպիտ և խաչերը անճաշակ: Հանգստարանի մեջտեղում եկեղեցի՝ ծածկը վրեն, արևմտեան կողմն էր միայն քանդած, ներսից սեները պոկած, փլած էին աջ կողմի խորանի հետ, իսկ ձախ կողմինը ամբողջ մնում էր...: Ձախ խորանի կողմին եկեղեցու ներսի պատի վրա հանած է կարմիր քարէ խաչ մի արշին տրամագծով ու պատում սազաղրած: Եկեղեցու վերև, դեպ արևմուտ երևում են բակեր, տնատեղեր: Դուխաբուրների բնակութիւնը, որ Սլավեանկա է կոչվում, գտնվում է առվակի աջ կողմը»[901]:

Պահպանվել և սերունդներին է փոխանցվել հետևյալ անտիպ արձանագրությունը.

Խաչքար. «Սեղանի մեջտեղի պատում լուսամտի տակ խաչքար կար վրայի գրութիւնը կարդացվում է».

*Սբ. խաչս բարեխօս է Պաճին և Պողոս կազմեցին սբ. խաչս, թվ. ՌԿԲ (1613) թ.:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, բ. 19:

## ՍՈԳՈՒԹԼՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 1390-1450 մ բարձրության վրա, հարավարևելահայաց սարահարթի վրա:

Անունը թարգմանաբար նշանակում է՝ Ուռուտ:

**Բնակչություն.** հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները: Շուրջ 100 տարի անց հայաթափ գյուղատեղիում մշտական բնակություն են հաստատել թուրքական ծագմամբ խաշնարած ցեղեր:

1908 թ. ունեցել է 570[902], 1914-ին՝ 1252 բնակիչ[903]:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** հայ-թուրքական ընդհարումներին Սոգութլու գյուղի թուրքերը ակտիվ մասնակցություն են ունեցել հատկապես Գետաբեկի պղնձահանքերի մոտ գտնվող հայաբնակ Ղազախ-Գետաբեկ գյուղի ոչնչացման գործում: Հայտնի է նաև, որ Ղազախ-Գետաբեկի կործանումից հետո ողջ թալանը թուրքերը ժողովվել էին այս գյուղում:

Սակայն գյուղի՝ էությամբ գիշատիչ բնակիչների պատիժը շատ չի ուշանում: 1906 թ. հունվարի 1-ին հայ քաջերի խումբը պաշարում է գյուղը՝ անմեղ զոհերի համար վրեժ լուծելու նպատակով. «...Դեկտեմբերի 31-ի գիշերը մեր արշաւախումբը բանակ դրաւ Սեօգիւթլուի շրջակաները և կարևոր դիրքեր գրաւեց: Ուրիշ օժանդակ խումբեր դարան մտան շրջակայ ձորերու մէջ: Լուսաբացին, նոր տարուան առաջին ժամերուն (1906, Յունուար 1) հնչեց խմբապետի որոտաձայն շեփորը: Պատերազմական փողի տւած ազդանշանի վրա, հարիւրաւոր կուրծքերէն դուրս թռաւ «յառա՛ջ, յառա՛ջ» աղաղակը և խումբը գրոհ տւաւ դէպի թշնամու բանակը: «Յառա՛ջ, յառաջ» գոռալով, դուրս նետուեցան ձորերէն և օժանդակ խումբերը: Սեօգիւթլու շրջապատուեցաւ: Թուրքերը իրենց դիրքերեն սկսան կրակել: Բայց անզօր էին մերիններու բուռն համազարկերուն դէմ: Խմբապետը նետի պէս առաջ կսլանար և ետևէն՝ աւերւած հայ գիւղերու և ողջ սգաւոր Հայաստանի վրէժխնդիր կամաւորները. դազախեցի Բէգլարը, բանանցեցի Մակիչը, փիբեցի Համբարձումը (Թաւաքալեան), ախալքալաքցի Պետրոսը, վանեցի դասար Գրիգորը, վանեցի Կարապետ Մելքոնեանը... Գիւղի տակէն միաժամանակ ներս արշաւեց մշեցի Վարդանը, տասնեակ ընտիր զինուորներով... Եւ մէկ ժամուան մէջ մեր ձեռքն անցան թշնամու բոլոր դիրքերը: Տուն տեղ ձգելով թուրքերը փախան ու մերոնք՝ ետևէն: ...Անխնայ կոտորեցին այր մարդիկը, խնայելով կին ու երեխայ, և աւերեցին ու հրդեհեցին գիւղը: Երեք ժամէն յետոյ ահագին Սեօգիւթլուն ոչնչացած էր...»[904]:

**Հայկական գերեզմանոց.** ներկայիս Սոգութլուն հնում և մինչև ուշ միջնադար բավականաչափ մարդաշատ է եղել. դրա վկայությունը գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք տարածված ընդարձակ գերեզմանոցն է, որտեղ պահպանվել են արձանագրված տապանաքարեր:

899. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, բ. 20:
900. Նույն տեղում:
901. Նույն տեղում, բ. 19:

902. “Кавказский календарь на 1910 г.”, с. 366.
903. “Кавказский календарь на 1915 г.”, с. 180.
904. **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 352-353: Տես նաև՝ «Մշակ», 1906, N 24:









*ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). բերդասարը Փառիսոս քաղաքատեղիի կողմից և Շամքոր գետի հովիտն ու քաղաքատեղին բերդասարից*

## ՍՈՆԱԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 35 կմ հյուսիս-արևմուտք:

Հայաբնակ է եղել մինչև 1770-80-ական թվականները, այնուհետև գրեթե մեկ դար ամայի գյուղատեղին թուրք խաշնարածները գործածել են իբրև ամառանոց, իսկ ԺԹ դարավերջին նստակեցության անցնելով՝ հիմնադրել են ներկայիս գյուղը:

Վերջինս 1914 թ. ունեցել է 233 բնակիչ[905]:

## ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք, Շամքոր գետի ձախ վտակի՝ Փառիսոսի ափին:

905. “Кавказский календарь на 1915 г.”, с. 184.

**Պատմություն.** Փառիսոսը եղել է համանուն թագավորության կենտրոնը: Ժ դարի սկզբին Սահակ Սևադան իր ժառանգական տիրույթին՝ Փառնես (Փառիսոս) գավառին է միացնում Ուտյաց նահանգի Գարդման և Ձորագետ գավառները՝ հիմնելով Փառիսոսի իշխանությունը: Նրա որդին՝ Սենեքերիմը, նույն դարի կեսերին իրեն հռչակում է թագավոր: Բյուզանդական կայսրությունը, որ շահագրգռված էր հայ պետականությունը մանր թագավորությունների տրոհելու, նրան ուղարկում է թագ և արքայական ծիրանի: Անիի Բագրատունիները որոշ ժամանակ ստիպված էին համակերպվել նորաստեղծ թագավորության գոյության հետ: Սակայն Ժ-ԺԱ դարերի սահմանագծում Գագիկ Ա Շահնշահը պայքար է սկսում Փառիսոսի դեմ՝ իբրև դաշնակից ունենալով Գանձակի Փատլուն ամիրային: 1003 թ. Սե-



***ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). միանավ եկեղեցի քաղաքատեղիի ծախափնյա թաղամասի ավերակներում. տեսքը՝ հարավ-արևելքից, հարավից և հատվածներ որմնասյուներից և որմնակամարներից***

նեքերիմի մահից հետո գահը ժառանգում է նրա որդին՝ Փիլիպպեն: ԺԱ դարի կեսին Փիլիպպեն զոհ է գնում թշնամական խարդավանքին: Թագավորությունն անկում է ապրում, իսկ տարածքը հետագայում ընդգրկվում է Խաչենի իշխանության կազմում:

Ներկայիս գյուղը գոյացել է պատմական Փառիսոս քաղաքատեղիում՝ նրա ավերակների վրա, որի մնացորդները ակնառու էին դեռևս ԺԹ դարի վերջերին. «Դեռ պարզապէս նշմարուում են խիտ առ խիտ տնաբակեր և քարուկիր շինութեանց շատ հետքեր...»[906]:

Փառիսոսը հայաթափ է եղել ԺԸ դարում: Տակավին 1880-ական թվականների վերջերին երբեմնի ավերակ քաղաքատեղիի տարածքը խաշնարածների համար ծառայում էր որպես ամառանոց[907]: Ավելի ուշ վերջնականապես հաստատվում են տեղում և բնակավայրը ձեռք է բերում գյուղի կարգավիճակ՝ Ղալաքենդ (բերդագյուղ) անվանումով:

Ամենայն հավանականությամբ, ներկայիս Ղալաքենդը 1671 թ. «յերկիրս Շամքօռ»-ում հիշված Բերդատակ գյուղն է, որտեղ գրիչ Հովհաննես երեցը (ստացող՝ գրչի հայրը՝ Էվազ և մայրը՝ Պայ) հեղինակել էր մի «Աւետարան»[908]:

**Եկեղեցիները.** ԺԹ դարավերջին տեղագիր մի քանի հեղինակներ եկեղեցիների տարբեր քանակ

906. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 307:

907. «Արձագանք», 1888, N 7, էջ 86 («Բերդի հանդէպ տարածվում են գեղեցիկ արօտատեղիներ և մարգագետիններ, որոնցից օգտվում են վրանաբնակ թուրքերը, ամառները պարզելով իրանց վրանները բնութեան այս գեղեցկութեան մէջ...»):

908. «ՑՁԲ», ձեռ. N 6645, էջ 364:



**ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). միանավ եկեղեցի քաղաքատեղիի ծախափնյա թաղամասի ավերակներում. տեսքը՝ հյուսիսից, արևմուտքիցհարավ-արևմտյան անկյունը ներքուստ, ներքին տեսքը դեպի արևելք և որմնախոյակ**

են արձանագրել: Քաջիկյանը, օրինակ, վկայում է. «Ղալաքենդի սահմանում կան հայոց եկեղեցիների աւերակներ, թուով վեց, որոնցից մի երկուսը թուրքերը քանդել են անպատուհաս և քարերը տարել շինութիւնների համար...»[909]: Առավելագույնը 11 եկեղեցի է արձանագրել Բարխուտարյանցը. «Բաւական ընդարձակ է աւերակիս ծաւալն. բնակչաց որքանութիւնը մօտաւորապէս գիտենալու համար՝ բաւական է յայտնել, թէ աւերակ քաղաքումս կայ տասնեմի եկեղեցի, երեքն գետակի աջ ափի վերայ, յորոց մին կանգուն է և երկուսն կիսաւեր. իսկ ութն շինուած է գետակի ձախ կողմումն, որից կանգուն են՝ երկուսն և աւերակ՝ վեցն: Աւերակների հիմքերն պարզապէս երևում են և շատ տարի չէ որ քանդած




**ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). միանավ եկեղեցու հատակագիծը**

909. «Արձագանք», 1888, N 7, էջ 86:








***ԴԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). միանավ եկեղեցի Փառիսոս գետի աջակողմում. տեսքը՝ հարավ-արևմուտքից, հարավից, հյուսիսից-արևմուտքից, արևելքից և խաչաքանդակներ եկեղեցու հիմնաշարին***

են, ինչպես վկայում են ականատեսները...»[910]:

*Մայր եկեղեցի.* գտնվում էր գետի ձախ ափին: Քանդել են 1880-ական թվականներին. «...մի քանի տարի առաջ քանդած և սորա քարերով շինած են խանութներ»[911]: 1890 թ. դեռ նշմարելի էին եկեղեցու հիմքերն ու «խորանի կլորակն», որի արտաքին չափերն էին` 15 x 11,5 մ[912]:

*Սբ. Հովհաննես եկեղեցի.* գտնվում էր քաղաքատեղիի արևելյան կողմում` Փառիսոս վտակի աջակողմյան ձորալանջին: Արտաքին չափերը` 8,27 x 5,05 մ: Ունեցել է շրջապարիսպ, միաբանների խցեր և գերեզմանոց[913]:

910. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 307:
911. Նույն տեղում:
912. Նույն տեղում:
913. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308:

Ունեցել է հետևյալ արձանագրությունները.

Խաչքար. ագուցված արևմտյան ճակատին.
*Թվ. ՇԾԵ (1106). ես Վա[րդան...]:*
Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308: «Դիվան...», V, էջ 271:

Խաչքար. մուտքի մոտ.
*Թվ. ՋԻ (1471):*
Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308: «Դիվան...», V, էջ 271:

*Ճգնավոր մատուռ.* Սբ. Հովհաննես եկեղեցուց փոքր-ինչ արևմուտք (ներքև) անտաշ քարով կառուցված փոքրիկ մատուռ է, որի ներսում եղել է անարձանագիր շիրմաքար: Մերձաբնակ հայերը կոչում էին «Ճգնավորի գերեզման»[914]:

914. Նույն տեղում:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին 2 արձանագիր խաչքար քաղաքատեղիից փոխադրվել և տեղադրվել է երկաթքձից ներքև: Ստորև ներկայացնում ենք դրանց արձանագրությունները.

Խաչքար. Մայր եկեղեցուց արևմուտք՝ երկաթքձից ներքև.

*Թվին ՉԻ (1271). յանուն Աստուծոյ ես Հայրապետ ... ւա... եղբայր Փա... կանգնեցաք զխաչս յիշատակ հաւր մերոյ Խորենայ, մաւր մերոյ Շաղակկոյ ու եղբաւր մերոյ Խայոմքենշայ. ով զայս գիրս կարդայ...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 307: «Դիվան...», V, էջ 271:

Խաչքար. Մայր եկեղեցուց արևմուտք՝ երկաթքձից ներքև, նախորդի մոտ, չափերը՝ 2,75 x 1,22 մ.

*Թվ. ՋԼ (1481). յանուն Աստուծոյ ես Սասնայս կանգնեցի զխաչս ի տէրութեան ժամանակի իմոյ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամուսնոյն իմոյ Սիրունիկայ և որդւոյ իմ Սարգիսայ և դստերն իմոյ Մամախաթունայ, Նփաղիաճայ, եղբաւրն Սիրունիկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց: Ով կարդայ այս. Դաւիթս յիշեսցէ առ Աստուած. ջրհեց...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 307: «Դիվան...», V, էջ 271:

1982 թ. քաղաքատեղիի տարածքում տեսանք միայն երկու եկեղեցիներ, որոնք, սակայն, տեղագիր հեղինակների նկարագրածների հետ չեն համընկնում: Ըստ այդմ, ներկայացվում են առաջին անգամ:

Առաջին եկեղեցին գտնվում էր Փառիսոս վտակի աջ ափի բարձրության վրա, քայքայված, բայց դեռևս կանգուն միանավ, թաղակապ շինություն էր՝ կառուցված գլխավորապես անմշակ և մասամբ կոպտատաշ (հատկապես անկյունաքարերը) քարով, կրաշաղախով: Միակ մուտքը բացված էր հարավային ճակատից: Հյուսիսային պատին քանդակված էին հնաոճ խաչեր:

Երկրորդ եկեղեցին ավելի ընդարձակ կառույց էր: Գտնվում էր Ղալաքենդ գյուղի մեջ՝ Փառիսոս վտակի ձախ ափին: Սա միանավ, թաղածածկ, կիսաբոլորակ խորանի երկու կողմերում զույգ ավանդատներով կառույց էր՝ հիմնականում շարված անտաշ, կոպտատաշ քարով: Սրբատաշ էին պատերի վերնամասերը, երկու զույգ որմնասյուներն ու ներսում՝ պատերի երկայնքով ձգվող որմնակամարները, նաև՝ անկյունաքարերը: Մուտքը բացված էր հյուսիսային ճակատից: Լուսամուտները 4-ն էին, 3-ը՝ արևելքից, 1-ը՝ արևմուտքից: Իրենց հարդարանքով աչքի էին ընկնում հատկապես որմնասյուների քանդակազարդ խոյակները: Արտաքին չափերն էին՝ 11,82 x 7,40 մ: Եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունները բնորոշ են Թ-Ժ դարերին:

**Փառիսոսի բերդ.** գտնվում է քաղաքատեղիի հյուսիսային մասում, գետի ձախափնյա ժայռոտ լեռնագագաթի վրա: Շրջապատի նկատմամբ ունի իշխող դիրք: Հարավից լեռնագագաթը վիմահերձ է և բնական անառիկություն է հաղորդում բերդին: Մյուս կողմերն ամրացված են բրգաշատ պարիսպներով, որոնք կառուցված են անմշակ կամ կոպտատաշ քարով ու կրաշաղախով (հյուսիսային և արևմտյան կողմերում կրկնաշարք են), պարիսպների հաստությունը 2,5 մ է, պահպանվել են 8-9 մ բարձրությամբ: Կիսաբոլորակ աշտարակների թիվն անցնում է մեկ տասնյակից: Բերդի մուտքն արևելյան կողմից է: Պարսպապատ տարածքում պահպանվել են տարբեր չափի բազմաթիվ շինությունների հետքեր, կիսավեր մատուռ, իսկ հյուսիսային պարսպապատին կից կան ընդհանուր մուտքով միմյանց հետ հաղորդակցվող թաղակապ 2 սենյակներ: Սրանցից մեկը ծառայել է իբրև ջրամբար: Ավանդության համաձայն՝ ջուրը բերդ է հասցվել ստորգետնյա առվով. «...Բերդի գագաթում կայ ջրամբար, որը ինչպէս ասում են լցւում է ջուրը հեռուից՝ գետնի տակով բերած առուից...»[915]:

Կառուցվել է Թ-Ժ դարերում: Եղել է Փառիսոսի թագավորության գլխավոր ամրությունը և միջնաբերդի նշանակություն է ունեցել երբեմնի համանուն մայրաքաղաքի համար:

ԺԹ դարավերջին բերդն այցելած մի քանի հեղինակներ թողել են նկարագրական ուշագրավ նյութեր: Դրանցից է 1890 թ. ամռանը բերդ բարձրացած Ս. Քամալյանը: Ահա թե նա ինչ է գրել. «...շենը կպած է կրաքարից բաղկացած բլրի արևելակողմին, որի գագաթին հսկայաձև խոյացած են ամրապինդ ծակերավոր պարիսպները դալարի: Բլրի լանջով բարձրացա դեպի արևելահյուսիս, ուր կրաքար էին հանում ահագին զրղոններով: Հյուսիսային կողմի կամրջի մոտից ձի հեծած խոտորս գնացինք, շատ տեղ կեռմաններ անելով: Ստորոտից նայելիս դժար էր թվում բերդի մոտ հասնելը. 25 րոպեի ընթացքում բարձրացած, ուրախ և գոհ շրջում էինք բերդապարիսպների գլխներին ու կողքերին, զգուշութինով ականելով քարակույտերը: Բլրի շուրջը կարճ ու կանաչ արոտով է ծածկված, մեծ մասը սպիտակին են տալիս կրաշերտերը հողի ու խոտի տակից: Պարիսպը միայն դրսից պատած է մացառներով և մի քանի մեծ կաղնի ծառերով հյուսիսային կողմից: Բլուրը լեռնաչափ բարձր ու հարավից կանգնած երկար ու խոր ձորի մոտ, որի միջով գետակն է հոսում սկիզբ առնելով *Սատանի խաչ* կոչվող հեռավոր գագաթից: Ղալի մուտք՝ արևմուտքից է ձորագլխին մոտիկ, ներս մտնողը նախ հայացքը ձգում է աջ թևի կողմի ձորի հատակում վշշող ջրին: Հյուսիսից դեպի մուտքը, պարսպի տակ բավական տեղ քարահատակ է շինած: ...պարիսպը

915. **Սմբատ Մ.**, նշվ. հոդվ., էջ 3:



*ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). բերդի տեսքը հյուսիսակողմից և հատվածներ նույն կողմի բրգաշար պարսպապատերից*

բավական բարձր է, մեջն ունի գլանաձև չորս վեր-շոկ տրամագծով խոր խոռոչներ: Բերդը ահագին նստվածք ունի, ներսը փլված, շուրջը փլված, պարսպից ամբողջ են մնացել արևմտայի ու հյուսիսային կողմերը: Ասում են, որ Ղալեն իրա հատուկ ջուրն ու ջրամբարն է ունեցել իրա փառավոր միջոցին: Այժմ այդ ջուրը կա, բայց հիմա խռովել է և ընթացքը փոխել: Ահագին աղբյուրը, որ ղալայի հյուսիսակողմում բլրակի տակից ոչ թե հոսում կամ բղխում է, այլ մեծ քարահորդ ուներ բերանի առաջ կոճակների ուժով խաղացնում է բլբայով ու վրխալով: Երկու ջաղաց կբանեն այդ ջրով: Ղալի մոտից 2-3 վերստ հեռու է դրա բերանը, բայց հավատացնում են, որ ղալի որոշեալ տեղից եթե հարդ են ածում. ժամանակ անցնելուց հետ երևում է աղբյուրի ջրի մեջ: Ղալի կենդրոնում հին մատուռի անշան մնացորդներ կան, երևում էին մոմի, խվի, զռեի հետքեր: Կամրջի մոտ ձի հեծնելով անցանք կորեկի նորաբույս արտերի միջով դեպի ձախ լեռնաշղթայի անցով իջանք այն ձորը, ուր հոսում է *Շաքար բէկի* առուն»[916]:

**Փառիսոսի վանք.** գտնվում է Փառիսոս քաղաքատեղիից 6 կմ հարավ-արևելք՝ Տանձուտ գյուղատեղիից 1,5 կմ արևմուտք՝ անտառապատ սարահարթում. «Դեռ ևս տեղական բնակչաց բերնիցն լսվում է այն սարի անունն, որոյ վերայ շինուած է յիշեալ վանքն՝ Կապանք, կամ այլապէս տաճկաց բառով՝ Դարբանդ, լսվում է նմանապէս և զանազան դրացի տեղերի անուններ, որ ասվում է Տանձուտ, և Գարդմանայ ջուր...»[917]: Վանքի վերաբերյալ հիշա-

916. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 24-26:

917. **Լազարեանց Ս**., Վանք Փառիսոսի և թագաւորութիւն Հայոց ի Փառիսոս, «Մեղու Հայաստանի», 1859, N 13, էջ 99:







***ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). բերդամիջի մատուռի ավերակները***



***ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). բերդի հատակագիծը***

տակությունները պահպանվել են Ժ դարից սկսած: Այն հայտնի էր իբրև եպիսկոպոսանիստ, որի առաջնորդներից երեքը հետագայում աթոռակալել են Աղվանից կաթողիկոսարանում: «Յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց» էին Դավիթ Դ (923-929), Դավիթ Ձ (965-971), Մովսես Բ (987-993) կաթողիկոսները[918]: Անանիա Մոկացի Ամենայն Հայոց կաթողիկոսի (946-968) գումարած Խաչենի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում էր նաև Փառիսոսի վանքից Դավիթ վանականը[919]:

Եպիսկոպոսական աթոռի նշանակությունը պահպանել է նաև հետագա դարերում: 1691 թ. հիշվում է եպիսկոպոս Բարսեղը «...Բարսեղ եպիս(կոպոս) Փառ(իսոսա)յ և առաջնորդ Շամքոռու...»[920]: 1764 թ. վանքի առաջնորդն էր Հովհաննես արքեպիսկոպոսը[921]: 1889 թ. մի վավերագրից տեղեկանում ենք վանքի եկեղեցու անվան մասին՝ «Փառիսոսի սբ. Ստեփաննոսի վանք»[922]:

Եղել է գրչության կենտրոն, ուր ընդօրինակված ձեռագրերից հայտնի է, մասնավորապես, 1657 թ. ստեղծված ավետարանը. «...Կարմիր Աւետարան անուանեալ գրեալ ի թվ. ՌՃԶ (1657), ի Քարթման գաւառի, ի Հայրապետութեան Գանձասարու Պետրոս կաթողիկոսի, ձեռամբ Յարութիւն դպրի, կազմեալ ընդ ձեռն Յակոբ վարդապետի, ի վանս Փառիսուսայ»[923]:

918. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 346, 347: Նաև՝ **Կիրակոս Գանձակեցի,** էջ 199:

919. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», «Արարատ», 1897, էջ 134:

920. **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ..., մասն Բ, էջ 18:

921. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ Ե:

922. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3884, թ. 227:

923. «Էջմիածին», 1970, Ա, էջ 46: Նույն բովանդակությամբ հիշատակարան է հրատարակել Գ. Փիրղալեմյանը: Ճիշտ է, այնտեղ խոսք չկա Փառիսոսի մասին (բազմակետեր են դրված), սակայն ակնհայտ է, որ գործ ունենք նույն հիշատակարանի հետ: Վերստին հրատարակվել է՝ «ԺԷԳ», էջ 780:



ՂԱԼԱՔԵՆԴ (ՓԱՌԻՍՈՍ). բերդամիջի մատուռի ավերակները

ԺԹ դ. վերջերին երբեմնի հոգևոր կենտրոնը գտնվում էր խիստ անմխիթար վիճակում: Ականատեսի վկայությամբ՝ «Այս վանքի անմարդաբնակ լինելուց թուրքերը օգուտ քաղելով՝ դարձրել են ոչխարի փարախ, աղբով և ապականուած ջրով լիքը, այնպէս որ ներս մտնելու հնարք չկայ»[924]:

Փառիսոսի վանքի համալիրը բաղկացած է եղել 3 եկեղեցուց, 2 գավթից և 1 մատուռից, որոնք կառուցվել են արևելք-արևմուտք դասավորությամբ, գրեթե մի շարքի վրա. «...Բ. և Գ. տաճարներն ունին երեք սիւնով կամարակապ գաւիթ. իւրեանց հարաւային կողմում...: Միջի եկեղեցին աւելի մեծ է միւսներից: Երեքն ևս հին շինուածք են որոց դռներն բացուած են հարաւային կողմից: Արևելեան տաճարս ևս ունի փոքրիկ գաւիթ, որի մօտ է զանկատունն, որ շինուած է սրբատաշ չիչ քարով. չիչ քարով շինուած են բոլոր տաճարների և սրահների անկիւնաքարերն և կամարներն. իսկ մնացեալ մասերն անտաշ քարով: Բ. և Գ. տաճարներն ունին 25 մետր երկարութիւն և 11 մետր 70 սանթիմ լայնութիւն: Ամբողջապէս կանգուն են տաճարներս. բայց աւերակ են միաբանից բոլոր խուցերն: Շատ գերեզմաններ կան թէ՛ պարսպից ներսումն և թէ՛ դրսումն, սակայն չգտանք գրութիւն: Վանքիս մօտ երևում են ջրաւազան և խեցեղէն խողովակների հետքեր, արևմտեան կողմի աղբիւրի ջուրն բերուած է վանքս»[925]:

Ուսումնասիրողները Փառիսոսի վանքից հրատարակել են մի արձանագրություն՝ փորագրված արևմտակողմյան եկեղեցու մուտքի ճակատակալ քարին՝ պարզ խաչապատկերի հարևանությամբ.

Բարավոր. «Գ. տաճարն իւր դռնագլուխ քարի վերայ ունի».

*:ՆԽԳ: (994) Մուսէս երէց:*

Հրատ. **Սմբատ Մ**., Հնութիւններ Գետաբէկի շրջակայքում, «Նոր-Դար», 1893, N 36, էջ 3: **Բարխուտարեանց Մ**, Արցախ, էջ 306: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 340: «Դիվան...», V, էջ 271:

Ծանոթ. առաջին երկու հրատարակիչները թվագրերը չեն նկատել: Ի դեպ, Սմբատյանցը նշում է ևս մեկ արձանագիր խաչքարի մասին, որը նա չէր կարողացել ընթերցել. «...մի ուրիշ տեղ նոյնպէս խաչքարի վրայ նշմարելի են գրեր, բայց անընթեռնելի, ծխից և մրից շատ սեւացած լինելու պատճառով...»:

## ՓԱՐԱՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1420-1480 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին, ապա թուրք խաշնարածների համար ծառայել է որպես ամառանոց: Ի դարի սկզբներից նույն ցեղերի նստակեցության անցնելով՝ վերածվել է թրքաբնակ գյուղի:



ՓԱՐԱՔԵՆԴ (ձախից) և ՂԱՐԱՎՈՒԼՏՈՄԲԱ (աջից) գյուղեր, հեռվում՝ Դաղրմանդաղ-Կարկառ գյուղախումբը (լուս.՝ Ա. Ղուլյանի)

1914 թ. ունեցել է 197 բնակիչ[926], 1983 թ.՝ 1329 բնակիչ[927]:

## ՓՈԼԱԴԼՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1270-1300 մ բարձրության վրա՝ Մեծ և Փոքր Ղարամուրատ գյուղերի միջև:

**Բնակչություն.** ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին՝ հայաթափ հին գյուղատեղիում:

1983 թ. ունեցել է 226 բնակիչ[928]:

**Եկեղեցի.** գյուղի արևելյան եզրին պահպանվել է կիսավեր եկեղեցի, որն իր ճարտարապետական

924. **Սմբատ Մ**., նշվ. հոդվ., էջ 3:

925. **Բարխուտարեանց Մ**., Արցախ, էջ 306:

926. "Кавказский календарь на 1915 г.", с. 171.

927. «ՍՍՀ», հ. 7, էջ 460:

928. Նույն տեղում, էջ 571:



***ՓՈԼԱԴԼՈՒ. տեսարաններ և հատվածներ եկեղեցուց***

առանձնահատկություններով բնորոշ է ԺԶ-ԺԷ դդ.: Ունի միանավ բազիլիկ հորինվածք: Կիսակլոր խորանի հյուսիսային և հարավային կողմերից կից են ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ: Վերջիններս իրենց ծավալներով դուրս են աղոթասրահի բուն մակերեսից, սակայն կառուցվել են եկեղեցու հետ: Արտաքին չափերն են՝ 13,20 x 5,65 մ, արևելյան պատն ավանդատների հետ՝ 9,65 մ: Եկեղեցու մուտքերը երկուսն են՝ հարավից և արևմուտքից: Հարավային ավանդատունը եկեղեցու

հետ հաղորդակցվում է խորանի մեջ բացված նեղ ու երկար մուտքով: Հյուսիսային ավանդատան մուտքը բացվում է անմիջապես աղոթասրահի մեջ: Նեղ ու դեպի ներս (լայնացող) պահպանված լուսա-



***ՓՈԼԱԴԼՈՒ. եկեղեցու հատակագիծը***

մուտները երեքն են՝ բոլորն էլ բացված արևելյան ճակատից: Կառուցված է անմշակ ու կոպտատաշ քարով, կրաշաղախով: Անկյունաքարերի մի մասը սրբատաշ է: Պատերը պահպանվել են 1,5-2 մ բարձրությամբ: Ամբողջովին քանդված են եկեղեցու տանիքը և թաղը, ավանդատների երեսպատման քարերը, մուտքերի անկյունաքարերը: Շարվածքում կան խաչապատկերներ կրող քարաբեկորներ:

**Գերեզմանոց.** եկեղեցու շուրջը տարածվում է հնամենի գերեզմանոցը, ուր հանդիպում են գետնաթաղ ու կոպտատաշ սալատապաններ: Սրանցից շատերը զարդարված են հնաոճ ու պարզ խաչաքանդակներով:



***ՓՈԼԱԴԼՈՒ. ուքանիստ կոթող***

Գյուղի հյուսիսարևմտյան եզրին տարածվում է մեկ այլ գերեզմանոց, ուր մինչև 1982 թ. կար Ե-Զ դդ. թվագրվող ուքանիստ, տեղահանված կոթող: Հավանաբար ուշ միջնադարում նրա սրբատաշ նիստերից մեկին քանդակվել են պարզ խաչեր: Կոթողն արդեն 1984 թ. տեղում չէր: Տեղացիների վկայությամբ կոթողը փոխադրվել էր Բաքվի թանգարան:

## ՓՈՔՐ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ արևմուտք՝ Ղարամուրատ գետի աջ հարավահայաց ձորալանջին՝ ծովի մակերևույթից 1300-1380 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի մասին միջնադարյան գրավոր աղբյուրներում խոսք չկա: Սակայն 1610 թ. մի Հայսմավուրքի հիշատակարանում Մեծ Ղարամուրատի մասին վկայությունն ինքնին փաստում է, որ գոյություն ուներ համանուն փոքր գյուղ, ընդ որում Ղարամուրատներից մեկը Մեծ է կոչվել մյուսից՝ ավելի զանազանելու համար[929]:

1890 թ. ականատես-հետազոտողն ահա այսպես է նկարագրել գյուղը. «Առվի աջ ափով շտապեցինք հասանք հեռվում նկատվող վանքին, որ գտնվում էր քարաժայռերից կազմված լեռան հարթ լանջի վրա: Առաջներին գեղը կոչվում է *Ղարա Բուլաղ*, բայց ըստ ոմանց պետք է կոչվի *Ղարամուրադ*, իբր թե սա՝ *Փոքր Ղարամուրադն* է, իսկ լեռան մյուս երեսին գտնվողը *Մեծ Ղարամուրադն* է, այս գեղի բնակիչները այրումներ էին, գեղի վերև կիսաքանդ պատերով եկեղեցին կա, սեղանի կողմի ծածկը ամբողջ է, երևույթով՝ նոր պետք է փլված լինի, որովհետև ներսը կիտված են քարերը թե ծածկի, թե պատերի ու սների, որոնց մեջ բսել են ժանգառն ու կոծոծը, եղինջը: Պատի ցածր տեղով ներս մտա, խորաններին հասնելով նկատեցի, որ ձախ խորանի մեջ դարսած էին դարդակ փեթակներ, իսկ մյուսի դուռը կալված էր հողի ու քարերի տակ, գրեր չկան, ջնջված են: ...Եկեղեցու շուրջը բազմաթիվ շիրիմներ կան, խաչքարեր ձգած: Երևի գրեր եղել են, բայց այրումները նրանց վրա տավարին, ոչխարին աղ տալով անհետ արել են: Բակատեղեր երևում են ամեն կողմ»[930]:

929. «ԺԷԱ», էջ 367:

930. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 26-27: Ի դեպ, պակաս ուշագրավ չէ Փոքր Ղարամուրատից Մեծ Ղարամուրատ ընկած ճանապարհահատվածի նկարագրությունը. «Եկեղեցու հանդեպ արևելահարավից մի ձոր է իջնում, որի կողքերին ոչխարի, տավարի յայլաղներ կան ձգված անթիվ օբաներով, այդ եայլաղներից գլխավորն է *Կառուտ սարը*, որ տեղացի թուրքերը *Գնլգլղաղ* են ասում: Եկեղեցու մոտից ոտնահետով իջանք, մոտեցանք մի նեղ ջրանցքի, որի ջուրն առնվում էր եկեղեցու հարավից սարի տակի հորդ և վարար աղբիւրից, որի սև քարերի արանքից ճեղքելու հետ էլ գեղը *Ղարաբուրաղ* անունն է ստացել: Աղբիւրից քիչ ներքև ջաղաց է բանում, որի վերևով բռնեցինք հինօրեա քարքարուտ, սալահատակ ճամբին ու թավ անտառի ու քարկապի միջով գլխավերեցինք առաջներս ձգվող հովտի գետակի մոտ, որի ձախ ափին բնակվում են դարձեալ այրումներ 20 ծխի չափ: Ճամբի մոտ կառուցած հարուստ այրումի տունը շինած էր եկեղեցու սրբատաշ քարերից: Բակատեղերից վերև գերեզմանոտ կա ներքև կրկին գերեզմանոտ, փառավոր է շենքը շիրիմների, բայց ոչ մենը անվնաս չի, վայրենի աղամորդիների միջոցով ամեն կոտրտված թրքոտված, ոտնատակված, դժար էր արձանագրութիւն ջոկել: Այս գերեզմաններն և բակերը պատկանել են *Ղարամուրադի* ուժեղ հարուստ հասարակությանը, որ ահի ու սարսափի օրերին, գաղթել է դեպի *Խրամ գետի*











***ՓՈՔՐ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. եկեղեցու տեսքը հարավից, հարավ-արևելքից, արևելքից, հարավից բացված մուտքը և մուտքի բարավորը***

Գյուղ այցելած մեկ այլ ուսումնասիրող էլ նկատել է. «...Հայոց գիւղ, այժմ թրքաբնակ, բայց կայ կիսաւեր եկեղեցի և հանգստարան»[931]:

**Բնակչություն.** հայաթափ է եղել ԺԸ դարի 70-ական թվականներին. «...բնակիչներն Վրաց վերջին Հերակլ թագաւորի օրով, գաղթած և բնակութիւն հաստատած են Շուլաւերում»[932]: Շուրջ մեկ դար ամայի գյուղատեղին խաշնարած թուրքական ցեղերն օգտագործել են իբրև ամառանոց, 1880-ականներին նստակեցության անցնելով՝ ամառանոցը վերածել են գյուղի:

1908-ին ունեցել է 246[933], 1914-ին՝ 447 բնակիչ[934]:

**Եկեղեցի.** գյուղի հյուսիսարևմտյան բարձրադիր եզրին պահպանվել է ԺԶ-ԺԷ դդ. շինարվեստին բնորոշ առանձնահատկություններով օժտված միանավ, թաղակապ բազիլիկ եկեղեցու (արտաքին չափերն են՝ 20,45 x 13,95 մ) կիսավեր շինությունը: Խորանի երկու կողմերում ունի մեկական ավանդատուն: Ամբողջությամբ կանգուն է միայն եկեղեցու արևելյան պատը, որտեղ մնացել են նեղ ու երկա-

---

կուշտը *Շուլավեր*: Երբեմնի հարիւրավոր շեն օջաղների տեղ այժմ մի քանի այրումների սոխախկներից աթարի ծուխ է մլում: Հողն ու ջուրը բարեհամ, առատ, բայց որ կողմ նայում ես, ավերված, փլված մարդի սիրտ ածելու չափ: Ներկա *Շուլավերում* կուչ եկած *Ղարամուրադ* թաղի բնակիչների նախկին վաթանը այսչափ ընտիր տեղ չէի երևակայում, տերությունով համակվել էր սիրտս, ձիու վրա խորասույզ մտածելով գնում էի դեպի վանքը, որ սիրուն հովտի մեջտեղն է...» (ք. 27):

931. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 308:

932. Նույն տեղում:

933. “Кавказский календарь на 1910 г.”, с. 276.

934. “Кавказский календарь на 1915 г.”, с. 142.



***ՓՈՔՐ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևելյան ճակատից բացված լուսամուտի արձանագիր շրջանակը***

րավուն, դեպի ներս լայնացող երեք լուսամուտ (կենտրոնականի միակտոր սրբատաշ շրջանակի ստորին մասում կա երկտող արձանագրություն): Մյուս պատերը պահպանվել են մինչև 1-1,5 մ բարձրությամբ: Եկեղեցու միակ մուտքը հարավից է (ավանդատների մուտքերը բացվում են աղոթասրահի մեջ): Մուտքի ճակատակալ քար է ծառայում 3 մ երկարություն ունեցող ութանիստ և սրբատաշ կոթողը,



***ՓՈՔՐ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. եկեղեցու հատակագիծը***

որի նիստերից մեկը հետագայում (հավանաբար, եկեղեցու կառուցման ժամանակ) խաչազարդվել ու արձանագրվել է: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ ու անմշակ քարով, կրաշաղախով:

**Գերեզմանոց.** եկեղեցու շուրջը տարածվում է ավերված գերեզմանոցը՝ արձանագիր մի քանի խաչքարերով ու քանդակազարդ այլ բեկորներով:

Հնավայրից հայտնաբերվել է չորս արձանագրություն, որոնցից միայն մեկն է թվակիր: Դրանք նախկինում չեն հրատարակվել: Դրանք են.

Կոթող. 3 տող. «ունի մի դուռ, որով անցնելը դժոտ է, այնքան հող ու քարեր կան թափված: Դռան վերևից մեկնած 4 արշինաչափ երկար և մի արշին հաստ, չորս ու տաշած և կողեր դուրս բերած բարապանի մի ծայրին».

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րեխ(աւ)ս / Եղիային, / Ակոբին եւ Մայրխ(ա)թ(ու)նին:*

Հրատ. առաջին անգամ:

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 26:

Ծանոթ. *Եղիային* կարելի է ընթերցել նաև՝ *Եղիսային*:

Խաչքար. «Սեղանի հետևի լուսամտի բարապանին մեկնած 2 խաչքարից մինի վրա գրած է».

*Թվ. ՌԻԷ (1578):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 26:

Ծանոթ. մեր այցելության ժամանակ՝ 1984 թ., քարը տեղում չէր:

Խաչքար. եկեղեցու ներսում.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(աւ)ս տ(է)ր Ս(ի)մէ(ո-ն)ին: |Թվ(ին): Ռ[ԼԱ] (1582):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տարեթվի միավորն ու տասնավորը հողմահար են և հազիվ են երևում:

Եկեղեցի. արևելյան ճակատին՝ խորանից բացված լուսամուտի շրջանակի ստորին մասում՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Մխ(ի)թարի, որդի Մգ..|...[ի]ն եւ որդ(ո)ցս: Ամէն:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տառերը փշրված են:





***ՓՈՔՐ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ. արձանագիր խաչքարեր եկեղեցու փլատակների մեջ***

Խաչքար. ընկած էր եկեղեցու հյուսիսային պատի տակ, 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Ղ(ա)զ(ա)րին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. անձնանունը հողմահար է:

## ՔԵՍԱՄԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1220-1300 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը հայաթափ գյուղատեղիում հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած թուրք խաշնարածները: 1914 թ. ունեցել է 204 բնակիչ[935]:

## ՔԻԼՍՅԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 33 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախնջի գետի ձախ ափին:

Հայաթափ հին գյուղատեղիի տեղում խորհրդային տարիներին գոյացած թրքաբնակ աննշան գյուղ է, որի անունը պայմանավորված է տեղում պահպանված հայոց եկեղեցու գոյությամբ (եկեղեցի՝ թուրքերեն կոչում են քիլիսա):

## ՔՅՈԼԱՄԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 12,5 կմ հյուսիս-արևմուտք՝ Մեծ Ղարամուրատ և Հերիքնազ պատմական գյուղերի միջև, յուրաքանչյուրից 2 կմ հեռավորության վրա:

Ներկայիս թրքաբնակ փոքրիկ գյուղը հայաթափ հին գյուղատեղիի տեղում գոյացել է Ի դարի սկզբին: 1914 թ ունեցել է 197 բնակիչ[936]:

## ՕՐՋՈՆԻԿԻՁԵ (ՄՐԵՋՈՒՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հյուսիս-արևմուտք, Լղարակ (Բաղաջուր) գետի արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1430-1550 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1770-ական թվականներին հայաթափ է եղել, բնակիչները փոխադրվել են Մեծ Շուլավեր: Ի դեպ, Մեծ Շուլավերի (այժմ՝ Շահումյան ավանը Մառնեուլի շրջանում) գերեզմանոցում պահպանվել է ծնունդով մրաջուրցի մի հանգուցյալի տապանաքար.

Տապանաքար. գերեզմանոցում, ուղղանկյունաձև, չափերը՝ 137 x 24 x 58 սմ, 5 տող.

*Այս է տապան Մրաճրէցի Եղեազար քօխի,/ որ է որդի Վարդան[ան]ի եւ թ(ո)ռն Արութի ե/ղպայր Սարութէկի կամ Աղարէս, որ մայրն / Հուռումսիմի եւ հայր սա Օհանէս քօխի / ընթ(ե)րցօղքդ Ա(ստուա)ծ ողորմի ասէք, ՌՄԼԸ (1789) թվ(ին):*

Հրատ. առաջին անգամ:

935. “Кавказский календарь на 1915 г.”, с. 150.

936. Նույն տեղում:



***ՕՐՋՈՆԻԿԻՁԵ (ՄՐԵՋՈՒՐ). Եկեղեցու հատակագիծը***

Այնուհետև գյուղատեղին խաշնարածների համար ծառայել է որպես ամառանոց, իսկ 1880-ականներից բնակեցվել է:

1983 թ. ունեցել է 951 բնակիչ[937]:

**Պատմական հուշարձաններ.** 1890 թ. գյուղում դեռևս գոյություն ունեին կիսավեր եկեղեցի ու գերեզմանոց, այդ թվում՝ արձանագիր հուշարձաններ: Մեզ է հասել եկեղեցու և շրջակայքի հետևյալ նկարագրությունը. «...թռա պատի գլխով եկեղեցու ներս. քիչ մնաց ոտնամաններս թաքախեի թրքի մեջ, ողջ տարածութիւնը թրքով լիքն էր: Պատերի կեսը հազիվ ամբողջ էր, դրան տեղ քարեր էին դարսված: ...Ավազանը խախտված էր և փոս ընկած: ...խաչքարեր շարած են և սեղանի աջակողմեան պատի մեջ և գրութիւնները անվերծանելի: Ձախակողմի խորանի լուսամտի բարապանի վերնից դարսած են 2 խաչքար, գիր չի նկատվում: Խորանների ծածկերը ամբողջ մնում են: Եկեղեցու մեջ և շուրջը տաշած և անտաշ քարերի կույտեր են:

Վերնի հանգստարանում ոչինչ գրի հետք չկա, լուված տափակ քարեր են:

Ներքևի հանգստարանում նույնպես աչքի ընկնող բան չկա, մեծ մասով հին խամ քարեր են մի քանի քարագրողուների նման կինց-կինց քարի վրա քաշած են մեծադիր անշնորք խաչեր ու խաչիկներ:

Մրեջուրը արևելադեմ է, բակերը բավական տեղ են բռնում և խոտհարքի տեղ են ծառայում:

Եկեղեցուց քիչ վերև աղբիւր կա: Էոքիզ դաղի արևելակողմը Մրեջուրն է, արևմտակողմը Կորխը, ուր եղել է Աղ Մելիքի բնակության տեղը»[938]:

Խաչքար. «...խորանի մեջ լուսամտի բարապանի վրա մեկնած խաչքարին».

*Թվ. ՌԻՁ (1577):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. ագուցված Մրեջրի եկեղեցու արևմտյան ճակատում. «Արևմտեան պատի ներսից փոքր խաչքարի վրա գրած էր».

*Մարիամին, թվ. ՌԾ (1601):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. «Աջ խորանի գլխին 5 փոքր խաչքարեր կային. խառն գրոտած».

*Մարգարտին, Էյվազին.*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. «Սեղանի յետևի լուսամտի տակ խաչքար».

*Իշխան էս կանգնեցի ... սբ. խաչս բարեխօս է Սարգսի հոգոյն:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. «Սեղանի լուսամտի կողքերին հորիզոնական դարսած փոքր խաչքարեր պատի մեջ, թվական չկա, նկատելի է».

*Մարիամին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. «Սեղանի ձախ պատի վերնից նույնպես դարսած են խաչքարեր, որոնց վրա կարդացվում է».

Գրիգոր քհնյ և կողակցին Եղիաբեթին:

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

Խաչքար. «Կողքինի վրա».

*Սբ խաչս .... որդի Մելքումին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18:

*ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՅՏ ԳՅՈՒՂԵՐ*

## ԼՈՒՑՈՎԿԱ

Սլավյանկային մերձակա ռուսաբնակ գյուղերից էր:

1905 թ. սեպտեմբերի 3-ին թաթար հրոսակները կողոպուտի նպատակով հարձակվել են Լուցովկա գյուղի վրա. «Բոլոր գույքերը յափշտակած և ոչնչացրած են: Բնակիչները թողնելով իրենց բնակարանները գաղթել են դրացի Սլավեանկա գիւղը»[939]:

## ՍԱՐԴԱՐԻ ԹԱԼԱ

Մինչև 1770-ական թվականները հայաբնակ գյուղ Զակամ գետի վերին հոսանքի շրջանում՝ «Զակամ երկրում»: Հիշատակվում է 1703 թ.: Այստեղ Արիստակես երեցը մահտեսի Եսայու, տանուտեր Ոսկանի և աղսախկալ Մելքումի պատվերով ընդօրինակել է ձեռագիր «Յայսմաւուրք»[940]:

## ՖՐԵՁԵՎԿԱ

Նույնպես Սլավյանկային մերձակա ռուսաբնակ գյուղերից էր:

1908 թ. ունեցել է 804[941], 1914-ին՝ 808 բնակիչ[942]:

937. «ՍՍՀ», h. 7, էջ 384:

938. ԳԱԹ, **Սարգիս Քամալյան** ֆ., ստեւր N 1, VI-11, թ. 18-19:

939. «Արշալույս», 1905, N 9, 9 սեպտեմբերի:

940. «ՑՁԲ», ձեռ. N 9088:

941. “Кавказский календарь на 1910 г.”, с. 390.

942. “Кавказский календарь на 1915 г.”, с. 194.

# ԴԱՇԿԵՍԱՆԻ ՇՐՋԱՆ

Դաշկեսանի վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 1019 քկմ մակերես, ունի 49 բնակավայր, որից 44-ը՝ գյուղ: Մինչև 1956 թ. կոչվել է Դաստափորի շրջան: Շրջանը սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի, Խանլարի, Շամխորի շրջաններին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ենթաշրջանին, ԼՂՀ-ի՝ Քարվաճառի շրջանին: 1988-1989 թթ. հայ բնակչությունից պարպվել են շրջանի տարածքի բոլոր բնակավայրերը:



## ԱԼԱԽԱՆՉԱԼԻ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 15,5 կմ հարավ՝ Գանձակ գետի վերին հոսանքի շրջանում՝ խոր ձորի գլխավորապես ձախ արևելահայաց ճողալանջին, ծովի մակերևույթից 1550-1620 մ բարձրության վրա:

Հայաքափ հին գյուղատեղիի տարածքում թուրք խաշնարածները մշտական բնակություն են հաստատել և գյուղ հիմնել ԺԹ դարավերջին:

1914 թ. ուներ 215 բնակիչ[943]:

## ԱԼՄԱԼՈՒ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևելք՝ Գանձակ գետի ձախակողմյան հարավահայաց ճողալանջին, ծովի մակերևույթից 1280-1420 մ բարձրության վրա:

ԺԸ դարի 2-րդ կեսին հայաքափ եղած գյուղերից է: ԺԹ դարի վերջերին բնակեցվել է թուրք խաշնարած ցեղերով: 1914 թ. ուներ 35 բնակիչ[944]:

Գյուղի պատմական հայկական անունը մոռացության է մատնվել: Խաշնարածներն անվանել են Ալմալու, այսինքն՝ Խնձորուտ:

Բնիկների հետքերն անխնա ոչնչացվել են: Գյուղի վերաբնակիչների համար որպես քարհանք



ԱԼՄԱԼՈՒ. խաչքար Գաղիմ Մամեդովի 1927 թ. կառուցած տան հիմքում

ծառայած ու նման ձևով սպառված երբեմնի հայոց գերեզմանոցից, մեր որոնումների արդյունքում իբրև եզակի նմուշ միայն մի պարզ խաչքար (100 x 40 x 15 սմ) գտնվեց թուրք Գաղիմ Մամեդովի՝ 1927 թ. կառուցած տան պատի հիմքում:

## ԱՀՄԱԴԼՈՒ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 14 կմ արևմուտք՝ Շամքոր գետի աջակողմյան՝ Գարդման վտակի ձախ հարավահայաց ճողալանջին, ծովի մակերևույթից 1480-1560 մ բարձրության վրա:

Միջնադարյան Գարդմանքի հայաշատ գյուղերից էր և մինչև ԺԸ դարի կեսերը հայաբնակ: Թուրք խաշնարած ցեղերով բնակեցվել է ԺԹ դարավերջին:

Գյուղի պատմական հայկական անունը մոռացության է մատնվել: Նյութական մշակույթի հուշարձանների տեսքով բնիկներից պահպանվել են ընդարձակ գերեզմանոցի մնացորդները Ահմադլուի հարավարևելյան եզրին՝ դեպի հարևան Ամրվար տանող ճանապարհի երկու կողմերում:

## ԲԱՆԱՆՑ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 7 կմ (ուղիղ գծով) հյուսիս-արևելք՝ Արքինաջուր (Կոշկար) գետի ձախ՝ հարավարևելահայաց ճողալանջին, ծովի մակերևույթից 1000-1100 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** գյուղանվան ծագումը ստուգաբանվում է որպես բանանոց (աշխատելու վայր):

**Հաղորդակցության ուղիներ.** գյուղը գտնվում է Բանանց-Քարհատ և Սևանի ավազան տանող հնագույն ճանապարհին՝ Արքինաջուր (Կոշկար) գետի ձախ ափին: Գյուղի միջով ձգվող հիմնական ճանապարհը և առանձնապես դրա՝ Բանանց-Գանձակ հատվածը մշտապես գտնվել է բանանցեցիների հոգածության ներքո, պարբերաբար ենթարկվել բարեկարգման: Հայտնի է, որ մինչև 1870 թ. հիշյալ ճանապարհն այն աստիճան դժվարագնաց էր, որ ավելի նման էր կածանի: Նույն թվականին գյուղի հասարակության մասնակցությամբ բանանցեցի Հովսեփ Տեր-Իսրայելյանցը կարողանում է կազմակերպել և 3000 ռ. ծախսով իրականացնել մինչև Գանձակ հասնող ճանապարհի շինարարությունը: Վերջինս ամբողջանում է նաև մեկ քարաշեն կամրջի կառուցմամբ[945]:

1884 թ. տանուտեր Ա. Տեր-Ավետիքյանի նախաձեռնությամբ կառուցվում է Գանձակ տանող երկրորդ ճանապարհը, որը դյուրացնում է նաև գյուղից բավականին հեռու գտնվող այգետերերի հոգսը[946]:

1903 թ. արձագանքելով Գանձակի նահանգապետի առաջարկին՝ գյուղական ժողովը (242 կոդմ) որոշում է դեպի Գանձակ սայլի ճանապարհ բացել ոչ թե Մկրծ աղբյուրի մոտով, այլ այգիների, Ներքին հանդի կողմից, որը, թեև լինելու էր ավելի աշխատատար, բայց հետո առավել օգտակար կարող էր լինել[947]:

Բանանց ձգվող ճանապարհներն ընդհանուր առմամբ անմխիթար վիճակում են եղել նաև հետագա տարիներին: Այսպես, 1923 թ. ականատեսը նշել է. «Միայն ճանապարհների և հաղորդակցության դժվարության շնորհիվ, մոտ 10 վերստ պետք է անցնեք կամ ոտով կամ գրաստով: Կառքի կամ սայլի ճանապարհ չկա: Ճանապարհները կառուցելու համար անցյալ տարի Ազնավքի պետ Սերեբրովսկին գյուղական ներկայացուցիչներին խոստացել է

943. “Кавказский календарь на 1915 г.”, с. 87.
944. Նույն տեղում:

945. «Նոր-Դար», 1887, N 113, էջ 3:
946. Նույն տեղում:
947. «Մշակ», 1903, N 135, էջ 2:



ԲԱՆԱՆՑ. գյուղի տեսքը 1920-ական թվականներին (Ա) և 1985 թ. (Բ–Գ)

նյութեր տալ, եթե միայն գյուղը հանձն առնի առանձին վագոն ձեռք բերելու իրավունքը...»[948]:

**Հնագիտական հուշարձաններ.** Բանանցի մերձակայքում պահպանված մեծաթիվ դամբարանաբլուրները վկայում են, որ վաղնջական ժամանակներից ի վեր Արքինաջրի միջին հոսանքի շրջանը բնակեցված է եղել բավականաչափ խիտ: Դամբարանաբլուրների առաջին հետազոտողներից գերմանացի հնագետ Էմիլ Ռյոսլերը 1899 թ. գրել է. «...հետազոտեցի 14 դամբարանաբլուր 17 թաղումներով: Այդ բոլոր գերեզմանները պատկանում էին բրոնզե դարից երկաթին անցնելու ժամանակաշրջանին»[949]:

948. «Մարտակոչ», 1923, N 177 (26 սեպտեմբերի):

949. **Реслер Э.**, Археологическия изыскания в Закавказье, “Кавказ", Тифлис, 1903, N 179, с. 2 (բնագրում՝ “...исследовал 14 гробниц и курган с 17 могилами. Все эти могилы принадлежат ко времени перехода бронзоваго века в железный”). Տես նաև՝ **Համամչեան Ե.**, Բանանց գիւղի կուրգանները, «Ազգագրական Հանդէս», երկրորդ տարի, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 308-315:



*ԲԱՆԱՆՑ. գյուղամերձ դամբարաններից հայտնաբերված հնագիտական իրեր*

Բանանցի մոտ պահպանված է եղել նաև սեպագիր արձանագրություն[950]:

950. **Тер-Аветисян С.**, Памятники древности Карабаха и скифская проблема, Тифлис, 1934, с. 11.

**Պատմություն.** հակառակ գյուղի բազմադարյան գոյության ու ըստ ամենայնի փառավոր անցյալի՝ գրավոր աղբյուրներում Բանանցի մասին պահպանված վկայությունները խիստ աղքատիկ են: Գյուղի անվան առաջին հիշատակություններից մեկը 1625 թ-ից է: Հայտնի է, որ այդ թվականին «...Պանանցայ ճամահաքն մեծ և փոքր...»[951] մասնակցել էին ավելի վաղ (1453 թ.) ստեղծված մի Ավետարանի նորոգության գործին (նորոգող՝ Հովհաննես Շատախեցի)[952]:

ԺԹ դարավերջին գյուղը կալվածատերեր Հովսեփ-բեկ Տեր-Իսրայելյանցի և Հովսեփ Տեր-Հովսեփյանցի նստավայրն էր: Նրանց էր պատկանում Աղխաչ (Շահղաղ) տեղամասը[953]:

1905-1906 թթ.՝ հայ-թուրքական ընդհարումների ողջ ժամանակահատվածում, թուրք խուժանն այդպես էլ Բանանցի վրա հարձակվելու համարձակություն չունեցավ, սակայն դարանակալելով գյուղից դուրս՝ նրանց հաջողվել է «հոշոտել» մի քանի բանանցեցիների: Այսպես, 1906 թ. մարտի 16-ին թուրքերը սպանել են 65 գլուխ տավարը արածեցնելու տարած Կարապետ Բալյանցին, նրա երկու որդիներին և եղբորորդուն: Թուրքերը 9 տարեկանին մորթել են, իսկ մնացածին՝ գնդակահարել[954]: Նույն թվի մայիսի 16-ին Բանանցի այգիներում դարանակալ թուրքերը սպանել են 34-ամյա Զաքար Շահմուրադյանցին[955]: 1906 թ. սեպտեմբերի 19-ին դարանակալ գնդակի զոհ է դարձել նաև Արտեմ Աքանսայանը. «Այսօր ամսույս 19-ին առաւօտեան դեռ լոյսը չբացուած, խիստ իրարանցում ընկաւ գիւղը: Մի երիտասարդ լալով, գլուխը ծեծելով անցնում էր գիւղի միջովը ու „վայ աղբեր„ գոռում: Գիւղացիների հարցուփորձին շշմած երիտասարդը պատասխանեց, թէ՝ ես և եղբայրս գնում էինք Քարհատ հայկական գիւղը, ճանապարհին, Օրհնելի սեւ կոչւած տեղում, թփերի միջից յանկարծ հրացանը պայթեց ևն եղբայրս, որ մի քանի քայլ ինձնից առաջ էր բաւագլոր գետին տապալվեց, իսկ ինձ յաջողուեց մի կերպ ազատուել դարանակալ աւազակներից: Գիւղի երիտասարդները իմանալով գործի էութիւնը, իսկոյն զինուեցին ու շտապեցին դէպքի վայրը. մօտ 2 ժամ փնտրելուց յետոյ, մերոնց յաջողուեց խիտ թփերի միջից գտնել սպանուած Արտեմ Աքանսեանին՝ արիւնաշաղախ և 3 տեղից գնդակահար եղած: Վերջինս նոր զինուորագրութիւնից ազատուած և գիւղում աչքի ընկնող քաջերիցն էր...»[956]:

1918-20 թթ. թուրքական զավթիչների և մուսավաթական բանդաների դեմ մղված մարտերում աչ-

951. ԺԷԲ, էջ 186:
952. «ՅՁԲ», ձեռ. N 10669: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 279:
953. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 32-33:
954. «Մշակ», 1906, N 63, էջ 1:
955. Տապանագիրը տես՝ սույն աշխ. էջ 185:
956. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 381, թ. 5:

քի են ընկել բանանցեցիներ գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանն ու Գրիգոր Օհանյանը (Թաքողլի)[957]:

**Կառուցապատում.** 1886 թ. ականատեսը նշել է, որ գյուղն աչքի է ընկնում «...խիտ առ խիտ կառուցուած տներով, որոնց մէջ կան փոքր ի շատէ յարմարաւոր շէնքեր...»[958]:

1898 թ. Բանանցը նկարագրվել է այսպես. «Գիւղում փողոցներ չկան, այլ ծուռ ու մուռ կածաններ են: Տների մեծ մասը կանոնաւոր սենեակներից են բաղկացած, որոնցից ամենահինը՝ 33 տարի առաջ է շինուած, միւս, փոքրագոյն մասը գետնափոր խուղեր են»[959]:

Գյուղն ունի մի քանի թաղամաս, որոնց անունները տոհմաազգակցական ծագում ունեն: Այսպես, գյուղի ստորին մասը, որ սկսվում է գետափից ու տարածվում դեպի արևմուտք, կոչվում է Տերունց թաղ (Տերյանների ազգանունից): Սրանից արևմուտք, փոքր-ինչ վեր, գյուղի կենտրոնական մասում տարածվում են Տեր-Մկրտչյանների և Բալունց կամ Քաշ-Ավագունց թաղերը: Գյուղը հյուսիսից եզրափակվում է Լոկունց, իսկ արևմուտքից՝ Տոնունց (Տոնյաններ) և Քիքունց թաղերով: Երկու թաղամաս էլ, կապված գյուղի զարգացման, ընդարձակման ու բնակելի նոր տների կառուցման հետ, գոյացել են Արթինաջրի աջ ափին. մեկը Այգեստանն է, որն ավելի հայտնի է «Դիմաց տեղ» անվամբ, մյուսը՝ Էլիանց թաղը, «Եղեցի հող» հնավայրի շրջակայքում: Բանանցի կենտրոնը, որտեղ խաչվում են վեց գլխավոր ճանապարհները, իրենից ներկայացնում է ոչ մեծ հրապարակ՝ «Փողոցք» անվամբ:

**Բնակչություն.** առնվազն մ.թ.ա. Դ-Գ հազարամյակներից մինչև գրեթե վերջին բռնագաղթը Բանանցը մշտապես եղել է ողջ երկրամասի առավել մարդաշատ բնակավայրերից մեկը: Այդ են վկայում գյուղի մերձակայքում պահպանված նախաքրիստոնեական և միջնադարյան ժամանակաշրջաններից մեզ հասած բազմաթիվ ընդարձակ գերեզմանոցները: Դա են հաստատում նաև գյուղի տարածքում կանգուն կամ ավերակ եկեղեցիների ու մատուռների առատությունը:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները, սակայն, առկա են միայն ԺԹ դարի սկզբներից: Այդ տվյալների հավաքագրումն ու համադրումը հնարավորություն է ընձեռում արձանագրել մի իրողություն, ըստ որի ամբողջ ԺԹ դարում և մինչև խորհրդային կարգերի հաստատումը Բանանցի բնակչության թվաքանակն ընդհանուր առմամբ շարունակաբար աճել է:

957. Գ. Օհանյանի մասին տես՝ «Հայաստանի Հանրապետություն», 1995, N 199, էջ 4: «Գարդմանք», 1998, N 6 (11): «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2001, N1-2, էջ 84:

958. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:

959. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 308:

Բանանցաբնակ ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Մակի Չօփուրեանց, կինն՝ Մարիամ, ուստր՝ Եսայի, դուստր՝ Նազի, եղբայրն՝ Յակոբ, կինն՝ Անախաս, ուստր՝ Յօհաննէս, եղբօրորդիք՝ Յարութիւն, Եղիսաբէթ, մայրն՝ Սանդուխտ:

2. Աբր(ա)համ Մօսէսով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Պետրոս, եղբարքն՝ 1. Յակոբ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յօհաննէս, 2. Յարութիւն:

3. Զաքար Մէլիքով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Ստեփան, դուստր Հէրիք, եղբայրն՝ Աւագ:

4. Գրիգոր Պօղոսով, կինն՝ Մարիամ, դուստր՝ Ջանի, եղբայրն՝ Դադի, կինն՝ Շողակաթ:

5. Ղուկաս Ջալադով, կինն՝ Գիւլի, ուստր՝ Մարտիրոս, դուստր՝ Վարդի, եղբայրն Վիրապ, կինն՝ Սալբի, քոյրն՝ Մարիամ:

6. Օհաննէս Մէլիքով, եղբայրք՝ Ծատուր և Գալուստ, քոյրն՝ Սաբեդ:

7. Սահակ Ջուլիով, կին սորա՝ Մարիամ, եղբօր որդիք՝ Գրիգոր և Մարիամ:

8. Սարգիս Բարսեղով, կինն սորա՝ Եղիսաբէթ, ուստր՝ Մարտիրոս, դստերք՝ Մարգարիտ և Հէրիք:

9. Պօղոս Կոստիով, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Անդրէաս, կին սորա՝ Սաբէդ, եղբօրորդին՝ Վարդան, կինն՝ Հռոմսիմ, դուստր՝ Նազի:

10. Դալաք Սարգիսն, կինն՝ Սիրուն, ուստերք՝ 1. Մակի, կին՝ Մարիամ, ուստր՝ Գէորգ, 2. Գրիգոր, կինն՝ Անախաս, դուստր՝ Մարիամ:

11. Օվանէս Այվազով, կինն՝ Մարինոս, ուստր Մօսի, դստերք՝ Հէրիք և Սաբէդ, եղբայրն՝ Դանիէլ, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Մակի, դուստր՝ Ռէհան:

12. Գրիգոր Շահումով, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Յակոբ, դստերք՝ Սառայ և Հէրիք:

13. Գրիգոր Թօրոսով, կինն՝ Խանում, ուստր՝ Մակար, դստերք՝ Նազի և Ջանի:

14. Գաբրիէլ Տէր-Մկրտչեանց, կինն՝ Գայիանէ, ուստր՝ Ռուսիան, կինն՝ Սաբէթ, հարսն՝ Շողակաթ, ուստր՝ Գէորգ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Օհաննէս: Եղբայրն՝ Յարութիւն, կին՝ Հէրիք, ուստր՝ Ստեփան:

15. Պետրոս Վանեան, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Աւագ և Խաչատուր, եղբայրն՝ Պօղոս, կինն՝ Մարիամ, դուստերք՝ Մագթաղ և Գիւլի:

16. Փափչի Խաչատուր, կինն՝ Գուլի, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Հռոմսիմ:

17. Ստեփան Տէր-Աւետիսեան, կին՝ Մարգարիտ, ուստերք՝ Գրիգոր և Օհանէս, դուստր՝ Խաթուն, եղբայրն՝ Յարութիւն, կինն՝ Շողի, դուստր՝ Մագթաղ:

18. Ներսէս Չլալով, կինն՝ Մարինոս, դստերք՝ Նազի և Հէրիք, եղբայրն՝ Ղազար, կինն՝ Մարգարիտ:

19. Գրիգոր Աւագեան, ուստերք՝ 1. Վարդան, կինն՝ Մարիամ, 2. Սարգիս, դստերք՝ Հռոմ, Ջանի, եղբօրորդի՝ Ղուկասն, կինն՝ Մարգարիտ:

20. Օհանէս Պետրոսով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Արզուման, եղբօրորդի՝ Մակին, կինն՝ Ջանի, եղբայրն՝ Ղուկաս և Նաւասարդ:

21. Առաքել Տէր-Օհանով, կինն՝ Հէրիք, ուստր՝ Դաւիթ, դուստր՝ Սաբէթ, եղբօրորդի՝ Եսայի, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մկրտիչ, դուստր՝ Սանդուխտ և Ռէհան:

22. Յարութիւն Շուշապազեան, կինն՝ Սառայ, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Գօզալ, Փարի և Հէրիք, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Հէրիք, ուստր՝ Մկրտում:

23. Օհաննէս Անանեանց, կինն՝ Մարիամ, մայրն՝ Նազի:

24. Կարապետ Գուլունց, կինն՝ Մարինոս, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Շողի և Մարիամ:

25. Կարապետ Ծապօվեան, կինն՝ Հռոմսիմ, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Սառայ, ուստր՝ Պօղոս:

26. Գրիգոր Մանիշակով, կինն՝ Խանում, ուստր՝ Ստեփան, դուստր՝ Մարիամ, Խաթուն, եղբայրն՝ Պօղոս, կինն՝ Ազիզ, դուստր՝ Սառայ և Անայ:















***ԲԱՆԱՆՑ. թաղամասեր և բնակելի շենքեր***

27. Ղուլի Տէր-Եղեան, կինն՝ Խաթուն, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Վառի:

28. Օհան Յակոբեան, կինն՝ Շողակաթ, ուստր՝ Գրիգոր, կինն՝ Խանում, եղբայրն՝ Ղազար, թոռն՝ Կիւլի:

29. Յարութիւն Զաքարեան, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Սարգիս և Բարսամ, դստերք՝ Հոռոմ, Մարգարիտ, եղբայրն՝ Հանէս, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մաքէոս և Կարապետ, դուստր՝ Վառի:

30. Յակոբ Դափիով, կինն՝ Սաբէթ, ուստերք՝ Վիրապ և Ստեփան, դստերք՝ Հէրիք և Մագթաղ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Մարինոս և Վառի:

31. Մարտիրոս Բաղալեան, կինն՝ Նազի, ուըր՝ Անտօն, դուստր՝ Փարի, Վարդի, եղբայրն՝ Յարութիւն, կինն՝ Դադա:



***ԲԱՆԱՆՑ. քաղամասեր և բնակելի շենքեր, Վանունց դարպասը, Համզունց Մարութի տունը***

32. Մուէս Ղաբուզով, կինն՝ Շահփառ, ուստր՝ Յարութիւն, դստերք՝ Սօնայ և Անայ:

33. Աղաջան Նալբանդով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Օհաննէս և Ներսէս, դստերք՝ Եղիսաբէթ և Մագթաղ, եղբօրորդի՝ Յովսէփ, կինն՝ Աննայ, ուստր՝ Անտօն, Զաքի, Վառի:

34. Սարգիս Գրիգորով, կինն՝ Եփրոսինէ, ուստր՝ Գալուստ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Օհաննէս, եղբայրն՝ Գալուստ, Բարսեղ, կինն՝ Սաբէղ, եղբօրորդին՝ Աւետ, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Պօղոս, դստերք՝ Վարդի և Խաթուն:

35. Ցական Աղեանով, կինն՝ Մաթօ, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Ռէհան, Հէրիք, եղբայր՝ Մակի:

36. Աղաջան Մաթէոսեան, կինն՝ Սաբէղ, ուստր՝ Մաթէոս,



***ԲԱՆԱՆՑ. թաղամասեր և բնակելի շենքեր***

կինն՝ Խանում, եղբայրն՝ Սարգիս, կինն՝ Մահալեփ (գուցէ՝ Մահպեփ), ուստերք՝ Յարութիւն և Պօղոս, դուստր՝ Շողի:

37. Պապա, կինն՝ Ջավահիր, ուստերք՝ Գաբրիէլ և Գրիգոր և Մակի, դստերք՝ Խանում և Վառի:

38. Մարգար Բնչեան (իմա՝ Բանուչեան), կինն՝ Հոռոմ, ուստր՝ Մակի, կինն՝ Մարիամ,, ուստր՝ Օհաննէս, եղբայրն՝ Աւագ, կինն՝ Նազի, ուստր՝ Ստեփան, Գրիգոր, դստերք՝ Մարինոս, Խաթուն և Սանդուխտ:

39. Օհան Տէր-Խաչատուրեան, կինն՝ Մարինոս, ուստր՝ Գրիգոր, կինն՝ Մարիամ, դուստր՝ Սաբէդ, ուստր՝ Յուէփ, եղբօրորդին՝ Ղևոնդ, կինն՝ Գիւլի, ուստր՝ Հանէս, կինն՝ Վարդի, եղբայրն՝ Օհաննէս, ուստերք՝ Ղևոնդ, Պօղոս, դստերք՝ Մարիամ, Սաբէդ:

40. Յովսէփ Թուսիով, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Ստեփան, Մօսէս, դուստր՝ Մարիամ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Յակոբ, Պետրոս և Պօղոս:

41. Յովսէփ Տէր-Օսէփեանի որդի՝ Ներսէսն, եղբօրորդին՝ Գրիգոր, քոյրն՝ Ջանի, եղբայրն՝ Սարգիս:

42. Մօսէս Ոսկանեան, ուստերք՝ Մնացական և Յօհաննէս, եղբօրորդի՝ Աւէտն այրի, ուստերք՝ Գիկ., Կարապետ:

43. Ղազար Առաքելեան, կինն՝ Մարգարիտ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Նազի, դուստր՝ Մարիամ:

44. Թէոդորոս Յակոբեան, կինն՝ Վարդի, մայրն՝ Շարմաղ, եղբայրն՝ Կարապետ, կինն՝ Ազիզ, դուստր՝ Մարիամ:

45. Աբրահամ Յովակիմեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Թէոդորոս, դուստր՝ Ռէհան, եղբայրն՝ Մակի, կինն՝ Սանդուխտ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Հէրիք, միւս եղբայրն՝ Մարտիրոս:



***ԲԱՆԱՆՑ. թաղամասեր և բնակելի շենքեր***

46. Ղուլի Հայրապետեան, կինն՝ Զառի, ուստր՝ Մակի, կինն՝ Գուլի, եղբայրն՝ Կարապետ:

47. Գալուստ Տէր-Ղուկասով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մաթէոս, դուստր՝ Վարդի, եղբայրն՝ Օհան, կինն՝ Հոռոմսիմ:

48. Սարգիս Մունթօյեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Օհաննէս, Գրիգոր, Գալուստ, դուստր՝ Անայի:

49. Մարտիրոս Դալաքեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Հաննէս, դուստր՝ Մարինոս, Զառի և Վարդի»[960]:

Բանանցը հայտնի էր իր երկարակյացներով: Նրանցից մեկը՝ Մուսունց հայը, վախճանվել էր 103 տարեկան հասակում. «Նորերս վախճանվեց բանանցի նահապետ Մուսունց Մնացական ապէրը հարիւր ու երեքամեայ հասակում: Ծնվել է նա 1801 թ....»[961]: Նրան թաղում են «...գիւղի մօտ գտնվող ,,Տատի սեռ,, անունը կրող լեռան գագաթին, այն համոզմամբ, որ նա այն բարձրութիւնից կը պահպանէ գիւղը, բարեխօս կը լինի գիւղի համար Աստուծու առաջ...»[962]:

960. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 33-34:

961. «Մշակ», 1903, N 162, էջ 2:

962. Նույն տեղում:

Ստորև ներկայացնում ենք Բանանցի բնակչության 1804-1917 թթ. վիճակագրական պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[963] | 51 | 100 | 80 | 180 |
| 1839[964] | 49 | 191 | 191 | 382 |
| 1845[965] | | 477 | 414 | 891 |
| 1847[966] | | 485 | 439 | 916 |
| 1849[967] | | 509 | 438 | 947 |
| 1850[968] | 118 | 519 | 509 | 1028 |
| 1852[969] | | 529 | 517 | 1046 |
| 1853[970] | | 536 | 523 | 1059 |
| 1854[971] | | 553 | 527 | 1080 |
| 1856[972] | | 582 | 562 | 1144 |
| 1857[973] | | 589 | 579 | 1168 |
| 1858[974] | | 595 | 582 | 1177 |
| 1860[975] | | 599 | 584 | 1183 |
| 1861[976] | 75 | | | |
| 1863[977] | | 620 | 580 | 1200 |
| 1864[978] | | 635 | 595 | 1230 |
| 1865[979] | 103 | 640 | 595 | 1235 |
| 1866[980] | 146 | 709 | 573 | 1282 |
| 1872[981] | | 964 | 874 | 1838 |
| 1873[982] | | | | 1644 |
| 1874[983] | | | | 1560 |
| 1875[984] | | | | 1704 |
| 1876[985] | | | | 1739 |
| 1877[986] | | 923 | 843 | 1766 |
| 1878[987] | | 929 | 836 | 1765 |
| 1881[988] | | 990 | 883 | 1873 |
| 1882[989] | | 1021 | 911 | 1932 |
| 1883[990] | | 1003 | 884 | 1887 |
| 1885[991] | | 950 | 900 | 1850 |
| 1886[992] | 174 | 1135 | 860 | 1995 |
| 1887[993] | | 1029 | 925 | 1954 |
| 1888[994] | | 1063 | 951 | 2014 |
| 1889[995] | | 1076 | 952 | 2028 |
| 1890[996] | | 1104 | 981 | 2085 |
| 1891[997] | | 1144 | ՞ | ՞ |
| 1892[998] | | 1198 | 1131 | 2329 |
| 1893[999] | | 1221 | 1145 | 2366 |
| 1894[1000] | | 1232 | 1180 | 2412 |
| 1897[1001] | | 1326 | 1279 | 2605 |
| 1898[1002] | | 1374 | 1312 | 2686 |
| 1899[1003] | | 1382 | 1316 | 2698 |
| 1900[1004] | | 1390 | 1333 | 2723 |
| 1901[1005] | | 1436 | 1365 | 2801 |
| 1902[1006] | | 1431 | 1384 | 2815 |
| 1905[1007] | | 1448 | 1392 | 2840 |
| 1906[1008] | | 1516 | 1412 | 2928 |
| 1907[1009] | | | | 2310 |
| 1908[1010] | 262 | 1156 | 930 | 2086 |
| 1909[1011] | | 1462 | 1394 | 2856 |
| 1910[1012] | | 1203 | 971 | 2174 |
| 1912[1013] | | 1508 | 1423 | 2931 |
| 1914[1014] | | | | 2390 |
| 1917[1015] | 400 | | | 2596 |
| 1976[1016] | | | | 1675 |

1989 թ. հուլիսի 27-ին գյուղի վերջին բնակիչները ենթարկվեցին բռնագաղթի, որով և հազարամյակների պատմության մեջ առաջին անգամ Բանանցում մարեց հայ կյանքը[1017]: Բռնագաղթի ենթարկված բանանցեցիները գլխավորապես բնակություն հաստատեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Սյունիքի մարզի Մեղրու ենթաշրջաններում[1018]:

**Զբաղմունքը:** *Հանքագործություն.* բանանցեցիները, ի թիվս բազմաթիվ արհեստների ու հմտութ-

963. "Акты...", т. II, с. 596.
964. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 33-34:
965. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
966. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
967. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
968. Նույն տեղում, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 110:
969. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:
970. Նույն տեղում, գ. 2743, թ. 16-18:
971. Նույն տեղում, գ. 3825, թ. 68-69:
972. Նույն տեղում, գ. 3828, թ. 112:
973. Նույն տեղում, գ. 3830, թ. 74-75:
974. Նույն տեղում, գ. 3831, թ. 41-42:
975. Նույն տեղում, գ. 3833, թ. 108-109:
976. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
977. Նույն տեղում, գ. 3843, թ. 15-16:
978. Նույն տեղում, գ. 3846, թ. 23-24:
979. «Նոր-Դար», 1889, N 204, էջ 2: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 49-50:
980. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 57:
981. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
982. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
983. "Кавказский календарь на 1886 г.", с. 124.
984. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866 թ. 44-45:
985. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
986. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 54-55:
987. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
988. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
989. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
990. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
991. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
992. "Свод...", с. 78-79. Վիճակագրական մեկ այլ տվյալով նույն թվականին գյուղն ունեցել է 272 տուն («Նոր-Դար», 1889, N 204, էջ 2):
993. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
994. Նույն տեղում, գ. 3883, թ. 131:
995. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
996. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
997. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
998. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
999. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
1000. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
1001. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
1002. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
1003. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
1004. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:
1005. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
1006. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
1007. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
1008. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1009. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1010. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10: Ի դեպ, նույն թվականին գյուղն ունեցել է 2070 բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 201):
1011. ՀԱԱ, Ֆ56, ց. 18, գ. 764, 117:
1012. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
1013. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
1014. "Кавказский календарь на 1915 г.", с. 98.
1015. **Ավետիսյան Մ. Մ.**, Տեղեկագիր Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի բնակավայրերի ու բնակչության թվակազմի մասին, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, N 3, էջ 166:
1016. «ԱՍՀ», հ. 1, էջ 541:
1017. **Դանիելյան Ա.**, Բանանցն աչքիս առաջ դատարկվեց, «Գարդմանք», 1996, N 3, էջ 16:
1018. **Չալումյան Մ.**, Բռնագաղթված բանանցեցիները Հայաստանում, նույն տեղում:



***ԲԱՆԱՆՑ. թաղամասեր և բնակելի շենքեր. Վանունց և Ջալլաղյանների տները***

յունների, հնուց ի վեր աչքի են ընկել որպես երկաթագործներ: Արձանագրված է, որ գյուղացիները «...պարապում են երկաթագործութիւնով և առևտուրով. ոչ շատ յառաջ պարապել են և երկաթագործութիւնով, որի հանքահանողն մօտակայ լեռներից և զանազան գործիքներ պատրաստողն եղել են իրանք, բայց Ռուսաստանից բերած երկաթն աւելի աժան է լինում քան իրանց լեռների արտադրածը և մանաւանդ երբ ածուխի վերայ դրած հարկը ծանրանում է, ստիպւում են թողնել տեղական ընտիր երկաթի բովագործութիւնը»[1019]: Հանքագործության՝ որպես արդեն ձեռքից բաց թողած արհեստի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև թղթակից «Երկաթաքարեան»-ը. «Յիսուն-վաթսուն տարի չի անցել այն օրից, երբ բանանցեցիները փորում էին գետինը ահագին խորութեամբ, և այնտեղից կոլոր երկաթաքարեր հանելով՝ տալիս. վերջինս մանրացնում էր քարը ահագին մուրճով, ածում քուրայի մէջ, հալում, նրանից երկաթ պատրաստում և ապա գիւղացիներին հարկաւոր եղած գործիքներ պատրաստում: Ներկայումս այդ ահագին փոսերը մնում են, որոնք նայողին սարսուռ են ազդում իրենց խորութեամբ: Այժմս երկաթ պատրաստելու սովորութիւնը վաղուց վերացել է»[1020]:

Գյուղում գործել է յոթ երկաթաձուլարան:

*Ածխագործություն.* այս արհեստն ուղղակիորեն առնչվում էր հանքագործության հետ և դադարել է երկաթի մշակության հետ մեկտեղ, նաև՝ անտառների նվազման պատճառով:

1019. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:

1020. «Նոր-Դար», 1888, N 148:



***ԲԱՆԱՆՑ. Իսրայելյանների տներից: Թորոսյանների փայտածածկ տունը***

*Հողագործություն.* ԺԹ դարի կեսերից Բանանցում զգացվել է հողի պակասություն. «Ժողովրդի թիւը տարեցտարի բազմանում է, իսկ ժողովրդին սնունդ՝ հաց մատակարարողը մնում է միևնոյնը, այսինքն այնքան՝ ինչքան սրանից 50 տարի առաջ է եղել: Կարելի է ասել, որ միևնոյն քանակութեամբ հողից ստիպուած են կերակրուել առաջուանից մի քանի անգամ բազմապատկուած բնակիչները: Սրա վրայ աւելացնենք և այն, որ այն ժամանակներում Բանանցում երկրագործութեամբ պարապողները միայն մի քանի տներ էին, իսկ ներկայումս ուրիշ ապրուստի աղբիւր չունենալով՝ ամեն ոք ուզում է իր տարուայ պարէնը հողից ստանալ: Սակայն հողը քիչ է, բաւականութիւն չի տալիս, իւրաքանչիւր տանը հազիւ տարեկան 2-3 օրավար է ընկնում»[1021]: Հողի պակասությունն այն աստիճան է նեղել բանանցեցիներին, որ մի մասը խորհել էր հեռանալ գյուղից և մի այլ վայրում նոր գյուղ հիմնել:

Գյուղում մեծ շուքով նշվում էր Վարդավառի տոնը[1022]:

**Դպրոց.** Բանանց գյուղի եկեղեցական-ծխական դպրոցը Հյուսիսային Արցախի առավել հին և կանոնավոր դասընթաց ապահոված կրթական հաստատություններից էր: Վավերագրերը դպրոցի բացման ժամանակի վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն հաղորդում. տարբեր աղբյուրներ դպրոցը բացված են համարում 1871-1873 թթ. միջակայքում: Ժամանակի լրատվական մի հաղորդ-

1021. Նույն տեղում:

1022. **Տէր-Միքայէլեան Ս.**, Վարդավառի տօնը Բանանցում, «Արձագանք», 1884, N 30, էջ 449:



***ԲԱՆԱՆՑ. թաղամասեր և բնակելի շենքեր***

մաև համաձայն էլ հաստատությունը կյանքի է կոչվել 1873 թ. գանձակեցի Ն. Տեր-Ներսիսյանցի ջանքերի շնորհիվ[1023]:

Կրթօջախի հեղինակությունն արդեն 1876-77 թթ. այնքան բարձր էր, որ ոչ միայն մերձակա, այլև անգամ Սևանի ավազանի գյուղերից գիշերօթիկ կարգով երեխաներ էին հաճախում դպրոցում ուսանելու[1024]: Սակայն 1878 թ. դպրոցը գրեթե մեկ տարի փակ է մնացել: Հոկտեմբերի 21-ին հաստատության վերաբացման խնդրով մտահոգ՝ գյուղ այցելած թեմական վերատեսուչ Հ. Տեր-Հովհաննիսյանն ու օգնական Մ. Եպիսկոպոսյանը[1025] հաջողությամբ կարգավորում են խնդիրը: «Օգուտ քաղելով կիրակէ օրից, երբ գիւղացիք ազատ են պարապմունքներից, ես հրաւիրեցի Բանանցայ ծխականներին խորհելու դպրոցի վերականգնման, շարունակութեան և յառաջադիմութեան համար,- գրել է Հ. Տեր-Հովհաննիսյանը:- Ժողովրդականք մեծաւ ուրախութեամբ ընդունում էին ամեն մի առաջարկութիւն, որը մենք անում էինք նոցա ուսումնարանի համար: Ուսումնարանի ապահովութեան համար նա իր հասարակական վճռով՝ որոշեց յատկացնել գիւղական հասարակութեան պատկանեալ արօտատեղիների արդիւնքը, տուգանքները և ուրիշ աղբիւրներ, որոնք մինչև 600 ռ. տարեկան եկամուտ են կազմում: Այդ ժամանակ ևս ընտրեցան նոր հոգաբարձուք: Որովհետև հետս տարել էի այդ ուսումնարանի համար ուսուցիչ, պ. Վ. Եղիազարեանցին,

1023. «Նոր-Դար», 1887, N 113, էջ 3:

1024. «Մշակ», 1888, N 90, էջ 1:

1025. Մովսես Եպիսկոպոսյանցը ծնվել է Գետաշենում, ավարտել Պետերբուրգի երկրագործական ճեմարանը:



*ԲԱՆԱՆՑ. բնակելի տան խոյակներ (Բ խոյակը գտնվում է Գոճունց բակում (1843) և Եպիսկոպոսյանների տան բուխարին (օջախի քար)*

վասն որոյ բացւած համարեցի այդ օրից ուսումնարանը, որի համար գտանւեցաւ երկու սենեականի տուն գաւիթով և պարտիզով, բոլորովին յարմար դպրոցի համար: Ժողովրդի ոգևորութիւնը այնքան էր, որ ժողովրդականներից մէկը՝ պ. Տէր Միքայէլեանց, որին կը պատկանէր ուսումնարանի համար նշանակած յիշեալ տունը, ձրի տուեց նա այդ, իսկ հոգաբարձուներից մէկը, պ. Յովսէփ Տէր Իսրայէլեանց, ձրի տուեց մէկ սենեակ ուսուցչի բնակութեան համար»[1026]: Թեմական վերատեսուչն այնուհետև նշել է. «Բանանցայ դպրոցի այդ տեսակ յաջողութեան պատճառները սոքա են. ա) ժողովրդի մէջ ուսման սէրը և ծարաւը. բ) նոյն իսկ ժողովրդի մէջ գտնւած մի քանի անձանց գործունէութիւնը. ինձ սրբազան պարտաւորութիւն եմ համարում յայտնել դոցա անունները. պ. Յովսէփ Տէր Իսրայէլեանց, որ է ահդամ և գանձապահ հոգաբարձութեան, երկու քահանայք տէր Պօղոս և տէր Անդրէաս, և գիւղական տանուտէրը»[1027]:

Դպրոցի համար շենքի կառուցման շինարարական աշխատանքները սկսվել են 1886 թ. արդեն ավերակների վերածված Սբ. Աստվածածին հին եկեղեցու տեղում. «...եկեղեցական ծխական ուսումնարան հայոց գեղջն, շինեալք ի 1886 ամի ի վերայ հիման սբ. Աստուածածին հնատարեան եկեղեցւոյ գեղջն, գտանի ի պարսպի այժմեան եկեղեցւոյ, բաղկանայ յերկուց յարկաց, յորս են չորս ընդարձակ սենեակք կղմինդրեայ տանեօք. շինութիւնը հանդերձ բակիւ և ենթադրեալ շրջապատ պարս-

1026. «Մանկավարժական թերթ» (ամսագիր), Թիֆլիս, 1878-1879, էջ 9:

1027. Նոյն տեղում, էջ 9-10:



***ԲԱՆԱՆՑ. ծխական դպրոցի ուսուցչական խումբն ու աշակերտները***

պան պարունակէ զչորս հարիւր յիսուն և հինգ ամբողջ և հինգ ութերորդական քառակուսի սաժեն...»[1028]: Բուն կառույցի հիմքը դրվել է 1887 թ. հուլիսի 5-ին: Նախաձեռնողն էր տանուտերի եղբայրը՝ բժիշկ Յագոր Հովհաննիսյանցը, ի հիշատակ վաղամեռիկ որդու[1029]:

Հայտնի է, որ 1903 թ. բանանցեցիները դիմել են Գանձակի հոգևոր կառավարությանը՝ դպրոցի համար առանձին նոր շենք կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով[1030]:

1911/12 ուստարվա դրությամբ դպրոցն ուներ գրադարան՝ 750 կտոր գրքով[1031]:

Ստորև ներկայացնում ենք դպրոցի գործունեության (1871-1913) մասին տվյալներ.

| **տարեթիվ** | **այլ տեղեկ.** | **ուսուցիչներ** | **աշակերտներ** |
|---|---|---|---|
| 1871[1032] | բացվել է | | |
| 1873[1033] | | 1 | 106 |
| 1874[1034] | գործել է որպես արական դպրոց, ուսուցիչն էր Ավետիք Ստեփանյան Տեր-Ավետիքյանցը | | |
| 1875[1035] | ուսուցիչ՝ Անդրեաս քհն. Տեր-Միքայելյանց | | 120 |
| 1876[1036] | | 2 | 90 |
| 1877[1037] | | 1 | 55 |
| 1877/78 | մի կարճ ժամանակամիջոց փակ է մնացել | | |
| 1878[1038] | գործել է 1878/79 ուստարվա հոկտեմբերից | | |
| 1879[1039] | | 1 | 35 |
| 1888[1040] | նորակառույց դպրոցին նյութական մեծ օժանդակություն է ցույց տվել Մակի Ջաղեթյանցը: Վերաբացումը տեղի է ունեցել հունվարի 24-ին: Հոգաբարձության կազմում հաստատվել են Պողոս քհն. Եպիսկոպոսյանցը, երեցփոխ Պողոս Կարապետյանն ու բժիշկ Յագոր Գրիգորյան Հովհաննիսյանցը | | |
| 1890[1041] | | | 60 |
| 1890/91[1042] | դասատվությունը սկսվել է սեպտ. 3-ին: Ուսուցիչ՝ Ստեփանոս դպիր Մկրտչյան Տեր-Միքայելյանց | | 73 |
| 1891[1043] | | | 70 |
| 1892[1044] | միդասյա | | 70 |

1028. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, մասն 2, գ. 3419, թ. 3; ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 157, 159:
1029. «Նոր-Դար», 1887, N 113, էջ 3:
1030. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 172:
1031. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20:
1032. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20: Նաև՝ «Հորիզոն», 1913, N 21, էջ 5: Մեկ այլ հաղորդման համաձայն, ինչպես վերը նշվեց, դպրոցի բացումը տեղի էր ունեցել 1873 թ. («Մշակ», 1888, N 90, էջ 1):
1033. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 59:
1034. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
1035. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 45, գ. 62, թ. 46:
1036. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 52, ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 46:
1037. Նույն տեղում, գ. 3850, թ. 130:
1038. Նույն տեղում, գ. 3850, թ. 178:
1039. Նույն տեղում, գ. 2922, թ. 22:
1040. «Նոր-Դար», 1888, N 13, էջ 1, N 87, էջ 1: Նաև՝ «Արարատ», 1888, էջ 129:
1041. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 150:
1042. ՀԱԱ, ֆ. 22, ց. 1, գ. 73, թ. 8, 13:
1043. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 149:
1044. Նույն տեղում, գ. 3891, թ. 121: Ի դեպ, մեկ այլ տվյալի համաձայն՝ 1892/93 ուստարում դպրոցն ունեցել է 55 աշակերտ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 11, 11-12):

| | | |
|---|---|---|
| 1893[1045] | գործել է որպես արական դպրոց | |
| 1894[1046] | 1 | 59 |
| 1895-1905 | կառավարության կարգադրությամբ փակվել է | |
| 1906[1047] | վերաբացվել է սեպտ. 15-ին որպես երկսեռ դպրոց | |
| 1907[1048] | 3 | 155(43-ը՝ աղջիկ) |
| 1908[1049] | ուսուցիչներ՝ Արշակ Մելիքսեթյան, օր. Վ. Ազատյան, օր. Սիրանույշ Տեր-Սահակյան, հոգաբարձուներ՝ բժիշկ Միքայել Տեր-Միքայելյանց, Լևոն Տեր-Ավետիքյան, Հովի. Հովհաննիսյան, Վազգեն Տեր-Ավետիքյան և Սիմոն Նադիրյանց | |
| 1909[1050] | 3 | 155(43-ը՝ աղջիկ) |
| 1911[1051] | 3 | 147(45-ը՝ աղջիկ) |
| 1911/12[1052] | քառամյա, ուսուցիչներ՝ Եղիսաբեթ Տեր-Վարդանյան, Շուշանիկ Ջալլադյանց, Միքայել Շահմուրադյանց | 140 (40-ը՝ աղջիկ) |
| 1913[1053] | ուսուցիչ՝ Ստ. Սարգսյանը, հոգաբարձուներ՝ Ստ. Տեր-Ավետիքյան և Հովի. Հովհաննիսյան | |

**Տանուտերեր.** Բանանցն ունեցել է բազմաթիվ տանուտերեր: Հիշենք առավել աչքի ընկնողներին: 1878 թ-ից գյուղի տանուտերն էր Ստեփան Հովհաննիսյանցը[1054], որի օրոք 1886 թ.՝ մեկ տարվա ընթացքում, Արթինաջուր գետի վրա կառուցվել է քարե կամուրջ՝ գյուղացիների ծախսով (2000 ռ.)[1055]:

1884 թ. տանուտեր է հիշվում է Ա. Տ. Ավետիքյանը, որի նախաձեռնությամբ, ինչպես վերևում նշեցինք, նույն թվականին կառուցվել է Գանձակ տանող երկրորդ ճանապարհը[1056]:

1903 թ. տանուտեր է եղել Հովսեփ Տեր-Հովսեփյանցը[1057]:

1906 թ. տանուտեր է ընտրվել Ս. Հակոբյանցը: Վավերագրերից մեկում կարդում ենք. «...2-ը հոկտ.: Այսօր մեր գիւղի ժողովատեղում կայացաւ նոր տանուտէրի ընտրութիւնը: Բոլոր հասարակութիւնը միաձայն ընտրեցին տանուտէր՝ Սարգիս Յակոբեանցին, իսկ կանդիտատ նորան Մամիկոն Բադալեանցին: Բոլոր գիւղացիք գոհ եղան այս ընտրութիւնից...»[1058]:

1913 թ. գյուղապետի ընտրության արդյունքում «Ժողովուրդը համարեա միաձայն ընտրեց Գարեգին Եպիսկոպոսեանին՝ տանուտէր, իսկ Յովհաննէս Մէյրանեանին՝ անձնափոխանորդ...»[1059]:

1045. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 125-126:
1046. Նույն տեղում, գ. 3896, թ. 34, 174-175, գ. 3895, թ. 99:
1047. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 207, թ. 19, գ. 301, թ. 5, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20: Ի դեպ, մեկ այլ վավերագրի համաձայն՝ դպրոցի վերաբացումը տեղի է ունեցել 1907 թ. (ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 15):
1048. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 15:
1049. Նույն տեղում, գ. 559, թ. 16:
1050. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
1051. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57, գ. 702, թ. 2:
1052. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20: Տե՛ս նաև՝ «Հորիզոն», 1912, N 114, էջ 3:
1053. «Հորիզոն», 1913, N 21, էջ 5:
1054. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5901, թ. 48:
1055. «Նոր-Դար», 1887, N 113, էջ 3:
1056. Նույն տեղում:
1057. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2492, թ. 192:
1058. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 560, թ. 26:
1059. «Հորիզոն», 1913, N 266, էջ 3:

**Հասարակական հաստատություններ.**

*Հիվանդանոց.* 1903 թ. Բանանցում գործել է գյուղական հիվանդանոց[1060]:

**Բնակելի շենքեր.** դրանք իրենց տեսակի մեջ աչքի ընկնող կառույցներ են: Մինչև 1988 թ. գյուղում քարաշեն, կրկնահարկ և նույնիսկ եռահարկ շենքերի կողքին պահպանվել էին հողե հարթ կտուրներով մի քանի տներ: Բանանցի բնակելի շենքերն աչքի են ընկնում շինարարական արձանագրությունների առատությամբ: Դրանցից հները վերաբերում են ԺԹ դարի առաջին կեսին: Ստորև ներկայացնում ենք այդօրինակ վիմագրերի մեր անտիպ հավաքածուն.

Բնակելի հազարաշեն տուն. վերջին տանտերն էր Մարգարիտ Վազգենի Ավետիքյանը, փայտե սյան վրա՝ 9 տող.

*Ստեփանի կողակից / Մարքարիտս աշխատեցի, / թվ(ին) ՌՄՁ (1831): / Ես Տ(է)ր Աւետիսեան / Խաչատուրի որդի / Ստեփանս եւ Յար/ութիւնս շինեցինք / այս տունս:*

Քանդված հին տան փայտե խոյակ՝ ագուցված բնակելի նոր տան պատի մեջ, միայն թվականը.

*1843:*

Բնակելի «հրթավեր» (երդիկավոր) տուն. փայտե սյան խոյակին միայն թվականը.

*1875 թ.:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Մակիչ Հովհաննեսի Աթանեսյանը (Բոբլի), 4 տող.

*Ի վաէլումն այս դ/ունս Յոհանէս / Կարապետով Ան/թանէսե(ա)նց, 10.11.1884:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Հայկուհի Համբարձումի Մովսիսյանը (Մուսունց), 3 տող.

*Շինեցաւ / տունս Տ(է)ր Մով/սիսեանց, 1884:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Վարդանուշ Վիրաբի Հարությունյանը (Լկանունց), 2 տող.

*1885 ամի արդեամբ շինեցաւ այս տուներս Մկրտիչ և Կոստանդ / Գալստեան Նրկարարեանց:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Հովհաննես Գևորգի Գևորգյանը, միայն թվականը.

*1887 թ.:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Սաբեթ Վարդազարի Չալումյանը, կամարաձև մեկ տող.

*1899 այս սենեակը շինեցաւ Յակոբ Բէկնազարեանցը:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Ստեփան Տիգրանի Բեկնազարյանը, կամարաձև մեկ տող.

*1899 այս սենեակը շինեցաւ Գրիգոր Բէկնազարեանցը:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Համբարձում Խաչատուրի Իսրայելյանը (Դդոնունց), 4 տող.

1060. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2492, թ. 192:

*Այս սենեակնե|րս շինեցաւ արդեամբ | Յարութիւն Տէր Խս|րայէլեանցի, 1905 թ.:*

Բնակելի տուն. 7 տող.

*Այս սենեակներս շի|նեցաւ արդեամբ իմով | Միքայէլ Բատայե|անցիս, 1905 ամի, | և ար|դեամբ կին` | Թագուհի:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Իսակ Արշակի Դանիելյանը, 5 տող.

*1910 թ. մա. 1-ին | կառուցաւ զայս տու|նս իմ աշխատանք|ովս Հովհաննէս|ան Սէյրանեանց:*

Բնակելի տուն. մինչև 1988 թ. ծառայում էր որպես գյուղխորհրդի շենք, 5 տող.

*Նուէր եկեղե|ցական դպրոցին | Գրիգոր Խաչա|տրեան Մանու|չակեանից, 1910 թ.:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Սաշա Մակիչի Ջաղեթյանը, 4 տող.

*1910 թ. շինութու|նս սկսվեց և պատրա|ստվեց 1911 թ., Սիմէօն | Գ. Ջաղէթեանց:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Ավետիս Գրիգորի Դավալյանը, 5 տող.

*Այս է Մունքունց | Եփրէմի տունը, | որ առայ 1901, | շինեցի 1911 թ.:*

Բնակելի տուն, վերջին տանտերն էր Խաչատուր Վանիկի Ավագյանը (Ջոշունց), 3 տող.

*Իրան յաշխ|ադանքով, | Շ. Սիմ(ոնեան), 1924:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Էմմա Մկրտչի Մկրտչյանը (Ըբրուզունց), 4 տող.

*1925 թ. վերի հ(արկը) շի(նեց) | Վարթուհի Յով|հաննիսեանը, ն(երքին) հ(արկը) Մկր|տիչ Մկրտիչեանը:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Մեխակ Եփրեմի Մկրտչյանը, 4 տող.

*Այս տուն առա | 1925 թ., շինեցի 1929 | Մեխակ Եփրեմի | Մկրտիչյանց:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Զիրավարդ Հովակիմի Բեգյանը, 6 տող.

*Տանս ներքի հ(արկը) շինեց | Սարգիս Սեյրանեանցը իր 2 | որդովս և Ավետիսը վխ. | 1928 թ., իսկ փ(որր) որդին Ալիք | վ(երին) հ(արկը) շինեց 1929 թ. և կա|տարեց հոր կամքը:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Կարեն Արշակի Մովսիսյանը (Մուսունց), 2 տող.

*Շինվեցավ տունս Արշակ | Տեր-Մովսեսյանց, 1929 թ.:*

Բնակելի տուն. վերջին տանտերն էր Սերգի Գույյանը, արձանագրությունը մնացել էր սվաղի շերտի տակ, բայց բնակիչները անգիր գիտեին.

*Ծաղիկ հասակում տունս հիմնեցի,*
*բայց չվայելեցի, որդույս յիշատակ թողեցի,*
*անցորդներ յիշեցեք, Աստուած ողորմեցեք:*











**ԲԱՆԱՑ. բնակելի շենքերի շինարարական արձանագրություններ**








ԲԱՆԱՆՑ. «Մեծ» կամ «Հին» կամրջի երկայնական և լայնական կտրվածքներն ու հատակագիծը







***ԲԱՆԱՆՑ. «Մեծ» կամ «Հին» կամուրջը. ներքին ճակատը, երկայնական կտրվածքը և հատակագիծը***

**Կամուրջներ:** *«Մեծ» կամ «Հին» կամուրջ.* գտնվում է Բանանցի հարավարևելյան եզրին՝ Արթինաջուր գետի վրա: Կառուցվել է ԺԷ դարում: Միաթռիչք է: Բացառությամբ թաղակիր կամարի անկյունաքարերի, որոնք սրբատաշ են, կամրջի մնացած մասերն իրականացված են անմշակ քարով, կրաշաղախով: Ուշագրավ են կամրջի մեջ՝ երկու կողմերում առկա մեկական թաղակապ սենյակները, որոնք ծառայել են իբրև պահակատուն, հյուրատուն կամ մաքսատուն: Կամրջի թռիչ-








***ԲԱՆԱՆՑ. «Յանցի» կամուրջը և հատակագիծը***



ԲԱՆԱՆՑ. «Բոլորածորի» կամրջի ծախափնյա խելը և չափագրությունը



ԲԱՆԱՆՑ. «Մազի» կամուրջը և հատակագիծը

քը կազմում է 9, 25 մ, իսկ անցուղու լայնությունը՝ 4,90 մ: Շինարվեստն ու կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են ԺԷ դարին:

*Յանցի կամուրջ.* Նախորդ կամրջից հետո այս՝ Յանցի կամուրջն իր նշանակությամբ 2-րդն է: Գտնվում է Բանանցի հարավային եզրին՝ Արթինաջուր գետի վրա: Կառուցվել է ԺԸ դարում: Միաթռիչք է: Թաղը՝ կիսաշրջանաձև: Հյուսիսային (ներքևի) ճակատում, կամարի կողպեքի քարին պատկերված է ձիու գլուխ, որը, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում է տոհմական զինանշան: ԺԹ դարում նորոգել է Շամի Սաքին: Կամրջի թռիչքը կազմում է 10,70 մ, իսկ անցուղու լայնությունը՝ 4,90 մ: Կառուցողական առանձնահատկությունները հարազատ են ԺԸ դարի համանման այլ կառույցներին:







**ԲԱՆԱՆՑ. «Եկեղեցաձորի» կամուրջը**

Կամրջի վերին (արևմտահայաց) ճակատի կենտրոնում՝ կամարի գագաթին ագուցված սպիտակ մարմարե քարին, փորագրված է 1918 թ. կատարված նորոգության մասին պատմող արձանագրությունը:

«Յանցի» կամուրջ. մարմարե սալիկին (60 x 40 սմ) 5 տող.

*Կամուրջս այս վերանորոգեց / Սարգիս Վիրաբեան / Յակոբէանց, անմահ / յիշատակ իր / ծնողաց, 9.6.1918 թ.:*

Հրատ. առաջին անգամ:

*«Ներքի հանդի կամուրջ».* Արքինաջուր գետի վրա՝ Բանանց-Գանձակ ճանապարհահատվածի շինարարության հետ մեկտեղ 1870 թ. կառուցվել է նաև քարաշեն այս կամուրջը[1061]: Քանդվել է 1945 թ.

1061. «Նոր-Դար», 1887, N 113, էջ 3:



**ԲԱՆԱՆՑ. գյուղամիջյան կամուրջ**

պայթյունից Գանձակ-Քարհատ երկաթուղագծի շինարարության ժամանակ:

*«Բոլորաձորի» կամուրջ.* կառուցվել է ԺԷ դարում, գյուղի հարավային եզրին՝ Բոլորաջուր (Բոլորանց) գետակի վրա: Եղել է միաթռիչք, քաղակապ շինություն: Պահպանվել են միայն կամրջի խելերը՝ շարված անմշակ քարով, կրաշաղախով: Անկյունաքարերը եղել են սրբատաշ: Ակնհայտ է, որ կամրջի անցուղին ուշ միջնադարում լայնացվել է: Ի սկզբանե ունեցել է 2,50 մ լայնություն, լայնացվելուց հետո՝ 4,50 մ: Թռիչքը եղել է 9,20 մ:

*«Քաղերի» կամուրջ.* կառուցվել է 1886 թ. Արքինաջուր գետի վրա, «Քուրդունց ձորի ոխումը»[1062]: Եղել է միաթռիչք, շարված անմշակ քարով, կրաշաղախով:

*«Եկեղեցաձորի» («Քիլիսաղարա») կամուրջ.* կառուցվել է ԺԸ դարում, Բանանցից 5,5 կմ հարավ՝ Եկեղեցաջուր գետակի վրա: Միաթռիչք, քաղակապ շինություն է: 1932 թ. կամուրջը նորոգել է Հովհաննես Գյուրջյանը (Գուրջունց Հովհանը):

1062. Նույն տեղում:







***ԲԱՆԱՆՑ. Սբ. Աստվածածին և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները***

*«Մազի կամուրջ».* Արթինաջրի վրա կառուցված կամուրջներից մեկն էր: Անցուղու լայնությունը 3 մ է, թռիչքը` 10,15 մ: Քանդվել է ԺԹ դարի վերջերին: Մինչև բռնագաղթը (1988) նեղ կիրճի հանդիպակաց բարձրադիր ափերին պահպանվում էին անմշակ քարերով և կրաշաղախով կառուցված երբեմնի կամրջի խելերը:

*Դպրոցի մոտի կամուրջ.* եղել է միաթռիչք, շարված անմշակ քարով, կրաշաղախով: Քանդվել է 1960 թ.:

*Մանր կամուրջներ.* կառուցվել են գյուղամիջով հոսող վտակի վրա: Ունեն միջինը 3 մ թռիչք, կիսաշրջանաձև թաղ: Շարված են անմշակ քարով, կրաշաղախով:

**Ջրաղացներ, ձիթհան (սրանոց).** Բանանցը հարուստ էր ջրաղացներով: Դրանք բոլորն էլ գործում էին Արթինաջրի ջրերով, ուստի տեղադրված էին ձորի ողջ երկայնքով: Հայտնի էին Տեր-Ավետիքանց ջրաղացները` «Յանցի» կամրջից վեր` թթենու այգու մոտ, Կվերքանց Կաբրիելի (Գևորգյան Գաբրիել) ջրաղացը` «Մեծ» կամ «Հին» կամրջից վեր, Ծպովանց ջրաղացը` նույն կամրջի մոտ, գետի ձախ ափին, Անյանց ջրաղացը` Արթինաջրի ձախ ափին,



***ԲԱՆԱՆՑ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի***

Մուսունց, Քիքունց Մակիի (Գրիգորյան Մկրտիչ) ջրաղացները՝ «Մեծ» կամ «Հին» կամրջից վեր: Ի դեպ, Մակին այդ ջրաղացը որպես օժիտ էր տվել իր դստերը՝ Թագուհուն (փեսան էր Թևոս Հովհաննիսյանը):

**Եկեղեցիներ:** *Սբ. Աստվածածին եկեղեցի.* Բանանցի հին եկեղեցին է, որ գտնվում է գյուղամիջում, նորի՝ հյուսիսային կողմում, գրեթե կից:

Համաձայն Տեր-Պողոս Եպիսկոպոսյանցի վկայության՝ ԺԹ դարավերջին Սբ. Լուսավորիչ եկեղեցին գտնվում էր անմխիթար վիճակում. «...յետ իսպառ քայքայման փայտակերտ տանեաց ս. Ա(ստուա)ծածին հին եկեղեցւոյ գեղջս սրբավայրն օրըստօրէ անշքանայր և լինէր կոխան մարդուց և անգամ անասնոց, քանզի ի վերջին ամս որմունքն ի տեղիս տեղիս փլեալ էին: ...Շինութիւն սենեկաց սկսեալ է ի 1886 ամի արդեամբք եկեղեցւոյ, նուի-



***ԲԱՆԱՆՑ. Սբ. Աստվածածին և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների հատակագիծը***






***ԲԱՆԱՆՑ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. խորանը, գմբեթարդը, հարավային և արևմտյան ճակատներից բացված մուտքերը***

րատութեամբ պ. Եազորի Յովհաննիսեանց ի յիշատակ որդուց իւրոյ Աղէքսանդրի և եղբարց Տէր-Յովսեփեանց՝ դպիր Ներսեսի և Յովսեփայ ի յիշատակ բազմերախտ եղբօր իւր մահտեսի Աւետիքի, նոյնպէս և այլոց ոմանց բարեսիրաց և օժանդակութեամբ ժողովրդի... միայն թէ շինութիւնն յատկապէս կառուցեալ է վասն ...անհրաժեշտ պիտոյից եկեղեցւոյ ի տեղի և ի վերայ հիման հին եկեղեցւոյ»[1063]:

1063. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 161:

1981 թ. եկեղեցին վերանորոգվել է:

Սբ. Աստվածածին եկեղեցին միանավ, թաղածածկ հորինվածքով, անմշակ քարով, կրաշաղախով իրականացված կառույց է (արտաքին չափերն են՝ 9,64 x 7,40 մ): Միակ մուտքը՝ ԺԹ դարի ձևափոխության ակնհայտ դրոշմով (լայնացվել է), բացված է արևմտյան ճակատից: Լուսավորությունն իրականացվել է դեպի ներս լայնացող 2 լուսամուտների միջոցով: Ունի լայն խորան, ավանդատներ չունի: Կառույցն առանձնահատուկ է թե՛



***ԲԱՆԱՆՑ. Սբ. Աստվածածին եկեղեցի. տեսքը հյուսիս-արևմուտքից և արևելքից, խաչքարեր՝ եկեղեցու արևմտյան և արևելյան ճակատներում***

ներքուստ և թե՛ արտաքուստ պատերի մեջ ագուցված բազմաթիվ խաչքարերով ու տապանաքարերով: Մեր հաշվառմամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 153 միավոր գերեզմանական հուշարձան, որոնցից 22-ը՝ տապանքար, 131-ը՝ խաչքար: Ընդ որում, վերջիններս ագուցված են ամենուրեք՝ սկսած քիվատեղերից մինչև խորհրդարաններ ու լուսամուտներ:

Խաչքարերն ու տապանաքարերը ոճական և գեղարվեստական առումով վերաբերում են ԺԶ-ԺԷ դարերին: Դրանցում զգալի թիվ են կազմում նաև արձանագրվածները, որոնք, խմբավորելով ըստ տեղադրության, ներկայացնում ենք ստորև.

*Ներքուստ ագուցված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.*

Խաչքար. բեմառաջին, քիվին և քիվատակին՝ 5 տող.

*Ես Իգուլեցի Եաղուբս կանգն/եցի խ(ա)չս Մարյանին, թվ(ին) ՌԵ (1556):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 258:



***ԲԱՆԱՆՑ. տապանաքարեր՝ Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատում***

Խաչքար. արևմտյան ճակատից բացված լուսամուտի հյուսիսային կողին, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խաչս Դաւաթին, | թվ(ին) ՌԵ (1556):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Ծանոթ. «Դիվան»-ում քիվագոտու արձանագրությունը թերի է վերծանված: Քիվատակին խաչելության տեսարանն է:

Խաչքար. արևմտյան ճակատից բացված լուսամուտի հարավային կողին, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս ա(ւ)գնական Բէկի/ճանին, թօվ(ին) ՌԺԸ (1569):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. բեմառաջին, քիվին և քիվատակի պատկերաքանդակների շուրջ՝ 2 տող.

*Թ(վին) ՌԼԵ (1586), սուրբ խաչս աւգնական Ջիչային:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 257:

Ծանոթ. «Դիվան»-ում տարեթիվը սխալմամբ՝ *ՌԵ (1556):* Անձնանունը հնարավոր է կարդալ նաև՝ *Ջիկային:*

Խաչքար. խորանից բացված լուսամուտի մեջ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս ա(ւ)գ(նակա)ն Ոսկան/ին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Ծանոթ. «Դիվան»-ում փոխանակ՝ *ա(ւ)գ(նակա)ն Ոսկան/ին* ընթերցել են՝ *Եսագ Օսկան(ին):* Ժամանակը՝ ԺԶ դար:

Խաչքար. խորանի մեջ՝ լուսամուտից հյուսիս, քիվին և քիվատակին՝ 1-ական տող, դրանց միջև՝ Քրիստոսի և չորս ավետարանիչների պատկերաքանդակները.

*Ս(ուր)բ խաչս բարէխաւս Ղսմաթ/ին: | Կ(ազ)մ(ող) Յ(ովանէս) ծ(առայ) անարժան ողոր(մ)իչ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 258:

Ծանոթ. «Դիվան»-ում 2-րդ տողը՝ *Կ(ա)զ(մող) յանարժան [Պ]ողոս:* Ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

Խաչքար. խորանից բացված լուսամուտի մեջ, առաստաղին՝ 1 տող.

*Թվ(ին) ՌԽԹ (1600):*

Հրատ. առաջին անգամ:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու ներսում***

Խաչքար. խորանի մեջ՝ լուսամուտից ցած, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Տէր Գ(ր)ի(գո)րին, թվ(ին) ՌԽԹ (1600):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Խաչքար. բեմառաջին, քիվամասը տաշված, կողին՝ առնըրվազն 5 տող.

*... / ...սեղ/ին հո/գոյն, / ՌԾԲ (1603):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 258:

Ծանոթ. «Դիվան»-ում շփոթի արդյունքում վիմագիրը տրոհված է երկու մասի և ներկայացված իբրև առանձին խաչքարերի վրայից ընթերցումներ: Սկզբնամասը հողմահար է:

Խաչքար. խորանի հյուսիսակողմի խորհրդարանի մեջ, դիմային երեսին, քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ 2 տող.

*Թվ(ին) ՌԿ (1611), / ... ի փրկութ(իւ)ն հոգո(յ)ն Գ...:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. բեմառաջին, քիվին և կողին՝ 1-ական տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Եղիշի հոգո(յ)ն, / թվ(ին) ՌԿԷ (1618):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 258:

Ծանոթ. «Դիվան»-ում անձնանունը փոխանակ՝ *Եղիշի*, ընթերցել են՝ *Եուղի:* Բաց են թողել նաև թվականը:

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի մեջ՝ արևելյան կողին, քիվին՝ 2 տող.

*Թվ(ին) ՌՀԳ (1624), ս(ուր)բ խաչս բարէխօս / Շահսվարին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի մեջ՝ արևելյան կողին, քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ 1-ական տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Մահիի հ(ո)գ(ոյ)ն, / թվ(ին) ՌՀԳ (1624):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. «Դիվան»-ում չկա թվականը:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու ներսում***

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի վերնամասում՝ 1 տող.

*Թվ(ին) ՌՀԳ (1624):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Ծանոթ. քիվամասը, որը, հավանաբար արձանագիր է եղել՝ ներառված է պատի մեջ և տեսանելի չէ:

Խաչքար. խորանի լուսամուտից հարավ, քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ 1-ական տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(աւ)ս Մաւրղի հ(ո)գ(ու)ն / թվ(ին) ՌՀԴ (1625):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Ծանոթ. «Դիվան»-ում անձնանունը տրված է *Մաբղի* ձևով:

Խաչքար. խորանի լուսամուտից հյուսիս, քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Գի(ւ)լո(ւ)մին / թվ(ին) ՌՀ/Ե (1626):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. խորանի լուսամուտից ցած՝ քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ մեկական տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(աւ)ս Եղիսաբետ(ին), թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 258:

Ծանոթ. «Դիվան»-ում թվականը՝ *ՌՀԷ (1628)*:

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի դիմային մասում՝ 1 տող.

*Թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. խորանի լուսամուտին կից հյուսիսից, քիվին և ստորին մասում՝ 3 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(աւս) Առ(ա)ք(ե)լին / թվ(ին) Ռ/ՀԸ (1629):*

Հրատ. առաջին անգամ:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Խաչքար. խորանի լուսամուտից հյուսիս՝ վերին խաչաթևի երկու կողմերում՝ 1 տող.

*Թվ(ին) ՌՁԱ (1632):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. արևմտյան ճակատից բացված լուսամուտի առաստաղին, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Մաթեին:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. խորանի լուսամուտից հարավ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Շնաորի հ(ո)գ(ոյ)ն:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտից բարձր, քիվին՝ 1 տող և կողին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բար(է)խ(աւ)ս Ղարիպ խա|թու|նին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի մեջ՝ արևմտյան կողին, քիվին 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բա(րե)խ(աւ)ս Բակլարին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. հարավային պատին, քիվին 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Հո(ու)մին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. արևմտյան ճակատից բացված լուսամուտի հարավային կողի մեջ, 8 տող.

*Ս(ուր)բ | խ(ա)չ|ս բ(ա)ր(է)|խ(աւ)ս | Բ(ա)ղտ|ա(սա)րին, | Հ(ու)ռ(ու)մ|սիմին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Խաչքար. խորանի լուսամուտից հարավ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Շաղոսկին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի հյուսիսակողմի խորհրդարանի մեջ՝ արևելյան կողին, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխ(աւ)ս Թաջումի / հ(ո)գ(ոյ)ն:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտից հյուսիս, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս:*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտից հարավ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Սիրանին հ(ոգոյ)ն):*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտին կից հարավից, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Սառեկին:*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտին կից հյուսիսից, քիվին՝ 1 տող.

*Ապա/ւն Սիր / ... / ...աթ/ին / Պարեշ/ի՞ն:*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի լուսամուտից հյուսիս, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(աւ)ս Մարեանին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 260:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի հյուսիսակողմի խորհրդարանի մեջ՝ վերնամասում, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս Տէր Մէլիքսէ(թին):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Խաչքար. խորանի լուսամուտի մեջ, հարավային կողի վերնամասում, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(աւ)ս Մարեանին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. «Դիվան»-ում վրիպել են *բ(ա)ր(ե)խ(աւ)ս*-ը, իսկ *Մարեանին*-ի փոխարեն ընթերցել են՝ *Մարիանին:* Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանից բացված լուսամուտի հյուսիսային կողին, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բար(ե)խ(աւ)ս Մաքոսին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. խորանի հարավակողմի խորհրդարանի հատակին, 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխաւս:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 259:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. բեմի ճակատին, 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխօս Այոնի հոգո(յ)ն:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. խորանի առջև, 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Ս(ա)ռին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. խորանի առջև, 4 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չ|ս բ(ա)ր(ե)խ(աւ)ս | Պաւղ|ին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքարի բեկոր. ընկած է խորանի մեջ, 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս | բ(արե)խ(աւ)ս ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Արձանագրություն. թաղակիր կամարին, խաչաքանդակի շուրջը՝ 2 տող.

*Ով(ան)էսի կ|(ա)զմ(ող)ին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Արձանագրություն. թաղակիր կամարին, խաչաքանդակի շուրջ, 3 տող.

*Ովանէս | Տ(է)րունին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

*Արտաքուստ, արևմտյան ճակատում ագուցված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.*

Խաչքար. կանգնեցված եկեղեցու արևմտյան ճակտոնի գագաթին, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Համանին, | թվ(ին) ՌՀ (1621):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 261:

Խաչքար. կանգնեցված եկեղեցու արևմտյան ճակտոնի գագաթին, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս ... թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 261:

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(արե)խ(աւ)ս Թաւրոսին, թվ(ին) Ռ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*...ելկակ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Փարին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:



***ԲԱՆԱՆՑ. խաչքարեր՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս ք(ար)է(խաւ)ս Թօքչին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Եթարին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*...ումին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

*Արտաքուստ, հյուսիսային ճակատում ագուցված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.*

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Վանի հ(ո)գ(ոյ)ն, թվ(ին) ՌԾԳ (1603):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(արէ)խ(աւ)ս Ամիրին, | թվ(ին) ՌՀԱ (1622):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 261:

Ծանոթ. «Դիվան»-ում անձնանվան միայն երկու տառերն են ընթերցված և թյուրիմացաբար վերականգնած՝ *Ա(բ)ր(ահամին):*

Խաչքար. քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Խ(ա)նեկին:*

Հրատ. առաջին անգամ:

Հրատ. «Դիվան...», V, էջ 261:

Ծանոթ. «Դիվան»-ում անձնանունը՝ *Խ(ա)նբէկին:* Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բար(է)խ(աւս) Եղիի h(ո)գ(ո)յն:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 261:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Տ(է)ր Ակոբին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*... խ(ա)չս ... պէկին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Գրիգորի h(ո)գ(ոյ)ն:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խաչս Բարխուդարին:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Ո[յ]hանին է:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Դաւիթ(ին):*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս օգ(նա)կան Ուսեփին:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րեխ(աւ)ս ...րիխան...:*
Հրատ. «Դիվան...» V, էջ 262:
Ծանոթ. «Դիվան»-ում անձնանունը՝ *Հուրիխանին,* որ մեզ կասկածելի է թվում: Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին 2 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րեխ(աւ)ս Տէր Ա(ստուա)ծատր/(ւրին)...:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. արձանագրության 2-րդ տողը փորագրված է խաչքարի կողին:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բարեխ(աւ)ս Արհանին:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(աւ)ս Ռհանին:*
Հրատ. «Դիվան...» V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*... է Սինատի՞ն:*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)եխ(աւ)ս Գօզջին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. «Դիվան»-ում անձնանունը սխալմամբ՝ *Գաւչին:* Ժամանակը՝ ԺԷ դար:

*Արտաքուստ, արևելյան ճակատում ագուցված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.*

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս ... ի թվ(ին) ՌԵ (1556):*
Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. քիվին՝ 2 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(ա)րէխ(աւ)ս Աւ...տքի մ(աւր)ն / Ուստիանին, թվ(ին) ՌԵ (1556):*
Հրատ. «Դիվան...», V, էջ 261:
Ծանոթ. «Դիվան»-ում զգալի աղավաղումով փոխանակ՝ *Աւ...տքի մ(աւր)ն / Ուստիանին, թվ(ին) ՌԵ (1556),* ունեն՝ *[Մկր]տիչին, Ուստիան(ին):* Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. կանգնեցված եկեղեցու արևելյան ճակտոնի գագաթին, քիվին՝ 2 տող.
*Ա(ստուա)ծ ողորմի Դուստին, / Գաւհարին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 260:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

Տապանաքար. 1 տող.
*Թվ(ին) ՌՀԳ (1624) ...:*
Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. 1 տող.
*Թվ(ին) ՌՀԳ (1624):*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ի տարբերություն նախորդի՝ ունի միայն թվականը:

Խաչքար. քիվին՝ 2 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւ)ս Ամիր աղին, Տ(ո)լվ(ա)թ(ի)ն, որ/դոցն:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 261:
Ծանոթ. «Դիվան»-ում զգալի աղավաղումով փոխանակ՝ *Ամիր աղին, Տ(ո)լվ(ա)թ(ի)ն, որ/դոցն,* ունեն՝ *Ամիր Տ(ո)վլաթին:* Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս Խ(ե)չ(ո)մին, և մ(աւր)ս:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. 1 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(է)խ(աւ)ս ... h(ո)գ(ու)ն:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւս) Խօստրովին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 261:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(աւս) Փաշի հ(ո)գ(ոյ)ն:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 261:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

*Արտաքուստ, հարավային ճակատում ագուցված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.*

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Ոսկանին, Շահում(ին):*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Պ(ա)հալո(ւ)ին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Հուռումին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խ(ա)չս Գ(ու)լփաշին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(է)խ(աւ)ս Ով[ն]նանին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(է)խ(աւ)ս Խոնդզարին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(արէ)խ(աւ)ս Ակոբին, Ոհկն՞...:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 262:
Ծանոթ. «Դիվան»-ում՝ *Ակոբին, Ոհկն՞...*-ի փոխարեն ունեն՝ *Ակոբին, Շահվերդին:* Ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
*Ս(ուր)բ խաչս բ(ար)էխ(աւ)ս միրն (միրաբա՞ն) Սմի...սոս:*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

*Կալվածքներ.* Սբ. Աստվածածին եկեղեցին կալվածներ ուներ նաև Գանձակում. «1845 ամի ի գիւղն Բանանց սբ. Աստուածածնայ եկեղեցի ունի զմի փոքր պարտեզ թթենեաց, ի քաղաքին Ցելիզավետապոլ ունի զմի փոքրիկ մահլայ յորում է մի տուն»[1064]: Ի դեպ, Գանձակում գտնվող այգին եկեղեցուն 1839 թ. նվիրել էր հանգուցյալ գանձակաբնակ բանանցեցի տիկին Հռիփսիմե Հարությունյանցը[1065]:

1064. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 13-14:
1065. Նույն տեղում, գ. 3798, թ. 242-243:

*Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի.* Բանանցի նոր եկեղեցին կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցուն զրեթե կից՝ հարավային կողմում. «Գիւղիս բարեպաշտ ժողովուրդը 1863 թուին հիմնարկելով, 1866-ին աւարտել է իւր այժմու ընդարձակ հոյակապ եկեղեցին, որը պարծանք կարող է բերել ժողովրդին»[1066]: Արտաքին չափերն են՝ 27,9 x 13,3 մ:

**Քահանա.** առկա տվյալները վկայում են, որ առնվազն ԺԷ դարի սկզբներից Բանանցը գրեթե մշտապես ունեցել է մեկից ավելի քահանա, հաճախ՝ 2, 3 և նույնիսկ ավելի: Այս հանգամանքն ուղղակի արդյունքն է գյուղի բազմամարդության: Քահանաների առատությամբ Բանանցն աչքի է ընկել նաև ԺԹ դարում: Օրինակ՝ 1865 թ. գյուղն ունեցել է 3 քահանա, 1886-ին՝ 2[1067], իսկ 1893 թ.՝ 3 քահանա[1068]:

Բանանցում պաշտոնավարած քահանաների ժամանակագրական ցանկը իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը.

*Տեր-Գրիգոր.* վախճանվել է 1600 թ.[1069]:

*Տեր-Մելիքսեթ*[1070], *Տեր-Ակոբ, Տեր-Աստվածատուր.* քահանայագործել են ԺԷ դարում[1071]:

ԺԸ դարում հիշվում են *Տեր Մկրտիչ* Բարսեղյանը (ըստ տապանագրի վախճ. 1716 թ.) և *Տեր Գրիգոր* Նաղիրյանցը (ըստ տապանագրի՝ վախճ. 1761 թ.):

ԺԸ-ԺԹ դարերի սահմանագլխին հիշվում են *Տեր-Մկրտիչը* (վախճ. 1791 թ.), *Տեր-Ավագն ու Տեր-Դավիթը* (ըստ տապանագրերի):

*Տեր-Ավետիք* Խաչատրյան Տեր-Ավետիքյանց. քահանա է ձեռնադրվել 1772 թ. Բանանցի Թարգմանչաց անապատի Եփրեմ եպիսկոպոսի կողմից և վախճանվել 1822 թ.[1072] (ըստ տապանագրի վախճանվել է 1809 թ.):

*Տեր-Իսրայել* Պետրոսյան Տեր-Հովսեփյանց. վախճանվել է 1811 թ. (ըստ տապանագրի):

*Տեր-Ստեփանոս* Ավետիքյան Տեր-Ավետիքյանց. 1816 թ. Բանանցի Թարգմանչաց անապատի առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսից ստացել է հոգևոր ծառայության չորրորդ աստիճան: Վախճանվել է 1861 թ.[1073]: Որդին էր Միքայելը (ծնվ. 1826 թ.), որը բնակվում էր Գանձակում և զբաղվում փաստաբանությամբ[1074]: Վերջինիս որդիներն էին՝ Միքայելը (ծնվ. 1863 թ.), Ստեփանը (ծնվ. 1866 թ.) և Լևոնը (ծնվ. 1867 թ.)[1075]:

1066. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:
1067. «Նոր-Դար», 1889, N 204, էջ 2:
1068. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, թ. 193-194:
1069. Գերեզմանաքարը խաչքար է՝ ագուցված հին եկեղեցու ներսում:
1070. Նույնպես:
1071. Վերջին երկուսի հիշատակին ԺԷ դարում կանգնեցված խաչքարերը հետագայում տեղահանվել ու ագուցվել են Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսակողմի քիվաշարի մեջ:
1072. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5901, թ. 1, 48:
1073. Նույն տեղում, թ. 1:
1074. Նույն տեղում, թ. 67:
1075. Նույն տեղում, թ. 44-45:



***ԲԱՆԱՆՑ. հատվածներ գերեզմանատան հին մասից***

*Տեր-Գրիգոր.* վախճանվել է 1841 թ. (ըստ տապանագրի):

*Տեր-Պետրոս* քահանա Տեր-Իսրայելյանց. քահանա է ձեռնադրվել 1820 թ., հիշվում է 1843 թ.[1076]: Վախճանվել է 1849 թ.[1077]:

*Տեր-Հովհաննես* Եպիսկոպոսյանց. հիշվում է 1850 թ. (կինը՝ Աննա, որդին՝ Պողոս, դուստրեր՝ Շողակաթ և Մարիամ)[1078]:

*Տեր-Գրիգոր* Տեր-Իսրայելյան. 1850 թ. հիշվում է ի թիվս գյուղի 4 դպիրների[1079]: Քահանա է ձեռնադրվել 1859 թ.[1080]: Վախճանվել է 1864 թ.[1081]:

*Տեր-Անդրեաս* Վարդանյան Տեր-Միքայելյանց. 1850 թ. հիշվում է ի թիվս գյուղի 4 դպիրների[1082]: Քահանա է ձեռնադրվել 1861 թ. փետրվարի 5-ին: Որդիներն էին՝ Միքայելը (ծնվ. 1865 թ.), Լևոնը (ծնվ. 1866 թ.) և Գրիգորը (ծնվ. 1872 թ.)[1083]: 1875 թ. դասավանդել է գյուղի ծխական դպրոցում[1084]: 1888 թ. օրհնել է Բանանցի նորաբաց դպրոցի շենքը[1085]: Վախճանվել է 1894 թ.[1086]:

*Տեր-Պողոս* Տեր-Հովհաննիսյան Եպիսկոպոսյանց. ծնվել է 1840 թ., քահանա ձեռնադրվել 1859 թ. մարտի 9-ին: Կինը՝ Թագուհի (վախճ. 1901 թ.)[1087]: Ուներ 5 որդի՝ Արամ (ծնվ. 1862, վախճ. 1892), Հովհաննես (ծնվ. 1866 թ.), Սիմոն (ծնվ. 1872 թ.), Արտաշես (ծնվ. 1879 թ.) և Գարեգին (ծնվ. 1881 թ.)[1088]: 1888 թ. հայրապետական կոնդակով հաստատվել է դպրոցի հոգաբարձության կազմում[1089]: 1890 թ. մեկ այլ կոնդակով Գետաշեն գյուղի միդասյա արական դպրոցի հոգաբարձության նախագահի պաշտոնը զիջել է Մեսրոպ Տեր-Գրիգորյանցին[1090]: Հիշվում է նաև 1908 թ.[1091]:

1076. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1356, թ. 1:
1077. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97: Նաև՝ ըստ տապանագրի:
1078. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 110:
1079. Նույն տեղում:
1080. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 126-127:
1081. «Մշակ», 1878, N 187, էջ 2: Նաև՝ ըստ տապանագրի:
1082. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 110:
1083. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, թ. 193-194:
1084. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 45:
1085. «Նոր-Դար», 1888, N 13 (4 փետրվարի), էջ 1:
1086. Ըստ տապանագրի:
1087. Ըստ տապանագրի:
1088. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, թ. 193-194:
1089. «Արարատ», 1888, էջ 129:
1090. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 11, թ. 6:
1091. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:

*Տեր-Երվանդ* (աշխարհական անունը՝ **Ստեփանոս**) Մկրտչյան Տեր-Միքայելյանց. ծնվել է 1860 թ., ավարտել է Երևանի հոգևոր սեմինարիան[1092]:1892 թ. Էջմիածնի Սինոդից ստացվել էր Ստ. Միքայելյանցին Բանանց գյուղի համար քահանա ձեռնադրվելու թույլտվությունն[1093] և նույն թվականի հոկտեմբերի 11-ին ձեռնադրվել է քահանա: 1904 թ., երբ շարունակում էր քահանայագործել Բանանցում, ուներ չորս երեխա (Երանուհի՝ ծնվ. 1898 թ., Ստեփանոս՝ ծնվ. 1900 թ., Արմիկ՝ ծնվ. 1903 թ., Երվանդանույշ՝ ծնվ. 1905 թ.)[1094]:

*Գրիգոր* Տեր-Ավետիքյանց. հիշվում է 1910 թ.[1095]:

**Գերեզմանոց.** հնավայրը՝ որպես այդպիսին, կարևոր է ցանկացած բնակավայրի պատմության ուսումնասիրության առումով: Ինչ վերաբերում է Բանանցի գերեզմանոցին, ապա վիմագրական առատ նյութի շնորհիվ այն բացառիկ կարևորություն ունի ոչ միայն գյուղի, այլև ողջ երկրամասի պատմության ուսումնասիրության համար: Հարկ է նշել, որ, ի մեծ բարեբախտություն Բանանցի և համայն հայության, այս գերեզմանատան տապանագրերը ժամանակին բավականաչափ բծախնդրորեն, մեկ առ մեկ գրի է առել բանանցեցի շինարար-նկարիչ Մարտիրոս Չալումյանը: Բացառիկ մի աշխատանք, որպիսին, խորին ցավով պիտի արձանագրենք, երկրամասի հայաքափ մյուս գյուղերի համար չի կատարվել:

Գերեզմանոցում պահպանված առավել հին թվակիր հուշարձանները վերաբերում են ԺԵ դարին: ԺԹ դարի տապանագրերը Մ. Չալումյանը նպատակահարմար է գտել ներկայացնել ոչ թե ժամանակագրորեն, այլ ըստ ազգատոհմերի (այբբենական հաջորդականությամբ): Ստորև հրատարակելով դրանք՝ այդ սկզբունքն այստեղ ևս պահում ենք անխախտ[1096]:

Խաչքար. նեղ կողին՝ 9 տող.

*...(կանգնեց)ի զ|խաչս | յիշատակ | Ա(ա)ք որդոյ|ն իմ պա|րոն Էվի|տրինա, | թվ(ին) | ՋԻԶ (1477):*

Հրատ. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 308: «Դիվան...», V, էջ 262:

Ծանոթ. *բարձր պատվանդանին կանգնեցված այս խաչքարը տեղացիների վկայությամբ կոտրվել է 1918 թ. թշնամու թնդանոթի արկից: Հայտնի է «Ցից քար» անունով:*

Տապանաքար. չափերը՝ 115 x 70 x 28 սմ, օրորոցաձև, 7 տող.

*Թվ(ին) ՌՂԸ(1649), | ես | Աւետ|իս խ(ա)չս | կակնգ(ն)ուց|ի իմ հաւր՝ | Նաւասարդին:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 15:

Տապանաքար. չափերը՝ 165 x 55 սմ, 5 տող.

*Այս է | տապան մէ|լիք Օվանէսի | ...ա | ՌճԸ (1659):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 100 x 50 x 60 սմ, 1 տող.

*Թվ(ին) ՌճԻԲ(1673):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 15:

Խաչքար. գեղաքանդակ, չափերը՝ 94 x 51 x 11 սմ, վարդագույն քարից, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Աղայ...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. չափերը՝ 150 x 50 սմ, ուղղանկյունաձև սալատապան, 5 տող.

*Այս է տապա|ն մէլիք Օվ|անէսի կողակի|ց՝ Բէկումաղին, | ՌճԿ (1711):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 185 x 68 սմ, 4 տող.

*Այս է տապան... | .... Միրզի որդի | մէլիք Օվանէ|սին, ՌճՀԷ (1728):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. սալաձև, չափերը՝ 165 x 60 x 20 սմ, 3 տող.

*Այս է տապան | ուստա Սարքի|սին, թվ(ին) ՌճՂԳ (1744):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 15:

Տապանաքար. չափերը՝ 165x55x25 սմ, ուղղանկյունաձև սալատապան, 5 տող.

*Այս է տապ|ան Սարքիսի | կօղայկից՝ | Եղիսայփեթ|ին, թվ(ին) ՌԲճ (1751):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 15:

Տապանաքարի բեկոր.

*ՌՄԺԴ (1765):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԱԴԻԽԱՆՅԱՆՑ (ԴԽԱՆՈՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 180 x 40 x 58 սմ, 3 տող.

*Օհան Սհակիեան | Աղիխանեանց, վխ. 1876: | Այս քարը քաշէցին Աղիխանց Յագոբի որդիքը:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

### ԱԹԱՆԵՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 148 x 37 x 53 սմ, սպիտակ մարմար, երկու լայնական կողերին՝ 7 տող.

*Աստ հանգչի պատանի քաջ Արտեմ Խաչատուր|եան Աթանէսեանի մարմինը, որ ծնաւ 1884 թ., | վախճանեցաւ 22 ամաց՝ 1906 թ. 19 սեպտ., կարդաց|ողն ասէ Ա(ստուա)ծ ողորմի: |* (Մյուս երեսին)՝ *Որդի իմ դու դեռահաս ինչո՞ւ հեռացիր շուտափույտ | մեզնից ծաղիկ կեանքում հող իջար նամարդ թշնամու | կնդակից, թողեցիր մեր սրտերում բուք հոգին լինի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Ծանոթ. Արտեմ Աթանեսյանի սպանության մասին տե՛ս սույն աշխ., էջ 140:

---

1092. Նույն տեղում, գ. 795, թ. 24:
1093. «Արարատ», 1892, էջ 565:
1094. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 12, թ. 61-62:
1095. ՀԱԱ, ֆ. Պ458, ց. 1, գ. 184, թ. 7:
1096. Հավաքածուն տարիներ առաջ երեք մասով, անհրաժեշտ մշակումներով հրատարակել ենք մեր խմբագրությամբ լույս տեսած «Գարդմանք» հայրենագիտական ամսաթերթի համարներում (1996, N 1, 2, 3):






***ԲԱՆԱՆՑ. տապանաքարեր գերեզմանատան հին մասում***

## ԱՂԱՋԱՆՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 160 x 32 x 57 սմ, սպիտակ մարմար, դազաղաձև, 2 տող.

*Այս է տապան Մարքարիտի, որ է կին՝ Սարգիս / Աղաջանեանցի, ծնաւ 1855 ամի, վախ. 1886 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 130 x 62 x 29 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է շիրիմ Աղաճանանց / Ապրիամի որդի Համբարձումին, / ծնդ. 1819 ամի, վխ. 1891 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 144 x 48 x 25 սմ, վարդագույն, սալատապան, 3 կիսաեղծ տող.

*Այս է տապան Աղաճանանց / Յոհանէսի որդի ... Ավա/գիմին, վախ. ...:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

## ԱՆԱՆՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 150 x 60 սմ, 7 տող.

*Այս է տապան / Անանեի / կողակից / Եղիսաբետ/ին, ՌՄԽԵ (1796), / որ է որդի / Օհանին ՌՄԿ (1811):*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 189 x 55 x 32 սմ, ուղղանկյունաձև, 7 տող.

*Այս է տապ/ան Անան/եանց/ Մկրտիչ/ի որդի/ Ղազար/ին, ՌՄԿ(1811):*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար.

*Այս է շիրիմ Անանեանց / Սերոբի որդի Յակոբին, / վխ. 1881:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար.

*Այս է շիրիմ Անանեանց / Սերոբի որդի Պետրոսին, / վխ. 1881, ի քաղաքն՝ Տվխիս:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

## ԱՌԱՔԵԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 135 x 30 x 57 սմ, ուղղանկյունաձև, 3 տող.

*Այս է շիրիմ Առաքել/անց Յոսեփի կողակից / Սուլթանին, վխ. 1881 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

## ԱՎԱԳՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 130 x 30 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Ավագանց Բարս/եղի որդի Թէոսի, վխ. 1885 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 125 x 30 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Ավագանց Թէ/ոսի կին՝ Հեղնանին, վխ. 1894:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 80 x 20 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Սէրգէի / Ղուկասեան Աւագեանց:* / (Մյուս երեսին)՝ *7 ամաց վխ. 8. 1. 1907 թ.:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

### ԲԱԴԱԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 24 x 25 x 45 սմ, դեղնագույն, ուղղանկյունաձև, 3 տող.

*Այս է տապան Բադալանց / Գրիգորի որդի Յո/հաննեսին, վախ. 1871 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 98 x 55 x 26 սմ, ուղղանկյունաձև, 4 տող.

*Այս է տապան Բադալեանց / Խաչատուրե որդայ / Գրիգոր, Դանել եւ Հուռում/սիմին, վխճ. 2. 2. 1875:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 127 x 35 x 50 սմ, ուղղանկյունաձև, տառերի մեծությունը՝ 7 սմ, 2 տող.

*Այս է տապան Բադալեանց Գրիգորի / որդի՝ Յակոբին, վխ. 1882 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 98 x 55 x 26 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Բադալանց Գրիգորի / որդի՝ Կարապետի, վախճան 1885 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 146 x 27 x 45 սմ, քարատեսակը՝ ռուք, 2 տող.

*Այս է տապան Բադալանց Գրիգորի / որդի՝ Կարապետի, վախճան. 1885 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 145 x 26 x 50 սմ, ուղղանկյունաձև, վարդագույն քար.

*Այս է շիրիմ Բադալանց / մահտեսի Յոսեփի որդի՝ / Մովսեսին, վախ. 6. 11. 1888:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 140 x 21 x 46 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Սարգսի Պետրոսեան Բադա/լեանց, 24 ամաց վխ. 1888 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 170 x 22 x 50 սմ, վարդագույն, մասամբ քայքայված, ուղղանկյունաձև, 3 տող.

*... / ... / Շահխանումին, վխ. 1. 1. 1888:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 150 x 32 x 60 սմ, սպիտակ մարմար, 9 տող.

*Այս տեղս ես թողեցի, Ասխարաղ դեղափոխվեցի / խօլերայից թառամեցի դիակս դարիք թողեցի / Զաքար որդին եմ՝ Բադալեանցի, յիշեցէք Ա(ստուա)ծ ողորմեցի / 7. 15. 1863 թ. ծնվեցի 5. 25. 1892 թին վախճանեցի:* / (Մյուս երեսին)՝ *Ախ անողորմ ինննասուն երկու թիւ դարի. / բերիր ինձ համար սրդամաշ լուրն Զաքարի / գրած էր՝ եկ, ապրենք միասին մայրիկ դակն այս քարի / մի դառնալ հպաղագ այդ ունայն աշխարհի / Դացարանի խալլու Բադալեանցի, յիշէցէք Ա(ստուա)ծ ողորմեցի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 114 x 29 x 60, սպիտակ մարմար, 8 տող.

*Այս է տապան Բադալանց Միքայ/էլի դուստր՝ Սուլթանին, որ է կո/ղակից՝ Սողոմոնի Կարապետեան / Գրիգորեանց, ծնդ. 1880 ամի, վախ/ճան 10. 1. 1894 ամի, ծաղիկ հասակի:* / (Մյուս երեսին)՝ *Սայ կոյս է, որ / իր հա(յ)րը բիրաւ / այս տապանը:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 141 x 30 x 50 սմ, սպիտակ մարմար՝եռանիստ վերնամասով, 3 տող.

*Այս է տապան Բադալանց Մով/սէսի որդի Կարապետին վախ/ճանվեցավ 2. 12. 1897 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 52 x 15 x 36 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Այս է տապան Յակոբի / Համբարձումեան / Բադալանց:* / (Մյուս երեսին)՝ *Ծնաւ 10. 5. 1889 ամի, / վախճան. 9. 23. 1899 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 137 x 31 x 45 սմ, սպիտակ մարմար.

*Լուսն հանգեաւ ջահիլ կեանգիս, լուսադու ճրագս աւաղ. / կանանչ-կարմիր հասակի մէջ թառամած պսակս աւաղ. / ախ իմ փափագս լի յույսեբով բոլոր նպադակս աւաղ. / չորացաւ վարդ ծաղիկս Սիմէօն ադաւնիակս աւաղ:* / (Մյուս երեսին)՝ *Մնացողքս ոնց ցաւեն Սիմէօնիս մահուան ախդին. / չէ որ իմ խեղջ կեանքի ծառը չորացել է ծաղկած վախդին. / կարդացողքդ ողորմի դաք Բադալեանցիս հոքու բախդին. / այն կեանքումը արժանանար եդեմական սուրբ դրախդին:*

Նեղ կողին՝ *Ծն. 2. 14. 1885, վխ. 2. 17. 1899:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

### ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՑ (ԸՎԸՏՐԱՆԱՆՔ, ՔՈԹԿՈՒՆՔ, ՊԻՋՈՒՆՔ)

Տապանաքար. չափերը՝ 103 x 30 սմ, ուղղանկյունաձև, 3 տող.

*Այս է տապան Պաղդասարանց / Վանեսի կին՝ Գուլի Զաքարեանը, / վխ. 1905:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

### ԲԱՐՍԵՂՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 165 x 35 x 57 սմ, 3 տող.

*Այս է տապան Բարսեղ/անց Օվանեսի որդի Մար/դիրոսին, վխ. 1880:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

### ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 115 x 23 x 60 սմ, սպիտակ մարմար, կողերը՝ պարանաձև քանդակված, 4 տող.

*Ի տապանի աստ ամփոփի մարմին / Միքայելի Բեկնազարեանց 30 ամեայ / հասակի հանդիպեց մահն անգութ / եւ խլեաց զիս ի յաստի կենաց, 8. 11. 1882 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:



***ԲԱՆԱՆՑ. տապանաքարեր և խաչքարեր գերեզմանատան հին մասում***

## ԲՆԻՉՅԱՆՑ (ԲԱՆՈՒԻՉՅԱՆՑ)

Տապանաքար. դագաղաձև, 2 տող.

*Այս է տապան Ստեփանի Մկրտիչեան / Բնի-չեանց, 35 ամայ վխ. 1898 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

## ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 143 x 55 x 40 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս տապան Գաբրիէլանց Ղուկասի / որդի Աւա-քին, 18 ամաց վխ. 10. 13. 1911 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

## ԳԵՎՈՐԳՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 150 x 38 x 40 սմ, սպիտակ մարմար՝ եռանիստ վերնամասով, 5 տող.

*Այս է տապան Մէջլումի, որ է որդի Աղէքսա/նդ-րի՝ մահտեսի Գէորգեանց, վախճանեցաւ 1811 ամի:* / (Մյուս երեսին)՝ *Աստ ես ամփոփի մարմին՝ Աղէք-սանդրի, որ է հայր Մէ/ժլումի եւ որդի մահտեսի Գէորգի, վճիռ մահուն / եղեւ 1866 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 145 x 48 x 30 սմ, 5 տող.

*Այս է տապան / Սարգսի որդի / մահտեսի / Գե-ւորգին / վխ. 1863 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 106 x 36 x 40 սմ, 3 տող.

*Մահտեսի Խիկար / մահտեսի Գէորգեանց /* (Մյուս երեսին)՝ */1830-1902:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 132 x 30 x 60 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Պօղոսի / Գէորգեանց, 70 ամաց հասակի / վախճան 1895 ամի, 2-ն մայիսի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 138 x 32 x 55 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան Մայանի, որ է կին՝ / Գէորգեանց Կարաբեդի, / վախճան 11. 6. 1895 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Կարդացողին խնդրեմ ասէ Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 134 x 35 x 50 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Գեորգեանց Կարաբեդի / կին՝ Սուլթանի, ծ. 1860 թ., վխ. 19... թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 136 x 31 x 62 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Գէորգեանց / Պողոսի կողակից՝ Շողակաթին, / վախճան 1902 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Կարդացողին խնդրեմ ասէ Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 137 x 32 x 60 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան Գէորգանց Յոհաննէսի / որդի Միքաելին, 20 ամաց վախճ/անեցաւ 1. 6. 1903 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Կարդացողն ասէ Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

## ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 154 x 28 x 50 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է հանգիստ Աքանեսի Բարսեղեան, / որ ի տոհմէն՝ Գրիգորեանց, աստէն էառ / զհիր վախճան յաւիտենից կենաց յուսով / աստէն ննջէ անոշ քնով, 1816, ի 10 հոկտեմբերի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 140 x 65 x 35 սմ, 4 տող.

*Այս է տապան մահտեսի / Սարգսի որդի Ղազարին, / մօրն՝ Եփրեմին, / 1833:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 143 x 60 x 40 սմ, 9 տող.

*1846 / Այս է տապան / մահտեսի Սարգսի որդի՝ / Մկրտչի կո/ղակից Եղի/սաբեթի, որ է / դուստր Դանի/էլի եւ Նազլ/խանի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 158 x 60 x 35 սմ, 2 տող.

*Այս է տապան Գրիգորի որդի / մահտեսի Սարգսին, վխճն. 8. 10. 1857 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 155 x 50 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան Գրիգորյա/նց Գալուստի որդի՝ Սար/գսին, վխճն. 5. 21. 1873 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 135 x 52 x 25 սմ, ուղղանկյուն սալատապան, 3 տող.

*Այս է տապան Գրիգորանց / Ավագի որդի Մաթեվոսին, / վախճանեցաւ՝ 1875 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 165 x 50 x 30 սմ, 2 տող.

*Այս է տապան Գրիգորեանց մահտեսի Սարգսի / որդի՝ Պարսեղին, վխճն. 3. 1. 1880 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 150 x 53 x 40 սմ, ռուք, 2 տող.

*Այս է տապան Գրիգորանց Մկր/տչի կողակից՝ Ճաւին, վխ. 1882:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. սպիտակ մարմարից քանդակված ծառ է, 4 տող.

*Մահարձան Աւ/ագի Մկրտչեան / Գրիգորանցն / ծն. 1854 ամի, վախ. 1882 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 87 x 27 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան Գրիգորանց / Գրիգորի դուստր Շողագաթին / ծնաւ 1861 ամի, վխ. 1885:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 48 x 22 x 36 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան Գր/իգորանց Գրիգ/որի դուստր՝ Նոր/ընծին, 11. 10. 1888:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 166 x 55 x 32 սմ, քարատեսակը՝ ռուք, 2 տող.

*Այս է տապան Գրիգորանց մահտե/սի Սարգսի որդի՝ Մկրտչին, վխ. 1889:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 63 x 28 x 22 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Մագթաղ Իվանի Գրի/գորանց, վխ. 1902 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 104 x 28 սմ, մի մասով խրված հողի մեջ, 3 տող.

*Այս է տապան Գրիգորանց / Գրիգորի կողակից Մաքթ/աղին, վախճանվեցավ 1904:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 113 x 34 սմ, եռանիստ վերնամասով՝ մի մասը հողի մեջ թաղված, 3 տող.

*Այս է տապան Գրիգորանց / Մաթէոսի որդի Գրիգորին, / վախճանվեցավ 1904:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 115 x 32 x 55 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Գրիգորանց Հանեսի / վորդի Իվանի, վխ. 1918 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:










***ԲԱՆԱՆՑ. տապանաքարեր և խաչքարեր գերեզմանատան հին մասում***

Տապանաքար. չափերը՝ 122 x 28 x 55 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Այս է տապան Գրիգորանց / Իվանի վորդի Գրիգորի / վխ. 1918 թ.: /* (Մյուս երեսին)՝ *Սոնիչկա Իվանի Գրի/գորանց, վխ. 1918 թ.:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

## ԳՈՒԼՈՒՆՑ

Տապանաքար. չափերը՝ 170 x 55 x 35 սմ, 3 տող.

*Այս է տ(ա)պ(ա)ն / Գուլին, թ(վի)ն Ռ/ՃԿԶ (1717) էր:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 168 x 42 x 62 սմ, 5 տող.

*Եկի աշխարհ տեսայ ամենն ունայն է, վերջին օրս չի | իմացայ ինչ ձայն է, Գալուստ Պողոսեան Գիլի|եանցս, նոր իմացայ, որ փրկիչս՝ Աստուած միեայն է: |* (Մյուս երեսին)՝ *32 ամաց վխ. 4. 4. 1889 ամի, Աստուած հոգին | լուսաւորեսցի, ամէն:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 1, էջ 6:

Տապանաքար. չափերը՝ 140 x 24 x 58 սմ, սպիտակ մարմար, 9 տող.

*Էյ՝ անցաւոր, կա՛ց քեզ պատմեմ լալագին ակս | անգութ ցաւը սրտումս թողեց իմ փափագս | ծնողք իմ եւ որդիք անգին, ա՜խ Մեսրոբ՝ ամուսին | ո՜հ չըմոռանաք խնդրեմ ձեր խեղճ Դշխոին: |* (Մյուս երեսին)՝ *Մնաք բարեւ ծանոթ-անծանոթ ես գնացի | որդիքս կաթնակեր այլոց ապաստան թողեցի. | Դշխոն եմ անմոռանալի, կին՝ Մեսրոբ Գիլեանցի, | յիշեցէք խնդրեմ Դշխուս, Ա(ստուա)ծ ողորմեսցի, | ծնդ. 1871 ամի հոգ. 1, վխ. 1899 ամի 25 յնվր.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 35 x 50 սմ, 3 տող.

*Այս է տապան Գուլունց Սարգսի | գին՝ Վարթին, ծնդ. 1846, վխճ. 12. 25. 1886 | թառամեալ ծաղկիս անցնողք յիշէք Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 60 x 30 սմ, 4 տող.

*Այս է տապան | Մեսրոփին, որ է | որդի՝ Պօղոս|ին, թվ(ին) ՌՄԾ (1801):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԴԱԼԼԱՔՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 145 x 65 x 40 սմ, 4 տող.

*Այս է տապան | Յօհանի որդի՝ | Դալլաք Աւա|գի, 1831:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 55 x 35 սմ, 5 տող.

*Այս է տապան | Դալլաք Աւա|գի որդի՝ | Յովհանիսի | 1839:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 60 x 35 սմ, 7 տող.

*Այս է տա|պան Յով|հաննիսի | որդի՝ յան|գեալ Տ(է)ր | Գրիգորի, | ՌՄՂ (1841) թ(վին):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԴԱՆԻԵԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 182 x 48 սմ, 3 տող.

*Այս է տապան Դանելանց | Պողոսի որդի Տատին, 1876:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 70 x 21 x 35 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Դանիէլեանց | Գրիգորի որդի՝ Արդէմին, 5 ամայ: |* (Մյուս երեսին)՝ *Վախ. 1910 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԴԱՏՈՒՆՑ (ՏԱՏՈՒՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 135 x 50 x 35 սմ, 3 տող.

*Այս է շիրիմ Դատունց | Յակոբի որդի՝ Ստեփանին, | 1883 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 55 x 30 սմ, 3 տող.

*Այս է շիրիմ Տատունց | Յուէփի կողակից Մաք|թաղին, վխ. 1898 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԴՈՆՈՒՆՑ (ՏՈՆՈՒՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 162 x 40 x 43 սմ, ուղղանկյունաձև, 3 տող.

*Այս է տապան Դոնունց | Ստեփանի որդի Դանէլին | վխ. 8. 3. 1893 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 65 x 38 սմ, 3 տող.

*Այս է տապան Դոնունց | Սարգսի որդի Գալուս|տին, վախճանեց 1872:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԹՈՐՈՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 170 x 57 x 40 սմ, 6 տող.

*Այս է տապան | Թօրօսանց | Տ(է)ր Աւաքի | որդի Օհան|էսին, | ՌՄԿԳ (1814):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 53 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Թորոսանց Ունանի | կողակից՝ Ճավահիրին, վախ. 1819:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 53 x 17 x 42 սմ, ուղղանկյունաձև, 3 տող.

*Այս է տապան Թորոսանց | Ունանի որդի Մար|դիրոսին, վխ. 1890:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 48 x 18 x 38 սմ, 3 տող.

*Այս է տապան Թորո|սանց Ունանի դուստր՝ | Սապետին, վխ. 1892:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 45 x 20 x 42 սմ, 4 տող

*Այս է տապան | Թորոսանց Ունանի | դուստր՝ Խաթունին | վախ. 1892 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 44 x 19 x 35 սմ, 4 տող.

*Այս է տապան | Թորոսանց Ունանի | դուստր՝ Սանդուխտին | վխ. 1894:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ԽԱԼԻՓԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 142 x 39 x 61 սմ, դազաղաձև, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Խալիփեանց Ստեփանի | որդի՝ Պողօսին, վախճան 1895 թ.:*



***ԲԱՆԱՆՑ. «Ցից քար» խաչքար-կոթողը գերեզմանատան արևելյան եզրին***

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Ծանոթ. Խալիփյանց տոհմի անվանումն է կրում Բանանցի մատուռներից մեկը՝ «Խլփանց խաչը»:

Տապանաքար. չափերը՝ 110 x 42 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Խալիփեանց կոյս / Մայանի. 98 ամայ վխ. 1901 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 134 x 32 x 58 սմ, դագաղաձև, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Խալիփեանց Պողօսի / կին՝ Վարթին, վախճան 1903 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 67 x 39 x 27 սմ, դեղնագույն կրաքար.

*Այս է տապան գանձակեցի / Յարութի մահտեսի Բալաղեանի դուստր /* (Մյուս երեսին)՝ *Հռիմսիմէին, ծնեալ 3. 30. 1882, / վախճանեալ 1889 ամի, սեպտեմբերի 11-ին:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 30 x 60 սմ, ուղղանկյունաձև, կրաքար, 3 տող.

*Այս է հանգիստ Ստեփանի Պօղո/սեան, որ ի տոհմէն մահտեսի Բա/սեանցէն, ծնաւ 1866, վխ. 1. 11. 1898:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ԾԱՊՈՎՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 180 x 60 x 50 սմ, ուղղանկյունաձև, 17 տող.

*Պարտէզ ծաղկեալ / ի մեջ երկրի / մարմին քոյոյ Կա/րապետի, հռչակե/ցար ու մահտեսի / եւ երաժիշտ գեր գովելի, / ութսուն ամաց ժամանակի / բնակի յարդ յաշխարհի / քրիստոսադիր ատիճանի / արժանացար նորին շնորհի / եղերորդ Տ(է)ր Գրիգորի / սեռ բարեպաշտ մեծ Ծ(ա)պ(ո)վի / կնքեցար յայս դամբարանս / Տ(է)ր Ա(ստուա)ծ մեր քեզ ողորմի, / ՌՄՂԵ (1846) թւոյն / մարտի ԻԴ (24) օրն / վիրապ կիրակի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 57 x 20 սմ, 6 տող.

*Այս է տապան / Ծապովեանց / մահտեսի Կար(ա)/պետի կողակից՝ / Հռիփսիմէին / 185...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 110 x 55 x 30 սմ, 4 տող.

*Այս է տապան Ծապովեանց / Յովհաննէսի կողակից՝ / Սառային, / 1854:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ԿՈՒՐՃՈՒՆՑ (ԳՅՈՒՐՋՈՒՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 130 x 44 x 30 սմ, 3 տող.

*Այս է տապան Կուրճունց / Մկրտչի որդի՝ / Կարապետին, վխ. 1891:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 175 x 44 x 32 սմ, 3 տող.

*Այս է տապան Կուրճունց / Կարապետի կողակից՝ / Սաբետին, 1891:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 60 x 40 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Կուրջունց Ապրհամի որդի / անժողարար Գրիգորին, 45 ամաց վխ. 189... ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՀԱԿՈԲՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 155 x 35 x 65 սմ, 4 տող.

*Արձան մահու ըՍտեփաննոսի եւ բարե/պաշտ յոյժ գովելի, ազգ՝ Յակոբեանց / Ղազարեանի, վաղճան հասեալ աստէն / տընի, թվ(ին) ՌՄՀՁ (1827):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 125 x 40 x 40 սմ, քարատեսակը՝ ռուք, 2 տող.

*Այս է տապան Յակոբեանց Օհանի | որդի՝ Գրիգորի, վխ. 11. 8. 1868 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 48 x 65 սմ, սպիտակ մարմար.

*Այս է տապան Աւագ Պօղոսեան Տէր Յակոբ|եանց, ծնունդ եղաւ 1852 ամի 15-ին դեկտեմ. | վախճանեալ 1883 ամի 16-ն փեդրվարի: |* (Մյուս երեսին)՝ *Կարթացողին խնդրեմ ասէ | Աստուած ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 165 x 34 x 69 սմ, սպիտակ մարմար, 4-ական տող հայերեն և ռուսերեն.

*Այստեղ հանգչում է կօլլէգիական | րէգիստրատոր բժիշկի աւագ փերշիլ՝ | Եգոր Գրիգորեան Յովհաննիսեանի աճիւնը, | ծ. 13 սեպտեմբերի 1841 թ., վխ. 14 յունիսի 1906 թ.:*

Մյուս երեսին՝ *Здесь покоится прахъ медицинскаго | старшего коллежскаго регистратора | Егора Григорьевича Оганезова, | род. 13 сентября 1841 г., скончю 14 июня 1906 г.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

*Ծանոթ. Եգոր Հովհաննիսյանցը 1887 թ. հիմնադրել է գյուղի ուսումնարանի շինությունը՝ ի հիշատակ իր վաղամեռիկ որդու՝ Ալեքսանդրի («Նոր-Դար», 1887, N 113, էջ 3): 1888-ին վեհափառի կոնդակով, ի թիվս երկու այլ անձանց, հաստատվել է ուսումնարանի հոգաբարձուների կազմում («Արարատ», 1888, էջ 129):*

Տապանաքար. չափերը՝ 173 x 40 x 58 սմ, դեղնագույն կրաքար, 6 տող.

*Նայեցէք առ իս եւ մտաբերեցէք. ես եմ՝ Աղէքսանդր բժիշկ | Եգորեան Յոհաննէսեանցն, որ դեռ ծաղկէի գեմնազեան ուսմամբ | ի ժամ ապառնման նորա Տէր մեր հրաւիրեաց առ ինքն ի փառաբանութիւն: |* (Մյուս երեսին)՝ *բանիւ տեառն եկի յաշխարհ 2-ն նոյեմբերի 1865 ամի | եւ ննջիմ աստ յուսով յարութեան 12-ին յուլիսի 1885 ամի: | Անմոռանալի ձեր ընկեր Աղէքսանդր Յոհաննէսեանցի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 32 x 40 սմ, ուղղանկյունաձև, վարդագույն քար, 2 տող.

*Այս է տապան Ստեփան Գրիգորեան | Յուաննէսեանցի կին՝ Մաքթաղին, թ(վին) 1867:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 70 x 45 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Քաջ երիտասարդ Կոստանդին | Ստեփանեան Յովհաննիսեանց | 1881-1904:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 67 x 16 x 43 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Սերգի Յո|հաննէսեան Յոհաննէսեանց, | 1902:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:



***ԲԱՆԱՆՑ. «Ցից քար» խաչքար-կոթողը գերեզմանատան արևելյան եզրին (վերակազմություն)***

Տապանաքար. չափերը՝ 72 x 18 x 36 սմ, ռուք, 2 տող.

*Զաքար Վիրաբեան Յով|հաննէսեանց, վխ. 1879 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 49 x 19 x 36 սմ, ռուք, 3 տող.

*Միքայել Վիրաբ|եան Յովհաննէսեանց, | վխ. 1884 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՀՐԱՊԵՏԱՆՑ (ՎԱՌՈՒՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 147 x 25 x 50 սմ, 2 տող.

*Այս է տապան Հրապետանց Ղիլի | որդի՝ Մկրտիչին, վախ. 12. 21. 1818 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՂԱՎԱԼԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 175 x 58 x 33 սմ, ուղղանկյունաձև սալատապան.

*Այս է տապան Ղավալ Մկրտչի | ...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 60 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան Ղավալանց | Զաքարի որդի՝ Գրիգ|որին, ծնաւ 1861, վխ. 1881:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՂՈՒԼՈՒՆՑ

Տապանաքար. չափերը՝ 180 x 68 x 34 սմ, ուղղանկյունաձև, 6 տող.

*Այս է դապան | Բակրատին, | որ է որդի՝ Ջի- րա|փարթցի Յա|թամ բէկի, | 1830:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Ծանոթ. Ջիրափարթցի=Ջրաբերդցի:

Տապանաքար. չափերը՝ 150 x 54 x 35 սմ, ռուք, 5 տող.

*Այս է դապա|նն Ղուլունց | Արութ(իւն)ի որդ|ի՝ Ե- ղին, | 1834:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 43 x 25 սմ, մանուշակագույն քար, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց | Յարութիւնի որդի՝ մահտ|եսի Սահակին, վխ. 1893:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 148 x 43 x 30 սմ, մանուշակագույն քար, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց | Յարութիւնի որդի՝ մահ|տեսի Ս(ա)հակի կողակից՝ Մարեամին, | 1882:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 57 x 14 x 38 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց | Աւէտիսի որդի Համ- բար|ձումին, ծ. 1899, վխ. 1900:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 53 x 30 սմ, ռուք, 2 տող.

*Այս է տապան Ղուլունց | Գրիգորի որդի՝ Եղի, վխ. 1900:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 143 x 38 x 48 սմ, ռուք, 2 տող.

*Այս է տապան Ղուլունց Գրիգորի որդի | Յով- հաննէսի, վխ. 1905 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 142 x 31 x 58 սմ, սպիտակ մարմար, 6 տող.

*Այս է տապան Ղուլունց Գրիգորի որդի | Յարու- թիւնի, 66 ամաց վխ. 1920 թ.: |* (Մյուս երեսին)՝ *Ննջիր աստ հանգիստ սիրելի հայրիկ | թողնելով ինձ վերա՝ ձեր մեծ երախտիք, | փոխան երախտեացդ չունեցա այլ բան | այս տապան քարը առ քեզ ի նշան:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 138 x 28 x 54 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան Ղուլունց Յարութիւնի կին՝ Հո- ռ|ոմսիմի, 58 ամաց վխ. 1922 թ.: |* (Մյուս երեսին)՝ *Որք պատահիք այս տապանի | ասէք սմա՝ Տէրն ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 70 x 20 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց Յար|ութիւնի որդի՝ Պօ- ղոսին, | վխ. 1892 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 78 x 25 x 30 սմ, ռուք, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց | Յարութիւնի որդի՝ Գրիգ|որին, ծ. 1898, վխ. 1900 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 73 x 20 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Ղուլունց Յարու|թիւնի դուստր՝ Շողին, վխ. 1896:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 66 x 23 x 38 սմ, 3 տող.

*Այս է տապան Ղուլունց Յար|ութիւնի դուստր՝ Սըհարին, | վխ. 1912 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

## ՄԱՆՈՒՇԱԿՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 170 x 65 x 50 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Խաչատուրի | Մանուշակեանց, վխ. 1876 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 122 x 39 x 22 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Մանուշակեանց Հանէսի | կին՝ Մարանոսի, վխ. 1887:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 106 x 30 x 43 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Մանուշակեանց Պողոսի | կին՝ Ազիզի, վխ. 1892:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. չափերը՝ 108 x 30 x 40 սմ, 2 տող.

*Հանէս Պողոսեան | Մանուշականց, վխ. 1910:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 2, էջ 14:

### ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 165 x 54 x 27 սմ, ռուք, 6 տող.

*Այս է տապան / Մէլիք-Իսրայ/էլեանց ... / ...յերիք, վախճ/անեցաւ, 1870:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 47 x 63 սմ, դեղին կրաքար, 5 տող.

*Այսմ տապանի տակ ննջիմ յուսով / յարութեան Քրիստոսի գալստեամբ / Օհան Աւագեան Մէլիք-Իսրայէլեանց: /* (Մյուս երեսին)՝ *Ծնայ 1847 թ., վխճնց. 1883 թ., ապրեցի 36 տարի, / այս միջոցեն Ա(ստու-ա)ծ ճանաչեցի, ասացէք Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 47 x 20 x 40 սմ, դեղին կրաքար, 4 տող.

*Այս է տապան / Մէլիք-Իսրայէլեանց /* (Մյուս երեսին)՝ *Օհանի տուստր՝ / Դշխոին, 1882 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

### ՄԵԼԻՔ-ԾԱՏՈՒՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 164 x 42 x 68 սմ, դազաղաձև սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Գալուստ / Յարութիւնեան Մէլիք-Ծատուրեանցի: /* (Մյուս երեսին)՝ *1826-1901:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

### ՄԵԼԻՔ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 143 x 68 x 32 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Վիմիս տակ ամփոփի մարմինը կին՝ Մկրտչի / Մելիք-Մատթէոսեանցի Շողագաթի Ներսէս/եանի, հանգիստ ոսկրացդ, ծնաւ 1831 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Վախճանեցաւ 1895 ամի, նոյ. 7-ն:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 47 x 30 սմ, ուղղանկյունաձև, 5 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթ/էոսանց Յարութիւնի որդի / փուռնոչի Ղեւանդի, / վխ. / 1882:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 175 x 57 x 30 սմ, 2 տող.

*Այս է տապան Մելիք Մաթէոսանց / Միրզի կին՝ Վարթին, վխ. 1887 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 113 x 30 x 35 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթէոսանց / Պողոսի որդի Յարութիւնի, վխ. 5. 19. 1890:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 74 x 21 x 26 սմ, դեղնագույն, 2 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթէոսանց / Պողոսի որդի Մկրտչին, վխ. 5. 16. 1881:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 170 x 52 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթէվոսանց / Մաթէոսի կին՝ Խանումի, վխ. 1892 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 75 x 23 x 35 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Մկրտիչ Պողոսեան Մելիք-/Մաթէոսանց, 10 ամաց վխ. 1907:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 128 x 25 x 37 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթէվոսանց / Պողոսի որդի Մամիկին: /* (Մյուս երեսին)՝ *26 ամաց վխ. 3. 17. 1908 ամի, / կնդակամահ:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 2, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 138 x 31 x 40 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Մելիք-Մաթէվոսանց Պողոսի / կին՝ Հռիփսիմի, 56 ամաց վխ. 1914 թ.:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 38 x 50 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Պողոսի Մաթէոսեան / Մէլիք-Մաթէվոսեանց, 75 ամաց վխ. 1917 թ.*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 75 x 25 x 45 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Մաթեվոսեան Մամիկոն Արտեմի / 1918-1919: /* (Մյուս երեսին)՝ *Մելիք-Մաթեվոսեան:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՄԻՐԶԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 148 x 29 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Մեռզեանց / Սարգսի տուստր՝ / Թագուհին, ի 1874 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 67 x 20 x 43 սմ, 3 տող.

*Այս է տապան Միրզաեանց / Մկրտչի որդի՝ Արտեմին: /* (Մյուս երեսին)՝ *Վխնն. 1. 11. 1886 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՄՈՆԹՈՒՆՑ

Տապանաքար. չափերը՝ 167 x 55 x 32 սմ, ուղղանկյունաձև, մանուշակագույն, 2 տող.

*Այս է տապան Մօնթունց Սարգսի որդի՝ / Պետրոսին, վխ. 11. 10. 1880 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 123 x 60 x 30 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Մօնթունց Անայի, որ է / դուստր՝ Սարգիս Բաղրամեանցի, ծնաւ / 1826 ամի, վախճանեցաւ 1889:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 123 x 47 x 26 սմ, դեղին կրաքար, 2 տող.

*Այս է տապան Մոնթունց Պետրոսի / կին՝ Սարային, ծն. 1849-ին, վխ. 1894:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՄՈՒՔԵԼՅԱՆՑ (ՄԻՔԱՅԵԼՅԱՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 140 x 27 x 73 սմ, դեղին կրաքար, 7 տող.

*Այս է տապան Գանձակու նահանկի / Պանանց գուղա բնակիչ Յոհաննէ/սի որդի՝ Բէգլար Մուքէլեանց, / ողճանվէցաւ 11. 21. 1863 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Ի տապանի աստ ամփոփի մարմին Միքայէլեանց / Սարգսի, որ սպանմամբ վախճանեցաւ յոտխ / քշնամեաց աստի բարձաւ, վխ. 1877 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 142 x 39 x 30 սմ, ռուք, 2 տող.

*Այս է տապան Միքայէլեանց Սարգսի կողա/կից՝ Խալլուին, վխ. 9. 16. 1893 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 72 x 20 x 52 սմ, ռուք, 4 տող.

*Այս է տապան Ջառի, / տատը՝ ըՍտեփան / Մուքէլեանցի, վխ. / 4. 9. 1888:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 162 x 43 x 70 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Խաչատուր / Ղեւոնդեան Մուքէլեանցի, / 1841-1877:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՆԱԴԻՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 155 x 60 x 35 սմ, 4 տող.

*Այս է տապան / Նադիրանց / Տ(է)ր Գրիգորին, / թվ(ին) ՌՄԺ(1761):*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 55 x 25 սմ, 5 տող.

*Այս է տապան / Տ(է)ր Գրիգոր/ի կողակից / Յեղնանին, / թվ(ին Ռ)ՄԽ(1791):*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 125 x 60 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան Նադիրանց / Առուշանին, / վախ. 10. 5. 1816 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 135 x 45 x 30 սմ, 3 տող.

*Այս է տապան Առուշանի / կողակից Նադիրանց / Հերիքնազին, 1862:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 127 x 47 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Սարգսի / կողակից՝ Նադիրանց / Սառային, 1866:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՆԱԼԲԱՆԴԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 162 x 36 x 50 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Սապետի, որ է կին՝ / Պարսեղի Նալպանդեանց, վխ. 1898 թ.:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆՑ (ՆՐԿՐԱՐԱՆՑ)

Տապանաքար. չափերը՝ 144 x 27 x 45 սմ, 2 տող.

*Այս է տապան Նրկարարեանց Խաչատուրի / որդի Գալուստին, վխճն. 1870:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 124 x 26 x 36 սմ,

*Այս է տապան Նրկարարեանց Վիրապի / կին՝ Հերիքին, վխճն. 1874 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 137 x 28 x 62 սմ, 3 տող.

*Այս է տապան Նրկրարանց / Կարապետի կողակից՝ Հերիքին, / վախճ. 1881 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 54 x 18 x 37 սմ, 3 տող.

*Այս է տապան Նրկարարեանց / Վիրապի որդի՝ / Խաչատուրի, 1888:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

### ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 130 x 28 x 67 սմ, դեղին կրաքար, 3 տող.

*Այս շիրիմ Շահմուրադանց / Գրիգորի որդի՝ Կարապետին, / վախճան՝ 1890:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 176 x 39 x 70 սմ, սպիտակ մարմար, դազաղաձև, 3 տող.

*Այս է տապան Վիրապ / Յակոբեան Շահմուրադեանցի: /* (Մյուս երեսին)՝ *Ծնաւ 1805 ամի, վախճ. 1890 ամի:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 55 x 40 x 15 սմ, դեղին կրաքար, 4 տող.

*Այս է տապան Շահ/մուրադանց Սար/գիսի որդի՝ Կարապետին, / ծն. 1893, վխ. 1894:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 55 x 30 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Մինաս Գրիգորեան / Շահմուրադեանցի, վխ. 1897:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 45 x 60 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Շահմուրադեանց Կարապետի / կին՝ Ջանին, 78 ամաց, վխ. 12. 15. 1902 թ.:*

Հրատ. «Գարդմանը», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 40 x 60 սմ, սպիտակ մարմար, չափածո 8 տող.

*Այս տապանի տակ կը հանգչի բանանցեցի | դաշնակցական քաջ զինվոր՝ Զաքար Շահմուրադեանցը, | որը նահատակվել է Բանանցի այգիներում, 1906 թ. | մայիսի 16-ին, 34 ամէաց հասակում:* | (Մյուս երեսին)՝ *Իմ ընկերներ, քաջ կռվեցեք | թուրքերի դէմ ամեն օր. | իմ վրէժը նրանցից առեք | մուսիններով ձեր հզօր: | Թող թնդան ձեր մոսեններ | մեր ձորերում, սարերում. | նրանց ահեղ գոռ ձայները | կը լսեմ ես գերեզմանում:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՇԱՀՈՒՄՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 182 x 26 x 43 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Գրիգոր Տէր-Յարութիւնեան, | վխ. 1815, որ՝ Շահումեանց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 146 x 28 x 65 սմ, 3 տող.

*Այս է տապան Յարութիւնեանց | Ստեփանի կին՝ Աստղիկի, ծ. 1882, | վխ. 1. 2. 1908 թ. ծաղիկ հասակի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 146 x 28 x 55 սմ, 3 տող.

*Այս է տապան Տէր-Յարութիւնեանց | Գրիգորի կին՝ Անային, | վխ. 1892, որ՝ Շահումեանց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 163 x 27 x 61 սմ, 3 տող.

*Գրիգոր Յակոբեան Տէր-Յար|ութիւնեանց, վխ. 1895, | որ է՝ Շահումեանց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 148 x 30 x 57 սմ, 3 տող.

*Այս է տապան Տ(է)ր Յարութիւն|եանց Յակոբի կին՝ Սապետին, | վխ. 1900 ամի, է՝ Շահումեանց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՉԻԼԻՆԿԱՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 150 x 55 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան մ(ա)հտ(ե)սի Մկրտչին, | որ է որդի՝ Այվազեան | Չիլինկարեանց, վախ. 1890 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 152 x 50 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Չիլինկարեանց | մ(ա)հտ(ե)սի Մկրտչի կողակից՝ | Թումարին, վախճ. 1899 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՉՈՓՈՒՌՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 78 x 22 x 42 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Ի տապանիս Չոփուռանց | Ալէքսանդրի որդոյ՝ | Մկրտչին, վխ. 1872 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:



***ԲԱՆԱՆՑ. խաչքար գերեզմանատան հին մասում***

Տապանաքար. չափերը՝ 78 x 22 x 42 սմ, սպիտակ մարմար, 12 տող.

*Խաչհանգիստ Չոփուռեանց Եսայեան Միքայէլի, | որ գեղանի յոյժ քաղցրաբան երիտասարդ սիրելի | մանուկ տիօք ի տար աշխարհ լցեալ հասակ նազելի, | սա գայ ի տուն մխիթարել զայրի մայր իւր եղկելի | մտեալ շաւիղ այս կենաց, ըմպել բաժակ վառ սիրոյ | ընդ սիրելոյդ սրտի իւրոյ սիրահեզիկ հէք դշխոյ | խորշակ մահու անգթաբար փչէ ի սա յոյժ փութով | յանմխիթար ի սուգ թախիծ ազգ ընտանի մատնելով: | Ծնեալ ի 1870 ամի | վախճանեցաւ | 9-ն յունիսի | 1900 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՊՈՂՈՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 154 x 41 x 40 սմ, ռուք, 2 տող.

*Այս է տապան Պողոսանց Կարապետի | որդի՝ Պօղոսի կին՝ Մաքքաղին, վխ. 1. 21. 1895:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 138 x 13 x 45 սմ, սպիտակ կրաքար, 2 տող.

*Այս է արձան Հանեսի որթի | Մարտիրոս Պողոսեանց, 1843:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՃԱԼԼԱՂՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 160 x 55 x 40 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Անդրեասի Ստեփանեան | Ջալլաղեանց, վխ. 1894:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 144 x 62 x 32 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Գրիգորի Յարութիւնեան | Ճալլաղեանց, 96 ամաց վխ. 1912 թ.*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 92 x 21 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Սիմոնի Սարգիսեան / Զալլաղեանց, վխ. 1913 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 155 x 65 x 21 սմ, սպիտակ մարմար, 1 տող.

*Զալլաղանց Գրիգորի կին՝ Թանկի, 2. 3. 1917:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 70 x 20 x 36 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Սիրանուշ Հովհաննեսի / Զալլաղյան, 1 ամաց վխ. 1923 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՎԱՀԱՆՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 155 x 60 x 30 սմ, 5 տող.

*Այս է դապան / Վահանանց Ա/ռաքէլի որթի / Տէր Հ...ին թ(ի)ւ / ՌՄԾ(1801):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՎԱՆՈՒՆՑ

Տապանաքար. չափերը՝ 165 x 30 x 70 սմ, 2 տող.

*Այս է տապան Խաչատուրի / որդի՝ Գրիգորին, վխ. 1884 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 60 x 15 x 35 սմ, 3 տող.

*Այս է տապան Վանու/նց Ավգիմի դուստր՝ / Շուշանիկին, 1887:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 38 x 65 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Վանեանց / Պողոսի որդի՝ Սողոմոնին: /* (Մյուս երեսին)՝ *ծ. 18. 4. 1848, վխ. 15. 1. 1886 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 135 x 40 x 58 սմ, 3 տող.

*Այս է տապան Վանեանց Սողոմոնի / կին՝ Եղիսապէդին: /* (Մյուս երեսին)՝ *13. 5. 1858 - 26. 6. 1886:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՎԱՐԴԱԶԱՐԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 153 x 38 x 36 սմ, 6 տող.

*Այս է տապան Մատթէոս Յարութի/ւնեան Վարդազարեանցի, ծ. 1831, վխ. 1. 10. 1901: /* (Մյուս երեսին)՝ *Այստեղ կիանգչի... / որը թողած վայելիք կեանք / մնաց միշտ հեզ, համեստ, բարի / անուն թողեց առաքինի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 165 x 45 x 42 սմ, 3 տող.

*Այսու տապան ամփոփեալ դնի մարմին / Վարդանի, որդի եմ՝ Մկրտչի / Վարդապէտեանց, վխնն. 1872 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 95 x 35 x 40 սմ, սպիտակ կրաքար, 4 տող.

*Այս է տապանն Զանի, որ է դուստր / Եփրէմի Վարդապէտեանց: /* (Մյուս երեսին)՝ *Ծնաւ 2-ն յունւարի 1884 / եւ վախճ. 18-ն փետրվարի 1887:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 125 x 38 x 55 սմ, ռուք, 3 տող.

*Այս է շիրիմ Վարդապետանց / Նաւասարդի կին՝ Վարդին, / վախ. 1886 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 170 x 30 x 50, ռուք, 2 տող.

*Այս է տապան Վարդապետանց Նաւա/սարդի 2-րդ կին՝ Վարթին, վխ. 5. 2. 1905 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆՑ

Տապանաքար. 2 տող.

*Այս է տապան Տէր-Աւետիքեանց Յովհաննէսի / կին՝ Եղումի, վխ. 1880 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. 7 տող.

*Ստէփան Միքայէլեան / Տէր-Աւետիքեանց. / ծաղիկ, գեղեցիկ. / աստ բուսեալ սպասիմ. / յուսով Յարութեան / Քրիստոսի գալստեան, / ծ. 5. 29. 1851, վ. 8. 16. 1861:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. 16 տող.

*Աստ սերմանիմ, անդ բուսանիմ յուսով / Յարու(թ)ե(ան) Ք(րիստո)սի գալստեամբ ս(ր)բ(ո)յ հոգւոյն / երեւմամբ. Յովհաննէս Ստեփանեան Տէր Աւետիքեանց. / ամենակալ Ա(ստուա)ծ եւ Տէր Յ(իսու)ս Ք(րիստո)ս դատաւոր արդար / յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս եւ / զմեռեալս մի մտաներ ի դատաստան ը(նդ) ծառայի / քում Յովհաննիսիս, այլ փրկեա զիս ի յաւիտենա/կան հրոյն եւ լսելի արա ինձ զերանաւետ կոչումն / արդարոյ յերկնից արքայութեանդ եւ ողորմեա քո / արարածոյ եւ ինձ բազմամեղիս: /* (Մյուս երեսին)՝ *Արձանս այս տուն եւ տեղի դարփին, վարպետ՝ Յովհաննէսի Ստ/եփանեան, սա անուանի Տ(է)ր Աւետիքեանց ազգատոհմի, ծնո/ւնդն՝ 1820 ամի, ի Բա/նանց գիղի, մահն՝ / 1860 ամի, յամսեանն / օգոստոսի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. 9 տող.

*Չի երազ օրհաս ինձ ժամանել ո՞հ Աստուած / յայս աշխարհէս կարճեաց զթել իմ կենաց / մնայ աչք ձեր ջերմ արտասւօք միշտ ի լաց, / ձեզ ասել խնդրեմ ընկալ զսա տէր փառաց / ինձ՝ Խաչատուրիս Ստեփանեան Տէր Աւետիքեանց, / հանդիպողա/ցդ խնդրեմ / ասէք Աստուած / ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՏԵՐ-ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 184 x 37 x 65 սմ, սպիտակ մարմար, 7 տող.

*Այս տապանի տակ կը հանգչի Տէր-Պօղոս քահանայ | Եպիսկոպոսեանցի կին՝ Թագուհի Տէր-Պետրոսեան Եպիսկո|պոսեանցը, մայր՝ անդրանիկ համալսարանականի | Բանանցոյ՝ Արամի, ծ. 1840 թ., վախճան. 1901 թ.: |* (Մյուս երեսին)՝ *Սիրելի զաւակունք իմ, ձեր փոխադարձ սերն ու միաբանու|թիւնը կը լինի յաւիտենական երանելի յուշարձան ինձ | համար, ուստի միշտ սիրեցէք միմեանց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 172 x 50 x 65 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Այս տապանի տակ կը հանգչի Բանանցի առաջի համալսա|րանական Խարկովի ֆակուլտետի ուսանող ու այնու|հետեւ քննիչ ու հաշտարար դատաւորի օգնական |* (մյուս երեսին)՝ *Արամ Տէր-Պողոսեան Եպիսկոպոսեանցը, | ծնվել է 1862 ամի, վախճանվել 1892 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 30 x 60 սմ, 3 տող.

*Այս է տապան Արտաշէս | Տէր-Պողոսեան Եպիսկոպոսեանցի, | ծնվել է 1879 թ., վախ. 1894-ին:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

### ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 128 x 30 x 47 սմ, ուղղանկյունաձև, սպիտակ մարմար, 4 տող.

*Ընդ այս վիմով եղեալ մարմին | Աննայ Յարութիւնեանի, որ էր | կին՝ Պետրոս ք(ա)հ(ա)ն(ա)յի Տ(է)ր-Իսրայէլեանցի, | վախճանեալ ի 1855 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 40 x 65 սմ, սպիտակ մարմար. 8 տող.

*Ընդ վիմովս գտանի մարմին աստիճանաւորի | զավառական կառավարութեան Գանձակու | Յովհաննէսի Տէր-Իսրայէլեանց որդւոյ՝ Տէր-Պետրոս | քահանայի: Հանդիպողացդ խնդրեմ ասէ Ա(ստու)ա)ծ ողորմի* (կողին). *Վախճանեալ | ի 1-ն մայիսի | 1859 ամի, 29 | ամայ հասակի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Ծանոթ. Հովհաննեսը ծնվել էր 1830 թ. հուլիսի 10-ին (ՀԱԱ,... թ. 4):

Տապանաքար. չափերը՝ 190 x 35 x 60 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Այս է տապան ... Պետրոս քահանայի | ... | Տէր Պող... | զողո... ամեաց ի 1849:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Ծանոթ. Պետրոս Տեր-Իսրայելյանցը. «...ընկալեալ է զչորրորդ աստիճան դպրութան ի 1812 ամի եւ ձեռնադրեալ է քահանայ յ8 մարտի 1820 ամի...», «...զկնի վախճանի... Պետրոս քահանայի ... ի 1849 ամի, մնացեալ են չորս ուստերք եւ երկու դստերք...»: Վավերագիրը գրվել է 1853 թ.:

Տապանաքար. չափերը՝ 165 x 43 x 55 սմ, սպիտակ մարմար, 16 տող.

*Յայսմ տապանի ամփոփեալ հանգչի | յուսով փառացն յաւիտենի | մարմին զրաշար դպիր ուսուցչի | Կարապետ Տէր-Իսրայէլեանի: |* (Մյուս երեսին)՝ *Հրամանաւ տեառն եկի յայս աշխարհ | քրտանց եւ ճգանց դառնաղէտ յայս վայր | այլ ոչինչ գտի ի սմա պերճարար | ճեպեմ յերկինս սրբոյն կայան: |* (Կողին)՝ *Ծնի. | 1858, | 18-ն | հ(ո)կտ(եմբերի): |* (Մյուս կողին)՝ *փոխեցաւ | ի տէր 1884 | 18-ն յունի|սի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 190 x 50 x 30 սմ, ռուք, 3 տող.

*Այս է տապան Տ(է)ր-Իսրայէ|լեանց Պողոսի որդի Իս|րայէլին, վխ. 1884 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 173 x 44 x 28 սմ, ռուք, 3 տող.

*Այս է տապան Տ(է)ր-Իսրայ|էլեանց Իսրայէլի կողակից՝ | ... վխ. ...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 54 x 27 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Այս վիմի տակ գտանի մարմին | Զառի մահտեսի Յարութիւնեանի, | որ էր կին՝ Տէր Գրիգոր Տէր Իսրայէլեանի, | հանգեաւ անզաւակ, ի 1864 ամի | քսան օրովք առաջ քան զմահ Տէր Գրիգորի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 155 x 35 x 52 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Նայիր կարդա ո՜վ մերձաւոր, | պատմի՛ր յետնոց իմ սգաւոր, | ես Տէր Գրիգոր Տէր-Իսրայէլեան |* (մյուս երեսին)՝ *երեսունվեց տարումս մեռա, | հինգ ամ միայն քահանայութեան:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Ծանոթ. 1864 թ. Գրիգոր քահանայի մահն արձանագրված է նաև «Մշակ» օրաթերթում (1878, N 187, էջ 2):

Տապանաքար. չափերը՝ 95 x 40 x 30 սմ, սպիտակ մարմար, 13 տող.

*Այս է արձան | Գրիգորի ան|դրանիկ որդոյ՝ | Օսէփ բէգի | 1870-1873:* (Կողին)՝ *Նա մի վարդ էր, | որ բացւեց, | մի արև էր, | որ ծագեց, | աւաղ վարդը շուտ | թառամեց, | պայծառ արևն էլ | խավարեց:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. սև քարից ծառ.

*Մի անբախտ օրիորդ՝ | Շ. Տէր-Իսրայէլեանց | 1914. 5/8, | իր եղբայրներից:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 15:

### ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 118 x 40 x 42 սմ, 3 տող.

*Այս է տապան Տէր | Խաչատուրանց Միքայէլի | որդի՝ Կարապետին, վխ. 1851:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 165 x 38 x 50 սմ, 2 տող.

*Այս է տապան Տէր Խաչատուրանց / Միքայէլի որդի՝ Ղեւոնդին, 1861:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 96 x 30 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Տէր Խաչա/տուրանց Ղեւանդի որդի / Պողոսին, վխ. 1861:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 70 x 31 x 20 սմ, սպիտակ կրաքար, 3 տող.

*Այս է տապան Տէր Խաչատուրանց Յարութիւնի դուստր՝ Մարիային, վխ. 188...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 148 x 37 x 40 սմ, ռուք, 2 տող.

*Սուլթան Յովհաննէսեան Տէր-Խաչատուր/եանց, վխ. 1892:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 115 x 30 x 50 սմ, մարմար, 2 տող.

*Այս է տապան Համբարձումի Սարգսեան / Տէր-Խաչատուրեանց, վխ.1900 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 72 x 17 սմ, սպիտակ կրաքար, 3 տող.

*Այս է տապան Տէր-Խաչատուր/անց Մաթեոսի որդի՝ Աւետիսին /...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Ծանոթ. Վերջին տողը խրված է հողի մեջ:

Տապանաքար. չափերը՝ 56 x 20 x 30 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Յոսէփի Մա/միկոնեան Տէր Խա-չա/տուրեանց, վխ. 1912 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 145 x 43 x 65 սմ, սպիտակ կրաքար, 3 տող.

*Այս է տապան Յովհաննէսի Յարութիւն/եան Տէր-Խաչատուրեանց, / ծ. 1890, վխ. 1913 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 130 x 32 x 60 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Յարութիւնի Յով/սէփեան Տէր-Խաչատուրեանց, / 1838-1915:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 94 x 30 x 40 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է տապան Թագուհի Մամիկոնեան Տէր / Խաչատուրեանց, վխ. 1915 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ՏԵՐ-ՀՈՎՍԵՓՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 145 x 50 x 20 սմ, սալատապան, 6 տող.

*Այս է տապան / Տ(է)ր-Հօսէփ/անց Պետր/ոսի որդի՝ / Տէր Իսրաէ/լ(ին), ՌՄԿ (1811):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 170 x 70 x 45 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Վաղաթառամ մահտեսի Ավետիք / մահտեսի Ներսէսեան / Տէր-Յովսէփեանց: /* (Մյուս երեսին)՝ *1850-5. 1. 1856:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 60 x 50 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Ամփոփի աստ մարմին / Յարութիւնի Տէր-Յովսէփանց, / 1835-1881:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 70 x 22 x 35 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Յայսմ տապանի գտանի / մարմին որդոյ՝ Յոսէ-փի / մահտեսի Պետրոսեանցի / քնքուշ Արմաղին, 1882:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 110 x 50 x 25 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Այս է շիրիմ Տէր Յոսէփանց Յոհաննէսի / որդի՝ Միքաէլին, վխ. 1888 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 140 x 70 x 40 սմ, 2 տող.

*Այս է տապան Տէր Յոսէփանց / Սարգսի կին՝ Մաքթաղին, վխ. 1891:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 45 x 38 սմ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է տապան Յոսէփի Գրիգորեան / Տէր Յոսէ-փանց, վխ. 1900 թ.:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆՑ

*Անդրեաս քահանայ / Տէր-Միքայէլեանց: /* (Մյուս երեսին)՝ *1829-1894:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար.

*Տիկին Սուլթան / Տէր-Միքայէլեանց: /* (Մյուս երե-սին)՝ *1836-1901:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 97 x 24 x 50 սմ, սպիտակ մարմար, 4 տող.

*Սահարձան Երուանդանոյշի / Տէր-Երուանդեան Տէր-Միքայ/*(մյուս երեսին)*էլեանց, ծնեալ 4. 12. 1894 ամի, / վախճանեցաւ 7. 8. 1901 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 175 x 65 x 30 սմ, տապանակերպ խաչքար, 3 տող.

*Այս է տապան Պարսեղի որդի Տ(է)ր Մկրտչին ՌՃԿԵ (1716):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 115 x 48 x 29 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Տէր Մկրտիչանց / Յարութունի որդի՝ Թաքէվոսին: /* (Մյուս երեսին)՝ *18 ամաց վխ. 1883 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 47 x 15 x 43 սմ, 5 տող.

*Ամի 1889, / այս է տապան / Ս(ա)հակ Խաչատու/ րեան Տէր-Մկրտիչ/եանց որդի՝ Թեւանի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 132 x 30 x 55 սմ, 3 տող.

*Այս է շիրիմ Տէր Մկրտչեանց / Յարութիւնի որդի Խաչատուրին / վախճանեցաւ 1891 ամի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆՑ

Տապանաքար. չափերը՝ 175 x 45 x 75 սմ, սպիտակ մարմար, 3 տող.

*Այս է տապան Յոհաննէսի Մովսէսեան Տէր- /Սահակեանց, վախճանեցաւ 19 ապրիլի 1896 ամի: /* (Մյուս երեսին)՝ *Կարդացողն ասէ Ա(ստուա)ծ ողորմի:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 40 x 65 սմ, սպիտակ մարմար, 5 տող.

*Սարգիս, որդին եմ՝ Յարութիւն Սահակեանցի, / դառղիս դարման չի ճարեցի, / ծլած ծախզած բառամեցի, / յիշէցէք Աստուած ողորմեսցի, / ծն. 1814 ամի, վխ. 1901:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Ծանոթ. մյուս երեսին քանդակված է ռանդան ձեռքին հյուսն, անկյունաչափ և չափակարկին:

Տապանաքար. չափերը՝ 67 x 22 x 41 սմ, սպիտակ մարմար, 2 տող.

*Աշխէն Աւետիքեան Սա/հակեան, ծն. 5. 6. 1894, վխ. 7. 21. 1894:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ՔՈՍՏՈՒՆՑ

Տապանաքար. չափերը՝ 140 x 60 x 20 սմ, 4 տող.

*Քոստունց. / այս է տապան / Քօստոնց Տէր / Մակուչ(ի)ն, թվ(ին) / (Ռ)ՄԽ (1791):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 147 x 50 x 65 սմ, սալատապան, 5 տող.

*Այս է տապան / Քօստունց Տէր / Մկրտչի որդի՝ / Պողօսին, / 1847:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 54 x 19 x 40 սմ, 3 տող.

*Այս է տապան Քոս/տունց Ապրհամի որդի /* (մյուս երեսին) *Գրիգորին, վխ. 1814:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 51 x 17 x 37 սմ, 4 տող.

*Այս է տապան / Քոստունց Յոհաննէսի / որդի՝ Մեխակին, / ծն. 1898, վխ. 1900:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

## ԱՆՀԱՅՏ ՏՈՀՄԵՐԻՑ ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Տապանաքար. չափերը՝ 170 x 40 x 55սմ, 4 տող.

*Այս է տապ/ան Տ(է)ր Աւ/էտիսին, թվ(ին) / ՌՄԾԸ (1809):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 180 x 58 x 40 սմ, 8 տող.

*Այս է տապան / Տէր Պօղոսի դուստր՝ Զանազանի / որդի՝ Ստեփանն/ան, որ իմ մայր / Զանազանն՝ աջո/կողմիս է թ(ա)ղե(ա)լ, / ՌՄԿ (1811):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 120 x 50 սմ.

*Այս է տապան / Կափռէլ, Վա/ ... որդի Մ/...:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 150 x 56 սմ, 6 տող.

*Այս է տապան / Թէլին... / ...Տէր / Դաւիթին / կողակից / ՌՄԿԳ (1814):*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 154 x 39 x 42 սմ, քարատեսակը՝ ռուք, 3 տող.

*Այս է տապան Փըփե/ցի Երիցանց Առ/աքէլին, վխ. 2. 14. 1894:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

Տապանաքար. չափերը՝ 160 x 59 x 28 սմ, կարմիր քար.

*... / ... Կարապետի որդի՝ Գրիգորին, վխ. 1891:*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 14:

**«Խըլփանց խաչ».** մատուռ-սրբատեղի գյուղամիջում: Անմշակ քարով, կրաշաղախով կառուցված քաղակապ շենք է: Պատերի մեջ ագուցված են մի քանի խաչքարեր կամ դրանց բեկորները: Շինարվեստը բնորոշ է ԺԸ դարին: Ուշագրավ է հատկապես 1556 թ. խաչելության տեսարանով հարդարված խաչքարը՝ ագուցված մատուռի ներսում:

**«Ծեր Պապ».** հորինվածքային առանձնահատկություններով հար և նման է «Խըլփանց խաչ» մատուռին: Նույնպես գյուղամիջում է:

**«Եղեցի հողեր».** հնավայրը գտնվում է Արթինաջուր գետի աջակողմում՝ «Դիմաց տեղ» քաղամասի եզրին: Պահպանվել են վաղ միջնադարյան խաչքարերով հարուստ գերեզմանատունը և հիմնավեր եկեղեցին: Շուրջ երկու տասնյակ խաչքարեր մինչև 1989 թ. կանգուն էին: Բոլորն էլ հարդարված հնաոճ ու պարզ խաչաքանդակներով, անարձանագիր:




**ԲԱՆԱՆՑ. «Ծեր Պապ» մատուռ-սրբատեղի**




**ԲԱՆԱՆՑ. «Խլփանց խաչ» մատուռ-սրբատեղի**




***ԲԱՆԱՆՑ. «Յանցի» աղբյուր***




***ԲԱՆԱՆՑ. «Բնիչանց» աղբյուր***




***ԲԱՆԱՆՑ. «Շինու թաղի» աղբյուր, 1903 թ.***




***ԲԱՆԱՆՑ. «Խաչի» աղբյուր, 1904 թ.***






***ԲԱՆԱՆՑ. «եղեցի հողեր» խաչքարերով գերեզմանոց***




***ԲԱՆԱՆՑ. ջրատար խողովակաշարի քարակերտ նմուշներ***

**Աղբյուրներ.** Բանանց գյուղը հարուստ ու նշանավոր է աղբյուրներով: Աղբյուր-հուշարձանները հիմնականում կառուցվել են տեղում բխող ջրերի վրա, բայց հնում եղել են նաև բերովի ջրերի վրա կառուցված աղբյուրներ:

Գյուղամիջում էին գտնվում «Փողոցքի», այնուհետև` «Յանցի», Քիքունց (Չղալունց), Ղուռուխի և «Բնիչանց» (Բանուչյանների) աղբյուրները: Վերջինս կառուցել է ոսկերիչ Քիքունց Մակին:

Գյուղի մերձակայքում հայտնի էին «Շինութաղի» և «Խաչի»` նույնպես քարաշեն ու ծորակահոս աղբյուրները: Վերջինիս ջրատար խողովակները (գունգերը) պատրաստված են եղել կերամիկայից:

Թվարկված աղբյուրների մեծ մասը ԺԹ-Ի դարերում կառուցված կամ նորոգված շինություններ են: Դրանցից վերջին երկուսի շինարարական արձանագրությունները մինչև 1988-89 թթ. հայերի բռնագաղթը անխաթար էին:

«Շինութաղի» աղբյուր.

*Յոհանէս Միրզաեանցս եւ կին Մեհրին շինիլ դվինք այս աղբիւրը մեր արդունքովը, 1903:*

Հրատ. առաջին անգամ:

«Խաչի» աղբյուր. մարմարե սալիկին` 5 տող.

*Վաղաթառամ Միքայէլ 29 ամաց Յովհաննիսեան Գէորգեանցի յիշատակին աղբիւրս շինեց հայրը, 1904 թ.:*

Հրատ. առաջին անգամ:



*ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատ (վանք). ընդհանուր տեսքը հարավ-արևելքից, հարավից և հարավ-արևմուտքից*

**Թարգմանչաց անապատ (վանք).** գտնվում է Բանանց գյուղից 1 կմ հարավ՝ Բոլորաջուր (Բոլորանց) գետակի աջ ձորալանջին: Շրջապատված է գեղատեսիլ, անտառածածկ լեռներով:

Հիմնադրումն ավանդաբար վերագրվում է Ե դարին[1097]:

Հուշարձանախումբը բաղկացած է միանավ թաղածածկ եկեղեցուց, որին արևմուտքից կից է նույնպիսի հորինվածքով գավիթը, իսկ վերջինիս էլ, դարձյալ արևմուտքից՝ փոքրիկ նախագավիթը: Հարավից գավթին կից է սրբատաշ քարերով կառուցված կրկնահարկ զանգակատունը, որտեղից էլ դեպի գավիթ բացվում է եկեղեցու հիմնական մուտքը: Ուշագրավ շինություն է նաև եկեղեցուն հյուսիսից կից ավանդատան բովանդակություն ունեցող սրահը:

Եկեղեցուց 5 մ արևելք՝ արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված, միմյանց կից կառուցված են միաբանության քաղակապ թվով 6 սենյակները: Դրանցից յուրաքանչյուրն ունի 1-ական մուտք և 1-ական լուսամուտ՝ բացված արևմտյան ճակատից: Միաբանության սենյակների հարավարևելյան անկյունում՝ հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվում է սեղանատան քաղածածկ շենքը, որը հարավից կից ունի համանման այլ շինություն (հավանաբար՝ խոհանոց):

Վանքի հյուսիսարևելյան ծայրին առանձին գտնվում է շտեմարանի՝ նույնպես թաղածածկ շինությունը:

Տարածքում կան մի քանի ավերակված շինություններ ևս:

Ի դեպ, նկատելի է, որ միաբանության սենյակները կառուցողական և ոճական առանձնահատկություններով համահունչ են 1630 թ. կառուցված անապատի եկեղեցու, գավթի հետ, մինչդեռ սեղանատունն ու շտեմարանը կառուցվել են Ստեփանոս վարդապետի օրոք (1830-ական թվականներ). «Վանահայր Ստեփանոս վարդապետը շինել է տվել մի քանի խցանման սենյակ՝ միաբանութեան համար, երկար սեղանատուն, ցորենի շտեմարան և այլն...»[1098]:

1845 թ. նորոգվել է սենյակներից առաջինը, որի համար ծախսվել է 15 ռ.[1099]:

1847 թ. հիշվում է. «Ի պարսպին ունի վեց սենեակս»[1100] (ակնհայտ է, որ նկատի են առնված միաբանության սենյակները):

Անապատի կառույցները շարունակ քայքայվելով և երկար ժամանակ նորոգության չենթարկվելով՝ 1880-ական թվականներին հայտնվել էին անմխիթար վիճակում. «...անապատը հիմա բոլորովին քայքայվել է. խուցերը, տնտեսատունը, գոմերը ու եկեղեցուն կից խորաններրը մասամբ ճաքել ու փլվել են, իսկ շրջակա կալերը ու կալատուններրը աւերակների մէկ կոյտ են ներկայացնում, ուրիշ ոչինչ...»[1101]:

---

1097. «Նոր-Դար», 1892, N 170, էջ 3:

1098. Նույն տեղում:

1099. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 22:

1100. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 108-109:

1101. «Մշակ», 1888, N 75, էջ 2:








*ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատի զանգակատան տեսքը արևելքից, եկեղեցու արևելյան ճակատից բացված լուսամուտի շրջանակը և համալիրի հատակագիծը*











*ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատի եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, արևելյան ճակատն ու կտրվածք դեպի հյուսիս չափագրությունները*



***ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատ. եկեղեցու արևմտյան մուտքը, զանգակատան որմերի արձանագրությունները***



***ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատ. միաբանական սենյակներն ու հացատունը***

***Վանահայրեր.***

*Եփրեմ եպիսկոպոս.* վանահայր է հիշվում 1772 թ.[1102]:

*Գաբրիել եպիսկոպոս Հարությունյան Տերյանց.* այս վանահոր օրոք Թարգմանչաց անապատն եղել է բարեշեն ու ծաղկուն: Այստեղ նաև մերձակա ու հեռավոր շատ գյուղերի քահանայացուներին Գաբրիել եպիսկոպոսն էր ծխական քահանա ձեռնադրում:

---

1102. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5901, թ. 1:



***ԲԱՆԱՆՑ. Թարգմանչաց անապատ. խաչքարեր եկեղեցու ներսում***

Տապանաքար. գտնվելիս է եղել զանգակատան մոտ.

*Այս է տապան Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ եպիսկոպոսին, 60 ամ վանահայր էր սա անապատիս, 96 ամեայ էր, որ փոխեցաւ առ Քրիստոս՝ 2. 13. 1831. ՌՄՁ:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 285:

Ծանոթ. Գաբրիել եպիսկոպոսը, իրոք, երկար տարիներ վարել է վանահոր պաշտոնը, բայց ոչ 60 տարի (հետևաբար՝ 1771 թ-ից), ինչպես նշված է տապանագրում, քանի որ, օրինակ, 1772 թ. անապատի վանահայր է հիշվում Եփրեմ եպիսկոպոսը:

*Ստեփանոս վարդապետ Բալյանց.* Վանահայրության պաշտոնը վարել է 1830-ական թվականներին, և նրա «օրով վանքը բաւական ծաղկած դրութեան մէջ է եղել, թէ կալուածական և թէ նիւթական կողմից...»[1103]:

*Գրիգոր աբեղա Տեր-Հովհաննիսյանց.* վանահոր պաշտոնով հիշվում է 1839 թ.[1104]:

*Հովհաննես վարդապետ.* 1849 թ. Հովհաննես վարդապետին փոխարինել է Սարգիս վարդապետը[1105]:

*Սարգիս վարդապետ Ազարեանց Տփխիսեցի.* այս խստակենցաղ, մինչև իսկ տարօրինակ հոգևորականի վանահայրության օրոք ևս վանքը բարգաված դրության մեջ է եղել. «Ամբողջ 30 տարի Բանանցի անապատում ապրելով, նա մի անգամ գոնէ չը մտաւ գիւղը, որպէս զի կնոջ չը հանդիպի, իսկ վանքում ուխտաւորներ եղած ժամանակը նա ամ-

1103. «Նոր-Դար», 1892, N 170, էջ 3:
1104. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 8:
1105. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 99:

բողջ օրերով կառանձնանար մէկ մութ քարանձաւում, որը այժմ կոչվում է *Ճգնաւորի խուց*»[1106]: Թարգմանչաց անապատում «Քյանդա-գիրմազ» (գյուղ չմտնող) վանահայրը պաշտոնավարել է մինչև 1870-ական թվականները: Վավերագրերից մեկում վանահայրը հիշվում է 1864 թ.[1107]: Կյանքի վերջին տարիներն անց կացրել է Միրզիկի մոտ գտնվող Քարհանի վանքում, որտեղ և 1877 թ. վախճանվել է 96 տարեկան հասակում[1108]:

*Գևորգ վարդապետ Տեր-Հովհաննեսյանց.* ավելի քան մեկ տասնամյակ անապատը վանահայր չի ունեցել: Այդ շրջանում իբրև «պահապան» վանքում է գտնվել մի տիրացու. «...վերջին պահապանը եղել է գանձակեցի տիրացու Մարտիրոս Ղալէչեանցը, որ մենակեաց լինելով վանքում, պահել պահպանել է վանքը մինչև վերջին տարիներս...»[1109]: Գևորգ վարդապետը վանահայրության պաշտոնը ստանձնել է 1892 թ-ից. «Բանանցեցիները նոր զգալով իրենց վանքի անշուք ու անմխիթար դրութիւնը անցեալ սեպտեմբերից հրաւիրել են վանահայրութեան պաշտօնով Սևանայ անապատի միաբան արժ. Գէորգ վարդապետ Տէր-Յովհաննէսեանցին: Վանքը բոլորովին զուրկ է իւր ներքին զարդերից...»[1110]:

*Թարգմանչաց անապատի դպրոցը.* 1874 թ. գործել է անապատի արական դպրոցը[1111]:

*Անապատի կալվածքները.* 1830-ական թվականներին անապատն ունեցել է «...80-90 օրավար վարելահողեր, որոնք մշակուելիս են եղել վանքի սեփական 8 զույգ եզներով: Ունեցել է նաև մի այգի, ընդարձակ և խիտ անտառ, կովեր, ջորիներ և շատ մեղուներ»[1112]: 1840 թ. անապատի սեփականությունն էր կազմում 20 օրավար հող և մի մրգատու այգի[1113]: 1856 թ. անապատապատկան կալվածը սահմանագծվում էր այսպես. «Սահման են՝ արևելքի կողմէն Հովի ձորն և Խաչի հող, Ոսկաթել առաքյալի ջուրն: Արևմտեանն է հին անապատի գլխի Կարմիր քարը, և Խուրջին հողը: Հարավէն է Նալթոքանի և Սորեկատեղերի Էլչին ճանապարհին և հիւսիսէն է Տղվանա քարի տակի մատուռն և Հոտած աղբիւրի դաճն»[1114]:

1886 թ. անապատի կալվածական սեփականությունը սահմանափակված էր վարելահողերով և խաղողի մեկ այգով[1115]:

1106. «Մշակ», 1888, N 75, էջ 2: Նաև՝ «Երկար ժամանակ այստեղ վանահայր է եղել Տփխիսեցի Սարգիս վարդապետն, որ յայտնի է այս կողմերի ժողովրդոց մէջ Քեանդա-գիրմազ մականունով, ըստ որում այդ աշխարհատեաց ճանաչուած կրօնաւորը սովորութիւն չէ ունեցել, ինչպէս ասում են, մտնել գիւղերն, որ կանանց տեսած չլինի» («Արձագանք», 1886, N 20, էջ 295):
1107. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 7:
1108. Տապանագիրը տե՛ս սույն աշխ., էջ 401:
1109. «Նոր-Դար», 1890, N 123, էջ 3:
1110. «Նոր-Դար», 1892, N 170, էջ 3:
1111. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
1112. «Նոր-Դար», 1892, N 170, էջ 3:
1113. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 63:
1114. Նույն տեղում, գ. 3828, թ. 112, 114-117, 118-121:
1115. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 138, թ. 100-101:



***ԲԱՆԱՆՑ. «Ձեռնավոր» («Ծռնվեր») սրբատեղիի բեկորներից մեկը, խաչքարեր՝ «Մանդուռ» հնավայրում***

**Գյուղամերձ հնավայրեր.**

*«Խնձորի» աղբյուր տեղամաս.* Բանանցից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ իրարից ոչ շատ հեռու, երկու խաչքարեր կային, մեկը՝ 1087 թ. («Խնձորի» աղբյուրի գլխին), մյուսը՝ 1584 թ. (երկատված): Վերջինս Մ. Չալումյանը 1986 թ. փոխադրել է գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցի:

Խաչքար. «Խնձորի» աղբյուր տեղամասում.
*Թվ(ին) ՇԼՁ (1087):*
Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ 11:

Խաչքար. «Խնձորի» աղբյուր տեղամասում.
*Թվ(ին) | Ռ/ԼԳ (1584):*
Հրատ. առաջին անգամ:

*«Ձեռնավոր» («Ծռնվեր») սրբատեղի.* գտնվում է Բանանց գյուղից 1,5 կմ հարավ՝ Թարգմանչաց անապատից 0,7 կմ հարավ: Տեղում առկա են մատուռի ավերակներ: Փլվածքների մեջ կան նաև սրբատաշ քարեր, որոնցից մեկի վրա միայն երևում են *Սբ.* տառերը:

*«Մանդուռ» հնավայր.* գտնվում է Թարգմանչաց անապատի հանդեպ՝ Բոլորաջուր (Բոլորանց) գետակի ձախ արևելահայաց ձորալանջին: Պահպանվել են մատուռի մնացորդներ և վաղ շրջանի անարձանագիր խաչքարեր (Թ-ԺԱ դդ.):





*ԲԱՆԱՆՑ. խաչքարեր «Խնձորի աղբյուր» հնավայրում (1087 թ., Ժ-ԺԱ դդ. և ԺԶ դդ.)*




*ԲԱՆԱՆՑ. խաչքարեր «Շենի հանդ» տեղամասում (Ժ-ԺԱ դդ.)*





*ԲԱՆԱՆՑ. խաչքարեր «Մկնատամի խաչ» (ԺԶ դ.), «Խնձորի աղբյուր» (ԺԶ-ԺԷ դդ.) և «Ակնիծոր» հնավայրերում (1101 թ..)*













***ԲԱՆԱՆՑ. ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի բնակատեղի, կիսավեր եկեղեցի «եկեղեցաձոր» տեղամասում***

**«Աղխաչի գահ».** տեղամաս, գագաթ (1473 մ)՝ Բանանցից 2,5 կմ հյուսիս-արևմուտքում: Պահպանվում էր մի խաչքար: Հայտնի էր որպես սրբատեղի:

**«Նիատակ» (Նահատակ) սրբատեղի.** գտնվում է «Խնձորի» աղբյուրից ներքև, կար երկու խաչքար:

**«Փլաքի սեռ».** տեղամաս, գագաթ (1381 մ)՝ Բանանցից 3 կմ հյուսիս-արևմուտքում: Պահպանվում էր 2 խաչքար:

**Եկեղեցաձոր (Քիլիսադարա).** գտնվում է Բանանցից 6,5 կմ հարավ-արևմուտք, անտառային և ալպիական գոտիների սահմանագլխին: Հնավայրում պահպանվել են բրոնզեդարյան բնակատեղի, դամբարաններ, վաղ միջնադարյան գյուղատեղի, եկեղեցի, խաչքարերով գերեզմանոց և կամուրջ:

Եկեղեցաձորի եկեղեցին կիսավեր վիճակում է: Պատերը պահպանվել են մինչև 2 մ բարձրությամբ: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Նույն կողմից եկեղեցուն կից է արևմուտքից բացված մուտքով ավանդատուն: Արտաքին չափերն են՝ 10,00 x 5,20 մ (ավանդատան հետ՝ 7,66 մ):







*Բանանցեցիներ. նկար Ա. Ստեփան Տեր-Ավետիքյան, Բ. Վազգեն Տեր-Ավետիքյան (վերևում նստած), Ստեփան Տեր-Ավետիքյան (գրկին՝ Լուսիկ Վազգենի Տեր-Ավետիքյանը), Գ. 1-ին շարքում՝ Պողոս Պողոսյան (Քաչալ), Աքանես Թնիսանց (կոխ բռնող), Սակի Օհանյան (Սայունց), 2-րդ շարքում՝ Սարգիս Բաղալյան (Մուրադանց), Հովհաննես Անտոնի Սեյրանյան (Բռռ-բռռ) և Ստեփան Տոնի Տոնյան (հայրը Բանանց էր փոխադրվել Ջրաբերդի Տոնաշեն գյուղից). 1908 թ.*







***Բանանցեցիներ. նկար Ա. Գրիգոր Օհանյան (Թաթողլի), Բ. բանանցեցի մարտիկ (1918 թ.), Գ. Գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանի զինյալները***

Եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում տարածված փոքրիկ գերեզմանոցում պահպանվել են Ժ-ԺԱ դարերին բնորոշ ոճական առանձնահատկություններով մի քանի անարձանագիր խաչքարեր:

**Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձան.** Հայրենականի մեծ պատերազմին մասնակցել է 1200 բանանցեցի: Ռազմի դաշտում զոհված 600 համագյուղացիների հիշատակը հավերժացնելու նպատակով գյուղի մոտ` «Դիմաց տեղ» բարձունքի վրա, ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի և Արա Հարությունյանի նախագծով 1969 թ. կառուցվել է հուշարձան-կոթող: Այն բաղկացած էր երկու մասից` սյունից և պատվանդանից. սրբատաշ քարով կառուցված սյան վրա փորագրվել էին Եղիշեի խոսքերը` «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ` անմահություն»: Պատվանդանին վեր էր խոյանում քևատարած արծիվը` որպես ազատասիրության և խիզախության խորհրդանշան: Սակայն 1969 թ. հուլիսի 26-ին` նախատեսված հանդիսավոր բացումից 2 օր առաջ, հուշարձանը զոհ է գնում շրջկոմի առաջին քարտուղար Սուլեյմանովի գլխավորած հանցագործության. «Գյուղը հանդիսավոր սպասումի մեջ էր, իր զոհված որդիների նկատմամբ բարոյական պարտքը ինչ-որ չափով հատուցած լինելու սուրբ զգացումներով լեցուն: Հուշարձանի վրա սպիտակ պաստառ էր գցված: Երկու օր հետո տեղի էր ունենալու հանդիսավոր բացման արարողությունը: Հյուրեր էին հրավիրված Երևանից, Մոսկվայից, Բաքվից, երկրի այլ վայրերից: Բայց հաջորդ օրվա առավոտը բարով չբացվեր: Մութը դեռ նոր էր հավաքել իր սև փեշերը, երբ ասես կայծակ շանթեց անամպ երկնքից, և ահավոր հարայից գյուղը վեր թռավ:

–Այ ժողովո՜ւրդ, հուշարձանը քանդե՜լ են...

Մի քանի րոպեում «Դիմաց տեղը» լցվեց քնաթաթախ, տագնապահար մարդկանցով: Եվ նրանք ի՞նչ տեսան. միայն սյունն էր կանգնում, իսկ արծիվը չկար: Պատվանդանի մոտ թափված էին նրա ջարդված բեկորները...: ...Բանանցեցիք շուտով իմացան իսկությունը: Ադրբեջանի կոմկուսի Դաշքեսանի շրջկոմի առաջին քարտուղար Սուլեյմանովի կարգադրությամբ ամբողջ շրջանում գիշերվա ժամը 4-ին անջատել էին էլեկտրական լույսերը: Օգտվելով գիշերվա խավարից, մի խումբ սրիկաներ գողեգող հասել էին Բանանց: Հանցախմբի մեջ էին ինքը` կուսշրջկոմի առաջին քարտուղարը, որը ղեկավարում էր օպերացիան, միլպետը, կոլտնտեսության նախագահը և սկզբնական կուսկազմակերպության քարտուղարը: Եկել էին մի խումբ միլիցիոներների ուղեկցությամբ: ...Երբ գիշերվա խավարի մեջ խարխափելով, վարորդը մի կերպ ճոպանը հագցրել էր արծվի վզին և ավտոկռունկով բարձրացրել, անսպասելիորեն ճոպանը կտրվել էր և արծիվն ընկել էր գետնին: Հանցագործները նկատի չէին առել, որ արծվի կշիռը ավելի քան ութ տոննա էր: Բայց ինչ-որ կերպ այն բարձրացրել և տարել էին»[1116]:

**Անվանի բանանցեցիներ.** *Մելիք Մելիքյան* (ծնվ. 1868, Բանանց, վախճ. 1918, Բաքու). հայտնի հեղափոխական գործիչը հայտնի էր Դեղուշկա ծածկանվամբ: Գյուղի հյուսիսարևելյան կողմում կանգնեցված է նրա կիսանդրին:

*Ստեփան Տեր-Ավետիքյանց-Բանանցեցի* (ծնվ. 1868 թ., վախճ. 1937). գյուղագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ: 1889 թ. ավարտել է Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը: Ուսուցչություն և տեսչություն է արել Պյատիգորսկում, Ղարաբաղում, Գանձակում, Թիֆլիսի նահանգում: Ելիզավետպոլի նահանգի գյուղացիության կողմից 1907 թ. ընտրվել է II Պետական դումայի դեպուտատ[1117]: Թողեկցել է բազմաթիվ քերթերի[1118]:

*Արշակ Տոնյան* (ծնվ. 1888, վախճ. 1942). մաթեմատիկոս, մանկավարժ, բառարանագիր: 1906 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1914-ին` Հալլեի համալսարանը: 1909-1910 թթ. մաթեմատիկա է դասավանդել Շուշիի թեմական դպրոցում, 1914-1921-ին` Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում, 1921-1937 թթ.` Երևանի համալսարանում[1119]:

ԺԹ դարի կեսերին հայտնի էին նաև թերապևտբժիշկ Մեխակ Տեր-Միքայելյանը, ինժեներ Լևոն Տեր-Միքայելյանը, իրավաբան Հովհաննես Իսրայելյանը և այլոք:

## ԳԱՐԴՄԱՆ (ԳՐԹՄԱՆԻԿ, ԱՄՐՎԱՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 13 կմ արևմուտք` Շամքոր գետի աջակողմյան` Գարդման վտակի ձախ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1370-1520 մ բարձրության վրա:

---

1116. **Գրիգորյան Ռ.**, Հափշտակված արծիվը, «Խորհրդային Հայաստան», 1989, հոկտեմբերի 27: Ի դեպ, իբր մտահոգված կատարված հրեշավոր քայլով` Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Իսկենդերովը բանանցեցիներին պատասխանել էր, թե մեղավորներն ազատվել են աշխատանքից և ավելացրել. «–Ինչ մնում է հուշարձանին, ...ապա կասեմ հետևյալը. Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը որոշում ունի` հանրապետության տարածքում արծիվ-հուշարձաններ չկանգնեցնել»: Դրանից հետո հարցը համարելով լուծված` կառավարության կամայական որոշմամբ և պետական միջոցներով հուշարձանի մոտ կառուցվում է թանգարան, իսկ արծվի փոխարեն պատվանդանին դրվում են դրոշներ, սյան վրա` զինվորի սաղավարտ: Հայտնի է նաև, որ հուշարձանի ավերման պատճառներից մեկը համարվել է արծվի և զորավար Անդրանիկի աչքերի նմանությունը:

1117. «ՀՍՀ», հ. 11, Երևան, 1985, էջ 663:

1118. Ստ. Տեր-Ավետիքյանի գրչին են պատկանում «Կապ բռնողը» («Լումայ», 1896, գիրք Բ, էջ 229-248), «Մեր տէրը» («Լումայ», 1897, գիրք Ա, էջ 97-132), «Հայր սուրբը» («Լումայ», 1897, գիրք Բ, էջ 187-221), «Զփողը» («Լումայ», 1898, գիրք Ա, էջ 160-190) և բազմաթիվ այլ ստեղծագործություններ ու թղթակցություններ:

1119. «ՀՍՀ», հ. 12, Երևան, 1986, էջ 59:

**Պատմություն.** միջնադարում եղել է համանուն գավառի վարչական կենտրոնը: Ավանը հայաբնակ է եղել մինչև ԺԸ դարի կեսերը, ապա հայաթափվելուց հետո բնակեցվել է միայն ԺԹ դարավերջին թուրք խաշնարած ցեղերով. «Այս էր ահա Գարդմանն գաւառիս գաւառագլուխն, որի անուամբ ամբողջ գաւառս կոչուած է Գարդման, գաւառիս իշխանաց աթոռանիստ աւանն: Այժմ աւերակ է աւանս և թրքաբնակ և կոչում է Գրքմանիկ»[1120]:

Ավանդաբար վկայվել է, թե «...Այդ գաւառակը Բագրատունեաց թագաւորները տուած են եղել ժառանգաբար տիրապետելու համար Գարդմանաց նախարարական տան իշխաններին, որոնց տոհմական ամրոցի աւերակներն ու գերեզմանները գտնվում են Չարեքի կալուածքի հարավ-արեւելեան մասում, Ամիրվար թրքաբնակ գիւղից մօտիկ»[1121]:

**Բնակչություն.** ԺԹ դարի վերջերին տեղում հաստատվել են խաշնարած թուրքեր, որոնց թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1122] | 104 | 449 | 314 | 763 |
| 1908[1123] | | | | 780 |
| 1914[1124] | | | | 1137 |

**Պատմական հուշարձաններ.** ԺԹ դարավերջին տեղում եղել է կիսավեր եկեղեցի[1125], շուրջը՝ գերեզմաններ և իրար մոտ կանգնեցված յոթ խաչքար, բոլորն էլ արձանագիր: Դրանցից մեկն ունեցել է հետևյալ արձանագրությունը.

Խաչքար.

*Կանգնեցաւ խաչս Քրիստոսի, թվ. ՌՄՂԱ (1842):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 312:

Ծանոթ. Ե. Լալայանը օգտվել է Բարխուտարյանցի վերծանությունից ու անփոփոխ զետեղել իր աշխատության մեջ:

Կարծում ենք, թվականի ընթերցման մեջ սխալ կա, քանի որ ԺԸ դարի կեսերից գյուղն արդեն հայաթափ էր:

Մյուս խաչքարերի արձանագրությունները եղել են եղծված և անընթեռնելի[1126]: 1960-ական թվականներին արդեն վերը հիշատակված հուշարձաններից «գրեթե ոչինչ չի մնացել»[1127]:

Գյուղից փոքր-ինչ դեպի հարավ գտնվել է մի մատուռ՝ «Սրբլթոն» անունով, որ եղել է ուխտատեղի: Շուրջը հիշատակվում է ընդարձակ գերեզմանոց. «Լայնածաւալ հանգստարան կայ մատրանս մօտ, որի մէջ են գեղեցիկ մահարձաններով զարդարուած շատ գերեզմաններ»[1128]: Մի խաչքարի վրա ընթերցվել է.

Խաչքար. ունեցել է 3,5 մ բարձրություն.

*Այս է տապան սուրբ Սրապիոնի, թոռն մեծին Սամորին, մեծին Սատին թվ. ՉՁ (1331):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302: Տե՛ս նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 312: «Դիվան...», V, էջ 270:

**Գարդման վանք.** պատմական տեղեկություններից վաղագույնը վերաբերում է Ե դարի վերջերին, երբ «...այր մի Ակիթ, որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց»[1129]: Այնուհետև վանքը հիշատակվում է Ամենայն հայոց Հովհաննես կաթողիկոսի (557-574)՝ «...Յոհանկայ Գարդմանայ եպիսկոպոսի...»[1130] և Եզր կաթողիկոսի (630-641) օրոք՝ «...Ստեփանոս Գարդմանայ եպիսկոպոս...»[1131]:

Հայտնի էր իբրև եպիսկոպոսանիստ, որի առաջնորդներից 4-ը հետագայում օծվել են Աղվանից կաթողիկոս. «...յեպիսկոպոսութենէն Գարդմանայ...» էին Ներսես (689-706)[1132], Թեոդորոս (784-788)[1133], Գագիկ (947-958)[1134] և Պետրոս (971-987)[1135] կաթողիկոսները:

Հետագա դարերում մատենագիր աղբյուրները Գարդման վանքի մասին լռում են, որը, հավանաբար, հետևանք էր վերջինիս ավերման:

**Գարդման բերդ.** բերդի վերաբերյալ հիշատակությունները պահպանվել են Զ դարից սկսած, երբ բերդը 3 տարում կառուցել էր Միհրանյան տոհմից Վարդանը. «...զքաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»[1136]: Բերդը հիշատակվում է նաև իշխան Ջվանշիրի (637-683) կողմից մերձակայքում մի եկեղեցի կառուցելու կապակցությամբ. «...ի բնական գաւառին և ի Գարդման բերդին հիմնարկեալ տուն Աստուծոյ մեծապէս գեղազարդ է ի հրմուանս և ի փառս Քրիստոսի Աստուծոյ»[1137]: Թ դարի կեսերին բերդը պաշարել ու գրավել է արաբ զորապետ Բուղան. «...չուղեալ գնայ (Բուղան - Ս. Կ.) ի գաւառն Գարդմանայ՝ և պատնէշ և պաշարումն զշուրջ զԳարդման բերդիւն եդեալ, ըմբռնէ անտի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն ի կալանս կապանաց արկեալ»[1138]: Ժ դարի կեսին

1120. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 301-302:
1121. «Մշակ», 1902, N 199, էջ 1:
1122. "Свод...", с. 80-81.
1123. "Кавказский календарь на 1910 г.", с. 182.
1124. "Кавказский календарь на 1915 г.", с. 88.
1125. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302:
1126. Նույն տեղում:
1127. «Դիվան...», V, էջ 270:
1128. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302:
1129. **Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց**, Երևան, 1982, էջ 468:
1130. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 122:
1131. Նույն տեղում, էջ 143: Նաև՝ «Վրաց աղբյուրներ...», հ. Ա, էջ 45:
1132. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 293, 344:
1133. Նույն տեղում, էջ 345: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 198:
1134. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 346: Տես նաև՝ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 198:
1135. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 347: Տես նաև՝ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 199:
1136. **Մովսէս Կաղանկատուացի**, 172:
1137. Նույն տեղում, էջ 184:
1138. **Հովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 127: Ի դեպ, արաբական աղբյուրները վկայում են, որ բերդը գրավել է ոչ թե Բուղան, այլ նրա կողմից ուղարկված Զիրակ զորավարը (**Իբն-ալ-Ասիր**, էջ 159):



***ԳԵՏԱՄԻՋ (ԳՅԱԴԱՄԻՇ). եկեղեցու մնացորդներ ու պատի մեջ ագուցված տապանաքարեր (ԺՋ-ԺԷ դդ.), գերեզմանոց, միակ արձանագիր տապանաքարը (1712 թ.)***

Գարդմանին իշխում էր հայոց Սահակ Սևադա իշխանը. «...Սահակ, որ և Սևադայ կոչեցաւ, այր քաջ և յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանաց և Քաւսայ և Փառնայ գաւառաց, այլ և աւազակապետաց Չորոյ գետոյն բովանդակ եղև իշխան...»[1139]: Նույն դարի վերջերին Գագիկ Ա թագավորը բերդը գավառի հետ միացրեց Բագրատունյաց թագավորությանը. «...ի ՆԼԸ (989) թուականին, ...եւ տիրեաց նա յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն... և Փառիսոսոյ...»[1140]: Այնուհետև բերդին տիրում են սելջուկ-թուրքերը, որոնցից ԺԳ դարասկզբին ետ են գրավում Զաքարյան իշխանները. «...բերդս ամուրս՝ զԳարդման...»[1141] և դնում Վահրամ իշխանի իրավասության ներքո[1142]: Ցավոք, վերջինս, մոնղոլական արշավանքների ժամանակ առանց որևէ դիմադրություն ցույց տալու, փախչում է՝ բերդը հանձնելով բախտի քմահաճույքին. «...Վահրամ, որ էր յայնժամ ի Գարդման, զաղտագնաց եղեալ ի գիշերի՝ փախեաւ ուր և կարաց զերծանել»[1143]: Դրանից հետո բերդը չի հիշատակվում:

## ԳԵՏԱՄԻՋ (ԳՅԱԴԱՄԻՇ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևելք՝ Գանձակ և Ջիվլան գետերի միջև

---

1139. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 341:
1140. **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 255-256: Վերոհիշյալ ժամանակաշրջանում Գարդմանքի լեռնային մասը, որտեղ գտնվում էր համանուն բերդը, առավել հայտնի էր Փառիսոս անվամբ՝ տեղում գոյություն ունեցող թագավորության պատճառով:
1141. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163:
1142. Նույն տեղում, էջ 153:
1143. Նույն տեղում, էջ 243:

հրվանդանաձև թերակղզու վրա, ծովի մակերևույթից 1300-1320 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գրավոր աղբյուրներում Գետամիջը, ի թիվս գավառի հայաբնակ մի շարք գյուղերի, առաջին անգամ հիշատակվում է Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) կոնդակում[1144]:

Հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: ԺԹ դարավերջին այստեղ հաստատվել է թուրք խաշնարածների մի քանի ընտանիք:

**Պատմական հուշարձաններ.** 1890-ական թվականների սկզբներին ականատեսը նշել է. «...ունի հանգստարան և մի անսիւն միջակ մեծութեամբ եկեղեցի: Թրքաբնակ է աւերակս»[1145]:

Գրեթե հարյուր տարի անց՝ 1986-ին, եկեղեցին գտանք հիմնահատակ ավերված, բացի հյուսիսային որմից (այդ պատը մաս էր կազմում մի թուրքի տնամերձ հողամասի շրջապարսպի), իսկ շրջակայքում կային մի քանի խաչքարերի ու տապանաքարերի բեկորներ:

Գյուղի հարավարևմտյան եզրին էր գտնվում գերեզմանոցը, որի ուշագրավ բոլոր տապանաքարերը վաղուց արդեն գանձախուզության էին ենթարկվել: Տեղում հաջողվեց գտնել արձանագիր մեկ շիրմաքար, որը վերաբերում էր հայաբնակ գյուղի պատմության վերջին շրջանին.

Տապանաքար. երեսին՝ խաչաքանդակ, ուղղանկյունաձև, 2 տող.

*Այս է դապ(ա)ն | Ղազարին, ՌՃԿԱ (1712):*

Հրատ. առաջին անգամ:

## ԳԵՏԻՇԵՆ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս՝ Արթինաջուր գետի ձախ վտակ Գետիշինագետի (Խեյրաչայ) ձախակողմի հարավարևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1130-1220 մ բարձրության վրա:

**Կառուցապատում.** Գետիշենն իբրև առանձին գյուղ՝ ձևավորվել է Խորհրդային տարիներին և միավորված է եղել 1 կմ հեռավորության վրա գտնվող Հարցհանգիստ (Չովդառ) գյուղի հետ: Այն բաղկացած է իրարից մոտ 200 մ հեռավորություն ունեցող Վերին և Ներքին թաղերից: Ներքին թաղի արևելյան եզրին՝ Գետիշինագետի վրա կա ջրվեժ (5 մ): Գյուղի այգիները փռված են գետի աջ ափի երկայնքով:

**Բնակչություն.** 1971 թ. ունեցել է 64 տուն, իսկ բռնագաղթի նախօրեին (1988 թ.)՝ հազիվ 20 տուն զուտ հայ բնակչություն:

**Ոսկեթել ուխտատեղի.** գտնվում է գետի աջ կողմում: ԺԹ դարավերջին տեղում եղել է մատուռ («Փոքրիկ մատուռ է, ծեղունն փայտաշէն, որի մասին ոչ ինչ չկայ գրաւոր. միայն աւանդութեամբ ասում են թէ՝ մի







***ԳԵՏԻՇԵՆ. տեսքը՝ Հարցհանգիստ (Չովդառ) գյուղի կողմից և խաչքար Ոսկեթել ուխտատեղիում***

Վսկաթել կոյս աղջիկ նահատակուած է այստեղ»)[1146], որից 1980 թ. հազիվ հետքերն էին նշմարվում: Տեղում կար Թ-Ժ դարերով թվագրվող մի փոքրիկ խաչքար:

1144. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:

1145. Նույն տեղում, էջ 275:

1146. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 293:



ԳԵՏԻՇԵՆ. Խաչքար՝ «Ղրմրաղա Կարմիր եղցի» գյուղատեղիում (Ժ-ԺԱ դդ.)

**Բախշիկ գյուղատեղի.** գտնվում է Գետիշենից 2 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա: Գյուղի ամայացումից հետո բնակիչները տեղափոխվել են Հարցհանգիստ[1147]: Ավերակների մեջ իր ընդարձակ չափերով աչքի էր ընկնում եկեղեցին. «...շինուած է վեց սիւների վերայ, որի երկարութիւնն է 20 մետր 2 սանթ. և որի գլուխն խոնարհուած է այժմ»[1148]: Եկեղեցու Սբ. Աստվածածին անվանումը վկայակոչված է 1885 թ. մի վավերագրում[1149]:

**Ղրմրաղա (Ղարամուրատի) Կարմիր եղցի.** Գյուղատեղի, ավերակ եկեղեցի և գերեզմանոց՝ Գետիշենից 3,5 կմ հարավ-արևմուտք՝ Գետիշինգետի աջ բարձրադիր ձորալանջին, Հարցհանգիստ-Փիր խճուղու աջ եզրին: Եկեղեցու փլատակների մեջ ուշագրավ է մի հնաոճ (Ժ-ԺԱ դդ.) խաչքար (100 x 80 սմ), իսկ գերեզմանոցում՝ մի արձանագիր տապանաքար:

Տապանաքար. չափերը՝ 145 x 60 x 28 սմ, օրորոցաձև, 3 տող.

*Այս է դապ(ա)ն Արշամին ...քար / Թամազ, որ է որդի Ղարամուրատէցի մահտ/եսի Օվա(ն)էսին, ՌՄԺԱ (1762) թվ(ին):*

Հրատ. առաջին անգամ:

**Քարատակ գյուղատեղի.** գտնվում է Գետիշենից 3 կմ հարավ-արևմուտք, Հարցհանգիստ գետի ձախ կողմի հարավահայաց ձորալանջին: Թուրքերը բարգմանաբար անվանում էին՝ Դաշալթի:

Գետիշենում գրիչ Սարգիս երեցի ստեղծած երկու ձեռագիր «Ժողովածուներում» Քարատակը հիշվում է ԺԸ դարի առաջին կեսին: Ձեռագրերից մեկը (ստացող՝ Մխիթար Աղճաղալեցի) գրվել է 1717 թթ[1150], մյուսը՝ 1721 թթ. (ստացող՝ Առաքել Գանձուցի)[1151]:

Հայտնի է, որ ԺԸ դարից Քարատակը պատկանել է Բարսումի Մելիք-Առուստամյանցներին: ԺԹ դարավերջին գյուղն արդեն գտնվում էր ոչ միայն Մելիք-Առուստամյանցների, այլև Մաթևոս Վիրաբյանցի, Կարապետ Թայիրյանցի, Հարություն Ավագյանցի, Պետրոս Ջիլջանյանցի իրավասության ներքո[1152]:

## ԳՅԸԽԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևելք՝ Գանձակ գետի ձախակողմյան լեռնալանջին:

ԺԹ դարի վերջերին հայաթափ գյուղատեղիի տարածքում հանգրվանել են խաշնարած թուրք ցեղեր և գոյացրել ներկայումս Գյըխլի անվամբ հայտնի փոքրիկ գյուղը:

1914 թ. ունեցել է 352 բնակիչ[1153]:

## ԴԱՇԿԵՍԱՆ

Գտնվում է Գանձակից 28 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1550-1700 մ բարձրության վրա:

Համանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Ծնունդ է առել Խորհրդային տարիներին: 1948 թ. ստացել է քաղաքի կարգավիճակ:

Մինչև 1970-ական թթ. հիմնականում հայաբնակ էր, այնուհետև, աստիճանաբար ավելացել է թուրքերի թվաքանակը: Իսպառ հայաթափ է եղել 1988-89 թթ. բռնագաղթի ընթացքում:

## ԴԱՍՏԱՓՈՐ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք՝ Գանձակ գետի ձախ վտակ Դաստափորի ձախակողմի հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1250-1330 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ըստ Սարգիս երեց գրչի ստեղծած երկու ձեռագրերի՝ Դաստափորը Դաստափյուր անվամբ, գրավոր աղբյուրներում հիշվում է ԺԷ դարի 2-րդ կեսից: Ձեռագրերից մեկը՝ «Աւետարան» է (ստա-

1147. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:
1148. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294:
1149. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
1150. «Ցուցակ Ձեռագրաց», հ. Ա, էջ 586, ձեռ. N 1574:
1151. «Ցուցակ Ձեռագրաց», հ. Բ, էջ 440, ձեռ. N 7008:
1152. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 33-35:
1153. “Кавказский календарь на 1915 г.”, с. 143.
























***ԴԱՍՏԱՓՈՐ. գյուղի տեսքը հարավից, Հին Դաստափոր գյուղատեղին, տեսարաններ գյուղից, մերձակայքից և Դաստափոր հին գյուղատեղին, գերեզմանոցը, գյուղատեղիում պահպանված եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, արևելքից, հատված մուտքին հարող հարավային ճակատից, տեսարաններ ներքուստ, հատակագիծը և խաչքարեր***

ցող՝ Եարամիշ). գրվել է 1671-1673 թթ[1154]: Մյուսը՝ 1673-1674 թթ. գրված, «Մաշտոց» է[1155]:

ԺԷ դարի կառույց է մեզ հասած ու իր չափերով բավական ընդարձակ եկեղեցին: Նման եկեղեցու կարիք կարող էր ունենալ առնվազն 2-3 հազար բնակիչ ունեցող գյուղը: Դաստափորի բազմամարդության մասին է վկայում նաև տեղում գոյություն ունեցող 2-րդ՝ ավելի փոքր եկեղեցին, և իրարից ոչ հեռու գտնվող գերազանցապես անմշակ տապանաքարերով մի քանի գերեզմանոցները:

**Բնակչություն.** Դաստափորը հայաթափ է եղել ԺԸ դարի կեսերին և շուրջ մեկ դար մնացել անբնակ: ԺԹ դարի 2-րդ կեսին գյուղատեղիի տարածքում հանգրվան են գտել խաշնարած սակավաթիվ թուր-

1154. « ՑԶԲ», էջ 385, ձեռագիր N 6476: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 264:
1155. «ՑԶԱ», ձեռագիր N 3576:












***ԴԱՍՏԱՓՈՐ. 2-րդ եկեղեցու տեսքը արևմուտքից, հարավից և հատակագիծը***

քեր: Վերջիններիս թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1156] | 223 | 720 | 651 | 1371 |
| 1908[1157] | | | | 1557 |
| 1914[1158] | | | | 457 |

1156. "Свод...", с. 80-81.
1157. "Кавказский календарь на 1910 г.", с. 248.
1158. "Кавказский календарь на 1915 г.", с. 116.

**Հնագիտական հուշարձաններ.** Դաստափորի տարածքում բազմաթիվ դամբարանաբլուրների պեղումներ ու ուսումնասիրություններ է իրականացրել գերմանացի հնագետ Է. Ռյոսլերը 1899 թ., ցույց է տվել, որ դրանք վերաբերում են բրոնզ-երկաթ անցումային դարաշրջաններին[1159]:

**Պատմական հուշարձաններ.** Դաստափորի հին կամ պատմական գյուղատեղին փռված է ներկայիս համանուն գյուղից շուրջ 1,5 կմ հարավ-արևմուտք՝ փոքրիկ ձորակի հարավ-արևելահայաց լանջին: Տարածքը լի է դարավանդների տեսք ստացած զանազան շինությունների հետքերով: Աչքի են զարնում բավականին խիտ թաղումներով (պահպանված գերեզմանաքարերն անմշակ սալատապաններ են) 3 գերեզմանոցներն ու 2 եկեղեցիները: Վերջիններս գտնվում են միմյանց դիմաց՝ ձորակի հանդիպակաց կողմերում:

*Գլխավոր եկեղեցի.* եռանավ, թաղածածկ հորինվածքով, արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված ընդարձակ կառույց է (արտաքին չափերն են՝ 24,25 x 10,90 մ): Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Պատասխանատու հանգույցներում գործածված քարերը սրբատաշ են: Հյուսիսային պատն արտաքուստ հպված է լերկ ժայռազանգվածին: Ներքուստ սվաղված է: Հատկանշական է ուղղանկյունաձև խորանը, որին երկու կողմերից կից են ավանդատները: Թաղակիր կամարները հանգչում են երեք զույգ սյուներին (հարավային

1159. **Реслер Э.**, նշվ. հոդվ., էջ 2:

շարքի երկու սյուները միտումնավոր քանդված են): Մուտքը հարավից է: Լուսավորությունն իրականացվել է արևելյան ճակատի երեք, արևմտյան ճակատի մեկ (հետագայում փակվել է) և հարավային ճակատի չորս` դեպի ներս լայնացող պատուհաններից: Եկեղեցու ճարտարապետական լուծումներում նկատելի են անհամաչափություններ. արևմտյան պատը հատակագծում կառուցված է թեքությամբ, եզրային նավերն ունեն տարբեր լայնություններ:

Եկեղեցու պատերին ներքուստ ագուցված խաչքարերի վրա պահպանվել են հետևյալ արձանագրությունները.

Խաչքար. գեղաքանդակ, չափերը` 1,14 x 60 x 20 սմ, ագուցված է հյուսիսային ավանդատան մուտքի ճակատին, որպես բարավոր, ստորին մասում` 2 տող.

*Սուրբ խաչս ագնական / Մովէս աղին, թվին Ռ (1551):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. չափերը` 70 x 45 x 10 սմ, ագուցված է հարավային ավանդատան պատուհանին որպես բարավոր.

*Թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. չափերը` 70 x 44 x 13 սմ, ագուցված է խորանի պատուհանին.

*Թվ ՌՀԷ (1628):*

Հրատ. առաջին անգամ:

Եկեղեցու մոտ ընկած է անտաշ կողերով, պարզ, անարձանագիր խաչքար (38 x 38 x 11 սմ):

*2-րդ եկեղեցի.* գտնվում է գլխավոր եկեղեցուց մոտ 200 մ հարավ-արևելք` ձորակի հանդիպակաց (աջ) կողմում: Կիսավեր է: Հաշվի առնելով չափերը (5,0 x 3, 47 մ)` կարելի է նաև մատուռ համարել: Թաղածածկ է, արևելքում կիսաշրջան եզրագծով խորանն է: Կառուցված է անտաշ քարով, կրաշաղախով: Մուտքը եղել է արևմուտքից (արևմտյան պատը քանդված է):

Մատուռի մոտ` բլրի վրա տարածվում է գերեզմանոցը, ուր կան անմշակ տապանաքարեր:

## ԴԱՐԴԵՐԵ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևելք` ծովի մակերևույթից 1580-1750 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին հայաթափ հին գյուղատեղիի տարածքում խաշնարած ցեղերի նստակեցության անցնելու արդյունքում:

1908 թ. ունեցել է 292[1160], 1914-ին` 227 բնակիչ[1161]:

1160. "Кавказский календарь на 1910 г.", с. 237.
1161. "Кавказский календарь на 1915 г.", с. 122.

## ԹԱՓԱՆ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևմուտք` ծովի մակերևույթից 1490-1580 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Թափանի մասին գրավոր տեղեկություններ մեզ չեն հասել: Ամենայն հավանականությամբ, գյուղը հայաթափ է եղել ԺԸ դարի կեսերին: Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին, երբ խաշնարած ցեղերը բնակություն են հաստատել հին գյուղատեղիի տարածքում:

**Գերեզմանոց.** երբեմնի հայաբնակ Թափանի գերեզմանոցը գտնվում է գյուղի հարավային եզրին, այնտեղ, որտեղ ներկայումս ծավալվել է «ադրբեջանական» գերեզմանոցը: Բնիկներից մնացած գերեզմանաքարերի մեծ մասը եկվոր խաշնարածները ավերել և յուրացրել են:

**Եկեղեցի.** Թափան և Հացտափ գյուղերի միջև` «Փիրին-գլըջա» տեղամասում` անտառի մեջ, 1986 թ. դրությամբ կանգուն էր միանավ հորինվածքով, թաղածածկ մի եկեղեցի: Հիմնականում կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Անկյունաքարերի մեծ մասը կոփածո, մինչև իսկ սրբատաշ են: Արտաքին չափերն են` 7,50 x 4,78 մ: Մուտքը հարավային պատի արևմտյան անկյան մոտից է: Լուսավորությունն իրականացվել է արևելյան և արևմտյան ճակատներից բացված մեկական նեղ, դեպի ներս լայնացող փոքր պատուհաններից:

Եկեղեցին զուրկ է դեկորատիվ հարդարանքից: Երեսապատերի պահպանված քարերին արձանագրություններ չկան, սակայն չենք կարող պնդել, թե այդպիսիք չեն էլ եղել, քանի որ հատկապես մուտքի բարավորը, որն ակնհայտորեն ամբողջապես միտումնավոր ավերված է, մեծ հավանականությամբ, կարող էր արձանագրված լինել:

Միանգամայն անվնաս է արևմտյան ճակատը: Արևելյան պատն արտաքուստ թաղված է հողի մեջ: Հյուսիսային և հարավային ճակատներում երեսապատի քարերը մեծ մասամբ թափված են: Նկատելի են նաև միտումնավոր ավերումների` գանձախույզների գործունեության հետքեր:



**ԹԱՓԱՆ. եկեղեցու հատակագիծը**

1986 թ. եկեղեցին խիստ անմխիթար վիճակում էր. քայքայված էր փլուզվելու աստիճան, շարվածքի շատ քարեր թափված էին, պատերի մեջ, տանիքին աճած բուսականությունն ու ծառերն էլ իրենց հերթին նպաստում էին կառույցի ավերմանը:

## ԽԱՉԱԿԱՊ (ՂՈՒՇՉԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ Արթինաջուր գետի ձախ վտակներից մեկի հովտում՝ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1090-1230 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** կան մի շարք մեկնաբանություններ, նաև՝ ավանդույթներ: Այսպես՝ «...Խաչակապ ասում են նրա համար, որովհետև գիւղի շուրջը գտնվում են մեծ քանակությամբ քարեր, որոնց վերայ հին ժամանակից փորագրուած են խաչի նշաններ»[1162] կամ «պատմում է, թե այդ խաչարձանները կանգնեցրել է Սբ. Մեսրոպը, երբ Գարդմանի Խուրս իշխանի ձեռնտվությամբ վերացրել է այստեղից կռապաշտության մնացորդները: Եվ ի հիշատակ այդ անցքի՝ գյուղը կոչվել է Խաչակապ կամ Խաչափակ»[1163]: Խանական տիրապետության շրջանում պարսիկները, ապա նաև թուրքերը գյուղին տվել էին Ղուշչի անունը: Վերջինիս ծագման մասին մեզ է հասել հետևյալ ավանդությունը. «Շահ-Աբասի արշավանքների ժամանակ այս գյուղից Գրիգոր անունով մեկը ցանկանում է մի բազե բռնել, որ շահին ընծա տանի, բայց ժայռից վայր է ընկնում և մեռնում: Շահ-Աբասը լսելով այդ, կամենում է այս գյուղը նվիրել նրա հորը, սակայն վերջինս հրաժարվում է և խնդրում է նվիրել համայնքին, որպեսզի իր հանգուցյալ որդուն ողորմի տան: Շահն էլ կատարում է նրա խնդիրը և գյուղն էլ կոչում է Ղուշչի»[1164]:

**Հնագիտություն.** գյուղի տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Խաչակապում պեղումներ և ուսումնասիրություններ իրականացրած գերմանացի հնագետ Ֆ. Է. Շուլցը Թիֆլիսի հնագիտական ընկերության 1903 թ. նիստում նշել է. «Խաչակապ գիւղի մօտ, մի վերստ հեռաւորութեան վրա, նա գտել է անցեալ մայիսի 3-ին մի քար, որի վրա կան հին արձանագրութիւններ նման սեպաձև արձանագրութիւններին: Սակայն գրութիւն է այդ, թէ մի ուրիշ բան, դժուար է ասել հաստատապէս. նա չէ դասաւորված կանոնաւոր տողերում, այլ կրում է մի տեղեկացոյցի բնաւորութիւն: Այդ քարը պէտք է բերվի Թիֆլիս՝ ընկերութեան հսկողութեան տակ պահելու համար: Շուլց կատարել է մի քանի պեղումներ Խաչակապ գիւղի մօտ նա բացել է մի հին գերեզմանատուն, որ կազմված է եղել մեծ քարասալերից, երկու արշին երկարութեամբ: Քարերը բերված են ըստ երևոյթին 15-20 վերստ հեռաւորութիւնից: Ամեն մի սալն ունի մօտ 40-50 պուդ ծանրութիւն: Գերեզմանն ունի ուղղութիւն հարաւ-արևմուտքից դէպի հիւսիս-արևելք: Գերեզմանի մէջ նա գտել է բրօնզեայ իրեր՝ դաշոյն, ապարանջան, նիզակ, դանակ, գլխազարդ և ուրիշ իրեր, որոնց գործածութիւնը դեռ չէ որոշված: Բացի այդ, ազատեայ ուլունքներ: Բրօնզեայ իրերի մէջ գտնված դանակը հետաքրքրական է նրանով, որ ունի երկու փոքրիկ ծակեր, երկարութեան ուղղութեամբ...»[1165]:

**Կառուցապատում.** 1890-ական թվականներին ականատեսը գյուղը նկարագրել է այսպես. «Տների մեծ մասը գետնափոր են, միւսները մի կամ երկյարկանի կանոնաւոր բնակարաններ»[1166]:

**Բնակչություն.** վիճակագրական առկա տվյալները ցույց են տալիս, որ Խաչակապի բնակչությունը ԺԹ դարի սկզբներից մինչև 1910-ական թվականները ընդհանուր առմամբ անընդմեջ աճել է: Որոշ տարիների համար արձանագրվել են բնակչության թվաքանակի մասնակի փոփոխություններ՝ կապված արտագաղթերի կամ մահաբեր վարակիչ հիվանդությունների հետ: Այսպես, 1884 թ. շուրջ 30 տուն խաչակապցիներ վարելահողերի պակասության պատճառով լքել են հայրենի գյուղը և Արմավիր անվամբ նոր բնակավայր հիմնել Գետաշենից ոչ հեռու (տե՛ս սույն աշխ., էջ 366): Նաև՝ ժամանակի տարածված «ծաղիկ» հիվանդությունը 1899 թ. նոյեմբերից 1900 թ. ապրիլ ամիսներին խլել է 29 երեխայի կյանք[1167]:

Ի դեպ, խաչակապցիների վկայության համաձայն՝ գյուղի Պռազյան ազգատոհմը Խաչակապ էր փոխադրվել Շատախից:

Տոհմաբանության առումով ուշագրավ է 1839 թ. այն վավերագիրը, որտեղ տրված է գյուղի բոլոր բնակիչների անվանական հետևյալ ցանկը.

«1. Գէորգ Շահղինարով, կին սորա՝ Ազիզ, ուստր՝ Կարապետ, կինն՝ Զանի, ուստերք՝ Խաչատուր և Յարութիւն, դուստր՝ Հռոմ, եղբարք. 1-ին՝ Մնացական, կինն՝ Զանի, ուստերք՝ Սարգիս և Յարութիւն, դուստր՝ Հռոմ, 2-ն՝ Վարդան, կինն՝ Հերիք, ուստր՝ Յովսէփ, Յարոն, Շապակայն, ուստերք՝ Մակի և Բաղդասար, դուստր՝ Զաւահիր:

2. Ղուկաս Յարութիւնեան, կինն՝ Աննայ, ուստերք. 1-ին՝ Մովսէս, կին՝ Մարինոս, 2-ն՝ Մաքէոս, 3-ն՝ Առաքել, 4-ն՝ Սարգիս և 5-ն Գրիգոր, եղբարք. 1-ն՝ Յոհաննէս, կինն՝ Գիւլի, ուստր՝ Արզուման, դստերք՝ Պարուննան և Սալբի, 2-ն՝ Կարապետ, կինն Աննայ, ուստր՝ Խաչատուր, դստերք՝ Մարիամ, Նազանի, մայր սոցա՝ Խաթուն:

3. Յարութիւն Գրիգորեան, կինն՝ Սիրուննան, ուստերք՝ Մարտիրոս, Գրիգոր, դուստր՝ Սօնայ, եղբայրն՝ Յակոբ, կինն՝ Թանգի, դուստր՝ Զաղայ, մայր սոցա՝ Վառի:

4. Վէրդի Յարութիւնեան, կին սորա՝ Անթառամ, ուստերք՝ Առուստամ և Կարապետ, դստերք՝ Մարիամ, Սիրուննան:

5. Մխիթար Գաբրիէլեան, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Յարութիւն, Յոհաննէս և Ներսէս, դուստր՝ Զաւահիր. կին 1-ին՝ Մա-

1162. «Նոր -Դար», 1886, N 65, էջ 1:

1163. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 313:

1164. Նոյն տեղում:

1165. **Լալայեան Ե.**, նոյն տեղում:

1166. «Մշակ», 1903, N 117, յունիսի 3, էջ 1:

1167. «Մշակ», 1900, N 77, էջ 2:



***ԽԱՉԱԿԱՊ. տեսարաններ գյուղից, գերեզմանոցի հին մասը և խաչքար (Ժ-ԺԱ դդ.)***

րիամ, եղբայր՝ Վարդան, կինն՝ Մարիամ, դուստր՝ Մարմար, մայրն՝ Աննայ:

6. Աղաբաբ Յարութիւնեան, կինն՝ Աննայ, ուստերք՝ Արզումանն և Սահակ, դուստր՝ Սիրուննան, եղբարք. 1-ին՝ Գալուստ, կինն՝ Հէրիքնազ, 2-ն՝ Հայրապետ, քոյրք՝ Թէլլու, Մարգարիտ և Հէրիք, մայր սոցա՝ Մարիամ:

7. Երեմիայ Յօսէփեան, կինն՝ Մարիամ, ուստերք. 1-ին Արամ, կինն՝ Թամար, դուստր՝ Հռռոմ, 2-ն՝ Վարդան, 3-ն՝ Մխիթար, 4-ն՝ Գրիգոր, 5-ն՝ Ոսկան, դուստր՝ Փարի, եղբարք. 1-ին՝ Յակոբ, կինն՝ Հէրիք, դստերք՝ Մարիամ և Գուլի, 2-ն՝ Սարգիս:

8. Աւագ Մնացականեան, եղբայրն՝ Յարութիւն, քոյրք սոցա՝ Սիրուննան և Մարիամ, մայր սոցա՝ Ջավահիր:

9. Մակի Սողոմոնեան, կինն՝ Թէլլու, ուստերք. 1-ին՝ Մարտիրոս, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Ղազար և Վէրդի, դստերք՝ Հոռոմ և Հէրիք, 2-ն՝ Սողոմոն, կինն՝ Սաբէթ, դուստր՝ Ջավահիր, 3-ն՝ Կարապետ և 4-ն՝ Գրիգոր:

10. Սարգիս Անանիեան, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Թէոդորոս, Պապի, Բաղալ, Արզուման և Յարութիւն, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Շարմաղ:

11. Բաղալ Ստեփանեան, կինն Թէլլու, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Խաթուն, եղբարք՝ Դաւիթ, Մկրտիչ, Օհաննէս և Յարութիւն, մայր սոցա՝ Մարգարիտ:

12. Կարապետ Օհաննիսեան, կինն՝ Վարդի, ուստերք՝ Օհաննէս, Գրիգոր, Յարութիւն, դստերք՝ Անախաս, Սիրուննան և Մարիամ, եղբայրն՝ Բաղալ, կինն՝ Սիրուննան:

13. Բարսեղ Աւագեան, կինն՝ Աննայ, ուստր՝ Բօզի, դուստր՝ Հոռոմ, եղբարք. 1-ին՝ Գրիգոր, կինն՝ Գիւլի, 2-ն՝ Յարութիւն և Արզուման, մայր սոցա՝ Մարիամ:

14. Ծատուր Յարութիւնեան, կինն՝ Ազիզ, դուստր՝ Հէրիք և Հոռոմ, եղբայրն՝ Գաբրիէլ, կին սորա՝ Հէրիք, ուստերք՝ Բաղալ և Յարութիւն, դուստր՝ Գիւլի, մայր սոցա՝ Սանդուխտ:

15. Պետրոս Բաղալեան, կինն՝ Պարուննան, ուստերք՝ Սարգիս, Յարութիւն, դուստր՝ Վարդի, եղբարք. 1-ին՝ Պօղոս, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յարութիւն, 2-ն՝ Անդրէաս, Յայրապետ և Յարութիւն, եղբօր որդիք. 1-ն՝ Գրիգոր, կինն՝ ազիզ, ուստր՝ Ծատուր, դուստր՝ Մարիամ, 2-ն՝ Օհաննէս, կինն՝ Սառայ, ուստերք՝ Յովակիմ, Առուստամ, Ենգիբար և Պետրոս:

16. Մկրտիչ Ղազարեան, կինն՝ Սաբէդ, ուստր՝ Ղազար, եղբարք՝ Յարութիւն և Խաչատուր, մայր՝ Մարգարիտ:

17. Մովսէս Սարգսեան, կինն՝ Փարի, ուստր՝ Բէգլար և Առուստամ, եղբարք՝ Միրզայ, Օհաննէս, Ծատուր և Գրիգոր, մայր սոցա՝ Հէրիք:

18. Սարգիս Պետրոսեան, կինն՝ Մագթաղ, ուստր՝ Բաղալ, դստերք՝Անախանում և Հոռոմսիմ, եղբայրն՝ Յակոբ, կինն՝ Սանդուխտ, ուստր՝ Բէգլար:

19. Խաչատուր Օհանեան, կին սորա՝ Մարիամ»[1168]:

Ստորև ներկայացնում ենք 1804-1917 թվականների ընթացքում Խաչակապի բնակչության թվաքանակի փոփոխությունները.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1804[1169] | 8 | 30 | 23 | 53 |
| 1839[1170] | 19 | 114 | 90 | 204 |
| 1845[1171] | | 258 | 254 | 512 |
| 1847[1172] | | 215 | 205 | 420 |
| 1849[1173] | | 215 | 210 | 425 |
| 1852[1174] | | 239 | 217 | 456 |
| 1861[1175] | 40 | | | |
| 1866[1176] | 54 | 419 | 343 | 762 |
| 1870[1177] | | 459 | 378 | 837 |
| 1872[1178] | | 550 | 485 | 1035 |
| 1873[1179] | | | | 957 |
| 1874[1180] | | | | 961 |
| 1875[1181] | | | | 968 |
| 1876[1182] | | | | 985 |
| 1877[1183] | | 517 | 468 | 985 |
| 1878[1184] | | 536 | 469 | 1005 |
| 1881[1185] | | 551 | 479 | 1030 |
| 1882[1186] | | 570 | 482 | 1052 |
| 1883[1187] | | 583 | 475 | 1058 |
| 1885[1188] | 73 | 585 | 523 | 1108 |
| 1886[1189] | 114 | 676 | 637 | 1313 |
| 1887[1190] | | 638 | 562 | 1200 |
| 1888[1191] | | 653 | 586 | 1239 |
| 1889[1192] | | 663 | 589 | 1252 |
| 1890[1193] | | 677 | 607 | 1284 |
| 1891[1194] | | 699 | 631 | 1330 |
| 1892[1195] | | 696 | 634 | 1331 |
| 1893[1196] | | 725 | 644 | 1369 |
| 1894[1197] | | 744 | 654 | 1398 |
| 1897[1198] | | 817 | 729 | 1546 |
| 1898[1199] | | 832 | 747 | 1579 |
| 1899[1200] | | 838 | 751 | 1589 |
| 1900[1201] | | 857 | 773 | 1630 |
| 1901[1202] | | 881 | 791 | 1672 |
| 1902[1203] | | 891 | 811 | 1702 |
| 1905[1204] | | 894 | 814 | 1708 |
| 1906[1205] | | 964 | 865 | 1829 |
| 1907[1206] | | | | 1514 |
| 1908[1207] | 206 | 760 | 740 | 1500 |
| 1909[1208] | | 909 | 832 | 1741 |

1168. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3800, թ. 27-28:
1169. “Акты...”, т. II, с. 596.
1170. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3800, թ. 28:
1171. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3811, թ. 4-5:
1172. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
1173. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
1174. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:
1175. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
1176. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
1177. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
1178. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1179. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
1180. ”Кавказский календарь на 1886 г.”, с. 125.
1181. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3866, թ. 44-45:
1182. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1183.Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
1184. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1185. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
1186. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1187. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1188. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1885, N 4, էջ 51:
1189. “Свод...”, с. 82-83. Այլ տվյալների համաձայն՝ նույն թվականին գյուղն ունեցել է 100 տուն («Նոր -Դար», 1886, N 65, էջ 1) կամ 78 տուն («Արձագանք», 1886, N 21, էջ 310):
1190. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3880, թ. 73:
1191. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
1192. Նույն տեղում, գ. 3884, թ. 227-228:
1193. Նույն տեղում, գ. 3887, թ.150:
1194. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
1195. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
1196. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
1197. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
1198. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
1199. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
1200. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
1201. Նույն տեղում, գ. 3905, թ. 92-93:
1202. Նույն տեղում, գ. 3906, թ. 98-99:
1203. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
1204. Նույն տեղում, գ. 312, թ. 23-24:
1205. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1206. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1207. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10: Ի դեպ, 1908 թ. վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ Խաչակապ գյուղն այդ թվականին ունեցել է 1660 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 303):
1208. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, 117:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1910[1209] | | 383 | 376 | 759 |
| 1912[1210] | | 923 | 341 | 1264 |
| 1914[1211] | | | | 661 |
| 1917[1212] | 119 | | | 1013 |

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** Հարևան գյուղերի նման Խաչակապը ևս զերծ չի մնացել թուրք խուժանի թալանչիական հարձակումներից: 1905 թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցած նման մի դեպքի առթիվ արձանագրվել է. «Խաչակապցիների տավարը թուրքերը քշում տանում են, բայց «Սարույալ» կոչված տեղում չովդարցի պահակները ետ են խլում նրանցից և վերադարձնում տերերին»[1213]:

**Հայրենական մեծ պատերազմ.** մասնացել է 397 խաչակապցի: Նրանցից 197-ը զոհվել է: Զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնելու համար երախտապարտ խաչակապցիները գյուղում կառուցել են հուշարձան և թանգարան:

Հրամանատարական տաղանդի և անձնական սխրագործությունների համար խաչակապցի փոխգնդապետ Գրիգոր Կարապետի Բաղյանին (ծնվ. 1914, վախճ. 1965) շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում: Հետագայում արժանացել է գեներալ-մայորի կոչման[1214]:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գյուղին բավականաչափ մոտ գտնվող Թարգմանչաց վանքում 1872 թ-ից ի վեր բացված վանական դպրոցի առկայության պայմաններում ծխական դպրոց բացելու անհրաժեշտությունը խաչակապցիները զգացին համեմատաբար ավելի ուշ:

1876 թ. հիշատակվում է գյուղի մեջ օրիորդաց դպրոցի գոյության մասին[1215]:

Հայտնի է, որ եկեղեցական-ծխական դպրոցը վերաբացվել է 1906 թ.[1216]: 1914 թ. դպրոցը գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 63 աշակերտ[1217]:

**Պետական (ռուսական) դպրոց.** գործել է 1903-1904 թվականներին:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գյուղամիջի եկեղեցին վավերագրերում հիշատակվում է 1847 թվականից[1218]: Կառուցվել է 1650 թ. «հոյաշէն, քաղակապ տանիքով, չորս փառաւոր սիւների վերայ»[1219] հաստատված, կոփածո սրբատաշ քարից: Արտաքին չափերն են՝ 18,9 x 12, 28 մ:

1209. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 58-59:
1210. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
1211. "Кавказский календарь на 1915 г.", с. 149.
1212. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
1213. «Արշալույս», 1905, N 17, 20 սեպտ.:
1214. Գ. Բաղյանի մասին տե՛ս **Ղալաչյան Կ.**, Փառքի հուշարձաններ. ալբոմ, Երևան, 1986, էջ 31-32:
1215. «Մեղու Հայաստանի», 1876, N 40, էջ 3:
1216. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 214, թ. 1:
1217. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 479:
1218. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3818, թ. 96-97:
1219. «Արձագանք», 1886, N 21, էջ 310: Տե՛ս նաև՝ «Նոր-Դար», 1886, N 65, էջ 1: **Բարխուտարյանց Մ.** Արցախ, էջ 308: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 313:





*ԽԱՉԱԿԱՊ. Սբ. Աստվածածին եկեղեցի*

1988 թ. դրությամբ եկեղեցին կանգուն էր ու անվնաս:

Սբ. Աստվածածին եկեղեցին ունեցել է կառուցման և նորոգման աշխատանքներին վերաբերող արձանագրություններ:

Սբ. Աստվածածին եկեղեցի. ճակատին եղել է.

*Արդեամբ և ծախիւք Խաչակապաց ժողովրդոց շինեցաւ 1650 ամի, նորոգեցաւ 1864 կամի:*

*Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ:*

Հրատ. «Նոր -Դար», 1886, N 65, էջ 1: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 288:

Սբ. Աստվածածին եկեղեցի. զանգակատուն.

*Արդեամբ շինեցաւ զանգակատունս 1864 ամի Վերոի Յարութինեան Տռուզեանց:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 288:

1864 թ. զանգակատան կառուցման հետ միաժամանակ կատարվել են եկեղեցու վերանորոգչական աշխատանքներ: Հաջորդ վերանորոգումներն իրականացվել են 1880 թ.: Այդ առթիվ կա հետևյալ արձանագրությունը.

Սբ. Աստվածածին եկեղեցի. արևմտյան ճակատի հյուսիսային անկյան մոտ, քառատող.

*1880 ամի, Հ. ՌՅԻԹ | Մ(ուր)բ եկեղեցոյս սեղանի և ժողովրդի տեղի սալա(յա)|տակը շինել տվեց փիրեցի Արունց Յակոբի աղ|ջիկ Թամամը. յիշատակ հոգւոյ իւրոց:*

Հրատ. առաջին անգամ:

ԺԹ դարավերջին կառույցը դարձյալ ուներ նորոգման աշխատանքների կարիք. «Մեր յաջորդ արժ. հայր Թաւաքալեանցը ոչ պաշտօնապէս այցելեց մեր գիւղը և նկատելով, որ եկեղեցու տանիքը փչացած է և միշտ ջուր է կաթկթում, ստորագրութիւն բաց արեց և 300 ր. ժողովուեց, որով այս ամառ եկեղեցու տանիքը պիտի նորոգուի»[1220]:

Եկեղեցին փակվել է 1928 թ.[1221]:

**Քահանա.** Խաչակապում պաշտոնավարած ծխատեր քահանաների ժամանակագրական ցանկըն իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը.

*Մովսես Եպիսկոպոսյանց.* հիշվում է 1840-60-ական թվականներին[1222]:

*Անտոն Գրիգորյան Մալխասյանց.* հիշվում է 1858 թ-ից: Նա միաժամանակ բավարարում էր Կիրանց և Քարհատ գյուղերի հոգևոր կարիքները[1223]:

*Գրիգոր Տեր-Հովհաննիսյան Տեր-Ավետիքյանց.* հիշվում է 1904-1910 թթ.: Քահանա է ձեռնադրվել 1884 թ. և հովվել նախ Սև ծովի առափնյա Վելիամինովյան շրջանի գաղթական հայերին[1224]: 1908-1910 թթ. նրա հետ հիշվում է քահ. *Հովհաննես Տեր-Եղիազարյանցը*[1225]:

*Հովհաննես Դավթյան Տեր-Եղիազարյանց.* հիշվում է 1898-1919 թվականներին[1226]: Քահանա է ձեռնադրվել 1898 թ.: 1903-1904 թթ. կրոն և հայոց լեզու է դասավանդել Խաչակապի պետական (ռուսական) դպրոցում: 1898 թ-ից մինչև 1919 թ. «...աշխատող է եղել մատաղ սերնդի կրթութեան և նախաձեռնող է հանդիսացել Խաչակապի եկեղեցական-ծխական դպրոցի սեփական շենքի գնման...»[1227]:

**Գերեզմանոցներ.** եկեղեցու շուրջ տարածված փոքրիկ գերեզմանոցում պահպանվել են ԺԹ դարին վերաբերող մի քանի տապանաքարեր: Դրանցից մեկը, հավանաբար, վերաբերում է գյուղի հասարակական կյանքում կարևոր դեր կատարած անձնավորության, որին վերագրվել է նույնիսկ գյուղի հիմնադրումը:

Տապանաքար. սպիտակ մարմարից, 10 տող.

*Այս է տապան Խաչա|կապ գիւղի հիմնա|դիր Տէր Աբրահամ | Շահնազարեանցի | եւ որդւոյ նորա | Մելիք-Մովսէսի: |* (Մյուս երեսին)՝ *Տէր Աբր(ա)համը | վխ. 1758 թ., Մելիք Մովսեսը | վխ. 1790 թ.:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան մելիք Պարին, թվ. ՌՄԼԷ (1788):*

Հրատ. **Լալայան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 313:

Մյուս գերեզմանոցը տարածվում է գյուղի արևելյան եզրի բլրալանջին: Պահպանվել են Թ-ԺԱ դարերի մի քանի խաչքարեր: Դրանցից մեկի (չափերը՝ 100 x 40 x 13 սմ) վրա իրար տակ կա երկու խաչ: Մեկ այլ խաչքար կանգնեցված է բլրի ստորոտին, ունի զույգ հորինվածք (չափերը՝ 110 x 73 x 11 սմ), վերնամասում արձանագրությունից մնացել է մեկ-երկու տառ[1228]:

**«Ծաղկոց» ուխտատեղի.** գտնվում է Խաչակապի հարավային եզրին: ԺԱ դարի երկու խաչքար է պահպանվել այս ուխտատեղիում: Դրանցից մեկը ստորին մասում կրում է կիսաեղծ արձանագրություն՝ 1056 թվագրով.

Խաչքար. ստորին մասում՝ 3 տող.

*Ի թուականի|իս ՇԵ (1056), | ի յաշ...*

Հրատ. «Գարդմանք», 1996, N 3, էջ10-11:

**Խաչքար.** գյուղամիջի տներից մեկի բակում պահպանվում է գեղաքանդակ խաչքարի բեկոր.

Խաչքար. չափերը՝ 43 x 52 x 15 սմ, քիվին՝ 2 տող.

*...կանգնեցի ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւս) հոգոյն Առաքէլին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

**«Խաչ-Քցի» ուխտատեղի-մատուռ.** գտնվում է գյուղի հարավային եզրին. «Գիւղիս ստորոտում կայ մի անտաշ քարով շինուած մատուռ, որի մէջ ամփոփուած է ոմն սուրբ անձի մարմինն: Մատուռս կոչուում է Խաչ-Քցի. գերեզմանիս վերայ վիճակ են ձգում երիտասարդներն ու օրիորդներն...»[1229]: Արևմտյան ճակատին ագուցված արձանագրության համաձայն՝ մատուռը 1913 թ. վերակառուցվել է.

1220. «Նոր-Դար», 1896, N 118, էջ 3:
1221. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
1222. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 56-58:
1223. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3831, թ. 39-40:
1224. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 65-66: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:
1225. ՀԱԱ, ֆ. Պ458, ց. 1, գ. 184, թ. 7: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:
1226. ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 250, թ. 94: Նաև՝ ֆ. 56, ց. 6, գ. 1174, թ. 11:
1227. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 65-66:

1228. **Կարապետյան Ս.**, VIII-XI դարերի խաչքարերը Գարդմանքում, «Գարդմանք», 1996, N 3, էջ10-11:
1229. **Բարխուտարեանց Մ.** , Արցախ, էջ 288:



***ԽԱՉԱԿԱՊ. «Խաչ-Քցի» ուխտատեղի-մատուռը, շինարարական արձանագրությունը (1913 թ.), խաչքարեր «Ծաղկոց» սրբատեղիում (ԺԱ դ.) և խաչքարի բեկոր գյուղամիջում (ԺԶ-ԺԷ դդ.)***

Արձանագրություն. չափերը

*Ուխտատեղիս շինեցի | արդեամբ և ծախիւք խաչակապցի | բարեպաշտ Գրիգոր Յարութիւնեան | Մկրտչեանցի, 1913 թ.:*

Հրատ. առաջին անգամ:

**«Ծիրանավոր» ուխտատեղի-մատուռ.** գտնվում է գյուղամիջում: Եղել է քարաշեն-փայտածածկ կառույց:

**«Օխտնաղբեր» ուխտատեղի.** գտնվում է Խաչակապից 2 կմ հյուսիս-արևմուտք: Նախնական տեղում (երեսով դեպի արևմուտք) կանգուն, հնաոճ, թվով 7 խաչքարեր են, բոլորն էլ անարձանագիր: Թվագրվում են Թ-ԺԱ դարերով:

**«Քչաղբյուրի» կամուրջ.** պահպանվել է գյուղի հարավարևելյան կողմում Ի դարի սկզբներին: Միաթռիչք է, կամարակապ: Բացառությամբ թաղակիր կամարի անկյունաքարերի, որոնք սրբատաշ են, կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Կամրջի թռիչքը 3,95 մ է, անցուղու լայնությունը՝ 4,05 մ. հետագայում կամուրջը լայնացնելու նպատակով հավելվել է ևս 3 մ:

**Գյուղամերձ հուշարձաններ.** խաչքարային արվեստի վաղ շրջանի մի նմուշ էլ պահպանված է եղել գյուղից 4-5 կմ հյուսիս ընկած տեղանքում: Այն անտաշ քարից (չափերը՝ 2,01 x 1,05 x 0,25-0,35 մ) կերտված կոթող է՝ հարդարված երեք միանման խաչաքանդակներով[1230]:

**Թարգմանչաց վանք**

*Տեղադրություն.* գտնվում է գյուղից 1,5 կմ հյուսիս՝ երկու փոքրիկ ձորակների միջև՝ հարավահայաց լեռնալանջի հարթության վրա, ծովի մակերևույթից 1315 մ բարձրության վրա:

*Հիմնադրում.* վանքի հիմնադրումը ավանդաբար կապվում է Ե դարում Սբ. Մեսրոպ Մաշտոցի կող-

1230. «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը» գրքում (կազմող՝ **Շահինյան Ա.**, Երևան, 1984, էջ 22) նկատի ունենալով խաչաքանդակների հնաոճ առանձնահատկությունները՝ խաչքարը թվագրված է Ը դարով: Սակայն տարածքի թվակիր նշումների հետ դրանց համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կենտրոնական Հայաստանի՝ Ը-Թ դարերին բնորոշ խաչաքանդակները և զարդաձևերը Պատմական Հայաստանի ծայրագավառ Գարդմանքում ավելի բնորոշ են Ժ-ԺԱ դարերի խաչքարերին:

մից Արցախում քրիստոնեական քարոզչություն ծավալելու հետ (այդտեղից էլ՝ Թարգմանչաց անվանումը)[1231]: Եղել է հյուսիսարևելյան Հայաստանի հոգևոր-մշակութային առավել հայտնի ու արգասավոր կենտրոններից մեկը:

Վանքը բազմիցս ավերվել ու վերաշինվել է: Դա ոչ միայն հստակ նկատելի է պատերի շարվածքից, այլև վկայված է ժամանակին գրի առնված մի ավանդությամբ. «...Լանկթամուրի ժամանակ այս տաճարը քանդել աւերել են, և հազիւ գետնից բարձր կանգունաձև մնացել են պատերը...»[1232]: Իրականացված բազում նորոգությունների հետքերն աչքի առաջ ունենալով՝ 1885 թ. այցելուն նշել է. «...դարերի ընթացքում մի քանի անգամ կործանուել և վերստին նորոգուել է և ամեն մի նորոգութեան ժամանակ կորցրել է իւր հնութեան մի մասը: Ներկայումս եկեղեցու սեղանի կողմը, որ ինչպէս երևում է իւր սկզբնական դիրքը պահպանել է, աւելի մեծ է. այնուհետև տասներորդ դարի սկզբին (1029 թ.) նորոգութեան ենթարկուելով դասը և ժողովրդեան կանգնելու տեղը աւելի նեղ ու փոքր դիրք են առել»[1233]:

Վանքի միակ եկեղեցին օծվել է Սբ. Սահակ-Մեսրոպի անվամբ[1234]:

Հայտնի է, որ 1872-1890 թթ. վանքի վերանորոգման համար հավաքված գումարը կազմել էր 9116 ռ., իսկ ծախսը՝ 9880 ռ., մինչդեռ աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ էր ևս 15.000 ռ.[1235]: Անդրադառնալով անավարտ մնացած աշխատանքների կարևորությանը՝ 1888 թ. մասնակից լինելու հայց էր ուղղվել ժողովրդին[1236]:

Հակառակ վերոնշյալին՝ 1880-ական թվականներին ժամանակակիցը հիացմունքով է խոսել վանքի բարեկարգ վիճակի մասին. «Երբ ճանապարհորդը, անցնելով հարուստ ու զուարճալի լեռնադաշտերից, ճոխ անտառներից և փարթամ վարելահողերից, մոտենում է այն ձորազլխին, որին ներկայ խնամակալը Արջաձոր է անուանել, նորա առաջ, բարձրաւանդակի լանջին, ձորի բերանում, գրաւիչ կերպով պատկերանում է ս. Թարգմանչաց վանքը, շրջապատուած մաքուր ու վայելչաշէն բնակարաններով, պարտէզներով, խոտհարքներով, արտերով և նորաբոյս անտառով: ...Խնամակալի (հայ վաճառական-արդյունահանող Ներսես Տեր-Ներսիսյանց - Ս.Կ.) բացառիկ ջանքերով և թէ իրան ու թէ այլ բարեմիտ անձանց նուէրներով ս. Թարգմանչաց վանքը ներկայումս ունի մի բնակարան չորս ընդարձակ սենեակից բաղկացած, երկու նախասենեակ և մի կրաշէն ներքնատուն: Այդ բնակարանին կից կայ վանահոր կացարանը՝ մի ընդարձակ ու վայելուչ սենեակ, որի նմանը ս. էջմիածնայ սրբազան եպիսկոպոսներից քիչերն ունին գուցէ: ...Ինքը եկեղեցին էլ շատ վայելուչ զարդարած ու նորոգած է. նա ունի որկու գաւիթ, ներքին և արտաքին. արտաքին գաւթի մէջ է անասնատունը: Վանքին կից ընդարձակ պարսպապատի մէջ, նոր սկսվում է պարտեզ շինուել. պարտիզի վերին մասում դուրս է բերած պարտուական աղբիւր՝ գեղեցիկ աւազանով...»[1237]:

Շուրջ տասը տարի անց վանքի հերթական այցելուն նշել է. «Վանքն ունի ամուր շրջապարիսպ, ութ խուց, պարտէզ, մեղուանոց, կամուրջներ և պատուական աղբիւր: Իմ շրջած և տեսած բոլոր վանքերից պայծառ է վանքս: Նորոգուած է վանքս, գաւիթն, շրջապարիսպն, խուցերն, և նորինորոյ շինուած կամուրջներ: Այս բոլոր նորոգութիւները, պայծառութիւնը և վերակենդանութիւնը պարտական ենք Գանձակեցի մեծ. Ներսէս-բէկ Աբրահամեան Տէր-Ներսիսեանցին»[1238]:

Սակայն բարերար-խնամակալի մահից (1896) հետո՝ հաջորդ երկու տասնամյակներում, վանքի դերը սկսել է նվազել, որից մտահոգված՝ Էջմիածնի հոգևոր իշխանությունը որոշում է կայացրել «...Վ-րաստանի թեմի ժամ. կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսին կարգադրել, որ Գանձակի փոխանորդ Տ. Լևոն վարդապետը կանոնաւոր վերահսկողութիւն ունենայ Թարգմանչաց վանքի վրայ»[1239]: Տեղին է նշել, որ դեռևս 1888 թ. վեհափառին հղած մի նամակում վանքի խնամակալ Ն. Տեր-Ներսիսյանցն իր մտահոգությունն էր հայտնել Թարգմանչաց վանքի ապագա կացության առթիվ, մասնավորապես գրելով. «...ինձ աւելի և աւելի զբաղեցնում է մի ծանրակշիռ հոգս, այն է՝ արդեօք ո՞ւմ յուսով պէտք է մնան և պահպանուին այն թանկագին կարասիքը, եկեղեցական սպասները, մատենադարանը, նոր կառուցած շէնքերը և այլն. և այլն, եթէ վանահայր Թէոդորոս վարդապետն Շիրակունի վախճանի, իբրև ծերունի և հիւանդոտ մարդ, չլինի թէ մեր աշխատածը ի կորուստ և յափշտակութիւն մատնուի, որոյ օրինակը Հայոց շատ վանքերում և եկեղեցիներում տեսնվում է ի ցաւ զգացող սրտերի և ի նախատինս ազգի...»[1240]:

Ցավոք, Ն. Տեր-Ներսիսյանցի մտավախությունն ու կանխատեսումներն իրականանում են և այն էլ ոչ թե վանահոր մահից հետո, այլ հենց նրա կենդանության ու վանահայրության օրոք:

Խնամակալ Ն. Տեր-Ներսիսյանցի մահից հետո՝ 1898 թ. վանահայրը որոշ նորոգություններ ու պա-

1231. **Ալիշան Ղ.**, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:
1232. «Արձագանք», 1886, N 21, էջ 308:
1233. «Արձագանք», 1885, N 4, էջ 55:
1234. ՀԱԱ, ֆ. 56, ց.14, գ. 205, թ. 231-232:
1235. Նույն տեղում, ց. 6, գ. 31, թ. 97:
1236. «Նոր-Դար», 1888, N 109:
1237. «Արձագանք», 1885, N 4, էջ 55:
1238. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ էջ 291:
1239. «Արարատ», 1913, էջ 106:
1240. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 31, թ. 56:



***ԽԱՉԱԿԱՊ. «Օխտն աղբեր» հնավայրի խաչքարերը***

կաս կափ-կարասին լրացնելու նպատակով դրամական հանգանակության թույլտվության համար դիմում է Վրաստանի և Իմերեթի Հայոց կոնսիստորիային[1241], որը, ամենայն հավանականությամբ, չի բավարարվում:

Վանքի եկեղեցու տանիքը 1917 թ. կարիք է ունեցել նորոգության: Անհրաժեշտ գումարը կազմել է 13. 472 ռ., սակայն մինչև 1919 թ. վանքի ավելորդ փայտեղեններն ու երկաթեղենները աճուրդով վաճառելու արդյունքում հնարավոր է եղել կուտակել ընդամենը 277 ռ.[1242]: Ուստի և Թարգմանչաց վանքը, փաստորեն, խորհրդային ժամանակաշրջան մուտք է գործել՝ արդեն կարոտ էական նորոգումների:

Այնուհետև, շուրջ 70 տարի, հինավուրց ու նվիրական վանքը ոչ մեկի կողմից չխնամարկվել:

1980-ական թվականներին, երբ առիթ ունեցանք մի քանի անգամ այցելել վանք, խպառ անհետացած տեսանք երբեմնի դպրոցն ու օժանդակ մյուս շինությունները, գրեթե աննշմար էր շրջապարիսպը, տակնուվրա՝ գերեզմանոցը: Քայքայված, սակայն կանգուն էին Սբ. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, գավիթն ու զանգակատունը, ինչպես նաև ստորգետնյա քաղակապ մի շինություն (հավանաբար, ինչ-որ կառույցի նկուղը):

*Ճարտարապետություն.* Սբ. Սահակ-Մեսրոպ եկեղեցին ի սկզբանե եղել է ուղղանկյուն հատակագծով, արևելքում կիսաշրջան խորանով, արտաքուստ ընդգծված ծավալներով զույգ ավանդատներով քաղածածկ կառույց (միանավ բազիլիկ եկեղեցի): Կառույցի հորինվածքային էական առանձնահատկությունը հյուսիսային ավանդատան արտաքուստ արևմտահայաց պատի մեջ բաց խորանի առկայությունն է, որպիսիք հանդիպում են վաղ միջնադարյան պաշտամունքային մի շարք այլ հուշարձաններում (Երերույք, Օձուն, Թալին, Արթիկ և այլն): Ի դեպ, բազմաթիվ նորոգումների ենթարկված Թարգմանչաց վանքի եկեղեցու հյուսիսային ճակատի հիշյալ բաց խորանին հարակցող հատվածն է, որ անխաթար պահպանվել է իր նախնական շարվածքով:

1241. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9450, թ. 1-2:
1242. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1174, թ. 11, ց. 5, գ. 250, թ. 94:







***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. տեսքը 1911 թ., և 1980-ականներին***

Բաց խորանի առկայությունը և համանման այլ եկեղեցիների հետ վերջինիս համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս Թարգմանչաց վանքի հիմնադրումը իրապես վերագրել վաղ միջնադարին:

Հետագա դարերում եկեղեցին բազմիցս նորոգվել է: Հուշարձանի պատերին առկա են ՆԼԸ (989) թվագրով քարեր, որոնք, անտարակույս, վերաբերում են նորոգումներից մեկին:

Ի սկզբանե եկեղեցին կառուցված է եղել համակ



***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. մանրամասներ***

սրբատաշ քարերով: Այդ են վկայում հետագա նորոգումների ժամանակ օգտագործված հին տաճարի բեկորները, որոնք առատորեն օգտագործվել են հատկապես արևելյան ճակատում: ԺԷ-ԺԸ դարերում կատարված հերթական նորոգությունների ժամանակ, երբ հավելվել է նաև գմբեթը, շարվածքում օգտագործվել են Ժ-ԺԷ դարերին վերաբերող մեծ թվով խաչքարեր՝ հավանաբար տեղահանվելով վանքի միջնադարյան գերեզմանոցից:

Եկեղեցու մուտքն արևմուտքից է, լուսավորվում



***ԽԱՉԿԱՊ. Թարգմանչաց վանք. մանրամասներ***



***ԽԱՉԿԱՊ. Թարգմանչաց վանքի հատակագիծը***

է արևելյան ճակատի երեք և թմբուկի չորս նեղ, փոքր պատուհաններից: Պատերին ագուցված առանձին քարերին և խաչքարերին պահպանվել են մի շարք արձանագրություններ: Ստորև ներկայացնում ենք դրանք.

Արձանագրություն. եկեղեցու հարավային պատի մի սրբատաշ քարի վրա.

*ՆԼԸ (989):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 308: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 340: «Դիվան...», V, էջ 252:

Ծանոթ. Ս. Բարխուդարյանը ՆԼԸ թվագրով ևս երկու քար է արձանագրել՝ գավթի հյուսիսային ու հարավային պատերին («Դիվան», V, էջ 252):

Արձանագրություն. եկեղեցու մուտքի ճակատին եղել է.

*Ի կաթուղիկոսութեան ամենայն Հայոց Գէորգայ Դ-ղի, յառաջնորդութեան Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան և Արիստակէս եպիսկոպոսի Սեղրակեան և ի վանահայրութեան Թէոդորոս վարդապետի Շիրակունւոյ, ձեռնտուութեամբ բարեպաշտ զաւակաց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, նորոգեալ բարեզարդեցաւ սուրբ մենաստանս, որ կառուցեալ է ի Է. դարու և մնայր աւերակ: Բացաւ աստ վանական դպրոց, նորոգ կառուցան դպրոցական, տնտեսական շինութիւնք, կամուրջ, սայլուղիք և այլն, նորոգեցան լայնացան պարիսպք նորա, ճոխացան կարասիք և պիտոյք դպրոցին հանդերձ մատենադարանիւ ի հոգևոր մխիթարութիւն Հայազնեայց 1872-1885 ամի:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Արձանագրություն. բեմառաջին, «Գրակալաձև» քարի վրա եղել է.

*Սիւնս այս կանգնեցաւ ի վանս Թարգմանչաց ի յիշատակ նորոգութեան և բարեզարդութեան սրբոյ տաճարիս և հոգևոր դպրոցի նորին ի 1875 և 1880 ամի նպաստիւք Կովկասեան Հայազն բարեմիտ և կրօնասէր ժողովրդականաց ի հայրապետութեան Գէորգայ Դ-ղի և առաջնորդութեան Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Խաչքար. գավթի արևմտյան որմնամույթի մեջ, թևերի շուրջը և ստորին մասում՝ կիսաեղծ 4 տող.

*ՈԼԵ (1186). | Տ(է)ր Առաքել առ[աջնորդ], | Ս(ուր)բ ուխտիս կանգ[նեցի] զխաչս:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 252:



***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. եկեղեցու արևելյան ճակատը***

Խաչքար. հյուսիսային ավանդատան արևմտյան պատի մեջ, 2 տող

*Ս(ուր)բ Ակ|ոբ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 252:

Ծանոթ. ժամանակը` ԺԲ դար:

Խաչքար. թմբուկի արևմտյան քիվի մեջ, 1 տող.

*Թվ(ին) ՊՀԲ (1423):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար. չափերը` 70 x 52սմ, գավթի հարավային պատի որմնակամարի մեջ, 1 տող.

*Թվ Ռ (1551):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար. արևելյան լուսամուտի մոտ` արտաքուստ, հիմնախաչի վերին թևի երկու կողմերում` 2 տող.

*Թվ(ին) Ռ|Ե (1556):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար. հարավային ավանդատան լուսամուտի վերին մասում` խաչաթևերի շուրջը` 2 տող.

*Թվ (ին) ՌԻ|Ե (1576):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար, գավթի հյուսիսային պատի մեջ, ներքուստ.

*ՌԼԷ (1588):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար. հարավային ավանդատան արևելյան լուսամուտի վերին մասում, խաչաթևերի շուրջը` 2 տող.

*Թվ(ին) Ռ|ԽԵ (1596):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Խաչքար. չափերը` 38 x 34 x 10 սմ, եկեղեցու խորանում.

*Թվ (ին) ՌԾԷ (1608):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վերնամասը ջարդված է:

Խաչքար. չափերը` 56 x 43 սմ, թմբուկի արևելյան պատի մեջ, քիվին` 1 տող.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխ(աւ)ս Վ(ա)րդ(ա)նին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Խաչքար. չափերը` 80 x 53 սմ, թմբուկի արևելյան պատին, ստորին մասում` թերի 1 տող.

*Ի փրկութի(ւն) հոգո ամուսնո իմո...*:

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Ծանոթ. վերնամասը կոտրված է:

Խաչքար. թմբուկի գագաթին, 1 տող.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխ(աւ)ս Ակոբին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Խաչքար. չափերը` 65 x 28 սմ, թմբուկի հարավային պատին, քիվին` 1 տող.

*Թո(ւ)թակ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Խաչքար. թմբուկի ստորին շարքում, ներքուստ.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխ(աւ)ս Գաւհ(ա)րին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Խաչքար. չափերը` 60x47սմ, թմբուկի հարավային որմնակամարի մեջ, ներքուստ.

*Խ(ա)չս յիշատ(ա)կ Յարայմիշին:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. թմբուկի ստորին շարքում, ներքուստ.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխ(աւ)ս Մրանսին (՞):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. թմբուկի արևմտյան կողմում, արտաքուստ.

*Ապրհա(մին) աւ(գնական)...:*

Հրատ. առաջին անգամ:









***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, թմբուկը և գավթի ներքին տեսքը դեպի արևելք***

*Գավիթ.* եկեղեցուն արևմուտքից կից է 1800 թ. կառուցված գավիթը: Ունի ուղղանկյուն, երկթեք ծածկի տակ առնված թաղակապ հորինվածք: Կառուցված է անտաշ քարով, կրաշաղախով: Ներսում՝ պատերի մեջ ագուցված են շուրջ մեկ տասնյակ խաչքարեր և տապանաքարեր: Դրանցից մի քանիսն արձանագիր են:

Արձանագրություն. գավթի մուտքից վեր.

*Գաւիթս այս կառուցաւ ի վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի, 1800 ամի:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 308: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 289: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 340:

Արձանագրություն. գավթի հյուսիսային պատի արևմտյան անկյան մոտ.

*Շինեցաւ թիւ / հայոց ՌՄԽԹ (1800):*

Հրատ. առաջին անգամ:

Քար. ուղղանկյուն, ընկած տանիքին.

*Հիմնարկուին այս 450 առաջին նորոգուի 1029 վերջին վերանորոգումն 1875-1880:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. չափերը՝ 100 x 62 սմ, հարավային պատի որմնակամարի մեջ.

*Ես ...եպ(իսկոպո)ս կա(ն)կնեցի զխ(ա)չս / եղբ(ո)րորդոյն իմոյ Ալեքսանոս աբեղին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 254:

Խաչքար. չափերը՝ 58x40սմ, հարավային պատին, ներքուստ.

*Յ(ա)րայպետութե(ան) Տ(է)ր Ոհանիսին ...ամա թողին ու փախան:*

Հրատ. առաջին անգամ:

*Զանգակատուն.* համակ սրբատաշ քարով, կրաշաղախով կառուցված կրկնահարկ շինություն







***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. տապանաքար (1879) գերեզմանատանը, վեղարի վայր ընկած խոնձորակը և կամրջի կառուցման տարեթիվը***

է: Կից է գավթի արևմտյան ճակատին: Կառուցվել է 1856 թ.: Վերջին կարևոր նորոգությունը կատարվել է 1890 թ. Կարապետ Պողոսյան Լալայանցի նվիրաբերած 550 ռուբլի գումարով[1243]:

Ստորև ներկայացնում ենք զանգակատան արձանագրությունները.

Արձանագրություն. արևմտյան ճակատին՝ 3 տող.

*Զանգակատունս կառոյց / Գանձակեցի Պողոս / Ամիրխանեանցն, ի 1856 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 289: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 341:

Արձանագրություն. հյուսիսային պատին՝ 7 տող.

*...որ կա/(ռ)ուցաւ ի անուն ս(ուր)բ առաքելոց ետու յիշատակ ինձ / Մանուէլն, Գրիգորն եւ / Սիմօն, դստերքն՝ Մակթա/ղն, Բալախան, Մին ... եան Խու/մարն հարսն իմ Մարիամ, 1876 ամի:*

Զանգակատուն. արևելակողմի 2 սյուների խոյակներին՝ 4 տող.

*Եկայք պատուէսցուք տաճարս շինեալ յանուն / սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ եւ / Մեսրոբայ, քանզի ի սմա ծագեաց մեզ (450) / լոյս ի Հաեաստան աշխարհի, ի 1029 փրկչ(ակա)ն ամի:*

Հրատ. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 340:

Ծանոթ. ըստ Լալայանի՝ վիմագիրը փորագրված է գավթի վրա:

*Օժանդակ շինություններ.* հայտնի է, որ վանքը շրջապարսպից ներս հնուց ի վեր ունեցել է մի շարք շինություններ միաբանների և ուխտավորների համար: 1847 թ., օրինակ, եղել է «Ի պարսպին մէկ մեծ տուն և երեք փոքրագոյն սենեակք յորս մնան միաբանք»[1244]:

1243. «Նոր-Դար», 1890, N 13, էջ 2: Տես նաև՝ ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 1, գ. 31, թ. 94:

1244. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 108-109:



***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. խաչքարեր՝ ագուցված եկեղեցու և գավթի որմերում***

1902 թ. վանքի սենյակների նորոգության համար վանահորը փոխանցվել է հանգանակված 220 ռուբ. գումարը[1245]: Սակայն, ինչպես երևում է 1910 թ. կազմված տեղեկագրից, վիճակը բնավ էլ չի շտկվել, այլ ընդհակառակը, սենյակները գնալով ավելի ու ավելի են խարխլվել. «...գտայ քայքայւած հացատան և խոհանոցի տանիքները, միւս սենեակները խարխալած, կեղտոտ, որոնք կարօտ են վերանորոգութեան, իսկ այժմ անհրաժեշտ է կարգել խիստ հսկողութիւն, որպէս զի գէթ կործանումից ազատ մնայ»[1246]:

*Վանահայրերը.* Թարգմանչաց վանքի առաջնորդներից հայտնի են.

*Իսրայել եպիսկոպոս.* հիշվում է 1764 թ.[1247]:

*Եփրեմ վարդապետ.* վախճանվել է 1781թ.: Տապանաքարը գտնվում է Թարգմանչաց վանքի գավթի մեջ:

Տապանաքար. գավթի ներսում՝ գավազանի քանդակ և 2 տող.

*Այս է տապան Եփրեմ | վարդապետ(ին), թվ(ի)ն ՌՄԼ (1781):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մ. Բարխուտարյանցը նշել է, որ գավթի ներսում, ի թիվս այլոց, գտնվում է նաև Եփրեմ վարդապետի տապանաքարը, բայց արձանագրությունը չի տալիս (նշվ. աշխ., էջ 289):

*Սամուել եպիսկոպոս.* հիշվում է 1800 թ.: Նրա օրոք կառուցվել է գավիթը: Նույնպես թաղված է եղել գավթի ներսում, սակայն տապանաքարը չենք գտել:

*Գրիգոր վարդապետ Տեր-Հովհաննիսյանց.* վանահոր պաշտոնը, համաձայն տապանագրի, վարել է

1245. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 435, թ. 37:
1246. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 11:
1247. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ Ձ:



***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. խաչքարեր՝ եկեղեցու և գավթի որմերում***

1830-1852 թթ.: Նրա օրոք վանական ունեցվածքի նկատմամբ կատարվել են ապօրինություններ: Ի դեպ, 1839 թ. Գրիգորը տակավին աբեղա էր[1248]:

Տապանաքար. եկեղեցու հարավային կողմում, ջարդված՝ երկու մասի, 6 տող.

*Այս է շիրիմ Գանձակեցի Գրիգոր վարդապետին Տ(է)ր Յօհաննէսեան / Շահինբէկեանց, որ վարեաց զվանահայրութիւն վանից / Սրբոց Թարգմանչանց ի 1830 ամէ, վախճանեցաւ ի 1852 ամի: / Յաւուրս սորա կառուցաւ վանքական մէկ սենեակ: / Սորա եղբօր որդի Դանել ք(ա)հ(անա) Տ(է)ր Մարտիրոսեանս եւտու արձանագր(ել), / ՌՅԻԸ՝ 1879 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

1248. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 8:

Երկու վարդապետ. հիշվում են 1860 թ.[1249]:

*Թեոդորոս վարդապետ Շիրակունի.* 1867 թ. վանահայր է կարգվել հոգևոր իշխանությանն ուղղած խաչակապցիների երկու խնդրագրերի հիման վրա (մինչ այդ Նոր Բայազետ գավառի Վանեվանքի հոգևոր առաջնորդն էր)[1250]: Նրա օրոք մեծացել է վանքի դերն ու հեղինակությունը: 1872 թ. վանքում բացվել է դպրոց, կառուցվել ուսումնարանի շենք, իրականացվել են վանքի նորոգման տևական ու մեծածավալ աշխատանքներ: Դասավանդել է վանքի դպրոցում, գրել է աշխատություններ, կատարել թարգմանություններ, աշխատանքներ է տարել վանքի կալվածքի պահպանման ուղղութ-

1249. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 112-113:

1250. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 56-58: Նաև՝ «Արարատ», 1884, էջ 420-421:



***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. խաչքարեր՝ եկեղեցու և գավթի որմերում***

յամբ: 1898 թ. կաթողիկոսի կոնդակի համաձայն՝ վարդապետին արտոնել էր մինչև իր կյանքի վերջը մնալ Թարգմանչաց վանքում. «Պատուիրեմք վիճակային կոնսիստորիային կարգել ցկեանս վանահայր վանացն Թարգմանչաց Խաչակապու զտէր Թէոդորոս վարդ. Շիրակունի»[1251]:

Հայտնի է, որ 1910 թ. Թեոդորոս վարդապետը զառամյալ վիճակում դեռևս վանքի առաջնորդ էր: «Վանահայր Շիրակունի վարդապետը ներկայումս ինքը կարօտում է խնամակալութեան և ոչ թէ այսպիսի մի վանք թողնել նրա խնամքին, որ հասցրել է այսպիսի ցաւալի դրութեան»,– նկատել է ժամանակակիցը[1252]:

*Հովհաննես քահանա Տեր-Եղիազարյանց.* հիշվում է 1917-1919 թթ.՝ որպես ժամանակավոր վանահայր: Միաժամանակ նա Խաչակապ գյուղի ծխական քահանան էր: Նրա օրոք նախատեսվում է նորոգել եկեղեցու տանիքը. նախահաշիվը կազմել է ինքը[1253]:

*Վանքի շարժական ունեցվածքը.* 1904 թ. վախճանված Կ.Պոլսի պատրիարք Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանի կտակի համաձայն՝ Թարգմանչաց վանքին էր ուղարկվել հանգուցյալի զգեստը[1254]: Հայտնի է, որ 1924 թ. փետրվարի 7-ին Գանձակի Հայոց առաջնորդ Լևոն եպիսկոպոսը բողոքել էր Էջմիածնի հոգևոր խորհրդին՝ գյուղի գործ-

1251. Նույն տեղում, գ. 775, թ. 10:
1252. Նույն տեղում, գ. 775, թ. 10, 13:
1253. Նույն տեղում, գ. 1174, ց. 5, գ. 250, թ. 94:
1254. «Արարատ», 1904, էջ 739:









***ԽԱՉԱԿԱՊ. Թարգմանչաց վանք. խաչքար (1608 թ.). բռնագաղթի օրերին խաչակապցի Իսահակ Բաղյանի ջանքերով փոխադրվել է Բագրատաշեն***

կոմի կողմից Թարգմանչաց վանքի եկեղեցական իրերը վաճառելու համար. «Խաչակապ գյուղի գործկոմը ինքնագլուխ բերել է գյուղ Ս. Թարգմանչաց վանքի պղնձե կաթսաները, խալիչաները, ժամացույցը, շենքերի տախտակները, որոնցից վաճառել է 75 միլիոն ռ. մինչև 1923 թվի փետրվարը»[1255]:

*Վանքապատկան կալվածքը.* Թարգմանչաց վանքն ավանդաբար տիրապետել է ընդարձակ կալվածքների: Սակայն, դրանց զբաղեցրած սահմանների, տնտեսական կացության և եկամուտների մասին որոշակի տվյալներ պարունակող վավերագրերը ԺԹ դարից ավելի հին չեն:

Հայտնի է, որ 1840-1860-ական թվականներին Տեր Մովսես քահանա Եպիսկոպոսյանցը վանքապատկան կալվածքներից ապօրինաբար նվիրել էր իր ազգականներին[1256]:

Վանքապատկան անտառի անխնա շահագործման հետևանքով ստեղծված կացությանը տրվել է ահա այսպիսի գնահատական. «աւելի արօտատեղի կարող է լինել, որովհետև ծառերը առաջուց անխնայ կոտորած լինելով, այժմ թփերով է ծածկուած միայն»[1257]:

Վանական կալվածքների բարձիթողի վիճակը առաջացրել է և՛ գյուղացիների և՛ հոգևոր իշխանությունների արդարացի դժգոհությունը:

Վանահայր Թեոդորոս Շիրակունին, 1872 թվականից վանքի խնամակալ նշանակված Ներսես Տեր-Ներսիսյանցի հետ միասին, մեծ աշխատանքներ է տանում վանքապատկան կալվածների պահպանման ուղղությամբ: Նրանց ջանքերով հնարավոր է եղել պահպանել «183 դեսիատին հող, որի մեջ կայ՝ վարելահողեր, խոտհարք և անտառ»[1258]: Իրականացվել են նաև անտառի վերականգնման աշխատանքներ[1259]:

Կալվածական եկամուտը (վարելահողերից, արոտատեղերից և պարտեզից) 1880 թ. կազմել է 451 ռուբլի[1260]:

1255. «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 46:
1256. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 56-58:

1257. «Արձագանք», 1885, N 4, էջ 55:
1258. Նույն տեղում:
1259. «Արձագանք», 1885, N 21, էջ 308:
1260. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 98:

1886 թ. վանքապատկան են հիշվում վարելահողեր, բանջարանոց, նաև 5 սենյակ[1261]:

Հակառակ ձեռնարկված միջոցներին՝ վանքապատկան կալվածքի սահմանները (վարելահող, անտառ) դարձյալ կրճատվել են և 1890 թ. կազմել 10 դեսյատին[1262]:

1901 թ. վանքի անշարժ ունեցվածքը բաղկացած էր մի այգուց, վարելահողից և 5 սենյակից[1263]:

1910 թ. կազմված տեղեկագրի համաձայն՝ վանքի անվեճ կալվածքը կրճատվել էր մինչև 92 դեսյատին (30-ը՝ վարելահող, 30-ը՝ արոտատեղի, 32-ը՝ անտառ) և այն էլ գտնվում էր բարձիթողի վիճակում[1264]:

*Վանքի դպրատուն-մատենադարանը.* Թարգմանչաց վանքը եղել է գրի և գրչության օջախ: Ունեցել է նաև 1877 թ. հիմնադրված դպրատուն-մատենադարան[1265]: Խոսելով դպրատան մասին՝ Սարգիս Ջալալյանցը գրում է. «Եղեալ են ի սմա բազում երևելի ձեռագիր մատեանք ...»[1266]:

Վանքի դպրատունը հարստացել է նաև վանական դպրոցի գործունեության շնորհիվ: Մասնավորապես վանահայր և ուսուցիչ Թեոդորոս վարդապետ Շիրակունին հեղինակել է մի շարք աշխատություններ՝ նվիրված Նարեկացու տաղերին, հայկական նվագարաններին և այլն:

1890 թ. կազմված մի տեղեկագիր հաղորդում է, որ վանքում եղել է Զ դարի ձեռագիր ավետարան և «ճոխ մատենադարան»[1267], 1910 թ. մեկ այլ տեղեկագրում նշված է, որ հիշյալ ձեռագիրը Գանձակի փոխանորդության միջոցով հանձնվել է Սբ. Էջմիածնին[1268]:

Տարբեր աղբյուրներ հիշատակում են վանքում պահվող հետևյալ ձեռագրերի մասին.

1. Ավետարան. «Մենաստանիս մէջ կայ մի մագաղաթեայ երկաթագիր պատկերազարդ աւետարան, որ թանկագին կարող է համարուիլ ամեն մի ընտիր մատենադարանի համար թէ իւր հնութիւնով և թէ ընտիր պատկերներով: Աւետարանի գրչութեան թուականն անյայտ է. իսկ ծաղրանկար երեսներից մէկի՝ հինգերորդի ներքին տողումը երևում է. «Ի թիւ ՈՁԱ (1233). ծաղկազարդեցաւ սուրբ աւետարանս բարեխաւս առ Քրիստոս Յիսուս Տէր մեր»: 1312 թվականին ավետարանը ստացել է Սյունյաց իշխան Գրիգոր Օրբելյանն ի հիշատակ իր հանգուցյալ կնոջ Ասփայի և ընծայել Խադարի (Խաթրա) վանքին[1269]:

Ավետարանի մանրանկարներից «Յիշատակութեան արժանի է և մի պատկեր ս. Աստուածածնի, հնակերտ բոլորովին: Այս պատկերի վերայ տիրամօր կերպարանքը բոլորովին ուրիշ գծագրութիւն ունի՝ մինչև այսօր իմ տեսած պատկերներիցս բոլորովին տարբեր: Աստուածածինը նկարած է ստինքը իւր զաւակի բերանին, որ հազիւ ուրեք կարելի է տեսնել»[1270]: Նկարազարդումների առթիվ Մակար եպիսկոպոսը նշել է. «Ընտրելագոյն են պատկերներն, նկարներն, նախշերն, ծաղիկներն և թռչնագրերն, հիանալի են առհասարակ բոլոր գծագրութիւններն, անկեծ ներկեր, վայելուչ գոյներն և ամենաընտիր ոսկեզօծն: Վերջապէս մի մագնիսական զօրութիւն, որ իրեն է քաշում այցելուաց ուշադրութիւնը, գեղարվեստի այն նրբագործութիւնն է, որի նմանն հազուագիւտ է հին ձեռագրաց մէջ»[1271]:

2. Ավետարան. գրվել է 1324 թ., գրիչ՝ Վարդան[1272]:

3. Ավետարան. գրվել է 1652 թ., գրիչ՝ Գրիգոր քահանա Բյուրականցի, ստացող՝ Սարխոշ քրիստոնեա Վարդենիսցի[1273]:

4. «Արձագանք Նարեկայ տաղք». գրվել է 1870-1872 թթ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1274]:

5. «Անցք Վահանայ Մամիկոնեան». չափածո, գրվել է 1873 թ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի [1275]:

6. «Նուագարան բարեւոձ». գրվել է 1874 թ., հ. Ա, հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1276]:

7. «Նուագարան բարեւոձ». գրվել է 1876 թ., հ. Բ, հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1277]:

8. «Նուագարան բարեւոձ». գրվել է 1876 թ., հ. Գ, հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1278]:

9. «Նոր քնար հայկական». գրվել է 1876 թ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1279]:

10. «Քրիստոնէական վարդապետութիւն». գրվել է 1876 թ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1280]:

11. «Կիթառ հայկական». գրվել է 1877-1878 թթ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1281]:

12. «Նոր քնար հայկական». գրվել է 1891 թ., հեղինակ՝ Թեոդորոս վարդապետ Շիրակունի[1282]:

Հիրավի, մեծ է եղել վանահայր Թեոդորոս վարդապետ Շիրակունու դերը Թարգմանչաց վանքում.

1261. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 138, թ. 100-101:
1262. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 56-58:
1263. Նույն տեղում, ց. 14, գ. 205, թ. 231-232:
1264. Նույն տեղում, ց. 6, գ. 775, թ. 11:
1265. Նույն տեղում, թ. 9:
1266. **Ջալալեանց Ս.,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփղիս, 1842, էջ 168-169:
1267. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 100:
1268. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 9:
1269. «Արձագանք», 1886, N 21, էջ 309: Տես նաև՝ **Եգանյան Օ.,** Թարգմանչաց վանքի հայերեն ձեռագրերը, «Էջմիածին», 1971, Ե, էջ 57: **Մաթևոսյան Ա.,** Թարգմանչաց ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-ԺԱ, էջ 102, 1993, Ա-Գ, էջ 105:

1270. «Արձագանք», 1885, N 4, էջ 55:
1271. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 308:
1272. «Ցուցակ Ձեռագրաց», հ. Ա, N 2837:
1273. «Էջմիածին», 1971, Ե, էջ 57:
1274. «Ցուցակ Ձեռագրաց», հ. Ա, N 2847:
1275. Նույն տեղում, N 3094:
1276. Նույն տեղում, N 3346:
1277. Նույն տեղում, N 3150:
1278. Նույն տեղում, N 3549:
1279. Նույն տեղում, N 3550:
1280. Նույն տեղում, N 2938:
1281. Նույն տեղում, N 2737:
1282. Նույն տեղում, N 2740:

«Հայր սուրբը այն բացառիկ հոգևորականներից է, որոնք սիրահար են մեր գրաբար լեզուին: Թեոդորոս հայրը մեր հին մատենագիրներից իւր սիրոյ առարկայ ընտրել է Նարեկացու ոսկեղենիկ գրուածքը, որ ինչպէս յայտնի է, թէև արժան, բայց չափազանց ճոխ բանաստեղծական հիւսուածք է: Հայր սուրբը Նարէկի աղօթագիրքը ոտանաւորի է վերածել՝ նոյնպէս գրաբար լեզուով, իսկ այժմ էլ գրաբարից սկսել է թարգմանել աշխարհաբարի»[1283]:

Ցավոք, գրատուն-մատենադարանի ձեռագրերից շատ քիչ բան է մեզ հասել: Դեռևս 1840-1860 ական թվականներին՝ վանահայր Տեր Մովսես քահանա Եպիսկոպոսյանցի օրոք, զգալի թվով գրքեր են կորել[1284]:

Գրատուն-մատենադարանի նկատմամբ շատ վանականների ունեցած անհոգի, անտարբեր վերաբերմունքի, նրանց սահմանափակ մտածողության մասին Ս. Ջալալյանցը գրում է. «...յանզգուշութենէ բնակեալ միաբանից յանշարժութեան մնացեալ՝ մատնեալ են ապականութեան, և ապա թաղեալ են ի սիրտ երկրի ի նշան մեծի յարգանաց ըստ ռամկական մտաց նոցա»[1285]:

Հայտնի է, որ 1895 թ. գրատուն-մատենադարանը եղել է ավելի քան 1000 կտոր գիրք, մինչդեռ 1902 թ.՝ միայն 391[1286]: Ընդ որում, 1910 թ. գրատունը՝ որպես այդպիսին այլևս գոյություն չուներ. «Նախկին մատենադարանի տեղը անապահով լինելու պատճառով, Ս. Թարգմանչաց վանքի պատկանեալ բոլոր գրքերը զետեղուած են այժմս վանքի մէջ, ձախակողմեան խորանում, ուր դրուած է մի մեծ պահարան, որտեղ և դարսած են խառն ի խառն գրքերը»[1287]:

Նկատի ունենալով շուրջ երկու տասնամյակ շարունակ Թարգմանչաց վանքի գրատուն-մատենադարանում տիրող անմխիթար վիճակը՝ 1911 թ. հունվարի 12-ին Էջմիածնի Սինոդը որոշում է կայացնում. «յանձնարարել Գանձակի փոխանորդին, յիշեալ գրադարանի ձեռագրերը ուղարկել Մ. Աթոռ, գիւղական դպրոցի յարմար գրքերը տալ Բանանց գիւղի հայոց դպրոցին, իսկ միւս ծանրակշիռ գրքերը յանձնել Գանձակի Ս. Յովհաննէս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիների ծխական դպրոցների գրադարաններին»[1288]:

*Թարգմանչաց վանքի վանական դպրոց.* հայտնի է, որ մինչ դպրոց բացելն էլ վանքը կրթական ոլորտում կարևոր դեր է կատարել շրջակա բնակավայրերի համար: Վանքը «...դարերի ընթացքում, հանգամանքները ներածին չափ, կրթութեան միակ աղբիւրն է եղել մերձակայ գիւղերի համար»[1289]:

1283. «Արձագանք», 1885, N 4, էջ 56:
1284. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, թ. 56-58:
1285. **Ջալալեանց Ս.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 168-169:
1286. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 9-10:
1287. Նույն տեղում, թ. 11:
1288. «Արարատ», 1911, էջ 92:
1289. «Արձագանք», 1885, N 4, էջ 56:

Վանական դպրոցը, ինչպես նշվել է, հիմնադրվել է 1872 թ.[1290] և գործել մինչև ցարական իշխանությունների կարգադրությամբ 1885 թ. հայոց դպրոցների փակումը. «Նոյն 1885 թւին վանքում սովորել են եկեղեցական գիտելիք և ժամերգութիւն միմիայն չափահաս աղքատ գիւղացիներից մերձակայ գիւղերի, որոնք անձեռնհաս են եղել թեմական դպրանոց կամ Ս. Էջմիածնի ճեմարանը մտնելու»[1291]: Դպրոցի բացման հենց սկզբից միակ ուսուցիչը եղել է վանահայր Թեոդորոս Շիրակունին: Հայր սուրբը ուսուցանում էր հայոց լեզու՝ աշխարհաբար և գրաբար, ժամերգություն, թվաբանություն և ռուսաց լեզու[1292]: Դպրոցը՝ հանձինս գանձակեցի Ն. Տեր-Ներսիսյանցի, ունեցել է իր խնամակալը: Վերջինս էապես է սատարել դպրոցի պահպանությանը[1293]:

1870-ական թվականներին դպրոցի գործունեությունը ծավալվել է հետևյալ կերպ.

| տարեթիվ | այլ տեղ. | ուսուցիչ | աշակերտ |
|---|---|---|---|
| 1873[1294] | | | 20 |
| 1874[1295] | ար. ծխ. | 1 | |
| 1875[1296] | | 1 | 40 |
| 1876[1297] | | 1 | 40 |
| 1878[1298] | | 1 | 30 |

Արձանագրություն. վանական դպրոցի ճակատին եղել է.
*Հոգևոր դպրոցս բացաւ ի վանահայրութեան Թէոդորոս վարդապետի Շիրակունւոյ, ի 1872 ամի:*
Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Հարկ է նշել, որ դպրոցի կրթական մակարդակը ցածր է եղել: Դրա վկայությունն է թեմական վերատեսչի 1878 թ. այցելությունը դպրոց և անցկացված հարցաքննությունը. «Մեր այցելության ժամանակ վանահայրը բացակայ էր. մեզ ասացին, որ նա գնացել է Գանձակ ժողովարարութեան համար: Մենք գտանք երկու աշակերտ, որոնք գիշերօթիկ էին վանքի դպրոցում: Դոցանից նոյնպէս և Խաչակապ գիւղի քահանայից, որին հետներս տարել էինք վանքը, մենք տեղեկացանք, որ այս ուսումնարանը ունի երեսունի չափ աշակերտներ, որոնք երթևեկում են Խաչակապ գիւղից վանքի ուսումնարանը: Կամենալով փոքր ի շատէ տեղեկութիւն ունենալ այս դպրոցի ուսումնական մասի վերայ, ես հարկաւոր համարեցի թեթև քննութիւն անել ուսման մէջ այն երկու գիշերօթիկ աշակերտներին: Երկուքն ևս

1290. «Մեղու Հայաստանի», 1875, N 11, էջ 2:
1291. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 9:
1292. «Արձագանք», 1885, N 4, էջ 56:
1293. «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1433:
1294. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 68:
1295. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
1296. Նույն տեղում, գ. 52, թ. 45:
1297. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, 52, ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 46: Այլ վկայության համաձայն՝ նույն թվականին դպրոցն ունեցել է 20 աշակերտ («Մեղու Հայաստանի», 1876, N 40, էջ 3):
1298. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 178:

մոտ 14-15 ամաց էին, ուսել էին այդ դպրոցում, ինչպէս իւրեանք յայտնեցին և որքան մտաբերում եմ, երեք տարի: Երևեցաւ հետևեալ յառաջադիմութիւնը. Հայերէն լեզուից միջակ, իսկ գրութեան մէջ թոյլ (մի քանի նախադասութիւն թելադրեցինք), թուաբանութիւնից բոլորովին վատ, ամենապարզ թուաբանական խնդիրները մինչև քառասուն թիւը անկարող եղան վճռելու...»[1299]:

Հայտնի է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա Թեղուտցու և դպրոցի խնամակալ Ն. Տեր-Ներսիսյանցը մտադրություն են ունեցել վանքում բացել կենտրոնական վանական ուսումնարան[1300]: «Ամենայն ջանք գործ է դրում երկդասեան վանական ուսումնարան բանալու համար և եթէ հնար լինի՝ ուսումնարանը բացուելու է մի արուեստագիտական մասնով չափահասների համար, երբ միջոցները ներեն և կարելի լինի նորա գոյութիւնը մշտապէս ապահովել, իսկ այս ամենը մեծ կապ ունի վանական կալուածքը բարեկարգելու և արդիւնաւորելու հետ, որպէսզի վանքը անհաստատ աղբիւրների և հանգանակութեան յուսով միաբանութիւն և ուսումնարան պահելուց ազատ լինի»[1301]:

Միաժամանակ առաջ է քաշվում մի քանի խնդիրների լուծում, որոնք պետք է նպաստեին ուսումնական աշխատանքների բարելավմանը: Ըստ այդմ՝ հարկ էր «Ծաղկաձորի 200 սաժէն հեռաւորութիւնից երկաթեայ խողովակներով ջուր բերուէր մինչև «Հարանց տախտ» անուանեալ վանքին կից տափարակը (ուրիշ կերպ անհնար է ջուր բերելը աւազուտ հողով), այնտեղ մի մեծ ջրամբար շինելու, և երկրորդ՝ սայլուղին Բանանց գիւղից, մօտ 8-9 վերստ հեռաւորութեամբ, շարունակուէր մերձաւոր գիւղական ժողովրդականաց մինչև վանքը, այն ժամանակ վանքի, նորա երկդասեան ուսումնարանի, արուեստանոցի և միաբանութեան ապագայն ըստ ամենայնի և ընդ միշտ ապահովուած կը լինէր, առանց դրսից դժուար յուսալի նպաստների...»[1302]:

Սակայն վանքի ունեցվածքից ստացվող եկամուտների կրճատման հետևանքով և այլ պատճառներով հնարավոր չի եղել վանական ուսումնարան բացելու մտահղացումն իրագործել:

*Թարգմանչաց վանքի գերեզմանոց.* տարածվում է վանքի բակում՝ հիմնականում հարավային կողմում՝ շրջապարսպից ներս: Խորհրդային տարիներին մեծ մասամբ ավերվել է, պահպանված բոլոր տապանաքարերն էլ մեզ են հասել տեղահան ու կոտրատված վիճակով: Մի քանիսն էլ, որոնք տեսել և նկարագրել են ԺԹ դարավերջի տեղագիր հեղինակները, 1980 թ. դրությամբ տեղում չէին:

Ստորև ներկայացնում ենք գերեզմանոցից մի շարք արձանագրություններ.

1299. «Մանկավարժական թերթ», 1878-1879, էջ 10-11:
1300. «Արձագանք», 1885, N 4, էջ 56:
1301. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 31, թ. 97:
1302. Նույն տեղում, թ. 98:

Տապանաքար. տեղադրված է եղել եկեղեցու հյուսիսարևելյան կողմում՝ արևելյան ճակատին.

*Թվ. ՌԽԹ (1600), ես Սարուխանս կազմել տուի սուրբ խաչս հաւր իմոյ Սարգսին հոգուն:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Ծանոթ. տապանաքարն աչքի է ընկել պատկերաքանդակների առատությամբ. «...գերեզմանի մէկ երեսի վերայ փորագրուած են խաչեր, իսկ միւսի վերայ պատկերներ. երևում է պարզած սփռոց զանազան կերակրներով և մրգեղէնով. սփռոցի վերայ բազմած պատկերը սազ է ածում. նորա կողքից մի ուրիշը ծաղկի փունջ է մատուցանում, ձեռը կուրծքին դրած ի նշան յարգանաց. մի երրորդը դիմացը՝ գինու գաւը ձեռքին բաժակն է լցնում. իսկ չորրորդ անձը ներքևում չոգած՝ կրակի վերայ խորովածի շամփուրն է պտըտում» («Արձագանք», 1886, N 21, էջ 309):

Տապանաքար. տեղադրված է եղել եկեղեցու հարավային կողմում՝ արևմտյան ճակատին.

*Յիշատակ է Կարապետ Տէր Նե(ր)սէսեանցի, որ վախճանեցաւ, ի ծաղկեալ հասակի, ի վանս սրբոց Թարգմանչաց, ի 21 օգոստոսի 1879 ամի և թաղեցաւ ի գերեզմանատան Գանձակայ, ի 23 նոյն ամսոյ:*

Ավելի ցած.

*Կանգնեցաւ այս մահարձան Կարապետի Տ. Ներսէսեան, Գանձակեցի պերճ իշխան, աստէն էառ զվախճան:*

Արևելյան ճակատին.

*Զմահարձանս այս կանգնեաց ի 1879 ամի Ներսէս Տ. Ներսէսեանցն յանմոռանալի յիշատակ եղբօրն իւրոյ Կարապետի, զոր խլեաց ի կրծից նորա յանկարծակի մահն, հանդիպողք հայցեցէք նմա զհանգիստ և զխաղաղութիւն:*

Ավելի ցած.

*Ծաղկեալ յիւրն ի հասակ,*
*թառամեցաւ զէտ բուսակ,*
*զայս արձանս խաչափակ,*
*եթող յետոյ յիշատակ:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Խաչարձան. տեղադրված է եղել եկեղեցու հյուսիսարևելյան կողմում՝ մարմարակերտ, արևմտյան ճակատին՝ 4 տող.

*Աստ ամփոփին կմախք նախնեաց, | հանգուցելոց ընդ հովանեաւ | մենաստանիս Սուրբ Թարգմանչաց, | ի 450-1800 ամս:*

Արևելյան ճակատին՝ 4 տող.

*Կանգնի այս մահարձան | ի պատիւ ոսկերաց, | որք աստ երևեցան ի վերանորոգման, | 1872-1883 ամս:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 308-309: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 341:

Խաչքար. չափերը՝ 155 x 65 x 20 սմ, գտնվում էր շրջապարսպից դուրս՝ վանքի հարավարևմտյան կողմի բարձրության վրա, քիվին և հավերժության վարդյակի շուրջ՝ 3 տող.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բարէխ(աւ)ս է Յովանիսի հ(ո)գ(ոյ)ն ամէն, | թվ(ին) ՌԾԷ (1608):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 253:

Ծանոթ. խաչքարը 1989 թ. բռնագաղթի օրերին Խաչակապ գյուղի բնակիչ Իսահակ Տիգրանի Բաղյանն իր որդու՝ Սերգեյի հետ, մեծ դժվարությամբ ու զգուշությամբ փոխադրել է իրենց նոր հանգրվանը՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշեն գյուղը և տեղադրել տան բակում (այդ մասին մանրամասն տես՝ «Գարդմանք», 1996 N 1, էջ 8):

Խաչքարի պատվանդան. չափերը՝ 80 x 47 x 37սմ, կիսաեղծ 4 տող.

*Կանկ... .../երե գտ(ա)ն(ու)տ(է)/ր Սի(մ)էոնի սա... / (աւ)/րհնել մի խնդրէք(՞)... / վ(ա)սն Ա(ստուծո)յ սի-րոյն ...է:*

Հրատ. առաջին անգամ:

*Թարգմանչաց վանքի կամուրջ.* վանքից արևելք՝ դեպի Խաչակապ ձգվող ճանապարհին (սայլուղի), հայտնի բարեգործ Ա. Թայիրյանցն իր միջոցներով 1881 թ. կառուցել է տվել թաղակապ միաթռիչք մի կամուրջ. կից զետեղված էր շինարարության մասին պատմող հետևյալ արձանագրությունը.

Արձանագրություն. կամրջին կից արձանագրված է եղել.

*Շինեցաւ կամուրջս, երկու վերստ ճանապարհն սուրբ վանուցս ծախիւք երևանցի Աղէքսանդր Մկրտչեան Թայիրեանցի, 1880-1883:*

«Արձանի պատուանդանի վերայ, բարեկրօն վանահայրը առանց պ. Թայիրեանցի կամքը հարցնելու նորա պարտքերի թողութիւնն է խնդրել Ներսէս Շնորհալու երգի հետևեալ հատուածով».

*Պարգևիչ բարեաց պարգևեա իմոց պատրեացս թողութիւն:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 309:

Ծանոթ. կամրջի կառուցման ստույգ տարեթիվը՝ 1881, վկայում է պատի մեջ ագուցված սրբատաշ քարի փորագրությունը, որը մինչև 1988 թ. տեղում էր:

**Աղբյուր-հուշարձան.** կառուցված էր Թարգմանչաց վանքի մոտ՝ ճանապարհի եզրին: Ունեցել է հետևյալ արձանագրությունը.

*Հիշատակ Մելիքյան Տիգրանից հորը՝ Մելիքյան Սողոմոնին:*

Հրատ. առաջին անգամ:

## ԽԱՉԲՈՒԼԱՂ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ ափին՝ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1710-1790 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** Խաչբուլաղ, որ թարգմանվում է խաչաղբյուր, ծագում է գյուղում գտնվող համանուն աղբյուրից. «Եկեղեցուցս փոքր ինչ ներքևից բղխում է մի յորդառատ աղբիւր, որ ունի մի խաչաձև աւազան, որից առած է Խաչաղբյուր անունը»[1303]:

**Հնագիտական հուշարձաններ.** գյուղի տարածքում և մերձակայքում պահպանված հնագիտական հուշարձանները վկայում են, որ գյուղը բնակեցված է եղել պատմական անհիշելի ժամանակներից: Հայտնի հնագույն հուշարձանը գյուղի մոտ՝ Համամգյուղի վայրում, գտնված դամբարաններն են, որոնցից 1959 թ. Ադրբեջանական ՍՍՀ-ի հնագիտական արշավախումբը (Ի. Նարիմանով, Գ. Իսմայիլով) պեղել է քարահողային լիցքով ծածկված երեք դամբարանաբլուր (հիմնահողային թաղումով):

Երկու դամբարանաբլուրներում (N 1 դամբարանաբլուրում իրեր չեն եղել) հայտնաբերված հնագիտական իրերը՝ 16 մոխրասևավուն խեցանոթներ, 4 բրոնզե պարույրներ, մածուցիկ և սարդիոնից պատրաստված ուլունքներ, արծաթե կոճակ, նիզակի ծայր, թվագրվել են մ.թ.ա. Բ հազարամյակի կեսերով[1304]:

Հատկանշական է, որ նմանատիպ իրեր և խեցանոթներ հայտնի են Հայաստանի տարածքում պեղված բրոնզեդարյան հուշարձաններից:

Հայտնաբերված սպիտակ դրվագազարդումով խեցեղենն իր զուգահեռներն ունի Լճաշենի մշակույթում, որը թվագրվում է մ.թ.ա. ԺԶ-ԺԴ դարերով[1305]:

**Պատմություն.** գրավոր աղբյուրներում գյուղի մասին վկայություններ են պահպանվել ԺԷ դարի վերջերից: Մասնավորապես՝ 1691 թ. հիշվում են՝ «Ես ուստայ Պապում Խաչպուլաղցի ղապուլ արի»[1306] և «Ես տիրացու Խաչումն Խաչպլաղցի ղապուլ արի»[1307]:

Խաչբուլաղը հայաթափ է եղել ԺԸ դարի 50-60-ական թվականներին և խաշնարած մահմեդական սակավաթիվ ցեղերով կրկին բնակեցվել ավելի քան հարյուր տարի անց՝ ԺԹ դարի 70-80-ական թվականներին: 1890-ականների սկզբներին արդեն թրքաբնակ Խաչբուլաղի մասին նշվել է. «Այժմ մահմետականք են բնակում գիւղումս, ուր կայ շուկայ և առուծախ է լինում մահմետականներն ձմերանոցից ամարանոց չուելուց յետոյ»[1308]:

Ի դեպ, 1839 թ. կազմված վիճակագրական տեղեկագրում Փիբ գյուղի բնակիչների անվանացուցակում նշված տնատեր Դավիթ Խաչբուլաղյանը, անտարակույս, իր ազգանունը վերցրել է բուն ծննդավայրից: Այս փաստը հուշում է, որ Փիբում հանգրվան էին գտել Խաչբուլաղից հեռացած հայեր (տես սույն աշխ., էջ 260):

**Եկեղեցի.** ԺԹ դարավերջին Խաչբուլաղի եկեղեցին նկարագրվել է այսպես. «Աւերակիս մէջ կայ մի նշանաւոր եկեղեցի շինուած սրբատաշ քարով 4 սիւների վերայ, որ ունի ՌՃԾԹ (1710) թուականը: Իսկ փոքր ինչ հեռի է հանգստարան»[1309]:

1303. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 287:

1304. **Նարիմանով Ի., Իսմայիլով Գ.,** Հնագիտական պեղումներ Խաչբուլաղում 1959 թ. (ադրբեջաներեն), ”Известия АН Азербайджанской ССР”, серия общественных наук, 1961, N 3, с. 19-30.

1305. **Мнацаканян А**., О двухцветной керамике Лчашена, “Известия”, 1957, N 5, с. 109.

1306. «Արարատ», 1900, էջ 320:

1307. Նույն տեղում:

1308. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 287:

1309. Նույն տեղում:



***ԿԻՐԱՆՑ. տեսքը «Կաղնու խաչ» տանող ճանապարհից***

Եկեղեցին 1927 թ. կանգուն է տեսել բրաջրեցի Բաղամ Գրիգորյանը (ծնվ. 1914 թ.): Ըստ նրա վկայության՝ եկեղեցին գտնվել է ջրի ձախակողմյան սարալանջին, թաղակապ տանիքի մի մասը եղել է քանդված, մուտքի կամարի վրա եղել է հողմահար արձանագրություն: Եկեղեցու արևելյան կողմում գտնվել է սալաքարերով պատված գերեզմանոցը:

Կոթողային հուշարձաններից գյուղում պահպանվել էր «Խաչբուլաղ» աղբյուրի պատի մեջ ագուցված գեղաքանդակ խաչքար:

## ԿԻՐԱՆՑ (ՇԱՐՈԻԿՔԱՐ, ՍԵՅԻԴՔԵՆԴ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ վտակ Ոչխարաջրի ձախ՝ գլխավորապես հարավ-արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1230-1380 մ բարձրության վրա, շրջապատված անտառազուրկ բլուրներով:

Կիրանցը Սեյիդքենդ են անվանել թուրքերը:

**Պատմությունը.** գյուղի վերաբերյալ գրավոր տեղեկություններ են պահպանվել միայն ԺԹ դարավերջի տեղագիր հեղինակների նյութերում, վավերագրական փաստաթղթերում և մամուլի էջերում: Մինչդեռ գյուղում և մերձակայքում պահպանված պատմական հուշարձանները վկայում են, որ Կիրանցն ու նրա մերձակայքը բնակելի են եղել վաղնջական ժամանակներից[1310], իսկ հայաբնակ՝ առնվազն վաղ միջնադարից:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղը գտնվել է թուրք կալվածատերեր Մահմեդ աղա Աբուլ-բեկ օղլիի, Սոյուն աղա Նովրուզ-աղա օղլիի և Վալի-բեկի իրավասության ներքո[1311]:

**Բնակչությունը.** բնակիչները համարվում են բնիկներ[1312], բայց կա նաև տեղեկություն Ղարաղբափա գյուղից այստեղ փոխադրվածների մասին[1313]:

Գյուղի բնակչության 1804-1917 թվականների վիճակագրական տվյալների համադրումից երևում է, որ այդ ժամանակահատվածում գյուղն ունեցել է

1310. **Реслер Э.**, Археологические изыскания в Закавказье, с. 2. Ի դեպ, 1899 թ. Է. Ռյոսլերը Կիրանցի մերձակայքում հայտնաբերել և պեղել է բրոնզ-երկաթ անցումային դարաշրջանների վերաբերող մի քանի դամբարանաբլուրներ:
1311. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 37-38:
1312. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 287:
1313. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 314:

բնակչության աճ և իր առավելագույն թվաքանակին է հասել 1908 թ. (723 շունչ): Որոշ տարիների բնակչության թվաքանակի նվազումը հետևանք է մասնակի արտագաղթերի, մահաբեր վարակիչ հիվանդությունների:

Կիրանցաբնակ հայերի բնական աճը մեծ է եղել: Դրա վկայությունն է, օրինակ, որ երբ 1899-1900 թթ. նոյեմբեր-ապրիլ ամիսներին «ծաղիկ» հիվանդությունից 24 երեխա է մահացել, այնուամենայնիվ, գյուղում բնակչության աճ է գրանցվել[1314]:

Կիրանցաբնակ ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Յակոբ Մանուչարեան, կինն՝ Աննայի, ուստերք՝ Խաչատուր և Պօղոս, դստերք՝ Զավահիր և Խալլու, եղբօր որդիք՝ 1-ն՝ Եսայի, կին՝ Հէրիք, ուստերք՝ Մակի և Բէգլար, 2-ն՝ Սահակ, քոյր սորա՝ Մարգարիտ, եղբայրն՝ Յօհաննէս, կինն՝ Վառի, ուստերք 1-ն՝ Պետրոս, կին սորա՝ Հէրիք, ուստր Մակի, 2-ն՝ Մեսրոպ:

2. Զաքարիայ Մանուչարեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Վարդան և Աղաջան, դուստր՝ Սալբի:

3. Յովհաննէս Մարգարով, կինն՝ Խաթայի, ուստերք 1-ն՝ Սարգիս, կին՝ Սանդուխտ, ուստր՝ Աւէտ, դուստր՝ Մարգարիտ, 2-ն՝ Մարտիրոս, կինն՝ Խաթայի, 3-ն՝ Յարութիւն և 4-ն՝ Պօղոս, քոյր սցա՝ Սալբի:

4. Գալուստ Մարգարով, կին սորա՝ Հռոմ, ուստերք՝ Գրիգոր, կինն՝ Փարի, ուստր՝ Խաչատուր, 2-ն՝ Սիմէոն և դուստր՝ Մարգարիտ:

5. Քօչար Գաբրիէլեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ Խաչատուր և Գրիգոր, դուստր՝ Թանգի, մայրն՝ Գայիանէ, եղբօր որդին՝ Վէրդի, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Օհաննէս և Մէլիք, դուստր՝ Սաբէդ:

6. Թանէս Մովսիսեան, կինն՝ Թամամ, ուստերք 1-ն՝ Աղաջան, կինն՝ Հռոմ, ուստերք Մէլքում և Մկրտիչ, դուստր՝ Խաթուն, 2-ն՝ Յովսէփ, կինն՝ Թամամ, դուստր՝ Թագուհի, քոյր սցա՝ Վառի, եղբայրն՝ Օհան, կինն՝ Նազլուխան, ուստերք 1-ն՝ Պապի, կին սորա՝ Թագուհի, 2-ն՝ Մնացական:

7. Ղազար Տէր-Զաքարեան, ուստերք 1-ն՝ Եսայի, կինն՝ Ռուկի, 2-ն՝ Գալուստ, 3-ն՝ Գրիգոր և 4-ն՝ Մաթէոս, դստերք՝ Հէրիք և Զանի, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Նազի, ուստերք՝ Վարդազար, Յակոբ, Մկրտիչ, դուստր՝ Անախաս:

8. Եսայի Տէր-Զաքարեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ Ծատուր, Աւէտ և Նաւասարդ, եղբարք 1-ն՝ Աւագ, կինն՝ Սիրուննան, ուստր՝ Գրիգոր, 2-ն՝ Վարդան, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Սարգիս և Յարութիւն, եղբօր որդիք՝ Մնացական, Յօհաննէս և Յարութիւն, մայր սցա՝ Հռոմ:

9. Կարապետ Տէր-Զաքարեան, կին սորա՝ Խաթայի, ուստերք՝ Գրիգոր, Մկրտիչ և Մնացական, դուստր՝ Փարի, կին Գրիգորի՝ Պարոննան:

10. Կարապետ Սարուխանեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Ոսկան, Վարդան և Ղուլի, դուստր՝ Թանգի, եղբարք 1-ն՝ Աղամ, կինն՝ Սաբէդ, ուստր՝ Մկրտիչ դստերք՝ Աննման, Թագուհի, և Մագթաղ, 2-ն՝ Սարուխան, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Յովհաննէս, դստերք՝ Վարդի և Սիրուննան:

11. Օհաննէս Յարութիւնեան, կին սորա՝ Գիւլի, ուստր Սահակ, դուստր՝ Ազիզ, եղբայրն՝ Վիրապ, կին՝ Մարիամ:

12. Օնան Տէր-Մարտիրոսեան, ուստերք 1-ն՝ Սարգիս, կինն՝ Ազիզ, ուստր՝ Գէորգ, դուստր՝ Թէլլու, 2-ն՝ Մարտիրոս, դուստր՝ Սալբի[1315]:

1314. « Մշակ», 1900, N 77, էջ 2:

1315. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3800, թ. 29:

Ստորև ներկայացնում ենք 1804-1917 թթ. ընթացքում բնակչության թվաքանակի կրած փոփոխությունները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[1316] | 8 | 26 | 21 | 47 |
| 1839[1317] | 12 | 81 | 71 | 152 |
| 1845[1318] | | 134 | 94 | 228 |
| 1847[1319] | | 104 | 97 | 201 |
| 1849[1320] | | 112 | 94 | 225 |
| 1852[1321] | | 126 | 115 | 241 |
| 1861[1322] | 29 | | | |
| 1866[1323] | 24 | 156 | 124 | 280 |
| 1872[1324] | | 237 | 125 | 362 |
| 1873[1325] | | | | 304 |
| 1875[1326] | | | | 311 |
| 1876[1327] | | | | 326 |
| 1877[1328] | | 219 | 110 | 329 |
| 1878[1329] | | 225 | 118 | 343 |
| 1881[1330] | | 238 | 127 | 365 |
| 1882[1331] | | 240 | 134 | 374 |
| 1883[1332] | | 241 | 132 | 373 |
| 1885[1333] | | 181 | 172 | 353 |
| 1886[1334] | 35 | 237 | 199 | 436 |
| 1887[1335] | | 204 | 201 | 405 |
| 1888[1336] | | 216 | 203 | 419 |
| 1889[1337] | | 216 | 210 | 426 |
| 1890[1338] | | 218 | 214 | 432 |
| 1891[1339] | | 224 | 224 | 448 |
| 1892[1340] | | 227 | 219 | 446 |
| 1893[1341] | | 230 | 224 | 454 |
| 1894[1342] | | 237 | 229 | 466 |
| 1897[1343] | | 255 | 267 | 522 |
| 1898[1344] | | 266 | 276 | 542 |

1316. “Акты...”, т. II, с. 596.
1317. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 29:
1318. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
1319. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
1320. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
1321. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:
1322. Նույն տեղում, գ. 3835, թ.148-149:
1323. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
1324. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1325. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
1326. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
1327. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1328. Նույն տեղում, գ. 3869 թ. 54-55:
1329. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1330. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
1331. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1332. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1333. Նույն տեղում, գ. 3877, թ. 30:
1334. “Свод...”, с. 84-85. Ըստ այլ տեղեկագրի՝ նույն թվականին գյուղն ունեցել է 28 տուն («Արձագանք», 1886, N 21, 310):
1335. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
1336. Նույն տեղում, գ. 3882:
1337. Նույն տեղում, գ. 3884, թ. 227-228:
1338. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
1339. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
1340. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
1341. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
1342. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
1343. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
1344. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:













***ԿԻՐԱՆՑ. գերեզմանոցը, տապանաքար և խաչքար գերեզմանոցում, արձանագիր բեկորներ***

| | | | |
|---|---|---|---|
| 1899[1345] | 269 | 281 | 550 |
| 1900[1346] | 277 | 293 | 570 |
| 1901[1347] | 287 | 305 | 592 |
| 1902[1348] | 298 | 314 | 612 |
| 1905[1349] | 303 | 315 | 618 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1906[1350] | | 323 | 330 | 653 |
| 1907[1351] | | | | 710 |
| 1908[1352] | 93 | 356 | 367 | 723 |
| 1909[1353] | | 362 | 361 | 723 |
| 1910[1354] | | 369 | 361 | 730 |

1344. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
1345. Նույն տեղում, գ. 3903, թ. 127-128:
1346. Նույն տեղում, գ. 3905, թ. 92-93:
1347. Նույն տեղում, գ. 3906, թ. 98-99:
1348. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
1349. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
1350. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1351. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1352. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10: Ի դեպ, 1908 թ. մեկ այլ վիճակագրական տվյալի համաձայն՝ Կիրանցն ունեցել է 775 բնակիչ (“Кавказский календарь на 1910 г.”, с. 363):
1353. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ 117:
1354. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 58-59:









*ԿԻՐԱՆՑ. Երբեմնի եկեղեցու բակի գերեզմանոցն ու տապանաքարերը*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1912[1355] | | 372 | 364 | 736 |
| 1914[1356] | | | | 665 |
| 1917[1357] | 45 | | | 277 |

**Հայրենական մեծ պատերազմ.** Կիրանցից մասնակցել է 197 հոգի. զոհվել է 93-ը:

1355. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
1356. "Кавказский календарь на 1915 г.", с. 180.
1357. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166: Տվյալը թվում է անհավանական և ըստ այդմ՝ անիրական:

**Եկեղեցի.** կառուցման ստույգ տարեթիվն անհայտ է: Հիշատակվում է 1847[1358], 1852[1359], 1861[1360], 1878[1361], 1882[1362], 1885 թթ.[1363] փաստաթղթերում, ընդ որում 1861 թ.՝ Սբ. Սարգիս, իսկ 1885 թվականից՝ Սբ. Աստվածածին անուններով: Հավա-

1358. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97:
1359. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
1360. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
1361. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1362. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1363. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:



***ԿԻՐԱՆՑ. «Կաղնի խաչ» վանքի եկեղեցին, գերեզմանոցն ու խաչքար***

նաքար եկեղեցին ԺԹ դարի 60-80-ական թվականների միջակայքում ենթարկվել է վերակառուցումների, վերստին օծվել ու ստացել նոր անուն: Եղել է քարաշեն փայտածածկ շինություն: 1930-ական թվականներին քանդել և քարերը գյուղական պահեստի շինարարության մեջ են օգտագործել:

Պահեստի շենքի պատերի մեջ ագուցված են արձանագիր բեկորներ.

Խաչքարի բեկոր. չափերը՝ 80 x 29 սմ.

*Թվ(ին) ՌԻ (1571):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տեղացիների վկայությամբ՝ քարը փոխադրված է «Կաղնի խաչ» վանքից:

Տապանաքարի բեկոր. չափերը՝ 51 x 30 x 25 սմ, 4 տող.

*...հանգչի Յոո... / ...հնգետասանն նո... / ...ացղ զայս աղեր... / ...յիշեալ լիջիք յիշ...:*

Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** *Անանիա քահանա Տեր Թեոդորոսյան Շիրակունի.* քահանայագործել է ձեռնադրման օրվանից (1889 թ. հունվարի 21) մինչև 1893 թ.[1364]:

*Գարեգին Թումանյանց.* հիշվում է 1908 թ.[1365]:

**Գերեզմանոց.** գտնվում է գյուղամիջում՝ երբեմնի եկեղեցու բակում: Մասամբ ավերվել է միջով անցնող խճուղու պատճառով: Արձանագիր տապանաքարերից հները վերաբերում են ԺԹ դարի սկզբներին.

Տապանաքար. չափերը՝ 186 x 63 x 40 սմ, 5 տող.

*Այս է տապան / Մանիչարանց / Պողոսի կող/ակից Շահզիւ/լին, թվ(ին) ՌՄԿ (1811):*

Հրատ. առաջին անգամ:

1364. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 45-46:

1365. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:

Տապանաքար. չափերը՝ 140 x 62 x 27 սմ, 5 տող.

*Այս է տապան / Մարգարանց Հո/ռանի կողակից / Չանեչանի, թվ(ին) / ՌՄԿԱ (1812):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. չափերը՝ 170 x 70 x 50 սմ, 6 տող.

*Այս է տապան / Մանիչարանց / Արութիւնի / կողակից Պա/րոննանին, թվ(ին) / ՌՄԿԹ (1820):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. չափերը՝ 170 x 92 սմ, 4 տող.

*Այս է տապան Տ(է)ր Մարդիրոսի որդի / Ուռանին 1846 / ի տապանս Անախաթուն, / որ է կին՝ Ուռանին:*

Հրատ. առաջին անգամ:

**«Կաղնի խաչ» («Կանգնեալ խաչ») վանք.** գտնվում է գյուղից մոտ 1 կմ հարավ-արևմուտք՝ ոչ մեծ ձորակի մեջ:

Վանքի՝ համեմատաբար հանգամանալից առաջին նկարագրությունը տրվել է 1853 թ. կազմված մի վավերագրում, որտեղ ասվում է. «...անապատս այս գտանի կայեացեալ ի վերկոյս գիւղեն Կերաց իբր կէս վերսիւ բացակաութեամբ ի նմանէ, գտանին ի նմին եկեղեցի մի հանդերձ գաւթիւ քարաշէնք, բայց այժմ կիսախարխուլք, շուրջանակի զեկեղեցեաւն գերեզմանք անապատականացն այնորիկ, եպիսկոպոսաց, վարդապետաց, վանահարց և այլոց նմանապէս կան և հինգ մեծ և փոքր տունք և խուցք խախտեալք այժմիկ, որ եղեալ են կացարանք միաբանից: ...փոքր ինչ մէկուսի յայսմ մենաստանէ յայնկոյս ձորակեն գտանի կայացեալ մատուռյն, որ շինեալ է ի վերայ երից գերեզմանաց սրբոց նահատակաց անյայտից այժմ, զի նշմարին արձանագիրքն շիրմանցն սրբոց, ուր և դիմեն ի բազում տեղեաց ուխտաւորք ի համբոյր նոցա և ի սէր և յանուն որոց շինեալ է վերատառեալ անապատն և հաստատեալ...»[1366]:

Ուշագրավ է նաև 1886 թ. նկարագրությունը. «Գիւղիս սահմանի մէջ 2 վերստ հեռավորութեամբ անտառի մէջ մէկ մէկից մի քանի քայլ հեռաւորութեամբ կան երկու փոքրիկ քարաշէն մատուռներ, ուր յաճախում են ժողովրդականք ուխտի. մէկի դրանը գտնւում է մի մեծ խաչքար, որից երևի այդ մատուռներն անուանում է քրոջ և եղբօր գերեզմաններ, բայց թէ ովքեր են եղել դոքա, չկարողացան մեզ պատմել: Այս մատուռներից փոքր ինչ հեռու, հիւսիսակողմը, բարձրավանդակի վերայ կայ մի քարաշէն մատուռ, որ բնակիչներն անուանում են վանք. այդ եղել է ժամանակին մի մենաստան, ուր նստել են կրօնաւորներ մինչև 1838 թուականը: ...Տաճարի արևմտեան և հարաւային կողմերում կան կրօնաւորական կիսաւեր սենեակներ և տնտեսական շէնքեր»[1367]:

1366. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 14:

1367. «Արձագանք», 1886, N 21, էջ 310:






***ԿԻՐԱՆՑ. խաչքար «Կաղնի խաչ» վանքում և հատակագիծը***

Ըստ ավանդության՝ վանքում էր գտնվում Գարդմանքի հայտնի իշխաններից մեկի աճյունը. «...խորանի տակ ամփոփուած է ոմն պատուական անձի սուրբ մարմինն, որի մասին աւանդաբար ասում են թէ՝ Գարդման գաւառիս իշխող Խուրս իշխանի գերեզմանն է, որին պատկանում էին ամբողջ հանքերս»[1368]:

1986 թ. վանքի ավերակների մեջ պահպանվում էր խարխուլ պատերով մի մատուռ՝ կառուցված անմշակ քարով, կրաշաղախով: Այն ուղղանկյուն հատակագծով (արտաքին չափերն են՝ 7,90 x 4,92 մ), արևելքում կիսաշրջան խորանով միանավ կառույց է՝ մուտքը հարավային ճակատից, ծածկն իսպառ քանդված: Մատուռի ներսում կանգնեցված է ԺԲ-ԺԳ դարերին բնորոշ, պարզ հորինվածքով, անարձանագիր խաչքար (չափերը՝ 210 x 82 x 8 սմ):

1368. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 288:

*Միաբանություն.* վանքն ունեցել է վանահայր և միաբանություն, որը, ըստ վկայությունների, մի դեպքում գործել է մինչև 1834 թ., իսկ մյուսում՝ մինչև 1838 թ. «Ըստ հաւաստի վկայաբանութեան տեղեկագոյն անձանց ծերագունից ստորագրողաց ի սմին երևի, զի իբր 70 ամաց հետէ ց1834 թիւն (այն է՝ 1764-1834 թթ. - Ս. Կ.) փրկչին. որ այս չափս միայն է յայտնի նոցա, յայսմ անապատի բնակեալ են միաբանք և վանահարք, որք են ա. Սիմէօն եպիսկոպոս Օձնեցի, բ. Եփրեմ վարդապետ Խաչաբակցի, գ. Կոստանդ վարդապետ Շամքոռեցի և Կարապետ վարդապետ Մելիք-Բաբայեան, որ վախճանեալ է ի 1834 ամի փրկչին և թաղեալ ի նմին անապատին ձեռամբ ...Սարգիս վարդապետի Դաւթեանց»[1369]:

*Վանքապատկան կալվածքը.* կալվածքների մասին արժեքավոր տեղեկություն է պարունակում 1853 թ. կազմված վերոհիշյալ վավերագիրը. «...ըստ իսկագոյն ցուցմանց Կիրանց գիւղի բնակիչ ոմանց պատուաւոր անձանց և մանաւանդ գիտակ անձանց, այլևայլ անձանց սահմանակից մերձաւոր գիւղօրէից Ելիսաւէտօպօլու հաւաստի եղև թէ շրջակայ տեղիք և անդաստանք, որք պարունակին ի յետագայ սահմանս, յարևելեան կողմն է Բազկաքար ասացեալ տեղին: Զայսոսիկ տեղիքս վարելահողոց և անտառաց և այլոց անապատն ունեցեալ է ընդ տիրապետութեամբ իւրով և ի կիր ածողացն ստացեալ է միշտ զսահմանեալ վարձս իւր յօգուտ և ի սնունդ միաբանից իւրոց...»[1370]:

*Վիմագրեր.* վանքում վիմագրերի առկայության մասին առաջին անգամ ակնարկվել է 1853 թ. «Արձանագիրք եղեալք ի վերայ որմոց շինուածոցն ի հնութենէ ժամանակին գոլով մաշեալք՝ զնշանակեն ինչ տեղեկութիւն միայն յերկուց կանգնեալ արձանաց երևին»[1371]: Ցավոք, տեղեկագրի կազմողը բավարարվել է հիշյալ խաչքարերի սոսկ թվագրերն ընդօրինակելով.

Խաչքար.
*ՇԼԸ (1089):*
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. անտիպ վիմագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 14:

Խաչքար.
*Սուրբ խաչս տէրունական պարոն Հասանին, հաւուն՝ Պողղադարին, եղբաւրն՝ Ղազանին, որդոյն՝ Ալթունին, Պապաճանին, կենակցին՝ Ազիզին, Խաստրաւին, Կիլխանմին, տէր Թոմայ. թվ. ՋԻ (1471):*
Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 310:
Ծանոթ. միայն տարեթիվն է ընդօրինակվել նաև 1853 թ. (ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 14):

1369. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 14:
1370. Նույն տեղում:
1371. Նույն տեղում:

Խաչքարեր կան նաև գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ «Կաթնասարի» վրա:

## ԿՈԲԱԼՏ

Գտնվում է շրջկենտրոնից 2 կմ արևելք՝ Ներքին Քարհատ գյուղին դեմ հանդիման՝ Արթինաջրի աջ ձորալանջին:

Գյուղի անվանումը ծագել է մոտակա հանքավայրերից:

Հայտնի է, որ 1880-ական թվականների վերջին հանքատեղին ձեռք բերելու և շահագործելու մեծ ցանկություն է ունեցել գերմանական «Սիմենս» ընկերությունը: Վեճը դատական ընթացք է ստացել, բայց, ի վերջո, վճռվել է հօգուտ գանձակեցի վաճառական, Թարգմանչաց վանքի խնամակալ Ն. Տեր-Ներսիսյանցի: Ահա թե ինչ է այդ մասին 1890 թ. Ամենայն հայոց Մակար Ա կաթողիկոսին հղած իր նամակում գրել հայ վաճառական-արդյունահանողը. «...Կօբալտ անուանեալ մի թանկագին հանքատեղի ունեմ գտած Գանձակայ գաւառումը, որը ձեռքիցս խլելու համար պ. պ. եղբարց Սիմէնսների ներկայացուցիչը ամենայն աններելի միջոցներ, դաւադրութիւններ և կաշառել գործ դրաւ, բայց արդարութիւնը իմ կողմը ունենալով, բարեխոսութեամբ սրբոց Թարգմանչացն մերոց և աղօթիւք Ձերդ Օծութեան այս օրերումս հանքաբանական բարձր իշխանութիւնը յիշեալ Կօբալտի հանքը ինձ վերայ հաստատեց վերջնականապէս, թոյլ տալով գործարան շինելը և արտահանելն կօբալտի արտասահման...»[1372]:

## ՀԱՐՍՆԱՔԱՐ (ԳԱԼԻՆ-ԳԱՅԱ)

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ-արևմուտք՝ Թափան և Հացտափ գյուղերի միջև, ծովի մակերևույթից 1650-1690 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ Գալին-գայա գյուղի նախնական՝ Հարսնաքար անվանումը հայտնի էր մերձակա, մինչև 1989 թ. հայաբնակ գյուղերի ծերերին, որը, սակայն, վկայված չենք գտել գրավոր աղբյուրներում:

Հարսնաքարը հայաթափ է եղել ԺԸ դարի կեսերին:

## ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 1380-1500 մ բարձրության վրա:

Գյուղի շրջակայքը հարուստ է քարհանքերով, որտեղից հանված քարն օգտագործվել է շրջակա գյուղերի համար, այդ թվում տեղափոխվել է նաև Գետաբեկ՝ հնոցներ շինելու[1373]:

**Հնագիտական հուշարձաններ.** գյուղի տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից:

1372. ՀԱԱ, ֆ.Պ56, ց. 18, գ. 31, թ. 94:
1373. **Լալայեան Ե.,** Գանձակի գաւառ, էջ 309:

Այդ են վկայում գյուղում և շրջակայքում հողային, շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հնագիտական բազմաթիվ պատահական գտածոները՝ զանազան խեցանոթներ, բրոնզե զենքերի, զարդարանքի նմուշներ (թվագրվում են բրոնզից երկաթին անցման ժամանակաշրջանով)[1374]: Հնագիտական նմանօրինակ նյութեր են հայտնաբերվել նաև 1926 թ. Չովդառում Դ. Մ. Շարիֆովի պեղած քարարկղային թաղումներից[1375]:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ գտածոներն իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձաններում:

**Անվան ծագումը.** գյուղի պատմական անունը Հարցհանգիստ է: Անվանաձևը ոչ միայն բազմիցս վկայված է մի շարք ձեռագրերի հիշատակարաններում, այլև նոր՝ Չովդառ անվան հետ զուգահեռաբար գործածվել է ԺԹ դարավերջի գրավոր աղբյուրներում:

Հավանաբար, գյուղի ծերունիներից լսելով՝ 1886 թ. «Արձագանք»-ի թղթակիցը գրել է. «Բայց գիտենալու է, որ գիւղիս ժողովուրդը փոխադրուել է այստեղ Բաղշիկ գիւղից, որ մի ժամու ճանապարհով հեռու է Չովդառից...: Արդեօք՝ Հարցհանգիստ կամ Հարցանկիս, նախկին գիւղի՝ Բաղշիկի անու՞նն է եղել, որտեղից ժողովուրդը գաղթել է, թէ այժմու Չովդառն արդէն և գաղթականութիւնից յառաջ շէն է եղել և Հարցանկիս հին անունն է կրել: Վերջինն ենք ընդունում մենք...»[1376]:

Կարծիք կա, ըստ որի Հարցհանգիստ, այսինքն՝ Հարանց (հայրերի) գերեզման, անունը կապ ունի գյուղի հարավարևմտյան կողմի լեռան վրա եղած գերեզմանների հետ. «Սարիս վերայ կայ կռապաշտ և քրիստոնեայ տարերից մնացած շատ հանգիստներ. գուցէ այս պատճառաւ կոչուած է Հարց-հանգիստ»[1377]:

Ինչ վերաբերում է օտարամուտ՝ Չովդառ անվանը, ապա դրա բառացի թարգմանությունն է՝ անասնավաճառ:

**Հարցհանգիստը՝ գրչօջախ.** գյուղանվան հիշատակությամբ մոտակա Մածնաբերդի (Մլքնաբերդ) վանքում ստեղծված ձեռագրերից մեզ են հասել ԺԷ դարին վերաբերող մի քանի ավետարաններ: Դրանցից են՝

Ա. Ավետարան (անթվակիր). «...Դարձեալ աղաչեմ զձեզ ով սուրբ հանդիպողք յիշեցէք զկերակրողքն և զսպասաւորաւղքն մեր, զոր այլ տեղի ոչ գտաք ի հանգիստ Գանձասարա մինչ ի *Հարցանկիս* շրջելով աստ և անդ, զոր եկեալ հասաք ի աստ հեշտացաք ի սոցա ընդունելութեան, զոր տէր սատուած հատուսցէ զեղոյս ժողովրդեան մեծի և փոքու մարմնաւոր առատութիւն և հոգևոր արքայութիւն տացէ առհասարակ ամենեցուն»[1378]:

Բ. Ավետարան, 1666 թ. «...ի յերկիրս Գանջայ ի գիւղս *Հարցանկիս* ի դրան սուրբ Մալազնաբերթին ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսին, եպիսկոպոսութեան սուրբ Ամենափրկչին քաջ և արի րաբունապետին, Խաչատուր վարդապետի և թագաւորութեան Պարսից Փոքր Շահապազին, ի թվականութեանս հայոց ՌՃԺԵ ամին...»[1379]:

Գ. Ավետարան, 1669 թ. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականութեանս հայոց ՌՃԺԸ, ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսին. թագաւորութիւն պարսից շահ Սիլեյմանին, գրեցաւ ձեռամբ անարժան սուտանուն Յովանէսի ի յերկիրէ Գանձակու ի գեաւղս որ կոչի *Հարցանկի*, ի դուռն սուրբ Մալազնաբերթին ի դառն ժամանակիս աւարտեցաք որ հարկապահանջութիւնն բազմացեալ էր և անօրէնքն յամենայն ժամ խրոխտային ի վերայ քրիստոնէից ազգին...»[1380]:

Դ. Ավետարան, 1683 թ. գյուղը հիշվում է *Հերցանկիս* ձևով, գրիչ և կազմող՝ Հովհաննես երեց, ծաղկող՝ Բարսեղ քահանա, Ղազար սարկավագ, ստացող՝ Նազար[1381]:

**Բնակչությունը.** 1804-1914 թվականներին գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալների համադրումից երևում է, որ գյուղի բնակչությունն այդ տարիներին հիմնականում աճել է և իր առավելագույն թվաքանակին հասել 1910 թ. (1614 շունչ): Որոշ տարիների համար արձանագրված թվաքանակի նվազումները կապված են եղել համաճարակների և մասնակի արտագաղթերի հետ: Այսպես, հայտնի է, որ 1899 թ. նոյեմբերից մինչև 1900 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում ծաղիկ հիվանդությունից մահացել է 34 երեխա[1382]:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում 1839 թ. գյուղի (ի դեպ, նշված է Հարցհանգիստ) բնակչության հետևյալ անվանացանկը.

«1. Մակի Սահակեան այրի, ուստերք 1-ն՝ Յարութիւն, կինն՝ Հոռոմ, 2-ն՝ Մարտիրոս:

2. Ղուկաս Յակոբով, կինն՝ Սուլթան, ուստերք՝ Արղուման և Յակոբ, դստերք՝ Խալլու և Վարդի:

3. Մակի Նազարով, կինն՝ Հէրիք, դստերք՝ Խաթայի և Թամամ, եղբարք 1-ն՝ Մարգար, կին՝ Ոսկի, 2-ն՝ Մարտիրոս:

1374. **Садыхзаде Ш. Г.,** О случайных археологических находках из окрестностей сел. Човдар, “Известия” АН Азрб. ССР, серия общественных наук), 1963, N 6, с. 13-25.

1375. **Шарифов Д. М.,** Раскопки близ сел. Човдар, Таузского уезда, “Изв. Азкомстариса”, вып. 4, тетрадь 2, Баку, 1929, с. 247-248.

1376. «Արձագանք», 1886 թ. N 20, էջ 296:

1377. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 292:

1378. «Արձագանք», 1886 թ. N 20, էջ 296:

1379. Նույն տեղում:

1380. Նույն տեղում:

1381. «Յուցակ Ձեռագրաց», h. Ա, ձեռ. N 3994:

1382. «Մշակ», 1900, N 77, էջ 2:







***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). տեսարաններ գյուղից***

4. Յարութիւն Ներսեսով, կինն՝ Փարի, ուստերք 1-ն՝ Ստեփան, կինն՝ Հէրիք, 2-ն՝ Ներսէս, Մովսէս եղպայր, դուստր՝ Նազի:

5. Աղաջան Օհանով, կինն Մարգարիտ, ուստերք՝ Օհաննէս և Կարապետ, դստերք՝ Հոռոմսիմ և Թանգի, եղբարք Բ՝ Աբրահամ, կինն՝ Ոսկի, դստերք՝ Խաթուն, Փարի և Ջավահիր, 2-ն՝ Յովսէփ, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Աստուածատուր և Պետրոս, դուստր՝ Շարման:

6. Մալխաս Մալխասով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Գրիգոր, դստերք՝ Փարի և Սաբէղ, եղբայր սորա՝ Անտօն, կինն՝ Հէրիք, ուստր՝ Մանկասար, դուստր՝ Նազլու:

7. Վարդան Մալխասով, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Գէորգ, Սահակ, դստերք՝ Խաթայի և Փարի:

8. Առաքել Շրվանով, կինն՝ Հոռոմսիմ, ուստերք՝ Առուստամ, Եսայի, եղբայրն՝ Մակի, կինն՝ Հէրիք, ուստր՝ Յարութիւն:

9. Սարգիս Նազարով, կինն՝ Աննայ, ուստերք՝ Մեսրոպ և Առաքել, Մեսրոպի կին՝ Փարի, ուստր՝ Մակի, դուստր՝ Սալբի, կին Առաքելի՝ Հոռոմսիմ, ուստր Յակոբ, դուստր՝ Ոսկի:

10. Յարութիւն Եղիազարեան, կինն՝ Ազիզ, ուստերք 1-ն՝ Մոսէս, կինն՝ Հէրիք, ուստր՝ Սարգիս, դուստր՝ Նազի, 2-ն՝ Մաթէոս, կինն՝ Սուլթան, ուստր՝ Ղազար, դստերք՝ Խանում, Եասաման և Դովլաթ, 3-ն՝ Յօհաննէս, կինն՝ Հոռոմսիմ, դուստր՝ Մարգարիտ, հարսն՝ Մարիամ, ուստր՝ Օհանէս, դստերք՝ Փարի, Նախշուն, Խաթուն, Շարման:

11. Ալահվէրդի Յարութիւնով, կինն՝ Խալլու, ուստերք՝ Գրիգոր, Յարութիւն, դստերք՝ Աննման և Սիրուննան, մայրն՝ Ջանի:

12. Սահակ Վարդանով, կինն՝ Սառայ, դուստր՝ Մարգարիտ:

13. Բաղալ Գրիգորով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Սարգիս, դուստր՝ Ղումաշ:

14. Բաբաջան Գրիգորեան, կինն՝ Հէրիք, ուստերք 1-ն՝ Ստեփան, կինն՝ Հէրիք, դուստր Ջաղա, 2-ն՝ Գրիգոր, եղբարք 1-ն՝ Յակոբ, կինն՝ Սառայ, ուստերք՝ Անտօն և Յօհաննէս, դստերք՝ Մարգարիտ և Վարդի, 2-ն՝ Վարդան, կինն՝ Սառայ, ուստերք՝ Մակի, Մաթէոս, Պաղտասարն, դուստր՝ Աննայ:

15. Գաբրիէլ Տէր-Խաչատուրով, կինն՝ Մագթաղ, ուստերք՝ Յակոբ և Աւագ, դուստր՝ Մարիամ:

16. Աբգար Գրիգորով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Սիմէօն, Գրիգոր, Ներսէս:

17. Միքայէլ Յարութիւնեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ Ղազար






***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). Սբ. Հովհաննես եկեղեցի***

և Յարութիւն, դուստր՝ Վարդի, եղբայր՝ Մեսրոպ, կինն՝ Սաբէթ, ուստր՝ Արզումաև, դստերք՝ Սուլթան և Աննայ:

18. Ստեփան Դաւիթով, կին սորա՝ Ջավահիր, ուստերք՝ Դաւիթ և Սարգիս, դստերք՝ Շահզուլ, Մարգարիտ և Փարի:

19. Աբրահամ Ղազարով, կինն՝ Հոռոմսիմ, ուստերք՝ Կարապետ և Մովսէս, դուստր՝ Աննման:

20. Խաչատուր Կիրակոսով, կինն՝ Սանամ, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Սաբէդ, Մարիամ և Զաղայ, եղբայրն՝ Սողոմոն, կինն՝ Զանի, ուստերք՝ Սարգիս և Գրիգոր, դուստր՝ Խաթում, մայրն՝ Մուրվաթ:

21. Յարութիւն Ոսկանով, կինն՝ Աննայ, ուստերք՝ Մխիթար, Ոսկան և Միքայէլ, դստերք՝ Սանդուխտ և Նախշուն, եղբայրք 1-ն՝ Մարտիրոս, կինն՝ Գուլի, ուստր՝ Վարդազար, դստերք՝ Ջավահիր, Սուլթան և Հէրիք, 2-ն՝ Ալլահվէրդի, կին սորա՝ Զարնշան, ուստերք՝ Գրիգոր, Սարգիս և Մակի:

22. Առաքել Աբրահամեան, կինն՝ Սաբէտ, ուստերք՝ Ղևոնդ, Սարգիս, դուստր՝ Թէլլու, Թամամ:

23. Սահակ Տէր-Աւագեան, կինն՝ Խաթայի, ուստերք՝ Աւագ, Մկրտիչ, Պօղոս և Պետրոս, դուստր՝ Սօնայ, մայր սոցա՝ Մարիամ:

24. Վարդանան Լալիով, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Յարութիւն, դստերք՝ Սիրուննան և Գիւլի»[1383]:

Ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող առկա տվյալների համադրման արդյունքում կազմված աղյուսակը.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1804[1384] | 9 | 25 | 21 | 46 |
| 1839[1385] | 24 | 102 | 100 | 202 |
| 1845[1386] | | 173 | 155 | 328 |
| 1847[1387] | | 175 | 180 | 355 |
| 1849[1388] | | 186 | 160 | 346 |
| 1850[1389] | 32 | 192 | 189 | 381 |

1383. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 27:
1384. “Акты...”, т. II, с. 596.
1385. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 27:
1386. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
1387. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
1388. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
1389. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 110:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1852[1390] | | 199 | 194 | 393 |
| 1861[1391] | 35 | | | |
| 1862[1392] | 35 | | | |
| 1866[1393] | 62 | 297 | 226 | 523 |
| 1869[1394] | 63 | | | |
| 1870[1395] | | 312 | 236 | 548 |
| 1872[1396] | | 385 | 254 | 639 |
| 1873[1397] | | | | 573 |
| 1875[1398] | | | | 545 |
| 1876[1399] | | | | 563 |
| 1877[1400] | | 358 | 223 | 581 |
| 1878[1401] | | 361 | 229 | 590 |
| 1881[1402] | | 393 | 266 | 659 |
| 1882[1403] | | 398 | 274 | 672 |
| 1883[1404] | | 416 | 283 | 699 |
| 1885[1405] | 90 | 250 | 225 | 475 |
| 1886[1406] | 98 | 472 | 383 | 855 |
| 1887[1407] | | 284 | 265 | 549 |
| 1888[1408] | | 302 | 276 | 578 |
| 1889[1409] | | 224 | 303 | 527 |
| 1890[1410] | | 236 | 319 | 555 |
| 1891[1411] | | 246 | 326 | 572 |
| 1892[1412] | | 366 | 332 | 698 |
| 1893[1413] | | 381 | 338 | 719 |
| 1894[1414] | | 395 | 352 | 747 |
| 1897[1415] | | 454 | 386 | 840 |
| 1898[1416] | | 470 | 395 | 865 |
| 1899[1417] | | 476 | 401 | 877 |
| 1900[1418] | | 509 | 421 | 930 |
| 1901[1419] | | 519 | 425 | 944 |
| 1902[1420] | | 532 | 435 | 967 |
| 1905[1421] | | 536 | 434 | 970 |
| 1906[1422] | | 592 | 475 | 1067 |
| 1907[1423] | | | | 1356 |
| 1908[1424] | 170 | 905 | 622 | 1519 |
| 1909[1425] | | 620 | 482 | 1102 |
| 1910[1426] | | 959 | 655 | 1614 |
| 1912[1427] | | 631 | 485 | 1116 |
| 1914[1428] | | | | 1227 |
| 1917[1429] | 99 | | | 1227 |

**Հայրենական մեծ պատերազմ.** գյուղից մասնակցել է 380 հոգի: Նրանցից 178-ը զոհվել է:

Ի հիշատակ ռազմի դաշտում զոհված համագյուղացիների՝ երախտապարտ հարցհանգիստցիները գյուղում կառուցել են հուշարձան և թանգարան:

Ավագ լեյտենանտ Ղազարոս Ավետիսի Ավագյանը (1918-1945) ետմահու արժանացել է Սովետական Միության հերոսի կոչման:

**Սբ. Հովհաննես եկեղեցի.** Հարցհանգիստ գյուղում ծխական եկեղեցի է գոյություն ունեցել նախքան ներկայիս կանգուն եկեղեցու կառուցումը (1989 թ. բռնագաղթի օրերին միանգամայն անխաթար էր): Նախկին եկեղեցին, որը հիշվում է, օրինակ, 1849[1430], 1852[1431], 1861[1432] թթ. վավերագրերում, օծված է եղել Սբ. Հակոբ անվամբ: Եկեղեցու տեղում նորը կառուցվել է 1869 թ. և օծվել Սբ. Հովհաննես անվամբ. «...եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս կառուցեալ չորս սիւների վերայ, որ ունի իր հարաւային կողմում գաւիթ եւ զանգատուն»[1433]:

ԺԹ դարում եկեղեցին հայտնի էր նրանում պահված 1221 թ. Կիլիկիայի Տարսոն քաղաքում ստեղծված մագաղաթե մի ձեռագրի շնորհիվ[1434]:

Եկեղեցին ունի հետևյալ արձանագրությունները.

Բարավորին՝ 5 տող.

*Արդեամբ Չովդառայ / ժողովրդոց Ս(ուր)բ Յոհաննես / եկեղեցիս շինվեցաւ ի 1869 ամի, / եկայք առ իս ամենայն աշխատեալք / և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:

1390. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 106-107:
1391. Նույն տեղում, , գ. 3835, թ. 148-149:
1392. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 28:
1393. Նույն տեղում, , գ. 3848, թ. 57:
1394. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 142:
1395. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 49-50:
1396. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1397. Նույն տեղում, գ. 3862, թ. 59-60:
1398. Նույն տեղում, գ. 3866, թ. 45-46:
1399. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1400. Նույն տեղում, գ. 3869, թ. 55-56:
1401. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:
1402. Նույն տեղում, գ. 3879, թ. 27-28:
1403. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1404. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1405. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1885, N 4, էջ 51:
1406. ”Свод...”, с. 78-79. Այլ տեղեկության համաձայն՝ նույն թվականին գյուղն ունեցել է 60 տուն («Արձագանք», 1886, N 20, էջ 295):
1407. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
1408. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
1409. Նույն տեղում, գ. 3884, թ. 228-229:
1410. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
1411. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
1412. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
1413. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
1414. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
1415. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
1416. Նույն տեղում, գ. 3897 թ. 169:
1417. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 128-129:
1418. Նույն տեղում, գ. 3905, թ. 94-95:
1419. Նույն տեղում, գ. 3906, թ. 100-101:
1420. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
1421. Նույն տեղում, գ. 3912, թ. 226-267:
1422. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1423. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1424. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12: Ի դեպ, 1908 թ. վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն Հարցհանգիստն այդ թվականին ունեցել է 1095 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 416):
1425. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, 117: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն գյուղն ունեցել է 1519 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г., с. 207):
1426. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 60-61:
1427. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
1428. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 207.
1429. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
1430. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97:
1431. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
1432. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
1433. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 292:
1434. «Արձագանք», 1886, N 20, էջ 295-296: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 292-293:

Ծանոթ. վիմագրի առաջին հրատարակիչը կատարել է որոշ հավելումներ, ունի տարընթերցումներ, իսկ թվականն ընթերցել է՝ 1863: Հարկ է նշել, որ եկեղեցին Սբ. Հովհաննես անվամբ առաջին անգամ հիշվում է 1862 թ. (գուցե հիմնօրինեքի տարեթիվն է):

Խաչքար. պատի մեջ.

*Թվ(ին) ՌՀ (1621):*

Հրատ. «Դիվան...,» V, էջ 264:

Խաչքար. պատի մեջ.

*Թվ(ին) ՌՃ (1651):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 264:

Եկեղեցին գործել է մինև 1928 թ.[1435]: Խորհրդային տասնամյակներին շենքը օգտագործվել է որպես պահեստ:

Եկեղեցին ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ կառույց է, արևելքում՝ կիսաշրջան խորանով, կից ուղղանկյուն ավանդատներով: Աղոթասրահի երկու զույգ սյուների և որմնասյուների վրա հենված թաղակապ ծածկն առնված է երկթեք տանիքի տակ: Մուտքը հարավայինն ճակատից է և բացվում է նույն կողմից եկեղեցուն կից կրկնահարկ զանգակատան առաջին հարկի մեջ: Կառուցված է կոփածո քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 17,70 x 11,75 մ:

**Քահանա.** 1849 թվականից շուրջ 20 տարի Հարցհանգիստը սեփական քահանա չի ունեցել. 1869 թ. գյուղի համար քահանա է ձեռնադրվել *Ղազար Տեր-Մխիթարյանցը*[1436]:

*Վարդան Ոսկանյան Երեմյանց.* ձեռնադրվել է 1898 թ.: Ուներ 6 երեխա՝ Մարիամ (ծնվ. 1882), Աստվածատուր (ծնվ. 1883), Արսեն (ծնվ. 1885), Հերիք (ծնվ. 1889), Արշակ (ծնվ. 1895), Խաչատուր (1898)[1437]:

Ըստ հիշողությունների՝ Ուսեփանց տերտերը վերջին մարդուն (Գագիկ Մակիչի Վանյանին՝ Պապունց Գագո) կնքել է 1932 թ.:

**Մածնաբերդ.** գյուղի մերձակայքում պահպանված պատմական կարևոր հուշարձաններից է Մածնաբերդը: Գտնվում է գյուղից հարավ-արևելք՝ անընդհատ ծառերով շրջապատված լեռան վրա. «Գիւղից 3 վերստ հեռու, Գանձակի ճանապարհի վերայ գտնվում են երեք հատ բարձր անտառապատ լեռներ, որոնց ամեն մինի գագաթումը կայ մի բերդ»[1438]: Բերդասարի խոցելի հատվածներն ամրացված են եղել անմշակ քարով, կրաշաղախով շարված բրգաշար պարսպապատով, որոնք ԺԹ դարի վերջերին արդեն քայքայված էին ու մասամբ ավերված[1439]: Ամրոցը կոչվել է Մլզնաբերդ, Սուրբ Մալազնաբերդ կամ Մածնաբերդ:

Պատմական աղբյուրներում հիշատակվում է որպես Կյուրիկյան Աղսարթանի նստավայր[1440]: Կյուրիկյան թագավորության անկումից հետո Կյուրիկե Ա-ի որդի Դավիթը (1113-1145) մոտ 1113-ին հաստատվել է Մածնաբերդում և հիմք դրել Մածնաբերդի Կյուրիկյան իշխանությանը (գոյատևել է մինչև ԺԳ դարավերջը): Իշխանության սահմանները տարածվել են նաև մերձակա գավառների ու բերդերի վրա. «Իսկ ի զարմէ թագաւորացն Բագրատունեաց մնացին ի Վիրս և ի Մածնաբերդ և ի Նոր բերդ, որք կալան զբազում գաւառս և շինեցին բերդս բազումս...»[1441]: Հայտնի է, որ միաժամանակ Նոր բերդի Կյուրիկյանները տիրել են Մածնաբերդը. «Իսկ Դաւիթ իշխան Նոր բերդին խաբեաց զմանուկն Աղսարթան և փեսացոյց զնա ի դուստրն իւր և ինքն տիրեաց Մածնաբերդոյ և ապա եհան զդուստր իւր և նմանէ»[1442]:

ԺԲ դարի 1-ին կեսին Մածնաբերդը ենթարկվել է Գանձակի սելջուկյանների հարձակումներին, իսկ ԺԳ դարի կեսին այն կարճ ժամանակով տիրել են մոնղոլները: Հայտնի է, որ 1170 թ. վախճանված Մածնաբերդի թագավորին ամփոփել են Կյուրիկյանների տոհմական դամբարանում՝ Հաղպատում. «Ի ՌԺԹ վախճանի թագաւորն Կիւրակէ ի Մ[ա]ծ[ն]աբերդի և բերաւ ի հանգիստ նախնեաց իւրոց ի Հաղբատ»[1443]:

1886 թ. Մածնաբերդին անդրադարձած ժամանակի մամուլը նշել է. «Բերդից այժմ հազիւ նշմարելի պարսպի հետքեր և բնակարանների աւերակներ կան...»[1444]: Ամրոցի ավերակների մեջ 1880-ական թվականներին եղել է ԺԲ դարին վերաբերող երեք խաչքար. «...լեռներից մինի ստորոտում կայ մի տափարակ տեղ, որ հողից մի թզաչափ բարձր երևում է շրջանաձև պարիսպ, փորագրած խաչաձև քարերով: Այդ պարսպի մէջ տեղը փորելու ժամանակ դուրս եկան երեք հատ սպիտակ քարեր»[1445]: Դրանց վրա եղել են հետևյալ արձանագրությունները.

Խաչքար. գեղաքանդակ, ստորին մասում՝ 8 տող.

*Թվ(ի)ն ՈԳ (1154). անուամբն Ա(ստուծո)յ ես Մարգարիտ, դուստր՝ Ոխտիկայ, կանգ(ն)եցի զս(ուր)բ նշանս, ի փրկութի(ւ)ն հոգոյն՝ Վարդըմբերին և Վարդաւորին, Մխիթարայ և Կանանին, որք յաղաւթս յիշէք եւ զԱստուծ, որ գործող էր խաչիս:*

Հրատ. «Նոր-Դար», 1886, N 120, էջ 1: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 292: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 309-310: «Դիվան...», V, էջ 264-265:

Ծանոթ. խաչքարը հայտնաբերել և վիմագիրն առաջին անգամ հրատարակել է «Նոր-Դարի» թղթակիցը: Մի քանի տարի անց խաչքարը Սբ. Հովհաննես եկեղեցում տեսել է Մ. Բարխուտարյանցը. «Եկեղեցումս կայ մի սպիտակ փոքր և հին խաչարձան, որ բերուած է Մլզնաբերդից, որ զարմացնում է այցելուները իւր գեղարուեստի նրբագործ քանդակներով»: Ե. Լալայանն

1435. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
1436. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10: Նաև՝ գ. 4254, թ. 142:
1437. ՀԱԱ, Պ461, ց. 1, գ. 12, թ. 70-71:
1438. «Նոր Դար», 1886, N 120, էջ 1:
1439. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 293:
1440. **Կիրակոս Գանձակեցի,** էջ 153: Նաև՝ «Դիվան...», V, էջ 265:
1441. **Մխիթար Այրիվանեցի,** էջ 153:
1442. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:
1443. «Մանր ժամանակագրություններ», Բ, Երևան, 1956, էջ 502:
1444. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:
1445. «Նոր-Դար», 1886, N 120, էջ 1:








***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). Մածնաբերդի վանք. եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, արևմուտքից, եկեղեցու նորոգության մասին պատմող արձանագրությունն ու խաչքարեր՝ ագուցված արևմտյան ճակատում***




***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). Մածնաբերդի վանք. եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, խաչքարեր եկեղեցու ներսում***

օգտվել է Բարխուտարյանցի վերծանությունից ու անփոփոխ զետեղել իր աշխատության մեջ: Ավելի ուշ եկեղեցուց խաչքարն անհայտացել է: Համենայն դեպս, Ս. Բարխուդարյանի այցելության ժամանակ (1960-ական թվականների սկզբներին) տեղում չի եղել: Երախտաշատ վիմագրագետն արձանագրությունը վերծանել է ըստ Հայաստանի պատմության թանգարանում պահվող խաչքարի լուսանկարի:

Խաչքար.

*Թիվն ՈԽԴ (1195) էր. ես Թարին կանգնեցի զուրբ նշանս ի բարեխաւսութիւն հաւր իմոյ՝ Հայրապետին եւ եղբաւր իմոյ՝ Սերոբին, որք երկրպագանէք յաղաւթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ, ամէն:*

Հրատ. «Նոր-Դար», 1886, N 120, էջ 1:

Խաչքար.

*Թի(վն) հա(յոց) Ո... որդի սուրբ ուխտիս Եիժադանգ վարդապետ նա հանեի ու ատէի Մխիթար կանգնեցաք զսուրբս տարան վարդապետին բարեխաւսութիւն եղբարին մերոյ:*

Հրատ. «Նոր-Դար», 1886, N 120, էջ 1:

Ծանոթ. ընթերցումը, անշուշտ, սխալաշատ է:

Մածնաբերդի մոտ էր գտնվում Գանձակի Ջավադ խանի ամառանոցներից մեկը. «Բերդիս արևմտակողմը, մի այլ բարձր լերան վերայ ցոյց են տալիս Գանձակի Ջաւատ-խանի ամրոցն, որ եղել է նորա ամարանոցը»[1446]:

**Մածնաբերդի վանք.** գյուղից 2,2 կմ հարավ-արևելք՝ շրջապատի նկատմամբ առանձնացած լեռան գագաթին (ծովի մակերևույթից 1648 մ) գտնվում է Գարդմանքի միջնադարյան նշանավոր

1446. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:





***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). խաչքար և տապանաքար «Ղրմրադա եղցի» հնավայրում***





***ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). Մածնաբերդի բերդասարը (լուս. Ռ. Աբգարյանի) և Մածնաբերդից հայտնաբերված խաչքար, 1154 թ. (Հայաստանի պատմության թանգարան)***

վանքերից մեկը, որը, իր անունը վերցնելով մոտակա բերդից, հայտնի է Մածնաբերդի վանք անվամբ:

Վանքը բաղկացած է մեկ եկեղեցուց, որը հայտնի է Սբ. Վարդանանց զորավարաց[1447] և Սբ. Սարգիս անուններով (եկեղեցու 1891 թ. նորոգության արձանագրության մեջ):

Քանի որ 1891 թ. Մածնաբերդի վանքի եկեղեցին հիմնովին վերակառուցվել է և այլափոխվել, ուստի բացառիկ արժեք է ներկայացնում մինչ վերակառուցման շրջանին վերաբերող ականատեսի թեկուզ և համառոտ ահա այս նկարագրությունը. «...կայ մի փոքրիկ եկեղեցի քարաշէն, տանիքը խոնարհած, ուր յաճախում են Ջատկին և այլ տօներին ուխտավորներ»[1448]: 1890-ական թվականների սկզբներին վանք այցելած Մակար եպիսկոպոսն արդեն նշել է «...նախկին վանքի տեղում շինուած է երկու երկաթակապ կամարների վերայ մի փոքր եկեղեցի»[1449]:

Հարկ է նշել, որ մինչ 1891 թ. գոյություն ունեցած վանքի կիսավեր եկեղեցին արդեն իսկ ավելի վաղ է (1631 թ.) նորոգված եղել: Այդ է վկայում հին շենքի բարավորի արձանագրությունը, որը, բարեբախտաբար, վերծանվել է մինչ վերակառուցումը:

Մածնաբերդի վանք. բարավորին, չափերը՝ 125 x 58 սմ, բանաքազույն ավազաքար.

*Կամաւն Աստուծոյ ես Մելիք Ի... նորոգեցի սուրբ մենաստ... յիշատակ հոգոց իմոց և կողակիցն Հիրիխանին և որդիքն իմ Իսախանին, Աղաճանին,*

1447. «Նոր-Դար», 1892, N 126, էջ 2:

1448. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:

1449. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 293:

*Ամիրճանին և ծնողացն իմ Արիստակէս քահանային և մայրն իմ Պարոն Գիւլինին, ի ժամանակս Շահսէֆին ...ուք... Ղուլիխանին կաթուղիկոս Գանձաքա Տէր Գրիգորին, թվ. ՌՁ... (1630-ական):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:

Ծանոթ. Գանձակում Գրիգոր Աղվանից կաթողիկոսը գահակալել է 1634-1653 թթ.: Ի դեպ, վիմագրի՝ դեռևս անեծ ինչ-ինչ հատվածներ մեզ հաջողվեց ընթերցել 1986 թ.: 1891 թ. վերանորոգման ժամանակ արձանագրությունն ակնհայտորեն ավելի է վնասվել (սկզբի տողը և եզրերի որոշ տառեր մնացել են մուտքի կամարի քարերի տակ):

Եկեղեցու՝ 1891 թ. նորոգության մասին պատմող արձանագրությունը նույնպես արևմտյան ճակատում է՝ քարավորից վեր:

Մածնաբերդի վանք. քարավորից բարձր, մարմարե ուղղանկյունաձև սալին, 8 տող.

*Հնադարեան ուխտատեղիս յան/ուն Ս(ուր)բ Սարգսի, որ է Մլգնաբերդ / հիմնովին նորոգեց գանձակեցի / Սողոմոն Յար(ութիւնեան) Նալչազարեանցն / ծախիւք իւրովք, ի յիշատակ / իւր կնօջն Բալախանումի, որդ/ւոյն Լեւօնի եւ համայն ննջեցե/լ/ոց իւրոց, ի 1891, ՌՅԽ ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 293:

Եկեղեցու վերականգնման աշխատանքներից հետո՝ 1892 թ. պետք է տեղի ունենար օծման հանդես: Այդ առթիվ ժամանակի մամուլը նշել է. «Չովդառ գիւղի մօտ ս. Վարդանանց զօրավարաց անուամբ Մածնաբերդ ուխտատեղին գեղեցիկ և ամուր կերպով վերանորոգած է իւր հաշուով գանձակեցի պ. Սողոմոն Նալչակարեանցը. սպասւում է, որ օգոստոսի 16-ին, ս. Աստուածածնայ վերափոխման տօնին, կը ստացուի բարձրագոյն հոգևոր իշխանութեան կարգադրութիւնը յիշեալ մատուռը օծելու մասին, որի համար Գանձակի հոգևոր կառավարութիւնը վաղուց գրած է ուր հարկն է»[1450]:

Վանքի եկեղեցին ունի միանավ բազիլիկի հորինվածք: Թաղակապ տանիքն առնված է երկթեք ծածկի տակ: Թաղը կրում են աղոթասրահի երկայնական պատերի երկու զույգ որմնասյուներին հենված որմնակամարները: Հյուսիսային պատի մեջ մկրտարանի ավազանն է: Միակ մուտքը՝ կամարակապ եզրակալով, բացված է արևմուտքից: Լուսավորությունն իրականացվել է հյուսիսային, հարավային պատերի ուղղանկյուն, կամարաձև վերնամասով չորս պատուհաններից (հյուսիսային պատի մի պատուհանը հետագայում փակվել է) և արևելյան ու արևմտյան պատերի (վերջինս ունի կլոր բացվածք) մեկական, ավելի նեղ լուսամուտներից:

Եկեղեցին կառուցված է անտաշ քարով, կրաշաղախով: Անկյունաքարերը, բացվածքների եզրաքարերը, որմնասյուները, որմնակամարները սրբատաշ քարից են: Արևմտյան ճակատի գագաթին կանգուն է համակ սրբատաշ քարով կառուցված, սրածայր վեղարով ավարտվող քառասյուն փոքր զանգակատունը: Արտաքին չափերն են՝ 12,07 x 6,75 մ:

Եկեղեցու պատերին ներքուստ և արտաքուստ ագուցված են խաչքարեր, որոնք հիմնականում արձանագիր են: Ահա դրանք.

Խաչքար. չափերը՝ 42 x 35 սմ, խորանի խորշերից մեկում՝ 2 տող.

*Թվ(ին)/ ՌԴ (1555):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 265:

Խաչքար.

*ՌՂ (1641):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 265:

Խաչքար. մկրտարանի մեջ, քիվատակին՝ 2 տող.

*Թ(վին)/ ՌճԽԷ (1698):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 265:

Խաչքար. չափերը՝ 35 x 25 սմ, բեմի անկյունում, քիվին՝ 1 տող.

*ԸՂՊԱԹԻՆ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 265:

Ծանոթ. նախկինում ընթերցել են՝ *Շպաթին*:

Խաչքար. չափերը՝ 70 x 40 սմ, արևմտյան ճակատում.

*Ս(ուր)բ խ(ա)չս / բարէխաւս / Սալվարի / հոգոյն/ թվ(ին) Ռ...:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 265:

**Շատախ գյուղատեղի.**

*Տեղադրություն.* գտնվում է Հարցհանգիստ-Խաչակապ գյուղերի միջև՝ առաջինից 2,6 կմ հարավ, Շատախ (Դանայեր) գետակի ձախ ափին, ծովի մակերևույթից 1360-1400 մ բարձրության վրա:

*Պատմություն.* եղել է երկրամասի պատմական ու առնվազն վաղ միջնադարից հայաբնակ գյուղերից մեկը: Հայտնի է, որ Պռազյան ազգատոհմը Շատախից փոխադրվել է Խաչակապ:

Այստեղ է հայտնաբերվել Արցախի ստույգ թվագրված (981 թ.) խաչքարերից մեկը:



**ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ (ՉՈՎԴԱՌ). Մածնաբերդի վանքի եկեղեցու հատակագիծը**

1450. «Նոր-Դար», 1892, N 126, էջ 2:

Գրավոր աղբյուրներում գյուղն առաջին անգամ հիշատակվում է 1621 թ. «...ի երկիրս Գանջոյ, ի գուղս Շատախ կոչէ, ի դրան Աստուածածնիս...»[1451]:

Գյուղատեղիի հուշարձանները, մասնավորապես՝ խաչքարերը, ժամանակի ընթացքում անխնա թալանվել են շրջակա գյուղերի և առանձնապես Խաչակապի բնակիչների կողմից: Ցաք ու ցրիվ արված մի քանի խաչքարերի արձանագրությունները բերում ենք ստորև.

Խաչքար. ճակատին՝ 4 տող.

*Հեթում / կանգ(ն)եա/ց զխաչս. / ՆԼ (981):*

Հրատ. «Դիվան...» V, էջ 254:

Ծանոթ. գտնվել է 1965 թ. Շատախի «Նահատակի ձոր» տեղամասում:

Խաչքար. ստորին մասում՝ 4 տող.

*Ես Դալաթաւ(ո)րս կ(ա)նկ(ն)եցի զխ(ա)չս ինձ եւ / ծնողաց իմ Իսպատիարին, Էլմին, / ՋՀ/Ե (1526):*

Հրատ. «Դիվան...» V, էջ 255:

Ծանոթ. Շատախի ավերակներից խաչքարը տեղափոխվել և կանգնեցվել է Խաչակապ գյուղից դեպի Թարգմանչաց վանք տանող ճանապարհի եզրին:

Տապանաքար. մեծ, օրորոցաձև, հարավային կողին՝ կենդանային տեսարան, արևմտյան ճակատին՝ 8 տող.

*Թվ(ին) ՌԷ (1558) / ես՝ Սարք/իս, կամաւն / Ա(ստուծո)յ ... / ...կանկնեցի / զխաչս բարէ/խաւս որդ/ո(յ)ն իմոյ:*

Հրատ. «Դիվան...» V, էջ 255:

Ծանոթ. բերված է Շատախից և տեղադրված Խաչակապի գերեզմանատան նոր գերեզմանի վրա:

Խաչքար.

*Թվ[ին] ՌԼԸ (1589):*

Հրատ. «Դիվան...» V, էջ 255:

Ծանոթ. ութ խաչքարերից է, որ բերվել է Շատախից և օգտագործվել Խաչակապ գյուղի «Գոմեր» կոչված վայրում՝ որպես ջրի գուռ:

*Շատախը՝ գրչօջախ.* Շատախի համար առանձնապես ծաղկուն ու բարգավաճ է եղել ԺԷ դարը, երբ այստեղ Հովհաննես, Դավիթ երեցները, Նազար դպիրը և ուրիշներ ստեղծել, կազմել և նորոգել են մի շարք ձեռագրեր:

Ստորև ներկայացնում ենք Շատախի գրչօջախում ստեղծված և մեզ հասած ձեռագրերի ժամանակագրական ցանկը.

1627 թ. Հովհաննես երեց Շատախեցին Խորանաշատի վանահոր պատվերով նորոգել է 1476 թ. գրված մի ավետարան՝ «...ի դրան սբ. նորակնունք Աստուածածնիս...» (գյուղի անունը նշված չէ)[1452]:

1634 թ. գրիչ Հովհաննես երեցը հերթական ձեռագիրը հեղինակել էր «...ի յերկիրս Գանձակայ, ի ձորս Գանջայ, ի գիւղն իմ որ կոչի Շատախ: Աւարտեցաւ ի դրան Ս. Կաթուղիկէիս, ...և առաջնորդ սբ. ուխտիս պարոնտէր Մկրտչի...»[1453]:

1636 թ. ձեռագիրը գրվել է. «...ի յերկիրս Գանճայ, ի գիւղս Շատախ, ձեռամբ մեղօք լի Յոհանէս իրիցու ի խնդրոյ մեծաշուք մէլիք Սիմաւոնին...»[1454]:

1637 թ. դարձյալ Հովհաննեսը, բայց արդեն քահանա՝ «...ի դրան Ս. նորակնունք Աստուածածնի, ի յերկիրս Գանձակոյ, ի ձորս Գանճոյ, ի գիւղս Շատախ կոչեցեալ...», հեղինակել է հերթական ձեռագիրը[1455]:

1644 թ. գրիչ Դավիթ երեցը՝ «...ի յերկիրս Գանձոյ, ի գեղն Շատախ, ի դուռն Աստուածածին եկեղեցւոյ...», հեղինակել է մի ձեռագիր ավետարան[1456]:

1661 թ. Շատախի տանուտեր Խաչատուրի պատվերով (ստացող) գրիչ Նազար դպիրը հեղինակել է ևս մեկ ավետարան[1457]:

1687 թ. Բարսեղ գրիչը մելիք Հախնազարի ցանկությամբ լրացրել է Հովհաննես Շատախեցու 1636 թ. ստեղծած ձեռագիրը[1458]:

Շատախեցիներ էին նաև Բանանց (1625 թ.)[1459] և Շաքարբեկ (1633 թ.)[1460] գյուղերում ստեղծված ձեռագրերի հեղինակները:

**Եկեղեցի.** կառուցման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ չունենք, սակայն նրա գոյությունը փաստացի բազմիցս վկայված է ԺԷ դարում՝ Սբ. Աստվածածին անունով:

**Աղբյուր-հուշարձան.** գտնվում էր գյուղատեղիի հարավարևմտյան կողմում, Շատախ գետակի ձախ ափին, կամրջի մոտ (Ի դար): Ուներ երկլեզվյան (հայերեն և ռուսերեն) հետևյալ արձանագրությունը.

*1941-1945 / պատերազմում զոհված Ս. Հարություն / Ալկարյանի հիշատակին. / իր որդիներից:*

Հրատ. առաջին անգամ:

## ՀԱՅՏԱՓ (ԱՍՏԱՖ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ-արևմուտք, Շամքոր գետի աջ վտակի հարավարևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1500-1680 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի մասին գրավոր տեղեկություններ մեզ չեն հասել: Պահպանված պատմական հուշարձանները վկայում են, որ մերձակա գյուղերի նման հայաթափ է եղել ԺԸ դարի կեսերին: Թուրք խաշնարածներով բնակեցվել է խորհրդային տարիներին:

**Գերեզմանոց.** տարածվում է գյուղի հարավարևմտյան եզրի լերկ բլրալանջին: Առկա են արևել-

1451. «ԺԷԲ», էջ 1:
1452. Նույն տեղում, էջ 255:

1453. «ԺԷԲ», էջ 560:
1454. Նույն տեղում, էջ 654:
1455. Նույն տեղում, էջ 710:
1456. «ԺԷԳ», էջ 150-151:
1457. «ՑՁԲ», էջ 28, ձեռ. N 5072:
1458. «ՑՁԱ», ձեռ. N 713: «ԺԷԲ», էջ 654:
1459. Նշվ. աշխ., էջ 186:
1460. Նշվ. աշխ., էջ 531: Նաև՝ «Արձագանք», 1886, N 12, էջ 162:



***ՂԱՅՏԱՓ. գերեզմանոց***

քից-արևմուտք ուղղվածությամբ 100-ից ավելի անմշակ սալաքարեր: Կան նաև երկատիճան եզրերով մշակված մի քանի ցածր, ուղղանկյուն տապանաքարեր: Թաղումներն ունեն խիտ դասավորություն: Պահպանված տապանաքարերը (բացառությամբ մեկից) զուրկ են հարդարանքից և արձանագրություններից: Հնավայրը թվագրվում է ԺԴ-ԺԸ դարերով:

**Աղիշեն (Ատիշեն) գյուղատեղի.** գտնվում է Հացտափից 2 կմ արևմուտք՝ Շամքոր գետի աջ արևմտահայաց անտառապատ լեռնալանջին՝ Փառիսոս վանքի դեմ հանդիման: Պահպանվել են գերեզմանոցն ու եկեղեցին[1461]:

## ՂԱԲԱՂԹԱՓԱ (ԿԱԲԱՂԹԱՓԱ, ԴԱՄԺԱԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է Դաշկեսան շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1580-1670 մ բարձրության վրա՝ շրջապատված ալպիական մարգագետիններով:

**Պատմություն.** հին գյուղ է և, ըստ այդմ, հայաբնակ առնվազն վաղ միջնադարից: Պատմական հայկական անվանումը մոռացության է մատնվել: Ղաբաղթափա թուրքերեն է, որի թարգմանությունն է՝ Դդում բլուր: Խաշնարածները գյուղը կոչում էին նաև Դամժալի:

Բարգավաճ ու ծաղկուն է եղել հատկապես ԺԷ դարում, երբ կառուցվել է իր չափերով բավականին ընդարձակ եկեղեցու հոյակապ շենքը (կանգուն էր մինչև 1988 թ.):

**Բնակչություն.** մինչև ԺԷ դարի կեսերը եղել է գավառի առավել հայաշատ բնակավայրերից, ապա՝ հայաթափվել, իսկ ԺԷ դարի 70-80-ական թվականներից վերածվել է թուրք խաշնարածների հանգրվանի: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1462] | 89 | 361 | 265 | 636 |
| 1907[1463] | | | | 631 |
| 1914[1464] | | | | 510 |
| 1976[1465] | | | | 509 |

**Եկեղեցի.** գտնվում է գյուղի կենտրոնում՝ ճանապարհի եզրին: Ուղղանկյուն հատակագծով, եռանավ բազիլիկ շինություն է: Երկթեք ծածկի տակ առնված թաղակապ տանիքը ներքուստ պահում են երկու զույգ սյուների և որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Երեք նավերից կենտրոնականն արևելքում ավարտվում է կիսաշրջան խորանով, եզրայինները՝ ուղղանկյուն ավանդատներով: Մուտքը բացված է հարավային ճակատից: Լուսավորությունն իրականացված է արևելյան, արևմտյան ու հարավային ճակատների երեքական, դեպի ներս լայնացող նեղ լուսամուտներով: Խորանի, ավանդատների և հյուսիսային ու հարավային պատերի մեջ բացված են փոքր, ուղղանկյուն խորշեր: Հյուսիսային կողմում մկրտարանի զույգ ավազանները են՝ հատկանշական առանձնապես ԺՉ-ԺԷ դարերի մեր եկեղեցիներին:

Եկեղեցին կառուցված է կոպտատաշ քարով, կրաշաղախով: Մույթերը, որմնակամարները, մուտքի բարավորն ու անկյունաքարերը սրբատաշ են: 1986 թ. ականատես եղանք ներսում գանձախուզության հետևանքով առաջացած բազմաթիվ քանդված հատվածների: Արտաքին չափերն են՝ 21,75 x 13,30 մ:

Եկեղեցու սյուներին, երկու տեղում եղել են հակիրճ հիշատակագրություններ: 1986 թ. այդ քարերը տեղում չէին:

Եկեղեցի. սյան վրա եղել է.

*Ես՝ Խոսրովս, թվ(ին) ՌՃԽԱ (1692):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 312:

Եկեղեցի. սյան վրա եղել է.

*Ի թ(վին) ՌՃԾԵ (1706):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 302: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 312:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին եկեղեցու շենքն օգտագործվել է որպես մահմեդական դպրոց (մեդրեսե)[1466]:

1461. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 303, 305:

1462. "Свод...", с. 78-79.
1463. "Кавказский календарь на 1910 г.", с. 264.
1464. "Кавказский календарь на 1915 г.", с. 116.
1465. «ՍՍՀ», հ. 2, էջ 539:
1466. «Արձագանք», 1888, N 6, էջ 72:













***ՂԱԲԱՂԹԱՓԱ. Հատվածներ եկեղեցուց և հատակագիծը***

## ՂԱԶԱԽԼԻ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք: Հյուսիսից կից է պատմական Գարդ-ման (Գրթմանիկ, Ամրվար) գյուղին:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացրել են Ի դա-րի սկզբներին հայաթափի հին գյուղատեղիում նստակեցության անցած թուրք խաշնարածները: 1980-ական թվականների սկզբներին գյուղի տա-րածքում նկատելի էին բնիկներից մնացած առան-ձին շինությունների պատերի մնացորդներ:

1914 թ. ունեցել է 200 բնակիչ[1467]:

## ՂԱԶԱԽՅՈԼՉՈՒԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ՝ Արթի-նաջուր գետի աջակողմյան հարավարևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1610-1700 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը հիմնվել է ԺԹ դարավերջին հայաթափի հին գյուղատեղիում:

1467. “Кавказский календарь на 1915 г.”, с. 131.








1886 թ. ունեցել է 27 տուն, 132 շունչ (72 ար., 60 իգ.)[1468], 1914-ին՝ 345 բնակիչ[1469]:

## ՂԱՐԱԹԱՂԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ՝ Գանձակ գետի և վերջինիս ձախ վտակ Դաստափորի միջև:

Պատմական անունը մոռացության է մատնվել: Ի դարասկզբին հայաթափ գյուղատեղիում բնակություն են հաստատել նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը:

1914 թ ունեցել է 205 բնակիչ[1470]:

## ՂԱՐԱԿՈՒԼԼԱՐ (ԲԱԼԼՈՒՋԱ)

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ՝ Գանձակ գետի Դաստափորի վերին հոսանքի շրջանում՝ ձախ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1600-1700 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: 1880-ականների վերջերին դեռևս անբնակ ու ամայի է[1471] և խաշնարածները օգտագործում էին իբրև ամառանոց: Ավելի ուշ նրանք մշտական բնակություն են հաստատել գյուղատեղիում և ջանադրաբար անհետացրել բնիկներից մնացած նյութական մշակույթի բոլոր հուշարձանները:

Գյուղի պատմական անվանումը չի պահպանվել: 1904 թ. քարտեզում արդեն գյուղի կարգավիճակ ունեցող բնակավայրը նշված է Բալլուջա անվամբ: Խորհրդային տարիներին վերանվանվել է Ղարակուլլար:

## ՂՈԹՅՈՒՂ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1540-1570 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ դեռևս ԺԹ դարավերջին Վերին և Ներքին Ղոթյուղները գտնվել են Մելիք-Առուստամյանցների, Մաքևոս Վիրաբյանցի, Կարապետ Թայիրյանցի, Հարություն Ավագյանցի, Պետրոս Ջիլջանյանցի իրավասության ներքո[1472]:

**Սվրեցիք (Սավուրեցիք).** գրչօջախ, գյուղատեղի է գյուղից 2,5 կմ հարավ-արևմուտք՝ Շամքոր գետի աջակողմյան բարձր սարահարթի վրա:

Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1660 թ. ստեղծված մի ձեռագրում՝ որպես դրա գրչության վայր. «...Արդ եղև դրաւ գրչութեան այսմ աստուածաշունչ մատենի ի թուականութեան հայկազեան տումարի ի ՌՃ և Թ թվի: ...Ի սոյն ժամանակի եղև աւարտ աստուածաբուղխ մատենիս սրբոյ աւետարանիս ի յերկիրս Գանձայու, ի գեօղս *Սավուրէցիք*, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյս և սուրբ Կարմիր աւետարանիս ի հայրապետութեան տեառն Պետրոսի Աղվանից կաթուղիկոսի սրբազան հայրապետի և ի առաջնորդութեան սուրբ ուխտին Չարեքա մենաստանի Սարգիս երջանիկ վարդապետի, որ է ստուգիւ հայր նմանեալ ըստ առաջնոցն, և եպիսկոպոսութեան երկրին Գանձայու Խաչատուր վարդապետի: Եղև ցանկացող քառավտակ աղբիւրս այս... նաև զիս զանարժան Սարգիս գրիչս, որ միայն անուամբ եմ քահանայ»[1473]:

ԺԹ դարավերջին տեղում դեռևս պահպանվել են «...ընդարձակ եկեղեցու աւերակն, որից մնում է կանգուն միայն խորանի թաղն և երկու փոքր խորաններն»[1474]: Եկեղեցու որմի վիմագրերից մի քանիսը, բարեբախտաբար, իր ժամանակին վերծանվել են: Ահա դրանք.

Խաչքար. խորանի լուսամուտի հարավային կողմում.

*Թվ. ՋԻԲ (1473). Ես Համզա կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Պապի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 299: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 312: «Դիվան...», V, էջ 256:

Խաչքար. խորանի լուսամուտի հարավային կողմում.

*Ես Համզա կանգ[նեցի] զխաչս որդոյ իմոյ Էվտին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 299: «Դիվան...», V, էջ 256:

Ջորի ձախակողմյան լանջին տարածվել է գերեզմանոցը՝ գեղաքանդակ բազմաթիվ խաչքարերով և կենցաղային պատկերներով մշակված տապանաքարերով: Դրանց վրա եղել են արձանագրություններ.

Խաչքար. «գեղեցկաքանդակ խաչարձան».

*Ս(ուր)բ խաչս Թումանին, Պէկաջին, Թվ. Պ (1351):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 299: «Դիվան...», V, էջ 256:

Խաչքար. չափերը՝ 1,10 x 95 սմ.

*Ս(ուր)բ խաչս բարեխաւս Գիշնին, կանկնե...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 299-300: «Դիվան...», V, էջ 256:

Ծանոթ. պատվանդանին «քանդակուած է մի գութան իւր մաճկալով, մաճկալեղբայրով և հօտաղներով, եզներով և գոմէշներով և մի ճաշաբեր հարսն, որ կերակրով լի կաթսան իւր գլխին դրած, գութանաւորների համար կէսօրուան ճաշ է բերում»:

Խաչքար.

*Սուրբ խաչս Հուռիփսիմի, Մարտիրոսին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300: Տե՛ս նաև՝ «Դիվան...», V, էջ 257:

1468. “Свод...”, с. 80-81:
1469. “Кавказский календарь на 1915 г.”, с. 131.
1470. Նույն տեղում, էջ 136:
1471. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 276:
1472. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 33-35:

1473. Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 79:
1474. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 299:

Խաչքար. 1 տող.

*Ս(ուր)բ խ(աչ)ս բ(ա)ր(է)խ(ա)ս... ՌԱ (1552):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 255 :

Տապանաքար. արևմտյան նեղ կողին` 5 տող.

*Ս(ուր)բ խ(աչ)/ս բ[արէխաւս Ներ]սեսին / հ(ո)-գո(յ)ն, ՌՂ (1641):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 256:

Ծանոթ. տապանաքարի հարավային երեսին կենցաղային պատկերաքանդակներ են:

Խաչքար.

*Ս(ուր)բ [խա]չս բարեխաւս:*

Հրատ. «Դիվան...» V, էջ 256:

Խաչքար. կիսատեղծ 5 տող.

*Ես Բէկի Խա|թուն | կա(ն)կ(ն)եգ(ի) զխ[աչս] Մկ(րտի)չ), Մ(ար)գ(իս):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 256:

Խաչքար. ավերակ եկեղեցու մոտ, քիվին` կիսատեղծ 1 տող.

*[Սբ խաչս] բար[էխաւս] Շ(ա)հ(ու)մին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 256:

Տապանաքար. փոքր, օրորոցաձև, արևելյան ճակատին` 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս [բ]ար(է)խ(աւ)ս Շ(ա)հումին:*

Հրատ. «Դիվան...» V, էջ 256:

Տապանաքար.

*Ես Եղոմ կանգնեցի խաչս Նատարին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300: «Դիվան...», V, էջ 257:

Ծանոթ. սրա մոտ գտնված մեկ այլ տապանաքարին պատկերված է եղել. «...գուքան իւր պարազայիւք, սազ ածող, թմբուկ զարկող. սեղան պատրաստող կին, պարող մարդիկ. զինու կուլան ձեռնին, իսկ իշխան ռմն իւր աջ ձեռնով բռնած բազէն և ձախովն զինու թասը:Սորա մօտ կոնգ, զինաման և կենդանի խոյ: Քարիս արևելեան երեսին կայ մի ահագին արծիւ, որ բարձրացնում է մի գառն» (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300):

## ՄՈԽՇԱՎԱԽ

Գտնվում է շրջկենտրոնից 9,5 կմ հարավ-արևելք` Գանձակ գետի ձախ վտակ Դաստափորի ձախ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1580-1640 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: ԺԹ դարավերջին գյուղատեղիում հանգրվան են գտել թուրք խաշնարած ցեղեր և սկիզբ դրել ներկայիս գյուղի գոյությանը:

1908 թ. ունեցել է 340[1475], 1914-ին` 362 բնակիչ[1476]:

## ՇԱՀՎԵԼԵԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևելք` պատմական Դաստափորից 2 կմ հյուսիս` ծովի մակերևույթից 1640-1720 մ բարձրության վրա, արևմտահայաց ձորալանջին:

Հայաբնակ է եղել մինչև ԺԸ դարի 70-ական թվականները:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

1908 թ. ունեցել է 382[1477], 1914-ին` 396 բնակիչ[1478]:

## ՇԱՀՈՒՄՅԱՆ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 10 կմ արևմուտք` Շամքոր գետի աջ վտակներից մեկի ձորում:

**Պատմություն.** հիմնադրվել է 1922 թ. հայաթափ հին գյուղատեղիի տեղում: Բնակիչները Փիբից փոխադրված 50-60 ընտանիքներն էին:

1970-ական թվականներին Շահումյանը միացվել է Ամրվարի գյուղխորհրդին:

**Բնակչություն.** 1960-ական թվականներին գյուղում բնակվում էր 160 հայ ընտանիք: 1970-ականներին` այստեղ թուրքերի բուն դնելուց հետո, հայ բնակչությունը սկսել է լքել այն: 1988 թ. բռնագաղթի նախօրեին գյուղում մնացել էր 18 հայ ընտանիք:

**Դպրոց.** բացվել է 1922 թ.: Նախ եղել է 4-ամյա, 1932-33 թթ. դարձել է 7-ամյա, իսկ 1946-47 թթ.` միջնակարգ: Վերջինս գործել է մինչև 1988-ը, սակայն միացյալ դասարաններով:

**Գերեզմանոց.** տարածված է Վերին Ղլաշեն կոչվող բլրի վրա: Միջնադարյան շրջանի թաղումները բավականին խիտ են, հաշվվում են շուրջ 80-90 անմշակ կրաքարից սալատապաններ:

**Օխտը եղցի (Ուղտի եղցի).** վիմափոր եկեղեցիներ են` գյուղից 2,5 կմ հյուսիս-արևմուտք, Չարեք բերդից 3,5 կմ հարավ-արևելք, Ուղտի քար ժայռի մեջ: Հիշվում են ԺԳ դարի 20-ական թթ. վերջերի անցքերի առնչությամբ, երբ թշնամիներից հալածական ու աստանդական դարձած Աղվանից Հովհաննես կաթողիկոսը (1195-1235)` որպես ժամանակավոր և ապահով նստավայր, ընտրել էր Չարեք բերդի մերձակայքում գտնվող քարանձավները. «...ի քարայր մի ի սահմանս բերդին` որ կոչի Չարեք...»[1479] կամ «...հաստատեաց զաթոռ իւր ի սահմանս Չարեքին, ի քարի անդ...»[1480]: Ամենայն հավանականությամբ, ճիշտ այդ ժամանակաշրջանում էլ կերտվել են այն կիսաժայռափոր և ժայռափոր մատուռներն ու եկեղեցիները, որոնց մասին ականատեսը ԺԹ դարավերջին նշել է. «...քերծի ճակատում փորուած են եօթը քարայրներ և քարուկիր պատով պատուած բաց տեղերն: Քերծս և քարայրներս շրջապատուած են թանձր անտառներով: Քարայրներս բոլորն ևս եկեղեցի չեն, այլ միայն երկուսն, որոց մէջ մնում են վէմ և սեղան քարերն

1475. "Кавказский календарь на 1910 г.", с. 328.
1476. "Кавказский календарь на 1915 г.", с. 162.

1477."Кавказский календарь на 1910 г.", с. 421.
1478. "Кавказский календарь на 1915 г.", с. 209.
1479. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 178:
1480. Նույն տեղում, էջ 182:







*ՉԱՆԱԽՉԻ (ՀԱՄԱՍՐԱԲԱԿ). եկեղեցի և հատակագիծը*



*ՉԱՆԱԽՉԻ (ՀԱՄԱՍՐԱԲԱԿ). եկեղեցի և հատակագիծը*

ցարդ: Վիմահերձի ճակատով շինուած է ուղի, որ տանում է այրերն...»[1481]:

## ՉԱՆԱԽՉԻ (ՀԱՄԱՍՐԱԲԱԿ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք՝ Գանձակ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 1370-1470 մ բարձրության վրա:

**Պատմությունը.** գրավոր աղբյուրներում գյուղն առաջին անգամ՝ որպես գրչօջախ, հիշատակվում է 1617 թ. Դավիթ Շատախեցու (կազմող, նորոգող) ստեղծած ձեռագրի առթիվ. «Ի երկիրս Գանձակոյ, ի ձորս Գանճոյ, [ի] գ[ե]ալս [որ] Համասրայբակ կոչի, ի դրան Ս. Ստ[եփ]անոս յեկեղեցոյն»[1482]:

Համասրաբակը հիշվում է և Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) կոնդակներից մեկում, ըստ որում՝ հաշվի առնելով կոնդակում թվարկված գյուղերի հաջորդականությունը («...Միրզիկուայ, Ոսկանապատի, ...Ցնծահալայ, Գետամիջու, *Համասրապակուց* եկեղեցեաց, քահանայից...»)[1483], նաև գյուղի՝ «...ի ձորս Գանճոյ...» տեղադրությունը, կարելի է ենթադրել, որ ձորակի այդ մասում գտնվող ու միջնադարյան հուշարձաններով հարուստ ներկայիս Չանախչին համապատասխանում է պատմական Համասրաբակ գյուղին:

**Բնակչությունը.** 1890-ական թվականների սկզբներին Համասրաբակը, ի թիվս այլ գյուղերի, հիշվում է արդեն թուրք բնակչություն ունեցող գյուղերի ցանկում. «...թրքաբնակ՝ Ծակառաշէն, Քոշկայ, Ցնծահալայ, Համասրապակ և Մրցնա գիւղերն...»[1484]:

1908 թ. ունեցել է 240[1485], 1914-ին՝ 405 բնակիչ[1486]:

**Եկեղեցիներ.** վերոհիշյալ ձեռագրի հիշատակարանից արդեն իսկ պարզ է, որ գյուղն ունեցել է Սբ. Ստեփանոս անվամբ եկեղեցի: Վերջինս՝ իբրև ծխական եկեղեցի, անտարակույս, գտնվել է գյուղամիջում, սակայն ավերվել է հիմնավորապես և անգամ տեղն անհայտ է:

Գյուղի հարավային կողմում՝ ջառիթափի լանջերով բարձրադիր լեռան հարթ գագաթին, իրարից ոչ հեռու պահպանվում է ևս 2 մատուռ: Դրանցից մեկը

1481. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 301:
1482. «ԺԷԱ», էջ 613:
1483. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 48:
1484. Նույն տեղում (ծանոթ.):
1485. "Кавказский календарь на 1910 г.", с. 410.
1486. "Кавказский календарь на 1915 г.", с. 204.





***ՑՆԾԱՀԱԼ գյուղի տեսքն ու քանդված եկեղեցու քարերով կառուցված դպրոցի շենքը***

հսկա կաղնու հովանու ներքո կանգուն կառույց է՝ ԺԶ-ԺԷ դարերին բնորոշ ճարտարապետական առանձնահատկություններով: Ունի միանավ, քառակապ հորինվածք: Ուշագրավ է ուղղանկյունաձև խորանը: Մուտքն արևմուտքից է, միակ պատուհանը բացված է արևելքից՝ խորանի մեջ: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Պատերին արձանագրություններ չկան. դրանցից զուրկ է նաև մուտքի բարավորի սալաքարը: Արտաքին չափերն են՝ 6,80 x 4,20 մ:

Երկրորդ մատուռից պահպանվել են միայն մինչև 2 մ բարձրությամբ պատերը: Կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են ԺԲ-ԺԳ դարերին: Եղել է միանավ, թաղածածկ կառույց: Ուշագրավ է պայտաձև խորանը: Մուտքը արևմուտքից է, միակ պատուհանը բացված է արևելքից՝ խորանի մեջ: Կառուցված է անմշակ, խոշորաչափ քարով, կրաշաղախով: Պատերի պահպանված հատվածները զուրկ են արձանագրություններից:

## ՑՆԾԱՀԱԼ (ՉԻՆՉԱՂԱԼ)

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևելք՝ Գանձակ գետի ձախակողմյան հարավահայաց ձորալանջին՝ ծովի մակերևույթից 1400-1480 մ բարձրության վրա:

Գրավոր աղբյուրներում Ցնծահալը, ի թիվս հայաբնակ մի շարք այլ գյուղերի, առաջին անգամ հիշատակվում է Փիլիպպոս կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակում[1487]:

Հայաթափ է եղել ԺԸ դարի 2-րդ կեսին: ԺԹ դարավերջին գյուղատեղիում հաստատվել են սակավաթիվ թուրք խաշնարածներ:

1487. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:

1914 թ. ունեցել է 655 բնակիչ[1488]:

1890-ական թվականների սկզբներին ականատեսը նշել է. «...ունի ընդարձակ հանգստարան և մեծ քարուկիր եկեղեցի, որի գլուխն խոնարհուած է»[1489]: 1986-ին եկեղեցին վաղուց արդեն գոյություն չուներ: Նրա տեղում և եկեղեցու քարերով կառուցվել էր դպրոցի շենքը, որի որմերում սրբատաշ քարերի առկայությունը հուշում է, որ եկեղեցու գոնե անկյունաքարերը եղել են համակ սրբատաշ քարից:

Ինչ վերաբերում է «ընդարձակ» գերեզմանոցին, ապա դա ևս անհետ ոչնչացված է:

## ՓԻՔ (ՉԱԳԼԻԿ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Շամքոր գետի աջակողմյան և Արթինաջուր գետի ձախակողմյան վտակների միջև ընկած ջրբաժանի մոտ՝ շամքորահայաց (արևմտահայաց) ձորալանջերին, ծովի մակերևույթից 1360-1620 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղում և մերձակայքում պահպանված հնագիտական ու միջնադարյան հուշարձանները վկայում են տեղում վաղնջական ժամանակներից ի վեր բնակչության առկայությունը: Հետազոտողները նշել են, որ փիքեցիները բնիկներ էին[1490]:

Հայտնի է, որ ներկայիս գյուղը հիմնադրել են հին Փիքից (այժմ՝ գյուղատեղի) տեղափոխված բնակիչները, որոնք հին գյուղը լքել ու նոր վայր են փոխադրվել կլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով:

1488. “Кавказский календарь на 1915 г.”, с. 131.
1489. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 275:
1490. Նույն տեղում, էջ 296:



***ՓԻԲ (ՁԱԳԼԻԿ). գյուղի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից***

Ավանդության համաձայն՝ գյուղի Փիբ անունը ծագում է Փեփրոնյա կույսի անունից, որը նահատակվել է այստեղ և ամփոփվել գյուղի եկեղեցում:

Օտարները, մասնավորապես թուրքերը, գյուղը կոչել են նաև Զագլիկ՝ մոտակա շիբի (թուրք. «զագ») հանքերի առկայության պատճառով:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** Փիբը՝ մարդաշատ, իսկ բնակիչները՝ մարտունակ և պատվախնդիր մարդիկ լինելով, քաղաքական անկայուն իրավիճակից օգտվել ցանկացող թուրք հրոսակախմբերից մշտապես կարողացել են պաշտպանվել՝ արժանի հակահարված տալով թշնամուն: Հայտնի է, օրինակ, 1905 թ. սեպտեմբերի 6-ի դեպքը. «...եօթ թուրք աւազակներ, Թիւրեքի[1491] կոչուած տեղում զագլիկցի հայերի տաւարների հօտը քշեցին տարան: Հայերը սպանեցին երկու աւազակների և ետ խլեցին հօտը: Միւս չորս աւազակները փախան անտառ, որին շրջապատեցին տեղացիները: Զագլիկցիներին մնաց աւազակների 7 թամբած ձիերը: Այդ հետապնդումին ընկերացել էին զինուած կանայք և»[1492]:

**Բնակչություն.** Փիբը երկրամասի առավել բազմամարդ գյուղերից էր: Աշխարհագրական դիրքը, կենսական բարենպաստ պայմանները (աղբյուրների, վարելահողերի և անտառների առատություն), ինչպես նաև բնակչությանը զբաղվածություն ապահովող շիբահանքի առկայությունը դարեր շարունակ կարևոր գործոն են եղել տեղում բնակչության ամրապնդման ու զարգացման համար:

Փիբի ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Սարգիս Տէր Օհաննիսեան, ուստերք 1-ին՝ Առաքել, կինն՝ Հոռոմ, 2-ն՝ Օհանէս, կինն՝ Վարդի, 3-ն՝ Խաչատուր, կինն՝ Նախշուն, 4-ն՝ Աղաջան:

2. Յակոբ Անտօնեան, կինն՝ Սանդուխտ, ուստերք 1-ին՝ Մարտիրոս, կինն՝ Հէրիք, ուստերք՝ Խաչատուր և Բէգլար. դուստր Վարդի, 2-ն՝ Պօղոս, կինն՝ Ջավահիր, դստերք՝ Ազիզ և

---

1491. Թուրքերը՝ Թյուրեքի կամ Թյուլքիքյանդ էին կոչում Փիբի մոտ գտնվող պատմական Աղյուսաշեն (Աղվեսաշեն) գյուղատեղին («Մշակ», 1883, N 128, էջ 1):

1492. «Արշալույս», 1905, N 9, էջ 1: Դեպքի մասին թերթի մեկ այլ համարում նշվել է. «Սեպտեմբերի 6-ին Սղնախի Իլդիր գյուղից 9 թուրք ձիավորներ հարձակվել են Զագլիկ գյուղի հովիվների վրա: Հրացանաձգության ընթացքում սպանվեց 2 և վիրավորվեց 2 թուրք, մնացածները փախան» («Արշալույս», 1905, N 17, էջ 1): Նաև. «Փիբը ունի Աղւէսաշէն անուն կրող մի ամարանոց, ուր պահում են գիւղի անասունները: Զինուած թուրքերը յարձակւելով՝ այդտեղից քշեցին 70 ձիերից բաղկացած երամակը. լուրն առնելով գիւղից օգնութեան հասաւ զինուած երիտասարդների մի խումբ, որը ոչ միայն յետ բերեց երամակը, այլ և խլեց թուրքերից 7 ձի և 2 հրացան: Ընդհարման ժամանակ հայերն ունեցան երկու վիրաւոր, իսկ թուրքերը՝ մի քանիսը» (**Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 337):



Նազլուխան, 3-ն՝ Պետրոս, կինն՝ Խաթուն, ուստր՝ Գրիգոր, 4-ն՝ Անտօն, կինն՝ Աննայ, եղբայրն՝ Առաքել, կինն՝ Անախաս, ուստերք՝ Յարութիւն և Յօհաննէս, դստերք՝ Ոսկի, ..., Շողակաթ:

3. Առաքել Միրումեան, կինն՝ Անթառամ, ուստերք 1-ին՝ Սարգիս, կինն՝ Զարի, 2-ն՝ Կարապետ, կինն՝ Մարգարիտ, 3-ն՝ Մարտիրոս, եղբայրն՝ Մաթէոս, կինն՝ Ազիզ, ուստր՝ Յովսէփ:

4. Խաչատուր Վարդանեան, ուստր՝ Սիմօն, եղբայրն՝ Պօղոս, կինն՝ Թամամ, մայրն՝ Թամամ:

5. Բաբաջան Ալլահվէրդով, կինն՝ Սօնայ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Ջավահիր, եղբայրն՝ Աւէտիս, կինն՝ Սանդուխտ, դուստր՝ Վարդի, մայրն՝ Ազիզ:

6. Դաւիթ Տէր Խաչատուրեան, կինն՝ Զանազան, ուստերք՝ Յօհաննէս և Ստեփան, եղբօր որդիք՝ Մարտիրոս, Յարութիւն, դստերք՝ Սանդուխտ և Թագուհի, հարսն՝ Հէրիք, մայրն՝ Հէրիքնազ:

7. Վիրապ Յարութիւնեան, կինն՝ Պարուննան, ուստր՝ Վարդան:

8. Խաչատուր Խօջայեան, կինն՝ Եթար, ուստերք 1-ին՝ Սարգիս, կինն՝ Աննայ, դստերք՝ Վարդի և Եղսաբէդ, 2-ն՝ Յօհաննէս, կինն՝ Հէրիք, ուստր՝ Ոսկան, 3-ն՝ Գալուստ, կինն՝ Ազիզ, եղբօր որդիք՝ Մկրտիչ, Ղազար և Կարապետ:

9. Յօհաննէս Աբիահամով, կինն՝ Հոռոմսիմ, ուստր՝ Կարապետ, կինն՝ Շահգուլ, ուստր՝ Յարութիւն:

10. Բաբաքեօխվայ Մարտիրոսով, կինն՝ Մարիամ, ուստր 1-ին՝ Մնացական, կինն՝ Մարիամ, դուստր՝ Վարդի, 2-ն՝ Աղաբէգ, կինն՝ Մարգարիտ:

11. Ստեփան Մէլիքով, կինն՝ Հռիփսիմէ, ուստր՝ Առաքել, դուստր՝ Խաթուն, եղբօրորդիք 1-ին՝ Պօղոս, կինն՝ Անայի, 2-ն՝ Սարգիս, կինն՝ Մարիամ, քոյր սոցա՝ Հռիփսիմէ, մայրն՝ Եղիսաբէթ:

12. Պօղոս Բաղալով, կինն՝ Սանդուխտ, ուստերք 1-ին՝ Գաբրիէլ, կինն՝ Շողակաթ, 2-ն՝ Յարութիւն, 3-ն՝ Առաքել, եղբայրն՝ Սարգիս, կին՝ Անայի, ուստերք՝ Յօհանէս և Վանէս, դստերք՝ Նազի, Գուլի և Մարիամ, կին Օհանէսի՝ Մարգարիտ:

13. Յարութիւն Մէլիքով, կինն՝ Շողակաթ, ուստերք՝ Սարգիս և Մովսէս, դստերք՝ Մարիամ և Զանի, քոյրն՝ Աննման, եղբօրորդին՝ Մարգար, կինն՝ Ոսկի, դստերք՝ Ջավահիր և Եղիսաբէթ:

14. Յովակիմ Պետրոսով, ուստերք 1-ին՝ Պետրոս, կինն՝ Վառվառ, ուստր՝ Գաբրիէլ, 2-ն՝ Պօղոս, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Միքաքէլ, դստերք՝ Մարիամ, Եղիսաբէթ, Հէրիք և Թամամ:

15. Մկրտիչ Մանուէլեան, կինն՝ Սոնայ, ուստերք 1-ին՝ Պետրոս, կինն՝ Ջավահիր, դուստր՝ Զանի, 2-ն՝ Յովհաննէս, կինն՝ Թանգի, քոյրք՝ Թամամ և Մարիամ:

16. Ստեփան Բալիով, կին սորա՝ Մարիամ, դստերք՝ Վարդի, Ոսկի, Ազիզ և Եղիսաբէթ, եղբայրն՝ Սարգիս, կինն՝ Ազիզ, ուստր՝ Աւագ, մայրն՝ Խաննան:

17. Պետրոս Ափոյեվ, կինն՝ Ազիզ, ուստերք 1-ն՝ Մարտիրոս, կինն՝ Ջավահիր, 2-ն՝ Կարապետ, եղբարք 1-ին՝ Սիմոն, կին՝ Մարգարիտ, դուստր՝ Ջավահիր, 2-ն՝ Յակոբ, կինն՝ Հէրիք, դստերք՝ Վարդի և Թամամ:

18. Թօմաս Կոստանդով, կինն՝ Հռիփսիմէ, ուստերք՝ Յարութիւն, Գրիգոր, Առաքել, Մելիքսէթ, դուստր՝ Գօզալ, կին Յարութիւնի՝ Թամամ:

19. Մխիթար Թաւաքալով, կին՝ Վարդի, ուստերք 1-ն՝ Վարդան, կինն՝ Մարգարիտ, դուստր՝ Ջավահիր, 2-ն՝ Յարութիւն, կինն՝ Թամամ, ուստր՝ Յովհաննէս, 3-ն՝ Գաբրիէլ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Միքայէլ...:

20. Վարդան Գօրգիով, կինն՝ Մարգարիտ, ուստերք 1-ն՝ Յարութիւն, կինն՝ Սուլթան, ուստերք՝ Գրիգոր, Պետրոս, դուստր՝ Եղիսաբէթ, 2-ն՝ Յովհաննէս, կինն՝ Անայի, 3-ն՝ Մկրտիչ:

21. Առաքել Թաւաքալով, կինն՝ Աննայ, ուստերք՝ Յարութիւն և Միրզայ:

22. Խաչատուր Չօրանով, կինն՝ Զարնշան, ուստերք՝ Ստեփան, Մովսէս, դստերք՝ Շողակաթ և Սօնայ, եղբարք 1-ն՝ Պետրոս, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Վարդանան, 2-ն՝ Գրիգոր, կինն՝ Վարդի, դուստր՝ Թագուհի, հօրեղբարք՝ Մնացական, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Սիմէոն, Մարտիրոս, կինն՝ Ազիզ, 2-ն՝ Սարգիս և Սիմէոն, դուստր՝ Գուլի:

23. Աւետ Միրդայով, կինն՝ Մարիամ, ուստերք 1-ն՝ Միրզայ, կինն՝ Հռիփսիմէ, 2-ն՝ Յարութիւն, 3-ն՝ Խաչատուր, 4-ն՝ Յօհաննէս, դստերք՝ Եղիսաբէթ և Նազլուխան:

24. Ծատուր Մնացականով, կինն՝ Անայի, ուստերք 1-ն՝ Սահակ, կինն՝ Թամամ, դստերք՝ Հռիփսիմէ և Մարիամ, 2-ն՝ Սիմօն, 3-ն՝ Ստեփան, դստերք՝ Աննայ և Ոսկի, եղբօրորդիք 1-ն՝ Գաբրիէլ կինն՝ Հռիփսիմէ, ուստր՝ Յովհաննէս, դստերք՝ Եղիսաբէթ և Ոսկի, 2-ն՝ Միքայէլ, կինն՝ Անախաս, դստերք՝ Վարդի, Թամամ և Նազի, 3-ն՝ Մարտիրոս, կինն՝ Հռիփսիմէ:

25. Գրիգոր Դաշիով, կինն՝ Վարդի, ուստերք 1-ն՝ Սարգիս, կինն՝ Ջավահիր, դստերք՝ Հէրիք, 2-ն՝ Մնացական, 3-ն՝ Յարութիւն, դուստր՝ Ջավահիր, եղբօրորդիք 1-ն՝ Վարդան, կինն՝ Ոսկի, ուստերք՝ Դաւիթ, Պետրոս, դուստր՝ Փարի, 2-ն՝ Աւագ, կինն՝ Ջանազան, ուստերք՝ Յարութիւն և Ադամ, 3-ն՝ Առաքել, կինն՝ Եղիսաբէթ, դուստր՝ Մարգարիտ, Ազիզ, 4-ն՝ Պօղոս, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Պետրոս, դուստր՝ Եղիսաբէթ:

26. Մնացական Խօջայեվ, կինն՝ Աննայ, ուստերք 1-ն՝ Վիրապ, կինն՝ Սանդուխտ, 2-ն՝ Կարապետ, 3-ն՝ Օհաննէս, դստերք՝ Ջավահիր, Հէրիք, Սիրունենան, հօրեղբօրորդի՝ Աւագ, կինն՝ Խանում, ուստր՝ Առաքել, դուստր՝ Մարիամ, եղբայրն՝ Սարգիս, կինն՝ Մարինոս, մայր սորա՝ Հռիփսիմէ:

27. Բարսամ Ղուսումով, ուստերք 1-ն՝ Պետրոս, կինն՝ Վառվառ, ուստր՝ Յարութիւն, քոյրն՝ Մարիամ, եղբայրն՝ Խաչատուր, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Արզուման, կինն՝ Հիւրի, դուստր՝ Անայի, քոյրն՝ Խաթուն, հարսն՝ Խաթուն, որդի՝ Սարգիս:

28. Արզուման Կոնճոռով, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Ներսէս և Պօղոս, դուստր՝ Ազիզ, եղբայրն՝ Գրիգոր, կին Ջաւահիր, դստերք՝ Խաթուն և Գիւլի, հօրեղբօրորդի՝ Ղազար, կինն՝ Եթար, ուստերք՝ Միրզայ, Պետրոս, Եղիեայ, դստերք՝ Թառան և Թանգի, եղբօրորդիք՝ Ոսկան, Շողակաթ, Զարնշան:

29. Ոսկան Տէր Ղազարով, կինն՝ Ջավահիր, դստերք՝ Գիւլի, Փարի, եղբարք՝ Աւագ և Բարսեղ, մայրն՝ Ջավահիր:

30. Խաչատուր Սակիքեօխվեան, կինն՝ Մարգարիտ, ուստերք 1-ն՝ Ոսկան, կինն՝ Զանի, դուստր՝ Հէրիք, 2-ն՝ Ղազար, 3-ն Առաքել, եղբայրն՝ Պետրոս, ուստր՝ Խաչատուր, դուստր՝ Ազիզ:

31. Վարդան Կոստանդով, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Ոսկան, կին Ոսկանի՝ Զարի, դուստր՝ Հէրիք, եղբայրն՝ Պետրոս, ուստր՝ Խաչատուր, դուստր՝ Ազիզ, միւս որդին՝ Առաքել:

32. Առաքել Մուրադով, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Գալուստ, Յօհաննէս, դստերք՝ Անայի, Ոսկի, Մարիամ, մայրն՝ Հոռոմսիմ:

33. Գէորգ Ղազարով, կինն՝ Զարնշան, եղբայրն՝ Մարգար, կին սորա՝ Խաթուն, եղբայրն՝ Եսայի, քոյրք՝ Հէրիք, Թամամ և Սանդուխտ, մայրն՝ Եղիսաբէթ:

34. Առստամ Չլինկարով, կին՝ Ազիզ, ուստերք 1-ն՝ Յարութիւն, կինն՝ Սիրուննան, հարսն՝ Հռիփսիմէ, 2-ն՝ Առաքել, 3-ն՝ Մարտիրոս, դստերք՝ Մարիամ և Հռիփսիմէ, եղբարք 1-ն՝ Յովակիմ, կինն՝ Սօնայ, ուստերք՝ Աւետիս և Յակոբ, դստերք՝ Վարդի, Մարգարիտ, 2-ն՝ Սարգիս, կինն՝ Հէրիքնազ, ուստր՝ Յօհաննէս, մայր՝ Հէրիք:

35. Ծատուր Տէր Գրիգորով, կինն՝ Զանի, ուստր՝ Սահակ, դուստր՝ Շողակաթ, եղբարք 1-ն՝ Թոմաս, կինն՝ Հէրիք, ուստր՝ Սիմօն, դուստր՝ Ազիզ, կին Սիմօնի՝ Թագուհի, դուստր՝ Եղիսաբէթ, 2-ն՝ Մնացական, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յարութիւն, դստերք՝ Եղիսաբէթ և Թանգի, 3-ն՝ Մարտիրոս, կինն՝ Խանում, ուստր՝ Խաչատուր, Աբրահամ:

36. Առաքել Բալբաբով, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Մկրտիչ, Գրիգոր, եղբօրորդիք 1-ն՝ Պետրոս, կինն՝ Եղիսաբէթ, ուստերք՝ Յարութիւն, Մարգար, դուստր՝ Մարիամ, 3-ն՝ Աղաջան, կինն՝ Թամամ, ուստր՝ Յակոբ, դստերք՝ Եղիսաբէթ, Անայի, Վարդի և Մարգարիտ:

37. Գրիգոր Մանվէլով, կինն՝ Շողակաթ, ուստերք՝ Վարդան, Յարութիւն, դուստր՝ Սանդուխտ, եղբարք 1-ն՝ Պօղոս, կինն՝ Մարիամ, 2-ն՝ Աղաջան, մայրն՝ Հէրիք:

38. Յարութիւն Ափով, կինն՝ Վարդի, ուստր՝ Պետրոս, դստերք՝ Գօզալ, Մարիամ, եղբարք 1-ն՝ Վիրապ, կինն՝ Վարդի, ուստերք՝ Եսայի և Գաբրիէլ, 2-ն՝ Գալուստ, կինն՝ Մարիամ, դուստր՝ Շողակաթ, եղբօրորդին՝ Աբրահամ, կինն՝ Թամամ, եղբայրն՝ Ասլան, կինն՝ Մարգարիտ, քոյրք՝ Ոսկի, Նախշուն, մայր սորա՝ Մարգարիտ:

39. Գրիգոր Գորգիով, կինն՝ Մարիամ, ուստերք 1-ն՝ Պետրոս, կինն՝ Սիրուննան, ուստերք՝ Զաքարիայ և Աղաջան, դուստր՝ Նանաքիր, 2-ն՝ Անտօն, կին՝ Ազիզ, ուստր՝ Ոսկան, դուստր՝ Սանդուխտ, թոռն՝ Վարդան:

40. Մկրտիչ Ղազարով, կինն՝ Ոսկի, ուստերք՝ Սարգիս, Վարդան, եղբարք 1-ն՝ Կարապետ, կինն՝ Ոսկի, 2-ն՝ Յարութիւն:

41. Խաչատուր Ծուզանով, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ 1-ն՝ Աւետիս, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Առաքել, Աղաջան, Մնացական, 2-ն՝ Պօղոս, կին Առաքելի՝ Մարիամ, կին Պօղոսի՝ Մալաք, ուստր՝ Յարութիւն:

42. Յարութիւն Ազարեան, կինն՝ Խաթուն, ուստր՝ Առաքել, եղբայրն՝ Աւագ, կինն՝ Ազիզ, դուստր՝ Թամամ, եղբօրորդիք 1-ն՝ Յովսէփ, կինն՝ Սանդուխտ, ուստր՝ Նաւասարդ, 2-ն՝ Մովսէս, կինն՝ Նազի, մայրն՝ Մարիամ, հարսն՝ Մարիամ:

43. Գալուստ Ջումով, կինն՝ Ազիզ, եղբայր՝ Ղազար, կինն՝ Մարիամ, 2-ն՝ Պօղոս, կինն՝ Նազլուխան, մայրն՝ Մարիամ:

44. Դաւիթ Խաչբուլաղեան, կինն՝ Հռիփսիմէ, ուստերք 1-ն՝ Գրիգոր, կինն՝ Սանամ, ուստերք՝ Վարդան և Յարութիւն, դստերք՝ Մարիամ և Հէրիք, 2-ն՝ Յովհաննէս:

45. Յօհաննէս Դալաքով, կինն՝ Հռիփսիմէ, ուստերք՝ Աղաջան, Խաչատուր, դստերք՝ Փարի, Հէրիքնազ և Վարդի:

46. Վիրապ Ազրիով, ուստր 1-ն՝ Առուշան, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Գրիգոր, դուստր՝ Մարիամ, 2-ն՝ Ստեփան, կինն՝ Ոսկի, դուստր՝ Մարգարիտ, 3-ն՝ Յարութիւն, կինն՝ Թանգի, 4-ն՝ Մկրտիչ:

47. Վարդան Ազարիով, կինն՝ Հէրիք, ուստերք 1-ն՝ Արզուման, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Գրիգոր, Ստեփան, Սարգիս, դուստր՝ Հռիփսիմէ, 2-ն՝ Միրզայ, կինն՝ Զարնշան, 3-ն՝ Մարտիրոս, կինն՝ Մարգարիտ:

48. Մովսէս Գուլումով, կինն՝ Փարի, ուստր՝ Վարդան, դուստր Պարունենան, եղբայրն՝ Առաքել, կինն՝ Սիրունենան, հարսն՝ Մարգարիտ, ուստր՝ Յակոբ, դուստր՝ Մարիամ, մայրն՝ Հէրիք, միւս եղբայրն՝ Պօղոս, ուստր՝ Գրիգոր, հօրեղբայրն՝ Խաչատուր, մայր սորա՝ Զանի:

49. Սիմէօն Անտօնով, կինն՝ Հեղինան, ուստր՝ Ստեփան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Նիկողոս, Խաչատուր, Պարապետ, հարսն՝ Ոսկի, ուստր՝ Մխիթար, դստերք՝ Մարգարիտ, Զանի:

50. Աղաջան Մէլիքով, կինն՝ Խանում, ուստր՝ Յակոբ, դստերք՝ Եղիսաբէթ և Սանամ, Զանի, Թամամ, եղբայրն՝ Ասլան, կինն՝ Զանի, ուստերք՝ Ծատուր, Խաչատուր, դստերք՝ Զարնշան և Ազիզ»[1493]:

Ստորև ներկայացնում ենք 1804-1917 թթ. ժամանակահատվածին վերաբերող վիճակագրական տվյալները.

1493. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 32-33:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[1494] | 40 | 100 | 57 | 157 |
| 1839[1495] | 50 | 286 | 259 | 545 |
| 1845[1496] | | 703 | 598 | 1301 |
| 1847[1497] | | 625 | 517 | 1142 |
| 1849[1498] | | 539 | 621 | 1160 |
| 1850[1499] | 126 | 551 | 620 | 1171 |
| 1852[1500] | | 559 | 631 | 1190 |
| 1853[1501] | | 571 | 633 | 1204 |
| 1854[1502] | | 602 | 650 | 1252 |
| 1857[1503] | | 573 | 649 | 1222 |
| 1858[1504] | | 585 | 659 | 1244 |
| 1859[1505] | 90 | | | |
| 1860[1506] | | 594 | 661 | 1255 |
| 1861[1507] | 135 | | | |
| 1863[1508] | | 680 | 665 | 1345 |
| 1864[1509] | | 703 | 680 | 1383 |
| 1865[1510] | | 705 | 685 | 1390 |
| 1866[1511] | 155 | 979 | 750 | 1729 |
| 1872[1512] | | 1365 | 1055 | 2420 |
| 1873[1513] | | | | 2210 |
| 1874[1514] | | | | 2187 |
| 1875[1515] | | | | 2252 |
| 1876[1516] | | | | 2282 |
| 1877[1517] | | 1308 | 1001 | 2309 |
| 1878[1518] | 201 | 1328 | 1012 | 2340 |
| 1881[1519] | | 1306 | 1031 | 2337 |
| 1882[1520] | | 1326 | 1034 | 2360 |
| 1883[1521] | | 1366 | 1071 | 2437 |
| 1885[1522] | 377 | 1366 | 1183 | 2549 |
| 1886[1523] | 205 | | | |
| 1887[1524] | | 1504 | 1282 | 2786 |
| 1888[1525] | | 1559 | 1322 | 2881 |
| 1889[1526] | | 1574 | 1335 | 2909 |
| 1890[1527] | | 1594 | 1355 | 2949 |
| 1891[1528] | 400 | 1641 | 1407 | 3048 |
| 1892[1529] | | 1638 | 1404 | 3042 |
| 1893[1530] | | 1704 | 1442 | 3146 |
| 1894[1531] | | 1732 | 1464 | 3196 |
| 1897[1532] | | 1819 | 1563 | 3382 |
| 1898[1533] | | 1862 | 1605 | 3467 |
| 1899[1534] | | 1867 | 1609 | 3476 |
| 1900[1535] | | 1872 | 1659 | 3531 |
| 1901[1536] | | 1939 | 1710 | 3649 |
| 1902[1537] | | 1946 | 1738 | 3684 |
| 1905[1538] | | 1958 | 1755 | 3713 |
| 1906[1539] | | 2096 | 1855 | 3951 |
| 1907[1540] | | | | 3713 |
| 1908[1541] | 768 | 2200 | 1800 | 4000 |
| 1909[1542] | | 2061 | 1803 | 3864 |
| 1910[1543] | | 2347 | 1920 | 4267 |
| 1912[1544] | | 2083 | 1824 | 3907 |
| 1914[1546] | | | | 5838 |
| 1915[1547] | 800 | | | |
| 1917[1548] | 627 | | | 5838 |

Աղյուսակից երևում է, որ գյուղի բնակչությանը, ընդհանուր առմամբ, բնորոշ են եղել կայունությունը և թվաքանակի անընդմեջ աճը: Որոշ տարիների նվազման ցուցանիշները կապված էին հատկապես վարակիչ մահաբեր հիվանդությունների՝ ժամանակ առ ժամանակ տարածման հետ: Այսպես, 1880 թ. աշնանից մինչև 1881 թ. գարուն ընկած ժամանակահատվածում անհայտ հիվանդությունից մահացել է 120 մարդ[1549]: Առավել սոսկալի հետևանքներ է ունեցել 1899 թ. նոյեմբեր - 1900 թ. ապրիլ ժամանա-

1494. “Акты...”, т. II, с. 596.
1495. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 32-33:
1496. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
1497. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
1498. Նույն տեղում, գ. 3818, թ. 97-98:
1499. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 111:
1500. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 106-107:
1501. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 17-18:
1502. Նույն տեղում, գ. 3825, թ. 69-70:
1503. Նույն տեղում, գ. 3830, թ. 75-76:
1504. Նույն տեղում, գ. 3831, թ. 42-43:
1505. **Ткачев Г.**, Путевыя заметки, “Кавказ”, 1859, N 9, с. 43.
1506. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 109-110:
1507. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
1508. Նույն տեղում, գ. 3843, թ. 15-16:
1509. Նույն տեղում, գ. 3846, թ. 23-24:
1510. Նույն տեղում, գ. 3848, թ. 50:
1511. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
1512. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1513. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
1514. ”Кавказский календарь на 1856 г.”, с. 124.
1516. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 44-45:
1517. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1518. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
1519. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1878, N 46, էջ 4:
1520. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 27-28:
1521. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1522. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1523. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1885, N 4, էջ 51:
1524. «Արձագանք», 1886, N 23, էջ 329:
1525. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
1526. Նույն տեղում, գ. 3882, թ. 132:
1527. Նույն տեղում, գ. 3884, թ. 227-228:
1528. Նույն տեղում, գ. 3887, թ. 151:
1529. Նույն տեղում, գ. 3889, թ. 150: Նաև՝ «Մշակ», 1891, N 18, էջ 2:
1530. Նույն տեղում, գ. 3891, թ. 122:
1531. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
1532. Նույն տեղում, գ. 3896, թ. 175-176:
1533. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 148-149:
1534. Նույն տեղում, գ. 3897, թ. 170:
1535. Նույն տեղում, գ. 3903, թ. 128-128:
1536. Նույն տեղում, գ. 3905, թ. 93-94:
1537. Նույն տեղում, գ. 3906, թ. 98-99:
1538. Նույն տեղում, գ. 3907, թ. 24-25:
1539. Նույն տեղում, գ. 3912, թ. 267-268:
1540. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1541. Նույն տեղում, գ. 240, թ. 2:
1542. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12: Ի դեպ, 1908 թ. մեկ այլ տվյալի համաձայն՝ գյուղն ունեցել է 3992 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 254):
1543. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 118:
1544. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 59-60:
1545. Նույն տեղում, գ. 3919, թ. 63-64:
1546. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 124.
1547. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1062, թ. 4:
1548. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
1549. «Մեղու Հայաստանի», 1881, N 44, էջ 3:



***ՓԻՔ (ՁԱԳԼԻԿ). տեսարաններ գյուղից***

կահատվածում տարածված ծաղիկ հիվանդությունը, որից մահացել է 375 երեխա[1550]:

Այսօրինակ աղետներին դիմակայելու համար փիրեցիները 1891 թ. մտադրվել էին դեղատուն բացել և պահել մեկ բժիշկ[1551]:

**Տնտեսություն.** սովորական զբաղմունքներից (հողագործություն, այգեգործություն, անասնապահություն, մեղվապահություն) զատ փիրեցիներն ունեին մի առանձնահատուկ զբաղմունք, այն է՝ գյուղի հարավային կողմի շիբով հարուստ բարձրաբերձ լեռների հանքավայրերի շահագործումը:

Հանքանյութի արդյունահանմամբ փիրեցիները զբաղվել են վաղ ժամանակներից: Ինչպես նշում է ժամանակակիցը (Գ. Տկաչև), դեռևս 1850-ական թվականներին շիբի արդյունահանումը, բնակիչների ասելով, տարեկան կազմել է 10 հազ. փութ: Այդպիսի ընթացքով հանքը շահագործվել է 1805-1864 թվականներին[1552]:

1865 թ. գյուղի հարավարևմտյան եզրին կառուցվել է հանքանյութի վերամշակման գործարան: Հանքերն արդյունահանվում էին կապալով՝ տարեկան շուրջ 3000 ռ. վճարով[1553]: 1873 թ., օրինակ, հանքերի շահագործումը ստանձնել է կապալառու Միրզոյանը[1554]:

Հայտնի է, որ ծայր առած կալվածական վեճերի պատճառով կառավարությունը հանքերի շահագործումը 1887-88 թթ. դադարեցրել է[1555]: Այդ որոշումը տնտեսական ծանր հարված էր փիրեցիներին, քանի որ, ինչպես գնահատել է ժամանակակիցը, «Շիբահանքն է եղել պատճառ, որ այդ հայաբնակ գիւղը հետզհետէ մեծացել է և ներկայումս Գանձակի ամենամեծ գիւղն է...»[1556]:

Ի դեպ, հողային վեճեր կային նաև փիրեցիների և Բարսումի կալվածատեր Մելիք-Առուստամյանցների միջև: Խնդիրն այն աստիճան էր սրվել, որ 1892 թ. հուլիսի 27-ին տեղի ունեցած բախման ժամանակ վիրավորվել էին երեք գյուղացիներ[1557]:

**Դպրոց.** Փիրը դպրոց բացած առաջին գյուղերից է: Վավերագրերը, սակայն, կրթօջախի հիմնադրման տարեթվի վերաբերյալ միանշանակ տեղեկություններ չեն հաղորդում: Մի դեպքում դպրոցը 1866 թ. հիշվում է 88 աշակերտով[1558], մեկ այլ տեղում նշվել է, որ 1915 թ. դրությամբ դպրոցն արդեն 43-ամյա պատմություն ուներ (այսինքն՝ բացվել էր 1872 թ.)[1559]: Մեկ այլ տեղեկագրում (1878 թ.) նշվել է 1875 թ. «...Սորա Գէորգեան անուն դպրոցը ահա երեք տարի է, որ գոյութիւն ունի...»[1560]: Դպրոցի

1550. «Մշակ», 1900, N 77, էջ 2:
1551. «Մշակ», 1891, N 18, էջ 2:
1552. «Մեղու Հայաստանի», 1873, N 29, էջ 3:
1553. Նույն տեղում:
1554. Նույն տեղում:
1555. «Մշակ», 1890, N 144, էջ 2:
1556. Նույն տեղում:
1557. «Նոր-Դար», 1892, N 129, էջ 3:
1558. «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
1559. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 1062, թ. 1:
1560. «Մեղու Հայաստանի», նույն տեղում:






***ՓԻՔ (ՁԱԳԼԻԿ). տեսարաններ գյուղից***

բացման տարեթիվ է համարվել նաև 1876 թ. «Այս գիւղի ուսումնարանը հիմնուել է 1876 ամի ապրիլի 15-ից, այսինքն այն օրից, երբ իմ հրաւիրելով Պարոն Ալեքսանդր Արարատեանցը սկսել է իւր դասախօսութիւնը...»[1561]: Արխիվային մեկ այլ վավերագրում էլ կրթօջախի հիմնադրման տարեթիվ է նշվել 1877-ը[1562]: Այս վկայությունը հաստատում են նաև որմերին փորագրված 2 արձանագրությունները, որոնք, բարեբախտաբար, 1904 թ. գրի է առել Հովհաննես քահանա Խոջայանցը: Ահա դրանք.

Դպրոցի հարավարևելյան պատին եղել է.

*Շինեցաւ Փիքի Ս. Գէորգեան դպրոցս արդեամբ և ծախիւք Չարեքայ անապատի վանահայր Ա(ստուա)ծատուր Տ(է)ր Յարութիւնեան վարդապետի Աղնախեցու և Փիքի հասարակութեան 1877:*

Գրակ. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 187:

Դպրոցի պատին եղել է նաև.

*Շինեցաւ դպրոցս ի ժամանակի տեսուչ Մովսէս Եպիսկոպոսեանի և ուսուցիչ Աղէքսանդր Արարատեանի, 1877:*

Գրակ. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 187:

Ի դեպ, գոյության ողջ ժամանակամիջոցում դպրոցի համար արգասաբեր են եղել հատկապես 1876-1878 թվականները, այսինքն՝ այն ժամանակահատվածը, երբ ուսուցիչն էր Ներսիսյան դպրոցի սան Ալեքսանդր Արարատյանցը: Նա սիրված ու հարգված էր թե՛ աշակերտների, և թե՛ համագյուղացիների կողմից. թեմական վերատեսուչ Հ. Տեր-Հովհաննիսյանը թեմի դպրոցներ կատարած ստուգայցից հետո առանձնապես գոհ է մնացել փիքեցի դպրոցականների կրթական մակարդակից[1563]:

Դպրոցի շենքը կառուցվել է 1877 թ. Չարեք վանքի կալվածներից ստացված եկամուտների հաշվին[1564], մինչ այդ պարապմունքներն անցկացվել են մասնավոր տան մեջ[1565]: Զորս սենյակներից բաղկացած կառույցն ամբողջացվել է 1878 թ.[1566]: Ի դեպ, 1877-1878 թվականներին դպրոցը հայտնի է եղել Սբ. Գևորգյան անվամբ:

Հայտնի է, որ 1879-1880 թթ. դպրոցը փակ էր. «Երբ Փիք գիւղից հրաժարեցաւ ուսուցիչ պ. Աղէքսանդր Արարատեանցը, ուսումնարանը շարունակ երկու տարի փակ մնաց, որովհետև թեմական վերատեսուչ պ. Բարխուդարեանցը չը բարեհաճեցաւ հաստատել ժողովրդեան առաջարկած ուսուցչին: Իսկ այս տարի հասարակութիւնը տեսնելով, որ պ. Բարխուդարեանցի վերայ յոյս դնելը չէ կարելի ինքը ընտրեց իր ուսումնարանի համար ուսուցիչ»[1567]:

1561. «Մեղու Հայաստանի», 1879, N 46, էջ 3:
1562. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20:
1563. «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878-1879, էջ 12-13:
1564. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 364, թ. 34:
1565. «Մեղու Հայաստանի», 1883, N 18, էջ 4:
1566. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 364, թ. 11:
1567. «Մեղու Հայաստանի», 1881, N 120, էջ 2:

1883-ից հոգևոր իշխանության կարգադրությամբ Չարեք վանքը դպրոցին հատկացրել է տարեկան 100 ռ. նպաստ[1568]:

Ցարական իշխանությունների պարտադրմամբ հայկական դպրոցների համընդհանուր փակման ժամանակ 1885 թ. Փիրի դպրոցը ևս փակվել է:

1888 թ. Մակար Ա կաթողիկոսի կոնդակով Փիրի ծխական դպրոցի հոգաբարձուների կազմում հաստատվել էին Պետրոս քահանա Սարգսյանը, երեցփոխ Միքայել Գուլումյանցը և Վահան Գրիգորյանը[1569]:

Ցարական կառավարության հրամանով 1896 թ. դպրոցը կրկին փակվել է և վերաբացվել միայն 1906 թ. (ուներ գրադարան)[1570]:

Համեմատելով գյուղի բնակչության և աշակերտների թվաքանակը՝ կարելի է նկատել, որ դպրոցահասակ երեխաների մեծ մասը դպրոց չի հաճախել: Այլ գործոններից զատ՝ երեխաները կրթությունից ետ են մնացել գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկված լինելու պատճառով: Աշակերտների թվաքանակը մշտապես փոփոխվել է՝ կապված տարվա եղանակի հետ. «Ձմեռ ժամանակ այստեղ ուսանող մանուկների թիւը մօտ 120 է հասնում, իսկ մայիսից սկսվում է կամաց կամաց նուազիլ այդ թիւը և հասնել 20-ի»[1571]:

Հայտնի է, որ 1915/1916 ուստարում Էջմիածնի Սինոդի միջոցով դպրոցական դրամագլխի տոկոսներից Փիրի դպրոցը ստացել է 100 ռ. նպաստ[1572]:

Փիրի ծխական դպրոցի գործունեության ժամանակագրություն.

| տարեթիվ | ուսուցիչ | աշակերտ | այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 1866[1573] | | 88 | |
| 1876[1574] | 1 | 30 | ծխական-արական |
| 1877[1575] | 1 | 95 | Սբ. Գևորգյան |
| 1878[1576] | 1 | 93 | Սբ. Գևորգյան |
| 1882[1577] | 2 | 65 | |
| 1883[1578] | | | գործել է |
| 1878[1579] | | | վերաբացվել է |
| 1890[1580] | | 54 | |
| 1890[1581] | | 58 | |
| 1891[1582] | | 60 | |
| 1892[1583] | | 52 | |
| 1893[1584] | | | գործել է |
| 1894[1585] | 1 | 58 | |
| 1906[1586] | | 87 (28 իգ) | վերաբացվել է սեպտ. 15-ին, միդասյա, 4 բաժանմունքով |
| 1907[1587] | | | միդասյա, արական |
| 1909[1588] | 2 | 98 (37 իգ) | երկսեռ |
| 1910[1589] | | | ծխական, երկսեռ |
| 1911[1590] | 2 | 107(47 իգ) | |
| 1911/12[1591] | ուսուցիչներ՝ Գալուստ Մամիկոնյան, Երմոնյա Եղյան | 90 (14 իգ.) | քառամյա |
| 1912[1592] | | | գործել է |
| 1914[1593] | 2 | 75 | |
| 1915[1594] | | | գործել է, դպրոցի շենքը նորոգման կարիք ուներ |

**Պետական (ռուսական) դպրոց.** բացվել է 1899 թ. սեպտեմբերի 1-ին, եղել է միդասյա, գործել 3 բաժանմունքով և ունեցել է 96 աշակերտ և 24 աշակերտուհի[1595]:

**Եկեղեցիներ.** Փիր (Նոր Փիր) գյուղում եղել են երեք եկեղեցիներ: Ավելի վաղ կառուցվածը («գիւղիս հին եկեղեցու, որի ծածկըն փայտաշէն է...»)[1596] հայտնի էր Սբ. Աստվածածին անվամբ: Վավերագրերում եկեղեցին հիշատակվում է 1790[1597], 1815[1598], 1823[1599], 1860[1600] և 1885[1601] թվականներին: Ունեցել է հետևյալ արձանագրությունները.

Սբ. Աստվածածին եկեղեցի. փայտե սյան վրա եղել է՝

*Իշխանութեան մէլիք Հախնազարի, պապեր ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն. որդիք՝ Պալին, Սարգիս, հանգուցեալ որդին Տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն, թվ. ՌՃԼԶ (1687):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 298:

1568. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 500, թ. 2:
1569. «Արարատ», 1888, էջ 129:
1570. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 364, թ. 2, 16:
1571. «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
1572. «Արարատ», 1916, էջ 13:
1573. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 115:
1574. Նույն տեղում, գ. 3850, թ. 52, նաև՝ ֆ. 56, ց. 3, գ. 62., թ. 46:
1575. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 130:
1576. Նույն տեղում, գ. 3850, թ. 178:
1577. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 482:
1578. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 500, թ. 2:
1579. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 482:
1580. Նույն տեղում:
1581. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 151:
1582. Նույն տեղում, գ. 3889, թ. 150:
1583. Նույն տեղում, գ. 3891, թ. 122, ֆ. 56, ց. 15, գ. 11, թ. 12-13:
1584. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 126-127:
1585. Նույն տեղում, գ. 3895, թ. 99, գ. 3896, թ. 34, 175-176:
1586. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 207, թ. 19: Ի դեպ, մեկ այլ տեղեկագրում դպրոցի վերաբացման տարեթիվ է 1907 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20):
1587. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 285, թ. 2:
1588. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
1589. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 605, թ. 4:
1590. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
1591. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 20:
1592. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 718, թ. 2:
1593. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 482:
1594. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1062, թ. 1:
1595. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 146:
1596. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 298:
1597. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 131-132:
1598. Նույն տեղում, գ. 3833, թ. 132-133:
1599. Նույն տեղում, գ. 3833, թ. 130-131:
1600. Նույն տեղում, գ. 3834, թ. 22-23:
1601. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:

Սբ. Աստվածածին եկեղեցի. որմին՝

*Սուրբ Աստուածածին բարեխօս Տէր Ըստեփան-նոսին, թվ. ՌճԺԹ (1670):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 298:

Երկրորդը Սբ. Ստեփանոս եկեղեցին է. «...հոյա-կապ քարաշէն, վեց փառաւոր սիւներով, շինուած 1849 թուին՝ մասամբ ժողովրդի օգնութեամբ և մասամբ Տփխիսեցի պ. Ստեփան Միրիմանեանցի, որի և յիշատակարանը փոքրիկ մարմարեայ քարի վերայ գտնուում է եկեղեցւոյ արևմտեան պատի մէջ»[1602]: Եկեղեցու նկարագրության հաջորդ հեղի-նակը ուշադրությունն ավելի շատ սևեռել է ճարտա-րապետական կողմի վրա. «...քարուկիր, կամարա-կապ վեց սիւների վերայ, ունի մի կաթուղիկէ դասի վերայ և մի փոքր զանգատուն եկեղեցուս արև-մըտեան ծայրում տանեաց վերայ. 22 մետր երկա-րութիւն, 12 լայնութիւն, քարեայ խաչկալ...»[1603]:

Գործել է մինչև 1928 թ. և անվերադարձ փակ-վել[1604]:

Ունի հետևյալ արձանագրությունը.

Սբ. Ստեփանոս եկեղեցի.

*1849. ՌՄՂԸ թվին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 296:

1849 թվականը, անտարակույս, Սբ. Ստեփանոս եկեղեցու կառուցման ավարտի տարեթիվն է, քանի որ փոքրիկ զանգակատունը, օրինակ, կառուցվել է եկեղեցու գումարների հաշվին՝ 1847 թ. «վասն շինելոյ զմի գմբէթ ի վերա եկեղեցւոյն տասն և ութ մա-նեթ»[1605]:

Հերթական նորոգությունն իրականացվել է 1862 թ. «Եկեղեցւոյն մէջն սալայատակելու և գլխի փարշն իրար կապելուն ծախս եղև 170 ռուբլի»[1606]:

Եկեղեցին ուղղանկյուն հատակագծով գմբեթա-վոր դահլիճ է՝ կառուցված անտաշ քարով, կրաշա-ղախով: Կառուցողական առավել պատասխանա-տու հանգույցներն ու գմբեթն իրականացվել են սրբատաշ քարով:

Եկեղեցում պահվել է չորս ձեռագիր ավետա-րան[1607]:

Գյուղի երրորդ՝ Սբ. Հովհաննես եկեղեցուց հայտնի է միայն նորոգության տարեթիվը.

Սբ. Հովհաննես եկեղեցի.

*Ս(ուր)բ Յովհաննէս եկեղեցիս / նորոգեցաւ ար-դեամբ Փիփ / գիւղի հասարակութեան հանգա/նա-կութեամբ եւ ջանքերով Եղի/սապետ Պօղոսեանցի եւ Ազիզ / Բաղդեանցի, 1912 սեպտ. 8:*

Հրատ. առաջին անգամ:

1602. «Արձագանք», 1886, N 23, էջ 329:
1603. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 296:
1604. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
1605. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3814, թ. 105:
1606. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3836, թ. 40-41:
1607. «Արձագանք», 1886, N 23, էջ 329-330: Նաև՝ **Բարխուտա-րեանց Մ.**, Արցախ, էջ 296-298:







***ՓԻՐ (ՁԱԳԼԻԿ). Ծխական դպրոցի կնիքը, Սբ. Ստեփանոս եկեղեցու տեսքը հարավից և հյուսիս-արևմուտքից***

**Քահանա.** Փիր գյուղի հոգևոր կարիքները մշտա-պես բավարարել են 2-3 քահանաներ:

1832 թ. Փիրի քահանա է ձեռնադրվել *Պետրոս Տեր Վարդանյանը*[1608]:

*Տեր Գալուստ Սամիկոնյանը,* որը Փիրում քա-հանայագործել է ձեռնադրման օրվանից (6 մարտի 1823 թ.), եկեղեցու շինարարության ընթացքում ցուցաբերած եռանդուն աշխատանքի համար ար-ժանացել է Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե. Աշտարակեցու պարգևին. «յաղագս ջերմեռանդ աշխատութեան իւրոյ ի վերա շինութեան եկեղեց-ւոյն Փիր գեղջ վարձատրեալ է ի 1851 ամի ոսկեզօծ լանջական խաչիւ ի Ներսէս սրբազնագոյն կաթու-

1608. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 131-132:





ՓԻՔ (ՁԱԳԼԻԿ). Սբ. Ստեփանոս եկեղեցի







ՓԻՔ (ՁԱԳԼԻԿ). Սբ. Աստվածածին և Սբ. Հովհաննես եկեղեցիները և վերջինիս շինարարական արձանագրությունը

ղիկոսէ Ամենայն Հայոց» (1860 թ. տակավին քահանայագործում էր)[1609]:

1834-ից գյուղում քահանայագործել է նաև *Գալուստ Տեր-Խաչատրյան Շահնազարյանցը* (1860 թ. տակավին քահանայագործում էր)[1610]:

1878 թ. Փիքն ունեցել է 3 քահանա[1611]:

1892 թ. հոկտեմբերի 21-ին 45 տարեկան հասակում կարճատև հիվանդությունից հետո վախճանվել է *Հովհաննես Սամիկոնյանց քահանան*[1612]:

1897 թ. քահանա է ձեռնադրվել *Հովհաննես Ոսկանյան Խոջայանցը* (ուներ 2 երեխա. Հայկ՝ ծնվ. 1892 թ., Հայկանուշ՝ ծնվ. 1896 թ.)[1613]: 1908 թ. նա քահանայագործում էր *Մովսես Սամիկոնյանցի* հետ[1614]: Հովվել է առնվազն 1922 թ.[1615]:

**Հին Փիք գյուղատեղի.** գտնվում է Փիք գյուղից 5 կմ հյուսիս-արևմուտք՝ Շամքոր գետի աջ ափից 0,8 կմ հեռավորության վրա՝ վերջինիս աջ վտակ Փիք (Ձագլիկ) գետակի աջակողմյան հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1000-1050 մ բարձրության վրա:

*Եկեղեցի.* 1886 թ. ականատեսը ծմեռոցի վերածված գյուղատեղիում կանգուն եկեղեցու մասին նշել է. «...կայ մի քարաշէն ամուր եկեղեցի մեծադիր, որի

1609. Նույն տեղում, գ. 3833, թ. 130-131:
1610. Նույն տեղում:
1611. «Մեղու Հայաստանի», 1878, N 46, էջ 4:
1612. «Նոր Դար», 1892, N 171, էջ 2:
1613. ՀԱԱ, Պ461, ց. 1, գ. 12, թ. 68-69:
1614. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:
1615. ՀԱԱ, ֆ. Պ57, ց. 3, գ. 375, թ. 3:







***ՓԻԲ (ՁԱԳԼԻԿ). գյուղամերձ աղբյուրներ և Սբ. Փեփրոնյա եկեղեցի***

պատերի լայնութիւնն երեք և կէս արշին է»[1616]: Ինչպես վկայում է 1885 թ. վավերագիրը, եկեղեցին օծված է եղել Սբ. Փեփրոնյա կույսի անվամբ[1617]:

Եկեղեցու շենքն աչքի է ընկել ընդարձակությամբ, որը, ինչ խոսք, վկայում է երբեմնի շեն գյուղի բազմամարդության մասին. «...անարատ մնում է եկեղեցին, որ շինուած է երկու կամարների վերայ: Աւագ խորանի աջ ու ձախ կողմերում կան երկու ծակեր, որք գաղտնի պահարաններ են: Հոյակապ տաճարիս երկարութիւնն է 26 մետր 35 սանթիմ, լայնութիւնն 12 մետր 70 սանթիմ, պատի հաստութիւնն 2 մետր 40 սանթիմ»[1618]:

Ունեցել է հետևյալ արձանագրությունները.

Եկեղեցի. մուտքի բարավորին եղել է.

*Կամաւն Աստուծոյ մեք Փիփեցոց ժողովուրդս միաբան շինեցաք զեկեղեցիս, ի հայրապետութեան տեառն Պետրոսի, ձեռամբ Սարգիս վարդապետին, յիշխանութեան Մուրթուզա Ղուլի խանին. յիշեցէք ի Քրիստոս տանուտէր Վարդանէսն և կողակից Մարեան:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 330: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 301: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 311:

Ծանոթ. «Արձագանք»-ում՝ *Փիփեցոց*-ի փոխարեն՝ *Փաբեցոց*:

Վիմագրի ժամանակը որոշվում է Աղվանից Պետրոս կաթողիկոսի գահակալության տարիներով (1653-1675 թթ.):

Եկեղեցի. մկրտության ավազանի վրա.

*Յիշեցէք ի Քրիստոս Ծարուրն և կողակիցն իւր Մարեան, թվ. ՌճԺԹ (1670):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 330: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 311:

Եկեղեցի. սեղանի աջակողմյան որմին.

*Յիշեցէք ի Քրիստոս քահանայք եկեղեցւոյ Տէր Ոսկանն, Տէր Եղիին: Յիշեցէք ի Քրիստոս Մխիթարն:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 330:

---

1616. «Արձագանք», 1886, N 23, էջ 330:
1617. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
1618. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300:

Եկեղեցի. հյուսիսային ավանդատան մուտքին.

*Յիշեցէք ի ՔրիստոսԳաւրկին և Ծատուրն ...Ա-ռաքելըն և որդին իւր Յովհան:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300-301:

**Բարսամ ճգնավոր մատուռ.** գտնվելիս է եղել Սբ. Փեփրոնյա եկեղեցու հարավային կողմում: Ներսում եղել է երեք անարձանագիր տապանաքար, որոնցից մեկի կողքին գտնված խաչքարի վրա եղել է հետևյալ արձանագրությունը.

*Ես Մաղագայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս հաւր ... եղբաւրն իմոյ տէր Պար... մարհ եպիսկոպ-սին, թվ. ՋՁ (1457):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 23, էջ 330: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 301: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 311:

Ծանոթ. «Արձագանք»-ի թղթակիցն ունի. «Ես ... կանգնեցի խաչս հաւրն ... իմոյ Պարսամայ քահանային, թվ. ՋՁ»:

**«Մաղթում զաղե» մատուռ.** գերեզմանոցից քիչ հեռու՝ «...ձորի աջ կողմում, գետակահայեաց լանջի վերայ, մի տեսարանաւոր սարահարթում հանգըստարան և աւերակ մատուռ»[1619]: Մատուռի մոտ կանգնեցված են եղել երկու խաչքարեր, որոնցից մեկն ունեցել է հետևյալ արձանագրությունը.

Խաչքար.

*Սուրբ խաչս բարեխաւս Խամբկի, ՆՀԳ (1024):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 313: «Դիվան...», V, էջ 257:

Ծանոթ. Մ. Բարխուտարյանցը ճիշտ չի համարել վերջին երեք տառերն առանձնացնելը որպես թվական, այլ՝ *...Խամբկին հ[ո]գ[ոյն]:*

**Քարահատի խաչ.** ուխտատեղի է՝ գյուղի հարավային կողմում՝ Շիբասարի վրա. «...որի ծածքն փայտաշէն է և որի մէջ ամփոփուած է ոմն յարգելի անձի մարմինն, բայց անյայտ է սուրբ ամփոփեալի անունն»[1620]:

**Րուսկան նահատակ.** այս անվամբ հայտնի ուխտատեղին գտնվում է Փիրից հյուսիս-արևմուտք՝ լեռան գագաթին: Ներսում եղել է մի մեծ խաչքար[1621]:

**Կեռստավանք բերդ.** գտնվում է Շամքոր գետի աջ կողմում՝ Րուսկան նահատակ ուխտատեղիից փոքր-ինչ ցած՝ արևմտահայաց, թեքադիր լեռնաճյուղի վրա, 2 կողմից խոր ձորերով առանձնացած տեղանքում: ԺԹ դարավերջին բերդի մասին ականատեսը նշել է. «Ունի շրջապարիսպ, որից այժմ տեղ տեղ քանդուած է կամ լավ նս է ասել, մնում է պարսպի ստորին մասն և քարուկիր շինութեանց բեկորներ»[1622]:

## ՔԱՐՀԱՏ (ՆԵՐՔԻՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 1 կմ արևելք՝ Արթինաջուր գետի ձախակողմյան հարավարևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1280-1380 մ բարձրության վրա:

**Հնագիտական հուշարձաններ.** Քարհատ գյուղի տարածքում պահպանված բազմաթիվ դամբարանաբլուրների պեղումներն ու ուսումնասիրությունը ցույց են տվել, որ դրանք վերաբերում են բրոնզ-երկաթ անցումային դարաշրջաններին[1623]:

**Պատմություն.** Քարհատը երկրամասի պատմական առավել նշանակալից անցյալ ունեցած գյուղերից է: Նյութական մշակույթի պահպանված հուշարձանները փաստում են բնակավայրի գոյությունն առնվազն վաղ միջնադարից, սակայն գրավոր աղբյուրներում գյուղը հաճախակի սկսում է հիշատակվել միայն ԺԷ դարում, երբ Քարհատը վերածվում է գրչօջախի: Մեզ հասած կամ հայտնի ձեռագրերը 6-ն են:

Ա. Ավետարան, 1655 թ. «...եղև յաւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գեանջու, ի գեօղն Քարհատ, ի թագաւորութեան Շահաբասի փոքու, ՌՃԴ»[1624]:

Բ. Շարակնոց, 1656 թ., գրիչ և ծաղկող՝ Գրիգոր երեց, ստացող՝ Սանդուխտ. «...ի յերկիրս Գանձակ, ի գևղս որ կոչի Քարահատ, ընդ հովանեաւ Ս. Յակոբիս և Ս. Աստուածածնիս...»[1625]:

Գ. Ավետարան, 1659 թ., գրիչ՝ Գրիգոր երեց. «...ի յերկիրս Գանջոյ, ի գեղս որ կոչի Քարահատ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս...»[1626]:

Դ. Ժամագիրք, տոնացույց, 1665 թ., գրիչ՝ Գրիգոր[1627]:

Ե. Ավետարան, 1675 թ., գրիչ և ծաղկող՝ Գրիգոր քահանա, ստացող՝ Իգնատիոս վարդապետ[1628]:

Զ. 1676 թ. Ավետարան, գրիչ՝ Բարսեղ քահանա, ծաղկող՝ Գրիգոր քահանա, ստացող՝ Մովսես քահանա[1629]:

1691 թ. հիշվում է Քարհատի գյուղապետը. «...քարհատցի տանուտէր Յակոբս...»[1630]:

**Տնտեսություն, զբաղմունք.** քար հատել (կտրել), այսինքն՝ հանքագործների (քարհատների) գյուղ: Գյուղի անունն իսկ հուշում է, թե որն էր բնակիչների հիմնական զբաղմունքը: Ըստ որում, տեղացիները հանքագործությամբ զբաղվել են անհիշելի ժամանակներից: «...Ժողովուրդը հոչակ ունի որպէս քարհատ, հանքերում աշխատելու ընդունակ: Գիւղացիների պարապմունքը մի ժամանակ եղել է երկաթի հանքեր հանել և երկաթ պատրաստել, բայց

1619. Նույն տեղում:
1620. Նույն տեղում, էջ 299:
1621. Նույն տեղում, էջ 300:
1622. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 304:

1623. **Реслер Э.**, նշվ. հոդվ., էջ 2:
1624. «Մեղու Հայաստանի», 1885, N 74, էջ 3: «ԺԷԳ», էջ 663: Ի դեպ, մագաղաթե ձեռագիրը 1884 թ. Հայկունին տեսել է Գանձասարի վանքում:
1625. «ԺԷԳ», էջ 697: Նաև՝ «Ցուցակ Ձեռագրաց», հ. Բ, էջ 1036, ձեռ. N 10044:
1626. «ԺԷԳ», էջ 852:
1627. «ՑՁԲ», էջ 931, ձեռ. N 9448:
1628. Նույն տեղում, էջ 845, ձեռ. N 8965:
1629. Նույն տեղում, էջ 153, ձեռ. N 5636:
1630. «Արարատ», 1900, էջ 320:



***ՔԱՐՀԱՏ (ՆԵՐՔԻՆ). գյուղի ընդհանուր տեսքը հարավից***

Ռուսիայից էժան երկաթ բերելու պատճառով, բոլորովին թողել են երկաթի հանքերի մշակութիւնը»[1631]: Երկաթի մշակումը դադարեցվել է միայն ԺԹ դարի 2-րդ կեսին:

Հողագործությամբ զբաղվողների թիվն էլ կրճատվել էր գերմանական «Սիմենս» ընկերության կողմից Քարհատին պատկանող հողերի մեծ մասի բռնագրավման պատճառով. «Ասում են, որ գիւղացիները մի ժամանակ բաւական հողեր են ունեցել, բայց Սիմէնսը խլել է նրանց ձեռքից: Սիմէնսի կօբալտի հանքն էլ մօտիկ է այդտեղից...»[1632]: Դա արդեն 1880-ական թվականների վերջերին գյուղացիներին տնտեսապես այնքան էր ընկճել, որ նրանք սկսել էին խորհել գյուղը լքելու մասին. «Գիւղի դիրքն շատ անյարմար է և ժողովուրդն աղքատ, այնպէս որ մտադրութիւն կայ գիւղը մի այլ տեղ փոխադրելու»[1633]:

Եվ, իրոք, շատ չանցած, 1894-1895 թթ. քարհատցիների կեսից ավելին հեռացան հարազատ գյուղից և համանուն մի գյուղ հիմնեցին Արթինաջուր գետի հոսանքն ի վեր՝ 4 կմ հարավ-արևմուտք: Հին գյուղից տարբերակելու համար ստացավ Վերին Քարհատ անունը: Նոր գյուղի հիմնադրումից հետո հին գյուղը սկսեցին անվանել Ներքին Քարհատ:

**Բնակչություն.** քարհատցիները բնիկներ են[1634]:

Ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացանկը.

«1. Մակի Յարութիւնեան, կինն՝ Հոռոմ, ուստր՝ Ալլահվէրդի. դուստր՝ Թամար, եղբայր՝ Խաչատուր, կինն՝ Աննայ, ուստերք 1-ն՝ Գէորգ, կինն՝ Խաթուն, դուստր՝ Ջավահիր, 2-ն՝ Յովհաննէս:

2. Սարգիս Ներսիսեան, կինն՝ Եթար, ուստերք 1-ն՝ Ղուկաս, կինն՝ Շողի, ուստր՝ Չէրքէզ, 2-ն՝ Բաբի, կինն՝ Ազիզ, 3-ն՝ Յարութիւն, կինն՝ Շողի, եղբայր՝ Պարսեղ, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Խաչատուր և Բէգլար:

3. Բաբաջան Ներսիսեան, ուստերք1-ն՝ Արզուման, կինն՝ Սիրուննան, ուստր Օհաննէս, 2-ն՝ Մինաս, կինն՝ Մարիամ:

4. Միքայէլ Տէր Անտօնեան, կին սորա՝ Խամփէրուան, ուստր՝ Սինէօն, կինն՝ Հէրիք, դուստր՝ Շահգուլ:

5. Մկրտիչ Վիրապեան, կինն՝ Մարգարիտ, դուստր՝ Վարդի, ուստր՝ Բաբի, կին սորա՝ Սանդուխտ, եղբայրն՝ Եսայի, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Ղուլի և Յակոբ, դստերք՝ Շողի և Հէրիք:

6. Վարդան Մխիթարեան, ուստերք 1-ն՝ Օհաննէս, կինն՝ Անախաս, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Գիւլի, 2-ն՝ Սարգիս, կինն՝ Փարի, ուստր՝ Մխիթար, եղբայրն՝ Խալաթ, կինն՝ Սաբէդ, ուստր՝ Մխիթար, կինն՝ Նիգար, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Զարի:

7. Յօհաննէս Տէր Յարութիւնեան, կինն՝ Մարգարիտ, ուստերք 1-ն՝ Գրիգոր, կինն՝ Մարիամ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Սաբէդ, 2-ն՝ Ստեփան, կին Մարիամ, ուստր Վարդազար, դստերք՝ Խաթուն և Խալլու, 3-ն՝ Գէորգ այրի, ուստր՝ Մնացական:

8. Յակոբ Գրիգորեան, կին սորա՝ Փարի, ուստերք 1-ն՝ Մկրտիչ, կինն՝ Սանդուխտ, 2-ն՝ Գրիգոր և 3-ն՝ Մէլիք, դուստր՝ Շահալամ:

---

1631. «Նոր-Դար», 1890, N 122, էջ 3:

1632. Նույն տեղում:

1633. Նույն տեղում:

1634. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 286:

9. Բարսեղ Ստեփանեան, եղբայրն՝ Գրիգոր, քոյրն՝ Մարիամ, մայրն՝ Զադա:

10. Սարգիս Սիմէօնեան, կինն՝ Վառի, ուստր՝ Վիրապ, կինն՝ Ոսկի, քոյրն՝ Հէրիք, եղբայրն՝ Օհան, կինն՝ Հէրիք, ուստր՝ Բէգլար, դուստր՝ Խաթուն:

11. Գասպար Միքայէլեան, կինն՝ Փարի, դստերք՝ Հէրիք և Թանգի, մայրն՝ Մարիամ:

12. Ցական Աստուածատուրեան, քոյր՝ Հէրիք, մայրն՝ Պարուննան»[1635]:

ԺԹ-Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալներից երևում է, որ ընդհանուր առմամբ Քարհատում արձանագրվել է բնակչության անընդմեջ աճ մինչև 1894-95 թթ., երբ համագյուղացիների կեսից ավելին փոխադրվել ու հիմնել են Վերին Քարհատը:

Որոշ տարիներին բնակչությունը կորուստներ է ունեցել մահաբեր վարակիչ հիվանդությունների հետևանքով, օրինակ, 1899 թ. նոյեմբերից 1900 թ. ապրիլ ամիսներին, երբ ծաղիկ հիվանդությունից մահացել է 61 երեխա)[1636]:

Ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող առկա տվյալների համադրման արդյունքում կազմված աղյուսակը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1839[1637] | 12 | 63 | 60 | 123 |
| 1845[1638] | | 99 | 114 | 213 |
| 1847[1639] | | 91 | 80 | 171 |
| 1849[1640] | | 91 | 95 | 186 |
| 1852[1641] | | 96 | 92 | 188 |
| 1861[1642] | 18 | | | |
| 1866[1643] | 40 | 190 | 145 | 335 |
| 1871[1644] | 47 | | | |
| 1872[1645] | | 434 | 221 | 655 |
| 1873[1646] | | | | 551 |
| 1874[1647] | | | | 961 |
| 1875[1648] | | | | 575 |
| 1876[1649] | | | | 599 |
| 1877[1650] | | 413 | 211 | 624 |
| 1878[1651] | | 420 | 213 | 633 |
| 1881[1652] | | 432 | 223 | 655 |
| 1882[1653] | | 443 | 225 | 668 |
| 1883[1654] | | 459 | 244 | 703 |
| 1885[1655] | 55 | 402 | 354 | 756 |
| 1886[1656] | 80 | 435 | 361 | 796 |
| 1887[1657] | | 447 | 353 | 800 |
| 1888[1658] | | 448 | 354 | 802 |
| 1889[1659] | | 463 | 366 | 829 |
| 1890[1660] | 100 | 479 | 378 | 857 |
| 1891[1661] | | 486 | 393 | 879 |
| 1892[1662] | | 491 | 398 | 889 |
| 1893[1663] | | 488 | 416 | 904 |
| 1894[1664] | | 494 | 420 | 914 |

1894-1895 թթ. տեղի է ունեցել Վերին Քարհատի հիմնադրումը, սակայն տեղեկագրերում երկու գյուղերի բնակչության թվաքանակը ցույց է տրվել միատեղ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1897[1665] | | 529 | 448 | 977 |
| 1898[1666] | | 541 | 461 | 1002 |
| 1899[1667] | | 548 | 463 | 1011 |
| 1900[1668] | | 563 | 482 | 1045 |
| 1901[1669] | | 568 | 491 | 1059 |
| 1902[1670] | | 572 | 490 | 1062 |
| 1905[1671] | | 575 | 494 | 1069 |
| 1906[1672] | | 622 | 521 | 1143 |
| 1907[1673] | | | | 1119 |
| 1908[1674] | 130 | 614 | 580 | 1094 |
| 1910[1675] | | 643 | 518 | 1161 |
| 1912[1676] | | | | 1113 |
| 1914[1677] | | | | 1001 |

Ներքին Քարհատի բնակչությունն առանձին ցույց է տրված միայն հետևյալ տարիներին.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1907[1678] | | | | 428 |
| 1908[1679] | 48 | 229 | 171 | 400 |
| 1910[1680] | | 252 | 201 | 451 |
| 1914[1681] | | | | 340 |

1635. Նույն տեղում, գ. 3800, թ. 29:
1636. «Մշակ», 1900, N 77, էջ 2:
1637. Նույն տեղում:
1638. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 4-5:
1639. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
1640. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
1641. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:
1642. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 148-149:
1643. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
1644. Նույն տեղում, գ. 5835, թ. 1:
1645. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1646. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40: Նույն թվականի մեկ այլ տեղեկագիր ցույց է տալիս 540 բնակիչ (նույն տեղում, գ. 3862, թ. 58-59):
1647. ”Кавказский календарь на 1886 г.”, с 125.
1648. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 44-45:
1649. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1650. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
1651. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1652. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
1653. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1654. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1655. Նույն տեղում, գ. 3877, թ. 22-23: Նաև՝ «Արձագանք», 1885, N 21, էջ 300:
1656. “Свод...”, с. 84-85.
1657. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
1658. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
1659. Նույն տեղում, գ. 3884, թ. 27-28, 227-228:
1660. Նույն տեղում, գ. 3887, թ. 150: Նաև՝ «Նոր-Դար», 1890, N 122, էջ 3:
1661. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 149:
1662. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
1663. Նույն տեղում, գ. 3895 թ. 78-79:
1664. Նույն տեղում, գ. 3896, թ. 73-74, 174-175:
1665. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
1666. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
1667. Նույն տեղում, գ. 3903, թ. 127-128:
1668. Նույն տեղում, գ. 3905, թ. 92-93:
1669. Նույն տեղում, գ. 3906, թ. 98-99:
1670. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 23-24:
1671. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
1672. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1673. ”Кавказский календарь на 1910 г.”, с 237.
1674. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10:
1675. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 58-59:
1676. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
1677. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 116.
1678. ”Кавказский календарь на 1910 г.”, с 237.
1679. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10:
1680. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 58-59:
1681. “Кавказский календарь на 1915 г.”, с. 116.









***ՔԱՐՀԱՏ (ՆԵՐՔԻՆ). գերեզմանոց և խաչքարեր (Թ-ԺԳ դարեր)***

**Դպրոց.** 1905 թ. ցարական իշխանություններից հայկական դպրոցների վերաբացման թույլտվությունից անմիջապես հետո քարհատցիները սեպտեմբերի 27-ին գումարում են հասարակական ժողով և վճռում անհապաղ բացել միդասյա դպրոց[1682]: Դպրոցական շենքի կառուցումը սեփական միջոցներով ստանձնում է գանձակեցի տիկին Եղիսաբեթ Ն. Համբարձումյան Մալխասյանցն իր հանգուցյալ ամուսնու՝ Ստեփանոս Մալխասյանցի հիշատակին[1683]: Սբ. Ստեփանոսյան երկսեռ դպրոցի բացումը տեղի է ունեցել 1908 թ.[1684]: Նույն թվականին դպրոցն ունեցել է 54 աշակերտ[1685], 1909 -ին՝ 1 ուսուցիչ և 70 աշակերտ (4-ը՝ աղջիկ)[1686], 1911-ին՝ 2 ուսուցիչ և 82 աշակերտ (6-ը՝ աղջիկ)[1687]:

1913 թ., չնայած դպրոցական շենքի և դրամագլխի առկայության, հաստատությունը փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով[1688]:

**Եկեղեցի.** ձեռագիր հիշատակարաններից հայտնի են Քարհատի 2 եկեղեցիների անունները՝ Սբ. Հակոբ (հիշ. 1656 թ.) և Սբ. Աստվածածին (1656, 1659 թթ.):

Մինչև 1878 թ. վերաբերող բազմաթիվ վավերագրերում Քարհատում հիշվում է Սբ. Ստեփանոս անվամբ փայտաշեն (անշուշտ, ծածկը նկատի ու-

1682. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 140, թ. 1:
1683. Նույն տեղում, գ. 433, թ. 2:
1684. Նույն տեղում, գ. 559, թ. 15:
1685. Նույն տեղում, գ. 433, թ. 10:

1686. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 18:
1687. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
1688. «Մշակ», 1913, N 145, էջ 3-4:





*ՔԱՐՀԱՏ (ՆԵՐՔԻՆ). խաչքար, 1292 թ.*

նենալով) եկեղեցի (օրինակ՝ 1849[1689], 1852[1690], 1861[1691], 1872[1692], 1878[1693] թթ.), իսկ 1882-ից հետո՝ քարաշեն Սբ. Աստվածածին (օրինակ՝ 1882[1694], 1885[1695] թթ.): Վերոնշվածից հետևում է, որ 1878-1882 թթ. միջակայքում Քարհատի Սբ. Ստեփանոս եկեղեցին վերակառուցվել է (գուցե և հիմնովին) ու վերստին օծվել:

1903 թ. Սբ. Աստվածածին եկեղեցու շենքը քայքայված վիճակում էր և, մասնավորապես, տանիքը՝ նորոգության կարոտ: Այդ առթիվ շարադրված մի համախոսականում նշվել է. «Ներքին Քարհատը իւր հին Ս. Աստուածածին եկեղեցով և ժողովրդով զուրկ է ամեն տեսակ բարեզարդութիւնից և մխիթարութիւնից. չունի երեցփոխ և հոլուատեսներ, որ եկեղեցու տնտեսական ամեն տեսակ հոգսերը հոգան: Եկեղեցին այժմ հետզհետէ քայքայւում է, անհրաժեշտ է դորա առաջն առնել և եկեղեցու տանիքը ծածկելու կրամիտով, նոյնպէս հարկաւոր է ունենալ առանձին երեցփոխ իւր հոլուատեսներով, նոյնպէս հոգաբարձուներ՝ վերանորոգելու համար: Եւ այդ կարիքները հոգալու համար խնդրում ենք իրաւունք տալ մեզ մեր եկեղեցական գումարից երեք հարիւր րուբլի ծախսելու վերոյիշեալ նորոգութեանց համար...»[1696]: Սակայն, ինչպես երևում է 1911 թ. մի փաստաթղթից, եկեղեցու վիճակը չի շտկվել, և հոգևոր իշխանությունների կողմից քարհատցիների խնդրանքը չի բավարարվել[1697]: Ի դեպ, ըստ նախահաշվի 1473 ռուբ. կազմող վերանորոգման ծախսից նվիրատվություններն շնորհիվ հանգանակվել էր սոսկ 262 ռուբ.[1698]:

Եկեղեցին հիմնահատակ քանդել են 1927 թ.:

**Քահանա.** 1871 թ. գյուղի քահանա է առաջադրվել *Անտոն Վերդյան Պապիկյանցը* և պաշտոնավարել առնվազն մինչև 1908 թ.[1699]:

**Գերեզմանոց.** գյուղամիջում գտնվող գերեզմանատունը, շնորհիվ տեղում պահպանված Թ-ԺԱ դարերից վերաբերող մի քանի խաչքարերի, պատմական մեծ արժեք ունի: Խաչքարերի վրա կան հետևյալ արձանագրությունները.

Խաչքար. խաչաթևերի միջև՝ 17 խիստ հողմահար տող.

*Թւ(ին) ՅՀԹ (930), | ... ... | ի բար|էխաւս|ութի(ւն)| ... | հոգ|ոց:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ստորին մասում՝ 4 կիսաեղծ տող.

*Ես Եղիեայ էրէց... | ...կանգնեցի սուրբ | ... | ...զիս յիշեաւջ[իք] ...:*

Հրատ. առաջին անգամ:

1689. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97:
1690. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
1691. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
1692. Նույն տեղում, գ. 3872, թ. 30-31:
1693. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1694. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1695. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:

1696. Նույն տեղում, գ. 3368, թ. 17-18:
1697. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1273, թ. 11:
1698. Նույն տեղում, թ. 16:
1699. Նույն տեղում, գ. 5835, թ. 1: Նաև՝ գ. 817, թ. 7:













***ՔԱՐՀԱՏ (ՆԵՐՔԻՆ). տեսարաններ «Ղալա» բերդից և հատակագիծը***

**«Գյոզալ քար».** Այս անվանումով խաչքար էր տեղադրված գյուղի մուտքի մոտ. «Դեռ Քարհատ չենք մտել. գիւղից մի քանի քայլ հեռու, կարծեմ, ձորի վրայ, չորս-հինգ ծառեր հովանի են անում մի խաչքարի, որին ժողովուրդը ,,Գէօզալ քար,, է անուանում»[1700]:

1700. «Նոր-Դար», 1890, N 122, էջ 3:



***ՔԱՐՀԱՏ (ՎԵՐԻՆ). գյուղի տեսքը հարավ-արևելքից***

Հետագայում այդ իրապես թանկագին խաչքարը գյուղացիները փոխադրել էին գյուղամեջ, որտեղ կանգուն է մնացել մինչև 1989 թ. բռնագաղթը:

Խաչքար. ստորին մասում՝ 8 տող.

*Թվին | ՉԽԱ (1292), | ես Ջ|ատի|կ ու Մա|թիոս կանգնեցաք զս(ուր)բ ն|շանս ի բարեխաւսութի(ւն)...:*

Հրատ. առաջին անգամ:

**«Ղալա» բերդ.** միջնադարյան փոքրիկ ամրոց է՝ գյուղից հազիվ 1 կմ հարավ՝ զետեղված բնականից գրեթե անմատչելի ժայռազանգվածի գագաթին: Հյուսիսարևմտյան կողմում ունի կիսաբոլորակ աշտարակ: Պարսպապատի պահպանված հատվածի շարվածքն իրականացված է բացառապես անմշակ քարով, կրաշաղախով: Մուտքն արևմտյան կողմից է: Քանի որ բերդն անմատչելի բարձրության վրա է, ապա ակներև է, որ հնում շրջապատի հետ հաղորդակցվել է կախովի սանդուղքի միջոցով: Տարածքում նկատելի են հազիվ նշմարվող հողածածկ շինությունների հետքեր, պատերի մնացորդներ:

## ՔԱՐՀԱՏ (ՎԵՐԻՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ՝ Արթինաջուր գետի ձախակողմյան, մեծ մասամբ հարավահայաց մեղմաթեք ձորալանջին, ծովի մակերևույթից 1480-1640 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Վերին Քարհատի տեղում առնվազն միջնադարից գոյություն է ունեցել հայաբնակ (պարզ ոճավորում ունեցող մի քանի խաչքարեր հատկանշական են Ժ-ԺԱ դարերին) գյուղ, բայց, հավանաբար, ԺԸ դարի 2-րդ կեսին հայաթափ է եղել: Վերստին դարձյալ հայերով բնակեցվել է 1894-1895 թթ.: Նոր գյուղի հիմնադիրները, ինչպես ասվեց, Ներքին Քարհատից փոխադրված ընտանիքներն էին: Գյուղին տրվեց Վերին Քարհատ անունը:

**Բնակչություն.** գյուղի բնակչությունն առանձին ցույց է տրված միայն հետևյալ տարիներին.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1907[1701] | | | | 691 |
| 1908[1702] | 82 | 385 | 309 | 694 |
| 1910[1703] | | 391 | 317 | 708 |
| 1914[1704] | | | | 661 |

**Դպրոց.** Վերին Քարհատի դպրոցը գործել է 1908-ից որպես երկսեռ կրթական հաստատություն և ունեցել 70 աշակերտ (4-ը՝ աղջիկ):

1911/12 ուստարում դպրոցը գործել է եռամյա դասընթացով, զետեղված է եղել 3 դասարաններում, ունեցել է 2 ուսուցիչ (Արամ Պապյանց, Իշխան Հայրյանց) և 26 աշակերտ ու 3 աշակերտուհի[1705]: Ի դեպ, գյուղի գերեզմանոցում է հանգչում դպրոցի ուսուցիչներից Ա. Պապյանցը: Նրա շիր-

1701. ”Кавказский календарь на 1910 г.”, с 237.
1702. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 10:
1703. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 58-59:
1704. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 116.
1705. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 21:



***ՔԱՐՀԱՏ (ՎԵՐԻՆ). հատվածներ գյուղի հարավարևելյան եզրին տարածված գերեզմանոցից***

մաքարին փորագրված է հետևյալ արձանագրությունը.

Տապանաքար. հյուսիսային երեսին՝ 3 տող.

*Այստեղ է հանգչում մարմինը Վ. Քարհատի / ուսուցիչ Արամ Տեր Անտոնի Պապյանի / ծն. 1886 թ., վախճ. 1918 թ.:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ուղղագրությունը հուշում է, որ տապանաքարը կերտվել է 1918 թ-ից շատ ավելի ուշ, խորհրդային տարիներին:

**Եկեղեցի.** Վերին Քարհատում եկեղեցու կառուցման գործը նորաբնակները գլուխ էին բերել առանց հապաղման: Եկեղեցին կառուցվել է գյուղի արևելյան եզրին՝ Արթինաջրի ձախ ձորաբերանին՝ հրվանդանանման երկարած բլրաշարի վերջավորության վրա:

Շենքն օծվել է Սբ. Թարգմանչաց անվամբ, որի կապակցությամբ 1903 թ. մի վավերագրում նշվել է. «Թէև ութ-ինը տարի է, որ մեր հասարակութեան կէսը գաղթել է մեր Վերին հին Քարհատ գիւղատեղում նոր գիւղ հիմնել իր նորակառուց Ս. Թարգմանչաց եկեղեցով...»[1706]:

Հայտնի է, որ 1914 թ. հոգևոր իշխանությունները բավարարել են գյուղի բնակիչների՝ Սբ. Թարգմանչաց եկեղեցու քայքայված տանիքը նորոգելու խնդրանքը. նախատեսվել էր այն կղմինդրապատել 300 ռուբլիով[1707]:

Հիմքից քանդել են 1920-ական թվականներին:

**Քահանա.** 1898 թ. ձեռնադրվել է *Անտոն Բարսեղյան Տեր-Անտոնյանը*[1708]:

1706. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3368, թ. 18:
1707. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3460, թ. 1-3:
1708. ՀԱԱ, Պ461, ց. 1, գ. 12, թ. 67-68:



***ՔԱՐՀԱՑ (ՎԵՐԻՆ). կամուրջ Արթինաջուր գետի վրա***

**Գերեզմանոց.** գտնվում է գյուղի հարավարևելյան եզրին: Քարաշեն շրջապարսպով առանձնացված ընդարձակ մակերեսը պատված է ԺԹ դարավերջի և հիմնականում Ի դարի առաջին տասնամյակներին վերաբերող նոսր թաղումներով: Նույն ժամանակաշրջանին վերաբերող փոքրածավալ մեկ այլ գերեզմանոց էլ կա երբեմնի եկեղեցու շուրջ:

**Կամուրջ.** երկկենտրոն կամարաձև թաղով միաթռիչք կամուրջ է՝ Արթինաջուր գետի վրա՝ գյուղի արևելյան եզրին: Բացառությամբ կամարի անկյունաքարերից, որ իրականացված են սրբատաշ քարով, մնացած հատվածները շարված են անմշակ քարով, կրաշաղախով: Շինարարական արձանագրություն չունի (կամ չի պահպանվել): Կառուցողական և հատկապես շարվածքային առանձնահատկությունները բնորոշ են ԺԹ դարի 2-րդ կեսին:

## ՔՅՈԼԼՈՒ (ԳՈՒԼԼԱՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևելք՝ Գանձակ գետի ձախակողմյան արևելահայաց ձորալանջին:

Ամենայն հավանականությամբ, ներկայիս Քյոլլուն համապատասխանում է գրավոր աղբյուրներում հիշատակված Գուլլարին, որտեղ 1667 թ. գրիչ Սարգիս երեցն ու ծաղկող Գրիգոր երեցը հեղինակել են մի ձեռագիր ավետարան (ստացող՝ Տարչի)[1709]:

Հայաթափվել է 1770-ական թվականներին: ԺԹ դարավերջին գյուղատեղիում մշտական բնակություն են հաստատել սակավաթիվ խաշնարած թուրքեր, որոնք 1914 թ. կազմել են 95 շունչ[1710]:

Գյուղից գրեթե 1 կմ հյուսիս պահպանվել էին 1983 թ. պայթեցված մատուռի մնացորդները:



***ՔՅՈԼԼՈՒ (ԳՈՒԼԼԱՐ). պայթեցված մատուռի մնացորդներ***

1709. «Ցուցակ Ձեռագրաց», Բ, ձեռ. N 6771, էջ 390:
1710. “Кавказский календарь на 1915 г.”, с. 139.

# ԹՈՒՉԻ ՇՐՋԱՆ

Թուզի վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 1903 քկմ մակերես, ունի 100 բնակավայր, որից 98-ը` գյուղ: Սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Ղազախի, Շամխորի, Գետաբեկի, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին և Վրաստանի Հանրապետության Ծիթելի-Ծղարոյի շրջաններին: Հիմնականում ընդգրկում է Կուր գետի ափամերձ հարթավայրերը և Ջակամ գետի ավազանը:



Թռուզի շրջանի տարածքը համապատասխանում է պատմական Վերին և Ներքին Ջակամ գավառներին (առավելապես վերջինին): Գրավոր աղբյուրներում հիշվում է 1548[1711], 1639 («...ընդ հովանեաւ Ս. Խորանաշատայ Աստուածածնիս, ի գաւառս **Ջագամ**...»)[1712] և 1706 («Թիւն ՌճԾԵ էր, որ Միրզա Ղասումն գնաց ի **Ջակամ** դօշուն դուրս անիլ: Սուրբ Աստուածածնի կիրակի օրն եւ՝ Մէլիք Քեամալս եկի, որ բանին սուրաք տվի»)[1713] թվականներին:

ԺԳ դարասկզբին մոնղոլների դեմ հայ-վրացական բանակի կրած պարտության տեղի նկարագրության մեջ հիշատակված Սագիմը նույնացվում է Ջակամի հետ. «...գնացին [պատերազմելու]՝ կանգ առնելով Բերդուջ գետի վրա, որն այժմ Սագիմ է կոչվում...»[1714]:

Հատկանշական է, որ աղբյուրներում բազմիցս հիշվում է Վերին Ջակամը[1715], մինչդեռ գավառի ստորին մասը, որ նույն գավառի Ներքին հատվածն է, ամենուր պարզապես վկայակոչված է Ջակամ անունով:

Հարթավայրային բնակավայրերի նման զուրկ լինելով պաշտպանական բնական միջոցներից՝ տարածքն աստիճանաբար պարպվել է հայ բնակչությունից և ամբողջությամբ հայաթափվել 1770-ական թվականներին, երբ գաղթեցվել է Շուլավեր (այժմ՝ Շահումյան ավանը Մառնեուլի շրջանում): Ի դեպ, ջակամցիների նոր հանգրվանի՝ Մեծ Շուլավերի գերեզմանոցում պահպանվել է Ջակամի Մելիք Սարգսի շիրմաքարը՝ հետևյալ արձանագրությամբ.

Տապանաքար. չափերը՝ 154 x 62 x 30 սմ, ուղղանկյունաձև, 5 տող.

*Այս է տապան լուսահոգի մէլիք Սարքսի տ(եառ)ն Ջ/ագամու, որ է որդի մէլիք Հախնազարի եւ հայր էր սա / մէլիք Աղաճանի, որ է ք(ո)ռն մէլիք Ավալի, սա է եղ/պայր լո(ւ)սայհոքի վանայկան արքեպիսկոպ(ո)սի ՌՄԾԵ (1806) / թվ(ի)ն սա փոխեցաւ կ(ե)անս վերին փեդրվ(ա)րի ԺԵ(15), Ա(ստուա)ծ ող(ո)ր(մի):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մելիք Սարգսից սկիզբ է առել Սարգսյանների մելիքական տոհմը. իրենց կոչումն ու իրավունքները պահպանել են մինչև տարածքի՝ Ռուսաստանի հետ միավորվելը, որից հետո ազնվականի կոչումով պահպանել են կալվածատիրական մի շարք իրավունքներ (Մելիք Սարգսյանների տոհմածառը՝ կազմ. Սարգիս Քամալյան), տե՛ս **Ալանյան Ս.**, **Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 233):

1711. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ (ԺԵ-ԺԶ դդ.)», կազմ. **Փափազյան Հ.**, Երևան, 1959, էջ 59, 90:

1712. «ԺԷՔ», էջ 785:

1713. «ՄԺԱ», էջ 289:

1714. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 51:

1715. Վերին Ջակամ գավառն առավել հաճախակի հիշվում է ԺԷ դարում՝ 1610 թ. (Ղարամուրատ), 1633 թ. (Շաքարբէկ), 1647 թ. (Սուլտանեցի), 1652 թ. (Մելիքզատա), 1655 թ. (Պապաջան, Խատունիս), 1671 թ. (Սուլքանեցիք), 1679 թ. (Ղարամուրատ):

ԺԹ դարի վերջերին արդեն շրջանի հիմնական մասում հաստատվել էին խաշնարած թուրք ցեղերը: Հայաբնակ միակ գյուղը Կրզենն էր, որտեղ հայ կյանքը վերջնականապես մարեց 1988-1989 թթ. բռնագաղթի հետևանքով:

## ԱԲԱՍԿՈՒԼԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 34,5 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1550-1600 մ բարձրության վրա:

Թրքաբնակ փոքրիկ գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ԱԲԴԱԼ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ-արևելք՝ Ջակամ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 700-750 մ բարձրության վրա:

Թրքաբնակ փոքրիկ գյուղ է՝ գոյացած 1950-ական թվականներից հետո:

## ԱԶԱՊԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևելք՝ Ասրիկ գետի ձախակողմյան հարթավայրում, ծովի մակերևույթից 550-600 մ բարձրության վրա:

Հայաթափ է եղել 1770-ական թվականներին: ԺԹ դարի 2-րդ կեսին արդեն ունեցել է թուրքական ծագմամբ խաշնարած բնակչություն:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1716] | 92 | 395 | 322 | 717 |
| 1908[1717] | | | | 512 |
| 1914[1718] | | | | 529 |
| 1976[1719] | | | | 976 |

## ԱԼԱԿՅՈԼ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 435-460 մ բարձրությամբ հարթավայրում:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1976 թ. ունեցել է 2300 բնակիչ[1720]:

## ԱԼԻԲԵՅԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 630-680 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** հայաթափ գյուղատեղիի տարածքում խաշնարած թուրքերը նստակեցության են անցել ԺԹ դարի վերջերին:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

1716. “Свод...”, с. 146-147.

1717. “Кавказский календарь на 1910 г.”, с. 175.

1718. “Кавказский календарь на 1915 г.”, с. 84.

1719. «ԱՄՀ», հ. 1, էջ 133:

1720. Նույն տեղում, էջ 212:

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1886[1721] | 81 | 220 | 170 | 490 |
| 1908[1722] | | | | 558 |
| 1914[1723] | | | | 597 |

## ԱԼԻՄԱՐԴԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 350-360 մ բարձրության վրա:

Իբրև ձմեռոց օգտագործված գյուղատեղիում թուրք խաշնարածները նստակեցության են անցել ԺԹ դարի վերջերին:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1886[1724] | 34 | 119 | 81 | 200 |
| 1908[1725] | | | | 616 |
| 1914[1726] | | | | 645 |
| 1979[1727] | | | | 2273 |

## ԱԼՄԱԼԻԹԱԼԱ

Գտնվում է շրջկենտրոնից 37 կմ հարավ՝ Զակամ գետի աջ կողմում՝ Չանախչի վտակի աջափնյա հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1100-1160 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղի հիմնադիրների Ի դարասկզբին հայաթափ գյուղատեղիում նստակեցության անցած խաշնարած ցեղերն են:

## ԱՀՄԵԴԱԲԱԴ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 740-780 մ բարձրության վրա:

Պատմական անվանումը մոռացվել է: Անտարակույս, հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները, ապա ամայացել, իսկ ԺԹ դարավերջին տարածքում հաստատվել են խաշնարած թուրք ցեղերը: Նույն դարի վերջերին գյուղը պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1728]:

1890 թ. ականատեսը նշել է. «...**Եղու դաղից** հյուսիս **Ահմադի-Բաղ** ձորն է, որի հանդեպ գետի աջ ափին հինավուրց կամրջի ոտն է երևում: Գետի բոլորքը լի են պտղատու ամեն տեսակ ծառերով, որոնք նշան են թե երբեմն հոծ բնակութիւն է եղել այդ ձորերի ու սարերի մեջ»[1729]:

Գյուղի հյուսիսարևելյան եզրին՝ Զակամ գետի աջակողմյան ճյուղի վրա, պահպանվում են ջրաղացի ավերակներ:





*ԱՂԱՋ-ՂԱԼԱ. միջնադարյան բերդի մնացորդներ*

## ԱՂԱՋ-ՂԱԼԱ

**Տեղադրությունն.** գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հարավ-արևելք՝ Զակամ գետի աջ կողմում, ծովի մակերևույթից 1290-1340 մ բարձրության վրա:

**Բերդ.** գյուղի նշանավոր հուշարձաններից է *Աղաջ-Ղալա* (թարգմ. Փայտե բերդ) կամ *Շահիբերար* միջնադարյան ամրոց-դղյակը, որի ավերակները պահպանվում են Աղաջ-Ղալայի արևմտյան կողմում՝ Եկեղեցաջուր (Քիլիսասույու) գետի աջակողմյան բարձրադիր ապառաժոտ լեռան գագաթին:

Ժայռի հարավային, արևմտյան և արևելյան զառիթափ լանջերն ապահովում են բնական անառիկությունը, իսկ հյուսիսային և մասամբ էլ արևելյան մատչելի հատվածներն ամրացվել են հաստահեղույս պարիսպներով, որոնց ավերակները պահպանվել են մինչև 2,5-3 մ բարձրությամբ:

---

1721. “Свод...”, с. 148-149.
1722. “Кавказский календарь на 1910 г.”, с. 178.
1723. “Кавказский календарь на 1915 г.”, с. 86.
1724. “Свод...”, с. 150-151.
1725. “Кавказский календарь на 1910 г.”, с. 179.
1726. Նույն տեղում, էջ 87:
1727. «ՍՍՀ», հ. 4, Բաքու, 1980, էջ 181:
1728. ԳԱԹ, **Մ. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11:
1729. Նույն տեղում, թ. 35:








***ԱՂԱՋ-ՂԱԼԱ. Շահփեքարի վանք***

Բերդի շրջակայքում պահպանվել են միջնադարյան ընդարձակ գյուղատեղին ու գերեզմանոցը, իսկ փոքր-ինչ արևելքում կա ավերակված մի մատուռ. «Աղաջ-Ղալաի դեմ բարձրանում է **Չորան-Սղնախ** սարը, որի հիւսիսայի փեշում շինած է մատուռ...»[1730]:

1730. Նույն տեղում, p. 10:









***ԱՂԱՋ-ՂԱԼԱ. Շահփեքարի վանք, մանրամասներ***

**Շահփեքարի վանք.** Աղաջ-Ղալայից մոտ 6 կմ հարավ-արևմուտք ընկած բարձրադիր տափարակի վրա՝ գյուղատեղիի տարածքում, կիսավեր դրությամբ պահպանվել է Աղաջ-Ղալայի կամ Շահփեքարի վանքը: Համալիրը բաղկացած է եկեղեցուց և շուրջը տարածվող ավերակ գերեզմանոցից[1731]:

*Եկեղեցի.* անմշակ ու կոպտատաշ քարով (անկյունաքարերի մեծ մասը սրբատաշ են), կրաշաղախով կառուցված եկեղեցին ունի միանավ բազիլիկ թաղակապ հորինվածք: Արտաքին չափերն են՝ 9,3 x 7 մ: Երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում է մեկ զույգ որմնասյուներին հենված թաղակիր կամարը: Արևելյան կողմում՝ ավագ խորանից աջ և ձախ, կան մեկական թաղակապ կրկնահարկ ավանդատներ, որոնք ևս ունեն կիսաշրջանաձև խորաններ: Խորանի և ավանդատների որմերին զետեղված են փոքր խորշ-խորհրդանոցներ: Լուսավորությունն իրականացված է 4 ճակատներից բացված նեղ, դեպի ներս լայնացող լուսամուտների միջոցով: Մուտքը բացված է արևմուտքից: Եկեղեցու պատերի մեջ ներքուստ և արտաքուստ ագուցված են պարզ ու հնաոճ, անարձանագիր խաչքարեր և խաչազարդ բեկորներ:

Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների՝ եկեղեցին թվագրվում է Ժ-ԺԱ դդ.:

Մեր այցելության ժամանակ (1980-ական թվականներին) քանդված էին եկեղեցու պատերի միջնամասերը, լուսամուտների հատվածները (հատկապես հարավից):

1731. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 58: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1951, օգոստոս-հոկտեմբեր, էջ 341:





*ԱՂԱՋ-ՂԱԼԱ. Սբ. Ղազար անվամբ միջնադարյան գերեզմանոց*

**Գերեզմանոց.** տարածվում է Աղաջ-Ղալայից հյուսիս-արևմուտք՝ սարի գագաթին. պահպանվել է երեք շիրմաքար: Հնավայրը հայտնի է Սբ. Ղազար անվամբ:

## ԱՂԲԱՇԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 39 կմ հարավ՝ Զակամ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1040-1160 մ բարձրության վրա:

Աղբաշլարի շրջակայքը հետազոտած միակ անձը բանահավաք Ս. Քամալյանն է, ուստի 1890 թ. շրջագայության ընթացքում կատարված և գյուղի հուշարձաններին վերաբերող նրա գրառումները ներկայացնում ենք ամբողջությամբ. «Առավոտը կանուխ ելա *Փնդխլուից* ու դեպի արևելահյուսիս գնալով իջա ձորը, ուր գետակները միախառնված կազմել են *Զագամ* գետը: Ձախ ափով գնում էի, մի ժամից յետ հասա հասարակ փայտե կամրջի, որից 30 քայլ դեն աջ ափին ճամբի վերի կռան կլկլում է *Աքտի-Բուլաղը:* Այսպես հորջորջվելու պատճառը երևի այն է, որ քարածերպից 2 արշին բարձրից թափվելով ձիու վրա նստած կարելի է լինում խմել: Ծատուրը պատմում էր, որ աղբրի ական մոտ խաչքարի տակից փորել հանել են արծաթ փողեր:

Կարծում էի, թե Ծատուրի ասածը սովորական խաչքար է, փնտրեցի չկար, յետո զարմանքով նշմարեցի քնութինից տաշած քարագրդոն, որի հարավային երեսին մեծ խաչաձև է նկարած ու մոտը գրած *„Ս(ուր)ք խաչս բարեխոս է բարեմիտ Դաւթին, որ շինեաց Զասատի կամու(ր)ճն յիշատակ հոգոյ իւրոյ. թվ(ին) ՌԾԶ (1607)„*: Այդ գրութինը կարդալուց յետ դիտեցի, երևաց հին կամրջի խելի մնացորդը աջ ափին:

*Աքտի-Բուլաղից* ներքև գնալով գետի ձախ կողմից *Միարլու* ձորն է, ձորաբերանում մի քանի տնվոր, նրանցից ցած Չանաղչի ձորն է, աջ ափից յետո կամուրջի ավերակ, բացի միջին մասից, միւս մասերը կա: Այդ խախտվելով, շինելիք ճամբին էլ մնացել է կիսատ: Ուղեկցիս ասելով այժմ այս ձորով անցնելը դժար չէ, նախկին տարիները բոլորովին անհնար է եղել գետի վարար միջոցին անցնելը: Այժմ սայլ բանում է, ավերված կամրջի հանդեպ աջ ափին պահականոց կա, որին *Քերփի Գեոզ* են ասում, իսկ ներքև ձախ կողմում ընկնում են *Շամլուտ* և *Աղ-դարա* ձորերը»[1732]:

## ԱՂԲՈՒԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 16,5 կմ հարավ՝ Ասրիկ գետակի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 840-880 մ բարձրության վրա՝ Խորանաշատի հռչակավոր վանքից 3 կմ հարավ-արևելք:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ԺԸ դարից ի վեր հայաքափ գյուղատեղիի տեղում:

Գյուղամիջում պահպանվում են հին ջրաղացի ավերակները:

## ԱՂԴԱՄ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի ձախ ափին:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին: 1908 թ. ունեցել է նոր-նոր նստակեցության անցած 185 թուրք բնակիչ[1733]:

## ԱՂԴԵՐԵ

Գտնվում է շրջկենտրոնից 29 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ կողմում՝ ծովի մակերևույթից 850-900 մ բարձրության վրա:

---

1732. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 34-35:

1733. “Кавказский календарь на 1910 г.”, с. 173.

Գյուղի պատմական անունը մոռացված է: Հայաքափ է եղել ԺԸ դարավերջին: Հայտնի է, որ ԺԹ դարի 2-րդ կեսին գյուղը պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1734]:

ԺԹ դարավերջին ականատեսը նշել է. «*Աղ-դաղի* դեմը, *Զակամ գետի* աջ ափին շինած է *Մըկըրտչի վանքը Վալիջան* սարի փեշում»[1735]:

## ԱՇԱՂԻ (ՆԵՐՔԻՆ) ԱՅԻՓԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ-արևելք՝ կից՝ Թբիլիսի-Բաքու երկաթգծին, Զակամ գետի ստորին հոսանքի շրջանում (ձախակողմում), ծովի մակերևույթից 350-410 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ԺԹ դարավերջին գյուղը պատկանում էր թուրք 16 կալվածատերերի[1736]:

**Բնակչություն.** 1864 թ. Աշաղի Այիփլին հիշվում է որպես թյուրքական խաշնարած ցեղերից մեկի ձմեռային հանգրվան[1737]: Տասը տարի անց՝ 1874 թ., լայնատարած տափաստանում ցրված և 4-5 ձմեռոցից բաղկացած ու միմյանցից 3-5 կմ հեռավորություն ունեցող գյուղը՝ նոր-նոր մշտաբնակների վերածված բնակչությամբ, կազմել է 1685 շունչ (բոլորն էլ շիա մահմեդականներ)[1738]: 1886 թ. այստեղ հաշվառվել է 349 տուն, 2111 շունչ (1189 ար., 922 իգ.)[1739], 1908-ին՝ 2490[1740], իսկ 1976-ին՝ 5944 բնակիչ[1741]:

**Տնտեսություն.** անասնապահությունից զատ տեղի բնակիչները զբաղվում էին բիանի արմատի արդյունահանմամբ, որը ոչ միշտ էր եկամտաբեր: Ահա թե ինչ է պատմում ժամանակակիցը (1890 թ.). «Տափաստաններում ջրի պակասութիւն լինում է: Զագամ գետը չհասած Այիփլուն ցամաքում է: Այդ տեղերը գտնվում է բիանի արմատ մեծ քանակով. թուրքի մինը 3000 փութ ժողովել էր երկաթուղու վարչութեան գետնի վրա. փութին 6 կոպ., գետնավարձ հաշված մինչև այդ օրը պահելու վարձ տալու էր 2700 ռուբլի, անճար թուրքը փախել էր: Անուրդի հանելով ժողոված բիանը երկաթուղու վարչութեան վրա մնացել էր 100 ռուբլով...»[1742]:

## ԱՇԱՂԻ-ՂՈՒՇՉՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ-արևելք, Թոուզ-Գանձակ երկաթգծի աջ եզրին, ծովի մակերևույթից 440-490 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին, երբ խաշնարած ցեղերը, տեղի տալով ցարական իշխանությունների պահանջներին, ստիպողաբար նստակեցության են անցել նախկին ձմեռոցի տեղում:

1976 թ. գյուղն ունեցել է 5316 բնակիչ[1743]:

## ԱՇԱՂԻ-ՄՅՈՒԼՔՅՈՒԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 350 մ միջին բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին:

1976 թ. ունեցել է 1259 բնակիչ[1744]:

## ԱՇԱՂԻ-ՕՔՍՅՈՒԶԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 480-520 մ բարձրության վրա:

Մի քանի ձմեռոցներում և ամառանոցներում բնակվող խաշնարածները, կառավարության պահանջով համախմբվելով ներկայիս գյուղի տեղում, նստակեցության անցնելով, բնակավայրի հիմքը դրել են ԺԹ դարավերջին:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1745] | 169 | 861 | 484 | 1345 |
| 1908[1746] | | | | 1399 |
| 1914[1747] | | | | 1464 |
| 1976[1748] | | | | 4323 |

## ԱՇՐԱԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 830-900 մ բարձրության վրա:

Ներկայիս փոքրիկ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ հայաքափ հին գյուղատեղիում:

## ԱՍՐԻԿ-ՋՐԴԱԽԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ՝ Ասրիկ գետի ձախ ափին՝ Խորանաշատի մեծահռչակ վանքից 2,5 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 740-810 մ բարձրության վրա:

1770-ական թվականներից ի վեր հայաքափ գյուղատեղիում խաշնարած թուրք ցեղերը նստակեցության են անցել և Ի դարի սկզբներին հիմնել ներկայիս գյուղը:

1979 թ. ունեցել է 1722 բնակիչ[1749]:

1734. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11:
1735. Նույն տեղում:
1736. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 4-5:
1737. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, "Кавказ", 1865, N 85, с. 420. Տես՝ Խանլարի շրջանի Բիրգյոզ գյուղի բաժնում, էջ 360:
1738. "Кавказский календарь на 1886 г.", с. 142.
1739. "Свод...", с. 76-77.
1740. "Кавказский календарь на 1910 г.", 192.
1741. «ԱՍՀ», հ. 1, էջ 507:
1742. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 2-3:
1743. «ԱՍՀ», հ. 1, էջ 508:
1744. Նույն տեղում:
1745. "Свод...", с. 148-149.
1746. "Кавказский календарь на 1910 г.", с. 339.
1747. "Кавказский календарь на 1915 г.", с. 168.
1748. «ԱՍՀ», հ. 1, էջ 509:
1749. «ԱՍՀ», հ. 4, էջ 235:

## ԱՐԱՆ (ԱՐԱՆԴՈՒՐ)

Գտնվում է շրջկենտրոնից մոտ 17 կմ հարավ-արևելք:

Երկրամասի հայաբնակ այլ գյուղերի նման Արանը ևս հայ բնակչությունից պարպվել է 1770-ական թվականներին:

Խորհրդային տարիներին միավորված էր Յանխլիի գյուղի գյուղական խորհրդի հետ:

Ի դեպ, Արանդուր գյուղանվանը հանդիպում ենք գյուղը լքած հայերի նոր հանգրվան Մեծ Շուլավերի (այժմ՝ Շահումյան ավանը Մառնեուլի շրջանում) գերեզմանոցում.

Տապանաքար. չափերը՝ 167 x 67 x 20 սմ, ուղղանկյունաձև, վերնամասը՝ կամարաձև, արձանագրությունը՝ հայերեն 11 տող, ապա՝ վրացերեն 2 տող.

*Այս է տապան / Աննայի՝ կող/ակից է Սարգսի, / սա է հարսն ու/ստա Կարապետի, / որ է կեղճաւք / **Արանդրեցի**, որ / ոք տացէ Ա(ստուա)ծ / ողորմի Ք(ա)սին... / եան ողորմեցի / թվ(ի)ն ՌՄԾԶ (1807)-ի:*

Վրաց.՝ Սարգիսաա | մեուղլե (թարգմ. Սարգսի կողակից):
Հրատ. **Ալանյան Ս., Կարապետյան Ս.**, Շուլավեր, էջ 45:

## ԲԱԿԿԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ՝ Ասրիկ և Ջակամ գետերի միջև վեր խոյացող Բակկալի լեռան (1733 մ) արևելյան ճյուղի հարավարևելահայաց լանջին:

Ներկայիս գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԲԱՅՐԱՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ Ասրիկ գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 590-660 մ բարձրության վրա:

Գյուղը ԺԹ դարավերջին հիմնել են խաշնարած բայրամլի թուրք ցեղերը: Նույն դարավերջին Բայրամլին թուրք Սուլթանովների սեփականությունն էր[1750]:

Հայտնի է, որ ԺԹ դարի կեսերին բայրամլի ցեղախումբը թափառական կյանք էր վարում, ուստի արժանահավատ մարդահամար դյուրին չէր կատարել, թվերն ուռճացվում էին: Այսպես, 1886 թ. այստեղ հաշվառվել է 214 տուն, 1070 շունչ (606 ար., 464 իգ.)[1751], 1908-ին՝ 1831[1752], 1914-ին՝ 923 բնակիչ[1753]:

## ԲԵՅՈՒԿ-ՂՇԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ՝ Ասրիկ գետի ձախ կողմում՝ ծովի մակերևույթից 1430-1600 մ բարձրության վրա:

1750. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 14-15:
1751. "Свод...", с. 78-79.
1752. "Кавказский календарь на 1910 г.", с. 196.
1753. "Кавказский календарь на 1915 г.", с. 95.

Ներկայիս թրքաբնակ գյուղը հայաքափ հին գյուղատեղիում գոյացել է խորհրդային տարիների քաղաքական նկատառումներով մեկուսատարածքում (անկլավ) հայտնված հայաբնակ Արծվաշեն գյուղը օղակի մեջ առնելու նպատակով:

1976 թ. ունեցել է 2800 բնակիչ[1754]:

## ԲՈԶԱԼՂԱՆԼԻ

Արևելքից կից է Թոուզ շրջկենտրոնին: Ծովի մակերևույթից ունի 410-420 մ բարձրություն:

Հայտնի է, որ տակավին 1860-ական թվականներին խաշնարած բոզալղանլի ցեղախմբերը թափառական կյանք էին վարում, ուստի արժանահավատ մարդահամար կամ հարկատուների ցուցակներ կազմելը դյուրին չէր: Այս առումով, մասնավորապես Բոզալղանլուի մասին ժամանակակիցը նշել է. «Ընդունենք, թե 152 ծուխ ունեցող Բոզալղանլու գյուղից հարկավոր է հարկ հավաքել: Այս գյուղը ցրված է ինչպես մեր, այնպես էլ Շիրակի գավառներում, իսկ ծուխը՝ ծխից հեռու է տասնյակ վերստերով: Շատ դժվար է ճշմարիտ ասել, թե ինչով են զբաղված այս գյուղի բնակիչները, ինչպես ասում են նրանք՝ գրեթե բոլորը անասնապահներ են, իսկ ինչպես անասնապահներ մի տեղում ոչ ամռանը ոչ էլ ձմռանը երկար չեն ապրում, արդյունքում հարկահավաքության ժամանակ հարկահանի համար նրանց գտնելը շատ դժվար է...»[1755]:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին Բոզալղանլիի կալվածատերը Յուսուփ բեկ Խանբուդաղովն էր[1756]:

Բոզաղանլուի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1757] | 264 | 1071 | 544 | 1615 |
| 1914[1758] | | | | 2396 |
| 1976[1759] | | | | 6050 |

## ԳԱԶԿՈՒԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 2,5 կմ հարավ՝ Ախնջի գետի աջ ափին:

1754. «ՍՍՀ», հ. 2, էջ 288:
1755. **Мевес В.**, նշվ. աշխ., էջ 440 (բնագրում՝ "Положим, что из деревни Бозаганлы, имеющей 152 дыма, следует собрать подать. Эта деревня раскинута и в нашем уезде и в Ширакском приставстве, а дым от дыма отстоит на десятки верст; сказать наверно, чем занимаются жители этой деревни очень трудно; почти все они, как говорят, скотоводы, а как скотоводы не живут на месте долго ни летом, ни зимою, то во время взноса податей их очень трудно отыскать сборщику").
1756. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 30-31:
1757. "Свод...", с. 144-145.
1758. "Кавказский календарь на 1915 г.", с. 100.
1759. «ՍՍՀ», հ. 2, էջ 218:

Աննշան գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ԳՅՈՒՎԱՆԴԻԿ

Գտնվում է շրջկենտրոնից 36 կմ հարավ՝ Ասրիկ գետի ակունքի շրջանում՝ ծովի մակերևույթից 1720-1780 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ԺԸ դարավերջից հայաքափ գյուղատեղիում:

## ԴՅՈՒԶ-ՂՐԸԽԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 16,5 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 360-380 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԴՅՈՒԶ-ՋՐԴԱԽԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 380-410 մ բարձրության վրա՝ լայնատարած դաշտավայրում:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԴՈՆԴԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ-արևելք, Եկեղեցաջուր (Քիլիսասույու) գետակի աջ արևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1450-1520 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ փոքրիկ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ԺԸ դարավերջից հայաքափ գյուղատեղիում:

## ԴՈՆԴԱՐ-ՂՈՒՇՉՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ՝ Եկեղեցաջուր գետակի ափերին, ծովի մակերևույթից 460-490 մ բարձրության վրա:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1977 թ. ունեցել է 1921 բնակիչ[1760]:

## ԵՂՈՒՆԲՈՒԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 29 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 1350-1420 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ԺԸ դարավերջից հայաքափ գյուղատեղիի տեղում:

## ԹՈՈՒԶ ՔԱՂԱՔ

Գտնվում է Ղազախ-Գանձակ մայրուղու և երկաթգծի վրա՝ Ղազախից 24 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 430-455 մ բարձրության վրա:

Մինչև 1935 թ. եղել է երկաթուղային կայարան, մինչև 1947 թթ.՝ քաղաքատիպ ավան, այնուհետև՝ քաղաք: Համանուն շրջանի վարչական կենտրոնն է:

1760. «ԱՍՀ», h. 3, էջ 507:

## ԻԲՐԱՀԻՄ-ՀԱՋԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 490-520 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին՝ ուշ միջնադարից հայաքափ գյուղատեղիի տեղում:

1979 թ. ունեցել է 2515 բնակիչ[1761]:

## ԻՍԱՔԵՆԴ (ԻՍԱԽԱՆ)

Գտնվում է շրջկենտրոնից 27 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 1820-1850 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ հայաքափ հին գյուղատեղիի տարածքում:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղը (հիշատակվում է Իսախան անվամբ), թուրք կալվածատեր Զուլղադարովի սեփականությունն էր[1762]:

## ԼԱՋԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 38 կմ հարավ՝ բարձրադիր սարալանջին, ծովի մակերևույթից 1700-1770 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԸ դարի 70-ական թվականներից հայաքափ գյուղատեղիում:

## ԽԱԹԻՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 360-365 մ բարձրության վրա՝ միապաղաղ հարթավայրում:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին:

1908 թ. ունեցել է 1510[1763], 1914-ին՝ 1691 բնակիչ[1764]:

## ԽՆՆԱՂՈՒԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1350-1400 մ բարձրությամբ լեռան արևելահայաց լանջին:

Ներկայիս թրքաբնակ փոքրիկ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ ԺԸ դարավերջից հայաքափ գյուղատեղիում:

## ԿԵԶԱՎԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 21,5 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 1250-1270 մ բարձրության վրա:

Մի քանի տնից բաղկացած թրքաբնակ գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին՝ հայաքափ գյուղատեղիում:

1761. «ԱՍՀ», h. 4, էջ 362:

1762. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, բ. 11:

1763. “Кавказский календарь на 1910 г.”, с. 395.

1764. “Кавказский календарь на 1915 г.”, с. 196.

## ԿՈՎԼԱՐ (ԿՈՎԼԱՐ-ՍԱՐԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք՝ Թոուզ-Գանձակ երկաթգծի աջ եզրին, ծովի մակերևույթից 410-430 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

1906 թ. ունեցել է 79 բնակիչ[1765]:

## ԿՐԶԵՆ (ԿՌԶԵՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևելք՝ Կուր գետից 1 կմ հեռավորության վրա՝ ոչ հեռու այն վայրից, որտեղ Տավուշ գետը միախառնվում է Կուրին, ծովի մակերևույթից 170-185 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հնում գյուղը գտնվել է ներկայիս վայրից 1 կմ արևելք՝ Կուր գետի աջ ափին և մի քանի անգամ ենթարկվել տեղափոխությունների: Գյուղի մերձակայքում պահպանված հին գյուղատեղիների առկայությունը վերը նշվածի վկայությունն է: Ի դեպ, հայտնի է, որ մինչև 1883 թ. Կրզենը «...ճիշտ գետի ափին էր, մի խոնաւ տեղում...»[1766], բայց հետո բնակիչները նոր գյուղ են հիմնել նախկինից «չորս վերստ հեռաւորութեամբ վեր մի բարձր տեղ»[1767]:

Հերթական անգամ նոր գյուղը հիմնվում է Ի դարի սկզբներին, ավելի ստույգ՝ 1905-06 թթ. եղերական դեպքերից հետո: Կրզենը շրջապատված էր թրքաբնակ բազմաթիվ գյուղերով. «...միակ հայ գիւղն է, որ բոլորովին դաշտումն է»[1768]:

1998 թ. թրքաբնակ հայոց հինավուրց Կրզենը անվանափոխվել է և դարձել Գյունաշլի:

**Կրզենցիների ծագումն ու բարբառը.** ավանդաբար վկայվել է, որ վաղ անցյալում գյուղն ունեցել է շուրջ 700 տուն բնակիչ[1769], որոնք իբր ծագումով անեցիներ էին. «Գիւղացոց պատմելով նոցա նախնիքը եկած են այդտեղ Անի քաղաքից մօտ 700 տուն, բայց տեղական օդը չկարողանալով տանել հետզհետէ պակասելով մնացել են մինչև 18 տուն...»[1770]:

Տեսակետ կա, ըստ որի՝ կրզենցիների նախնիները փոխադրվել էին Գողթան գավառից. «Կռզէնի լեզուն շատ նմանութիւն ունի Ագուլեաց լեզուին: Ինչպէս երևում է, Պարսից ժամանակը Կռզէն գիւղացիք գաղթած են Շահ-Աբասի օրով Գողթան գաւառից»[1771]: Նույն կարծիքն է հայտնվել նաև մեկ այլ թղթակցությունում. «...գաղթական են Ագուլիսի կողմերից, այս գաւառի բարբառով չեն խօսում, կանանց հագուստը թուրքի ձև է...»[1772]:

ԺԹ դարում լեզգիների՝ հաճախակի կրկնվող արշավանքների հետևանքով Կրզենը հարուստ ու բարեշեն բնակավայրից վերածվել է սակավամարդ ու աղքատիկ գյուղակի: Կրզենի համար առանձնապես կորստաբեր էր Բուլղադարի գլխավորած հրոսակախմբի անակնկալ հարձակումը (Շամիլի օրերում՝ 1797-1871) եկեղեցական տոնակատարության պահին: Սպանդն ու ավարառությունը ուղեկցվել էին գերեվարությամբ: Տեղահանվածների մնացորդները սփռվել են Հայաստանի ու Վրաստանի զանազան վայրերում, հաստատվել Գանձակում[1773], հիմնել Գանձակի Սարով և Արեշի Խանդակ գյուղերը[1774]:

1840-ական թվականներին Ղ. Ալիշանը[1775], ապա, նրան հետևելով՝ նաև Ալ. Երիցյանը[1776], Մ. Բարխուտարյանցը[1777] և Քաջբերունին[1778] կարծիք են հայտնել, թե կրզենցիները ուդիների մնացորդներ են և խոսում են ուդիերեն, բայց հայադավան են ու նաև հայախոս:

ԺԹ դարավերջին հայ մամուլը բազմիցս անդրադարձել է գյուղի բնակիչների անհասկանալի բարբառին և մատնանշել դրա կապը Ագուլիսի բարբառի հետ[1779]:

Վկայություն կա նաև կրզենցիների՝ գրեթե թրքախոս լինելու մասին. «Հասարակ խօսակցութիւն անգամ թուրքերէն են խօսում և հայ լեզուն մոռանալու վրա են...»[1780]:

1765. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 292.

1766. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2:

1767. Նույն տեղում:

1768. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2, բ. VI, գ. 62, թ. 11: Նաև՝ «Արձագանք», 1893, N 44, էջ 2:

1769. Այս տվյալը պարբերաբար նշել են տարբեր հեղինակներ. «Գիւղն առաջ ունեցել է 700 տուն հայ բնակիչ, իսկ այժմս միայն 30 տուն...» («Նոր-Դար», 1886, N 119, էջ 2): Նաև՝ «Մօտ 700 տուն եղած է գիւղումս, բայց այսօր մնացած է միայն 30 ծուխ. պատճառն այն է, որ օդն և կլիման խիստ ծանր են ամրան: Այս պատճառաւ համեմատելով ամեն տարուայ ծնածները մեռելոց հետ՝ միշտ աւելի եղած է վախճանուածների թիւն» (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 59): Նաև՝ «...այստեղ բնակվել է 700 տուն ժողովուրդ, այնինչ իմ այցելած միջոցին 30 տուն էին հաշվում՝ շրջապատած 30 հազար թուրք ազգաբնակչութիւնով: Տեղացիք ասում էին, երբ ռուսները տիրեցին մեր կողմերին ու արգելեցին աշկարա զենք կրել, այս ժամանակից դժվարացաւ մերոց ապրելը թուրքերի մեջ, կտրված հայ գեղերից: Բնակիչների մեծ մասը անճարացած ցրվեցին այս ու այն կողմերը: Նրանց ցրվելու, նվազելու պատճառը մինակ թուրք տարրի ճնշումը չի եղել. դրան միացել է Քռան ափի ծանր կլիման, տենդաբեր օդը, թունաւոր մոծակը, անտառների տոթն ու շոքը...» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2, բ. VI, գ. 62, թ. 11-12):

1770. «Մշակ», 1879, N 35, էջ 2:

1771. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2:

1772. «Արձագանք», 1893, N 44, էջ 2:

1773. **Карбелашвили Д. П.**, Кирзан и кирзанцы, “Известия” Азерб. филиала АН СССР, 1937, N 2, с. 42.

1774. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2:

1775. **Ալիշան Ղ.**, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:

1776. **Ерицов А. Д.**, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии, Тифлис, 1886, с. 44.

1777. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 59:

1778. **Քաջբերունի**, Կռզէն գիւղի աւերումը, «Արարատ», 1911, էջ 954 (քառամաս հոդվածաշարը տե՛ս «Արարատ» 1911, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և 1912 թ. հունվար ամիսների համարներում):

1779. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2: Նաև՝ «Արձագանք», 1893, N 44, էջ 2:

1780. «Մշակ», 1879, N 35, էջ 2: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ գյուղն ուներ 27 տուն, 160 բնակիչ՝ 90 ար., 70 իգ. (“Свод...”, с. 144-145):

Կրզենցիների բարբառին անդրադարձել է նաև Սարգիս Քամալյանը, ըստ որի՝ նրանք զուտ հայախոս են. «Գնամ կռզենցոց բարբառին վերջապես: Այնտեղ եղած տապանաքարերի վրայի գրվածքները հայատառ են, հայ բառերով հին թէ նոր հանգստարաններում: Ողջ ու առողջ կռզենցիք էլ խօսում էին հայերէն իրանց յատուկ բարբառով, որի արտասանութիւնը բաւական սոպռ ու կոպիտ է, բայց մեջը ուտիերենի ոչ մի նշան չկա: Կռզենցին խօսում է շատ արագ, անսովոր ականջի համար խորթ ու անհասկանալի է նրանց խոսվածքը, ինչպես անհասկանալի են թվում մեզ զոկերի, զեյթունցիների, սասունցիների արագ խոսվածքը լսելիս: Բայց չէ՞ որ նրանք հայերեն են: Չգիտեմ, նախկին կռզենցիք մի քանի հարիւր տարի առաջ ուտիերեն խօսեցել են թէ չէ, բայց ներկա կռզենցոց զրույցի, խօսակցութեան մեջ ոչ մի հետք չկայ ուտիերենի: Ահա լեզվի նմուշներ կրզենցիների և ուտիների. այժմեանից ներողութիւն եմ խնդրում այն սխալների համար, եթէ կնկատվեն ուտիերեն բառեր արտասանելիս, որովհետև 36 տարի առաջ եմ եղել նրանց մոտ ուսուցիչ Նիժ աւանում:

Կռզենցիք համբարքն անում են զուտ հայերէն, միայն չորսի փոխարէն ասում են չորք, եօթի տեղ օխտ, իսկ նիժեցին 1-10 համարում է այսպես՝ սա, պա, խիբ, բիբ, խո, ուղկ, վուղ, մուղկ, վույ, վիծ, 20-ին ասում է ղա, 30-ին սաղա վիծ, 40-ին պաղա կամ պաղօ, 50-ին պաղավիծ, 60-ին խիբղօ, 70-ին խիբղավիծ, 100-ին բաճ, 1000-ին հազար»[1781]:

1934 թ. մայիսին Դ. Կարբելաշվիլին և Վ. Ղուկասովը գյուղում կատարած ուսումնասիրություններից հետո փաստել են, որ Կրզենի բարբառն իրականում որևէ կապ չունի ուդիների հետ և Խոյի, Ղարաբաղի, Ագուլիսի բարբառների ու թուրքերենի յուրօրինակ խառնուրդ է[1782]:

1958 թ. լեզվաբան Ռ. Բաղրամյանը զարգացրել է մի տեսակետ, ըստ որի Կրզենի բարբառը, իբրև միջանկյալ մակարդակ, «պահպանվել է մայր բարբառի ու նրա դուստր՝ «Լ» և «Ս» ճյուղերի բաժանման վիճակը, թերևս այն պատճառով, որ բարբառների ճյուղավորման շրջանում նա կտրվել է քույր բարբառների միջավայրից և կղզիացել իր նոր հայրենիքում»[1783]:

**Բնակչություն.** Կրզենի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առավել ստույգ տվյալներ մեզ հասել են սկսած 1840 թ.: Բնակչության թվաքանակի մեծ նվազում է նկատվել հատկապես հայ-թուրքական ընդհարումների շրջանում և դրան հաջորդած նյութական զրկանքներով լի տարիներին:

1781. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, ց. 2, բ. VI, գ. 62, թ. 13-14:

1782. **Карбелашвили Д. П.**, նշվ. հոդվածը, էջ 42:

1783. **Բաղրամյան Ռ.**, Կռզենի բարբառի ուսումնասիրության շուրջ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, N 6, էջ 75: Նաև՝ նույնի Կռզենի բարբառը, Երևան, 1961:

Կրզենի բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1804[1784] | 25 | 57 | 55 | 112 |
| 1840[1785] | 31 | 78 | 76 | 154 |
| 1841[1786] | | 95 | 100 | 195 |
| 1842[1787] | | 162 | 174 | 336 |
| 1844[1788] | | 198 | 179 | 377 |
| 1849[1789] | | 86 | 90 | 176 |
| 1853[1790] | | 37 | 26 | 63 |
| 1857[1791] | | 65 | 68 | 133 |
| 1862[1792] | 20 | | | |
| 1866[1793] | 22 | | | |
| 1879[1794] | 18 | 67 | 76 | 143 |
| 1882[1795] | | 115 | 70 | 185 |
| 1883[1796] | | 117 | 76 | 193 |
| 1885[1797] | | 127 | 79 | 206 |
| 1886[1798] | | 131 | 85 | 216 |
| 1887[1799] | | 137 | 88 | 225 |
| 1888[1800] | | 140 | 90 | 230 |
| 1889[1801] | | 143 | 90 | 233 |
| 1890[1802] | | 143 | 88 | 231 |
| 1891[1803] | | 144 | 94 | 238 |
| 1892[1804] | | 142 | 87 | 226 |
| 1893[1805] | | 144 | 89 | 233 |
| 1894[1806] | | 144 | 94 | 238 |
| 1897[1807] | | 98 | 93 | 191 |
| 1898[1808] | | 124 | 111 | 235 |
| 1899[1809] | | 228 | 114 | 342 |
| 1900[1810] | | 226 | 113 | 339 |
| 1901[1811] | | 266 | 114 | 380 |
| 1902[1812] | | 265 | 114 | 379 |

1784. “Акты...”, т. II, с. 597.

1785. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 7:

1786. Նույն տեղում, գ. 3802, թ. 57-58:

1787. Նույն տեղում, գ. 3805, թ. 84-85:

1788. Նույն տեղում, գ. 3809, թ. 73-74:

1789. Նույն տեղում, գ. 3818, թ. 75-76:

1790. Նույն տեղում, գ. 2743, թ. 102-103:

1791. Նույն տեղում, գ. 3830, թ. 292:

1792. Նույն տեղում, գ. 3841, թ. 193:

1793. Նույն տեղում, գ. 3848, թ. 86:

1794. Նույն տեղում, գ. 3870, թ. 90: Նաև՝ «Մշակ», 1879, N 35, էջ 2:

1795. Նույն տեղում, գ. 3874, թ. 129-130:

1796. Նույն տեղում, գ. 3875, թ. 3:

1797. Նույն տեղում, գ. 3877, թ. 8:

1798. Նույն տեղում, գ. 3879, թ. 127:

1799. Նույն տեղում, գ. 3880, թ. 31:

1800. Նույն տեղում, գ. 3882, թ. 136:

1801. Նույն տեղում, գ. 3884, թ. 12:

1802. Նույն տեղում, գ. 3887, թ. 155: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալով՝ նույն թվականին գյուղն ունեցել է 30 տուն, 170 բնակիչ՝ 90 ար., 80 իգ. (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 59):

1803. Նույն տեղում, գ. 3889, թ. 154:

1804. Նույն տեղում, գ. 3891, թ. 126:

1805. Նույն տեղում, գ. 3895, թ. 13-14:

1806. Նույն տեղում, գ. 3896, թ. 179-180:

1807. Նույն տեղում, գ. 3899, թ. 152-153:

1808. Նույն տեղում, գ. 3897, թ. 174:

1809. Նույն տեղում, գ. 3903, թ. 22:

1810. Նույն տեղում, գ. 3905, թ. 14:

1811. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1-2, 205, թ. 145-146:

1812. Նույն տեղում, գ. 3907, թ. 28-29:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1908[1813] | 30 | 138 | 110 | 248 |
| 1914[1814] | | | | 111 |
| 1934[1815] | 35 | 78 | 75 | 153 |
| 1961[1816] | 50 | | | |
| 1988[1817] | 60 | | | |

Առանձնապես ուշագրավ է 1862 թ. տնատեր ծխականների անվանական ցուցակը ներկայացնող սույն վավերագիրը.

«Ցուցակ ծխոց Շամշադնոյ սահմանի Կրզէն յընթացս 1862 ամի.

1. Աբրահամ Սարուխանեանց
2. Ասլան Փոլաթեան Լևոնեանց
3. Մովսես Գրիգորեան Սահակեանց
4. Մարգար Ղազարեան Սահակեանց
5. Մաչան Անտոնեան
6. Գէորգ Աբազեանց
7. Դաւիթ Յարութիւնեան Յովհանեսէանց
8. Մարգար Յովհանէսեանց
9. Ստեփան Գէորգեան Աղանեանց
10. Վանական Աղանեանց
11. Խաչատուր Յարութիւնեան Թարխանեանց
12. Սարգիս Մովսէսեան Թարխանեանց
13. Սահակ Յարութիւնեան Ակօնեանց
14. Յարութիւն Աբազեանց
15. Ղազար Բաբեան Մելիքեանց
16. Ալեքսան Մայիլեան Մելիքեանց
17. Ալեքսան Այուբեանց
18. Յովհանէս Մկրտչեան
19. Այվազ Հակօբյան Սահակեանց
20. Յովհանէս Վարդանեան

Յովակիմ քահանայ Ռումբարեանց ի Թօվուզ գեղճ»[1818]:

Բնակչության թվաքանակի շարունակական ելևէջներով հանդերձ՝ մինչև 1960-ական թվականները Կրզենը զուտ հայաբնակ էր[1819]: Գյուղի ադրբեջանացումը սկսվել է այդ տարիներից: 1961 թ. տվյալներով Կրզենում հայերի հետ արդեն ապրում էին 30 ադրբեջանցի ընտանիք[1820]: 1988 թ.՝ գաղթի նախօրյակին, այդ թիվը կրկնապատկվել է (60 տուն)[1821]:

Բռնագաղթի օրերին կրզենցիների մի մասը վերաբնակվել է Հայաստանում՝ Շամշադինի, Արարատի (1-ական ընտանիք Լուսառատ և Փոքր Վեդի գյուղերում), Մասիսի (Սիս գյուղում՝ 40-45 ընտանիք) շրջաններում, մի մասն էլ մեկնել են Ռուսաստան՝ Սոչի-Ադլեր (10-15 ընտանիք), Մոսկվա (4 ընտանիք), Սարատով (8-9 ընտանիք), Սվերդլովսկ (3 ընտանիք), Օմսկ (մոտ 10 ընտանիք) և այլ խոշոր քաղաքներ:

**Զբաղմունքը.** Կրզենը դարեր ի վեր ոչ միայն պահպանել է իր գոյությունը, այլև հասել է տնտեսական աչքի ընկնող բարօրության: Հնուց անտի կրզենցիները զբաղվել են գինեգործությամբ, շերամապահությամբ, մետաքսագործությամբ և իրենց արտադրանքն արտահանել տարբեր երկրներ: ԺԷ դարում Կրզենն արդեն վերածվել էր առևտրի աշխույժ կենտրոնի: Տեղի գերեզմանատան տապանագրերը ասվածի լավագույն ապացույցն են. «...ամփոփուած են այստեղ Թաւրիզեցի, Հալապցի, Կարնեցի և այլ քաղաքներից վաճառականներ»[1822]:

Կրզենցիներն աչքի են ընկել իրենց քաջությամբ, զենք կրելու ունակությամբ. «Թարաքամա թիւրք գիւղերի մէջ նշանաւոր և մեծ համբաւ ունին իրենց քաջութեամբ որ և գիշեր ցերեկ միշտ զէնքերը ձեռքին շրջում են իրենց յատկացեալ գիւղական սահմանի մէջ...: Կրզէն գիւղի կանայք ևս պակաս հերոսներ չեն: Սրանք էլ շատ անգամ մասնակցում են իրենց մարդոց կռիւներին թարաքամաների դէմ, երբ նրանք գալիս են հայերից տաւար, ոչխար, ձի և պտուղներ գողանալու»[1823]:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** փոքր ու կղզիացած Կրզենը փորձության պահին չի կարողացել դիմագրավել թուրքերի հարձակումներին: Ժամանակակիցների վկայությամբ դեռևս ԺԹ դ. 90-ական թվականներին գյուղի բնակչությունը հարուստ էր, և դա «...բաւական է, որ կըռզէնցիք շարժէին թուրք դրացիների նախանձը... մանավանդ բոզաղանլուեցիք նենգութեամբ էին նայում Կըռզէնի հարստութեան վերայ: Եւ դրան վրայ հասաւ նրանց համար ամենահաջող րոպէ, այն է՝ Գանձակի անկարգութիւնը և մօտիկից անցնող երկաթուղու պաշարումը թուրք հրոսակների կողմից»[1824]:

Երկաթգիծը Ջակամ-Աղստաֆա հատվածում պաշարելուց (18 նոյեմբերի 1905 թ.) երկու օր անց Կրզենի սահմաններում երևում է 50 հոգուց կազմված զինյալ մի ջոկատ, սպանում նախրապանին և տանում գյուղապատկան 500 գլուխ տավարը[1825]: Խուճապն ու իրարանցումն ընկնում է գյուղի մեջ: Հաջորդ օրը թուրքերի մի նոր խումբ ոչ միայն ավարառում է գյուղի ձիերն ու ունեցվածքը, այլև սպառնում, թե շուտով կգան, կավերեն գյուղն ու կսպանեն բնակիչներին: Կրզենցիք, չունենալով ինքնապաշտպանության հնարավորություն, նո-

1813. ՀՀՊՊԿԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 61: Տես նաև՝ ”Кавказский календарь на 1910 г.”, с. 289.
1814. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 142.
1815. **Карбелашвили Д. П.**, նշվ. աշխ., էջ 41:
1816. **Բաղրամյան Ռ.**, Կռզենի բարբառը, Երևան, 1961:
1817. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր..., «Հայրենիքի ձայն», 13.01.1993:
1818. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, թ. 193:
1819. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվածը:
1820. **Բաղրամյան Ռ.**, նշվ. աշխ.:
1821. **Կարապետյան Ս.**, նշվ. հոդվածը: Տե՛ս նաև՝ **Մեյյան Բ.**, Կրզեն գյուղը, «Այգաբաց» (Շամշադին), 1991, N 47, էջ 4:
1822. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 59:
1823. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2:
1824. **Քաջբերունի**, նշվ. հոդվ., էջ 955:
1825. Նույն տեղում, էջ 956: «Մշակ», 1906, N 45, էջ 2: Ա-Դոն գողացված խոշոր եղջերավոր անասունների քանակը ներկայացնում է ավելի քիչ՝ 300 գլուխ (տե՛ս նրա՝ «Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում», էջ 363:

յեմբերի 23-ին ողջ գյուղով փոխադրվում են հարևան Մանուրլու գյուղը, որի թուրք ազգաբնակչության հետ միշտ ունեցել էին լավ հարաբերություններ: Մանուրլուեցիք հյուրընկալում են հայերին: Սակայն, երբ մեծ բազմությամբ շրջակա գյուղերի զինված հավատակիցները գալիս և պահանջում են կրզենցիներին վերադարձնել հայրենի օջախներ, մանուրլուեցիները վախենալով ընդհարումից, կատարում են նրանց պահանջը: Հայերը ստիպված վերադառնում են Կրզեն և միայն մեկ գիշեր կարողանում մնալ այնտեղ. «...նոյեմբերի 27-ին[1826] Կըռզէնը ներկայացնում էր մի սոսկալի և աննկարագրելի տեսարան: Եռում էր գիւղը Բոզդանլուից, Կարախանլուից, Ջլվդարլուից, Սամադբայլուից և միւս դրացի գիւղերից հաւաքուած հազարաւոր, ամեն հասակի և սեռի խմբերից... Սրանք ազատօրէն պտտւում էին գիւղում, մտնում էին որ տունը կամենում էին, վերցնում էին՝ տանում էին, ծիծաղում էին հայերի վրայ, ... իսկ հայերը լեզուները փակած լռութեամբ տանում էին ամեն տեսակ վիրաւորանքներ»[1827]: Այնուհետև հայերին բաժանում են երկու մասի և գերեվարում դեպի թուրքական գյուղերը, որտեղ կրզենցիներին պահում են մինչև դեկտեմբերի 28-ը: 120 մարդ տարվում է Բոզալղանլու, իսկ 108-ը՝ Կարախանլու: Ապա սկսվում է Կրզենի թալանը: 18 օր շարունակ թուրքերը «...տարան կարաւաններով իւղ ու պանիր, կապոցներով տան սարք ու կարք, գիւղատնտեսական հազարաւոր գործիքներ, ամբարներով ցորեն ու գարի, հարիւրաւոր սայլերով խոտ ու դարման, տների շինութիւնների փայտեղէն և քարեղէն մասեր, և այլն և այլն: Այսպէս մի քանի օրում չէն, հարուստ գիւղը դարձաւ անմարդաբնակ և աւերակ. տների տեղերում երևում էին միայն հողի կոյտեր, այգիները անտէր անտիրական»[1828]: Գյուղում միայն մի տուն էր անվնաս մնացել, որովհետև այդտեղ էր հաստատվել հայտնի ավազակ Թանրղիվերդոու որդին[1829]:

Դեկտեմբերի վերջին Բոզալղանլու գյուղում գերի պահվող 120 կրզենցիները ռուսական ջոկատի օգնությամբ ազատվում և ուղարկվում են Թիֆլիս 1906 թ.: Փետրվարին ազատվում է ևս 24 մարդ: Բոլոր գաղթականներին տեղավորում են քաղաքի հայկական Հավլաբար թաղամասում: Ստեղծվում է նպաստամատույց հանձնաժողով, որին գործուն մասնակցություն են ունենում թիֆլիսահայ հասարակությունը և վիրահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը:

1906 թ. հունվարի 24-ին հատուկ զորախմբով Ղազախի գավառ է ժամանում գեներալ-մայոր Լևիցկին և հայերին հավաստիացնում, թե անկարգությունները դադարել են: Կրզենցիների մի մասը մարտ-ապրիլ ամիսներին Թիֆլիսից ուղևորվում է «Թոուզ» կայարան[1830], դեպի Շամշադինի գյուղերը: Կառավարության հանձնարարությամբ ապրիլի 24-ին երկու ազգերի ներկայացուցիչներից կազմվում է հանձնաժողով, որի նպատակն էր հաշվել Կրզենի կրած վնասները: Թուրքերի առաջարկով աշխատանքները պետք է անցկացվեին Կրզեն գյուղում, և բնակիչները, որ համաձայնվել էին այդ առաջարկին, ստիպված էին գիշերել Մանուրլուում: Հաջորդ օրը՝ ապրիլի 25-ին, թուրքերը հանձնաժողովի 23 հայ անդամներից 8-ին տեղափոխում են Բոզալղանլու՝ խորհրդակցությունը շարունակելու պատրվակով: Ճանապարհին 4-ին սպանում են, իսկ ողջ մնացածները մյուս հայերի հետ վերադառնում են «Թոուզ» կայարան[1831]: Որոշ ժամանակ անց, ի վերջո, կրզենցիների մեծ մասը հաստատվում է նախկին գյուղից քիչ հեռու՝ Կուրի աջ ափից 2-3 կմ հարավ ընկած տափարակում և հիմնում նոր Կրզեն գյուղը: Իսկ փոքր մասը մնում է Թիֆլիսում կամ էլ Շամշադինի գավառի գյուղերում:

Նորաստեղծ գյուղի բնակիչները ապրում են նյութական ծանր պայմաններում, նույնիսկ սովամահության դեպքեր են լինում: Իրավիճակը գոնե մասամբ մեղմելու նպատակով Կովկասի Հայոց բարեգործական ընկերության խորհուրդը 1912 թ. փետրվարի 18-ի նիստում որոշում է գնել 100 փութ ցորեն և բաժանել կրզենցիներին[1832]: Ըստ որում, 200 բնակիչներից (30 տուն) յուրաքանչյուրին բաժին է հասնում կես փութ, որը, անշուշտ, շատ քիչ էր[1833]: Փետրվարի 19-ին Վրաստանի թեմի կառավարիչը սովյալ կրզենցիներին օգնության կարգով ուղարկում է սննդամթերքի նոր քանակություն՝ 75253, 64 ռուբլու ցորեն[1834]:

**Դպրոց.** մինչև 1988-1989 թթ. բռնագաղթը Կրզենում գործել է ութամյա հայկական դպրոց:

**Եկեղեցի.** Կրզենի տարածքում եղել է երկու եկեղեցի: Մեկը, ըստ արխիվային վավերագրերի, կոչվել է Սբ. Աստվածածին (այս անվամբ հիշվում է 1841 թ., 1882 թ.)[1835], մյուսը՝ ծխականը՝ Սբ. Հովհաննես[1836]: Սբ. Աստվածածին եկեղեցու տեղը ճշտիվ հայտնի չէ. գուցե այն եղել է հին գյուղատեղիի եկեղեցին, որն ավերված էր արդեն իսկ ԺԹ դարավերջին. «...Կռզեն չէնի կողքին կա հին մեծ գե-

1826. Կրզենի դեպքերը նկարագրող տպագիր աղբյուրներում գյուղի ավարառության ստույգ օրվա հարցում միասնական կարծիք չկա: «Մշակ»-ի թղթակցության մեջ նշված է. «Այդ դէպքը պատահում է մօտաւորապէս նոյեմբերի 23-24-ին» (1906, էջ 2): Քաջբերունին հավանական է համարում նոյեմբերի 27-ը (նշվ. հոդվ., էջ 958):

1827. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 958:

1828. Նույն տեղում, էջ 959:

1829. «Մշակ», 1906, N 65, էջ 3: Նույնը կրկնում է նաև Քաջբերունին (տե՛ս նշվ. հոդվ., էջ 959):

1830. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 206:

1831. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, «Այրարատ», 1912, էջ 60-61:

1832. «Հորիզոն», 1912, N 36, էջ 3:

1833. «Հորիզոն», 1912, N 38, էջ 3:

1834. «Արարատ», 1912, էջ 197:

1835. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 95, գ. 3874, թ. 129-130:

1836. Եկեղեցու Սբ. Հովհաննես անունը ավանդվել է Մ. Բարխուտարյանցի շնորհիվ (տե՛ս նրա՝ Արցախ, էջ 59): Այլուստ վկայված չէ:



ԿՐԶԵՆ. ուբամյա դպրոցի շենքը

ղատեղ և մեծածախս քարերով լի հին գերեզմանոտ, փլված էր մի փառահեղ քարուկրի մեծ եկեղեցի, քանդակներով զարդարված, հայկական ճարտարապետութիւնով: Ասում էին, այդ եկեղեցին 20-30 տարի առաջ քանդել է յայտնի աւազակապետ Թանղրվերտին: Նրա սրբատաշ քարերը սայլերով կրել է տվել իրա գիւղը Կոզենից մօտիկ *Բոզալ ղանլու*, իրեն համար տներ շինելու: Պատմում էին, որ եկեղեցու բոլոր պատերը գրոտած էին նախնի կոզենցոց քաջագործութիւնները. գեղական իշխանների անունները. թէ ինչպէս են դիմադրել իրանց վրա արշաւող լեկզիներին, կամ, իրանք ինչքան գերիներ են ազատել լեկզիների ձեռից, որ փախցրել էին Արցախի գաւառներից: Պատմում էին նաև, որ իրանց մի մասը Անիի գաղթականներ են, փախել են պարսիկների ձեռից»[1837]:

Սբ. Հովհաննես եկեղեցին թեև կանգուն էր, բայց չուներ իր ծխատեր քահանան. որպես կանոն՝ ժամերգությունը կատարում էին Շամշադին գավառի տարբեր գյուղերից ժամանակ առ ժամանակ այցելող շրջիկ քահանաները: Եկեղեցին հիմնահատակ ավերվել է 1905 թ. նոյեմբերին. «Եկեղեցու աւերումը կատարվել է յայտնի թուրք վաճառական Հաջի-Ամիրխանի նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ: Այդ վաճառականը, որ գտնվում էր Աղստաֆայում և յայտնի էր իբրև լուրջ ու ազդեցիկ մի անձնաւորութիւն. գլուխ է կանգնել այդ չարագործութեան: Եկեղեցին աւերելուց յետոյ, վերցրել նրա անօթեղենը, գրքերը և զանգակները»[1838]: Եկեղեցու ավերման մասին վկայում են նաև արխիվային վավերագրերը[1839]:

**Գերեզմանոց.** հին Կրզենի տարածքում տարիների ընթացքում իրականացվել են ծառատնկումներ, և հողատարածքը յուրացվել է: Մինչև 1988 թ. անվնաս մնացել էր միայն հին գերեզմանոցը, որի հյուսիսարևելյան հատվածում թաղումները շարունակվում էին մինչև կրզենաբնակ հայերի վերջին բռնագաղթը:

Կրզենի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ հայտնի չեն: Գյուղի պատմության՝ հնարավորինս ամբողջական ուսումնասիրության առումով առանձնակի կարևորություն ու արժեք ունեն գերեզմանոցում պահպանված տապանագրերը:

1985-86 թթ. դեռևս պահպանվում էր ԺԷ դարին վերաբերող 2 խաչքար և 50-ից ավելի տապանաքար՝ հարդարված նրբին զարդաքանդակներով, հիմնականում արձանագրված, շատերն էլ՝ թվագրված: Մնացած գերեզմանաքարերը վերաբերում են ԺԹ-Ի դարերին:

Հնավայրից ընդօրինակվել է ԺԷ դարով թվագրվող 40 արձանագրություն, որոնք, բացառությամբ մեկի, առաջին անգամ հրատարակել ենք 1989 թ.[1840]: Ահա դրանք.

Տապանաքարի բեկոր. չափերն են՝ 112 x 30 սմ, հյուսիսային երեսին՝ 3 տող.

*...Մամխա|թունս կամօ(ք)ն յԱ(ստուծո)յ կ(ա)նգն(ե)ցի ս(ուր)բ խ(ա)չս բարէխօս Ամի|րճան(ին), թվ(ին) ՌԿ (1611):*

Տապանաքար. չափերն են՝ 120 x 53 x 27 սմ, հյուսիսային երեսին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խաչս բարէխաւ(ս) է Միրանին. թվ(ին) ՌԿԷ (1618):*

Տապանաքար. չափերն են՝ 119 x 44 x 23 սմ, հյուսիսային երեսին և արևմտյան կողին.

*Ս(ուր)բ խաչս բարէխա(ւ)ս է ...սաթին, ...թվ(ին) ՌԿԷ (1618). | (Խ)աչայտի(ր) | կազմ(ո)ղ.*

Ծանոթ. կազմող Խաչատուրը հայ քարագործ վարպետների շարքում նոր անուն է: Գերեզմանոցում նրա կերտած և իր անունը կրող արձանագիր յոթ տապանաքար է պահպանվել: Դրանցից 5-ը թվագրված են՝ 1618, 1620 (երկու), 1651 և 1652 թվականներով:

Տապանաքար. չափերն են՝ 112 x 55-67 x 26 սմ, արևելյան կողին՝ 5 տող.

*Թվ(ին) ՌԿԹ (1620) | է(ր). | Նարկիզ(ին) | (խ)աչս բարեխ(աւս). | Խաչատուրս. | կազմող:*

---

1837. Նոյն տեղում:

1838. «Մշակ», 1906, N 65, էջ 3:

1839. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 61, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 129-130:

1840. **Կարապետյան Ս.**, Ադրբեջանական ՍՍՀ Թոուզի շրջանի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», 1989, Ա, էջ 51-55:






***ԿՐՁԵՆ. հատվածներ գերեզմանոցից***

Տապանաքար. չափերն են՝ 120 x 52-60 x 27 սմ, կողին՝ 5 տող.

*Թվ(ին) ՌԿԹ (1620).../ էցեմկս(՞).../ ս(ուր)բ խաչս բարեխ(աւս) / (Խաչ)ատուր.../ կազմողս:*

Տապանաքար. չափերն են՝ 89 x 38-50 x 20 սմ, կողին՝ 5 տող.

*Ս(ուր)բ խաչ/ս բարեխ(աւս) է / Առաք/էլ(ին), թիւ / ՌՀԳ (1624):*

Տապանաքար. չափերն են՝ 115 x 38-55 x 26 սմ, կողին՝ 4 տող.

*Ս(ուր)բ խաչս բար(է)/խ(աւ)ս է (Ջ)իսի/կին, թի/ւ ՌՀԴ (1625):*

Տապանաքար. չափերն են՝ 124 x 63-70 x 29 սմ, կողին պահպանվել է.

*.../նին թ(վին) ՌՀԴ (1625):*

Տապանաքար. չափերն են՝ 132 x 63-70 x 27 սմ, 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս է Մէլիքին: Թ(վին) ՌՁէ (1638):*

Տապանաքար. չափերն են՝ 72 x 38-50 x 15 սմ, 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս է /... թվ(ին) ՌՂԱ (1642):*

Տապանաքար. չափերն են՝ 101 x 46 x 23 սմ, հյուսիսային ե-րեսին և արևելյան ու արևմտյան կողերին.

*Ս(ուր)բ խա(չ)ս /(բար)էխա(ւ) է / Յոհա/նէսի/ն, Ոսպէտ. թվ(ին) ՌՂԳ (1644):*

Տապանաքար. չափերն են՝ 137 x 40 x 23 սմ, ուղղանկյունա-ձև, 9 տող.

*Թվ(ին) / ՌՂ/Գ (1644) /ին. Ռու/մոհո(՞) / կ(ո)-ղ(ա)կ(ի)ց / Էքին, / Յուս:*

Տապանաքար. չափերն են՝ 111 x 62 x 23 սմ, 2 տող.

*Ս(ուր)բ խա(չ)ս բարէխա(ւ)ս է Յոհանէսին. / թվ(ին) ՌՂԸ (1649):*

Տապանաքար, չափերն են՝ 103 x 62-74 x 25 սմ, հյուսիսային երեսին՝ 3 տող.

*Թվ(ին) ՌՂԸ (1649). / ս(ուր)բ խաչս բարէխաւս է Գոհար/ին, Հրայպէտին:*

Տապանաքար. չափերն են՝ 113 x 62-70 x 22 սմ, հարավային, հյուսիսային երեսներին և արևելյան կողին.

*Թվ(ին) ՌՂԸ (1649). / ս(ուր)բ խա(չ)ս բա(ր)է-խա(ւ)ս է Ղասումին, Փարուն..., / Հէղինին, Իր.../ Այ-ճունին, / ...այպետին, / Չախանիչը:*

Խաչքար. չափերն են՝ 155 x 40-60 x 24 սմ, քիվին և քիվատա-կին՝ ելնղագիր 3 տող.

*...Հուռումին / ս(ուր)բ խա(չ)ս բա(ր)էխա(ւ)ս է Յուսէփ, /թվ(ին) ՌՂԹ (1650). կ(ա)զմ(ո)ղ Ունան:*

Ծանոթ. պահպանվել է կազմող Ունանի կերտած 4 արձա-նագիր տապանաքար, որոնցից 3-ը թվագրված է 1650, 1652, 1653 թվականներով:

Տապանաքար. չափերն են՝ 63 x 27 x 25-35 սմ, 1 տող.

*Թ(վին) Ռճ (1651):*

Տապանաքար. չափերն են՝ 142-154 x 52 x 14 սմ, 6 տող.

*Կազ(մո)ղ (Խա)չ(ա)յ/տո(ւ)ր թվ(ին) Ռճ (1651): /Այս է հանգ/իստ .../...թանին:*

Տապանաքար. չափերն են՝ 94 x 38 x 20 սմ, հյուսիսային երե-սին՝ 3 տող.

*Թվ(ին) ՌճԱ (1652). / ս(ուր)բ խա(չ)ս (բա)ր(է)-խ(աւ)ս է Թառա/նին:*

















***ԿՐՁԵՆ. տապանաքարեր***

Տապանաքար. չափերն են՝ 96 x 58 x 22 սմ, հարավային երեսին՝ 3 տող.

*Թվ(ին) ՌՃԱ (1652).| ս(ուր)բ խա(չ)ս (բա)ր(է)խ(աւ)ս է Ղազարին կողա|կցին Հումիճան(ին): Կ(ա)զմ(ո)ղ Ունան:*

Տապանաքար. չափերն են՝ 149 x 70 x 27 սմ, հարավային երեսին և արևելյան ու արևմտյան կողերին.

*Ս(ուր)բ խա(չ)ս բարէ|խա(ւ)ս է Ճիւա|նշայի. | Ծատուր. թ(վին) ՌՃԱ (1652). կազմող Խաչատու(ր):*

















***ԿՐՁԵՆ. տապանաքարեր***

Տապանաքար. չափերն են՝ 128 x 65 x 20 սմ, կողին և հյուսիսային ճակատին՝ 3 տող.

*Ս(ուր)բ խա(չ)ս բա|(ր)էխա(ւ)ս է. | (կ)ազմող Խաչատու(ր):*

Տապանաքար. չափերն են՝ 119 x 40-50 x 31 սմ, արևելյան կողին՝ 2 տող.

*Կազմող Խաչատու(ր). ս(ուր)բ խաչս բարէխ|աւս է Սմբատին:*



***ԿՐՁԵՆ. տապանաքարեր***

Տապանաքար. հյուսիսային երեսին՝ 1 տող.

*Կազմող Խաչատու(ր):*

Տապանաքար. չափերն են՝ 136 x 62-75 x 28 սմ, հյուսիսային ճակատին՝ 5 տող.

*Թվին ՌՃԲ (1653). | ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(է)խ(աւ)ս է Թամամին՝ կող|ակցին Անտոնին. | կազմ(ո)ղ Ունան:*



























***ԿՐՁԵՆ. տապանաքարեր և խաչքար***

Տապանաքարի բեկորներ. ընդհանուր չափերն են՝ 140 x 80-103 x 28 սմ, արևմտյան կողին, հյուսիսային և հարավային երեսին պահպանվել է.

*...(կողա)կից Բիբիկ...: Կազմող Ունան:*

Տապանաքար. չափերն են՝ 159 x 45 սմ, ուղղանկյունաձև, կողին՝ 10 տող.

*Թվ(ին) ՌՃԺ (1661). | ես Սարգիս կա|զմել տվի տա|պան...| կողակցի|ն իմոյ Խաթ|ունին:*

Տապանաքար. չափերն են՝ 127 x 56-72 x 33 սմ, 3 տող.

*Թվին ՌՃԻԱ (1672). | ս(ուր)բ խա(չ)ս բարէ-խա(ւ)ս է Հալապ|էցի խաւճայ Աղուլքարիմին:*

Հրատ. **Карбелашвили Д. П.**, նշվ. հոդվ., էջ 42:
Տարընթերցում. հրատարակչի մոտ անձնանունը՝ «...Ալապ-ցի Խոջա Դաւթին և Մարգարիտին»:

Տապանաքար. չափերն են՝ 86 x 32 x 20 սմ, կողին՝ 3 տող.

*Ս(ուր)բ խաչս բ|ա(րէ)խ(աւս) է Թա|ճումին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 86 x 38 x 18 սմ, կողին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խա(չ)ս բա|(ր)էխա(ւ)ս է:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 138 x 50 x 23 սմ, կողին՝ 4 տող.

*Ս(ուր)բ խա(չ)ս (բ)արէխա(ւ)ս | Վանակ|անին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 107 x 58 x 18 սմ, մեջտեղից ունի ճաք, հարավային ճակատին՝ պատկերաքանդակներ, կողին՝ 10 տող.

*Ս(ուր)բ խ|աչս բ|ար(է)խաւ|ս է Իշխ|ալէկի հո|գուն |...|...|...|...:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 149 x 45-65 x 26 սմ, կողին՝ 3 տող (երրորդ տողը եղծված է).

*Ս(ուր)բ (խ)աչս բա|(րէ)խաւս է Սամ|...:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 147 x 53-68 x 24 սմ, կողին՝ 7 տող.

*Ս(ուր)բ (խ)աչս | (բա)րէխա(ւ)սէ{ս} | Սու(լ)թ|ան Բաբին, | որ Մէլ(ի)ք է|ր Թասու|ջին ձորին:*

Ծանոթ. Մելիք Սուլթան Բաբի (բաբ=հայր) ինքնությունը մեզ չի հաջողվել պարզել: Մ. Բարխուտարյանցը գերեզմանոցում տեսել է ոմն Մելիք Ջհանգիրի տապանաքարը և ենթադրել, որ Կրզենը նաև մելիքանիստ գյուղ էր (նշվ. աշխ., էջ 59: Տես նաև նույնի՝ Աղուանից Պատմութիւն, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 57): Այդ տապանաքարը տեղում չենք գտել: Ինչ վերաբերում է «Թա-սուջին ձոր» տեղանասին, ապա դրա տեղադրությունը մեզ չի հաջողվել պարզել:

Տապանաքար. չափերն են՝ 85 x 42 x 22 սմ, կողին՝ 3 տող.

*Ս(ուր)բ խա(չ)ս բա(ր)էխա(ւ)ս է | Խանա|պա-(ին)...:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 135 x 41 x 21 սմ, արևմտյան կողին.

*Ամիր:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 94 x 42 x 23 սմ, հարավային և հյուսիսային երեսներին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ)ա(ր(է)խ(աւ)ս է Վանիկին, | կազմող Յունան:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 73 x 45 x 19-22 սմ, 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս է Պէկո(ւ)մ(ին). | Յո-(հ)ան, Թոքիկ:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. չափերն են՝ 146 x 74-88 x 32 սմ, երկատված է, երկրորդ բեկորն ընկած է երեսնիվայր, որի պատճառով էլ արձանագրությունն ամբողջական չէ.

*Ս(ուր)բ խա(չ)ս (բար)էխա(ւ)ս է Սուար|ին կո-(ղակցին)...:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Տապանաքար. ուղղանկյունաձև, ինգատող ելնդագիր և փորագիր արձանագրություն.

*Այս է տապան Մարգարեանց Դաւթի | եւ Սան-դուխտի որդի Վարդազար(ին) | կողակից Ջանա-զան. թիվն | ՌՄՁԸ | 12.3.1839:*

Տապանաքար. ուղղանկյունաձև.

*Այս է տապան Վանականեանց Յակոբի կողա-կից Մարեամին, որ է դուստր Խասիբէկի, Ա(ս-տուա)ծ ողորմի սաէք. 1847:*

Տապանաքար. ուղղանկյունաձև, 5 տող.

*Այս է տապան Վանականեանց | Լեւանի որդւոյ ներկարար Յարու|թիւնին, Ա(ստուա)ծ ողորմի | կողակից Աննային. 1848. | Յովհաննեան:*

Տապանաքար. ուղղանկյունաձև, 5 տող.

*Այս է արձան կրզենեցի Ծատուրեանց | Անտօնի որդի Յարութիւնին, 50 ամաց | վախ. 10.1.1896 ամի, այս արձանս կան|գնեցին իւր կին Հէրիքն եւ որդիքն Խա[չ]|ա[յ]տուրն, Սարքիսն, ...ասին, Ա(ստուա)ծ ող[որմի]...:*

Տապանաքար. ուղղանկյունաձև, 6 տող.

*Այս է տապան Մօվսես գիւղացի | Խանումայ Սիմօնեան Բաղալեանց, | որ վախճանեցաւ ի գիւղն Կռզէն, որ | էր զոքանչ Սարգսի Թարխանեանցի, դուստր սորա ... | ...:*

**«Զատկի ծառ».** գերեզմանոցից այս սրբատեղին շատ հեռու չէ, որը մի հսկա փռշնի է:

Կրզեն գյուղի տարածքում պահպանվել են նաև մեկ այլ գյուղատեղի, գերեզմանոցի ու հիմնավեր եկեղեցու մնացորդներ[1841]:

**«Հողաբերդ».** գյուղից 1 կմ հյուսիս-արևելք՝ Կուռի աջ ափին, բլրագագաթին պահպանվել են «Հողաբերդի» («Թոփրաղ-ղալա») ավերակները. «Գեղեցիկ հարթակ է բլրի գագաթն, որից ելնում են կապասներ, հին հրացաններ և պղնձեղեն և խեցեղէն անօթներ: Մոտ քառասուն տարի առաջ գտած էին այս տեղից վեց սափոր լի արաբական և պարսկական դրամներ»[1842]:

## ՀԱԹԱՄԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 860-890 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ 1770-ական թվականներից հայաքափ գյուղի տեղում:

---

1841. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 59:
1842. Նույն տեղում, էջ 60:



***ԿՐՁԵՆ. «Ջատկի ծառ» սրբատեղին***

Գյուղի հարավային եզրին պահպանվել են հին ջրաղացի ավերակներ:

## ՀԱԹԻՆՋԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 24,5 կմ հարավ՝ Ասրիկ գետի աջակողմյան լեռնակողին, ծովի մակերևույթից 1490-1510 մ բարձրության վրա, անտառապատ վայրում:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաքափ գյուղատեղիի տեղում՝ խորհրդային տարիներին:

## ՀԱՋԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 29 կմ հարավ՝ Ասրիկ գետի ձախ ափին՝ պատմական Չաքախ գյուղից մոտ 1 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 1340-1410 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ 1770-ական թվականներից ի վեր հայաքափ գյուղատեղիում: Ցայսօր նկատելի են հին շինությունների առանձին պատերի մնացորդներ: Գյուղի հարավային եզրին պահպանվել են ջրաղացի ավերակներ:

## ՀԱՋԻՀԱՄԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1200-1250 մ բարձրության վրա, անտառապատ լեռնակողին:

Ներկայիս գյուղը գոյացել է խորհրդային տարիներին՝ հայաքափ հին գյուղատեղիում:

## ՀԱՄԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 35 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1560-1600 մ բարձրության վրա:

Թրքաբնակ այն գյուղերից է, որոնք խորհրդային տարիներին քաղաքական նկատառումներով հիմնեցին մեկուսատարածքում (անկլավ) հայտնըված հայաբնակ Արծվաշեն գյուղն օղակի մեջ առնելու նպատակով:

## ՂԱԼԱԲՈՅՈՒՆ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1510-1530 մ բարձրության վրա:

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջերին «...*Ղալաբոյինը* իրա տակի *Ահմադի Բանդ* ձորով...» պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1843]:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաքափ գյուղի տեղում: Ի դեպ, նստակեցության անցած խաշնարածների գյուղին տված Ղալաբոյուն անունը (ղալա՝ բերդ, բոյուն՝ վիզ) հուշում է, որ գյուղի մերձակայքում եղել է միջնադարյան ամրոց:

## ՂԱՐԱԲԱՂԼԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 29 կմ հարավ՝ Զակամ գետի աջ ափից հազիվ 1 կմ հեռու, ծովի մակերևույթից 1000-1070 մ բարձրությամբ հյուսիսարևմտահայաց անտառապատ լեռնակողին:

Ներկայիս գյուղը գոյացել է հայաքափ հին գյուղատեղիի տեղում Ի դարի սկզբներին:

1914 թ. ունեցել է 502 բնակիչ[1844]:

## ՂԱՐԱԴԱՇ

Գտնվում է շրջկենտրոնից 34 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1440-1480 մ բարձրության վրա:

Գյուղը գոյացել է հայաքափ գյուղատեղիում խորհրդային տարիներին:

1977 թ. ունեցել է 310 բնակիչ[1845]:

## ՂԱՐԻԲԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 33 կմ հարավ, Զակամ գետի ափին, ծովի մակերևույթից 910-950 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաքափ հին գյուղատեղիի տեղում՝ խորհրդային տարիներին:

Գյուղի հարավային եզրին պահպանվել է ավերակ ջրաղաց:

## ՂՈՋԴԵՐԵ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ-արևելք՝ Զակամ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 650-670 մ բարձրության վրա, Յանխլի (պատմական՝ Խաղխաղ) բնակավայրի դեմ հանդիման:

Փոքրիկ գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ՂՈՇԱ

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1380-1420 մ բարձրության վրա, անտառապատ վայրում:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաքափ հին գյուղատեղիում՝ խորհրդային տարիներին:

## ՂՈՒԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1400-1420 մ բարձրության վրա, լեռնաճյուղի ջրբաժան գծի վրա:

---

1843. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11:
1844. “Кавказский календарь на 1915 г.”, с. 133.
1845. «ԱՍՀ», հ. 2, էջ 218:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1980 թ. ունեցել է 636 թուրք բնակիչ[1846]:

## ՄԵԾԱԴԻԼԱՐ (ԹՈՄԱԽԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք՝ Ջակամ գետի ձախ ափին, լեռան հյուսիսահայաց ստորոտին, ծովի մակերևույթից 560-620 մ բարձրության վրա:

Պատմական անունը մոռացվել է, և ԺԹ դարի 2-րդ կեսին հայտնի էր Թոմախլի անվամբ: Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաթափ գյուղատեղիում: 1894-1895 թթ. այն պատկանել է թուրք կալվածատերեր Քյամրանբեկովներին[1847]:

1886 թ. ունեցել է 65 տուն, 446 շունչ (227 ար., 219 իգ.)[1848], 1914-ին՝ 515 բնակիչ[1849]:

## ՄՅՈՒԼՔՅՈՒԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 590-650 մ բարձրության վրա, ՀՀ պետական սահմանից մոտ 1,5-2 կմ հեռավորության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի 2-րդ կեսին՝ հայաթափ գյուղատեղիում:

1886 թ. ունեցել է 58 տուն, 431 շունչ (269 ար., 162 իգ.)[1850], իսկ 1914-ին՝ 410 բնակիչ[1851]:

## ՄՈԼԼԱ-ԱՅՐՈՒՄ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ՝ Ջակամ և Ասրիկ գետերի ջրբաժան գծի վրա, ծովի մակերևույթից 1000-1050 մ բարձրության վրա:

Թրքաբնակ փոքրիկ գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ՄՈՒՆՋՈՒԽԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ, Ախնջի գետի ձախակողմի արևելահայաց անտառապատ լեռնալանջին, ծովի մակերևույթից 1430-1510 մ բարձրության վրա:

Թրքաբնակ փոքրիկ գյուղակ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ՅԱՆԽԼԻ (ԽԱՂԽԱՂ, ԽԻԼԽԻՆԱ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք՝ Ջակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 600-650 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Յանխլին՝ պատմական Խաղխաղը, երկրամասի հնագույն բնակավայրերից է: Եղել է հայ Արշակունիների (66-428) արքայական ձմեռանոցը. «...Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթեւն եղբարբն իւրով հանդերձ... եւ եկեալ երթայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց, իբրեւ թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից: Եկեալ յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի *Խաղխաղ* քաղաքի. ի ձմերոցս արքայութեանն հայոց»[1852] կամ՝ «...մերձ ի սահմանս Վրաց հանդէպ *Խաղխաղ* քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից...»[1853] կամ՝ «...ի գեօղն, որ կոչի *Խաղխաղ*, յերկրին Աղուանից»[1854]: Խաղխաղի վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել նաև վրաց աղբյուրներում. «Եվ եկավ Հայքի (Սոմխիթի) սահմանները *Խաղխաղ* (Խիլխալա) կոչված քաղաքը, որ հայոց (սոմեխների) թագավորների ձմերանոցն էր»[1855]:

Հայտնի է, որ 450 թ. հայոց զորքը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ Խաղխաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթել է պարսիկներին[1856]:

Ուշագրավ է, որ գյուղի պատմական անվանումը փոքր-ինչ աղավաղված տարբերակով՝ Խիլխինա, պահպանվել էր մինչև Ի դարը:

ԺԹ դարավերջին գյուղը պատկանում էր թուրք կալվածատերեր Ալլահյար-բեկ, Մեհրալի-բեկ և Աղիլ-բեկ Զուլղադարովներին[1857]:

**Բնակչություն.** 1914 թ. ունեցել է 4458 շունչ[1858], իսկ 1981-ին՝ 66 բնակիչ[1859]:

**Մերձակա հուշարձաններ.** 1890 թ. Սարգիս Քամալյանը գյուղի հնությունների մասին գրել է. «...*Թիւլքու* սարը, որի հիւսիսային փեշերից սկսվում էին շինութեան հետքեր երևալ: Հայ թե թուրք ժողովուրդը այս տեղին անվանում է *Շար* (քաղաք): Այժմ սա Զուլղադարովենց սեփականութիւնն է: Հին շենքերի մեջ աչքի է ընկնում մեչիթը և կամուրջը, որ շինվել է Մամայ միրզի ձեռքով: Կամուրջը 3 աչաչին կամար ունի և լայնանիստ սներ, որոնց մեջը դատարկ է, ծառայում է իբրև պահեստատեղի: Մեջտեղի ոտը երկու կողմից դռներ ունի: Կամուրջը խախտված է, չի բանում, բնակութիւնը ներքև են գցել: Զուլղատարովենք հոյակապ տներ ունեն, շրջապատած չինարի ու բարդի ծառերով: Այդ բնակութեան տեղը կոչվում է *Խննալու* կամ *Խլխանա*»[1860]: Ի դեպ, 1980-ական թվականներին՝ մեր այցելության ժամանակ, Ջակամ գետի երկու ափերին էլ պահպանվում էին հիշյալ կամրջի միայն խելերը: Հիմնամասերը կառուցված էին սրբատաշ բազալտ քարով, իսկ մյուս հատվածները՝ աղյուսով:

1890-ական թվականների սկզբներին Յանխլի այցելած Մակար եպիսկոպոսը փաստել է տարածքում երբեմնի բնակավայրի գոյությունը. «...Արևելեան կող-

1846. «ԱՍՀ», h. 5, էջ 392:
1847. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 2-3:
1848. “Свод...”, с. 82-83.
1849. “Кавказский календарь на 1915 г.”, с. 189.
1850. “Свод...”, с. 1150-1151.
1851. “Кавказский календарь на 1915 г.”, с. 162.

1852. **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 26:
1853. **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 65:
1854. «**Եղիշէի** վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 75:
1855. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., h. Ա, էջ 163:
1856. **Ղազար Փարպեցի**, էջ 66: Տե՛ս նաև՝ **Չամչյանց Մ.**, Հայոց պատմություն, h. Բ, Վենետիկ 1785, էջ 57:
1857. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 9-10:
1858. “Кавказский календарь на 1915 г.”, с. 197.
1859. «ԱՍՀ», h. 5, էջ 187:
1860. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր 1, VI-11, թ. 35: Ի դեպ, “Очерки по истории Азербайджана” անստորագիր հոդվածում զետեղված է կանգուն կամրջի լուսանկարը (”Известия АН Аз. ССР”, 1946, N 5, с. 95):

մից ***Ընկուզուտ*** (Դոզլու), հարաւային կողմից ***Մամռուտ*** (Մամրքլու) սարերն պատած են լայնագոգ հովիտս իբր բնական շրջապարիսպ, գետակի աջ ու ձախ կողմերով: հովիտս ներկայացնում է հեռաւոր հնութեան բեկորներ և հետքեր - աւերակների թափուած քարեր, հին և կոպիտ անօթների բեկորներ, իսկ ստորերկրեայ փորուածքներից ելնում են կրով և աղիւսով շինուած պատեր և ահագին տաքարներ: Սովորականից չափազանց հաստ, երկար և լայն են աղիւսներն, այս է 31 քառակուսի սանթիմետր: Խեցեղէն խողովակներով աղբիւրներ բերուած են աւերակ քաղաքատեղիս խիստ հնուց, որոց հետքերն ակներև է Զուլկատարով Համիտ-բէկի քանդած երկարաշար կոպիտ խողովակներից, որ գտնուում են աւերակիս արևմտեան կողմերում: Ափսոս, որ խպառ անհետացել են եկեղեցեաց աւերակներն»[1861]:

Գյուղում պահպանվել է ԺԹ դարավերջին կառուցված աղյուսաշեն մի մզկիթ, գյուղի արևմտյան եզրին էլ կան ԺԷ դարում կառուցված մահմեդական դամբարանի ավերակներ:

## ՅՈՒԽԱՐԻ-ՕՔՍՅՈՒԶԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ-արևմուտք՝ Տավուշ գետի ձախակողմյան հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 580-660 մ բարձրության վրա:

Շրջանի առավել մարդաշատ գյուղերից է: 1980 թ. ունեցել է 4097 բնակիչ[1862]:

Գյուղում պահպանվել է ԺԹ դարում կառուցված մզկիթ:

## ՆԱՄԽՈՇ

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հարավ՝ Զակամ գետի աջ կողմում, ծովի մակերևույթից 1330-1410 մ բարձրության վրա:

Հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները և թուրքերով վերաբնակեցվել խորհրդային տարիներին:

## ՆԱՍԻԲԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 34 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1590-1630 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին գոյացած փոքրիկ գյուղակ է:

## ՇԱՄԼՈՒՂ (ՇՄԵՂ)

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ, պատմական Չաքախ գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1460-1540 մ բարձրության վրա:

Բնիկները գյուղը լքել են 1770-ական թվականներին և վերաբնակվել Շուլավեր գյուղում: Ի դեպ, նոր բնակավայրում ցայսօր իրենց ծննդավայրի անունով՝ Շմեղ է կոչվում Շուլավերի թաղերից մեկը:

Շուլավերում հայտնի են ծագումով շմեղցի 19 ազգատոհմեր[1863]:

## ՇԱՄԼՈՒՂ ԲԱԼԱ (ՓՈՔՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 33 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ կողմում՝ համանուն վտակի հովտում, ծովի մակերևույթից 1060-1100 մ բարձրության վրա:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղը, որ հիշատակվում է Կունուր Շամլուղ անվամբ, պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1864]: Հայաթափ այս գյուղատեղին խորհրդային տարիներին բնակեցվել է թուրքերով:

## ՇԱՄԼՈՒՂ ԲԵՅՈՒԿ (ՄԵԾ)

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ՝ Զակամ գետի ձախ կողմում, ծովի մակերևույթից 1070-1180 մ բարձրության վրա:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղատեղին պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1865]:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է 1770-ական թվականներից ի վեր հայաթափ գյուղատեղիում՝ խորհրդային տարիներին:

## ՇՂԽԵՅԲԱԹ

Գտնվում է շրջկենտրոնից 27,5 կմ հարավ՝ Ախնջի և Ասրիկ գետերի միջև ձգվող ջրբաժան գծի վրա, ծովի մակերևույթից 1600-1700 մ բարձրության վրա:

Գավառի հին գյուղատեղիներից է, որը, բնիկներից պարպվելով 1770-ական թվականներին, թուրքերով վերաբնակեցվել է խորհրդային տարիներին:

## ՉԱԹԱԽ

Գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ՝ Ասրիկ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1350-1450 մ բարձրության վրա:

Չաքախը՝ որպես հայաբնակ գյուղ, հիշվում է Դավիթ եպիսկոպոս Գեղամեցու հեղինակած չափածո հիշատակարանում, ըստ որի՝ թուրքերի դեմ Շահ-Աբաս Ա-ի տարած հաղթանակների և 1606 թ. սկսված սովի միջև ընկած ժամանակահատվածում չաքախցիները լքել են իրենց բնօրրանը և բնակություն հաստատել ներկայիս Գետաբեկի շրջանի Մեծ Ղարամուրատ գյուղում.

«...Երբ Օմարաց ազգն հատան,
Սոքա ***Չաքախ*** գեղն թողան,
***Մեծ Ղարամուրատըն*** դարձան,
***Ներքին շէնըն*** մընաց ու[ն]այն...»[1866]:

## ՉԵՇՄԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 34 կմ հարավ՝ Ասրիկ գետի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1480-1550 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է հայաթափ գյուղատեղիում՝ Ի դարի սկզբներին:

1861. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 57:
1862. «ՍԱՀ», h. 5, էջ 187:
1863. **Ասլանյան Ս., Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 27-28:
1864. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11:
1865. Նույն տեղում:
1866. «ԺԷԱ», էջ 368:



*ՅԱՆԽԼԻ (ԽԱՂԽԱՂ). մզկիթ և դամբարաններ*

## ՉՈԲԱՆ-ՍՂՆԱԽ

Գտնվում է շրջկենտրոնից 27 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 1300-1390 մ բարձրության վրա:

ԺԹ դարի վերջերին հայաթափ գյուղատեղին վերաբնակեցվել է խաշնարած թուրքերով, որոնք նրան տվել են Չոբան-Սղնախ անունը: Այն պատկանում էր թուրք կալվածատեր Զուլղադարովին[1867]:

ԺԹ դարավերջին ականատեսը վկայել է գյուղի մերձակայքում գտնվող մի վանքի գոյությունը. «**Չոբան-Սղնախի** հարավից **Ղարանլըխի** ձորում, թուրքերով վերաբնակված շենում գտնվում է վանք, որ և ասվում է **Քիլիսա դարասի**»[1868]:

## ՋԻՐԴԵԿ

Գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ՝ Ասրիկ գետի աջ կողմում՝ դեմ հանդիման պատմական Չաքախ գյուղին, ծովի մակերևույթից 1420-1500 մ բարձրության վրա:

1770-ական թվականներից մինչև խորհրդային կարգերի հաստատումը եղել է անբնակ, ապա բնակեցվել խաշնարած թուրքերով:

## ՍԱՐԻԹԱԼԱ

Գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ-արևելք՝ Ջակամի աջ վտակի՝ Եկեղեցաջուր գետակի ձախ արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1430-1500 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաթափ գյուղատեղիում ԺԹ դարավերջին:

## ՍԱՓԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 32 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1520-1550 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ՍՈՓՈՒԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Ասրիկ և Ջակամ գետերի միջև անտառապատ բարձրադիր վայրում, ծովի մակերևույթից 1380 մ միջին բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին:

1914 թ. ունեցել է 128 բնակիչ[1869]:

## ՎԱՅԻԹԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 6,5 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի աջ ափին, ծովի մակերևույթից 190-530 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին:

1976 թ. ունեցել է 815 բնակիչ[1870]:

1867. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 11:
1868. Նույն տեղում:
1869. "Кавказский календарь на 1915 г.", с. 181.
1870. «ԱՍՀ», հ. 2, էջ 424:









***ՅԱՆԽԼԻ (ԽԱՂԽԱՂ). կամրջի մնացորդները***

## ՓԱԼԵՔԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 27 կմ հարավ՝ Ասրիկ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1230-1350 մ բարձրության վրա:

ԺԹ դարի 70-ական թվականներից հայաբափ և պատմական անունն էլ մոռացված գյուղերից է: Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ՔՅԱԶԻՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ՝ Ասրիկ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1370-1410 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ փոքրիկ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ՔՅՈԽԱՆԱԲԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13,5 կմ հարավ՝ Խորանաշատի մեծահռչակ վանքից ընդամենը 1,2 կմ հյուսիս-արևելք՝ լեռան արևելահայաց կողին, ծովի մակերևույթից 900-940 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին հիմնադրված թրքաբնակ փոքրիկ գյուղի տարածքում մինչև 1988 թ. պահպանվում էին ավերակ եկեղեցու մնացորդներ:

## ՔՅՈՀՆԱՂԱԼԱ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևելք տարածված հարթավայրում՝ ծովի մակերևույթից 470-490 մ բարձրության վրա:

Դեռևս ԺԹ դարավերջին ականատեսը նշել է, որ «Մըմըրթլուից ներքև գտնվում է ***Քեոհնա ղալա*** հին շինատեղը: Այժմ թուրքեր են բնակվում. փորելիս գտնվում են կարասներ մինչև 150 բաթմանանոց. ինձ բաղենցի Բալասանն ասեց, որ իրա հօրեղբոր տանը երեք նալբաքի կա, ***Քեոհնա ղալաից*** հանած, վրեն էլ փորագրութիւն»[1671]:

## ՔՈՉԴԵՐԵ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հարավ՝ Ջակամ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 810-850 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին գոյացած թրքաբնակ գյուղակ է:

## ՕՍԳՅԱՆ (ՈՍԿՅԱՆ)

Գտնվում է շրջկենտրոնից 31 կմ հարավ՝ Ջակամ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1010-1040 մ բարձրության վրա:

Պատմական անվանումը պահպանվել է փոքրինչ աղավաղված: Հայաբափ գյուղատեղին խաչնարած թուրքերով վերաբնակեցվել է խորհրդային տարիներին:

---

1871. ԳԱԹ, **Ս. Քամալյան**ի ֆ., տետր N 1, VI-11, թ. 3:

# ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ

Խանլարի վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 2393 քկմ մակերես, ունի 86 բնակավայր, որից 82-ը՝ գյուղ: Մինչև 1938 թ. կոչվել է Նարիմանովի շրջան: Շրջկենտրոնն է նախկին գերմանական գաղութ Հելենենդորֆը, որը 1938 թ. հուլիսի 19-ին վերանվանվել է Խանլար: Շրջանը սահմանակից է Ադրբեջանի հանրապետության Դաշկեսանի, Եվլախի, Թոուզի, Կախի, Շամխորի, Վրաստանից՝ Դեդոփլիս-Ծղարոյի և ԼՂՀ-ից՝ Շահումյանի և Քարվաճառի շրջաններին: 1988-1991 թթ. հայ բնակչությունից պարպվել են շրջանի տարածքի բոլոր բնակավայրերը:



## ԱԲԼԱՀ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 1000-1050 մ բարձրության վրա:

**Հին Աբլահ.** ներկայիս գյուղից 1,5 կմ հյուսիս-արևելք՝ հարավահայաց ձորալանջին է գտնվում Հին Աբլահ գյուղատեղին. «...նա երեք կողմից շրջապատուած է մերկ լեռներով, հարաւային կողմը գիւղի ամբողջ երկայնութեամբ միապաղաղ քարաժայռ է, որ իբրև ամուր պարիսպ պաշտպանել է գիւղի բնակիչներին հին, անապահով ժամանակներում հարևան բարբարոսների յարձակումներից: Միայն գիւղի դիմացը՝ արևելակողմը տարածուած է գեղեցիկ ծմակ և պարտէզներ: Ամեն տեսակ պտղատու ծառերով, գոված է Աբլահի տանձը...»[1872]:

Ի դարի սկզբներին Աբլահի բնակիչները, լքելով ձորամիջում գտնվող հին գյուղը, փոքր-ինչ հարավ-արևմուտք՝ սարահարթի վրա, հիմնում են համանուն նոր գյուղը:

Գյուղատեղիի վերածված Հին Աբլահը տեղացիներին հայտնի էր նաև Գինեձոր անվամբ: Արդյո՞ք նույնական են հիշյալ Գինեձորն ու մի ժամանակ գյուղի եկեղեցում պահվող ձեռագիր ավետարանի հիշատակարանում վկայված «Կինեվանուց ձորը», դժվարանում ենք պնդել[1873]:

**Բնակչություն.** Աբլահաբնակ ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Աբրահամ Բաղդասարեան, կինն Շողի, ուստերք՝ Եղիազար և Սարգիս, դուստր՝ Հէրիք, եղբայրն՝ Վարդան, կինն՝ Ալթում:

2. Սարգիս Պապեան, քոյրն՝ Սոնայ, մայրն՝ Աննայ:

3. Սիմէոն Խաչումեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Աւագ, Մկրտիչ, դուստր՝ Շողի:

4. Խաչատուր Հարությունյան, կինն սորա՝ Անթառամ, եղբայրք՝ Մնացական, կինն՝ Հէրիքնազ, Յովսէփ, մայրն՝ Խաթուն:

5. Խանում այրի կին, ուստերք Աւէտիս, Գրիգոր, դուստր՝ Սօնայ:

6. Վանի Հարութիւնեան, կին՝ Մարիամ, եղբարք՝ Յովակիմ, կինն՝ Անթառամ, Գրիգոր:

7. Գրիգոր Յարութիւնեան, կինն սորայ՝ Աննայ, ուստերք՝ Դանիէլ, Ահարոն և Սիմէօն:

8. Յովհաննէս Յարութիւնեան, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Սարգիս, դուստր՝ Վարթի, եղբայրն՝ Պետրոս:

9. Սարուխան Ղուկասեան, կինն՝ Շողի, ուստերք՝ Թօմաս, Ղազար և Յարութիւն:

10. Աւագ Գրիգորեան, մայրն՝ Նազլուխան, եղբայր Յովսէփ, քոյրն՝ Սօնայ»[1874]:

---

1872. «Նոր-Դար», 1886, N 144, էջ 2:

1873. Հիշատակարանի խնդրո առարկա հատվածն է. «Ի թվականս ԲՃՂԱ-ին ես ամի Վահապ, և սուգի Վասիլ իշխանս շինեցի եկեղեցիս և գաւարանս. առուն հանեցի Կինեվանուց ձորերէն ու սարերէն. բնակիչ գեղիս խոստացան տարէնն գ. ժամ, կատարողն Աստուծոյ օրհնի, դարձեալ կամուրջն շինեցի ու կապն կապեցի թճ. անծին երինջ մորդեցի, ոչխարաց, դօչից, գառնից սաւա այս եղաւ: Դարձռալ բուսխանի մուլքն իմն էր ջուր չունէր շապտէնըն ա. որ Ծակ քարով ջուր տվի իմ մլքի խաթերն համար» («Արձագանք», 1886, N 20, էջ 293):

1874. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 29-30:

Ստորև ներկայացնում ենք Աբլահի բնակչության վիճակագրական պատկերը 1804-1917 թթ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[1875] | 16 | 32 | 26 | 58 |
| 1839[1876] | 10 | 28 | 21 | 49 |
| 1845[1877] | | 62 | 41 | 103 |
| 1847[1878] | | 65 | 42 | 107 |
| 1849[1879] | | 65 | 47 | 112 |
| 1852[1880] | | 71 | 55 | 126 |
| 1861[1881] | 12 | | | |
| 1866[1882] | 12 | 52 | 44 | 96 |
| 1872[1883] | | 69 | 60 | 129 |
| 1873[1884] | | | | 78 |
| 1875[1885] | | | | 81 |
| 1876[1886] | | | | 83 |
| 1877[1887] | | 46 | 41 | 87 |
| 1878[1888] | | 48 | 40 | 88 |
| 1881[1889] | | 70 | 64 | 134 |
| 1882[1890] | | 69 | 69 | 138 |
| 1883[1891] | | 68 | 68 | 136 |
| 1885[1892] | | 62 | 47 | 109 |
| 1886[1893] | 34 | 111 | 85 | 196 |
| 1887[1894] | | 77 | 47 | 124 |
| 1888[1895] | | 82 | 48 | 130 |
| 1889[1896] | | 83 | 50 | 133 |
| 1890[1897] | | 86 | 48 | 132 |
| 1891[1898] | | 91 | 54 | 145 |
| 1892[1899] | | 99 | 56 | 155 |
| 1893[1900] | | 104 | 58 | 162 |
| 1894[1901] | | 105 | 56 | 161 |
| 1897[1902] | | 119 | 74 | 193 |
| 1898[1903] | | 124 | 76 | 200 |
| 1899[1904] | | 131 | 82 | 213 |

---

1875. ”Акты...”, т. II, с. 596.

1876. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 29-30:

1877. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:

1878. Նույն տեղում, գ. 3814, թ. 95-96:

1879. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:

1880.Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:

1881. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:

1882. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:

1883. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:

1884. Նույն տեղում, գ. 3862, թ. 58-59:

1885. Նույն տեղում, գ. 3872, թ. 44-45:

1886. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:

1887. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:

1888. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:

1889. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:

1890. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:

1891. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:

1892. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:

1893. ”Свод...”, с. 86-87. Ի դեպ, մեկ այլ տվյալով գյուղն ունեցել է 24 տուն բնակիչ («Արձագանք», 1886, N 20, էջ 293):

1894. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:

1895. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:

1896. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:

1897.Նույն տեղում, գ. 3887, թ. 149:

1898. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:

1899. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:

1900. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:

1901. Նույն տեղում, գ. 3896, թ. 71-72:

1902. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:

1903. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:

1904. Նույն տեղում, գ. 3903 թ. 126-127:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1900[1905] | | 133 | 86 | 219 |
| 1901[1906] | | 137 | 84 | 221 |
| 1902[1907] | | 142 | 85 | 227 |
| 1905[1908] | | 149 | 92 | 241 |
| 1906[1909] | | 149 | 88 | 237 |
| 1907[1910] | | | | 257 |
| 1908[1911] | 27 | 157 | 158 | 312 |
| 1909[1912] | | 159 | 158 | 317 |
| 1910[1913] | | 166 | 160 | 326 |
| 1912[1914] | 43 | 174 | 175 | 349 |
| 1914[1915] | | | | 371 |
| 1917[1916] | 60 | | | 324 |

ԺԹ–Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալների համադրման արդյունքում պարզվում է, որ այդ ժամանակաշրջանում, ընդհանուր առմամբ, բնակչության աճ գրանցած գյուղից ժամանակ առ ժամանակ ծայր առած արտագաղթերի հետևանքով, այնուամենայնիվ, որոշ տարիներին արձանագրվել է բնակչության թվաքանակի նվազում: Տակավին 1886 թ. երևույթը նկատվել և մեկնաբանվել է ժամանակի մամուլում. «Այս գիւղը մի քանի տասնեակ տարի առաջ աւելի շէն էր, բայց անընդհատ գաղթելուց (գլխաւորապէս Գանձակ) այժմ միայն 25 տուն բնակիչ է մնացել...»[1917]: Ի դեպ, արլահցիները հիմնականում բնիկ էին, իսկ փոքր մասն այստեղ էր փոխադրվել Հաթերք և այլ գյուղերից[1918]:

Թուրք տարրն Արլահում բույն է դրել 1980-ական թվականների սկզբներին (նախ` մի քանի ընտանիք): 1989 թ. ամռանը գյուղն արագորեն բնակեցվեց թուրքերով, և ամիսներ անց Արլահում իսպառ մարեց հայ կյանքը:

**Դպրոց.** վավերագրերը Արլահում դպրոցի բացման տարեթիվ են նշում 1906[1919] և 1907 թթ.[1920]: Առաջին վկայության մեջ անգամ խոսվում է վերաբացման մասին, ուստի, կարելի է ենթադրել, որ Արլահում ծխական դպրոց է գործել նաև մինչև 1895 թ. ցարական իշխանությունների կողմից հայոց դպրոցների փակումը:

1912 թ. 43 աշակերտ-աշակերտուհի ունեցող դպրոցը նյութական միջոցների բացակայության պատճառով փակվել է[1921]:

**Եկեղեցի.** Սբ. Մինաս եկեղեցին կառուցվել է ԺԷ դարում` ավելի հին ու ավերված եկեղեցու տեղում: ԺԹ դարավերջին նորոգվել է մուտքը, և հավելվել է կրկնահարկ զանգակատուն:

Եկեղեցին ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Երեք զույգ սյուների վրա հենված կիսաշրջանաձև քաղակիր կամարները պահում են երկթեք ծածկի տակ առնված տանիքը: Խորանի երկու կողմերում ունի ուղղանկյունաձև հատակագծով մեկական ավանդատներ: Հյուսիսային պատի մեջ իր ավանդական տեղում է մկրտարանի ավազանը: Լուսավորությունն իրականացվել է արևելյան և հարավային ճակատներից բացված 5 լուսամուտների միջոցով (3-ը` արևելքից, 2-ը` հարավից): Մյուս երկու ճակատները (արևմտյան և հյուսիսային) զրեթե ամբողջ բարձրությամբ հպված են լեռնալանջին: Մուտքը բացված է հարավային ճակատից: Կառուցվել է սրբատաշ և կոփածո քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են` 18,85 x 10,30 մ:



*ԱՐԼԱՀ. Սբ. Մինաս եկեղեցու հատակագիծը*

Տակավին 1987 թ. եկեղեցու մուտքի մոտ` զանգակատան արևմտյան եզրին` հենապատի շարվածքի մեջ, ագուցված վիճակում պահպանվում էր հին եկեղեցու բարավորը, որը տեղահանվել էր մուտքի` 1892 թ. նորոգության ժամանակ:

Հին եկեղեցու բարավորին` 8 կամ 9 տող.

*Թվ(ին) ՌճՁԱ (1732), յիշատակ է Պետրոսին, Յակոբին, Մրզ|ի(ն) տրո(ւ)ք Տ(է)ր Պօղ|օսին, որ էինք | որդիք Աւետիսի, | ի ազգէն`Հաս|անանց, որ էր ժամանակն Վալին Ահմատին, որ գոչի Թահմազ, որ թաք|աւորեցաւ ի երգրին Բարսից, բազում գաւառս աւերեաց:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 20, էջ 293: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 267: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 317: «Դիվան...», V, էջ 232:

Ծանոթ. սկզբնամասի միտումնավոր քերված 2-3 տողերը լրացրել ենք ըստ նախկին հրատարակիչների վերծանության:

1905. Նույն տեղում, գ. 3905 թ. 90-91:
1906. Նույն տեղում, գ. 3906 թ. 96-97:
1907. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
1908. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
1909. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1910. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1911. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 8:
1912. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
1913. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
1914. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62: Նաև` «Հորիզոն», 1912, N 107, էջ 3:
1915. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 82.
1916. **Ավետիսյան Մ. Մ.**, Տեղեկագիր Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի բնակավայրերի ու բնակչության թվակազմի մասին (1917 թ.), Բանբեր Հայաստանի արխիվների, 1991, N 3, էջ 166:
1917. «Նոր-Դար», 1886, N 144, էջ 2:
1918. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 267: Նաև` **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 317:
1919. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 301, թ. 5:
1920. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 261, թ. 1:
1921. «Հորիզոն», 1912, N 107, էջ 3:






***ԱԲԼԱՅ. Սբ. Մինաս եկեղեցի. տեսքը՝ արևմուտքից, արևելքից, խաչքարեր՝ արևմտյան ճակատին կից, զանգակատունը՝ հարավից կից***

Եկեղեցու որմերը հարուստ են ԺԷ-ԺԸ դարերի նվիրատվական հակիրճ հիշատակագրություններով: Դրանցից են.

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հյուսիսային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին` 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս | բար(ե)խաւս | Տ(է)ր Ղազ(ա)-ր|ին, հ(ո)գ(ու)ն, | թվ(ին) ՌճԻԵ (1676):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված է եղել Սբ. Մինաս եկեղեցու արևելյան ճակատի վերնամասում, փոքր սպիտակավուն քար, կողին` 9 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չ(ս) | բա(րե)խ|(աւս) | Հ(այ)ր(ա)-պ(ե|տին) եւ Եսա(ին)...|...|հոգ|(ոյն), թվ(ին) ՌճԼ (1681):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 232:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հյուսիսային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին` 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չ(ս) բար(ե)խօս | Տ(է)ր Օհանէսին| իւր կ(ո)ղակից Հ(ո)օմին | Ուաքին, Մարք|արիտ(ին):*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հյուսիսային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին` 8 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս | բ(ա)րեխօս | Պ(ա)լին, հո-գ|(ո)ւն, | իւր կ(ո)ղ|ակից Խ|(ա)նումի(ն):*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հյուսիսային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին` 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բար(ե)խ(օ)ս | Դ(ա)ւթին, Եղի|-(սաբ)|էթին, Ղազ|արին | հ(ո)գ(ու)ն:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հարավային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին` 4 տող.

*Ս(ուր)բ խաչ(ս) բար(ե)խ|օս | Աղազարին...:*

Հրատ. առաջին անգամ:






***ԱԲԼԱՅ. Սբ. Մինաս եկեղեցի. հատվածներ զանգակատնից, մուտքի շինարարական արձանագրությունը (ընկած է եկեղեցու հարավային պատի տակ)***

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հարավային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին՝ 6 տող.

*Ս(ուր)բ խաչս / բարեխ(օ)ս / Խաբ/ուն/ին հո/-գ(ո)յն:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հարավային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս / բ(ա)րէխ(օ)ս / Մարեանին:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. խորանի հարավային կողմի սրբատաշ անկյունաքարերի արևմտահայաց երեսին՝ 4 տող.

*Ս(ուր)բ խաչս / բարեխաւս Առ/ըստակես/ին հո-գոյն:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. մուտքի ճորոգության առթիվ, սրբատաշ վայր ընկած քարին՝ 6 տող.

*Շինեցաւ դուռնս / արդեամբք եւ ծա/խիւք Միքա-յէլի / Սարգսեան Ղազանչեանց / Աբլահեցւոյ, ի յի-շատակ / իւր, յամին 1892 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցի. զանգակատան արևելյան ճակատին ագուցված սրբատաշ քարին՝ 4 տող.

*10.1.1896 ամի այս եկեղէցո / կաթ(ո)ղուկէն յ(ի)-շատակ / շինեցի Միքայէլի իմ / հայր Ս(ա)րգիս Ա. Ղազ(ա)նչ(եանց):*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Մինաս եկեղեցին գործել է մինչև 1928 թ. և նույն թվականին իշխանությունների կարգադրությամբ փակվել[1922]:

1922. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:



***ԱԲԼԱՀ. Սբ. Մինաս եկեղեցի. ներքին տեսքը դեպի արևմուտք և հյուսիս-արևելք, խոյակներ***

**Գերեզմանոց**. գտնվում է եկեղեցուց փոքր-ինչ բարձր՝ սարալանջի թեքության վրա: 1960-ական թթ. տեղում եղել է արձանագիր 3 խաչքար.

Խաչքար. քիվին և թևերի շուրջ եղել է.

*Խա(չ)ս փ(ր)կութի(ւն) Թիլնա խ(ա)թունա, / թվ(ին) ՌԽԵ (1596):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 232:

Խաչքար. թևերի շուրջ՝ 6 տող.

*Թալասում, / Խ(ա)նու/մ/ուն / հոգ/ուն:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 232:

Խաչքար. մեծ, պատվանդանի հետ միասին ընկած, քիվին, խաչաթևերի շուրջ և հարավային կողին՝ 9 տող.

*Ես Սարգիս էրէց կանգնեցի ս(ուր)բ խ(ա)չ(ս) / բա(ր)էխ(աւ)ս է Գիլինգոյլին հոգուն: Խանում/ին, Դալ/պէկին, քաղաք/ին / մեռաւ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 232:

**Քահանա.** 1891 թ. լրատվական մի հաղորդման մեջ նշվել է, որ Աբլահն արդեն 10 տարի է, ինչ քահանա չունի[1923]: Ակնհայտ է, որ տեղեկատվության հեղինակը նկատի է ունեցել գյուղի ծխատեր *Տեր Պետրոսի* մահից (1879) հետո ստեղծված իրավիճակը: Քահանայի արձանագիր տապանաքարը վերջին անգամ տեսել ենք Սբ. Մինաս եկեղեցու բակում՝ հարավային պատի տակ 1987 թ.: Ի դեպ, Տեր Պետրոս Աղիբեկյանցը քահանա է ձեռնադրվել 1814 թ. (ծնվ. 1783 թ.), նախ քահանայագործել է Էրքեջում, ապա փոխադրվել Աբլահ ու հովվել նաև մերձակա Սուլուք և Հաջիշեն գյուղերի ծխերը[1924]:

Տապանաքար. ուղղանկյունաձև, վրան գավազանի պատկեր՝ 4 տող.

1923. 1886, N 144, էջ 2, «Նոր-Դար», 1891, N 113, էջ 2:
1924. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 124-125:



***ԱԲԼԱՀ. Սբ. Մինաս եկեղեցի. որմերին պահպանված վիմագրեր ու արևմտյան պատի տակ կանգնեցված խաչքարեր***

*Այս է տապան սրբակրօն ձերունի | Տէր Պետրոս քահանայի | Աղիբէկեանց, վախճանեալ | 1879 ամի, Ա(ստուա)ծ հոգին լուսաւորէ, ամէն:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վախճանվել է 96 տարեկան հասակում:

1897-1910 թթ. Աբլահին հովվել է *Ներսես Տեր-Բարաղամյանցը*[1925]: 1885-1888 թթ. կրթվել է Խաչակապի Թարգմանչաց վանքի առաջնորդ Թեո-

1925. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 6:



***ԱՐԼԱՀ. Տէր Պետրոս Աղիբեկյանցի տապանաքարը և խաչքար Սբ. Մինաս եկեղեցու հյուսիսային պատի մեջ***

դորս վարդապետ Շիրակունու մոտ, 1897 թ. քահանա ձեռնադրվել Տփխիսում, Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի կողմից և քահանայագործել Արլահում: Ունեցել է 5 զավակ. Սոնա (ծնվ. 1891 թ.), Մկրտիչ (ծնվ. 1894 թ.), Սարգիս (ծնվ. 1896 թ.), Կապապետ (ծնվ. 1898 թ.) և Շուշանիկ (ծնվ. 1903 թ.)[1926]:

## ԱԶԱՏ (ՍՈՒԼՈՒԿ, ՍՈՒԼՈՒՔ)

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 10,5 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 1170-1220 մ բարձրության վրա:

**Գյուղանվան ծագումը.** ըստ ավանդության՝ գյուղն իր անունը ստացել է հարկերից ազատվելու պատճառով. «...Լանկթամուրը այս գիւղով անցնելիս՝ զինուորները մտել են գիւղի եկեղեցին և կողոպտել: Այս պատճառով Լանկթամուրի վիզը ծռուել է և երեսը յետևը դարձել: Լանկթամուրը հարց ու փորձ է արել այս թշուառութեան պատճառի մասին և երբ տիրացուից լսել է, թէ եկեղեցին է պատժել, հրամայել է վերադարձնել աւարը, և անմիջապէս վիզը ուղղուել է. այս պատճառով էլ վանքը, ինչպէս և ամբողջ գիւղը ազատ է կացուցել հարկերից և յարձակումներից, ուստի և վերակոչուել է Ազատ»[1927]:

**Պատմություն.** գյուղի հիմնադրման ժամանակի վերաբերյալ գրավոր աղբյուրները լռում են, սակայն տարածքում պահպանված հուշարձանները թվագրվում են նախաքրիստոնեական ժամանակաշրջանով:

ԺԷ դարում գյուղը հիշվում է Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) կոնդակում[1928]:

**Բնակչություն.** ԺԹ դարավերջին բնիկներից բացի, Սուլուկ գյուղն ունեցել է նաև եկվոր հայ բնակիչներ. «...բնակիչներից բնիկ 15 գերդաստան, Խոյից գաղթած 20, Բօզլուխից եկած 7, իսկ Բախշի գիւղից տեղափոխուած 8 ծուխ...»[1929]:

Սուլուկեցի ազգատոհմերի պատմությունն ուսումնասիրելու առումով ուշագրավ է 1839 թ.՝ գյուղի 12 ընտանիքից բաղկացած 64 շնչի անվանական ցուցակը.

«1. Մահտեսի Վէրդի Պետրոսեան, կին՝ Գիւբահար, ուստերք՝ 1-ին. Աւէտիս, կինն՝ Մարիամ, 2-րդ. Յարութիւն:

2. Յարութիւն Յովհաննիսեան, կինն՝ Հէրիք, եղբարք՝ Մարտիրոս, Մուսի և Գաբրիել:

3. Մնացական Պետրոսեան, կինն՝ Թագուհի, ուստերք՝ 1-ն. Պողոս, կինն՝ Անախանում, ուստր՝ Աւէտիս, 2-րդ՝ Պետրոս, 3-րդ՝ Վարդան:

4. Յովհաննէս Պետրոսեան, կինն՝ Նանա, ուստր՝ Գասպար, դուստր՝ Ամառնան:

5. Սահակ Գրիգորեան, կինն՝ Րօզի, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Մէհրի, եղբայրն՝ Գէորգ, կինն՝ Գիւլի:

6. Սարգիս Պետրոսեան, կինն՝ Թանգի, դուստր՝ Հէրիքնազ:

7. Եսայի Օհանիսեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Գիւլի, եղբայրն՝ Օվակիմ, կինն՝ Հռիփսիմէ, դուստր՝ Հէրիքնազ:

8. Աւէտիս Տէր Եղիազարեան, կինն՝ Գիւլի, ուստր՝ Սողոմոն, եղբայր՝ Ղազար, քոյր՝ Սանամ, մայր՝ Մարիամ:

9. Վարդան Նաւասարդեան, կինն՝ Սօնայ, եղբայրն՝ Մինաս, կինն՝ Հռիփսիմէ, ուստերք՝ Վարդան, Շահգելդի և Ղուլի, դուստր՝ Սանամ:

10. Դանիէլ Սահակեան, կինն՝ Խանփէրի, ուստերք՝ Խուդի, Աւագ և Աստուածատուր:

11. Սարգիս Պետրոսեան, կինն՝ Սիրուն, ուստերք՝ Սարգիս և Մարտիրոս:

12. Մեսրոպ Օհանէսեան, կինն՝ Նանա, ուստր՝ Գասպար, Խաչատուր[1930]:

1926. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 56:

1927. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 317: Նաև՝ **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 175:

1928. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:

1929. Նոյն տեղում, էջ 269:

1930. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 30:

Ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[1931] | 14 | 26 | 14 | 40 |
| 1839[1932] | 12 | 38 | 24 | 62 |
| 1845[1933] | | 60 | 57 | 117 |
| 1847[1934] | | 63 | 59 | 112 |
| 1849[1935] | | 75 | 61 | 136 |
| 1852[1936] | | 84 | 77 | 161 |
| 1861[1937] | 13 | | | |
| 1866[1938] | 23 | 112 | 74 | 186 |
| 1872[1939] | | 109 | 91 | 200 |
| 1873[1940] | | | | 149 |
| 1876[1941] | | | | 164 |
| 1877[1942] | | 95 | 76 | 171 |
| 1878[1943] | | 97 | 79 | 176 |
| 1881[1944] | | 114 | 94 | 208 |
| 1882[1945] | | 117 | 100 | 217 |
| 1883[1946] | | 119 | 101 | 220 |
| 1885[1947] | | 165 | 145 | 310 |
| 1886[1948] | 52 | 189 | 164 | 353 |
| 1887[1949] | | 170 | 152 | 322 |
| 1888[1950] | | 175 | 160 | 335 |
| 1889[1951] | | 179 | 170 | 349 |
| 1890[1952] | | 186 | 178 | 364 |
| 1891[1953] | 50 | 192 | 181 | 373 |
| 1892[1954] | | 197 | 188 | 385 |
| 1893[1955] | | 205 | 200 | 405 |
| 1894[1956] | | 208 | 205 | 413 |
| 1897[1957] | | 228 | 229 | 455 |
| 1898[1958] | | 236 | 237 | 473 |
| 1899[1959] | | 241 | 244 | 485 |
| 1900[1960] | | 252 | 266 | 518 |
| 1901[1961] | | 263 | 273 | 536 |
| 1902[1962] | | 256 | 273 | 529 |
| 1905[1963] | | 260 | 275 | 535 |
| 1906[1964] | | 277 | 302 | 579 |
| 1907[1965] | | | | 503 |
| 1908[1966] | 37 | 135 | 120 | 255 |
| 1909[1967] | | 271 | 251 | 522 |
| 1910[1968] | | 150 | 135 | 285 |
| 1912[1969] | | 283 | 261 | 544 |
| 1914[1970] | | | | 690 |
| 1917[1971] | 110 | | | 718 |
| 1968[1972] | | | | 500 |
| 1976[1973] | | | | 511 |
| 1989[1974] | 154 | | | |

Աղյուսակի տվյալների համադրումից պարզվում է, որ ԺԹ–Ի դարերի ընթացքում գյուղի բնակչության մեջ, ընդհանուր առմամբ, բացառությամբ մեկ-երկու դեպքի, գրանցվել է անընդմեջ աճ:

**Ազատը 1920 թ.** այդ թվականին Ազատ գյուղը ենթարկվել է փորձության. «...Ազատ գյուղի հայությունը նահանգական կառավարության ուղարկած ավազակաբարո կամավոր զորքի ձեռքով զինաթափվելուց, ավարի մատնվելուց և ապա, որպես թե Գանձակ բերելու նպատակով, գյուղից տեղահան արվելուց հետո, կոտորվում է ճանապարհին՝ Հաջիքենդ ամարանոցից մինչև Գանձակի գավառի գերմանական Ելենենդորֆ ավանը: Մնացորդը մոտ 500 հոգի, մազապուրծ հասնում է Ելենենդորֆ, որի բնակիչներից ստանում է ամենաջերմ ընդունելություն, հյուրասիրություն և ապաստարան երեք օր շարունակ»[1975]:

Այս ողբերգական իրադարձությունների մասին թեմի առաջնորդ Լևոն եպիսկոպոսը 1926 թ. գրել է. «1920 թուի մարտին կործանուեց Ազրբէջանական մասամբ զօրքով և մասամբ ամբոխով Հայ Սուլուք գիւղը, որպէս թէ “տալի Ղազարին պահպանելու համար” ժողովուրդը քաղաք փախչելու ժամանակ

---

1931. ”Акты...”, т. II, с. 596.
1932. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 30:
1933. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
1934. Նույն տեղում, գ. 3814, թ. 95-96:
1935. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
1936. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
1937. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
1938. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
1939. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
1940. Նույն տեղում, գ. 3862, թ. 39-40:
1941. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
1942. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
1943. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
1944. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 27-28:
1945. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
1946. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
1947. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
1948. ”Свод...”, с. 86-87. Ի դեպ, մեկ այլ տվյալով գյուղն ունեցել է 24 տուն բնակիչ («Արձագանք», 1886, N 20, էջ 294):
1949. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
1950. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
1951. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
1952. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
1953. Նույն տեղում, գ. 3889, թ. 148: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:
1954. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 120:
1955. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
1956. Նույն տեղում, գ. 3896, թ. 173-174:
1957. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
1958. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
1959. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
1960. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:
1961. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
1962. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
1963. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
1964. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
1965. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
1966. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9: Ի դեպ, 1908 թ. վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ Ազատ գյուղն այդ թվականին ունեցել է 550 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 175):
1967. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
1968. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
1969. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
1970. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 84.
1971. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
1972. «ՀՍՀ», հ. 1, Երևան 1974, էջ 95:
1973. «ԱՍՀ», էջ 131:
1974. Ըստ ազատցի Հովh. Բաղալյանի մեզ տրամադրած տվյալների:
1975. «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.». փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 460:





***ԱԶԱՏ. գյուղի տեսքը հարավ-արևելքից և արևմուտքից***

մասամբ կոտորուեց, մասամբ վիրաւորուեցին, մի քանիսները սպանուեցին գիւղում թուրքերից...»[1976]:

**Ազատ (Նոր Ազատ) գյուղի հիմնադրումը.** Նահանգային իշխանությունների թույլտվությամբ 1910 թ. Ազատ վերանված պատմական Սուլուքի բնակիչները հին գյուղից մի փոքր դեպի հյուսիսարևելք՝ նույն լեռնաճյուղի ստորոտում, հիմնում են համանուն նոր գյուղ[1977]: Արդեն 1926 թ. բավականաչափ բարեշեն բնակավայր էր. «Ընդամենը 16 տարի է, որ հին Սուլուքը իր վատ դիրքի պատճառով թողնվել է ու հիմնվել նոր Սուլուքը մի հարթության վրա: Հայ գյուղերի մեջ Սուլուքն առաջինն է, որտեղ տներն ու փողոցները չափ ու ձևի տակ են առնված: Նախ՝ 7-8 սաժեն լայնությամբ փողոցներ, որոնց կողքերով հոսում են ջրերը, իսկ ամբողջ երկարությամբ էլ ծառատունկեր, ինչպես խնձորենի, տանձենի, ընկուզենի, լորենի և այլն: Յուրաքանչյուր տուն իր առաջ ունի պարտեզ պտղատու ծառերով և բանջարանոց, որտեղ ցանում են գետնախնձոր, լոբի, բողկ, կաղամբ և այլն:Այս ամբողջը ներկայացնում է մի համեստ այգեստան, որն իր գեղեցկությունն ու գրավչություն ունի: Տները մեծ մասով երկհարկանի են և կղմինդրածածկ...»[1978]:

**Ազատի հայության վերջին օրերը.** Ազատցիները հայրենի գյուղը հարկադրաբար լքել են 1990 թ. փետրվարի 27-28-ին: Վերջինը Մելքումյան Բենիկի ընտանիքն էր, որ թուրքերի նվաճած գյուղը թողեց մարտի 3-ին և փոխադրվեց Գետաշեն:

**Դպրոց.** 1886 թ. մի վկայության համաձայն մի քանի տարի առաջ եկեղեցու մոտ դպրոցի համար մեկ սենյակ էր կառուցվել[1979]:

**Եկեղեցի.** ներկայիս Ազատ գյուղից հազիվ 1 կմ հարավ-արևմուտք՝ պատմական Սուլուկ (Սուլուք) գյուղատեղիի տարածքում՝ մի բլրի վրա, ավելի հին եկեղեցու տեղում և մասամբ հին տաճարի քարով կանգուն է ԺԷ դարում կառուցված ցարդ կանգուն եռանավ բազիլիկի հորինվածքով (արտաքին չափերն են՝ 16,80 x 10,40 մ) Սբ. Հովհաննես եկեղեցին (վավերագրերում երբեմն հիշվում է Սբ. Հակոբ անվամբ)[1980]:



***ԱԶԱՏ. Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցու հատակագիծը***

Եկեղեցին ունեցել է շինարարական արձանագրություն, որ 1980 թ. (մեր առաջին այցելության ժամանակ) արդեն չկար.

Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի

*Շնորհօք Ամենակալին ես Մէլքէմ գամաւս շինեցի եկեղեցիս յիշատակ ինձ և նախնեացս իմոց պարոն Աղային, Մէլիք Եսկեարին, Մէլիք Աղապէկին, Ղամար-Սուլթանին և իւր ծնողին՝ Մէլիք Պաղուն, Աւար խաթունին, կողակցին՝ Սավոյինային և եղբօրն՝ Պատօ պէկին, Աղասի պէկին. թվ. Ռ....:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր, որոշվում է հիշատակված անձերով:

1890 թ. եկեղեցու հյուսիսային մուտքի առջև կառուցվել է կրկնահարկ զանգակատուն (չի պահպանվել), որի առթիվ փորագրված է եղել հետևյալ արձանագրությունը (նույնպես չի պահպանվել).

Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի.

*Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ զանգակատունս շինեցի արդեամբ Մակի Պետրոսեան Աւա-*

1975. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 22:
1976. "Тифлисский листок", 1912, N 119, էջ 3:
1978. «Մարտակոչ», 1926, N 180, 10 օգոստոսի:
1979. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:
1980. Օրինակ՝ 1861 թ. (ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 147-148):



***ԱՋԱՏ. Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի. տեսքը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից, հարավից, արևելքից, հյուսիսային ճակատից բացված մուտքը և արձանագրություններ***

*լեանցի ի յիշատակ հանգուցեալ որդոյ իւրոյ Խաչատուրի 1890 յամի մայիսի 10 օրն:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 269:

1897 թ. եկեղեցու մուտքը նորոգվել է: Այդ մասին վկայում է հյուսիսային ճակատում՝ մուտքի մոտ ագուցված սրբատաշ քարին փորագրված 7 տողանոց այս արձանագրությունը.













***ԱՁԱՏ. Սբ. Հովհաննես եկեղեցի. ներքին տեսքը դեպի արևմուտք և արևելք, հարավակողմի ավանդատունը, հարավ-արևելակողմի սյան խոյակը, արևմտյան ճակատից բացված լուսամուտի շրջանակը և խաչքար՝ ագուցված ավանդատան մուտքին***

Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի.

*Շինեցաւ դուռս | եկեղեցւոյ Սրբոյն | Յակօվբայ Աբլահե|ցի Գալստի Սողոմոն|եան Խաչումեանց, ի յի|շատակ իւր եւ ծնող|աց, 9.6.1897 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** 1908-1910 թթ. հիշվում է ծխատեր *Կարապետ Տեր-Սարգսյանը,* որը հովվում էր նաև հարևան Բաղշիկ գյուղին[1981]:

---

1981. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 6:




*ԱՉԱՏ. Երմողիա քահանայի վանքի փլատակներում պահպանված խաչքար (1174 թ.) և խաչքարի բեկոր (ԺԲ-ԺԳ դդ.)*

**Երմողիա քահանայի վանք (Սուլուքի անապատ).** գտնվում է Աչատ գյուղից 2 կմ արևմուտք՝ Սուլուկնաձորի ձախ հարավահայաց կողմում:

Մեր այցելության ժամանակ (1987) փլատակների մեջ նկատելի էին միայն մի քանի տեղահան ու կոտրատված խաչքարեր: Դրանցից մեկի (50 x 44 x 11 սմ) ստորին խաչաթևի երկու կողմերում կար 2 տողանոց արձանագրություն.

Երմողիա քահանայի վանք, խաչքարին.

*Թվ(ին) ՈԻԳ (1174) է(ր):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Մինչդեռ 1891 թ. փլված է եղել միայն քաղածածկ տաճարը. «...շինուած է հնուց անտաշ քարով, խոնարհուած է գլուխն, մնում են այժմ միայն չորս պատերն»[1982]: Մինչև իսկ իր տեղում է եղել դռնագլխի քարը՝ քարավորը՝ հետևյալ արժեքավոր արձանագրությամբ.

Երմողիա քահանայի վանք.

*Թիւն ՉԻԸ (1279), ես Մխիթար ու Տիրածէր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան Տէր ըՍտեփաննոսի Աղուանից կաթողիկոսի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 317: «Դիվան...», V, էջ 247:

Վանքում և նրա շրջակայքում կան նաև հետևյալ վիմագրերը.

Երմողիա քահանայի վանք. «Փոքր ինչ վերև դռնագլխից».

*Ապաղայ Եղչ խանին ու Խարայնախին Աւառս լեղով շինեցի զեկեղեցիս:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 318:

Երմողիա քահանայի վանք. «Մատրանս մէջ կայ մի հանգիստ, որի շիրմաքարն կոտրուած է միջից, կտորները միմեանց մօտ բերելով՝ կարդացինք հետևեալը».

*Այս է հանգիստ Սայի որդի Հասանայ փեսայիս:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Երմողիա քահանայի վանք. դրսում մի տապանաքարին եղել է.

*Այս է հանգիստ Միսայէլայ Սասնի որդի, որք կարդէք, յաղաւթս յիշեցէք թվ. Չ (1251):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Երմողիա քահանայի վանք. մատուռի հյուսիսային կողմում մի գերեզմանաքարին եղել է.

*Այս է հանգիստ Ջևանայ որդի Հասանայ ի թվ. ՉԿԳ (1314):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Երմողիա քահանայի վանք. բակի գերեզմանոցում գտնված մի մեծ խաչքարի վրա եղել է.

*Կամաւն Աստուծոյ կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Մասլուկին և ծնողաց իւրոց և եղբարց իւրոց Սրթուշին, Խաւջին, Շահմէլիք խաթունին, թվ. ՊՂԶ (1447):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

Երմողիա քահանայի վանքից ոչ հեռու նկատելի են նաև միջնադարյան գյուղատեղիի հետքեր: Ի դեպ, գյուղատեղին եպիսկոպոս Բարխուտարյանցը ենթադրաբար նույնացրել է Ղալակա գյուղի եկեղեցում պահված մի ձեռագրի հիշատակարանում նշված Հենգուզակ գյուղի հետ. «...ի գեղս Անուզ Հաւայտուն Հենգուզակ ի դուռն սբ. եկեղեցուս մասն Պանդալիոն բժշկի..., ի թուականութեան Հայ տումարիս ՌԺԳ (1564)...»[1983]:

1982. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 270:

1983. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 271 (հիշատակարանն ամբողջությամբ տես՝ նույն հեղինակի «Աղուանից երկիր և դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 208):



ԱԶԱՏ. Սբ. Պանդալիոն մատուռ. տեսքը հարավ-արևմուտքից և հյուսիս-արևելքից

**Սբ. Պանդալիոն մատուռ (Պանդ, Պանդավանք).** գտնվում է Ազատից 5,5 կմ հարավ-արևմուտք, Պանդ լեռան գագաթին, 2108 մ բարձրության վրա: Մերձաբնակ ու մինչև իսկ հեռավոր վայրերի հայ բնակիչների շրջանում մատուռը համբավավոր ուխտատեղիի համարում ուներ: Այդ մասին պահպանվելեն ուշագրավ հաղորդումներ. «Յունիս ամսիցը սկսած մինչև օգոստոսի վերջը խումբ խումբ գնում են սուրբ Պանտալէօն անունով ուխտատեղին, որ գտանվում է քաղաքիցը դէպի հարաւ




ԱԶԱՏ. Սբ. Պանդալիոն մատուռի հատակագիծը

երեսուն հինգ մղոնի հեռաւորութիւնով մէկ բաւական բարձր սարի վերայ, ուր տեղ կառուցել է 1857 թուումը Հայր Տէր Սարգիսը Տէր Ազարեանց իւր սեպհական ծախքովը մէկ բարեձև եկեղեցի»[1784] կամ «...ուխտաւորների բազմութիւն Պանտալէոնի մատուռն ունի, մանաւանդ Ս. Աստուածածնի վերափոխման տօնին, երբ, ինչպէս ասում են, Գանձակ քաղաքից և շրջակայ տեղերից հաւաքւում է մեծ բազմութիւն: Սորա արդիւնքը յատկացրած էր Գետաշէնի հայոց հոգևոր դպրոցին»[1785]:

Սբ. Պանդալիոն մատուռը համակ սրբատաշ քարով կառուցված և միանավ թաղածածկ հորինվածքով բոլորովին նոր շինություն է, ընդ որում, պատերի մեջ նկատելի չեն այնպիսի քարեր, որոնք հուշեին տեղում ավելի հին շինության՝ երբեմնի առկայության հանգամանքը: Արտաքին չափերն են՝ 7,36 x 4,36 մ: Միակ՝ արևմտյան մուտքի ճակատին՝ բարավորից վեր, ընթեռնելի է 8 տողով փորագրված հետևյալ արձանագրությունը.

*Ս(ուր)բ Պանտալէոնի մատուռս շինեցաւ 1856 թ. / Գանձակեցի Սարգիս քա(հա)ն(ա)յ Տէր-Ազարեանի ծախ/քով ի յիշատակ իւր որդի Մկրտչի, / նորոգեցաւ 1896 թ. Սամիկոն Յովհաննէսեան / Տէր-Սարգսեան Տէր-Ազարեանցի հոգացողութեամբ / եւ իւր ժողովրդի օժանդակութեամբ, / ի հայրապետութեան Տ. Տ. Մկրտչի Ա „Հայրիկ„ սրբ/ազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց:*

Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** 1869 թ. ձեռնադրվել էր «Կարապետ քահանայ Տէր Յակովբեան Տէր Սարգսեանց դաբաղաղցի ի վերայ Սբ. Յովհաննէս եկեղեցւոյն հայոց Սուլուք գեղջ օգնական ծերունի հօր իւրոյ Յակովբ քահանայի»[1786]:

## ԱԶԴԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Կուրակ գետի ձախակողմյան զառիթափ ձորակողին, ծովի մակերևույթից 1430-1550 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին:

1908 թ. ունեցել է 126[1787], իսկ 1914-ին՝ 142 բնակիչ[1788]:

## ԱԼԱԲԱՇԼԻ

Գտնվում է Գանձակից 15, շրջկենտրոնից 23 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 270 մ մինչին բարձրության վրա: Գանձակ-Աղստաֆա երկաթուղագծի կայարաններից մեկն է:

1784. «Կռունկ Հայոց Աշխարհին», Տփխիս,1861, էջ 365:
1785. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:
1786. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10:
1787. "Кавказский календарь на 1910 г.", с. 175.
1788. "Кавказский календарь на 1915 г.", с. 84.

Հայտնի է, որ դեռևս 1864 թ. ալաբաշլի անվամբ հայտնի խաշնարած թուրք ցեղերը ներկայիս գյուղի տարածքն օգտագործում էին որպես ձմեռոց[1989]:

Գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[1990] | 29 | 50 | 41 | 91 |
| 1887[1991] | 101 | 437 | 315 | 752 |
| 1907[1992] | | | | 898 |
| 1914[1993] | | | | 850 |

## ԱԼԻ-ԲԱՅՐԱՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 184-187 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: Միավորված է Լյաքի գյուղական խորհրդի հետ:

## ԱԼԻ-ԲԱՅՐԱՄԼԻ (ԱՀՄԵԴԲԵԿԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 230-245 մ բարձրությամբ միապաղաղ հարթավայրում:

1886 թ. ունեցել է 53 տուն՝ 341 շունչ (198 ար., 143)[1994], 1914 թ.՝ 497 բնակիչ[1995]:

## ԱԼԻՄԱԴԱԹԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս՝ Արթինաջուր (Կոշկար) գետի (այդ շրջանում ոչ մշտահոս) աջ ափին, ծովի մակերևույթից 285-295 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԱԼԻՆՋԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 255-268 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[1996] | 14 | 45 | 56 | 101 |
| 1908[1997] | | | | 130 |
| 1914[1998] | | | | 147 |

## ԱԼԻՈՒՇԱՂԻ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 275-290 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի վերջին: 1908 թ. ունեցել է 256 բնակիչ[1999]:

## ԱՂԱՄԻԲԵԿԼԻ (ՆԵՐՔԻՆ ԵՎ ՎԵՐԻՆ)

Համանուն զույգ գյուղերը գտնվում են շրջկենտրոնից 25 կմ (վերինը) և 27 կմ (ներքինը) հյուսիս՝ ծովի մակերևույթից 205-210 մ (վերինը) և 194-196 մ (ներքինը) բարձրության վրա:

**Բնակչություն.** խաշնարած թուրքերի աղասիբեկլու ցեղերը ԺԹ դարի 2-րդ կեսին գտնվել են իրարից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և ցրված տարբեր ձմեռոցներում:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2000] | 65 | 230 | 146 | 376 |
| 1908[2001] | | | | 1850 |
| 1914[2002] | | | | 345 |

## ԱՂԵԽՈՒՇ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ վտակի՝ Գետիշինագետի (թուրք՝ Խեյրաչայ) ձախ հարավահայաց ձորափին, ծովի մակերևույթից 820-950 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին: 1908 թ. ունեցել է 145 բնակիչ[2003]:

**Պուկի Սբ. Գևորգ (Պուկեսաբերք) ուխտատեղի.** գտնվում է գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք՝ 1403 մ բարձրությամբ համանուն լեռան գագաթին (թուրք. Փիրինյալ): Հնում այստեղ մի մատուռ է եղել, բայց ԺԹ դարի վերջերին պահպանվել էր միայն մի խաչքար. «...սրածայր սարի գագաթին մի խաչարձան, որ ուխտատեղի է: Վաղուց եղած է այստեղ անապատի նման մի մատուռ, որ ավերուած է յետոյ»[2004]:

## ԱՇՐՂԼԻ (ՀԱՏԻՍ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ, ծովի մակերևույթից 830-970 մ բարձրության վրա:

---

1989. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 48, с. 258.
1990. ”Акты...”, с. 596.
1991. ”Свод...”, с. 76-77.
1992. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 177.
1993. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 85.
1994. ”Свод...”, с. 84-85.
1995. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 93.
1996. ”Свод...”, с. 80-81.
1997. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 179.
1998. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 87.
1999. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 179.
2000. ”Свод...”, с. 84-85. Վիճակագրական տվյալում առկա է զանազան վայրերում նույն քոչվորներին կրկնապես արձանագրելու արդյունքում ի հայտ եկած վիճակագրական անստույգ (ուռճացված) տեղեկություն:
2001. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 172. Տվյալն աչքի է ընկնում ակնհայտ անճշտությամբ:
2002. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 83.
2003. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 174.
2004. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294:

**Պատմություն.** պատմական Հատիս և ներկայիս թրքաբնակ Աշըղլի գյուղերի նույնացման համար հիմք են ծառայում նախ՝ Փիլիպպոս կաթողիկոսի կոնդակում (ԺԷ դար) դրա հիշատակումը ի թիվս մերձակա գյուղերի. «...Գետաշենու, Սլուքեցւոյ, Բաղշիքու, Մրցնու, Հաճիշինու, Քոշկայ, **Հատիսու**, Էիրլօղայ, Միրզիկուայ, Ոսկանապատի...»[2005], ապա նաև 1804 թ.՝ ի թիվս Դուլուս, Սուլուկ, Հաջիքենդ, **Հադիս**, Քոշկ գյուղերի: Ընդ որում, մինչև ԺԹ դարի սկզբները Հատիսը զուտ հայաբնակ է եղել և, օրինակ, 1804 թ. ունեցել է 6 տուն (12 ար., 10 իգ.)[2006]:

Հաշվի առնելով ներկայացված գյուղացանկերի անվանական հաջորդականությունը՝ առավել հավանական ենք համարում պատմական Հատիսը նույնացնել ներկայիս Աշըղլի գյուղի հետ:

Մինչև 1931 թ. գյուղը կոչվել է Գարյաղդի, այնուհետև՝ Վորոշիլովկա, իսկ 1958 թ.՝ Աշըղլի:

1976 թ. ունեցել է 537 բնակիչ[2007]:

## ԱՉԱՂԱՅԱ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ վտակ Գետիշինագետի ձախ ափին, ծովի մակերևույթից 620-660 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: 1908 թ. ունեցել է 125 բնակիչ[2008]:

## ԲՈԼՉԱԼՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք Գանձակ քաղաքից 5 կմ արևմուտք, ծովի մակերևույթից 450-520 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայաքափ է եղել ԺԷ-ԺԸ դարերում: Հայտնի է, որ ԺԹ դարավերջին Բոլչալին գտնվել է թուրք կալվածատերեր Մահմեդ աղա Արուլ-բեկ օղլիի, Սոյուն աղա Նովրուզ-աղա օղլիի և Վալի-բեկի իրավասության ներքո[2009]:

**Հնագիտական հուշարձաններ.** գյուղի տարածքում՝ Արթինաջուր գետի ափամերձ Փաշա-թափա կոչված բլրի շրջանում, հնագետ Է. Ռյոսլերը 1899 թ. պեղել է 5 դամբարան: Հայտնաբերված գտածոները վկայում են, որ դրանք վերաբերում են բրոնզ-երկաթ անցումային դարաշրջաններին[2010]:

**Բնակչություն.** Գետիշինագետի հովտում և Կուրի ափամերձ հարթավայրերում ցրված ու մի շարք ձմեռոցներում հանգրվան գտած թուրք խաշնարած բոլչալու ցեղախմբերի թվաքանակի վիճակագրությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2011] | 149 | 656 | 500 | 1156 |
| 1914[2012] | | | | 2650 |
| 1977[2013] | | | | 2075 |

## ԲՐԱՋՈՒՐ (ՂԱՐԱՔԵՇԻՇ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք՝ Միրզիկ գյուղից 3 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 980-1040 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** բացատրվում է ջրի բերովի հանգամանքով. «Անունս „Բրաջուր„ երևի ծագել է բրածոյ ջուր բառերից. որովհետև երկու տեղ հոսող ջրերը բրելով են դուրս ձգել»[2014]:

**Կառուցապատում.** 1890 թ. Բրաջրում գերակշռում էին հողածածկ հարթ կտուրներով տները. «Գիւղի տները մեծ մասամբ գետնափոր են, հողածածկ, անյարմար...»[2015]: Գրեթե ութ տարի անց ականատեսը գրել է, որ «Գիւղում կան փոքր ի շատէ կանոնաւոր փողոցներ, տների մեծ մասը նոր ձևի են, միայն կալերը, մարագները և գոմերը նոյնպէս գտնւում են գիւղի մէջ, տների մօտ»[2016]:

**Բնակչություն.** բրաջուրեցիների մասին եպիսկոպոս Բարխուտարյանցն ուղղակի նշել է. «բնակիչք բնիկ»[2017], մինչդեռ, ինչպես վկայել են ուրիշները, գյուղն ունեցել է նաև Պարսկաստանից փոխադրված հայ բնակչություն[2018]:

Ավանդաբար պատմել են, որ Բրաջուրը հիմնադրել են 5 ընտանիքներ. «Այս գիւղն իւր պատմական անցեալով յայտնի է, որ սկզբում ունեցել է 5 տուն հայ բնակիչ, բայց տարիների ընթացքում պարսից բռնակալութեան ժամանակներում ինչ-ինչ հանգամանքների պատճառով ուրիշ տեղերից՝ Ղարաբաղի Իբրահիմ-խանի և Երևանի Սահման-խանի օրով այդ նահանգներից գաղթականութեան հոսանքը քշել-բերել է այստեղ և մի քանի տուն հայեր: Սրանք միանալով բնիկների հետ՝ կազմել են մի փոքրիկ գյուղ...»[2019]:

Խնդրին անդրադարձած «Արձագանք»-ի թղթակիցը նշել է. «Պարսից պատերազմի ժամանակ մի քանի տուն Երևանից և մի քանիսը Ղարաբաղի Էրքէջ գյուղից գաղթելով այստեղ, հաստատել են բնակութիւն...»[2020]:

Բրաջրի ազգատոհմերի, բնակչության շրջանում տարածում գտած անձնանունների ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված և ստորև ներկայացվող ցուցակը.

2005. Նույն տեղում, էջ 48:
2006. "Акты...", т. II, с. 596.
2007. «ՍՍՀ», հ. 1, էջ 514:
2008. "Кавказский календарь на 1910 г.", с. 219.
2009. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 37-38:
2010. **Реслер Э.**, Археологическия изыскания в Закавказье, "Кавказ", Тифлис, 1903, N 179, с. 2.

2011. "Свод...", с. 78-79.
2012. "Кавказский календарь на 1915 г.", с. 101.
2013. «ՍՍՀ», հ. 2, էջ 241:
2014. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:
2015. «Նոր-Դար», 1890, N 119, էջ 2:
2016. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 315:
2017. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 278:
2018. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, նոյն տեղում:
2019. «Նոր-Դար», 1890, N 70, էջ 3:
1820. «Արձագանք», 1886, N 20, էջ 295:

«1. Կարապետ Առաքելեան, կին սորա՝ Ջավահիր, ուստերք՝ Բաբաջան և Աւետիս, դուստր՝ Բէզգատայ, մայրն՝ Մարիամ:

2. Յակոբ Յօհաննիսեան, կին սորա՝ Մարիամ, դուստր՝ Սուլթան:

3. Վարդան Խաչատուրեան, ուստերք՝ Սարգիս և Աւագ, դուստր՝ Մարիամ:

4. Մնացական Սարգսեան, կին սորա՝ Նազանի, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Մագթաղ:

5. Յակոբ Մաքէոսեան, կինն՝ Վարդի, ուստերք՝ Խաչատուր և Պօղոս, դուստր՝ Մինա խանում:

6. Կարապետ Յարութիւնեան, կին սորա՝ Մարիամ, ուստր՝ Մկրտիչ, եղբայրն՝ Մնացական, կինն՝ Ռէհան, ուստր՝ Սիմէօն, դստերք՝ Մարիամ, Հոռի և Հէրիք:

7. Պետրոս Մէլքումեան, կինն՝ Թանգի, ուստր՝ Կոստանդ, եղբարք՝ Նաւասարդ, Բաղդասար և Յօհաննէս, մայր սոցա՝ Խաթայի:

8. Բարխուդար Ծատուրեան, կին սորա՝ Հէրիք, դուստր՝ Մագթաղ, եղբայրն Սուքիաս, կինն՝ Հոռոմսիմ:

9. Մարգար Գրիգորով, կին սորա՝ Հէրիքնազ, ուստր՝ Ղահրաման, եղբայրն՝ Յակոբ, քոյրք՝ Աննայ և Եղիսաբէթ:

10. Յօհաննէս Յարութիւնեան, մայրն՝ Վառվառ:

11. Սահակ Անտօնեան, կինն՝ Մարգարիտ:

12. Բախտիար Ղազարեան, եղբայրն՝ Ստեփան, մայր սոցա՝ Գայիանէ:

13. Ղուլի Ալլահվէրդեան, կին սորա՝ Թագուհի, ուստերք՝ Մկրտիչ, Յօհաննէս, դուստր՝ Սիրաննան:

14. Օհաննէս Սարգսեան, կին սորա՝ Մարիամ, ուստերք՝ Սարգիս և Մարտիրոս, դուստր՝ Թագուհի, եղբայրն՝ Ստեփան, կին սորա՝ Զարի, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Սաբէղ:

15. Յարութիւն Մէլքումեան, կին սորա՝ Սառայ, ուստերք՝ Գաբրիէլ, կին սորա՝ Հէրիք, միւս որդին՝ Օհաննէս, քոյր սորա՝ Հէրիք»[2021]:

Վիճակագրական տվյալների համադրումը, ըստ ժամանակագրության, ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2022] | 7 | 15 | 10 | 25 |
| 1839[2023] | 15 | 41 | 35 | 76 |
| 1845[2024] | | 63 | 54 | 117 |
| 1847[2025] | | 54 | 60 | 114 |
| 1849[2026] | | 76 | 63 | 139 |
| 1852[2027] | | 85 | 76 | 161 |
| 1861[2028] | 16 | | | |
| 1866[2029] | 21 | 96 | 79 | 175 |
| 1872[2030] | | 179 | 126 | 305 |
| 1873[2031] | | | | 236 |
| 1876[2032] | | | | 254 |
| 1877[2033] | | 159 | 102 | 261 |
| 1878[2034] | | 164 | 118 | 282 |
| 1881[1835] | | 184 | 128 | 312 |
| 1882[1836] | | 191 | 137 | 328 |
| 1883[1837] | | 195 | 141 | 336 |
| 1885[1838] | | 145 | 125 | 270 |
| 1886[1839] | 35 | 190 | 163 | 353 |
| 1887[1840] | | 165 | 145 | 310 |
| 1888[1841] | | 176 | 150 | 326 |
| 1889[1842] | | 182 | 152 | 334 |
| 1890[1843] | | 185 | 165 | 350 |
| 1891[1844] | 33 | 191 | 171 | 362 |
| 1892[1845] | | 195 | 169 | 364 |
| 1893[1846] | | 199 | 175 | 374 |
| 1894[1847] | | 208 | 178 | 386 |
| 1897[1848] | | 229 | 191 | 420 |
| 1898[1849] | | 233 | 194 | 427 |
| 1899[1850] | | 241 | 201 | 441 |
| 1900[1851] | | 248 | 206 | 454 |
| 1901[1852] | | 256 | 210 | 466 |
| 1902[1853] | | 263 | 214 | 477 |
| 1905[1854] | | 266 | 220 | 486 |
| 1906[1855] | | 284 | 231 | 515 |
| 1907[1856] | | | | 457 |
| 1908[1857] | 33 | 255 | 200 | 455 |
| 1909[1858] | | 262 | 210 | 472 |
| 1910[1859] | | 269 | 221 | 490 |
| 1912[1860] | | 271 | 223 | 494 |
| 1914[1861] | | | | 412 |
| 1917[1862] | 56 | | | 387 |
| 1924[1863] | 82 | | | |

Վիճակագրական առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ԺԹ դարի ողջ ընթացքում ու նաև Ի դարի սկզբներին ընդհանուր առմամբ բնակ-

2021. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 26:
2022. "Акты...", т. II, с. 596.
2023. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 26:
2024. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
2025. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
2026. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
2027. Նույն տեղում, գ. 3819, թ.105-106:
2028. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2029. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2030. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2031. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
2032. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2033. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2034. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2035. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2036. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2037. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2038. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
2039. "Свод...", с. 84-85. Այլ տեղեկագրում՝ 24 տուն («Արձագանք», 1886, N 20, էջ 295):
2040. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
2041. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
2042. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2043. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
2044. Նույն տեղում, գ. 3889, թ. 149: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 278:
2045. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 121:
2046. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2047. Նույն տեղում, գ. 3896, թ. 72-73:
2048. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
2049. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
2050. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
2051. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:
2052. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
2053. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
2054. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
2055. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9: Նաև՝ գ. 3915, թ. 24:
2056. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, բ. 2:
2057. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 77-78: Նաև՝ ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9:
2058. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 117:
2059. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
2060. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
2061. "Кавказский календарь на 1915 г.", с. 135.
2062. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2063. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, թ. 49:







*ԲՐԱՋՈՒՐ. ընդհանուր տեսքը, Սբ. Գաբրիել եկեղեցին արևմուտքից և բրաջուրցի հարսանքավորների խմբանկար (Ի դարի սկիզբ)*

չության աճ գրանցելով հանդերձ՝ երբեմն տեղի է ունեցել նաև նվազման դեպքեր՝ կապված արտագաղթի, քաղաքական անկայուն իրավիճակի (օրինակ՝ 1905-1906 թթ.) և պատերազմի (Առաջին աշխարհամարտը) հետ:

**Զբաղմունք.** բրաջուրեցիներն աչքի են ընկել առանձնահատուկ աշխատասիրությամբ. «Սրանք աշխատասէր են և գիշերն անգամ քուն չունին վաղուան աշխատանքի համար մտածելու: Տեղացիների գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւնը, անասնապահութիւնը և մասամբ էլ սայլապանութիւնը...»[2064]: Սրան կարելի է ավելացնել նաև հանքագործությունը. «Գիւղիս հարաւային կողմում կայ կայծաքարի և պիտակ քարի հանք: Վերջինս նման է Հին Ղարաբուղաի քարահանքի քարերին, որը տանում են ծախելու Բագու քաղաքում»[2065]:

Բրաջուրում զարգացած էր նաև գորգագործությունը. «Այս գիւղի կանայքն ու աղջկերքը նոյնպէս աշխատասէր են...: ...ունին և մի գովելի աշխատանք, այն է գործում են թանկագին գորգեր, գոյնզգոյն կապերտներ և այլ մանր իրեր, որոնց գործուածքը կարող է մրցել մինչև անգամ Պարսկաստանի գործուածքի հետ»[2066]:

**Դպրոց.** մինչև 1896 թ. կառավարության հրամանով հայոց դպրոցների փակումը գյուղում գործած դպրոցի մասին տվյալներ չունենք: Բայց կասկածից վեր է, որ այն եղել է նաև մինչ այդ թվականը,

2064. «Նոր-Դար», 1890, N 70, էջ 3:

2065. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 278:
2066. «Նոր-Դար», նույն տեղում:

քանի որ մի շարք վավերագրեր նշում են, որ 1906 թ. Բրաջրի դպրոցը վերաբացվել է[2067]: Ուշագրավ է, որ կրթօջախը վերաբացվել էր առանց հոգևոր իշխանության գիտության՝ որպես արական ծխական դպրոց[2068]: 1909-ին դպրոցն արդեն ուներ երկսեռ՝ 21 տղա և 12 աղջիկ աշակերտություն[2069]:

Խորհրդային տարիներին Բրաջրում գործել է 8-ամյա դպրոց:

**Եկեղեցի.** գյուղամիջի Սբ. Գաբրիել եկեղեցին արևելյան ճակտոնի գագաթին քառասյուն զանգակատնով, միանավ, թաղածածկ, անմշակ քարով, կրաշաղախով կառուցված շինություն է: Ճակատին եղել է հետևյալ արձանագրությունը.

*Յիշատակ է Սուրբ Գաբրիէլ եկեղեցի Բաբաջան, որ է որդի Տէր Ակոբին:*

Հրատ. «Նոր-Դար», 1890, N 70, էջ 3:

Ծանոթ. բրաջուրեցի Բաղամ Գրիգորյանի նույն արձանագրության ընթերցումը հետևյալն է. *Եկեղեցին կառուցեց Յակոբի որդի Բաբաջանը 1700 թ., ի յիշատակ իւր որդիներ Յակոբջանի, Օհանջանի, քոյրերի, ծնողների եւ հարս՝ Վառվառայի* (**Գրիգորյան Բ.**, Բրաջուր, «Գարդմանք», 1996, N 1, էջ 3):

Ի դեպ, եկեղեցին կառուցող Բաբաջանի մասին ավանդաբար պատմել են, թե. «...մեծ կարողութիւն է ունեցել և այն ժամանակուայ Գանձակում նստող Ջաւադ-խանը դրանից միշտ փող (խարջլըղ) է պահանջելիս եղել. մի օր այդ խանը ասում է. Բաբաջան, ինչո՞ւ իմ փողը շուտ է սպառւում, իսկ քոնը չի սպառւում: Պատասխան է ստանում. Խան սաղ օլսըն, սանըըքի Բաբաջան վերգսիզըր, մանըմքի ալահ վերգսի (խանը ողջ լինի, քոնը Բաբաջանի տուածն է, իսկ իմը Աստուծոյ տուածը) և այն օրից մնում են այդ խօսքերը, որ մինչ օրս էլ իբրև առած ասում են մեր գիւղերում»[2070]:

Եկեղեցին փակվել է 1928 թ. կառավարության հրամանով[2071]:

Մինչև 1989 թ. գյուղի հայ բնակչության բռնագաղթը եկեղեցին կանգուն էր:

**Քահանա.** հայտնի է, որ 1905-1923 թթ. գյուղը հովվել է Միրզիկի *Մարտիրոս քահանա Եպիսկոպոսյանցը*[2072]:

## ԳԵՏԱՇԵՆ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք Կուրակ գետի խոր ձորի մեջ: Գյուղի թաղամասերի հիմնական մասը տարածված է գետի ձախակողմյան ձորալանջերին, ծովի մակերևույթից 950-1050 մ բարձրության վրա: Ունի շուրջ 2,5 կմ երկարություն և միայն 5-6 հարյուր մետր լայնություն:

2067. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 216, թ. 1: Նաև՝ ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 15:
2068. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 301, թ. 5:
2069. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17: Նաև՝ **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 470:
2070. «Նոր-Դար», 1890, N 70, էջ 3:
2071. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
2072. ՀԱԱ, ֆ. 57Պ, ց. 3, գ. 259, թ. 4:

**Պատմություն.** պատմական հարուստ ու փառավոր անցյալով հայտնի այս գյուղի հետ կարող են համեմատվել երկրամասի միայն սակավաթիվ գյուղեր (Բանանց, Փիբ, Խաչակապ, Ղարակ, Ոսկանապատ):

Պահպանված նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ բնակավայրը գոյություն է ունեցել արդեն վաղ միջնադարում, իսկ հայտնաբերված հնագիտական որոշ գտածոներ (խեցեղեն, բրոնզե իրեր և այլն) վերաբերում են նախաքրիստոնեական շրջանին:

Գետաշենում և նրա մերձակայքում պահպանված բազմաթիվ եկեղեցիներն ու կամուրջները, ջրաղացներն ու հնձանները, խաչքարով ու տապանաքարով հարուստ գերեզմանոցները, գյուղատեղիները, բնակելի ու հասարակական բնույթի մեծաքանակ շենքերը կազմում են այն մեծարժեք, հարուստ ու ինքնատիպ մշակութային ժառանգությունը, որն արարվել է հարյուրամյակների ընթացքում և կանգուն կամ կիսավեր վիճակով հասել մեր օրերը:

Գետաշենի մասին գրավոր աղբյուրներից մեզ հասած հիշատակությունները սուղ են, ընդ որում եղածն էլ միայն ԺԷ դարից է: Մասնավորապես, 1626 թ. գյուղանվան հիշատակությանը հանդիպում ենք վրաց ավարառու բանակի չարագործությունների նկարագրության առիթով. «Եւ յանիրաւ ազգն Վրաց արձակեցօ ի վերա Հայոց ազգիս Գետաշէնու...»[2073]: Այնուհետև Գետաշենը հիշատակվում է Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) գրած մի կոնդակում[2074]:

1691 թ. հիշվում է Գետաշենի տանուտեր Քամալ բեկը՝ «Ես Քամալ պէկ տանուտէր Գետաշինու դպրոցի արի»[2075], որը, ի դեպ, 1673 թ. մի վիմագրում ներկայացված է իբրև մելիք: Նրա գլխավորությամբ և համագյուղացիների մասնակցությամբ 1677 թ. Գետաշենի կենտրոնում կառուցվել է Սբ. Նահատակ կամ Ավագ Սբ. Նշան եկեղեցին:

1766 թ. հիշվում է գյուղի մելիք Հովսեփը. «Մէլիք Իւսիւֆն...: Որ այժմ ի Գետաշէն իւրով երկրանօքն նստէր...»[2076]:

Մեկ տարի անց վրաց Հերակլ թագավորի դրդմամբ Գանձակի Շահվերդի խանը հարձակվում է Գետաշենի վրա, սակայն ստանում ուժեղ հակահարված. «...ի հասարակել զիշերոյն և մերձ յառաւօտն լինելն, արկանէր յանկարծօրեն ի վերայ Մէլիք Իւսիւֆին ի Գետաշէն ի կոտորել, յաւարել և գերել զբանակ նորին: Իսկ նա թէպէտ իւրայնովքն անկարծիք էլով՝ կային ամենեքեան յանհոգութեն եւ ի քուն, սակայն Տեառն օգնութիւն ժամանէր նոցա և զօրացեալ քաջ որդի Մէլիք Յովսէփին Բէկ-

2073. «ԺԷԲ», էջ 206:
2074. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:
2075. «Արարատ», 1900, էջ 320:
2076. «Դիվան Հայոց Պատմութեան», հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 573:



*ԳԵՏԱՇԵՆ. ընդհանուր տեսքը Եղնասարի վանք տանող ճանապարհից*

լարն, առնոյր զսուր եւ ինքեամբ միայն յարտաքս վազէր և խորտակէր զճակատ յարձակման զօրուն, մինչև յիւրոց անտի հասանէին նմա օգնութիւն և հայրն ևս ի թիկունս ու ի բաց վարէին ի միջ գեղջն: Ապա առեալ զբովանդակ զօրն իւրեանց, առաջի արկանէին զզօրս պիղծ Շահվէրտուն և սաստիկ կոտորմամբ զմեծ մասն սպառէին»: Այնուհետև մելիքը հետապնդում է փախչող Շահվերդի խանին, մինչև իսկ կազմակերպում է նաև Գանձակի բազմօրյա պաշարումը. «...մտանէր Մէլիք Յովսէփն կոտորմամբ մինչև ի դուռն Գեանճայու և դառնայր ամենայն զօրօքն իւրովք ողջանդամ: Եւ բազում աւուրս փակեալ զամենայն ճանապարհս Քաղաքին, ոչ տայր նոցա ելմուտս առնել ու զոչինչ պիտոյս յարտաքուստ մտանել թողոյր ի Քաղաքն»[2077]: Ի վերջո, Շահվերդի խանի խնդրանքով Հերակլ թագավորը «միջնորդում է», որպեսզի մելիքը դադարեցնի քաղաքի պաշարումը:

Գետաշենցիները հայտնի են իրենց քաջությամբ և հայրենասիրությամբ: Նրանցից մեկի մասին ԺԹ դարի վերջերին ավանդաբար պատմել են. «...քաջերից մէկը եղել է Սափարանց Հանէս անունով մէկը, որ մինչև իր մահը մի ուրիշ արհեստի չի գնացել, այլ պարապել է թշնամիներ կոտորելով...»[2078]:

2077. «Դիվան Հայոց Պատմութեան», հ. Գ, էջ 773:
2078. «Նոր-Դար», 1893, N 108, էջ 3:

**Կառուցապատում.** գյուղի զարգացմանը զուգընթաց ընդարձակվել է կառուցապատված մակերեսները: Արդյունքում արդեն 1886 թ. 12 տուն էր կառուցվել նաև գետի աջ ափին[2079]:

**Գետաշենի տիրույթները.** Գետաշենն իբրև մելիքանիստ ու բազմամարդ գյուղ՝ հնուց ի վեր ուներ բավականաչափ ընդարձակ կալվածներ: Հայտնի է, որ ԺԹ դարի սկզբներին կառավարությունը գյուղի նորաբնակներին տրամադրել էր հողատարածք Գերան կոչված տեղամասում, իբրև վարելահող՝ 8228 դես. 2191 սաժ. և իբրև ծմեռոց՝ 3611 դես. 479 սաժ. «Այդ տեղի սահմաններն են՝ մէկ կողմից Գերան-չայը, միւս կողմից Օղրի-եօլին, երրորդ կողմից Բօրսունլու գիւղի հողաբաժինը և չորրորդ կողմից Գէրան-դիւզերի: Այդ ժամանակից սկսած այդ տեղը կոչվում է „Գէրան-Չելաբերդ-երի„...»[2080]: Ժամանակի ընթացքում, սակայն, գյուղը ոչ միայն նոր հողատարածքներ չի կարողացել ձեռք բերել, այլև 200 դեսյատին հողամաս գետաշենցիների կամքին հակառակ խլվել էր գյուղից և նվիրվել պետական գաղտնի խորհրդական Չելյայևին[2081], այնպես որ արդեն Ի դարի սկզբին հողի պակասը գետաշենցիների համար խիստ զգալի էր:

2079. «Արձագանք», 1886, N 19, էջ 280: Տես նաև՝ **Սարգսյան Մ.**, Գետաշեն, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1988, N 2, էջ 13-20:
2080. «Մշակ», 1913, N 72, էջ 3:
2081. Նույն տեղում:



***ԳԵՏԱՇԵՆ. ընդհանուր տեսարաններ գյուղից***

Ի դեպ, ինչպես 1905 թ. մոլեգնած հայ-թուրքական ընդհարումների, այնպես էլ 1918-1920 թթ. քաղաքական անկայուն ժամանակներում գյուղին պատկանող հեռավոր կալվածները մնում են բարձիթողի վիճակում, քանի որ բնակիչները չէին համարձակվում թուրքերի մերձավորությամբ հողագործությամբ զբաղվել. «Գեօրան կայարանի մօտ Գետաշէնը ունի 2100 դեսեատին վարելահող...: Այդ հողերն այժմ ընդհարումների պատճառով հնարավորութիւն չը կայ մշակելու»[2082]:

Բուն գյուղից դուրս՝ նրա շրջակայքում, միմյանցից փոքր հեռավորությունների վրա, դեռևս ԺԹ դարում գյուղին պատկանող գոմերի շուրջ գոյացել էին փոքրիկ բնակավայրեր (գյուղակներ): Դրանցից էին Մուրթունիս (Մըրցունիս) կոչվածը՝ Գետաշենից 1,5 կմ արևմուտք, Չիլքինը, որը գտնվում էր Գետաշենից 6 կմ հյուսիս-արևելք՝ Կուրակ գետի ձախ կողմում, Ճրագիձորը (Չրաղիձոր)՝ Գետաշենից 2,5 կմ հարավ-արևմուտք և Գյորանը (Գետաշենից հս-արլ.): Սրանցից մի քանիսը միջնադարում եղել են շեն գյուղեր, բայց հետագայում ամայացել են և, ի վերջո, ԺԹ դարում կրկին բնակեցվել գետաշենցի հայերով: Այս բոլոր «արբանյակ գյուղերի» բնակչությանը անցկացված մարդահամարների ժամանակ հաշվել են Գետաշեն գյուղի բնակչության հետ:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** բազմամարդության և պաշտպանվելու տեսակետից համեմատաբար հարմար դիրքի շնորհիվ Գետաշենն ինչպես 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների, այնպես էլ 1918-20 թթ. օսմանյան և մուսավաթական զորքերի համատեղ գործողությունների ժամանակ, ի տարբերություն շրջակա ու հեռավոր հայկական շատ գյուղերի, զերծ է մնացել հարձակումներից: Հայրենի գյուղը պաշտպանելու դուրս ելած զինված գետաշենցիները լուրջ ընդհարում չեն ունեցել թուրքերի հետ, քանի որ վերջիններս, տեղյակ գետաշենցիների կռվելու համբավին, չեն համարձակվել հարձակվել գյուղի վրա: Բայց գետաշենցիները շատ զոհեր են տվել գյուղի սահմաններից դուրս: Այսպես, 1905 թ. սեպտեմբերի 13-ին Գյորանից (հնձատեղիից) Գետաշեն վերադարձող 5 հայերի թուրքերը մորթել են, իսկ կորեկի հնձած բերքը թալանել տարել[2083]:

2082. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 333:

2083. «Արշալույս», 1905, N 17, էջ 1:



***ԳԵՏԱՇԵՆ. տեսարաններ գյուղի կենտրոնական թաղամասերից***

Ի պատասխան նաև մերձակա գյուղերի նկատմամբ թուրքերի կատարած բազում և անլուր հանցագործությունների՝ 1905 թ. տարեվերջին Գետաշենի մարտական ջոկատն իրականացրել է թուրք ավազակաորջերի ոչնչացման ծրագիրը. «Դեկտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 6.30-ին Չայլիլարը պաշարուեց երեք կողմից մի ծանր օղակով: Այդտեղ համախմբուած բաւականաչափ ուժերը անկարող եղան երեք կողմից թափուող կրակին դէմ դնել, մի քանի ժամւայ յամառ դիմադրութիւնից յետոյ, դաշտի կողմից թուրքերը փախան, որից յետոյ հայերը խուժեցին գիւղ և սկսուեց կողոպուտը, աւերն ու հրդեհը: Սակայն հայերը գիւղի հետ դեռ ևս գործը չէին վերջացրել, երբ տափարակի կողմից եկաւ մի մեծ խուժան. կռիւը նորոգուեց մի նոր ուժով, մի նոր թափով, որը տևեց ժամեր: Վերջապէս թուրքերը յետ մղուեցին, բայց ծանր կռւից յետոյ այստեղ հայերից ընկան Խաչենի ըմբոստ բնութեան ըմբոստ զաւակը՝ Բախշին, Իվան Բալասանեանը և ղարաբուլաղցի Ղուկաս Պետրոսեանը և բացի այդ, վիրաւորուեցին 6 հոգի, իսկ թուրքերից սպանուեցին աւելի քան 20 հոգի»[2084]: Այնուհետև գետաշենցիները պատժում են մերձակա ավազակաբարո թրքաբնակ մյուս գյուղերին ևս. «Չայլիլարից յետոյ յարձակման ենթարկուեցին և աւերուեցին այդ նոյն հայերի ձեռքով Դարդարան, Սարըսուն, Դօզիլարը, աւերուեցին նաև Աբաս-դարան և Փանահլարը: Վերջին երկու գիւղերից ժողովուրդը քոչել էր դեռևս յարձակումից յառաջ»[2085]:

Ասվեց, որ Գետաշենը հիմնականում զերծ է մնացել ողջ Կովկասում մոլեգնած հայ-թուրքական ընդ-

2084. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 334:

2085. Նույն տեղում:



*ԳԵՏԱՇԵՆ. տեսարաններ գյուղի կենտրոնական թաղամասերից. վերջին նկարում՝ «Ծատուրանց» տները*

հարումների արհավիրքներից: Եվ ցարական իշխանությունները, որոնք իրենց հաշվարկներով բոլորովին այլ արդյունք էին ակնկալում, տեսնելով, որ թուրքերից բան դուրս չեկավ, 1906 թ. մարտի 24-ին պատռելով իրենց «փրկիչ խաղաղարարի» դիմակը՝ իրենք են անցնում հարձակման: Ռուսները գետաշենցիներից նախ պահանջում են հանձնել զենքերը, ապա «չգոհանալով» հանձնված զենքերի քանակով, թնդանոթային 20 համազարկ են ուղղում գյուղի վրա. «...քանդում են մի քանի հոյակապ տներ...»[2086]:

Կատարվածը ժամանակի մամուլում ստացել է հետևյալ արձագանք-հարցադրումը. «...ի՞նչ յանցանք ունի գործած Գետաշենը, այն, որ հարևան թուրքերին թոյլ չէ տուել դիպչել իրան, որ նա, Գետաշէնը, քոչի ճանապարհի վրա է գտնվում, հետևաբար, եթէ զինված լինի, թուրքերի քէֆին դիպչել կարող է...»[2087]:

**Գետաշենը 1918 թ.** ինչպես հայտնի է, 1918 թ. Գետաշենը հանձնվել էր «...թուրքական իշխանություններին: Այդ գյուղի բնակիչները դժգոհ էին թուրքական իշխանությունից, քանի որ այդ գյուղում թուրքական ուժերի հաստատվելը վերջնականապես նրանց սնանկացրեց. օրական նրանցից խլում էին երկու ցուլ, հաց, ինչքան ցանկանային, չէին խնայում անգամ անասնակերը, որը ներկա ժամանակում գյուղացու համար չափազանց թանկ էր գնահատվում և համարվում էր առաջին անհրաժեշտություն»[2088]:

2086. «Մշակ», 1906, N 68, 29 մարտի:

2087. Նույն տեղում:

2088. «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.», էջ 130 (բնագրում՝ "...турецким властям. Жители этого села были недовольны ту-





*ԳԵՏԱՇԵՆ. բնակելի տներ (ԺԹ դար)*





*ԳԵՏԱՇԵՆ. Խաչատուր Գաբրիելյանի տունը*

**Բնակչություն.** որևէ սկզբնաղբյուրով չի հաստատվում Գետաշենի հիմնադրման մասին «Նոր-Դար»-ի թղթակցի հետևյալ պնդումը. «Այս գիւղը հիմնուել է 1748 թուականին: Սկզբում գյուղն ունեցել է 25 տուն, ապա 1802 թուին Ջրաբերդի մելիքութիւնից գաղթել են այստեղ 30 ընտանիք: Վերջիններս խառնուելով բնիկ ժողովրդի հետ՝ շենացրել են Գետաշէն գիւղը...»[2089]:

ԺԹ դարասկզբին հարևան Ջրաբերդ գավառից Գետաշենում հաստատված հայերի ինչպես թվաքանակի, այնպես էլ վերաբնակվելու տարեթվի վերաբերյալ առկա տեղեկությունները միանշանակ չեն:

Մասնավորապես, վերաբնակման տարեթիվ է նշվում մեկ 1802 թ.[2090], ավելի հաճախ՝ 1804 թ.[2091] և կամ 1805-1806 թթ.[2092]:

Ինչ վերաբերում է այստեղ հաստատված ջրաբերդցի ընտանիքների թվին, ապա աղբյուրները վկայակոչում են մի դեպքում 30[2093], ապա 80[2094], նույնիսկ՝ 300 տուն[2095]: Ի դեպ, Գետաշենի գերեզմանատան տապանագրերից հայտնի են դառնում,

рецкой властью, потому что во время пребывания турецких сил в этом селе окончательно они их разорили: брали от них в день по два быка, хлеба, сколько хотели, не щадили даже корм, который в настоящее время ценится очень дорого для крестьянина и является первой необходимостью").

2089. «Նոր-Դար», 1893, N 108, էջ 3:

2090. Նույն տեղում:

2091. «Արձագանք», 1886, N 19, էջ 280: Նաև՝ «Մշակ», 1890, N 76, էջ 2:

2092. «Մշակ», 1913, N 72, էջ 3:

2093. «Նոր-Դար», 1893, N 108, էջ 3:

2094. «Արձագանք», 1886, N 19, էջ 280: Նաև՝ «Մշակ», 1913, N 72, էջ 3:

2095. «Մշակ», 1890, N 76, էջ 2:



***ԳԵՏԱՇԵՆ. բնակելի շենքեր. վերջին նկարում՝ «Միքայել հարյուրապետի» տունը***

թե ջրաբերդցի վերաբնակիչները հիշյալ գավառի հատկապես ո՞ր բնակավայրերից էին փոխադրվել: Դրանք էին՝ Մեծշեն, Ականա, Մաղավուզ, Խոտորաշեն և այլն:

Բնիկ ու ջրաբերդցի հայերի քանակական հարաբերության մասին, օրինակ, 1886 թ. նշվել է, թե 300 տնից եկվորներ էին 80-ը[2096]:

Արխիվային վավերագրերից մեկում պահպանվել է 1839 թ. Գետաշենի 145 տուն բնակիչների անվանական ցուցակը: Ահա այն.

«1. Պօղոս Տէր Օհանեան, ուստերք՝ Շիրին, կինն՝ Ռէհան, Պետրոս. կինն՝ Նազլ:

2. Ներսէս Տէր Իսրայէլեան, կինն՝ Ռէհան, ուստերք՝ Եփրեմ և Պօղոս:

3. Մօսէս Տէր Սահակեան, կինն՝ Ռէհան, ուստր՝ Սահակ, կինն՝ Ջաւահիր:

4. Սայի Զաքարեան, կինն՝ Աննա, ուստր՝ Ղահրաման:

5. Վէրդի Զաքարեան, կինն՝ Աննա:

6. Գրիգոր Յակոբեան, կինն՝ Աննա:

7. Ղահրաման Մէլքումեան, կինն՝ Ազիզ, ուստր՝ Արզուման:

8. Սանդրի Մէլքումեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Ներսէս, Արզուման և Յակոբ:

9. Եսայի Մէլքումեան, կինն՝ Հէրիքնազ, ուստերք՝ Դանիէլ, կինն՝ Անթառամ, Գաբրիէլ. կինն՝ Ջավահիր:

10. Պօղոս Յարութիւնեան, կինն՝ Սօնայ, դուստր՝ Մարգարիտ:

11. Պապի Պէկով, կինն՝ Շալի, ուստր՝ Յովհաննէս, եղբայրն՝ Հայրում, կինն՝ Աննայ:

12. Մայիլ Գրիգորեան, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Յարութիւն:

13. Միրզայ Պայթալեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Յարութիւն և Ներսէս:

14. Աւագ Ղազարեան, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ Գրիգոր, Ղազար, դուստր՝ Մինայ:

15. Սարգիս Աղաջանեան, կինն՝ Աննայ, դուստր՝ Մարիամ, եղբայրն՝ Ստափան, կինն՝ Ռէհան:

16. Աւագ Օհանիսեան, կինն՝ Հոռոմսիմ, ուստր Դանիէլ, կինն՝ Ջաւի:

---

2096. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:



***ԳԵՏԱՇԷՆ. Մելիք-Մնացականյանի տունը***

17. Ասրիէլ Յակոբեան, կինն՝ Եթար, ուստր՝ Սողոմոն, դուստր՝ Մարիամ:

18. Պետրոս Սնեան, կինն՝ Աննայ, ուստերք՝ Սարգիս և Համբարձում:

19. Բէկի Յարութիւնեան, կինն՝ Սիրուննան, ուստր՝ Յակոբ, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Բէկզատայ, դուստր՝ Մարիամ, միւս եղբայրն՝ Եսայի, կինն՝ Աննայ:

20. Պօղոս Սարգսեան, կինն՝ Խաթայի, դուստր՝ Ռէհան:

21. Գրիգոր Պապասեան, կինն՝ Եղիսաբէթ, դուստր՝ Հէրիք:

22. Յովհաննէս Յովսէփեան, կինն՝ Սնգիւլ, ուստր՝ Աւետիս:

23. Վէրդի Միսայէլեան, կինն՝ Սնգիւլ, ուստր՝ Առուշան, դուստր՝ Եասաման:

24. Բաբաջան Աթայեան, կինն՝ Սիրուննան, ուստերք՝ Յակոբ, Միսայէլ. հարսն՝ Խաթուն:

25. Սարուխան Պօղոսեան, կինն՝ Անախանում:

26. Պետրոս Մխիթարեան, կին սորա՝ Անթառամ, ուստր՝ Առուստամ, կին սորա՝ Մարիամ, ուստերք՝ Ներսէս, Կարապետ և Յովհաննէս:

27. Իսրայէլ Միսայէլեան, կին սորա՝ Եթար, ուստերք՝ Բէգլար և Գրիգոր, եղբայրն՝ Պետրոս, կինն՝ Բեազզադայ, ուստր՝ Յարութիւն:

28. Պետրոս Յակոբեան, կինն՝ Վարթի, ուստերք՝ Նէրսէս, Աղաբէկ, Օհանէս, Միսայէլ, Յակոբ:

29. Պետրոս Սիմօնեան, կինն՝ Մարիամ, դուստր՝ Ջաւահիր, ուստր՝ Սիմէօն:

30. Սիմէօն Յակոբեան, կին սորա՝ Վարդի:

31. Սողոման Բաղդասարեան, կինն՝ Ջավահիր, ուստր՝ Սարգիս, դուստր՝ Եղրսաբէթ:

32. Անթառամն՝ այրի, ուստերք՝ Բէգլար և Աբրահամ, դուստր՝ Գօզալ:

33. Մարտիրոս Բալասեան, կինն՝ Աննա, դստերք՝ Անախանում և Հէրիք:

34. Արզուման Գրիգորեան, կինն՝ Խաթայի, ուստերք՝ Կարապետ և Սարգիս:

35. Առուստամ Ապրէսեան, կինն՝ Թառի, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Անայի, ուստերք՝ Սարգիս, Գրիգոր և Դանիէլ:

36. Դանիէլ Յակոբեան, կինն՝ Ջաւի, ուստր՝ Գրիգոր, կինն՝ Պաջի, ուստերք՝ Ներսէս, Խաչատուր, Բէգլար, եղբայրն՝ Առուստամ, կինն՝ Թագուհի:

37. Գօզի Ղազարեան, կինն՝ Ջաւի, ուստերք՝ Խոսրով և Գրիգոր:

38. Յովհաննէս Գալուստով, կինն՝ Ջաւի, ուստերք՝ Դանիէլ և Սարգիս:



***ԳԵՏԱՇԵՆ. Դուլունց (Դուլյան) Գրիգորի տունը***

39. Սարգիս Յակոբեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Աւագ և Առուստամ:

40. Յովհաննէս Սարգսեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յակոբ, կինն՝ Հերիք:

41. Գաբրիէլ Յովհաննիսեան, կինն՝ Խաթայի, ուստերք՝ Յօհան, Եղիազար և Առուշան:

42. Դանիէլ Վարդանեան, կինն՝ Ազնան, ուստերք՝ Սարգիս և Մինաս, հարսն՝ Նազլը:

43. Գրիգոր Սարգսեան, կինն՝ Հոռոմսիմ, դստերք՝ Ռէհան և Աննա:

44. Գրիգոր Գալստեան, կինն՝ Աննայ, ուստր՝ Ղազար:

45. Սալահ Սաղղեան, կինն՝ Մարգարիտ, դուստր՝ Մարիան, եղբայրն՝ Պետրու, կինն՝ Խանում:

46. Ուսուփ Սարգսեան, կինն՝ Ռէհան, ուստր՝ Սարգիս:

47. Ջաւի՝ այրի, ուստերք՝ Յօհաննէս և Գրիգոր:

48. Պետրոս Մատիքեան, կինն՝ Յուստիանէ, ուստր՝ Ալլահվէրդի:

49. Շախի՝ այրի, ուստերք՝ Յօհաննէս և Պօղոս:

50. Նազի՝ այրի, ուստերք՝ Աբրահամ, Ստեփան և Յակոբ:

51. Աբրահամ Յակոբեան, կինն՝ Հոռի, դուստր՝ Ռէհան:

52. Պետրոս Յակոբեան, կինն՝ Բազզատայ, դուստր՝ Խանում:

53. Յոհաննէս Գասպարեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Ռէհան:

54. Խաթուն՝ այրի, ուստերք՝ Մուրատ, Յովհաննէս, դուստր՝ Սոնայ:

55. Յովսէփ Ապրէսեան, կինն՝ Ջաւահիր:

56. Սարգիս Դանիէլեան, կինն՝ Նազլու, եղբայրն՝ Ղազար, կինն՝ Հէրիք, ուստր՝ Միսայէլ:

57. Բաղդասար Ղուկասեան, կինն՝ Ազիզ, ուստր՝ Յովհաննէս, եղբայրն՝ Եդգար:

58. Վէրդի Սևանեան, կինն՝ Ջաւահիր, ուստր՝ Արզման, կինն՝ Նազլու:

59. Հուռի՝ այրի, ուստերք՝ Սիմէօն, Բէգլար, դուստր՝ Գուրջհան:

60. Յարութիւն Դենիէլեան, կին սորա՝ Անայի:

61. Յօհան Դանիէլեան, կինն՝ Ջատայ, ուստերք՝ Աւան, Սարգիս, հարսն՝ Նակար, դստերք՝ Մալաք, Նազլու:

62. Այրում Պապեան, կինն՝ Մալաք, ուստերք՝ Ջաւատ և Խէչատուր, եղբարք՝ Աւագ, Սիմէօն, Պետրոս, Մարտիրոս, հարսունք՝ Սօնայ և Աննայ:

63. Այրում Աղամեան, կին սորա՝ Մարգարիտ, եղբայրն՝ Գրիգոր:



***ԳԵՏԱՇԵՆ. Մեսրոպ քահանա Տէր-Գրիգորյանցի տունը (1889 թ.)***

64. Յովակիմ Աղամեան, կինն՝ Պէկի, դուստր՝ Շամամ։

65. Պետրոս Պօղոսեան, կինն՝ Հոռի, դուստր՝ Նախշուն, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Սիրուննան, ուստր՝ Սիմէօն։

66. Գրիգոր Տէր Յակոբեան, կինն՝ Գիւլի, ուստր՝ Պետրոս, կինն՝ Ջատայ։

67. Պետրոս Աւագեան, կինն՝ Սիրուն, դուստր՝ Ռէհան։

68. Իսրայէլ Գալստեան, կին սորա՝ Աննայ, եղբայր սորա՝ Յարութիւն, ուստերք՝ Գէորգ, Ղազար։

69. Աբրահամ Տէր Յովհաննիսեան, կինն՝ Ռէհան, ուստերք՝ Իսրայէլ, Յովհաննէս։

70. Աւագ Օհաննիսեան, կին սորա՝ Մարիամ, ուստերք՝ Յովհաննէս և Սարգիս։

71. Յովհաննէս Վանեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Վարդան, դուստր՝ Անթառամ։

72. Սարգիս Դանիէլեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Ջաւատ և Դանիէլ։

73. Պետրոս Մարկոսեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Առուստամ և Աղաջան։

74. Աքայ Յակոբեան, կինն՝ Աննայ, ուստր՝ Աղաջան, դուստր՝ Խանում։

75. Պետրոս Իսրաէլեան, կին սորա՝ Նազլուխան, եղբարք՝ Յարութիւն և Ավետիս։

76. Սողոմոն Քօլայեան, կինն՝ Թագուհի, ուստերք՝ Միսայէլ և Գրիգոր, եղբայրն՝ Յովհաննէս, կինն՝ Խաթայի։

77. Բատալ Ատուստամեան, կինն՝ Նազլուխան, եղբարք՝ Պայի և Յովհաննէս։

78. Խաչատուր Դանիէլեան, կին սորա՝ Եղիսաբէդ, դուստր՝ Աննայ։

79. Յակոբ Մէյրանեան, կինն՝ Հոռի։

80. Պետրոս Իսրայէլեան, կինն՝ Նազլու, ուստր՝ Մէյրան։

81. Մխիթար Բաղդասարեան, կինն՝ Վառի։

82. Մովսէս Մէյրանեան՝ այրի, եղբայրն՝ Աւէտիս, կինն՝ Եղիսաբէթ։

83. Յակոբ Միրզայեան՝ այրի, ուստերք՝ Պետրոս և Օհան։

84. Գաբրիէլ Աւթանդիլեան, կին սորա՝ Հուռի, ուստերք՝ Առուշան, կինն՝ Հէրիք, Մակի։

85. Առուստամ Պապայեան, կինն՝ Խաթայի, ուստր՝ Ղահրաման։

86. Առուստամ Ալլահվէրդեան, կինն՝ Մագթաղ, ուստր՝ Սարգիս։

87. Թօմաս Յակոբեան, կին սորա՝ Խաթայի։

88. Յարութիւն Պետրոսեան, կին սորա՝ Խաթուն։



***ԳԵՏԱՇԵՆ. Մեսրոպ քահանա Տէր-Գրիգորյանցի տունը (1889 թ.)***

89. Միքայէլ Սարգսեան, կին սորա՝ Զաւահիր:
90. Զօհրապ Դանիէլեան, կին սորա՝ Վառի, ուստերք՝ Գրիգոր և Աւէտիք:
91. Սարգիս Դանիէլեան, կինն՝ Հէրիք:
92. Ղայբալի Խաչատուրեան, կինն՝ Մարիամ, եղբարք՝ Սարգիս եւ Պետրոս:
93. Սարգիս Պետրոսեան, կին սորա՝ Շահզատ, ուստերք՝ Յարութիւն, Վարդան և Անթանէս:
94. Բաղալ Առուշանեան, կին սորա՝ Հէրիքնազ:
95. Մարտիրոս Խաչատուրեան, կինն՝ Ջավահիր:
96. Աւագ Յակոբեան, կինն՝ Մէհրի, ուստերք՝ Յովհաննէս և Յակոբ:
97. Յովհաննէս Պօղոսեան, կինն՝ Գիւլի, ուստր՝ Ալլահվէրդի, դուստր՝ Բէկզադայ:
98. Յովհաննէս Պօղոսեան, կինն՝ Մագթաղ, ուստր՝ Յովհաննէս, մայրն՝ Գիւլի:
99. Առուստամ Պօղոսեան, կինն՝ Սիրուննան, եղբայրն՝ Այրում, կինն՝ Սիար, ուստր՝ Առուշան, մայրն՝ Անթառամ:
100. Մնացական Պէտրոսեան, կինն՝ Աննայ, եղբայրն՝ Խաչատուր, կինն՝ Շահզադայ, ուստր՝ Գրիգոր, մայրն՝ Աննայ:
101. Քօչարի Պօղոսեան, կինն՝ Սուլթան, դուստր՝ Հէրիք, մայրն՝ Հռիփսիմ:
102. Աբրահամ Պօղոսեան, կինն՝ Աննայ, դուստր՝ Հէրիք, մայրն՝ Հոռի:
103. Աստվածատուր Կարապետեան, կինն՝ Հէրիք, ուստր՝ Յարութիւն:
104. Աւագ Մկրտումեան, կինն՝ Սիրուննան, մայրն՝ Մարգարիտ:
105. Գրիգոր Սահակեան, կինն՝ Հոռոմսիմ:
106. Մուսայէլ Յարութիւնեան, կինն՝ Մարիամ, դստերք՝ Ջավահիր և Շահխանում:
107. Պետրոս Յովհաննիսեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ 1. Սարգիս, կինն՝ Նախշուն, 2. Կարապետ:
108. Դանիէլ Նազարեան, կինն՝ Հէրիքնազ, ուստերք՝ 1. Մարտիրոս, կինն՝ Նազգիւլ, ուստր՝ Գէորգ, դուստր՝ Մարուն, 2. Կարապետ, կինն՝ Նազլուխան, 3. Խաչատուր:
109. Խաչատուր Յակոբեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ Սահակ և Պետրոս:
110. Պողոս Տէր Յակոբեան, կինն՝ Հէրիք, դստերք՝ Խանում, Եթար, Շազլու:









***ԳԵՏԱՇԵՆ. բնակելի տուն (ԺԹ դարի վերջ)***

111. Յարութիւն Ապրէսեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Գաբրիէլ, Պապայ և Եղի:

112. Իսրայէլ Յովհաննիսեան, կինն՝ Եթար, ուստր՝ Միսայէլ, մայրն՝ Նազլու:

113. Յովհաննէս Միրզայեան, կինն՝ Խաթուն, եղբայրն՝ Աբրահամ, կինն՝ Եթար, ուստերք՝ Սարգիս, Միսայէլ, Առուստամ, դուստր՝ Խաթայի:

114. Յովհաննէս Տէր Պետրոսեան, կինն՝ Աննայ, ուստր՝ Յարութիւն, կինն՝ Սիրուննան:

115. Մօսի Սարգսեան, կինն՝ Ջավահիր, ուստերք՝ Գաբրիէլ և Քօչարի:

116. Յոհաննէս Պօղոսեան, կինն՝ Թուխի, ուստերք՝ Ջավատ և Սահակ:

117. Մովսէս Գրիգորեան, կինն՝ Գիւլջիան, ուստերք՝ Միրզայ և Առուստամ:

118. Յովակիմ Յակոբեան, կինն՝ Մարիամ, եղբայրն՝ Գէորգ, կինն՝ Խաթուն, ուստր՝ Խաչատուր, դուստր՝ Հէրիք:

119. Գաբրիէլ Մխիթարեան, կինն՝ Հէրիք, ուստերք՝ 1. Սարգիս, կինն՝ Մարիամ, 2. Յակոբ և Համբարձում:

120. Մարտիրոս Պետրոսեան, կին սորա՝ Աննայ, ուստերք՝ Յարութիւն և Յոհաննէս:

121. Ալլայվէրդի Յարութիւնեան, կինն՝ Գիւրջիան, դստերք՝ Հէրիք և Նազլու:

122. Մարտիրոս Յարութիւնեան, կինն՝ Սիրուն, ուստերք՝ Աւագ և Եփրեմ:

123. Պետրոս Պապայեան, կինն՝ Ջաւահիր, ուստր՝ Սահակ, կինն՝ Փարի:

124. Յովհաննէս Ադամեան, կին սորա՝ Ջանի, ուստր՝ Պետրոս, կինն՝ Հոռոմսիմ:

125. Յակոբ Պետրոսեան, կինն՝ Սհար, ուստր՝ Սարգիս, կինն՝ Հէրիքնազ, դուստր՝ Սիրուննան:

126. Պետրոս Առուշանեան՝ այրի, եղբայրն՝ Պետրոս, կին՝ Սառայ:

127. Գաբրիէլ Յակոբեան՝ այրի, ուստր՝ Միրզայ, կինն՝ Մագթաղ:

128. Մկրտում Սողոմոնեան, կինն՝ Ջաւահիր, ուստերք՝ 1. Ղուլի, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Մուսայէլ, Իսրայէլ, դստերք՝ Խաթայի և Հոռոմ, 2. Գիւրջի:

129. Մուսայէլ Յարութիւնեան, կինն՝ Բէգզադայ, ուստերք՝ Բէգլար, Պետրոս, Աւագ:

130. Շախի կին՝ այրի, ուստերք՝ Եղիազար, Սարգիս, դուստր՝ Սհարնազ:





***ԳԵՏԱՇԵՆ. բնակելի տներ (Ի դարի սկիզբ)***

131. Գայիանէ Գրիգորեան՝ այրի, ուստր՝ Առուստամ, դստերք՝ Թազագիւլ, Հէրիք:

132. Գրիգոր Եսայեան, կինն՝ Մարիամ, դուստր՝ Սիրուն, եղբայրն՝ Օհան, կինն՝ Հէրիք, ուստր՝ Անդրէաս:

133. Հռիփսիմէ Գէորգեան՝ այրի, ուստերք՝ Յարութիւն և Պապայ, կին՝ Սիրուննան:

134. Ռէհան, կին՝ այրի, դստերք՝ Վարդի և Շահխանում:

135. Գաբրիէլ Յարութիւնեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Սահակ, դուստր՝ Շահխանում:

136. Սայի Աբրահամեան, կինն՝ Աղախան, ուստր՝ Յովհաննէս:

137. Յակոբ Բալասեան, կինն՝ Հիւրի, ուստերք՝ Զաքարիայ և Իսրայէլ:

138. Մկրտում Յովհանեան, կինն՝ Թէլլու, ուստր՝ Միրզայ, դուստր՝ Ջաւահիր:

139. Մնացական Ղուկասեան, կինն՝ Խանում, դուստր՝ Թագուհի:

140. Պետրոս Այրեսեան, կինն՝ Սօնայ:

141. Գաբրիէլ Յովհաննիսեան, կինն՝ Աննա, եղբայրն՝ Իսրայէլ, կինն՝ Վարդի:

142. Օհանջան Ստեփանեան, կինն՝ Հէրիք, դուստր՝ Թագուհի:

143. Սարգիս Յակոբեան, կինն՝ Ռէհան, դստերք՝ Հէրիք և Սիարնազ:

144. Խաչատուր Պետրոսեան, կինն՝ Թէլլու:

145. Յովակիմ Յակոբեան, կինն՝ Նազլու, ուստերք՝ Օհան և Խաչատուր»[2097]:

Գետաշենն Արցախի ամենամարդաշատ գյուղերից էր: Մասնավորապես, ԺԹ–Ի դարերին վերաբերող մարդահամարի տվյալներ պարունակող բազմաթիվ վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության թվաքանակով Գետաշենը զիջում էր միայն Փիբ (Ջագլիկ) գյուղին: Վիճակագրական տվյալների համադրումը, ըստ ժամանակագրության, ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1839[2098] | 145 | 342 | 261 | 603 |
| 1845[2099] | | 592 | 552 | 1144 |
| 1847[2100] | | 479 | 404 | 883 |
| 1849[2101] | | 566 | 481 | 997 |
| 1850[2102] | 150 | 568 | 562 | 1130 |
| 1852[2103] | | 594 | 575 | 1169 |
| 1853[2104] | | 614 | 584 | 1198 |
| 1854[2105] | | 608 | 582 | 1190 |
| 1857[2106] | | 615 | 601 | 1216 |
| 1858[2107] | | 621 | 611 | 1232 |
| 1860[2108] | | 627 | 615 | 1242 |
| 1861[2109] | 146 | | | |
| 1862[2110] | 162 | | | |
| 1863[2111] | | 665 | 634 | 1299 |
| 1864[2112] | | 670 | 652 | 1322 |
| 1865[2113] | | 675 | 650 | 1325 |
| 1866[2114] | 183 | 763 | 532 | 1295 |
| 1872[2115] | | 938 | 832 | 1770 |
| 1873[2116] | 240 | | | 1621 |
| 1874[2117] | | | | 1934 |
| 1875[2118] | | | | 1700 |
| 1876[2119] | | | | 1709 |

---

2097. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 30-31:
2098. Նույն տեղում:
2099. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5: Մեկ այլ վավերագրի համաձայն (նույն տեղում, գ. 3809, թ. 31)՝ Գետաշենն ունեցել է 100 տուն՝ 1012 շունչ (510 ար., 502 իգ.):
2100. Նույն տեղում, գ. 3814, թ. 95-96:
2101. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
2102. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 109:
2103. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 105-106:
2104. Նույն տեղում, գ. 2743, թ. 16-17:
2105. Նույն տեղում, գ. 3825, թ. 68-69:
2106. Նույն տեղում, գ. 3830, թ. 74-75:
2107. Նույն տեղում, գ. 3831, թ. 41-42:
2108. Նույն տեղում, գ. 3833, թ. 108-109:
2109. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2110. «Մշակ», 1913, N 72, էջ 3:
2111. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 15-16:
2112. Նույն տեղում, գ. 3846, թ. 23-24:
2113. Նույն տեղում, գ. 3862, թ. 58-59:
2114. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2115. ՀԱԱ, ֆ. 53, գ. 3872, թ. 62-63:
2116. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40: Նաև՝ «Մշակ», 1913, N 72, էջ 3:
2117. "Кавказский календарь на 1886 г.", с. 125.
2118. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 44-45:
2119. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1877[2120] | | 930 | 810 | 1740 |
| 1878[2121] | | 922 | 804 | 1726 |
| 1881[2122] | | 961 | 846 | 1807 |
| 1882[2123] | | 970 | 858 | 1828 |
| 1883[2124] | | 972 | 848 | 1820 |
| 1885[2125] | | 793 | 662 | 1455 |
| 1886[2126] | 300 | | | |
| 1887[2127] | | 779 | 677 | 1456 |
| 1888[2128] | | 831 | 721 | 1552 |
| 1889[2129] | | 864 | 736 | 1600 |
| 1890[2130] | | 887 | 767 | 1654 |
| 1891[2131] | 434 | 920 | 782 | 1702 |
| 1892[2132] | 460 | 926 | 774 | 1700 |
| 1893[2133] | | 953 | 781 | 1734 |
| 1894[2134] | մոտ 500 | 985 | 794 | 1779 |
| 1897[2135] | 450 | 1037 | 827 | 1864 |
| 1898[2136] | | 1087 | 850 | 1937 |
| 1899[2137] | | 1092 | 861 | 1953 |
| 1900[2138] | | 1136 | 861 | 1997 |
| 1901[2139] | | 1172 | 949 | 2121 |
| 1902[2140] | | 1164 | 931 | 2095 |
| 1905[2141] | | 1174 | 950 | 2124 |
| 1906[2142] | | 1840 | 1511 | 3351 |
| 1907[2143] | | | | 3464 |
| 1908[2144] | 550 | 1903 | 1589 | 3492 |
| 1909[2145] | | 1278 | 1112 | 2390 |
| 1910[2146] | | 2000 | 1675 | 3675 |
| 1911[2147] | 650 | | | 3551 |
| 1912[2148] | | 1305 | 1143 | 2448 |
| 1914[2149] | | | | 5080 |
| 1917[2150] | 700 | | | 5361 |
| 1986[2151] | | | | 3568 |

2120. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2121. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2122. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2123. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2124. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2125. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
2126. «Արձագանք», 1886, N 19, էջ 280: Ի դեպ, ըստ վիճակագրական մեկ այլ տվյալի՝ գյուղն ունեցել է 446 տուն, 2558 բնակիչ ("Свод ...", с. 86-87):
2127. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
2128. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
2129. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2130. Նույն տեղում, գ. 3887, թ. 1489:
2131. Նույն տեղում, գ. 3889, թ. 148: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 259:
2132. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 120: Նաև՝ «Նոր-Դար», 1892, N 140, էջ 3:
2133. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 77-78:
2134. Նույն տեղում, գ. 3896, թ. 173: Տե՛ս նաև «Մուրճ» 1894, N 7-8, էջ 1154:
2135. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3342, թ. 3: Նաև՝ գ. 3899, թ. 146-147:
2136. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2137. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
2138. Նույն տեղում, գ. 3905, թ. 90-91:
2139. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
2140. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
2141. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 265-266:
2142. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2143. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2144. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 8: Մեկ այլ աղբյուր ցույց է տալիս 3138 շունչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 409):
2145. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2146. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
2147. «Մշակ», 1913, N 72, էջ 3:
2148. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, թ. 61-62:

Աղյուսակից երևում է, որ զուտ հայաբնակ Գետաշենն գյուղի բնակչությունը մինչև Ի դարի 10-ական թվականները, շարունակաբար աճելով հանդերձ, ունեցել է նաև անկումային որոշ տարիներ: Դրանք կապված են եղել փոքրածավալ արտագաղթերի, հիվանդությունների (մանավանդ մանուկների շրջանում) և խառնակ իրավիճակների հետ: Այստեղ կատարենք մի վերապահություն. վերջին դեպքում, ի տարբերություն շրջակա հայաբնակ շատ գյուղերի, Գետաշենի բնակչությունը պակասելու փոխարեն աճել է, քանի որ այլ վայրերում այստեղ էին փոխադրվում բազմաթիվ հայեր, որպես մի ամուր, հուսալի և ապահով բնակավայր: Այդպես է եղել, օրինակ, 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (տե՛ս աղյուսակը):

Հազարամյակներ գոյատևած Գետաշենում պատմության մեջ առաջին անգամ մարեց հայ կյանքը, երբ «Վերջին հայ բնակիչը գյուղը լքեց 1991 թ. մայիսի 7-ին»[2152]:

**Ազգատոհմեր.** մեծահասակ գետաշենցիներն ավանդաբար պատմում են, որ Մելիք-Մնացականյանների տոհմը, որը բնակվում էր գյուղի կենտրոնական մասում, սերում էր Գյուլիստանից: Չիլինգարյանները եկել էին Բեգում-Սարովից, Իսրայելյանները՝ Ջրաբերդից, Գյուրջյանները, որոնք բնակվում էին գյուղի հին թաղում՝ գերեզմանոցի հարևանությամբ, ծագում էին Անիից. նախ փոխադրվել էին Գողթնի Ցղնա, Վերին և Ներքին Ազա գյուղերը, ապա Ջրաբերդի Մոխրաթաղ և, ի վերջո, հաստատվել Գետաշենում և այլն:

1905-1906 թթ. Գետաշենում հայտնի էր զինագործների Պոավանց (Պառավյաններ) ընտանիքը:

**Տնտեսություն, արհեստներ.** բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ ու այգեգործությամբ:

Դեռևս 1864 թ. երկրագործական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով գետաշենցիները խնդրանքով դիմել էին կառավարությանը, որպեսզի գերմանական Հելենենդորֆ գաղութից այդ բնագավառում հմուտ և փորձառու անձեր գործուղեին Գետաշեն՝ ժողովրդին ուսուցանելու համար: Կառավարությունը բավարարել էր խնդրանքը, գյուղացիներն էլ ստանձնել էին գործուղված մասնագետների՝ Ֆրիդրիխ Յայզերի և Ֆրիդրիխ Ռեյտենբախի բոլոր ծախսերը ուսուցման ողջ ընթացքում[2153]:

Նախախորհրդային տարիներին Գետաշենում գործել են 18 ջրաղաց, 5 ձիթհան (սրանոց), 4 դարբ-

2149. "Кавказский календарь на 1915 г.", с. 204.
2150. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2151. «ԱՍՀ», h. 10, էջ 300:
2152. «Ուրբաթ», 1991, N 18:
2153. "Кавказ", 1865, N 70, с. 349.




***ԳԵՏԱՇԵՆ. ութամյա և միջնակարգ դպրոցների շենքերը***

նոց, 3 կաշեմշակման ու 6 կոշկակարական արհեստանոցներ[2154]:

Արդեն 1883 թ. գյուղն ունեցել է մինչև 35 խանութ. «Ունի իր մէջ 30-35, թէ մանրավաճառների, հիւսների, երկաթագործների, ներկարարների, դերձակների, կաշուեգործների, բազազների, կօշկակարների և արծաթագործների խանութներ...»[2155]:

ԺԹ դարավերջին գյուղ այցելած եպիսկոպոս Բարխուտարյանցը գրել է. «Աւանումս ծաղկած է հիւսնութեան, դարբնութեան, ոսկերչութեան, դերձակութեան, թամբագործութեան, սայլագործութեան, քարտաշութեան, ոստայնագործու արուեստներն»[2156]:

**Կրթօջախներ:** ***Արական դպրոց.*** կրթական գործը Գետաշենում նույնպես հին պատմություն ունի. «...Գետաշէնի դպրոցը գոյութիւն ունի 50-ական թուականներից, բայց կանոնաւոր դպրոցների շարքն է մտնում միայն 1865 թ.»[2157]:

Հայտնի է, որ առաջին եկեղեցական ծխական արական միդասյա դպրոցը բացվել է 1862 թ.[2158]:

Դպրոցական շենքը նորոգության կարոտ է եղել 1878 թ.[2159], ավարտին է հասցվել Գանձակի փոխանորդ Սաթունյանի ներդրած ջանքերի շնորհիվ[2160]:

1911/12 ուստարում դպրոցն ուներ փոքր գրադարան՝ 350 կտոր գրքով[2161]:

***Օրիորդաց դպրոց.*** 1906 թվականից գործում էր նաև օրիորդաց դպրոցը[2162]:

Գետաշենի ծխական դպրոցներին վերաբերող վավերագրերի ուսումնասիրությունը և ըստ ժամանակագրության դրանց տվյալների դասակարգումը ներկայացնում ենք ստորև.

| **տարեթիվ** | **այլ տեղեկ.** | **ուսուցիչ** | **աշակերտ** |
|---|---|---|---|
| 1864[2163] | բացվել է ծխական արական դպրոց | | |
| 1865[2164] | | 1 | 33 |
| 1866[2165] | | 1 | 47 |
| 1869[2166] | դպրոցը գտնվում էր նյութական խիստ սուղ վիճակում, հոգաբարձուն էր Ղահրաման Մուսայելյանցը: | | |
| 1870[2167] | | 1 | 30 |
| 1872[2168] | | 1 | 50 |
| 1873[2169] | | 1 | 25 |
| 1874[2170] | | 1 | 62 |
| 1875[2171] | Սիմեոն քահանա Աթիրեկյանց | | 61 |
| 1876[2172] | | 1 | 60 |
| 1877[2173] | | 1 | 26 |
| 1878[2174] | Մ. Բաղդասարյանց | | 31 |

2154. **Բալասանյան Գ.**, Դարերի ճամփորդը, Երևան, 1986, էջ 7:
2155. «Մեղու Հայաստանի», 1883, N 52, էջ 2:
2156. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 258-259:
2157. «Նոր-Դար», 1893, N 193, էջ 3:
2158. «Մանկավարժական թերթ», 1878-79, էջ 15-16: Ի դեպ, դպրոցը բացված է համարվում նաև 1864 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28):
2159. «Մանկավարժական թերթ», էջ 16:
2160. «Նոր-Դար», 1895, N 7:
2161. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 21:
2162. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 301, թ.սսսսս 5:
2163. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28: Ի դեպ, արխիվային մեկ այլ տեղեկագրում դպրոցի բացման տարեթիվ նշվել է 1863 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 21):
2164. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 50:
2165. Նույն տեղում, գ. 3848, թ.115:
2166. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4850, թ. 16,25:
2167. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
2168. Նույն տեղում, գ. 3872, թ. 30-32:
2169. Նույն տեղում, գ. 3862, թ. 59-68:
2170. Նույն տեղում, գ. 3864, թ. 55-56:
2171. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 45: Տես նաև՝ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 48-49:
2172. ՀԱԱ, ֆ. 53, ց. 3, գ. 62, թ.46:
2173. Նույն տեղում, գ. 3850, թ. 130:
2174. Նույն տեղում, գ. 3850, թ. 178: Նաև՝ «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878-79, էջ 16:

| | | | |
|---|---|---|---|
| 1882[2175] | | 1 | 45 |
| 1884[2176] | գործում էր, միդասյա | | |
| 1885[2177] | փակվել է կառավարության հրամանով | | |
| 1888[2178] | վերաբացվել է | | |
| 1889[2179] | գործել է որպես միդասյա | | |
| 1891[2180] | գործել է | | |
| 1892[2181] | | 1 | 38 |
| 1893[2182] | գործել է որպես արական միդասյա դպրոց | | |
| 1894[2183] | Հարություն Միրիմանյանց | | 40 |
| 1896[2184] | փակվել է կառավարության հրամանով | | |
| 1906[2185] | վերաբացվել է առանց պետական ու հոգևոր իշխանությունների գիտության | | |
| 1908[2186] | պաշտոնապես ճանաչվել է բացված՝ իբրև արական միդասյա դպրոց | | 128 |
| 1909[2187] | միդասյա էր, նյութական սուղ վիճակում | | |
| 1909[2188] | | 2 | 126 |
| 1910[2189] | | 2 | 109 (87-աշ, 22-ուհի) |
| 1911[2190] | | 2 | 96 (70-աշ, 26-ուհի) |
| 1911/12[2191] | արական, եռամյա դասընթացով | 1 ուսուցիչ՝ Քամալ Պետրոսյան | 50 |
| 1914[2192] | | 2 | 140 |
| 1919[2193] | տուժել էր թուրք հրոսակներից | | |

***Պետական (ռուսական) դպրոց.*** 1886 թվականից Գետաշենում գործում էր պետական (ռուսական) դպրոցը[2194]: Հաստատությունը Գետաշեն էր փոխադրվել Գյորան թրքաբնակ գյուղից: Գտնվում էր Կուրակ գետի աջ ափին: 1890-ական թվականների սկզբներին ուներ շուրջ 50 աշակերտ[2195]: 1892 թ. գործել է որպես երկդասյա՝ 5 բաժանմունքով[2196]:

Խորհրդային տարիներին դպրոցական համալիրը տրամադրվել է հայկական միջնակարգին: Վերակառուցվելուց հետո այդտեղ մինչև 1991 թ. գործել է 10-ամյա հայկական դպրոցը:

**Տանուտեր (գյուղական ավագանի, ըզբաշի).** հնում այդ պաշտոնը փոխանցվում էր ժառանգաբար, սերնդեսերունդ, բայց ԺԹ դարում տանուտերն ընտրվում էր:

1890-ականներին գյուղական ավագանու ընտրությանը պատահմամբ ներկա գտնված ականատեսը մանրամասն նկարագրել է ընտրության ընթացքը: Վերաքաղենք ընդարձակ հատված այդ նյութից. «Նախընթաց երեկոյին ,,չօւշը,, (գզիր) կտրէկտուր ման եկաւ ու ընտրելով այսպէս ասած կենտրոնական կտուր, մի քանի անգամ հազալուց յետոյ բարձրաձայն կանչեց ,,վաղը լօխն էլ (բոլորը) գլլական էք (պիտի գաք) ըզբաշին (տանուտէր) ու սուդիէք ջոկլական ենք, լաւ հասկացէք,,: Երկրորդ օրը տանից մէկ մարդ եկաւ գեղամէջ, եկաւ և պրիստաւը ու բալկոնում սպասում էր: Գիւղացիք տանուտէրին փոխում էին. ինչո՞ւ, որովհետև նա, իբրև հասկացող մարդ ու մի քիչ զարգացած տղամարդ, շատ խիստ է եղել գիւղացիների վերաբերմամբ և շատերին տուգանքի էր ենթարկել գաւիթներն ու փողոցները կեղտոտ պահելու և անասուններին գիշերով ազատ թողնելու համար և այնքան խիստ էր եղած, որ չէր խնայած նոյնիսկ իւր զառամեալ հօր՝ գիւղացիներից յարգւած այդ նախկին տանուտէրին: Միշտ տրտունջներ էին լսւում, թէ լաւ չի կառավարում, հօրն էլ պատժեց: Իսկ դատաւորներին արժեր փոխել, որովհետև կաշառակերներ էին:

Պրիստաւի (տեղական վիճակի ոստիկանապետ) հարցին թէ ումն են կամենում տանուտէր, մօտ 300 մարդ բարձրացրեց ահագին աղաղակ. մի քանիսը գոռում էին Համբօին, միւսները Թիւնիին կամ Ջաւադին և այլն, այնպէս որ միաձայնութիւն չէր տիրում: Պրիստաւը համբերութիւնից դուրս գալով, կարգադրեց՝ ,,ով ուզում է Համբօին՝ ձախ, իսկ ով Սաքնին (հին տանուտէրներից մինը)՝ աջ. ամբոխը Սաքնի կողմը քիչ էր գնում, բայց Սաքնականները գրոհ տալով տարան աջ և նոցա, որոնք Համբօին էին ուզում. պրիստաւն էլ, առանց հաշւելու, այլ միայն նկատելով, թէ որ կողմն շատ անցաւ, այն կողմի թեկնածուին էլ ընտրած համարեց: Ընտրւած էր ուրեմն աշխարհիքից բեխաբար Սաքօն միայն նորա համար, որ նորա տանուտէրութեան օրով խաղաղ են եղել, այսինքն ինչ ուզեցել են այն են արել: Ահա թէ ինչպէս է ամբոխը իրա համար հոր փորում...»[2197]:

Հարկ է նկատել, որ գյուղի հասարակությունն իրապես իր համար «հոր էր փորել», քանի որ, ինչպես պարզվում է, խստություններ բանեցնող տանուտերը գյուղի հոգսերով ու բարեկարգման խնդրով մտահոգ այն բացառիկ անձն էր, որը տուգանված բնակիչներից գանձված գումարներով, օրինակ, գյուղամիջով հոսող Կուրակ գետի վրա

2175. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474-475:
2176. Նույն տեղում:
2177. Նույն տեղում:
2178. Նույն տեղում:
2179. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 11, թ.1:
2180. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474-475:
2181. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 120-122: Մեկ այլ տվյալի համաձայն՝ 1892/93 ուստարում դպրոցն ունեցել է 28 աշակերտ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 11, 11-12):
2182. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 124-125:
2183. Նույն տեղում, գ. 3896, թ. 173-174:
2184. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 562, թ.2:
2185. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 301, թ.5:
2186. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ.15:
2187. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 562, թ.2:
2188. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ.17:
2189. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ.55-60:
2190. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ.57:
2191. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 21: Տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474-475:
2192. **Խուդոյան Ս.**, նույն տեղում:
2193. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 736, թ.1:
2194. **Միրիմանյանց Հ.,** Գետաշեն գյուղը, «Մուրճ», 1894, N 7-8, էջ 1162:
2195. Նույն տեղում:
2196. «Նոր-Դար», 1892, N 140, էջ 3:
2197. **Միրիմանեանց Յ.**, նշվ. հոդվածը, էջ 1155-1156:



***ԳԵՏԱՇԵՆ. Ավագ Սբ. Նշան (Նահատակ) եկեղեցի (1677 թ.)***

կառուցել է տվել ողջ գյուղի համար կենսական նշանակություն ունեցող թաղակապ մի գեղեցիկ կամուրջ[2198]:

Հայտնի է, որ 1913 թ. գետաշենցիները հողին էին հանձնել գյուղն արգասաբեր կառավարած տանուտեր Առստամ Եպիսկոպոսյանին, որի օրոք կառուցվել էին ճանապարհներ, կամուրջներ, ծխական և պետական դպրոցների նոր շենքերը և այլն[2199]:

**Եկեղեցիներ:** ***Ավագ Սբ. Նշան (Նահատակ).*** Գետաշենը հարուստ է պատմաճարտարապետական բազմաքնույթ հուշարձաններով: Գյուղամիջում պահպանված երեք եկեղեցիներից ամենահինը Ավագ Սբ. Նշան (Նահատակ) կոչվածն է: Այն փոքրածավալ միանավ թաղածածկ շենք է: Ծածկը երկթեք է: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 7,95 x 5,50 մ: Արևմտյան ճակատից բացված միակ մուտքի անկյունաքարերը սրբատաշ են: Ունի մի շարք արձանագրություններ.

Ավագ Սբ. Նշան եկեղեցի. բարավորին՝ 11 տող.

*Թվ(ին) ՌՃԻԶ (1677) | կամաւն ա(մ)ենակալ(ի)ն | Ա(ստուծո)յ, շինեցաւ ս(ուր)բ Ն(ա)հ(ա)տ|ակս ձեռամբ Մի... | ե... սին եւ որդո(ւ)ն՝ | Քամալ Պէկ(ի)ն, օգն(ա)կ(ա)ն|ութ(եամ)բ գեղոււ, | թ(ա)գ(ա)ւորութի(ւ)ն պ(ա)րսից՝ | շ(ա)հ Սուլե(յ)ման(ին), հ(ա)յր(ա)պ(ե)տ|ութի(ւ)ն տ(եառ)ն Ս(ի)մէոնին. | յ(ի)շ(ա)տ(ա)կ՝ Փարին:*

Հրատ. արձանագրությունը նախ հրատարակել է Քաջիկյանը («Արձագանք», 1886, N 19, էջ 281), ապա՝ Մ. Բարխուտարյանցը («Արցախ», էջ 259), փոքր-ինչ ավելի ամբողջական՝ Ե.

2198. «Նոր-Դար», 1887, N 127, էջ 3:
2199. «Մշակ», 1913, N 123, էջ 2:






***ԳԵՏԱՇԵՆ. Ավագ Սբ. Նշան (Նահատակ) եկեղեցի. բարավորը, ներքին տեսքը դեպի արևելք, խաչքանդակ արևմտյան ճակատին և ներքուստ հյուսիսային պատի միջի խորշի նվիրատվական արձանագրությունը***

Լալայանը («Գանձակի գաւառ...», էջ 318-319), այնուհետև առանց ստուգելու այն վերահրատարակել է Ս. Բարխուդարյանը («Դիվան հայ վիմագրության» հ. 5, էջ 237): Մեր այցելության ժամանակ (1989 թ.) վիմագիրը ծածկած սվաղի շերտի մաքրումը հնարավոր դարձրեց դրա բովանդակության առավել ամբողջական վերծանությունը:

Ծանոթ. բոլոր հրատարակություններում էլ առկա են մի շարք բացթողումներ, անճշտություններ:

Ավագ Սբ. Նշան եկեղեցի. խորանի կենտրոնում իբրև սեղանի վեմ քար կանգնեցված է մի անթվակիր արձանագրությամբ տապանաքար. չափերն են՝ 80 x 33 x 27 սմ, 7 կարճ տող.

*Այս | է հա|նգի|ստ | Մա|րե|անա:*

Ծանոթ. գրչությունը բնորոշ է ԺԱ-ԺԲ դարերին:

Ավագ Սբ. Նշան եկեղեցի. հյուսիսային պատի մեջ գտնվող մկրտարանի խորշի ճակատին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխօս | Թանկրղուլին:*

Ծանոթ. գրչությունը բնորոշ է ԺԷ դարին:

Ավագ Սբ. Նշան եկեղեցի. «Եղիշէ առաքեալի բազկի մի մասը, մի արծաթէ, ոսկեզօծ աջի մէջ ներփակուած, որի վրայ կայ հետևեալ գրութիւնը».

*Այս է աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն. աշխատողքս՝ որ Ա(ստուծո)յ Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու յիշատակ սորա, տէր Ոսկան եպիսկոպոս: Կամաւն Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս ետոյ նորոգեցի, Աստուած ողորմի ասացէք: Կամաւն Աստուծոյ Մուրադս որդի Նիազի շինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացէք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին, թվն ՌԿԷ (1618) էր:*

Հրատ. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 318:

Ի դեպ, արխիվային վավերագրերում առկա է եկեղեցու մի երրորդ անվանաձև, այն է՝ Կարմիր Նահատակ:







***ԳԵՏԱՇԵՆ. տապանաքարեր՝ Ավագ Սբ. Նշան (Նահատակ) եկեղեցու բակում (ԺԹ դ.) և հատակագիծը***

Եկեղեցու շուրջ տարածված երբեմնի գերեզմանոցից ներկայումս միայն մի քանի տապանաքարեր են պահպանվել: Կից հասարակական բնույթի մի շենքի հիմքին ագուցված ԺԹ դարին վերաբերող տապանաքարի խիստ հողմահարված արձանագրության մեջ կարդացվում է Հաքերք գյուղի անունը. ամենայն հավանականությամբ, հանգուցյալն այդ վայրից էր:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** Գետաշենի ծխական Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է հին թաղամասի կենտրոնում՝ ձորալանջի հարավահայաց փեշին: Եկեղեցու կառուցման ստույգ ժամանակն անհայտ է: Հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունները հուշում են, որ առնվազն ԺԷ դարում նրա տեղում եղել է հին եկեղեցի: ԺԹ դարի 30-ականներին հին եկեղեցին գտնվում էր քայքայված ու վթարային վիճակում. «...գոյր աստ մեծաշէն եկեղեցի, բայց խախտեալ աւերեցաւ ի սպառ...»[2000]:

1883 թ. ավարտվել էր այս եկեղեցու տեղում հիմնովին վերակառուցված նոր եկեղեցու շինարարությունը, որը և օծվել էր նոյեմբերի 23-ին. «...անցեալ ամսի 23-ին գիւղին այցելեց Գանձակի յաջորդն գեր. Անանիա վարդապետն, որ եկեղեցւոյ վէմ քարը օծելուց և նորայ վրայ պատարագ մատուցանելից յետ վերադարձել է Գանձակ»[2001]: Մի քանի տարի անց նորակառույց եկեղեցին ականատեսին ներկայացել է ահա այսպես. «...եկեղեցին Սուրբ Աստուածածին. հոյակապ կառուցեալ վեց սիւների վերայ համակ սրբատաշ տորոնագոյն քարով... միջից բխում է բարեհամ ջուր, չունի արձանագրութիւն, բայց երեւում է որ նորոգուած է...»[2002]:

Կարճ ժամանակ անց եկեղեցու նոր այցելուն նշել է. «...մօտ ժամանակներս նորոգել են, վերացնելով այն աղբյուրը, որ առաջ բխում էր եկեղեցու հիւսիսային պատից եւ թափւում եկեղեցու կեդրոնում շինուած մի քառանկիւնի աւազանի մէջ»[2003]:

Հայտնի է, որ 1903 թ. եկեղեցին նորոգման լուրջ կարիք ուներ. «Գիւղիս եկեղեցին վերջին ծայր քայքայման է հասել, և ուշադրութիւն դարձնող չկայ: Անձրևի ժամանակ ջուրը կաթում է քահանայի վզին, և այնուամենայնիւ հոգացող չկայ...»[2004]: Նույն թվականին գետաշենցիները ձեռնամուխ են եղել եկեղեցու նորոգության գործին. «...արծարծեց մեր եկեղեցու վերանորոգման հարցը, որի ծրագիրը շնորհիւ նոյն գործակալի կազմուած է ճարտարապետի միջոցով...»[2005]:

Ավածին ավելացնենք, որ եկեղեցին ունի եռանավ բաղածածկ հորինվածք: Ավագ խորանի երկու կողմերում եղած ավանդատները կրկնահարկ են: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Արտաքին չափերն են՝ 22,05 x 14,20 մ: Պատերի մեջ ագուցված են մի քանի խաչքարեր ու տապանաքարեր: Դրանց թվում կան նաև արձանագրվածները.

Տապանաքար. ագուցված է Սբ. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի հարավակողմի արևմտահայաց անկյունում (չափերն են՝ 116 x 44 սմ), երեսին՝ 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս Ազիզ Պեկին, մ[ա]օրն՝ Անթ(ա)ռանին, | հօրն՝ Անդրե|ասին, կող(ա)կց(ի)ն՝ Պէկխուլթ|անին եւ իւր որդոցն, որ :Բ: (2) | թ(ու)մ(ա)ն եր(ե)տ եկեղ(ե)ցոյս, | թվ(ին) ՌՃ (1651):*

Սբ. Աստվածածին եկեղեցի. հյուսիսային պատի մեջ մկրտարանի ավազանից ներքև ագուցված տապանաքարի (չափերն են՝ 143 x 67 սմ) երեսին քանդակված են կենցաղային պատկերներ և թվականը.

*Թ(վին) ՌՂԲ (1643):*

2200. **Ջալալեանց Ս.,** նշվ. աշխ., մասն Ա, էջ 172:
2201. «Մեղու Հայաստանի», 1883, N 121:
2202. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 258:
2203. **Լալայեան Ե.,** Գանձակի գաւառ, 1899, էջ 110:
2204. «Նոր-Դար», 1903, N 51, էջ 2:
2205. «Նոր-Դար», 1903, N 91, էջ 2:



***ԳԵՏԱՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, արևելքից, մուտքի վերնամասը, արևային ժամացույցը և հատակագիծը***

Սբ. Աստվածածին եկեղեցի. ավագ խորանի մեջ ընկած մի խոյակաձև քարի վրա փորագրված է.

*Աբրիլի 20-ին այս սուրբ տաճարիս նուվիրեցի յիշատակ իմոյ՝ Մանիշեցի Սիմօն Մահտեսեանն:*

Ծանոթ. Մանաշիդ գյուղ՝ Շահումյանի շրջանում:

Սբ. Աստվածածին եկեղեցի. արտաքուստ եկեղեցու հարավային պատին մի խաչքանդակի շուրջ փորագրված է.

*...կողակ(ի)ց... ՌՄԿԳ (1814):*

Հարավային ճակատի արևելյան անկյան մոտ պահպանվում է արևի ժամացույցը, իսկ արտաքուստ արևելյան ճակատում ագուցված լուսամուտի շրջանակներն ակնհայտորեն պատկանել են հին եկեղեցուն:

**Կուսանաց անապատ եկեղեցի.** Գետաշենի երրորդ եկեղեցին գտնվում է նախորդներից ավելի արևմուտք: Գրականության մեջ հայտնի է Կուսանաց անապատ անվամբ: 1885 թ. մի վավերագրում



***ԳԵՏԱՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք, տապանաքարեր՝ ագուցված եկեղեցու որմերում***

հիշատակված է Կուսանոց Սբ. Տիրամոր եկեղեցի անվամբ[2206]: Դեռևս ԺԹ դարի վերջերին եկեղեցու շուրջ կիսավեր դրությամբ պահպանվում էին միաբանական սենյակների մնացորդները:

Եկեղեցին քաղածածկ միանավ շենք է: Ավանդատներ չունի: Խորանը կիսաշրջանաձև է, ծածկը՝ երկթեք, միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են միայն անկյունաքարերը: Արտաքին չափերն են՝12,14 x 7,80 մ: Ունի հետևյալ արձանագրությունները.

Կուսանաց անապատ. քարավորին (չափերն են՝ 125 x 51 սմ)՝ 4 տող.

*Այս է Մէլիք Թամազին որդի | Սարուխանին եխպար՝ Եավ(ր)ին, Ք(ա)պաճին, | Ապավի որդի Մէլիք Օսէփին: | Վէլուց՝ պէհէզ, Սարքիսին՝ պէհէզ:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 264-265: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 319: «Դիվան...», V, էջ 237:

2206. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:









***ԳԵՏԱՇԵՆ. Կուսանաց Սբ. Տիրամոր եկեղեցի (ԺԸ դար). տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք***



***ԳԵՏԱՇԵՆ. Կուսանաց Սբ. Տիրամոր եկեղեցու հատակագիծը***

Ծանոթ. սա այն մելիքն էր, որ 1767 թ. Գետաշենից հետ էր շպրտել Շահվերդի խանին ու հետապնդել մինչև Գանձակ:

Կուսանաց անապատ. ներսում, հարավակողմի սրբատաշ որմնասյան վրա՝ 6 տող.

*Թվի(ն) ՌՃՂԸ (1749), | ես Աքուլէցի | Գիրիկորի որդի | Պօղոսին մա(յ)ր | Եփրեմի քո(յ)ր՝ | Թագուհին:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 19, էջ 281 (չունի թվականը):

Կուսանաց անապատ. արևմտյան ճակատում ագուցված են 3 գեղաքանդակ խաչքարեր, երկուսը՝ բեկորված: Վերջիններից մեկի քիվին և քիվատակին՝ 2 տող.

*Խ(ա)չս Խաթո(ւ)նին եւ իւր ննջեց(ելոց), | թվ(ին) ՌԼԷ (1588):*

**4-րդ եկեղեցու կառուցման խնդիրը.** ԺԹ դարի վերջին, երբ Գետաշենն իր բարգավաճման գա-




*ԳԵՏԱՇԵՆ. խաչքար և արձանագրություն Կուսանաց Սբ. Տիրամոր եկեղեցու արևմտյան ճակատում*

գաքնակետին էր, և բնակչությունն էլ բավականին բազմամարդ էր, ներքին թաղի շուրջ 250 տուն հայեր խնդրագրով դիմել են հոգևոր իշխանություններին ծխական 2-րդ եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու ակնկալիքով: Խնդրագիրը, որի ներքո ստորագրել էր 250 գետաշենցի, կազմվել է 1897 թ. փետրվարի 15-ին. «Մեր Գետաշէն գիւղի եկեղեցին, որտեղ կատարւում է այժմ ժամերգութիւն եւ սրբազան պատարագ կառուցուած լինելով լեռան կիսակատարի վերայ դիւրութիւն ունի միայն իւր շրջակայի բնակչաց ծխոց յաճախել այդ եկեղեցին, իսկ Ներքի թաղ կոչուած գիւղամասում, որ լեռան ստորոտից սկսեալ ընդարձակ դաշտավայրի վերայ է սփռուած, աւելի քան հարիւր հիսուն տուն անկարող է լինում միշտ եւ հանապազ բարձրանալ զարիվեր, մինչեւ եկեղեցին, ուստի շատերը զրկւում են ժամերգութիւնից, մանաւանդ ծերունիք եւ պառաւունք: Հին ժամանակներում, երբ փոքր էր մեր գիւղի բնակչութիւնը բաւական էր լինում յիշեալ եկեղեցին, իսկ ներկայումս քառապատիկ աւելանալով նեղութիւն է կրում եկեղեցին: Գիւղը այժմ չորս հարիւր հիսուն ծուխ ունի ի բաց առեալ օտարականները եւ համեմատելով այդ թուի հետ եկեղեցին շատ փոքրն է, հարկաւ եւ պահանջ է զգացւում մի այլ եկեղեցի ունենալ:

Եւ այդ երկրորդ եկեղեցին արդէն կը յիշեալ Ներքի թաղ գիւղամասում, որ մի փոքրիկ տաճար է, ուր պահւում է Աւագ Սբ. Նշանը կենաց փայտից, որտեղ յաճախում են Գանձակից, Տփխիսից եւ գաւառներից ուխտաւորների ահագին բազմութիւն, ամառ ժամանակը որ տեղ չէ լինում շատերի համար կանգնելու: Եւ այդ փոքրիկ տաճարի մէջ սովորաբար ժամերգութիւն չէ լինում եւ վաղուց մտադրուած ենք շինել այդտեղ մի փառավոր եկեղեցի, որովհետեւ իւր վերայ ունի եւ դատարկ գետին բաւականատեղ, բայց մի քանի հանգամանքներ չներեցին, իսկ այժմ աւելի յարմար ժամանակ համարելով, գիւղի համայնութիւնը ցանկանում է սկսել նորա շինութիւնը, եթէ որ հոգեւոր իշխանութիւնը բարէհաճութիւն ցոյց տայ...»[2207]:

1897 թ. մայիսի 1-ին Գանձակի հոգևոր իշխանությունը վիճակային հայոց կոնսիստորիային (Վրաստանի և Իմերեթի) պատասխանել էր. «...նախ թէ չիք կարեւորութիւն կառուցանելոյ զերկրորդ եկեղեցի ի գեղջն Գետաշէն, քանզի եկեղեցի տեղւոյն կառուցեալ է ի յարմարաւոր տեղւոջ գեղջն եւ է բաւականին ընդարձակ, մինչեւ անգամ ի ժողովել ժողովրդոց ի նմին դեռեւս մնայ ընդարձակ դատարկ տեղի, թող թէ ժողովրդականք Գետաշինու կիսով չափ ցրուեալ բնակին ի Գեօրան եւ ի Չիլքին կոչեցեալ թաղս ի վերայ 12 եւ 35 վերստից: Երկրորդ, թէ ժողովրդականք տեղւոյն եթէ ոչ ամենեքեան, այնուամենայնիւ մեծաւ մասամբ են դառն աղքատք, որք դժուարութեամբ հայթհայթին զօրական ապրուստ զերդաստանի իւրեանց: Եւ երրորդ, թէ տեղին, ուր կամին կառուցանել զեկեղեցի է բոլորովին անյարմար փոքրադիր, բլրակաձեւ տափարակ գետին, ուր կառուցեալ գոն մատուռն Աւագ Սուրբ Նշան ուխտատեղւոյ եւ կից նմին երկու փոքրիկ սենեակ վասն իջեւանելոյ ուխտաւորաց»[2208]: Վերոհիշյալ պատճառաբանությամբ էլ մայիսի 30-ին խնդրանքը վերջնականապես մերժվել է, գործը՝ փակվել:

**Քահանա.** *Սարգիս Տեր-Սահակյան Արքերյանց.* գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում քահա-

2207. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3342, թ. 3:

2208. Նույն տեղում, թ. 2, 6:

նայագործել է ձեռնադրման օրվանից՝ 1896 թ. սեպտեմբերի 3-ից առնվազն 1910 թ.[2209]:

*Ղևոնդ Ներսիսյան Տեր-Իսրայելյանց.* քահանա է ձեռնադրվել 1897 թ. մայիսի 2-ին և հովվել առնըվազն 1922 թ.[2210]:

Հայտնի է, որ 1908-1910 թթ. Տեր Սարգիսը և Տեր Ղևոնդը քահանայագործել են *Մեսրոպ Տեր-Գրիգորյանցի* հետ[2211]:

**Մասունքներ.** Ավագ Սբ. Նշան (Նահատակ) եկեղեցին առանձնապես հայտնի է եղել իր սրբություններով: Դրանց վերագրվել են մի շարք հրաշագործ հատկանիշներ և այդ պատճառով էլ եկեղեցին ուխտատեղիի հռչակ է վայելել:

Հարկ է նշել, որ այդ մասունքները, ի սկզբանե, պահվել են բնակիչների տներում: Օրինակ, 1839 թ. յուզբաշի Մովսես Առաքելյանի տանը պահվում էր Ավագ Սբ. Նշան կոչված արծաթե խաչը, Խաչատուր Հարությունյանի մոտ էր «Կարմիր Ավետարան»-ը, Գրիգոր Սահակյանի տանն էր «Սպիտակ Ավետարան»-ը, մեկ ուրիշի մոտ՝ Սբ. Եղիշե առաքյալի աջը (արծաթյա, ոսկեզօծ) և այլն[2212]:

Արդեն 1869 թ. հոգևոր իշխանությունների հրամանով գյուղում եղած սրբությունները հավաքվել էին մասնավոր անձանց ձեռքերից և պահվում էին Ավագ Սբ. Նշան եկեղեցում[2213]: Դրանք էին.

1. Ավագ Սբ. Նշան խաչը,
2. Կարմիր կամ Սուլթանի ավետարանը,
3. Սբ. Եղիշե առաքյալի աջը,
4. Կենսաբեր անվամբ ավետարանը,
5. Մասունք սրբոց Երից Մանկանց:

Մոտավորապես 1890 թ. եպիսկոպոս Բարխուտարյանցը նույն եկեղեցում տեսել է հետևյալ մասունքները.

1. Ավետարան, 1661 թ.,
2. Ավետարան (մագաղաթյա), 1223 թ.,
3. Ավետարան (թղթե), 1356 թ.,
4. Ավետարան (թղթե), 1673 թ.,
5. Մասն կենաց փայտի (զետեղված արծաթյա խաչի մեջ),
6. Մասն Սբ. առաքյալի բազկի (արծաթյա ոսկեզօծ խաչի մեջ),
7. Մասն մի անհայտ սրբի (զետեղված մի ականազարդ խաչում)[2214]:

Մշակույթի վերոհիշյալ արժեքները եկեղեցում պահվել են մինչև 1920-ական թվականները. «1927-28 թվերին Ավետարանը արծաթյա աջի և այլ մասունքների հետ կոլտնտեսության ղեկավարությունը տանում է Բաքու, հանձնում թանգարանին, որի դիմաց գյուղի համար ռադիոընդունիչ և այլ սարքեր է ստանում: Մի քանի տարի հետո գյուղխորհրդի նախագահ Աբգարը դրանք Բաքվի հայկական եկեղեցում է տեսնում: Դրանից հետո ոչ մի տեղեկություն չենք ունեցել մեր Ավետարանի մասին»[2215]:

**Բնակելի շենքեր.** Գետաշենի հարյուրավոր բնակելի շենքերը ևս արժեքավոր ու ինքնատիպ հուշարձաններ են: Դրանց մեծագույն մասը բազմահարկ է, մի քանիսն ունեն մինչև անգամ չորս հարկ: Գրեթե բոլոր տները ունեն փայտաշեն պատշգամբներ, կղմինդրածածկ են: Աչքի են ընկնում հատկապես Մելիք-Մնացականյանների, Միքայել Յուզբաշու, Խաչատուր Գաբրիելյանի, Տեր Մեսրոպ քահանա Տեր-Գրիգորյանցի տները: Վերջինս գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ՝ արևելյան կողմում և ունի շինարարական հետևյալ արձանագրությունը.

*1889 ամի շինեցինք | այս տունս, ես Տէր | Մեսրովբ Տէր Յոհաննէս|եան Տէր Գրիգորեան եւ կ|ողակիցն իմ՝ Շախանում | Խոջայանն, յիշատակ որդոց մերոց:*

Ուշագրավ է, որ այս տունը, ինչպես 1980-ական թվականներին, այնպես էլ դեռ ԺԹ դարում աչքի ընկնող կառույցներից էր. «Շինութիւնների մէջ նշանավոր է Տեր-Գրիգորեանի քառայարկ, գեղեցիկ տունը և Մելիք-Մնացականեանների նախկին մելիքական ապարանքը»[2216]:

Ի դեպ, Տեր Մեսրոպի տան կառուցման վերաբերյալ պահպանվել են արխիվային հետաքրքիր վավերագրեր: Արդեն տան կառուցվելուց հետո՝ 1911 թ. համագյուղացիները քահանայի նոր ձեռնարկումները կանխելու նպատակով բողոքել են հոգևոր կառավարությանը, թե «...Մեսրովբ քահանայ տէր Գրիգորեանցը գրաւել է բաւականաչափ տեղ և իւր շինութեանը հետ միացնելով շէնքս է կանգնացնում»[2217]: Նշել են, որ հողատարածքը եկեղեցապատկան էր և քահանան իրավունք չունի այն սեփականելու: Տեր Մեսրոպն էլ իր բացատրականում պատճառաբանել էր, որ տարածքը, ուր տուն էր կառուցել, ոչ թե եկեղեցու, այլ իր պապական հողն է եղել[2218]:

Թեև գործի հետագա ընթացքը հայտնի չէ, բայց քահանան, ըստ ամենայնի, հասել է իր նպատակին, որի ապացույցն է կանգուն փառահեղ շենքը:

Գետաշենում գլխավոր փողոցները սալահատակ էին: Դրանցից գլխավորը ձգվում է գետի երկայնքով[2219]:

**Կամուրջներ.** Գետաշենի միջով հոսող Կուրակ գետի վրա պահպանվել է ԺԹ դարում կառուցված երեք կամուրջ: Դրանցից վերինը կոչվում էր «Տերի»

2209. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 54:
2210. Նույն տեղում, թ. 55: Նաև՝ ֆ. Պ57, ց. 3, գ. 375, թ. 3:
2211. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 6:
2212. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 44, թ. 1:
2213. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4850, թ. 16:
2214. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 259-264:
2215. **Կարապետյան Բ.,** Հարյուր տարվա երկխոսություն, Երևան, 1990, էջ 20:
2216. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 110:
2217. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1 գ. 3436, թ. 4:
2218. Նույն տեղում:
2219. Գետաշենի ժողովրդական ճարտարապետության ավելի մանրամասն ուսումնասիրությունը տես՝ **Սարգսյան Մ.,** նշվ. հոդվ., էջ 13-20:



*ԳԵՏԱՇԵՆ. Գարեգինի (Գարին) կամուրջը*



*ԳԵՏԱՇԵՆ. հատվածներ գերեզմանոցի հին հատվածից*

կամ «Տերունց» (Տերտերի). կամուրջը կառուցվել էր հավաքված տուրքերով (միջոցները գանձվել էին տուգանված օրինախախտ համագյուղացիներից): Միջին կամուրջը՝ «Գարի» կամ «Գարինի» (Գարեգինի), կառուցել էր Դուլունց Գարեգինի հայրը՝ Զորին, 1880-ական թվականների սկզբներին: Ներքինը Մելիք-Մնացականյանի կամուրջն էր: Սրանցից առաջինը փայտաշեն էր, մյուսները՝ քարաշեն, միաթռիչք:

**Գերեզմանոց.** պատմական անգնահատելի արժեք ունի Գետաշենի ընդարձակ գերեզմանոցը: Պահպանված բազմաթիվ խաչքարերի ու տապանաքարերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թաղումները կատարվել են առնվազն Ը-Թ դարերից սկսած: Հնավայրում առկա հետագա բոլոր դարաշրջաններին վերաբերող շիրմաքարերն ու խաչքարերն ապացուցում են հայաբնակ Գետաշենի հարատև գոյությունը առնվազն շուրջ 1200 տարի:

Գերեզմանոցը գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան եզրին՝ երկու կողմերից ժայռապարով առանձնացած, դեպի արևելք քիչ ցածրացող թեքությամբ ընդարձակ հարթության վրա: Տեղանքն իշխող դիրք ունի շրջակայքի նկատմամբ և ավելի բարձր է, քան գյուղի բազմաթիվ թաղամասերը:

Գերեզմանոցի արևելյան ծայրն առավել հին թաղումներով հատվածն է: Պահպանված խաչքարերի ու տապանաքարերի մեջ կան գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող հուշարձաններ: Վերջիններիս մեջ քիչ չեն նաև արձանագրվածները: Թվագրված ամենահին հուշարձանը 1173 թ. մի խաչքար է:

1980-ական թվականներին հնավայրից հավաքել ենք ԺԲ-ԺԸ դարերին վերաբերող շուրջ 30 միա-




վոր արձանագրություն: ԺԹ–Ի դարերին վերաբերող տապանագրերն անհամեմատ մեծաքիվ են, ուստի դրանցից ներկայացնում ենք առավել կարևորները.

Խաչքար. ընկած է մեջքի վրա, կիսով չափ խրված հողի մեջ, զեղաքանդակ է, չափերն են՝ 120 x 74 x 16 սմ, ստորին մասում՝ չորս տող.

*Թիվն ՈԻԲ (1173) էր: Ես Սիրանունն եւ Մխ/իթար կանգնեցաք զխաչս ի բարէխ/աւսութի(ւն) Տ(է)ր Պետրոսի: Եւ զի/ս յիշեցէք......:*

Խաչքար. կանգուն է իր սկզբնական տեղում, զեղաքանդակ է, ստորին մասում հեծյալի քանդակ է, չափերն են՝ 210 x 80 x 25 սմ, քիվին և ստորին մասում՝ յոթ տող.

*Ես Էտզայր ... աղէս / :Խ: (40) մարդով առի զՂա-րապաղն / կամ(աւն) ա(ստուծոյ): / (Թ)վ(ին) ՋՂԹ (1550) / էս Ազարիէն իւր :Բ: (2) / էղբաւրովն ողորմի / ասացէք:*

Խաչքար. զեղաքանդակ, ստորին մասում երեք անձի պատկեր, կանգնած է իր սկզբնական տեղում, չափերն են՝ 210 x 73 x 22 սմ, քիվին և հիմնախաչի ստորին թևի երկու կողմերում՝ 3 տող.

*Ղազարս կա(ն)կ(նե)ցի խ(ա)չէրս (ա)մէն, / թվ(ին) Ռ/Լ (1581):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 235 (ունեն միայն թվականը):

Տապանաքար. չափերն են՝ 127 x 64 x 30 սմ, հարավային երեսը խաչազարդ է (հողմահարված), իսկ հյուսիսային երեսին պատկերաքանդակներ են: Եզրին և պատկերաքանդակների վերին արևմտյան անկյան մոտ՝ 3 տող.

*Ս(ուր)բ խաչս բարէխա(ւ)ս Մէլիքճանին, Էնալին, / թվ(ին) Ռ/ԼԷ (1588):*

Խաչքարեր. երկու հատ իրար կողք, կանգնած են մի ընդհանուր պատվանդանի մեջ: Երկուսի քիվահատվածով ձգվում է մի ընդհանուր բովանդակությամբ արձանագրություն: Չափերն են՝ 156 x 68 x 25 սմ և 148 x 70 x 28 սմ.

*Ես Էտկար աղէս կանկ(ն)եցուցի / խաչս իշա-(տա)կ հաւրն իմ՝ Խոնին / և մաւրն իմոյ՝ Քու/լ/ին: Ես մե/ղաւոր / Ազար/եայ:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ դար:

Խաչքար. զեղաքանդակ, ընկած է զետնին՝ մեջքի վրա, չափերն են՝ 175 x 83 սմ (առանց ստորին ելուստի), քիվին՝ մեկ տող.

*Խ(ա)չս Թափուկնին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ դար:

Խաչքար. զեղաքանդակ, ընկած է կողքի վրա, չափերն են՝ 208 x 70 x 25 սմ, քիվին՝ երկու տող.

*Խ(ա)չ(ս) փրկութի(ւն) / հոգոյն Տ(է)ր Աղազարին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ դար:

Խաչքար. զեղաքանդակ, ստորին մասում որսի տեսարան, կանգուն է իր սկզբնական տեղում, չափերն են՝ 165 x 67 x 23 սմ, քիվին՝ մեկ տող.

*Խ(ա)չս Նազարին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ դար:

Խաչքար. 7 կարճ տող.

*Ես Պապ/այճան / աղայ: Ե/ս կանգ/նեցոյց/ի :Գ: խ(ա)չս / իշա/(տակ)...:*

Ծանոթ. այս զեղաքանդակ խաչքարը տեղում տեսել և արձանագրությունը ընդօրինակել էինք 1985 թ.: 1989 թ. այն գերեզմանոցում չենք գտել և համարում ենք կորած կամ հնավայրից փոխադրված այլ վայր: Ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դարեր:








28











***ԳԵՏԱՇԵՆ. խաչքարեր (Ա՝ 1173 թ., Բ-Գ՝ ԺԶ դար, Դ՝ ԺԵ դար)***

Տապանաքար. չափերը՝ 147 x 45 x 20 սմ, հյուսիսային երեսին խաչաքանդակներ են, իսկ հարավում՝ պատկերաքանդակներ ու 5 տող.

*Թ(վին) ՌԾԱ (1602), | ես Ճեն|եմշես | գ(ան)կ(նե)ցի ս(ուր)բ խ|(ա)չս բար(ե)խօս | որդոյն իմ՝ Աղային:*

Տապանաքար. չափերն են՝ 137 x 44 x 27 սմ, երկայնական երկու երեսներն էլ խաչազարդ են: Հյուսիսային երեսի վերին եզրին՝ մեկ տող.

*Այս է հ(ան)գի(ս)տ Մկը(ր)տ(ի)չ բէկին, կ(ա)նգ(նեցի) ս(ո)ւ(ր)բ խ(ա)չ(ս), թվ(ին) ՌԾԱ (1602):*










***ԳԵՏԱՇԵՆ. տապանաքարեր (ԺԶ-ԺԷ դարեր)***

Տապանաքար. չափերն են՝ 133 x 57 x 20 սմ, հյուսիսային երեսը ողորկ է, իսկ հարավայինը՝ խաչազարդ և պատկերաքանդակված, որտեղ էլ եզրով ձգվում է արձանագրությունը.

*Խ(ա)չս բարիխ(աւս) Գրիգորիս, թվ(ին) ՌՀԶ (1627): | Գոլում, | Էհղի|պար:*

Ծանոթ. *Գրիգորիս*-ի Գ տառերը հայելային են քանդակված:

Տապանաքար. չափերն են՝ 131 x 20 x 56 սմ, երկու երկայնական երեսները խաչազարդ են, հյուսիսային երեսին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Տուրսունին, Եղիին, Ծաբրին, | թվ(ին) ՌՁ (1631):*



**_ԳԵՏԱՇԵՆ. խաչքար (1581 թ.)_**



Տապանաքար. չափերն են՝ 130 x 24 x 58 սմ, հյուսիսային երեսին խաչաքանդակներ են, հարավում՝ պատկերաքանդակներ, խաչեր և մեկ տող արձանագրություն: Թվականը փորագրված է արևմտյան նեղ կողին.

*Այս է հ(ա)նգ(ի)ստ Էրէվանեցի Գ(ա)լո(ւ)ստի որդի Պետր(ո)սին, | թվ(ին) Ռ/ՂԲ (1643):*

Տապանաքար. հարավային երեսը զարդարված է կամարաշարի ներքո քանդակված հինգ խաչերով, իսկ հյուսիսային երեսին պատկերաքանդակներ են և թվականը՝ ելնդագիր.

*ՌՂԲ (1643):*

Տապանաքար. չափերն են՝ 125 x 28 x 61 սմ, հյուսիսային երեսին չորս կամարների ներքո խաչաքանդակներ են, իսկ հարավային երեսին՝ ելնդագիր 3 տող.

*Ս(ո)ւրբ խաչս բարէխոս Հախնազարին, կողակիցն՝ Նանեն, որդի՝ Եավրին, Յարութ(իւնին): | Իշեցէք անարժան Յուհան կազմ/ող, | թվ(ին) ՌՃ(1651):*

Տապանաքար. չափերն են՝ 170 x 32 x 79 սմ, հարավային երեսին՝ 3 տող.

*Թվ(ին) ՌՃԻԲ (1673): | Այս է հանգիստս Յետկարին, ս(ուր)բ խաչս բարիխուս հոգուն փ[ո]րկութի(ւն), յիշատակ Մէլիք Քամ(ա)լ(ին), | Աղասի Բէկ:*

Հրատ. «Դիվան ....», V, էջ 236 (թերի):

Ծանոթ. առաջին տողը փորագիր է, մնացածը՝ ելնդագիր, իսկ վերջին տողն արձանագրված է հայելային:

Տապանաքար. չափերն են՝ 72 x 22 x 50 սմ, հարավային երեսին երեք անձերի պատկերներ են (մեկի ձեռքին սազ է), հյուսիսային երեսին կամարաշարի ներքո երեք խաչաքանդակներ են, իսկ շուրջը՝ 1 տող ելնդագիր գրչությամբ.

*Այս է հանգիստ Բարունանին, դուստր՝ Մէլիք Քամալին:*

Ծանոթ. որոշ տառեր քանդակված են հայելային տարբերակով: Ժամանակը՝ ԺԷ դար:





***ԳԵՏԱՇԵՆ. խաչքարեր (ԺՁ դար)***

Խաչքար. պարզ, կանգուն է իր սկզբնական տեղում, չափերն են՝ 95 x 55 x 30 սմ, քիվին՝ 2 տող.

*Խ(ա)չս փրկական | Մէվլիկին հոգուն:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Խաչքար. գեղաքանդակ, կանգուն է, չափերն են՝ 138 x 76 x 25 սմ, քիվին՝ 1 տող.

*Ա(ստուա)ծ յիշէ: (Բա)ր(ե)[ս]խ(աւ)էս: Յիշողն:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. վերնամասը երկթեք (վրանաձև), չափերն են՝ 146 x 53 x 26 սմ, հյուսիսային երեսը ողորկ է, իսկ հարավայինը՝ խաչազարդ: 1 տող արձանագիրը ձգվում է հարավային երեսի եզրով.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)րէխ(ա)ւս Ռ(ու)ստ(ա)մ(ի)ն:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. չափերն են՝ 110 x 45 x 21 սմ, հարավային երեսը ողորկ է, հյուսիսայինը՝ զարդարված կամարաշարի ներքո չորս խաչաքանդակներով: Վերին, նեղ ու հարթ երեսին՝ 1 տող.

*Այս է հանգիստ Ուլուբէ(կ)ին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Տապանաքար. չափերն են՝ 143 x 55 x 25 սմ, հարավային երեսը խաչազարդ է: Հյուսիսային ողորկ երեսին՝ մեկ տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս հ(ո)գու փրկութ(եան):*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ-ԺԸ դարեր:

Տապանաքար. ողորկ մակերեսներով, չափերն են՝ 163 x 77 x 28 սմ, հյուսիսային երեսին՝ 2 տող.

*Այս է հանգիստ Ովանէսին, կող(ա)կցին՝ Մարեան(ին), | որդի՝ Արութին. կակող՝ տապանիս, թվ(ին) ՌՃԿԲ (1713):*



***ԳԵՏԱՇԵՆ. խաչքարեր (1581 թ.)***

Տապանաքար. չափերն են՝ 130 x 23 x 57 սմ, հյուսիսային երեսին կամարաշարի ներքո չորս խաչաքանդակներ են, իսկ հարավային երեսի եզրով՝ 2 տող.

*Յարութ(իւ)նս կանկ(նե)ցի ս(ուր)բ խաչս բարէխոս Եաւրին, որդի Հախնազարին: / Թվ(ին) ՌճԿԳ (1714):*

Տապանաքար. խրված հողի մեջ, սալաքար է, չափերն են՝ 177 x 45 x 24 սմ: Ունի 3 տող արձանագրություն.

*Այս տապան / Վարդ(ա)զ(ա)րին, / թվին ՌճՀԱ (1722):*

Տապանաքար. ուղղանկյունաձև սալաքար է, մեծ մասով խրված է հողի մեջ, հողմահարված արձանագրությունից հազիվ կարդացվում է թվականը.

*ՌճՀԶ (1727):*

Տապանաքար. հարթ ուղղանկյունաձև սալաքար է, չափերն են՝ 167 x 64 սմ, ունի հյուսածո եզրագոտի: Ելնդագիր արձանագրության վերջնամասը հողմահարված է.

*Այս է հանգիս(տ) / Յակոբի որդ/ի Ավանէս(ին), թվին ՌճՀԹ (1730), / յիշ...:*

Տապանաքար. չափերն են՝ 174 x 59 x 20 սմ: Ողորկ երեսներով, հարավային երեսին՝ 3 տող.

*Այս է տապան Մղօզէցի Պետրոսի, / սա է որդի Կատավնէսանց / Սարգիսին, թվ(ին) ՌՄԺ (1761):*

Տապանաքար. չափերը՝ 141 x 39 x 20 սմ.

*Այս է տապան Մղուզցէն / Քօթչին Սայակի որդի / տիր(ա)ցու[ն] Պետրոս(ի)ն, թվ(ին) ՌՄ/ԿԷ (1818):*

Տապանաքար. չափերը՝ 161 x 56 սմ.

*Այս է տապան / Չարաբերթ/ցէ Ականցէ / Մէրան Քոխ/անց Անանի / որդի Իսրաէ/լին, թվ(ին) Ռ/ՄԿԷ (1818):*



***ԳԵՏԱՇԵՆ. խաչքարեր (1581 թ.)***

Տապանաքար. չափերը՝ 193 x 63 սմ.

*Այս է տապան | Մեծ Շէնէցի | Պապո(ւ)մի որդի | Տանիէլին, | թվ(ին) ՌՄՀ (1821):*

Տապանաքար. չափերը՝ 123 x 44 սմ.

*Այս է տապան | Խաչ(ա)տուրի | կողակից |՝ Սէրուն, | թվ(ին) Ռ|ՄՀԱ (1822):*

Տապանաքար. չափերը՝ 115 x 37 սմ.

*Այս է տապան Չանթաղցէ | բրուտ Ավետիսի որդի | Աթայլի, թվ(ին). ՌՄՀԳ (1824):*

Ծանոթ. հանգուցյալը Ջրաբերդի Ջանյաթաղ (Ճանկաթաղ) գյուղից էր:

Տապանաքար.

*Այս է տապան | Մօղօզէցի | Խաչատուրին, | որ է որդի Պողու|ց Յակոբին, | թվ(ին) ՌՄՀԴ (1825):*

Տապանաքար. չափերը՝ 193 x 50 սմ.

*Այս է տապան | Պողօսի որդի | Մղօզէցի | Սարգիսին, | թվ(ին) ՌՄՀԷ (1828):*

Տապանաքար. չափերը՝ 164 x 65 սմ.

*Այս է տապան | Եօխտուրի թոռ | Չրըփրթէցի | Բալապար(ի) որթի | Արութուն(ին), թվի(ն) | 1837:*

Ծանոթ. *Չրըփրթէցի* = Չարաբերդցի (Ջրաբերդցի):

Տապանաքար. չափերը՝ 210 x 74 x 35 սմ.

*Այս է տապան Ջալավանց Աբրեսի | որդի Առուստամին, Չարաբերդու | Ականեցի, որք հանդիպիք դուք զողորմի, | Ք(րիստո)ս եւ ձեզ ողորմեսցի: Առող եղբայրն Յօհ(ան)ն(է)ս կոչի, | թողելով իւր կողակից Անթ(ա)ռ(ա)մն զսկից սրտի, | 1839 թվի:*







***ԳԵՏԱՇԵՆ. հատվածներ «Ճղարանց» գերեզմանոցից և Տեր-Իսրայել քահանայի տապանաքարը (1829 թ.)***

Խաչքար. գյուղամիջում, հենած Հայրումյան Չիրավարդի (Չիրո) տան պատին, գեղաքանդակ, չափերն են՝ 110 x 48 x 15 սմ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Սադո(ւ)նին:*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

**«Ճղարանց» գերեզմանոց.** տարածվում է Գետաշենի աջափնյա թաղամասերից մեկում՝ «Ճղարանց» տների մոտ՝ մի փոքրիկ բլրի վրա: Ըստ հնավայրում պահպանված տապանաքարերի ուսումնասիրության՝ այստեղ թաղումները կատարվել են ամբողջ ԺԹ դարում և Ի դարի սկզբներին:

Տապանաքար. երեսին ամբողջ երկարությամբ քանդակված է գավազան, ունի հետևյալ 3 տող արձանագրությունը.

*Այս է տապան.... | ս(ր)բակրօն տ(է)ր Իսրաէլին, որ է որդի | տ(է)ր Օհանէսի, թվ(ին) ՌՄՀԸ (1829):*







***ԳԵՏԱՇԵՆ. Եղնասարի վանք. տեսքը՝ հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից և հարավ-արևելքից***

**Եղնասարի վանք.** գտնվում է Գետաշենից շուրջ 1,5 կմ հարավ՝ անտառի փեշին՝ հյուսիսահայաց մեղմաթեք սարալանջին: Հուշարձանախումբը հայտնի է Եղնասարի վանք անվամբ: Թեև մինչև բռնագաղթը կանգուն շինությունները (եկեղեցի, միաբանական սենյակներ, դարպաս) հիմնականում ԺԷ-ԺԸ դդ. վերաբերող կառույցներ են, բայց հնավայրում պահպանված միջնադարյան խաչքարերի և եկեղեցու որմերում ագուցված ճարտարապետական առանձին բեկորները վկայում են, որ այդ շինությունների տեղում ավելի հնում եղել են պաշտամունքային կառույցներ: Ցավոք, Եղնասարի վանքի մասին մատենագրական համարյա ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Հայտնի է, որ, չնայած քաղաքական ծանր կացությանը, ԺԸ դարում Եղնասարի վանքում հաստատված էր միաբա-

նություն և ստեղծվում էին ձեռագիր մատյաններ: ԺԸ դարում գրված մի ձեռագիր 1744 թ. նորոգվել է Եղնասարի վանքում: Հիշատակարանում կարդում ենք. «Նորոգեցաւ դառն եւ դժնեա ժամանակիս, որ ոչ կարէ ոք պատմել նեղութիւն եւ սուգս... Արդ՝ եղեւ նորոգեալ ի դուռն անապատիս Եղնասարա, որում աստ բնակեալ եմք միաբան...»[2220]:

Համեմատաբար առատ են ԺԹ դարին վերաբերող արխիվային վավերագրերը: Դրանց շնորհիվ պարզվում է վանքի միակ եկեղեցու անունը և այլ մանրամասներ: Հայտնի է, որ վանքը գործել է մինչև ԺԹ դարի սկզբները[2221]:

*Կալվածքը*. վանքի ունեցվածքի մասին 1841 թ. մի վավերագրում ասված է. «Եղնասար անապատ գեղեցկաշէն յանուն սուրբ Աստուածածնի կառուցեալ, բայց այժմ է ամայի: Ունի զիող հարիւր եւ տասն օրավար, որոյ արժողութիւնն է երկու հարիւր մանէթ, մի այգի եւս մրգաբեր, բայց այժմ է խոպանացեալ»[2222]:

1853 թ. կազմված մի վկայագրում էլ կարդում ենք. «Անապատս այս եղեալ է ի նախնումն մի ի հարուստ եւ փառաւոր վանօրէից ունելով բաւականութիւն միաբանս, որոց եւ գերեզմանք արդէն գտանին անդր, շրջապատ պարիսպք եւ այլ շինուած ի ներկայումս ոմանք են քայքայեալք եւ ոմանք կիսախախտք, իսկ եկեղեցին կայ յամրողջ դրութեամբ: Անապատս այս ունեցեալ ընդ սեպհական պատկանելիութեան իւրում զշրջակայ տեղիսն, յորս պարունակին վարելահողք, արոտատեղիք եւ անտառք ընդ յետագայ չորիս սահմանացս: Արեւելեան կողմն է գետն Ղարաբուլախ գեղջ. արեւմտեան կողմն է Սպիտակ ջուրն, հարաւային է Ղօնճայ կոչեցեալ տեղին, լեառնակողմն եւ հիւսիսային Օշեփ ասացեալ քարն, ընդ մէջ այսոցիկ սահմանաց բաղկացեալ տեղիք պատկանեցեալ է վերոհիշեալ անապատին ըստ վկայաբանութեան մերձակայ բնակիչ հնտագոյն ստորագրելեաց ի սմին վկայագրի...»[2223]:

1886 թ. դեռևս վանքապատկան էին որոշ տարածությամբ վարելահողեր ու անտառ[2224]:

Ի դարասկզբին վանքն էլ ավելի անխնամ ու անտեր վիճակում էր գտնվում. «Դարիս սկզբից այս վանքը անխնամ է թողնուած եւ այժմ այդտեղ խոզեր են պահւում»[2225]:

1910 թ. կազմված Գանձակի վանական կալվածքների տեղեկագրում նշված է. «Այս խղճուկ անապատը թէեւ անցեալում ունեցել է կալվածք, բայց այժմս չունի ոչ մի արդիւնաբերող կալվածք: Արքունի կառավարութիւնը դատով տարել է այս անապատին պատկանեալ անտառը, որ մօտաւորապէս հաշւում են 800 դեսիատին: Ներկայումս կան երեք հին խարխուլ սենեակներ: Երբեմն-երբեմն լինում են ուխտագնացութիւն»[2026]:

Վավերագրերում և գրականության մեջ պահպանվել են վանքի եկեղեցու անվան մի քանի տարբերակներ: Եպիսկոպոս Բարխուտարյանցը հաղորդում է, թե եկեղեցին կոչվում էր Սբ. Եղիշե առաքյալի անունով[2227], վավերագրերում հիշատակվում են՝ Սբ. Աստվածածին ու Սբ. Սարգիս[2228]:

ԺԹ դարի վերջերին վերաբերող վանքի վիճակի նկարագրությունները համեմատելով (1988 թ.) դրության հետ, կարելի է ասել, որ այդ ընթացքում հուշարձանախումբը համարյա անփոփոխ է մնացել, միայն նկատվում են նոր ժամանակների մի քանի փոքրածավալ ավերումներ՝ ակնհայտորեն գանձախուզության նպատակով:

Եկեղեցին երկթեք ծածկի տակ առնված եռանավ բազիլիկ է, որի կիսաշրջանաձև քաղերը պահում են մեկ զույգ սյուների վրա հենված թաղակիր կամարները: Միակ մուտքն արևմուտքից է: Ունի վեց լուսամուտ: Եկեղեցին կառուցված է համակ սրբատաշ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 12,30 x 10,20 մ:



***ԳԵՏԱՇԵՆ. Եղնասարի վանքի հատակագիծը***

Եկեղեցուց ուղիղ 10 մ հարավ՝ արևելք-արևմուտք ուղղությամբ, ձգված է միաբանական սենյակների շարքը: Թվով հինգ սենյակները և երկու միջանցքները թաղակապ են: Սենյակներից մեկի ճակատին փորագրված արձանագրության համաձայն՝ դրանք կառուցվել են 1712 թ.[2229] անմշակ քարով, կրաշաղախով:

2220. **Մխիթար Անեցի,** Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 50:
2221. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 138:
2222. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1 գ. 3798, թ. 64-65 :
2223. Նույն տեղում, գ. 2742, թ.19:
2224. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 138, թ. 100-101:
2225. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 138:
2226. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ.25:
2227. **Բարխուտարյանց Մ.**, Արցախ, էջ 265:
2228. ՀԱԱ, ֆ. 56 ց. 6, գ.775, թ.25:
2229. «Դիվան...», V, էջ 238: Պրակում հրատարակված է հինգ արձանագրություն: 1989 թ. այցելության ժամանակ դրանք տեղում գտանք անփոփոխ դրությամբ: Վերծանություններն էլ անսխալ են, ուստի նպատակահարմար չենք գտնում դրանց կրկնակի վերահրատարակումը (տես՝ նույն տեղում, էջ 237-238):



***ԳԵՏԱՇԵՆ. Եղնասարի վանքի եկեղեցին հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից, հատվածներ արևմտյան ճակատից***

դախով: Արտաքին չափերն են՝ 30,40 x 5,70 մ:

Եկեղեցուց արևմուտք գտնվում է թաղակապ դարպասի կիսավեր շենքը: Եկեղեցու հարավային պատի մեջ ագուցված են մի խաչքարի երկու մասի կիսված բեկորները: Ըստ ոճական ու գեղարվեստական առանձնահատկությունների՝ խաչքարը կարելի է թվագրել ԺԱ-ԺԲ դարերով:

Եղնասարի վանք. եկեղեցու արևմտյան որմնասյան խոյակից ցած՝ 1 տող.

*ՋՁԸ (1539):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 237:

Եղնասարի վանք. եկեղեցու մուտքի հյուսիսային կողին՝ 8 տող.

*Ի (20) հոպելեա/ն[է] ազ[ատար]/արի Գ (3) թու[ա]/համ(ա)րս մէկ .../տասին ի տարէ/կ վեր տա[ր] (1584). ես ան/արժան Տ(է)ր Ղազ/ար գիրեց(ի):*

Հրատ. **Բարխուտարյանց Մ.**, Արցախ, էջ 265 **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 345, «Դիվան...», V, էջ 238:

Տարընթերցում. ըստ Լալայանի՝ «Ի հոպելիանէ Ազատարարէ Գ թուահամարէ մետասան տարիք վեր տար (1311). ես անարժան տէր Ղազարս գրեցի»:

Ծանոթ. «Դիվանում» նշված է, որ շենքի ճարտարապետական հորինվածքը և վիմագրի գրչաձևը բնորոշ են ԺԶ դարին, իսկ ծածկագիր թվականը կարելի է վերծանել հետևյալ կերպ՝ 1000+13+20+551=1584:

Եղնասարի վանք. եկեղեցու մուտքի հարավային կողին՝ 5 տող.

*Թվ(ին) ՌՃ/ԼԵ (1686). ես ան[արժան] / Ովանէս եր/էց:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 265: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 345: «Դիվան...», էջ 238:

Ծանոթ. Ե. Լալայանի ընթերցումը թերի է, անձնանունը՝ Մովսես:







***ԳԵՑԱՇԵՆ. Եղնասարի վանք. հատված միաբանական շենքերից, սենյակներից մեկի շինարարական արձանագրությունը, քիվագոտու հատված Եղնասարի վանքի եկեղեցու հարավային ճակատում և խաչքարի (ԺԲ դար) վերակազմություն (բեկորները ագուցված են եկեղեցու հարավային ճակատում). Մրգունիս գյուղատեղիի եկեղեցու հատակագիծը***

Եղնասարի վանք. սենյակներից մեկի մուտքից վեր, փորագիր 4 տող և 1 փակագիր.

*Սեն(ե)ակ կերտե(ա)լ հրաշազան, վերնայարկօք եւ զանազան. սակս Տ(ի)ր(ա)մոր / սրբազ(ա)ն եւ զՂազարի Ա(ստուա)ծաբան, / թվ(ին) ՌՃԿԱ (1712):*

*Փակագիր՝ Տ(է)ր Ղազար ծառայ Ա(ստուծո)յ:*

Հրատ. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 346 (թերի): «Դիվան...», V, էջ 238:

Եղնասարի վանք. սենյակներից մեկի ճակատակալ քարին՝ փակագիր.

*Տ(է)ր Մկրտիչ ծառայ Ա(ստուծո)յ:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 238:

**Մուրթունիս (Մրգունիս) գյուղատեղի.** Գետաշենից 2,5 կմ արևմուտք տարածվում է այս անվամբ հայտնի գյուղատեղին՝ միանգամայն կանգուն եկեղեցիով: Գրավոր աղբյուրներում գյուղանվան առաջին հիշատակությանը հանդիպում ենք Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) գրած կոնդակում[2230]: Եկեղեցում պահպանվել են մի շարք արձանագրություններ:

Մրգունիսի եկեղեցի. բարավորին (չափերը՝ 170 x 74 սմ)՝ 13 տող.

*Թվ(ին) ՉԼԴ (1285) / կամաւն Ա(ստուծո)յ եւ հրամանաւ ս(ուր)բ / հայրապետին Տ(է)ր ըՍտեփ/անի, եպիսկոպոսութե(ան) Տ(է)ր Գրի/գորի եւ իշխանութե(ան) Սոմաճին, ես Յով/անէս ...անէոս երեց շինեց/աք զս(ուր)բ եկեղեցիս ի բարեխաւսութի(ւն)*

2230. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:



***ԳԵՏԱՇԵՆ. Մրցունիս գյուղատեղիի եկեղեցին. տեսքը՝ հարավ-արևմուտքից, արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք***

*հոգ|ոյ եւ տուաք... | ... | ... | ... | յեկեղեցիս տվի զատիկ աւր ժամ ինձ առնեն | ով ... խափանէ զիմ մեղացն տ(է)ր է:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 267: «Դիվան...», V, էջ 245-246:

Ծանոթ. Մ. Բարխուտարյանցի ընթերցումը նույնպես թերի է:

Մրցունիսի եկեղեցի. արևելյան ճակատում ագուցված խաչքարի բեկորին (չափերը՝ 40 x 48 սմ)՝ 3 տող.

*...(որ)ք ե|րկ||իր(պագէք), թիւ...*

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Մրցունիսի եկեղեցի. հարավային ճակատում ագուցված քարին՝ 5 տող.

*Ես ...| զատիկ ի յիմ | հալալ ընչից միաբա|նեցա ս(ուր)բ եկեղեցիս եւ | տվին ի տարոջ :Ա: (1) աւր | ...:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 246:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Մրցունիսի եկեղեցի. արևմտյան ճակատում ագուցված խաչքարի քիվին և ստորին մասում՝ 3 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բար(եխ)ա(ւ)ս Մխիթ(ա)ր(ի)ն եւ կողա(կց)ին | եւ Յուհանէսին մորն | Յուրացխանին, թվին ՌՁԸ (1639):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 246:

## ԴԱՄԺԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 620-640 մ բարձրության վրա:

Թրքաբնակ աննշան գյուղակ է: 1886 թ ունեցել է 4 տուն (15 ար., 22 իգ.)[2231], 1908-ին՝ 85 բնակիչ[2232]:

## ԴԱՆԱՅԵՐ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս-արևմուտք, Արթինաջուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 910-970 մ բարձրության վրա:

Գոյացել է հայաքափ գյուղատեղիում ԺԹ դարավերջին:

Թրքաբնակ գյուղը 1886 թ. ունեցել է 10 տուն (61 ար., 69 իգ.)[2233], 1908-ին՝ 115 բնակիչ[2234]:

---

2231. ”Свод...”, с. 78-79.
2232. “Кавказский календарь на 1910 г.”, с. 235. Ի դեպ, ըստ վիճակագրական այս տվյալի՝ բնակիչներն իբրև թե հայեր են եղել (վկայությունն այլ աղբյուրներով չի հաստատվում):
2233. ”Свод...”, с. 78-79.
2234. “Кавказский календарь на 1910 г.”, с. 235. Նույնպես բնակչության ազգային կազմը ցույց է տրված՝ հայեր, որը ևս այլ աղբյուրներով չի հաստատվում:







***ԳԵՏԱՇԵՆ. Մրցունիս գյուղատեղիի եկեղեցին. հին եկեղեցու բարավորը (1285 թ.) և խաչքարեր՝ ագուցված եկեղեցու որմերում (ԺԳ-ԺԷ դարեր)***

## ԴՈՋՈՒԼԱՐ (ԲԻՐԳՅՈԶ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևելք՝ Գետաշենից 10 կմ հյուսիս-արևելք՝ Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 670-690 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** 1864 թ. հետազոտող Վ. Մեվեսը, զրուցելով մի քոչվոր թուրքի հետ, պարզել էր, որ Բիրգյոզի թափառական համայնքը ցրված էր զանազան վայրերում, և իբրև գյուղ՝ փաստացի գոյություն չուներ. «–Ինչպե՞ս թե գյուղը հազվադեպ բան է, չէ որ կամերալ նկարագրությունները կազմված են ըստ գյուղերի: Իմ զրուցակիցը ժպտաց: –Ինչու՞ եք դուք ժպտում»: –Հենց այնպես: Այդ պահին, երբ իմ առաջնորդն ասաց –հենց այնպես, մոտեցավ մի թաթար և ինչ-որ բան սկսեց խոսել թաթարերեն: Երբ թաթարն ավարտեց խոսելն ու գնաց ես հարցրի NN-ին. –Որտեղացի՞ էր այդ թաթարը: –Բիրգյոզցի: –Իսկ հեռու՞ է Բիրգյոզ գյուղը: –Բիրգյոզ գյուղ չկա: –Ուրեմն ինչպե՞ս եք ասում, թե այդ թաթարը բիրգյոզցի է: Այստեղ իմ NN-ը

միանգամայն խառնվեց և հայճեպ պատասխանեց. –Նա գրանցված է Բիրգյոզ գյուղում: –Եթե գրանցված է Բիրգյոզ գյուղում, նշանակում է այդպիսի գյուղ կա, ինչու՞ եք դուք ինձ հավատացնում, թե այդպիսի գյուղ չկա: Ես ձեզանից այդպիսի ծածկամտություն չէի սպասում: NN-ը շփոթվեց և կարծես ցանկանալով ապացուցել իր ասածի ճշմարտացիությունը, մոռացավ որոշ հարցեր շրջանցելու իր ծրագրի մասին և ասաց. –Դե միթե գոյություն ունեն բոլոր այն գյուղերը, որոնք նշված են թղթի վրա: Գյուղերի անունները թղթերում նշվում են միայն նրա համար, որ ձևն է այդպես պահանջում, բայց իրականում շատ գյուղեր գոյություն չունեն, ինչպես օրինակ Բիրգյոզ, Կուշչի, Աշաղա-Այփլի, Յուխարի-Այփլի և բազմաթիվ ուրիշներ: Այդ գյուղերի բնակիչներն ապրում են տարբեր տեղամասերում, տարբեր գավառներում, տարբեր նահանգներում, մասամբ նաև արտասահմանում՝ Պարսկաստանում...»[2235]:

Թրքաբնակ գյուղի բնակչության թվաքանակն արձանագրած վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2236] | 67 | 208 | 195 | 403 |
| 1908[2237] | | | | 156 |
| 1914[2238] | | | | 178 |

## ԵՆԻ-ԱԼԻԲԱՅՐԱՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 3,5 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 600-620 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1980 թ. ունեցել է 1252 բնակիչ[2239]:

2235. **Мевес В.**, նշվ. հոդվ., էջ 420 (բնագրում՝ "–Как деревня вещь редкая? ведь камеральное описание и составлено по деревням. Мой собеседник улыбнулся. –Чего вы улыбаетесь? –Так, ничего... В то время, когда мой спутник сказал "так, ничего", подошел какой-то татарин и начал говорить что-то по татарски. Когда татарин окончил разговор и ушел, я спросил NN откуда этот татарин. –Из Биргеза. –А далеко-ли деревня Биргез? –Деревня Биргеза нет! –А как же вы говорите, что этот татарин из Биргеза? Тут совершенно смешался мой NN и в торопях сказал: –Он записан в д. Биргез. –Если записан в д. Биргез, то значит; есть такая деревня; зачем же вы уверяете меня, что такой деревня нет? Я не ожидал от вас такой... такой... неоткровенности... NN смешался и, видимо, желая доказать свою правоту, забыв о своем плане обходить некоторые вопросы, сказал: –Да разве существуют все те деревни, которыя значатся по бумагам? Название деревень значится по бумагам потому, что форма этого требует; но в натуре многих деревень не существует, как, например следующия деревни: Биргез, Кущи, Ашага-Айплы, Юхари-Айпли и множество других. Жители показанные в этих деревнях, живут в разных участках, в разных уездах, в разных губерниях, а частью и за границею, в Персии...").
2236. "Свод...", с. 80-81.
2237. "Кавказский календарь на 1910 г.", с. 205.
2238. "Кавказский календарь на 1915 г.", с. 99.
2239. «ԱՍՀ», հ. 5, էջ 110:

## ՁԱՁԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 250-258 մ բարձրության վրա:

Խաշնարած թուրքերի զազալու ցեղային հասարակության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2240] | 12 | 23 | 19 | 42 |
| 1908[2241] | | | | 200 |
| 1914[2242] | | | | 101 |
| 1979[2243] | | | | 420 |

Գյուղի մոտ էր գտնվում վաճառական Նիկողայոս Առաքելյանի կալվածքը[2244]:

## ՁԻՅԱԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 245-270 մ բարձրությամբ միապաղաղ հարթության վրա:

Խաշնարած թուրքերի զիյադլի ցեղախմբի թվաքանակն արձանագրած վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2245] | 6 | 15 | 17 | 32 |
| 1886[2246] | 109 | 334 | 267 | 601 |
| 1907[2247] | | | | 948 |
| 1914[2248] | | | | 780 |
| 1979[2249] | | | | 1490 |

## ԹԱԹԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 265-280 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: 1886 թ. ունեցել է 21 տուն (94 շունչ)[2250], 1908-ին՝ 839[2251], 1914-ին՝ 43 բնակիչ[2252]:

## ԹՈՂԱՆԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ՝ Կուրակ գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 1200-1300 մ բարձրության վրա:

Գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1985 թ. ունեցել է 878 բնակիչ[2253]:

2240. "Акты...", т. II, с. 596.
2241. "Кавказский календарь на 1910 г.", с. 254.
2242. "Кавказский календарь на 1915 г.", с. 125.
2243. «ԱՍՀ», հ. 4, էջ 420:
2244. "Тифлисский листок", 1906, N 229, с. 3.
2245. "Акты...", т. II, с. 596.
2246. "Свод...", с. 80-81.
2247. "Кавказский календарь на 1910 г.", с. 258.
2248. "Кавказский календарь на 1915 г.", с. 127.
2249. «ԱՍՀ», հ. 4, էջ 331:
2250. "Свод...", с. 86-87.
2251. "Кавказский календарь на 1910 г.", с. 376.
2252. "Кавказский календарь на 1915 г.", с. 187.
2253. «ԱՍՀ», հ. 9, էջ 301:

Թողանալի գյուղից 2 կմ հարավ-արևելք` ծովի մակերևույթից 1553 մ բարձրության վրա, անտառապատ լեռների գրկում է ծփում Ալիարակ լիճը (թուրք. Գյոյգյոլ): Լճի առաջացումը կապվում է 1139 թ. տեղի ունեցած երկրաշարժի հետ. «Փլաւ և լեառն Ալիարակ ի շարժմանէն և արգել զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա. և եղև ծովակ, որ է մինչև ցայսօր. լիճին ի նմա ձկունք ազնիւք»[2254]: Համաձայն 1908 թ. կատարված երկրաբանական հետազոտությունների` լիճն ունեցել է 76 մետր խորություն[2255]:

## ԹՈՓԱԼՀԱՍԱՆԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ-արևմուտք` Գանձակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 700-790 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Թոփալհասանլին հիմնվել է 1880-ական թվականների վերջերին: Նորաստեղծ գյուղի դիրքն ուներ հանգուցային նշանակություն, քանի որ գտնվում էր հայաբնակ Բրաջուր, Միրզիկ և Ոսկանապատ, մասամբ նաև` Մուռուտ գյուղերը Գանձակ քաղաքի հետ կապող գլխավոր ճանապարհի վրա` համարյա մեջտեղում. «Գանձակ քաղաքից տասը վերստի վրա եւ Ելենենդորֆի քթի տակը մօտ տասը տարի սրանից առաջ կազմակերպվել է մի աւազակային որջ, որը կոչվում է Թոփալ-Հասանլու, զաւառի զանազան անկիւններից հաւաքված այդ կասկածելի եւ աւազակաբարոյ մարդիկ սև ու սարսափի մէջ են պահում հարեւան ազգաբնակութիւնը...: Թօփալ-Հասանլուն մի կատարեալ չարիք է, մի Աստուծու պատիժ է հարեւանների համար, կարծես այդ խառնիճաղանջ հաւաքածուն իր անհանգիստ վարք ու բարքով, իր կեանքի նշանաբան է ընտրել գողութիւն եւ սպանութիւն, ուրիշ աշխատանքի անընդունակ է նա...»[2256]:

Թոփալհասանլցիների գլխավոր ու սիրած զբաղմունքը եղել է անցորդներին ու ուղևորներին սպանելու և կողոպտելու նպատակով ճանապարհներին դարանակալելը, բայց որ հատկանշական է, նրանք դրանով զբաղվել են նաև խաղաղ ժամանակ. «...Թօփալհասանլուն Ելենենդորֆից երեւի երեք վերստի վրա` ճանապարհի մօտ գտնվող այն աւազակային որջն է, որ խաղաղ ժամանակն էլ սարսափի մէջ է պահում թէ շրջակայ հայ գիւղերը, թէ գերմանացիներին եւ թէ գանձակեցի հայերին, տալով բաւական թւով թեկնածուներ բանտերի ու Սախալինի համար»[2257]:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** այդ տարիներին «գյուղի» թուրքերը պարզապես փայլել են իրենց մասնագիտական կարողություններով, և գրեթե ոչ մի օր չի անցել առանց մի գույժի: Սայլապաններն ու ուղևորները սպանվում էին ճանապարհներին, փայտահատները` անտառում, հովիվները` սարում: Կողոպտում էին այն ամենը, ինչը ձեռքներն էր ընկնում. «...Թոփալ-հասանլուեցիները աւելի մարդիկ կոտորած կը լինեն, իրանց համար գիւղ հիմնելուց յետոյ, քան թէ իրանց գիւղի բնակիչների թիւն է այժմ: Բաղմանլարը եւ Թօփալ-Հասանլուն երկու արատաւոր քոյրեր են...»[2258]: Ի դեպ, թոփալհասանլցիները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև 1905 թ. նոյեմբերի 18-ին Գանձակի շուկայի հայոց վաճառանոցները կողոպտելու ու ավերելու գործում[2259], իսկ հետո էլ «հաջողությունից խրախուսված»` սկսել են ասպատակել նաև քաղաքամերձ հայաբնակ գյուղերը:

Բայց բնության մեջ ցանկացած չարիք վաղ թե ուշ ենթակա է պատժի, և 1905 թ. դեկտեմբերի 22-ը Թոփալհասանլիի համար դարձավ մեկուկես տասնամյակ շարունակ կատարած չարագործությունների հատուցման օրը: Համբերության բաժակը լցվել էր, և շրջաբնակ հայ գյուղացիները ըստ արժանվույն դաս տվեցին թոփալհասանլցիներին. «...Սովորական գողեր, ճանապարհի կտրողներ ու անցորդներին կողոպտողներ և մինչև անգամ աւազակախմբեր արտադրում էր այդ գիւղը անթիւ, անհաշիւ: ...Ահա դրա հետ պէտք էր հաշիւ վերջացնել շրջանը խաղաղացնելու համար, մտածեցին հայերը և դեկտեմբերի 22-ին գործի անցան: ...թէև երկար, բայց անօգուտ դիմադրութիւնից յետոյ գաւառը «զարի» բերող աւազակները փախան թողնելով գիւղի փողոցներում 20-ի չափ դիակ: Դրա հետ միաժամանակ հայերը մի ջարդ տուին Թօփալ-Հասանլուին քաղաքից օգնության եկող թուրքերին Աղ-Քեօրփի կոչող ձորում, փախցնելով ու ցրիւ տալով նրանց` առաջօրէն բռնած լինելով այդ ձորի անցքը...»[2260]:

Դեպքերին ժամանակակիցը ավելին չի հաղորդում, մինչդեռ ավելի ուշ հրապարակված նյութերը հաղորդում են էական ու հետաքրքրաշարժ մանրամասներ. «Դեկտեմբերի 22ն է (1905թ.): 160 հոգինոց իր խումբով ռազմիկ վարժապետը[2261] լուսաբացին անշշուկ, յանկարծակի կը քալէ Թօփալ-Հասանլուի վրա, երեք կողմէ կը շրջապատէ գիւղը և կառնէ զայն իր երկաթէ օղակին մէջ: Եւ կը տեղան մերին-

2254. **Կիրակոս Գանձակեցի**, էջ117: Հմմտ. նաև նշվ. աշխ., էջ 200:
2255. **Гофман Э.**, Геологический очерк горы Кяпаз, “Известия Кавказского музея”, том IX, вып. 2, Тифлис, 1915, с. 125-129.
2256. «Մշակ», 1900, N 92, էջ 1:
2257. «Մշակ», 1906, N 15, էջ 1:
2258. «Մշակ», 1906, N 78, էջ 2:
2259. **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 350:
2260. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 338-339:
2261. Խոսքը ծնունդով Արևմտահայաստանի Բուլանըխ գավառի Յոնջալու գյուղացի, 1891-ից ՀՅԴ անդամ, հայդուկ, ուսուցիչ Մարտիրոս վարժապետի մասին է:

ներում զալպերը գիւղին վրա. թուրքերն ալ իրենց դիրքերէն կը պատասխանեն, բայց արդէն սահբեկուած էին պաշարողներու թիւէն և խմբապետ Մարտիրոսի շեփորին ձայնէն: Կը կրակէին ցրիւ, անկարգ, առանց կարենալ վնասելու հայ շարքերուն, որոնք քանի մը համազարկերէ յետոյ ներս կը խուժեն ու կը սկսին անխնայ ջարդ փախչող խուժանին մէջ (թշնամին մեր յարձակումը նախատեսելով, գիւղէն հեռացուցած էր կիներն ու երեխաները): Կը պարզւին վերստին զարհուրանքի տեսարաններ... Համբօն չի գոհանար սպանելով. խուժումի առաջին իսկ վայրկեաններուն, իր մէկ ընկերոջ հետ գաղտագողի կանցնի գիւղին խուլ անկիւնները, կը վառէ դէզ մը և տուն մը, կը բռնկեցնէ հրդէհը ամբողջ գիւղին մէջ: Ամենքը փախան, մնաց պառաւ կին մը, զոր մերիները խնայեցին ու ազատ ձգեցին, պատւիրելով, որ երթայ պատմէ դէպքը ամենուրեք...: Թոփալ-Հասանլուն վերածւեցաւ աւերակոյտի: Մեծ աւար անցաւ հայոց ձեռքը. մօտ հազար ոչխար, 160 գլուխ տաւար, 30 ձի ու ջորի և այլ տնային գոյքեր, մեծ մասամբ գողցուած Գանձակի հայերէն: Մեզմէ ոչ մէկ զոհ...»[2262]:

Ամիսներ անց, երբ կառավարության առջև ծառացել էր փախստական թուրքերին հետ վերադարձնելու հարցը, հասկանալի պատճառներով այդ ծրագրին դեմ են արտահայտվել շրջաբնակ հայերն ու գերմանացիները. «Ձեզ յայտնի է, որ Թոփալհասանլու թուրք գիւղը աւերված է և նրա բնակիչները գնացել են զանազան տեղեր, իսկ մեծամասնութիւնը հաստատվել է Գանձակի Բաղմանլար թաղումը: Այժմ հարց է ծագել՝ թէ պէտք է արդեօք թողնել, որ թոփալհասանլուեցիները վերադառնան և վերաբնակվեն իրանց նախկին տեղերում, թէ նրանք համարվեն առ միշտ հեռացած իրանց գիւղից: Թոփալհասանլուեցիների վերաբնակման դէմ են և գերմանական կօլօնիստները, որովհետեւ թոփալհասանլուեցիները մշտապես վնասներ են հասցրել գերմանացիներին իրանց յարձակումներով և կողոպուտներով: Հարցը պէտք է քննվի վարչական տեղական ատեաններում»[2263]:

Հակառակ հայերի ու գերմանացիների ցանկության՝ թոփալհասանլցիները կառավարությունից կարողանում են ստանալ հետ վերադառնալու թույլտվություն և վերահաստատվելով գյուղում ու բազմանալով՝ արդեն 1914 թ. հունվարի 1-ին հասնում են 430 շնչի[2264]:

Անցան տարիներ, տասնամյակներ, ու շատ բան փոխվեց. 1941-ին աքսորվեցին գերմանացիները, 1988-ին բռնագաղթի ենթարկվեցին հայերը, և տարածքն ամբողջությամբ թրքացավ: Ինչ վերաբերում է Թոփալհասանլուին, ապա սերնդեսերունդ նրա ավազակաբարո բնակիչների թիվը բազմապատկվելով արդեն 1985-ին հասել էր 1406 շնչի: Ըստ ադրբեջանական հանրագիտարանի տվյալների՝ նույն թվականին գյուղն ուներ միջնակարգ դպրոց, կուլտուրայի տուն, գրադարան, բուժկետ, իսկ բնակչությունն իբր զբաղված էր հացահատիկի մշակմամբ, պտղաբուծությամբ և խաղողագործությամբ[2264*]:

Ինչպիսի՞ նողկալի անցյալ՝ Ի դարասկզբին և որպիսի՞ «լուսավոր» ներկա՝ նույն դարավերջին: Աշխարհիս ազգերը քաղաքակրթվեցին բազում դարերի, իսկ ադրբեջանական թուրքը՝ հաշված տասնամյակների ընթացքում: «Փառք ու պատիվ» իրենց…

## ԹՈՒԼԱԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1530-1700 մ բարձրությամբ անտառապատ լեռան հարավահայաց լանջին:

Թրքաբնակ գյուղը գոյացել է հայաթափ հին գյուղատեղիում՝ Ի դարի սկզբին: 1914 թ. ունեցել է 207[2265], իսկ 1985-ին՝ 240 բնակիչ[2266]:

Ի դեպ, տեղի թուրք բնակիչները ցայժմ Մարիամագետ (Մեյրամչայ) են անվանում գյուղի հարավային կողմով հոսող Գանձակ գետի աջ վտակներից մեկը:

## ԼԱՀԻՃ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս-արևմուտք՝ Գետիշինագետի ձախ հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 750-800 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղակը գոյացել է խորհրդային տարիներին: 1981 թ. ուներ 357 բնակիչ[2267]:

## ԼՅԱՔ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 27 կմ, Գանձակից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ Գանձակ գետի ձախ ափից 2 կմ հեռու, ծովի մակերևույթից 190-200 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** ներկայիս գյուղատեղը մինչ 1870-ական թվականները խաշնարածների համար ծառայել է իբրև ձմեռոց, այնուհետև աստիճանաբար նստակեցության անցնելով՝ գոյացրել են ներկայիս գյուղը:

ԺԹ–Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

2262. **Վարանդեան Մ.**, նշվ. աշխ., էջ 351:

2263. «Մշակ», 1906, N 57, 15 մարտի, էջ 1:

2264. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 189. Ի դեպ, արժանահավատ չէ գյուղի 1908 թ. 825 բնակիչ ունեցած լինելու տեղեկությունը (“Кавказский календарь на 1910 г.”, с. 381):

2264*. «ԱՍՀ», հ. 9, էջ 314:

2265. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 190.

2266. «ԱՍՀ», հ. 9, էջ 389:

2267. «ԱՍՀ», հ. 6, էջ 172:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2268] | 30 | 54 | 50 | 104 |
| 1886[2269] | 61 | 198 | 155 | 453 |
| 1908[2270] | | | | 340 |
| 1914[2271] | | | | 208 |
| 1981[2272] | | | | 633 |

**Ղարասախկալ գյուղատեղի.** գտնվում էր Կուր գետի աջ ափին՝ Լյաքից 13 կմ հյուսիս: Այժմ հայտնվել է Մինգեչաուրի ջրամբարի տակ:

Ըստ տեղացի թուրքերի վկայության՝ գյուղից ներքև գտնված ընդարձակ ավերակներն ավանդաբար համարվում էին հայկական քաղաքատեղի:

ԺԹ դարավերջին Ղարասախկալ Երին համարվել է ազգությամբ թուրք Բեյուկ-բեկ Աղասի բեկի սեփականությունը[2273]:

1886 թ. Ղարասախկալը բաղկացած է եղել 118 ընտանիքից (369 ար., 313 իգ.)[2274]: 1914 թ. ուներ 767 բնակիչ[2275]:

## ԽԱՆԼԱՐ (ՀԵԼԵՆԵՆԴՈՐՖ)

**Տեղադրություն.** գտնվում է Գանձակից 9 կմ հարավ՝ Գանձակ գետի աջ կողմում, ծովի մակերևույթից 650-700 մ բարձրության վրա:

**Հիմնադրություն.** ներկայիս Խանլար քաղաքի տեղում գոյություն ունեցած բնակավայրի հիմնադրման ժամանակն անհայտ է, սակայն 1804 թ. այստեղ արդեն հանգրվանել էին խաշնարած թուրքեր (25 տուն, 104 շունչ)[2276]: Մինչ գերմանացիների հաստատվելը՝ կառավարությունը ծրագրել էր Խանախլար անվամբ հայտնի տեղամասը գյուղ հիմնելու համար հատկացնել հայերին[2277]: Այդ տարածքը շուտով, սակայն, հատկացվում է գերմանացի գաղթականներին, որոնք 1817-1819 թթ. ընթացքում ապագա գաղութի հիմքն են դնում. «...իւր անունը ստացել է ի պատիւ Մեկլէնբուրգ-Շվէրինգի դքսուհի Հելենէ Պաւլովնայի»[2278]:

Բնակավայրի հիմնադրման տարեթվի շուրջ առկա են տարակարծություններ, բայց առավել համոզիչ է թվում 1819 թ.[2279]:

Հարկ է նշել, որ գերմանացի վերաբնակիչներին գանձակեցի հայերը ընդունել են ամենայն բարեհաճությամբ: Այդ մասին 1819 թ. փետրվարի 3-ին Կովկասի փոխարքա Ա. Պ. Երմոլովին հղած նամակում Վրաստանի նահանգապետ, գեներալ-մայոր Խավենը գրել է. «...ելիզավետպոլցի հայերը վյուրտեմբերգցի գերման գաղթականներին ընդունել են բարեկամաբար, նրանցից ոմանք անվճար մատակարարում են սննդամթերք և ցուցաբերում հնարավոր այլ ծառայություններ: Ես իմ գոհունակությունն եմ հայտնում Ելիսավետպոլի հայ հասարակությանը... սույն գրությամբ իմ երախտագիտությունն եմ հայտնում այդպիսի գովելի արարքի համար»[2280]:

**Կառուցապատում.** Հելենենդորֆն ի սկզբանե կառուցապատվել է նախագծված կանոնավոր հատակագծով: 1886 թ. ականատեսը նշել է, որ Հելենենդորֆը «...կանոնաւոր փողոցներով, տներով և այգիներով զարդարուած» բարետես բնակավայր էր[2281]:

1890-ական թվականների վերջերին գյուղն ունեցել է հետևյալ նկարագիրը. «Հին կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներ ձգւում են գրեթէ մի վերստ երկարութեամբ, որոնց երկու կողմը տնկուած կաղամախի, բարտի և սօսու ծառերը մի առանձին գեղեցկութիւն են տալիս գաղութին: Գրեթէ կենդրոնում բարձրանում է գոթական ճաշակով սրբատաշ կարմիր քարից շինած եկեղեցին, որի մի կողմը գտնւում է պետական երկդասեան, երկսեռ դպրոցը, իսկ միւս կողմում մի գեղեցիկ, երկյարկանի տուն, փոքրիկ պարտիզով...: ...Տները մի, երկու և մինչև անգամ եռյարկանի են, իրենց առաջը ունենալով ընդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ»[2282]:

**Բնակչություն: *Գերմանացիներ.*** 1817 թ. Վյուրտենբերգից հեռացած և Հելենդորֆում հաստատված 1440 ընտանիքները բաղկացած են եղել ինչպես կրոնական խոր համոզմունքների տեր անձանցից, այնպես էլ բախտախնդիրներից[2283]:

Ժամանակի ընթացքում, գերմանացիներից զատ, բնակավայրում բնակություն են հաստատում նաև հայեր և այլ ազգություններ: 1898 թ., օրինակ, բացի 1806 շունչ գերմանացիներից, Հելենենդորֆում բնակվում էին նաև 30 տուն հայ, 10 տուն թուրք և 5 տուն ռուս[2284]:

2268. "Акты...", т. II, с. 596.
2269. "Свод...", с. 86-87.
2270. "Кавказский календарь на 1910 г.", с. 311.
2271. "Кавказский календарь на 1915 г.", с. 153.
2272. «ԱԱՀ», հ. 6, էջ 211:
2273. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 38-39:
2274. "Свод...", с. 82-83.
2275. "Кавказский календарь на 1915 г.", с. 136.
2276. "Акты...", т. II, с. 596.
2277. «Նոր-Դար», 1891, N 167, էջ 3:
2278. «Մեղու Հայաստանի», 1874, N 19, էջ 3:
2279. Այսպես, «Մայիսի 12-ին Եղէնենդորֆ գերմանացի բնակիչները տօնեցին մեծ շքով իրենց այս գաղթավայրի հաստատութեան 75-ամեակը, որ սկիզբ է առել 1819 թուականին...» («Նոր-Դար», 1894, N 84, էջ 1) կամ «...Գերմանացւոց փոքրիկ գաղթականութիւնը Եղէնէնդորֆ անուամբ հիմնարկուած 1825 թ. նշանաւոր է դա իւր ժողովրդոց աշխատասիրութեամբ...» («Նոր-Դար», 1890, N 119, էջ 2):
2280. ՀԱԱ, ֆ. 57. ց. 2, գ. 4, թ. 1 (բնագրում՝ "...Елисаветпольские армяне приняв Виттембергских колонистов дружелюбным образом, некоторые из них снабжают сих новых поселенцев без получения платы съестными припасами и оказывают другие возможные пособия. Я за удовольствие себе поставляю объявить Елисаветпольскому Армянскому обществу ...сию бумагу мою благодарность за таковой похвальный поступок..."):
2281. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2282. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 354:
2283. "Сборник материалов для описания местностей и племен Кавказа" (այսուհետև՝ СМОМПК), вып. 29, Тифлис, 1901, с. 1.
2284. Նույն տեղում, էջ 10:

| տարեթիվ | տուն | արական | իգական | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1894[2285] | 200 | | | |
| 1898[2286] | | | | 1806 |
| 1908[2287] | | | | 2234 |

***Հայեր.*** Հելենենդորֆում հայերը բնակություն են հաստատել 1860-ական թվականներին, համենայն դեպս 1902 թ. մի վավերագրում, իրենք՝ հելենենդորֆցի հայերը, նշել էին. «...աւելի քան երեսուն և հինգ ամն են, զի գաղթեալ կամք մեք ի Գանձակ քաղաքէ, ի շրջակայ հեռաւոր գիւղօրէից նորին և ի զանազան տեղեաց և կալեալ աստ տեղի հաստատուն բնակութեան...»[2288]:

1891 թ. «Ելենենդորֆում մշտական բնակութիւն ունին 30 տուն հայեր, որոնց թիւը ամառը տասնապատկւում է, որովհետև գիւղը հարուստ գանձակեցիների սիրած ամարանոցն է...»[2289]:

1898 թ. Էջմիածնի հոգևոր վարչությունը համաձայնել էր Հելենենդորֆի հայերին բնակություն հաստատելու համար վարձով տրամադրել Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցուն պատկանող «Արաբլու» կալվածի մի մասը (33 դեսյատին)[2290], սակայն գործարքը ձգձգվել էր և չէր իրականացել[2291]:

Տարիներ անց՝ 1906 թ., հելենդորֆցի հայերը նույն խնդրանքով կրկին դիմել էին հոգևոր իշխանություններին, որոնք բավարարել էին նրանց խնդիրքն ու հատկացրել 15 դեսյատին հողահատված տարին 500 ռուբ. վարձով[2292]:

ԺԹ դարավերջին և Ի դարի սկզբներին հելենենդորֆաբնակ հայերի թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առկա տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1893[2293] | 60 | | | |
| 1897[2294] | 65 | | | |
| 1906[2295] | | 219 | 140 | 359 |
| 1907[2296] | | | | 255 |
| 1910[2297] | | 71 | 38 | 109 |
| 1925[2298] | 90 | | | |

**Դպրոցներ:** ***Հելենենդորֆի հայկական դպրոց.*** այս դպրոցի բացման տարեթիվը ստույգ հայտնի չէ: Սակայն, հայտնի է, որ մատաղ սերնդի կրթության խնդրով մտահոգ հելենդորֆաբնակ հայերը 1890 թ. սեպտեմբերից ուսուցիչ էին հրավիրել Ղազախի բնակիչ Ղուկաս Տեր Դավթյանցին (ավարտել էր Ներսիսյան դպրոցը)[2299]:

Դպրոցը գործել է 1893 թ.[2300], 1894 թ. ունեցել է 1 ուսուցիչ և 30 աշակերտ[2301]:

**Գերմանական դպրոց.** հայտնի է, որ արդեն 1886 թ. գերմանացիներն ունեին 2 դպրոց՝ արական և օրիորդաց[2302]: 1890 թ. այդ դպրոցներն ունեցել են 250 աշակերտ[2303]:

**Եկեղեցիներ: Հելենենդորֆի հայկական եկեղեցի.** Հելենենդորֆում հայոց եկեղեցի կառուցելու հարցը շոշափվել է 1891 թ.[2304], բայց չի իրագործվել դարձել այն պարզ պատճառով, որ հողն արքունի (պետական) էր. «...որովհետև բնակավայր գաղութի գերման ժողովրդոց է պետական հող, տուեալ միայն նոցա վասն շահեցողութեան և չիք անդ ազատ հողաբաժին, և թէ նոքա չունին իրաւունս վաճառելոյ զմասն ի հողոյ և կամ զկալուած...»[2305]:

Հայտնի է, որ 1893 թ. մի սենյակ էին վարձել՝ իբրև աղոթատուն[2306], սակայն այն ուներ անմխիթար տեսք. «Հայերը եկեղեցու փոխանակ մի աղօթատուն միայն ունին և այն էլ մի կեղտոտ խանութում զետեղուած...»[2307]:

Հայտնի է, որ 1899 թ. «...հոգևոր պէտք հայ ժողովրդեան Ելենդորֆ կոլոնիայի կատարեն ի սբ Ա(ստուա)ծածնայ եկեղեցւոջ Նորաշէն թաղի քաղաքիս, իսկ ժամակարգութիւն՝ ի ժամանակաւոր աղօթատան նոյն Ելենդորֆի կոլոնիայի»[2308]:

1902 թ. բավարարվել էր Հելենենդորֆի հայ համայնքի խնդրանքը, և կաթողիկոսի կոնդակի համաձայն՝ օծվել էր աղոթատան սեղանի վեմ քարը[2309]:

*Քահանա.* Անհովիվ կացությունը (1895-ից առնվազն 1898 թ.) գաղութի հայերին հուսահատեցրել էր: Ստեղծված իրավիճակը նրանք մեկնաբանել էին հետևյալ կերպ. «...գիշեր-ցերեկ զուրկ լինելով մեր լույս հաւատոյ սուրբ եկեղեցու ժամերգութեան քաղցր, գրաւիչ և ոգևորիչ ազդեցութիւնից, շրջապատված ենք կոլօնիայի գերման ժողովրդով, որոնք բացարձակ տեսնելով մեր հոգևոր իշխանութեան անտարբերութիւնը դէպի մեր այս երեք տարվան չարչարանքը սեպհական հոգևոր հովիւ

2285. «Արձագանք», 1894, N 58, էջ 2:
2286. СМОМПК, с. 10.
2287. "Кавказский календарь на 1910 г.", с. 251.
2288. ՀԱԱ, ֆ.56, ց. 6, գ. 437, թ. 42:
2289. «Նոր-Դար», 1891, N 167, էջ 3:
2290. «Մուրճ», 1898, N 4, էջ 565:
2291. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 15, թ. 1: Ի դեպ, համաձայն մեկ այլ տեղեկության հելենդորֆաբանք հայերը հրաժարվել էին Արաբլուում բնակություն հաստատելու մտքից անբավարար պայմանների պատճառով (ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 337, թ. 15):
2292. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 15, թ. 4, 7-8, 11:
2293. «Նոր-Դար», 1893, N 39, էջ 1:
2294. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 10, թ. 1:
2295. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 24:
2296. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2297. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 55-56:
2298. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, թ. 8:
2299. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 5, թ. 61:
2300. «Արձագանք», 1894, N 58, էջ 2:
2301. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 34:
2302. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2303. «Արձագանք», 1894, N 58, էջ 2:
2304. «Նոր-Դար», 1891, N 167, էջ 3:
2305. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 435, թ. 23:
2306. «Նոր-Դար», 1893, N 49, էջ 1: Նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 354:
2307. «Արձագանք», 1894, N 58, էջ 2:
2308. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 10, թ. 18:
2309. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 435, թ. 72: Նաև՝ «Արարատ», 1902, էջ 984:

ունենալու մասին, ամեն միջոց ու ջանք գործ են դնում գրաւելու մեզանից թոյլերին իրանց բողոքական եկեղեցու ծոցը...»[2310]:

1898 թ. քահանա է առաջադրվել տիրացու *Ղազարոս Տեր Հովսեփյան Ենգիբարյանցը*, որի ձեռնադրությունը հոգևոր իշխանությունների կողմից ձգձգվել է (ի դեպ, հայ համայնքը ժամանակավոր հովիվ էր նշանակել Խաչկապի Սբ. Թարգմանչաց վանքի առաջնորդ Թեոդորոս Շիրակունին, որն իր պարտականություններին չէր կարողացել վերահասու լինել Խաչկապ-Հելենդորֆ ճանապարհի հեռավորության պատճառով)[2311]:

Մեկ տարի անց հայ համայնքը հովվելու համար ժամանակավոր քահանա է առաջադրվել Խաչակապի ծխատեր քահանան՝ *Տեր Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը*[2312]:

Ի վերջո, 1900 թ. հոգևոր իշխանությունները բավարարում են հելենդորֆցիների խնդրանքը և քահանա են ձեռնադրում Ղազարոս Տեր-Հովսեփյան Ենգիբարյանցին, որը քահանայագործել է առնվազն մինչև 1905 թ.: Իր անբասիր ծառայության համար Տեր Ղազարոսը 1904 թ. պարգևատրվել է քահանայական արծաթե ոսկեզօծ լանջախաչով և արժանացել Մկրտիչ կաթողիկոսի կոնդակին[2313]:

**Գերմանական եկեղեցի.** 1886 թ. ականատեսը գրել է. «...Գիւղի մէջտեղում կառուցուած է սրբատաշ քարով հոյակապ եկեղեցի, վայելուչ կաթուղիկէով և զանգակատնով...»[2314]: Կառուցված էր կարմիր սրբատաշ քարով[2315]: Հայտնի է նաև եկեղեցու կառուցման տարեթիվը. «...ունին նոքա զեկեղեցի քարաշէն և հաստահիմն կառուցեալ ի 1854 թուականի փրկչական»[2316]:

**Խորհրդային տարիներ.** 1931 թ. Հելենենդորֆն ուներ 4305 բնակիչ: Սակայն 10 տարի անց զրկվում է բնակավայրի հիմնադիր բնակիչներից (գերմանացիներն աքսորվում են Ղազախստան), ապա անվանափոխվում և ստանում է Խանլար անունը[2317]: 1970 թ. արդեն գերակշիռ մասով թրքաբնակ դարձած քաղաքն ուներ 12700 բնակիչ[2318]:

1988-1989 թթ. բռնագաղթի են ենթարկվել նաև խանլարաբնակ հայերը, և դրանով իսկ քաղաքը վերածվել է զուտ թրքաբնակ բնակավայրի:

**Հնագիտական հուշարձաններ.** Ներկայիս Խանլարի մերձակայքը հարուստ է բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարանաբլուրներով: Դեռևս 1899 թ. դրանց մի մասը պեղել և ուսումնասիրել է գերմանացի հնագետ Է. Ռյոսլերը. «Սկզբում ես պեղել սկսեցի Ելենենդորֆ գաղութի մոտի հետաքրքիր դամբարանաբլուրները: 1899 թ. ես Գանձակ գետի աջ ափին բացեցի 29 դամբարանաբլուր, որոնց թաղումները ըստ գտածոների վերաբերում էին բրոնզե դարին: Պեղումները պսակվեցին հիանալի արդյունքով: Մեծ մասամբ կավի կարծր ավազից և գետաքարից պատրաստված զանազան չափերի դամբարանաբլուրները սովորաբար պարունակում էին 1-3 գերեզմանափոս: Ավազով ու քարով լցված գերեզմանները սալերով հազվադեպ էին ծածկված: Կմախքները թիկունքի կամ կողքի վրա էին՝ կծկված դիրքով կամ էլ նստած դիրքով: Մի դեպքում հանգուցյալը պառկած էր երեսնիվայր, դեմքով՝ հողը, գոտկատեղի շրջանում ոսկորներին երկու կողմերից կից էին մեկական պուլիկներ: Գերեզմանների գերակշռող մասն ուներ հյուսիս-արևմուտք – հարավ-արևելք ուղղվածություն: Հանգուցյալների գանգերը պարզեցին նրանց արիական ծագումը: Գրեթե յուրաքանչյուր գերեզմանում հայտնաբերվեցին զոհաբերված բազմապիսի կենդանիներ, մեծ մասամբ թիվ խեցեղեն, որոնք հանգուցյալին անհրաժեշտ էին լինելու հանդերձյալ կյանքում»[2319]: Գտածոների մեջ աչքի են ընկել բրոնզե նախշազարդ վզնոցները՝ շղթաների մնացորդներով, ասեղներ, էմալապատ կոճակներ, քարե նետածայրեր և բազմազան այլ իրեր: Ի դեպ, նույն թվականի աշնանը ու ձմռանը Ռյոսլերը ևս 18 դամբարան է պեղել[2320]:

2310. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 10, թ. 20:
2311. Նույն տեղում:
2312. Նույն տեղում, թ. 23:
2313. Նույն տեղում, գ. 12, թ. 53:
2314. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2315. «Նոր-Դար», 1890, N 119, էջ 2:
2316. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 437, թ. 42: Տես նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 146: Ի դեպ, այլ վկայության համաձայն՝ եկեղեցին կառուցվել է 1859 թ. (**Фатуллаев Ш. С.**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-начала XX века, Баку, 1986, с. 439).
2317. "Большая Советская Энциклопедия", том XXIV, Москва, 1932, с. 497-498.
2318. «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 13:
2319. **Реслер Э.**, Археологические изыскания в Закавказье, "Кавказ", Тифлис, 1903, N 173, с. 2 (բնագրում՝ "...Сперва я начал раскопку интересных курганов близ колонии Еленендорф. В 1899 году я открыл на правом берегу реки Гянджи 29 курганов, заключавших в себе могилы, которыя по находкам должны быть отнесены к т. н. бронзовому веку. Раскопки увенчались прекрасным результатом. Курганы различных размеров, возведенные большею частью из жесткаго глинистаго песка и речных камней, содержали обыкновенно от 1 до 3 грунтовых могильных ям. Редко могила была крыта плитами, наполнены же оне были песком и камнями. Костяки лежали или на спине, или на боку в согнутом положении, или же наконец в сидячем положении. В одном случае покойник лежал на животе, лицом к земле а кистями прикасаясь к двум сосудам, стоявшим по обеим сторонами в области плеч. Преобладающее направление могил и костяков было с. з. - ю. в. Черепа покойников дали возможность вывести заключение о культурном народе арийскаго происхождения. Почти в каждой могиле были найдены также остатки разнообразных жертвенных животных, наполнявших часть многочисленных сосудов, помещенных около мертвецов для их продовольствия на пути в загробную жизнь...").
2320. **Реслер Э.**, Археологические изыскания в Закавказье, "Кавказ", Тифлис, 1903, N 179, с. 2.

**Աղասիբեկլու գյուղատեղի.** գտնվում է շրջկենտրոնից 4,5 կմ արևմուտք՝ Գանձակից Բանանց տանող հին (սարի) ճանապարհի վրա:

## ԽԱՉԱԿԱՊ-ԱՐՄԱՎԻՐ (ԿՈՒՇՉԻ-ԱՐՄԱՎԻՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևելք՝ Կուրակ գետի աջակողմի ափամերձ հարթավայրում, ծովի մակերևույթից 940-1060 մ բարձրության վրա:

**Հիմնադրություն.** գյուղը 1884 թ. հիմնել են Խաչակապ (Ղուշչի, Կուշչի) գյուղից վարելահողերի պակասի պատճառով արտագաղթած 30 տուն հայերը: Բնակության վայրում եղել է «...թիֆլիսաբնակ պ. Պալի-խանի կալուածքը՝ Ղարաբուլաղ անունով տեղը, որը գտնւում է Գանձակի վիճակում, սեպհական գիւղից 70-75 վերստ հեռաւորութեան վրայ: Հաւանելով այնտեղի թէ հողն և թէ առողջարար ջուրն ու օդը, վճռեցին գնել այդ հողը, ընկերացնելով իրենց հետ և մի քանի տուն ուրիշ գիւղացիներ և գնեցին (բոլոր ծախքերը հետը հաշուելով) մօտ 30 հազար րուբլով, ուր և հաստատեցին իրենց բնակութեան տեղը...»[2321]:

Ընդամենը մի քանի տարի անց գյուղացիները ոչ միայն կարողացել են մարել ողջ պարտքը, այլև նորահիմն գյուղն այնպես են կառուցապատել, որ ականատեսներին ու հարևան գյուղերի բնակիչներին զարմանք է պատճառել. «Սրանք 25 տուն ընտանիք են, մեծ մասամբ Խաչակապ գիւղից, որոնք հողի պակասութեան պատճառով չուել եկել են այս գիւղը, որի հողը պատկանում էր հանգուցեալ Պ. Մելիք-Բէգլարեանցին: Ահա տասն տարի է, ինչ որ այդ գիւղացիք, համարեա թէ աղքատ դրութեամբ ձեռք են բերել այս հողը, որ 3 հազար դեսեատին տարածութիւն ունի, երեսուն հազար րուբլով և այս կարճ միջոցում պարտքից ազատուել են: Ունին լաւ անտառ, որի եկամուտովն են համարեա թէ իրենց պարտքը տուել. ունին եայլաղներ, թուրք գիւղ և դաշտային հողեր: 500 տնից բաղկացած գետաշէնցիներն և ղարաբուլաղցիները, որոնց հողերին կպած էին այս ընդարձակ հողերը, այսօր մնացել են շուարած և զարմացած, որ իրենք ահագին ժողովուրդ լինելով հողի պակասութիւն են զգում, այն ինչ մի բուռն ժողովուրդ եկաւ գնեց այդ հողերը և այսօր պարտքից ազատուելուց զատ գեղեցիկ կղմինդրով տներ են շինում, որ Իգիրմիդորթի մահալում հազուագիւտ բան է: ...Պարտքից ազատուելով, ահա մէկ տարի է, ինչ որ մտածում են ունենալ եկեղեցի: ...Եկեղեցու տեղը գիւղի մէջն է, մի շատ յարմար տեղ...: Այս գիւղը սեպհական անուն չունէր, այժմ կոչւում է Արմաւիր, որ հայ գիւղացիներին շատ խորթ է թւում, որովհետև նրանք ընտելացած են աւելի թուրքերեն Ղուշչի անուան քան հայ իսկական անուան: ...մեր գիւղացիք հեռաւոր տեղից մի լաւ աղբիւր են քանքանով բերել գիւղի մէջ, որ բաւականին փող է նստել գիւղացիների վրայ»[2322]:



*ԽԱՉԱԿԱՊ-ԱՐՄԱՎԻՐ (ԿՈՒՇՉԻ-ԱՐՄԱՎԻՐ). տեսքը հարավից*

**Բնակչություն.** զուտ հայաբնակ Կուշչի-Արմավիր գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալներն առանձնապես հարուստ չեն, սակայն եղածն էլ բավական է նկատելու համար, որ 1890-ական թվականներից 1910-ական թվականները գյուղի բնակչությունն անընդմեջ աճել է.

| տարեթիվ | տուն | արական | իգական | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1896[2323] | 25 | | | |
| 1907[2324] | | | | 261 |
| 1908[2325] | 28 | 169 | 127 | 296 |
| 1914[2326] | | | | 353 |
| 1917[2327] | 40 | | | 243 |

1989 թ. բռնագաղթից հետո գյուղի բնակչության հիմնական մասը վերահաստատվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ենթաշրջանում:

**Դպրոց.** 1913 թ. դեկտեմբերի 20-ին կաթողիկոսական կոնդակով օրհնվել և թույլատրվել էր Նոր-Արմավիր գյուղում բացել եկեղեցական ծխական դպրոց[2328]:

**Եկեղեցի.** 1896 թ., երբ արդեն պատրաստ էր կառուցվելիք եկեղեցու նախագիծն ու նախահաշիվը հոգաբարձուները նշել էին, որ «...բացի քարուկիրն երեք հազար րուբլի փող է հարկաւոր որ շինենք, հազիւ հազ կարող ենք այդ հոգսն քաշել...»[2329]: Նախագիծն ամբողջությամբ արժեր 3096 ռուբ. 4 կոպ.[2330]:

2321. «Նոր-Դար», 1892, N 52, էջ 2:

2322. «Նոր-Դար», 1896, N 139, էջ 3:
2323. Նույն տեղում:
2324. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2325. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 8: Ի դեպ, 1908 թ. վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն Կուշչի-Արմավիր գյուղն ունեցել է 204 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 186):
2326. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 90.
2327. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2328. «Արարատ», 1914, էջ 6:
2329. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3340, թ. 7:
2330. Նույն տեղում, թ. 29:



***ԽԱՉԱԿԱՊ-ԱՐՄԱՎԻՐ (ԿՈՒՇՉԻ-ԱՐՄԱՎԻՐ). կառուցվելիք եկեղեցու նախագիծը (1896 թ.)***

Եկեղեցու կառուցման համար անհրաժեշտ էր բավականաչափ ժամանակ, բայց ձգձգումը առնչվել էր ոչ թե շինարարական խնդիրների, այլ եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու հարցի հետ, քանի որ գյուղը, նորահիմն լինելով, կառավարությունը դեռևս համապատասխան գրանցում և կարգավիճակ չէր ապահովել. «...ծանուցանել ժողովրդեան այնր գեղջ, եթէ կառուցումն եկեղեցւոյ ոչ թոյլատրի, քանզի օրինասահման թոյլտուութիւն վասն հիմնարկելոյ զգիւղն Նորաշէն-Խաչակապ ցարդ չէ եղեալ ի կողմանէ պատշաճաւոր իշխանութեան»[2331]:

Հայտնի է, որ եկեղեցու կառուցման թույլտվությունը տրվել է 1903 թ-ից հետո[2332]:

Նորակառույց եկեղեցին թեմի առաջնորդ Լևոն եպիսկոպոսը օծել է միայն 1914 թ.[2333]:

Եկեղեցին փակվել է խորհրդային իշխանությունների կարգադրությամբ 1928 թ.[2334]:

## ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ, ԲԱԽՇԻՔ, ՀԱՋԻՇԵՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք՝ Պանդ լեռան հյուսիսարևելյան ստորոտին, ծովի մակերևույթից 1170-1230 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի տարածքում պահպանված միջնադարյան հուշարձանները աներկբա հաստատում են բնակավայրի խոր հնությունը:

Հայտնի է, սակայն, որ ներկայիս գյուղի տեղը, որը պատմական Բաղշիկն էր, մինչև 1870-ական թվականների սկզբները եղել է լքված ու ամայի: Հին գյուղատեղին վերստին շենացնում են ամառանոցի վերածվող Հաջիշենից (Հաջիքենդ) փոխադրված հայերը՝ Բաղշիկ անվանումից զատ գյուղին տալով նաև Հաջիշեն անունը. «...յայտնի հանգամանքներից դրդուած գաղթում են դէպի բարձր, չորս վերստաչափ հեռաւորութեամբ, Սուլուքից մօտ մի ձորակ, որ և հիմնում են ,,Բաղշիկ,, անուն գիւղը: Հին Հաջի-քէնդցիք այժմեան բաղշեկեցիք են...»[2335]:

Հայտնի է նաև, որ Բաղշիկին պատկանող որոշ կալվածներ գտնվում էին գյուղից բավականաչափ հեռու (օրինակ՝ Գյորան տեղամասում Բաղշիկն ուներ 320 դեսյատին վարելահող)[2336], ուստի և մնում էին անմշակ քաղաքական խառնակ բոլոր տարիներին:

1926 թ. Բաղշիկի բնակիչները թողնում են գյուղը ու փոխադրվում ավելի ցած և հիմնում ներկայիս Կամո գյուղը. այն սկզբնապես անվանում են Ռիկովկա, 1930-ից՝ Տուխաչևսկ, ապա՝ Բլյուխերովկա[2337]: 1939 թ. ապրիլի 16-ին գյուղը պաշտոնապես վերանվանվում է Կամո[2338]:

**Բնակչություն.** 1870-1917 թվականներին գյուղի բնակչությունն ընդհանուր առմամբ աճել է և ավելի քան կրկնապատկվել.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1872[2339] | | 107 | 92 | 199 |
| 1873[2340] | | | | 157 |
| 1875[2341] | | | | 168 |
| 1876[2342] | | | | 174 |
| 1877[2343] | | 98 | 82 | 180 |
| 1878[2344] | | 99 | 84 | 183 |

2331. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9524, թ. 11:
2332. Նույն տեղում, թ. 9:
2333. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 22:
2334. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
2335. «Նոր-Դար», 1885, N 131, էջ 2: Ուշագրավ է նաև «Արձագանք»-ի թղթակցի հետևյալ հաղորդումը. «...հնումն եղել է աւելի բազմամարդ գիւղ, ինչպէս ցոյց է տալիս գերեզմանատունը. բայց յետոյ բոլորովին անբնակ է մնացել երկար ժամանակ. իսկ այժմու բնակիչները, 24 տուն, գաղթել են այստեղ մի քանի տարի յառաջ Հաջի-շէն գիւղից...: Գիւղիս հողի վերայ տիրապետական իրաւունքի հաստատութեան մասին վիճում է Մանաս-բէկ Մէլիք-Յովսէփեան» («Արձագանք», 1886, N 20, էջ 294):
2336. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 333:
2337. Տվյալները մեզ փոխանցել է գյուղի բնակիչ Հրանտ Պետրոսյանը (ծնվ. 1926 թ.):
2338. ”Азербайджанская ССР, Административно-территориальное деление”, Баку, 1979, с. 212.
2339. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 62-63:
2340. Նույն տեղում, գ. 3862, թ. 58-59:
2341. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2342. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2343. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2344. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1881[2345] | | 108 | 91 | 199 |
| 1882[2346] | | 104 | 97 | 201 |
| 1883[2347] | | 106 | 96 | 202 |
| 1885[2348] | | 115 | 78 | 193 |
| 1886[2349] | 38 | 141 | 123 | 264 |
| 1887[2350] | | 112 | 82 | 194 |
| 1888[2351] | | 119 | 88 | 207 |
| 1889[2352] | | 118 | 90 | 208 |
| 1890[2353] | | 122 | 93 | 225 |
| 1891[2354] | | 127 | 93 | 220 |
| 1892[2355] | | 140 | 101 | 241 |
| 1893[2356] | | 142 | 101 | 243 |
| 1894[2357] | | 143 | 104 | 247 |
| 1897[2358] | | 160 | 124 | 284 |
| 1898[2359] | | 166 | 131 | 297 |
| 1899[2360] | | 171 | 137 | 308 |
| 1900[2361] | | 177 | 142 | 319 |
| 1901[2362] | | 180 | 144 | 324 |
| 1902[2363] | | 181 | 144 | 325 |
| 1905[2364] | | 183 | 145 | 328 |
| 1906[2365] | | 197 | 158 | 355 |
| 1907[2366] | | | | 303 |
| 1908[2367] | 32 | 128 | 114 | 242 |
| 1909[2368] | | 229 | 164 | 393 |
| 1910[2369] | | 151 | 125 | 276 |
| 1912[2370] | | 243 | 181 | 424 |
| 1914[2371] | | | | 410 |
| 1917[2372] | 170 | | | 1423 |

**Կամո գյուղի հայության վերջին օրերը.** 1990 թ. մարտի 8-ի դրությամբ գյուղում մնացել էր 12 հայ բնակիչ: Վերջիններս Մոսկվա՝ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարին հղած նամակում նկարագրել էին գյուղում ստեղծված օրհասական վիճակը: Նույն օրը (մարտի 8-ին) ռուս զինվորների (հրամանատար՝ գեներալ-գնդապետ Շատալին) առաջնորդությամբ Ազատ և Կամո գյուղեր են ներխուժում 20 բեռնատարներով ժամանած ադրբեջանցիներ, որոնք, դուրս վռնդելով վերջին հայ բնակիչներին, մեկընդմիշտ տիրանում են երկու գյուղերին[2373]: Հայրենի գյուղից արտաքսված բնակիչները փոխադրվում են Գետաշեն, որտեղ էլ մնում են մինչև 1991 թ. մայիսը՝ մինչև վերջինիս անկումը[2374]:

**Եկեղեցի.** Բաղշիկ գյուղատեղիում մինչև բռնագաղթը կիսավեր պահպանված եկեղեցին ակնհայտորեն ԺԷ դարի կառույց էր, թեև որմերի մեջ ագուցված ճարտարապետական ավելի հին բեկորները ու խաչքարերը վկայում են, որ տեղում ավելի վաղ ժամանակներում էլ է եկեղեցի եղել:

1885 թ. մի վավերագրում եկեղեցին հիշված է Սբ. Ամենափրկիչ անվամբ[2375]: Ունի միանավ թաղածածկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 17,40 x 8,65 մ): Երբեմնի երկթեք ծածկի տակ առնված թաղը (քանդված է) պահել են երկու զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Լուսամուտները 6-ն են (3-ը՝ արևելքից, 2-ը՝ հարավից, մեկը՝ արևմուտքից): Մուտքն ու հարավային ճակատի արևելակողմի լուսամուտը ԺԹ դարի վերջին վերակառուցվել են: Եկեղեցին ամբողջությամբ կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Բացառություն են կազմում անկյունաքարերը, որոնք սրբատաշ են: Պատերի մեջ ագուցված են մեկ տասնյակից ավելի գեղաքանդակ, մասամբ նաև



***ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ). Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հատակագիծը***

2345. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2346. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2347. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2348. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
2349. "Свод...", с. 86-87. Ի դեպ, մեկ այլ տվյալով գյուղն ունեցել է 24 տուն բնակիչ («Արձագանք», 1886, N 20, էջ 294):
2350. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
2351. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
2352. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2353. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
2354. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:
2355. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
2356. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2357. Նույն տեղում, գ. 3896, թ. 72-73:
2358. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2359. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2360. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 126-127:
2361. Նույն տեղում, գ. 3905, թ. 90-91:
2362. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
2363. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
2364. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
2365. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2366. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2367. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9:
2368. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2369. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
2370. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
2371. "Кавказский календарь на 1915 г.", с. 84.
2372. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166: Տվյալը թվում է չափազանցված և, ըստ այդմ, անիրական:

2373. «Հայք», 1990, N 6, էջ 1:
2374. **Կարապետյան Ս.**, Ճշմարտությունը զոհե պատմության համար, «Օրեր», 1997, N 16, էջ 2-3:
2375. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:







***ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ). գյուղի տեսքը հարավ-արևելքից, հարավից և հարավ-արևմուտքից***

արձանագիր խաչքարեր ու մի քանի տապանաքարեր, որոնք բոլորն էլ վերաբերում են ԺԲ-ԺԷ դարերին: Արձանագիրները ներկայացնում ենք ստորև.

Խաչքար. ագուցված է եկեղեցու հարավակողմի որմնասյան մեջ, չափերն են՝ 100 x 60 x 18 սմ, քիվին և վերին խաչաթևի երկու կողմերում՝ 2 տող.

*Խ(ա)չս փրկութի(ւն) հոգո(ւ)ն Թըվ/էտին, թվ(ին) ՌԲ (1553):*

Խաչքար. ագուցված է եկեղեցու արևմտյան ճակատում (արտաքուստ), չափերն են՝ 129 x 65 x 23 սմ, վերին խաչաթևի երկու կողմերում՝ 2 տող.

*Թվ(ին) ՌԳ (1554):*

Խաչքար. ագուցված է եկեղեցու մուտքի մեջ, չափերն են՝ 82 x 52 x 16 սմ, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Էտգար(ին), Եղես/ապետ(ին), թվ(ին) ՌՀԹ (1630):*

Խաչքար. ագուցված է եկեղեցու հյուսիսային պատի մեջ, չափերն են՝ 124 x 68 սմ, քիվին՝ 1 տող.

*Խ(ա)չս Շահ(ին՞)...:*

Խաչքար. տեղահանված ու ընկած է եկեղեցու ներսում, փլատակների մեջ, չափերն են՝ 97 x 57 x 16 սմ, քիվին՝ 2 տող.

*Ս(ուր)բ / խ(ա)չս / Մար/եան/ին, Ամ/իրին, / Գո(ւ)լ/ումին, / Աղա/պէկ/ին:*

Խաչքար. խորանի մեջ, չափերն են՝ 91 x 51 x 14 սմ, քիվին՝ 1 տող.

*Խ(ա)չս Ոհանին:*

Խաչքար. ագուցված է եկեղեցու հարավային պատի արևելյան անկյունում, ստորին խաչաթևի երկու կողմերում՝ 2 տող.

*Խ(ա)չս փրկ/ու(թիւն) հոգ(ոյ)...:*

Խաչքար. ագուցված է եկեղեցու հարավային պատի արևելյան անկյունում, երկարությունը՝ 97 սմ, ստորին մասում՝ 2 տող.

*Խ(ա)չս հոգոն / ...ին:*

Խաչքար. ագուցված է եկեղեցու խորանում, արևելքից բացված լուսամուտից ցած, չափերն են՝ 118 x 52 x 16 սմ, խաչաթևերի երկու կողմերում՝ 4 տող.

*Խ(ա)չս Մխ/իթ/ար/ին / հո/գ(ոյ)...:*

Խաչքար. եկեղեցու ներսում՝ արևմտյան պատի տակ, չափերն են՝ 84 x 53 սմ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Հոռումին բ(ա)րէխ(աւս է):*

Խաչքար. ագուցված է եկեղեցու հյուսիսային պատի մեջ՝ ներքուստ, չափերն են՝ 96 x 63 սմ, քիվին՝ կիսաեղծ 2 տող.

*Խ(ա)չս փրկ(ութիւն)... /...եայյին:*



















***ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ). Սբ. Ամենափրկիչ եկեղեցու որմերում ագուցված խաչքարերը***

**Գերեզմանոց.** Բաղշիկ գյուղի գերեզմանոցը փռված է թեքադիր սարալանջին և զբաղեցնում է ընդարձակ մակերես: Զգալի թիվ են կազմում անմշակ սալատապանները: Մի քանի սրբատաշ տապանաքարեր վերաբերում են ԺԹ դարին: Դրանցից մեկի վրա ընթերցվում է.















***ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ). Սբ. Ամենափրկիչ եկեղեցու որմերում ագուցված խաչքարերը***





***ԿԱՄՈ (ԲԱՂՇԻԿ). հատված գերեզմանոցի հին մասից և տապանաքար (1856)***

*Այս է տապան լուսահոգի Գանջու նահանգի Հաջիգեղի բնակիչ Միրզի որդի Յոհանէսին, վախճան է, որ է Ճաղարանց, 1856 ամի 7 խմզի(՞) ամսի:*

## ԿԻՅԱՍԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 240 մ միջին բարձրության վրա:

Գյուղը հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրքերը ԺԹ դարի վերջերին:

1886 թ. ունեցել է 15 տուն (71 շունչ)[2376], 1908-ին՝ 115[2377], 1914-ին՝ 46 բնակիչ[2378]:

## ԿՈՎԼԱՐՍԱՐԻ

Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 240-250 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին գյուղը թուրք 8 կալվածատերերի սեփականությունն էր[2379]:

ԺԹ–Ի դարերին բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սակավաթիվ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2380] | 163 | 671 | 542 | 1213 |
| 1908[2381] | | | | 1150 |

2376. "Свод...", с. 86-87.
2377. "Кавказский календарь на 1910 г.", с. 291.
2378. "Кавказский календарь на 1915 г.", с. 143.

2179. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 11-12:
2180. "Свод...", с. 82-83.
2181. "Кавказский календарь на 1910 г.", с. 292.

| | |
|---|---|
| 1914[2382] | 1095 |
| 1977[2383] | 914 |

Խորհրդային տարիներին միավորված էր Ղռխլի գյուղի հետ:

## ՀԱՋԱԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 28 կմ, Գանձակից 16 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 190-200 մ բարձրությամբ միապաղաղ հարթության վրա:

**Բնակչություն.** տակավին 1864 թ. գյուղի թուրքերը մշտաբնակ չէին: Այդ առումով ուշագրավ է ուղեգրի՝ Հաջալի «գյուղ» այցելելու մանրամասները. «...արդյոք շուտո՞վ մենք կհասնենք թաթարական գյուղին: Նրանք հարցիցս տարակուսելով պատասխանեցին. –Մենք արդեն վաղուց Հաջալի գյուղում ենք: Կարող եք պատկերացնել իմ զարմանքը, երբ մերկ տափաստանի մեջտեղում իմ առաջնորդներն ինձ հավաստիացնում էին, թե ես թաթարական գյուղում էի...: –Իսկ որտե՞ղ են տները, որոնցում թաթարներն են բնակվում, որտե՞ղ են նրանց տնտեսական շինությունները: Որտե՞ղ են այգիները, արտադրամասերը, հարդանոցները...: ...նրանք մատնանշեցին մի փոս, որի կողքով անցնում էինք ասելով, –ահա մեր ձմեռային տները, իսկ ամռանը մենք բնակվում ենք փարախներում, և դրա համար է, որ այժմ կարելի չէ տեսնել ոչ տներ, ոչ տնտեսական մեր շինությունները, ոչ հարդանոցները...»[2384]:

Վիճակագրական մի քանի տեղեկագրերում արձանագրվել է Հաջալիի բնակչության հետևյալ թվաքանակը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2385] | 45 | 161 | 132 | 293 |
| 1907[2386] | | | | 338 |
| 1914[2387] | | | | 240 |

Խորհրդային տարիներին միավորված էր Լյաքի գյուղական խորհրդի հետ:

## ՀԱՋԻՇԵՆ (ՀԱՋԻՔԵՆԴ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ՝ սաղարթախիտ անտառների գրկում, ծովի մակերևույթից 1210-1290 մ բարձրության վրա, Ալհարակ (Գյոյգյոլ) լիճ տանող ճանապարհին:

**Պատմություն.** տեղում պահպանված կիսավեր եկեղեցին և խաչքարով գերեզմանոցը փաստում են Հաջիշենի գոյությունն առնվազն միջնադարում: Գրավոր աղբյուրներում, սակայն, գյուղն առաջին անգամ «Հաճիշին» անվամբ հիշատակվում է Փիլիպպոս կաթողիկոսի (1638-1655) կոնդակներից մեկում[2388]:

Ականատեսները գյուղին նվիրած համառոտ նկարագրականներում գրել են. «տեղը գեղեցիկ է, անտառի մեջ, ձորի վրայ...»[2389], «...թէ տեղի դիրքը, թէ անտառուէտ զովասուն օդն և առողջարար ջուրը Հաջի-քէնդին տալիս են արդարև ամառանոցի արժանաւորութիւն»[2390]:

Հաշվի առնելով հանգստի համար անհրաժեշտ բնական պայմանների առկայությունը՝ 1870 թ. կառավարությունը (Բուտալով նահանգապետի օրոք) որոշում է բնության այդ գողտրիկ անկյունում Գանձակ քաղաքի մեծահարուստների և պաշտոնյաների համար հիմնել ամառանոց[2391]: Տեղացիներին էլ առաջարկվում է վերաբնակվել պատմական Բախշիք գյուղատեղիում: Բնակիչների մեծ մասն անմիջապես փոխադրվում և հիմնավորվում է նոր բնակավայրում. «Այստեղ մի քանի տարի յառաջ բնակելիս են եղել հայեր, որոնք ցրուել են ուրիշ գիւղեր, թողնելով իրանց շէնքերն և աւերակ, եկեղեցին իր շրջապատ գերեզմանատնով»[2392]:

**Կառուցապատում.** ամառանոցային բնակավայրը հիմնվում է գյուղի բարձրադիր մասում և անվանվում Վերին թաղամաս: Բուն Հաջիշեն գյուղը Ներքին թաղն էր: Այդտեղ ապրող հայերը, եթե պաշտոնյա չէին, իրավունք չունեին Վերին թաղամասում բնակություն հաստատել[2393]: Ամառանոցային հատվածում կառուցվում էին «...արքունական տներ և բնակվում են պաշտոնական անձինք՝ սկսած նահանգապետից և փոխ-նահանգապետից...»[2394]: Ի դեպ, տակավին 1886 թ. ամառանոցի կալվածքը տիրապետելու խնդրով դատական վեճի մեջ էին գանձակեցի Աբայան եղբայրները[2395]:

ԺԹ դարի վերջերին Վերին Հաջիքենդն արդեն իրենից ներկայացնում էր մի փոքր քաղաք, որտեղ

2382. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 143.
2383. «ԱԱՀ», հ. 3, էջ 191:
2384. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, ”Кавказ”, 1865, N 42, с. 231 (բնագրում՝ ”...скоро ли мы доедем до татарской деревни. Они, изумляясь моему вопросу, отвечали: “Да мы уже давно в деревне Гаджали”. Можно себе представить, каково было мое удивление, когда мои вожатые среди голой степи уверяли меня, что я в татарской деревне!... -Где же дома, в которых живут татары? Где же их хозяйственныя обзаведения? Где же те сады, фабрики, сенокосы ... они указали на яму, к которой мы подъезжали -говоря: вот наши зимние дома, а летом мы живем на кочевках, и оттого-то теперь нельзя видеть ни домов, ни хозяйственных наших заведений, ни сенокосов”).
2385.”Свод...”, с. 84-85.
2386. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 216.
2387. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 106.
2388. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:
2389. «Նոր-Դար», 1890, N 125, էջ 3:
2390. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2391. «Նոր-Դար», 1885, N 131, էջ 2:
2392. «Արձագանք», 1886, N 19, էջ 280: Ի դեպ, 1889 թ. խնդրո առթիվ մեկ այլ հոդվածագիր նշել է. «...Հաջի-Քեանդն առաջները եղել է հայի գիւղ, որը ապացուցւում է կիսաւեր հայոց եկեղեցով և բազմաթիւ հին գերեզմաններով. բայց տեղի ժողովուրդը հետզհետէ թողել է Հաջի-Քեանդը և նրանից մի քիչ հեռու (2-3 վերստ) հիմնել մի նոր գիւղ «Բախշիկ» անունով...» («Նոր-Դար», 1889, N 144, էջ 3):
2393. «Նոր-Դար», 1890, N 125, էջ 3:
2394. «Նոր-Դար», 1885, N 131, էջ 2:
2395. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:





***ՀԱՋԻՇԵՆ (ՀԱՋԻՔԵՆԴ). տեսարաններ (Ի դարի սկիզբ)***

ամռան ամիսներին գործում էին նաև հեռագրատունը, փոստը և դատարանը[2396]: Գոյություն ունեցող հյուրանոցներին 1895 թ. հավելվել էր ևս մեկը՝ Ա. Միրզոյանցինը[2397]:

**Բնակչություն.** ԺԹ դարում Հաջիշենը գավառի սակավահայ բնակավայրերից մեկն էր: Այդ են փաստում վիճակագրական հայտնի մի քանի տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2398] | 10 | 20 | 20 | 40 |
| 1845[2399] | | 30 | 30 | 60 |
| 1847[2400] | | 34 | 32 | 66 |
| 1849[2401] | | 51 | 56 | 107 |
| 1852[2402] | | 69 | 61 | 130 |
| 1861[2403] | 10 | | | |
| 1866[2404] | 18 | 111 | 76 | 187 |

Հայտնի է, որ մինչև 1870 թ. զուտ հայաբնակ Հաջիշենում բնակվել են 25-30 տուն հայեր[2405]:

1870 թ-ից հետո Վերին թաղամասում, որը հենց սկզբից պաշտոնապես կոչվեց Հաջիքենդ, սկսում են բնակություն հաստատել տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Հատկապես մեծաթիվ էին ռուսները (առանձին թաղամասով), որոնք 1885 թ. կառուցում են իրենց եկեղեցին և նախապատրաստվում են հուլիս ամսին կատարել օծման արարողությունը[2406]:

Միաժամանակ ԺԹ դարի վերջերին, բնակավայրի մերձակայքում տարվա ամառային ամիսներին հաստատվում են խաշնարած թափառական թուրքերը. «Հաջիքենդի շուրջը անտառի մէջ հարիւրաւոր վրաններ, ալաչուխներ կան, սրանցում էլ բնակվում են թուրքերը, մանաւանդ դէպի Սուլուք գիւղը տանող ճանապարհի վերայ «Դաղդան»-ում մի ահագին բազմութիւն է թուրքերի այս կամ այն անկիւնում վրանների մէջ պատսպարուած»[2407]: 1892 թ. հունիսի 28-29-ին կազմված վիճակագրական տեղեկանքում խաշնարած թուրքերի թվաքանակը ցույց է տրված 631 շունչ[2408]:

Վիճակագրական նույն աղբյուրի համաձայն՝ Հաջիշեն-Հաջիքենդն ունեցել է նաև 585 հայ, 478 ռուս, 7 հայ կաթոլիկ, 631 շիա մահմեդական, 99 լյութերական, 56 հրեա, 51 հռոմ. կաթոլիկ, 9 աղանդավոր, 6 օտարերկրացի, ընդամենը՝ 1924 բնակիչ (1104 ար., 820 իգ.)[2409]:

Խորհրդային տարիներին ևս Հաջիշեն-Հաջիքենդը շարունակում է պահպանել ամառանոցավայրի իր համբավը և մինչև 1949 թ. բացառապես բնակեցված էր հայերով ու ռուսներով: Այնուհետև այստեղ բնակություն են հաստատում Խորհրդային Հայաստանից փոխադրված թուրք (ադրբեջանցի) ընտանիքներ: Այդուհանդերձ, մինչև 1988 թ. մոտ 60 տուն կազմող հայերը Հաջիշենում կազմում էին բնակչության մեծամասնությունը: Բռնագաղթից առաջ մասամբ հայաբնակ էին ինչպես Ներքին, այնպես էլ Վերին քաղերը:

**Եկեղեցի.** վավերագրերում Հաջիշենի ծխական Սբ. Հովհաննես անվամբ եկեղեցու մասին առաջին հիշատակություններից մեկը 1861 թվականից է[2410]:

Հայտնի է, որ 1883 թ. Ելիզավետպոլի բնակիչ Հակոբ Հովակիմյան Պարոնյանցը դիմել է հոգևոր իշխանություններին Հաջիքենդի Սբ. Հովհաննես կիսավեր եկեղեցին վերանորոգելու խնդրանքով: Խնդրագրում նշվել են նաև եկեղեցու շրջակա սահմանները. «...թոյլատրելոյ ինձ վերանորոգել սեպհական ծախուք խմովք գիւն քայքայեալ եկեղեցին, որ անուամբ սբ. Յովհաննէս կոչի, և ինքն է ի վա-

2396. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 271-272:
2397. «Նոր-Դար», 1895, N 118, էջ 3:
2398. "Акты...", т. II, с. 596.
2399. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 5-6:
2400. Նույն տեղում, գ. 3814, թ. 95-96:
2401. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
2402. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2403. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2404. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2405. «Նոր-Դար», 1885, N 191, էջ 2:
2406. Նույն տեղում:
2407. «Նոր-Դար», 1895, N 131, էջ 2:
2408. «Նոր-Դար», 1892, N 119, էջ 2:
2409. Նույն տեղում:
2410. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 147-148:

ղուց ուխտատեղի, ըստ նմին և ամրափակել զշուրջ նորին, որոյ տարածութիւն արևելեան կողմն է քսան վեց սաժեն, մինչ յայն, ուր է Արքունի ճեռա-գրատունն, յարևմտեան կողմանէ է մինչև ցճանա-պարհ տասն և մի սաժեն ու կէս: Ի հիւսիսային կող-մանէ տասն և հինգ սաժեն, և ի հարաւային կողմա-նէ մինչև ցճանապարհն տասն սաժեն, ուր է Հայոց հին գերեզմանատունն»[2411]:

Ցավոք, նույն թվականի գարնանը բարերարը վախճանվում է, և եկեղեցու վերանորոգումը հետա-ձգվում է. «...եկեղեցու նախագահի Յակովբն Յովակի-մեան Պարոնեանց, որ ցանկայր նորոգել զխախտեալ եկեղեցին Հաջի-շէն գեղջ, նախքան ստանալ ներկայ հրամանի ըստ անակընկալ դիպուածոյ անկեալ ի ներքոյ բեռնակիր սայլի իւրոյ, վախճանեալ է...»[2412]:

Նույն՝ 1884 թ., Ելիսավետպոլի վիճակի փոխա-նորդ Անանիա վարդապետ Համազասպյանցը, դի-մելով Վրաստանի և Իմերեթի հոգևոր կոնսիստո-րիային, վերստին ընդգծել էր Սբ. Հովհաննես եկե-ղեցու անմխիթար վիճակը. «...այժմ թէպէտ աւե-րակ, բայց կանգուն կան որմունքն և սիւնքն մինչ ցխարիսխ կամարացն, միայն առաստաղն եկեղեց-ւոյն և սեղանոյն փլեալ է և ամենայն քարինքն գտանին կուտակեալ ի մէջ եկեղեցւոյն, շուրջ զեկե-ղեցիաւ են գերեզմանք հայոց. կան որք ընդ հողով ծածկեալ մնան, և կան՝ որոց քարինք դամբարա-նացն տակաւին ...տարածութեամբ գերեզմանատե-ղեաց և պարապ գետնոյն են, ...ի հարաւային կողմն մերձ յեկեղեցին գտանին գերեզմանք հայազգի ննջեցելոց, իսկ յարևմտակողմն ծածկեալ են ընդ հողով...»[2413]:

Նույն թվականին էլ հայտնվել էր մեկ այլ բա-րերար՝ գանձակեցի Սարգիս Հովհաննիսյան Աքա-յանցը, և խոստացել 1884 թ. հուլիսին վերանորոգել եկեղեցին, սակայն «ի պատճառս զբաղեալ գոլոյ նորա զանազան ծանր գործովք, յետաձգեալ է... և այնու թողեալ բանն առաց հետևանաց»[2414]:

1880-ական թվականների վերջերին հայ բնակ-չությունը, որն ամառ ժամանակ կազմում էր մոտ 100 ընտանիք, իր հոգևոր կարիքները բավարա-րելու համար ամեն ջանքով ձգտում էր նորոգել հիանալի դիրք ունեցող գյուղամիջյան ավերակ եկեղեցին, որը «մոտ 100 տարվայ շէնք է, ինչպէս երևում է նրա սրբատաշ քարերի մի արձանագրու-թիւնից...»[2415]: Կատարվել էր հանգանակություն. «Գումարը հասնում է մինչև այնքան, որքանով կարելի կը լինի եկեղեցին բոլորովին աւարտել, որովհետև մօտակայ եկեղեցիներն ևս խոստանում են օգնելու շինութեանը...»[2416]:

Հայտնի է նաև, որ Բաքվում բնակվող գանձա-կեցի Սիմեոն Ստեփանյան Արզումանյանցը որոշել էր իր ծախսով կատարել նորոգման աշխատանք-ները[2417]: Սակայն, ի հակադրություն Թիֆլիսի կոն-սիստորիայի, որն այդ աշխատանքները սկսելու համար թույլտրություն էր տվել, Ելիզավետպոլի նահանգապետը 1892 թ. մերժել էր խնդրագիրը հե-տևյալ պատճառաբանությամբ. «...յօժարութիւն յայտնելով՝ յատկացնել ուրիշ տեղ, եթէ Արզումա-նեանցը ցանկանայ իւր ծախքով Հաջիշէն գիւղում շինել եկեղեցի: Հրամայեցին, որովհետև Ելիսաւէ-տպօլի նահանգապետը դժուարանում է թոյլ տալ Հաջիշէն գիւղի եկեղեցու վերանորոգութիւնը. ուստի դարձնելով գործը, գրել հրաման Տփխիսի հայոց կոնսիստորիային, պատուէր տալ Ելիսաւէտպօլի հոգ. կառավարութեան մաքուր դրութեան պահելու Հաջիշէնի աւերակ եկեղեցին և նորա շուրջը եղած գերեզմանները իբրև նուիրական սրբավայր, իսկ այն հայազգիք, որոնք ամառ ժամանակ բնակում են Հաջիշէն գիւղում, եթէ եկեղեցու պէտք զգան կա-րող են տեղ խնդրել և նոր եկեղեցի կառուցա-նել»[2418]: Նահանգապետը կառավարությանն ուղղ-ված գրության մեջ ավելացրել էր, որ «...ի տեղի աւերակ եկեղեցւոյն Հաճիշէնի ունի կառուցանել ուղղափառ եկեղեցի շրջապատիւ, ուստի և գերեզ-մանատունն ունի պահպանել յամբողջու-թեան...»[2419]: Ի դեպ, նոր եկեղեցու կառուցման հա-մար անհրաժեշտ գումարը, ըստ ինժեներ Ի. Վար-դանովի նախահաշվի, կազմում էր 10 հազար ռուբ-լի[2420]:

Ցավոք, շինությունը ոչ միայն չէր վերանորոգ-վել, այլև 1892 թ. հոկտեմբերին տեղն այցելած Սի-մեոն քահանա Տեր Խաչատուրյանցը և Անանիա քահանա Շիրակունին արձանագրել էին եկեղեցու և գերեզմանների ավերումը: Մասնավորապես այդ մասին նրանք գրել են. «...անձամբ եկեալ յամառա-նոցն Հաջիշէնու գտան զի աւերակ եկեղեցիս տեղ-ւոյն հիմնովին քայքայեալ կան և անդր գործին պարսկահպատակ տաճիկք, Հասան Հիւսէին օղ-լին, Ախմէտ Հիւսէին օղլին, Թագախ Ախմետ օղլին, Հանեփայ Մամատ Ալի օղլին և Նարժափ Մամատ օղլին, և ի հարցանելն թէ նոքա որո՞վ հրամանաւ փլեալ են հիմնովին յիշեալ եկեղեցին, պատասխա-նեցին, թէ հրամանաւ քաղաքական արխիտեկտո-րին Ելիսավետապօլու Մարչենկոյ և թէ վասն հիմ-նայատակ քակելոյն զաւերակ եկեղեցին ստացեալ են վարձադրամս ի յիշեալ արխիտեկտորէն և թէ ի վերայ նոցա կարգեալ է ի կողմանէ յիշեալ արխի-տեկտորէն վերակացու Դիմիտրի Զամետին գան-ձակեցի յունադաւան: Ի մուտ գործելն յիշեալ ան-

2411. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 402, թ. 8:
2412. Նույն տեղում, թ. 11:
2413. Նույն տեղում, թ. 12:
2414. Նույն տեղում, թ. 23:
2415. «Մշակ», 1890, N 85, էջ 1:
2416 . «Նոր-Դար», 1887, N 138, էջ 1:
2417. Նոր-Դար», 1892, N 113, էջ 2:
2418. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 402: Նաև՝ «Արարատ», 1892, էջ 556-557:
2419. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 402:
2420. "Тифлисский листок", 1896, N 90, с. 2.

դամոյ և գործակատարի առ ի ցանկապատելոյ թէ քակեալ եկեղեցատեղին և թէ շուրջ նովաւ գերեզմանատունս ննջեցելոց, սակայն արգելք եղեն և հակառակեցան որպէս վերակացուն արխիտեկտորին և մշակք... մերձ առ աւերակ եկեղեցին գտանեցեալ երեքին նս գերեզմանատունք քակեալ էին և ոսկերք ննջեցելոց սփռեալ ի հող երկրի...»[2421]:

Հանգանակություններ էին իրականացվել նաև 1894 թ.[2422]:

## ՂԱԴԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 32 կմ հյուսիս՝ Կուրի գետափից 3 կմ հարավ, ծովի մակերևույթից 160 մ միջին բարձրության վրա:

Հիմնվել է Ի դարի սկզբներին իրարից 2-3 կմ հեռավորության վրա գտնվող ձմեռոցներում հաստատված խաշնարած ցեղերի համախմբման արդյունքում: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2423] | 37 | 139 | 91 | 230 |
| 1908[2424] | | | | 182 |
| 1914[2425] | | | | 137 |

## ՂԱՐԱԲԱՂԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս՝ Գանձակ գետի ձախ ափի մոտ, ծովի մակերևույթից 230-240 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 61 տուն՝ 370 շունչ (226 ար., 144 իգ)[2426], 1907-ին՝ 325[2427], 1914-ին՝ 502 բնակիչ[2428]:

## ՂԱՐԱՅԵՐԻ

Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 248-258 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին: 1960 թ. ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ[2429]:

## ՂԶԼՋԱ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Արքինաջուր գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 620-700 մ բարձրության վրա:

Նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին:

1886 թ. ունեցել է 12 տուն՝115 շունչ (64 ար., 51 իգ)[2430], 1977-ին՝ 754 բնակիչ[2431]:









***ՂԶԼՋԱ. թուրքական դամբարան և տապանաքարեր (Ի դարի սկիզբ)***

Գյուղի թուրքական գերեզմանոցում պահպանվել է Ի դարասկզբին կառուցված դամբարան (քյումբազ): Նույն գերեզմանոցում պահպանվել են նաև ԺԹ դարի վերջերով թվագրված արաբատառ թուրքերեն արձանագրություններով տապանաքարեր:

2421. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 402:
2422. "Кавказ", 1894, N 206.
2423. "Свод...", с. 76-77.
2424. "Кавказский календарь на 1910 г.", с. 265.
2425. "Кавказский календарь на 1915 г.", с. 131.
2426. "Свод...", с. 84-85.
2427. "Кавказский календарь на 1910 г.", с. 271.
2428. "Кавказский календарь на 1915 г.", с. 133.
2429. «ՍՍՀ», h. 3, էջ 61:
2430. "Свод...", с. 78-79.
2431. «ՍՍՀ», h. 3, էջ 162:



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. գյուղի տեսքը Եղնասար վանքի կողմից (արևմուտքից)***

## ՂՌԽԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 240-250 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին միավորված էր Կովլարսարլի գյուղի հետ:

1886 թ. Ղռխլիի հասարակությունը բաղկացած է եղել 214 ընտանիքից՝ 1087 շունչ (655 ար., 432 իգ)[2432]: 1907 թ. ուներ 1315 բնակիչ[2433]:

## ՂՈՒՇՉԱՐԱ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 375-390 մ բարձրության վրա:

1977 թ. ունեցել է 454 բնակիչ[2434]:

2432. ”Свод...”, с. 82-83.
2433. “Кавказский календарь на 1910 г.”, с. 289.
2434. «ԱՍՀ», հ. 3, էջ 289:

## ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ (ՂԱՐԱԲՈՒԼԱՂ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևելք՝ Կուրակ գետի աջակողմյան վտակներից մեկի աջ արևմտահայաց ձորալանջին՝ ծովի մակերևույթից 1010-1140 մ բարձրության վրա:

**Պատմություն.** պատմական անվանումը մեզ չի հասել: Ղարաբուլաղ անվանաձևով հիշատակված է գյուղամիջյան եկեղեցու (1675) շինարարական արձանագրության մեջ: Նույն ձևով հիշվում է նաև հետագայում, ինչպես օրինակ, 1750 թ. մի վավերագրում. «Նիկողայոս քևխայ Ղարաբուլաղայ»[2435]:

Ավանդության համաձայն՝ «...այս գիւղը 500 տնից բաղկացած է եղել, բայց բարբարոս ժամանակները, պարսից բռնութիւնից ազատուելու համար չուել են Վրաստանի երկիրը, իբրև ապահով տեղ ապրելու

2435. «Արարատ», 1914, էջ 741:





***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. գյուղի տեսքը արևմուտքից և հարավից***

համար: Այս գիւղացոց հետ է չուել և այս մահալի շատ ժողովուրդ, որոնց գիւղերի աւերակների հետքերը հարիւրաւոր տեղեր երևում են: Բայց դարիս քառորդ թուականներում, երբ ապահովութիւն էր տիրում, շատերը և դրանց հետ մեր գիւղացի չորս տուն Վրաստանի Բոլնիս գիւղից կրկին յետ են դառնում իրենց հայրենի գիւղը: Այդ գաղթողներից դեռ կենդանի է Սև Սաքի անունով 95 տ. մի ծերունի և պատմում է թէ ինչպէս են գտել իրենց գիւղը աւերակ դարձած. գիւղի աւագ եկեղեցին անասնոց շինած, մէջը աղբով լիքն է եղել թուրքերի ձեռքից...»[2436]:

ԺԹ դարավերջին գյուղը Մանաշիդի, Բուզլուխի և Սարիսուի հետ եղել է Լուարսաբ և Պավել Մելիք-Բեգլարյանների ենթակայության ներքո[2437]:

2436. «Նոր-Դար», 1894, N 73, էջ 3:
2437. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 61-62:

**Կառուցապատում.** ԺԹ դարավերջին ականատեսը նշել է. «Իւր դիրքի շնորհիւ, գիւղը բաւական մաքուր է...: Թէև ընդհանրապես տները հասարակ են, բայց կան և մի քանի կանոնաւոր, երկյարկանի գեղեցիկ շինութիւններ»[2438]:

**Բնակչություն.** վիճակագրական առկա տվյալները ցույց են տալիս, որ ԺԹ-Ի դարերում գյուղի բնակիչների թվաքանակն ընդհանուր առմամբ անընդմեջ աճել է.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **ընդամենը** |
|---|---|---|---|---|
| 1832[2439] | | 30 | 19 | 49 |
| 1841[2440] | 4 | 6 | 7 | 13 |
| 1851[2441] | 4 | 30 | 37 | 67 |

2438. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 333:
2439. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 394:
2440. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 350, թ. 47:
2441. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 93:



*ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցուն հարող թաղամասը, տեսքը հարավ-արևմուտքից և հարավից, հատվածներ արևմտյան ճակատից*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1876[2442] | | | | 174 |
| 1886[2443] | 41 | 155 | 148 | 303 |
| 1889[2444] | | 161 | 146 | 307 |
| 1894[2445] | 40 | | | |
| 1901[2446] | | 226 | 212 | 438 |
| 1908[2447] | | | | 583 |
| 1914[2448] | | | | 685 |
| 1917[2449] | 80 | 387 | 269 | 656 |
| 1918[2450] | 80 | 387 | 269 | 656 |

**Եկեղեցի.** Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում: Ունի եռանավ, բազիլիկ հորինվածք: Երկթեք ծածկի տակ առնված թաղակիր կամարները պահում են են 3 զույգ սյուներն ու որմնասյուները: Արևելքում կիսաբոլորակ խորանի եր-

2442. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, թ. 115-116:
2443. ”Свод...”, с. 88-89.
2444. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 46-47:
2445. «Նոր-Դար», 1894, N 73, էջ 3:
2446. ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 241-242:
2447. ”Кавказский календарь на 1910 г. ”, с. 271.
2448. ”Кавказский календарь на 1915 г. ”, с. 133.
2449. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2450. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 4:



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. խաչաքանդակներ Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատում, արձանագրություններ հարավային ճակատից բացված լուսամուտներին, խոյակներից մեկը և մկրտարանի խորշի մեջ ագուցված խաչքարեր (ԺԷ դար)***

կու կողմերում ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատներն են: Հյուսիսային պատի մեջ, իր ավանդական տեղում է մկրտարանի խորշը: Լուսավորությունն իրականացված է 10 լուսամուտների միջոցով (4-ը՝ բացված հարավային, 3-ը՝ արևելյան, 2-ը՝ հյուսիսային և 1-ը՝ արևմտյան ճակատից): Մուտքը բացված է արևմտյան ճակատից: Եկեղեցին կառուցված է կոփածո քարով, կրաշաղախով: Անկյունաքարերը և կառուցողական առավել պատասխանատու հատվածները շարված են սրբատաշ քարով: Ունի բազմաթիվ արձանագրություններ.

Սբ. Աստվածածին եկեղեցի. արևմտյան ճակատին, բարավորից փոքր-ինչ վեր, ուղղանկյունաձև միակտոր սրբատաշ քարին՝ 10 տող.

*Շնորհօք ամենակալին. մե(ն)ք Ղարապուլախի ժող(ո)վուրդս, մեծ / եւ փոքր շինեցինք ս(ուր)բ եկեղեցիս յիշ(ա)տ(ա)կ հոգոց մե/րոց եւ ամ(ենայն) ննջեցելոց, ի հ(այ)ր(ա)պ(ե)տութե(ա)ն Տ(եառ)ն Պետրոսի, ի / բազաւորութե(ա)ն Պարսից Շահ Սի(ւ)լէմանի, (ի) խան/ութե(ա)ն. երկրիս եւ Ե(ո)ւ-*





***ՍԱՐՏՈՒՆԱՇԵՆ. խաչքար՝ ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատում և եկեղեցու հատակագիծը***

*ղուրլու խանին եւ պար(ո)նութե(ան) | գեղիս Փարզալի պէկին, Տարուղէն Մուրտուզա ղուլ|ին, տանուտէր՝ Տ(է)ր Սիմէօն, Տ(է)ր Ակոբ, Տ(է)ր Ազարիէն, Տ(է)ր Դ(ա)ւ(ի)թ, | գր(ա)գ(ի)ր Ազարիա, Շահն(ա)զ(ա)ր, Սարուխ(ա)ն, Աւան, որ ջերմեռա|նդ սիրով աշխ(ա)տ(ե)ցին. ես մեղ(աւո)ր Դ(ա)ւ(ի)թ էր(ե)ցս գրեցի | թվ(ին) ՌՃԻԵ (1676), որ կ(ա)րդաք մէկ բերան ող(ո)րմի ասէք, ամէն:*

Գրակ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 3: ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2, ր. VI, գ. 44 ք. 34-35:

Հրատ. «Նոր դար», 1894, N 73, էջ 3: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 253, **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 333: «Դիվան ...», V, էջ 241:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակության հեղինակն է Ս. Քամալյանը:

Արձանագրության նախօրինակը (21,5 x 15 սմ չափի կապույտ թուղթ) սակավաղեպ պահպանված նմուշ է, որից օգտվել է փորագրողը, ընդ որում Մատենադարանում պահվող ձեռագրի և վիմագրի միջև առկա են հետևյալ էական տարբերությունները:

Փոխարեն՝ *Փարզալի պէկին, Տարուղէն Մուրտուզա ղուլ|ին*-ի, ձեռագրում նշված է՝ *Գամզալի բէկին, պարշէն Մուրթուզ աղէն*, փոխարեն՝ *տանուտէր*-ի, ձեռագրում կա՝ *չենիս տանուտէր*, փոխարեն՝ *Սարուխ(ա)ն, Աւան*-ի, ձեռագրում կա՝ *Սարուխանս Աւանի որդի:* Կան նաև ավելի մանր այլ տարբերություններ:

Ի դեպ, *գրգր* հապավված բառն իբրև անձնանուն է վերծանվել («Դիվան..., V, էջ 241), մինչդեռ ձեռագրում նշված է *գրագիր:*

Սբ. Աստվածածին եկեղեցի. ճակատակալ նույն քարի աջ կողմում՝ 11 տող.

*Ես խոճա Ան|տոնս սակաւ օգ|նական եղէ | ս(ուր)բ եկեղեց|ոյս վարձուն. յիշ(ա)տ(ա)կ ինձ | եւ կ(ո)ղ(ա)կցին | Մարիանին | եւ որդոցն | Գասբարին, | Մելքում(ին):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2, ր. VI, գ. 44 ք. 35:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 253: «Դիվան...», V, էջ 242:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակության հեղինակն է Ս. Քամալյանը:

Սբ. Աստվածածին եկեղեցի. ճակատակալ նույն քարի ձախ կողմում խաչքարանդակից ներքև՝ 3 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ|արեխօս | Շահն(ա)զ(ա)րին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2, ր. VI, գ. 44, ք. 35):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 253: «Դիվան...», V, էջ 242:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակության հեղինակն է Ս. Քամալյանը:

Սբ. Աստվածածին եկեղեցի. խաչքար, ճակատակալ քարից վեր, ձախ կողմում՝ 4 տող.

*Ս(ուր)բ | խ(ա)չս | բա(րէ)խ(աւ)ս | Ազարին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 241:

Սբ. Աստվածածին եկեղեցի. խաչքար, ճակատակալ քարից վեր, աջ կողմում՝ 7 տող.

*Ս(ուր)բ | խ(ա)չս | բար(է)խ(աւ)ս | Գ|րի|գ|որին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 242:

Սբ. Աստվածածին եկեղեցի. խաչքար, նախորդներից վեր՝

*Սուրբ խ(ա)չս բարեխ(աւ)ս Շատախեցի Տեր Դաւթ(ին):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 242:

Ծանոթ. Շատախ գյուղի (այժմ՝ գյուղատեղի) մասին տե՛ս էջ 249-250: Տեր Դավիթը հեղինակել է մի շարք ձեռագրեր:

Սբ. Աստվածածին եկեղեցի. արևմտյան ճակատի նեղ պատուհանի վերևում՝

*Ղազ(ա)ր յիշէք:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 243:

Եկեղեցին 1892 թ. ենթարկվել էր նորոգման. այդ մասին հաղորդող արձանագրությունները փորագրված են արևմտյան ճակատին՝ մուտքի բարավորին, քիվից ներքև զետեղված քարին և հարավային ճակատից բացված լուսամուտների սրբատաշ գլխաքարերին: Ահա դրանք.

Սբ. Աստվածածին եկեղեցի. բարավորին՝ 5 տող

*Ընդլայնումն | դրանս յ(ի)շ(ա)ղ(ա)կ է Գանձ(ա)կէցի | տիկին Եղիսաբետի ամուսնոյ | Մարտիրոսի Ստեփանեանցի. | 1892 ամի:*

Հրատ. առաջին անգամ:



***Դանիել քահանա Տեր-Սիմեոնյան Տեր-Բարաղամյանց***

Սբ. Աստվածածին եկեղեցի. քիվից ներքև՝ 6 տող.

*Շրջապատ կարնիզ ս(ուր)բ տաճա|րիս շինեցաւ արդեամբք պօ|տպօլկովնիկ Թեմուրազ բեկի | որդի Աղէքսանդր բեկին | Մելիք-Բեկլարեանց, | 1892 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Աստվածածին եկեղեցի. լուսամուտի գլխակալ քարին՝ 2 տող.

*Լուսամուտս յիշատակ է Եախշի | Սարգիսեան Դաւիթեանց, 1892 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Սբ. Աստվածածին եկեղեցի. լուսամուտի գլխակալ քարին՝ 2 տող.

*Այս լուսամուտս յիշատակ է Եղսապէտի | Ծատրեան, որ ետ շ(ի)ն(ե)լ որդի | սորա Գրիգոր Ծատերեանց, 1892 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Հայտնի է, որ 1899 թ. ընթացող վերանորոգման աշխատանքներն անավարտ են մնացել նյութական միջոցների սղության պատճառով[2451]:

1917 թ. գյուղի հասարակությունը կրկին ձեռնամուխ է եղել նորոգել եկեղեցին, որի համար նախատեսված ծախսը կազմել է 1270 ռ.[2452]:

Իշխանությունների կողմից եկեղեցին փակվել է 1928 թ.[2453]:

2451. ՀԱԱ, ֆ. 56 ց. 6, գ. 373, թ. 53:
2452. ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 811, թ. 1:
2453. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:

**Քահանա.** գյուղի ծխատեր քահանաներից հայտնի է Սիմեոն Տեր-Սարգսյան Տեր-Բարաղամյանցը: Ծնվել է 1785 թ., կրթվել Եղիա քահանա Տեր-Մանվելյանի մոտ: 1818 թ. քահանա է ձեռնադրվել Ղարաչինար գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում և քահանայագործել Ղարաբուլաղ գյուղում[2454]: Հայտնի է, որ 1857 թ. եղել է գյուղի միակ ծխատեր քահանան[2455]: Ունեցել է 4 որդի. Դանիել (ծնվ. 1832 թ.), Մովսես (ծնվ. 1835 թ.), Սերոբ (ծնվ. 1838 թ.), Եփրեմ (ծնվ. 1842 թ.): Նրանցից ավագը՝ Դանիելը, որպես ծխական քահանա, հաջորդել է հորը և արժանի է առանձնահատուկ հիշատակման: Քահանա է ձեռնադրվել 1858 թ. և ավելի քան կես դար հովվել է իր հոտը: Հատկանշական է, որ երբ 1910 թ. կազմվում էին գավառի հոգևորականության ծառայողական ցուցակները, արդեն 81-ամյա Դանիել քահանայի անունով լրացված թերթիկի «Ընդունա՞կ է իւր պաշտօնում» հարցին պատասխանված է՝ «Ընդունակ է»: Ուներ երկու որդի՝ Լևոն (ծնվ. 1859 թ.) և Թեոդորոս (ծնվ. 1875 թ.)[2456]:

Ժամանակակիցները հիացմունքով են խոսել փայտի գեղարվեստական մշակման հանդեպ Դանիել քահանայի ունեցած նախասիրության մասին և նրա պատրաստած քանդակազարդ սկուտեղները համարել են արվեստի իսկական ստեղծագործություններ. «...ծխական քահանայ Տէր-Դանիէլը շատ հմուտ է հիւսնութեան, տակառագործութեան և մանաւանդ փայտի վերայ քանդակագործութեան մէջ: Եւ այդ բոլորը սովորել է ինքն իրան, առանց վարպետի: Տէր-հայրը ամբողջ օրը պարապում է իր արհեստով, իսկ նշանաւոր են մանաւանդ տէր-հօր քանդակած մատուցարանները, որ հիացնում են քանդակագործներին: Մինչև անգամ նորանից ընծայ է գնացել Վեհափառին և շատ եպիսկոպոսներին...»[2457]: Նաև՝ «Սկզբում, երբ արժ. Դանիէլ քահանան ձեռնադրուել է այս գիւղի վրայ 7-8 տուն է եղել: Պարապութիւնից ստիպուած տէր հայրը մի քանի արհեստներ է սովորել, գիտէ լաւ «խաչկալներ» շինել. տախտակագործութիւն, հիւսնութիւն և ընկուզենու փայտից գեղեցիկ սկուտեղպ շինել գիտէ: Այդ սկուտեղներից նուէր է տուել Գէորգ, Մակար կաթողիկոսներին և այլ յայտնի մարդկանց...»[2458]:

**Պատմական հուշարձաններ**

***Սբ. Կիրակոս մատուռ.*** գտնվում էր գյուղի գերեզմանատան հին մասում. «...կայ մի փոքրիկ մատուռ, որ գիւղացոց համար ուխտատեղի է: Աւանդութիւնն ասում է, որ դա Ս. Կիրակոս ճգնաւորի մատուռն է»[2459]:

2454. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 12, գ. 531, գ. 532, 533:
2455. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 542:
2456. ՀԱԱ, ֆ. Պ57, ց. 3, գ. 48, թ. 12-13:
2457. «Մեղու Հայաստանի» 1881, N 34, էջ 2:
2458. «Նոր-Դար» 1894, N 73, էջ 3:
2459. Նույն տեղում:



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Բրտիշեն (Դուլուս) գյուղատեղին և եկեղեցին***

***Բրտիշեն (Դուլուս).*** գտնվում է Մարտունաշենից 0,5 կմ հարավ-արևմուտք. գյուղատեղի է եկեղեցու և գերեզմանատան ավերակներով. «Գիւղիս դիմաց դէպի արևմուտք կայ մի փոքրիկ եկեղեցի, առանց արձանագրութեան. եկեղեցու չորս կողմը շինութեան հետքեր են երեւում և ինչպէս աւանդութիւնը պատմում է, այդտեղ բնակուելիս են եղել 50 տ. բրուտներ. ամբողջ աւերակը լցուած է բրուտների



*ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Բրտիշեն (Դուլուս) գյուղատեղիի գերեզմանոցը և տապանաքարեր*

խեցեղէն շինուածքների կտորտանքներով»[2459*]: Հայտնի է, որ 1804 թ. Դուլուսը շեն էր և ուներ 12 տուն (25 ար. 20 իգ.) հայ բնակիչ[2460]:

Բրտիշենի եկեղեցին ունի միանավ թաղածածկ հորինվածք: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են միայն մուտքի անկյունաքարերը:



*ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Բրտիշեն (Դուլուս) գյուղատեղիի եկեղեցու հատակագիծը*

Համեմատաբար բարվոք վիճակում է խորանին հարող հատվածը, իսկ մնացածը կանգուն է հազիվ 2 մ բարձրությամբ: Միակ մուտքը բացված է հյուսիսային ճակատից: Ունի միայն մեկ ավանդատուն՝ խորանի հարավային կողմում:

Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ Բրտիշենի եկեղեցին կառուցվել է ԺԷ-ԺԸ դարերում:

1989 թ. կիսավեր եկեղեցու հյուսիսային կողմում տարածվող գերեզմանոցում տեղահանված տեսանք ԺԸ դարին վերաբերող երկու սալատապաններ՝ հետևյալ վիմագրերով.

Տապանաքար. չափերը՝ 160 x 55 x 33 սմ, 4 տող.

*Այս է տապան | Սարքսի որդի |Վարթանին, | թվին ՌՃՀԸ (1729):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. չափերը՝ 119 x 40 x 28 սմ, 7 տող.

*Այս է տ|ապան | Ղազ|արի որ|թի Գալ|ուստին, | ՌՃՁԷ (1738):*

Հրատ. առաջին անգամ:

***Կուսանաց անապատ.*** գտնվում է Մարտունաշենից 3,5 կմ հարավ-արևմուտք: 1894 թ. անդրադառնալով այս հուշարձանին՝ Գ. Աշոտյանը նշել է. «...Գիւղին կից կայ մի եկեղեցի, որ գիւղացիք անուանում են «Կուսանաց անապատ»: Եկեղեցու վրայ արձանագրութիւն չկայ, բայց կիսականգուն են երկու միաբանութեան խուցեր»[2461]:

Կառուցված է եղել անմշակ քարով, կրաշաղախով: Շինարվեստը բնորոշ է ԺԶ-ԺԷ դարերին:

2459*. Նույն տեղում:
2460. "Акты...", т. II, с. 596.

2461. «Նոր-Դար» 1894, N 73, էջ 3:






***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Կոսակալի եկեղեցին և խաչքար***



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. Կոսակալի եկեղեցու հատակագիծը***

1980 թ. Կուսանաց անապատի միաբանական սենյակներն արդեն իսպառ ավերված էին, իսկ եկեղեցուց պահպանվել էր միայն խորանին և հյուսիսային ճակատին՝ մկրտարանի խորշով հանդերձ հարող հատվածները:

***Կոսակալ.*** այս անվամբ հայտնի գյուղատեղին կիսավեր եկեղեցով հանդերձ, գտնվում է Մարտունաշենից 2 կմ հարավ՝ գրեթե դեմ հանդիման «Միջի վանքին»՝ ձորակի ձախակողմի անտառապատ հարթակի կենտրոնում: Արևմտյան ճակատը, որ կողմից և բացված է եղել միակ մուտքը, իսպառ ավերված է: Ունի միանավ թաղածածկ հորինվածք: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Շուրջը նկատելի են այլ շինությունների, հավանաբար, միաբանական սենյակների փլատակներ, ինչպես նաև գյուղատեղիի մնացորդներ:

Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ Կոսակալի եկեղեցին կառուցվել է ԺԶ-ԺԷ դարերում:

1989 թ. հնավայրի տարածքում միայն մեկ արձանագրություն գտանք.



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Միջի վանք». տեսքը՝ հարավից, հյուսիսային որմը ներքուստ, արևմտյան ճակատը և ներքին տեսքը դեպի արևմուտք***

Խաչքար. ընկած էր եկեղեցու ներսում, չափերը՝ 72 x 57 x 28 սմ, ստորին մասում՝ կիսաեղծ 2 տող.

*Թվ(ի)ն ՈԼԹ (1190) է(ր). | Ա(ստուա)ծ ողորմի Սարգսի:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 239:

Տապանաքար. եղել է գերեզմանոցում.

*Ամփերին, Մելիցքու, Բուրխտ. թվին Ռ (1551):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 256: «Դիվան...», V, էջ 243:

**«Միջի վանք».** գտնվում է Մարտունաշենից 4 կմ հարավ՝ Կոսակալի արևելյան կողմում՝ ձորակի աջ պռնկին: Միջին վանք անունով հայտնի գյուղատեղի է՝ կիսավեր եկեղեցով և գերեզմանոցով: Եկեղեցին կառուցված է կիսամշակ և անմշակ քարով: Ունեցել է մեկ զույգ որմնասյան վրա հենված երկթեք ծածկի տակ առնված կիսաշրջանաձև թաղ, որն ամբողջապես փլված է: Քանդված է նաև եկեղեցու հյուսիսարևելյան անկյանը հարող մասը (թափվել է ձորը): Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Լուսավորությունն իրականացվել է դեպի ներս լայնացող 6 լուսամուտների միջոցով, որոնցից 3-ը բացված են արևելյան և 1-ական՝ մնացած ճակատներից:



***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Միջի վանք» եկեղեցու հատակագիծը***

Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ «Միջի վանքի» եկեղեցին կառուցվել է ԺԲ-ԺԷ դարերում:

Եկեղեցու ներսում և բակում տարածված գերեզմանատանը պահպանվել են տապանաքարեր ու խաչքարեր (բոլորը տեղահան, մի մասը բեկորված): Դրանցից մի քանիսն արձանագիր են.















***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Միջի վանք»-ի ներսում և շուրջը տարածված գերեզմանոցում պահպանված խաչքարեր ու տապանաքարեր***

Խաչքարի բեկոր. եկեղեցու ներսում, չափերը՝ 58 x 65 x 15 սմ, ստորին մասում՝ 3 տող.

*Ամիր Ասաք | կենկ(նե)ցի խ(ա)չս | զիս (յ)իշող Ա(ստու)ծ(ոյ) ա(ըր)հ(նուած) է:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. հարավային որմնասյան ստորին մասում՝ 4 տող.

*Խաչս | Վարդ/ուկայ որ/դին Ա(ստու)ծ(ոյ):*

Հրատ. առաջին անգամ:











***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Ջորի խաչ»***

***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Երի վանք»***

Խաչքար (բեկոր). հյուսիսային պատին արտաքուստ եղել է.
*Թվ(ին) ՌԴ (1555):*
Հրատ. «Դիվան...», V, էջ 239:
Ծանոթ. 1989 թ. տեղում չէր:

Խաչքար. չափերը՝ 120 x 49 x 15 սմ, 2 տող.
*Թիւրայմիշին, իւ(ր) կող(ա)յկ(ի)ց Շիրինին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 239:

Խաչքար (բեկոր). նախորդների մոտ՝ 1 տող.
*Այս [է]... [Մխ]իթարին:*
Հրատ. «Դիվան...», V, էջ 240:

Խաչքար. գեղաքանդակ, ճակատակալ քարից վերև, կենտրոնում, ստորին մասում՝ ելնդագիր 3 տող.

*Ես Սիմէօն անարժ(ա)ն էր(է)ցս կանգնեցի | զս(ուր)բ խ(ա)չս եւ ս(ա)կաւ աշխ(ա)տ(ե)ցի (ի) վ(ե)ր(ա) ս(ուր)բ եկեղե|ցոյս, (որք) երկիրպագանէք եւ զիս յիշ(ե)ց(է)ք:*

Գրակ. ԳԱԹ, **Սարգիս Քամալյան** ֆոնդ, ց. 2, բ. VI, գ. 44 թ. 35:




***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Երի վանք»-ի հատակագիծը***

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 253: «Դիվան...», V, էջ 240:
Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակության հեղինակն է Ս. Քամալյանը:






***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Երի վանք». հարավային ճակատից բացված մուտքը, հյուսիսարևմտյան որմնասյան մեջ ագուցված խաչքարը (1271 թ.), եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք***

Խաչքարի բեկոր. չափերը՝ 45 x 60 x 13 սմ, եկեղեցու հարավային կողմում (բակում), ստորին մասում՝ 4 տող.

*Այս եայ խաչ(ս) | հոգո(ւ)ն |Հայեաթ|ին:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 240:

Խաչքար. գերեզմանոցում, չափերը՝ 152 x 62 x 20 սմ.

*Փրկու(թ)ի(ւն) հոգ(ու)ն Փարին, թվ(ին) ՌԷ (1558):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքարի բեկոր. եկեղեցու ներսում, կողին 10 տող, չափերը՝ 43 x 33 x 15 սմ.

*Յանուն Ա(ստուծո)յ. | ՈԻԱ (1172) թ|ուական|ութեանս | հայոց. ե|ս Գիորգ կա|նգնեցի զ|սուրբ Յո-վ|անէս ի բ|(արե)խաւս...:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. տեղահան-ընկած եկեղեցու ներսում, չափերը՝ 64 x 49 x 9 սմ, արևմտյան նեղ կողին և հարավային երեսին՝ 14 տող.

*Թվ(ին) Ռ|ԾԳ (1604). Շ|ահ Ապ|ազն երկ.| այս | է հան|գիստ | Ռհան|էսին ո|րդի Պ|ալին | խամէ | իգիտ | ասիք(՞):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում, չափերը՝ 170 x 62 x 26 սմ.

*Թվ(ին) ՌԽԷ (1598). | ես Աղէս(՞), | Խաչեսիր, | Վարդան, | ծնող իմ՝ | Մարգ(ար)իղ | ողորմի | ասի:*

Հրատ. «Դիվան...» V, էջ 240 (թվականը չունեն):

Տապանաքար. բակում, 6 տող.

*...կա(ն)կ(ն)եց(աք)...| զխաչս եղբա(ւր) մեր | Պալին, կ(ո)ղ(ա)կց(ի)ն իւր...|իսպիտին իւրոն Տէր | Ազարին հ(ո)գ[ոյն]...| թվ(ին) ՌԾԸ: (1609):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 240:










***ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ. «Երի վանք». խաչքարեր և խաչքարերի բեկորներ***

Տապանաքարի բեկոր. օրորոցաձև, չափերը՝ 152 x 62 x 20 սմ, կողին՝ 4 տող

*Ես Տէր | դ...ի...ս խ(ա)չս | կ(ա)նգնեցի իմ | ...*

Հրատ. առաջին անգամ:

***«Ջորի խաչ».*** գյուղից 4,2 կմ հարավ կողք կողքի կանգուն են ԺԳ դարի գեղաքանդակ, սակայն անարձանագիր երկու խաչքարեր: Հնավայրը հայտնի է «Ջորի խաչ» անվամբ:

***«Երի վանք».*** գտնվում է Մարտունաշենից 5 կմ հարավ և շրջապատված է փարթամ անտառներով: Հնավայրը գյուղատեղի է՝ կանգուն եկեղեցով և ավերված միջնադարյան գերեզմանոցով: Եկեղեցին միանավ, թաղածածկ հորինվածքով արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված շինություն է, որի երկթեք ծածկի տակ առնված տանիքը ներքուստ հենված է երկու զույգ թաղակիր կամարների վրա: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Ունի խիստ նեղ 3 լուսամուտ, որի պատճառով էլ եկեղեցու ներսը բավականաչափ խավար է: Հյուսիսային պատի մեջ՝ իր ավանդական տեղում, պահպանվում է մկրտարանի խորշը: Պատերի մեջ ագուցված են միջնադարյան արձանագիր ու անարձանագիր բազմաթիվ խաչքարերի բեկորներ:

Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ Երի վանքի եկեղեցին կառուցվել է ԺԶ-ԺԷ դարերում:

Խաչքար. եկեղեցու ներսում ծառայում է իբրև որմնասյուն, տեղադրված է գլխիվայր, չափերը՝ 130 x 76 x 43 սմ, ստորին մասում՝ 5 տող.

*Թ(վին) ՉԻ (1271). | ես Աւտար որդ|ի Մանասի կա|ն(գն)եցի զխաչս | ինձ եւ եղբաւր իմոյ...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 254: «Դիվան...», V, էջ 243:

Տարընթերցում. «Դիվանում» *Աւտար* անձնանունը ընթերցվել է՝ *Տաւտար:*

Խաչքարի բեկոր. ընկած է խորանի մեջ, չափերը՝ 45 x 51 x 11 սմ, 4 տող.

*Կանգնեցի զխաչս ի բարեխա(ւս)|ութ(իւն) հաւր իմո, որք կարդէք, յիշեցէք | ընդ նմին եւ զարարող խաչիս Մեւ|...*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված է խորանի մեջ հարավային պատին, հորիզոնական դիրքով, չափերն են՝ 68 x 40 x 26 սմ, 3 տող.

*Սուտ քահան(ա)յ Ազար|իային, յիշող Ա(ստու)-ծ(ոյ) ա(ւր)հ(նուած) է, | ամենեին:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. գտնվելիս է եղել եկեղեցու հարավային կողմում.

*Այս է տապան Գրիգոր եպիսկոպոսի Գանձակեցւոյ:*

Հրատ. «Նոր-Դար», 1894, N 73, էջ 3: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 255: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 334: «Դիվան...», V, էջ 243:

Ծանոթ. Լալայանի մոտ՝ *Այս է հանգիստ սուրբ Գրիգորայ Գանձակայ եպիսկոպոսին:*

1970 թ. Մարտունաշենում համագյուղացիների նախաձեռնությամբ կառուցվել է Հայրենական մեծ պատերազմում զոհված 103 մարտունաշենցիների հիշատակը հավերժացնող հուշարձան: Գյուղից պատերազմին մասնակցել են 165 զինվոր: Նրանցից Վաղինակ Սիմոնի Զաքարյանն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Մարտունաշենը հայաթափ է եղել 1991 թ. մայիսի 2-ին[2262]:

## ՄԻԽԱՅԼՈՎԿԱ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք, Կուրակ գետի ձախափնյա վտակների միջև ընկած սարահարթի վրա, ծովի մակերևույթից 1180-1200 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ գյուղը հիմնվել է 1870 թ. մերձակա գյուղերի հողամասերից առանձնացված և նորաբնակ ռուսներին հատկացված տա-



***ՄԻԽԱՅԼՈՎԿԱ. տեսքը՝ հարավ-արևելքից***

րածքում. «Գիւղը հիմնուել է 1870 թուին և բաժին է ստացել Հաջիքէնդի, Սուլուքի և Սափի-քիրդի գիւղերի հողերից: 1885 թ. եղել է 22 տուն»[2463]:

**Կառուցապատում.** 1890-ական թվականների վերջին Միխայլովկան արդեն կառուցապատված է եղել բավականաչափ լավ բնակարաններով, իսկ փողոցի երկու կողմերը զարդարել են ծառատունկերը[2464]:

**Բնակչություն.** 1886 թ. գյուղն ունեցել է 28 տուն, 131 շունչ (70 ար., 61 իգ.)[2465], 1890-ական թվականների վերջերին՝ 28 տուն՝ 131 շունչ[2466], 1908-ին՝ 192[2467], 1914-ին՝ 345 բնակիչ[2468]:

1950-ական թվականներից սկսել են գյուղ մուտք գործել թուրքերը, որոնք 1989 թ. կազմել են մոտ 15 ընտանիք:

---

2462. 1991 թ. ապրիլի 28-ին զոհված 5 հայորդիներին Մարտունաշենի գերեզմանոցում մայիսի 1-ին թաղելուց հետո, երբ հաջորդ օրը գյուղացիները ինքնահողի էին գնացել և նրանց մեծ մասը գտնվում էր գերեզմանոցում գյուղ են ներխուժում խորհրդային բանակն ու թուրքերը: Մարտունաշենցիները հենց գերեզմանոցից փախչում են Գետաշեն, իսկ այնտեղից էլ օրեր անց գետաշենցիների հետ միասին ենթարկվում են բռնագաղթի:

2463. «Նոր-Դար», 1890, N 125, էջ 3: Նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 359:

2464. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, նույն տեղում:

2465. ”Свод...”, с. 86-87.

2466. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, նույն տեղում:

2467. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 322.

2468. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 159.







*ՄԻՐԶԻԿ. տեսարաններ գյուղից և լքված տուն*

1990 թ. բռնագաղթի ընթացքում մերձաբնակ հայերի հետ գյուղից հեռացել են նաև Միխայլովկայի ռուս-մոլոկանները:

## ՄԻՐԶԻԿ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք՝ Գանձակ գետի ձախափնյա վտակների միջև ընկած սարահարթի վրա, ծովի մակերևույթից 1000-1160 մ բարձրության վրա: Հարավակողմից և արևելքից գյուղը շրջապատված է անտառապատ լեռներով:

**Պատմություն.** բնակլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ գյուղի տարածքը բնակեցված է եղել պատմական անհիշելի ժամանակներից: Դեռևս ԺԹ դարի վերջերին և Ի դարի սկզբին Թիֆլիսի հնագիտական ընկերության կողմից Գանձակի տարածքում պեղումներ իրականացնող հնագետ Ֆ. Շուլցը գյուղի մոտ բացել է կրկնակի թաղումով դամբարան, որտեղից հայտնաբերված իրերը վերագրել է միջին բրոնզի և վաղ երկաթի ժամանակներին. «...Միրզիկ գիւղի մօտ բացած գերեզմանի մէջ Շուլց գտել է երկու յարկ ոսկորներ: Վերին յարկը պարունակում է 9 կմախք և երկաթեայ իրեր, ստորին յարկը նոյնպէս 9 կմախք և բրօնզեայ իրեր: Ինչպէս երևում է, մարմինները թաղվել են պատրաստ գերեզմանի մէջ: Առաջին և վերջին թաղումների մէջ անցել է 8-10 դար ժամանակ, այնպէս որ բրօնզեայ դարը փոխվել է երկաթեայ դարի. կմախքները ուղղված են դէպի հիւսիս: Գերեզմանում Շուլց գտել է աւելի հասարակ առարկաներ, մատանիներ, ապարանջաններ, նետ, դաշոյն և ուլունքներ...»[2469]:

Գյուղում և նրա մերձակայքում պահպանված պատմական հուշարձանները վկայում են, որ այստեղ կյանքն անընդմեջ հարատևել է նաև միջնադարում:

Ավանդաբար պատմում են, որ գյուղը կոչվել է Վարդաշեն, հետագայում (պարսկական տիրապետության օրոք) վերանվանվել՝ Միրզիկի: Դա եղել է մի պարսիկ հարկահավաքի անունը, որն առաջարկել է գյուղն իր անունով կոչելու դիմաց գյուղացիներին ազատել հարկից: Վարդաշենցիները համաձայնել են գյուղը կոչել «միրզա», որը հետո վերածվել է Միրզիկի[2470]: Թե որքան է վստահելի սույն ավանդությունը, դժվար է ասել: Բայց գոնե ԺԷ դարում գյուղն արդեն հայտնի էր Միրզիկ անունով, քանի որ Փիլիպպոս կաթողիկոսի գրած մի կոնդակում գյուղը հիշատակված է այդ անվամբ[2471]:

**Կառուցապատում.** ԺԹ դարում գյուղ այցելած ուսումնասիրողները հիացմունքով են խոսել նրա մասին: Ե. Լալայանը գրում է. «...գիւղը շատ գեղեցիկ տեսք և քաղցրահամ աղբիւրներ ունի: Միայն կանոնաւոր փողոցներ չկան և կալերը, մարագները և գոմերը գտնւում են տների մօտ»[2472]: Եպիսկոպոս Բարխուտարյանցը Միրզիկը նկարագրում է որպես տեսարանահաճո և արևելահայաց լանջի վրա տեղադրված, մրգատու ծառերի առատությամբ, մաքուր օդ ու ջրով հագեցած մի բնակավայր, որով էլ, ըստ նրա, պայմանավորված էր մարդկային կյանքի երկարակեցությունը[2473]:

**Բնակչություն.** Միրզիկի ազգատոհմերի պատմությունն ուսումնասիրելու առումով ուշագրավ է 1839 թ. գյուղի բնակիչների հետևյալ անվանացանկը.

---

2469. «Մշակ», 1903, N 117, էջ 1:
2470. **Գրիգորյան Բ.**, Միրզիկ, թե՞ Վարդաշեն (հատված «Հետքերն անհետանում են» հուշագրությունից) «Գարդմանք», 1996, N 2, էջ 12-13:
2471. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 48:
2472. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 316-317:
2473. **Բարխուտարեանց Մ.,** Արցախ, էջ 276:

«1. Գաբրիէլ Գրիգորեան, կին սորա՝ Սաբէդ:

2. Աբրահամ Սէվեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Շահվէրդի, Բէգլար, Օհաննէս, դուստր՝ Խաթայի. կին 1-ինի՝ Հէրիք, եղբօրորդիք՝ Աւէտիս, կին սորա՝ Աննման, ուստերք՝ Սողոմոն և Պօղօս:

3. Գաբրիէլ Գրիգորեան, կին սորա՝Մարիամ, ուստերք՝ Յակոբ, Աւէտիք, Օհաննէս և Սահակ:

4. Մկրտիչ Թամրազեան, կին սորա՝ Ազիզ, ուստերք՝ Յովակիմ, Կարապետ, Պօղոս, Խաչատուր և Գրիգոր, դստերք՝ Մաշաք, Վարդի և Ջավահիր:

5. Յովսէփ Տէր Մկրտչեան, ուստերք՝ Պետրոս, կին սորա՝ Գիւլի, ուստր՝ Յօհաննէս, դուստր՝ Հէրիք, եղբօրորդիք՝ 1-ին Յարութիւն, կինն՝ Սիրուննան, ուստր՝ Վարդազար, դստերք՝ Եղիսաբէտ, Հռոմսիմ, Մարիամ, Թանգի, 2-րդն Սիմօն:

6. Մովսէս Յարութիւնեան, կինն՝ Հռոմսիմ, ուստերք՝ Վարդան, Ղազար և Անտոն, դստերք՝ Եղիսաբէթ, Մարիամ և Հէրիք:

7. Աւէտիս Սարգսեան, կին սորա՝ Թանգի, ուստերք՝ Խաչատուր, Յարութիւն, դստերք՝ Մարիամ, Եղիսաբէթ, եղբարք՝ Բազումն, կինն՝ Սիրուննան, ուստր՝ Սարգիս, 2-ն՝ Յովսէփ, կինն՝ Ջանի, ուստր՝ Մարտիրոս, մայր սոցա՝ Շահնազ:

8. Յակոբ Աբրահամեան, կինն՝ Թագուհի, ուստերք՝ Կարապետ և Մկրտիչ, եղբարք՝ 1-ին Յարութիւն, կին սորա՝ Թագուհի, 2-ն՝ Յօհաննէս, սոցա մայր՝ Մարիամ:

9. Առստամ Մկրտչեան, կինն՝ Հռոմսիմ, ուստերք՝ Դաւիթ, Յովսէփ և Վարդազար, դստերք՝ Եղիսաբէթ և Մագթաղ, հարսն՝ Խանում, ուստերք՝ Յարութիւն և Ղազար, դուստր՝ Թէլլու:

10. Եղեայ Խաչատուրեան, կինն՝ Սառայ, ուստերք՝ Յարութիւն, Օհանէս, Գրիգոր, դուստր՝ Մագթաղ:

11. Խաչատուր Առաքելեան, կինն՝ Թանգի, ուստր՝ Յարութիւն, դստերք՝ Նախշուն և Շողակաթ:

12. Վարդան Օհանեան, կին սորա՝ Հռռի:

13. Ալլահվէրդի Բաբաջանեան, կին սորա՝ Եղիսաբէթ, ուստր՝ Օհանէս, դուստր՝ Մագթաղ:

14. Խուդավէրդի Ղարիբեան, մայր սորա՝ Ռէհան:

15. Գաբրիէլ Աղաբէգեան, եղբայր Յարութիւն, քոյրք՝ Հէրիքնազ և Սանդուխտ, մայրն՝ Մարիամ:

16. Վարդան Յակոբեան, կինն՝ Սառայ, ուստերք՝ Օհանէս, Յակոբ, դստերք՝ Մարիամ և Հէրիք:

17. Պետրոս Գրիգորեան, կինն՝ Ազիզ, եղբարք՝ 1-ն Խաչատուր, կինն՝ Մուրվաթ, 2-ն՝ Օհաննէս և 3-ն՝ Սարգիս:

18. Սաբար Յարութիւնեան, կինն՝ Հռոմսիմ, ուստերք՝ Յարութիւն, Սողոմոն և Յօհաննէս և Խաչատուր, դուստր՝ Շողակաթ, հարսն՝ Մարիամ, ուստերք՝ Աւագ և Բեղխեհեմ:

19. Դաւիթ Եղեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Յարութիւն, Սահակ, դուստր՝ Մագթաղ, մայր՝ Մարիամ:

20. Յարութիւն Յովսէփեան, կինն՝ Եղիսաբէթ, դուստր՝ Մագթաղ, եղբարք 1-ն՝ Յօհաննէս, կինն՝ Հէրիք, դուստր՝ Նախշուն, 2-ն՝ Գրիգոր, քոյր սոցա՝ Անայի, մայր սոցա՝ Եղիսաբէթ:

21. Յովակիմ Յարութիւնեան, մայր սորա՝ Եղիսաբէթ, քոյրք՝ Ջավահիր և Մարիամ»[2474]:

Արխիվային վավերագրերում գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալները հայտնի են 1804 թվականից: Առկա նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղի բնակչությունն անընդհատ ավելացել է և առավելագույնի հասել 1906 թվականին՝ 953 շունչ: Սակայն տեղի են ունեցել նաև բնակչության մասնակի նվազման դեպքեր (ինչպես, օրինակ, 1866-1873, 1906-1907, 1912-1914 թթ.)՝ կապված, մասնավորապես, արտագաղթերի հետ:

Ստորև ներկայացնում ենք Միրզիկի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալները.

2474. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 27:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2474] | 13 | 28 | 17 | 45 |
| 1839[2475] | 21 | 74 | 63 | 137 |
| 1845[2476] | | 120 | 81 | 201 |
| 1847[2477] | | 134 | 76 | 210 |
| 1849[2478] | | 143 | 59 | 202 |
| 1852[2479] | | 168 | 162 | 330 |
| 1861[2480] | 27 | | | |
| 1866[2481] | 38 | 193 | 186 | 379 |
| 1872[2482] | | 180 | 107 | 287 |
| 1873[2483] | | | | 225 |
| 1875[2484] | | | | 240 |
| 1876[2485] | | | | 265 |
| 1877[2486] | | 161 | 103 | 264 |
| 1878[2487] | | 165 | 102 | 267 |
| 1881[2488] | | 189 | 116 | 305 |
| 1882[2489] | | 206 | 132 | 338 |
| 1883[2490] | | 198 | 104 | 302 |
| 1885[2491] | | 250 | 220 | 470 |
| 1886[2492] | 71 | 339 | 264 | 603 |
| 1887[2493] | | 272 | 241 | 513 |
| 1888[2494] | 70 | 286 | 252 | 538 |
| 1889[2495] | | 295 | 261 | 556 |
| 1890[2496] | | 305 | 270 | 575 |
| 1891[2497] | | 320 | 273 | 593 |
| 1892[2498] | | 349 | 310 | 659 |
| 1893[2499] | | 355 | 314 | 669 |
| 1894[2500] | | 368 | 329 | 697 |
| 1897[2501] | | 424 | 388 | 812 |
| 1898[2502] | | 428 | 397 | 825 |
| 1899[2503] | | 434 | 401 | 835 |
| 1900[2504] | | 441 | 400 | 841 |

2474. ”Акты...”, т. II, с. 596.
2475. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 27:
2476. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
2477. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
2478. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
2479. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2480. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2481. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2482. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2483. Նույն տեղում, գ. 3864:
2484. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2485. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2486. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2487. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2488. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2489. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2490. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2491. Նույն տեղում, գ. 3874, թ. 29:
2492. ”Свод...”, с. 84-85. Այլ տեղեկագրում ցույց է տրված 44 տուն («Արձագանք», 1886, N 20, էջ 295):
2493. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
2494. Նույն տեղում, գ. 3882, թ. 131: Նաև՝ «Նոր-Դար» 1888, N 202, էջ 2:
2495. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3884,թ. 226-227:
2496. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
2497. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
2498. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
2499. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2500. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
2501. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
2502. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
2503. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
2504. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1901[2505] | | 458 | 411 | 869 |
| 1902[2506] | | 465 | 418 | 883 |
| 1905[2507] | | 466 | 423 | 889 |
| 1906[2508] | | 498 | 455 | 953 |
| 1907[2509] | | | | 697 |
| 1908[2510] | 60 | 402 | 301 | 703 |
| 1909[2511] | | 462 | 414 | 876 |
| 1910[2512] | | 433 | 318 | 751 |
| 1912[2513] | | 474 | 419 | 893 |
| 1914[2514] | | | | 623 |
| 1917[2515] | 75 | | | 416 |
| 1924[2516] | 157 | | | |
| 1925[2517] | | | | 895 |
| 1981[2518] | | | | 846 |

**Զբաղմունքը.** բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ: Հարուստ անտառների առկայությունը հնարավորություն է տվել զբաղվելու նաև փայտահատությամբ ու դրա վաճառքով[2519]:

**Դպրոցներ:** ***Հայոց դպրոց.*** հիմնադրման վերաբերյալ ստույգ տեղեկություններ հայտնի չեն: Սակայն վավերագրերում 1906 թ. դպրոցի վերաբացման մասին պահպանված տեղեկությունը[2520] խոսում է այն մասին, որ այն գործել է և, անկասկած, փակվել է ցարական կառավարության հրամանով (1895):

1906 թ. դեկտեմբերի 12-ից այն գործել է կանոնավոր դասընթացներով որպես միդասյա ծխական ուսումնարան[2521]: 1907 թ. Սբ. Գաբրիել եկեղեցու ծխական դպրոցը հիշատակվում է որպես երկսեռ կրթօջախ[2522]: Հայտնի է, որ այդ թվականի մայիսի 29-ին դպրոցը կարճ ժամանակով փակվել է նյութական սղության պատճառով[2523]: Հայտնի է նաև, որ 1908 թ. նույն պատճառով դպրոցը նորից հայտնվել է փակման վտանգի առջև[2524] և նույնիսկ միակ ուսուցչի աշխատավարձը հոգաբարձությունը ամիսներով չի կարողացել վճարել[2525]: Չնայած դրան՝ դպրոցը շարունակել է գործել նաև 1909 թ.՝ ունենալով 25 աշակերտ (4-ը՝ աղջիկ) և 1 ուսուցիչ[2526]:

***Պետական դպրոց.*** հայոց դպրոցի նյութական ծանր կացությունը պայմանավորված էր գյուղում պետական դպրոցի առկայությամբ: Վերջինիս բացման տարեթիվը հայտնի չէ, բայց, օրինակ, 1910-1919 թթ. գործել է և այդտեղ ուսուցչություն էր արել Միրզիկ և Բրաջուր գյուղերի ծխատեր քահանա Մարտիրոս Եպիսկոպոսյանցը[2527]:

**Սբ. Գաբրիել եկեղեցի.** գյուղամիջում գտնվող Սբ. Գաբրիել եկեղեցին, ըստ մուտքից վեր փորագրված շինարարական արձանագրության, կառուցվել է 1674 թ.

*Արդեամբք եւ ծախիւք Միրզու հասարակութեան կառուցաւ ս(ուր)բ Գաբրիէլ եկեղեցիս թ(վին) 1674, ի հաշուէ եկեղեցւոյ նորոգեցաւ 1910:*

Հրատ. «Արձագանք» 1886, N 20, էջ 295: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 276: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 316:

Ծանոթ. հրատարակել են կրճատումներով և թերի:



***ՄԻՐԶԻԿ. Սբ. Գաբրիել եկեղեցու հատակագիծը***

Հայտնի է, որ 1910 թ. վերջին նորոգությունից զատ համանման աշխատանքներ կատարվել են դեռևս 1863 թ., երբ եկեղեցու գումարներով սվաղել էին ներսի պատերը[2528]:

ԺԹ դարավերջի այցելուներից Ե. Լալայանը եկեղեցին բնորոշել է որպես փոքրիկ, խոնավ կառույց[2529], իսկ մեկ ուրիշ ականատեսի եկեղեցին ներկայացրել է որպես չորս հոյակապ սյուների վրա կառուցված փառավոր տաճար[2530]: Եպիսկոպոս Բարխուտարյանցը եկեղեցին համառոտ այսպես է

2505. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
2506. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
2507. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
2508. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2509. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2510. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն գյուղն 610 բնակիչ (”Кавказский календарь на 1910 г.”, с. 322):
2511. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 117:
2512. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
2513. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
2514. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 158.
2515. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2516. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, թ. 49:
2517. Ըստ գյուղխորհրդի մատյանի:
2518. «ԱՍՀ», հ. 6, էջ 593:
2519. «Նոր-Դար», 1888, N 202, էջ 2:
2520. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 301, թ. 5:
2521. Նույն տեղում, գ. 224, թ. 7:
2522. Նույն տեղում, գ. 559, թ. 15: Նաև՝ գ. 323, թ. 2:
2523. Նույն տեղում, գ. 296, թ. 3:
2524. Նույն տեղում, գ. 402, թ. 1: Նաև՝ գ. 505, թ. 1:
2525. Նույն տեղում, գ. 505, թ. 1:

2526. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 17:
2527. ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 375, թ. 1, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:
2528. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 40:
2529. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 298:
2530. «Արձագանք» 1886, N 20, էջ 295:



***ՄԻՐՋԻԿ. Սբ. Գաբրիել եկեղեցի. տեսքը՝ հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից և զանգակատունը***

նկարագրել. «...քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ և խաչազարդեալ վաղեմի խաչքարով. երկարութիւն 16 մետր 95 սանթիմ, լայնութիւն 12 մետր 10 սանթիմ: ...ունի եւ փոքր զանգակատուն...»[2531]:

Սբ. Գաբրիել եկեղեցին ունի եռանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք: Խորանի երկու կողմերում մեկական ավանդատներ են: Ավանդական տեղում է մկրտարանի խորշը: Կամարակապ միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Եկեղեցու լուսավորությունն իրականացված է դեպի ներս լայնացող 6 լուսամուտների միջոցով: Կառուցված է կոփածո քարով, կրաշաղախով: Անկյունաքարերը և բացվածքների եզրակալները սրբատաշ են:

1880-ական թվականների սկզբներին մուտքին կից, սրբատաշ քարով կառուցվել է կրկնահարկ զանգակատուն, որն առաջին հարկում քառասյուն է, իսկ երկրորդում ունի սրածայր վեղարով ավարտվող վեցասյուն ռոտոնդա:

Եկեղեցու որմերին առկա էին հետևյալ վիմագրերը.

2531. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 276:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ավանդատան խորանի մեջ՝ 5 տող.

*Կանգնեցի Սարուխանս սուրբ խաչս / Ոսկի հ(ո)գ(ու)ն, / Եղիայ / կ(ա)զմ(ո)ղ խ(ա)չ(ի)ս, / թ(վին) ՌՀԶ (1627):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 276 (չունի՝ *Եղիայ / կ(ա)զմ(ո)ղ խ(ա)չ(ի)ս* հատվածը):

Ծանոթ. խաչքարը փոխադրված է եղել գյուղի գերեզմանատնից: Թվականը փորագրված է վերին խաչաթևի երկու կողմերում:

Խաչքար. ագուցված մուտքի աջ կողմում, երեսով դեպի հարավ, գեղաքանդակ.

*Թվ(ին) ՌԾ... (1600-ական թթ.):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված մուտքի ձախ կողմում, երեսով դեպի հարավ, գեղաքանդակ.

*Թվ(ին) ՌԾԵ (1606 թ.):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին.

*Ս(ուր)բ խ(ա)չս Եթար փաշին:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին, կից նախորդին.

*Ս(ուր)բ խ(ա)չ(ս) բարեխ(ա)ւս Արխօշին է, թ(վին) ՌՀԶ (1627):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին, կից նախորդին.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(արեխաւս) Մարկոսին, Մարեանին:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված է ներքուստ արևելյան պատին.

*Թ(վին) ՌԾԲ (1603):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. մկրտության ավազանում.

*Թվ(ին) ՌՃԶ (1657):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված է ներքուստ հարավային պատին.

*Թ(վին) ՌՁԲ (1633):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. հյուսիսային պատին

*Այս է հանգիստ...:*

Հրատ. առաջին անգամ:

1928 թ. Ադրբեջանի խորհրդային իշխանությունների որոշմամբ եկեղեցին փակվել է[2532]: Մինչև բռնագաղթն այն կանգուն էր:

*Քահանա.* Մարտիրոս Եղիազարյան Եպիսկոպոսյանց. 1871-1879 թթ. կրթվել է Փիրի Սբ. Գևորգյան դպրոցում: Քահանա է ձեռնադրվել 1897 թ. հունվարի 21-ին և հովվել Սբ. Գաբրիել եկեղեցու ծուխն առնվազն մինչև 1905 թ.[2533]:

**Գյուղամերձ հնավայրեր.** գյուղի հարավային կողմում պահպանվել են Սբ. Աստվածածին և Օվսափ մատուռների մնացորդները, իսկ մերձակայքում գտնվում են մի քանի գյուղատեղիներ:

Դրանցից մեկը «Խաչի փոսն» է, որի անունը կապված է փոսի մեջ ընկած մի խաչքարի հետ, որը 1970 թ. մի ուսկանապատցի տեղափոխել և կանգնեցրել է գյուղի ճանապարհին՝ իր կառուցած աղբյուրի վրա: Գյուղատեղին տարածվում է գյուղից 1 կմ հարավ-արևելք՝ «Մեծ բլուր» կոչվող անտառապատ բարձր բլրի լանջին: Վերջին ժամանակներում գյուղացիները բլրի լանջով ջուր անցկացնելիս հայտնաբերել են բլրի գագաթից մինչև առվակը իջնող ստորերկրյա գաղտնուղին:

Մյուս գյուղատեղին հայտնի է «Թումանի» անունով: Նրա փլատակները փռված են գյուղից հարավ-արևմուտք՝ բարձրադիր, անտառապատ տեղանքում:

«Շինատեղ» անվամբ գյուղատեղին գտնվում է Միրզիկից մոտ 2 կմ հարավ-արևմուտք: Մինչև բռնագաղթն այնտեղ կանգուն էր եկեղեցին:

Գյուղի հյուսիսային կողմի անտառապատ բարձունքին պահպանվել են «Տամբլուտի» ավերակները:

Հաջորդ գյուղատեղին «Ընապատն» է: Այն տարածվում է գյուղից 2 կմ հարավ, բնության մի գեղատեսիլ վայրում՝ երեք կողմից շրջապատված անտառով, իսկ հյուսիս-արևելքից՝ ձորակով:

**Քարհանի (Քարխանի) վանք.** «Ընապատ» գյուղատեղիում է գտնվում Քարհանի կամ Աստվածամոր վանքը. «Այս եկեղեցին կոչւում է Միրզիկի անապատ, գիւղին մօտ լինելու պատճառով, և Քեարխանի վանք՝ իւր մօտակայ պղնձահանքի անունով...»[2534]:

Վանքի հիմնադրումը տեղի է ունեցել ԺԶ-ԺԷ դարերում: Ունեցել է բազմանդամ միաբանություն: Գործել է մինչև 1870-ական թվականները: Ունեցել է կալվածքներ, որոնցից հիմնականում զրկվել է ԺԹ դարի կեսերից հետո:

Վանքի պատմության ուսումնասիրության առումով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում 1853 թ. կազմված սույն տեղեկագիրը. «Անապատս այս յառաջին ժամանակս լեալ է շքեղաշուք և նշանաւոր վանք ունելով բաւականաթիւ միաբանս և վանահայրս, որպիսիք են՝ Եղեազար եպիսկոպոս, Յովսէփ վարդապետ, ապա՝ Սարգիս եպիսկոպոս, յետ նորա Մկրտիչ և Պօղոս վարդապետ, որոց և գերեզմանք ոմանց ընդ այլոցն գտանին այժմիկ ի գաւթի եկեղեցւոյն շինուածքդ նոցա և կացարանաց անապատականացն և շրջապատ պարիսպք ի ներկայումս կան ի քայքայեալ դրութեան, միայն եկեղեցին գտանի ամբողջ քարաշէն գոյ և առանձին մատուռ մի խորանաձև ուխտատեղի, ուր երբեմն գնան ուխտաւորք: Անապատս այս կայացեալ կայ խստորեն բարձր և երկայնանիստ լերինն նովան կոչեցեալ յարևմտից կողմն հանդէպ քարաժայրին, որ անուանի «Ծիլ քերծ» կամ «Ճգնաւորի քերծ» է ընդ մէջ երկուց ծորակաց, որք սկսանին ի նոյն լեռն է հանդերձ առուիք ջուրց յաջմէ և յահեկէ Անապատին, լայնութեամբ հեռի միմեանց իբրև երկու վերսիւ, և ի վայր իջեալ այս ծորակք և ձգեալ դէպ յարևելս մինչ իբրև ցերեք վերս երկայնութեամբ, ապա խառնին և միանան...»[2535]:

*Կալվածքները.* հիշյալ երկու վտակների միջև ընկած ողջ տարածքը՝ «մի քանի օրավար պատուական հողեր»[2536], պատկանելիս է եղել վանքին:

1886 թ. վանքի կալվածքը բաղկացած էր վարելահողից և անտառից[2537]:

Վանական համալիրի մեջ մտել է եկեղեցին՝ արևմուտքից կից փոքր գավթով, և միաբանության սենյակները: Վանքն ունեցել է շրջապարիսպ, որոնք դեռևս անցյալ դարավերջին կիսավեր էին:

2532. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
2533. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 59:

2534. «Արձագանք» 1886, N 20, էջ 295:
2535. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 16:
2536. **Բարխուտարեանց Մ**, Արցախ, էջ 277:
2537. ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 138, թ. 100-101:



***ՄԻՐՁԻԿ. խաչքարեր և տապանաքար՝ ագուցված Սբ. Գաբրիել եկեղեցու արևմտյան ճակատում***

Բոլոր շինությունները կառուցված են անմշակ քարով, կրաշաղախով:

Եկեղեցին միանավ, թաղածածկ դահլիճ է: Արևելքում կիսաշրջան եզրագծով խորանն է, որի երկու կողմերում ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատներ են: Թաղակիր կամարը հենված է զույգ որմնասյուներին: Լուսավորվում է արևելյան ճակատի 3 և հարավային ճակատի 2 դեպի ներս լայնացող փոքր պատուհաններից: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատին կից գավթից:

Եկեղեցու պատերին ագուցված խաչքարերին պահպանվել են հետևյալ արձանագրությունները

Խաչքար. բեմի ձախ կողմում.

*Թվ(ին) ՌԽԸ (1599)*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. բեմի ճակատին.

*Թվ(ին) ՌԿԴ (1615):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 276: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 345 (թվականը ընթերցված է՝ ՌԿԵ):



***ՍԻՐՁԻԿ. Քարհանի վանք. հատվածներ***

Խաչքար. խորանի հյուսիսային խորշին.

*Թվ(ին) ՌՀԹ (1630):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. մուտքի ձախ կողմում

*... լա..., թվ(ին) ՌՃԲ (1653):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. հարավային լուսամուտին

*...(ա)...խս հանգիստ Խոսրովի...:*

Հրատ. առաջին անգամ:

Գավիթը գրեթե քառակուսի հատակագծով շենք է: Խաչվող կամարների վրա հենված ծածկի կենտրոնում թողնված է շրջանաձև, փոքր երդիկ: Գավիթն ունի 2 մուտք, որոնք բացվում են եկեղեցուն հպված հյուսիսային և հարավային պատերից:

1980 և 1985 թթ.՝ մեր այցելությունների ժամանակ, գավթի հատակն ամբողջովին հողածածկ էր, մինչդեռ այդտեղ ամփոփված էին վանքի առաջնորդներից: Բարեբախտաբար, ԺԹ դարավերջին եպիսկոպոս Բարխուտարյանցը տապանագրերից մի քանիսն ընդօրինակել է: Ահա դրանք.

Տապանաքար. գավթում.

*Այս է հանգիստ Չարեքու անապատի Մկրտիչ վարդապետին, թվ. ՌՂԵ (1646):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 277: «Դիվան...», V, էջ 250:

Ծանոթ. թվականն անհավանական է, պետք է լինի՝ ՌՃՂԵ (1746):

Տապանաքար. գավթում.

*Հանգիստ հողապատեան տեառն Եղիազարու յաւէտ հանգիստ է անվշտակիր նշխար սորին, որ*



***ՄԻՐԶԻԿ. Քարհանի վանք. հատվածներ և հատակագիծը***

*աստ կան. հոգին զոլով միջնորդ առ տէր ժտական վասն իւր որդեկացս, որ եմք տատանման փորձանաց զաղտնի, որ օժտել փութան զմիաբանութիւն հոգևորական, փրկել ի փորձանաց այժմ և յապագայն հանգեցաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնւոյ ՌՃԿԲ (1713):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 277: «Դիվան...», V, էջ 250:

Տապանաքար. գավթում.

*Այս է տապան տանս սպասաւոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ աղա անուանի, եղբայր Թամրազ Քալանթարու Ջակամ Մեծ Սահակ ի Ղարամուրատ գեղջէ, կոչի Արամի, մահն դիպէ վաքսուն :Բ: (2) ամի. ՌՃՂ: (1741) թուի և չամդրեա մարմին է :ՂԳ: (93) ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 277:

Տապանաքար. վանքի արևելյան կողմում.

*Այս է տապան Սարգիս վարդապետի Ազարեանց Տփխիսեցւոյ Քեանդակիրմազ մականուանեալ, որ յայտնապէս անբասստութեամբ վարեանց զկարգ կրօնաւորութեան ի զանազան վանորայս Գանձակայ գաւառի աւելի քան 70 տարի և վախճանեցաւ ի հասակի 96 ամաց, ի Միրզիկ գեղջ, 1877 ամի:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 277:

Առկա տվյալների համադրմամբ մասամբ հնարավոր է ներկայացնել Քարհանի վանքի վանահայրերի ժամանակագրական հետևյալ ցանկը.

Եղիազար եպիսկոպոս. վախճ. 1713 թ.[2538]:
Հովսեփ վարդապետ
Սարգիս եպիսկոպոս. հիշ. 1770-1773 թթ.[2539]:
Մկրտիչ վարդապետ
Պողոս վարդապետ
աբեղա (անունն անհայտ է). հիշ. 1857 թ.[2540]:
վարդապետ (անունն անհայտ է). հիշ. 1862 թ.[2541]:

**Քահանա.** հայտնի է, որ 1905-1923 թթ. Միրզիկում (նաև՝ Բրաջրում) քահանայագործել է Մարտիրոս Եպիսկոպոսյանցը (քահանա է ձեռնադրվել 1897 թ.)[2542]:

## ՄՈԽՌՈՒՏ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ, Ոսկանապատից 4 կմ հյուսիս-արևելք՝ Պանդ լեռան հյուսիսային անտառապատ լանջին, բնության գեղատեսիլ վայրում, ծովի մակերևույթից 1190-1310 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** գյուղի անունն ըստ ավանդության՝ ծագել է Սբ. Աստվածածին եկեղեցու տեղում հնում գոյություն ունեցած մատուռից, որտեղ

---

2538. **Թօփճեան Յ. Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 21:
2539. Ըստ տապանագրի:
2540. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 78:
2541. Նույն տեղում, գ. 3836, թ. 56:
2542. ՀԱԱ, ֆ. 57Պ, ց. 3, գ. 259, թ. 4, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7:



*ՍՈՒՌՈՒՏ. բնակելի տներ*

իբրև մի խաչքար էր մեռոնով օծել Մեսրոպ Մաշտոցը. «թարգմանիչ հայրն մեր Մեսրոպ օծեալ զխաչ սրբալոյս մեռոնաւ եդ ի նպատակ պաշտման ժողովրդոց և զնոյն խաչ ցուցանեն ի ճակատ սեղանոյն»[2543]:

Այլ ավանդության համաձայն՝ «Անցեալ դարում Գանձասարի կաթողիկոսներից մինն ամառը սար է գալիս այստեղ, ուր տակաւին գիւղ չէ լինում և սրբալոյս միւռոն է օրհնում: Այս դէպքն այնպես է ազդում բնակիչների բարեպաշտութեան վրայ, որ տեղի անունը մնում է Միւռոնոտ-Մուռուտ»[2544]:

Այլ ստուգաբանության համաձայն՝ գյուղանվան ծագումը պայմանավորված է եղել տարածքում մորի թփերի առատությամբ, որին էլ ժողովուրդը ուղղակի տվել է Մոռուտ, Մուռուտ անվանումը[2545]:

**Կառուցապատում.** 1890-ական թվականներին ականատեսը Մուռուտը նկարագրել է որպես մի փոքր հարթության վրա տեղավորված գյուղ, որի առջև ձգվող ձորը «...պատած է գեղեցիկ այգիներով: Մուռուտի տները գեղեցիկ են և շատերը եւրոպական կահ-կարասիքով զարդարուած: Գանձակեցիները ամարանոց են գալիս այստեղ, որ խկապէս շատ լաւ ամառանոց կարող էր համարուել, եթէ որ խոնաւ չլինէր»[2546]:

**Ջրամատակարարում.** 1914 թ. մուռուտցիները գյուղը ջրով ապահովելու նպատակով ցանկացել էին մեկուկես վերստ հեռավորության վրա գտնվող «Պանդաջուր» ասված տեղի ջուրը գյուղ հասցնել, բայց նախահաշիվը, որ կազմել էր 2000 ռ. պատճառ էր դարձել, որ գյուղացիք այդ մտքից հրաժարվեն[2547]:

**Բնակչությունը.** մուռուտեցիների ծագման վերաբերյալ տեղագիր հեղինակների թողած վկայությունները հակասական են: Մեկ նրանց համարել են տեղացիներ՝ «բնակիչք բնիկ»[2548], մեկ էլ տարբեր վայրերից հավաքվածներ. «...նոր չէ և կազմուած է զանազան կողմերից գաղթած ժողովրդից սոյն դարի սկզբներում»[2549]:

Մուռուտի ազգատոհմերի պատմությունն ուսումնասիրելու առումով ուշագրավ է 1839 թ. բնակիչների հետևյալ անվանացանկը.

«1. Յովհաննէս Եղիազարեան, կին սորա՝ Քալոյն, որդիք սորա՝ Առուստամ, Անդրէաս, Աւէտիս և հարսն սորա՝ Աննա:

2. Բարսեղ Գաբրիէլեան, կին սորա՝ Մարիամ, որդիք սորա՝ Մուքայել, Գրիգոր և Թատէոս և եղբայր սորա՝ Դանիել, կին Դանիելայ՝ Մալբի:

3. Սահակ Փանոսեան, կին սորա՝ Հերիք, ուստր՝ Փանոս:

4. Պետրոս Յովհաննէսեան, կին սորա՝ Ջաւահիր, ուստերք սորա՝ Փանոս, Աղաջան և Յովհաննէս:

5. Թովմաս Յովհաննէսեան, կին սորա՝ Մարիամ, դուստր սորա՝ Շամամ»[2550]:

---

2543. **Ջալալեանց Ս.**, Ճշվ. աշխ., մասն Ա, էջ 170:
2544. «Նոր-Դար», 1892, N 136, էջ 2-3:
2545. «Արձագանք», 1886, N 20, էջ 294, «Նոր-Դար», նոյն տեղում:
2546. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 316:
2547. «Մշակ», 1914, N 168, էջ 3:
2548. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 272:
2549. «Նոր-Դար», 1892, N 136, էջ 2-3:
2550. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 31:

Տարբեր աղբյուրներում պահպանված բնակչության թվաքանակին վերաբերող տվյալների համադրումը ցույց է տալիս, որ 1804 թվականից գյուղի բնակչությունը շարունակաբար աճել է և առավելագույնի հասել 1912 թ. (441 բնակիչ):

Ստորև ներկայացնում ենք ԺԹ–Ի դարերին վերաբերող բնակչության թվաքանակի մասին առկա վիճակագրական տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2551] | 5 | 8 | 7 | 15 |
| 1839[2552] | 5 | 16 | 9 | 25 |
| 1845[2553] | | 32 | 23 | 55 |
| 1847[2554] | | 36 | 32 | 68 |
| 1849[2555] | | 30 | 29 | 59 |
| 1852[2556] | | 33 | 30 | 63 |
| 1861[2557] | 6 | | | |
| 1866[2558] | 12 | 44 | 26 | 70 |
| 1872[2559] | | 74 | 57 | 131 |
| 1873[2560] | | | | 103 |
| 1875[2561] | | | | 105 |
| 1876[2562] | | | | 109 |
| 1877[2563] | | 62 | 55 | 117 |
| 1878[2564] | | 65 | 56 | 121 |
| 1881[2565] | | 76 | 61 | 137 |
| 1882[2566] | | 83 | 67 | 150 |
| 1883[2567] | | 78 | 58 | 136 |
| 1886[2568] | 34 | 131 | 107 | 238 |
| 1887[2569] | | 114 | 111 | 225 |
| 1888[2570] | | 124 | 114 | 238 |
| 1889[2571] | | 131 | 123 | 254 |
| 1890[2572] | | 141 | 124 | 265 |
| 1891[2573] | | 135 | 131 | 266 |
| 1892[2574] | | 132 | 135 | 267 |
| 1893[2575] | | 143 | 140 | 283 |
| 1894[2576] | | 148 | 148 | 296 |
| 1897[2577] | | 173 | 169 | 342 |
| 1898[2578] | | 179 | 177 | 356 |
| 1899[2579] | | 189 | 185 | 374 |
| 1900[2580] | | 198 | 194 | 392 |
| 1901[2581] | | 201 | 197 | 398 |
| 1902[2582] | | 207 | 199 | 406 |
| 1905[2583] | | 210 | 200 | 410 |
| 1906[2584] | | 175 | 144 | 319 |
| 1907[2585] | | | | 317 |
| 1908[2586] | 33 | 161 | 145 | 306 |
| 1909[2587] | | 213 | 207 | 420 |
| 1910[2588] | | 182 | 159 | 341 |
| 1912[2589] | | 223 | 218 | 441 |
| 1914[2590] | 31 | | | 340 |
| 1917[2591] | 34 | | | 215 |
| 1940[2592] | | | | 500 |
| 1983[2593] | | | | 133 |

**Հայրենական մեծ պատերազմ.** մասնակցել է 122 մուռուտեցի, որոնցից 67-ը զոհվել է:

**Մյուռոնուտս Սբ. Աստվածածին անապատ (հետագայում՝ Սբ. Աստվածածին եկեղեցի).** գյուղի հարավարևմտյան եզրին հնում եղել է երկրամասի հայտնի վանքերից մեկը՝ Մյուռոնուտս Սբ. Աստվածածնի անապատը, որը 1877-1881 թթ. ընթացքում հիմնավորապես վերակառուցվել և վերածվել էր ծխական եկեղեցու:

Ինչպես անապատի հիմնադրության, այնպես էլ մինչև 1877 թ. գոյություն ունեցած եկեղեցու և մյուս շինությունների մասին գրականության մեջ քիչ թե շատ արժեքավոր տեղեկությունների չենք հանդիպել:

Հայտնի է, որ 1800 թ. վախճանվել և Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցու բակում էր ամփոփվել «Մռուտ անապատի» վանահայր Հարություն վարդապետը:

Վավերագրերում Մյուռոնուտ անապատի առաջին հիշատակություններից մեկն առնչվում է 1838

2551. "Акты...", т. II, с. 596.
2552. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 31:
2553. Նույն տեղում, գ. 3811, թ. 5-6:
2554. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
2555. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
2556. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2557. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2558. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2559. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2560. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40: Նաև՝ գ. 3862, թ. 58-59:
2561. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2562. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2563. Նույն տեղում, գ. 3868, թ. 54-55:
2564. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2565. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 27-28:
2566. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2567. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2568. "Свод...", с. 84-85. Այլ տեղեկագրում նույն թվականի համար ցույց է տրված միայն 18 տուն («Արձագանք», 1886, N 20, էջ 294):
2569. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
2570. Նույն տեղում, գ. 3882 թ. 130:
2571. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն գյուղն ունեցել է 195 (100 ար., 95 իգ.) բնակիչ (նույն տեղում, գ. 3877, թ. 29):
2572. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 149:
2573. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:
2574. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
2575. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2576. Նույն տեղում, գ. 3896, թ. 173-174:
2577. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2578. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2579. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
2580. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:
2581. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
2582. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
2583. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
2584. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2585. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2586. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալ գյուղի բնակիչների թիվը ցույց է տալիս 392 անձ ("Кавказский календарь на 1910 г.", с. 327):
2587. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2588. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
2589. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
2590."Кавказский календарь на 1915 г.", с. 161. Նաև՝ «Մշակ», 1914, N 168, էջ 3:
2591. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2592. Ըստ ուսանապատցի Կիրակոս Խաչատուրյանի վկայության:
2593. Նույնը:



***ՄՈՒՌՈՒՏ. Սբ. Աստվածածին եկեղեցին, շինարարական արձանագրությունը և դարպասը***

թ. այդտեղ կատարված կողոպուտի հետ. «...Միռնոտ ուխտատեղին, որ կեայ ի վերայ լերին վիճակի կառավարութեան ունի զերկուս աբեղայս, յորում մտեալ, ի 23-ն յունիսի, ի գիշերի աւազակք զբոլոր անօթս նորին գողացեալ են»[2594]: Հասցված վնասը մեծ էր նաև նյութական առումով. «...ի Միռնոտ Անապատէն աւազակք գողացել են զեկեղեցական իրս որոց գինն հասանէ ց1109 րուբլի արծաթ դրամս»[2595]:

1839 թ. անապատի վանահայր է հիշվում Հովհաննես աբեղա Հովհաննիսյանցը[2596]:

1847 թ. մի վավերագրում նշվել է. «առ եկեղեցւոյն մի սենեակ և զերկու ձմերայնոց»[2597]:

Վանքը տիրապետել է նաև որոշ կալվածների. 1853 թ. դրությամբ այն սահմանագծվել է հետևյալ կերպ. «...զանդաստան Մեռնոտայ հանդերձ սահմանօքն յարևելից կուսէ Եօթն-շահառայ ասացեալ ճանապարհին, յարևմտեան կողմն, Սարու-Սու կոչեցեալ ջուրն, ի կողմն հարաւային Սարու-Եալ կոչեցեալ ճանապարհին և ի կողմն հիւսիսային գետն Ելիսաւէտօպօլու...»[2598]:

Նույն թվականին անապատում հիշվում է միայն մեկ հոգևորական՝ վանահայրը[2599]:

Հարկ է նշել, որ 1849[2600], 1852[2601], 1861[2602] և 1862[2603] թվականների վավերագրերում հիշատակվում է անապատի քարաշեն եկեղեցին, ընդ որում՝ 1861 թ. Սբ. Աստվածածին անվամբ:

Հայտնի է, որ Մյուռոնուտ անապատի տեղում սեփական միջոցներով ծխական եկեղեցի է կառուցել մահտեսի Քերովբե Տեր-Մարտիրոսյանցը. «Մեր աղքատ փոքր գիւղը անկարող էր իւր համար սեպհական եկեղեցի շինել տալու, այդ պակասը ի



***ՄՈՒՌՈՒՏ. «Նահատակ» աղբյուրը***

2594. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 436, թ. 1:
2595. Նույն տեղում, թ. 3:
2596. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 8:
2597. Նույն տեղում, գ. 3814, թ. 109-110:
2598. Նույն տեղում, գ. 2742, թ. 6:
2599. Նույն տեղում, գ. 2743, թ. 20-21:

2600. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
2601. Նույն տեղում, գ. 3819, թ. 105:
2602. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2603. Նույն տեղում, գ. 3836, թ. 58:



***ՄՈԽՌՈՒՏ. Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում տարածված գերեզմանոցը. տապանաքարեր***

նկատի ունենալով գանձակեցի վաճառական Մահտեսի Քերովբէ Տէր-Մարտիրոսեանցը ...մի սրբատաշ քարեայ գեղեցիկ եկեղեցի շինել տուեց, որը մօտ տասն հազար րուբլի ծախք նստեց: Դրանով չբաւականանալով պարոնը համարեա թէ ամեն տարի մեր եկեղեցու համար մէկ մէկ զարդ է նուիրում: Այսօր օրերս էլ մի զույգ մեծ զանգակներ նուիրեց մեր գիւղի եկեղեցուն»[2604]:

Եկեղեցու շինարարական աշխատանքները տևել են չորս տարի և հաջողությամբ ավարտվել 1881 թ.: Նույն տարում էլ մեծ հանդեսով օծվել է. «Ահա չորս տարին անցնում է, որ Գանձակի պատուաւոր քաղաքացի մահտեսի Քերովբե Տէր-Մարտիրոսեանցը ջերմեռանդ սրտով իւր սեպհական ծախսով կառուցել է Մօռուտ գիւղի սուրբ Աստուածածին եկեղեցին մաքուր և սրբատաշ քարով քանի մի հազար ռուբլի ծախսելով Աստուծոյ տաճարի համար, և այն անցեալ թանգութեան և սով տարիների միջոցում: Սոյն այս տաճարը օծվեցաւ փառաւոր հանդիսով սուրբ Խաչի տօնի կիւրակէ օրը»[2605]:

Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման պատմության ուսումնասիրության համար կարևոր է նաև մինչև 1988 թ. տեղում պահպանված շինարարական հետևյալ արձանագրությունը.

Սբ. Աստվածածին եկեղեցի. մուտքից վեր զետեղված 2 կտոր քարերի վրա՝ 5 տող.

*Ես Գանձակ քաղաքացի մահ(տես)ի Քերոբ Տ(է)ր-Մարտիրոսեան | կառուցի իմով արդեամբ Ս(ուրբ) Ա(ստուա)ծածին եկեղեցի Մու|ռուտ գեղջ, ի յիշատակ պապին իմոյ Տ(է)ր Մարտիրոս աւաք | քահանայի և ծնողաց իմոց Մկրտումի և Հռ(ի)փսիմի և կանանց | իմոց՝ Խանումի և Սիարի յամի Տ(եա)ռն 1881 ամի:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 20, էջ 294: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 272:

Սբ. Աստվածածին եկեղեցի. շինարարական արձանագրությունից ներքև փորագրված է տերունական խոսքը.

*Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 20, էջ 294: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 272:

Նկատենք, որ անապատի տեղում նոր եկեղեցի կառուցելուց հետո էլ վայրը պահպանել էր սրբատեղիի իր նշանակությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամառային ամիսներին բնակչությունը բազմապատկվում էր՝ ի հաշիվ իբրև ամառանոց այդտեղ հանգրվանող գանձակեցիների, 1900 թ. մարտին մուռուտցիների մոտ միտք է ծագում եկեղեցուն կից կառուցել զանգակատուն և բակը պարսպապատել. «...խորհրդակցեցինք, որ անհրաժեշտ է ունենալ մեր եկեղեցւոյ առաջ մի նախագաւիթ (զանգակատուն), որովհետև

2604. «Նոր-Դար», 1896, N 120, էջ 1:
2605. «Մեղու Հայաստանի», 1881, N 258, էջ 3:

ամառնային ժամանակ մեր գիւղը Գանձակից յամարանոց եկողներ շատ են լինում, և թէ ընդ միշտ կիւրակէ և տօն օրերում լինում է բազմութեամբ ուխտաւորներ, այդ դէպքերում մեր եկեղեցին իր փոքրութեամբ, մանաւանդ ս. պատարագի ժամանակ խեղդում է ժողովրդի շնչառութիւնը. ժողովրդից շատերն դրսումն են կանգնում: Երկրորդ կարևոր դատեցինք պարսպապատել եկեղեցւոյ շուրջը, այդ ևս յոյժ կարևոր է, որովհետև եկեղեցւոյ մօտից անցնող հիւսիսային ճանապարհը հետզհետէ ցածրանում է կարող է շատ մօտ ժամանակներում վնասել եկեղեցւոյն»[2606]:

Մեկ տարի անց՝ 1901 թ. հունիսի 11-ին, սակայն, մուռուտցիները նոր որոշում են կայացնում. «...զանգակատան փոխարէն աւելի յարմար է նոցա տեղը, այն է եկեղեցւոյ արևմտեան կողմի պատը վերցնել, և այդ կողմից երկարացնել եկեղեցին մի քանի արշին, որով մենք հասած կլինենք մեր նպատակին, առաջինը՝ որ եկեղեցին կբաւականանայ մեզ և եկւոր ուխտաւորներին և երկրորդ, եթէ կարիք լինի, իւր ժամանակին նոր աւելացրած տեղի վերայ կարելի է աւելացնել և զանկակատեղի, նա մանաւանդ որ եկեղեցւոյ այժմեան ունեցած գումարը հազիւ կծածկի այդ աւելնացնելի ծախքերը»[2607]:

1907 թ. մուռուտցիներն արդեն ավարտել էին ծրագրած վերակառուցողական աշխատանքները, բայց այդ ամենն իրականացրել էին առանց նախագիծն ու նախահաշիվը նախօրոք հաստատելու. «...ի սկզբանէ շինութեան նախագաւթի եկեղեցւոյն ցաւարտումն նորին չէ եղեալ նախագիծ (պլան), այլ շինեալ աւարտեալ են զայն առանց ճարտարապետի և նախագծի»[2608]:

1905-1910 թթ. հիշվում է քահանա Գրիգոր Տեր-Սարգսյանցը[2609]:

Եկեղեցու արևմտյան կողմի փոքրիկ գերեզմանոցում պահպանված տապանաքարերը վերաբերում են ԺԹ դարին: Դրանցից մեկը հավերժացնում է մի ազուլիսցու հիշատակը.

Տապանաքար. վերնամասը եռանիստ, գեղաքանդակ, արևելյան նեղ կողին՝ պատկերաքանդակ, հարավային երեսին՝ 2 տող.

*Արուլեցունց յորջորջի բնակեր զանձակեցի / անցաւորաց խնդրէ զողորմի, վախճ. 7. 10. 1873:*

Հրատ. առաջին անգամ:

## ՅԱԼՂԾԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 700-740 մ բարձրության վրա:

Գոյացել է հայաքափ գյուղատեղիում ԺԹ դարավերջին: 1886 թ. ունեցել է 9 տուն (37 ար., 34 իգ.)[2610], 1914-ին՝ 123 բնակիչ[2611]:

## ՆԱԴԵԼ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 340-350 մ բարձրությամբ միապաղաղ հարթության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՉՈՒՌՆԱԲԱԴ)

**Տեղադրություն.** գտնվում է Գանձակ քաղաքից 17 կմ հարավ (ուղիղ գծով)՝ Գանձակ կամ Ոսկանապատ գետի ձախ կողմում, շրջապատված թավ անտառ լեռներով: Գանձակ գետի ձախ ափի երկարությամբ ունի շուրջ 1,4 կմ երկարություն, բայց հազիվ 200 մ լայնություն: Գյուղը տարածված է լեռնալանջի հարավարևելահայաց թեքադիր մակերեսին: Համարյա գետափից սկիզբ առնող գյուղի շինությունները ձգվում են լանջն ի վեր, շուրջ 80 մ: Ունի ծովի մակերևույթից 870-950 մ բարձրություն : Ամենաբարձրադիրը Սբ. Հակոբ ծխական եկեղեցուն հարող թաղամասն է՝ գյուղի հարավային եզրին:

**Հնագիտական.** գյուղի տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Պահպանված մի դամբարանի պեղումները, օրինակ, ի հայտ են բերել միջին բրոնզի դարաշրջանին վերաբերող հնագիտական այնպիսի իրեր, որոնք իրենց զուգահեռներն ունեն նաև Վանաձորում և Թռեղքում (Թրիալեթ)[2612]: Այդ են վկայում նաև հնագիտական այլ ուսումնասիրությունները[2613]:

**Պատմություն.** գրավոր աղբյուրներում Ոսկանապատի առաջին ու ամենահին հիշատակությունը վերաբերում է 1314 թ.: Այն մեզ է հասել Շամքորի ձորում գտնվող Ծաղկոց վանքում պահպանված մի սահմանախաչի արձանագրության մեջ[2614]:

**Անվան ծագումը.** տեղանվան ստուգաբանության վերաբերյալ Քաջիկյանը նշել է. «...Այս անապատը շինել է, ինչպէս պատմում են, Մելիք-Ոսկանն. ուստի և Ոսկանա անապատ անունն է ստացել. որից և գիւղն Ոսկանապատ: Ո՞վ է արդեօք այդ Ոսկանն և ե՞րբ է շինել անապատը. չգիտենք...»[2615]:

Հարկ է նշել, որ Ոսկանապատի՝ 1601 թվականից սկիզբ առած մելիքների ցուցակում գոյություն չունի Ոսկան անունով և ոչ մի մելիք, և եթե անգամ լիներ էլ, ապա դա էլ չէր կարող ապացույց դառնալ, քանի որ Ոսկանապատի մելիքների վերաբերյալ տեղեկությունները ԺԷ դարից ավելի վաղ չեն:

2606. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3406, թ. 3:
2607. Նույն տեղում, թ. 12:
2608. Նույն տեղում, թ. 19:
2609. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 58:
2610. "Свод...", с. 78-79.
2611. "Кавказский календарь на 1915 г.", с. 161.
2612. **Lang D. M.**, The peoples of the Hills, London, 1971, էջ 92:
2613. **Нериманов И.**, Кенчечај рајонунун археоложи абиделери, Бакы, 1958:
2614. Վիմագիրը տես՝ Գառնակեր գյուղի բաժնում, էջ 484:
2615. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:

Այստեղից հետևում է, որ գյուղն իր անունը մելիք Ոսկանի անունից չէ, որ առել է (եթե, իհարկե, եղել է այդպիսի պատմական անձ), այլ շատ ավելի վաղ ժամանակներից արդեն կրում էր այդ անունը:

Ավելացնենք նաև, որ անապատն էլ, որի կառուցումը վերագրված է հիշյալ «երևակայական» մելիքին, ԺԷ դարի շենք է: Կառուցվել է որպես Կուսանաց մենաստան այն ժամանակ, երբ գյուղն արդեն մելիքանիստ էր (այսինքն՝ 1601 թ. հետո):

Ի դեպ, Սբ. Աստվածածնի անունով օծված հիշյալ Կուսանաց անապատը տարբեր սկզբնաղբյուրներում հանդիպում է, օրինակ, Ոսկի անապատ, Ոսկանապատի անապատ, Սբ. Ոսկյանց անապատ անվանաձևերով: Դրանցից հատկապես վերջինը կարծել է տալիս, թե անապատի եկեղեցին կառուցվել է մի անհայտ սրբի մասունքների՝ «սուրբ ոսկերաց» վրա, բայց դա հաստատող լրացուցիչ որևէ վկայություն չունենք, ինչպես և չունենք տվյալներ անապատի՝ ավելի հին եկեղեցու տեղում կառուցված լինելու վերաբերյալ:

Վերջապես, Ոսկանապատ տեղանունը սկիզբ է առել ոչ թե ԺԷ դարից, այլ առնվազն՝ ԺԴ դարից (1314 թ.):

Ինչ վերաբերում է Սկնապատ[2616] անվանաձևին, ապա այն տեղական բարբառային արտասանության դրսևորումն է, իսկ Զուռնաբաղ օտարաշունչ անվանումը գյուղին տվել են պարսիկները: Այս անվանումն էլ իրենց ավելի հոգեհարազատ գտնելով՝ խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունները պաշտոնականացրին այն:

**Կառուցապատում.** 1890-ականներին գյուղն ականատեսին ներկայացել է այսպես. «Ձորակը ծածկուած է այգիներով, գյուղի փողոցները անկանոն են և կեղտոտ, տները, ընդհանրապէս վատ չեն, թէև կան նաև երկյարկանի գեղեցիկ տներ ևս...»[2617]:

Հատկանշական է, որ խորհրդային տասնամյակներին և ընդհուպ 1988 թ. հայերի բռնագաղթը գյուղն ընդհանրապես չի զարգացել, այսինքն՝ չեն հիմնվել նոր թաղամասեր, մինչև անգամ նոր շենքեր էլ չեն կառուցվել և, հետևաբար, այդ նպատակով էլ չեն քանդել հին շենքերը: Արդյունքում՝ գյուղը գրեթե անաղարտ պահպանել է իր արտաքին ու ներքին ճարտարապետական այն նկարագիրը, որը ձևավորվել էր նախախորհրդային տարիներին:

**Ոսկանապատի մելիքություն.** ԺԶ դարավերջում օսմանյան նվաճումների հետևանքով ստեղծված ծանրագույն իրավիճակից դժգոհ՝ միաժամանակ թուրքերի դեմ պայքարում պարսից շահից օգնություն ակնկալողների թվում էին նաև Ոսկանապատի ներկայացուցիչները. «Անդրկովկասի զանազան կողմերից հայ, վրացի, մահմեդական ազգաբնակչությունը դիմումներ էր անում Շահ-Աբբասին, որպեսզի փութացնի նրա արշավանքը: Ամբողջ գյուղերի և գավառների տերերը թողնում էին իրենց բնակավայրերը և տեղափոխվում էին Պարսկաստանի մայրաքաղաքը՝ Սպահան, տանելով իրենց հետ դառն զանգատներ օսմանյան ռեժիմի դեմ»[2618]: Սպահան մեկնածների թվում էր նաև «...Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՈսկանապատ գեղջէ...»[2619]: Մի քանի տարի անց՝ 1601-ին, վերոհիշյալ Նազարը Շահ-Աբասից ստացել է մելիքության իրավունք «...և վերակոչուել Շահ-Նազար, այսինքն՝ Շահի-աչք, որովհետև շահին շատ սիրելի է եղել»[2620]:

Մելիք Շահնազարից էլ սկիզբ է առել Ոսկանապատի Շահնազարյանների մելիքական տոհմը: Վերջիններս իրենց կոչումն ու իրավունքները կարողանում են պահպանել մինչև տարածքի՝ Ռուսաստանի հետ միավորվելը, այնուհետև ազնվականի կոչումով պահպանում են կալվածատիրական (բեկական) մի շարք իրավունքներ: Մելիք-Շահնազարյանները տիրապետում էին մի շարք գյուղերի, այդ թվում նաև թրքաբնակ: Դրանք էին՝ մելիքանիստ Ոսկանապատը, Միրզիկը, Բրաջուրը, Մոռուտը[2621], ինչպես նաև ներկայիս Կասում-Իսմայիլովի շրջանի Ղազանչի և Ղարափիրիմլի թրքաբնակ գյուղերը[2622]:

Գյուղի գերեզմանատանը[2623] պահպանված տապանագրերից օգտվելով՝ Ե. Լալայանը դուրս է բերել մելիքների հետևյալ ցուցակը. «Մելիք-Շահնազարին յաջորդել են, ինչպէս երևում է տապանագրերից՝ Մելիք-Յովսեփ Ա, Մելիք-Եաւրի (վախճ. 1720), Մելիք-Յուսուփ Բ (վախճ. 1730), Մելիք-Գաբրիէլ (վախճ. 1780) և Մելիք Յուսուփ Գ. (վախճ. 1826), որի եղբայրն էր Քոչար-բէկ (վախճ. 1740) և որդիներն էին Բէկլար-բեկ և Եաւրի-բէկ...»[2624]: Առաջին հայացքից ուշագրավ այս ցուցակը, ցավոք, մի շարք անճշտություններ ունի: Մասնավորապես հայտնի է, օրինակ, որ 1783 թ. Կովկասի գեներալ-նահանգապետ Պավել Սերգեևիչ Պոտյոմկինին (1743-1796) Ղարաբաղի մելիքների անունից հասցեագրված նամակում իր ստորագրությունն է դրել նաև «...մէլիք Գաբրիէլ Յոսկանապատու...»[2625], որից և հետևում է, որ նա 1780 թ. վախճանված լինել չէր կարող: Այնուհետև, կա ակընհայտ անճշտություն. Քոչար-բեկը մահացել է ոչ թե

2616. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 169:
2617. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 314:
2618. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 232:
2619. **Առաքել Դաւրիժեցի**, էջ 63:
2620. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 266:
2621. Նույն տեղում:
2622. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 8-9:
2623. Խորապես ցավում ենք, որ այս հնավայրն այդպես էլ (մինչև 1988-ի բռնագաղթը) չկարողացանք ըստ հարկի ուսումնասիրել:
2624. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 266:
2625. "Армяно-Русские отношения в XVIII веке", т. IV, Ереван, 1990, с. 222.



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). տեսքը հյուսիս-արևելքից (լուսանկ. Ա. Դուլյանի)***

1740, այլ՝ 1840 թ. (հավանաբար, տպագրական վրիպակ է, որն աշխատությունը վերահրատարակվելիս էլ չի ուղղվել): Դա ապացուցվում է 1839 թ. մի վավերագրով, որում Քոչար-բեկը նշված է Ոսկանապատի «կենդանի» բնակիչների թվում:

Ցուցակում հիշված մնացյալ մելիքների համար էլ իբրև լրացում կարող ենք նշել, որ, օրինակ, Մելիք-Հովսեփ Ա-ն հիշվում է 1630 թ. մի վավերագրում. «Մելիք Յովսեփի Զուրնաբատու (Ոսկանապատու)»[2626]: Այստեղ մելիքն իր ստորագրությունն էր դրել՝ ի հաստատումն Գանձասարի վանքապատկան հողերի անձեռնմխելիության:

Մեկ այլ վավերագրում էլ 1691-ին հիշվում է. «Ոսկանապատցի Ղալապկիս դապուլ է» (կնիքը՝ 1690-ից է)[2627]: Այս Ղալապեկի մասին այլ հիշատակումներ չունենք, բայց թվում է, թե նա էլ մելիք էր, քանի որ Ոսկանապատը ներկայացնող անձ էր:

Ավելացնենք, որ Մելիք Հովսեփ Գ-ի կյանքից մի դրվագ, որը տասնամյակներ անց մնացել էր տեղացիների հիշողության մեջ, ժամանակին գրի է առնվել ու հրատարակվել[2628]:

**Ռուսական զորակայան.** հայտնի է, որ 1855 թ. Ոսկանապատի մոտ տեղակայվել է ռուսական մի զորագունդ. «...սահմեդական մարզերին հետևելու համար Ելիսավետոպոլին մոտ՝ Զուռնաբադում գե-

2626. «Արարատ», 1914, օգոստոս, էջ 736:

2627. «Արարատ», 1900, հունիս, էջ 320:

2628. **Սամիկոնեանց Ա.**, Պատմական անցք, «Արձագանք», 1888, N 5, էջ 59-60: Առանց աղբյուրը նշելու՝ այս նյութն իր «Գանձակի գավառ» աշխատության մեջ արտատպել է Ե. Լալայանը:



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ԶՈՒՌՆԱԲԱԴ). հատված՝ հյուսիս-արևելքից***

ներալ-մայոր Չապլիցի հրամանատարության ներքո հիմնվեց Մինգրելյան գնդի երեք բատալիոնից բաղկացած հրետանավորների ջոկատ և կազակների հարյուրյակ...»[2629]:

Ի դեպ, 1880-ական թվականներին ծրագրվել էր զորքերի հեռանալու դեպքում զորանոցը վերափոխել հիվանդանոցի. «Մուռուտի և Ոսկանապատի մէջ տեղում Գանձակ գետի ձախ ափին է Զուռնապատ զօրանոցն ռուսաց, ընդարձակ շէնքերով, որն ինչպէս ասացին, բժշկապետ Ռեմերտը կամենում է դարձնել կովկասեան խելագարների հիւանդանոց, եթէ զօրքերը թողնեն այդ տեղը»[2630]:

**Բնակչություն.** գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող և ձեռքի տակ եղած բազմաթիվ տվյալները վերաբերում են ԺԹ–Ի դարերին: Ավելի վաղ ժամանակների համար, ցավոք, այդպիսիք բացակայում են: Կարող ենք ենթադրել միայն, որ հատկապես ԺԷ դարում, երբ կառուցվել էր իր չափերով բավական ընդարձակ (25,60 x 11,20 մ) Սբ. Հակոբ ծխական եկեղեցին[2631], գյուղն ունեցած

2629. **Муравьева Н. Н.**, Война за Кавказом в 1855 году, том 1, часть первая, СПБ, 1877, с. 26 (բնագրում՝ “...Для наблюдения за мусульманскими провинциями, поставлен был в Зурнабаде, что близ Елисаветполя, под командою ген. майора Чаплица отряд, состоявший из трех баталионов Мингрельскаго полка с артилерия и сотнея казаков...”).

2630. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:

2631. Ողջ Արցախի տարածքում այսպիսի չափեր ունեցող եկեղեցիները խիստ հազվադեպ են: Եկեղեցու մեծությունն ինքնին ապացույց է բնակչության ստվար քանակի:



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). տեսարաններ***

պետք է լիներ առնվազն 2000-3000 բնակիչ: Հակառակ դեպքում նման ընդարձակ եկեղեցի կառուցելու անհրաժեշտություն չէր լինի:

Միանգամայն այլ իրավիճակում էր հայտնվել գյուղը ԺԸ դարում: Նախ՝ 1712 թվականից մինչև 1720-ականների սկզբները ողջ Գարդմանքը ենթարկվում է լեզգիների՝ մեկը մյուսին հաջորդած թալանչիական արշավանքներին: Նրանց հորդաները սողոսկում են նաև. «...Ոսկանապատու ձորն...»[2632]: Ապա 1722 թ. իբր Գանձակի Ջավադ խանին պատժելու նպատակով, նրան ենթակա գավառները թալանի և ավերի է մատնում վրաց Վախթանգ թագավորի զորքը: Ինչպես վկայում է ականատեսը, վրացիները հայաբնակ գյուղերի հանդեպ կատարած իրենց բարբարոսություններով անգամ գերազանցել են լեզգիներին. «...գունդառգունդ եղեալ Միլեկան ազգն Վրաց առաւել անողորմ քան զԿովկասայինն. սփռեցան ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս երկրի Ջակամու, Շամքորոյ, Գանջապասանու, Ոսկանապատու, Քուրաքչայու, և Պարտայու, մինչև ի Գուլստան գետն և ի գետն Դրդու»[2633]: Այնուհետև օսմանյան բանակների ներխուժումը 1724-ին, Գանձակի խանի անջատողական նկրտումներն ու դրան հետևած պատերազմները, վրաց Հերակլ թագավորի ջանքերով հարազատ երկրից հայության ծայր առած արտագաղթը[2634], դարավերջին համաճարակի վերածված ժանտախտն ու դրան հետևած աննախադեպ սովը պարզապես ամայացրին Ոսկանապատը (ավելի ճիշտ՝ ողջ երկրամասը):

Ահա այսպիսի փորձությունների միջով էր անցել Ոսկանապատը, երբ 1805-ին գրեթե հայաթափ Գանձակի խանությունը միավորվեց Ռուսաստանի հետ: Հարկ է նշել, որ առաջին 1-2 տասնամյակներն էլ խաղաղ չէին (բավական է միայն մտաբերել 1826-ին պարսից բանակի ներխուժումն Աբաս-Միրզայի ղեկավարությամբ): 1820-ական թվականների վերջերից հետո միայն Ոսկանապատում սկսում են համախմբվել ցիրուցան եղած համագյուղացիները: Այնուամենայնիվ, դեռևս 1839 թ. գյուղի բնակչությունը բաղկացած էր ընդամենը 22 ընտանիքից (170 շունչ)[2635]: Վերջիններիս անվանական ցուցակը, որ պահպանվել է արխիվային մի վավերագրում, ուշագրավ սկզբնաղբյուր է գյուղի

2632. Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի յօրինեալ ի Տ. Եսայի Աղուանից կաթողիկոսէ **Հասան Ջալալեանց**, Յերուսաղէմ, 1868, էջ 24:

2633. Նոյն տեղում, էջ 42:

2634. Այսպես, օրինակ, Թիֆլիսին մոտ գտնվող ոսկանապատցիների Լիս գյուղում հաստատվելու վերաբերյալ մանրամասները, տես՝ «Գարդմանահայերի սպիտակ ջարդը Լիսում» հոդվածում («Գարդմանք», N 3, էջ 16): Նաև՝ Գարդմանահայ գաղթականությունը Վրաստանում («Գարդմանք», N 1, էջ 7):

2635. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 29: Ընտանիքների արական և իգական շնչերի հաշվարկի մեջ վավերագրում առկա են մի շարք սխալներ, որի հետևանքով վերջնահաշվում ստացվել է 91 ար., 100 իգ., որը ճիշտ չէ: Իրականում բնակիչների թիվն էր՝ 90 ար. և 80 իգ.:



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). տեսարաններ***

նոր շրջանի պատմության ուսումնասիրության առումով: Ահա այն.

«1. Ազնուական Եավրիբէգ Մէլիք Շահնազարեանց[2636], կինն՝ Սուլթան, ուստերք՝ Աղաբէգ և Յովսէփ, դուստր՝ Սհար, եղբայրն՝ Բէգլար[2637], կինն՝ Խամում, ուստերք՝ Օհանէս և Շամիր, դուստր՝ Թագուհի:

2. Ազնուական Քօչարի Մելիք-Շահնազարեանց[2638], կինն՝ Փարի, ուստերք 1-ին՝ Նարիման, կինն՝ Հէրիք, ուստր Մէջլում, դուստր՝ Բէգում, 2-րդը՝ Աղամ, 3-րդը Առուստամ, դստերք՝ Ղամար և Սուլթան:

3. Առաքել Մէլքումեան, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Առուշան, Յարութիւն, Մկրտիչ և Յովսէփ, դստերք՝ Խանում, Նազի, Անախաս և Մարիամ:

4. Միքայէլ Ղազարեան, կինն՝ Խանում, ուստերք՝ Պողոս, Կարապետ, Ղազար, դստերք՝ Եղսոմ և Հէրիք:

5. Սարգիս Յովսէփեան, կինն՝ Հէրիք, ուստր՝ Պետրոս, եղբայրն՝ Ասլան, կինն՝ Ազիզ, դուստր՝ Մարիամ և Հէրիք:

6. Յակոբ Սիմօնեան, կինն՝ Հոռի, դուստր՝ Մարիամ:

7. Առաքել Նաւասարդեան, կինն՝ Մարգարիտ, ուստերք՝ 1-ին՝ Քոչարի, կինն՝ Նախշուն, ուստերք՝ Սարգիս, Եսայի, Յակոբ և Ղազի, դուստր՝ Ջավահիր, 2-րդ՝ Աւագ, կինն՝ Փարի, ուստր՝ Աբրահամ, դստերք՝ Մարիամ և Խանում:

8. Յովհաննէս Պողոսեան, կինն՝ Հեղինէ, ուստերք՝ 1-ին՝ Առստամ, կինն՝ Պաշախ, դուստր՝ Սանամ, 2-րդ՝ Ղահրաման, կինն՝ Հէրիք, դուստր՝ Անայի:

9. Ապրէս Արջունց, կինն՝ Վարդի, դուստր՝ Աջաբնան, քոյրն՝ Անայի, մայրն՝ Խաթայի:

10. Աղաջան Օհաննիսեան, կինն՝ Թագուհի, ուստերք՝ Սահակ, Օհաննէս, Յարութիւն, Յակոբ և Գրիգոր, դուստր՝ Սհար, եղբարք՝ Թունիբոբ և Ստեփան:

11. Խոյեցի Մուրատն, կինն՝ Ղումաշ, ուստերք՝ 1-ին՝ Թօմաս, կինն՝ Հէրիք, 2-րդ Սարգիս, դստերք՝ Սաբէտ, Մարիամ:

12. Իսրափիլ Ստեփանեան, կինն՝ Անայի, դուստր՝ Ջավահիր, քոյրն՝ Խաթայի, մայրն՝ Թամամ:

13. Սահակ Մովսէսեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ 1-ին՝ Յարութիւն, կինն՝ Հէրիք, 2-րդ՝ Գէորգ, 3-րդ՝ Օհաննէս:

14. Սաղաթէլ Դաւթեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յովսէփ, դուստր՝ Թազագուլ:

15. Բաբայ Աւէտեան, կինն՝ Սառայ, ուստերք՝ Աւէտիս, Սարգիս և Յօհաննէս:

16. Շահսվար Մօսէսեան, կինն՝ Սիրուննան, ուստերք՝ 1-ին՝ Սարգիս, կինն՝ Մարիամ, 2-րդ՝ Մնացական:

17. Բալլու Վանեան, կինն՝ Խաթայի, ուստերք՝ Յակոբ և Յօհաննէս:

18. Խաչատուր Յօհաննիսեան, կինն՝ Շահում, ուստր՝ Յակոբ, դստերք՝ Սաբէդ, Նազի, Հէրիք, Մարիամ, եղբարք 1-ին՝ Յարութիւն, կինն՝ Թագուհի, ուստր՝ Յօհաննէս, դստերք՝ Սանդուխտ և Մարիամ, 2-րդ՝ Գէորգ, կինն՝ Անայի, 3-րդ՝ Մկրտում:

19. Արզուման Խաչատուրեան, կինն՝ Ջավահիր, ուստերք՝ Մէլքում և Յակոբ, դստերք՝ Հոռի և Թագուհի, եղբայրք՝ 1-ին՝ Սարգիս, կինն՝ Սաբէդ, 2-րդ՝ Ղահրաման, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Պողոս և Պետրոս, քեռորդիք՝ Մովսէս և Յարութիւն Վարդանեանք:

20. Յարութիւն Մկրտումեան, կինն՝ Ջօրապ, ուստր՝ Մնացական, եղբայրն՝ Պողոս, կինն՝ Թագուհի, դստերք Մարիամ և Ջավահիր:

21. Յօհաննէս Հայրապետեան, կինն՝ Սաբէդ, ուստերք՝ Առուստամ, Պողոս, Պետրոս և Սարգիս, դուստր՝ Սանամ:

22. Բայրամ Պողոսեան՝ այրի, ուստերք՝ Յարութիւն, Կարապետ, դստերք՝ Թագուհի, Թէլլու, Գայիանէ, Մէհրի:

---

2636-2638. Ազնվականներ Յավրիբեկը, Բեկլարն ու Քոչարին (Քոչարի բեկ) Մելիք Հովսեփ Գ-ի որդիներն էին. վերջինս, ինչպես նշվել է, վախճանվել է 1826-ին, Քոչարին՝ 1840 թ.:

Ոսկանապատի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի շարք տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1839[2639] | 22 | 90 | 80 | 170 |
| 1845[2640] | | 153 | 137 | 290 |
| 1847[2641] | | 149 | 135 | 284 |
| 1852[2642] | | 153 | 142 | 295 |
| 1861[2643] | 34 | | | |
| 1866[2644] | 38 | 194 | 128 | 322 |
| 1870[2645] | | 219 | 140 | 359 |
| 1873[2646] | | | | 430 |
| 1874[2647] | | | | 490 |
| 1885[2648] | | 270 | 240 | 510 |
| 1886[2649] | 114 | 398 | 329 | 727 |
| 1887[2650] | | 277 | 252 | 529 |
| 1888[2651] | | 290 | 260 | 550 |
| 1889[2652] | | 297 | 267 | 564 |
| 1890[2653] | | 314 | 271 | 585 |
| 1891[2654] | 89 | 321 | 275 | 596 |
| 1892[2655] | | 334 | 294 | 628 |
| 1893[2656] | 23 | 343 | 294 | 637 |
| 1894[2657] | | 349 | 309 | 658 |
| 1897[2658] | | 340 | 313 | 653 |
| 1898[2659] | | 341 | 318 | 659 |
| 1899[2660] | | 347 | 321 | 668 |
| 1900[2661] | | 349 | 321 | 670 |
| 1901[2662] | | 350 | 324 | 674 |
| 1902[2663] | | 360 | 332 | 692 |
| 1905[2664] | | 364 | 340 | 704 |
| 1906[2665] | | 375 | 342 | 717 |
| 1907[2666] | | | | 965 |
| 1908[2667] | 99 | 564 | 421 | 985 |
| 1909[2668] | | 438 | 385 | 823 |
| 1910[2669] | | 596 | 451 | 1047 |
| 1912[2670] | | 452 | 398 | 850 |
| 1914[2671] | | | | 1215 |
| 1917[2672] | 102 | | | 1215 |
| 1924[2673] | 226 | | | |
| 1940[2674] | | | | 1500 |
| 1979[2675] | | | | 751 |
| 1983[2676] | | | | 570 |

Աղյուսակից երևում է, որ ամբողջ ԺԹ դարում ու նաև Ի դարի սկզբներին գյուղի բնակչությունն անընդմեջ ավելացել է, թեև երկրամասի բազմաթիվ այլ բնակավայրերի նման Ոսկանապատն էլ երբեմն տուժել է վարակիչ մահաբեր հիվանդություններից: Հայտնի է, օրինակ, որ միայն 1893 թ. ծաղիկ հիվանդությանը գյուղը զոհ է տվել 15 շունչ[2677]: Բնակչության թվաքանակը առավելագույնին (ավելի քան 1000 շունչ) հասել է 1910 թ.: Հայտնի է, որ այդ մակարդակը պահպանվել և էլ ավելի բազմամարդ է դարձել նաև խորհրդային առաջին տասնամյակներին, իսկ այնուհետև սկսված ու կամաց-կամաց սաստկացող արտագաղթի հետևանքով (հատկապես՝ 1970-ականներից ի վեր) գյուղի բնակչությունը շարունակաբար նվազել է: Ի վերջո, 1989 թ. մարտին գյուղի վերջին՝ շուրջ 500 բնակիչներն էլ ենթարկվեցին բռնագաղթի, որով և հինավուրց ու փառապանծ Ոսկանապատում մարեց հայ կյանքը:

**Հայրենական մեծ պատերազմ.** մասնակցել է 309 ոսկանապատցի, որոնցից 154-ը զոհվել են:

**Դպրոցներ: *Հայոց դպրոց.*** Ոսկանապատի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադրման թվականը հայտնի չէ: 1884-ին այն գործել է որպես արական միդասյա դպրոց[2678]: Կառավարության պահանջով 1885-ին մեկ տարով փակ է մնացել մինչև իշխանությունների կողմից հայոց դպրոցների երկրորդ փակումը՝ 1896 թ., վավերագրերում հիշվում է միայն 1891-ին (դարձյալ արական-միդասյա) և ուներ 60 աշակերտ[2679]:

***Պետական (արքունի) դպրոց.*** 1897-ին, երբ արգելքի տակ էին ազգային դպրոցները, Ոսկանապա-

2639. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 29:
2640. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
2641. Նույն տեղում, գ. 3814, թ. 96-97:
2642. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2643. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2644. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2645. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
2646. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
2647."Кавказский календарь на 1886 г.", с. 125.
2648. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:
2649. "Свод...", с. 84-85.
2650. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 73:
2651. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 130:
2652. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2653. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
2654. Նույն տեղում, գ. 3889, թ. 148: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 273:
2655. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 120:
2656. Նույն տեղում, գ. 3895,թ. 77-78: Ի դեպ, 1893 թ. մարտ ամսվա ընթացքում ծաղիկ հիվանդությունից գյուղում մահացել էր 15 երեխա («Արձագանք», 1893, N 50, էջ 2):
2657. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 173-174:
2658. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2659. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
2660. Նույն տեղում, գ. 3903, թ. 126-127:
2661. Նույն տեղում, գ. 3905, թ. 91-92:
2662. Նույն տեղում, գ. 3906, թ. 97-98:
2663. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
2664. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
2665. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2666. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2667. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 9: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ Ոսկանապատն ունեցել է 827 բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 259):
2668. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 117:
2669. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 57-58:
2670. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
2671 "Кавказский календарь на 1915 г.", с. 127.
2672. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2673. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, թ. 8, 49:
2674. Ըստ ոսկանապատցի Կիրակոս Խաչատուրյանի:
2675. «ԱՍՀ», հ. IV, էջ 348:
2676. Ըստ ոսկանապատցի Կիրակոս Խաչատուրյանի:
2677. «Արձագանք», 1893, N 50, էջ 2:
2678. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 480: Հեղինակը, թյուրիմացաբար, իբրև երկու տարբեր գյուղեր է ներկայացրել Ոսկանապատն ու Ջուռնաբաղը:
2679. Նույն տեղում, էջ 477: «Նոր Դար», 1891, N 47, էջ 2:





*ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). դեպի Սբ. Յակոբ եկեղեցի տանող գյուղամիջյան ճանապարհը*

տում բացվել է պետական (արքունի) դպրոց, որը, ըստ էության, ռուսական էր: Աշակերտների թիվը հասնում էր 100-ի[2680]: Դպրոցի գոյությունն արձանագրել է նաև Ե. Լալայանը. «Գիւղում կայ պետական երկդասյան դպրոց»[2681]:

1940/1941 ուստարվանից Ոսկանապատի յոթնամյա դպրոցը դարձել է 10-ամյա: 1988 թ. ունեցել է 46 աշակերտ և իր գոյությունը պահպանել մինչև 1989-ի բռնագաղթը:

**Սբ. Հակոբ եկեղեցի.** գյուղի հարավային բարձրադիր եզրին կանգնած Սբ. Հակոբ եկեղեցին ճարտարապետական մի հոյակապ կառույց է, բայց այն նկարագրողներն իրենց շարադրանքներում բավական ժլատ են գտնվել: Այսպես, օրինակ, Ս. Ջալալյանցը բավարարվել է՝ ասելով. «...ունի զեկեղեցի սագաշէն»[2682]: Քաջիկյանը նշել է. «...կառուցուած է եկեղեցին կոփածոյ քարով և մեծադիր թաղակապ տանիքով շինուած, ինչպէս ասում են, մօտ երկու հարիւր և աւելի տարի առաջ, քէպէտ և չունի ոչ մի արձանագրութիւն»[2683]: Մ. Բարխուտարյանցն էլ նշել է. «...Սուրբ Յակովբ եկեղեցին, հոյակապ կառուցեալ չորս սիւների վերայ...»[2684]:

Վավերագրերից հայտնի են Սբ. Հակոբ եկեղեցու երկու նորոգումների մանրամասները: Նախ՝ 1847 թ.՝ «...հարիւր մանեթ գլուխ դրամն, որ բաղկացեալ էր ի գնոյ կոմնտեր յանցեալ ամի, ի ներկայ ամի դարձեալ տուեալ են հասարակութիւնք ի գին կողմնտեր և այլոց նիւթոց վասն նորոգելոյ զպակաս տեղիսն եկեղեցւոյն»[2685], և ապա՝ 1916 թ. նորոգել էին եկեղեցու քայքայված մասերը, մասնավորապես «...հարաւային, հիւսիսային և արևելեան պատերի երկարութեամբ դրսի կողմից պատերի հիմքը...», ինչպես նաև կղմինդրածածկ տանիքը՝ ծախսելով 765 ռուբլի[2686]: Ինչ վերաբերում է եկեղեցու հատակի փայտամածին, ապա դրա հեղինակները եղել են ռուսները, երբ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ եկեղեցին ծառայեցրել էին որպես շտեմարան[2687]:

ԺԹ դարի տեղագիր հեղինակները եկեղեցու որմերի շինարարական արձանագրությունների մասին ոչինչ չեն հաղորդում: Կարծում ենք, որ այդպիսիք չեն էլ եղել, քանի որ, օրինակ՝ դռնագլխի ճակատակալ մասը անարձանագիր է թողնված, այնինչ, սովորաբար հենց այդտեղ էին փորագրված լինում նման վկայագրերը: Եկեղեցու կառուցման եթե ոչ ստույգ թվականը, ապա գոնե դարաշրջանը հեշտությամբ որոշվում է շենքի ճարտարապետա-

2680. «Մշակ», 1901, N 84, էջ 3:
2681. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 315:
2682. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 169:
2683. **Քաջիկեան**, նշվ. հոդվածը, էջ 294:
2684. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 273 (սյուներ ասելով նկատի ունի որմնասյուները):

2685. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թթ. 101-102:
2686. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1107, թ. 2:
2687. **Քաջիկեան**, նույն տեղում:



*ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՋՈՒՌՆԱԲԱԴ). դեպի Սբ. Յակոբ եկեղեցի*

կան-հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրության շնորհիվ: Սբ. Հակոբ եկեղեցին ունի ողջ Արցախում լայն տարածում գտած միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք, սակայն մի էական առանձնահատկության շնորհիվ ներկայանում է իբրև ճարտարապետական եզակի լուծում ունեցող հուշարձան: Հարցն այն է, որ նմանատիպ բոլոր այլ կառույցներում երկթեք ծածկի տակ առնված թաղը պահում են 1, 2 և կամ էլ առավելագույնը 3 զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները, իսկ Սբ. Հակոբն ունի 4 զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարներ[2688]: Դրա հետևանքով նկատելի է եկեղեցու երկարությունը, որի շնորհիվ ներսում ընդարձակ մակերես է ձեռք բերել աղոթասրահը (արտաքին չափերն են՝ 25,60 x 11,20 մ): Կառույցի պատերը, հարազատ տվյալ ժամանակաշրջանի համանման այլ հուշարձաններին, ունեն նկատելի հաստություն (135 սմ): Թաղակիր կամարի թռիչքը (որմնասյուների միջև) կազմում է 6,5 մ: Հյուսիսային և հարավային պատերի ողջ երկարությամբ ներքուստ ձգվում է որմնակամարաշարքը: Իր ավանդական տեղում է (հյուսիսային պատի մեջ) մկրտարանի ավազանը: Շենքն ամբողջությամբ կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով (բացառությամբ անկյունաքարերի, որ սրբատաշ են), իսկ պատերի մեջ ագուցված են ԺԲ-ԺԶ դարերով թվագրվող շուրջ երկու տասնյակ խաչքարեր (հիմնականում՝ արևմտյան ճակատում):

Եկեղեցու վերոհիշյալ առանձնահատկությունների և երկրամասի համանման այլ հուշարձանների հետ դրա համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս այն թվագրել ԺԷ դարի 2-րդ կեսով:

Սբ. Հակոբ եկեղեցին փակվել է 1928 թ.[2689]:

Եկեղեցու որմերին պահպանվել են հետևյալ վիմագրերը.

2688. Չորս զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարներ ունեցող 2-րդ հուշարձանը Խանձքի Սբ. Ստեփանոս եկեղեցին է (ԼՂՀ, Ասկերանի շրջանում), բայց այն ավելի փոքր չափեր ունի: Տե՛ս պաշտամունքային կառույցների հատակագծերի մեր կազմած համեմատական աղյուսակը «Artsakh Histoire du Karabagh» (**Patrick Donabedian**, **Claude Mutafian**, Paris, 1991, p. 152):

2689. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). խաչքարեր՝ ագուցված Սբ. Յակոբ եկեղեցու արևմտյան ճակատին***



***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). Սբ. Յակոբ եկեղեցու հատակագիծը***

Սբ. Հակոբ եկեղեցի. մկրտարանի ավազանի հյուսիսակողմի խոյակի վրա.

*Ես Ովանէս, Գրիքոր կամարս բերի Գուղկան, դվիմ իմ մեր (մոր) Ուռումի (Հռիփսիմէի) հոգին համար:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 273:

Սբ. Հակոբ եկեղեցու արևմտյան ճակատում, արտաքուստ ագուցված խաչքարերից մեկի վրա.

*Թվ(ին) | ՈԴ (1155). | Ս(ուր)բ խաչս աւգնական | Տ(է)ր Ովանիսին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 273:

**Քահանա.** ձեռնադրվել է 1869 թ.՝ «Միքայէլ քահանայ (որ առաջնումն անուանէր Մկրտիչ) Տէր-Յովհաննէսեան Տէր-Աւագեանց ոսկանապատցի, ի վերայ եկեղեցեացն հայոց Ոսկանապատ և Մուռուտ գիւղօրէից օգնական ծերունի հօր իւրոյ Յովհաննէս քահանայի»[2690]: Հայտնի է, որ Տեր Միքայելը քահանայագործել է մինչև 1905 թ. և սպանվել թուրքերի ձեռքով[2691]:

1908-1910 թթ. Ոսկանապատում (նաև՝ Մուռուտում) քահանայագործել է Գրիգոր Տեր-Սարգսյանը[2692]:

1924 թ. օգոստոսի 28-ին հրաժարական է տվել Ոսկանապատի վերջին քահանան՝ Հովհաննես Աղասյանը[2693]:

**Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ.** գտնվում է Ոսկանապատի հարավային ծայրում՝ ձորի մեջ, գետի ձախ ափին: Հիմնադրման ժամանակի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան, բայց գոյություն է ունեցել նախքան 1684 թ., քանի որ հիշյալ թվականին ստեղծված մի ավետարանի հիշատակարանում նշվել է. «...արդ ես Սարգսի որդի Խոջա Պատիս, առի զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց եւ ետու վախմ ի դուռն Ոսկանապատու կուսանաց անապատին, Աստուածածին սուրբ տաճարին...»[2694]: Մյուս կողմից, եկեղեցու հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս շինությունը համարել ԺԷ դարի կառույց. ընդ որում չի բա-

2690. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10:
2691. «Մշակ», 1906, N 15, 22 յունվարի, էջ 1:
2692. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7:
2693. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
2694. **Քաջիկեան**, նույն տեղում:






***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՋՈՒՌՆԱԲԱԴ). Սբ. Յակոբ եկեղեցու որմերում ագուցված խաչքարեր***

ցառվում, որ անապատը նվերներ է ստացել (ի թիվս և հիշյալ ավետարանը) հենց կառուցման ավարտից անմիջապես հետո:

Եկեղեցին ունի միանավ, թաղածածկ հորինվածք: Ծածկը երկթեք է, միակ մուտքը՝ հարավից: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Սվաղված է և՛ ներսից, և՛ դրսից: Արտաքին չափերն են՝ 12,25 x 6,55 մ: Եկեղեցու արևմտյան կողմում եղել են միաբանական սենյակներ. «...բայց յորդ անձրևի հեղեղներն քանդած և տարած են սոյն սենակները և կոյտ կոյտ խիճեր դիզած խուցերի տեղերում»[2695]: 1885 թ. մի վավերագրում անապատը հիշվում է «Սբ. Ոսկեանց» անունով[2696]:

2695. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 275:
2696. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:

Կրում է մի շարք նորոգումների հետքեր, որոնցից մեկն իրականացրել է Հարություն պապը[2697]: Տապանաքարը գտնվում է եկեղեցու հարավային պատի տակ.

*Այս է տապան Յարութիւն պապին, որ վերստին նորոգեաց սուրբ եկեղեցիս, թվ. ՌՄՀ (1821):*
Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 275:

**Սբ. Սարգիս (Սբ. Վարդանանց) եկեղեցի.** Գտնվում է Կուսանաց Սբ. Աստվածածին անապատի դեմ հանդիման՝ գետի հանդիպակաց աջ ափին: Բաղկացած է միանավ թաղածածկ եկեղեցուց, միաբանական ավերակ կացարաններից և շրջապարսպից: Երկթեք ծածկի տակ առնված կիսա-

2697. **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:










***ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՐՈՆԱՔԱՂ). Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ. տեսքը՝ արևելքից, հարավ-արևելքից, հարավից բացված մուտքն ու հատակագիծը***

շրջանաձև թաղը պահում են երկու զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Եկեղեցու արտաքին չափերն են՝ 10,50 x 6,30 մ: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով:

1885 թ. մի վավերագրում, ի թիվս Սբ. Հակոբ և Կուսանաց Սբ. Աստվածածին անապատի, հիշվում է նաև Սբ. Վարդանանց եկեղեցին[2698]: Քանի որ Ոսկանապատում (նաև մերձակայքում) քիչ թե շատ նշանավոր երրորդ եկեղեցին Սբ. Սարգիսն է, ուստի կարծում ենք, թե Սբ. Վարդանանցը նրա անվանման մի տարբերակն է: Եկեղեցին, ըստ ամենայնի, ԺԷ դարի կառույց է: Ուշագրավ է, որ երկու տարբեր ձեռագրերում (1626 և 1634 թթ.) Ոսկանապատում հիշվում է միևնույն Վարդան երեցը. «...ես ...Վարդան էրէցս Ոսկի անայպատու...»[2699] և «...Ոսկանապատու Վարդան իրիցին»[2700]: Թվում է, թե Սբ. Վարդանանց անունը կրող եկեղեցին կապ ունի այս Վարդան երեցի հետ (կարող էր կամ նրա կողմից և կամ ի հիշատակ նրան կառուցված լինել):

Սուրբ Սարգիս (Վարդանանց) եկեղեցի. խորանի մեջ կանգնեցված խաչքարի ստորին մասում.

*Սուրբ խաչս ազնական...:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 275:

**Սիրուն խաչ.** հնավայրը, ակնհայտորեն, իր անունն առել է տեղում գտնված խաչքարից (կամ խաչքարերից): Գտնվում էր Ոսկանապատից

2698. Նույն տեղում:

2699. «ԺԷԲ», էջ 206:

2700. Նույն տեղում, էջ 543:










*ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՁՈՒՌՆԱԲԱԴ). Սբ. Հակոբ եկեղեցու որմերում ագուցված խաչքարեր*

արևելք, Պանդ լեռան ուղղությամբ, թավ անտառի մեջ[2701]:

**Բերդ.** Ժ-ԺԲ դարերին վերաբերող փոքրիկ ամրոց է՝ Ոսկանապատի հարավարևմտյան կողմում՝ Գանձակ գետի ձախ ափին: Տեղագիր հեղինակներից հնավայրի միակ այցելուն եղել է եպիսկոպոս Բարխուտարյանցը (Ե. Լալայանը օգտվել է նրա տվյալներից՝ առանց աղբյուրը նշելու), որի թողած համառոտ նկարագրականում կարդում ենք. «Ղալա անուն բերդակ, որ կայ Ոսկանապատից մօտ մի մղոն վերեւ նոյն գետակի ձախ ափին: Քարուկիր և գրեթէ քառակուսի է բերդակս, որ ունի չորս աշտարակ և մի դուռն: Փոքր է, բայց ունի գեղեցիկ դիրք, հաստատուն պարիսպ և յարմար տեղ: Երևի թէ գետակի կողմում ունեցած է կրկնապարիսպ, որ փոքր ինչ ցած է բուն պարսպից և ունի քարուկիր շինութիւն և բնակարան իբր տուն»[2702]:

## ՉԱՅԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ արևելք՝ Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 490-520 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1986 թ. ունեցել է 715 բնակիչ[2703]:

## ՉՈԲԱՆ-ԱԲԴԱԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 21 կմ՝ Գանձակից 10 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 240-250 մ բարձրությամբ հարթավայրում:

**Բնակչություն.** հայտնի է, որ ԺԹ դարավերջին Չոբան-Աբդալին, որը բաղկացած էր թուրք խաշնարածների մի քանի ձմեռոց-գյուղակներից, պատկանում էր ազգությամբ թուրք կալվածատերերի[2704]:

ԺԹ–Ի դարերին վերաբերող բնակչության թվաքանակի մասին սահմանափակ վիճակագրական տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[2705] | 12 | 23 | 19 | 42 |
| 1886[2706] | 49 | 167 | 133 | 300 |
| 1907[2707] | | | | 411 |
| 1986[2708] | | | | 1421 |

## ՉՐԱՂԻՉՈՐ (ՃՐԱԳԻՉՈՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1340-1440 մ բարձրության վրա:

Հայաքափ հին գյուղատեղին խորհրդային տարիներին վերստին բնակեցվել է հայերով, որոնց հիմնական զբաղմունքը հանքագործությունն էր:

2701. «Նոր Դար», 1891, N 47, էջ 2:
2702. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 303-304:
2703. «ՍՍՀ», հ. 10, էջ 301:

2704. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 31-32, 43-44:
2705. "Акты...", т. II, с. 596.
2706. "Свод...", с. 84-85.
2707. "Кавказский календарь на 1910 г.", с. 415.
2708. «ՍՍՀ», հ. 10, էջ 369:

## ՍԱՐԻՂԱՄԻՇ

Գտնվում է շրջկենտրոնից 27 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 208-215 մ բարձրությամբ միապաղաղ հարթավայրում:

1886 թ. նստակեցության անցած թուրք հասարակությունը բաղկացած է եղել 34 ընտանիքից և կազմել 164 շունչ (96 ար., 68 իգ.)[2709]: 1914 թ. գյուղն ունեցել է 191 բնակիչ[2710]:

## ՍԱՐԻՍՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք՝ Մարտունաշեն, Մանաշիդ և Բուզլուխ գյուղերի միջակայքում, վտակի ձախակողմյան՝ հարավ-արևելահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1280-1400 մ բարձրության վրա:

Թրքաբնակ աննշան գյուղ է: Գոյացել է ԺԹ դարի վերջերին: 1886 թ. ունեցել է 23 տուն՝ 203 շունչ (123 ար., 80 իգ.)[2711], 1914-ին՝ 250 բնակիչ[2712]:

Սարիսուն իր ավարառու և հանցագործ բնակիչներով ամեն ինչում նման է եղել մարդասպանների որջ Թոփալհասանլուին, և դրա համար Ի դարի ընթացքում՝ որպես արդար հատուցում, երկու անգամ (1906 և 1991 թթ.) չարաչար պատժվելով հողին է հավասարացվել:

## ՍԱՐՔՅԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 250-275 մ բարձրությամբ հարթավայրում:

Թրքաբնակ գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2713] | 76 | 222 | 194 | 416 |
| 1908[2714] | | | | 792 |
| 1914[2715] | | | | 692 |
| 1983[2716] | | | | 3065 |

## ՍԱՖԱՐԱԼԻԵՎ (ՆԱԲԻ-ԱՂԱԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 230-260 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 98 տուն՝ 553 շունչ (302 ար., 251 իգ.)[2717], 1907-ին՝ 1050[2718], 1914-ին՝ 721 բնակիչ[2719]:

## ՈՒՉԹԵՓԵ

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 560-580 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՓԱԴԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ Գետիշենագետի ձախ ափին, ծովի մակերևույթից 490-550 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: 1908 թ. ունեցել է 261 բնակիչ[2720]:

## ՓԱՆԱՀԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ արևելք՝ Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 550-600 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին գոյացած թրքաբնակ աննշան գյուղակ է:

## ՔՅՈՒՐԱԿ-ԲԱՍԱՆ

Գտնվում էր Գանձակ քաղաքի մերձակայքում՝ դեպի արևելք: Որպես հայաբնակ գյուղ՝ իր Սբ. Աստվածածին եկեղեցով և Օհան Տեր-Առաքելյանց քահանայով, հիշատակվում է 1839 թ.[2721]:

## ՔՈԼԱՅԻՐ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 260-270 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 22 տուն՝ 87 շունչ (47ար., 40 իգ.)[2722], 1908-ին՝ 163 բնակիչ[2723]:

## ՔՈՇԿ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 990-1060 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Ի թիվս երկրամասի հայաբնակ բազմաթիվ այլ գյուղերի՝ հիշվում է Փիլիպպոս կաթողիկոսի (1632-1655) գրած կոնդակներից մեկում[2724]:

**Բնակչություն.** ԺԹ դարի սկզբներին Քոշկը հայաբնակ է եղել, սակայն, մոտ գտնվելով Գանձակին, ըստ երևույթին, ավերվել ու ամայացել է 1826 թ. պարսկական արշավանքի ժամանակ: Հայտնի է, որ 1804 թ. դեռևս զուտ հայաբնակ գյուղն ունեցել է 7 տուն (10 ար., 7 իգ.)[2725]:

Գյուղի հայաթափման ստույգ տարեթիվն անհայտ է, բայց դա տեղի է ունեցել 1839 թ-ից ավելի վաղ, քանի որ այդ թվականից ի վեր վիճակագրա-

2709. "Свод...", с. 80-81.
2710. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
2711. "Свод...", с. 88-89.
2712. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
2713. "Свод...", с. 80-81.
2714. "Кавказский календарь на 1910 г.", с. 360.
2715. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
2716. «ՍՍՀ», h. 8, էջ 393:
2717. "Свод...", с. 80-81.
2718. "Кавказский календарь на 1910 г.", с. 329. Տվյալն ակնհայտորեն ուռճացված է և, ըստ այդմ, անվստահելի:
2719. "Кавказский календарь на 1915 г.", с. 162.
2720. "Кавказский календарь на 1910 г.", с. 389.
2721. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, թ. 10:
2722. "Свод...", с. 80-81.
2723. "Кавказский календарь на 1910 г.", с. 283.
2724. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 48:
2725. "Акты...", т. II, с. 596.

կան առկա բազմաթիվ տեղեկագրերից և ոչ մեկում Քոշկը չի հիշատակվում: Ի դեպ, հայաթափումից հետո տասնամյակներ շարունակ Քոշկը եղել է անբնակ: Համենայն դեպս, 1885 թ. ականատեսը գրել է. «Մատրան տեղից ոչ հեռու գտնւում է և գիւղի ավերակ, որի մէջ եղած պիտի լինի և իշխանական ամարանոց, որին այժմ շրջակայ ժողովուրդը Քօշկ անունն է տալի»[2726]:

**Եկեղեցի.** Քոշկից հազիվ 1 կմ հարավ, թավ անտառով ծգվող Մուռուտ-Հաջիշեն հին ճանապարհի եզրին գտնվում են վերևում հիշատակված մատուռի ավերակները: Փլատակների մեջ պահպանվել են միջնադարյան եկեղեցու արձանագիր բարավորը, մի քանի զեղաքանդակ, կոտրատված խաչքարեր[2727]: Ցավոք, հնավայրը գանձախույզների «սիրած» վայրերից է եղել:

Պայմանականն «Քոշկի մատուռ» անունով հայտնի հնավայրն առաջին անգամ մասնագետ այցելու է ունեցել 1885 թ., վերջինս նշել է. «Մուռուտից դէպի Գետաշէն տանող ճանապարհի վերայ կածանի ձախ կողմը թաւ անտառի մէջ ցոյց տուեցին հայկական մի մատուռի քարակոյտ աւերակ, որի քարերի մէջ երևում էին մեծ և փոքր խաչքարեր: Ոչ ոք չկարողացաւ ասել, թէ ինչպէս է կոչուել այդ մատուռը, որովհետև բաւական ժամանակից ի վեր աւերակ է, միայն դրան ճակատի բեկուած քարի մի կտորի վերայ կարդացւում է...»[2728]: Այնուհետև՝ 5-6 տարի անց, տեղում եղել է եպիսկոպոս Բարխուտարյանցը և նշել. «Հաճի քեանդի և Մռուք գիւղի միջև անտառախիտ ճանապարհի վերայ ծմակի մէջ կայ մի աւերակ մատուռ Քէօշք անուն, որի արձանագրութեան քարն կոտրուած է...»[2729]:

Բարավորի քար. ընկած է ավերակների մեջ, արձանագրությունը՝ 6 տողով.

*Ի թւին Հայոց ՉԹ (1260) / կամաւն Ա(ստուծո)յ եւ ողորմ/ութեամբ Ք(րիստոսո)ի ամենակալին.../ շինեցի զեկեղեցիս առա/ջնորդութ(եամ)բ Տ(է)ր Ովանիսի, / պարոնութ(եամ)բ Բազրայրին:*

Հրատ. «Արձագանք» 1886 N 20, էջ 294, որտեղ թվագիրը ընթերցվել է՝ ՉԴ: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 272, թվագիրը ընթերցել է՝ ՉՉ:

Ծանոթ. թվագիրը ՉԹ ընթերցել է Ս. Բարխուդարյանը, որը վերծանել է նաև կառուցողի անունը՝ *եւ Սարգիս* և ընթերցել արձանագրության շարունակությունը («Դիվան...», V, էջ 230):

Բարավոր. վերին եզրին՝ 1 տող.

*Հաստատեցի զյայտն(ութեան)...*

Հրատ. «Դիվան...», V, էջ 230:

Բարավոր. ձախ եզրին՝ 10 տող.

*Ա(ստուա)ծ ողո(րմեայ)/ Մխիթ/արա, որ / աւգնեց / եկեղեց/ոյս ու /... որ աւգնեացն շատ. Ակոբո... տ(է)ր:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 230:

Բարավորի աջ եզրին՝ 9 տող.

*Ա(ստուա)ծ ողորմե(ա)յ / Մխիթարչի, / որ աւգնե(ա)ց / զեկեղեցոյս /.../.../.../...:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 230:

Խաչքար. գյուղատեղիի հարավարևմտյան կողմում ընկած, ստորին մասում՝ 5 տող.

*Թիւ ՈԼԳ (1184), ես Պաղոս ե/ւ Սահակ կանգնեցաք զխաչս / ի բարէխաւսութիւն հաւրեղբար մ/երո Բարսղի վարդապետի եւ հաւր մեր(ո) Ա/կոբա, որք երկրպագէք իշեցէք ի Ք(րիստո)ս, աղաչեմ(ք):*

Հրատ. «Դիվան...», V, էջ 229:

Խաչքար. եկեղեցուց 15 մ արևելք, «Խաչի ջուր» աղբյուրի մոտ ընկած, զեղաքանդակ, հարավային նեղ կողին՝ 34 տող (եզրատառերը վնասված են).

*(Ի) դառն եւ ի ն(ե/ղ) ժամանակի(ն) / (յո)րում խռով(ք) / բազմաց դի(մ/եր) ի վրաց քրիս/տոնէից, աւգն(ակ/ան) եւ ոչ ուստեք (աւագն)ականութեամբ / (Այ) եւ թագաւո/րին վրաց (Լաշա) այ եւ ի... /...Պարսից / ...Հայոց տ(եառ)ն Յովհանէ/ս ... յառաջնոր-դ/ութ(եամ)բ ս(ուր)բ ուխտ(իս) / ... / ... / ... / ... / ... / ...կան/(գնեց)ի զս(ուր)բ Գրի/գորս ի բարէխ/(ա)ւսութ(ին) հաւր / իմոյ Գրիգոր / եւ մաւր իմոյ / ... / (որք) զերկրպա/գէք զմեզ ... / ...յաղաւթ(ս) / (յի)շեսջիք:*

Հրատ. «Դիվան...», V, էջ 230-231:

## ՖԻԶՈՒԼԻ (ՍՈՒՆՆԻԼԱՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ հյուսիսարևելք՝ ծովի մակերևույթից 220-225 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 56 տուն՝ 297 շունչ (163 ար., 134 իգ.)[2730], 1914-ին՝ 233 բնակիչ[2731]:

2726. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:

2727. Հնավայրում առիթ ենք ունեցել լինելու միայն երկու անգամ՝ 1980 և 1887 թթ.:

2728. «Արձագանք», 1886, N 20, էջ 294:

2729. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 272:

2730. "Свод...", с. 80-81.

2731. "Кавказский календарь на 1915 г.", с. 184.

# ԿԱՍՈՒՄ-ԻՍՄԱՅԻԼՈՎԻ ՇՐՋԱՆ

Կասում-Իսմայիլովի (Գյոյչանի) վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 1231 քկմ մակերես, ունի 67 բնակավայր, որից 64-ը՝ գյուղ, 2-ը՝ քաղաքատիպ ավան, մեկը՝ քաղաք: Սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Խանլարի, Եվլախի, Թարթառի և ԼՂՀ Մարտակերտի և Շահումյանի շրջաններին:



## ԱԶԱՏ (ԱՐԱՆԻ-ԱԶԱՏ)

Գտնվում է շրջկենտրոնից 25 կմ հյուսիս-արևմուտք՝ Գանձակից 13 կմ արևելք՝ Գանձակ-Եվլախ երկաթուղագծի աջ կողմում, Խանլարի շրջանի Ազատ (Սուլուկ) գյուղից 27 կմ (ուղիղ գծով) հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 255-262 մ բարձրությամբ դաշտավայրային տեղում: Դեռևս նախախորհրդային տարիներից Ազատն ունեցել է ընդարձակ վարելահողեր:

1948-49 թթ. ադրբեջանական իշխանությունների պարտադրմամբ Արանի-Ազատի հողերում սկսել են բամբակի մշակությունը (բամբակ չմշակելու դեպքում կառավարությունը սպառնում էր բռնագրավել Արանի-Ազատի հողերը): Շուտով ազատցի շուրջ 20 ընտանիք մշտական բնակություն է հաստատում Արանի-Ազատում: 1970-ական թվականների սկզբներից բնակիչները կամաց-կամաց սկսում են լքել շուրջ քառորդ դար շենացրած գյուղը և ամեն ինչ թողնելով թուրքերին՝ ցրվում զանազան վայրեր (գլխավորապես հետ են վերադառնում բուն գյուղը՝ Ազատ):

Արանի-Ազատում դպրոցահասակ երեխաները զրկված են եղել ազգային դպրոց հաճախելու հնարավորությունից: Նրանք սովորում էին հարևան Արան-Միխայլովկա գյուղում բացված 7-ամյա ռուսական դպրոցում:

## ԱԶԱՐ-ԱՀՄԵԴԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի ավանից 8 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 160-170 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** Ազար-Ահմեդլու թուրք հասարակության մասին գրավոր առաջին վկայություններից մեկը վերաբերում է 1804 թ.[2732]: 1886 թ. իրականացված մարդահամարի ժամանակ խաշնարած թափառական այս ցեղախմբին տարբեր վայրերում արձանագրելով՝ ստացել են արհեստականորեն ուռճացված տվյալներ: Մինչդեռ 1914 թ., երբ ցեղախումբն արդեն նախկին ձմեռոցը գյուղի վերածելով՝ նստակեցության էր անցել, արձանագրվել է բնակչության շատ ավելի, բայց իրական թվաքանակ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2733] | 94 | 231 | 179 | 410 |
| 1908[2734] | | | | 1078 |
| 1914[2735] | | | | 199 |
| 1986[2736] | | | | 803 |

2732. "Акты...", т. II, с. 596.
2733. "Свод...", с. 76-77.
2734. "Кавказский календарь на 1910 г.", с. 175. Վիճակագրական այս տվյալն ակնհայտ ուռճացված է:
2735. "Кавказский календарь на 1915 г.", с. 84.
2736. «ԱՍՀ», h. 10, էջ 127:

## ԱԶԻԶԲԵԿՈՎ (ԴԱԼՄԱՄԵԴԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 180-190 մ բարձրությամբ դաշտավայրում:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի կեսերին:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ կան վիճակագրական հետևյալ տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2737] | 11 | 32 | 29 | 61 |
| 1908[2738] | | | | 327 |
| 1914[2739] | | | | 264 |
| 1978[2740] | | | | 464 |

## ԱԼՓՈՈՒՏ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 197-202 մ բարձրությամբ դաշտավայրում:

Գյուղը նախկին ձմեռոցի տեղում հիմնվել է Ի դարի սկզբներին:

1908 թ. ունեցել է 165[2741], 1914-ին՝ 235 բնակիչ[2742]:

## ԱՀՄԵԴԱԲԱԴ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 165-170 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԱՂԱՄԱԼԻՕՂԼՈՒ (ՍԱՖԻՔՅՈՒՐԴ)

Գտնվում է շրջկենտրոնից 25 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի կայարանից նույն ուղղությամբ 5 կմ հեռու, ծովի մակերևույթից 215-225 մ բարձրության վրա:

Մինչև 1925 թ. կոչվել է Արդուլլաբեյկուրդու[2743]:

1886 թ. իրականացված մարդահամարի ժամանակ խաշնարած թափառական այս ցեղախմբին տարբեր վայրերում արձանագրելով՝ ստացել են արհեստականորեն ուռճացված տվյալներ: Ասվածի ապացույցն են 1886 և 1914 թթ. վիճակագրական տվյալներում առկա նվազման ավելի քան կրկնակի տարբերությունը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2744] | 277 | 817 | 706 | 1523 |
| 1908[2745] | | | | 1640 |
| 1914[2746] | | | | 750 |
| 1976[2747] | | | | 1757 |

2737. "Свод...", с. 146-147.
2738. "Кавказский календарь на 1910 г.", с. 235.
2739. "Кавказский календарь на 1915 г.", с. 116.
2740. «ԱՍՀ», h. 4, էջ 147:
2741. "Кавказский календарь на 1910 г.", с. 180.
2742. "Кавказский календарь на 1915 г.", с. 87.
2743. «ԱՍՀ», h. 1, էջ 98:
2744. "Свод...", с. 86-87.
2745. "Кавказский календарь на 1910 г.", с. 361.
2746. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
2747. «ԱՍՀ», h. 1, էջ 98:

## ԲԱԼԼԸՂԱՅԱ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևելք:

Ներկայիս գյուղը գոյացրել են Ի դարի սկզբներին նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը:

1908 թ. գյուղն ունեցել է 87[2748], 146 բնակիչ[2749]:

## ԲԱԽՉԱՔՅՈՒՐԴ

Գտնվում է շրջկենտրոնից 27 կմ հյուսիս-արևմուտք` ծովի մակերևույթից 215-223 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԲՈՐՍՈՒՆԼՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք` ծովի մակերևույթից 185-220 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** ներկայիս մարդաշատ գյուղի տեղում թուրք խաշնարածները նստակեցության են անցել ԺԹ դարավերջին: 1886 թ. իրականացված մարդահամարի ժամանակ խաշնարած քափառական այս ցեղախմբին տարբեր վայրերում արձանագրելով` ստացել են արհեստականորեն ուռճացված տվյալներ:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2750] | 196 | 514 | 448 | 962 |
| 1914[2751] | | | | 474 |
| 1976[2752] | | | | 2260 |

Գյուղում պահպանվել է Ի դարի սկզբին կառուցված ղամբարան[2753]:

## ԳԱՍԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս` Կուրակ գետի ձախ ափից հազիվ 1 կմ հեռու, ծովի մակերևույթից 85-90 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակի փոփոխություններին վերաբերող վիճակագրական տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2754] | 33 | 123 | 73 | 196 |
| 1908[2755] | | | | 102 |
| 1914[2756] | | | | 103 |

## ԳՅՈՅՆԻՅԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիսարևմուտք` ծովի մակերևույթից 158-165 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԳՅՈՐԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս-արևմուտք, Կուրակ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 148-152 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին Գյորանլին Արափլի, Նաշմիր, Իդյալի-ղուրուղ, Շաֆ և Մոլլա-Իսմայիլի գյուղերի հետ պատկանել է թուրք կալվածատերեր Մելիք Մահմեդ-բեկ և Մուստաֆա-բեկ Շաֆիբեկովներին[2757]:

1886 թ. ունեցել է 91 տուն, 365 շունչ (209 ար., 156 իգ.)[2758], 1906-ին` 45[2759], 1914-ին` 219 բնակիչ[2760]:

## ԳՅՈՒԼՄԱՄԵԴԼԻ (ՄԻՍԿԻՆԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 11,5 կմ հյուսիս-արևմուտք, Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 118-122 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին: 1914 թ. ունեցել է 63 բնակիչ[2761]:

## ԴԱԼՄԱՄԵԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք` Գանձակից 18 կմ արևելք, ծովի մակերևույթից 220-250 մ բարձրության վրա:

Երկաթուղային կայարան է, 1958 թ. ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ[2762]:

1886 թ. ունեցել է 57 տուն` 295 շունչ (163 ար., 132 իգ.)[2763], 1914-ին` 143 բնակիչ[2764]:

## ԵԳԱՐՉԻ-ՂԱԶԱԽԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս-արևմուտք` Դալմամեդլի ավանից 8 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 160-170 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին միավորված էր վերջինիս գյուղական խորհրդի հետ:

ԺԹ դարավերջին հիմնել են կառավարության պահանջով ստիպողաբար նստակեցության անցած թուրք խաշնարածները: Վերջիններիս թվա-

2748. “Кавказский календарь на 1910 г.”, с. 197.
2749. “Кавказский календарь на 1915 г.”, с. 96.
2750. “Свод...”, с. 78-79.
2751. “Кавказский календарь на 1915 г.”, с. 101.
2752. «ԱՍՀ», հ. 2, էջ 254:
2753. **Фатуллаев Ш. С.**, նշվ. աշխ., էջ 433:
2754. “Свод...”, с. 82-83. Այս տվյալն արդեն նշված պատճառով չափազանցված է, ուստի` անիրական:
2755. “Кавказский календарь на 1910 г.”, с. 218.
2756. “Кавказский календарь на 1915 г.”, с. 107.
2757. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 15-16:
2758. “Свод...”, с. 78-79. Այս տվյալը հայտնի պատճառներով վստահելի չէ (չափազանցեցված է):
2759. “Кавказский календарь на 1910 г.”, с. 223.
2760. “Кавказский календарь на 1915 г.”, с. 109.
2761. Նույն տեղում, էջ 159:
2762. «ԱՍՀ», հ. 3, էջ 398:
2763. “Свод...”, с. 78-79.
2764. “Кавказский календарь на 1915 г.”, с. 115.

քանակն արտահայտող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2765] | 82 | 221 | 197 | 418 |
| 1907[2766] | | | | 370 |
| 1986[2767] | | | | 158 |

Գյուղից 3 կմ հյուսիս-արևելք պահպանվել են Մուրղուզուլար գյուղատեղիի ավերակները:

## ԵԼՓԱԿ (ՅՈԼՓԱԽ)

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 180-190 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին գոյացած գավառի թրքաբնակ սակավաբնակ գյուղերից էր: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2768] | 13 | 25 | 20 | 45 |
| 1908[2769] | | | | 51 |
| 1914[2770] | | | | 47 |

## ԵՐԵՎԱՆԼԻ (ԿԱՐԱԿՈՅՈՒՆԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 110-120 մ բարձրության վրա:

Հիմնվել է Ի դարի սկզբին. 1914 թ. ունեցել է 66 բնակիչ[2771]:

## ԷՅՎԱԶԱԼԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 100 մ բարձրության վրա:

Հիմնվել է Ի դարի սկզբին. 1914 թ. ունեցել է 110 բնակիչ[2772]:

## ԽԱՍԱԴԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 140-145 մ բարձրության վրա:

Հիմնել են խաշնարած թուրքերը Ի դարի սկզբներին:

1914 թ. ունեցել է 44 բնակիչ[2773]:

## ԽԱՆՔԱՐՎԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևելք:

ԺԹ դարավերջին Խանքարվենդը պատկանում էր 4 թուրք կալվածատերերի[2774]:

2765. "Свод...", с. 76-77.
2766. "Кавказский календарь на 1910 г.", с. 250.
2767. "Кавказский календарь на 1915 г.", с. 123.
2768. "Свод...", с. 78-79.
2769. "Кавказский календарь на 1910 г.", с. 264.
2770. "Кавказский календарь на 1915 г.", с. 130.
2771. "Кавказский календарь на 1915 г.", с. 135.
2772. Նույն տեղում, էջ 212:
2773. Նույն տեղում, էջ 196:
2774. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 62-63:

ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած թուրքերը: Վերջիններիս թվաքանակն արտահայտող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2775] | 284 | 947 | 692 | 1639 |
| 1908[2776] | | | | 2180 |
| 1914[2777] | | | | 1200 |
| 1986[2778] | | | | 4733 |

## ԽԻՆԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 120-125 մ բարձրության վրա:

Հիմնվել է Ի դարի սկզբներին:

1986 թ. ունեցել է 634 բնակիչ[2779]:

## ԽՈՅԼԻ (ԽՈՅԼԱՐ, ՋԱՐԿՅԱԼԱՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ Ղարադաղլուից 1 կմ հարավ-արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին, մեղմաթեք դաշտավայրում, ծովի մակերևույթից 375-410 մ բարձրության վրա:

**Անվան ծագում.** ներկայումս պաշտոնապես անվանվում է Խոյլի: Գյուղի անվանումներից առաջինը կապված է մինչ տեղում գյուղ հիմնադրելը տեղամասի՝ Ջարկյալար կոչված լինելու, իսկ մյուսն առնչվում է բնակիչների՝ Խոյից փոխադրված լինելու հանգամանքի հետ[2780]:

**Հիմնադրում.** հայտնի է, որ 1844 թ. Ջարկյալար տեղամասում բնակություն են հաստատել 14 տուն խոյեցի հայ գաղթականներ. «...քանի մի տունք խոյեցիք ազգաւ և թուով իբր 14 տուն եկեալ և բնակեալ են մերձ առ գիւղն Ղարադաղլու, ի հողն Ճարկալար անուն...»[2781]:

**Բնակչություն.** 1844-1981 թթ. ընթացքում բնակչության թվաքանակն ունեցել է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1844[2782] | 14 | 37 | 33 | 70 |
| 1845[2783] | | 53 | 51 | 104 |
| 1847[2784] | | 62 | 53 | 115 |
| 1849[2785] | | 51 | 43 | 94 |
| 1852[2786] | | 55 | 48 | 103 |

2775. "Свод...", с. 150-151.
2776. "Кавказский календарь на 1910 г.", с. 393.
2777. "Кавказский календарь на 1915 г.", с. 195.
2778. «ԱՍՀ», հ. 10, էջ 47:
2779. Նույն տեղում, էջ 89:
2780. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 307:
2781. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 31: Մեկ այլ տվյալով՝ խոյեցիները բնակություն են հաստատել 1828 թ. (**Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 307):
2782. Նույն տեղում:
2783. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 5-6:
2784. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
2785. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
2786. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1861[2787] | 10 | | | |
| 1866[2788] | 11 | 44 | 43 | 87 |
| 1872[2789] | | 90 | 75 | 165 |
| 1873[2790] | | | | 164 |
| 1875[2791] | | | | 165 |
| 1876[2792] | | | | 162 |
| 1877[2793] | | 90 | 83 | 173 |
| 1878[2794] | | 86 | 78 | 164 |
| 1881[2795] | | 85 | 68 | 153 |
| 1882[2796] | | 85 | 65 | 150 |
| 1883[2797] | | 86 | 66 | 152 |
| 1885[2798] | | 80 | 67 | 147 |
| 1886[2799] | 40 | 89 | 83 | 172 |
| 1887[2800] | | 64 | 62 | 126 |
| 1888[2801] | | 59 | 57 | 116 |
| 1889[2802] | | 58 | 57 | 115 |
| 1890[2803] | | 62 | 56 | 118 |
| 1891[2804] | | 61 | 60 | 121 |
| 1892[2805] | | 60 | 56 | 116 |
| 1893[2806] | | 66 | 62 | 128 |
| 1894[2807] | | 69 | 72 | 141 |
| 1897[2808] | | 65 | 63 | 128 |
| 1898[2809] | | 66 | 66 | 132 |
| 1899[2810] | | 71 | 69 | 140 |
| 1900[2811] | | 76 | 71 | 147 |
| 1901[2812] | | 74 | 73 | 147 |
| 1902[2813] | | 80 | 76 | 156 |
| 1905[2814] | | 85 | 80 | 165 |
| 1906[2815] | | 110 | 90 | 200 |
| 1907[2816] | | | | 191 |
| 1908[2817] | 36 | 108 | 88 | 196 |
| 1909[2818] | | 111 | 91 | 202 |
| 1910[2819] | | 114 | 94 | 208 |
| 1912[2820] | | 123 | 99 | 222 |
| 1917[2821] | 40 | | | 273 |
| 1981[2822] | 6 | | | |

2787. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2788. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2789. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2790. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
2791. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2792. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2793. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2794. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2795. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2796. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2797. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 56-57:
2798. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
2799. “Свод...”, с. 86-87. Մեկ այլ տեղեկագիր նույն թվականի համար նշել է՝ 20 տուն («Արձագանք», 1886, N 19, էջ 280):
2800. Նույն տեղում, գ. 3880, թ. 72:
2801. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
2802. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2803. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
2804. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:
2805. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
2806. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2807. Նույն տեղում, գ. 3896, թ. 71-72:
2808. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2809. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2810. Նույն տեղում, գ. 3903, թ. 125-126:
2811. Նույն տեղում, գ. 3905, թ. 90-91:
2812. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
2813. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
2814. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
2815. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2816. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2817. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 11:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** 1905-ի աշնանը գյուղի բնակիչներն ապահովության համար նախապես փոխադրվել են հարևան Ղարադաղլու գյուղը, այնուհետև՝ Գետաշեն:

Տակավին 1913 թ. գյուղում ընթացքի մեջ էին 1905 թ. ավերման հետևանքների վերացման աշխատանքները[2823]:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** մինչև 1850-ական թթ. սկզբները գյուղը եկեղեցի չի ունեցել, և ծիսական արարողությունները կատարվում էին Ղարադաղլուի եկեղեցում, կամ էլ քահանա էր հրավիրվում հարևան գյուղերից: 1861 թ. մի վավերագրում[2824] արդեն հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ եկեղեցին: Այստեղից հետևում է, որ այն կառուցվել է 1850-ական թթ. 2-րդ կեսին: Արդեն 1886 թ. հարց էր բարձրանում «մթին, անշուք և խարխուլ» եկեղեցու նորոգության վերաբերյալ[2825]: Աշխատանքներն իրենց երկար սպասել չեն տալիս. «...նորոգության համար հոգս է քաշում ժողովուրդը»[2826]:

1905 թ. նոյեմբերին թուրք խուժանը հրդեհում է գյուղը, կողոպտում ու ավերում եկեղեցին[2827]: Հետագայում, երբ իրավիճակը խաղաղվում է, բնակիչները վերադառնում են գյուղ, նորոգում եկեղեցին:

Գանձակի հոգևոր վարչությունը 1911 թ. եկեղեցական գրքեր է տրամադրել նաև Սբ. Աստվածածին եկեղեցուն[2828]:

1914 թ. Սբ. Աստվածածին եկեղեցին հերթական նորոգության ենթարկվելուց հետո օծել է թեմի առաջնորդ Լևոն եպիսկոպոսը[2829]:

1935 թ-ից եկեղեցին օգտագործվել է որպես գրասենյակ: 1980-ական թթ. սկզբներին այն արդեն կիսավեր էր:

**Ծխական քահանա.** հայտնի է, որ 1910 թ. գյուղում քահանայագործում էր Ղարադաղլու գյուղի քահանա Սարգիս Տեր-Առաքելյանցը[2830]:

2818. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2819. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
2820. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
2821. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2822. Ըստ գյուղացիների վկայության:
2823. «Հորիզոն», 1913, N 177, էջ 4:
2824. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 147-148:
2825. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2826. Նույն տեղում:
2827. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 278:
2828. «Արարատ», 1911, էջ 522:
2829. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2644, թ. 22:
2830. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7:

## ԿԱՄՈՒՄ-ԻՍՄԱՅԻԼՈՎ (ԳՅՈՐԱՆԲՈՅ-ԱՀՄԵԴԼԻ)

Գտնվում է Գանձակից 37 կմ հարավ-արևելք, Եվլախից 30 կմ արևմուտք. համանուն շրջանի շրջկենտրոնն է:

1958-1966 թթ. եղել է քաղաքատիպ ավան, այնուհետև ստացել քաղաքի կարգավիճակ:

1886 թ. ունեցել է 335 տուն, 1593 շունչ (968 ար., 625 իգ.)[2831], 1908-ին՝ 1940[2832], 1914-ին՝ 907 բնակիչչ[2833]:

## ԿԱՐԿՈՒՋԱԿ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևմուտք՝ Սևջուր գետի աջակողմյան ճյուղավորումներից մեկի հովտում:

Ներկայիս գյուղը հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրքերը Ի դարի սկզբին:

1914 թ. ունեցել է 195[2834], 1977-ին՝ 526 շունչ[2835]:

## ԿՅՈՒՐԱԿՉԱՅ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք: Երկաթուղային կայարանին կից ավան է: Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարասկզբին: 1906 թ. ունեցել է 24 բնակիչ[2836]:

## ԿՈՒՐԲԱՆՋԱԴԵ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի ավանից 8 կմ հյուսիս:

Գոյացել է խորհրդային տարիներին: Միավորված էր Ֆախրալիի գյուղխորհրդի հետ:

**Կրմզի-Ղազախլար գյուղատեղի.** գտնվում է գյուղից 1 կմ հյուսիս՝ Գանձակ գետից (աջից) ճյուղավորված Կորչայի աջ ափին:

ԺԹ դարավերջին գյուղի կալվածատերն էր Արդուլլահ-բեկ Ալլահվերդի-բեկ օղլի Սաֆիքյուրդուկին[2837]:

ԺԹ-Ի դարերի սահմանազլխին կրմզի-ղազախլարեցիները վիճակագրական աղբյուրներում ճշտորեն հաշվառվել են միայն նստակեցության անցնելուց հետո (օրինակ՝ 1914 թ.՝ 66 բնակիչ)[2838], մինչդեռ թափառական կյանք վարելիս բազմակի արձանագրվելով՝ չափազանցված տվյալներ են գրանցվել (օրինակ՝ 1886 թ., երբ հաշվառվել էր 53 տուն՝ 216 շունչ)[2839]:

Խորհրդային տարիներին ապաբնակեցվել է :

## ՀԱՋԱԼԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևմուտք:

Գյուղը հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած ցեղերը: 1914 թ. ունեցել է 208 բնակիչ[2840]:

## ՂԱԶԱԽԼԱՐ (ՄՈԼԼԱ-ԻՍՄԱՅԻԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 170-175 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին Մոլլա-Իսմայիլին՝ Արափլի, Նաշմիր, Իդդալի-դուրուղ, Շաֆ և Գյորանլի գյուղերի հետ պատկանել է թուրք կալվածատերեր Մելիք Մահմեդ-բեկ և Մուստաֆա-բեկ Շաֆիբեկովներին[2841]:

ԺԹ-Ի դարերի սահմանագլխին վիճակագրական աղբյուրներում բնակիչները ճշտորեն հաշվառվել են միայն նստակեցության անցնելուց հետո, (ինչպես, օրինակ, 1908 թ.՝ 185[2842], 1914-ին՝ 139 շունչ)[2843], մինչդեռ թափառական կյանք վարելիս բազմակի արձանագրվելով՝ մեծապես չափազանցված տվյալներ են գրանցվել (օրինակ՝ 1886 թ., երբ հաշվառվել էր 65 տուն՝ 379 բնակիչ)[2844]:

## ՂԱԶԱՆԲՈՒԼԱՂ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ արևմուտք: Հին Ղազանբուլաղը գտնվում է ներկայիս համանուն ավանից 5 կմ հարավ-արևմուտք:

**Պատմություն.** 2000 դեսյատին մակերես զբաղեցնող Ղազանբուլաղ կալվածքը, մինչև երկրամասը Ռուսաստանի կազմի մեջ մտնելը, պատկանել է Մելիք-Հովսեփյաններին[2845]:

ԺԹ դարավերջին այստեղ ծնունդ է առել նույնանուն թրքաբնակ գյուղը:

1949 թ. ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ[2846]:

Տակավին 1864 թ. գյուղը նստակյաց բնակչություն չի ունեցել, իսկ նրա թափառական համայնքը գրված է եղել մինչև իսկ հարևան նահանգներում[2847]: Բնակչության թվաքանակի վերաբերյալ կան վիճակագրական հետևյալ տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2848] | 118 | 258 | 298 | 556 |
| 1907[2849] | | | | 62 |
| 1976[2850] | | | | 600 |

2831. "Свод...", с. 78-79. Այս տվյալն արդեն նշված պատճառաբանությամբ չափազանցված է, ուստի՝ անիրական:
2832. "Кавказский календарь на 1910 г.", с. 223.
2833. "Кавказский календарь на 1915 г.", с. 109.
2834. Նույն տեղում, էջ 136:
2835. «ՍՍՀ», h. 3, էջ 70:
2836. "Кавказский календарь на 1910 г.", с. 305.
2837. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 32-33:
2838. "Кавказский календарь на 1915 г.", с. 148.
2839. "Свод...", с. 76-77.
2840. "Кавказский календарь на 1915 г.", с. 106.
2841. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 15-16:
2842. "Кавказский календарь на 1910 г.", с. 324.
2843. "Свод...", с. 78-79.
2844. "Кавказский календарь на 1915 г.", с. 160.
2845. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 251:
2846. «ՍՍՀ», h. 2, էջ 559:
2847. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, "Кавказ", 1865, N 85, с. 420.
2848. "Свод...", с. 88-89. Այս տվյալը բազմիցս նշված պատճառաբանությամբ չափազանցված է, ուստի՝ անիրական:
2849. "Кавказский календарь на 1910 г.", с. 265.
2850. «ՍՍՀ», h. 2, էջ 559:

## ՂԱՋԱՆՉԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 135-145 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին Ղարափիրիմլի գյուղի հետ պատկանել է ոսկանապատցի կալվածատերեր Նազար Մելիք-Շահնազարյանին և Լազար Էմմանուելյան Լազարյանցին[2851]:

## ՂԱՍՈՒՄԲԵՅԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք:

Ներկայիս գյուղը հիմնել են ԺԹ դարի վերջերին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը: Գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2852] | 17 | 75 | 47 | 122 |
| 1908[2853] | | | | 257 |
| 1914[2854] | | | | 35 |

## ՂԱՐԱԴԱՂԼՈՒ (ԽԱՆՔԵՆԴ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի ստորին հոսանքի շրջանում՝ ձախ ափին, ծովի մակերևույթից 330-360 մ բարձրությամբ հյուսիսարևելահայաց մեղմաթեք դաշտավայրում:

**Անվան ծագումը.** վավերագրերում մինչև 1880-ական թվականները հիշվում է Ղարադաղլու, այնուհետև՝ Խանքենդ անվամբ:

Գյուղանվան առաջին տարբերակի առաջացումը պայմանավորված էր բնակիչների մի մասի՝ ծագումով ղարադաղցի լինելու հանգամանքով. «Սրանց մի մասը Պարսկաստանի Ղարադաղից է գաղթել, որից գիւղն առել է իր անունը»[2855]:

**Բնակչություն.** գյուղի ազգատոհմերի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Յարութիւն Մելիքջանով, կին սորայ Աննայի, ուստերք՝ Հայրապետ և Ղազար:

2. Յակոբ Սարգիսով, կին սորայ Նարաթ, ուստերք՝ Եղիազար և Յովսէփ:

3. Առուտամ Գաբրիէլով, կին սորայ Մարիամ, ուստերք՝ Գէորգ, Յարութիւն, դուստր՝ Եղիսաբէթ:

4. Վէրդի Քառանով, կին սորայ Եթար, ուստերք՝ Պետրոս և Գէորգ, դուստր Եղիսաբէթ:

5. Յովհաննէս Աբրահամով, կին սորայ՝ Հռոմսիմ, ուստերք՝ Վարդան և Յարութիւն, եղբայր սորայ Մկրտիչ, կին սորայ Սանամ, ուստր՝ Աբրահամ:

6. Պօղոս Թումայով, կին սորայ Ջանազան, ուստերք՝ Հայրապետ, Գալուստ, Յական, Սարգիս և Յարութիւն, դուստր՝ Դաստակուլ:

7. Ղազար Օհանեսով, կինն սորա Սօնայ, մայրն Հռոմ:

8. Վէրդի Տատարով, կինն՝ Շողի:

9. Մկրտում Խաչատուրով, կինն՝ Սառայ, ուստր՝ Յօհաննէս:

10. Առաքել Յարութիւնով, մայրն՝ Եթար, քոյրն՝ Հէրիք:

11. Արզուման Յովսէփով, մայրն՝ Ռէհան:

12. Ստեփան Ղուկասով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Յովակիմ, Յարութիւն, Գալուստ, Մարգար, Համբարձում:

13. Մովսէս Բողալով, կինն՝ Վառի, ուստր՝ Հայրապետ, Շողի դուստր:

14. Պալա Թէքանով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յոհաննէս:

15. Գէորգ Ալլահվէրդով, կինն՝ Հռոմսիմ, ուստերք՝ Աղաջան, Աստուածատուր, Յարութիւն, դստերք՝ Եղիսաբէթ և Գիլի:

16. Խաչատուր Թէվանով, կին սորայ՝ Ահար, մայրն՝ Ռէհան:

17. Վարդազար Մարտիրոսով, կինն՝ Հոռի:

18. Սիմօն Սարգսով, կինն՝ Եղսապետ, ուստերք՝ Յարութիւն և Խաչատուր:

19. Աղամ Թանղրիվէրդեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Աստուածատուր, եղբայրն՝ Հարուլ, կին՝ Վարդի, քոյր՝ Թամամ:

20. Հայրապետ Յարութիւնեան, կինն՝ Ջանազան, ուստերք՝ Ալլահվէրդի, Սարգիս և Գրիգոր:

21. Յարութիւն Օհանէսով, կինն՝ Հռոմ, դստերք՝ Սայի և Աննայի:

22. Յօհաննէս Թունիով, հարսն՝ Աննայի այրի, դստերք՝ Սաբեղ և Ջանազան:

23. Յարութիւն Ղուկասով, կինն՝ Սաբեղ, մայրն՝ Հռոմ:

24. Գրիգոր Նիազով, կին սորայ՝ Շահխանում, ուստերք՝ Պօղոս և Սարգիս, եղբայրն՝ Սահակ, կին սորա՝ Սանամ, ուստերք՝ Յարութիւն, Յօհաննէս, Յօսէփ, դուստր՝ Փարի:

25. Օհանջան Խաչատուրով, կինն՝ Ջավի, դստերք՝ Մարիամ, Հէրիք և Սանդուխտ:

26. Գալուստ Մէլքումով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Քօչարի և Ներսէս, դստերք՝ Վարդի և Հէրիքնազ:

27. Յարութիւն Դանէլով, կինն՝ Սոնա, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Մարիամ, Սառա և Հեղնան:

28. Գրիգոր Յարութիւնով, մայրն՝ Ռէհան:

29. Օհաննէս Մարտիրոսով, կինն՝ Քաթան, ուստերք՝ Յովսէփ, Մովսէս, Յարութիւն, դուստր՝ Ջավահիր:

30. Մկրտում և Գրիգոր Ղազարեանք, մայրն՝ Թէլլու:

31. Մարտիրոս Յարութիւնով, մայրն՝ Հռոմ, կինն՝ Շողի, ուստր՝ Աստուածատուր:

32. Փիլիպպոս Եփրեմեան, կինն՝ Նազլու, դուստր՝ Սազլու»[2856]:

Ստորև զետեղված աղյուսակը ներկայացնում է բնակչության քանակի աճը ԺԹ դարի ընթացքում և մինչև 1917 թ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1839[2857] | 32 | 81 | 62 | 143 |
| 1845[2858] | | 109 | 91 | 200 |
| 1847[2859] | | 102 | 74 | 186 |
| 1849[2860] | | 70 | 63 | 133 |
| 1852[2861] | | 80 | 64 | 144 |
| 1861[2862] | 20 | | | |

2851. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 8-9:
2852. "Свод...", с. 8081. Այս տվյալը չափազանցված է:
2853. "Кавказский календарь на 1910 г.", с. 279. Այս տվյալն ակնհայտ ուռճացված է:
2854. "Кавказский календарь на 1915 г.", с. 137.
2855. «Արձագանք», 1886, N 19, էջ 279-280: Նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 307:
2856. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 26:
2857. Նույն տեղում:
2858. Նույն տեղում, գ. 3811, թ. 5-6:
2859. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
2860. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
2861. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2862. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1866[2863] | 29 | 118 | 103 | 221 |
| 1872[2864] | | 170 | 146 | 316 |
| 1873[2865] | | | | 263 |
| 1875[2866] | | | | 277 |
| 1876[2867] | | | | 234 |
| 1877[2868] | | 157 | 140 | 297 |
| 1878[2869] | | 161 | 136 | 297 |
| 1881[2870] | | 172 | 147 | 319 |
| 1882[2871] | | 177 | 151 | 328 |
| 1883[2872] | | 181 | 152 | 333 |
| 1885[2873] | | 152 | 134 | 286 |
| 1886[2874] | 86 | 189 | 174 | 363 |
| 1887[2875] | | 167 | 144 | 311 |
| 1888[2876] | | 174 | 148 | 322 |
| 1889[2877] | | 175 | 152 | 327 |
| 1890[2878] | | 183 | 158 | 341 |
| 1891[2879] | | 174 | 166 | 340 |
| 1892[2880] | | 178 | 164 | 342 |
| 1893[2881] | | 176 | 165 | 341 |
| 1894[2882] | | 193 | 172 | 365 |
| 1897[2883] | | 189 | 182 | 371 |
| 1898[2884] | | 197 | 183 | 380 |
| 1899[2885] | | 208 | 189 | 397 |
| 1900[2886] | | 207 | 189 | 396 |
| 1901[2887] | | 209 | 185 | 394 |
| 1902[2888] | | 217 | 191 | 408 |
| 1905[2889] | | 220 | 205 | 425 |
| 1906[2890] | | 258 | 225 | 483 |
| 1907[2891] | | | | 470 |
| 1908[2892] | 69 | 244 | 229 | 473 |
| 1909[2893] | | 246 | 239 | 485 |
| 1910[2894] | | 246 | 238 | 484 |
| 1912[2895] | | 245 | 238 | 483 |
| 1913[2896] | 70 | | | |
| 1914[2897] | | | | 180 |
| 1917[2898] | 80 | | | 495 |

Ղարադաղլուի բնակչության թվաքանակի փոփոխությունները նշված ժամանակահատվածում, ինչպես երևում է աղյուսակից, ընդհանուր առմամբ գրանցել են հարատև աճ:

1977 թ. Ղարադաղլուն ուներ 1231 բնակիչ, որոնց մեծ մասը թուրք էին[2899]:

Գյուղը հայաթափվել է 1988 թ. բռնագաղթի հետևանքով:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** հիմնական հայաբնակ գյուղերի շղթայից հեռու ընկած, մեկուսացած և բազմաթիվ թրքաբնակ գյուղերով շրջապատված Ղարադաղլուն թուրք խուժանի կողմից հարձակման է ենթարկվել 1905 թ. աշնանը: Նոյեմբերի 17-ին մոտակա ջրաղացում սպանվում է երկու հայ, 3 օր անց գետաշենցիների օգնությամբ գյուղի բնակիչները մի կերպ կարողանում են դուրս գալ շրջապատումից և ապաստան գտնել Գետաշենում: Լքված գյուղն իսկույն ներ թուրքերը թալանում ու հրդեհում են[2900]: Ղարադաղլուցիները 3 ամիս Գետաշենում մնալուց հետո փոխադրվում են Գանձակ[2901]:

Հայտնի է, որ 1906-1907 թթ. ղարադաղլուցիներն ահը սրտում՝ գնում էին իրենց ավերված գյուղի հանդերը վարուցանքի և գիշերում գյուղի ծածկ ունեցող միակ շինության՝ եկեղեցու մեջ[2902]: Հետագա տարիներին, երբ իրավիճակը խաղաղվում է, ղարադաղլուցիները նորից համախմբվում են հայրենի բնակավայրում ու վերստին շենացնում այն: Դա արդեն իսկ նկատելի է եղել 1913 թ. «...գիւղացիները որոշ չափով տնտեսապէս առաջ են գնում և գուցէ կարճ միջոցում էլ կարողանան կրկին վերստեղծել իրանց անչափ կորուստը...»[2903]:

**Եկեղեցի.** բազմաթիվ վավերագրերում (1847, 1849, 1852)[2904] հիշատակվող Ղարադաղլուի Սբ. Գևորգ հողաշեն-փայտածածկ եկեղեցու հիմնադրման ստույգ տարեթիվն անհայտ է, սակայն 1861 թ-ից նույն անվամբ եկեղեցին արդեն հիշվում է որ-

2863. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2864. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2865. Նույն տեղում, գ. 3864, թ. 39-40:
2866. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2867. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
2868. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2869. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2870. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2871. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2872. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2873. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
2874. "Свод...", с. 86-87. Ըստ մեկ այլ տեղեկագրի՝ նույն թվականին գյուղն ունեցել է 40 տուն («Արձագանք», 1886, N 19, էջ 279):
2875. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
2876. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
2877. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2878. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
2879. Նույն տեղում, գ. 3889, թ. 148:
2880. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
2881. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2882. Նույն տեղում, գ. 3896, թ. 71-72:
2883. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2884. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2885. Նույն տեղում, գ. 3903, թ. 125-126:
2886. Նույն տեղում, գ. 3905, թ. 90-91:
2887. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
2888. Նույն տեղում, գ. 3907, թ. 22-23:
2889. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
2890. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2891. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
2892. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 11: Ի դեպ, 1908 թ. մեկ այլ վիճակագրական տվյալի համաձայն Ղարադաղլու գյուղն այդ թվականին ունեցել է 149 բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 273):
2893. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2894. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
2895. Նույն տեղում, գ. 3919, թ. 61-62:
2896. «Հորիզոն», 1913, N 177, էջ 4:
2897. "Кавказский календарь на 1915 г.", с. 195. Տվյալը թվում է անհավանական և, ըստ այդմ, անիրական:
2898. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
2899. «ԱՍՀ», հ. 3, էջ 57:
2900. **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 332:
2901. «Մշակ», 1906, N 64, 24 մարտի, էջ 2:
2902. **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 332:
2903. «Հորիզոն», 1913, N 177, էջ 4:
2904. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 97-98, գ. 3818, թ. 95-96, գ. 3819, թ. 105:

պես քարաշեն կառույց[2905]: Բարեբախտաբար, ժամանակին եկեղեցու շինարարական արձանագրությունն ընդօրինակվել ու հրատարակվել է, որի շնորհիվ էլ պարզվում է, որ հողաշեն հին եկեղեցին քարաշեն նոր կառույցով փոխարինվել է 1855 թ.: Ահա այդ արձանագրությունը.

*1855 ամի 20 մարտի ի սէր սիրելի հայրենեաց, որոց սիօնի փոքունց և մեծաց. այս տաճար փոքրիկ ի հիմանց անտի, բարեպաշտ կամօք աստ կառուցանի, սեպհական արդեամբք մեծի իշխանի աղա Ռուստամի որդոյ Դանիէլի, յանուն սրբոյն Գէորգայ մեծի, շքեղ հանդիսիւ աստէն օծանի:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:

Ծանոթ. նույն աղբյուրից է օգտվել նաև արձանագրության վերահրատարակիչ Մ. Բարխուտարյանցը (նշվ. աշխ., էջ 53):

Հայտնի է, որ Սբ. Գևորգ եկեղեցում էին պահվում Սբ. Գևորգի և Սբ. Մինասի մասունքները. «...որ 1871-ին ջրաղացի նախկին տէր՝ թիֆլիսեցի Նիկողայոս և Հռիփսիմէ Հախվերդեանցները՝ փայտեայ տուփիկներից հանել՝ արծաթեայ պահարաններում են զետեղել...»[2906]:

Հայտնի է նաև, որ եկեղեցին կառուցողի մարմինը ամփոփվել է տաճարի ներսում[2907]: Ինչպես Սբ. Գևորգ եկեղեցին, այնպես էլ գյուղից 200 մ հարավ՝ Կուրակ գետի ձախ ափին գտնվող Սբ. Նահատակ ուխտատեղիի մատուռը 1905 թ. նոյեմբերին թուրքերը կողոպտել ու ավերել են[2908]:

1911 թ. Գանձակի հոգևոր վարչությունը որոշել էր տուժած եկեղեցուն նվիրաբերել եկեղեցական գրքեր[2909]:

**Քահանա.** 1869 թ. քահանա է ձեռնադրվել «Սարգիս քինյ. Տէր Առաքելեանց ղարադաղլուեցի, ի վերայ սբ. Գէորգ եկեղեցւոյն հայոց Ղարադաղլու գեղջ»[2910]: Հայտնի է, որ *Սարգիս Տեր-Առաքելյանցը* քահանայանայագործել է առնվազն մինչև 1910 թ., ընդ որում հովվելով Խոյլար գյուղի հասարակությանը[2911]:

**Դպրոց.** Ղարադաղլու գյուղում գործել է հայոց եկեղեցական-ծխական դպրոց: Վավերագրերում կրթական այս հաստատության մասին առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1874 թ.[2912]: 1887 թ. մի հաղորդման համաձայն՝ դպրոցը փակ էր, իսկ բացման հեռանկարը՝ անհույս. «Եկեղեցու հարաւային կողմից շինուած է ուսումնարանի համար գիւղացիների հաշուով մի փոքրիկ շինութիւն, որը երկու սենեակներից է բաղկացած, բայց ցաւը նրանում է, որ ուսումնարանի մի սենեակը գանձակեցի մի պարոնի ցորենի մշտական ամբարն է դարձած, առանց մի որ և իցէ վարձի, իսկ միւսը, որտեղ պիտի հայ մանուկները սովորէին իրենց մայրենի լեզուն, բուն են դրել պարսիկ ջուարները: Բաւական չէ որ դրանք առանց վարձի են մնում, այլ և վնասում են շինութեան. նրանք օրինակ սենեակի մէջ տեղը կրակ են անում և անխնայ սևացնում թէ պատերը և թէ առաստաղը: Երբ ամեն տեղ պատրաստութիւն էին տեսնում հայ փակուած ուսումնարանը բանալու, խանքենդեցի հայերն ևս խօսում էին թէ «մենք էլ պիտի բանանք մեր ուսումնարանը», բայց մինչև այս օրս էլ այդպէս «պիտի բանանք» ասելով մնում է գործը...»[2913]: Արդեն 1913 թ. գյուղի բնակիչները ձեռնամուխ են եղել պետական (այսինքն՝ ռուսական) դպրոցի բացման գործին[2914]:

**Ջրաղաց.** ինչ վերաբերում է վերը հիշատակված ջրաղացին, ապա դրա հուչակը, հիրավի, մեծ է եղել ու մշտապես գրավել է տեղագիր հեղինակների ուշադրությունը. «Գիւղիս մօտն է Տփխիսեցի պ. Հախվերդեանցի հոյակապ ջրաղացը մեծամեծ շինութիւններով և եւրոպական մեքենաներով, որ, ինչպէս ասում են, օրական 500 փութ ալիւր է պատրաստում»[2915]: 1899 թ. հաղորդման մեջ էլ ջրաղացատեր է հիշվում դարձյալ թիֆլիսեցի ոմն Ն. Փրիդոնյանցը և ընկերությունը[2916]: 1905 թ. նոյեմբերին, ինչպես վերն ասվեց, թուրք եւլուզակներն այս ջրաղացում սպանել էին երկու հայի. «Նոյեմբերի 17-ին Ղարադաղլուից կէս վերստ հեռաւորութեան վրա գտնուող Փրիդոնովի ջրաղացում սպանուեցին ջրաղացի կառավարիչը և մէկ ուրիշ հայ»[2917]:

## ՂԱՐԱՄՈՒՍԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 100-110 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին գյուղը հիմնել են նստակեցության անցած ղարամուսալի ցեղային հասարակությանը պատկանող խաշնարած թուրքերը: Թափառական կյանք վարելով՝ վերջիններս մարդահամարների ժամանակ տարբեր վայրերում արձանագրվում էին մեկից ավելի անգամ, և արդյունքում ստացվում էր բնակիչների թվաքանակի չափազանցված (անիրական) տվյալներ: Այդ երևույթը դեռևս 1865 թ. նկատի առնելով՝ հետազոտողը գրել է. «Ահա թեկուզ Ղարամուսանլի գյուղը: Կամերալ նկարագրության մեջ այս գյուղում նշված է 50 ծուխ, իսկ իրականում նրանք միայն 26-ն են...»[2918]:

2905. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148, գ. 33874, թ. 30:
2906. **Նազարեան Էմմանուէլ քահ.**, Տպաւորութիւններ Գանձակից, «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
2907. «Արձագանք», նույն տեղում:
2908. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 278:
2909. «Արարատ», 1911, էջ 522:
2910. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5394, թ. 10:
2911. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 28:
2912. ՀԱԱ, ֆ. 458Պ, ց. 1, գ. 184, թ. 7:
2913. «Նոր-Դար», 1886, N 6:
2914. «Հորիզոն», 1913, N 71, էջ 3, նաև՝ N 79, էջ 3:
2915. «Արձագանք», 1886, N 19, էջ 280:
2916. «Նոր-Դար», 1899, N 85, էջ 2:
2917. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 332:
2918. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 88, с. 440 (բնագրում՝ “Да вот, хотя бы деревня Карамусанлы. В этой деревне по камеральному описанию записано 50 дымов, а в натуре их только 26...”).

Չափազանցված և հետևաբար անհիմն են նաև 1886 թ. կատարված մարդահամարի տվյալները. 129 տուն, 540 շունչ, որից՝ 303 ար., 237 իգ.[2919]: Ակնհայտորեն անհամեմատ հավաստի են 1908 թ. (246 բնակիչ)[2920] և 1914 թ. վիճակագրական տվյալները (292 շունչ)[2921]:

## ՂԱՐԱՍՈՒԼԵՅՄԱՆԼԻ

Շրջկենտրոնին կից է հարավարևմտյան կողմից: Թրքաբնակ գյուղ է՝ գոյացած խորհրդային տարիներին:

## ՂԱՐԱՍՈՒՆՉՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 140-143 մ բարձրության վրա:

Հիմնել են Ի դարի սկզբներին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը:

1914 թ. ունեցել է 119 բնակիչ[2922]:

## ՂԱՐԱՓԻՐԻՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս՝ Կուրակ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 105-115 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին եղել է ոսկանապատցի կալվածատերեր Նազար Մելիք-Շահնազարյանի և Լազար Էմմանուելյան Լազարյանցի սեփականությունը[2923]:

Թրքաբնակ գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2924] | 18 | 59 | 52 | 111 |
| 1908[2925] | | | | 84 |
| 1914[2926] | | | | 45 |

## ՂԶԸԼՀԱՋԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ-արևելք:

Երկրամասի թրքաբնակ առավել բազմամարդ գյուղերից էր՝ բնակեցված միսկինլի ցեղախմբով: 1908 թ. ունեցել է 174[2927], 1914-ին՝ 1210[2928], 1977 թ.՝ 4993 բնակիչ[2929]:

2919. "Свод...", с. 82-83.
2920. "Кавказский календарь на 1910 г.", с. 276.
2921. "Кавказский календарь на 1915 г.", с. 135.
2922. Նույն տեղում, էջ 136:
2923. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 8-9:
2924. "Свод...", с. 78-79. Ի դեպ, վիճակագրական այս տվյալն ակնհայտ ուռճացված է:
2925. "Кавказский календарь на 1910 г.", с. 276.
2926. "Кавказский календарь на 1915 г.", с. 136.
2927. "Кавказский календарь на 1910 г.", с. 287. Վիճակագրական այս տվյալն ակնհայտորեն չափազանցված է:
2928. "Кавказский календарь на 1915 г.", с. 141.
2929. «ԱՍՀ», h. 3, էջ 161: Ի դեպ, 1886 թ. ոչ ստույգ (ակնհայտորեն չափազանցված) վիճակագրության համաձայն գյուղն ունեցել է 23 տուն՝ 150 շունչ ("Свод...", с. 78-79):

ԺԹ դարավերջին գյուղում կառուցվել է մզկիթ[2930]:

## ՂՐԸԽԼԻ (ՄԻՍԿԻՆԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 107-112 մ բարձրության վրա:

Ի դարի սկզբներին հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրք միսկինլի ցեղերը, որոնք 1914 թ. եղել են 63 շունչ[2931]:

## ՂՈՒՇՉՈՒԼԱՐ

Գտնվում շրջկենտրոնից 22,5 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 210 մ միջին բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՄԵՇԱԴԻՂԱՐԱԼԱՐ (ՋԻՆԼՈՒ)

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ արևելք:

Ի դարի սկզբներին գյուղը հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրք ջինլու ցեղերը:

## ՄԻԽԱՅԼՈՎԿԱ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հյուսիս-արևմուտք՝ Գանձակ քաղաքից 12 կմ արևելք, ծովի մակերևույթից 240 մ միջին բարձրության վրա:

ԺԹ դարավերջին հիմնել են Խանլարի շրջանի Ազատ (Սուլուկ) գյուղի հարևանությամբ հիմնավորված և համանուն գյուղ հիմնած ռուս վերաբնակիչները:

Ներկայումս թրքաբնակ է:

## ՄՈՒՋՈՒԴՈՒԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 200-220 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

1982 թ. ունեցել է 900 բնակիչ[2932]:

## ՅՈԼՂՈՒԼՈՒԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 410-460 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը, որոնք 1908 թ. եղել են 192[2933], 1914-ին՝ 243 շունչ[2934]:

2930. **Фатуллаев Ш. С.**, նշվ. աշխ., էջ 433:
2931. "Кавказский календарь на 1915 г.", с. 159.
2932. «ԱՍՀ», h. 7, էջ 86:
2933. "Кавказский календарь на 1910 г.", с. 251.
2934. "Кавказский календарь на 1915 г.", с. 123. Վիճակագրական տվյալի ցույց տրված կազմը՝ հայեր, այլ աղբյուրներով չի հաստատվում:

## ՆԱԴԻՐՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 210-230 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ՆԻՋԱՄԻ (ՄՈԼԼԱ-ԱՎԱԶԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի ձախակողմում, Դալմամեդլի ավանից 6 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 320-350 մ բարձրության վրա:

Հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը, որոնք 1908-ին եղել են 327[2935], 1914-ին՝ 159 շունչ[2936]:

## ՇԱԴԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի երկու ափերին՝ Դալմամեդլի ավանից 5 կմ հարավ, ծովի մակերևույթից 280-300 մ բարձրության վրա:

Հիմնվել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2937] | 70 | 150 | 126 | 276 |
| 1908[2938] | | | | 354 |
| 1914[2939] | | | | 180 |

## ՉԵԼԱԲԵՐՏԻ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 230-250 մ բարձրության վրա:

Գյուղը խորհրդային տարիներին հիմնել են Գետաշենից փոխադրված և տեղում բնակություն հաստատած մի քանի տուն հայեր:

Հետագայում վերածվել է զուտ թրքաբնակ գյուղի: 1987 թ. ուներ 1210 բնակիչ[2940]:

## ՋԻՆԼԻ-ԲՈԼՈՒԽԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 100 մ միջին բարձրության վրա:

Հիմնել է նստակեցության անցած խաշնարած ջինլի ցեղախումբը:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2941] | 206 | 582 | 412 | 994 |
| 1908[2942] | | | | 668 |
| 1914[2943] | | | | 868 |
| 1986[2944] | | | | 981 |

## ՋԻՆԼԻ-ՁԵՅՆԱԼԻ (ՁԵՅՆԱԼ-ՋԻՆԼՈՒ)

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ արևելք:

Ի դարի սկզբներին հիմնել են խաշնարածները:

## ՌԱՀԻՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հարավ-արևմուտք:

Ի դարի սկզբներին հիմնել են խաշնարածները: 1983 թ. ունեցել է 795 բնակիչ[2945]:

Գյուղի տարածքում պահպանվել են ԺԸ-ԺԹ դդ. դամբարաններ:

## ՍԱՄԵԴԱԲԱԴ (ԿԱՐԿՈՒՋԱԿ)

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի ավանից 7 կմ արևելք, ծովի մակերևույթից 170-180 մ բարձրության վրա:

Ի դարի սկզբներին բնակեցվել է խաշնարած թուրք ցեղերով:

1914 թ. ունեցել է 80 բնակիչ[2946]:

## ՍԱՐՈՎ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ Կուրակ գետի ձախ կողմում՝ ծովի մակերևույթից 240-250 մ բարձրության վրա, երկաթգծից ընդամենը 0,5 կմ հարավ:

**Հիմնադրում.** հայտնի է երկու վկայություն. առաջինի համաձայն՝ Սարովը հիմնել են ԺԸ դարի 2-րդ կեսին Դաղստան գերեվարված կրզենցի հայերի մնացորդները[2947], ըստ երկրորդի՝ Պարտավի գավառի (Ուտի-Առանձնակ) համանուն գյուղից գաղթածները[2948]: Երկու դեպքում էլ սարովցիներին կարելի է բնիկ համարել, քանի որ թե՛ Կրզենը և թե՛ Մաբալյան կամ Բեգում Սարովները շատ հեռու չէին այս գյուղից:

**Պատմություն.** ԺԹ դարավերջին գյուղը գտնվում էր կալվածատեր Կամսարականների ենթակայության ներքո[2949]: Ի դեպ, 1886 թ., երբ սարովաբնակ թուրքերը 3 անգամ գերազանցում էին հայերին, վերջիններս մտադրվել են հեռանալ բեկապատկան (կալվածատեր՝ Մանաս-բեկ Կամսարական) Սարովից և վերահաստատվել արքունի որևէ հողամասում[2950]:

2935. "Кавказский календарь на 1910 г.", с. 324. Այս տվյալն ակնհայտորեն ուռճացված է:
2936. "Кавказский календарь на 1915 г.", с. 159. Ի դեպ, 1886 թ. (ակնհայտորեն չափազանցված) վիճակագրության համաձայն գյուղն ունեցել է 42 տուն՝ 256 շունչ ("Свод...", с. 88-89).
2937. "Свод...", с. 88-89.
2938. "Кавказский календарь на 1910 г.", с. 419.
2939. "Кавказский календарь на 1915 г.", с. 209.
2940. «ԱՍՀ», հ. 10, էջ 302:

2941. "Свод...", с. 80-81.
2942. "Кавказский календарь на 1910 г.", с. 244.
2943. "Кавказский календарь на 1915 г.", с. 120.
2944. «ԱՍՀ», հ. 10, էջ 439:
2945. «ԱՍՀ», հ. 8, էջ 11:
2946. "Кавказский календарь на 1915 г.", с. 136.
2947. «Նոր-Դար», 1886, N 119, էջ 2:
2948. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 53-54: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 307:
2949. **Լալայեան Ե.**, նույն տեղում:
2950. «Արձագանք», 1886, N 19, էջ 279:

**Բնակչություն.** 1839 թ. գյուղի 13 ընտանիքները բաղկացած էին հետևյալ անձերից.

«1. Օհան Բիատուրով, կինն՝ Սառայ, ուստերք՝ Արզուման, դստերք՝ Մարիամ, Շողի և Հէրիք:

2. Գրիգոր Պօղոսով, կինն՝ սորայ Եղիսաբէդ:

3. Միքայէլ Սիակով, կինն՝ Խանում, ուստր՝ Սիմօն, դուստր՝ Գյուլլի:

4. Պապա Գրիգորով, կինն՝ Եթար, ուստերք՝ Հայրապետ, Պապան, Սարգիս, Յօհաննէս, դստերք՝ Մարիամ, Ջանազան, հարսն՝ Ռէհան, թոռն՝ Գրիգոր:

5. Մարիամ Սաթլմիշեան այրի, հարսն՝ Մարգարիտ այրի, ուստր՝ Աւէտիք, դստերք՝ Մարթա, Սանամ, Անայի, Եթար և Կօզալ:

6. Սահակ Ալահղուլիով, ուստր՝ Քօչարի, հարսն՝ Դաստագյուլ, թոռն՝ Մարգարիտ, եղբօր որդիք՝ Հայրապետ և Հերիքնազ:

7. Քալանթար Փոթիով, կինն՝ Նանախաս, ուստր՝ Սլէքսան, դուստր՝ Սիրուն, հարսն՝ Հէրիքնազ, թոռունք՝ Խաչատուր, Գօզալ և Պապաս:

8. Յօհաննէս Ղազարեան, կինն՝ Սանամ, քոյրն՝ Նանում:

9. Ալամխան Առաքելեան, կինն՝ Նանաղըզ, ուստերք՝ Յարութիւն, Խաչատուր և Օհան:

10. Խուրշուտ Խաչատուրով, կինն՝ Անթառամ:

11. Խաչատուր Ջինաւորով, կինն՝ Մարիամ, դստերք՝ Հոռոմսիմ և Հէրիք:

12. Խաչատուր Յակոբով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Մատաթ, Սահակ, եղբարք՝ 1. Ադամ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Հոռոմսիմ, 2. Յօհաննէս, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Ղևոնդ և դուստր՝ Գայիանէ:

13. Ղուլի Աբրահամեան, կինն՝ Անայի, ուստր՝ Աբրահամ, դստերք՝ Սանդուխտ և Գօզալ»[2951]:

ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչության թվաքանակի աճն ու փոփոխությունները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1839[2952] | 13 | 34 | 42 | 76 |
| 1845[2953] | | 42 | 45 | 87 |
| 1847[2954] | | 34 | 35 | 69 |
| 1849[2955] | | 37 | 34 | 71 |
| 1852[2956] | | 41 | 41 | 82 |
| 1861[2957] | 10 | | | |
| 1866[2958] | 13 | 39 | 41 | 80 |
| 1870[2959] | | 49 | 53 | 102 |
| 1872[2960] | | 72 | 58 | 130 |
| 1873[2961] | | | | 114 |
| 1875[2962] | | | | 118 |
| 1877[2963] | | 64 | 60 | 124 |
| 1878[2964] | | 68 | 59 | 127 |
| 1881[2965] | | 74 | 56 | 130 |
| 1882[2966] | | 75 | 56 | 131 |
| 1883[2967] | | 75 | 59 | 134 |
| 1885[2968] | | 64 | 60 | 124 |
| 1886[2969] | 35 | 83 | 72 | 155 |
| 1887[2970] | | 78 | 64 | 142 |
| 1888[2971] | | 80 | 69 | 149 |
| 1889[2972] | | 80 | 71 | 151 |
| 1890[2973] | | 82 | 74 | 156 |
| 1891[2974] | 31 | 86 | 77 | 163 |
| 1892[2975] | | 85 | 75 | 160 |
| 1893[2976] | | 87 | 77 | 164 |
| 1894[2977] | | 87 | 77 | 164 |
| 1897[2978] | | 87 | 80 | 167 |
| 1898[2979] | | 90 | 81 | 171 |
| 1899[2980] | | 96 | 87 | 183 |
| 1900[2981] | | 92 | 91 | 183 |
| 1901[2982] | | 92 | 95 | 187 |
| 1902[2983] | | 92 | 95 | 187 |
| 1905[2984] | | 95 | 95 | 190 |
| 1906[2985] | | 44 | 52 | 96 |
| 1907[2986] | | | | 86 |
| 1909[2987] | | 108 | 104 | 212 |
| 1912[2988] | | 119 | 115 | 234 |
| 1914[2989] | | | | 53 |
| 1917[2990] | 30 | | | 210 |

Աղյուսակից երևում է, որ Սարովը գավառի սակավամարդ գյուղերից էր: ԺԹ-Ի դարերի ընթացքում նրա բնաչության առավելագույն քանակը հազիվ եղել է 234 շունչ (1912 թ.):

Սարովը 1980-ական թվականների կեսերին զուրկ էր հայ բնակչությունից:

2951. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 307:
2952. Նույն տեղում, թ. 26:
2953. Նույն տեղում, գ. 3811, թ. 5-6:
2954. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
2955. Նույն տեղում, գ. 3818, թ. 95-96:
2956. Նույն տեղում, գ. 3819, թ. 105-106:
2957. Նույն տեղում, գ. 3835, թ. 147-148:
2958. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
2959. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
2960. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63:
2961. Նույն տեղում, գ. 3862, թ. 58-59:
2962. Նույն տեղում, գ. 3866, թ. 44-45:
2963. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
2964. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
2965. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
2966. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
2967. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
2968. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
2969. "Свод...", с. 86-87. Մեկ այլ տեղեկագրում նշված է՝ 20 տուն («Արձագանք», 1886, N 19, էջ 279): Ի դեպ, նույն թվականին Սարովն ուներ նաև 62 տուն թուրք բնակիչ:
2970. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 72:
2971. Նույն տեղում, գ. 3882, թ. 130:
2972. Նույն տեղում, գ. 3884, թ. 226-227:
2973. Նույն տեղում, գ. 3887, թ. 149:
2974. Նույն տեղում, գ. 3889, թ. 148: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 54:
2975. Նույն տեղում, գ. 3891, թ. 120:
2976. Նույն տեղում, գ. 3895, թ. 77-78:
2977. Նույն տեղում, գ. 3896, թ. 71-72:
2978. Նույն տեղում, գ. 3899, թ. 146-147:
2979. Նույն տեղում, գ. 3897, թ. 168:
2980. Նույն տեղում, գ. 3903, թ. 125-126:
2981. Նույն տեղում, գ. 3905, թ. 90-91:
2982. Նույն տեղում, գ. 3906, թ. 96-97:
2984. Նույն տեղում, գ. 3912, թ. 265-266:
2985. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
2986. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2: Ի դեպ, նույն թվականի վիճակագրական մեկ աղբյուրում գյուղի բնակիչների թիվը ցույց է տրված 118 անձ ("Кавказский календарь на 1910 г.", с. 360):
2987. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 116:
2988. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, թ. 61-62:
2989. "Кавказский календарь на 1915 г.", с. 179.
2990. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** սակավահայ և մեկուսի դիրք ունեցող Սարովի գրավումն ու ավերումը թուրք խուժանի համար բարդություն չի ներկայացրել: Ամեն ինչ սկսվել է «Այսպէս, հոկտեմբերի սկզբին Սարով գիւղում իր բակի մէջ առանց որ և է պատճառի գնդակահար եղաւ Մամիկոն Մաղաքեանը, 40 տարեկան, որից անմիջապէս յետոյ ժողովուրդը քոչեց Ղարադաղլու և Գանձակ: Գիւղը դատարկւելուց յետոյ տների պէտքական մասերը նախ կողոպտւեցին և ապա հրդեհւեցին...»[2991]: Զանազան վայրեր ցրված բնակիչները մի քանի տարի չեն համարձակվել վերադառնալ հայրենի գյուղ: Համենայն դեպս, 1905-1910 թթ. վավերագրերում Սարով գյուղը հիշատակված է որպես ավերված[2992]: Սակայն հայ-թուրքական ընդհարումներից հետո՝ 1910 թ., երբ իրավիճակը խաղաղվել է, սարովցիները նորից համախմբվել են հայրենի բնակավայրում ու վերստին շենացրել այն:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** եղել է հողաշեն, փայտածածկ: Ավերվել է 1905 թ.:

## ՍԱՐՈՎ (ԹՈՒՐՔ-ՍԱՐՈՎ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի ավանից 4 կմ հյուսիս-արևելք:

**Պատմություն.** հայաբնակ համանուն գյուղից (5 կմ հարավ-արևմուտք գտնվող) զանազանելու համար ավելի հաճախ կոչել են Թուրք-Սարով:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին գյուղը պատկանում էր թուրք կալվածատերերի[2993]:

**Բնակչություն.** վիճակագրական տվյալներից երևում է, որ բնակչությունը շարունակաբար ավելանալու փոխարեն նվազել է: Իրականում տեղի է ունեցել ճիշտ հակառակը՝ պայմանավորված Ի դարի սկզբներին թուրք խաշնարածների՝ աստիճանաբար նստակեցության անցնելու հանգամանքով, երբ հնարավոր է դարձել ավելի իրական վիճակագրական տվյալներ ստանալ, որը, փաստորեն, անհնար է եղել կատարել թափառող խաշնարածների շրջանում: Ահա մի քանի տվյալ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[2994] | 98 | 253 | 199 | 452 |
| 1908[2995] | | | | 360 |
| 1914[2996] | | | | 177 |
| 1983[2997] | | | | 720 |

## ՍԱՖԻՔՅՈՒՐԴ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հարավ՝ Սևջուր գետի ճյուղավորումներից մեկի հովտում:

ԺԹ դարավերջին Սաֆիքյուրդը, որը բաղկացած էր խաշնարած թուրք ցեղերի մի քանի հանգրվաններից, պատկանում էր թուրք կալվածատերերի[2998]:

ԺԹ-Ի դարերի սահմանագլխին խաշնարածների սաֆիքյուրդ ցեղային հասարակությունը վիճակագրական աղբյուրներում ճշտորեն հաշվառվել է միայն նստակեցության անցնելուց հետո (օրինակ՝ 1908 թ.՝ 570[2999], 1914-ին՝ 498 շունչ)[3000], մինչդեռ թափառական կյանք վարելիս բազմակի արձանագրվելով՝ մեծապես չափազանցված տվյալներ են գրանցվել (օրինակ՝ 1886 թ., երբ հաշվառվել էր 176 տուն՝ 1101 շունչ)[3001]:

Ի դարի սկզբին գյուղում կառուցվել է դամբարան[3002]:

## ՏԱՓ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Ինջա գետի ձախ ափին:

Գյուղանունը նշանակում է՝ գետին, հող:

Խաշնարած թուրքերն այստեղ հիմնականում հաստատվել են խորհրդային տարիներին:

## ՏԱՓ-ՂԱՐԱՂՈՅՈՒՆԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ՝ Ինջա գետի ձախ ափից ոչ հեռու՝ Տափ գյուղին կից:

Գյուղանունը կազմված է հայերեն՝ տափ (գետին, հող) բառից և դարադոյին (սև ոչխար) ցեղանունից:

Հայաթափ հին գյուղատեղի է, որն Ի դարի սկզբներին վերածվել է նստակեցության անցած թուրք խաշնարածների հանգրվանի:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներից երևում է, որ 1886 թ. այստեղ ևս թափառական ցեղերին են արձանագրել բազմակի անգամ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3003] | 118 | 315 | 291 | 606 |
| 1908[3004] | | | | 980 |
| 1914[3005] | | | | 390 |
| 1985[3006] | | | | 1771 |

## ՔՅԱԼԱՔ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 140-145 մ բարձրության վրա:

2991. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 331:
2992. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 11: Տես նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
2993. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 54-55:
2994. “Свод...”, с. 86-87.
2995. “Кавказский календарь на 1910 г.”, с. 360.
2996. “Кавказский календарь на 1915 г.”, с. 179.
2997. «ԱԱՀ», հ. 8, էջ 303:

2998. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 26-28:
2999. “Кавказский календарь на 1910 г.”, с. 361.
3000. “Кавказский календарь на 1915 г.”, с. 179.
3001. “Свод...”, с. 86-87.
3002. **Фатуллаев Ш. С.**, նույն տեղում:
3003. “Свод...”, с. 86-87.
3004. “Кавказский календарь на 1910 г.”, с. 375.
3005. “Кавказский календарь на 1915 г.”, с. 186.
3006. «ԱԱՀ», հ. 9, էջ 147:

ԺԹ դարավերջին այստեղ մշտական բնակություն են հաստատել խաշնարած ցեղեր: Նույն ժամանակաշրջանում Քյալաքը պատկանել է թուրք բազմաթիվ կալվածատերերի[3007]:

1908 թ. ունեցել է 130 բնակիչ[3008]:

## ՖԱԽՐԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 25 կմ հյուսիս-արևմուտք՝ Դալմամեդլի ավանից 6 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 190-198 մ բարձրության վրա:

Ֆախրալին արդեն 1804 թ. հիշվում է որպես խաշնարած թուրք հասարակության հանգրվան[3009]:

Վիճակագրական տվյալների համադրումից երևում է, որ իրական և ըստ այդմ վստահելի են բնակչության թվաքանակին վերաբերող այն տվյալները, որոնք կատարվել են խաշնարածների՝ նստակեցության անցնելուց հետո: Այսպես.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3010] | 106 | 300 | 248 | 548 |
| 1914[3011] | | | | 218 |
| 1985[3012] | | | | 1787 |

3007. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 40-41:
3008. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 306.
3009. “Акты...”, т. II, с. 596.
3010. “Свод...”, с. 86-87.
3011. “Кавказский календарь на 1915 г.”, с. 193.
3012. «ԱՍՀ», հ. 9, էջ 540:

# ՂԱԶԱԽԻ ՇՐՋԱՆ

Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կազմում ձևավորվել է 1930 թ. օգոստոսի 8-ին: 1959 թ. դեկտեմբերի 4-ից Ղազախի շրջանի մեջ է ներառվել նաև 1939 թ-ից գոյություն ունեցող Աղստաֆայի վարչական շրջանը: Տարածքը կազմում է 2202 քառ. կմ, ունի 2 քաղաքային, 1 ավանային և 72 գյուղական բնակավայր: Սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Թոուզի շրջանին, ՀՀ Տավուշի մարզին և Վրաստանի Հանրապետության Մառնեուլի, Գարդաբանի, Սագարեջոյի, Սղնախի և Դեդոփլիս-Ծղարոյի շրջաններին:



### ԱԲԱՍԲԵՅԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ արևմուտք՝ Ոսկեպար (Զողաս) գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 560-580 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը հայաբափ գյուղատեղիում ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

1886 թ. ունեցել է 23 տուն՝ 115 շունչ[3013], 1914-ին՝ 127 բնակիչ[3014]:

### *ԳԱՎԱԶԱՆ (ԳԱՎԱՐԶԻՆ) ԲԵՐԴ*

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ արևմուտք՝ Աբասբեյլի գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք՝ Ոսկեպար (Զողաս) գետի ձախ ափից 1,5 կմ հեռու, շրջապատի նկատմամբ բարձրությամբ առանձնացած լեռան վրա:





*ԳԱՎԱԶԱՆ (ԳԱՎԱՐԶԻՆ). լեռան տեսքը հյուսիսից*

**Պատմություն.** բերդը կոչվել է նաև Գավարզին, Գվարզին, Քավազին, Քոզին: Գրավոր աղբյուրներում ամենավաղ հիշատակությունը վերաբերում է ԺԱ դարի 60-ական թվականներին, երբ վրաց Բագրատ Դ թագավորը (1027-1072) հարձակվել է Տփխիսի վրա, որին տիրում էր Գանձակի Փատլուն ամիրան: Վերջինս գերեվարվել էր Իվանե Օրբելյանի զորքերի կողմից, ապա ազատվել վրաց թագավորին «...զՏփխիս և զԳագ և **զՔօզինն**...» վերադարձնելուց հետո[3015]:

1123 թ. վրաց Դավիթ Շինարար թագավորը (1073-1125), ի թիվս այլ ամրոցների, սելջուկներից գրավում է նաև Գավազան ամրոցը. «...Նա էառ և զդղեակն Հայոց՝ զԴմանիս, զԳագ, զՏէրունական, **զՔաւազինն**...»[3016]:

Այնուհետև Գավազանը հիշվում է ԺԳ դարի 30-ական թվականների դեպքերի առնչությամբ, երբ մոնղոլ-թաթարները Մոլար Նուինի գլխավորությամբ նվաճում են նաև «...**զՔաւազինն** անմարտնչելի ամրոց...»-ը[3017]:

Հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1436 թ., երբ բերդում ապաստան են գտել ասպատակություններից փախստական բնակիչները. «...Եկաք մինչև Աղեստև, հանդիպեցաւ Ջաղաթին իլղարն՝



*ԳԱՎԱԶԱՆ (ԳԱՎԱՐԶԻՆ). արտատպված է Դ. Ալիշանի «Հայապատում» աշխատությունից (Վենետիկ, 1901, էջ 389)*

բազում հեծեալ. և թալանեցին զմեզ ու զամէն քրիստոնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին, այլ ծմերան աւուրք և ցուրտ: Այլ եկաք ի **Գավազանին բերթն**, քրիստոնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւնն»[3018]:

3013. “Свод...”, с. 144-145.

3014. “Кавказский календарь на 1915 г.”, с. 82.

3015. **Ջուանշէր**, նշվ. աշխ., էջ 114:

3016. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1934, էջ 218:

3017. Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 145:

3018. «ԺԵԱ», էջ 461:

**Տեղագրական վկայություններ.** բերդի համառոտ առաջին նկարագրությունը տրվել է ԺԹ դարի առաջին կեսին. «Է դղեակ ի վեր սեպացեալ միապաղաղ քարամբք. ի գլուխ ունի զո՛չ սակաւ տնատեղիս վասն ապաստանի, այս դղեակ կառուցեալ կայ ի դաշտին Գագայ. որ ունի զմիւեթ ճանապարհ, և այն դժուարագնալի. շրջապատն է ամենևին անմատչելի. ի միոյ կողմանէ միայն ունի զճանապարհ, և այն արուրաձանօք պաշտպանեալ. ի գլուխ ունի զաւազան ջրոյ»[3019]:

Մեկ այլ նկարագրականում նշված է. «Ոսկեպար կամ Ջողազ վտակի ձախ կողմում արձանացած է մի բարձր, միապաղաղ, գորշագոյն, զարմանալի եւ միանգամայն ահարկու ժայռ, որի արեւելեան ստորոտով շինած են հնուց պարիսպ, որի ներսի կողմում կան սենեակներ եւ խուցեր, որոնցից միոյն մէջ կայ ջրհոր եւ ջուր: Ժայռիս գագաթն բարձրանալու համար կայ միայն մի դժուարատար, սոսկալի, նեղ, չափազանց զառիվեր եւ միանգամայն վտանգաւոր կածան հիւսիսային կողմից: Գագաթն համարեա թէ հարթակ է մօտ երկու կալաչափ...: Ահա այս է Գաւարզին բերդ հռչակուածն, որի վերայ երկու տեղ շինուած է վիմափոր ջրաւազան, ջուրն բերուած է յիշեալ ջրհորիցն: Ժայռիս արեւմտեան կողմում, բաւական բարձր երեւում է մի մեծ ծակ, որի ետև, ասում են կայ մի մեծագոյն քարայր, որի ճանապարհն անյայտացած է այժմ: Երբեմն-երբեմն արծիւներն այրիցս հանում են գորգի եւ կարպետի փտած կտորներ եւ ձգում վար»[3020]:

**Պաշտպանական համակարգը.** բերդը կառուցվել է 400 մ բարձրություն ունեցող ժայռոտ լեռնագագաթի հյուսիսարևելյան թեք լանջին և շրջապատի նկատմամբ ունի իշխող դիրք: Պահպանվել են միջնաբերդի և բերդաքաղաքի ավերակները: 1960-1961 թթ. հնավայրի տարածքը ուսումնասիրել է ՀՀ ԳԱ հնագիտության ինստիտուտի արշավախումբը[3021]:

Միջնաբերդն ունի 140 x 40 մ արտաքին չափեր: Կառուցված է դեղնավուն կրաքարից: Ամրացված է եղել 7 կիսաբոլորակ աշտարակներով, որոնց պահպանված բարձրությունը հասնում է 4-7 մ: Մուտքը արևմուտքից է:



*ԳԱՎԱԶԱՆ (ԳԱՎԱՐԶԻՆ). հատվածներ բրգաշար շրջապարսպից, թաղակապ շինություն բերդասարի հյուսիսային կողին*

Պարսպափակ բերդաքաղաքը տարածվում է միջնաբերդից հյուսիս՝ 400 մ հեռավորության վրա: Պարիսպները շարված են եղել դեղնավուն կրաքարից և անմշակ խոշոր որձաքարից:

3019. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 156:

3020. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 395:

3021. **Բարսեղյան Լ.**, **Խաչատրյան Ժ.**, Միջնադարյան Հայաստանի երկու ամրոցների մասին, «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1962, N 7, էջ 74-76: Բերդի մասին տե՛ս նաև՝ **Հ. Միքայէլ Վ. Յովհաննէսեան**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 493-494:.



*ԳԱՎԱՅԱՆ (ԳԱՎԱՐԶԻՆ). միջնաբերդի հատակագիծը*

## ԱԶԻԶԲԵՅԼԻ (ՀՅՈՒՍԵՅԻՆԲԵԿԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 330 մ միջին բարձրության վրա:

1907 թ. ունեցել է 139[3022], 1914-ին՝ 109 բնակիչ[3023]:

## ԱԼԻ-ԲԱՅՐԱՄԼԻ (ԱՍԼԱՆԲԵԿԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 360-400 մ բարձրության վրա:

1908 թ. ունեցել է 1355[3024], 1914-ին՝ 1325[3025], իսկ 1979-ին՝ 2950 բնակիչ[3026]:

Գյուղը հայտնի է դամբարանով (1904 թ.), մզկիթով (1909 թ.) և մզկիթի մերձակայքում կառուցված բնակելի տներով (ԺԹ դ.)[3027]:

## ԱԼՓՈՈՒՏ

Գտնվում է շրջկենտրոնից 12,5 կմ արևմուտք՝ Ոսկեպար (Զողաս) գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 640-680 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 39 տուն՝ 184 շունչ[3028], 1914-ին՝ 168 բնակիչ[3029]:

## ԱՂԿՅՈՅՆԱԿ

Այժմ Ղազախ քաղաքի շրջագծի մեջ է:

Գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3030] | 76 | 283 | 211 | 494 |
| 1908[3031] | | | | 834 |
| 1976[3032] | | | | 2625 |

## ԱՂՍՏԱՖԱ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 325-340 մ բարձրության վրա: Բնակավայրը գոյացել ու զարգացել է Թիֆլիս-Բաքու երկաթուղագծի համանուն կայարանի հիմքի վրա:

1909 թ. ռուս վերաբնակիչները (բապտիստ և Նոր Իսրայել աղանդների հետևորդներ) շարունակում են Աղստաֆա կայարանի մոտակայքում բնակավայրի կառուցումը: Մինչև 1909 թ. նորահիմն բնակավայրն ունեցել է 50 տուն՝ 150 բնակիչ[3033], որի կեսից ավելին թուրքեր էին (օրինակ, 1908 թ. վերջիններս կազմել են 84 շունչ)[3034]:

Մինչև 1934 թ. գյուղ էր, ապա՝ ավան, իսկ 1941 թ. մարտի 16-ից՝ քաղաք[3035]: 1976 թ. ունեցել է 9000 բնակիչ[3036]:

## ԱՇԱՂԻ-ԱՍԿԻՓԱՐԱ (ԱԿՍԻՓԱՐԱ)

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախ ափին՝ Ոսկեպար և Բաղանիս գետերի միջև, ծովի մակերևույթից 700-760 մ բարձրության վրա:

Բնակչության թվաքանակի վիճակագրությունը սակավաթիվ տվյալների համադրումով ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3037] | 126 | 397 | 259 | 656 |
| 1908[3038] | | | | 933 |
| 1914[3039] | | | | 1057 |
| 1976[3040] | | | | 1023 |

## ԱՇԱՂԻ-ՍԱԼԱՀԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13,5 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 300 մ միջին բարձրության վրա:

Բնակչության թվաքանակի վիճակագրությունը սակավաթիվ տվյալների համադրումով ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3041] | 366 | 1147 | 848 | 1995 |
| 1908[3042] | | | | 2669 |
| 1914[3043] | | | | 2798 |
| 1976[3044] | | | | 1066 |

3022. “Кавказский календарь на 1910 г.”, с. 231
3023. “Кавказский календарь на 1915 г.”, с. 113. 1886 թ. վիճակագրության արդյունքները (55 տուն՝ 354 շունչ) չափազանցված են և անվստահելի (“Свод...”, с. 144-145):
3024. “Кавказский календарь на 1910 г.”, с. 188.
3025. “Кавказский календарь на 1915 г.”, с. 91.
3026. «ԱՍՀ», հ. 4, էջ 187:
3027. **Фатуллаев Ш. С.**, նշվ. աշխ., էջ 433:
3028. “Свод...”, с. 145-146.
3029. “Кавказский календарь на 1915 г.”, с. 87.
3030. “Свод...”, с. 144-145 (այս տվյալն արժանահավատ չէ):
3031. “Кавказский календарь на 1910 г.”, с. 173.
3032. «ԱՍՀ», հ. 1, էջ 110:
3033. “Тифлисский листок”, 1909, N 271, с. 2.
3034. “Кавказский календарь на 1910 г.”, с. 176.
3035. “Азербайджанская ССР. Административно-территориальное деление”, Баку, 1979, с. 9.
3036. «ԱՍՀ», հ. 1, էջ 111:
3037. “Свод...”, с. 144-145.
3038. "Кавказский календарь на 1910 г.", с. 176.
3039. “Кавказский календарь на 1915 г.”, с. 85.
3040. «ԱՍՀ», հ. 1, էջ 508:
3041. “Свод...”, с. 150-151.
3042. “Кавказский календарь на 1910 г.”, с. 357.
3043. “Кавказский календарь на 1915 г.”, с. 177.
3044. «ԱՍՀ», հ. 1, էջ 509:

## ԲԱԼԱ-ՋԱՖԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11,5 կմ հարավ-արևմուտք՝ Աղստև գետի վրա կառուցված ջրամբարի աջ ափին:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԲԱՂԱՆԻՍ-ԱՅՐՈՒՄ

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 760-820 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: 1908 թ. ունեցել է 141 բնակիչ[3045]:

## ԲԱՐԽՈՒԴԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 15,5 կմ հարավ-արևմուտք՝ Իջևան-Ղազախ մայրուղու աջ եզրին:

ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած խաշնարած թուրքերը: Նախախորհրդային տարիներին բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3046] | 14 | 38 | 31 | 69 |
| 1908[3047] | | | | 103 |
| 1914[3048] | | | | 122 |

## ԳՅՈՅՋԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք՝ Հախում գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 430-480 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3049] | 304 | 847 | 613 | 1460 |
| 1908[3050] | | | | 985 |
| 1914[3051] | | | | 2985 |
| 1981[3052] | | | | 1795 |

## ԴԱՂ-ՔՅԱՍԱՄԱՆ

Գտնվում է Ղազախի քաղաքի արևելյան կողմում՝ զրեթե կից՝ Աղստև գետի աջ ափից 1 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 360-400 մ բարձրության վրա:

Մինչ Ղազախ քաղաքի հիմնադրումը (1880 թ.) գավառի վարչանիստն էր:

Եղել է մարդաշատ բնակավայր. բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3053] | 219 | 840 | 588 | 1428 |
| 1908[3054] | | | | 2150 |
| 1914[3055] | | | | 2850 |
| 1977[3056] | | | | 5245 |

Հայտնի է 1895 թ. կառուցված մզկիթով[3057]. ողջ Ղազախի շրջանում սա առաջին համանման կառույցն է և, ըստ այդմ, թուրք մշակույթի ամենահին հուշարձանը:

## ԴԱՇ-ՍԱԼԱՀԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 400-440 մ բարձրության վրա՝ Գագ լեռան արևելյան ստորոտին:

Շրջանի մարդաշատ գյուղերից է. բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.



***ԴԱՇ-ՍԱԼԱՀԼԻ. հնագիտական գտածոների նմուշներ Ավեյ լեռան լանջից***

3045. "Кавказский календарь на 1910 г.", 194.
3046. "Свод...", с. 150-151.
3047. "Кавказский календарь на 1910 г.", с. 199.
3048. "Кавказский календарь на 1915 г.", с. 97.
3049. "Свод...", с. 144-145 (այս տվյալը արժանահավատ չէ):
3050. "Кавказский календарь на 1910 г.", с. 221.
3051. "Кавказский календарь на 1915 г.", с. 109.
3052. «ԱՍՀ», հ. 6, էջ 111:
3053. "Свод...", с. 146-147.
3054. "Кавказский календарь на 1910 г.", с. 234.
3055. "Кавказский календарь на 1915 г.", с. 115.
3056. «ԱՍՀ», հ. 3, էջ 298:
3057. **Фатуллаев Ш. С.**, նշվ. աշխ., էջ 433:



*ԳԱԳ. լեռան տեսքը հարավ-անմուտքից, Սբ. Սարգիս վանքի տեսքը հյուսիս-արևելքից, արևելքից և վանքի հյուսիսարևելյան եզրին գտնվող կիսավեր մատուռը՝ արևմուտքից*



*ԳԱԳ. Սբ. Սարգիս վանքի հատակագիծը (չափագրությունՙ Դ. Ախունդովի)*

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3058] | 287 | 891 | 564 | 1455 |
| 1907[3059] | | | | 1340 |
| 1914[3060] | | | | 3239 |
| 1977[3061] | | | | 6174 |

**Հնագիտական հուշարձան.** 1958 թ. գյուղի մերձակայքում՝ Ավեյ լեռան արևմտյան լանջին (Հայաստանի Հանրապետության սահմանագլխին) գտնվող մի քարայրում, Ղազախի շրջանի պատմության ինստիտուտի հնագիտական արշավախումբը (ղեկ. Մ. Հուսեյնով) հայտնաբերել է մուստիերյան դարաշրջանի քարեդարյան կայանի մնացորդներ[3062]: Հիմնական գտածոները աշխատանքային քարե գործիքներ են (ձեռքի հատիչներ, քերիչներ, շեղբեր և այլն)՝ պատրաստված կայծքարից, բազալտից, հասպիսից, դաշտաքարից և այլն:

## *ԳԱԳԱ ՍԲ. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔ*

**Տեղադրություն.** գտնվում է Դաշ-Սալահլի գյուղից 4 կմ արևմուտք՝ ՀՀ պետական սահմանից հազիվ 0,5 կմ արևելք՝ Գագ լեռան գագաթին (ծովի մակերևույթից 922 մ, ստորոտից՝ 420 մ բարձրության վրա):

**Պատմություն.** միջնադարյան Հայաստանի մեծահռչակ վանքերից մեկի՝ Գագ բերդի կամ Գագա Սբ. Սարգիս վանքի հիմնադրման պատմությունը ավանդաբար կապվում է քրիստոնեության համար նահատակված և սրբերի շարքում դասված զորավար Սբ. Սարգսի հետ: Նրա մասունքները Մեսրոպ Մաշտոցը բերել և ամփոփել է Ուշի գյուղի (ՀՀ, Արագածոտնի մարզ) և Գագ բերդի (Ղազախի շրջան) տարածքում՝ հիմնելով Սբ. Սարգիս անունով երկու եկեղեցի. «...սկզբնաւորութիւնն եկեղեցական պատմութիւնը Ս. Մեսրոպին է տալիս, որ բերել և ամփոփել է այստեղ Ս. Սարգսի գագաթի մի մասն: Նոյնը երգում է եկեղեցին էլ. „Խաչաչարչար

3058. “Свод...”, с. 146-147.
3059. “Кавказский календарь на 1910 г.”, с. 238.
3060. “Кавказский календарь на 1915 г.”, с. 117.
3061. «ԱՍՀ», հ. 3, էջ 348:

3062. **Гусейнов М.**, Мустьерская стоянка в пещере Дашсалахли, “Известия Академии Наук Азербайджанской ССР”, 1959, N 6, с. 17-33.







*ԳԱԳ. Սբ. Սարգիս վանքի վիմագրերը (վերջինը միտումնավոր քերված)*

ս. դիտապետ, նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի. առաւել պայծառ ի գլուխս **Գագայ**, ի գագաթան տեղւոջ օրհնեալ Սրբոյն Մեսրոպայ,,»[3063]:

Գագի եկեղեցու՝ Սբ. Սարգսի պաշտամունքի հետ կապված լինելը փաստում են նաև վրաց աղբյուրները. «...Սպահան գնացին [ուխտավորներ] Հայոց (Սոմխիթի) բոլոր քաղաքներից և բազում պատիվներով հանեցին նրա (Սարգսի) մասունքները, և նրա աջը դրին **Գագի եկեղեցում**, որ Պետրոսն էր շինել»[3064]:

3063. «Արձագանք», 1886, N 12, էջ 161: Նաև՝ «...էր ի Գագխաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, և մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին ի նա բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բանայր զդրունս բանտից և արգելանաց, և լուծանէր զերկաթսն, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ աւէին, սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ» (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 252): Նաև՝ «...զԳագ անուանի բերդ, և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի սրբոյն Մեսրովբայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ» (**Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 145):

3064. **Մելիքսեթ-Բեկ Լ.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 115:

Գագա Սբ. Սարգիս վանքը հիշվում է 1130 թ., երբ «...լցաւ դաշտն Գագայ անթիւ և անհամար հեծելօք յամենայն ազգաց անօրինաց հաւաքեալ, որ կամեցան այրել զսուրբ խաչն՝ որ յանուն զօրավարին **Սարգսի**: Եւ ի բարկութենէ Տեառն խելացնորեալք կոտորեցին զմիմեանս...»[3065]:

Վանքը հիշատակվում է և 1163 թ. տեղի ունեցած անցքերի առնչությամբ. «Ի ՈԺԲ. թվին եկն Ելտկուզ Աթաբակն բազմօք զօրօք ի դաշտն Գագայ և հուր արկեալ կամէր այրել զսուրբ խաչն՝ **զԳագայ սուրբ Սարգիսն** յորոյ զօրութենէն եռաց ի մէջ բանակի նոցա օձ թունալի խածանող...»[3066]:

ԺԳ դարում Գագ դաշտի նշանավոր հնություններ թվում նշվում է նաև Գագա Սբ. Սարգիսը. «Վրկանի աշխարհն Գրիմն է, ձգի մինչեւ ի Կասբից ծովն եւ ապա դաշտն Գագայ, ուր կայ **սուրբ Սարգիսն**...»[3067]:

3065. Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 123:

3066. **Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 138:

3067. Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, Փարիզ, 1960, էջ 34:

Այնուհետև վանքը հիշվում է ԺԳ դարի 30-ական թվականներին, երբ հայ պատմագիր, եկեղեցական և հասարակական գործիչ Վանական վարդապետ Տավուշեցին (1181-1251) իր և աշակերտների փրկության հույսով դիմել է Գագ բերդի բնակիչներին. «...երթամ անկանիմ առ ոտս սրբոյ Նշանին, որ յանուն **սրբոյն Սարգսի**, խնդրել նովաւ ի տեառնէ վասն քո և այլ եղբարցն, որք կան ի ձեռս անօրինացդ...»[3068]:

**Վիմագրերը.** վանքի որմերի արձանագրությունները, որոնք ժամանակագրորեն վերաբերում են ԺԳ-ԺԹ դարերին, պատմական մեծ արժեք ու կարևորություն ունեն: Ցավոք, դրանց ընդօրինակման, վերծանման և հրատարակման գործն աչքաթող է արվել երկրամասի տարածքում հայերեն վիմագրերի հավաքման աշխատանքին լծված հայտնի մասնագետների կողմից: Բացառություն են կազմում Ս. Ջալալյանցը և «Արձագանք»-ի թղթակիցը: Վերջինիս հրատարակած թվով 5 արձանագրություններից 1986 թ. մեր այցելության ժամանակ պահպանվում էր միայն մեկը, իսկ մեկն էլ միտումնավոր քերված էր, սակայն որոշ տառեր տեղ-տեղ դեռևս նշմարելի էին:

**Վանքի նորոգությունները.** ինչպես վկայում են վիմագիր արձանագրություններն ու արխիվային վավերագրերը, Գագա Սբ. Սարգիս վանքը, որը միաժամանակ մեծ հռչակ ունեցող ուխտատեղի էր (ուխտագնացության օրերն էին յուրաքանչյուր տարվա Զատիկը և Նոր Կիրակին), դարերի ընթացքում պարբերաբար ենթարկվել է նորոգությունների: Մեզ հայտնի վերջին նորոգությունը, որ ձեռնարկել էր Աղա Սարգիս Վարշամյանը և իրականացրել թիֆլիսեցի որմնադիր Եսայի Նուրինյանցը, ավարտվել էր 1851 թ. «...բազում տաժանմամբք նորոգ կառուցեալ ի հիմանց, ի կատարումն ց1851 ամն զեկեղեցին այն վայելչապէս կոփածոյ քարամբք և կամարակապ առաստաղիւք, ի ներքուստ և արտաքուստ, հանդերձ փոքրիկ կաթուղիկէիւ, շրջապատեալ զնոյն պարսպաւ, բաց յայսմանէ նախ հարթեալ զդժուարագնաց ճանապարհս նորին ընդարձակեցի այնպէս, զի յայնմհետ է ցայժմ ժողովուրդք սալիք անարգել և անդորրութեամբ երթևեկին յուխտատեղին այն»[3069]: Ի դեպ, նորոգության ողջ ծախսը կազմել էր 2210 ռուբ. 23 կոպ., որից 736 ռուբլին նվիրաբերել էին ուխտավորները:

Ավելի ուշ նորոգչական աշխատանքներ է ծավալել կոթեցի Արզուման Խաչատրյան Տեր-Սարգսյանցը[3070]:

Ստորև ներկայացնում ենք հետևյալ արձանագրությունները.

3068. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 221-252:
3069. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3735, թ. 1:
3070. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 396:

Եղել է գավթի հետագայում ավելացրած ճակատին. 1986 թ. գոյություն չուներ.

*Ի բազաւորութեան վրաց Գաւրգայ...:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:

Մեծ մատուռի մուտքի ճակատին, արտաքուստ ընթերցվել է. 1986 թ. գոյություն չուներ.

*Զսուրբս յիշատակ և հայրենիք յազգէ յազգ, յորդիցէ յորդիք մինչև յաւիտեան գանձ մեզ անկողոպտելի. և սկիզբն արարի նորոգման եկեղեցւոյս, որ խախտեալ էր ի բազում ժամանակաց, և զարդարիցի զայս և շինեցի իմ հաւատարմութեամբ որ ոչ ում ազնութիւն, ես (առ իս) չկէր և կանգնեցի զփառաւոր նշան ոսկեած բազմացուցի ի գլուխ գումբէթին ի բարեխաւսութիւն ինձ և ծնողաց իմոց և զաւակաց և զորդեցի զժամն յերկրորդի մի շաբաթն աւրն և կիրակէն մատուցանի ծնողաց իմոց և յետ մահուան իմո ինձ հանապազ, և ով որ խափանէ նզովեալ եղիցի յԱստուծոյ և մասնակից Յուդայի ամէն:*

Հրատ. **Ջալալեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 158: «Արձագանք», 1886, N 12, էջ 161-162:

Տարընթերցում. Ջալալյանցի մոտ, վիմագրի վերջում՝ «...Յուդայի և խաչահանողացն եղիցի»:

Ծանոթ. Հավանաբար ԺԳ-ԺԴ դարեր:

Եղել է փոքր մատուռի մուտքի ձախակողմում. 1986 թ. գոյություն չուներ.

*Ի թուին ՉՁԱ (1332), ես Զվանշէր շինեցի զխորանս և կանգնեցի զխաչս բարե..., ով խափանէ իմ մեղացս տէր է և դատի յԱստուծոյ:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:

Եղել է գավթի հյուսիսարևելյան ճակատին. 1986 թ. գոյություն չուներ.

*Կամաւն Ա(ստուծո)յ ես Խաչերե/սս Գր(ի)գ(որ) Յակոբս կանկ/նեցաք զխաչս ի բա/րեխաւս մեզ եւ ծն/ողաց մերոց, որք եր/կիրպագէք յ(ա)ղ(աւ)թս յ/իշեցէք, ի թուին ՉՁԷ (1338):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:

Ծանոթ. հրատարակիչն ունի մի քանի մանր տարընթերցումներ:

Բեկոր, ագուցված եկեղեցու պատի մեջ, ընդարձակ արձանագրության մասն է, երկտող.

*...զխաչս ... ինձ / ... (ծնող)աց իմոց, որք երկիրպագանէք...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. առաջին տողի մեծ մասը միտումնավոր կերպով քերված է:

Եկեղեցու մուտքի բարավորին՝ 7 տող, վերջին տողի մի մասը՝ վրացերեն. 1986 թ. արձանագրությունը տեղում էր, սակայն միտումնավոր քերված.

*Կառուցաւ Ս(ուր)բ Սարգիս եկեղեցիս ի հիմանէ / աշխատութեամբ եւ արդեամբք Ղազախու / գաւառի Կօթի գիւղացի Արզուման Խա/չատուրեան Տէր Սահակեանցի, ի յիշատա/կի իւր ծնողաց եւ որդւոց իւրոց, / 1838 ... / ...:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 12, էջ 161:

Ծանոթ. «Արձագանքի» թղթակիցը հրատարակել է միայն սկզբի 5 տողը: 1986 թ. վիմագիրը միտումնավոր ամբողջությամբ քերված էր:

Գագ լեռան ծերպերի մեջ եղած քարայրներից մեկում կարդացվել է.

*...ի թուիս հայոց ՈԾԷ (1208), յիշխանութեան...:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:

Ծանոթ. «Այս մեծադիր լերան չորս կողմը, գագաթից փոքր ինչ ներքև, փորուած են բազմաթիւ այրեր, որոնք եղել են տեղեր զօրքի և կամ այլ բազմութեան. որովհետև այս բոլոր այրերը կազմել են ընդարձակ ամրոցական շինութեան մասեր: Այդ այրերից երկուսի մէջ կան ժայռի վերայ փորագրուած արձանագրութիւններ. տարաբաղդաբար թէ հնութիւնից և թէ այդ այրերում ...ձմեռնային ժամանակին ոչխար պահպանող թուրք մոլեռանդների չարամտութիւնով եղծածների պատճառով հնարաւորութիւն չունեցանք կարդալու, բացի սկզբի տողից, որ այս է...» («Արձագանք», 1886, N 12, էջ 162):

Հարկ է նշել, որ Սբ. Սարգիս վանքում վիմագրերի միտումնավոր ոչնչացման փաստն արձանագրվել է դեռևս 1886 թ. «Նոյն արձանագրութեան մօտն և աջակողմը կան ուրիշ արձանագրութիւններ, որոնք մասամբ հնութիւնից և մասամբ թշնամի ձեռքից եղծուած են և չեն կարդացվում...»[3071]:

Վանքի մոտ գտնվում էր Սբ. Կիրակի մատուռը:

### *ԳԱԳ ԲԵՐԴ*

*Տեղադրություն.* գտնվում է Դաշ-Սալահլի գյուղից 2 կմ արևմուտք՝ Գագ լեռան վրա, ՀՀ պետական սահմանից հազիվ 1 կմ հեռավորության վրա:

*Պատմություն.* կառուցվել է Ժ դարում. բերդը և գավառն իրենց անվանումը, հավանաբար, ստացել են Գագիկ Ա Բագրատունու (989-1020) անունից. «...*զԳագ* անուանի բերդ, և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ...»[3072]:

Գրավոր աղբյուրներում բերդի վաղագույն հիշատակություններից մեկը վերաբերում է ԺԱ դարի սկզբին, երբ Լոռու թագավոր Դավիթ Անհողինը (ծննդյան թվականն անհայտ - վախճանվել է 1048 թ., թագավորել է մոտ 996-ից) ճնշել էր կենտրոնախույս ուժերին. «...մարզպանն Դեմետր, որ էր իշխան ի **Գագ բերդին** ի սահմանսն յայնոսիկ՝ կաւկածեալ ի նմանէ (Դավիթ Անհողին)՝ թողու զհաւատս հայրենի հայութեան և թիկունս օզնականի զՎիրս արարեալ՝ ի նոցին կրկնամեռ լուանայ ջուր...: Իսկ Դաւիթ, զեղեցկածաղիկ, մանուկն և նորատի արքայն՝ հանճարով հանէ զնա ի **բերդէն Գագայ**...»[3073] : Այնուհետև հիշվում է 1001 թ., երբ ընդբոստացած Դավիթ Անհողինի տիրույթները նվաճելուց հետո Գագիկ Ա Շահնշահն «...ընդ *Գագ բերդ* անցանելով եկ նա ի գաւառն Աղստև...»[3074]:

Գագ բերդի հաջորդ հիշատակությունը վերաբերում է ԺԱ դարի 60-ական թվականներին, երբ վիրա-աբխազաց Բագրատ Դ թագավորը Գանձակի Փատլուն ամիրայից ազատագրել էր նաև Գագը[3075]:

1123 թ. վրաց Դավիթ Շինարար թագավորը «...էառ ...**զԳագ** և զՏէրունականն»[3076]:

Բերդի հերթական հիշատակությունը վերաբերում է 1162 թ., երբ վրաց Գիորգի Գ թագավորի (1156-1184) կողմից Դվինի գրավման լուրը «...հասավ Խորասանի (Խվարասանի) և Իրաղ՝ ի սուլթանին և խալիֆային, տիրողին ([ինքնա]կալին) մեծն Բաբելոնի և արաբացվոց (սարակինոզների) կեծ օրենսդրին, և Ցելտկուզ՝ Պարսից աթաբակին, [որոնք]՝ ...հավաքվելով Ռանում՝ դիմեցին դեպի Հայոց (Սոմխիթի) երկիրը, և մոտեցան *Գագի բերդին*, որը գրավեցին, և ավերեցին նրա ամբողջ սահմանները»[3077]: Այնուհետև Ելտկուզը, տեղեկանալով, որ վրաց զորքը հարձակվելու է, «...*Գագում* գտնվող [սուլթանական] զորքերը հանվեցին տեղից ու հեռացան, [սակայն] Ցեկեղյաց գետն անցնելուց հետո նրանց հանկարծակի հասավ [վրաց] զորքը, որը նրանց բնաջնջման ենթարկեց»[3078]:

Վրաց Թամար թագուհու գահակալության (1184-1213) առաջին տարիներին, երբ ֆեոդալական ավագանին ապստամբություն էր բարձրացրել թագավորական իշխանությունը սահմանափակելու պահանջով, ապստամբների թվում հիշատակվում է նաև «...Հովհան (Իվանե) Վարդանի որդին՝ *Գագի* տերը..»[3079]: Ապստամբության ճնշումից հետո՝ 1191 թ., Թամար թագուհին Զաքարյանների Վահրամյան ճյուղի ներկայացուցիչ Բլուզ (Կրտսեր) Զաքարեին (1176-1205) է նվիրում «**Գագը** Քուրդ-վաճառի [ճոր]ով հանդերձ, մինչ Գանձա[կ] բազում... քաղաքներով, բերդերով և ավաններով ...և այլ բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու երկրներով»[3080]:

Բլուզ Զաքարեն՝ որպես Գագի տեր հիշատակվում է Հաղբատի Խաթունաշեն Սբ. Աստվածածին եկեղեցու ԺԳ դարասկզբին վերաբերող շինարարական հետևյալ արձանագրության մեջ. *«...Զաքարիա, որ էր տէր **Գագա** եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց....»*[3081]:

Բլուզ Զաքարեին հաջորդել է որդին՝ Վահրամ Գագեցին (1205-1250/52), որի օրոք Գագը դարձել է Վահրամյանների աթոռանիստը և Հայաստանի

3071. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:

3072. Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 145:

3073. **Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, էջ 257:

3074. Նշվ. աշխ., էջ 280:

3075. **Ջուանշէր**, 114: **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., էջ 208:

3076. **Սամուէլի քահանայի Անեցւոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 125: Նաև՝ Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 119: **Մխիթար Այրիվանեցի**, էջ 62: «ՄԺԱ», էջ 25: **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 218, հ. Գ, Երևան, 1955, էջ 42: **Աբրահամյան Ա.**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 134:

3077. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 9, հ. Գ, էջ 44:

3078. Նույն տեղում:

3079. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 13:

3080. Նույն տեղում:

3081. **Ղաֆադարյան Կ.**, Հաղբատ, Երևան, 1963, էջ 220:



*ԳԱԳ. տեսարաններ Գագ լեռան հարավարևմտյան ստորոտում պահպանված միջնադարյան գերեզմանոցը*

հյուսիսարևելյան մասի նշանավոր կենտրոններից մեկը[3082]:

1221 թ. հայ-վրացական միացյալ զորքերի և մոնղոլների միջև տեղի ունեցած Կոտմանի ճակատամարտում աչքի է ընկել առանձնապես «...Վահրամ իշխանն **Գագայ**...»[3083]:

Հայտնի է, որ 1225 թ. Գառնիի հաղթական ճակատամարտից և Դվին քաղաքը կողոպտելուց հետո Խորեզմի շահ Ջալալ Էդ Դինը (1220-1231) «...գնաց ու ավերեց Դվինի ամբողջ երկիրը, Դվինի քուստը, ողջ Անին, Սոմխիթը, **Գագը**՝ մինչև Գանձակ, Շամքորը: Մինչ այդ Շամքորն ու մերձակա երկրները պատկանում էին Վահրամ Գագեցուն՝ խելամիտ ու արշավանքներով նշանավոր մարդուն»[3084]: Կարճ ժամանակ անց՝ 1231 թ., երբ Ամիդի մոտ Ջալալ Էդ Դինի զորքերը պարտություն էին կրել մոնղոլներից, Վահրամ Գագեցուն հաջողվում է վերականգնել իր տիրույթների տարածքային կազմը:

ԺԳ դարի 30-ական թվականներին՝ Շամքորը գրավելուց հետո, մոնղոլ-թաթարները՝ զորավար Մոլար Նուինի գլխավորությամբ, հիմնականում առանց որևէ դիմադրության հանդիպելու, նվաճում են Վահրամ Գագեցու իշխանության ներքո գտնվող գավառները և բերդերը[3085]: Որոշ ժամանակ անց Վահրամ Գագեցին կարողանում է վերադարձնել իր տիրույթները, որոնց մեջ էր նաև Գագը. «Եւ ապա եկեալ (Վահրամ Գագեցին - Ս.Կ.) առնոյր զառեալն ի նոցանէ զդղեակս և զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա ի հայրենեաց. որ և զամենայնն առեալ էին զՏավուշ, զԿածարէթ, զՏէրունականն, զԵրգևանքն, զՄածնաբերդ՝ որ էր Կիւրիկեանց Ախարթանայ, զՆոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորազնին, և զՔաւազինն անմարտչելի ամրոց, և **զԳագ** անուանի բերդ, և գաւառ...»[3086]:

Հայտնի է, որ մոնղոլների կողմից գերեվարված և անուրդի հանված Վանական վարդապետ Տավուշեցին ազատ է արձակվել միայն Գագ բերդի բնակիչների փրկագին վճարելուց հետո[3087]:

---

3082. Վահրամյանների իշխանության մասին տե՛ս **Շահնազարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990:

3083. **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց (այսուհետև՝ Գրիգոր Ակներցի), Երուսաղեմ, 1974, էջ 20-21:

3084. Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները **Պ. Մուրադյանի**, Երևան, 1979, էջ 62: Նաև՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 52, հ. Գ, էջ 49 («...Ջալալ[ա]դինը 140.000 զորքով եկավ Ատրպատական և սկսեց ավերել Հայքը, *Գագը*, ուր փոքրիկ երեխաներին նույնիսկ կոտորում էր...»):

3085. Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 144: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 243:

3086. Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 145: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163 («Առին և նոքա բազում գաւառս ի պարսից, և զբերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, և զԵրգեվանք, զՏավուշ, զԿածարեթ, և զՏէրունական, զԳագ, և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ, հայր Սաղպուղին, պապն Վահրամայ և Զաքարէի և Իւանէի»):

3087. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 252:

1242 թ. հիշվում են Գագի տեր Վահրամ Գագեցին և որդին՝ Աղբուղան, որոնք հայ և վրաց այլ իշխանների հետ աջակցել են մոնղոլներին Հարավային Հայաստանը նվաճելուն, Կարինը գրավելուց հետո փրկագնել են բազմաթիվ քրիստոնյաների, գնել հայկական ձեռագրեր և նվիրել Հյուսիսային Հայաստանի հոգևոր հաստատություններին[3088]:

1243 թ. հիշվում է Վահրամ Գագեցու որդի Աղբուղան, որը մասնակցել էր Իկոնիայի սուլթանի զորքերի դեմ Չմանկատուկում մղված ճակատամարտին. «Տերն **Գագայ**, որդին մեծին Վահրամայ, թոռն Բլուզ Զաքարէի, Աղբուղայ անուն, քաջապես մարտուցեալ ընդդեմ զօրու սուլտանին...»[3089]:

ԺԳ դարի 2-րդ կեսից պատմական աղբյուրներում բերդի վերաբերյալ որևէ հիշատակության չենք հանդիպել:

*Տեղագրական նկարագրություն.* ԺԹ դարավերջին ականատեսը թողել է բերդի հետևյալ նկարագրությունը. «Գագ սարիս գագաթի եզերներով պարիսպ ձգուած է վաղուց եւ ձեւացրած մի անմատչելի բերդ, զի առանձնացած է սարս: Բաւական ամուր է բերդս, ափսոս, որ ջուր չունի իր մէջ, վասն որոյ փորուած են մի քանի վիմափոր աւազաններ, որք բազմիցս լի են լինում անձրեւաջրով: Համարեա թէ 20-ից աւելի վիմափոր այրեր կան յատկապէս պատրաստուած, որք ի հնումն գուցէ ծառայած են իբրեւ զօրանոց, յորոց մի քանիսն ունին երդիկներ»[3090]:

## ԴԵՄԻՐՉԻԼՅԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 250-280 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը հիմնվել է_խորհրդային տարիներին:

## ԴԵՄԻՐՉԻԼՅԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի աջ ափին, ծովի մակերևույթից 370-410 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է հայաբափ հին գյուղատեղիում ԺԹ դարավերջին:

Բնակչության թվաքանակի վիճակագրությունը սակավաթիվ տվյալներով ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3091] | 85 | 283 | 157 | 440 |
| 1908[3092] | | | | 493 |
| 1914[3093] | | | | 495 |
| 1977[3094] | | | | 1111 |

## ԴՅՈՒԶՂՇԼԱՂ (ԴՅՈՒԶԽԱԼՓԱԼՈՒ)

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս՝ Աղստև գետի ձախ ափից 2 կմ հեռու, ծովի մակերևույթից 320-330 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին ոստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը: Բնակչության թվաքանակը վիճակագրական աղբյուրներում ճշտորեն հաշվառվել է միայն նստակեցության անցնելուց հետո, ընդ որում՝ ինչպես 1908 թ.[3095], այնպես էլ 1914 թթ. նորահիմն գյուղում արձանագրվել է 225 շունչ[3096], մինչդեռ թափառական կյանք վարելիս, բազմակի արձանագրվելով, արհեստականորեն ուռճացված տվյալներ են գրանցվել (օրինակ՝ 1886 թ., 62 տուն՝ 390 բնակիչ՝ 220 ար., 170 իգ.)[3097]:

## ԵՆԻԳՅՈՒՆ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևելք:

Հիմնվել է խորհրդային տարիներին: 1980 թ. ուներ 1106 բնակիչ[3098]:

## ԵՆԻՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիսարևելք՝ ծովի մակերևույթից 310 մ միջին բարձրության վրա:

Հիմնվել է խորհրդային տարիներին: 1980 թ. ուներ 1859 բնակիչ[3099]:

## ԶԵԼԻՄԽԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիսարևելք՝ ծովի մակերևույթից 300-310 մ բարձրության վրա:

Հիմնվել է խորհրդային տարիներին:

## ԷՅՆԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ արևելք:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ԹԱԹԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք՝ Հախում գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 500-540 մ բարձրության վրա:

Հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարածները, որոնք 1886 թ. հիշվում են իբրև թաթեր, ապա 1914 թ.՝ թաթարներ (հետագայի

3088. Նույն տեղում, էջ 280:

3089. **Գրիգոր Ակներցի**, էջ 28-29:

3090. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 396: Գագ բերդի մասին տե՛ս նաև **Յովհաննէսեան Հ. Մ.**, նշվ. աշխ., էջ 487-492:

3091. "Свод...", с. 146-147.

3092. "Кавказский календарь на 1910 г.", с. 239.

3093. "Кавказский календарь на 1915 г.", с. 117.

3094. «ՍՍՀ», հ. 3, էջ 406:

3095. "Кавказский календарь на 1910 г.", с. 250.

3096. "Кавказский календарь на 1915 г.", с. 123.

3097. "Свод...", с. 146-147.

3098. «ՍՍՀ», հ. 5, էջ 118:

3099. Նույն տեղում, էջ 118:

աղբբեջանցիներ): Բնակչության թվաքանակի վիճակագրությունը սակավաթիվ տվյալների համադրումով ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3100] | 229 | 806 | 518 | 1324 |
| 1914[3101] | | | | 940 |

## ԽԵՅՐԻՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 660-700 մ բարձրության վրա, արևելյան կողմից գրեթե կից է ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գյուղին:

Հաշվի առնելով ՀՀ Իջևան-Նոյեմբերյան մայրուղու ռազմավարական նշանակությունը՝ Ի դարի սկզբներին ծնունդ առած գյուղակը խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունները զուտ քաղաքական նկատառումներով առավել ընդարձակել են:

1886 թ. ունեցել է 75[3102], 1914-ին՝ 78 բնակիչ[3103]:

## ԽԻԼԽԻՆԱ (ԽՈՒԼԽԻՆԱ)

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիսարևելք՝ ծովի մակերևույթից 300-305 մ բարձրության վրա:

1914 թ. ունեցել է 311 բնակիչ[3104]:

## ԿԱՅՄԱՂԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 24 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 400-480 մ բարձրության վրա:

Հիմնել են ԺԹ դարի 2-րդ կեսին նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը: Բնակչության քանակի վերաբերյալ վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3105] | 108 | 389 | 279 | 668 |
| 1914[3106] | | | | 1472 |
| 1977[3107] | | | | 1990 |

## ՂԱԶԱԽ

**Տեղադրություն.** գտնվում է Աղստև գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 350-390 մ բարձրության վրա, արգավանդ դաշտավայրում: Հիմնադրվել է 1880 թ.:

**Հիմնադրումը.** մինչ քաղաքի հիմնադրումը, ինչպես ասվեց, գավառի վարչանիստը Դաղ-Քյասաման գյուղն էր:

1880 թ. դեկտեմբերի 11-ին Կովկասի փոխարքայի հրամանագրով Աղստև գետի աջ ափին 356 դեսյատին 490 քառ. սաժեն արքունի հողատարածք է հատկացվում ապագա քաղաքի կառուցապատման համար: Հաստատվում է նաև կառուցվելիք քաղաքի հատակագիծը[3108]: Արդեն 1883 թ. բնակավայրին շնորհվել էր քաղաքի կարգավիճակ[3109]: Սակայն սկզբնական շրջանում նրա զարգացման հեռանկարի նկատմամբ մամուլում թերահավատություն է արտահայտվել. «Մի քանի տարի է միայն, որ այս քաղաքը հիմնարկուել է և հետզհետէ վայելուչ տներ և խանութներ բազմանում են. բայց հազիւ թէ այս նոր քաղաքը կարողանայ հաստատուն ապագայ ունենալ. որովհետև ամառնային սաստիկ տաք օդն և վատառողջ ջուրը մի օր կարող են սորան ևս Ջվանշիրի գաւառի Թառթառ աւանի վիճակին հասցնել»[3110]:

**Ջրամատակարարում.** Դիլիջան փոխադրվելու բնակիչների մտադրությունը կանխելու նպատակով կառավարությունը 1897 թ. ծրագրել էր խողովակաշարերով ջուր հասցնել Ղազախ[3111]: Նախագծի իրականացումը (ջուրը բնակավայր էր հասցվել 11 վերստ հեռավորությունից) համայնքի վրա նստել էր 23.000 ռուբլի[3112]:

**Կառուցապատում.** 1905 թ. ականատեսը գրել է. «Ներկայումս Ղազախը բաժանված է 26 թաղամասերի, որոնք էլ բաղկացած են 276 տեղամասերից: Դրանցից 156-ը դեռևս ավարտված չեն: Ղազախում կառույցների մեծամասնությունը քարից են, միահարկ, քաղաքային տիպի: Առկա են ուղղափառ և հայ-գրիգորյանական եկեղեցիներ և մուսուլմանական մզկիթ: Քաղաքի կենտրոնում տեղադրված է շուկայի հրապարակը՝ շրջապատված առևտրական կրպակների շարքերով...»[3113]:

Հայտնի է, որ նույն թվականին ազգությամբ գերմանացի գավառապետ Առնոլդը «...որպէս նախանձախնդիր անձն քաղաքի առաջադիմութեան և լուսաւորութեան, դատարկ գետինների վաճառումով աշխատում է հարստացնել քաղաքը»[3114]:

---

3100. "Свод...", с. 150-151.
3101. "Кавказский календарь на 1915 г.", с. 187.
3102. "Свод...", с. 144-145.
3103. "Кавказский календарь на 1915 г.", с. 197.
3104. "Кавказский календарь на 1915 г.", с. 197.
3105. "Свод...", с. 144-145.
3106. "Кавказский календарь на 1915 г.", с. 131.
3107. «ԱՄՀ», հ. 3, էջ 6:

3108. "Кавказ", Тифлис, 1905, N 24, էջ 3:
3109. «Նոր-Դար», 1886, N 208: Ի դեպ, այլ վկայության համաձայն Ղազախը քաղաքի կարգավիճակ ստացել էր 1909 թ. (Азербайджанская ССР. Административно-территориальное деление, Баку, 1979, с. 9):
3110. «Արձագանք», 1886, N 12, էջ 162:
3111. «Նոր-Դար», 1887, N 53, էջ 1:
3112. "Кавказ", Тифлис, 1905, N 24, с. 3.
3113. Նույն տեղում (բնագրում՝ "Въ настоящее время Казахъ разбитъ на 26 кварталовъ, въ которыхъ состоитъ 276 участковъ, изъ незастроенныхъ осталосъ всего 156. Большинство построекъ въ Казахе каменныя, одноэтажныя, городского типа. Имеются православная и армяно-григорианския церкви и магометанская мечетъ. Посреди города расположена базарная площадь, окруженная торговыми рядами лавокъ).
3114. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1254, թ. 1:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** առօրյա խնդիրներով կլանված և ինքնապաշտպանության կազմակերպման հարցերն անտեսած ղազախաբնակ հայերն այդ օրերին չարաչար պատժվում են՝ կորցնելով այն ամենը, ինչ ունեին: Թուրքերը հրդեհում են Զաղեքյանցի, Մելիք-Իսրայելյանի, Գուլումյանի, Խաչատրյանի և այլոց տները, թալանում և ավերում եկեղեցին ու դպրոցը: Փախչելով Թիֆլիս և մերձակա հայաբնակ գյուղեր՝ հայ բնակիչները հազիվ կարողանում են ազատել իրենց կյանքը[3115]:



**ՂԱԶԱԽ. Հնագիտական իրեր հայտնաբերված Սարի-թափա բլրից**

**Հնագիտական հուշարձան.** Ղազախ քաղաքի արևմտյան եզրին, աղյուսի գործարանի տարածքում, Սարի-թափա բլրի շրջանում Ադրբեջանի ԳԱ Կովկասյան հնագիտական արշավախումբը (ղեկ. Ի. Նարիմանով) 1956-1957 թթ. պեղումներ է իրականացրել բնակատեղիում: Գտածոների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հնավայրը վերաբերում է մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին[3116]:

**Բնակչություն.** հայերն այստեղ բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրման հենց սկզբից:

3115. **Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905-1906 թ.), Երևան, 1907, էջ 360:

3116. **Нариманов И.**, Археологические раскопки на поселении холма Сарытепе (1956-1957 гг.), "Известия Академии наук Азербайджанской ССР", 1959, N 3, с. 31-43.

Իբրև փոստային կայարան՝ Ղազախը վաճառական տարրի համար նկատվել է հարմար գործատեղի. արդեն 1885 թ., հանձինս հիշյալ բնագավառի գործավորների, նրանց մի նշանակալի մասը հայեր էին. «Բնակչաց մեծամասնությունը կազմում են շատ կողմերից եկած հայ և օտար վաճառականներ...»[3117]: Նորաբնակների թվում կային և՛ քաղաքացիներ և՛ գյուղացիներ. «Ժողովուրդը մեծաւ մասամբ, Շուշուց և մօտակայ գիւղօրայքից են վերաբնակուած և պարապում են զանազան արհեստներով և վաճառականութեամբ»[3118]:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1890[3119] | 50 | 120 | 110 | 230 |
| 1895[3120] | | 248 | 114 | 362 |
| 1897[3121] | 60 | | | |
| 1900[3122] | | 300 | 150 | 450 |
| 1902[3123] | | 190 | 151 | 341 |
| 1917[3124] | 60 | | | 320 |

1905 թ. Ղազախի բնակչությունը կազմել է 3380 շունչ (հիմնականում՝ թուրքեր, ապա՝ հայեր, ավելի քիչ ռուսներ)[3125]:

**Աղոթատուն.** մինչ հայոց եկեղեցի հիմնելը Ղազախում կառուցվում է աղոթատուն: Շինարարական աշխատանքներն սկսվում են 1885 թ. և ավարտվում 1887 թ.[3126]: Հայտնի է, որ 1886 թ. աղոթատունը (լրատվական հաղորդագրություններում հիշվում է իբրև եկեղեցի) կիսով չափ կառուցված էր. «Տեղիս արժ. հայր Արզարիոս Տէր Յարութիւնեանի անխոնջ աշխատութեամբը արդէն Ղազախի եկեղեցու պատերը բոլորովին աւարտուած են, սակայն տանիքը ծածկելու համար հարկաւոր է առնուազն 300-500 ռուբլի»[3127]:

1890 թ. բարվարնակ Եղիսաբեթ Սարգսյաննն ու եղբայրը՝ անտառապետ Գրիգոր Յուզբաշյանցը, նախաձեռնել են աղոթատան վերաշինության գործը, որն օծվում է նույն թվականի հոկտեմբերի 29-ին[3128]:

Աղոթատունն իր նպատակին ծառայում է մինչև եկեղեցու կառուցումը (1901 թ.)[3129]:

3117. «Նոր-Դար», 1885, N 58, էջ 1:
3118. «Արձագանք», 1897, N 35, էջ 3:
3119. **Բարխուդարեանց Մ.**, Արցախ, էջ 60:
3120. «Արձագանք», 1895, N 19, էջ 3:
3121. «Արձագանք», 1897, N 35, էջ 3:
3122. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 28:
3123. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 27-28:
3124. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 167:
3125. "Кавказ", Тифлис, 1905, N 24, с. 3.
3126. «Նոր-Դար», 1887, N 192, էջ 3: Նաև՝ «Նոր-Դար», 1887, N 210, էջ 2:
3127. «Նոր-Դար», 1886, N 208:
3128. «Արձագանք», 1890, N 174, էջ 2:
3129. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1254, թ. 6:



*ՂԱԶԱԽ. Սբ. Վարդան եկեղեցի (լուս. Ս. Դարչինյանի)*

1907 թ. Ղազախի ծխականների համախոսական որոշման մեջ նշված է, որ «...հարկաւոր է մեր հին աղօթատունը վերանորոգել և դնել դպրոցի տրամադրութեան տակ»[3130]:

**Սբ. Վարդան եկեղեցի.** դեռևս 1880-ական թվականների սկզբներին տեղի հայությանը հուզել է եկեղեցի ունենալու գաղափարը: 1885 թ. այդ նպատակն իրագործելու ակնկալիքով հանգանակություն էր սկսվել. «...ժողովրդականք եկեղեցի ունենալու կարիք զգալով արդէն ձեռնարկուած է նրա (եկեղեցու) կառուցման օգտին գումար ժողովելու...»[3131]: Սակայն շուտով հայտնվում է այն անձը, որը պատրաստ էր սեփական ծախսով եկեղեցի կառուցել. «...զանձակեցի Մագի Ղազարեանցը դիմել է խնդիրքով Թիֆլիսի թեմի առաջնորդին, որ սա թոյլ տայ իրեն Ղազախի եկեղեցին իւր հաշուով շինելու: Եկեղեցու ծախսի համար հարկաւոր է առնուազն 5000 րուբլի: Թէ քահանան և թէ ժողովուրդը անսահման ուրախ են, որ շուտով մի փառաւոր եկեղեցի կունենան»[3132]:

1889 թ. հունիսի 17-ին օծվում է եկեղեցու հիմքը[3133], և Մակի (Մկրտիչ) Ջաղեթյանը սկսում է շինարարությունը: Սակայն մեկ տարի անց՝ 1890 թ. հուլիսի 22-ին, նա վախճանվում է՝[3134] գործի շարունակությունն ավանդելով որդուն՝ Ալեքսանդրին: Հայտնի է, որ հետագա մի քանի տարիներին՝ 1890[3135], 1891[3136], 1895 թթ. («...այժմ կառուցանւում է մէկ փառաւոր եկեղեցի՝ պ. Ջաղաթեանցի հաշուով...»)[3137] և մինչև շինարարության ավարտը (1901 թ.) աշխատանքներն ընթացել են առանց ընդհատման:

1901 թ. «Ապրիլի 8-ին, նոր կիրակի օրը, մեծ հանդիսով օծվեց Ղազախի նորակառոյց հայոց եկեղեցին: Օծման կարգը կատարում է Գանձակի փոխանորդ Անանիա եպիսկոպոսը տասը քահանաներով...»[3138]: Ուշագրավ է նույն օրը 200 հյուրերի պատվին տրված ճաշկերույթի ժամանակ Ալեքսանդր Ջաղեթյանցի արտասանած ճառը. «Հանգուցեալ հայրս, հիմք դնելով ս. Վարդանի անուան եկեղեցուն, չկարողացաւ կենդանութեան ժամանակ աւարտել շինութիւնը. վիճակուած էր նրան միայն 1,5 արշին բարձրացնել հիմքից ու աչքերը յաւիտեան փակել: Հայրս կտակեց ինձ, որ աւարտեմ եկեղեցու շինութիւնը. ես ինքս, ինչ թագցնեմ, այդ ժամանակ սուղ միջոցների տէր էի. բայց յուսալով առ Աստուած, շարունակեցի գործը և, ինչպէս կըտեսնէք տպագրած հաշւից, 18.500 րուբլի ծախսելով իմ սեպհական միջոցներից, աւարտեցի այդ սրբազան շինութիւնը, որն ահա, ձեր առաջ նւիրում եմ հօրս և մօրս յիշատակին, խնդրելով ձեզանից միայն մի անկյուն ոսկրներիս համար, իմ շինած եկեղեցու պատի տակ՝ ծնողացս դամբարանի մօտ»[3139]:

Շուտով Վեհափառը օրհնության և գոհունակության կոնդակ է հղում «...յանուն պ. Աղէքսանդրի Մ. Ջաղէթեան վասն շինութեան ծախիւք նորա եկեղեցւոյն որ ի Ղազախ...»[3140]: Մեկ այլ կոնդակով Ջաղեթյանցների ժառանգներին էլ է թույլատրվում է թաղել եկեղեցու գավթում[3141]:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ եկեղեցին ենթարկվել է թալանի:

Հայտնի է, որ 1907-1912 թթ. գրագրություններում ղազախցիները ցանկություն են հայտնել վերանորոգել եկեղեցու ցանկապատը (այն պետք է պատրաստվեր կաղնեփայտից, ամրացվեր երկաթաթելով և ունենար երկու դարպաս), որի համար նախատեսված ծախսը կազմում էր 181 ռուբ.: Այդ աշխատանքների իրականացման համար հաստատվել էր նաև հոգաբարձուների կազմը (Գերասիմ Բաղրամյանց, Իվան Ջաղեթյանց և Մատթեոս Բաղդասարյանց)[3142]: Ի վերջո 1912 թ. հոգևոր իշխանությունները թույլտվություն են տվել:

---

3130. Նույն տեղում, թ. 14:
3131. «Նոր-Դար», 1885, N 58, էջ 1:
3132. «Նոր-Դար», 1887, N 46, էջ 3:
3133. «Մշակ», 1889, N 74, էջ 3:20. «Արձագանք», 1890, N 23, էջ 8:
3134. «Արձագանք», 1890, N 23, էջ 8:
3135. «Արձագանք», 1890, N 40, էջ 4:
3136. «Մշակ», 1891, N 51, էջ 3:
3137. «Արձագանք», 1895, N 19, էջ 3:

---

3138. «Մշակ», 1901, N 87, էջ 3:
3139. «Տարազ», 1901, N 19, էջ 220:
3140. «Արարատ», 1901, էջ 264: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 421, թ. 4:
3141. «Արարատ», 1901, էջ 478: Ի դեպ, 1916 թ. օգոստոսի 26-ին Քարվանսարայում (այժմ՝ ՀՀ, ք. Իջևան) վախճանված Ալ. Ջաղեթյանցի աճյունն ամփոփվել է Սբ. Վարդան եկեղեցու գավթում՝ մուտքի մոտ. «Նրա հուղարկավորության հանդեսին մասնակցում էին նաև թուրք աղալարներ և հոգևորականներ, որոնք իրենք պատգամավորներով հավաքվելով հայոց եկեղեցու գավթում, հայտնեցին նույնիսկ իրենց երախտիքը հանգուցյալին և ասացին, որ հանգուցյալը քաղաքի հայոց եկեղեցին կառուցելուց հետո եղել է նաև մեջիդի շինության գործին նպաստողներից առաջին անձը» (**Խառատյան Հ.**, Մկրտիչ և Ալեքսանդր Ջաղեթյանցները՝ Ղազախի Սուրբ Վարդանանց եկեղեցու կառուցողներ, «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 96):
3142. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1254, թ. 13, 15-18, 21:

1918 թ. փետրվարին, երբ Ղազախի հայերը անվտանգության նպատակով հեռացել էին քաղաքից և ապաստանել Քարվանսարայում, Սբ. Վարդան եկեղեցին եկեղեցին թուրք խաժամուժի կողմից ենթարկվել է կողոպուտի: Այդ մասին ծխական քահանա Զաքարիա Ապրեսյանցը գրել է. «...արդեն մարտ ամսին սկսեցին մեզ հասնել լուրեր այն մասին, որ հայոց և ուղղափառ եկեղեցիները ենթարկվել են թալանի և սրբապիղծ վերաբերմունքի մութ, մոլեռանդ մասսաների կողմից: Այս լուրերը համարելով ճշմարտությունից զուրկ, ես սկսեցի հավաքել առավել ճշգրիտ տեղեկություններ, որոնցով ամբողջությամբ հաստատվեց այն ամենը, ինչի մասին խոսվում էր... թալանել են եկեղեցին՝ նախապես ջարդելով ապակիները և կատարելով սրբապիղծ գործողություններ, իսկ այդ ընթացում Ղազախի ղեկավարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկել, ակնհայտորեն գտնելով, որ դա իր պարտականությունների շրջանակներից դուրս է...»[3143]:

**Քահանա.** Ղազախը քահանա չի ունեցել մինչև 1896 թ. ապրիլի 2-ը, երբ քաղաքի համար քահանա է ձեռնադրվել Զաքարիա Ապրեսյանցը (ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և չորս տարի զբաղվել ուսուցչությամբ)[3144] և հովվել ներառյալ 1918 թ.[3145]:

**Ռուսաց եկեղեցի և թուրքական մզկիթ.** հայտնի է, որ արդեն 1884 թ. Ղազախում արծարծվել է օրթոդոքս եկեղեցի կառուցելու հարցը[3146]: 1905 թ. քաղաքն արդեն ուներ ոչ միայն ռուսական եկեղեցի, այլև՝ թուրքական մզկիթ[3147]: Վերջինս կառուցվել է 1899 թ. և հայտնի է Իսրաֆիլ-աղայի մզկիթ անունով[3148]:

**Հայոց կրթօջախներ.**

*Արական դպրոց.* հիմնադրման ստույգ տարեթիվն անհայտ է, սակայն 1873 թ. գործել է և ունեցել 1 ուսուցիչ, 57 աշակերտ[3149]: Դրանից հետո մինչև 1895 թ., կրթօջախի գործունեության վերաբերյալ տվյալներ չունենք: 1895-ին Ղազախում գործել է արական դպրոց[3150]: Հավանաբար խոսքը վերաբերում է Ալեքսանդր Ջաղեթյանցի հիմնած դպրոցին[3151]:

*Օրիորդաց դպրոց.* այս դպրոցի գործունեության մասին միակ տեղեկությունը վերաբերում է 1873 թ., երբ ունեցել է 1 ուսուցչուհի և 7 աշակերտուհի[3152]:

*Երկսեռ դպրոց.* դպրոցի գործունեությանը վերաբերող վավերագրերի ուսումնասիրությունը և ըստ ժամանակագրության դասակարգումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչ | աշ-կերտ | աշ-ուհի | ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1894[3153] | | 2 | 17 | 8 | 25 |
| 1907/08[3154] | միդասյա | | 16 | 15 | 31 |
| 1908/09[3155] | | 2 | 33 | 25 | 58 |
| 1911/12[3156] | քառամյա | 1 | 17 | 12 | 29 |
| 1914[3157] | | | | | 37 |

Հայտնի է, որ 1905-106 թթ. հայ-թուրքական ընդհարումների ընթացքում դպրոցը ևս զերծ չի մնացել կողոպուտից, և 1907 թ. «...թալանի ենթարկուած ծխական ուսումնարանի շինութիւնը նորոգելու և նոր սեղան-նստարան ու ամեն կահ-կարասիք պատրաստելու համար» գյուղի հասարակությունը դիմել է հոգևոր իշխանություններին[3158]:

## ՂԱԶԱԽԲԵՅԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 340 մ միջին բարձրության վրա:

Հիմնվել է ԺԹ դարի սկզբներին: 1886 թ. Ղազախբեյլի թափառական հասարակությունը բաղկացած է եղել 60 ընտանիքից (277 շունչ)[3159], 1908-ին՝ 166[3160], 1914 թ. ուներ 175 բնակիչ[3161]:

## ՂԱՐԱՀԱՍԱՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 320-330 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 42 տուն՝ 247 շունչ (130 ար., 117 իգ.)[3162], 1914-ին՝ 286 բնակիչ[3163]:

---

3143. Նշվ. փաստաթղթերի ժողովածուն, նույն տեղում (բնագրում՝ “...уже в марте месяце стали до нас доходить слухи о том, что армянская и православная церковь подверглись разграблению и кощунственному отношению со стороны фанатично настроенных масс. Считая эти слухи лишенными правдоподобности, я стал наводить более точные справки, коими вполне подтвердилось все то, что до этого говорилось... разграбили церковь, предварительно выломав окна и совершив кощунственные действия, а казахская администрация в это время никаких мер не принимала, считая это, очевидно, вне круга своих обязанностей...”).
3144. «Արձագանք», 1897, N 35, էջ 3:
3145. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1079, թ. 3: Նաև՝ «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 69:
3146. «Նոր-Դար», 1888, N 52, էջ 2:
3147. “Кавказ", Тифлис, 1905, N 24, էջ 3:
3148. **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., էջ 433:
3149. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 492:
3150. «Արձագանք», 1895, N 19, էջ 3:
3151. «Մշակ», 1916, N 216: Ի դեպ, դպրոցի հետագա գործունեության համար բարեգործ Ա. Ջաղեթյանը դպրոցին կտակել էր նաև որոշակի գումար:
3152. **Խուդոյան Ս.**, նույն տեղում:
3153. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 34; գ. 3895, թ. 99:
3154. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 372, թ. 1: Տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 492:
3155. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 18: Նաև՝ ֆ. 35, ց. 1, գ. 434, թ. 1:
3156. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 58: **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 492:
3157. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 492:
3158. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1254, թ. 13:
3159. “Свод...”, с. 150-151.
3160. “Кавказский календарь на 1910 г.”, с. 266.
3161. “Кавказский календарь на 1915 г.”, с. 131.
3162. “Свод...”, с. 146-147.
3163. “Кавказский календарь на 1915 г.”, с. 134.

## ՂԱՐԱՓԱՓԱԽ

Գտնվում է Աղստև գետի աջ ափին՝ Ղազախ քաղաքին կից հյուսիսարևելյան կողմից:

1864 թ. Ղարափափախը չի ունեցել նստակյաց բնակչություն[3164]: Գյուղը գոյացել է ԺԹ-Ի դարերի սահմանագլխին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3165] | 44 | 147 | 135 | 282 |
| 1907[3166] | | | | 299 |
| 1914[3167] | | | | 309 |

## ՂԶԸԼ-ՀԱՋԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի աջ ափին, ծովի մակերևույթից 590-640 մ բարձրության վրա:

Հայտնի է, որ ԺԹ դարավերջին մի քանի ծմեռոցներում տեղակայված Ղզըլ-Հաջիլին պատկանել է թուրք կալվածատերերի[3168]:

Ներկայիս գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3169] | 56 | 161 | 125 | 286 |
| 1907[3170] | | | | 390 |
| 1914[3171] | | | | 402 |

## ՂՐԱՂ-ՔՅԱՍԱՄԱՆ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիսարևելք՝ Կուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 200-205 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը բաժանված է երկու մասերի, որոնք նախկինում եղել են առանձին գյուղեր՝ Վերին Ղրաղ-Քյասաման և Ներքին Ղրաղ-Քյասաման անուններով: Դրանց բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալները և ժամանակին ցույց են տրվել առանձին: Վերինը 1886 թ. ունեցել է 342 ընտանիք, 2014 բնակիչ (1166 ար., 848 իգ.)[3172], 1908-ին՝ 1833[3173], 1914-ին՝ 2488 բնակիչ[3174]: Ներքինը 1886 թ. բաղկացած է եղել 253 ընտանիքից և 1291 անձից (753 ար., 538 իգ.)[3175], 1908-ին՝ 1537[3176], 1914-ին՝ 1546 բնակչից[3177]: 1977 թ. գյուղական մեկ հասարակության մեջ միավորված Ղրաղ-Քյասամանն ուներ 1306 բնակիչ[3178]:

## ՂՐԸԽԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ արևելք:

Հիմնվել է Ի դարի սկզբներին: 1914 թ. ունեցել է 81 բնակիչ[3179]:

## ՂՈՒՇՉԻ-ԱՅՐՈՒՄ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 820-900 մ բարձրության վրա:

Հայաթափ հին գյուղատեղիում խաշնարած թուրքերի այրում ցեղախումբը նստակեցության է անցել ԺԹ դարավերջին: Հայտնի է, որ տակավին 1864 թ. Ղուշչի-Այրումը նստակյաց բնակչություն չի ունեցել: Ընդ որում գյուղի 176 ընտանիքից բաղկացած թափառական համայնքը ցրված է եղել ոչ միայն գավառով մեկ, այլև մինչև իսկ հարևան երկրում. «Այստեղից 20 վերստ հեռու ապրում են 4 տուն, էլ հեռու 15 վերստ՝ 3 տուն, և 30 վերստ հեռու՝ 1 տուն, 10 վերստ էլ հեռու՝ 12 տուն, Ղարաբաղում՝ 3 տուն, Պարսկաստանում՝ 2 տուն: Այդպես շարունակում է անվանապես հաշվել բոլորին, մինչև որ լրանա 176 տունը...»[3180]:

1886 թ. ունեցել է 59 ընտանիք, 326 շունչ (221 ար., 105 իգ.)[3181], 1908-ին՝ 444[3182], 1914-ին՝ 462 բնակիչ[3183]:

## ՄԱՋԱՄԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 650-700 մ բարձրության վրա:

Հայաթափ գյուղատեղիում ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական հայտնի տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3184] | 25 | 62 | 47 | 109 |
| 1908[3185] | | | | 243 |
| 1914[3186] | | | | 245 |

3164. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 85, с. 420.
3165. “Свод...”, с. 144-145.
3166. “Кавказский календарь на 1910 г.”, с. 276.
3167. “Кавказский календарь на 1915 г.”, с. 136.
3168. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 18-19, 25-26, 28-30, 39-40:
3169. “Свод...”, с. 82-83.
3170. “Кавказский календарь на 1910 г.”, с. 287.
3171. “Кавказский календарь на 1915 г.”, с. 141.
3172. “Свод...”, с. 148-149.
3173. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 298.
3174. “Кавказский календарь на 1915 г.”, с. 146.
3175. “Свод...”, с. 148-149.
3176. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 298.
3177. “Кавказский календарь на 1915 г.”, с. 146.
3178. «ԱՍՀ», հ. 3, էջ 164:
3179. “Кавказский календарь на 1915 г.”, с. 142.
3180. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 85, стр. 420 (բնագրում՝ “Верст за 20 отсюда живут 4 дыма, дальше верст 15 живут 3 дыма; дальше, верст 30 в сторону, живет 1 дым; дальше, верстах в 10, живут 12 дымов; в Карабахе 3 дыма, в Персии 2 дыма. И так продолжает высчитывать всех поименно, пока не составится 176 дымов...”).
3181. “Свод...”, с. 148-149.
3182. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 303.
3183. “Кавказский календарь на 1915 г.”, с. 149.

## ՄԱՐՔՍՈՎԿԱ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք: Գոյացել է խորհրդային տարիներին:

1981 թ. ունեցել է 1517 բնակիչ[3187]:

## ՄՈԼԼԱՋԱՖԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք: Գոյացել է Ի դարի սկզբներին:

## ՄՈՒՍԱՔՅՈՎ (ԽԱՆՈՒԽԼԱՐ ՄԵԾ)

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հարավ-արևմուտք՝ Աղստև գետի աջ ափին, ծովի մակերևույթից 400-420 մ բարձրության վրա:

Գյուղի տարածքում է գտնվում «Դիտավան» պահակատուն-աշտարակը (ԺԸ դ.):

1908 թ. ունեցել է 258[3188], 1914-ին՝ նույնքան բնակիչ[3189]:

## ՅԱՐԱԴՈՒԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 9,5 կմ հարավ-արևելք՝ Հախում գետի ձախ ափին՝ կից ՀՀ պետական սահմանին և Թաքլի գյուղին:

1908 թ. ունեցել է 151[3190], 1914-ին՝ 120 բնակիչ[3191]:

## ՅՈՒԽԱՐԻ-ԱՍԿԻՓԱՐԱ (ՀԻՆ, ՎԵՐԻՆ ՈՍԿԵՊԱՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 780-850 մ բարձրության վրա:

Հայաքափ հին գյուղատեղիում խաշնարած քուրք ցեղերը հանգրվանել են ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ կերպ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3192] | 33 | 114 | 88 | 202 |
| 1914[3193] | | | | 320 |
| 1980[3194] | | | | 593 |

Եկվոր տարրից գյուղն ազատագրվել է արցախյան ազատամարտի ընթացքում և մտնում է Տավուշի մարզի մեջ:

Գյուղի տարածքում պահպանվել են բերդի, վանական համալիրի (ԺԲ-ԺԳ դդ.), դիտակետ-աշտարակի (ԺԷ դ.), ստորգետնյա գաղտնուղու (ԺԴ դ.) ավերակներ և միջնադարյան 3 կամուրջ:

## ՅՈՒԽԱՐԻ-ՍԱԼԱՀԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուր գետի աջ ափից հազիվ 0,5 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 230-240 մ բարձրության վրա:

Գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական մի քանի տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3195] | 345 | 1186 | 925 | 2111 |
| 1908[3196] | | | | 3030 |
| 1914[3197] | | | | 3529 |
| 1980[3198] | | | | 2419 |

## ՇԸԽԼԻ-1

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 275-290 մ բարձրության վրա:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3199] | 325 | 1176 | 881 | 2057 |
| 1908[3200] | | | | 2400 |
| 1914[3201] | | | | 2570 |
| 1977[3202] | | | | 2209 |

Գյուղում պահպանվել է ԺԹ դարերով թվագրվող 3 դամբարան:

## ՇԸԽԼԻ-2

Գտնվում է շրջկենտրոնից 33 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 270-300 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի 2-րդ կեսին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3203] | 318 | 1126 | 778 | 1904 |
| 1908[3204] | | | | 1867 |
| 1914[3205] | | | | 2034 |
| 1979[3206] | | | | 3027 |

3184. “Свод...”, с. 144-145.
3185. ”Кавказский календарь на 1910 г.”, с. 312.
3186. “Кавказский календарь на 1915 г.”, с. 153.
3187. «ԱՍՀ», h. 6, էջ 373:
3188. “Кавказский календарь на 1910 г.”, с. 204.
3189. “Кавказский календарь на 1915 г.”, с. 99.
3190. “Кавказский календарь на 1910 г.”, с. 430.
3191. “Кавказский календарь на 1915 г.”, с. 214.
3192. “Свод...”, с. 144-145.
3193. “Кавказский календарь на 1915 г.”, с. 85.
3194. «ԱՍՀ», h. 5, էջ 187:
3195. “Свод...”, с. 150-151.
3196. “Кавказский календарь на 1910 г.”, с. 357.
3197. “Кавказский календарь на 1915 г.”, с. 177.
3198. «ԱՍՀ», h. 5, էջ 187:
3199. “Свод...”, с. 152-153.
3200. “Кавказский календарь на 1910 г.”, с. 423.
3201. “Кавказский календарь на 1915 г.”, с. 211.
3202. «ԱՍՀ», h. 2, էջ 186:
3203. “Свод...”, с. 152-153.
3204. “Кавказский календарь на 1910 г.”, с. 423.
3205. “Кавказский календарь на 1915 г.”, с. 211.
3206. «ԱՍՀ», h. 4, էջ 413:

Գյուղում պահպանվել է ԺԹ դարավերջին կառուցված դամբարան (քյումբազ):

## ՉԱՅԼԻ-ԿՈՄՈՒՆԱ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ արևմուտք: Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՉԱՅԼԻ-ՔՈՍԱԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 380-420 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի 2-րդ կեսին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սակավաթիվ տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3207] | 134 | 495 | 276 | 771 |
| 1914[3208] | | | | 747 |
| 1986[3209] | | | | 5492 |

## ՋԱՆԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 3,5 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 380-390 մ բարձրության վրա:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3210] | 38 | 146 | 112 | 258 |
| 1908[3211] | | | | 102 |
| 1914[3212] | | | | 103 |

## ՋԱՖԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք՝ Աղստև գետի (այժմ՝ ջրամբարի) ձախ ափին՝ ծովի մակերևույթից 480-510 մ բարձրության վրա:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3213] | 48 | 134 | 83 | 217 |
| 1908[3214] | | | | 332 |
| 1914[3215] | | | | 302 |
| 1986[3216] | | | | 1579 |

## ՍՈՖՈՒԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք՝ Աղստև գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 420-460 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը ԺԹ դարավերջին գոյացրել են նստակեցության անցած խաշնարածները: 1886 թ. ունեցել է 17 տուն՝ 103 շունչ[3217], 1914-ին՝ 128 բնակիչ[3218]:

## ՈՒՐԿՄԱՋԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ արևմուտք՝ Ոսկանապատ գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 470-490 մ բարձրության վրա:

Հայաքափ հին գյուղատեղիում ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: 1886 թ. ունեցել է 45 ընտանիք՝ 260 շունչ[3219], 1908-ին՝ 300[3220], 1914-ին՝ 266 բնակիչ[3221]:

## ՓՈՅԼՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևելք՝ Աղստև գետի աջ ափին՝ Աղստևի և Կուրի միախառնման տեղից հազիվ 1 կմ հեռու, ծովի մակերևույթից 210-220 մ բարձրության վրա:

Հայաքափ հին գյուղատեղիում ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարավերջին: Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3222] | 149 | 508 | 388 | 896 |
| 1908[3223] | | | | 1133 |
| 1914[3224] | | | | 1236 |
| 1983[3225] | | | | 2527 |

Գյուղի տարածքում պահպանվել են ԺԹ դարավերջին կառուցված դամբարաններ:

## ՓԻՐԻԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հյուսիս՝ Կուրի աջ ափից 2 կմ հեռու՝ ծովի մակերևույթից 300 մ միջին բարձրության վրա:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական սակավաթիվ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

3207. “Свод...”, с. 152-153.
3208. “Кавказский календарь на 1915 г.”, с. 204.
3209. «ԱՍՀ», հ. 10, էջ 301:
3210. “Свод...”, с. 144-145.
3211. “Кавказский календарь на 1910 г.”, с. 241.
3212. “Кавказский календарь на 1915 г.”, с. 118.
3213. “Свод...”, с. 152-153.
3214. “Кавказский календарь на 1910 г.”, с. 242.
3215. “Кавказский календарь на 1915 г.”, с. 119.
3216. «ԱՍՀ», հ. 10, էջ 431:
3217. “Свод...”, с. 152-153.
3218. “Кавказский календарь на 1915 г.”, с. 182.
3219. “Свод...”, с. 146-147 (տվյալն ակնհայտորեն չափազանցված է):
3220. “Кавказский календарь на 1910 г.”, с. 387.
3221. “Кавказский календарь на 1915 г.”, с. 192.
3222. “Свод...”, с. 150-151.
3223. “Кавказский календарь на 1910 г.”, с. 348.
3224. “Кавказский календарь на 1915 г.”, с. 173.
3225. «ԱՍՀ», հ. 7, էջ 569:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3226] | 104 | 343 | 290 | 633 |
| 1908[3227] | | | | 1152 |
| 1914[3228] | | | | 783 |

## ՔԵԼԽԱԼԱՓԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևելք, Աղստև գետի ձախ ափից հազիվ 1 կմ հեռու, ծովի մակերևույթից 240 մ միջին բարձրության վրա:

1914 թ. ունեցել է 216 բնակիչ[3229]:

## ՔԵՄԵՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հյուսիս-արևմուտք՝ Կողբոփորի հովտում, համանուն գետակի երկու ափերին, ծովի մակերևույթից 440-550 մ բարձրության վրա:

Հայաթափ հին գյուղատեղիում ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է ԺԹ դարի 2-րդ կեսին: Ի դարի սկզբներին այն բաղկացած է եղել վերին և ներքին համանուն մասերից, հետագայում դրանք միաձուլվել են միմյանց և կազմել են շուրջ 5 կմ երկարությամբ մեկ գյուղ:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3230] | 193 | 597 | 423 | 1020 |
| 1914[3231] | | | | 1557 |
| 1980[3232] | | | | 2603 |

## ՔԵՉԱՍԿԵՐ

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավ-արևելք:

Հիմնել են նստակեցության անցած խաշնարած ցեղերը ԺԹ դարավերջին:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3233] | 101 | 433 | 289 | 722 |
| 1908[3234] | | | | 785 |
| 1914[3235] | | | | 1032 |

3226. "Свод...", с. 150-151.
3227. "Кавказский календарь на 1910 г.", с. 347.
3228. "Кавказский календарь на 1915 г.", с. 172.
3229. "Кавказский календарь на 1915 г.", с. 139.
3230. "Свод...", с. 146-147.
3231. "Кавказский календарь на 1915 г.", с. 150.
3232. «ԱՍՀ», հ. 5, էջ 338:
3233. "Свод...", с. 150-151.
3234. "Кавказский календарь на 1910 г.", с. 297.
3235. "Кавказский календарь на 1915 г.", с. 146.

## ՔՅՈՀՆԱՂՇԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևելք:

Թրքաբնակ գյուղը հայաթափ գյուղատեղիում Ի դարի սկզբին հիմնել են նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

1907 թ. ունեցել է 335[3236], 1914-ին՝ 338 բնակիչ[3237]:

## ՔՈԼԱԻՐ (ՔՈԼԱԳԻՐ)

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 310-320 մ բարձրության վրա:

1886 թ. ունեցել է 33 տուն՝ 189 շունչ (116 ար., 73 իգ.)[3238], 1907-ին՝ 298[3239], 1914-ին՝ 321 թուրք բնակիչ[3240]:

## ՔՈՍԱԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 320 մ միջին բարձրության վրա:

Ներկայիս գյուղը ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած խաշնարած ցեղերը: Վերջիններիս թվաքանակն արտահայտող վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3241] | 125 | 514 | 380 | 894 |
| 1907[3242] | | | | 460 |
| 1914[3243] | | | | 467 |
| 1980[3244] | | | | 2782 |

## ՕՄԱՐԱՂԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 25 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրի աջ ափին:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարասկզբին: 1907 թ. ունեցել է 58 բնակիչ[3245]:

## ՕՐԹԱ-ՍԱԼԱՀԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 300-320 մ բարձրության վրա:

1983 թ. ունեցել է 1123 բնակիչ[3246]:

Գյուղի մերձակայքում հայտնաբերվել են նախաքրիստոնեական ժամանակաշրջանի դամբարաններ:

3236. "Кавказский календарь на 1910 г.", с. 283.
3237. "Кавказский календарь на 1915 г.", с. 139.
3238. "Свод...", Тифлис, 1888, с. 146-147.
3239. "Кавказский календарь на 1910 г.", с. 283.
3240. "Кавказский календарь на 1915 г.", с. 139.
3241. "Свод...", с. 152-153 (տվյալն ակնհայտորեն չափազանցված է):
3242. "Кавказский календарь на 1910 г.", с. 285.
3243. "Кавказский календарь на 1915 г.", с. 140.
3244. «ԱՍՀ», հ. 5, էջ 526:
3245. "Кавказский календарь на 1910 г.", с. 340.
3246. «ԱՍՀ», հ. 7, էջ 377:

## ՓԱՐԱՀԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 760-850 մ բարձրության վրա:

Ի դարի սկզբներին հայաթափ հին գյուղատեղիում նստակեցության անցած թուրք խաշնարածները հիմնել են ներկայիս թրքաբնակ գյուղը:

Բնակչության թվաքանակի հաշվառման ոչ ճշգրիտ տվյալներով (դրանք ակնհայտորեն չափազանցված են) 1886 թ. գյուղն ունեցել է 40 ընտանիք՝ 287 շունչ[3247], 1914-ին արդեն նստակյաց բնակչությամբ՝ 182 շունչ[3248]:

3247. "Свод...", с. 148-149.

3248. "Кавказский календарь на 1915 г.", с. 193.

# ՇԱՄԽՈՐԻ ՇՐՋԱՆ

Շամխորի վարչական շրջանը կազմավորվել է 1930 թ.: Զբաղեցնում է 1660 քկմ մակերես, ունի 62 բնակավայր, որից 60-ը՝ գյուղ: Շրջկենտրոն Շամխոր քաղաքը հիմնվել է նախկին գերմանական Աննենֆելդ գաղութի և թրքաբնակ Մորուլ գյուղի տեղում: Սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի, Դաշկեսանի, Թոուզի և Խանլարի շրջաններին: 1988-1989 թթ. հայ բնակչությունից պարպվել են տարածքի բոլոր բնակավայրերը:



## ԱԲԱՍԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 420-470 մ բարձրության վրա:

Խորհրդային տարիներին միավորված էր Սեյֆալիի գյուղական խորհրդի հետ:

1976 թ. ուներ 2294 թուրք բնակիչ[3249]:

## ԱԹԱԲԵԿ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1330-1450 մ բարձրության վրա:

**Պատմություն.** տեղագիր հեղինակներից միայն բանահավաք Ս. Քամալյանն է այցելել և անդրադարձել Աթաբեկին, որը 1890 թ. հայաթափ գյուղատեղի էր. «Կայարանի հարավում հեռվում երևին էին տալիս *Չարդախլուի* ցանքերը, մոտի *Ղարամօղլի* լեռան լեռնագագաթով: Նրա կողքից *Աթաբէկի* շղթան է, ուր շինատեղ կա՝ իրա քանդված ժամի պատերով»[3250]:

**Բնակչություն.** խորհրդային կարգերի հաստատման սկզբնական տարիներին հայաթափ հին գյուղատեղիում բնակություն են հաստատել մերձակա գյուղերից փոխադրված հայերն ու վերստին այն շենացրել: 1976 թ. Աթաբեկն ունեցել է 470 հայ և փոքրաթիվ ադրբեջանցի բնակչություն[3251]: Տասը տարի անց հայերի թիվը կիսով չափ նվազել է:

1988-1989 թթ. բռնագաղթի հետևանքով Աթաբեկն իսպառ հայաթափվել է:

**Դպրոց.** 1986 թ. ունեցել է ութամյա դպրոց, որի 40 աշակերտներից միայն ութն էին հայազգի[3252]:

**Պատմական հուշարձաններ.** գյուղի տարածքում ճանապարհաշինության ժամանակ հայտնաբերվել է խողովականման սրբատաշ մի քար (մի ծայրից փակ է), որը ներքուստ գլանաձև է, արտաքուստ՝ ութանիստ: Բոլոր նիստերը նշանագրված են: Գտածոյի գործածության ձևն ու նպատակն անհայտ է: Մինչև 1988 թ. պահվում էր գյուղի սղոցարանում:

Գյուղից 0,5 կմ հյուսիս-արևելք՝ ձորակի մեջ պահպանվում էին հին ջրաղացի ավերակները:

## ԱՀՄԵԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1140-1180 մ բարձրության վրա:

Թրքաբնակ աննշան գյուղակ է՝ գոյացած Չարդախլու գյուղից խլված հողերի վրա խորհրդային տարիներին:



*ԱԹԱԲԵԿ. խողովականման սրբատաշ քարի ութ նիստերը*

## ԱՃԱՂԻ (ՆԵՐՔԻՆ) ՍԵՅՖԱԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 440-490 մ բարձրության վրա:

---

3249. «ԱՍՀ», h. 1, էջ 13:
3250. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 1-2:
3251. «ԱՍՀ», h. 1, էջ 457:
3252. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», 9. II. 1993, էջ 4:

**Բնակչություն.** դաշտաբերանի բազմաթիվ այլ գյուղերի նման պատմական անունը մոռացության մատնած այս գյուղը, ամենայն հավանականությամբ, ԺԷ դարի վերջերին արդեն հայաթափ էր:

Երկար ժամանակ խաշնարած թուրք ցեղերը գյուղատեղին գործածել են իբրև ձմեռոց: Միայն ԺԹ դարավերջին խաշնարածներն անցան նստակեցության՝ դրանով, փաստորեն, դնելով ներկայիս թրքաբնակ գյուղի հիմքը:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3253] | 250 | 1005 | 648 | 1653 |
| 1914[3254] | | | | 1550 |
| 1976[3255] | | | | 1915 |

Գյուղի մոտ պահպանվել են «Դիտվան» անվամբ հայտնի աշտարակի ավերակները (ԺԲ դար):

## ԲԱԴԱ (ԲԱԴԵՆՔ, ԲԴԱՁՈՐ, ԼՂԱՐԱԿ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 21 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1130-1260 մ բարձրությամբ հյուսիսահայաց սարալանջի վրա:

**Պատմություն.** մատենագիտության մեջ պահպանվել է գյուղի պատմական անունը՝ Լղարակ: Այն՝ որպես գրչօջախ, հիշվում է 1620 թ., երբ Հակոբ երեցը տեղում ընդօրինակել է ձեռագիր «Ավետարան» և հիշատակարանում նշել. «...ի դուռն Ս. Բարձրահամբաւ Ս. Խորանաշատու և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, Ս. Վանական վարդապետիս և Գրիգոր վարդապետիս և Ս. Յովանիսիս, ի ծորս Զակամայ, ի գիւղս որ կոչի Լըղարակ»[3256]:

**Հին Բադա.** գտնվել է գետի ձախ ափին, «Դիքջա (ցից) սրածայր բարձր բլուրի ստորոտում, ...ուր մշտապէս բնակւում են բադացի մի քանի գերդաստաններ՝ իբրև շերամապահներ և անասնապահներ և այդ պատճառով հին գիւղն աւելի նման է Բինայի»[3257]: 1880-ական թվականների կեսերին Հին Բադան ունեցել է 20-25 տուն բնակիչ[3258]:

**Նոր Բադա.** հիմնվել է «լայնանիստ, չափաւոր բարձրութեան հարթավայրի վերայ, որ կոչւում է «Լըղարակ»[3259]:

Հիմնադրման վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ: Այսպես, 1893 թ. լրատվական մի հրապարակման մեջ նշվել է, որ «...Գիւղը հիմնուած է 1866 թուին, գաղթել են Ներքին Լղարակից, որ գտնւում է Զագեամ կայարանի մօտ...»[3260]:

1898 թ. նշվել է, որ «Մօտ կէս դար առաջ այս գիւղը գտնւում էր այժմեան տեղից փոքր ինչ հիւսիս, ձորակում, ուր այժմ գիւղի այգիներն են. սաստիկ շոգը ստիպել էր բնակիչներին տեղափոխուել աւելի բարձր»[3261]: Խնդրո առթիվ Քաջբերունին էլ հաղորդում է. «Նոր կամ Մեծ Բադան Լըղարակի բարձրութեան վերայ կազմուել է մօտ երկու դար առաջ, ըստ որում բնակիչները բազմանալով թւով և բարօրութեամբ՝ չէին կարող զետեղուել ձորի հին, սահմանափակ գիւղում, ուստի բնականաբար պէտք է տեղափոխուէին այժմեան յարմար տեղը, որ տարածութեամբ, բարձրադիր հարթութեամբ, աղբիւրների առատութեամբ և այլ առաւելութիւններով աւելի համապատասխանող է»[3262]:

**Կառուցապատում.** 1893 թ. Բադան արդեն նկարագրվել է որպես բազմամարդ և հարուստ գիւղ. «Բադէն կամ Բադա 300 տնից աւելի, մի երիտասարդ քահանայ, անդպրոց, եկեղեցին նոր են շինում. օդը, ջուրը լաւ, հարուստ գիւղ. անտառը մօտ, այգեւէտ. երկաթի հանքատեղ...»[3263]:

Ի դարի սկզբին, մինչև հայ-թուրքական ընդհարումները, Բադայի «...բարգաւաճումն արտայայտւում էր նաև նրա շարէշար՝ խնամքով կանգնեցրած միյարկ և երկյարկանի տներից: Բադայի տների մեծ մասը ռուս գաղթականների տների նման, ծածկուած էր ծղօտով կամ խոտով, ուստի և դիւրավառ նիւթ էին հրդեհուելու և այրուելու: Կային և այլ շինութիւններ, այն է մարագներ, գոմեր, շտեմարաններ, մառաններ և այլն...»[3264]:

**Բնակչություն.** երկրամասի այլ գյուղերի հետ հայաթափվել է 1770-ական թվականներին: ԺԹ դարի սկզբներին գյուղատեղին վերստին շենացրել են «...Ջրաբերդից, Փամբակից և Ղարա-Մուրատ գիւղերից...» փոխադրված հայերը[3265]:

Բադայի ազգատոհմերի ուսումնասիրության առումով ուշագրավ է 1862 թ. արխիվային մի վավերագիր, որտեղ ներկայացված են գյուղի 91 տնատերերի անվանացանկը.

«1. Ղևոնդ Շուշանով:
2. Ս(ա)հակ Մարտիրոսով:
3. Ստեփան Ա(ստուա)ծատուրով:
4. Դավիթ Հաղամով:
5. Յոհանէս Դանէլով:
6. Խաչատուր Սարքիսով:
7. Յարութի(ւն) Պապեով:
8. Գրիգոր Պապով:

3253. “Свод...”, с. 86-87 (հայտնի պատճառով բնակչության թվաքանակը ուռճացված է տրված):
3254. “Кавказский календарь на 1915 г.”, с. 180.
3255. «ԱՍՀ», հ. 1, էջ 509:
3256. «ԺԷԱ», էջ 725-726:
3257. «Անասնապահութեան համար յարմարին տեղերը Բադայում, նոյնպէս և այլ գիւղերում, կոչւում են Բինայ» (**Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, «Արարատ», 1910, էջ 227):
3258. **Абелов Н. А.**, Исследование экономическаго быта государственных крестьян Елисаветпольскаго уезда, Елисаветпольской губернии, Тифлис, 1887, с. 13.
3259. **Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, էջ 227:
3260. «Նոր-Դար», 1889, N 117, էջ 2:
3261. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 322:
3262. **Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, էջ 228-229:
3263. «Արձագանք», 1893, N 44, էջ 2:
3264. **Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, էջ 231:
3265. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 321: Նաև՝ **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 322:

9. Հաղամ Գրիքորով:
10. Յարութի(ւն) Գրիքորով:
11. Սարքիս Գրիքորով:
12. Ըստեփան Աւաքով:
13. Մօսէս Ըստեփանով:
14. Յակոբ Ըստեփանով:
15. Աղաճան Կարտիշով:
16. Յօհանէս Դաղոլով:
17. Պօղոս Գալուստով:
18. Արզ(ո)ւման Տ(է)ր Մկրտիչով:
19. Առուշան Յօհանէսով:
20. Պօղոս Գափրիէլով:
21. Խաչատուր Աբրիով:
22. Սիմօն Մկրտիչով:
23. Պօղոս Առաքելով:
24. Առաքել Ա(ա)հակով:
25. Պատիր Սարգիսով:
26. Առաքել Յարութի(ւն)ով:
27. Յօհանէս Ա(ստուա)ծատուրով:
28. Մարտիրոս Գրիքորով:
29. Յօհանէս Ղուկասով:
30. Յօհանէս Գրիգորով:
31. Յակոբ Աւաքեան:
32. Գրիքոր Ա(ւա)քեան:
33.Պօղոս Արզ(ո)ւմանով:
34. Խաչատուր Սարքիսով:
35. Ծատուր Յարութի(ւն)ով:
36. Յակօբ Յարութ(իւն)ով:
37. Աւաք Դանէլով:
38. Խաչատուր Աւաքով:
39. Սահակ Սարքիսով:
40. Յարութի(ւն) Ա(ստուա)ծատուրով:
41. Յակօբ Ղուկասով:
42. Վարդան Ոսկանով:
43. Մարտիրոս Յարութի(ւն)ով:
44. Դանիէլ Մարքարով:
45. Արզ(ո)ւման Յարութի(ւն)ով:
46. Կարապետ Գրիքուրով:
47. Վարդազար Գալուստով:
48. Աբր(ա)համ Յօհանէսով:
49. Աւաք Սարքիսով:
50. Պապի Սարքիսով:
51. Ղազար Աւէտով:
52. Հէրապէտ Մխիթարով:
53. Պարսէղ Աւետով:
54. Յօհանէս Յարութի(ւն)ով:
55. Ա(ստուա)ծատուր Եղիզարով:
56. Մկրտիչ Խաչատուրով:
57. Պապի Խաչատուրով:
58. Պօղոս Կարտիշով:
59. Սարքիս Ղուկասով:
60. Յօհանէս Ըստեփանով:
61. Գրիքոր Յուանով:
62. Յարութի(ւն) Սարքիսով:
63. Ստէփան Յօսէփով:
64. Յօսէփ Ապրէսով:
65. Յարու(թիւն) Ապրէսով:
66. Մակի Յօհանէսով:
67. Մարտիրոս Մարտիսով:
68. Մարքար Յարութի(ւն)ով:
69. Յօհանէս Մարքարով:
70. Աղաճան Մարքարով:
71. Յակօբ Աւէտով:
72. Ոսկան Յոսէփով:
73. Գրիքոր Տ(է)ր Վարդանով:
74. Յօհանէս Տ(է)ր Վարդանով:
75. Գափրիէլ Տ(է)ր Վարդ(ան)ով:
76. Յարութի(ւն) Աղասիով:
77. Վարդազար Նիկ(ո)ղայոսով:
78. Յակօբ Ուանով:
79. Կարապետ Ղուկասով:
80. Յարութի(ւն) Ղուկասով:
81. Պետրոս Խաչատուրով:
82. Աքայ Խաչատուրով:
83. Գրիքոր Խաչատուրով:
84. Սարքիս Գրիքորով:
85. Գրիքոր Աւալով:
86. Ակօյ Աւալով:
87. Յօհանէս Յարութի(ւն)ով:
88. Գալուստ Մէճլումով:
89. Խաչատուր Աւաքեան:
90. Սարգիս Ա(ա)հակով:
91. Յարութի(ւն) Ազրիով»[3266]:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներն առկա են ԺԹ դարի 40-ական թվականներից: Որոշ տարիներին բնակչության թվաքանակի նվազումներ են արձանագրվել՝ արտագաղթերի, համաճարակների և հայ-թուրքական ընդհարումների հետ կապված:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալները.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1840[3267] | 34 | 102 | 92 | 194 |
| 1841[3268] | | 160 | 117 | 277 |
| 1842[3269] | | 150 | 170 | 320 |
| 1844[3270] | | 165 | 123 | 288 |
| 1849[3271] | | 306 | 259 | 565 |
| 1851[3272] | 90 | 303 | 255 | 558 |
| 1853[3273] | | 340 | 256 | 596 |
| 1857[3274] | | 315 | 248 | 563 |
| 1862[3275] | 90 | | | |
| 1866[3276] | 90 | | | |
| 1874[3277] | | | | 1242 |
| 1879[3278] | | 647 | 510 | 1157 |
| 1882[3279] | | 472 | 408 | 880 |
| 1883[3280] | | 508 | 438 | 946 |

3266. Նույն տեղում, գ. 3841, թ. 196-197:
3267. Նույն տեղում:
3268. Նույն տեղում, գ. 3800, թ. 7:
3269. Նույն տեղում, գ. 3802, թ. 57-58:
3270. Նույն տեղում, գ. 3805, թ. 84-85:
3271. Նույն տեղում, գ. 3809, թ. 73-74:
3272. Նույն տեղում, գ. 3818, թ. 75-76:
3273. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 52:
3274. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 102-103:
3275. Նույն տեղում, գ. 3830, թ. 292:
3276. Նույն տեղում, գ. 3848, թ. 86:
3277. “Кавказский календарь на 1886 г.”, с. 124.
3278. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3870, թ. 90:
3279. Նույն տեղում, գ. 3874, թ. 129-130:
3280. Նույն տեղում, գ. 3875, թ. 3:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1885[3281] | | 605 | 499 | 1104 |
| 1886[3282] | 270 | 634 | 439 | 1073 |
| 1887[3283] | | 705 | 623 | 1328 |
| 1888[3284] | | 721 | 641 | 1362 |
| 1889[3285] | | 743 | 668 | 1411 |
| 1890[3286] | | 765 | 692 | 1457 |
| 1891[3287] | | 748 | 735 | 1483 |
| 1992[3288] | | 713 | 739 | 1452 |
| 1893[3289] | | 740 | 749 | 1489 |
| 1895[3290] | 245 | 735 | 713 | 1448 |
| 1897[3291] | | 908 | 764 | 1672 |
| 1898[3292] | | 959 | 731 | 1690 |
| 1899[3293] | | 1009 | 771 | 1780 |
| 1900[3294] | | 1032 | 722 | 1754 |
| 1901[3295] | | 1087 | 760 | 1847 |
| 1902[3296] | | 1017 | 785 | 1802 |
| 1905[3297] | 300 | 1388 | 1225 | 2713 |
| 1906[3298] | | 827 | 698 | 1525 |
| 1907[3299] | | | | 1524 |
| 1908[3300] | | | | 1965 |
| 1910[3301] | | 1980 | 1420 | 3400 |
| 1914[3302] | | | | 2111 |
| 1917[3303] | 400 | | | 2518 |
| 1976[3304] | | | | 1526 |
| 1988[3305] | | | | 1200 |

**Տնտեսություն, արհեստներ.** բնակիչների գլխավոր զբաղմունքներից էին անասնապահությունը, հողագործությունը, գինեգործությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը:

1890 թ. ականատեսը, խոսելով բաղացիների տնտեսական վիճակի մասին, գրել է. «Վարելահողերը գտնվում են գեղի արևելք՝ **Դաշբուլաղի** կողմ, ձմեռվա գոմերը նույնպես **Դաշբուլաղի** վրա է: Ապրանք պահելու տեղ չունենալով ապրանք էլ այնքան չունեն: Սար գնում են **Դաբաղի** և **Այվազի** ուրը: Ղղարակցիք ղժգոհ էին իրանց տնտեսական վիճակից, վարելահողերը դամիա են, աշունքը ցորեն են ցանում, գարունքը՝ գարի, այգիներ ունեն ամեն մինը մի կտոր, պտուղ-մտուղ լինում են, տարուվերջն էլ մի քանի թունգի զկռաջուր է լինում, ջեջից դաղջուր (օղի) են մզում, լավ վատ կառավարվում են մինչև տարին բոլորում է: Հողը արքունական է, եկամուտը քիչ, ճարահատած են, մի մատի վրա դմբղմբում են, ուրիշ հարմար գեղատեղ չեն գտնում, բնակիչների մի մասը ուզում էր ցրվի:

30-40 տարի առաջ հողի կողմից ղրուքիւնները տանելի է եղել: Նրանք եայլաղ (սար) էին գնում ապրանքներով այն տեղերը, որ հիմի Զուլղադարովներն[3306] են սեփականել: Խորամանկ բէկը ծերերի կաշառելով, գլուխները եղելով, նրանց վկա է դուրս բերել ու երդումի ուժով սեփականել ահագին տարածութիւն՝ լեռներ, դաշտեր, գեղատեղեր, աղբիւրներ, գետեր: -Իմ օգտին խոսեցեք, ասել է խաբեբա բէկը, ձեզ գետիններ կտամ, եթէ ... օգտին խոսեք ձեր գրպանն ինչ կընկնի: Այդպիսի հայ ծերերը իրանց հետագաների հացը կտրել են, նրանց ազռավների պէս հանել սարերի գագաթները, իսկ ծաղկավետ մարգագետինները, արգավանդ դաշտերը թողել անօրենների ձեռին»[3307]:

Այնուհետև «Գեղում կան փողավորներ՝ 2000-3000 ռ. ձեռք հասնողներ: Դարբնի խանութ 4 հատ, ներկարարի՝ 4, մանրավաճառի՝ 3, իսկ խմիչքի՝ ոչ մին: Գեղն աղքատ է, առևտուր չկա, ոստայնակութիւնը գործադրում են, գործում են բրդի թելից շալեր՝ հորագործ, տափագործ, կաշից գոտիկ, մանում են գուլբացու, պաճճացու և այլն»[3308]:

Ի դարի սկզբին գյուղում արդեն գործում էր «...մանրավաճառ 5 խանութ, ճոթեղէնի 8 խանութ, մսավաճառ-կապալառու մի խանութ...»[3309]:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** հավատ ընծայելով հարևան Քեշիշքյանդ գյուղի ազդեցիկ Ալլահեար բեկ Զուլղադարովի՝ իրենց հովանավորելու և պաշտպանելու կեղծ խոստումներին՝ հայերը լրջորեն չեն պատրաստվում թուրքերի հարձակմանը դիմագրավելու համար. «Տարաբաղդաբար Բաղայի պատրաստութիւնը կիսատ էր, չկար միութիւն, չկար մի զօրեղ անձ, որ կարող

3281. Նույն տեղում, գ. 3877, թ. 8:
3282. Նույն տեղում, գ. 3879, թ. 126, նաև՝ «Արձագանք», 1888, N 7, էջ 87: Այլ տեղեկագիր նույն թվականի համար ցույց է տալիս 247 տուն՝ 1720 շունչ (985 ար., 735 իգ.): Տես՝ "Свод...", с. 76-77. Նաև՝ "Кавказский календарь на 1894 г.", с. 155:
3283. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 31:
3284. Նույն տեղում, գ. 3882, թ. 135:
3285. Նույն տեղում, գ. 3884, թ. 12: Մեկ այլ տվյալով՝ ունեցել է 180 տուն («Նոր-Դար», 1889, N 117, էջ 2):
3286. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 154:
3287. Նույն տեղում, գ. 3889, թ. 153:
3288. Նույն տեղում, գ. 3891, թ. 125:
3289. Նույն տեղում, գ. 3895, թ. 13-14:
3290. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 321:
3291. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 151-152:
3292. Նույն տեղում, գ. 3897, թ. 174:
3293. Նույն տեղում, գ. 3903, թ. 22:
3294. Նույն տեղում, գ. 3905, թ. 14:
3295. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, թ. 145-146:
3296. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 28-29:
3297. **Քաջբերունի,** Բաղա գիւղի աւերումը, էջ 231-232:
3298. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 75:
3299. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
3300. "Кавказский календарь на 1910 г.", с. 194. Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն (ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12)՝ ունեցել է 350 տուն, 3405 բնակիչ (1980 ար., 1425 իգ.):
3301. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 60-61:
3302. "Кавказский календарь на 1915 г.", с. 95.
3303. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 167:
3304. «ԱԱՀ», հ. 1, էջ 535:
3305. Ըստ գյուղխորհրդի տվյալների:

3306. 1890 թ. կալվածատեր Զուլղադարովների մասին նշվել է. «Զուլղադարովներն այժմ 4 եղբայրներ են և ահագին գերդաստաններ են կազմում: Ավագը՝ Ալլահեար բէկն է, դրանց հայրը կոչվում էր Մամադ բէկ, սրա հայրը՝ Մամարզա բէկ, որի հայրը կոչվում էր Ալլահեար սուլթան» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր 1, VI-11, թ. 5):
3307. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր 1, VI-11, թ. 3-5:
3308. Նույն տեղում, թ. 3-4:
3309. **Քաջբերունի**, Բաղա գիւղի աւերումը, էջ 233:



***ԲԱԴԱ (ԼՂԱՐԱԿ). գյուղի տեսքը արևմուտքից***

լինէր գործի գլուխ կանգնելով միացնել բոլոր ուժերն ու խիստ կարգի տակ դնեն բոլոր հասարակութիւնը... Այս լարուած դրութիւնը տեսնելով երիտասարդները, որոնցից ոմանք անձամբ տեսել էին Բագուի փետրվարեան և օգոստոսեան սարսափները, հետևելով չարդախլուեցոց օրինակին՝ պատրաստ լինելը անհրաժեշտ էին համարում: Բայց Զուլղատարով Ալլահեար բէգը Բադացիներին հանգստացնում էր ասելով. „Բադան իմս է, Բադան ձեռքիցս չեմ գցիլ, Բադացիներն իմ հարազատներն են, օտար մարդ չի վստահանալ մօտենալ նրան...„»[3310]:

Գյուղի բնակիչներին անգամ չեն սթափեցնում նույնիսկ նոյեմբերի 18-ին Զակամ կայարանում հայերի կոտորածի բոթը, և սպանդից մազապուրծ ականատեսների գյուղ հասնելը: Իսկ երբ հաջորդ օրը՝ նոյեմբերի 19-ին, հրաձգություններ են լսվում Բադայի շրջակայքում, և «բինաների» բնակչությունը ունեցվածքով ու անասուններով տեղափոխվեց գյուղ, «...այդ րոպէին գիւղը ներկայացնում էր մի աննկարագրելի, սարսափահար տեսարան... լաց, կոծ, աղաղակ, ձայներ, իրարանցումը աննկարագրելի էր. ոչ ոք չգիտեր թէ ինչ՞ անի, ուր գնայ, ինչ ասի, խոսք չէին գտնում խօսելու... Ինքնապաշտպանութեան գործն իսպառ մոռացուեց»[3311]: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ «Բադացիք դրսից զէնք կամ այլ պատերազմական մթերք ներս բերել անկարող էին. որովհետև Բադան շրջապատուած է բազմաթիւ թուրք գիւղերով... Իսկ շրջապատի թուրք ազգաբնակութիւնը խիստ աչալրջութեամբ վերահսկում էր՝ որ դրսից զէնք չմտնի Բադայ գիւղը»[3312]:

Նոյեմբերի 20-23-ին շրջափակված Բադան զուր փորձեր էր անում օգնություն ստանալ հայկական մյուս գյուղերից: Նոյեմբերի 23-ին թուրքերը հարձակվում են գյուղի վրա և, օգտվելով հայերի անկազմակերպ դիմադրությունից, երեկոյան արդեն ներխուժում են գյուղ. «...Առաջին նուագ հրդեհեցին շինութիւնները... այդ չարագուշակ րոպէից վերջացաւ արդէն Բադայի գոյութիւնը. կորաւ մի հարուստ գիւղ. ցրուեց նրա տնտեսութիւնը. մարդկային արիւնով ծածկուեց գետինը և սուգի ձայնով լցուեց մթնոլորտը: Երկու կողմից էլ մարդիկ գնդակահար թաւալում էին գետին... Գլխակորուստ փախուստ սկսուեց այգիների կողմը»[3313]:

Բադայի ավերումը, թալանն ու կոտորածը շարունակվում են երեք օր: Թուրքերը չեն սահմանափակվում միայն գյուղով. հարձակվում են շրջակա ձորերում ու այրերում թաքնված բնակիչների վրա, անխնա կոտորում անզեն բնակչությանը: Նոյեմբերի 25-ին՝ Բադայի ավերման երրորդ օրը, «...գիւ-

3310. Նույն տեղում, էջ 333:

3311. Նույն տեղում, էջ 422: Հարձակման նախօրեին շատ բադացիներ իրենց իրեղենը թաքցրել էին գյուղի գերեզմանոցում, ինչն էլ պատճառ դարձավ վերջինիս ավերմանը գանձախույզ թուրքերի կողմից (նույն տեղում, էջ 1170):

3312. Նույն տեղում, էջ 335:

3313. Նույն տեղում, էջ 655-656:

ղում այլևս ոչ մի հայ չկար: Ամբողջ գիւղը զրկուած իւր հարազատ բնակիչներից, մատնուել էր հրոսակների խմբերին, որոնք տէր էին դարձել հայերի դիզած հարստութեանը և առանց քաշուելու, առանց երկիւղի թէ հայերի և թէ բարեխնամ կառավարութեան տեղական իշխանութիւնների կողմից, կրում տանում էին իբրև սեպհականութիւն հարուստ գիւղի ունեցածը: Նոր տէրերն ամենևին չէին շտապում, հանգստութեամբ էին գործ տեսնում և կրում էին ինչքը ընտրութեամբ, այսինքին նախ թեթև բաները, ապա քիչ ծանրերը (ցորեն ևլն) և վերջն արդէն շինութեան փայտեղէն մասը, դռներ, գերաններ, տախտակներ և այլն: Եւ այս հանգիստ աւարը շարունակուեց երեք ամիս»[3314]: Եղերական այդ դեպքերի հետևանքով «...գիւղը հիմնայատակ է եղած: Մինչև անգամ ամբողջ պատեր էլ չեն մնացել, որ կարելի լինէր մի քանի նորոգութիւններով յարմարեցնել բնակութեան համար: Գիւղացիները պետք է հիմնովին նորից շինեն իրանց գիւղը...»[3315]: Զոհվել է 116 մարդ, ընդ որում երեք գերդաստան (Առաքել Ավագյանցի, Սարիբեկ Նիկողոսյանցի և Գրիգոր Սարգսյանցի) իսպառ ոչնչացել է[3316]:

Եղեռնից մազապուրծ 277 տուն՝ 1664 բաղացի ապաստան են գտնում Բանանց, Բարսում, Գանձակ (քաղաքում և կայարանում), Գառնակեր, Խաչակապ, Չարդախլու, Զագիր և Փիբ հայկական բնակավայրերում[3317]:

Ղազախի գավառ գաղթած բաղացիները բնակություն են հաստատում Վերին Աղդան, Քարվանսարա, Խաչքառակ, Թալա, Խավարաձոր և այլ գյուղերում[3318]:

Մի քանի հարյուր հոգի 1906 թ. հունվարին հասնում են Թիֆլիս և հաստատվում Սոլոլակում ու Հավլաբարում:

**Օգնություն.** 1905 թ. դեկտեմբերի 28-ին մամուլում գրվել է, որ Քարվանսարայում ապաստանած բաղացիներին «Անհրաժեշտ է բժշկական և նիւթական օգնութիւն հասցնել»[3319]:

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը (1892-1907), որը 1905 թ. դեկտեմբերի սկզբին գտնվում էր Թիֆլիսում, Բաղայի քահանա Մեսրոպ Տեր-Ստեփանոսյանցից տեղեկանալով գյուղի ավերման մասին, պատվիրում է շուտափույթ հագուստ, անկողին և անհրաժեշտ այլ պարագաներ ուղարկել աղետյալներին, իսկ Թիֆլիսի կենտրոնական նպաստամատույց հանձնաժողովը հատկացնում է 5000 ռուբլի՝ ալյուր գնելու համար[3320]:

3314. Նույն տեղում, էջ 731:

3315. «Մշակ», 1906, N 80, 16 ապրիլի, էջ 1:

3316. **Քաջբերունի**, Բաղա գիւղի աւերումը, էջ 732: Համաձայն մեկ այլ տեղեկության՝ զոհվել էր 118 բաղացի (**Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 349):

3317. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 859-860:

3318. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 212:

3319. «Մշակ», 1906, N 1, էջ 1:

3320. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 734:

Գյուղի կրած նյութական վնասները հաշվելու նպատակով կառավարության կարգադրությամբ տեղական հաշտարար միջնորդ Իվան Պետրովը 1906 թ. ապրիլի 10-25-ը 150 հայ և թուրք բնակիչների ներկայությամբ ու մասնակցությամբ կազմում է գյուղի ու նրա առանձին ծխերի կորուստների ցուցակը: Վնասի ընդհանուր գումարը հաշվվում էր 2.002.300 ռուբլի[3321]:

**Գյուղի վերաշինությունը.** 1906 թ. հայրենի գյուղ վերադարձած բաղացիները ձեռնամուխ են լինում հիմնավեր գյուղի վերաշինության գործին. ավերվել էին բնակելի, տնտեսական և այլ շինությունները, այդ թվում՝ գյուղի ս. Աստվածածին եկեղեցին: Գյուղի վերաշինության ընթացքի մասին արխիվային մի վավերագիր հաղորդում է. «...անցեալ 1905 թ. թէ ինչ արկածների և աւերման հանդիպեց մեր Բաղա գիւղը, որ ժողովուրդը թափառական լինելով, նորից վերադարձաւ տէրութեան հրամանով վերաբնակւել, իւր հայրենի տնակները նորոգել և ահա չորս տարի է չարքաշ կեանքով աշխատում ենք մեր աւերակ տներն նորոգելու առանց արտաքին նիւթական միջոցների օգնութեան»[3322]:

**Դպրոց.** մեծաքանակ հայ բնակչություն ունեցող Բաղան մինչև Ի դարի սկիզբը դպրոց չուներ. «Չնայած որ ահագին համայնք են, բայց անգրասեր լինելով ոչ գեղում ուսումնարան ունեն և ոչ այլ տեղ կարդացող մանուկներ: Կոպիտ, անտաշ են, ինչպես իրանց քարերն ու ձորերը: Գեղի երեցը կամ այլ գրագետ ոք մին չէր փորձել մի քանի երեխա ժողովել գրել-կարդալ սովորցնել»[3323]:

Հայտնի է, որ Ի դարասկզբին գյուղում գործում էր հասարակության միջոցներով պահվող միդասյա կառավարչական դպրոց[3324]: 1902 թ. հոկտեմբերի 24-ից մինչև 1915 թ. մայիսի 20-ը դպրոցի կրոնի և հայոց լեզվի ուսուցիչն էր Գրիգոր քահանա Տեր Հովակիմյան Տեր-Հարությունյանցը[3325]:

Խորհրդային իշխանության տարիներին գյուղում գործում էր միջնակարգ դպրոց:

**Եկեղեցի.** հիմնադրման ստույգ տարեթվի վերաբերյալ տեղեկություններ չունենք, սակայն այն որպես փայտաշեն կառույց, հիշվում է 1844 թ-ից[3326]:

3321. Նույն տեղում, 1169-1170: Քաջբերունու կարծիքով, ցարական կառավարությանը ներկայացված գումարի չափը «կարող է միայն կէսը համարուել այն ահագին վնասների, որոնց ենթարկուեց թշուառ Բաղան իւր աւերման օրերում» (Նույն տեղում, էջ 232):

3322. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3446:

3323. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր 1, VI-11, թ. 4: Նաև՝ «Արձագանք», 1893, N 44, էջ 2: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 322: Ի դեպ, անհիմն է այն տեղեկությունը, ըստ որի՝ Բաղան «...ուներ հայկական դպրոց, որը գործում էր 1880-ական թվականներից» («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 1, Երևան, 1986, էջ 539):

3324. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 233:

3325. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 80-81:

3326. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 73:



***ԲԱՂԱ (ԼՂԱՐԱԿ). դպրոցի հին շենքը և խորհրդային տարիներին քանդած եկեղեցու բեկորները նոր դպրոցի պատերի մեջ***

Հայտնի է, որ 1862 թ. սեպտեմբերի 20-ին եկեղեցին կողոպտվել է[3327]:

3327. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4350, թ.1:

Բաղայի պաշտամունքային շինություններին անդրադարձած ԺԹ դարավերջի լրատվական մի հրապարակման մեջ նշվել է, որ գյուղը «...ունի երկու եկեղեցի՝ մէկը հին, իսկ միւսը նոր, հինը հիմնուած է 1867 թուին, իսկ նորը հիմնուած 1883 թուին...»[3328]:

1890 թ. գյուղ այցելած ականատեսը, անդրադառնալով հին եկեղեցուն, գրել է. «Հին եկեղեցին անփառունակ է, մուտքը արևմուտքից ու խիստ անձուկ, ներսը՝ մութ, պատերը՝ խոնավ: Մէջտեղը 8 սիւն կա, իսկ պատերի տակին նեցուկ տվածներն ավելի շատ են: Ժամի համեմատ էլ իրա սեղանի զարդը: Ասին՝ մի ձեռագիր ավետարան կա. հիվանդի համար տարել էին, չաջողվեց տեսնել իմանալ հնութիւնը: Դըրսև մըղակի մոտ ընկած էր քանդակած շիրիմը Աբրահամ երեցի, 1858 թ. մեռած»[3329]:

1870-ական թվականների վերջերին «...ժողովրդի մէջ ցանկութիւն է յայտնվում մի քարաշէն վայելուչ եկեղեցի ունենալու. պայմանաւորվում են մի յոյնի հետ, որ օգուտ քաղելով ժողովրդի տգիտութիւնից անխղճաբար է վերաբերվում իւր պարտաւորութեանը. եկեղեցին շինվում է, յոյնը 8000 րուբլին առնում և գնում է և մի քանի տարի չանցած՝ շինուածը փլչում է»[3330]:

1890 թ. եկեղեցին Սարգիս Քամալյանին ներկայանում է հետևյալ կերպ. «Նորաշեն եկեղեցին Ձորաբաշի պռնկին ավերակ դրութեան մէջ գլխաբաց նայում է երկնքին ու նզովում խարդախ հույն վարպետների արծաթասիրութիւնը և լղարակցոց տխմարութիւնը: 7 տարի է ամբողջ ծածկը փլած ու անձեռնմխելի կա, բարեբաղտաբար ոք մին տակով չի արել»[3331]: Որոշ ժամանակ անց հավանաբար 1890-ական թվականների վերջին, «...հասարակութիւնն ստիպուած եղաւ փայտէ կարկատանով հինը յարմարեցնել ժամասացութեան»[3332]: 1905 թ. նոյեմբերյան արհավիրքի օրերին «Թաթար հրոսակները կոտրատել են խաչկալը, քանդել են բեմը, աւազանը (գանձ գտնելու), տարել են զանգերը, դռները, պատուհանները, անօթեղէնները, վարագոյրը, քշոցները, բուրվառները, մինչև անգամ գրեանքը»[3333]: Ընդ որում, ոչնչացվել էր նաև եկեղեցում պահվող Հովհաննես քահանայի ձեռքով 1711 թ. ստեղծված ձեռագիրը:

1906 թ. քահանա Մեսրոպ Տեր-Ստեփանոսյանցը կարողացել էր նվիրատվությունների շնորհիվ Բաքվում ձեռք բերել եկեղեցական որոշ իրեր:

3328. «Նոր-Դար», 1889, N 117, էջ 2:
3329. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 4:
3330. «Արձագանք», 1888, N 7, էջ 87: Սբ. Աստվածածին անվամբ այս եկեղեցին հայտնի է ոչ ուշ, քան 1882 թվականը (ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 129-130):
3331. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 4: Ի դեպ, 1888 թ. ժամերգությունը դեռևս շարունակվում էր կատարվել արդեն կիսախարխուլ շինության մեջ («Արձագանք», 1888, N 7, էջ 87):
3332. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 230:
3333. Նույն տեղում:

Այսպես՝ «Լիւդովիկոս Սարգսեանը մի արծաթեայ ոսկեզօծ սկիհ, Տիկին Մայիլեանը նուիրեց սուրբ Աստուածածնի մեծադիր պատկեր, Յակոբ Մանգասարեանը – խաչվառ, Մկրտիչ Քալանթարեանն ու իր եղբայրը – Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մեծադիր պատկեր, Փիրադեանցը – մի բուրվառ, Բագուայ հայոց եկեղեցին – երեք հատ շուրջառ, երեք փորուար...»[3334]:

Կառույցը, սակայն, շարունակում էր մնալ խարխուլ ու վթարային վիճակում: Սբ. Աստվածածին եկեղեցու նորոգման խնդրով բաղացիները ի վիճակի եղան զբաղվել միայն 1911 թ. սեպտեմբերին, երբ «...համախօսական վճռով Բաղայի հայ համայնքը որոշեց վերանորոգել սբ Ա(ստուա)ծածին եկեղեցին... ի նկատի ունենալով, որ ներկայումս եկեղեցում անկարելի է անվտանգ օրինակատարութիւններ կատարել, բայց և հնարաւորութիւն չունենալով կողպել եկեղեցին ու ժողովուրդին թողնել առանց հոգևոր մխիթարութեան, մենք բերել ենք տուել և շարունակում ենք բերել տալ հարկաւոր նիւթեղեններր, գրաւոր պայման ենք կապել վարպետների հետ, որոնք և սկսել են իրանց նախնական աշխատանքները: Համաձայն այդ պայմանի բոլորովին նոր պատեր պտի կանգնեցուի վաքսուն խորանարդ սաժեն, իւրաքանչիւր սաժէն 18 ռ., սիւնների նորոգութիւնը, սեղանի քարը և խորաններինը. փայտեղէն, կտուրը, ծածկերը ստրափիլ և կրամիտ, հաշուած բոլորի ծախսը մօտաւորապէս հասնում է 2500-ից մինչեւ 3000 ռ....»[3335]: Այնուհետև դիմում են հոգևոր իշխանություններին՝ անհրաժեշտ գումարը ձեռք բերելու համար հանգանակություն կազմակերպելու թույլտվության խնդրանքով[3336]: Չստանալով պատասխան՝ բաղացիները 1912 թ. հունիսին նույն խնդրանքով դիմում են Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին (1911-1930). «...Այժմ հասարակութեանս ուշադրութիւնն դարձել է Սուրբ եկեղեցու նորոգութեան վերայ: Սակայն մեր ուժից բարձր է եկեղեցու հոյակապ շենքը իր միջոցներով կառուցանել, որովհետև աղքատացած մեր հասարակութիւնը դեռևս տառապում է նիւթականապէս: Մենք եկեղեցին վերանորոգելու համար նախահաշիւ կազմելով, բացի շինութեան նիւթերն մեր կողմից մատակարարելն, պիտոյ է երեք հազար րուբլի գումար, որի համար հարկ է բարերար անձանց դիմելու, և մեր մէջ չկան այն հեղինակաւոր մարդիկ, որ կարողանան բարերարներ գտնելու ու հասնին ցանկալի նպատակին: Այս մասին երկար խորհրդակցելով մեր համայնքը որոշեց դիմել Ձերդ Վեհափառութեան հայրական օգնութեան ապաւինելը և ամենախոնարհաբար խնդրելով տնօրինել, հրամայելով բարեգործական ընկերութեան նպաստել ու տալ դրամական օգնութիւն եկեղեցւոյ վերանոր(ո)գութեան համար, կամ թէ նպաստամատոյց յանձնաժողովի մօտ արկածեալների համար գանձուած գումարից տալ մի որոշ գումար՝ շինելու Բաղա Աստուծոյ տուն-Ս(ուր)բ եկեղեցի»[3337]: Գործընթացը ձգձգվելու պատճառով՝ 1913 թ. օգոստոսի 26-ին գյուղի ծխատեր Մեսրոպ և Գրիգոր քահանաները ճարահատ վերստին դիմում են Գանձակի հոգևոր ատյանին՝ նշելով. «...Բաղա գիւղի ս. Ա(ստ-վա)ծածին եկեղեցին, որ շատ հնուց փայտաշէն շինուած է, այժմս մի կողմից փլվում է, փայտը հնուց լինելով արդէն փտել է և թափվում է, երկիւղալի է նորա մէջ օրինականութիւն անել, վասնորոյ խոնարհաբար խնդրում ենք հոգևոր ատենից անել տնօրէնութիւն, կամ կողբել բոլորովին»[3338]: Ցավոք, այս անգամ էլ գործը տեղից չի շարժվում: Եվ ահա հոգևոր իշխանությունների անտարբեր վերաբերմունքից հուսալքված բաղացիների մոտ ի հայտ է գալիս հայ-առաքելական եկեղեցուց հեռանալու միտում: Նկատի ունենալով այդ ցավալի փաստը, սակայն ոչ մի քայլ չձեռնարկելով եկեղեցու վերանորոգության ուղղությամբ՝ հոգևոր իշխանությունները մերժում են եկեղեցին փակելու առաջարկը՝ նշելով. «Հոգևոր կառավարութիւնս դժուարանում է ասել, թէ եկեղեցու վտանգաւոր դրութիւնը ի նկատի առնելով հանդերձ որքան յարմար է կողպել այն, ինչպէս այդ քահանաներն են ասում, աչքի առաջ ունենալով, որ, 1. դաւանափոխութիւն այս գիւղի անդամների մէջ ծնունդ առաւ այս ամառ, որ, 2. մերձակայքում այլ հայ եկեղեցի չկայ»[3339]: Միայն 1914 թ. Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետի աջակցությամբ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Եփրեմ եպիսկոպոսից ձեռք է բերվում հանգանակության թույլտվություն[3340]: Եկեղեցու վերանորոգման հետագա ընթացքի մասին այլ տվյալներ մեզ հայտնի չեն:

Սբ. Աստվածածին եկեղեցին փակվել է 1928 թ.[3341]:

Եկեղեցին ունեցել է 7 տող շինարարական արձանագրություն, որը 1985 թ. հայտնաբերեցինք դպրոցի նորակառույց շենքի պատին.

Արձանագրություն.

*Ի 1883 ամի / շինեցաւ ս(ուր)բ Ա(ս)տուածածին եկե/ղեցիս ի ժողովր/դէնէ Բաղէր գեղջ: / Գրեց տիրացու Վարդ/ան տ(է)ր Աբրահամե(ա)նց:*

Հրատ. **Ս. Կարապետյան,** Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 25. III.1995, էջ 6:

**Քահանա.** գյուղի ծխատեր քահանաներից հիշվում են 1851 թ. *Աբրահամ Տեր-Հարությունյանցը*[3342], 1862-ին՝ *Մկրտիչ Տեր-Աբրահամյանցը*[3343]:

3334. Նույն տեղում:
3335. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3446, նաև՝ ֆ. 35, ց. 1, գ. 705, թ. 62:
3336. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3446:

3337. Նույն տեղում:
3338. Նույն տեղում:
3339. Նույն տեղում:
3340. «Մշակ», 1914, N 159, էջ 3: Տե՛ս նաև՝ «Արարատ», 1912, էջ 395:
3341. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
3342. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 52:
3343. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3841, թ. 197:

*Մեսրոպ (աշխարհական անունը՝ Մկրտիչ) Մովսիսյան Տեր-Ստեփաննոսյանց.* 1890 թ. ապրիլի 4-ին ձեռնադրվել է քահանա և գյուղին հովվել առնվազն մինչև 1923 թ.[3344]: Եղել է նաև Հուսկան նահատակ վանքի վերատեսուչը[3345]: Ի դեպ, 1906 թ. հուլիսին բաղացիները դիմել էին հոգևոր իշխանություններին, «...որով խնդրէ հասարակութիւնն հրաժարեցուցանել ի հովուութենէ ինքեանց զՄեսրովբ քահանայն Ստեփաննոսեանց ի պատճառս զուրկ լինելոյ նոցա ի միջոցաց ունելոյ և պահելոյ զերիս ծխական քահանայս, կրելով զզրկանս ի թրքական ընդհարմանց և աւերածութեանց, որոնց ենթարկեալ են յանցելում 1905 ամի և այսր աղագաւ ցրուելոց միոյ մասին գիւղականաց ի զանազան գիւղս և քաղաքս»[3346]: Գյուղի հասարակության խնդրանքը բավարարվել է, քանի որ նույն թվականի դեկտեմբերին կազմված մի վավերագրում Բաղայի ծխատեր քահանաների թիվը ցույց է տրված մեկ անձ, այն է՝ Գրիգոր տեր-Աբրահամյանցը, իսկ Մեսրոպ քահանան պետք է հոգար Շամշադինի Թաթլու (այժմ՝ Պառավաքար) գյուղի հասարակության հոգևոր պետքերը[3347]: Սակայն վերջինս հրաժարվել էր՝ պատճառաբանելով, թե «...անհնարին է ինձ անփորձ հասնել յիշեալ գիւղ՝ Թաթլու, վասն զի շրջապատուած է նա թիւրքական գիւղերով, որ հասարակութիւնն ու բէգէրն իմ ոխերիմ թշնամիներն են...»[3348]:

*Գրիգոր Տեր Հովակիմյան Տեր-Հարությունյանց.* 1897 թ-ից առնվազն մինչև 1905 թ. քահանայագործել է Մեսրոպ Տեր-Ստեփաննոսյանցի հետ: Հայոց լեզու և կրոն է դասավանդել Բաղայի պետական դպրոցում: Ունեցել է 9 երեխա[3349]:

*Գրիգոր Տեր-Աբրահամյանց.* Ի դարասկզբին քահանայագործել է Մեսրոպ Տեր-Ստեփաննոսյանցի և Ներսես Տեր-Աբրահամյանցի հետ[3350]: Ի դեպ, համագյուղացիները մեծ հիացմունքով են խոսել Գրիգոր Տեր-Աբրահամյանցի ազգանվեր գործունեության վերաբերյալ. «...1905 ամի նոյեմբեր ամսի հայոց և թուրքաց ընդհարման ժամանակ նամանաւանդ մեր Բաղայ գիւղի կռվի ժամանակ շատ մեծ դեր խաղաց մեր գիւղի ծխատեր Գրիգոր քահանայ Տեր-Աբրահամեանցը, եթէ սորան պէս մի քանի կռվող ոյժ էինք ունեցել, մեր գիւղը չէր քայքայվիլ, մի քանի ամսից առաջ յիշեալ քահանայի քաջութեամբ մի քիչ կարողացանք զինվել...: Բայց տարաբախտաբար



*ԲԱՂԱ (ԼՂԱՐԱԿ). խաչքար (1680 թ.)*

Գրիգոր քահանայի ջանքը ու չարչարանքը, որ քաջ կռուողներից մեկն էր, զուր կորաւ, որովհետև ընկեր և օգնող չունեւր, բացի այն, որ չարչարուեցաւ, նրանից յետոյ, երբ մեր Բաղայ գիւղը աւերումից, որ թշվառ ժողովուրդներս մեծ մասամբ ճարահատեալ դէպի թշնամու դուռն էինք փախել շնորհիւ Գրիգոր քահանայի և նոցա առերես շողոքորթութեամբ թուրքերին, ազատեց մոտ 800 հոգի և ճանապարհեց դէպի Շամշադին, իսկ ինքը դարձեալ վերադարձաւ, որ մնացեալ մոլորվածներին հաւաքէ... իւր անձը չխնայեց իւր հոտից, զանազան տեղերից ազատեց թուրքաց ձեռքից գերիներ մօտ 62 հոգի...»[3351]: 1906 թ. գյուղ վերադարձած բաղացիների թվում էր նաև Գրիգոր Տեր-Աբրահամյանցը, որը «...յօրէ փոխադրութեան ծխոց իւրոց յաւերակսն իւրեանց ինքն անբաժան մնայ ի հօտէն և հովուէ զնոսա միայնակ»[3352]: Նա գյուղին հովվել է նաև 1908 թ.[3353]:

*Ներսես Տեր-Աբրահամյանց.* մինչև հայ-թուրքական ընդհարումները եղել է գյուղի 3 ծխատեր քահանաներից մեկը: Սակայն գյուղի ավերից հետո ապաստանելով Շամշադինի Նորաշեն գյուղում՝ նշանակվում է այդ գյուղի հոգևոր հովիվը[3354]:

**Գերեզմանոցներ.** գյուղի բազմամարդության վկայությունն են տարածքում պահպանված ընդարձակ գերեզմանոցները:

3344. ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 56, թ. 2, նաև՝ ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 79-80: Ի դեպ, 1912 թ. Մեսրոպ քահանան հիշվում է Էջմիածնի վանքին նվիրաբերած մի կարպետի առնչությամբ («Արարատ», 1912, էջ 871):

3345. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 28, նաև՝ ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 79-80:

3346. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 813:

3347. Նույն տեղում:

3348. Նույն տեղում:

3349. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 80-81:

3350. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 308:

3351. Նույն տեղում:

3352. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 813:

3353. Նույն տեղում, գ. 817, թ. 7:

3354. Նույն տեղում, գ. 813:



***ԲԱԴԱ (ԼՂԱՐԱԿ). խաչքար (1680 թ.)՝ թիկունքի 10 տող արձանագրությունը***

Գյուղի հյուսիսարևելյան եզրին՝ գոգավոր բլրի վրա տարածվում է Բադայի հնագույն գերեզմանոցը: Անմշակ սալերից զատ հնավայրում պահպանվել է նաև վաղ միջնադարին բնորոշ մի երկատված քառանիստ խոյակ, որի հակադիր երկու ճակատներին քանդակված են կենաց ծառերով շրջափակված հնառճ, հավասարաթև խաչեր՝ ներառված տերևազարդ շրջագոտիով:

Երկրորդ գերեզմանոցը գտնվում էր գյուղամիջում և հայտնի էր «Գյուլաբի հանգստարան» անվամբ: Դրա վերաբերյալ 1890 թ. ականատես Ս. Քամալյանը նշել է. «Լըղարակ մտնելիս աչքի է ընկնում հանգըստարանը. չորս կողմից բաց լինելով, մի մասով արոտատեղի է գեղի հորթերի և խոզերի համար, ասենք՝ այս երևույթը սովորական է բոլոր հայ գեղերի համար»[3355]:

Տեղում պահպանված մեկ ձիակերպ և բազմաթիվ քանդակազարդ ուղղանկյունաձև տապանաքարերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերեզմանոցում թաղումները սկսվել են ԺԵ դարից: Ամենահին տապանաքարը (1980 թ. արդեն գոյություն չուներ) կերտվել է 1571 (ՌԻ) թվականին. «Ափսոս, որ արձանագրութիւնը եղծուած է: Սակայն քարի ճակատին երեւում է հետևեալ նկարը: Մի կանգնած կին, բաց մազերը մի հիւսով կախուած մէջքի վրայ, օղակներն ականջներում, երկայն շապիկը կոճկած, սրա վրայից կարճ արխալուղը, ոտերին լափչիններ, բազուկներին հագցրած է ապարանջան, ձախ ձեռքը ծալած կրծքի վերայ, իսկ աջը մեկնած դէպի արծաթեայ սափորը»[3356]:

Ստորև ներկայացնում ենք մի շարք արձանագրություններ.

Խաչքար. ունեցել է 177 x 71 սմ չափեր.

*Սուրբ խաչս Գիլաբին և իր կողակցին Պալին, կանգնեցի սուրբ խաչս. ես Բաղդասարս և Միրզէս կազմեցինք սուրբ խաչս թվ. ՌԿԲ (1613):*

Հրատ. **Քաջբերունի,** Բադա գիւղի աւերումը, էջ 231:

Ծանոթ. վիմագիրն առաջինը ընթերցել է Ս. Քամալյանը 1890 թ. (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր 1, VI-11, թ. 5):

Հայտնի է, որ Միրզա կազմողը 1628 թ. մի գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի հին գերեզմանոցում (**Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 175, 195), իսկ Բաղդասար անունով կազմող է հիշվում Աղքիլիսայի (ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ենթաշրջ., Ազատ գ.) 1658 թ. խաչքարի արձանագրության մեջ (նույն տեղում, էջ 178, 196):

Խաչքար. չափերն են՝ 177x106 սմ, թիկունքին (փորագիր, 10 տող), քիվին (փորագիր, 1 տող), միջնամասում (ելնդագիր, 1 տող) և հիմնախաչի հորիզոնական թևերից ցած (ելնդագիր, 5 տող).

Թիկունքին՝

*Շնօրհօք ամ(են)այ/զօրին Ա(ստուծո)յ, ես Նազ/լուխանս եւ որդիք/ս իմ Մէլիք Դռնմ/ազ եւ պ(ա)ր(ո)ն Ղորխմազ, / որդիք [պարոն] [Հ]ախնազ/արին, որդոյ պ(ա)ր(ո)ն Իփա/քին, կա(ն)կն(ե)ցի ս(ուր)բ խ(ա)չս / յ(ի)շ(ա)տ(ա)կ որդոյ իմոյ տ(է)ր / Սերապիոնին:*

Քիվին և միջնամասում՝

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(աւ)ս Սրապիոն ք(ա)հ(ա)նայ)/ին եւ կ(ո)ղ(ա)կցին Խանփարին:*

Հիմնախաչի հորիզոնական թևերից ցած՝

*Թվին / Հա(յ)ոց / ՌՃԻԹ (1680) / էր:*

Հրատ. **Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, էջ 231: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 21.III.1995, էջ 6:

Ծանոթ. վիմագիրն առաջինը ընթերցել է Ս. Քամալյանը, 1890 թ. (ԳԱԹ, **Ս. Քամայանի** ֆ., տետր 1, VI-11, թ. 5-6):

Կանգուն էր մինչև 1988 թ.:

Տարընթերցում. Քաջբերունու մոտ՝ «ՌՃԻ» (1671): Առկա են նաև որոշ տարընթերցումներ:

Տապանաքար՝ ձիակերպ, հարդարված է խաչաքանդակով, մարդկային պատկերներով և 2 կողմում պահպանվել է կիսաեղծ.

*Ի ներքոյ տապանիս եմ հ(ա)նգ(ո)ւց(եա)լ... գրեցի այս տապան:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԹ դ.:

Տապանաքար, կանգնեցվել է ի հիշատակ գյուղի ինքնապաշտպանության կազմակերպիչ Պետրոս Ծերատյանցի.

*Աստ հանգչի ներքո քարի մարմին քաջ զինւ/որի Պետրոսի Ծերատեանցի. ժամանակ / հաե-թրքական ընդհարումի զոհուվէց 24-ամաց / երիտասարդ հասակի 1905 ամի նոյեմբերի, / հանդիպողացդ խնդրէ ասէլ Ա(ստուա)ծ ողորմի:*

3355. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր 1, VI-11, թ. 5:

3356. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 231: ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր 1, VI-11, թ. 5:







***ԲԱԴԱ (ԼՂԱՐԱԿ). ծիակերպ տապանաքար գյուղի գերեզմանոցում, «Թխկուտի» մատուռը և խաչքարեր «Մանդուռա խաչ» հնավայրում***





***ԲԱԴԱ (ԼՂԱՐԱԿ). խոյակ (Ե-Զ դարեր)***

Հրատ. **Կարապետյան Ս.,** Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Ծանոթ. Հայտնի է, որ Պետրոս Ծերատյանցը զոհվել է, երբ «Խուժանը ... իջաւ Խազնի ձորը, և յարձակուեց *Թոզ փըրփընջան* մեծ այրում պատսպարուած 700-800 երկու սեռի և զանազան հասակի մարդկանց վերայ ու սկսեց կոտորածը: Թուրքերն անցան գետի ձախ ափն և այնտեղ դիրք գրաւելով՝ սկսեցին գնդակահարել այրը: Աջ ափում, *Կապ* կոչուած դժուարամատչելի ժայռում ամրացած երիտասարդ Պետրոս Ծերատեանցն էլ հակառակ կողմից կրակ թափեց խաժամուժ, արիւնարբու ամբոխի վերայ և իրար յետևից 36 թուրք սպանեց: Վերջն՝ փամփուշտն սպառելով՝ ինքն էլ ընկաւ թշնամու գնդակից (**Քաջբերունի**, Բադա գիւղի աւերումը, էջ 658):

**Աղբյուրներ.** մինչև 1890 թ. բադացիները խմելու ջուրը կրում էին ձորի 4 աղբյուրներից, որոնք նովեր ունեին[3357]: Այնուհետև գյուղում կառուցել են աղբյուրներ: Դրանցից հայտնի են «Առուշանի աղբիւր, որ բաւականին բարակ է: Մուսի աղբիւր կամ Միջի աղբիւր, փայտէ նաւակով հոսում է երեք մատնաչափ հաստութեամբ: Սա իր համեղութեամբ ամենից առաջնակարգն է համարւում: Ծերատին աղբիւր շինած է նաւակով...»[3358]:

**Վերի կամ Շահբազի աղբյուր.** ամենանշանավոր աղբյուրն է, որ կառուցվել է 1890-ական թվականների սկզբին ծխական եկեղեցու մոտ Արշակ Ծերատյանցի կողմից. «Վերի աղբիւր կամ Շահբազի, որ շինած է խողովակով ու տաշտով և տալիս է երեք մատնաչափ հաստութեան ջուր: Սրա մի մասը բադեցի հանգուցեալ Արշակ Ծերատեանցն իր ծախքով տարել-կախել է եկեղեցու մոտ հասա-

3357. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր 1, VI-11, թ. 4:

3358. **Քաջբերունի**, նշվ. հոդվածը, էջ 229:

րակութեան գործածութեան համար...»[3359]: 1894 թ. հունվարին Պողոս Ծերատյանցն աղբյուրի վրա արձանագրել է.

*Այս է աղբիւր յորդ և մշտաբուղխ,*
*որ է քաղցրիկ յոյժ սառնորակ,*
*նուիրում եմ իմ հայ եղբարց*
*Բաղա գիւղիս քոռնավաստակ,*
*որ ես Պօղոս Ծերատեանցս*
*անուամբ Արշակ Ծերատեանցի,*
*նորա և իմ սեպհականից*
*այս յիշատակը կանգնեցի.*
*հանգուցելոյն ձեր մաղթանքում*
*ընթերցողացդ յիշել խնդրեմ,*
*արժան լինել անանց կյանքում*
*նոյնպէս և Ձեզ, ձեր անցելոց*
*6. 1. 1894 ամի:*

Հրատ. **Քաջբերունի**, Բաղա գիւղի աւերումը, էջ 229:

**Հնավայրեր.** գյուղի շուրջը սփռված են հին գյուղատեղիներ, գերեզմանոցներ, «հողի տակից դուրս են գալի թոնիրներ, կաւէ ամաններ, զանազան ուղղութեամբ և խորութեամբ տարած աղբիւրի կաւէ խողովակներ, բրուտանոցի և դարբնոցի հետքեր և այլն»[3360]:

**«Թխկուտի» մատուռ.** գտնվում է Բաղայից 1 կմ հարավ-արևմուտք՝ բլրալանջին: Ուղղանկյուն հատակագծով փոքրիկ շինություն է, որը հիմնովին վերակառուցվել է 1969 թ.:

Մատուռի պատին ներքուստ պահպանվել է մի արձանագրություն, որն իր բովանդակությամբ հաստատում է տեղում հին եկեղեցու գոյությունը.

*Ի թ(վին). Հա[յոց... յան]|ուն Ա(ստուծո)յ ես Վ...| նորոգեցի զեկեղ[եցի]|ս. որք կարդէք յաղաւթ[ս]| յիշեցէք:*

Հրատ. **Կարապետյան Ս.,** Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, 1995, N 37, էջ 6:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

**«Մանդուռա խաչ».** սրբատեղին գտնվում է գյուղից 1,5 կմ հյուսիս-արևմուտք՝ բլրի գագաթին: Տեղում պահպանվել է պարզ հորինվածքով կոպտատաշ 4 խաչքար՝ Թ-Ժ դարերին բնորոշ:

**«Նովեր աղբյուր».** գյուղից 2 կմ հարավ-արևելք՝ համանուն («Նովերայ քօլ») տեղամասում, որը հարուստ է սպիտակ կավով[3361], պահպանվել է անմշակ սալ-տապանաքարերով մի գերեզմանոց:

**«Աղջկաբերդ» («Ղըզղալա»).** «Մանդուռա խաչից» 4-5 կմ հեռու՝ բարձր քարաժայռի կատարին, պահպանվել են «Աղջկաբերդ» ամրոցի ավերակները. «Սա մի փոքր բերդ է քարաժայռի գագաթին, աղիւսէ պատերով, աւերակ քարաշէն տներով, քայքայուած ջրամբարով, որ իւր ջուրը կաւէ խողովակներով ստանալիս է եղել Ցամաք ձոր անուն տեղից Անձահորի քօլ գեղեցկատեսիլ անտառի մօտ Քեամասար բինայի մերձաւոր սահմանում»[3362]:

Բացի վերոհիշյալ հնավայրերից, գյուղից 3-4 կմ հյուսիս-արևմուտք՝ թրքաբնակ Թաքարլի բնակավայրի մոտ պահպանվել են գյուղատեղիի և գերեզմանոցի ավերակներ:

Բաղայից արևմուտք, Քամանդարի ուղղությամբ, ընդարձակ դաշտում «...սփռուած են հինաւուրց հանգստարաններ և մատուռներ և սրանց մէջ կանգնած է սաղարդալից, հաստարմատ դարաւոր կաղնի ծառ՝ իբրև ուխտի և տօնախմբութեան տեղի Բաղայի բնակիչների համար»[3363]:

Մեկ այլ հնավայր էլ գտնվել է գյուղից արևմուտք՝ Քամանդար տանող ձորում: Դրա վերաբերյալ 1890 թ. ականատեսը նշել է. «Մեզ բաժանում էր մի անդնդանման ձոր և այդ ձորամասը կոչվում էր *Խազնձոր*, ահա թէ ընչի՞. երեք քույր միասին հուն քաղելիս նկատել են արծաթե մի քանի դրամ, հետաքրքիր որոնել են ու բավական ժողովել, գնացել են տանը իմաց տվել, գեղացիք եկել են ձորի ներքևից արծաթի փողերի հետքը բռնած բարձրացել բավական վերև ու գտել փողի պահեստը: Գաջ ու կրի չորս պատի մէջ, հանել են բաժանել, կամ ով շատ հավաքած է լինում, փախցնում է: Մոտակայքում դոլրա են գտնում արծաթե դրամներով լիք-բոլորը տաճկական սիկեա: Նրանից գեղի մարդ, թե կնիկ ուղտավորի պէս եկել, փնտրել են, ոչինչ չեն գտել: Մի քանի չարկամ անձինք, որոնց բաժին չի ընկել, իմացրել են թուրք պրիստավին. սա եկել խուզարկել է և 5 գրվանքա արծաթ է ստացել»[3364]:

## ԲԱՐՍՈՒՄ (ԲԱՐՍՈՒՄԱՇԵՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան հարավահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 770-850 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ավանդության համաձայն՝ Բարսումը հիմնադրել են Մելիք-Առուստամի առաջնորդությամբ Անիից գաղթած 35 տուն հայերը. «Այս գիւղն առաջ ունեցել է 35 տուն հայ բնակիչ, որոնք գաղթել են Անի քաղաքից Բագրատունի Մելիք-Առստամի առաջնորդութեամբ...»[3365]:

Հայտնի է եղել նաև Պաստուն անվանաձևով[3366]:

**Բարսումի մելիքությունը.** Բարսումը հայտնի էր որպես մելիքանիստ բնակավայր, որտեղ ԺԷ դարասկզբին նստում էին Շահ-Աբասից մելիքության իրավունք և տիտղոս ստացած Մելիք-Առուստամյանց-

3359. Նույն տեղում:
3360. Նույն տեղում, էջ 230:
3361. Նույն տեղում, էջ 229:
3362. Նույն տեղում, էջ 228:
3363. Նույն տեղում:
3364. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆոնդ, ստոր 1, VI-11, թ. 7:
3365. «Նոր-Դար», 1893, N 47, էջ 3: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 318:
3366. «Նոր-Դար», 1893, N 47, էջ 3:



***ԲԱՐՍՈՒՄ. գյուղի տեսքը հարավ-արևելքից***

ները: Նրանց ենթակայության տակ էին գտնվում նաև Քարատակը, Վերին և Ներքին Ղոթյուլները, Մածնաբերդը և մերձակա այլ գյուղեր: Տոհմի ամենանշանավոր դեմքը Մելիք-Առուստամն էր (1722-1794), որը գործուն մասնակցություն էր ունեցել Այսրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում[3367]: Մելիք-Առուստամը հիշվում է որպես ԺԸ դարում ստեղծված մի ձեռագիր «Վիճակացույցի» ստացող[3368]: 1794 թ. դավադրաբար սպանվել է Գանձակում և թաղվել տեղի Սբ. Հովհաննես եկեղեցու գավթի հարավային պատի մոտ[3369]:

Հայտնի է, որ Մելիք-Առուստամի մահից հետո, ԺԹ դարասկզբին բարսումցիների մի մասը գաղթում է Թիֆլիս և հիմնում Հավլաբար թաղամասը: Որոշ ժամանակ անց, սակայն, Մելիք Առուստամի ժառանգները վերադառնում են հայրենի գյուղ և վերահաստատվում իրենց տոհմի սեփական կալվածքներում: Դարավերջին Մելիք-Առուստամյանցներին էին պատկանում Վերին և Ներքին Ղոթյուլները, Քարատակը և Անջիկոպոր տեղամասը[3370]:

**Հաղորդակցության ուղիներ.** հայտնի է, որ 1884 թ. գյուղի քահանա Եփրեմ Մելիք-Առուստամյանցի նախաձեռնությամբ և տեղական պրիստավ Ջավադ-բեկ Մելիք-Շահնազարյանցի նյութական օժանդակությամբ բարեկարգվել են Բարսումից «...դէպի մօտակայ սարերը տանող ճանապարհները՝ 1500 րուբլի ծախսելով...»[3371]:

**Բնակչություն.** ուշագրավ է բարսումեցի 28 ազգատոհմերին վերաբերող վավերագիրը, որ մեզ է հասել 1839 թ.

«1. Աւագ Գալուստեան. կին սորա՝ Ազիզ, ուստր՝ Աւէտ, դուստր՝ Մագթաղ, եղբայր՝ Սարգիս, կինն՝ Ջանի, ուստերք՝ 1-ն՝ Գրիգոր, կինն՝ Ղումաշ, ուստր՝ Մարգար, դուստր՝ Սառայ, 2-ն՝ Դաւիթ:

2. Յարութիւն Ծատուրեան. կինն՝ Սիրուննան, ուստր՝ Աղաջան, կին սորա՝ Գիւլվարդ, հարսն՝ Վառվառա, ուստերք՝ Կարապէտ և Մկրտիչ, դուստր՝ Գայինէ, կին Կարապէտի՝ Թագուհի:

3. Բաբաջան Ծատուրեան. կին սորա՝ Մարիամ:

4. Մինաս Գալուստեան. կինն՝ Խաթայի, ուստր՝ Մովսէս, դուստր՝ Զարի:

5. Ապրէս Մէլիքով. կինն՝ Մարիամ, ուստերք՝ Գրիգոր և Աւագ, կին Գրիգորի՝ Խանում:

6. Գաբրիէլ Օհանով. կինն՝ Հոռոմսիմ, ուստերք՝ 1-ն՝ Երեմիայ, կին՝ Հոռոմսիմ, դուստր՝ Մարիամ, 2-ն՝ Մինաս:

7. Գաբրիէլ Սարգսեան. կինն՝ Խաթուն, ուստերք՝ 1-ն՝ Խաչատուր, կինն՝ Թէլլու, 2-ն՝ Գրիգոր, կինն՝ Թագուհի:

8. Հայրապէտ Անանեան. կինն՝ Անաքիր, ուստր՝ Աւէտիս, մայրն՝ Եղիսաբէթ:

9. Յարութիւն Կիրակոսեան. կինն՝ Եղիսաբէթ, ուստերք՝ 1-ն՝ Սարգիս, կինն՝ Աննայ, 2-ն՝ Յօհաննէս:

10. Խաչատուր Օհաննէսով. կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Գրիգոր, Յօհաննէս, եղբայրն՝ Յարութիւն, կին սորա՝ Եղիսաբէթ, ուստր՝ Մարգար, մայրն՝ Գիւլփարայ:

11. Յօհաննէս Մկրտչեան. կին սորա՝ Խաթուն, ուստերք՝ 1-ն՝ Առաքէլ, կինն՝ Վարդի, ուստր՝ Ղահրաման, դուստր՝ Թագուհի, 2-ն՝ Գրիգոր, կինն՝ Ռէհան:

12. Խաչատուր Ծատուրեան. կին սորա՝ Նազլուխան, դստերք՝ Ազիզխանում և Հոռոմսիմ, եղբարք՝ Պետրոս և Դաւիթ, կին 1-ն՝ Սաբէթ, ուստր՝ Օհանէս, կին 2-ն՝ Մագթաղ, դուստր՝ Ոսկի, մայրն՝ Մարիամ:

3367. Մելիք-Առուստամյանցների մանրամասն տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 319-320:

3368. ՑՁԲ, ձեռ. N 9153, էջ 882:

3369. Չափածո տապանագիրը հետևյալն է. *«Անմոռաց յայս տապան քաջ անուանի | հանգչի մարմին Մէլիք-Առստամի, | յազգէն Բագրատունի Հայկազանց տոհմի, | տիրող Բարսում, Գանձակ նահանգի, | ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի»* (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 320-321: Նաև՝ **Լալայան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 268: «Դիվան...», V, էջ 228:

3370. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 33-34:

3371. «Նոր-Դար», 1893, N 47, էջ 3, նաև՝ 1884, N 121, էջ 2:

13. Մակի Մկրտչեան. կին սորա՝ Ղումաշ, ուստր՝ Վարդան, դուստր՝ Վարդի, եղբայրն՝ Բաքի, կինն՝ Մարիամ, ուստր՝ Խէչատուր, դուստր՝ Շողակաթ:

14. Հայրապէտ Աղաբէգով. ուստերք՝ 1-ն՝ Յովակիմ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Խաչատուր, դուստր՝ Շողակաթ, 2-ն՝ Յովսէփ, կինն՝ Ռէհան, դուստր՝ Թէլլու:

15. Մարտիրոս Յարութիւնեան. կինն՝ Մարիամ, ուստր՝ Յովակիմ, կին սորա՝ Ջավահիր, դստերք՝ Մանուշակ և Ազիզ:

16. Առաքել Շահնազարեան. կինն՝ Նազլուխան, ուստր՝ Մաղաքիայ:

17. Ներսէս Մարտիրոսով. կինն՝ Անթառամ, ուստր՝ Գալուստ, դուստր՝ Գիւլլու, մայրն՝ Խանում:

18. Յովհաննէս Աղաբէգով. կինն՝ Մարիամ, ուստր՝ Բաքայ, դուստր՝ Հոռոմ, մայրն՝ Վարդուհի:

19. Յարութիւն Յակոբեան. կինն՝ Շահզուլ, ուստր՝ Աւէտիք, դուստր՝ Զարի:

20. Յարութիւն Աղամալով. կինն՝ Նազլուղան, ուստերք՝ 1-ն՝ Յոհաննէս, կինն՝ Փարի, ուստր՝ Անդրէաս, 2-ն՝ Աւէտիք, կինն՝ Մարգարիտ:

21. Յարութիւն Չէրքէզով. կինն՝ Շամամ, ուստր՝ Յոհան, եղբայր՝ Բաքի, կինն՝ Սառայ, դուստր՝ Մարիամ:

22. Առաքել Ոսկանով. կինն՝ Շողակաթ, ուստր՝ Աւէտիս, դուստր՝ Խանում, մայրն՝ Խաթուն:

23. Սարգիս Աղամեան. կինն՝ Աննայ, ուստր՝ Եսայ, դուստր՝ Թամամ, եղբայրն՝ Գալուստ, կինն՝ Հէրիք, մայրն՝ Շամամ:

24. Խաչատուր Նազարեան. կինն՝ Շողակաթ, ուստր՝ Յովակիմ, դուստր՝ Ազիզ:

25. Յարութիւն Ղարազօզեան. կինն՝ Մարիամ, ուստր՝ Սահակ, դուստր՝ Ազիզ, հարսն՝ Վարդուհի:

26. Օհաննէս Գաբրիէլով. կինն՝ Սաբէտ, ուստերք՝ 1-ն՝ Մկրտիչ, կինն՝ Մազթաղ, դուստր՝ Նազլուխան, 2-ն՝ Խաչատուր, կինն՝ Ազիզ:

27. Բաքի Սարգիսեան. կինն՝ Վառի, դուստր՝ Սաբէտ, եղբայրն՝ Ազայ, կինն՝ Սաբէտ:

28. Ղահրաման Թայիրեան. կինն՝ Մարիամ, ուստր՝ Կարապետ, եղբայրն՝ Ստեփան, կինն՝ Շամամ, ուստերք՝ Մնացական և Վարդազար»[3372]:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալներ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1804[3373] | 29 | 65 | 66 | 131 |
| 1839[3374] | 28 | 90 | 90 | 180 |
| 1845[3375] | | 247 | 230 | 477 |
| 1847[3376] | | 156 | 125 | 281 |
| 1849[3377] | | 230 | 191 | 421 |
| 1850[3378] | 48 | 230 | 229 | 459 |
| 1852[3379] | | 236 | 217 | 453 |
| 1853[3380] | | 238 | 221 | 459 |
| 1854[3381] | | 250 | 230 | 480 |
| 1858[3382] | | 262 | 245 | 507 |
| 1860[3383] | | 268 | 247 | 515 |
| 1861[3384] | 47 | | | |
| 1863[3385] | | 350 | 322 | 672 |
| 1864[3386] | | 385 | 331 | 716 |
| 1865[3387] | | 375 | 340 | 715 |
| 1866[3388] | 86 | 458 | 391 | 849 |
| 1872[3389] | | 629 | 420 | 1049 |
| 1874[3390] | | | | 956 |
| 1875[3391] | | | | 1000 |
| 1876[3392] | | | | 986 |
| 1877[3393] | | 627 | 409 | 1036 |
| 1878[3394] | | 616 | 400 | 1016 |
| 1880[3395] | | 629 | 420 | 1049 |
| 1881[3396] | | 640 | 433 | 1073 |
| 1882[3397] | | 652 | 460 | 1112 |
| 1883[3398] | | 666 | 482 | 1148 |
| 1885[3399] | | 510 | 380 | 890 |
| 1886[3400] | 155 | 617 | 556 | 1173 |
| 1887[3401] | | 565 | 424 | 989 |
| 1888[3402] | | 580 | 438 | 1018 |
| 1889[3403] | | 585 | 446 | 1031 |
| 1890[3404] | | 596 | 464 | 1060 |
| 1891[3405] | | 614 | 472 | 1086 |
| 1892[3406] | | 653 | 502 | 1155 |
| 1893[3407] | | 650 | 504 | 1154 |
| 1894[3408] | | 672 | 551 | 1223 |
| 1897[3409] | | 735 | 608 | 1343 |
| 1898[3410] | | 755 | 616 | 1371 |
| 1899[3411] | | 759 | 619 | 1378 |
| 1900[3412] | | 768 | 628 | 1396 |
| 1901[3413] | | 779 | 644 | 1423 |
| 1902[3414] | | 789 | 661 | 1450 |

3372. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 28:
3373. “Акты...”, т. II, с. 596.
3374. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 28:
3375. Նույն տեղում, գ. 3811, թ. 4-5:
3376. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
3377. Նույն տեղում, գ. 3818, թ. 96-97:
3378. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 110:
3379. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3819, թ. 106-107:
3380. Նույն տեղում, գ. 2743, թ. 18:
3381. Նույն տեղում, գ. 3825, թ. 69-70:
3382. Նույն տեղում, գ. 3831, թ. 42-43:
3383. Նույն տեղում, գ. 3833, թ. 109-110:
3384. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3385. Նույն տեղում, գ. 3843, թ. 15-16:
3386. Նույն տեղում, գ. 3846, թ. 23-24:
3387. Նույն տեղում, գ. 3848, թ. 50:
3388. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
3389. Նույն տեղում, գ. 3872, թ. 63-64:
3390. Նույն տեղում, գ. 3864, թ. 41-42:
3391. Նույն տեղում, գ. 3866, թ. 45-46:
3392. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
3393. Նույն տեղում, գ. 3869, թ. 55-56:
3394. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:
3395. Նույն տեղում, գ. 3872, թ. 31-32:
3396. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
3397. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
3398. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
3399. Նույն տեղում, գ. 3877, թ. 30:
3400. “Свод...”, с. 76-77. Այլ վկայության համաձայն՝ ունեցել է 120 տուն («Արձագանք», 1886, N 21, էջ 307):
3401. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
3402. Նույն տեղում, գ. 3882, թ. 132:
3403. Նույն տեղում, գ. 3884, թ. 228-229:
3404. Նույն տեղում, գ. 3887, թ. 151:
3405. Նույն տեղում, գ. 3889, թ. 150:
3406. Նույն տեղում, գ. 3891, թ. 122:
3407. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
3408. Նույն տեղում, գ. 3896, թ. 175-176:
3409. Նույն տեղում, գ. 3899, թ. 148-149:
3410. Նույն տեղում, գ. 3897, թ. 170:
3411. Նույն տեղում, գ. 3903, թ. 128-129:
3412. Նույն տեղում, գ. 3905, թ. 94-95:
3413. Նույն տեղում, գ. 3906, թ. 100-101:
3414. Նույն տեղում, գ. 3907, թ. 24-25:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1905[3415] | | 794 | 667 | 1461 |
| 1906[3416] | | 831 | 725 | 1556 |
| 1907[3417] | | | | 1708 |
| 1908[3418] | 238 | 925 | 900 | 1825 |
| 1909[3419] | | 828 | 682 | 1510 |
| 1910[3420] | | 971 | 944 | 1915 |
| 1912[3421] | | 842 | 685 | 1527 |
| 1914[3422] | | | | 2000 |
| 1917[3423] | 185 | | | 2258 |
| 1976[3424] | | | | 777 |
| 1985[3425] | 40 | | | 134 |

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Բարսումի բնակչությունը ԺԹ դարի սկզբներից՝ 1914 թ., ընդհանուր առմամբ, գրանցել է անընդմեջ աճ: Որոշ տարիների բնակչության թվաքանակի նվազումներ են արձանագրվել՝ կապված արտագաղթերի կամ վարակիչ հիվանդությունների հետ: Հարկ է նկատել, որ բնակչության թվի աննախադեպ անկում է նկատվել 1920-ական թվականներին, երբ Շամքոր գետի ձախափնյա սարահարթում բարսումցիները հիմնել են նոր գյուղ՝ Բարսում-Սար անվամբ:

Բարսումը հայաթափ է եղել 1988 թ.: Բռնագաղթից հետո նրանք հաստատվել են ՀՀ Կարմիրի շրջանում (այժմ՝ Գեղարքունիքի մարզ):

**Կառուցապատում.** հայտնի է, որ տակավին 1878 թ. շուրջ 120 տուն ունեցող Բարսում գյուղում բացի մեկ տնից մյուսները գլխատներ էին. «...դպրոցի սենեակը անյարմար գտայ դասարանի համար, գլխաւորապէս լուսոյ պակասութեան պատճառաւ. լոյսը ընկնում է տան երդիկից, վերևից: ...գիւղի մէջ բոլոր տները այդ ձևն ունին բացի մէկից, որի տէրը համաձայն չեղաւ ուսումնարանին վարձով տալու...»[3426]:

ԺԹ դարավերջին ականատեսը նշել է, որ «Գիւղը բաժանւում է երկու մասի. առաջնում, որ գտնւում է ձորի մէջ, բնակւում են ձմեռը, իսկ երկրորդում, որ տարածւում է ձախակողմեան լեռան գագաթին, առաջնից 4 վերստ հեռաւորութեան վրայ, ապրում են ամառը, որովհետև այդ միջոցին առաջին մասում սաստիկ շոգ է լինում: Գիւղում չկան կանոնաւոր փողոցներ. տներն էլ մինը միւսին կից շինուած լինելով, շատ անգամ մինի կտուրը ծառայում է միւսին որպէս բակ: Կալերը և մարագները գտնւում են երկրորդ մասում. այստեղին մօտ են նաև գոմերը»[3427]:

**Զբաղմունք.** բնակիչները զբաղվել են երկրագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և շերամապահությամբ:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** հայտնի է, որ 1905 թ. նոյեմբերի վերջին թուրքերը «...պաշարեցին Բարսումը, որը շնորհիւ իր ամուր դիրքերի ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեց և յետ քշեց յարձակումը: Սակայն թուրքերը չը խրատուած այդ բանից, դեկտեմբերի 5-ին յարձակւեցին Բարսումի վրա և հանդից քշեցին նախիրը, որի ժամանակ պատահաբար Չարդախլուից եկող զինւած մի խումբ երիտասարդներ օգնութեան հասնելով, ոչ միայն նախիրը յետ խլեցին, այլ և հետևելով թուրքերին մինչև Մալաքլու գյուղը, կրակի կպցեցին նրանց»[3428]:

**Բարսումցի ազատամարտիկ**. Ծնունդով բարսումցի էր արցախյան ազատամարտի մասնակից Մարտիրոս Արշակի Շահնազարյանը (ծնվ. 1960 թ.): Զոհվել է 1991 թ. ապրիլի 5-ին[3429]:

**Դպրոց.** հայտնի է, որ 1866 թ. գյուղում գործում էր ծխական արական դպրոց՝ 1 ուսուցչով և 27 աշակերտով[3430]: Հավանաբար այն շուտով փակվել է, քանի որ մեկ այլ տեղեկությամբ դպրոցը բացվել է 1878-ին և ունեցել 1 ուսուցիչ և 28 աշակերտ[3431], որոնք «...ուսանում էին այդտեղ մի հին ու խոնաւ տան մէջ...»[3432]: Նույն թվականին նորաբաց դպրոց այցելած թեմական վերատեսչի անուղղակի նկարագրությունից երևում է, որ դասատան շենքն իրենից ներկայացրել է մի պարզ գլխատուն (հազարաշեն)[3433]: Մի քանի ամիս անց՝ նույն թվականի ամռանը, դպրոցը կրկին փակվում է՝ նյութական անձուկ վիճակի պատճառով: Կրթօջախի գոյությունը պահպանելու համար բարսումցիները փորձում են Գառնակերի Ծաղկոց անապատ վանքի արդյունքներից նպաստ ստանալ, սակայն ապարդյուն[3434]:

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի**. մինչև 1886 թ. վերաբերող բազմաթիվ վավերագրերում Բարսումում հիշվում է փայտաշեն (անշուշտ, ծածկը նկատի ունենալով) եկեղեցի (օրինակ՝ 1849[3435], 1852[3436], 1862[3437], 1877[3438], 1882[3439], 1886[3440] թթ.): Ի դեպ,

3415. Նույն տեղում, գ. 3912, թ. 267-268:
3416. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
3417. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
3418. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12: Տե՛ս նաև՝ “Кавказский календарь на 1910”, с. 199.
3419. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 118:
3420. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 60-61:
3421. Նույն տեղում, գ. 3919, թ. 63-64:
3422. “Кавказский календарь на 1915”, с. 96.
3423. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
3424. «ՍՍՀ», հ. 2, էջ 35:
3425. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում, էջ 4:
3426. «Մանկավարժական թերթ», 1878-1879, էջ 15:
3427. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 323:
3428. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 341:
3429. «Ազատամարտ», 12. 04. 1991, էջ 15:
3430. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 115:
3431. Նույն տեղում, գ. 3850, թ. 178:
3432. «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
3433. «Մանկավարժական թերթ», 1878-1879, էջ 14-15:
3434. «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
3435. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97:
3436. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
3437. Նույն տեղում, գ. 3836, թ. 58:
3438. Նույն տեղում, գ. 3869, թ. 55-56:
3439. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
3440. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:











***ԲԱՐՍՈՒՄ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. տեսքը՝ հյուսիս-արևելքից, հարավ-արևելքից, հյուսիսային մուտքին կից երկհարկ զանգակատունը և հատված արևմտյան ճակատից***



***ԲԱՐՍՈՒՄ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատակագիծը***

1860 թ. եկեղեցին հիշվում է Սբ. Աստվածածին[3441], իսկ 1861-ին՝ Սբ. Գևորգ[3442] անվամբ:

3441. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3834, թ. 22-23:
3442. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:

1887 թ. քահանա Եփրեմ Մելիք-Առուստամյանցը նախաձեռնել էր նոր՝ քարաշեն եկեղեցու շինարարությունը, որն անավարտ է մնացել նյութական միջոցների սղության պատճառով: Այդ մասին 1893 թ. նշվել է. «...Գիւղն ունի մի փայտաշէն եկեղեցի, որը փլչելու վրայ է: ....քահանան այժմ ձեռնարկել է կառուցանել սրբատաշ քարերից մի հոյակապ եկեղեցի, որը չնայելով ծախսած է արդէն մօտ 3000 րուբլի, դեռ կիսաւարտ է մնացել...»[3443]: Ըստ եկեղեցու հյուսիսային մուտքի ճակատակալ քարին փորագրված հնգատող արձանագրության՝ եկեղեցու

3443. «Նոր-Դար», 1893, N 47, էջ 3: Ի դեպ, խնդրո առթիվ 1895 թ. նշվել է նաև. «Մեր եկեղեցին շատ աննախանձելի դրութեան մէջ է, ...մի քանի բարի մարդկանց շնորհիւ սկսվեց նոր եկեղեցու շինութիւնը, պատերը կիսով չափ կանգնեցրին, բայց դժբախտաբար փող չլինելու պատճառով չվերջացաւ...» («Նոր Դար», 1895, N 216, էջ 3):

կառուցումը տևել է 8 տարի և ավարտվել 1895-ին՝ օծվելով Սբ. Գրիգոր Լուսավորիչ անվամբ.

Արձանագրություն.

*Արդեամբ եւ ծախիւք / Բարսումայ հասարակութե(ա)ն / կառուցաւ Ս(ուրբ) Գ(րիգոր) Լուսավորիչ / հոյակապ տաճարս, / հիմ. 1887 թ., աւարտ 1895 թ.:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Չնայած վիմագիրը հավաստում է, որ եկեղեցու կառուցումն ավարտվել է 1895 թ., այնուամենայնիվ, 1902 թ. դրությամբ աշխատանքները դեռևս ամբողջացված չէին. «Եկեղեցին, սակայն դեռ չէ աւարտված վերջնականապէս, զուրկ է բարեզարդութիւնից, չունի անհրաժեշտ անօթներ ու իրեր, չունի պատկերներ, չէ սուաղված ու սալայատակված...»[3444]: Նշելի է, որ շինարարության համար մինչև 1902 թ. ծախսվել էր 8000 ռուբլի. ի դեպ, 1902 թ. դրությամբ բարսումեցիները դժվարությամբ շարունակում էին մարել 2000 պարտք մնացած գումարը[3445]:

1911 թ. ապրիլի 21-ին գյուղի հասարակությունը համախոսականով դիմել է Գանձակի հոգևոր իշխանություններին՝ խնդրելով թույլատրել «...Ս. Լուսաւորիչ եկեղեցին աղիւսահատակել և պատերը սպիտակեցնել իր ունեցած իր գումարով»[3446]: Մայիսի 9-ին ստացվել է նորոգման թույլտվությունը (ընդ որում՝ ծախսը չպետք է գերազանցեր 260 ռուբ., 50 կոպ)[3447]:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ կառույց է (արտաքին չափերն՝ 22 x 11,35 մ), արևելքում՝ կիսաշրջան խորանով, կից՝ ավանդատներով: Աղոթասրահի երեք զույգ սյուների և որմնասյուների վրա հենված թաղակապ ծածկն առնված է երկթեք տանիքի տակ: Մուտքերը երկուսն են՝ հյուսիսից ու հարավից: Հյուսիսային մուտքը բացվում է նույն կողմից եկեղեցուն կից կրկնահարկ զանգակատան առաջին հարկի մեջ: Զանգակատունը բարձրանում է առաջին հարկում 4, երկրորդ հարկում 6 սյուների վրա: Եկեղեցին կառուցված է անմշակ, կոպտատաշ քարով, կրաշաղախով: Բացառություն են սյուները, որմնասյուները, թաղակիր կամարներն ու անկյունաքարերը, որոնք իրականացված են սրբատաշ քարով: Իր ավանդական տեղում է մկրտարանը, որին կից ագուցվել են գեղաքանդակ մի քանի խաչքարեր և կենցաղային պատկերներով հարդարված տապանաքարեր:

Ստորև ներկայացնում ենք 2 վիմագիր, որոնք հրատարակվում են առաջին անգամ.

Խաչքար. ագուցված՝ մկրտարանում.

*[Սուրբ խաչ]ս որդո(յ)ն իմոյ Աղային:*

Խաչքար. ագուցված՝ նույն տեղում, ունի կիսաեղծ արձանագրություն.

*...խաչերս...:*

Եկեղեցում պահվում էր 1579 թ. ստեղծված մի ձեռագիր ավետարան[3448]:

Գործել է մինչև 1927 թ.[3449]:

**Քահանա.** 1849 թ. հիշվում է *Բարսեղ քահանան*, որը նույն թվականին հաստատվել էր իր պաշտոնում[3450]:

1861 թ. գյուղին հովվում էին Փիրի քահանաները՝ *Պետրոս Տեր Վարդանյանցը*, *Սահակ Տեր Կիրակոսյանցը* և *Պողոս Մամիկոնյանցը*[3451]:

Բարսումի ծխատեր քահանաներից արժանահիշատակ է *Եփրեմ Գրիգորյան Մելիք-Առուստամյանցը*: Ձեռնադրվել է 1882 թ. սեպտեմբերի 11-ին Գանձակի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Թադեոս եպս. Տեր-Դանիելյանի ձեռքով. քահանայագործել առնվազն մինչև 1911 թ.[3452]: 1885 թ. ապրիլի 12-ին «...որպէս հաւատարմատար ...պաշտպանեալ է զիրաւունս ...կալուածոց և վանօրէից և եկեղեցիս վիճակին Գանձակայ ՚ի ժամանակս սահմանաչափումն հողոց առ հասարակ յԵլիսաւետպօլու գաւառի»[3453]: 1885 թ. սեպտեմբերին Տփխիսի Առաջնորդարանի վերանորոգության համար Գանձակի վիճակի գյուղերից հանգանակել է 152 ռուբ.[3454]: 1884-1890 թթ. «...ըստ արժանւոյն ամենայն հաւատարմութեամբ և հարազատութեամբ» վարել է Գանձակի հաջորդության գյուղերի գործակալի պաշտոնը: Նրա շնորհիվ Բարսումում կառուցվել են Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Շամքոր գետի կամուրջը, և բարեկարգվել են ճանապարհները: Իր եռանդուն աշխատանքի համար արժանացել է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի պարգևին՝ քահանայական արդաթե ոսկեզօծ լանջախաչի[3455]:

**Հուշարձաններ.** Բարսում գյուղն ու շրջակայքը հարուստ է պատմական բազմապիսի հուշարձաններով, որոնց զգալի մասը ոչնչացվել է խորհրդային տարիներին: Բարեբախտաբար, դրանք ժամանակին հաշվառել է բարսումցի Նիկոլայ Ղազարյանը:

1. Գյուղից հարավ տարածվող գերեզմանոցում կիսավեր վիճակում պահպանվել է եռանավ բազիլիկ հորինվածքով մի եկեղեցի, որի ճակատակալ քարին եղել է.

3444. «Մշակ», 1902, N 130, էջ 3:
3445. Նույն տեղում:
3446. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1268, թ. 30:
3447. Նույն տեղում, թ. 32:

3448. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 318:
3449. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
3450. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 96-97:
3451. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3452. Նույն տեղում, գ. 817, թ. 7, գ. 1268, թ. 30:
3453. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 77-78:
3454. Նույն տեղում:
3455. Նույն տեղում, թ. 74-76:



***ԲԱՐՍՈՒՄ. խաչարձան-կոթող, ԺԶ դար (լուսանկ. Ն. Ղազարյանի)***

*Թվ(ին) ՌՃԵ (1656) էր:*

**Հրատ. Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 318: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 323: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

2. Մեկ այլ քարաշեն, փայտածածկ եկեղեցի էլ եղել է Բարսումի ներքին թաղում: Այն քանդել են 1938 թ.՝ տեղում կառուցելով դպրոցական շենք:

3. Գյուղի հյուսիսային կողմում պահպանվել է նաև մի գերեզմանոց և կիսավեր եկեղեցի:

4. Բարսումից արևելք՝ այգիների մեջ «Վանքն կայ..., որի չորս պատերն քարուկիր, ծածքն փայտաշէն, անունն անյայտ, մեծութիւնն միջակ»[3456]: 1980-ական թվականներին վանքն ավերակ էր:

5. Գյուղից արևելք՝ Շամքորի գետի ձախ ափին, «Ակուբանց» այգում պահպանվել են **Սբ. Հռիփսիմե վանքի** հիմնապատերը: ԺԹ դ. վերջերին նշվել է. «Ամբողջապէս քարուկիր եղած է վանքս, խոնարհած է առաստաղն, որ փայտաշէն է այժմ: Այս է Գօշ-Մխիթարի ակնարկած Հռիփսիմէի մենաստանն»[3457]:

6. **«Քսապեր» եկեղեցի.** գտնվել է գյուղամիջում՝ Գալստյանների տնամերձ հողամասում: Շուրջը տարածվում էր միջնադարյան գերեզմանոցը, որտեղ առկա էին կոթողներ և գեղաքանդակ խաչքարեր: Խաչքարերից մեկը, ի դեպ, Ն. Ղազարյանը տեղափոխել է Երևան. պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Եկեղեցին քանդել են 1938 թ.:

7. **«Գետի Ղոլի խաչ» եկեղեցի**. գտնվում է գյուղից հյուսիս-արևելք՝ փոքր բլրի գագաթին: Ունեցել է միանավ հորինվածք, միակ մուտքը բացվել է հյուսիսից: Խորանի ճակատին ագուցված են եղել գեղաքանդակ խաչքարեր: Քանդել են 1940 թ.:

8. **«Մանդուռի խաչ».** այս անվամբ հայտնի ուխտատեղին գտնվում է գյուղից արևմուտք՝ համանուն տեղամասում:

9. **Սբ. Մինաս մատուռ**. գտնվում է գյուղից 2,5 կմ արևելք՝ Փլաձոր կոչված լեռնաճյուղի ամենաբարձր գագաթին: Քարաշեն, փայտածածկ շինություն է, որի միակ մուտքը բացված է արևմուտքից:

3456. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 318: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 323: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1952, էջ 416:

3457. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 318:



*Շամքորի հովիտը՝ «Խաչի յալ» տեղամասից*

Նշանավոր ուխտատեղի է, որտեղ գտնվում է «...գերեզման Մինասայ ճգնաւորին, յոր յաճախեն ուխտաւորք բազումք»[3458]:

10. **«Չոբանանց խաչ»**. ուխտատեղի է, որը գտնվում է Բարսումը և Բարսում-Սարը միացնող ճանապարհին:

11. **Թռան (բարձր տեղ քառած) եղցի**. գտնվում է գյուղի հարավային կողմում: ԺԹ դարավերջին եկեղեցուց «Կանգուն են մնում միայն չորս պատերն...»[3459]: Քարերն օգտագործել են Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության վրա: 1980-ական թվականներին պահպանվում էին չնչին մնացորդները:

12. **«Վանքի Չորի Անանուն» վանք**. գտնվում է Բարսումից 5 կմ հյուսիս-արևմուտք: Ունեցել է եկեղեցի, գավիթ, միաբանների խցեր: Հիմնովին քանդել են 1982 թ. և քարերն օգտագործել տնտեսական շինությունների համար:

13. **Տկռուկ (Տիգրանակերտ).** գտնվում է գյուղից 1 կմ հարավ՝ Շամքոր գետի աջ ափին: Հնավայրում պահպանվել են գյուղատեղիի, եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները: Հիշատակվում է Է դարում պարսից Խոսրով արքայի և բյուզանդական Հերակլ կայսեր միջև տեղի ունեցած ճակատամարտի կապակցությամբ. «...Իսկ զաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծունին: Ազդ լինի Երակլի կայսեր, եթէ եկն Խոռեամ ի Մրծունին առնու զզաւրս իւր և զերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. գայ հասանէ// ի Փայտակարան: Ազդ եղև Խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս և եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս հրաման ետ զաւրավարի իւրոյ Շահր Վարազայ, զի առաջին կալցի: Եւ նա փութով հասանէ յԱրարատ, և անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, և բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա: Եւ Շահէնն ԼՌ (30000)-աւ հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի...»[3460]:

Եղիա Ա Արճիշեցի կաթողիկոսի օրոք (703-717) Պարտավում տեղի է ունեցել եկեղեցական ժողով, որի նպատակն էր հաստատուն դարձնել Հայոց և Աղվանից հոգևոր միաբանությունը: Մասնակիցների թվում էին նաև Աղվանից Սիմեոն կաթողիկոսը (706-707) և «Պետրոս՝ Տկռակերտոյ վանականը»[3461]:

14. **Խաչարձան-կոթող.** գտնվել է Բարսումի գերեզմանոցում: 1970-ական թվականներին Ն. Ղազարյանի ջանքերով այն փոխադրվել է Երևանի թանգարաններից մեկը (մեր հարցում-որոնումները եղել են անարդյունք): Քառանիստ կոթողի երկու կողերի ստորին մասերում 5 և 6 տողով արձանագրված է.

*Ս(ուր)բ խ(ա)չս / բարէ/խաւս / Թամր/ազին:*

3458. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 162:
3459. **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:
3460. Պատմութիւն **Սեբէոսի**, աշխատասիր. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125:
3461. **Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 300:



***Շամքորի հովիտը՝ Գառնակեր (Բարումշեն) գյուղից հարավ***

Մյուս նիստին.

*Ս(ուր)բ խ(ա)չս / բարէխ/աւս Աճ/ուբ խան/ումին, Գ/...:*

14. **«Կանգնեալ խաչ».** մատուռ-ուխտատեղին գտնվում է Բարսումի մոտ՝ բարձր լեռան գագաթին: Շինության ներսում՝ արևելյան պատի մոտ «...երկու՝ մէկ մէկի վերայ զրուած վէմ քարեր կան, վերինի վերայ երեք փորագրուած խաչեր, որ և կոչւում է „Կանգնեալ խաչ„ յաճախում են այդտեղ թէ հայ և թէ թուրք ուխտաւորներ»[3462]:

15. **«Քոսոտ խաչ».** խաչքար՝ Կոկռան ձոր տեղամասում:

Գյուղի տարածքում պահպանվել են նաև բազմաթիվ գյուղատեղիներ.

1. **Հին Բարսում.** ներկայիս Բարսումից ոչ հեռու՝ Շամքոր գետի աջ ափին, գտնվում էր «...համանուն գիւղի աւերակներն: Այստեղից է զաղթել Թիֆլիզի Հավլաբար թաղի Շամքոռեցի ժողովուրդն. այստեղ նոյն աւերակների մէջ գտնւում է եկեղեցին սուրբ Յովհաննէս անունով»[3463]:

2. **Փոքր Բարսում (Քեչի, Քոչիր Բարսում).** տարածվում է գյուղից հյուսիս՝ Կոկռան ձորի եզրին. պահպանվել են տնատեղեր և փոքրիկ գերեզմանոց:

3. **«Ղտեղ» (Բերդատեղ).** գտնվում է գյուղից արևմուտք՝ համանուն ձորում: Տարածքում պահպանվել է նաև մի քարայր, որտեղ կարող էին պատսպարվել 40-50 մարդ:

4. **«Լալաքա» գյուղատեղի**, Շամքոր գետի աջ ափին է, «Բաջանց թաղ» ձորի եզրին: Պահպանվել է գերեզմանոցը:

5. **«Իրկիշեցիք».** գտնվում է գյուղի տարածքում. պահպանվել են տնատեղերը և գերեզմանոցը:

6. **«Ներքին Ղրբուլ».** գտնվում է Շամքոր գետի աջ ափին՝ Բարսումից արևելք. պահպանվել են եկեղեցու, գերեզմանոցի և տնատեղերի ավերակները[3464]:

7. **Կամուրջ**. հայտնի է, որ 1884 թ. գյուղի քահանա Եփրեմ Մելիք-Առուստամյանցի նախաձեռնությամբ և պրիստավ Ջավադ-բեկ Մելիք-Շահնազարյանցի նյութական օժանդակությամբ Շամքոր գետի վրա սկսվել էր կամրջի կառուցում[3465], որը 1893 թ-ին արդեն ավարտվել էր և հայտնի էր որպես «ամուր կամուրջ»[3466]:

Գյուղի տարածքում պահպանվել են նաև բրոնզեդարյա ամրոցներ, դամբարաններ և հնագիտական այլ հուշարձաններ:

**Անվանի բարսումցիներ.** *Եփրեմ խան (Եփրեմ Դավքյան).* զոհվել է 1912 թ. մայիսի 6-ին, զոհվել Սուրջիեի ճակատամարտում և ամփոփվել Թեհրանում՝ Հայկազյան (այժմ՝ Դավթյան) դպրոցի բակում:

1880-ական թվականների վերջերին անցել է Արևմտյան Հայաստան և միացել հայդուկային խմբերին: Սարգիս Կուկունյանի կազմակերպած արշավանքին (1890) մասնակցելու համար 1892 թ.

3462. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:

3463. Նույն տեղում:

3464. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 319:

3465. «Նոր-Դար», 1884, N 121, էջ 2:

3466. «Նոր-Դար», 1893, N 47, էջ 3:



***ԲԱՐՍՈՒՄ-ՍԱՐ.*** *գյուղի ընդհանուր տեսքը*



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ).*** *արևմուտքից գյուղ մտնող կածանը*

աքսորվել է Սիբիր, որտեղից 4 տարի անց փախել է Իրան: 1899 թ. դասավանդել է Ղարադաղի Աղադան գյուղում: 1905-1911 թթ. եղել է Իրանական հեղափոխության կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: 1909 թ. հուլիսի 10-ին՝ Թեհրանի առումից հետո, նշանակվել է իրանական ժամանակավոր կառավարության ղեկավար: Ծնորհվել է սարդարի (թարգմ.՝ գերագույն հրամանատար) աստիճան[3467]:

## ԲԱՐՍՈՒՄ-ՍԱՐ (ՆՈՐ, ՍԱՐԻ ԲԱՐՍՈՒՄ, ԲԱՐՍՈՒՄԱՍԱՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան բարձրադիր սարահարթին:

**Պատմություն.** գյուղը ստեղծվել է Ադրբեջանում խորհրդային իշխանության առաջին տարիներին, երբ բարսումցիների մեծ մասը տեղափոխվել է Շամքոր գետի ձախափնյա սարահարթը և բնակություն հաստատեց այնտեղ: Տարածքում պատմական հուշարձաններ չկան:

**Բնակչություն.** 1985 թ. ունեցել է 127 տուն՝ 338 հայ բնակիչ. 1988-ից հետո բռնագաղթել են Հայաստանի Կարմիրի շրջան (այժմ՝ Գեղարքունիքի մարզի Կարմիրի ենթաշրջան)[3468]:

## ԲԱՐՈՒՄ (ՆՈՐ, ՍԱՐԻ ԲԱՐՈՒՄ)

**Տեղադրություն.** գտնվում է Շամխոր շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1330-1420 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, 1923 թ. գառնակերցիների մեծ մասը տեղափոխվել է գյուղից 3-4 կմ արևմուտք՝ Շամքոր գետի բարձրադիր տափարակը և հիմնել նոր գյուղ. նրա տարբերելու համար անվանվել է Սարի կամ Նոր Բարում:

**Բնակչություն.** բարումցի Պավել Խոջայանի վկայությամբ 1978 թ. գյուղն ունեցել է 130 տուն հայ բնակիչ: 1985 թ. թվաքանակն արդեն նվազել էր՝ հասնելով 88-ի (204 բնակիչ՝ ըստ գյուղխորհրդի տվյալների):

1988 թ. գյուղը հայաթափվել է. բնակիչները բռնագաղթել են և բնակություն հաստատել Հայաստանի Կարմիրի շրջանում:

**Հուշարձաններ.** գյուղի տարածքում աչքի ընկնող հուշարձաններ չկան. դրանք հիմնականում կենտրոնացած են Գառնակերի մոտ: Երկու գյուղերն իրար միացնող ճանապարհին՝ հին գյուղից հյուսիս-արևմուտք, գտնվում է **«Կաղնի խաչ»** ուխտատեղին, որտեղ պահպանվել են երեք խաչքարեր[3469]:

**«Ծիրանավոր».** «Կաղնի խաչից» վերև՝ նույն ճանապարհի աջ կողմում նկատելի են «Ծիրանավոր» անվամբ գյուղատեղիի, եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները[3470]:

## ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄ, ԲԱՐՈՒՄՇԵՆ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան հարավահայաց ձորալանջին:

Գառնակերի տեղադրության վերաբերյալ ԺԹ դարի կեսերին գրվել է. «Է գիւղ շինեալ առ երի Շամքօռ գետոյն, դիրք տեղւոյն է վայելուչ, այգաւէտ և ջրավէտ...»[3471]:

**Պատմություն.** պատմական սկզբնաղբյուրներում Գառնակերը հիշատակվում է ԺԵ դ. կեսերից: Որպես կանոն՝ կապվում է գյուղից մոտ 0,7 կմ հարավ՝ գետի ձախափնյա բարձունքին կառուցված Ծաղկոց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցու հետ:

1691 թ. հիշվում է «Գառնակերու տ(ա)ն(ո)ւտէր Սէդխը», որն Աղվանից Սիմոոն և Երեմիա կաթողիկոսների միջև մղված պայքարում երկրամասի հոգևոր և աշխարհիկ շատ առաջնորդների հետ հա-

3467. «ՀՍՀ», հ. 3, Երևան, 1977, էջ 646:

3468. Ըստ գյուղխորհրդի տվյալների:

3469. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 317:

3470. Նույն տեղում:

3471. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 162:

վատարմություն էր հայտնել Սիմեոնին՝ ստորագրելով «Թուղթ Դաշնադրութեան» փաստաթուղթը[3472]:

**Հաղորդակցության ուղիներ.** գյուղի դժվարանցանելի ճանապարհների մասին դեռևս ԺԹ առաջին քառորդում նշվել է. «...ճանապարհի այսր գեղջ դժուարագնալի է յոյժ, և միանգամայն վիհք աննարինք և խորափիրտք անդնդականք զարհուրեցուցանեն զանցաւորս, բայց երախտաւոր պարտ է ճանաչել զայնոսիկ անմատչելի վայրս, վասն ազատելոյ զբազում յամազգիս մեր յանօրէն ասպատակաց»[3473]: 1884 թ. Գառնակերը հարևան գյուղերի հետ կապող ճանապարհահատվածը բարեկարգվել է[3474]:

**Բնակչություն.** Գառնակերի ազգատոհմերի ուսումնասիրության առումով հետաքրքիր է 1839 թ. մի վավերագիր, որտեղ տրված է 15 տուն բնակիչների անվանացանկը.

«1. Պետրոս Խոջեան. կինն՝ Մարիամ, ուստր՝ Մկրտիչ:

2. Յովհաննէս Սահակեան. կին սորա՝ Շողակաթ, ուստերք՝ Յովակիմ, Պօղոս, դստերք՝ Շահգուլ, Հոռի և Թագուհի, եղբայրն՝ Ստեփան՝ այրի, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Հէրիք և Ոսկի:

3. Հայրապետ տէր Եղիազարեան. կինն՝ Մարիամ, ուստերք՝ Սահակ, Յօհաննէս, դստերք՝ Խանում, Հէրիք, Հոռի և Մարգարիտ, եղբարք 1-ն՝ Բաբի, կինն՝ Գօզալ, 2-ն՝ Գրիգոր, կինն՝ Ղումաշ, մայր սոցա՝ Ռէհան:

4. Սարգիս Մաթէոսով. եղբայրն՝ Յարութիւն, կինն՝ Աննայի, ուստերք՝ Մկրտիչ և Պօղոս, դուստր՝ Նազի:

5. Գէորգ Օհանէսով. կին սորա՝ Սառայ, ուստերք՝ Մակար և Սիմէօն, դուստր՝ Մարգարիտ, հարսն՝ Խաթայի:

6. Աղաջան Խաչատուրեան. կինն՝ Աննայ, ուստերք՝ Խաչատուր, Աւագ, դստերք՝ Անախաս և Ազիզ, եղբայրն՝ Ղազար, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Ստեփան, և դուստր՝ Մարիամ:

7. Անտօն Խաչատուրեան. կինն՝ Մարիամ, ուստերք՝ Թունի և Յովսէփ:

8. Մկրտում Սարգսեան. կինն՝ Մարիամ, ուստերք՝ Յարութիւն, Կարապետ, դստերք՝ Եղիսաբէթ, Հոռի, մայրն՝ Խանում:

9. Յովհաննէս Արզումանեան. մայր սորա՝ Մարիամ:

10. Յովհաննէս Մինասեան. ուստերք՝ Աւագ և Յակոբ, դուստր՝ Վարդի, մայրն՝ Մարիամ:

11. Յարութիւն Աւագեան. կինն՝ Նազլուխան, ուստերք՝ Սահակ, Մկրտիչ, եղբայրն՝ Զաքարիայ, կինն՝ Գօզալ, դուստր՝ Խաթայի:

12. Պապի Յովսեփեան. կին սորա՝ Ազիզ, մայր սորա՝ Մարգարիտ, եղբայրն՝ Մկրտիչ, կինն՝ Նուբար:

13. Գրիգոր Մաղաքեան. կինն՝ Հոռի:

14. Վարդան Յարութիւնեան. կին սորա՝ Զանի, ուստերք՝ Ղազար և Գրիգոր, դուստր՝ Մարիամ:

15. Յովհաննէս Ոսկանեան. կին սորա՝ Վարդի, ուստերք՝ 1-ն՝ Խաչատուր, կին սորա՝ Աննայ, 2-ն՝ Յարութիւն»[3475]:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալներ.

3472. «Արարատ», 1900, էջ 320:

3473. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 162:

3474. «Նոր-Դար», 1884, N 121, էջ 2:

3475. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 28:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[3476] | 9 | 19 | 17 | 36 |
| 1839[3477] | 15 | 47 | 47 | 94 |
| 1845[3478] | | 129 | 115 | 244 |
| 1847[3479] | | 124 | 127 | 251 |
| 1849[3480] | | 186 | 160 | 346 |
| 1852[3481] | | 157 | 150 | 307 |
| 1861[3482] | 25 | | | |
| 1866[3483] | 43 | 253 | 141 | 394 |
| 1872[3484] | | 338 | 295 | 633 |
| 1874[3485] | | | | 502 |
| 1875[3486] | | | | 511 |
| 1876[3487] | | | | 513 |
| 1877[3488] | | 321 | 279 | 600 |
| 1878[3489] | | 312 | 283 | 595 |
| 1880[3490] | | 338 | 295 | 633 |
| 1881[3491] | | 341 | 292 | 633 |
| 1882[3492] | | 358 | 299 | 657 |
| 1883[3493] | | 371 | 312 | 683 |
| 1885[3494] | 90 | 546 | 464 | 1010 |
| 1886[3495] | 84 | 380 | 360 | 740 |
| 1887[3496] | | 573 | 498 | 1071 |
| 1888[3497] | | 573 | 496 | 1069 |
| 1889[3498] | | 576 | 508 | 1084 |
| 1890[3499] | | 588 | 508 | 1096 |
| 1891[3500] | | 618 | 533 | 1151 |
| 1892[3501] | | 628 | 545 | 1173 |
| 1893[3502] | | 649 | 554 | 1203 |
| 1894[3503] | | 669 | 571 | 1240 |
| 1897[3504] | | 715 | 598 | 1313 |
| 1898[3505] | | 730 | 607 | 1337 |

3476. “Акты...”, т. II, с. 596.

3477. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 28:

3478. Նույն տեղում, գ. 3811, թ. 5-6:

3479. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:

3480. Նույն տեղում, գ. 3818, թ. 97-98:

3481. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:

3482. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149, նաև՝ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 11:

3483. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 57:

3484. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալով՝ ունեցել է 476 բնակիչ (նույն տեղում, գ. 3859, թ. 161-162):

3485. Նույն տեղում, գ. 3864, թ. 41-42:

3486. Նույն տեղում, գ. 3866, թ. 45-46:

3487. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:

3488. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:

3489. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:

3490. Նույն տեղում, գ. 3872, թ. 30-31:

3491. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:

3492. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:

3493. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:

3494. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև «Արձագանք», 1885, N 4, էջ 51:

3495. “Свод...”, с. 76-77. Այլ վկայության համաձայն՝ ունեցել է 56 տուն («Արձագանք», 1886, N 21, էջ 308):

3496. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:

3497. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:

3498. Նույն տեղում, գ. 3884, թ. 228-229:

3499. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:

3500. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:

3501. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:

3502. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:

3503. Նույն տեղում, գ. 3896, թ.174-175:

3504. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:

3505. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). գյուղի տեսքը հարավ-արևմուտքից***

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1899[3506] | | 735 | 609 | 1344 |
| 1900[3507] | | 752 | 627 | 1379 |
| 1901[3508] | | 752 | 631 | 1383 |
| 1902[3509] | | 760 | 634 | 1394 |
| 1905[3510] | | 766 | 638 | 1404 |
| 1906[3511] | | 706 | 597 | 1303 |
| 1907[3512] | | | | 800 |
| 1908[3513] | 135 | 562 | 513 | 1075 |
| 1909[3514] | | 752 | 631 | 1383 |
| 1910[3515] | | 439 | 361 | 800 |
| 1912[3516] | | 767 | 651 | 1418 |
| 1914[3517] | | | | 1500 |
| 1917[3518] | 102 | | | 1500 |
| 1985[3519] | 9 | | | 14 |

Գառնակերի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների համադրումից ակնհայտ է, որ ԺԹ դարում և մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղի բնակչության թվաքանակը, ընդհանուր առմամբ, շարունակաբար աճել է:

**Զբաղմունք.** գյուղաբնակների հիմնական զբաղմունքներից էին այգեգործությունն ու երկրագործությունը:

**Դպրոց.** առկա տվյալների հիման վրա ներկայացնում ենք Գառնակերի եկեղեցական-ծխական դպրոցի գործունեության ժամանակագրությունը.

| Տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչ | աշակերտ |
|---|---|---|---|
| 1905[3520] | բացվել է հոկտեմբերի 5-ին, միդասյա | | |
| 1906[3521] | ուսուցիչ էր առաջարկվել Կարապետ Տ. Հովսեփյան Բալայանցը | | |
| 1907/08[3522] | երկսեռ | | 50(3իգ.) |
| 1908/09[3523] | | 1 | 62(11 իգ.) |
| 1911/12[3524] | գործել է 1 դասարանով, միամյա | | |
| 1913/14[3525] | չի գործել | | |
| 1914/15[3526] | վերաբացվել է | | |

3506. Նույն տեղում, գ. 3903, թ. 128-129:
3507. Նույն տեղում, գ. 3905, թ. 93-94:
3508. Նույն տեղում, գ. 3906, թ. 99-100:
3509. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
3510. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
3511. Նույն տեղում, գ. 3915, թ. 75:
3512. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
3513. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1910 г.”, с. 199.
3514. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 117:
3515. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 59-60:
3516. Նույն տեղում, գ. 3919, թ. 62-63:
3517. “Кавказский календарь на 1915 г.”, с. 96.
3518. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
3519. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում, (1988-1991), «Հայրենիքի ձայն» 1993, 9-ը փետրվարի, էջ 4:

3520. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 146, թ. 1: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ դպրոցի բացումը տեղի էր ունեցել 1906 թ. սեպտեմբերի 15-ին (նույն տեղում, գ. 207, թ. 19: ):
3521. Նույն տեղում, գ. 226, թ. 1:
3522. Նույն տեղում, գ. 262, թ. 1, նաև՝ գ. 427, թ. 2: **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474:
3523. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 495, թ. 1, նաև՝ 57, ց. 2, գ. 1849, թ. 17: **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 474:
3524. **Խուդոյան Ս.**, նույն տեղում:
3525. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1062, թ. 1:
3526. Նույն տեղում: Նաև՝ ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 1062, թ. 1, 4, 6: Ի դեպ, Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետը միջնորդել էր Էջմիածնի Սինոդի առջև, որպեսզի դպրոցը նորոգելու համար անվճար ծառ հատեին Չարեք վանքի կալվածքից: Այդ խնդիրքը Մայր աթոռի կալվածների ընդհանուր կառավարիչ Լ. Տեր-Ավետիքյանի առարկության պատճառով մերժվել է:



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Սբ. Աստվածածին եկեղեցի (տեսքը՝ արևմուտքից, արևմտյան ճակատից բացված լուսամուտն ու հարավային ճակատից բացված միակ մուտքը)***

| | |
|---|---|
| 1915-16[3527] | գործել է՝ 100 ռուբլի նպաստ ստանալով թեմի դպրոցական դրամագլխի միջոցներից: |
| 1919[3528] | չի գործել |

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գյուղի եկեղեցին կառուցվել է 1838 թ.[3529]: Այդ է վկայում եկեղեցու մուտքի աջակողմյան անկյունաքարին փորագրված տարեթիվը՝ «1838»:

Հիշատակվում է 1849[3530], 1852[3531], 1858[3532], 1861[3533], 1862[3534], 1878[3535], 1885[3536] թթ. վավերագրերում, ընդ որում՝ 1861 թ.՝ Սբ. Հակոբ, իսկ 1858, 1885 թթ. և հետագա տարիներին՝ Սբ. Աստվածածին անուններով:

Եկեղեցին ԺԹ դարին բնորոշ ճարտարապետական առանձնահատկություններով կառույց է: Մուտքը բացված է հարավից: Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Անկյունաքարերը և կառուցողական առավել պատասխանատու հատվածները շարված են սրբատաշ քարերով: Որմերին ագուցված են նաև խաչքարեր ու քանդակազարդ այլ բեկորներ:

Գործել է մինչև 1928 թ.[3537]:

**Քահանա**. *Սիմոն Տեր-Եղիազարյանց* (ծնվ. 1791). հովվել է 1832-1861 թթ.[3538]: Քահանայագործում էր նաև Ջագիրում: Հայտնի է, որ նա «...ուսեալ է զհասարակ ընթերցանութիւն և զեկեղեցական արարողութիւն ի վանս Ծաղկոցայ...»[3539]: Քահանա է ձեռնադրվել 1832 թ. մարտի 27-ին Բաղդասար արքեպիսկոպոսի կողմից: Ուներ 5 որդի՝ Հարություն (ծնվ. 1817), Հովսեփ (ծնվ. 1825), Մարտիրոս (1828), Պողոս (ծնվ. 1836) և Պետրոս (ծնվ. 1839)[3540]: Ի դեպ, 1861 թ. նշվել է, որ «...ի Գառնակէր գտանի զառամեալ Սիմէօն քահանայն Տէր Եղիազարեանց, որ կարօտի անշուշտ օգնականի...»[3541]:

1908 թ. հիշվում է *Կարապետ Տեր-Հովսեփյան Բալայանցը*[3542]:

**Ծաղկոց անապատ.** գյուղի ամենանշանավոր հուշարձանը Ծաղկոց անապատը կամ Գառնակերի վանքն է. գտնվում է Գառնակերից 0,7 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախ ափին:

3527. «Արարատ», 1916, էջ 13: Նաև՝ **Խուդոյան Ս.**, նույն տեղում:
3528. ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 927, թ. 33, նաև՝ գ. 811, թ. 1: Հայտնի է, որ բնակիչները ցանկանում էին Ծաղկոց վանքի հասույթը հատկացնել ծխական դպրոցին:
3529. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 315:
3530. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 97-98:
3531. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
3532. Նույն տեղում, գ. 3831, թ. 25-26:
3533. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3534. Նույն տեղում, գ. 3836, թ. 58:
3535. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:
3536. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
3537. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
3538. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 25-26, նաև՝ գ. 3835, թ. 148-149:
3539. Նույն տեղում, գ. 3831, թ. 25-26, նաև՝ գ. 3833, թ. 134-135, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 11:
3540. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 25-26, նաև՝ գ. 3833, թ. 134-135:
3541. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 11:
3542. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:







***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). երկթռիչք կամրջի մնացորդներ Շամքոր գետի վրա***



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Ծաղկոց անապատի տեսքը հարավից և հարավ-արևմուտքից***

*Պատմություն.* հայ մատենագրության մեջ Ծաղկոց անապատն առաջին անգամ հիշվում է 1467 թ., երբ տեղում Ազարիա ծաղկողը նկարազարդել էր մի ձեռագիր ավետարան և հիշատակարանում նշել. «...եղև նկարակերտութիւն սորա ի յերկիրս Գանձակայ, ի յաթոռս Գառնակերի, ի դուռն Ծաղկոցի սուրբ Աստուածածնիս և յայլ սրբութեանցս, ի կաթողիկոսութիւն տեառն տէր Յովհաննիսի, առ տեղոյս աթոռակալութեան տէր Ծերունի արքեպիսկոպոսի...»[3543]:

Ծաղկոց անապատը Գառնակերի վանք անվանաձևով հիշատակվում է Գողթնի Ցղնա գյուղում 1634 թ. ընդօրինակված «Մեկնութիւն սաղմոսաց» ձեռագրի հիշատակարանում. «...Գառնիկն Գառնեցին` Գառնայկերի վանքն...»[3544]:

Հայտնի է, որ մեկ տարի անց, երբ սուլթան Մուրադը 700 հազ. բանակով արշավել է Հայաստան ու գրավել Երևանի բերդը, Գառնակերում ժամանակավոր ապաստան է գտել Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսն իր աշակերտների հետ. «...Եւ թագաւորն Օսմանցւոց Մուրատ եկեալ էառ զբերդն Երևանայ. և ամենայն երկիրն Երևանայ ցրուեցան ուր և կարացին գնալ` գնացին. նոյնպէս ելեալ Յովհաննէս Եպիսկոպոսն Յօհաննուվանից աշակերտօք իւրովք և գնաց յաշխարհն Աղուանից ի վանքն Գառնակերոյ»[3545]:

1886 թ. հուշարձանի վերաբերյալ նշվել է, որ այն «...քարաշէն, թաղակապ փոքրիկ եկեղեցի [է], ունի մի փոքրիկ գաւիթ, ուր կան երկու անյայտ գերեզմաններ, որոնց Գառնակերցիք պատուում են իբրև սրբեր: Նրանց ասելով` այս տաճարն եղել է կուսանաց անապատ և Ծաղիկ մայրապետի անունով կոչուել է Ծաղկոցայ»[3546]:

*Ճարտարապետություն.* Ծաղկոց անապատը բաղկացած է Սբ. Աստվածածին եկեղեցուց և գավթից, իսկ տարածքը շրջափակող պարսպից ներս ունեցել է «...մէկ մեծ տուն և չորս փոքրիկ խուց, յորս լինին միաբանականք»[3547]:

Անմշակ քարով, կրաշաղախով կառուցված եկեղեցին ունի միանավ բազիլիկ թաղակապ հորինվածք: Արտաքին չափերն են` 9,25 x 6,4 մ: Լուսավորությունն իրականացված է 4 ճակատներից բացված մեկական նեղ, դեպի ներս լայնացող պատուհանների միջոցով: Միակ մուտքով կապվում է արևմուտքից կից ուղղանկյուն հատակագծով գավթի հետ: 1980-ական թվականներին գավիթը կիսավեր վիճակում էր. պատերը պահպանվել էին 1,5 մ բար-

3543. «ԺԵԲ», էջ 244: Ի դեպ, Ծաղկոց վանքում 1468 թ. ստեղծված մեկ այլ ավետարանի (Ազարիա ծաղկող) հիշատակարանում համապատասխան հատվածը վերոնշյալի կրկնությունն է («ԺԵԲ», էջ 272):

3544. «ԺԷԲ», էջ 548:

3545. «**Զաքարեայ Սարկաւագի** պատմագրութիւն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 47:

3546. «Արձագանք», 1886, N 21, էջ 308:

3547. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ.107-108:



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Ծաղկոց անապատի տեսքը արևմուտքից, հյուսիսային պատից բացված լուսամուտի շուրջ ագուցված խաչքարեր (ԺԴ դ.) և տապանաքար (1859 թ.)***

ճրությամբ: Միակ մուտքը հարավային ճակատից էր: Նույն կողմից նկատվում էին նաև երկու լուսամուտի հետքեր:

Հայտնի է, որ գավիթը կառուցվել է հին տեղում ԺԹ դ. վերջին քառորդում Հովսեփ քահանա Բալյանցի նախաձեռնությամբ. «Մենաստանս ունեցած է և փայտաշէն գաւիթ, որը հնութեան պատճառաւ քանդած են գառնակերցիք յորդորմամբ նոյն Յովսէփ քահանային, այժմ շինում են նորը. որի պատերը քարուկիր են, իսկ ծածկն փայտաշէն (գի փայտով): Գաւթումս կայ երկու գերեզման, տեղացիք աւանդաբար ճգնաւորների գերեզման են անուանում. տապանաքարերն անտաշ են և անարձանագիր»[3548]:




***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Ծաղկոց անապատի հատակագիծը***

1919 թ. անապատը գտնվում էր ավերակ վիճակում[3549]:

*Կալվածքները.* 1840 թ. Ծաղկոց անապատի կալվածքների մասին նշվել է. «...ունի զմի այգի արժողութիւն նորին երկու հարիւր յիսուն մանէթ - տարեկան արդիւնք նորին քառասուն մանէթ, մի այգի ևս լի թթենի ծառովք, արժողութիւն սորին քառասուն մանէթ, արդիւնք սորին տասն մանէթ»[3550]:

1847 թ. Ծաղկոց անապատն ունեցել է մեկ խաղողի, մեկ թթենու այգի, մեկ մեծ տուն, չորս փոքրիկ խցեր[3551], 1852-ին՝ խաղողի մեկ այգի և պարսպին կից մեկ մեծ տուն, 4 փոքր սենյակ[3552], իսկ 1860-

3548. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316: Ե. Լալայանի այցելության ժամանակ գավթի կառուցումն ավարտվել էր (**Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 343):
3549. ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 927, թ. 32:
3550. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 63-64:
3551. Նույն տեղում, գ. 3814, թ. 107-108:
3552. Նույն տեղում, գ. 3819, թ. 116-117:

1862 թթ. դրությամբ՝ մեկ այգի և պարսպին կից 3 փայտաշեն սենյակ[3553]:

Հայտնի է, որ 1886 թ. կալվածքը բաղկացած է եղել վարելահողից, խաղողի այգուց և 3 սենյակից[3554]: 1910 թ. տիրում էր 3 դեսյատին հողատարածք զբաղեցնող խաղողի և թթենու այգիների[3555]:

*Վիմագրեր.* Սբ. Աստվածածին եկեղեցու որմերին ագուցված են ԺԵ-ԺԷ դդ. վերաբերող գեղաքանդակ խաչքարեր: Դրանց թվում կան նաև արձանագրվածներ.

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային լուսամուտին (կիսով չափ մնացել է պատի շարվածքի մեջ, և վիմագիրն ամբողջությամբ չի ընթերցվում, տարեթիվը ջարդված է).

*[Թվին] Ջ..(առնվազն՝ 1451 թ.)...[հաւ]րն իմ Թումիկի[ն, մաւր]/ն իմոյ Ճանփ...:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

Խաչքարին եղել է 1 տող.

*ՋԻԵ (1476):*

Հրատ. **Լալայեան Ե.,** Գանձակի գաւառ, էջ 343: «Դիվան...», V, էջ 269:

Խաչքար. ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատի լուսամուտի վերնամասում, ներքուստ, ստորին մասում՝ 6 տող.

*Թվ(ին) / ՋԼԹ (1490). խաչս փ/րկութիւն հո/գոյ Ամիր/հասանին:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

Խաչքար. ագուցված մկրտարանի խորշում.

*Թվ(ին) ՌԺԱ (1562):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

Խաչքար. ագուցված է եղել եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ.

*Սուրբ խաչ տէր պարոն Գաբրիելին քաւարան. թվ ՌճԼԸ (1689):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316: Նաև՝ **Լալայեան Ե.,** Գանձակի գաւառ, էջ 343: «Դիվան...», V, էջ 269:

Խաչքար. ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, լուսամուտի մոտ, ստորին մասում՝ 3 տող.

*...Ներսէս էրեց/ կա(ն)գնեցի զխաչս / ծնողաց իմոց:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու խորանի հյուսիսային խորշում՝ 2 տող.

Նազ|ր(ա)ն:

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

Տապանաքար. ընկած եկեղեցու հյուսիսային պատի տակ՝ բակում, 4 տող.

*Այս է տապան կ(ա)րն(ա)գ(ե)ոցի / Աղաճանանց Ոսկանին, / որք հանդիպիք տուք / ողորմի, 1859 ամի:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 1995, էջ 6:

*Ծաղկոց անապատի վանական դպրոց.* մինչև գյուղում ծխական դպրոց բացելը Ծաղկոց անապատում գործող ուսումնական այս հաստատությունը կարևոր դեր էր կատարում: Դպրոցում դասավանդվում էր «...հայերէն, զեկեղեցական երգս և արարողութիւնս»[3556]: Ուսուցիչներից էր «Յովհաննէս զիտնական վարդապետն Մաղաքեանցը»[3557]:

*Վանահայր.* Ծաղկոց վանքի առաջնորդներից հայտնի են.

*Հովհաննես վարդապետ Մաղաքյանց.* հիշվում է 1820-ական թվականների սկզբից առնվազն մինչև 1839 թ.: Վանքում դասավանդել է նաև հայոց լեզու[3558]: Ի դեպ, 1839-ին պաշտոնավարել է *Մովսես աբեղա Մաղաքյանցի* հետ մեկտեղ[3559]:

1860 թ. հիշատակվում է *Հարություն վարդապետը*[3560]:

Մեկ վարդապետ է հիշվում վանահայրության պաշտոնում 1853[3561], 1862[3562] թթ.:

*Հարություն վարդապետ Մամիկոնյանց.* Հիշվում է 1864 թ.[3563]:

Մեկ վարդապետ է հիշվում վանահայրության պաշտոնում 1878[3564] թթ.:

*Հովհաննես վարդապետ Բարաղամյանց.* Վանահայր է նշանակվել 1882 թ. և պաշտոնավարել շուրջ 28 տարի[3565]: Հայտնի է, որ 1910 թ. Հովհաննես վարդապետը, որն արդեն 106-ն անց էր, դեռևս վանքի առաջնորդ էր: Այդ մասին ժամանակակիցը նշել է. «...Այստեղ է լինում վանահայրական պաշտօնով ծերունի Յովհաննէս վարդապետ Բարաղամեանը, որը 106 գարուն անց է կացրել...: ...վանահայրը զառամեալ հասակում է, դողդողջուն ձեռքերով և անզօր ֆիզիքապէս և մտաւորապէս կառավարելու անապատը, ժամանակն է ազատ կացուցանել նորան պաշտօնից, որից նորան հոգևոր իշխանութիւնը վաղուց պետք է հեռացրած լինէր»[3566]:

**Հրեշտակապետաց վանք.** Ծաղկոց անապատից 150 մ հարավ՝ Շամքոր գետի ձախ ափին, գտնվում է Հրեշտակապետաց վանքը, որից պահպանվել է միայն եկեղեցին: Բարեբախտաբար, եկեղեցու շի-

3553. Նույն տեղում, գ. 3834, թ. 24-25, նաև՝ գ. 3836, թ. 44-45:
3554. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 138:
3555. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 27:
3556. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 40, գ. 3833, թ. 134-135:
3557. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 11:
3558. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3831, թ. 39-40:
3559. Նույն տեղում, գ. 457, թ. 8:
3560. Նույն տեղում, գ. 3834, թ. 24-25, գ. 3833, թ. 112-113:
3561. Նույն տեղում, գ. 2743, թ. 20-21:
3562. Նույն տեղում, գ. 3836, թ. 56:
3563. Նույն տեղում, գ. 3843, թ. 7:
3564. Նույն տեղում, գ. 3870, թ. 26:
3565. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 27, ց. 5, գ. 320, թ. 1:
3566. Նույն տեղում, գ. 775, թ. 27-28:



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Դրեշտակապետաց վանքը և Ծաղկոց անապատը (հեռվում), Դրեշտակապետաց վանքի եկեղեցին հյուսիս-արևմուտքից***



***ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Դրեշտակապետաց վանքի եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից և արևմուտքից***

նարարական արձանագրությունը, որը փորագրված է եղել գավթի հյուսիսային պատին, ԺԹ դարավերջին ընդօրինակվել և հրատարակվել է. պարզվում է, որ եկեղեցին հիմնադրվել է 1816 թ. Հովհաննես վարդապետի և մահտեսի Հովհաննեսի կողմից.

Արձանագրություն.

*Շնորհիւ Աստուծոյ շինեցաւ սուրբ Միքայէլ և Գաբրիէլս ձեռամբ Յովհաննէս վարդապետի եւ մահտեսի Յովհաննէսի հանդերձ միաբան եղբարք. թվ(ին) ՌՄԿԵ (1816):*

Հրատ. **Ջալալեանց**, նշվ. աշխ., Ա, էջ 163: Նաև՝ «Արձագանք», 1886, N 21, էջ 308: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316:

Ծանոթ. Ջալալյանցի մոտ տարեթիվը՝ «ՌԿԵ» (1616):

Հայտնի է, որ վանք կառուցող Հովհաննես վարդապետի մարմինն ամփոփվել է գավթում: Տապանաքարին արձանագրված է.

*Այս է հանգիստ ճգնաւոր Յոհաննէս վարդապետի, շինող վանիս, Մաղաքի որդի. թվ ՌՄՀԷ (1828):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316-317:

ԺԹ դարավերջին վանք այցելած տեղագիրները նկարագրում են համալիրի անմխիթար, կիսավեր ու անտերունչ վիճակը՝ նշելով, որ վանքը չուներ հողատարածքներ (բացի մի այգուց) և գտնվում էր միայն մի քահանայի հսկողության ներքո[3567]: Պատկերը նույնն էր նաև Ի դ. առաջին տասնամյակներին: 1910 թ. հունիսի 28-ին կազմված Գանձակի վանական կալվածքների տեղեկագրում նշված է. «...թթենու և խաղողի այգի՝ տարածութեամբ մոտաւորապէս երեք դեսիատին. տարեկան տալիս է հազիւ քառասուն վեդրոյ գինի: Այստեղ է լինում վանահայրական պաշտօնով ծերունի Յովհաննէս վարդապետ Բարաղամեանը, որը 106 գրուն անց է կացրել... նա 1882 թւականից նշանակված է եղել վանահայր»[3568]:

**Ճարտարապետություն.** ԺԹ դարավերջին դեռևս պահպանվում էին եկեղեցին, կից գավիթը և միաբանության սենյակները. «Վանքս ունի նաև քարու-

3567. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316-317: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 343:

3568. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 27:

կիր գաւիթ, որի մէջ ամփոփուած են ննջեցեալներ: ...Մենաստանս ունի հնն հին խուցեր, որք ունին նեղ լուսամուտներ և ցած դռներ և մի այգի...»[3569]: Մեր այցելության ժամանակ (1984 թ.) վանքից պահպանվել էր միայն եկեղեցին, այն էլ՝ անմխիթար վիճակում՝ փլուզվելու աստիճան:



ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Յրեշտակապետաց վանքի եկեղեցու հատակագիծը

Եկեղեցին 10,7 x 8 մ արտաքին չափերով միանավ բազիլիկ, թաղակապ շենք է՝ արևելքում մեկական ուղղանկյուն հատակագծով, թաղակապ ավանդատներով: Կառույցի առանձնահատկությունըն այն է, որ հյուսիսային ավանդատունն իր ծավալով դուրս է եկել եկեղեցու հիմնական մակերեսից: Եկեղեցու միակ մուտքն արևմտյան ճակատից է: Ներքուստ եղել է սվաղված, որի վրա նկատելի են որմնանկարների հետքեր (հիմնականում՝ խորանի որմերին): Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Ընդ որում, շարվածքում օգտագործված են նաև փոքրաչափ գեղաքանդակ խաչքարեր, որոնցից մեկը հարմարեցվել է որպես հարավային պատուհանի շրջանակ: Նրանից պահպանվել է միայն եզրագոտին: Ունի հետևյալ արձանագրությունը.

*Թ(ւ)ի(ն) ՌԸ(1559):*

Ի դեպ, եկեղեցու զանգը, որը խորհրդային տարիներին բերվել էր Բարում (Սարի Բարում) գյուղի դպրոց և ծառայում էր որպես դպրոցական զանգ, 1980 թ. հունվարի 20-ին անհայտ անձանց կողմից գողացվել է: Այն կրել է 1815 թ. արձանագրություն, որը, բարեբախտաբար, իր ժամանակին գրի է առել բարումցի Պավել Խոջայանը

*Զանգակս շամխոռեցի Իշխան(ե)անց Յոհանջանի որդի ... ի դուռն Ծաղկոցա Հրեշտակապետաց ... յիշ(ա)տ(ա)կ է 1815:*

Հրատ. առաջին անգամ:

3569. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 316, 317:



ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). խաչքարեր՝ Յրեշտակապետաց վանքի եկեղեցու որմերում և բակում

**Սահմանախաչ.** խիստ արժեքավոր և բացառիկ նշանակություն ունի Ծաղկոց Սբ. Աստվածածին եկեղեցում գտնվող գեղաքանդակ սահմանախաչը, որը պահպանման նպատակով 1984 թ. փոխադրել ենք փլուզման ենթակա Հրեշտակապետաց վանքից: Ունի երեքտեղանոց հետևյալ արձանագրությունը.

*Ցքուռ գետ ի Տաւուշ ձո|րոյ մինչեւ Ոսկանապատ, | թուին ՉԿԳ (1314)... տ(եառ)ն Ս(ա)րգիս:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Սահմանախաչ Գարդմանքից, «Ազատամարտ», N 43, 1994, էջ 13:

Ծանոթ. վիմագրում հիշատակվող տեղանունների քարտեզագրմամբ որոշակիանում են այն ընդարձակ տարածքի սահմանները, որոնք ձգվում էին արևելքում՝ մինչև պատմական Ոսկանապատ (Խանլարի շրջ., գ. Ջուռնաբադ) գյուղը, արևմուտքում՝ մինչև Տավուշ գետ, հյուսիսում՝ մինչև Կուր գետ, հարավում՝ Մռավ և Սևան ջրբաժան լեռնաշղթայի գագաթնագծով: Ինչ վերաբերում է տիրույթների տեր Սարգսին, ապա այլ սկզբնաղբյուրներում վկայված չէ, և ինքնությունն անհայտ է:

Գեղաքանդակ սահմանախաչը պահպանման նպատակով 1984 թ. փոխադրել ենք փլուզման ենթակա Հրեշտակապետաց վանքից Ծաղկոց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցի:



**_ԳԱՌՆԱԿԵՐ (ԲԱՐՈՒՄՇԵՆ). Հրեշտակապետաց վանքի եկեղեցու բակում հայտնաբերված սահմանախաչը (1314 թ.)_**

**Հարանց գերեզմանոց.** գտնվում է Հրեշտակապետաց վանքից արևմուտք: Պահպանվել են «...ճգնաւորաց, վարդապետաց և միաբանից շատ հանգիստներ»[3570]:

**«Հարանց ճգնարան».** Հրեշտակապետաց վանքից արևելք՝ Շամքոր գետի աջ ափին բարձրացող ժայռերի մեջ, պահպանվել է մի քարայր, որտեղ ԺԹ դարավերջին եղել են «...երեք պատուական խաչքար և որի մէջ, աւանդաբար ասում են, ճգնած են ճգնազգեաց անձինք»[3571]: Մեր այցելության ժամանակ (1984 թ.) խաչքարերը տեղում չէին:

**Գյուղամերձ այլ հուշարձաններ:** *Եկեղեցի.* կառուցված է եղել Գառնակերի հյուսիսարևմտյան եզրին՝ Յից քարի ձորաբերանին: Ըստ բարսումցի Նիկոլայ Ղազարյանի վկայության՝ եկեղեցին եղել է փայտածածկ, երկթեք տանիքով, կառուցված տեղական սպիտակ ավազաքարով, իսկ մուտքի ճակատակալ քարին փորագրված է եղել շինարարական հետևյալ արձանագրությունը.

3570. Նույն տեղում, էջ 317:
3571. Նույն տեղում:

Արձանագրություն, որը եղել է եկեղեցու ճակատակալ քարին.

*Թվ(ին) ՈՂԳ (1244):*

Ծանոթ. վիմագիրը վերցված է Ն. Ղազարյանի անտիպ աշխատությունից:

Եկեղեցին քանդել են 1934 թ. և տեղում կառուցել դպրոց:

**«Նահատակ» ուխտատեղի.** գտնվում է գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ Շամքոր գետի աջ ափին: ԺԹ դարավերջին տեղում գոյություն է ունեցել «...մատուռ, ձեղունն փայտաշէն, որի մէջ կայ մի գերեզման. որ է անունն անյայտ նահատակի գերեզմանն»[3572], որից 1984 թ. միայն հետքերն էին նկատելի:

**«Թռած խաչ» ուխտատեղի.** գտնվում է Սպիտակ առու և Յամաք առու կոչվող ձորերի միջև՝ ջրբաժան գծի վրա:

**«Հնձաձորի պկատեղեր» գյուղատեղի.** տարածվում է Շամքոր գետի Հնձաձոր վտակի աջ ափին: Հյուսիսարևելյան եզրին պահպանվել են մատուռի և խաչքարերով գերեզմանոցի ավերակները:

**«Բով ձորի պկատեղեր» գյուղատեղի.** գտնվում է Գառնակերից հյուսիս: Խորհրդային տարիներին տարածքում կառուցել են անասնապահական ֆերմաներ:

**«Չոր Պռակի» քարայր.** եղել է գյուղի պաշտպանական ամրություններից, որտեղ անհրաժեշտության դեպքում կարող էին պատսպարվել 10-15 մարդ:

## ԳՅՈՅՍԱՄԵԴԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևմուտք՝ Չարդախլու-Շամխոր մայրուղու ձախ եզրին, ծովի մակերևույթից 1090-1150 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը, քաղաքական նկատառումներով, գոյացվել է խորհրդային տարիներին Չարդախլուից խլված հողերի վրա:

## ԳՅՈՒԼԱՄԲԱՐ
## (ԳՅՈՒԼԱՄԲԻՐ, ԳԼԱՄԲԱՐ, ԳՅՈՒԼԱՄԲՅՈՒՐ, ԿՅՈՒԼԱՄԲՅՈՒՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ՝ Շամքոր գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 1090-1150 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հիմնադրման և միջնադարյան շրջանի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները լռում են, սակայն տարածքում պահպանված հուշարձանները վկայում են բնակավայրի գոյությունը առնվազն ԺԲ դարից: Ամենայն հավանականությամբ, գյուղի պատմական անունը մոռացության է մատնվել, և ԺԸ դարից վավերագրերում և

3572. Նույն տեղում:

տեղագրական նյութերում այն հիշվում է Գյուլամ-բար անվամբ:

Հայտնի է, որ ԺԸ դարի 60-ական թվականներին վրաց Հերակլ թագավորը, ի թիվս Հյուսիսային Արցախի շատ գյուղերի հայ բնակիչների, Թիֆլիս էր փորձել գաղթեցնել նաև Գյուլամբար և Ղարամու-րատ գյուղերի շուրջ 25 տուն բնակիչների: Վերջին-ներիս, սակայն, հաջողվում է փախչել և հաստատ-վելով Տավուշ (Շամշադին) գավառում՝ հիմնել Այգե-ձոր (Ղուլալի) գյուղը. «...գաղթականութիւնից խույս տալու համար՝ գալիս են նոյն ժամանակի Շամշա-դին վիճակի տէր Ալի-Սուլթանի մօտ, որին թալդա (ստորագրութիւն, հպատակութիւն) են տալիս նրա հովանաւորութեան տակը մնալու, միայն այն պայ-մանով, որ ներկայ գիւղի տեղը շեն գցեն (հիմնար-կեն)»[3573]:

1804 թ. Նուկզարի Սբ. Ամենափրկիչ վանքի պատկանելության հարցի առնչությամբ Հովհան-նես արքեպիսկոպոսին հղված գրության մեջ Գյու-լամբարը հիշատակվում է իբրև վանքի գյուղ. «Մեք՝ երկու գիւղացիքս՝ Պարսըմեցիք և Գառնակերցիք որպէս լուէալ և իմացեալ եմք ի նախնեաց մերոց, այսպէս գիտեմք և վկայեմք. որ Գիւլամբիրին Ամե-նափրկչինն է եղած գիւղ. որ մինչև ցայսօր ևս հա-սարակաբար վանքի գիւղ կասեմք»[3574]:

1842 թ. նշվել է, որ Գյուլամբարը «...շինեալ առ երի Շամքօռ գետոյն, այս տեղի վայելուչ է և ճոխ այգեօք և այլ ամենայն իրօք, ... բնակիչք էին ի սմա գերդաստանք երեսուն. բայց այժմ թողեալ զայն վայր գաղթեցին ի լեռնակողմն»[3575]: ԺԹ դարա-վերջի մի տեղեկությամբ՝ ամայի Գյուլամբարը վերստին շենացրել է Նուկզարից փոխադրված մի քանի հայ ընտանիք[3576]:

1886 թ. գյուղը թիֆլիսաբնակ մեծահարուստ Յի-րալյանցների կալվածքն էր. ունեցել է ընդամենը 7 տուն բնակիչ, որոնց հիմնական զբաղմունքը այգե-գործությունն էր[3577]: 1917 թ. ունեցել է 325[3578], 1986-ին՝ 15-20 բնակիչ (12-15 տուն)[3579]: 1988 թ. հայա-թափվել է:

**Եկեղեցի.** Գյուլամբարի «...հասարակ և փայ-տածածկ...» ծխական եկեղեցին, որտեղ երբեմն ժամերգություն էր կատարում Բարսումի քահա-նան[3580], քանդել են խորհրդային տարիներին:

3573. **Գասպար Յ.**, Գիւղական աւանդութիւններ, «Նոր-Դար», 1889, N 50:

3574. ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 596, թ. 1:

3575. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 162: Ըստ Ե. Լալայանի բնակիչները տեղափոխվել են Ջակիր և այլ գյուղեր («Գան-ձակի գաւառ», էջ 324):

3576. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 325: **Բարխուտա-րեանց Մ.**, Արցախ, էջ 296:

3577. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:

3578. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:

3579. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հու-շարձանները, էջ 6: **Карапетян Б.**, **Карапетян С.**, Тайны Гандзака (Кировабада) и Северного Арцаха, М., 1998, с. 307.

3580. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:




***ԳՅՈՒԼԱՄԲԱՐ (ԳՅՈՒԼԱՄԲՅՈՒՐ). Կարմիր վանքի (Դասնո վանքի) եկե-ղեցու մնացորդները ու հատակագիծը***

**Կարմիր վանք.** գյուղի հյուսիսարևմտյան եզրին՝ Շամքոր գետի աջ ափին պահպանվել են «Դասնո» կամ «Հոռոմաշեն» վանքի ավերակները (ըստ տե-ղացիների՝ «Կարմիր վանք»): Ունի պատմական հետաքրքիր անցյալ. խաչաձև հորինվածքով բա-ցառիկ տեղ է գրավում երկրամասի պաշտամուն-քային հուշարձանների շարքում (նույնպիսի հորին-վածք ունի Գետաբակի Սբ. Սարգիս եկեղեցին):

*Պատմություն.* ավանդության համաձայն՝ վան-քը կառուցվել է «...ի կրօնաւորաց Հայոց փախուցե-լոց ի Յունաստանէ ի Մ (751) թուին»[3581]:

Հետագայում վանքը հիշատակվում է 1184 թ. միջնադարի նշանավոր օրենսգիր Մխիթար Գոշի կողմից «Գիրք Դատաստանի» աշխատությունը տեղում ստեղծելու առնչությամբ. «Բայց ձեռնար-կութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականու-թեանն Հայոց ՈԼԳ... յաշխարհիս Առանայ, ի նա-հանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակայ, յա-նապատի եւ յեղբայրանոցիս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչե-ցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնտուութեամբ հայր Յովսեփայ եւ եղբաւր Պաւղոսի յորդորմամբ յառա-ջարկութիւնս»[3582]:

3581. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ.,մասն Ա, էջ 162:

3582. **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխատ. Խ. Թորոս-յանի, Երևան, 1975, էջ 25: Նաև՝ «Ե-ԺԲ դարերի հայերեն ձե-ռագրերի հիշատակարաններ», աշխատ. Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 242-243:

Այնուհետև, առնվազն մինչև 1804 թ. աղբյուրները լռում են և ոչ մի տեղեկություն չեն հաղորդում Կարմիր վանքի վերաբերյալ: Այս թվականին հիշվում է որպես Նուկզարի Սբ. Ամենափրկիչ վանքի ենթակայության տակ գտնվող անապատ. «...Կարմիր եկեղեցին... անապատն է եղած մեծ վանիցն Ամենափրկչին և նորա Գիւլամբիր գիւղի և կամ այլ գիւղից հասոյթքն և իրաւունքն՝ թէ ուտելիք և թէ այլ պիտոյք կժողովէին այն Անապատումն և անդուստ կհոգային և կտանէին ի մեծ վանքն»[3583]: 1853 թ. սեպտեմբերի 28-ին կազմված մի վկայագրում կարդում ենք. «...ի վայր քան զայս վանք գտանի և այլ վկայարան մի զօրաւոր ուխտատեղի կոչեցեալ Կարմիր եկեղեցի, ի բացեայ յայն վանաց իբրև մի վերս և կէս տեղեաւ առ երի Շամքոռ գետոյն. վկայարան եկեղեցի այս կցորդ է նոյն վանաց իբրև անապատ մայր վանաց...»[3584]:

Եկեղեցին լքվել է ԺԹ 40-ական թվականներին, սակայն շինությունները կանգուն էին դեռևս մի քանի տասնամյակ:

1886 թ. հուշարձանը գտնվել է հետևյալ դրության մեջ. «...գետի աջ ափին՝ կայ մի մատուռ, Կարմիր եկեղեցի կոչուած, քարաշէն թաղակապ, որին կից մի գաւիթ, ուր կան երեք անյայտ գերեզմաններ: Գաւթի հիւսիսային և հարաւային արտաքին խորշերի մէջ եղել են արձանագրութիւններ, որոնք խորտակուած են դիտմամբ. այժմ նշմարելի են միայն տողերի սկզբնատառերը»[3585]:

ԺԹ դարավերջին վանքն ականատեսին ներկայացել է այսպես. «Շամքոր գետակի աջ ափի մօտ, ճանապարհի վերայ հիմնուած է տաճարս, որ փոքր, խաչաձեւ, բարձրաշէն և ամբողջապէս սրբատաշ կարմիր քարով շինուած է, վասնորոյ կոչուում է Կարմիր եկեղեցի: Տաճարս ունի գեղեցիկ և սրածայր կաթուղիկէ, միայն աւագ խորան, որի հարաւային անկիւնում մի փոքր և մութ խորան: Աւելի վանքի ձև ունի տաճարս, քան թէ եկեղեցու, ունի և գաւիթ, որի մէջ ամփոփուած են շատ ննջեցեալներ, որոց քարերն չունին արձանագրութիւն. ունի և բաւական խուցեր միաբանից համար և հանգստարան և քարուկիր շրջապարիսպ, որք կիսաւեր են և ենթարկուած քայքայման վիճակի: Վանքն իւր հիւսիսային արտաքին կողմում, սալկախից ներքև ունեցած է հայերէն երկար արձանագրութիւն, որի մէջ յականէ յանուանէ նշանակուած է եղել վանուցս անշարժ կալուածներն: Մի քանի տարիներ առաջ Գանձակեցի ոմն անազնիւ հայ ջարդում է արձանագրութիւն կրող քարերը և նենգութեամբ իւրացնում կալուածները»[3586]:

Եկեղեցին հիմնովին ավերել են 1930-ական թվականներին՝ քարերն օգտագործելով վանքից մոտ 100 մ հյուսիս գտնվող անասնագոմի պատերի շարվածքում: 1980 թ. նշմարվում էին միայն հիմնապատերի առանձին հատվածները: Ըստ պահպանված մնացորդների՝ կարելի է ենթադրել, որ եկեղեցին ունեցել է կա՛մ եռախորան, կա՛մ քառախորան հորինվածք և, ամենայն հավանականությամբ, եղել է վաղ միջնադարի հուշարձան՝ Զ-Է դդ. կառույց:

**Կամուրջ.** գյուղից արևմուտք՝ Շամքոր գետի վրա պահպանվել են միջնադարյան բազմաթռիչք կամրջի խելերի մնացորդներ՝ շարված գետաքարով ու կրաշաղախով[3587]:

## ԴԱԼԼՅԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ կից Գանձակ-Աղստաֆա երկաթուղագծին (ձախ կողմից), ծովի մակերևույթից 320-350 մ բարձրության վրա:

Բնակավայրի գոյացումը պայմանավորված է եղել երկաթուղային կայարանի առկայությամբ:

## ԴԱԼԼՅԱՐ-ՋԵԻՐ

**Տեղադրությունը.** գտնվում է շրջկենտրոնից 6 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 280-300 մ բարձրության վրա:

**Պատմությունը.** մինչև ԺԹ դարի վերջերը գյուղատեղին խաշնարած թուրք ցեղերի համար ծառայել է որպես ձմեռոց, այնուհետև աստիճանաբար գոյացել է ներկայիս զուտ թրքաբնակ գյուղը:

Եղել է կալվածատեր Մուսախան Շամխորսկու իրավասության ներքո[3588]:

**Բնակչությունը.** բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[3589] | 43 | 74 | 85 | 159 |
| 1886[3590] | 329 | 1123 | 790 | 1913 |
| 1914[3591] | | | | 2008 |

## ԴԱԼԼՅԱՐ-ՋՐԴԱԽԱՆ (ՀԱՋԻԱԼԵԿՊԵՐԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 220-240 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

## ԴԱՇԲՈՒԼԱՂ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ-արևմուտք՝ Բաղա-Չարդախլու խճուղու վրա՝ ծովի մակերևույթից 1200-1260 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

3583. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 596, թ. 1:
3584. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 17:
3585. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:
3586. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 295-296:
3587. **Կարապետյան Ս.**, Մի Նոր տարի՝ Շամքորի ձորում (ճամփորդական հուշեր), «Գարդմանք», 1996, N 3, էջ 13:
3588. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 13-14:
3589. “Акты...”, т. II, с. 596.
3590. “Свод...”, с. 78-79.
3591. “Кавказский календарь на 1915 г.”, с. 115.






***ԴԱՇԲՈՒԼԱՂ. Յուսկան նահատակ վանքի տեսքը հյուսիս-արևելքից, հարավ-արևմուտքից, արևելքից և տապանատան ու եկեղեցու մուտքերը***

**Հուսկան նահատակ:** *Տեղադրություն.* գտնվում է Դաշբուլաղ գյուղից 0,5 կմ արևելք՝ Բադա (Լղարակ) և Չարդախլու գյուղերի միջև, ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա. «Ուխտատեղիս այս գտանի ի միջակետի յաջորդութեան Եղիսաւետապօլու և գործակալութեան Շամշատինոյ»[3592]:

**Հիմնադրումը.** Հուսկան, Ոսկան Ճգնավորի[3593], Ոսկան կամ Ոսկյանց[3594] վանքը ավանդաբար կապված է ոմն նահատակ ճգնավորի անվան հետ, որի մարմինն ամփոփված է եղել վանքում. «Մատուռի (Սբ. Գևորգ եկեղեցին-*Ս.Կ.*) հարաւակողմը, մի փոքրիկ խուցաձեւ շինութեան մէջ, կայ մի անյայտ գերեզման, որն եւ անուանում են Ոսկան նահատակ, եւ որին ուխտ են գալիս եւ թուրքեր, վերջիններս անուանում են այս ուխտատեղը Բալաճըլխ»[3595]:

Համաձայն Հուսկան նահատակ վանքում պահպանված մի խաչքարի արձանագրության՝ եկեղեցին կառուցվել է 1590 թ. (տե՛ս արձ., սույն աշխ., էջ 491): Ճիշտ է, այդ վիմագիրն ավելի ուշ ժամանակների փորագրություն է, ամենայն հավանականությամբ, ԺԹ դ. 2-րդ կեսի, բայց, կարծում ենք, որ դրա հեղինակն իր ժամանակին ձեռքի տակ ունեցել է որոշակի և վստահելի վավերագրեր, որոնք մեզ չեն հասել: Համենայն դեպս, եկեղեցու հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունները էլ նույնն են փաստում:

*Պատմություն.* 1883 թ. հնավայր այցելած Հ. Մանասյանցը ցավով արձանագրել է վանքի անմխիթար վիճակը. «...բաղկացած է մէկ համարեա գոմ դառած եկեղեցուց և սրան կից մեկ փոքրիկ խորանից: Եկեղեցում ձմեռը պահում են իրանց անասունները մօտակայ թուրքերը, հեռաւոր տեղերի ուխտաւորներն էլ, որոնք մնում են գիշերելու, իջևա-

3592. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:

3593. Նույն տեղում, գ. 3437, թ. 15:

3594. «Արձագանք», 1893, N 44, էջ 2:

3595. **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, էջ 87: Նաև՝ «Մշակ», 1883, N 74, էջ 1 («Խորանում գտնվում է նահատակի գերեզմանը, վրան մի մեծ քար, որ բռնում է համարեա խորանում եղած բոլոր տարածութիւնը. գերեզմանաքարի վրա ոչինչ արձանագրութիւն չը կայ...»): **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 321 («...Ոսկան Նահատակ անուամբ ուխտատեղին, որ Բուլանլուղ եւս է կոչւում»):



***ԴԱՇԲՈՒԼԱՂ. Հուսկան նահատակ վանքի եկեղեցու հյուսիսային ճակատում ագուցված խաչքարեր***

նում են իրանց անասուններով եկեղեցում, բեմը բոլորովին քայքայված է. ոչինչ հսկողութիւն չը կայ այն մարդկանց կողմից, որոնց յանձնված է»[3596]:

1884-1885 թթ. եկեղեցին նորոգել է բաղացի Կարապետ Սափարյանցը, որը «...ժրաջան աշխատութեամբ իր առաջուան խարխուլ և կիսաւերակ դրութիւնից կատարեալ վերանորոգած» է[3597]:

1888 թ. եկեղեցու տարածքը սկսել է բարեկարգվել. «...այժմու պահապանը սկսած է սենեակներ շինել և եկեղեցւոյ չորս կողմը մաքրել»[3598]:

1890 թ. վանքի հերթական այցելուն նշել է. «Մուտքի երկու կողմ 2 սենեակ փառավոր լուսամուտներով ուխտավորների համար: Եկեղեցու դռան ձախ կողմ փոքր դռնակ է բացվում մի խորանի մեջ, ուր բազմած կա նահատակի գերեզմանը: Շիրիմը շաղախված է խնկի ու մոմի կեղտի ու մնացորդների մեջ: Խորանը արևմուտքից նեղլիկ լուսամուտ ունի: ...Եկեղեցու արևմտեան կողմ կան հին շիրիմներ անգիր, իսկ արևելեան, հիւսիսային կողմերին կան բակեր փլված տների»[3599]:

Վանքի կառույցները շարունակ քայքայվելով և երկար ժամանակ լուրջ նորոգությունների չենթարկվելու պատճառով 1893 թ. հայտնվել էին անմխիթար դրության մեջ. «…Եկեղեցին ունէր 4 սենեակ, իսկ այժմ մնացել է 2-ը և դրանք էլ շուտով կքանդուեն: …Սրանից մի տարի առաջ իբրև ժամկոչ այդտեղ բնակւում էր մի ծերունի, որը նայում և պահպանում էր եկեղեցին. այժմ այդ ծերունին վախճանուել է և եկեղեցին բարձի թող է արած»[3600]:

Հայտնի է, որ 1905 թ. նոյեմբերին թուրքերը եկեղեցին ավերել ու կողոպտել են[3601]:

1907 թ. վանահայր Մեսրոպ Տեր-Ստեփանոսյանցը կառույցի վերանորոգության համար կազմել է վանքի եկամուտների հաշվեմատյանը[3602]:

1985 թ. մեր այցելության ժամանակ, եկեղեցին գտնվում էր խիստ քայքայված վիճակում, և դեռևս նկատվում էին միաբանության սենյակների մնացորդները (ամենայն հավանականությամբ, դրանք սկզբում ծառայել են որպես վանահոր բնակարան, իսկ ավելի ուշ՝ սոսկ կացարաններ ուխտավորների համար):

*Ճարտարապետություն.* Հուսկան նահատակ վանքի գլխավոր կառույցը Սբ. Գևորգ[3603] եկեղեցին է: Արտաքին չափերն են՝ 14 x 7,95 մ: Միանավ հորինվածքով թաղածածկ շինություն է: Աղոթասրահի մեկ զույգ որմնասյուների վրա հենված թաղակապ ծածկն առնված է երկթեք տանիքի տակ: Ավանդատներ չունի: Խորանի և եկեղեցու բոլոր պատերի

3596. «Մշակ», 1883, N 74, էջ 1:

3597. **Գասպարեան Յովհ.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, «Նոր Դար», 1889, N 197, էջ 3: Նաև՝ ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 15:

3598. «Արձագանք», 1888, N 7, էջ 87:

3599. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 15-16:

3600. «Նոր-Դար», 1893, N 133, էջ 2:

3601. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3764, թ. 278:

3602. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 56, թ. 3:

3603. «Նոր-Դար», 1893, N 133, էջ 2:



***ԴԱՇԲՈՒԼԱՂ. Յուսկան Նահատակ վանքի եկեղեցու հարավային ճակատի արևելյան անկյունում ագուցված խաչքար (ԺԷ դ.)***

մեջ բացված են խորշեր: Միակ մուտքը հարավից է: Լուսավորությունն իրականացված է չորս ճակատներից բացված պատուհանների միջոցով: Հիմնականում կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Սրբատաշ են միայն անկյունաքարերը: Ի դեպ, պատերը բավականին հաստ են՝ 123 սմ, որը բնորոշ է տարածաշրջանի ուշ միջնադարյան պաշտամունքային այլ կառույցներին ևս: Ներքուստ սվաղված է: Կառույցն առանձնահատուկ է պատերի մեջ արտաքուստ ագուցված բազմաթիվ խաչքարերով, տապանաքարերով և դրանց բեկորներով, որոնք ոճական և գեղարվեստական առումով վերաբերում են ԺԶ-ԺԷ դարերին: Կատարված ճորոգումների հետքերն ակնհայտ են:



***ԴԱՇԲՈՒԼԱՂ. Յուսկան Նահատակ վանքի հատակագիծը***

Եկեղեցու հարավային պատի արևմտյան անկյանը կից է ուղղանկյուն հատակագծով, միաթեք ծածկով քառակուսի տապանատունը (դամբարանատուն): Արտաքին չափերն են՝ 4,55 x 3,27 մ: Ճարտարապետական հորդարանքի ամենաշքեղ հատվածը արևելքից բացված մուտքն է, որը, ի դեպ, հազվադեպ երևույթ է, քանի որ համանման բազմաթիվ այլ կառույցներում մուտքերը հանդիպում են մնացած բոլոր կողմերից, բայց ոչ երբեք արևելքից: Այդ ճակատը գեղազարդված է ԺԶ-ԺԷ դդ. բնորոշ զարդաձևերով մշակված գեղաքանդակ խաչքարերով: Բացի արևելյանից, որն իրականացված է սրբատաշ քարով, մնացած պատերն անմշակ քարից են: Շինարվեստի բոլոր առանձնահատկություններով հար և նման է Սբ. Գևորգ եկեղեցուն ու, հետևաբար, ժամանակակից է նրան:

Եկեղեցուց արևմուտք տարածված է ընդարձակ գերեզմանոցը: Թաղումներն ունեն խիտ դասավորություն: Պահպանված բոլոր սալատապանները զուրկ են արձանագրություններից և հարդարանքից:

**Վանահայրեր.** *Գաբրիել վարդապետ.* հիշվում է 1843 թ.: Նրա օրոք վանքը գտնվում էր խիստ աղքատ ու խղճալի դրության մեջ[3604]:

*Մեսրոպ քահանա Ստեփանոսյանց.* վերատեսուչ-վանահայրն էր 1891-1923 թթ.: 1923 թ. գրել է. «Ուղիղ երեսուն և երկու տարի է, որ ես (Մեսրոպ քահանա Ստեփանոսյանց-*Ս.Կ.*) վանահայր-վերատեսուչ եմ կարգուած սուրբ Հուսկան Նահատակի ուխտատեղույ վանքի վերայ...»[3605]: Նրա օրոք՝ 1902 թ., վանքում կատարվել են վերանորոգման աշխատանքներ (տե՛ս արձ., սույն աշխ., էջ 491):

Հայտնի է, որ 1924 թ. ապրիլի 18-ին Մեսրոպ քահանա Ստեփանոսյանցը դիմել է Գանձակի հոգևոր կոնսիստորիային վանքի անմխիթար վիճակը բարելավելու նպատակով իրեն վերստին վերատեսուչ-վանահայր նշանակելու խնդրանքով: Նա նշել էր, որ իր պաշտոնավարության տարիներին «...լիազորութիւն եմ ստացել բարձր իշխանութիւնից վանքը վերանորոգելու. վանքը, սրբավայրերը և թէ սենեակները, սրբոց գերեզմանները ըստ արժանոյն վերանորոգել և շքեղ երկաթի ամուր վանդակներով վանդակապատել եմ, աղբիւրներ եմ շինել, ժամանակի բարեպաշտ և ջերմեռանդ ուխտաւորաց նուերներով. իմ անխոնջ աշխատանօք յետ չեմ կասեցել և փատուել տեսակ տեսակ ծանր և դժուարին գործերը տանելու, և վանքին ու բոլոր սրբավայրերին պղծագործող և շատ տարիներից ի վեր բուն դրած թուրքերին հալածել և արտաքսել եմ իմ մարմնաւոր իշխանութեան ազդու հրամաններովն ու օգնու-

3604. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1459, թ. 1:

3605. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 56, թ. 2, նաև՝ ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 28:

թեամբը. չերկնչելով նորանց մահացու սպառնալիքներին ու լպիրշ խոսքերին և միայն կերպ յաղթահարել և պարտել եմ, ևս առաւել եռանդով հոգացել եմ վանքի ներքին և արտաքին պայծառութեան համար: ...Բայց տարաբախտաբար այս մի քանի չարաբաստիկ տարիներում վանքի վերահսկողութիւնը Տէր Գրիգորին յանձնւեց իբրև գործակալի, սակայն ...վանքն էլ մնաց անհոգատար և անուշադիր, նորից Իրմաշտլուեցի թուրքերը գրաւեցին վանքի դալարագեղ վարելահողերն ու մարգագետինները, ...նորից աճապարեցին բուն դնել վանքի շուրջը, որը օրէցօր քայքայւում և աւերւում է, ու պղծութեան ու տղմի մէջ էլ խարխափում է»[3606]: Մեսրոպ Տեր-Ստեփանոսյանցի խնդրանքը հոգևոր իշխանությունների կողմից բավարարվել է, քանի որ նույն թվականի հուլիսի 19-ի գրությամբ նա արդեն հիշվում է որպես վանքի վանահայր[3607]:

**Կալվածքը.** Հուսկան նահատակ վանքի կալվածքների զբաղեցրած սահմանների, դրանց տնտեսական կացության և եկամուտների մասին որոշ տվյալներ մեզ հայտնի են միայն ԺԹ դարավերջից: Հայտնի է, որ 1888 թ. կալվածական եկամուտը ծառայում էր ի նպաստ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի. «...յաճախում են բաւական ուխտաւորներ, և որի արդիւնքը ստանում է Ներսիսեան դպրանոցը»[3608]:

1910 թ. վանքի անշարժ ունեցվածքը բավականին կրճատվել է՝ հայտնվելով բարձիթողի վիճակում. «Այս վանքը ոչինչ չունի, բացի մի աւերակ դարձած սենեակից: Ունեցել է թէև անցեալում հող, սակայն անտէրութիւնից տէրութիւնը գրաւել է...»[3609]:

**Վիմագրեր.** Հուսկան նահատակ վանքից արձանագրություններ հրատարակել են Քաջիկյանն ու Ս. Քամալյանը: 1985 թ. մեր այցելության ժամանակ տեղում գտել ենք նախկինում հրատարակած միայն մեկ խաչքարի արձանագրությունը և, բացի այդ, ընդօրինակել ենք ևս 4 արձանագրություն (ընդամենը՝ 6 միավոր), որոնք ներկայացնում ենք ստորև.

Խաչքար. ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, կից երեք խաչքարերից մեկի քիվին, ստորին մասում՝ 4 տող.

Քիվին.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխաւս Մաղակիայ(ին), թվ(ին) ՌԽԱ (1592):*

Ստորին մասում՝

*1590-ին եղեւ շինու(թ)ի(ւ)ն ս(ուր)բ եկե(ղեցոյս):*

Հրատ. **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1888, N 7, էջ 87:

Գրակ. ԳԱԹ, Ս. Քամալյանի ֆ., տետր N 1, VI-11, թ. 16:

Ծանոթ. վիմագիրը Քաջիկյանի մոտ թերի է: Ստորին մասում փորագրված արձանագրության գրչաոճը բնորոշ է ուշ շրջանին:

Տապանաքար. ագուցված է եղել եկեղեցու հարավային ճակատին.

*Ես Պեկիխանս, որդին իմ Որոյ խանս, կանգնեցի սուրբ խաչս բարեխոս ի դուռն Տարս(աի)ճին:*

Հրատ. **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, էջ 87:

Ծանոթ. տապանաքարը հարդարված է եղել գեղեցիկ պատկերաքանդակներով. «…գերեզմանաքար, որի վերայ նկարուած են մի ձիաւոր մարդ, որ ձեռքին ունէ բազէ. նորա ձիու առաջն էլ կանգնած է մի մարդ, գինու գաւն եւ հազրաբէշան ձեռին. նորանց կողքին, հացի սեղանի մօտ, երկու մարդ, որոնցից մինը դարձեալ գաւն և բաժակը ձեռին գինի է լցնում եւ միւսը սազ ածում. նորանց կողքին էլ շամփրած խորովածը կրակի վերայ. քարի եզերքի վերայ գրուած է...» (նույն տեղում):

Խաչքար. ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, քիվին, հիմնախաչից վեր՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չ(ս) բ(ա)ր(է)խ(աւ)ս Ա...| թվ(ին) ՌԿԲ (1613):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Գարդմանաց աշխարհի վանքերը. Հուսկան նահատակ, «Գարդմանք», 1997, N 3, էջ 9:

Արձանագրություն. եկեղեցու հարավային ճակատին՝ 2 տող.

*1882. Մկրտիչ | Մարինեանց:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Գարդմանաց աշխարհի վանքերը. Հուսկան նահատակ, էջ 9:

Արձանագրություն. եկեղեցում, մի բեկորի վրա՝

*1886. Գէորգ | Բոզեանց, | շոլաւորցի:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Գարդմանաց աշխարհի վանքերը. Հուսկան նահատակ, էջ 9:

Արձանագրություն. եկեղեցու ներսում, խորանի առջև ընկած քարի վրա՝ 8 կարճ տող.

*Յիշատակ է | վերանորո|գութիւն ս(ուր)բ ուխտ(ատ)եղոցս | վանահայր Մե|սրոպ ք(ա)հ(ա)ն(ա)յի | Ստեփանոս(եան)ց | 1902 ի ամի:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Գարդմանաց աշխարհի վանքերը. Հուսկան նահատակ, էջ 9:

## ԴԱՇԲՈՒԼԱՂ

Համանուն 2-րդ գյուղը գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս՝ ծովի մակերևույթից 240-260 մ բարձրության վրա:

Զուտ թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԴՅՈՒՀԱՐԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ Զակամ գետի աջ կողմում տարածված լայնարձակ տափաստանում՝ ծովի մակերևույթից 340-370 մ բարձրության վրա:

**Պատմություն.** թրքաբնակ գյուղը հիմնվել է ԺԹ դարի 2-րդ կեսին: Հայտնի է, որ 1894-95 թթ. պատկանում էր ազգությամբ թուրք 9 կալվածատերերի[3610]:

**Բնակչություն.** մինչև 1870-ական թվականների սկզբները Դյուհարլին զուրկ է եղել մշտաբնակներից և ծառայել է իբրև ձմեռոց: Գյուղի բնակչության

---

3606. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 56, թ. 2:
3607. Նշվ. գործը, թ. 3:
3608. **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, էջ 87:
3609. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 28:
3610. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 3-4:

թվաքանակն արտահայտող վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1874[3611] | | | | 1354 |
| 1886[3612] | 252 | 869 | 634 | 1503 |
| 1914[3613] | | | | 1925 |

## ԵՆԻԱԲԱԴ (ԲԻՏՏԻԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևելք՝ Շամքոր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 200-215 մ բարձրության վրա:

Հիմնել են նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը ԺԹ դարավերջին: 1908 թ. ունեցել է 64 բնակիչ[3614]:

1954 թ. պաշտոնապես վերանվանվել է Ենիաբադ[3615]:

## ԵՆԻՀԱՅԱԴ (ՀԻՆ ԱՆՆԵՆՖԵԼԴ)

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հարավ-արևելք՝ Շամքոր գետի ձախակողմյան հարթավայրում՝ ծովի մակերևույթից 210-230 մ բարձրության վրա:

## ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Գտնվում է շրջկենտրոնից 5 կմ արևելք, ծովի մակերևույթից 320-330 մ բարձրության վրա:

Բնակավայրը հիմնվել է խորհրդային տարիներին:

## ԹԱԶԱՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ արևելք՝ Շամքոր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 290-320 մ բարձրության վրա:

Մինչև Ի դարասկիզբը գյուղի տեղում երկաթուղային Շամքոր կայարանն էր:

Թրքաբնակ գյուղը 1908 թ. ունեցել է 334 բնակիչ[3616]:

## ԹԱԹԱՐԼԻ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 24 կմ արևմուտք՝ Զակամ գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 550-620 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին աստիճանաբար նստակեցության անցած խաշնարածները:

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջերին Թաթարլին պատկանում էր ազգությամբ թուրք 4 կալվածատերերի[3617]:

Գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3618] | 83 | 320 | 255 | 575 |
| 1908[3619] | | | | 815 |
| 1914[3620] | | | | 679 |

**«Ցարի խաչ» ուխտատեղի.** գյուղի հանդիպակաց սարի գագաթին՝ Զակամ գետի ձախ կողմում պահպանվում են մատուռի ավերակները: Սրա մասին 1890 թ. այցելուն նշել է. «...շարունակեցի ուղիս դէպ արևմուտ Այիփլու թուրք գեղի միջով: Աջ կողմն ընկնում էին Մըմըրթլուի լեռները: Այնտեղ գտնվում է փոքրիկ մատուռի բակ, շուրջը քարեր շարած, դժվարակոխ կածան տանում է լեռան գագաթը: Խոց ու վերք ունեցողը դիմում է այդտեղ, փրկվում է, ուստի դա կոչվում է «Ցարի խաչ»: Անունը տարածված է. հայ ուխտավորների մէջ լինում են նաև թուրքեր»[3621]:

## ԹԱԼԻՇ

Գտնվում է շրջկենտրոնից 22 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 180-190 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարասկզբին: 1907 թ. ունեցել է 98 բնակիչ[3622]:

## ԷՆԳԵԼՍՔԵՆԴ (ԻՐՄԱՇԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 11 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 490-530 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին աստիճանաբար նստակեցության անցած խաշնարածները: Սկզբում այն իրարից բավականաչափ հեռավորության վրա գտնվող, սակայն միևնույն անվամբ հայտնի մի քանի գյուղակներից բաղկացած բնակավայր էր: 1894-1895 թթ. այդ գյուղակները պատկանում էին թուրք 19 կալվածատերերի և Թիֆլիսի քաղաքացի Գրիգոր Սարգսյան Աքաբեկյանցին[3623]:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3624] | 117 | 376 | 261 | 637 |
| 1914[3625] | | | | 679 |
| 1978[3626] | | | | 2401 |

3611. "Кавказский календарь на 1886 г.", с. 142.
3612. "Свод...", Тифлис, 1888, стр. 80-81.
3613. "Кавказский календарь на 1915 г.", с. 123.
3614. Кавказский календарь на 1910 г.", с. 205.
3615. "Азербайджанская ССР. Административно-территориальное деление", Баку, 1979, с. 211.
3616. "Кавказский календарь на 1910 г.", с. 372.
3617. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 7:
3618. "Свод...", с. 82-83.
3619. "Кавказский календарь на 1910 г.", с. 376.
3620. "Кавказский календарь на 1915 г.", с. 187.
3621. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 2:
3622. "Кавказский календарь на 1910 г.", с. 373.
3623. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 6-7, 9:
3624. "Свод...", Тифлис, 1888, с. 80-81.
3625. "Кавказский календарь на 1915 г.", с. 129.
3626. «ԱՍՀ», հ. 4, էջ 67:

## ԼԵՂԱՆ

Գյուղի ճշգրիտ տեղն անհայտ է: Մատենագրության մեջ հիշատակվում է Լեղան և Ղեղան անվանաձևերով[3627]: Գրավոր աղբյուրներում գյուղն առաջին անգամ վկայված է 1441 թ. Հաղբատում ստեղծված մի ձեռագիր ավետարանի հիշատակարանում, որտեղ հիշվում է «...Լեղանի սուրբ Նշան...» եկեղեցին[3628]:

ԺԵ-ԺԶ դարերում Լեղանը հիշվում է որպես գրչօջախ: Մեզ հասած ձեռագրերը 2-ն են.

1. ԺԵ դ., «Ավետարան», գրիչ՝ Ստեփանոս աբեղա, պատվիրատու՝ Սահակ միայնակյաց. «...գաւառիս Գանձակայ, ընդ հովանեաւ Լեղանի սուրբ Աստուածածնիս և արիական յաքոռիս. ես առաջնորդութեան իմոյ Ստեփաննոս յեպիսկոպոսիս սուրբ ուխտիս, և կաթողիկոսութեան տեառն Յոհանիսի, և թագաւորութեանն վրաց Գաւրկի և դանութեան Ջահանշահի»[3629]:

2. 1650 թ., «Խրատագիրք, Առակագիրք», գրիչ՝ Եսայի. «...ի յերկիրս Շամքուռ, ի դուռն Ղեղանա ս. Աստուածածնին և սորին սպասաւոր Յովհաննէս կուսակրօն կրաւնաւորիս...»[3630]:

## ԼԵՆԻՆԱԲԱԴ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 180-190 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԼԵՆԻՆՔԵՆԴ (ԳԵՈՐԳԻԵՎՍԿ, ԳԵՈՐԳՍՖԵԼԴ, ԼԵՆԻՆՖԵԼԴ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ Շամքոր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 410-430 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հիմնադրվել է 1887 թ., քանի որ 1912 թ. մեծ շուքով նշվել է բնակավայրի 25-ամյակը[3631]:

1942 թ. Լենինֆելդը վերանվանվել է Լենինքենդ[3632]:

1962 թ. բնակավայրին տրվել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ[3633]:

**Կառուցապատում.** 1912 թ. ավանի 25-ամյա տարելիցի կապակցությամբ ականատեսը նշել է. «...իր արտաքին տեսքով թողնում է զուտ գերմանական տպաւորութիւն. նոյն շարական տները, տանիքները, բակերը, նոյն իսկ վերանդաները, շատ տներում կարելի է հանդիպել հարմօնիումի, ասիականը միայն սիրուն գորգերն են, որ անհրաժեշտ մասն է կահաւորութեան: ...Կօլօնիստները լութերական են, ունեն եկեղեց. սահմանադրութեան նման մի բան և ժամասացութիւնը և եկեղեցական արարողութիւնները կատարում են ըստ հին, իրենց հետ հայրենիքից բերած ծէսերի...»[3634]:

**Բնակչություն.** գերմանացի գաղթականների հիմնած գաղութը գերմանաբնակ է եղել մինչև 1941 թ.: Հիմնադիրների աքսորից հետո ավանը բնակեցվել է հանրապետության տարբեր վայրերից փոխադրված ադրբեջանցի-թուրքերով:

Մինչև 1988 թ. Լենինքենդում ապրում էին մի քանի տասնյակ հայ ընտանիք: Նրանց բռնագաղթից հետո երբեմնի գերմանական գաղթօջախը դարձել է լիովին թրքաբնակ:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական որոշ տվյալներ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1908[3635] | | | | 757 |
| 1912[3636] | | | | 750 |
| 1914[3637] | | | | 151 |

**Հնագիտական հուշարձաններ.** 1899 թ. հնագետ Է. Ռյոսլերը գյուղի տարածքում հայտնաբերել ու պեղել է 9 դամբարանաբլուր, որտեղից հայտնաբերված գտածոները վերաբերել են բրոնզ-երկաթ անցումային դարաշրջանին[3638]:

## ԼՅԱԶԳԻԼՅԱՐ

Խորհրդային տարիներին միավորված էր Պլանքենդի (Քեչիլի) գյուղական խորհրդի հետ:

## ԿԱՍՈՒՄ-ԻՍՄԱՅԻԼՈՎ (ՂԱՐԱ-ԱՐԽ)

Գտնվում է շրջկենտրոնից 21 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 208-210 մ բարձրության վրա:

ԺԹ դարավերջին հիմնել են նստակեցության անցած թուրք խաշնարածները:

1977 թ. ունեցել է 1282 բնակիչ[3639]:

## ԿՈԼԽՈԶՔԵՆԴ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Զակամ գետի աջ ափից 2 կմ հեռավորության վրա՝ հարթավայրում, ծովի մակերևույթից 270-280 մ բարձրության վրա:

---

3627. Կարծում ենք 2-րդ, այն է՝ Ղեղան անվանաձևն առաջ է եկել տպագրական վրիպակի արդյունքում:
3628. «ԺԵԱ», էջ 514:
3629. «ԺԵԲ», էջ 246: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս ամսօրեայ», 1951, օգոստոս-հոկտեմբեր, էջ 342: Ի դեպ, հաշվի առնելով հիշատակարանում նշված անձանց գործունեության ժամանակաշրջանը (վրաց Գեորգի Ը թագավոր՝ 1446-1466, Ջահանշահ՝ 1437-1467 և Աղվանից Հովհաննես կաթողիկոս՝ 1441-1470), Լ. Խաչիկյանը ձեռագիրը ստեղծելու հավանական ժամանակը պայմանականորեն համարում է 1466 թվականը («ԺԵԲ», էջ 245):
3630. «ԺԷԳ», էջ 409:
3631. «Տարազ», 1912, N 11, էջ 192:
3632. "Азербайджанская ССР. Административно-территориальное деление", с. 211.
3633. «ԱՍՀ» ,հ. 6, էջ 194:
3634. «Տարազ», 1912, N 11, էջ 192:
3635. "Кавказский календарь на 1910 г.", с. 223.
3636. Նույն տեղում:
3637. "Кавказский календарь на 1915 г.", с. 109.
3638. **Реслер Э.**, նշվ. հոդվ., էջ 2:
3639. «ԱՍՀ», հ. 3, էջ 80:

Բնակավայրը գոյացել է խորհրդային տարիներին:

**«Չուգունլու» գյուղատեղի.** գտնվում է Կոլխոզքենդ գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք:

ԺԹ դարավերջին գտնվում էր ութ թուրք կալվածատերերի իրավասության ներքո[3640]:

Ստորև ներկայացնում ենք բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական որոշ տվյալներ.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3641] | 99 | 232 | 149 | 381 |
| 1914[3642] | | | | 521 |

## ԿՈՄՍՈՄՈԼ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 255-260 մ բարձրության վրա:

Բնակավայրը գոյացել է խորհրդային տարիներին:

## ԿՈՍԱԼԱՐ (ՄԵԾԱԴԻՀՈՒՍԵՅՆԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 260-270 մ բարձրության վրա:

Գյուղը Ի դարի սկզբներին գոյացրել են նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը:

Նախախորհրդային տարիներին մաս էր կազմում Քեչիլի հասարակության:

## ՀԱՋԻԱԼԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 1180-1200 մ բարձրության վրա:

Ի դարի սկզբին բնակավայրն իրեն ամառանոց էր ծառայում Չեգամ-Ջրդախան (Յուխարի Այիփլի) գյուղական հասարակության համար:

## ՉԵԳԱՄ (ՋԱԿԱՄ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք:

**Բնակչություն.** մինչև 1901 թ. Չեգամը եղել է անքահանա: Հիշյալ թվականին ճեգամցիները դիմել են հոգևոր իշխանություններին Բաղայի Մեսրոպ քահանա Տեր-Ստեփանոսյանցին երթևեկ քահանա նշանակելու խնդրանքով[3643]:

1901 թ. Չեգամն ունեցել է մոտ 20-25 տուն հայ բնակիչ[3644]:

**Հնագիտություն.** գյուղի տարածքից հայտնաբերվել են Սեֆյան շահ Թահմաս Ա-ի (1524-1576 թթ.) և Շահ-Աբաս Ա-ի (1587-1629 թթ.) ժամանակաշրջաններին վերաբերող դրամներ[3645]:

## ՋԵԳԱՄ-ՋՐԴԱԽԱՆ (ՅՈՒԽԱՐԻ ԱՅԻՓԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 255-260 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1890 թ. ականատեսը նշել է. «...յուղիներս դէպի **Հին Ջագամ**, որ գտնվում էր **Ղարաուլ թափի** ստորոտում: Այդտեղ կան կիսաքանդ, խարխուլ խաներ-քարվանսարա, փառավոր անցեալ ունեցող տներ ու այգիներ, որոնցից այժմ բանուկ են մնացել մի քանի կրպակներ, արհեստավորներ, մի մասը՝ հայ, մի մասը՝ թուրք»[3646]:

ԺԹ դարավերջին գյուղը պատկանում էր ազգությամբ թուրք 6 կալվածատերերի[3647]:

**Բնակչություն.** ներկայիս գյուղի մասին, որպես թուրքական թափառական խաշնարած մի ցեղի ձմեռային հանգրվան, հիշատակություն ունի Վ. Մեվեսը (1864)[3648]:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3649] | 474 | 1583 | 1298 | 2881 |
| 1914[3650] | | | | 2180 |
| 1979[3651] | | | | 4698 |

**Հնագիտություն.** գյուղի մերձակայքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից: 1890 թ. տարածքով անցած բանահավաք Ս. Քամալյանը նշել է. «...կայարանից դեպ արևմտահիւսիս տնկված կա **Ղարաուլ-թափա**, որից, ասում են, փոքրելիս դուրս են գալիս կարասներ, պլազուկներ (ապարանջներ), մարջաններ, պղնձի նման զավաքներ և այլ իրեր: Կայարանի շենքերը կառուցած են սրբատաշ քարից, որ հանում են Ղարաուլ թափաjից, դրա վրա հին շենքի պատերի մնացորդ կա, ուր ասում են Քեռռ-օղլու գոմն է եղել»[3652]:

Հնավայրի առաջին հետազոտողներից է Ս. Տեր-Ավետիսյանը, որի ղեկավարությամբ 1914 թ. տարածքում ընթացել են նախնական պեղման աշխատանքներ. «Ջագեամ կայարանի մօտ հաստատված ռուս գաղթականների համար ջրանցք փորելիս՝ 2-3 արշին խորութեան վրա դուրս եկան հեթանոսական շրջանի հնութիւններ: Կովկասեան թանգարանի յանձնարարութեամբ Ջագեամ ուղևորվեց Մոսկվայի Կայսերական Հնագիտ. Ընկերության Կովկս. ճիւղի անդամ Սմբատ Տէր-Աւետիսեանը, որը ծանօթանալով ջրանցքը փորելու ժամանակ դուրս հանված բեկորների հետ՝ կատարեց նախնա-

3640. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 13-14:
3641. “Свод...”, с. 78-79.
3642. “Кавказский календарь на 1915 г.”, с. 208.
3643.. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 720:
3644. Նույն տեղում:
3645. **Раджабли А. М.**, Из истории монетного дела в Сефевидском государстве, ”Труды Музея истории Азербайджана”, т. 4, Баку, 1963.

3646. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 2:
3647. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 9-10:
3648. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, ”Кавказ”, 1865, N 85, с. 420. Գյուղի մասին տե՛ս սույն աշխ., Դոզուլար (Բիրգյոզ) գյուղի բաժնում, էջ 359:
3649. “Свод...”, Тифлис, 1888, с. 88-89.
3650. “Кавказский календарь на 1915 г.”, с. 213.
3651. «ԱՍՀ», h. 4, էջ 314:
3652. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 2:

կան պեղումներ կայարանից մօտ երեք վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ղարաուլ-Դաղ լերան ստորոտում: ...պեղումները երևան հանեցին քարեայ դարի իրեր. սրա կողքին` մի 200 քայլ դէպի հարաւ` բացվեցին նախաքրիստոնէական շրջանի դամբարաններ, որտեղ փոքր ու մեծ սափորներում ամփոփված էին ննջեցեալների աճիւններ: Սրանց մէջ մետաղէ ոչ մի իր չէ գտնված: Այս տարածութեան վրա մի 300 քայլ էլ դէպի հարաւ` բացվեցին Կովկասի շատ տեղերին յատուկ հեթանոսական դամբարաններ սալ քարէ արկղներում ամփոփված, որոնց մէջ գտնվում են բրօնզէ իրեր: Պարզ է, որ այդ փոքր տարածութեան վրա բնակութիւն եղել է ամենահին ժամանակներից, երբ մարդիկ դեռ ծանօթ չէին մետաղների գործածութեան հետ: ...Սմբատ Տէր-Աւետիսեանին յանձնարարված է օգոստոսից պեղումներ կատարել աւելի լայն չափերով: Պեղումների ժամանակ գտնված հնութիւնները յանձնըված են Կովկասեան թանգարանին»[3653]:

## ՂԱՍՈՒՄԱԼԻԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 7,5 կմ հարավ-արևմուտք` Շամքոր-Չարդախլու մայրուղու միջնամասում` ծովի մակերևույթից 1130-1140 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՂԱՐԱՂՈՋԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ` Շամքոր գետի ձախ ափին` ծովի մակերևույթից 530-570 մ բարձրության վրա:

Հայաթափ գյուղատեղիում ներկայիս թրքաբնակ գյուղը գոյացրել են Ի դարի սկզբին նստակեցության անցած խաշնարածները:

## ՂԱՐԱՆՈՒՅ (ՂԱՐԱՂՈՅՈՒՆԼՈՒ)

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հյուսիսարևելք` ծովի մակերևույթից 200-210 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը Ի դարի սկզբներին հիմնել են նստակեցության անցած թուրք խաշնարածները:

## ՂԱՐԱՋԱՄԻՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ արևելք` ծովի մակերևույթից 210-225 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ բազմամարդ գյուղը ԺԹ դարի 2-րդ կեսին հիմնել են նստակեցության անցած խաշնարած ցեղերը:

Բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

3653. **Գիտակ**, Զազեամի հնութիւնները, «Մշակ», 1914, N 123, էջ 4: Տե՛ս նաև ”Отчет по Кавказскому музею за 1914 год”, Тифлис, 1917, с. 21, 23.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3654] | 197 | 1018 | 781 | 1799 |
| 1914[3655] | | | | 2151 |
| 1977[3656] | | | | 4331 |

## ՃԼՀԱՆ

Գյուղի տեղադրությունը մեզ չի հաջողվել պարզել, բայց սակավաթիվ վավերագրերում այն հիշվում է Չարդախլու, Բադա և Կրզեն գյուղերի շարքում: Ուստի ԺԹ դարի 2-րդ կեսին հայաթափ եղած Ճլհանը պետք է որոնել հիշյալ գյուղերին հարող մասերում:

Գյուղաբնակների թվաքանակին վերաբերող վիճակագրական սուղ տվյալները ներկայացնում ենք ստորև.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1841[3657] | | 35 | 21 | 56 |
| 1853[3658] | | 16 | 13 | 29 |

## ՍԱՀՄՈՒԴԼՈՒ (ԹԱՔՆԱԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևելք` Շամքոր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 250-275 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ԺԷ դարում ունեցել է նստակյաց շիա մահմեդական բնակչություն:

ԺԹ դարավերջին Թաքնալին Դալլյար, Օխչուլու և Ջեյրանչյոլ գյուղերի հետ գտնվում էր կալվածատեր Մուսախան Շամխորսկու իրավասության ներքո[3659]:

**Բնակչություն.** գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[3660] | 22 | 48 | 54 | 102 |
| 1886[3661] | 101 | 481 | 294 | 775 |
| 1981[3662] | | | | 2232 |

**Հուշարձաններ.** Մահմուդլուում պահպանվել է ԺԷ դարում կառուցված մի մզկիթ, իսկ գյուղի մոտ` Շամքոր գետի վրա` միջնադարյան կամրջի ավերակներ:

## ՍԱՄԵԴԱԼԻԼԱՐ (ՂԱՓԱՆԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հյուսիս-արևելք` ծովի մակերևույթից 200-210 մ բարձրության վրա:

**Պատմություն.** տեղագիր հեղինակներից Մ. Բարխուտարյանցը 1890-ական թվականների սկզբներին այցելել և նկարագրել է նախկինում հայաբնակ

3654. ”Свод...”, с. 82-83.
3655. ”Кавказский календарь на 1915 г.”, с. 134.
3656. «ԱՍՀ», h. 3, էջ 69:
3657. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3802:
3658. Նույն տեղում, գ. 2743, թ. 102-103:
3659. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 13-14:
3660. ”Акты...”, т. II, с. 596.
3661. ”Свод...”, с. 82-83.
3662. «ԱՍՀ», h. 6, էջ 396:







***ՄԱՐՏՈՒՆԻ. ընդհանուր տեսքը հարավից, հատվածներ***

գյուղը. «...Աւերակիս երկարութիւնն մօտ մի մղօն է, ընդարձակութիւնս կարծել է տալիս թէ գիւղաքաղաք եղած է Ղափանլուս, որ ծածկուած է ընկուզենի, կաղամախի և այլ զառամեալ ծառերով: Հնագոյն բնակարանները շինուած են հաստ և մեծ մեծ աղիւսներով, որոց երկարութիւնն է 40 սանթիմետր և հաստութիւնն` 9: Փորուածներից ելնում են վաղեմի կարասներ, կճուճներ և այլ խեցեղէն անօթներ, արծաթեայ և պղնձեայ դրամներ և հին աղիւներ: Այժմ թրքաբնակ է աւերակս: ...Մահմետականներն անյայտացրած են եկեղեցեաց և գերեզմանների քարերը...»[3663]:

**Բնակչություն.** հայտնի է, որ 1804 թ. գյուղն ունեցել է 16 տուն` 55 հայ բնակիչ (29 ար., 26 իգ.) և 11 տուն` 39 թուրք բնակիչ (20 ար., 19 իգ.)[3664]: Մամեդալիլարում թուրքերի բնադրվելուց հետո հայ բնակիչները լքել են բնակավայրը: ԺԹ դարավերջին տեղն այցելած ականատեսը նշել է. «...մի քանի գերդաստան այստեղից փոխադրուած են Գանձակ մօտ հարիւր տարի առաջ»[3665]:

3663. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 54:
3664. “Акты...”, т. II, с. 596.
3665. **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:

Բնակչության թվաքանակը վիճակագրական տեղեկագրերում ներկայացված է հետևյալ չափով.

| **տարեթիվ** | **տուն** | **արական** | **իգական** | **միասին** |
|---|---|---|---|---|
| 1886[3666] | 103 | 524 | 352 | 876 |
| 1914[3667] | | | | 1035 |

## ՄԱՐՏՈՒՆԻ (ՆՈՎՈ-ՏՐՈԻՑԿՈՅԵ, ԳՈԼԻՑԻՆՈ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ-արևմուտք` ծովի մակերևույթից 1490-1560 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի պատմական անվանումը մոռացվել է: Անտարակույս, հայաբնակ է եղել մինչև 1770-ական թվականները, ապա ամայացել: Շուրջ կես դար անց գյուղատեղիում բնակություն են հաստատել ռուս վերաբնակիչները` դուխոբորները, և հիմնել Նովո-Տրոիցկոյե գյուղը: Սակայն 1880-ական թվականների վերջերին 22 տուն բնակիչները լքել են գյուղը և վերաբնակվել նորաստեղծ

3666. “Свод...”, Тифлис, 1888, с. 82-83.
3667. “Кавказский календарь на 1915 г.”, с. 133.






***ՄԱՐՏՈՒՆԻ. ռուսական եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, զանգակատան 2-րդ հարկը և 1911 թ. կառուցված դպրոցի շենքը***

Կարսի մարզում[3668]: Այնուհետև, 1899 թ. օգոստոսին Կովկասի փոխարքա Գոլիցինի նախաձեռնությամբ Նովո-Տրոիցկոյե գյուղի տեղում վերաբնակություն են հաստատել Չեռնիգովի նահանգի 36 ռուս-ուղղափառ ընտանիքներ՝ հիմնելով նոր գյուղ, որն ի պատիվ կառավարչապետի՝ անվանվել է Գոլիցինո[3669]:

Գոլիցինոն, լինելով Ելիզավետպոլի նահանգի ուղղափառ միակ բնակավայրը, վայելում էր ցարական կառավարության աջակցությունը. յուրաքանչյուր ընտանիք ստացավ 3 դեսյատին՝ որպես տնամերձ հողամաս և 35 դեսյատին՝ որպես վարելահող, իսկ աղքատ ընտանիքներին հատկացվեց 100-ական ռուբլի միանվագ նպաստ[3670]:

**Բնակչություն.** ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբներին գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առկա տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3671] | 36 | 101 | 113 | 214 |
| 1894[3672] | 40 | | | |
| 1901[3673] | | | | 416 |
| 1907[3674] | | | | 261 |
| 1908[3675] | | | | 286 |
| 1914[3676] | | | | 743 |

1918 թ. ռուս-ուղղափառները լքել են գյուղը և վերաբնակվել Հյուսիսային Կովկասում: Խորհրդային առաջին տարիներին այստեղ բնակություն են հաստատել Ղազախաշենից (Ղազախ-Գետաբեկ), Փիբի, Բարսումի, Բարումի, Ջագիրի և Չարդախլուի հայ բնակիչները. Գոլիցինոն վերանվանվում է Ղազախաշեն, իսկ 1926 թ. ի հիշատակ Ալ. Մյասնիկյանի՝ Մարտունի[3677]: Նույն ժամանակահատվածում Մարտունին միավորված էր Ջագիր և Սպիտակաշեն գյուղերի հետ:

Մեր այցելության ժամանակ՝ 1985 թ., գյուղն ուներ 312 հայ բնակիչ և դպրոց՝ փոքրաթիվ աշակերտներով:

3668. **Абелов М. А.**, Исследование экономического быта государственных крестьян Елизаветпольского уезда Елизаветпольской губернии.– оттиск из т. VII ”Материалов для изучения экономического быта государственных крестьян Закавказского края”, Тифлис, 1887, с. 21.

3669. **Джаша Ил.**, Русское село въ Елисаветпольской губернии, ”Кавказ”, 1900, N 285, с. 3.

3670. Նույն տեղում:

3671. “Свод...”, Тифлис, 1888, с. 86-87 (այդ թվում 1 տուն՝ 3 շունչ հայեր):

3672. «Արձագանք», 1894, N 104, էջ 2:

3673. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 3, էջ 742:

3674. “Кавказский календарь на 1910 г.”, с. 227.

3675. Նշվ. աշխ., էջ 336:

3676. “Кавказский календарь на 1915 г.”, с. 166:

3677. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 3, էջ 742:

Մարտունեցի հայերը գյուղը հարկադրաբար լքել են 1988 թ. բռնագաղթի ժամանակ և բնակություն հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրի ենթաշրջանում:

**Եկեղեցի.** գյուղի հոգևոր կարիքները բավարարելու` եկեղեցի և դպրոց հիմնելու համար 1900 թ. սեպտեմբերին Նիկոլայ Բ թագավորն իր անձնական միջոցներից գյուղին նվիրել էր 5000, իսկ ներքին գործերի նախարարությունը` 3000 ռուբլի[3678]: 1901 թ., երբ արդեն պատրաստ էր կառուցվելիք եկեղեցու նախագիծն ու նախահաշիվը, կառույցի հիմքը օծել էր իշխան Գոլիցինը. «Ապրիլի 22-ին, Կովկասի կառավարչապետ իշխան Գօլիցին, Գանձակի նահանգապետի եւ ուրիշ բարձրաստիճան անձանց հետ ժամանեց ռուս գաղթականների գիւղը` Գօլիցինան, որտեղ ինքն իր ձեռքով նոր շինվելիք եկեղեցու հիմքը դրեց, նուիրելով 1000 ռուբլի...»[3679]:

1901 թ. սկսվել է նաև դպրոցի շինարարությունը. ավարտվել է 1911 թվականին:

**Պատմական հուշարձաններ.** գյուղից մոտ 6 կմ հյուսիս-արևմուտք` «Բալուջա» հնավայրում, պահպանվել է գերեզմանոց, իսկ 1 կմ հյուսիս-արևմուտքում` «Գյունաշ-Արևաշեն պկատեղեր» գյուղատեղին ու գերեզմանոցը:

## ՄԵՀՐԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ` Շամքոր գետի աջ ափին` ծովի մակերևույթից 530-580 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՄԻՍԿԻՆԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ արևելք` Շամքոր գետի ձախ ափին` ծովի մակերևույթից 325-335 մ բարձրության վրա:

Ներկայիս թրքաբնակ գյուղը Ի դարի սկզբին գոյացրել են նստակեցության անցած խաշնարածները:

## ՄՈՒԽՏԱՐԻՅԱԹ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ արևելք` Շամքոր գետի ձախ ափին` ծովի մակերևույթից 335-360 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին:

## ՅՈՒԽԱՐԻ (ՎԵՐԻՆ) ՄԵՅՓԱԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք` Շամքոր գետի աջ ափին` ծովի մակերևույթից 460-570 մ բարձրության վրա:

Գյուղը ԺԹ դարավերջին գոյացրել են նստակեցության անցած թուրք խաշնարած ցեղերը:

ԺԹ դարավերջին գյուղի կալվածատերն էր Աշրաֆ խան Ջիատխանովը[3680]:

## ՅՈՒԽԱՐԻ (ՎԵՐԻՆ) ՔՅՈՆՅՈՒԼԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ-արևելք` ծովի մակերևույթից 360-370 մ բարձրության վրա:

Հիմնվել է խորհրդային տարիներին:

## ՆԻՋԱՄԻ

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ արևելք` ծովի մակերևույթից 300-315 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՆՈՒԿԶԱՐ (ՆՅՈՒԶԳԵՐ, ՆՅՈՒԿԶԱՐ, ՆՈՒՆԳՈՒԶԱՐ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք` Շամքոր գետի աջափնյա բարձրադիր սարահարթին` ծովի մակերևույթից 1340-1410 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** բնակիչները ԺԹ դարասկզբին տեղափոխվել են Երևանի խանության Քանաքեռ, Ճաթղրան (այժմ` Արագածոտնի մարզի Գեղաշեն գյուղ) և Ճովիզ գյուղերից[3681]:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներն առկա են ԺԹ դարի 40-ական թվականներից: Այդ տվյալների հավաքագրումն ու համադրումը հնարավորություն է ընձեռում արձանագրելու, որ ԺԹ դարում և մինչև խորհրդային կարգերի հաստատումը, ընդհանուր առմամբ, Նուկզարի բնակչության թվաքանակն ընդհանուր առմամբ շարունակաբար աճել է:

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1845[3682] | | 70 | 75 | 145 |
| 1847[3683] | | 72 | 73 | 145 |
| 1849[3684] | | 103 | 99 | 202 |
| 1850[3685] | 36 | 106 | 107 | 213 |
| 1852[3686] | | 114 | 111 | 225 |
| 1861[3687] | 28 | | | |
| 1866[3688] | 37 | 173 | 117 | 290 |
| 1870[3689] | | 183 | 125 | 308 |
| 1872[3690] | | 253 | 150 | 403 |
| 1874[3691] | | | | 365 |

3678. **Джаша Ил.**, նշվ. հոդվ., էջ 3:
3679. «Մշակ», 1901, N 90, էջ 2:

3680. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 22-23:
3681. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, 1895,էջ 294: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 324-325:
3682. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 5-6:
3683. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
3684. Նույն տեղում, գ. 3818, թ. 97-98:
3685. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 111:
3686. Նույն տեղում, գ. 3819, թ. 106-107:
3687. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3688. Նույն տեղում, գ. 3848, թ. 57:
3689. Նույն տեղում, գ. 3857, թ. 49-50:
3690. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63: Ի դեպ, համաձայն վիճակագրական մեկ այլ տվյալի` ունեցել է 534 բնակիչ (նույն տեղում, գ. 3859, թ. 161-162):
3691. Նույն տեղում, գ. 3864, թ. 41-42:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1875[3692] | | | | 373 |
| 1876[3693] | | | | 385 |
| 1877[3694] | | 256 | 142 | 398 |
| 1878[3695] | | 249 | 143 | 392 |
| 1880[3696] | | 253 | 150 | 403 |
| 1881[3697] | | 253 | 159 | 412 |
| 1882[3698] | | 261 | 161 | 422 |
| 1883[3699] | | 268 | 166 | 434 |
| 1885[3700] | 60 | 235 | 195 | 430 |
| 1886[3701] | 76 | 301 | 261 | 562 |
| 1887[3702] | | 254 | 322 | 576 |
| 1888[3703] | | 270 | 328 | 598 |
| 1889[3704] | | 288 | 343 | 631 |
| 1890[3705] | | 297 | 349 | 646 |
| 1891[3706] | | 313 | 360 | 673 |
| 1892[3707] | | 314 | 368 | 682 |
| 1893[3708] | | 324 | 379 | 703 |
| 1894[3709] | | 332 | 389 | 721 |
| 1895[3710] | 70 | 360 | 323 | 683 |
| 1897[3711] | | 370 | 420 | 790 |
| 1898[3712] | | 383 | 431 | 814 |
| 1899[3713] | | 386 | 435 | 821 |
| 1900[3714] | | 394 | 441 | 835 |
| 1901[3715] | | 409 | 450 | 859 |
| 1902[3716] | | 418 | 464 | 882 |
| 1905[3717] | | 425 | 463 | 888 |
| 1906[3718] | | 458 | 505 | 963 |
| 1907[3719] | | | | 865 |
| 1908[3720] | 121 | 501 | 431 | 932 |
| 1909[3721] | | 443 | 462 | 905 |
| 1910[3722] | | 536 | 461 | 997 |
| 1912[3723] | | 966 | 487 | 1453 |
| 1914[3724] | | | | 1000 |
| 1917[3725] | 102 | | | 1007 |
| 1982[3726] | | | | 608 |

Ցավոք, ձեռքի տակ համապատասխան առատ տվյալներ չունենք խորհրդային տարիներին նուկզարցիների թվաքանակի վերաբերյալ: Միայն 1982 թ. վիճակագրությունից ակնհայտ է, որ գյուղի բնակչությունը նվազել է՝ բռնագաղթի նախօրեին հասնելով 31 տան[3727]: 1988-1989 թթ. բնակիչները հարկադրաբար լքել են հայրենի գյուղը:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** երեք կողմից թուրքական գյուղերով շրջափակված Նուկզարը ևս զերծ չի մնացել հարձակումներից: 1906 թ. դեպքերի մասին Գր. Վարդանյանցը նշել է. «Հունվարի 5-ին մի քանի հազար թուրք հարձակվում են գյուղի վրա ժամը 10-ին: Մոտ 40 զինված հայեր կարողանում են ետ մղել հարձակումը: Թուրքերը ավելի մեծ թվով ու կատաղությամբ հարձակվում են հունվարի 8-ին առավոտ ժամը 5-ին: 9 ժամ 40 րոպե տևած կռվի ընթացքում հայերը հարևան Չովդառից 8 զինյալների օգնությամբ նորից կարողանում են ետ մղել թշնամուն: Հայերից սպանված են 6 հոգի և վիրավորված 3, իսկ թուրքերից սպանված և վիրավորված են 60 հոգի»[3728]:

**Դպրոց.** վավերագրերում Նուկզարի եկեղեցական-ծխական դպրոցի գործունեության վերաբերյալ առաջին հիշատակությունը վերաբերում է 1866 թ., երբ այն գործել է 1 ուսուցչով և 34 աշակերտով[3729]: Կրթօջախը, հավանաբար, գործել է մինչև 1895 թ.՝ ցարական կառավարության հրամանով հայկական դպրոցների փակումը: Եվ միայն 1908 թ. հոկտեմբերի 13-ին գյուղացիների ժողովը հատուկ որոշում է ընդունել եկեղեցուն կից դպրոց բացելու և հոգաբարձուների խորհուրդ ստեղծելու մասին[3730]:

3692. Նույն տեղում, գ. 3866, թ. 45-46:
3693. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
3694. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
3695. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:
3696. Նույն տեղում, գ. 3872, թ. 30-31:
3697. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
3698. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
3699. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
3700. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև «Արձագանք», 1885, N 4, էջ 51:
3701. "Свод...", с. 76-77. Այլ աղբյուրի համաձայն՝ ունեցել է 60 տուն («Արձագանք», 1886, N 21, էջ 308):
3702. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
3703. Նույն տեղում, գ. 3882, թ. 132:
3704. Նույն տեղում, գ. 3884, թ. 228-229:
3705. Նույն տեղում, գ. 3887, թ. 151:
3706. Նույն տեղում, գ. 3889, թ. 150:
3707. Նույն տեղում, գ. 3891, թ.122:
3708. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
3709. Նույն տեղում, գ. 3896, թ. 175-176:
3710. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294:
3711. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 148-149:
3712. Նույն տեղում, գ. 3897, թ. 170:
3713. Նույն տեղում, գ. 3903, թ. 128-129:
3714. Նույն տեղում, գ. 3905, թ. 94-95:
3715. Նույն տեղում, գ. 3906, թ. 100-101:
3716. Նույն տեղում, գ. 3907, թ. 24-25:
3717. Նույն տեղում, գ. 3912, թ. 267-268:
3718. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
3719. Նույն տեղում, գ. 240, թ. 2:
3720. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 12: Ի դեպ, 1908 թ. մեկ այլ վիճակագրական տվյալի համաձայն՝ ունեցել է 932 բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 337):
3721. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 118:
3722. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 60-61:
3723. Նույն տեղում, գ. 3919, թ. 63-64:
3724. "Кавказский календарь",1915, с. 167.
3725. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 166:
3726. «ԱՍՀ» հ. 7, էջ 311:
3727. **Խոջաբեկյան Վ.,** Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 114:
3728. «Մշակ», 1906, N 28, էջ 1: Տե՛ս նաև **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 341-342): Ի դեպ, թուրքերի երկրորդ հարձակման մասին նշվել է նաև, որ «Նոր յարձակում կատարուեցաւ թուրքերու կողմէն Դալի Ալիի առաջնորդութեամբ: Մօտ երեք հազար հրոսակներով նա փորձեց ջարդի ու աւերի տալ Նուգզար գիւղը: Տեղի ունեցաւ մեծ ճակատամարտ, որ տևեց առաւօտեան ժամը 5էն մինչև 11ը: Հակառակ իրենց գերազանց թւին ու բոլոր հնարքներուն, թուրքերը չաջողեցան ներս խուժել: Յամառ ու կատաղի էր հայոց դիմադրութիւնը: Պաշարողները հազիւ կարողացան հրդեհել քանի մը մարագներ ու խոտի դէզեր: Ի վերջոյ, յետ մղուեցան մեծ կորուստներով: Անպատիւ նահանջ մըն էր. ֆուրգոնները, որ բերեր էին աւարը տանելու համար, լեցուցին իրենց սպանուածներու դիակներով ու գլխիկոր վերադարձան: Մեր կորուստը - վեց քաջարի կամաւորներ Նուգզար գիւղէն» (**Վարանդեան Մ.**, նշվ. աշխ., էջ 353):
3729. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 115:
3730. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 145, թ. 1:





***ՆՈՒԿԶԱՐ. Սբ. Գևորգ եկեղեցի. տեսքը՝ հարավ-արևմուտքից և արևմուտքից***

**Սբ. Գևորգ եկեղեցի.** մինչև 1885 թ. վերաբերող բազմաթիվ վավերագրերում (օրինակ՝ 1849[3731], 1852[3732], 1861[3733], 1862[3734], 1878[3735] թթ.) Նուկզարում հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ փայտաշեն, իսկ 1885 թ-ից՝ արդեն քարաշեն Սբ. Գևորգ[3736] եկեղեցի: Վերոնշվածից հետևում է, որ 1849-1885 թթ. միջակայքում եկեղեցին վերակառուցվել է և վերստին օծվել:

Սբ. Գևորգ եկեղեցին, որը «շինուած է գիւղիս նախկին բնակիչներից»[3737], հավանաբար, ԺԷ դարի կառույց է: Արտաքին չափերն են՝ 18,2 x 9,05 մ: Միանավ, թաղածածկ շինություն է՝ կառուցված անմշակ քարով և կրաշաղախով: Միայն պատերի անկյունաքարերը, լուսամուտների և մուտքի (արևմուտքից) շրջանակներն են սրբատաշ: Խորանին հյուսիսից կից է ուղղանկյուն հատակագծով մեկ ավանդատուն:

Կառավարության հրամանով փակվել է 1928 թ.[3738], ապա օգտագործվել որպես պահեստ:

**Քահանա.** 1861 թ. հիշվում է *Անդրեաս քահանա Տեր-Միքայելյանը*[3739]:

1908 թ. գյուղի քահանան էր *Մկրտիչ Տեր-Ղևոնդյանը*[3740]:

**Գերեզմանոց.** եկեղեցուց ոչ հեռու տարածվում էր միջնադարյան գերեզմանոցը, ուր պահպանվել է անմշակ քարով և կրաշաղախով կառուցված կիսավեր մատուռ՝ «...ծածքն փայտաշէն, քարեայ հին խաչերով զարդարեալ բեմի ժողովրդահայաց երեսն»[3741]:

Գերեզմանոցում պահպանվել է արձանագիր մի տապանաքար, որին փորագրված է եղել.

*Այս է հանգիստ Գրիգորոյ, թվիս ՉԽԷ (1298):*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294: Նաև՝ «Դիվան...», V, էջ 265:

**Սբ. Ամենափրկիչ վանք.** գյուղից մոտ 4-5 կմ հարավ-արևմուտք՝ Ծամքորի գետահովտի անտառածածկ ձորալանջին տարածվում են ընդարձակ գյուղատեղիի ավերակները, ուր ցաքուցրիվ պահպանվել են պարզունակ ու անարձանագիր մենավոր խաչքարեր: Գյուղատեղիի հարավարևմտյան եզրին գտնվում է նշանավոր սրբավայրերից մեկը՝ Սբ. Ամենափրկիչ վանքը, որի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ[3742]: Վանական համալիրի վերաբերյալ չի պահպանվել մատենագրական ոչ մի տեղեկություն: Միայն նախկինում հրատարակված արձանագրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ արդեն ԺԷ դարում վանքը եպիսկոպոսանիստ էր:

1853 թ. սեպտեմբերի 28-ին վանքի մասին կազմված տեղեկագրից պարզվում է, որ վանքն արդեն չէր գործում և գտնվում էր անմխիթար վիճակում. «...յաւերակ Անապատն, որ կոչի Ամենափրկիչ, գտանեցեալն ի գաւառամասին Ելիսաւէտօպօլու, մերձ Հարցհանգիստ, Նունգուզար և Գուլամբար գիւղօրէիցն, վերանկատեցին զամենայն դիրս նորին հանդերձ ամենայն հանգամանօք վերաբերութեանց այնորիկ...: Անապատս այս ի նախնումն էր հռչակաւոր և երևելի վանք, յորում և եղեալ են բազմաթիւ միաբանք և վանահարք, եպիսկոպոսք, ի

3731. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 97-98:
3732. Նույն տեղում, գ. 3819, թ. 106:
3733. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3734. Նույն տեղում, գ. 3836, թ. 58:
3735. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24:
3736. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:
3737. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294:

3738. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
3739. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 148-149:
3740. Նույն տեղում, գ. 817, թ. 7:
3741. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 294:
3742. Ժամանակակից տեղագրական գրականության մեջ թվագրվում է ԺԲ դարով («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, Երևան, 1988, էջ 36):



*ՆՈՒԿԶԱՐ. Սբ. Ամենափրկիչ վանքի տեսքը հյուսիս-արևելքից, արևելքից, հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից և գավթի հյուսիսային ճակատից բացված մուտքը*

ներկայումս եկեղեցին միայն կայ յամբողջ դրութեամբ, իսկ միւս շինուածք և տունք սենեակք և այլ կացարանք և շրջապատ պարիսպք կան ոմանք ի կիսափուլ և այլք ի քայքայեալ տեսակս»[3743]:

Վանքի կիսավեր վիճակը մատնանշել են նաև տեղագիր հեղինակները ԺԹ դարի վերջին. «Եկեղեցին փոքրիկ տաճար է, հոյակապ, քարաշէն, տանիքը խոնարհած. տաճարին կից է քաղակապ փոքրիկ գաւիթ, իսկ տաճարի աջ և ձախ կողմերում՝ երեք խորան...: Մենաստանի արևելակողմն եղել է վանքի ճիթահանքն, իսկ արևմտակողմն - միաբանների սենեակներ, և շրջապատը քարաշէն պարիսպ. այժմ աւերակներն են միայն մնացել»[3744]:

Համալիրը բաղկացած է եղել եկեղեցուց, կից գավթից, միաբանության խցերից, օժանդակ կառույցներից ու շրջապարսպից, ինչպես նաև՝ հիմնական հուշարձանախմբից ոչ հեռու՝ բլրալանջին տարածվող գերեզմանոցից, որտեղից մի քանի խաչքարեր տեղափոխվել և ագուցվել են եկեղեցու ու գավթի որմերի մեջ:

Եկեղեցին ունի միանավ քաղածածկ հորինվածք, որի արևելյան կողմում կան կառույցի ընդհանուր ծավալներից դուրս եկող և ուղղանկյուն հատակագիծ ունեցող ավանդատներ (հյուսիսայինն ավերված է): Վերջիններս կառուցվել են եկեղեցու հետ միաժամանակ, ինչը հանդիպում է նաև երկրամասի տարածքում պահպանված այլ հուշարձաններում: Երբեմնի երկթեք ծածկի տակ առնված քարը (քանդված է) պահել են երկու զույգ որմնայու-

3743. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 17:
3744. «Արձագանք», 1886, N 21, էջ 307:



ՆՈՒԿԶԱՐ. Սբ. Ամենափրկիչ վանքի գավթի արևմտյան ճակատից բացված լուսամուտը և հյուսիսային ճակատից բացված մուտքը

ների վրա հենված թաղակիր կամարները: Լուսամուտները 3-ն են՝ բացված արևելքից: Ունի երկու մուտք՝ հյուսիսից և արևմուտքից (վերջինիս միջոցով եկեղեցին կապվում է գավթի հետ): Գավիթը կառուցվել է ավելի ուշ թաղակապության նույն սկզբունքով, և եկեղեցու մեջ բացվող մուտքից զատ, մեկ այլ մուտք էլ ունի հյուսիսային ճակատում: Լուսավորությունն իրականացված է հարավից և արևմուտքից բացված մեկական լուսամուտների միջոցով: Հուշարձանն ամբողջությամբ կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Բացառություն են կազմում անկյունաքարերը, որոնք սրբատաշ են:

1984 թ. դրությամբ վանքի մյուս շինությունները ավերված էին:

**Կալվածքը.** ԺԹ դարասկզբին Սբ. Ամենափրկիչ վանքի իրավասության տակ էին գտնվում Գյուլամբար գյուղի Կարմիր վանքը և մոտակա գյուղերը[3745]:

1840 թ. վանքի դրության և կալվածքների մասին նշվել է. «Ամենափրկիչ անապատ է այժմ անմիաբան. ունի զմի ճիթահանք աւերակ և յիսուն օրավար հող խոպանացեալ...»[3746]:

1853 թ. կազմված մի վկայագրում կարդում ենք. «...վանքս այս Ամենափրկիչ և անապատն Կարմիր եկեղեցի, որ կից նմին ունեցեալ են ի սեպհականութեան իւրեանց և տիրապետութեան զամենայն շրջակայ վայրսն, որոց տարածութիւն բաղկանան ըստ չորից յետոյ նշանակեալ սահմանացս, արևելյան կողմն է Էլչի կոչեցեալ ճանապարհն, որ է ի կողմն Բաղշեկ գեղջ սահմանակցի վանացն: Արևմտեան կողմն է գետն Շամքոռ, հարաւայինն է Պա-

3745. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 596, թ. 1:
3746. Նույն տեղում, գ. 3798, թ. 64-65:



***ՆՈՒԿԶԱՐ. հատվածներ Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու որմնասյուներից և խաչքար՝ ագուցված գավթի հյուսիսային ճակատում***

պի գոմէր և հիւսիսայինն է սահմանն Նունգուզար գեղջ...»[3747]:

1860-1862 թթ. վանքի կալվածքը բաղկացած էր վարելահողից և անտառից[3748]: Նույն դրությունն էր նաև 1886 թ.[3749]:

1910 թ. կազմված Գանձակի վանական կալվածքների տեղեկագրում նշված է. «Այս հնադարեան անապատը բոլորովին զուրկ է արդիւնաբերող կալւածքից և տխուր տպաւորութիւն է թողնում անցորդի վերայ: Ծառայում է որպէս ուխտատեղի, մօտակայ ծխատէր քահանաների հսկողութեան ներքոյ»[3750]:

3747. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2742, թ. 17:
3748. Նույն տեղում, գ. 3834, թ. 25-26, գ. 3836, թ. 45-46:
3749. ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 18, գ. 138:
3750. ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 775, թ. 26:

**Վիմագրեր.** 1984 թ.՝ մեր այցելության ժամանակ, վանքում գտանք միայն մեկ արձանագրություն, բարեբախտաբար, մյուս երկու վիմագրերը նախկինում հրատարակվել էին: Ահա դրանք.

Խաչքար. ագուցված գավթի հյուսիսային ճակատին, մուտքից արևելք, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(է)խաւս յուստայ Աղազարի հոգո(ւ)ն:*

Հրատ. առաջին անգամ:

Գավթի ներսում՝ ծեփի վրա եղել է.

*Շնորհօքն Քրիստոսի և կամաւն Ա(ստուծո)յ. ես Դաւիթ եպիսկոպոս նորոգեցի զեկեղեցիս այս յիշատակ ինձ և ծնողաց, Բաղդասարին... թվ(ին) ՌՃԻԸ (1679):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 307: Նաև՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 295 (թերի): **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 346: «Դիվան...», V, էջ 265:

Տարընթերցում. «Արձագանքի» թղթակցի մոտ թվականն է՝ «ՌՃԻԹ» (1680):

Ծանոթ. վիմագրում հիշված Դավիթ եպիսկոպոսը 1681 թ., ի թիվս այլոց, իր կնիքն ու ստորագրությունն է դրել «Թուղթ Դաշ-նադրութեան» փաստաթղթում. «Ք(րիստոս)ի ծ(ա)ռ(ա) Դաւիթ ե-պ(իսկոպո)ս թ(վին) ՌՃԼ (1681). ինձ Ամենափրկչի Դաւիթ ե-պ(ի)սկ(ոպո)ս դ(ա)պուլ է» («Արարատ», 1900, էջ 319):

Եկեղեցու բեմի առջև տեղադրված մեծ խաչքարի վրա, նորոգչական.

*Ի հայրապետութեան Աղուանից տ(եառ)ն տ(եառ)ն Տրդատայ Ս(ուր)բ կաթողիկոսի, թագաւո-րութեան պարսից Շահաբազին, ես Մեղապարտ... որդիս իմ Մաղաքիա եպիսկոպոսն... նորոգեցաք ս(ուր)բ Ամենափրկիչս:*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 307: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 346: «Դիվան...», V, էջ 266:

Տարընթերցում. «Արձագանքի» հրատարակության մեջ՝ *«Ի հայրապետութեանս Աղուանից Տեառն Տէր Մինաս կաթուղի-կոսի, թագաւորութեան պարսից Շահբասին, ես մեղապարտ Աբ-րահամ եպիսկոպոս և եղբարքս իմ Ներսէսն կրօնաւոր եղաք...»:*

**«Ծծեր».** Սբ. Ամենափրկիչ վանքից 0,5 կմ հյուսիս-արևելք՝ ձորի մեջ, գտնվում է մի ապառաժ ժայռ, որի «ստորին մասն ձևացած է ինչպէս քարայր»[3751]: Առաստաղից կախված շթաքարերից կաթկթացող ջուրը լցվում է բնական քարե ավազանի մեջ: Հայտնի է «Ծծեր» անվամբ և սրբացվել է տեղացիների կողմից. «Ծծեր կոչւում է այս աղբիւրը ժողովրդից, որովհետև քարը, որից կաթկաթում է ջուրը, կրային բաղադրութիւնից գոյացած ունի ծայրեր, որոնք նմանում են ծծերի պտուկների. քարի այդ հազուադէպ նմանութիւնն աղբիւրին տուել է մի տեսակ նուիրական նշանակութիւն և դարձրել է ուխտի առարկայ»[3752]: Աղբյուրի մոտ պահպանվել են 3-4 պարզ խաչքարեր:

**Հին գյուղատեղի.** Նուկզար գյուղի տարածքում եղել է նաև «սբ. Աստվածածին եկեղեցի հին գիւղատեղոյ, որ Ախրջի կոչի»[3753], սակայն վերջինիս տեղն անհայտ է:

**«Ղըզղալա» բերդ.** միջնադարյան հուշարձան է. գտնվում է գյուղից 7 կմ արևելք:

## ՇԱՄԽՈՐ (ԱՆՆԵՆՖԵԼԴ, ՄՈՐՈՒԼ)

**Տեղադրություն.** գտնվում է Զագիր գետի 2 ափերին: Հիմնվել է խորհրդային տարիներին. ընդգրկում է Աննենֆելդ գերմանական գաղութը և Մորուլ թրքաբնակ գյուղը:

### *ԱՆՆԵՆՖԵԼԴ (ԱՆՆԻՆՈ)*

**Տեղադրություն.** գտնվում է Զագիր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 400-500 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1817-1818 թթ. կառավարությունը Շամքոր գետի ձախ ափին (ներկայիս Ենիհայաղ գյուղի տեղում) տեղ է հատկացնում 67 գերմանացի գաղթական ընտանիքների, որոնք էլ դնում են ապագա գաղութի հիմքը. «...այսպես կոչվեց ի Պատիվ Մեծ իշխանուհի Աննա Պավլովնա՝ Նիդերլանդիայի թագուհու...»[3754]: Սակայն վերաբնակիչների շատերը շուտով զոհ են գնում կլիմայական անբարենպաստ պայմաններին: Ականատեսի բնութագրմամբ վայրը եղել է. «...մահացու կլիմայով և բարեբեր հողով, եթե դաշտերի ոռոգման համար բավարար ջուր է լինում...»[3755]: Մեկ տասնամյակը չբոլորած Աննենֆելդը 1826 թ. ավերում է պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի զորաբանակը: Չնայած ռուս-պարսկական պատերազմից հետո կառավարությունը դրամական օժանդակություն է ցույց տալիս աննենֆելդցիներին[3756], այնուամենայնիվ, վատառողջ կլիմայի պատճառով «Մինչև 1831 թվականը մեռել էին 360 հոգի, մինչդեռ ծնվել էին միմիայն 94 հոգի: Այս պատճառով գաղթականները ցրվեցան զանազան գյուղեր, բայց ոչ մի տեղ ազատ հողեր չգտնելով, ստիպվեցան վերադառնալ»[3757]: Ի վերջո, 1873 թ. կառավարությունը աննենֆելդցիներին տեղափոխում է «...ուքը վերստ դեպի հյուսիս, կատարելապես առողջարար տեղ և նվիրեցին 1500 արքունական գերաններ և 6000 ռուբլի դրամ իբրև նպաստ՝ նոր տներ կառուցելու»[3758]: Դրանով իսկ հիմք է դրվում Նոր Աննենֆելդի, որն էլ կազմում է ներկայիս Շամքոր քաղաքի արևելյան կես մասը:

1938 թ. Աննինոն (Աննենֆելդը) վերանվանվել է Շամքոր[3759]:

**Կառուցապատում.** 1864 թ. ականատեսը նշել է. «...մոտենալով գաղութին հրճվում էի հրաշալի մշակված դաշտերի, քամուց ճոճվող ոսկեգույն հացի, հիասքանչ կանաչ մարգագետինների, գերազանց մշակված մրգատու և խաղողի այգիների տեսքով: Մի խոսքով՝ դա ինչ-որ օազիս էր անմարդաբնակ անապատում...»[3760]:

3751. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 295:

3752. «Արձագանք», 1886, N 21, էջ 307: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Մի Նոր տարի՝ Շամքորի ձորում (ճամփորդական հուշեր), էջ 13:

3753. ՀԱԱ, ֆ. 53, ց. 6, գ. 3877, թ. 29:

3754. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 330:

3755. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, ”Кавказ”, 1865, N 35, с. 197 (բնագրում՝ “...с убийственным климатом и плодороднейшей почвою, если бывает достаточно воды для поливки полей”).

3756. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 331: Հեղինակը գրեթե նույնությամբ կրկնում է «Նոր-Դար»-ի (1890, N 119, էջ 2) հաղորդագրությունը:

3757. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 331 (ծանոթ. 1):

3758. Նույն տեղում:

3759. ”Азербайджанская ССР. Административно-территориальное деление”, с. 211.

3760. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 43, с. 235 (բնագրում՝ “...Подъезжая к колонии, я был обрадован видом прекрасно обработанных полей, зыблющихся волною золотистых хлебов, превосходною зеленью лугов, живописными пейзажами отлично обработанных садов фруктовых и виноградных. Словом, это-что то в роде оазиса в безлюдной пустыне...”).

1890-ական թվականների այցելուի վկայությամբ Աննենֆելդն աչքի է ընկել իր կանոնավոր հատակագծով. «Ուղիղ, կանոնաւոր փողոցները բարձր ծառերով, գեղեցիկ տները ընդարձակ բակերով այստեղ էլ գիւղին բավական լաւ տեսք են տալիս...: Այս գաղութը միանգամայն նման լինելով Ելենէնդորֆին. առանձին յիշատակելու բան չունի... սա այնքան յառաջադիմած չէ, որքան Ելենէնդորֆը, որովհետև կենդրոնից աւելի հեռու է գտնվում»[3761]:

**Բնակչություն.** բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3762] | 116 | | | 492 |
| 1914[3763] | | | | 942 |

1903 թ. այստեղ ապրում էին մոտ 25 տուն հայեր[3764]:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների օրերին հայերի թիվը կազմել է՝ 25-30 տուն[3765]: Նրանք ունեին շուրջ 30 մեծ ու փոքր խանութներ. բոլորն էլ թալանել ու ավերել են մորուլցի թուրքերը[3766]:

**Հայոց աղոթատուն.** նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աննենֆելդի հայերը «...երկար ժամանակ զուրկ էին հոգեկան մխիթարութիւնից, ...1900 թ. ապրիլի 23-ին բացուեց ... մի աղօթատուն...»[3767]:

**Գերմանական եկեղեցի.** կառուցվել է 1909 թ.[3768]:

**Հնագիտական հուշարձաններ.** Աննենֆելդի մոտ կան մի քանի դամբանաբլուրներ, որոնք ԺԹ դ. վերջին իրենց վրա են հրավիրել Ե. Լալայանի ուշադրությունը[3769]:

## *ՄՈՐՈՒԼ*

**Տեղադրություն.** նախկինում գյուղ էր Շամքոր գետի ձախ ափին, իսկ հանդիպակաց աջ ափին գերմանացիների հիմնած Աննենֆելդ գաղթավայրն էր, որոնք միասին ներկայումս կազմում են Շամքոր քաղաք-շրջկենտրոնը:

**Պատմություն.** հայտնի է, որ տակավին 1864 թ. Մորուլը, նստակյաց բնակչություն չունենալով, դեռևս գյուղ չէր և իրենից ներկայացնում էր խաշնարած թուրքական ցեղերից մեկի ձմեռոց: Ամառային շրջանում Մորուլ այցելելով՝ հետազոտող Վ. Մեվեսը նշել է. «Մինչ արևամուտ հասա փոսերի այն խմբին, որոնցից կազմված է Մորուլ գյուղը, բայց քանի որ բոլոր բնակիչները փարախներում էին, փոսերը ոչնչով չէին տարբերվում նախորդ նկարագրվածներից...»[3770]:

ԺԹ դարավերջին Մորուլը հանդիսանում էր ազգությամբ թուրք բազմաթիվ կալվածատերերի սեփականությունը[3771]:

**Բնակչություն.** համաձայն 1886 թ. մարդահամարի տվյալների՝ Մորուլի հասարակությունը բաղկացած է եղել 282 տնից՝ 1792 շունչ (1023 ար., 769 իգ.)[3772]: 1914 թ. Մորուլն ունեցել է 1848 բնակիչ[3773]:

## *ՇԱՄՔՈՐ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ*

**Տեղադրություն.** պատմական հարուստ անցյալ ունեցող բերդաքաղաքի ավերակները գտնվում են Շամքոր գետի ձախ ափին՝ շրջանի վարչական կենտրոն Շամխոր քաղաքից շուրջ 10-12 կմ արևելք:

**Քաղաքի հիմնադրումը.** Շամքորի հիմնադրումը վերագրվում է Աղվանից Վիրո կաթողիկոսին (595-629), որն իբր Է դարի սկզբին «...շինեաց քաղաքս հինգ յանուն Շաթայ... զՇամքոր»[3775]:

**Ժամանակագրություն.** Շամքորը միջնադարյան Հայաստանի և Այսրկովկասի նշանավոր ամրոցներից էր, նաև ծաղկուն ու վաճառաշատ քաղաք, որի անունով կոչվել է ամբողջ երկրամասը («յերկիրս Շամքուռ», «յերկիրն Շամքոռայ» և այլն)[3776]:

*Է-Թ դարեր.* Է դարի կեսերին Շամքորը գրավել են արաբները: Ը դարի վերջերին քաղաքը կործանել են Ուտիքում ապրող Սևորդյաց ցեղերը. «Նա (իմա՝ Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին) մի ձիավոր ջոկատ ուղարկեց Շամխոր (Շամքուր), որը նվաճեց այն: Սա մի հին քաղաք էր և շեն մնաց մինչև այն կործանեցին սևորդիք (սիյավարդիյյա) կոչվածները: Սա մի ժողովուրդ է, որը համախմբվեց, երբ Յազիդ իբն Մազիադ (ոստիկան) հեռացավ Հայաստանից և նրանք ուժեղացան»[3777]:

3761. Նշվ աշխ., էջ 355:

3762. “Свод...”, с. 76-77. Ի դեպ, բնակչության մեծագույն մասը, այն է՝ 97 տուն (201 ար., 236 իգ.) գերմանացիներ էին, 16 տուն՝ հայեր (23 ար., 20 իգ.), ռուսներ՝ 1 տուն (3 ար., 4 իգ.), վրացիներ՝ 1 տուն (2 ար., 1 իգ.) և պարսիկներ՝ 1 տուն (2 ար.):

3763. “Кавказский календарь на 1915 г.”, с. 89.

3764. «Նոր-Դար», 1903, N 14, էջ 2:

3765. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 340-341:

3766. Նույն տեղում:

3767. «Նոր-Դար», 1903, N 14, էջ 2:

3768. **Фатуллаев Ш. С.**, նշվ. աշխ., էջ 440:

3769. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 355:

3770. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 43, с. 235 (բնագրում՝ “До заката солнца я дотащился до группы ям, из которых составилась деревня Морул; но как жители все были на кочевках, а все ямы ничем не отличались от прежде описанных...”).

3771. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 35-36:

3772.“Свод...”, с. 84-85.

3773. “Кавказский календарь на 1915 г.”, с. 160.

3775. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 195: Տես նաև՝ **Ինճիճեան Ղ.**, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 532:

3776. «ԺէԳ», էջ 409, 740, 876 և այլն:

3777. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». «Արաբական աղբյուրներ», Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 56, 370 (ծանոթ. 51):

Այդ դեպքերին անդրադարձել են արաբ այլ մատենագիրներ ևս. «Շամքոր–մի բերդ է Աղվանքում. Նրա ու Գանձակի միջև հեռավորությունը մի օրվա ճանապարհի ժամ տասնմեկ փարախ կլինի: Շամքորը, որը հին քաղաք է, նվաճեց Սալման իբն Ռաբիա զորավարը՝ Պարտավը գրավելուց հետո: Այս շեն ու բազմամարդ քաղաքը ավերեցին Սանավարդիաները, որոնք ըմբոստացան Եզիդ իբն Ուսայդի Արմինիայից հեռացած օրերում: Հետո նրանց... զսպեց Բուղան, Մուտասիմի մավլան, երբ կառավարիչ կարգվեց Արմինիայի, Շիմշաթի և Ադրբեջանի վրա հիջրի 240 թվականին (2 հունիսի 854-21 մայիսի 855): Նա վերաշինեց քաղաքը և Ալ-Մուտավաքիլիա անվանեց»[3778]: Ըստ որում, Բուղան այստեղ բնակեցրեց նաև Դարբանդից բերած 300 տուն խազարների. «...և ի գալ գարնանոյն է եկն ի Դարբանդ, և բացեալ զԴուռն՝ եհան անտի երեք հարիւր տուն, և բնակեցոյց ի Շամքոր՝ Խազրեցիս...»[3779]:

Ը դարի առաջին կեսին՝ Աղվանից Սիքայել կաթողիկոսի օրոք (707-744), Շամքորում գումարվել է եկեղեցական ժողով: Այն կայացել էր Շամքորի բերդում գտնվող վանքում. «Եւ գումարեալ զնոսա ամենեսին ի Շամքոր ի Բերդոյ վանս՝ միաբան ժողովով նզովեցին զտունն Վարազոյի»[3780]:

890-ական թվականներին (ավելի ստույգ՝ մինչև Դվինի մեծ երկրաշարժը) Սմբատ Ա թագավորը (890-914) ընդարձակել է Բագրատունյաց թագավորության սահմանները՝ հյուսիս-արևելքում դրանք հասցնելով մինչև Տուս (իմա Տավուշ) ու Շամքոր, և վերջինս վերածել սահմանային ամրության. «Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեանն իւրոյ... ՚ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ՚ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ՚ի քաղաքն Հունարակերտ և մինչև ՚ի Տուս և ՚ի Շամքոր»[3781]:

*ԺԱ-ԺԳ դարեր.* ԺԱ դարում քաղաքը գրավել ու ավերել են թուրք-սելջուկները:

1139 թ. Տավուշ բերդում կայացած եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշվում է նաև «...Ստեփաննոս եպիսկոպոս Կողբա գաւառին եւ քաղաքին Շամքորոյ...»-ն[3782]:

1194 թ. Ատրպատականի աթաբակ Աբու-Բեքրը (1191-1210) արշավել է Շիրվանի վրա: Վրացական զորքին առաջնորդել է Թամար թագուհու ամուսինը՝ Դավիթ Սոսլանը: Վճռորոշ ճակատամարտը տեղի է ունեցել Շամքոր քաղաքի մոտ 1194 թ. (ըստ վրացական աղբյուրների՝ 1195 թ.). ջախջախվում են Աբու-Բեքրի զորամիավորումները, իսկ աթաբակն էլ մազապուրծ փախուստի է դիմում՝ մի կերպ ազատվելով գերությունից:

Շամքորի ճակատամարտը քանիցս լուսաբանվել է մատենագիրների կողմից և գիտական գրականության մեջ: Այսպես, Հովհաննես քահանայի «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «ՈԽԳ (1194) թուականին Թամարն կոտորեաց զթուրքն սաստիկ յոյժ ի դուռն Շամքորոյ»[3783]:

ԺԳ դարի սկզբին Շամքորն ազատագրում են հայ-վրացական միացյալ զորքերը Զաքարյանների գլխավորությամբ և այն հանձնում իրենց ազգական՝ Բլու Զաքարեի որդի Վահրամին. «...առին և նոքա բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս ... և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր էառ որդի նորա Վահրամ, հայրն Աղբուղին, պապն Վահրամայ, Զաքարէի և Իւանէի»[3784]:

Վարդան Արևելցին Շամքորի առումը դնում է 1214-1219 թթ. միջակայքում. «՚ի վեցհարիւր վաթսուն և երեք թուին... մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Զաքարիայ, առնուն զՇամքոր...»[3785]: Շամքորի՝ Վահրամյանների տիրույթ լինելու մասին են վկայում նաև վրաց աղբյուրները. «Շամքորը (Շանքորը) Վահրամ (Վարամ) Գագեցու ձեռին էր, որը խելամիտ և պատերազմներում անուն հանած մարդ էր...»[3786]: Ինչպես երևում է, այս շրջանում Շամքորը եղել է համանուն թեմի արքեպիսկոպոսանիստ. «...առաջնորդութեամբ և ձեռնտութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննիսի Տուեցւոյ քաղաքին Շամքորոյ, և Գարդմանայ, և Երգեվանիցն, և Տէրունականին, և Տաւշոյ, և այլ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանի»[3787]:

1220 թ. Շամքոր քաղաքի սահմաններում հայտնըվում են մոնղոլ-թաթարները, որոնք, Դերբենդի դռնից անցնելով Աղվանք, մտել էին նաև Վրաստան ու հասել մինչև Թիֆլիս՝ ճանապարհին ավերելով ամեն ինչ. «...Եւ փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփխիս և դարձեալ եկին իջին յաշխարհն

3778. «Արաբական աղբյուրներ Հայաստանի և հարակից երկրների մասին», կազմ. **Նալբանդյան Հ.**, Երևան, 1965, էջ 85: Ի դեպ, Եզիդ իբն Ուսայդը Հայաստանի արաբ կառավարիչն էր Ալ-Մանսուր խալիֆի (754-775) ժամանակ (տե՛ս նույն տեղում, էջ 182, ծանոթ. 249):

3779. **Ջուանշեր**, էջ 106:

3780. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 314:

3781. «**Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց», Երևան, 1996, էջ 164: Տե՛ս նաև՝ **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785 (վերահրատ՝. Երևան , 1984), էջ 715:

3782. **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 351:

3783. «ՄԺԱ», էջ 25: Տե՛ս նաև՝ **Աբրահամյան Ա. Գ.**, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 134: Շամքորի ճակատամարտն առանց հիմնավորման ու համոզիչ փաստարկների, թվագրվել է նաև 1203 թ. (**Вейденбаум Е.**, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, с. 376):

3784. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163:

3785. «Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի** լուսաբանեալ», Վենետիկ, 1862 (վերահրատ. Երևան, 2001, էջ 142-143):

3786. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 52: Բլու Զաքարեի որդի Վահրամին Գագ ամրոցն իր աթոռանիստը դարձնելու համար հաճախ կոչել են նաև Գագեցի (վրացերեն՝ Գագելի):

3787. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:

Աղուանից, ի սահմանս Շամքոր քաղաքի»[3788]: Այնուհետև, 1225 թ. Չարմաղան զորապետի զորավարներից Մոլար Նուինը, որին բաժին էին ընկել Վահրամյանների բերդերը, պաշարում է Շամքորը. «Մի ոմն յաւազացն, որում անուն էր Մոլար-նուին,... առաքեաց սակաւ զօր, իբրև արս հարիւր, որք եկեալ՝ նստան առ դրունս քաղաքին Շամքորոյ և արգելին զելողս և զմտողս ի նա»[3789]: Ցավոք, Վահրամ Գագեցին ոչ միայն մերժում է պաշարված քաղաքի բնակիչների՝ իրենց սատարելու խնդրանքը, այլև որդուն՝ Աղբուղային, արգելում է գնալ Շամքոր՝ հասկանալով, որ հակառակորդի մեծաքանակ ուժերին դիմադրելն անհնար է: Մոնղոլ-թաթարներին հաջողվում է դյուրությամբ գրավել Շամքորը և ավերել այն. «Իսկ զօրք այլազգեացն օր ըստ օրէ առաւելուին ի թիւն, մինչև եկն գլխաւորն իւրեանց, զոր Մոլարն կոչէին, և ետ պատերազմ ընդ քաղաքին. և զփոսն, որ շուրջ զպարսպով քաղաքին էր, ելից փայտիւ և ցօղնով, զի դիւրաւ ելցեն ի պարիսպն: Եւ նոքա ի ներքուստ ընկեցեալ ի հուր՝ ի զիշերի այրեցին զնա: Իսկ ի վաղիւն իբրև ետես զայն Մոլար-նուինն, հրամայեաց զօրացն բառնալ բեռն մի հող իւրաքանչիւր ումեք և արկանել ի փոսն. և իբրև արկին՝ լցաւ հաւասար պարսպին: Եւ դիմեաց զօրն իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոց ի քաղաքն, և առին զնա, և կոտորեցին զամենեսին բերանով սրոյ, և այրեցին զշինուածն, որ ի նմա, և առին, զոր ինչ գտան ի նմա»[3790]:

*ԺԵ-ԺԷ դարեր.* գրավոր աղբյուրներում Շամքորի մասին մինչև ԺԵ դարը ոչինչ չի հաղորդվում: Այս դարում Շամքորը (ինչպես նաև ողջ Հայաստանն) ընկնում է աղ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության տակ:

ԺԶ-ԺԷ դարերում քաղաքը մտնում էր ղզլբաշների պետության կազմի մեջ:

1606 թ. Շամքորը գրավել ու բնակիչներին կոտորել է պարսից Շահ-Աբաս թագավորը. «Եկեալ անտի Շահաբասայ՝ գնաց ի Շամքոր. և էառ զայն և արար կոտորած մեծ...»[3791]:

*ԺԸ դար.* այս դարի ընթացքում Ղարաբաղի («Խամսայի») հայ մելիքների ու պարսիկ իշխողների միջև ծայր առած հակամարտությունների ընթացքում, որոնց մասնակից են դարձել նաև վրաց արքունիքն ու կովկասյան լեռնականները, Շամքորը ձեռքից ձեռք է անցել, քանդվել ու վերաշինվել, բնակիչները կոտորվել են կամ գերության քշվել: Այսպես, 1721 թ. 8000 լեզգիներ Սուրխեյ-խանի և Ալի-Սուլթանի գլխավորությամբ հարձակվում են Գանձակի վրա, բայց, անհաջողություն կրելով, որոշում են ասպատակել Շամքորը: Գանձակի Օղուրլու խանը դիմում է վրաց Վախթանգ թագավորի օգնությանը: Վրացական զորքը գրավում է Շամքորը, շարժվում Գանձակ և օգտվելով հարմար առիթից՝ թալանում բնակչությանը և շատերին գերեվարում Թիֆլիս[3792]:

ԺԸ դարի 2-րդ կեսից սկսած և առավելապես Հերակլ Բ թագավորի օրոք, շամքորեցի հայերի հոսքը դեպի Վրաստան ու Թիֆլիս մեծանում է: Շամքորեցիները վրաց մայրաքաղաքում մեծ թիվ էին կազմում. ունեին իրենց թաղամասը՝ «Շամքորեցոց թաղը», և Սբ. Աստվածածին (կամ «Կարմիր ավետարան») եկեղեցին[3793]:

1762 թ. Շամքորում ժամանակավորապես ապաստանում է Օղուրլու խանի որդին՝ Շահվերդի խանը, երբ նրա դաժանություններից զայրացած գանձակեցիները որոշում են կոտորել նրա տոհմի անդամներին[3794]:

1788 թ., այլևս չկարողանալով հանդուրժել Ղարաբաղի Իբրահիմ-խանի բռնությունները՝ Գյուլիստանից 500 հայ ընտանիք տեղափոխվում է Գանձակի խանություն և բնակություն հաստատում Շամքորում[3795]:

*ԺԹ դար.* 1804 թ. Շամքորն անցնում է ռուսական տիրապետության տակ: Դա հաստատագրվեց 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում ստորագրված ռուս-պարսկական պայմանագրով:

1826 թ. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան, խախտելով պայմանագիրը, 60-հազարանոց բանակով ներխուժում է Ղարաբաղ ու պաշարում Շուշին, գրավում Ելիզավետպոլը: Պարսկական 10-հազարանոց մի զորամաս Աբաս-Միրզայի որդու՝ Մահմեդ-Միրզայի ու պարսից աչքի ընկնող զորավարներից մեկի՝ Ամիր խանի գլխավորությամբ և Ղազախի վրայով շարժվում Թիֆլիս, սակայն Շամքորի մոտ նրա դեմ է դուրս գալիս ռուսական 2000-անոց զորաջոկատը հայազգի գեներալ Վ. Գ. Մադաթովի ղեկավարությամբ: Սեպտեմբերի 3(15)-ին տեղի է ունենում վճռորոշ ճակատամարտ, որտեղ ռուսները փայլուն հաղթանակ են տանում, իսկ մի քանի օր անց ետ վերցնում Ելիզավետպոլը[3796]:

3788. Նույն տեղում, էջ 202:

3789. Նույն տեղում, էջ 241-242:

3790. Նույն տեղում, էջ 242-243: Վարդան Արևելցին Շամքոր քաղաքի գրավումը նկարագրում է 1225 թ. տակ, լոկ մեկ նախադասությամբ. «...ի վեցհարիւր եօթանասուն և չորս թուին... Մոլար նոյինն 'ի բաժնի առեալ զբերդու զաւառաց մեծ իշխանի Վահրամայ, և նախ առնու զՇամքոր հնարիւք» (տե՛ս «Հաւաքումն...», էջ 146):

3791. **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, Վենետիկ, 1786 (վերահրատ. Երևան, 1984, էջ 555):

3792. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 216: Տես նաև՝ **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները («Երկերի ժողովածու», հ. 10, Երևան, 1959, էջ 177, 179):

3793. Եկեղեցու վիմագրերը հրատարակել է Պ. Մ. Մուրադյանը իր «Армянская эпиграфика Грузии. Тбилиси» մենագրության մեջ (Երևան, 1988, էջ 92-96):

3794. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 228-229:

3795. **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, էջ 251:

3796. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 141-142: **Պարսամյան Վ. Ա.**, Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985, էջ 111: **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 219: **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, էջ 331, 352-355:

Ահա թե ինչպես է նկարագրում այս ճակատամարտը ռազմական պատմաբան Վ. Պոտտոն. «Շամքորի ճակատամարտը երկար չտևեց և դժվար չէր: Այն ավարտվեց մի սրընթաց հարվածով: Հակառակորդի դիմադրությունն այնքան թույլ էր, որ փայլուն հաղթանակը՝ հնգապատիկ ուժեղ թշնամու ջախջախումը, ռուսական զորքերին արժեցավ 27 զոհ, մինչդեռ հակառակորդի կորուստները հսկայական էին: Պարսիկների խոստովանությամբ՝ այդ ճակատագրական օրը իրենք տվեցին ավելի քան 2000 մարդ միայն սպանված: Շահական գվարդիան, որը մասնակցում էր կռվին, այլևս գոյություն չուներ. գրեթե ամբողջությամբ ընկավ ռուսական հեծելազորի հարվածների տակ: Շամքորից Ելիզավետպոլ ընկած ավելի քան 30 վերստ տարածությունը ծածկված էր թշնամու դիակներով: Այդ մասին, ի միջի այլոց, վկայել է նաև ինքը՝ Պասկևիչը, որն ութ օր անց անցել է մարտի դաշտով. իսկ Պասկևիչին չի կարելի կասկածել Մադաթովի հանդեպ կողմնակալության կամ էլ Շամքորի հաղթանակի նշանակությունը գերագնահատելու մեջ»[3797]: Ինքը՝ Մադաթովը խոստովանել է, որ Շամքորի ճակատամարտը եղել է իր կյանքի ամենաերջանիկ րոպեն[3798]: Մարտական գործողություններին մասնակցել են նաև հայկական աշխարհազորային ջոկատները Գալուստ Մանուչարյանի, Ասրի Բահաթրյանի և այլոց գլխավորությամբ[3799]:

Շամքորի մոտ տեղի ունեցած ճակատամարտը կարևոր նշանակություն է ունենում ռուս-պարսկական 2-րդ պատերազմի հետագա ընթացքի վրա: Սկսվում է ռուսական զենքի հաղթանակների շրջանը. ռուսները գրավում են Երևանի, Նախիջևանի խանությունները, և Թուրքմենչայում կնքված պայմանագրով երկու երկրների միջև պետական սահմանն է դառնում Արաքս գետը:

3797. **Потто В.**, Кавказская война..., т. 3, вып.1, С. Петербург, 1886, с. 145 (բնագրում՝ “Шамхорская битва длилась не долго и была не сложна. Она окончилась однимъ стремительнымъ ударомъ. Сопротивление неприятеля было такъ слабо, что блистательная победа, разгромъ въ пять разъ сильнейшаго врага,-стоили русскомъ войскамъ всего 27 человекъ, выбывшихъ изъ строя, въ то время, какъ потери неприятеля были громадны. По сознанию самихъ персиянъ, они потеряли въ этот фатальный для нихъ день свыше двухъ тысячъ человекъ одними убитыми. Шахская гвардия, участвовавшая въ деле, более не существовала,- она почти вся легла подъ ударами русской конницы. Пространство отъ Шамхора до Елизаветполя, на протяжении тридцати слишкомъ верстъ устлано было неприятельскими трупами. Объ этомъ свидетельствовалъ между прочимъ и самъ Паскевичъ, проезжавший, спустя восемь дней, через поле битвы, - а Паскевича никакъ нельзя заподозрить въ пристрастии къ Мадатову или въ желании преувеличить значение шамхорской победы).

3798. Նույն տեղում, էջ 146:

3799. «ՀՍՀ», հ. 8, Երևան, 1982, էջ 443-444:

Հայտնի է, որ արդեն ԺԹ դարի 90-ական թվականներին Շամքորը վերածվել էր ավերակների:

*Շամքորը 1918 թ.* արևմտյան պետությունների ներկայացուցիչների և, մասնավորապես, Թիֆլիսի ամերիկյան հյուպատոս Աղամ Սմիթի համաձայնությամբ Այսրկովկասյան կոմիսարիատի վրաց մենշևիկյան (փոքրամասնական) պարագլուխներ՝ Ն. Ռամիշվիլին, Ե. Գեգեչկորին և Ա. Չխենկելին 1918 թ. հունվարին կազմակերպում են Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատից տուն վերադարձող ռուս զինվորների կոտորածը: Այսպես, ազգային զորամիավորումները զինելու պատրվակով նախապես զինաթափելով ռուսներին՝ Շամքոր ուղարկված զրահագնացքի հրամանատար Աբխազավան, մահմեդական ազգային կոմիտեն և «Վայրի դիվիզիան» (ղեկավարներ՝ Ասլան բեկ Սաֆիքյուրդսկի, Իշխան Մաղալով, Խուդուդան բեկ Խասամմեդով և այլոք) իրականացնում են ավելի քան 1000 ռուս զինվորների ջարդը: Յուրացվում է շուրջ 12 հրանոթ, 15000 հրացան, 70 գնդացիր[3800]:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին քաղաքատեղիից շուրջ 10-12 կմ արևմուտք՝ Թիֆլիս-Եվլախ ավտոճանապարհի վրա, ծնունդ է առնում ներկայիս Շամքոր քաղաքը, որն իր մեջ ընդգրկում է նաև նախկին Աննինո գյուղը: 1930 թ. օգոստոսից Շամքորը նույնանուն շրջանի կենտրոնն է. քաղաքի կարգավիճակ է ստացել 1944 թ.[3801]:

**Բնակչություն.** ԺԹ դարում բնակավայրի բնակչության թվաքանակի մասին տեղեկությունները, որոնք հիմնականում ռուսական աղբյուրներում են, քիչ են և կցկտուր: Եղածներն էլ հնարավորություն չեն տալիս հստակեցնել բնակիչների էթնիկական կազմը: Այսպես, 1809 թ. ունեցել է մոտ 600 ընտանիք[3802], 1850-ական թվականների սկզբին՝ 581 բնակիչ[3803]: Դարավերջին քաղաքի ավերակներում ապրում էր մի քանի մահմեդական ընտանիք[3804]:

1976 թ. Շամքորն ունեցել է 20.000 բնակիչ[3805]: 1988 թ. արտագաղթի նախօրյակին քաղաքում բնակվում էին շուրջ 2000 հայեր[3806]. ունեին միջ-

3800. Ըստ «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիկական հրատարակության 7-րդ հատորի, ռուս զինվորների կոտորածը տեղի է ունեցել 1918 թ. հունվարի 7-20-ի ընթացքում (տե՛ս հ. 7, Երևան, 1967, էջ 23-24): Իսկ «Հայկական Սովետական Հանրագիտարան»-ում զետեղված համապատասխան հոդվածում արձանագրված է՝ հունվարի 9-12-ը (տե՛ս հ. 8, էջ 443): Շամքորի ջարդի մասին մանրամասն տես «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում». փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 167-168, 170-173: **Մելիքյան Հ. Ս.**, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 551-555:

3801. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, Երևան, 1998, էջ 71:

3802. “Акты...”, т. IV, Тифлис, 1870, с. 491.

3803. “Кавказский календарь на 1852 г.”, с. 93.

3804. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 56:

3805. «ՀՍՀ», հ. 8, էջ 443:

3806. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում, էջ 4:

նակարգ դպրոց, շրջանային թերթ: Բռնագաղթից հետո շամքորաբնակ հայերի մեծ մասը հաստատվում է Հայաստանում:

**Անապատ.** Շամքորում կամ նրա մերձակայքում գոյություն է ունեցել անապատ, որը հիշատակվում է ԺԷ դարի սկզբնաղբյուրներում որպես գրչօջախ (չի բացառվում, որ անապատը լիներ Մովսես Կաղանկատվացու հիշատակած Բերդո վանքը):

1635 թ. Սարգիս բանասերը «...ի սբ. անապատս Շամքօրու»[3807] ընդօրինակել է Պողոս առաքյալի «Թղթերը»:

1651 թ. Գրիգոր քահանան հեղինակել ու նկարազարդել է մի ձեռագիր «Խորհրդատետր» և հիշատակարանում գրել. «...ետու ի ձեռն երիցս երանեալ, երջանիկ րաբունապետի սրբոյն Սարգիս վարժապետի, վերադիտողի սրբոյ անապատին Շամքորոյ... ՌՃ (1651)»[3808]:

**Բերդ.** հնավայր այցելած տեղագիր հեղինակներից մեկի համառոտ նկարագրականում կարդում ենք. «...Մեծ եղած է քաղաքիս ծաւալն, ինչպէս երևում է աւերակիս մեծութիւնիցն, մօտ մի մղոն երկարութիւն ունեցած է քաղաքս իւր արուարձանով միասին և կէս մղոնից պակաս՝ լայնութիւն: Տակաւին գտնում են աւերակներիցս ոսկի, արծաթ, և պղինձ դրամներ և պղնձեղէն, երկաթեղէն և խեցեղէն գործիքներ, կարասիներ և անօթներ: Այժմ ամենայն ինչ կործանեալ դրութեան մէջ է. միայն կիսաւեր է բերդն: Ամրոցս՝ հիւսիսային, հարաւային և արևմտեան կողմերից շրջապատուած է քաղաքիս աւերակներովն, իսկ արևելեան կողմից (պարսպի տակով) հոսում է Շամքոր գետակն: Բերդս ունի շատ բուրգեր, հաստ պարիսպ և հաստատուն ամրութիւն: Պարսպի և բուրգերի վերայ համարեա թէ մի մի շար քրծեալ աղիւս շարած է և մի մի շար անտաշ գետաքար կրաշաղախ ցեխի հետ միասին: Ահա այսպէս շինուած է բերդս, որ ունի 130 մետր երկարութիւն, 70 մետր և 50 սանթիմ լայնութիւն, 2 մետր և 45 սանթիմ պատի հաստութիւն և 2 դուռն՝ մին հարաւային և միւսն հիւսիսային կողմից: Բացի բերդի պարսպիցն՝ կայ և մի ընդարձակ պարիսպ, որ սկսուած է բուն բերդի հարաւային պարսպի շարունակութիւնից և պատելով արևմտեան կողմով՝ կցուած ապա բուն բերդի հիւսիսային կողմի պարսպին: Բայց այս պարիսպն հիւսուած է տեղ տեղ քարուկիր և տեղ տեղ անեփ աղիւսով»[3809]:

Շամքորի բերդն ունեցել է չորս դիտարան. «Առաջին բարձրագոյն դիտարանն, որ եղած է Բ. բերդի հիւսիսային կողմում, փլած է 1844 թուին: Երկրորդ դիտարանն՝ Շամքոր գետակի ձախ կողմում՝ դաշտաբերանումն է: Երրորդ և չորրորդն՝ որ կանգուն են, արձանացած են Աղդան սարի ստորոտին մօտ: Ամբողջապէս քարուկիր են բոլոր դիտարան բուրգերն»[3810]:

**Սյուն.** 1845 թ. դեռևս կանգուն էր[3811] Շամքորի մոտ վեր խոյացող բարձր սյունը. «Շատ դարերի ընթացքում այս երկիրն ալեկոծած բոլոր հեղաշրջումների ժամանակ միայն այս հսկայական սյունն է դիմագրավել ավերածությանը և անվնաս պահպանվել է իրեն շրջապատող երբեմնի մեծ քաղաքի քարակույտերի ու ավերակների մեջ: Այս սյան կառուցումը ...ավանդությունները տարբեր կերպ են պատմում, բայց հիմք կա ենթադրելու, որ այն անցյալում ծառայել է իբրև աստղադիտարան, և միայն վերջին տարիներին են մոլլաները վերածել մինարեթի: Քառանկյուն պատվանդանի վրա կանգնեցված այս սյունը նշանավոր էր թռիչքի բարձրության համարձակությամբ և արտակարգ ամրությամբ: Ներքին պտուտակաձև սանդուղքը, որը բավականին լայն էր կողք կողքի ընթացող երկու մարդու համար, տանում էր դեպի սրահը, որ շրջապատում էր սյունը գետնից մոտ երկու հարյուր ֆուտ բարձրության վրա և իր նրբությամբ ու թեթևությամբ կարող էր համարվել ճարտարապետության նմուշ: Այս հիանալի կառույցի հիմնադրման ժամանակը կորչում է դարերի խորքում, և պետք է ասել, որ դեռ այսօր էլ Շամքորի ավերակներում գտնվում են Ալեքսանդր Մեծի պատկերով հին դրամներ: ...40-ական թվականներին այն ընկել է ...»[3812]:

Այս սյան, ինչպես նաև ավերակ քաղաքի, Շամքորի նշանավոր բերդի և այլ հուշարձանների մասին արժեքավոր տեղեկություններ են թողել նաև ԺԹ դարի տեղագիր հեղինակները. «Է քաղաքատեղի Հայոց առ երի համանուն Շամքոռ գետոյ, որում տիրէր յերկոտասաներորդ դարուն իշխանն Վահրամ որ յետոյ աւերեցաւ 'ի ձեռն Թաքարաց,

3807. «ԺԷԲ», էջ 611:
3808. Նույն տեղում, էջ 450:
3809. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 55-56:

3810. Նույն տեղում, էջ 56:
3811. “Кавказский календарь на 1846 г.”, 1845, с. 50:
3812. **Потто В.**, նշվ. աշխ., էջ 141 (բնագրում՝ “При всех переворотахъ, колебавшихъ эту страну въ течение многихъ вековъ, одинъ этотъ гигантский столбъ противустоялъ разрушению и сохранялся невредимо среди груды камней и развалинъ некогда окружавшаго его большого города. Темныя предания различно повествуютъ о сооружении этого столба; но есть основание думать, что онъ въ былое время служилъ астрономической обсерваториею, и что только уже въ позднейшие годы муллы обратили его въ минаретъ. Уставленная на четырехъ-угольномъ пьедестале, колонна эта была замечательна смелостью полета въ вышину и необыкновенною прочностию. Винтовая лестница внутри, достаточно широкая для двухъ человекъ, идущихъ рядомъ, вела на галерею, окружавшую колонну на высоте около двухсотъ футовъ отъ земли, и могла считаться образцомъ архитектуры по своей изящности и легкости. Время основания этого замечательнаго сооружения теряется въ глубине вековъ, и нужно сказать, что еще и теперь въ развалинахъ Шамхора находятъ древния монеты съ изображениемъ Александра Великаго. ...Въ сороковыхъ годахъ онъ упалъ...”). Տե՛ս նաև՝ **Вейденбаум Е.**, նշվ. աշխ, էջ 375:

որոյ գլխաւորին անուն Մոլար կոչէին, և ապա ’ի ձեռն Մէլիքաց Ղարաբաղու կրկին շինեցաւ, իսկ այժմ է աւերակ: Այս աւերակ պատեալ է խոր խրամատիւ, ունելով յարևելից կուսէ զփոքր բերդ աղիւսակերտ և ամուր, դիրք տեղւոյն է տափարակ, ընդարձակ, և արգաւանդահող, ջուրն քաղցր և անվնաս լի կարմրախայտ ձկամբ, ... անուանի է ’ի սմա մզկիթանման սիւնն որոյ բարձրութիւնն է 108 կանգուն, որ երևի լինել Հայաշէն ’ի պատիւ Թաքաւորաց, կամ է դիտարան զի ’ի բարձրութենէ սորա երևի ընդարձակ վայրն, ապացոյց բանիս են քանի մի հայկական տառք վասն եղծուածոյն անվերծանելիք»[3813]:

**Կամուրջներ.** քաղաքի հարևանությամբ հոսող համանուն գետի վրա կամուրջ կամ կամուրջներ գոյություն են ունեցել առնվազն վաղ միջնադարից: Գետի բավականին լայնահուն հոսքը հաղթահարելու համար կամուրջներն ունեցել են բազմաթռիչք հորինվածք: Դեռևս ԺԹ դարի կեսերին նկատելի են եղել դրանցից մեկի մնացորդները. «...գոյ ’ի վերայ ջրոյս բազմակնեայ կամուրջ շինեալ սպիտակ քարամբք որ այժմ է աւերակ է...»[3814]:

Քարաշեն նոր կամրջի շինարարությունն իրականացվել է ԺԹ դարի կեսին գանձակեցի Ալթունյանցի ծախսով և բնակիչների օժանդակությամբ. ընդ որում միայն շինանյութի փոխադրման համար գործածվել է 3.000 սայլ[3815]:

## ՇԵԻԴԼԱՐ

Գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1160-1200 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին Չարդախլու գյուղից խլված հողամասի վրա:

## ՇԻՇԹԵՓԵ

Գտնվում է շրջկենտրոնից 8 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 440-550 մ բարձրության վրա:

Գոյացել է Ի դարի սկզբներին: Շրջանի մարդաշատ գյուղերից է: 1986 թ. ունեցել է 3649 թուրք բնակիչ[3816]:

## ՉԱՅԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 11 կմ հարավարևելք՝ Շամքոր գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 490-520 մ բարձրության վրա:

Թրքաբնակ գյուղը գոյացել է Ի դարի սկզբներին հայաթափ հին գյուղատեղիում:

3813. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 170-171:

3814. Նույն տեղում, էջ 171:

3815. “Акты...”, том XI, Тифлис, 1888, с. 817 (բնագրում՝ “Строит Елисаветопольский житель милиции шт.-ротм. Алтунов, на собственный счет, с нарядом от жителей 3000 ароб для перевозки материалов”):

3816. «ՍՍՀ», հ. 10, էջ 549:

## ՉԱՐԴԱԽԼՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևմուտք՝ Շամքոր-Գետաբեկ մայրուղու միջնամասում՝ ծովի մակերևույթից 1240-1360 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղում և մերձակայքում պահպանված տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող բազմաբնույթ հուշարձանները վկայում են, որ ներկայիս գյուղի տարածքը բնակեցված է եղել պատմական անհիշելի ժամանակներից: Կիկլոպյան կառույցների ու դամբարանաշերտերի մնացորդները, տեղումների և հողաշերտի քայքայման շնորհիվ կամ հողային աշխատանքների ընթացքում պատահականորեն հայտնաբերված հնագիտական բազմազան նյութերը (մետաղական իրեր, խեցեղեն) ասվածի լավագույն ապացույցն են[3817]: Դրանց հետազոտությամբ զբաղվել են բազմաթիվ գիտնականներ (Վ. Բելկ, ակադ. Նիկոլսկի, ակադ. Իվանովսկի և այլն):

Չարդախլուի տարածքում բազմաթիվ են նաև քրիստոնեական շրջանի նյութական մշակույթի նմուշները, բայց վերջիններս մեզ են հասել առավել ավերակված:

**Գյուղի վերաբնակեցումը.** գյուղի անտառազուրկ և կիսադաշտային բնամիջավայրը պաշտպանության կազմակերպման հարկ եղած դեպքում, փաստորեն, տեղի բնակչությանը հուսալի դիմադրության հնարավորություն չի ընձեռել, և ժամանակ առ ժամանակ նրանք ստիպված են եղել լքելու հարազատ օջախներն ու տարագրվել: Նման օրհասական իրավիճակներում չարդախլվեցիները առանձնապես հաճախակի են հայտնվել ԺԸ դարի ընթացքում: Մերթ լեզգիների ու վրացիների, երբեմն էլ թուրքերի պարբերաբար կրկնվող ասպատակությունները ի վերջո գյուղն իսպառ ամայացրել են:

Վկայություններից մեկի համաձայն, Երևանի գավառի Քանաքեռ գյուղից 200 ընտանիք ԺԷ դարի կեսերին գաղթում է Թիֆլիս և հաստատվում «Հալաբարի այն մասում, ուր այժմ զորանոցներ կան կառուցած»[3818]: Շատ չանցած՝ կառավարությունը նրանց առաջարկում է փոխադրվել Թիֆլիսի տարածքում մի այլ տեղ, որից դժգոհ (թե միգուցե նոր տեղից էլ հետո կտեղահանվեն) հայերը ճիշտ են համարում գաղթել Գանձակի խանության սահմաններում գտնվող Չարդախլու գյուղը. «...Չարդախլու գիւղը հիմնուած է 1794 թուին, այսինքն Հասան խանի գալուց մէկ տարի առաջ. գաղթել են Թիֆլիսից և գաղթելու պատճառն էլ, ինչպէս պատմում են տեղացիները, եղել է հետևեալ դեպքը. գաղթողները բնակուելիս են եղել Հալաբարում, այժմեան Պօկրովսկի զօրանոցի տեղը և շրջակայքում,

3817. **Մարտիրոսյան Գ.**, Իմ սիրտը, Չարդախլու, քո լեռներում է, «Դաշնակցություն», 1991, N 18, էջ 2:

3818. «Մեղու Հայաստանի», 1884, N 99, էջ 2:







***ՉԱՐԴԱԽԼՈՒ. հատվածներ գյուղից***

իսկ Կուկիում ու Կալօնկում (այժմեան գերմանացիների գաղթականութեան տեղը) վարուցան անելիս են եղել: Այդ ժամանակը ռուսաց կառաւարութիւնը կամեցել է Թիֆլիսում մի զօրանոց ունենալ և այդ տեղը զօրանոցի յարմար գտնելով, այդտեղի բնակիչներին առաջարկում է ճրի և մշտական սեփականութիւն Կուկիում եւ Կալօնկում ապրելու: Բայց մեր խեւլոքները նեղանալով այդպիսի առաջարկութեան վրայ՝ մօտ 200 տուն թողնում են Թիֆլիսը և գալիս են Չարդախլուում բնակութիւն են հաստատում...»[3819]:

Նորաբնակները այդտեղ իբրև հին գյուղի՝ երբեմնի գոյության վկայություն գտնում են «խարաբա (աւերակ) եկեղեցին եւ հին գերեզմանատունը»[3820]: Հայտնի չէ, թե Չարդախլուում քանաքեռցի հայերի հաստատվելու պահին այնտեղ բնիկներ կային, թե ոչ, և միգուցե քանաքեռցիներն էլ՝ ավելի վաղ ժամանակներում Չարդախլուից փոխադրվածներ էին, բայց գիտենք, որ ընդամենը մեկ տարի անց նորահաստատ բնակչության մեծ մասը կրկին ցրվում է՝ խուսափելով Աղա-Մահմատ խանի արշավանքից. «Դեռ տարին չլրացած՝ կալի կուտի ժամանակ, խուրձերը դէզ ու փէնջակ դրած՝ յայտնւում է արիւնարբու Հասանխանը, որի ահից ամեն բան թողնում են նախախնամութեան կամքին և իրենք գնում են Բարսումի ձորում սղնախ են անում (ապաստան են գտնում), այդտեղից էլ գնում են Գառնակեր գիւղում 3 տարի մնում, մինչև որ ռուսները վերջնականապէս տիրում են Արարատեան երկրին և այդ 200 տնուորից հազիւ 50 տուն 1826 թուին վերադառնում է Նորաշէն Չարդախլու գիւղը: Բացի սրանից՝ Երևանից, Գիւնաշից և այլ տեղերից շատ բնակիչներ են գալիս այս գիւղում բնակւում»[3821]:

Մեկ այլ տեղեկությամբ՝ «Չարդախլու գիւղը հիմնուած է 1822-1823 թուականներում...»[3822]: Չգի-

3819. **Գասպարեան Յովի.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, էջ 3: Ի դեպ, չարդախլուեցի հանգուցյալի մեկ ուղղանկյունաձև տապանաքար (154 x 63 x 25 սմ) կա Մեծ Շուլավերի (այժմ՝ Շահումյան ավանը Մառնեուլի շրջանում) գերեզմանոցում. *«Այս է տապա|ն Տ(է)ր Ավաք|ին, որ է որդ|ի **Չարդախլ|ու-ցի** Առս|դամին, թվին| ՌՄԾ(1801)»:*

3820. **Գասպարեան Յովի.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, էջ 3:

3821. Նոյն տեղում:

3822. «Նոր-Դար», 1896, N 77, էջ 2:

տենք ի՞նչ աղբյուրներից քաղելով, բայց շատ որոշակի Ե. Լալայանը նշել է. «Բնակիչները մասամբ Թիֆլիսի Հավլաբարի մասից 1823 թ. գաղթած երևանցիներ են, մասամբ էլ Ղարաբաղից եւ Պարսկաստանից եկուորներ...»[3823]:

Ինչևէ, վերը շարադրվածի համադրումը թույլ է տալիս Չարդախլուի վերջին վերաշինման ժամանակը համարել 1820-ականների կեսերը:

**Չարդախլու անվան ծագումը.** գյուղի անվան ստուգաբանության վերաբերյալ, որ այսօր էլ ավանդաբար պատմում են չարդախլվեցիները, ավելի քան 100 տարի առաջ գրվել է. «Գիւղն իր անունը ստացել է ոմանց ասելով «չարդախ», իսկ ոմանց ասելով՝ պարսից «չհարդաղ» բառից... ոմանք ընդունում են այս գիւղում չորս սար գտնուելուն համար, որոնք են՝ Չախր-եօլի, Ղարադաղ, Ղարամօղլի և Բարձր խաչ կամ Խաչեալ»[3824]:

**Կառուցապատում.** գյուղի լայնատարած թաղամասերից հները՝ Խաչի սարն ու Գյունաշը, տարածվում են հարավ-հյուսիս ուղղությամբ հոսող վտակի համապատասխանաբար աջ ու ձախ ափերին, իսկ Նորաշեն թաղը ձգվում է ավելի շատ դեպի հյուսիսարևելք՝ Շամքոր տանող մայրուղու շուրջ: Ավելի քան 3 կմ երկարություն և 1 կմ լայնություն ունեցող Չարդախլուի թաղերը գտնվում են ծովի մակերևույթից 1280-1350 մ բարձրության վրա: Գյուղի գերազանցապես կրկնահարկ քարաշեն առանձնատներից առաջինները սկսել են կառուցվել 1880-ականներին, իսկ մինչ այդ Չարդախլուն հիմնականում կառուցապատված է եղել միահարկ, հողաշեն տներով: Այսպես, 1864 թ. ականատեսը գյուղը նկարագրել է հետևյալ կերպ. «Չարդախլու գյուղը նույնպես մեծ մասամբ կազմված է հյուղակներից, որոնց մեջ ձմռանն ապրում են անասունների հետ միասին...: ...հայկական լավագույն գյուղերից Չարդախլուի կառուցապատման մասին: Չարդախլուն գետնափոր բների անկանոն կույտ է՝ միախառնված հողով կամ կավով և քարերով կառուցված հյուղակների հետ»[3825]:

**Ջրամատակարարում.** Չարդախլուն սակավաջուր գյուղ չէ, բայց նրա խիստ ընդարձակման հետևանքով, այնուամենայնիվ, կարիք է զգացվել դեպի գյուղ ուղղել նաև մոտակա աղբյուրների ջրերը: Իրենց սուղ միջոցներով համագյուղացիները այդպիսի մի խնդիր լուծել են 1900 թ. «Գիւղի աղքատ թաղը ծախսել է մօտ 1500 րուբլի եւ ջուր է բերել իր համար...»[3826]:

**Բնակչություն.** գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տարբեր աղբյուրներից տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1840 թվականից մինչև 1910-ական թվականները Չարդախլուի բնակչությունը (բացառապես հայերից կազմված) հիմնականում շարունակաբար աճել է: Միայն որոշ տարիներին պայմանավորված առանձին երևույթների հետ (համաճարակ, արտագաղթ և այլն), տեղի է ունեցել բնակչության թվաքանակի նվազում: Հայտնի է, օրինակ, որ տարածված ծաղիկ հիվանդությունը գյուղում 1878 թ. խլել է շուրջ 100 երեխայի կյանք. «...երեխաներից մօտ հարիւրը զոհվել են ծաղիկ հիւանդութեանը մէկ ամիս ու կէսվայ ընթացքում»[3827]:

Գյուղի բնակչության թվաքանակի կրած փոփոխությունների մասին ավելի հստակ պատկերացում է տալիս սույն աղյուսակը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1840[3828] | 40 | 158 | 136 | 294 |
| 1841[3829] | | 162 | 152 | 314 |
| 1842[3830] | | 160 | 140 | 300 |
| 1844[3831] | | 206 | 184 | 390 |
| 1849[3832] | | 246 | 203 | 449 |
| 1851[3833] | 65 | 240 | 183 | 423 |
| 1853[3834] | | 315 | 281 | 596 |
| 1866[3835] | 90 | | | |
| 1872[3836] | | 548 | 330 | 878 |
| 1877[3837] | | 522 | 326 | 848 |
| 1878[3838] | 120 | 502 | 306 | 808 |
| 1880[3839] | | 548 | 330 | 878 |
| 1881[3840] | | 565 | 343 | 908 |
| 1882[3841] | | 589 | 360 | 949 |
| 1883[3842] | | 608 | 377 | 985 |
| 1884[3843] | 120 | | | |
| 1885[3844] | 118 | 602 | 403 | 1005 |
| 1886[3845] | 202 | 753 | 561 | 1314 |

3823. **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, էջ 327:
3824. **Գասպարեան Յովհ.,** նշվ. հոդվ., էջ 3:
3825. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, "Кавказ", 1865, N 44, стр. 239 (բնագրում՝ "Деревня Чардахлы состоит также большею частью из землянок, которых хозяева живут зимою вместе с своим скотом... ...объ устройстве Чардахлы-лучшей изъ армянскихъ деревенъ. Чардахлы - это безпорядочная куча норъ, перемешанныхъ съ саклями, сложенными изъ земли, или глины и камней").

3826. «Մշակ», 1900, N 132, էջ 4:
3827. «Մշակ», 1878, N 169, էջ 2:
3828. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 7:
3829. Նույն տեղում, գ. 3802, թ. 57-58:
3830. Նույն տեղում, գ. 3805, թ. 84-85:
3831. Նույն տեղում, գ. 3809, թ. 73-74:
3832. Նույն տեղում, գ. 3818, թ. 75-76:
3833. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 53:
3834. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 102-103:
3835. Նույն տեղում, գ. 3848, թ. 86:
3836. Նույն տեղում, գ. 3872, թ. 63-64:
3837. Նույն տեղում, գ. 3869, թ. 55-56:
3838. Նույն տեղում, գ. 3870, թ. 23-24: Նաև՝ «Մշակ», 1878, N 169, էջ 2:
3839. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 31-32:
3840. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
3841. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
3842. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
3843. «Մեղու Հայաստանի», 1884, N 99, էջ 2:
3844. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 30:
3845. "Свод...", с. 88-89. Այլ տեղեկագրի համաձայն՝ ունեցել է 118 տուն («Արձագանք», 1888, N 7, էջ 87):

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1887[3846] | | 685 | 469 | 1154 |
| 1888[3847] | | 713 | 487 | 1200 |
| 1889[3848] | 204 | 742 | 501 | 1243 |
| 1890[3849] | | 760 | 520 | 1280 |
| 1891[3850] | | 757 | 528 | 1285 |
| 1892[3851] | | 779 | 357 | 1136 |
| 1893[3852] | | 821 | 381 | 1202 |
| 1894[3853] | | 838 | 405 | 1243 |
| 1897[3854] | | 921 | 501 | 1422 |
| 1898[3855] | | 946 | 526 | 1472 |
| 1899[3856] | | 941 | 521 | 1462 |
| 1900[3857] | | 982 | 538 | 1520 |
| 1901[3858] | | 1008 | 569 | 1577 |
| 1902[3859] | | 1025 | 600 | 1625 |
| 1905[3860] | | 1033 | 608 | 1641 |
| 1906[3861] | | 1056 | 934 | 1990 |
| 1907[3862] | | | | 1101 |
| 1908[3863] | 200 | 1299 | 1111 | 2410 |
| 1909[3864] | | 1135 | 742 | 1877 |
| 1910[3865] | | 1355 | 1162 | 2517 |
| 1912[3866] | | 1139 | 752 | 1891 |
| 1914[3867] | | | | 2400 |
| 1917[3868] | 331 | | | 1841 |
| 1976[3869] | | | | 1526 |
| 1985[3870] | 663 | | | 2527 |

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.**

Չարդախլուի վրա թուրքերի վճռական գրոհը տեղի է ունենում նոյեմբերի 30-ին, որը հաջողությամբ հետ է մղվում. «...նորից թուրք խուժանը դարձաւ դէպի Չարդախլու: Նոյեմբերի 25-ից սկսած մինչև 30-ը պարբերաբար յետ մղուելով և նորանոր թարմացած ուժերով նոր յարձակումներ գործելով, նա չը յոգնեց: ...Նոյեմբերի 30-ին տեղի ունեցաւ վճռական յարձակումը և այս անգամ խուժանը յետ փախաւ մեծ կորուստներով: Հայերից սպանւեց այդ կռւում մի հոգի, բայց լաւ հոգի. դա չարդախլուեցի Շահէնն էր»[3871]: Դրանից հետո չարդախլուցիները օգնության են հասնում Բարսում գյուղին, որտեղից միացյալ ուժերով թուրքերին դուրս են շպրտում դեկտեմբերի 5-ին[3872]:

1906 թ. հունվարի 18-ին տեղի է ունենում թուրքերի վերջին հարձակումը: Այդ օրը թշնամին դիրքավորվում է գյուղից 5 կմ հյուսիս-արևելք՝ Սանգյար - թափա կոչվող բլրի վրա, որն իշխող դիրք ուներ շրջապատի նկատմամբ: Հայերը ժամանակին նկատելով դա, հարձակվում են երկու կողմից ու թեև փոքր ուժերով, բայց խիզախ գրոհով թուրքերին ետ են շպրտում: Հրացանաձգությունը շարունակվում է մինչև երեկոյան ժամը 5-ը, որից հետո թուրքերը, թալանի տեղ իրենց սպանվածներին հավաքելով ու 6 ձի հայերին թողնելով, փախչում են: Ցավոք, այդ օրը հայերն էլ են կորուստ ունենում. զոհվում է քաջերից մեկը, վիրավորվում՝ երկուսը[3873]:

**Հայրենական մեծ պատերազմ.** չարդախլվեցիները որպես մարտունակ և հայրենասեր ռազմիկներ դրսևորվել են նաև այս պատերազմի տարիներին: Հաղթանակի գործում մեծ ավանդ ունեն նաև մարշալներ Հովհաննես Բաղրամյանը և Համազասպ Բաբաջանյանը: Պատերազմի տարիներին գնդեր ու դիվիզիաներ են ղեկավարել նաև գեներալ-մայոր Գուրգեն Մանասյանը, Ալեքսանդր Մարտիրոսյանը, գվարդիայի գնդապետ Սմբատ Դանիելյանը, Հ. Բաբաջանյանի ավագ եղբայր՝ փոխգնդապետ Գուրգեն Բաբաջանյանը: Չարդախլուն պատերազմին տվել է 20 այլ գնդապետ ու փոխգնդապետ, 35 մայոր, 28 կապիտան... 1500 չարդախլվեցիներից 350-ը տուն չեն վերադարձել[3874]:

Երախտապարտ համագյուղացիները, ի հիշատակ ռազմի դաշտերում զոհված չարդախլվեցիների, գյուղի կենտրոնում կառուցել են հուշարձան-կոթող, իսկ Հովհաննես Բաղրամյանի հայրական տան տեղում՝ Մարտական փառքի թանգարան:

**Դպրոց.** հայտնի է, որ թեմական տեսչի օգնական Մ. Եպիսկոպոսյանի շնորհիվ Չարդախլուի ծխական արական միդասյա դպրոցը հիմնադրվել է 1878 թ. մարտին[3875]: Սակայն աշակերտների թվա-

3846. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
3847. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
3848. Նույն տեղում, գ. 3884, թ. 227-228: Նաև՝ «Նոր-Դար», 1889, N 197, էջ 3:
3849. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 150:
3850. Նույն տեղում, գ. 3889, թ. 149: Մեկ այլ տվյալով (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 321)՝ ունեցել է 200 տուն՝ 1320 բնակիչ (770 ար., 550 իգ.):
3851. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 121:
3852. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
3853. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:
3854. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
3855. Նույն տեղում, գ. 3897, թ. 170:
3856. Նույն տեղում, գ. 3903, թ. 127-128:
3857. Նույն տեղում, գ. 3905, թ. 93-94:
3858. Նույն տեղում, գ. 3906, թ. 99-100:
3859. Նույն տեղում, գ. 3907, թ. 24-25:
3860. Նույն տեղում, գ. 3912, թ. 267-268:
3861. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
3862. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
3863. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 11: Նաև՝ Ի դեպ, 1908 թ. մեկ այլ վիճակագրական տվյալի համաձայն՝ ունեցել է 2400 բնակիչ (“Кавказский календарь на 1910 г.”, с. 411).
3864. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 118:
3865. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 59-60:
3866. Նույն տեղում, գ. 3919, թ. 63-64:
3867. “Кавказский календаръ на 1915 г.”, с. 205.
3868. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 5:
3869. «ԱՍՀ», հ. 1, էջ 535:
3870. Ըստ գյուղխորհրդի տվյալների:
3871. **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 353:
3872. Նույն տեղում, էջ 341:
3873. «Մշակ», 1906, N 52, 9 մարտի, էջ1:
3874. **Ղալաչյան Կ.**, Փառքի հուշարձաններ. ալբոմ, Երևան, 1986, էջ 12: Նաև՝ «Չարդախլուն Ռաֆայել Մանասյանի հուշերում», «Գարդմանք», 1996, N 2, էջ 3:
3875. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 178: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3: «Մանկավարժական թերթ», 1878-1879, էջ 14: **Գասպարեան Յովհ.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, էջ 3: **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 481:

քանակը փոփոխվել է՝ գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկված լինելու պատճառով[3876]:

Հայտնի է նաև, որ սկսած 1884 թ-ից՝ գյուղի դպրոցին, որը հիշվում է Սբ. Սահակյան անվամբ, նվիրաբերվել է գրականություն[3877]:

1886 թ. ականատեսը նշել է, որ «Գիւղս ունի և ծխական հոգևոր դպրոց, որոյ շէնքն այժմ անշուք է և ժողովուրդը մտադրութիւն ունի նորը կառուցանել եկեղեցւոյ գաւթում»[3878]:

1888 թ. հասարակության միջոցներով (1500 ռ.) գյուղում կառուցվել է դպրոցական շենքը. «...կայ եկեղեցու նման մի լաւ շէնք 1888 թուին շինած...»[3879], որը, սակայն, 1889 թ. դրությամբ դեռևս փոքր-ինչ թերի էր:

Հայտնի է, որ 1890 թ. ապրիլի 8-ին 80 տարեկան հասակում Բաքվում վախճանված ծնունդով չարդախլվեցի Մուսայել Շահգեղանյանցի որդին՝ Մկրտիչը, հանձն էր առել ի հիշատակ հոր հայրենի գյուղում կառուցել դպրոցական նոր շենք՝ դպրոցի գործունեության համար ապահովելով դրամագլխի հաստատուն տոկոսներ այն պայմանով, որ դպրոցն այդուհետև կոչվեր «Շահգեղանյան»[3880] (թվում է, թե այս ծրագիրը կյանքի չի կոչվել):



**ՉԱՐԴԱԽԼՈՒ. *ծխական դպրոցի հատակագիծը***

1896 թ. նշվել է, որ գյուղում կա «...մի նորաշէն ուսումնարանական շէնք եկեղեցու բակում»[3881]:

Առկա տվյալների հիման վրա ստորև ներկայացնում ենք Չարդախլուի ծխական դպրոցի գործունեության ժամանակագրությունը.

| Տարեթիվ | այլ տեղեկ. | ուսուցիչ | աշակերտ |
|---|---|---|---|
| 1878[3882] | հիմնադրվել է, ուսուցիչն էր բանանցեցի Ստեփանոս Տեր-Միքայելյանը | | 32 |
| 1881[3883] | | | 60 |
| 1884[3884] | ուսուցիչն էր Ստեփանոս Տեր-Միքայելյանը | | |
| 1885/86 | կառավարության հրամանով փակվել է | | |
| 1886[3885] | հոգաբարձության կազմում հաստատվել էին Թանան Մարգարյանը, Մակար քհն. Տեր-Ստեփանոսյանցը | | |
| 1888[3886] | | | 41 |
| 1890[3887] | | | 32 |
| 1891[3888] | | | 47 |
| 1892[3889] | | | 41 |
| 1892/93[3890] | միդասյա | | 55 |
| 1894[3891] | | 1 | 55 |
| 1895[3892] | կրոնուսույցն էր Գևորգ Տեր-Ստեփանոսյան Մանասյանցը | | |
| 1896[3893] | փակվել է | | |
| 1913[3894] | ստացվել է դպրոցի վերաբացման թույլտվությունը | | |

***Պետական (ռուսական) դպրոց.*** 1899 թ. սեպտեմբերի 1-ին բացվել է պետական (արքունի) դպրոց[3895]: Գործել է որպես երկդասյա՝ 5 բաժանմունքով: 1901 թ. ունեցել է 101 աշակերտ (1 աղջիկ)[3896]: Դպրոցում ուսուցչություն էին անում Հովհաննես Սարգսյան Աղայանցը, Միխայիլ Ֆեոդորովիչ Լապիկը և Գևորգ Տեր-Ստեփանոսյան Մանասյանցը[3897]:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղի դպրոցը, ըստ էության, ռուսական էր (հայերեն չէին սովորում). «Գյուղի երիտասարդության մեծ մասը զուրկ էր կրթությունից, որովհետեւ նրա հնգամյա դպրոցում օրենքով սահմանված 120 տեղի համար գրանցված էին միայն վարձովի աշակերտներ: Դասավանդումը դպրոցում տարվում էր ռուսաց լեզվով, բացառությամբ կրոնի»[3898]:

Հայտնի է, որ մահից առաջ (1934) չարդախլվեցի Ջահան Մարգարյանը գյուղի դպրոցին է նվիրել 2000 կտոր գրքերից բաղկացած իր գրադարանը[3899]:

3876. «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
3877. «Արձագանք», 1884, N 9, էջ 124:
3878. «Արձագանք», 1888, N 7, էջ 87:
3879. **Գասպարեան Յովհ.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, էջ 3:
3880. «Արձագանք», 1890, N 8, էջ 4:
3881. «Նոր-Դար», 1896, N 77, էջ 2:
3882. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 178: «Մեղու Հայաստանի», 1878, N 25, էջ 3:
3883. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 481:
3884. «Արձագանք», 1884, N 9, էջ 124:
3885. «Արարատ», 1886, էջ 469:
3886. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 481:
3887. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 150:
3888. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
3889. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
3890. ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 11, թ. 10-11:
3891. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 34, գ. 3895, թ. 99:
3892. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 72-74:
3893. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 481:
3894. «Արարատ», 1913, էջ 302:
3895. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 9, թ. 147-149:
3896. Նույն տեղում:
3897. Նույն տեղում: Նաև՝ գ. 12, թ. 72-74:
3898. **Մանասյան Ռ.**, Ուսումնա-դաստիարակչական աշխատանքները Շամխորի շրջանի Չարդախլու գյուղի դպրոցում, Բաքու, 1964, էջ 4:
3899. **Մարտիրոսյան Գ.**, նշվ. հոդվ., էջ 2:

1936 թ. Չարդախլուի դպրոցը տվել է միջնակարգ կրթությամբ իր առաջին շրջանավարտները: 1967/68 ուստարում դպրոցում ուսանել է 697, իսկ 1984/85-ին՝ 230 երեխա:

Ստորև ներկայացնում ենք գյուղի դպրոցի շրջանավարտների թիվը 1936-1985 թթ.

| ուս.տարի | շրջանավարտ |
|---|---|
| 1935/36 | 28 |
| 1936/37 | 18 |
| 1937/38 | 20 |
| 1938/39 | 12 |
| 1939/40 | 21 |
| 1940/41 | 12 |
| 1941/42 | 22 |
| 1942/43 | 20 |
| 1943/44 | 11 |
| 1944/45 | 10 |
| 1945/46 | 9 |
| 1946/47 | 13 |
| 1947/48 | 10 |
| 1948/49 | 11 |
| 1949/50 | 14 |
| 1950/51 | 14 |
| 1951/52 | 10 |
| 1952/53 | 13 |
| 1953/54 | 27 |
| 1954/55 | 44 |
| 1955/56 | 40 |
| 1956/57 | 53 |
| 1957/58 | 14 |
| 1958/59 | 23 |
| 1959/60 | 12 |
| 1960/61 | 16 |
| 1962/63 | 11 |
| 1963/64 | 21 |
| 1964/65 | 21 |
| 1965/66 | 38 |
| 1966/67 | 19 |
| 1967/68 | 34 |
| 1968/69 | 37 |
| 1969/70 | 26 |
| 1970/71 | 40 |
| 1971/72 | 43 |
| 1972/73 | 41 |
| 1973/74 | 40 |
| 1974/75 | 36 |
| 1975/76 | 54 |
| 1976/77 | 60 |
| 1977/78 | 51 |
| 1978/79 | 62 |
| 1979/80 | 55 |
| 1980/81 | 56 |
| 1981/82 | 35 |
| 1982/83 | 37 |
| 1983/84 | 51 |
| 1984/85 | 37 |

1985 թ. դրությամբ գյուղում գործում էր նաև 8-ամյա դպրոց, որն ուներ 157 աշակերտ[3900]:

3900. Տվյալները մեզ է տրամադրել 8-ամյա դպրոցի տնօրենը 1985 թ.:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** 1844 թ. գյուղում հիշվում է մի քարաշեն եկեղեցի[3901]: Տասնամյակների ընթացքում այդ եկեղեցին, հավանաբար, քայքայվել է և 1870-ական թվականների սկզբին բնակչությունը ձեռնամուխ է եղել նոր և իր չափերով առավել ընդարձակ եկեղեցի կառուցելու գործին: Շինարարությունն իրականացվել է 1871-72 թթ. ընթացքում հասարակության միջոցներով: Աշխատանքներն ավարտվել են 1872 թ. «Գիւղն ունի մի հոյակապ եկեղեցի կառուցած 1872 թ...»[3902]: Այդ է վկայում նաև եկեղեցու շինարարական վիմագիրը:

Արձանագրության, եկեղեցու մուտքից վեր՝ 6 տող.

*Շինեցաւ ս(ուր)բ եկե/ղեցիս ծախիւք եւ / արդեամբք Չարդախլու / գեղջ բարեպաշտ ժողո/վրդոց եւ ք(ա)հ(ա)ն(ա)յից, / ի 1872 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Նորակառույց եկեղեցին անվանվել է Սբ. Աստվածածին[3903]:

Տարիներ անց մամուլն արձագանքել է. «...ունին երկու ծխատէր քահանայ, մի հոյակապ քարաշէն եկեղեցի 1871 թուին շինած, որի վրայ ծախսել են, ինչպէս հաշուից երևում է, 4.500 րուբլուց աւելի...»[3904]:

Հավանաբար նկատի ունենալով գյուղի բազմամարդությունը՝ 1890 թ. Մկրտիչ Շահգեղանյանցը, ի հիշատակ իր հոր, նախատեսել էր հայրենի գյուղում կառուցել երկրորդ եկեղեցին, սակայն այդ ծրագիրը կյանքի չի կոչվել[3905]:

Ի դարի սկզբին Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում էր քայքայված վիճակում և կարոտ էր նորոգության: Գյուղի հասարակությունը 1903 թ. հուլիսի 20-ի համախոսական վճռով դիմել է Գանձակի հոգևոր իշխանություններին՝ նշելով. «...ի նկատի առնելով մեր գիւղական եկեղեցու անշուք և խարխուլ դրութիւնը, նաև մեր նիւթական անապահով և աղքատ վիճակը, որոշեցինք խնդրել Գանձակու հոգևոր Կառավարութեան միջոցով ծայրագոյն Հոգևոր Կառավարութիւնից պատշաճաւոր թոյլտուութիւն եկեղեցական գումարից ծախսելու երկու հազար ռուբլի (2000 ր.) եկեղեցու տանիքը վերանորոգելու ...և մի նախագաւիթ շինելու համար: Եկեղեցու տանիքի կղմինդրները կոտրտուել են, որով ձիւն և անձրև եղանակներին սաստիկ կաթում է և այժմ եկեղեցուն վտանգ է սպառնում և այժմ կարօտ է շուտափոյթ վերանորոգութեան: Անհրաժեշտ է եկեղեցու ներսը սուաղել և մի նախագաւիթ շինել... Այս բոլորի համար ծախս հաշուած է մօտ 2000 ր., որից միայն տանիքը վերանորոգելու համար ծախս հա-

3901. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 73:
3902. «Նոր-Դար», 1896, N 77, էջ 2:
3903. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 321:
3904. «Նոր-Դար», 1889, N 197, էջ 3:
3905. «Արձագանք», 1890, N 8, էջ 4:



*ՉԱՐԴԱԽԼՈՒ. Սբ. Աստվածածին եկեղեցի. տեսքը՝ հյուսիսից, հարավ-արևելքից, արևելքից, հարավային ճակատից բացված մուտքը և շինարարական արձանագրությունը*

շուած է 1243 թ. 36 կոպ...»[3906]: Սակայն, ինչպես երևում է 1913 թ. կազմված մի վավերագրից, եկեղեցու վերանորոգման աշխատանքները ձգձգվել են, որի հետևանքով կառույցն ավելի էր խարխլվել[3907]: 1914 թ. նշվել է, որ «...եկեղեցու տանիքը անհրաժեշտ կարիք ունի շտապ վերանորոգութեան, առանց որոյ կարող է յանկարծակի փուլ գալով վնասներ առաջացնել...»[3908]: Ի վերջո, նույն թվականին Էջմիածնի Սինոդը բավարարել է չարդախլվեցիների խնդրանքը՝ պատվիրելով «...Գանձակի հոգևոր կառավարութեանը թոյլ տալ Չարդախլու գիւղի ծխականներին նորոգել եկեղեցին, ծախսելով եկեղեցական գումարներից հազար հինգ հարիւր յիսուն րուբլի ...»[3909]:

Խորհրդային իշխանությունները 1928 թ. եկեղեցին փակել են[3910], օգտագործվել է որպես պահեստ: 1988 թ. դրությամբ միանգամայն կանգուն և անվնաս վիճակում էր:

*Ճարտարապետություն.* Սբ. Աստվածածին եկեղեցին ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ շինություն է: Երկթեք ծածկի տակ առնված թաղակապ տանիքը ներքուստ պահում են երեք զույգ սյուների և որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Երեք նավերն արևելքում ավարտվում են՝ կենտրոնականը՝ կիսաշրջան խորանով, եզրա-

3906. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1246:
3907. Նույն տեղում, թ. 31:
3908. Նույն տեղում, գ. 3457, թ. 1-4:
3909. Նույն տեղում: Նաև՝ «Արարատ», 1914, էջ 880:
3910. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:





***ՉԱՐԴԱԽԼՈՒ. խաչքարեր և տապանաքար Սբ. Աստվածածին եկեղեցու բակում տարածված գերեզմանոցում***



***ՉԱՐԴԱԽԼՈՒ. խաչքար՝ «Խաչի սեռ» ուխտատեղիում***

յիններըՙ ուղղանկյուն ավանդատներով: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Լուսավորությունն իրականացված է արևելյան, արևմըտյան ու հարավային ճակատների երեքական և արևմտյան մեկ, դեպի ներս լայնացող նեղ լուսամուտներով: Իր ավանդական տեղում է մկրտարանի ավազանը: Եկեղեցին կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Սյուներն ու որմնասյուները, որմնակամարները, մուտքի բարավորն ու անկյունաքարերը սրբատաշ են: Ծածկը կղմինդրապատ է: Արտաքին չափերն են՝ 23,65 x 12,75 մ:



***ՉԱՐԴԱԽԼՈՒ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը***

**Քահանա.** գյուղի ծխատեր քահանաներից 1894-1908 թթ. հիշվում է *Գևորգ Տեր-Ստեփանոսյան Մանասյանցը*: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Քահանա է ձեռնադրվել է 1894 թ. փետրըվարի 12-ին: 1895 թ. կրոն է դասավանդել գյուղի եկեղեցական-ծխական դպրոցում, իսկ 1899 թ-իցՙ պետական երկդասյա ուսումնարանում[3911]: 1908 թ. Գևորգ Տեր-Ստեփանոսյան Մանասյանցի հետ քահանայագործում էր *Մակար Տեր-Ստեփանոսյանցը*[3912]:

**«Խաչի սեռ» ուխտատեղի.** գյուղից 1,5 կմ հարավ-արևելքՙ Խաչի սեռ լեռան գագաթին (1566,2 մ), գտնվել է մի գերեզմանաքար «Սբ. Գևորգ» կամ «Բարձր խաչ» անվամբՙ կերտված 1629 թ. «...բարձր Խաչ կամ սուրբ Գէորգ անունով մի երկար քար, խաչով և ուրիշ նկարներով քանդակուած

3911. ՀԱԱ, ֆ. Պ461, ց. 1, գ. 12, թ. 72-74:
3912. Նույն տեղում, գ. 817, թ. 7:

ուխտատեղին, որի վրայ բացի թուականից՝ ՌՀԸ, ուրիշ արձանագրութիւն չկայ...»[3913]:

**Անվանի չարդախլվեցիներ.** Չարդախլուն հայտնի է որպես հայ զորավարական փառքի օրրաններից մեկը: Այդտեղ են ծնվել բժշկական ծառայության գեներալ-մայոր, ռուսական կայսրության ավագ խորհրդական Ջահան Խաչատուրի Մարգարյանը, մարշալներ Հովհաննես Բաղրամյանը, Համազասպ Բաբաջանյանը և շատ զորահրամանատարներ:

*Ջահան (Իվան) Մարգարյան* (ծնվ. 1844 թ. մայիսի 5-ին–վախճ. 1934). հայրենի գյուղի ծխական դպրոցում նախնական կրթությունը ստանալուց հետո ուսումը շարունակել է Թիֆլիսի ազնվականական գիմնազիայում, ապա Պետերբուրգի բժշկավիրաբուժական կայսերական ակադեմիայում: Մասնակցելով մարտական բազմաթիվ գործողությունների (հատկապես 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում)՝ նա մարտական սխրանքների համար պարգևատրվել է ամենաբարձր աստիճանի շքանշաններով: Իր ծառայության ընթացքում, սակայն, չի մոռացել իր ծննդավայրը և շատ բան է արել հայրենի գյուղի բարօրության համար: Հայտնի է, օրինակ, որ Նիկոլայ Բ թագավորի կնոջ կյանքը փրկելուց հետո[3914], որպես երախտագիտության նշան, թագավորը կատարում է բժշկի խնդրանքը. «...Չարդախլվեցին հիշում է, թե ինչպես Շամխորի թուրքերը բռնությամբ հափշտակել են գյուղին պատկանող պտղատու հողատարածությունից մոտ հազար հեկտար և խնդրում է թագավորին՝ այդ հողամասերը հետ վերադարձնել գյուղին: Ցարի կարգադրությամբ դրանք վերադարձվում են Չարդախլուին և երկար տարիներ կոչվում էին Ջհան բեկի հողեր»[3915]: Սովի տարիներին Ջահան Մարգարյանն իր միջոցներով օգնել է համագյուղացիներին՝ նրանց բաժանելով հացահատիկ, վնասատուների դեմ պայքարի միջոցներ և նվիրելով գյուղատնտեսական տեխնիկա[3916]:

## ՉԱՓԱՐԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 280-295 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին: 1986 թ. ունեցել է 1193 բնակիչ[3917]:

## ՊԼԱՆՔԵՆԴ (ՔԵՉԻԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 220-300 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ներկայիս գյուղը բաղկացած է եղել իրարից որոշակի հեռավորության վրա գտնվող ձմեռոցներից, որտեղ հանգրվանել են քեչիլի թուրք խաշնարած ցեղերը: ԺԹ դարի վերջերին անցել են նստակեցության: Դարավերջին Քեչիլիի կալվածատերերն էին Շամխորսկի Ռուստամ բեկն ու Հասան բեկը[3918]:

Խորհրդային տարիներին իրարից 3 կմ հեռավորության վրա գտնվող երկու նույնանուն գյուղերը միավորվել են և վերանվանվել Պլանքենդ: Այն միավորված էր Լյազգիլյար գյուղական խորհրդի հետ:

**Բնակչություն.** քեչիլի թափառական խաշնարած հասարակության (հետագայում՝ գյուղի) բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1804[3919] | 45 | 82 | 79 | 161 |
| 1886[3920] | 222 | 569 | 382 | 951 |
| 1914[3921] | | | | 1545 |
| 1982[3922] | | | | 1698 |

**Ղուրուլուխ գյուղատեղի.** գտնվում էր Պլանքենդ գյուղից 6 կմ հյուսիս՝ Կուր գետի աջ ափին:

Խաշնարած թուրքերը նստակեցության են անցել և գյուղ հիմնել ԺԹ դարավերջին: Նրանց թվաքանակը վկայված է հետևյալ չափով.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3923] | 54 | 124 | 101 | 225 |
| 1914[3924] | | | | 308 |

Ապաբնակեցվել է խորհրդային տարիներին:

## ՊՐԱՎԴԱ (ԱԼԱԲԱՇԼԻ)

Գտնվում է շրջկենտրոնից 17 կմ արևելք՝ ծովի մակերևույթից 240-255 մ բարձրության վրա:

Հայտնի է, որ դեռևս 1864 թ. Ալաբաշլի գյուղի խաշնարած թուրք ցեղերը նստակյաց չէին[3925] և «գյուղը»՝ որպես այդպիսին, գոյություն ուներ ձմեռային ամիսներին:

3913. **Գասպարեան Յովհաննէս**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, էջ 3:
3914. «Չարդախլուն Ռաֆայել Մանասյանի հուշերում», էջ 3:
3915. Այդ մասին հայտնի է նաև հետևյալը. «Նիկոլայ II թագավորի կինը՝ Շուրան ծանր հիվանդացել էր, Մոսկվայի բժիշկները ոչ մի հույս չէին տալիս: Տարեց մի զինվորական թագավորին հայտնում է Ջհանբեկ Մարգարյանի մասին: Նրան հրավիրում են պալատ: Մարգարյանը ուղիղ երեք ամիս զբաղվում է հիվանդի բուժմամբ և փրկում նրա կյանքը» («Չարդախլուն Ռաֆայել Մանասյանի հուշերում», էջ 3):
3916. **Նահատակյան Ռ.**, Փառապանծ մարշալների նախապապը, «Հայ աշխարհ», N 5 (23), 1992: Ի դեպ, հայտնի է նաև, որ Ջահան Մարգարյանը Թիֆլիսի մոտ՝ Կոջորում հիմնել է մանկական բուժարան:

3917. «ԱՍՀ», հ. 10, էջ 305:
3918. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 388, թ. 13:
3919. “Акты...”, т. 2, с. 596.
3920. “Свод...”, с. 82-83.
3921. “Кавказский календарь на 1915 г.”, с. 140.
3922. «ԱՍՀ», հ. 7, էջ 553:
3923. “Свод...”, с. 82-83.
3924. “Кавказский календарь на 1915 г.”, с. 148.
3925. **Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, “Кавказ”, 1865, N 48, с. 258.

1886 թ. Ալաբաշլիի թուրք խաշնարած հասարակությունը բաղկացած էր 101 տնից (437 ար., 315 իգ.)[3926]: Նույն թվականին Ալաբաշլիի հետ միավորված էին Կաղիլի և Մյուլքադարլի գյուղերը:

## ՋԱԳԻՐ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1300-1420 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հիմնադրման ժամանակը հայտնի չէ, սակայն տարածքում պահպանված հուշարձանները (բրոնզեդարյան ամրոց և այլն) վկայում են, որ մարդն այստեղ ապրել է վաղնջական ժամանակներից:

**Դավանափոխություն.** անլուր հալածանքների, դպրոց, քահանա չունենալու, հոգևոր կարիքերն անկատար մնալու, նաև հոգևորականների անտարբեր ու անհոգի վերաբերմունքի պատճառով ջագիրցիների շրջանում ի հայտ էր եկել հավատափոխության ձգտում: Հուսահատված նրանք կամավոր դիմում են հղել Վրաստանի էկզարխին՝ վրաց ուղղափառ եկեղեցում վերամկրտվելու ցանկությամբ: Այդ ցավալի փաստի մասին 1913 թ. հուլիսի 22-ին Գանձակի եկեղեցական փոխանորդն իրազեկել էր Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին[3927]:

**Բնակչություն.** հայտնի է, որ ԺԹ դարի սկզբին «...20-25 տան չափ, փոխադրուել են այստեղ Գիլամբար գիւղից...»[3928]:

Ջագիրցի ազգատոհմերի պատմությունն ուսումնասիրելու առումով ուշագրավ է 1839 թ. գյուղի 14 ընտանիքներից բաղկացած 56 շնչի անվանական ցուցակը.

«1. Սարգիս Գրիգորեան, կին սորա՝ Գիւլի, որդեգիրն՝ Արզուման, կինն՝ Սանդուխտ, դուստր՝ Փարի:

2. Անանիայ Սահակեան, եղբայրն՝ Գրիգոր, մայր սոցա՝ Վարդի, հօրեղբօրորդի՝ Ղամբար:

3. Գաբրիէլ Սարգսյան, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Ղևոնդ, դուստր՝ Մարիամ:

4. Առաքել Պետրոսեան, կին սորա՝ Անայի, ուստերք՝ Յարութիւն և Պօղոս:

5. Կիրակոս Սարգսեան, կինն՝ Ջաւահիր, ուստր՝ Ստեփան, դուստր՝ Մանուշակ:

6. Յովակիմ Դանիէլեան. կինն՝ Գօզալ, ուստր՝ Գէորգ:

7. Ղուկաս Խաչատուրեան, կինն՝ Մարիամ, եղբայրն՝ Մնացական, կինն՝ Ղումաշ, մայրն՝ Հիւրզադայ:

8. Մաթէոս Բաղիով, կինն՝ Եղսում, եղբօրորդի՝ Հայրապետ:

9. Ծատուր Օհանեան, կինն՝ Ազիզ, ուստր՝ Օհան, կինն՝ Հռոմ, դուստր՝ Մարիամ:

10. Գրիգոր Կիրակոսեան, կինն՝ Խաթուն, եղբօրորդին՝ Յարութիւն:

11. Յարութիւն Բռազեանց. կինն՝ Շահգիւլ, եղբայրն՝ Պապի, կինն՝ Սաբէտ:

12. Աբրահամ Խաչատուրեան, կինն՝ Աննայ, ուստր՝ Դաւիթ:

13. Աւէտ Ծատուրեան. կինն՝ Վառի, ուստր՝ Յովսէփ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Գէորգ:

14. Վիրապ Մկրտչեան. անհարազատ որդիք՝ Միրզայ և Աննման»[3929]:

Ջագիրի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1845[3930] | | 142 | 122 | 264 |
| 1847[3931] | | 146 | 109 | 255 |
| 1849[3932] | | 152 | 141 | 293 |
| 1852[3933] | | 101 | 90 | 191 |
| 1861[3934] | 28 | | | |
| 1866[3935] | 68 | 284 | 223 | 507 |
| 1872[3936] | | 321 | 274 | 595 |
| 1874[3937] | | | | 477 |
| 1875[3938] | | | | 495 |
| 1876[3939] | | | | 511 |
| 1877[3940] | | 324 | 264 | 588 |
| 1878[3941] | | 322 | 268 | 590 |
| 1880[3942] | | 321 | 274 | 595 |
| 1881[3943] | | 332 | 279 | 611 |
| 1882[3944] | | 336 | 285 | 621 |
| 1883[3945] | | 352 | 303 | 655 |
| 1885[3946] | 73 | 351 | 395 | 746 |
| 1886[3947] | 75 | | | |
| 1887[3948] | | 387 | 402 | 789 |
| 1888[3949] | | 386 | 402 | 788 |
| 1889[3950] | | 326 | 426 | 752 |
| 1890[3951] | | 336 | 431 | 767 |
| 1891[3952] | | 349 | 444 | 793 |
| 1892[3953] | | 362 | 462 | 824 |
| 1893[3954] | | 369 | 477 | 846 |
| 1894[3955] | | 388 | 495 | 883 |

3926. “Свод...”, с. 76-77.
3927. ՀԱԱ, ֆ. Պ 57, ց. 2, գ. 2139, թ. 2-3:
3928. «Արձագանք», 1886, N 21, էջ 308: Տես նաև՝ **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 162:
3929. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 28:
3930. Նույն տեղում, գ. 3811, թ. 5-6:
3931. Նույն տեղում, գ. 3814, թ. 97-98:
3932. Նույն տեղում, գ. 3818, թ. 97-98:
3933. Նույն տեղում, գ. 3819, թ.106-107:
3934. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149: Նաև՝ ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 11:
3935. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 57:
3936. Նույն տեղում, գ. 3872, թ. 62-63: Ի դեպ, վիճակագրական մեկ այլ տվյալով՝ ունեցել է 435 բնակիչ (նույն տեղում, գ. 3859, թ. 161-162):
3937. Նույն տեղում, գ. 3864, թ. 41-42:
3938. Նույն տեղում, գ. 3866, թ. 45-46:
3939. Նույն տեղում, գ. 3868, թ. 57-58:
3940. Նույն տեղում, գ. 3869, թ. 54-55:
3941. Նույն տեղում, գ. 3870, թ. 22-23:
3942. Նույն տեղում, գ. 3872, թ. 30-31:
3943. Նույն տեղում, գ. 3873, թ. 27-28:
3944. Նույն տեղում, գ. 3874, թ. 30:
3945. Նույն տեղում, գ. 3875, թ. 56-57:
3946. Նույն տեղում, գ. 3877, թ. 30: Տե՛ս նաև «Արձագանք», 1885, N 4, էջ 51:
3947. “Свод...”, с. 76-77. Նաև՝ «Արձագանք», 1886, N 21, էջ 308:
3948. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 74:
3949. Նույն տեղում, գ. 3882, թ. 131:
3950. Նույն տեղում, գ. 3884, թ. 228-229:
3951. Նույն տեղում, գ. 3887, թ. 150:
3952. Նույն տեղում, գ. 3889, թ. 149:
3953. Նույն տեղում, գ. 3891, թ. 121:
3954. Նույն տեղում, գ. 3895, թ. 78-79:
3955. Նույն տեղում, գ. 3896, թ. 174-175:



*ՋԱԳԻՐ. գյուղի տեսքը*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1897[3956] | | 388 | 544 | 932 |
| 1898[3957] | | 401 | 529 | 930 |
| 1899[3958] | | 408 | 534 | 942 |
| 1900[3959] | | 423 | 452 | 875 |
| 1901[3960] | | 417 | 471 | 888 |
| 1902[3961] | | 425 | 484 | 909 |
| 1905[3962] | | 432 | 487 | 919 |
| 1906[3963] | | 489 | 532 | 1021 |
| 1907[3964] | | | | 1232 |
| 1908[3965] | 160 | 740 | 657 | 1397 |
| 1909[3966] | | 463 | 491 | 954 |
| 1910[3967] | | 765 | 676 | 1441 |
| 1912[3968] | | 468 | 496 | 964 |
| 1914[3969] | | | | 1600 |
| 1917[3970] | 140 | | | 1360 |
| 1977[3971] | | | | 989 |
| 1985[3972] | | | | 786 |

1988 թ. գյուղի 700 բնակիչները հարկադրաբար լքել են գյուղը և բնակություն հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Շիշկայա (Վարդենիսի շրջ.) գյուղում:

3956. Նույն տեղում, գ. 3899, թ. 147-148:
3957. Նույն տեղում, գ. 3897, թ. 169:
3958. Նույն տեղում, գ. 3903, թ. 128-129:
3959. Նույն տեղում, գ. 3905, թ. 93-94:
3960. Նույն տեղում, գ. 3906, թ. 99-100:
3961. Նույն տեղում, գ. 3907, թ. 23-24:
3962. Նույն տեղում, գ. 3912, թ. 266-267:
3963. Նույն տեղում, գ. 3915, թ. 24:
3964. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
3965. ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 11: Տե՛ս նաև՝ “Кавказский календарь”, 1910, с. 240.
3966. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 117:
3967. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3917, թ. 59-60:
3968. ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3919, թ. 62-63:
3969. “Кавказский календарь на 1915 г.”, с. 118.
3970. **Ավետիսյան Մ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 167:
3971. **Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում, էջ 4:
3972. Ըստ գյուղխորհրդի տվյալների:

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** 1905 թ. նոյեմբերին 27-ին Բաղայի ավերումից և թուրքերի հարձակումներից երկյուղած ջագիրցիները լքում են գյուղը և ապաստանում Բարսում ու Գառնակեր գյուղերում[3973]:

**Դպրոց.** 1985 թ. գյուղում գործում էր 8-ամյա դպրոց՝ 120 աշակերտով:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** ըստ ճարտարապետական-ոճական առանձնահատկությունների՝ ԺԷ-ԺԸ դարերի կառույց է: ԺԹ դարում ենթարկվել է նորոգման (լայնացվել են հարավային ճակատից բացված լուսամուտները): Մեր երկրորդ այցելության ժամանակ՝ 1985 թ., եկեղեցու թաղն ամբողջությամբ փլվել էր:

Արխիվային վավերագրերում եկեղեցին վկայված է 1840-ական թվականներից[3974]: Նախապես կոչվել է Սբ. Գևորգ[3975], ապա վերակառուցումից հետո օծվել որպես Սբ. Աստվածածին (1885-ից ստույգ հայտնի է այս անվամբ)[3976]:

Եկեղեցին 21,5 x 11,6 մ արտաքին չափերով, փայտածածկ բազիլիկ շինություն է: Խորանի երկու կողմերում կան ուղղանկյունաձև հատակագծով թաղակապ մեկական ավանդատներ: Լուսավորությունն իրականացվել է արևելյան, արևմտյան և հարավային ճակատներից բացված, դեպի ներս լայնացող 7 լուսամուտներով (3-ական արևելքից և հարավից, 1-ը՝ արևմուտքից): Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Կառուցվել է անմշակ քարով, կրաշաղախով: Պատերի մեջ ագուցված են շուրջ երեք տասնյակ զեղաքանդակ արձանագիր խաչքարեր, որոնք ներկայացնում ենք ստորև.

3973. **Քաջբերունի**, Բաղա գիւղի աւերումը, էջ 733:
3974. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 97-98, գ. 3819, թ. 106, գ. 3836, թ. 58:
3975. Նույն տեղում, գ. 3835, թ. 148-149:
3976. Նույն տեղում, գ. 3877, թ. 29:









***ՁԱԳԻՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքն արևմուտքից, սեղանի կառուցման արձանագրությունը խորանի մեջ (1655 թ.), խորանից բացված լուսամուտը և խաչքար արևմտյան ճակատում (1452 թ.)***



***ՁԱԳԻՐ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը***

Խաչքար. ագուցված եկեղեցու ներսում՝ հյուսիսարևելյան ավանդատան արևմտյան պատին, ստորին մասում՝ 4 տող.

*Ես Սիմաւոնս կանկնեցի | զխաչս եղբաւրն իմ Ուսէփին,| հաւր իմ Ոհանէսին, մաւր իմ(ո)յ | Նազխաթունին, թվ(ին) ՉԻԴ (1275):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան ճակատում, որպես մուտքի աջակողմյան անկյունաքար, հիմնախաչի ստորին թևի երկու կողմերում՝

*Թվ(ին) ՋԱ (1452):*

Հրատ. «Արձագանք», 1886, N 21, էջ 308: Նաև՝ **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ավանդատան լուսամուտի մեջ.

*... կան(գ)նե[ցի խաչս] թվ(ին) :ՌԹ: (1560):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. ագուցված նախորդին կից, քիվին.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(արէխաւ)ս Խաչիկին: Թ(վ): ՌԿԸ (1619):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. ագուցված եկեղեցու հյուսիսային ավանդատան լուսամուտի մեջ, վերնամասում՝ 2 տող.

*Ս(ուր)բ խաչս Շահնազարին, | թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:



***ՁԱԳԻՐ. խաչքարեր ագուցված Սբ. Աստվածածին եկեղեցու որմերում***

Խաչքար. տեղադրված եկեղեցու խորանի հարավային խորշում, վերնամասում՝ 2 տող.

*[Խա]չս Փարիխանին է, | թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր»,1995, N 38, մարտի 22, էջ 6:

Խաչքար. տեղադրված խորանի հյուսիսային խորշում.

*Թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:









***ՁԱԳԻՐ. կոթող գյուղի գերեզմանոցի հին մասում***

Խաչքար. տեղադրված եկեղեցու հյուսիսային ավանդատան խորշում.

*...ղիսի հ(ո)գ(ո)յն, | թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. տեղադրված եկեղեցու հյուսիսային ավանդատան խորշում.

*...իմին, թվ(ին) ՌՀԵ (1626):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված խորանի լուսամուտին՝ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս պ(ա)ր(ո)ն..., | թվ(ին) ՌՀՁ (1627):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. ագուցված հյուսիսային ավանդատան լուսամուտի մեջ, քիվին՝ անավարտ 2 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս, | թվ(ին) ՌՁԴ (1635):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված խորանի հարավային մասում, քիվին մնացել է մասամբ վնասված հիշատակագրություն.

Ս(ուր)բ խ(ա)չս ...զանին, | թվ(ին) ՌՁԴ (1635):

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. խորանի հյուսիսային մասում, սրբատաշ անկյունաքարին 6 տող.

*Ս(ուր)բ սեղանս յիշ/ատակ է Ղազար | ք(ա)հ(ա)ն(ա)յին, որք պա/տարագէք յիշէ/ցէք յաղօթս, | թվ(ին) ՌՃԴ (1655):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր»,1995, N 38, մարտի 22, էջ 6:

Ծանոթ. փաստում է եկեղեցու գոյությունը 1655 թ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու մկրտության ավազանում, վերնամասում և ելուստի մոտ՝ կիսաեղծ 3 տող.

*[Խաչս] Փարին ... | Ռ-իմին,| թվ(ին): ՌՃԴ (1655):*

Հրատ. առաջին անգամ:



***ՁԱԳԻՐ. կիրառական-ազգագրական իրեր***

Խորանի հարավային խորշում ագուցված խաչքարի երեսին, անձնանունը՝ թերի.

*Ս(ուր)բ խ(ա)չս փ(ր)կ(ո)ւթ(իւն) ...| թ(վի)ս ՌՄԺ (1760):*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. ագուցված հյուսիսային ավանդատան արևելյան պատին, լուսամուտի մոտ (ներքուստ), քիվին՝ կիսաեղծ 1 տող.

*[Ս(ուր)բ խա]չս բա(րէ)խ(աւս) [է] ... Պաղ[ին]:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված խորանի հարավային խորշում, քիվին.

*Խաչս Ասլին ե...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված խորանի հարավային մասում, ունի անավարտ հիշատակագրություն.

*Ս(ուր)բ խաչս:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ավանդատան հյուսիսային խորշում.

*[Սուրբ] խ(ա)չ(ս) բ(արէխաւ)ս Նէրս(էս)ին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու հարավային ավանդատան լուսամուտի մեջ.

*Ս(ուր)բ խաչս Գիւքանին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված նույն տեղում, նախորդին հանդիպակաց.

*Ս(ուր)բ խաչս Խ(ե)չում|ին է:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված հարավային ավանդատան հարավային խորշում, քիվին՝ մասամբ եղծված 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Տ... նին, Մա[ր]եան[ին]:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու ներսում, խորանի արևելյան պատին, լուսամուտի մոտ, քիվին՝ 1 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս Բ(ե)շք(ա)ն(ին), Ս(ա)ռ(ե)կ(ի)ն է:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու խորանից հարավ, ավանդատան արևմտյան պատին.

*[Սուրբ խաչս] բարէխ(աւ)ս է Խաթունին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված խորանի լուսամուտի մեջ.

*[Սուրբ խա]չս Դաս...[ի]ն, Ծ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված եկեղեցու խորանի լուսամուտի մոտ.

*Ս(ուր)բ խաչս Խ(ա)ն(ու)մին եւ Զ(ա)լխ(ա)նին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Խաչքար. ագուցված նախորդին կից.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ար)էխ(աւ)ս Ավանէսի(ն):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դար:

Իշխանությունների կողմից Սբ. Աստվածածին եկեղեցին փակվել է 1928 թ.[3977]:

**Քահանա.** 1832-1861 թթ. հիշվում է *Սիմոն քահանա Տեր-Եղիազարյանցը,* որը հովվում էր նաև Գառնակեր գյուղին[3978]:

1908 թ. գյուղին հովվում էր *Հովհաննես քահանա Տեր-Եղիազարյանցը*[3979]:

**Գերեզմանոց.** հին և նոր գերեզմանոցներն իրար են ձուլված. տարածվում են գյուղի հյուսիսային եզրին: Հին թաղումների հատվածում պահպանվել է 1593 թ. կերտված արձանագիր մի կոթող (220 x 48 x 35 սմ), որի արևմտահայաց երեսին պատկերված են փորածո պարզ խաչեր, իսկ արևելահայաց և հյուսիսահայաց նիստերին փորագրված է.

Արևելահայաց նիստին.

*Ես պ(ա)րոնն Ղոր/խմազս, Բշի/պաքս կ(ա)նկ(նե)ց/ի... խ(ա)չս հա(ւ)րն եւ մո/րն մ(ե)րոյ:*

Հյուսիսահայաց նիստին.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ/(ա)րէխաւս / Միրզայ աղին, / թվ(ին) ՌԽԲ (1593):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Աղբյուր. գյուղամիջում գործում է 1900 թ. կառուցված աղբյուրը: Ունի հետևյալ վիմագիրը.

Աղբյուր.

*Հիշատակ: (Կ)արա/բէղ եւ որդի Գրի/գոր Բաղիենանց, / 1900 ամի:*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Ջագիր գյուղի տարածքում պահպանվել են մի քանի ուխտատեղիներ:

## ՍԱԲԻՐՔԵՆԴ

Գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հյուսիս-արևմուտք՝ Աղստաֆա-Գանձակ երկաթգծի աջ եզրին՝ ծովի մակերևույթից 335-360 մ բարձրության վրա:

Զուտ թրքաբնակ գյուղը գոյացել է խորհրդային տարիներին: 1983 թ. ունեցել է 2992 բնակիչ[3980]:

## ՍԱԼԵՐ

Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1450-1480 մ բարձրության վրա:

1918 թ. հիմնադրել են Բարսումից փոխադրված հայերը (50 ընտանիք):

1983 թ. ունեցել է 94 բնակիչ[3981], իսկ 1980-ական թվականների վերջին ունեցել է 70 տուն հայ բնակչություն և ութամյա դպրոց՝ սակավաթիվ աշակերտներով: Բնակիչները բռնագաղթվել են 1988-1989 թթ.:

## ՍԱՄԵԴ-ՎՈՒՐԳՈՒՆ (ԹԱՔՆԱԼԻ)

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևելք՝ Շամքոր գետի աջ կողմում՝ ծովի մակերևույթից 150-170 մ բարձրության վրա:

Ներկայիս գյուղը հիմնել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը:

**Թարս-Դալլար գյուղատեղի.** գտնվում է Կուր գետի աջ ափին՝ Սամեդ-Վուրղուն գյուղից 2 կմ հյուսիս-արևելք:

Գյուղը գոյացրել են ԺԹ դարավերջին նստակեցության անցած խաշնարած թուրք ցեղերը: Բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1886[3982] | 65 | 140 | 98 | 238 |
| 1914[3983] | | | | 287 |

Ապարնակեցվել է խորհրդային տարիներին:

## ՍՊԻՏԱԿՇԵՆ (ՑԻՐԱԼՈՎԿԱ)

Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1280-1350 մ բարձրության վրա:

1918 թ. գյուղը հիմնադրել են Ջագիրից փոխադրված հայերը:

## ՍՌՍՌՈՒՏ

Բնակավայրի ճշգրիտ տեղադրությունն անհայտ է: Որպես գրչօջախ՝ այն հիշվում է 1656 թ., երբ Ավետիս քահանան տեղում ստեղծել էր մի ձեռագիր «Մաշտոց» և հիշատակարանում նշել. «...ի յերկիրս Շամքոռայ, ի գեօղս որ կոչի Սըռսռուտ...»[3984]:

## ՏԻԿ-ԽՈՒԼՈՒՖ (ԽՈՒԼՈՒՖ)

Գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հյուսիս-արևելք՝ Կուր գետի ձախ ափից 1 կմ հեռավորության վրա՝ ծովի մակերևույթից 175 մ բարձրության վրա:

Թրքաբնակ աննշան գյուղակ է՝ հիմնված Ի դարի սկզբներին:

## ՔԱՄԱՆԴԱՐ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոնից 25 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1200-1320 մ բարձրության վրա:

3977. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2658, թ. 12:
3978. Նույն տեղում, գ. 3833, թ. 134-135, գ. 3835, թ. 148-149:
3979. ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 817, թ. 7:
3980. «ՀՍՀ», հ. 8, էջ 244:
3981. Նույն տեղում, էջ 271:
3982. “Свод...”, с. 78-79.
3983. “Кавказский календарь на 1915 г.”, с. 186.
3984. «ԺԷԳ», էջ 740:





***ՔԱՄԱՆԴԱՐ. խաչքարի բեկոր (ԺԲ դ.) և խաչքար (1672 թ.)***

**Պատմություն.** պահպանված հուշարձանները փաստում են, որ Քամանդարն առնվազն միջնադարում արդեն գոյություն է ունեցել: Պատմական անունը մոռացության է մատնվել:

Ամենայն հավանականությամբ, երկրամասի մյուս գյուղերի նման Քամանդարը ևս հայաթափ է եղել 1770-ական թվականներին: Բնակիչները փոխադրվել ու հաստատվել են Շուլավերում. «Ինչպես երևում է *Քամանդարը*, որի ժողովրդի կտորը ապրում է *Շուլավերում*, մեծ գեղ է եղել, մի քանի շինատեղի ու հանգստարանի միատեղ այժմեան լղարակցիք (այսինքն բաղեցիք) կոչում են *Քամանդար*»[3985]: Ի դեպ, քամանդարցիների նոր հանգրվան Մեծ Շուլավերի (այժմ՝ Շահումյան ավանը Վրաստանի Մառնեուլի շրջանում) գերեզմանոցում պահպանվել է ծնունդով քամանդարցի մի հանգուցյալի տապանաքար.

Տապանաքար. գերեզմանոցում, ուղղանկյունաձև, չափերը՝ 147 x 73 x 25սմ, արձանագիրը՝ 10 տող.

*Այս է տապան Գրիգո|րի, որ է որդի Յարութին, | մայրն սորա Սամահի եւ | եղպայր Ըստեփանի կամ | Յակօբի, սա է կեղճէն |* ***Քամանդարի****, թվ(ի)ն ՌՄԽԷ (1798) | հընթերցօղքդ որ հան|տպի մէկ պէրան Ա(ստուա)ծ ողո|րմի ասի, Ա(ստուա)ծ ձնողա|ց ողորմի:*

Հրատ. առաջին անգամ:

Ի դարի սկզբին Քամանդար գյուղատեղին վերստին շենացրել են ծագումով Չարդախլու գյուղից փոխադրված 30 տուն բաղացիները[3986]:

**Գյուղապատկան հողեր.** 1906/1907 թթ. գյուղ այցելած ականատեսը նշել է, որ Քամանդարն «...ունի իր շուրջը լայնանիստ վարելահողեր-վարդապետի հողեր-այժմ պետական, իսկ երբեմն աւանդաբար Խորանաշատ մենաստանին պատկանող, որ մի կողմից տարածւում է մինչև Կալքար արքունի անտառը, իսկ միւս կողմից միանում է ընդարձակ դաշտի հետ, ուր սփռուած են հինաւուրց հանգստարաններ և մատուռներ և սրանց մէջ կանգնած է սաղարդալից, հաստարմատ դարաւոր կաղնի ծառ՝ իբրև ուխտի և տօնախմբութեան տեղի Բաղայի բնակիչների համար»[3987]:

**Դավանափոխություն.** անլուր հալածանքների, դպրոց, քահանա չունենալու, հոգևոր կարիքերն անկատար մնալու, նաև հոգևորականների անտարբեր ու անհոգի վերաբերմունքի պատճառով քամանդարցիների շրջանում ի հայտ էր եկել հավատափոխության ձգտում: Հուսահատված նրանք կամավոր դիմում էին հղել Վրաստանի էկզարխին՝ վրաց ուղղափառ եկեղեցում վերամկրտվելու ցանկությամբ: Այդ ցավալի փաստի մասին 1913 թ. հուլիսի 22-ին Գանձակի եկեղեցական փոխանորդն իրազեկել էր Ամենայն հայոց Գևորգ Ե կաթո-

3985. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 8:

3986. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2139, թ. 2-3:

3987. **Քաջբերունի**, Բաղա գիւղի աւերումը, էջ 228: Ի դեպ, դեռևս 1890 թ. այդ ուխտատեղիի վերաբերյալ նշվել է. «*Քեշիշ օղլուց* դեպ հարավ գտնվում է *Խաչեալը*: Ձիանոց բերանը դարձրինք այն կողմը և լեռան գոտու վրա նիստ տեղում տեսանք մի մեծ հաստարմատ կաղնի վեհաշուք ճղներով: Բնը բոլորքը յոթ արշինից ավելի է: Սրբազան ծառ լինելով ոչ ոք չի համարձակվում սրանից ճիւղ պոկել: Այդ է պատճառը, որ փոթորկի միջոցով կտրված ահագին գերանաչափ ճիւղերը տակը փթում են: Ուխտատեղի է լղարակեցոց համար: Ծառի շուրջը կան հին հանգստարան, կրակատեղ, զոհված աքաղաղների անթիվ ոտներ, փետուրներ ծառի կոշտ կեղևի ու խոռոչների մեջ խրած: Սրանից քիչ բարձր տեղ դեպ արևմուտ, ասում են, մեծ կաղնու քույրն է թաղված: Իբրև թէ սրանք քույր ու եղբայր են եղել ու նահատակվել են: Այստեղ մատուռի տեղ է: Մեծ կաղնու մոտով իջնում են *Աղաջ ղալա* ժայռագլուխը, ուր թուրք բինա կա ձորին նայող: Աղաջ ղալայի դեմ բարձրանում է *Չոբան-Սղնախ* սարը, որի հիւսիսային փեշում շինած է մատուռ...» (ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 10):

դիկոսին, նշելով, որ քամանդարցիները «...դիմել են Վրաստանի էկզարխին ուղղափառ դավանություն ընդունելու հարցով: Դրա պատճառները մի քանիսն են. հողի բաժանում, եկեղեցու, դպրոցի բացակայություն, սոցիալական ճնշում, մեծաքանակ հարկեր և այլն»[3988]:

**Բնակչություն.** 1986 թ. գյուղն ունեցել է 40 տուն՝ ավելի քան 100 բնակիչ[3989]:

Գյուղի բնակչությունը բռնագաղթի է ենթարկվել 1988-1989 թթ.:

**Գերեզմանոց.** Քամանդարի պատմության ուսումնասիրության առումով մեծ նշանակություն ունեն գյուղի միջնադարյան երեք գերեզմանոցները, որոնցում պահպանված խաչքարերը վկայում են Քամանդարի գոյությունն առնվազն Թ-ԺԱ դարերից:

*Հարավարևելյան գերեզմանոց.* գերեզմանոցներից հնագույնն է: Ընդարձակ, խիտ թաղումներով հնավայրում պահպանվել են ուղղահայաց կանգնեցված անմշակ սալանման անարձանագիր ժայռակտորներ, որոնց արևմտահայաց երեսներին քանդակված են հատոճ ու պարզ խաչեր՝ բնորոշ Թ-ԺԱ դդ.:

*Արևելյան գերեզմանոց.* այս ընդարձակ գերեզմանոցում պահպանվել են Ժ-ԺԷ դդ. գեղաքանդակ խաչքարեր: Դրանցից արձանագիրները ներկայացնում ենք ստորև.

Խաչքար. գերեզմանոցի արևմտյան եզրին, արևմտյան երեսը հարդարված է փոքրածո խաչով, իսկ ստորին մասում՝ 1 տող.

*Թվ(ին) ՆԽԳ (994):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Խաչքար. գերեզմանոցի կենտրոնական հատվածում, քիվին և վերին խաչաթևի մոտ՝ կիսաեղծ 3 տող.

*[Խ]ա(չ)ս քա(ր)է(խ)ա(ւ)ս ...|[կ]ողակցին Փ(ա)րիզ...ի ... Վ...| [թ]վ ՌճԻԱ (1672):*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

Ծանոթ. հրատարակվել է միայն տարեթիվը:

Խաչքար. գերեզմանոցում, վերին բեկորն է, որի վրա պահպանվել է.

*Սուրբ Գրի(գ)որ|էս վասն...*

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, էջ 6:

*Հյուսիսային գերեզմանոց.* երրորդ գերեզմանոցը տարածվում է սարալանջին:

**Գյուղամերձ հուշարձաններ.** գյուղի մերձակայքը հարուստ է բազմադարյան և տարատեսակ հուշարձաններով:

3988. ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2139, թ. 2-3:

3989. Ըստ գյուղխորհրդի տվյալների:

Հարկ է նշել, որ տեղագիր հեղինակներից միակը բանասեր Ս. Քամալյանն է, որը ժամանակին այցելել է Քամանդարի մերձակա հնավայրերը, դրանք նկարագրել և գրի առել բոլոր վիմագրերը, որոնք բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն գյուղի, այլև երկրամասի պատմության ուսումնասիրության առումով: Ուստի, Քամալյանի բոլոր գրառումները, որոնք վերաբերում են գյուղին, ներկայացնում ենք ամբողջությամբ.

1. Բաղա գյուղից Քամանդար տանող ճանապարհին, Շամքորի ձորի «...միւս կողմը գտնվում է *Օջաղ Ղուլի* մակաղատեղը, վերև ձորակի մեջ առու ունի, դրան տիրապետում են լղարակցիք: Օ*ջաղ Ղուլու* և *Կընդիվանի* (սա էլ գեղատեղ է բնակիչները չկան) մեջտեղ, բարձունքի վրա կիսավեր մատուռի շենք կա, որի շուրջը բերում են, պտտեցնում ազատ ընկած տավարը: Սա կոչվում է *Սանթրուկ: Քիչ* վերև ցանցառ ծմակի մեջ կան շիրիմներ, բակատեղեր: Փռված ընկած խաչքար կա երկայնքը 2,5 արշին, լայնքը 2 արշին, քիվը՝ եղծված: Ծմակի վերևում ընկած, թէ կանգուն կան բավական թվով մեծ ու փոքր խաչքարեր, բայց թվական չեն կրում: *Սանթրուկից* սայլի ճամբեն զընում էր *Կընդիվան:* Նշմարվում են փլված տնատեղերը, հանգստարանը հին ձևի վեմ քարերով: Այդտեղ բնակութիւն են գտել մի քանի տուն լղարակցիք, բայց չեն կարում երկրագործական գործիքներ՝ սայլ կամ խուրձ գեղից գեղ տանել: Դէպի ձորը մի դոբի էր ձգվում: *Բոզ աղբրի* աջ կռանն էր, դրա վրա հանգըստարան կա...»[3990]: Այս գերեզմանոցի խաչքարերից մեկին գրված է եղել.

Խաչքար.

Սբ խաչս բարեխօս է Ամիրայի և կողակցին Փարին... թվ Ռճ (1651):

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 8:

2. «*Քամանդարի* գլխավոր գեղատեղը *Կընդիվանն* է, որ ձորակի երկու լանջին էլ բնակչութիւն է ունեցել և շէնի գլխին աղբիւր ունի: ...*Կընդիվան* կոչվող գեղատեղը եկեղեցի կա, նորոգած հիմքից, փայտածածկ է, փոքր դուռ ունի: Խաչքարերը ժողոված են մեկտեղ»[3991]: Վերջիններս ունեցել են արձանագրություններ.

Խաչքար.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է Սարգիս, Դաստան, Ղազարվանի կողակցին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 8:

Խաչքար.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է Թամարին, Ջատայ Բաճին, Շահնազարին, թվ(ին) ՌճԱ (1652):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 8:

3990. ԳԱԹ, **Ս. Քամալյանի ֆ.**, տետր N 1, VI-11, թ. 8:

3991. Նույն տեղում, թ. 8, 9:

Խաչքար.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է Յակոբ(ին), Մաքու(ին), ...սին կողակցին Թեզային, ք(վին) ՌՃԱ (1652):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 8:

3. Կնղիվան գյուղատեղիից «...դեպ արևմտահյուսիս ճամբեն գնում է *Բլրագլուխը*, որի երկարութիւնով թափված կան ծմակում մամռակալած շիրիմներ: Լղարակցոց վկայելով այստեղը կոչվում է *Քեշիշ օղլի* հանգստարան ու կրկին վերաբերում է Քամանդարին: Գտած տապանաքարերը մի առ մի արտագրեցի...»[3992]: Գերեզմանոցը «*Քեշիշ օղլի* անվանելու պատճառը երևի այն է, որ հայր և որդի քահանաներ են թաղված այստեղ»[3993]: Ստորև ներկայացնում ենք տապանաքարերի արձանագրությունները.

Տապանաքար.

*Այս է տապան Աւալին, թվ. ՌՃԳ (1654) ին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 10:

Տապանաքար. «վերև ներքև ճառագայթաձև նկար».

*Այս է տապան Ավալի կողակից Նազլուխանն:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Այս է տապան... իմ ... խին, որ է Թո... Շահպազին, փոխեցաւ թվին ՌՃԺԳ (1664):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Այս է տապան Մարիամին, որ է դուստր Սարգսին, թվ. ՌՃԻ (1671):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար. «նկարած է կորագլուխ մահակ».

*Յիշատակ է այս տապանս Աւալի որդի Պապային, եղբարք էին, որ Ած. փոխեցաւ, ով որ կարդա ողորմի ասի, թվ. ՌՃԿԳ (1714):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 10:

Տապանաքար.

*Այս է տապան ղարամուրատեցի Դուլկարանց լուսահոգի տէր Սարգսին, որ է որդի տէր Ուհանին, ՌՄԺԷ (1768) թվին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Ղարամուրատցի լուսահոգի ...քոս տէր Ղազարի որ ... ՌՄԺԷ (1768):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Այս է տապան կորխցի մելիք Հախնազարի դուստր Խալվին. Հա(յոց) ՌՄԺԷ (1768):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Այս է տապան ղարամուրատցի Կիրակոսին, որ փոխեցաւ ի կեանս վերին, ՌՄԻ (1771) թվին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար.

*Այս է տապան ղարամուրատցի Իսկանդարի որդ... ոխպին, որ փոխեցաւ կեանս վերին, թվ. ՌՄԻ (1771):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար. «Փշուր-փշուր եղած...».

*Թվ. ՌՄԻ (1771):*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար. «փոքր քար».

*Սբ. խաչ տապան Ջհրապին:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

Տապանաքար. «փոքր քար».

*Մեհրաբինըն է:*

Գրակ. ԳԱԹ, **Ս. Քամալյանի** ֆ., տետր N 1, VI-11, թ. 9:

**Խաչքար.** գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևելք, ձորում կառուցված է «Փխակաց աղբյուրը» (Ճահճաղբյուր), որի գլխին կանգնեցված է գեղաքանդակ արձանագիր մի խաչքար:

Խաչքար. հիմնախաչի ստորին թևից ձախ, անավարտ արձանագրություն.

*ՊԲ (1353) թ(ւի)վս ... իրաց / ելարար:*

Հրատ. առաջին անգամ:

## ՔՅՈՆՅՈՒԼՅՈՒ

Գտնվում է շրջկենտրոնից 19 կմ հարավ-արևելք՝ ծովի մակերևույթից 270-290 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՖԻԶՈՒԼԻ

Գտնվում է շրջկենտրոնից 10 կմ արևելք, Շամքոր գետի աջ ափին, ծովի մակերևույթից 330-340 մ բարձրության վրա:

Գոյացել է խորհրդային տարիներին:

## ՕՐՋՈՆԻԿԻՁԵ

Գտնվում է շրջկենտրոնից 15 կմ հարավ՝ ծովի մակերևույթից 1400-1410 մ բարձրության վրա:

1921 թ. հիմնել են Գառնակեր գյուղից փոխադրված հայերը:

1980-ական թվականներին ունեցել է 78 հայ բնակիչ, որոնք բռնագաղթի ենթարկվեցին 1988-1989 թթ.:

3992. Նույն տեղում, թ. 9:

3993. Նույն տեղում, էջ 10:

# ԱՐԾՎԱՇԵՆ

Խորհրդային տարիներին Արծվաշենը վարչականորեն պատկանում էր ՀԽՍՀ Կարմիրի (Կրասնոսելսկ) շրջանին, սակայն տարածքը կղզիացած էր Ադրբեջանի Հանրապետության մեջ իբրև մեկուսատարածք (անկլավ): Սահմանակից է նույն հանրապետության Գետաբեկի և Թռուզի շրջաններին:



**Տեղադրությունը.** գտնվում է նախկին Կարմիր (Կրասնոսելսկ) շրջկենտրոնից 15 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 1460-1510 մ բարձրության վրա:

Նախկինում կոչվել է Բաշգյուղ, Բաշքյանդ, նաև Հին Բաշքյանդ՝ նույն շրջանի Նոր Բաշգյուղից տարբերելու համար: Արծվաշեն է վերանվանվել 1978 թ. հունվարի 25-ին[3994]:

**Հիմնադրումը.** հայտնի է, որ արծվաշենցիների նախնիները ԺԸ դարի վերջին Արցախի Ջրաբերդ գավառից նախ փոխադրվել են ՀՀ Շամշադինի շրանի (այժմ՝ Տավուշի մարզի Շամշադինի ենթաշրջան) Չորաթան գյուղ, ապա ԺԹ դարի կեսերին վերաբնակվել Փառակերտ-Փարագյուղ (Փարաքյանդ) լքված հայկական գյուղատեղիում և հիմնել Արծվաշենը (Բաշգյուղը)[4015]: Վերաբնակեցման տարեթվի վերաբերյալ առկա տեղեկությունները միանշանակ չեն, բայց դա տեղի է ունեցել 1845-1859 թթ. միջակայքում. «Գյուղը հիմնադրվել է 1845-ին»[3995] կամ «Գիւղը հիմնուած է 1852 թուին. գաղթել են Ներքին Չորաթանից...»[3996] կամ «Չորաթանից եկած 39 ընտանիքները... 1854 թուականին հիմնում են Արծուաշէնը...»[3997], նաև՝ «Գյուղը հիմնադրվել է 1859 թ.»[3998]:

Գյուղի հիմնադրումն արծվաշենցիները կապում են հետևյալ պատումի հետ. «...արծուաշէնցիների եւ դաշտաբնակ թուրքերի միջեւ՝ սկսւում է մարտավէճ: Թուրքերը հայերից պահանջում են հեռանալ իրենց հարազատ, իրենց համար արօտավայր հանդիսացող տարածքից: Արծուաշէնցիները պնդում են, որ իրենք իրենց հարազատ հողում են: Այս վէճը վճռւում է ըմբշամարտի եւ ցլամարտի միջոցով: Հայերի ըմբիշը՝ Արզուման Դալլաքեանը և Սահականց Ծաղիկ ցուլը յաղթող են դուրս գալիս, եւ տարածքային վէճը լուծւում է յօգուտ հայերի»[3999]:

ԺԹ դարավերջին գյուղի կալվածատերերը Մելիք-Քալանթարյաններն էին[4000]:

**Կառուցապատում.** Արծվաշենն ուներ մի քանի թաղամաս: Այսպես, գյուղի կենտրոնը, որ զբաղեցնում էր մշակույթի պալատի շրջակայքը, եզրագծվում էր Ներքին կամ Քաչալ թաղով (անվան ծագումը պայմանավորված էր այգիների քիչ լինելու հանգամանքով): Շուշանանց թաղը տարածվում էր միջնակարգ դպրոցի մոտ, Հարամ թաղը՝ դպրոցից վերև, Ցից քարի թաղը՝ գյուղի հյուսիսային մասում: Վերին թաղին կից էր Սրբեկանց թաղը: Երկու թաղամաս էլ՝ մեկը «Փալխ-քյանդ» ծաղրական անվամբ, մյուսը՝ «Չինասթադ» է կամ «Չինաստան», առաջացել են՝ կապված գյուղի զարգացման, ընդարձակման ու բնակելի նոր տների կառուցման հետ:

**Ջրամատակարարում.** 1945 թ. արծվաշենցիները, գյուղը ջրով ապահովելու նպատակով «Վարար աղբյուրի» ջուրը հասցրել են բնակավայր[4001]: Հետագայում, երբ գյուղն ավելի է ընդարձակվել, այս աղբյուրի ջրին ավելացրել են «Գյազունց աղբյուրի» ջուրը: Հայտնի են նաև «Չամչի», «Սեջուր», «Շինատակի», «Ցից քարի», «Ղազան» և «Սարի» աղբյուրները:

1968 թ. գյուղի հողերը (500 հա) ոռոգելու նպատակով կառուցվել է ջրամբար (ի դեպ, ջրամբարի տակ է մնացել դամբարանադաշտը):

**1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներ.** միայն թուրքական գյուղերով շրջափակված Արծվաշենը, բնականաբար, զերծ չի մնում հարձակումներից և դիմում է ինքնապաշտպանության Միքայել Աստվածատրյանի ղեկավարությամբ[4002]: Նրան օգնում են ծխատեր քահանա Վահան Տեր-Ղուկասյանը[4003] և ցարական բանակի սպա Սահակ Ղուկասյանը (Նադիրանց Սահակ՝ «օֆիցեր Սահակ»): Պաշտպանությունն իրականացնելու համար նրանք «Ժողովրդից ոսկի, արծաթեղեն են հավաքում և Թիֆլիսից ու Բաքվից հրազեն են ձեռք բերում, իսկ գյուղի դարբինները հրանոթներ են ձուլում, որոնց արկերը չպայթելու պատճառով թշնամուն չեն վնասում, սակայն զարհուրելի որոտում են՝ խուճապ առաջ բերում հակառակորդի շարքերում:

3994. «Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորյալ բաժանումը» (ըստ 1-ը օգոստոսի 1988 թ.)», Երևան, 1988, էջ 74, 89:

4015. **Պետրոսյան Ա.**, Անտեսուած շրջանի խնդիրները, «Ազատամարտ», 1991 սեպտեմբեր, N 29, էջ 12: Տե՛ս նաև՝ **Հովհաննիսյան Հ.**, Արծվաբույնը լեռներից այն կողմ, «Հայրենիքի ձայն», 12.10.1990, N 41, էջ 3-4:

3995. «ՀՍՀ», հ. 2, էջ 297:

3996. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

3997. **Պետրոսեան Ա.**, Արծուաշէն. անցեալն ու ներկան, «Ազատամարտ», 1992, N 1, էջ 12:

3998. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Երևան, 1986, էջ 453:

3999. **Պետրոսյան Ա.**, նշվ. հոդվ.:

4000. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

4001. **Առաքելյան (Մաղունց) Ա.**, «Փոքր Արցախի» տագնապալի զարունը, «Ավանգարդ», 21.05.1992, էջ 2:

4002. Հասարակական գործիչ, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, Ղազախ-Շամշադինի գավառի Հ.Յ.Դ. լիազոր ներկայացուցիչ Միքայել Աստվածատրյանը (1878-1939) Հայկ կամ Հայկ Այունց ստորագրությամբ բազմաթիվ հոդվածներ է հրատարակել ժամանակի հայ մամուլում («Հորիզոն», «Մշակ», «Խարիսխ», «Վտակ» և այլն): Հայոց լեզու և գրականություն է դասավանդել Ախալցխայում, Ներսիսյան դպրոցում, հայրենի գյուղում, Դիլիջանում, Երևանում, զբաղվել է բանահավաքությամբ և այլն: Դարձել է ստալինյան հետապնդումների զոհ, սպանվել 1937 թ. նոյեմբերի 26-ին (**Այունց Լ.**, Միքայել Աստվածատրյան. Հայրենիքի պաշտպանն ու հայրենասեր գործիչը, Երևան, 2000):

4003. Տեր-Վահանը (1872-1921) ավարտել էր Գևորգյան ճեմարանը և մեծ հեղինակություն էր վայելում ամբողջ գավառում: Դավաճանաբար ձերբակալվել է Նոր-Սարատովկա գյուղում՝ Շամխորի շրջկոմի 1-ին քարտուղար Ռուստամ Ալիևի կողմից և գնդակահարվել առանց դատ ու դատաստանի: Այս «քաջագործության» համար նախկին ավազակապետի անվամբ անվանակոչվել է Գետաբեկի շրջանի գյուղերից մեկը և կանգնեցվել է արձան Փառխոսի բերդի մոտ (Ալիևը սպանվել է հայ վրիժառուի գնդակով) («Հայրենիքի ձայն», 10 հոկտեմբերի, 1990 թ. N 41, էջ 4): Տեր-Վահանը թաղվել է գյուղի գերեզմանոցում: Նրա անունով է կոչվում ՀՀ Կարմիրի շրջանի Վահան գյուղը:

Հրանոթի համար օգտագործում են ինքնաեռների և պղնձե այլ իրերի վերածուլվածք»[4004]:

Թուրքերն Արծվաշենի վրա հարձակվել են 13 անգամ: 1906 թ. հունվարի 19-ին (հին տոմարով հունվարի 6-ին) տեղի է ունենում Ղազախի, Գանձակի, Բայազեդի թուրքերի առաջին հարձակումը: Այդ դեպքերի մասին մամուլը նշել է. «Շամշադինի հայ գիւղերէն Բաշքեանդի մէջ ալ տեղի ունեցած են ընդհարումներ, բայց շնորհիւ տեղացիներու խելամիտ կարգադրութեան եւ դաշնակցական քաջ երիտասարդներու հերոսական ինքնապաշտպանութեան, թուրքերը պարտուած են: Առաջին յարձակումը տեղի ունեցած է յունւարի 6-ին 4-5000 թուրքերու կողմէ, որոնք մեծ կորուստներ տալով յետ մղուած են»[4005]:

Սակայն դրությունն օրհասական էր. «Բաշքէնդին եւ Չամբարակին ոչնչացում է սպասում, եթէ հարեւան իշխանութիւնները ամենալայն օգնութիւն չհասցնեն»[4006]: Արծվաշենցիներն օգնության հույսով դիմում են Սևքարեցի Սաքոյին, բայց վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, թե իրենց դրությունը ևս ծանր է, ու «...Եթե Բաշքենդը ինքն իրեն չկարողանա պաշտպանել, նրան մատաղ կտանք մյուս հայկական գյուղերին»[4007]: Արծվաշենին օգնության ձեռք են մեկնում միայն Վերին ճամբարակցիները՝ թուրքական երկրորդ հարձակման նախօրյակին ուղարկելով զինված ջոկատ[4008]:

Կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ արծվաշենցիները կարողանում են ոչ միայն հայրենի գյուղը զերծ պահել հայ-թուրքական ընդհարումների արհավիրքից, այլև օգնության են հասնում Շամշադինի հայկական մի շարք բնակավայրերի, նաև հարձակվում թուրքական գյուղերի վրա, դրանով իսկ զսպում ու հանդարտեցնում շրջակայքի թուրքերին:

**Արծվաշենը 1918-1920 թթ.** հայտնի է, որ 1920 թ. Կարմիր բանակի զորամասերին չի հաջողվել գրավել Արծվաշենը, և միայն բանակցություններից հետո են գյուղում հաստատվել խորհրդային կարգեր: Ընդ որում, Արծվաշենը հյուսիսարցախյան բնակավայրերից միակն էր, որ մտել է նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կազմի մեջ:

**Արծվաշենը 1920-1930-ական թվականներին.** Արծվաշենը Խորհրդային Հայաստանի հետ տարածքային ամբողջականություն է կազմել մինչև 1930-ական թվականները: 1927 թ. Հայկենտվիճվարչության հրատարակած հանրապետության քարտեզում (խմբ.՝ Զ. Կորկոտյան, գծ.՝ Ա. Մինասյան) այն թերակղզու նման միացած է եղել Դիլիջանի գավառին[4009]:

Գյուղը նույն կարգավիճակն է ունեցել նաև Անդրկովկասյան երեք հանրապետությունների սահմանային փոփոխություններին վերաբերող 1929 թ. փետրվարի 18-ի որոշմամբ. իբր, սահմանային վեճեր լուծելու և տարածքային ճշգրտումներ կատարելու նպատակով որոշվել է Կարմիրի շրջանի և Արծվաշենի միջև ընկած «Շինիխ-Այրում» հողերը՝ 11.659 դեսյատին տարածքով, հանձնել Ադրբեջանի Ղազախի գավառին: Բայց քանի որ դրանով Արծվաշենը կտրվում էր Հայաստանից, ապա նույն որոշմամբ հաստատագրվել է, որ «...հայկական Բաշքենդ գյուղը նրան հատկացված հողերի հետ միասին հանդիսանում է Հայկական ԽՍՀ-ի բաղկացուցիչ մասը և վերոհիշյալ սահմանափոխումների հետևանքով կանցնի Ադրբ. ԽՍՀ Ղազախի գավառի տարածք, վերջինիս անցնող Շինիխ-Այրումի շրջանի հարավային մասից Բաշքենդ գյուղին հատկացնել հողի շերտը (ամառային արոտավայրեր), որը տարածքորեն կկապեր այդ գյուղը Հայկական ԽՍՀ Դիլիջանի գավառին»[4010]:

1934 թ. քարտեզում գյուղը դեռևս միացված է Հայաստանին, բայց արդեն «Խորհրդային մեծ հանրագիտարանի» առաջին հատորում (Մոսկվա, 1949 թ.) հանդես է գալիս կղզիացած: Այսինքն, որոշումն ուժի մեջ է եղել կարճ ժամանակ (եթե նույ-

4004. **Պետրոսյան Ռ.**, Արծվաշեն, «Երեկոյան Երևան», 13.11.1989:

4005. «Հայրենիք», 10.05.1906: Նաև՝ «Յառաջ», 24.01.1906: Այդ դեպքերի մասին չափազանց արժեքավոր են Մ. Աստվածատրյանի հուշերը. «1906 թ. հունվարի 19-ին հեռվից երեւաց թուրքերի ղոշունը (խառնամբոխը): Նրանք գալիս էին սայլերով, զինված ձիավորներով, առջեւում էր Սեիդ-մոլլան...: Ամբոխը մոտենում էր միանգամայն հանգիստ, համոզված, որ դիմադրություն չի լինի: Այդ համոզմունքն առավել ամրապնդվեց, երբ մոտիկից տեսան մեռյալ գյուղն ու մի քանի անտեր անասուններ: Իրենց հրետանային համազարկին պատասխան չստանալով թուրքերն ընդհուպ մոտեցան գյուղին...: Բաշքենդի մարտիկներն անհամբեր սպասում են Հայկի ազդանշանին: Նա հրամայել էր խնայել փամփուշտները, թույլ տալ, որ թշնամին մոտենա դիրքերին մինչեւ 50-60 քայլ...: ...Դիրքերում դրությունը հասնում է ծայրահեղ լարվածության: ...Առաջին իսկ համազարկը շփոթեցնում է թուրքերին: ...Շշմած թուրքերը ետ են քաշվում տալով մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ: Իսկ երբ որոտում է թնդանոթը, նրա արտառոց որոտից սարսափահար փախչում են՝ խուճապի մատնվելով: Հետո, ուշքի գալով, նորից են անցնում հարձակման: Մարտերը տևում են երկու օր: Պարտված թուրքերը սպանվածներին բարձում են սայլերին ու հեռացնում անառիկ Բաշքենդից: Սա առաջին հարձակումն էր Բաշքենդի վրա» (**Այունց Լ.**, նշվ. աշխ., էջ 34):

4006. «Յառաջ», 22.01.1906:

4007. **Այունց Լ.**, նշվ. աշխ., էջ 37:

4008. Վերին և Ներքին Ճամբարակ գյուղերը, Արծվաշենի նման առանձնացված լինելով, ենթարկվել են թուրք խառնամբոխի բազմակի հարձակումներին: Այունց-Աստվածատրյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև այս բնակավայրերում հակահարվածի ու ինքնապաշտպանության կազմակերպմանը: Հունվարի վերջին օրերին Արծվաշեն է հասնում նաև Չարդախլուից օգնության եկած ջոկատը, բայց կռիվներն արդեն ավարտվել էին:

4009. **Վարդանյան Ս.**, Առեղծված. ո՛չ, զավթված հողեր, «Խորհրդային Հայաստան», 18.10.1989, էջ 3: «Ազատամարտ», 1991 թ. սեպտեմբեր, N 29, էջ 12: Նաև՝ **Գրիգորյան Ռ.**, Հայաստանի սահմանամերձ տարածքների զավթումը Խորհրդային Ադրբեջանի կողմից 1920-30-ական թվականներին, «Առերեւում», 1996, N 16, էջ 7:

4010. **Վարդանյան Ս.**, Առեղծված. ո՛չ, զավթված հողեր, էջ 3:

նիսկ կյանքի է կոչվել). տարածքային աննկատ ու անաղմուկ զավթումն իրականացվել է 1934-1949 թթ. միջակայքում[4011]:

**Հայրենական մեծ պատերազմ.** 1941-1945 թթ. ռազմաճակատ են մեկնել 39 արծվաշենցիներ, որոնցից 9-ը զոհվել են (3 զոհ է տվել Շուշանյանների ընտանիքը՝ Ալիխան, Ամիրխան, Սողոմոն):

Արծվաշենցի Սարիբեկ Սողոմոնի Չիլինգարյանը (ծնվ. 18.5.1925) 1945 թ. մայիսի 31-ին արժանացել է Սովետական Միության հերոսի կոչման՝ նույն թվականի ապրիլին Բեռլինին մերձակա ամրոցներից մեկը 5 հոգով գրավելու և դրա վրա կարմիր դրոշ բարձրացնելու համար[4012]:

**Արծվաշենը 1992 թ.** այդ թվականից է սկսվում գյուղի նոր հերոսական ինքնապաշտպանությունը: Արծվաշենցիները հասկանում էին, որ «Եթէ մի բան պատահի, մեր վիճակը Արցախից դժուար է լինելու: Յետոյ են ափսոսալու: Հիմիկուայ կռիւը առաջուայ պէս չի լինելու... Բացարձակ անտարբերութիւն է, եթէ ուզենաս, պետական կառույցի մի փշրանք ման գաս եւ յենուես վրան, չես գտնի»[4013]: Գյուղը շրջապատված էր ռազմական արդիական տեխնիկայով զինված օմոնական ջոկատներով: Գյուղ մտնող գլխավոր ճանապարհի վրա կար ռազմական ուղեկալստուգման կետ, որի նպատակն էր արգելել զենքի ու զինամթերքի մուտքը Արծվաշեն: Ճիշտ է, գյուղը պահպանում էին ոստիկանական և երկրապահ ջոկատները, սակայն ուժերն անհավասար էին: Արդյունքում 1992 թ. օգոստոսի 4-ին ինքնապաշտպանական հաղթական մարտերի բազում ավանդույթներ ունեցող փառապանծ Արծվաշենում մարեց հայ կյանքը:

**Բնակչություն.** գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1873[4014] | | | | 1015 |
| 1882[4015] | | 549 | 416 | 965 |
| 1883[4016] | | 573 | 430 | 1003 |
| 1885[4017] | | 592 | 441 | 1033 |
| 1886[4018] | 114 | 791 | 639 | 1430 |
| 1887[4019] | | 675 | 486 | 1161 |
| 1888[4020] | 120 | | | |
| 1890-ական[4021] | 115 | 804 | 639 | 1443 |
| 1897[4022] | | | | 1847 |
| 1908[4023] | | | | 2687 |
| 1909[4024] | | 1679 | 1260 | 2939 |
| 1914[4025] | | | | 3079 |
| 1926[4026] | | | | 2909 |
| 1939[4027] | | | | 4280 |
| 1959[4028] | | | | 4112 |
| 1970[4029] | | | | 3368 |
| 1979[4030] | | | | 2771 |
| 1990[4031] | | | | 2750 |

Աղյուսակից երևում է, որ Արծվաշեն գյուղի բնակչությունը հիմնականում շարունակաբար աճելով հանդերձ, ունեցել է նաև թվաքանակի անկումային որոշ տարիներ: Դրանք կապված են եղել արտագաղթերի (օրինակ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիր ավանի և Վահան գյուղի բնակիչների զգալի մասն արծվաշենցի է), պատերազմական իրավիճակների և նոր գյուղ հիմնելու հետ: 1923 թ. Արծվաշենի բնակիչների մի մասը Միքայել Աստվածատրյանի (Հայկ Այունց) գլխավորությամբ հեռացել է գյուղից և Գետիկի ափին՝ Մրդուզ լեռան հարավարևմտյան լանջին (ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզում), հիմնել Նոր Բաշգյուղը (ներկայիս՝ Գետիկ գյուղը Կարմիրի ենթաշրջանում):

Բնակչության արտահոսքն Արծվաշենից դեպի Հայաստանի տարբեր բնակավայրեր (Երևան, Նոր Հաճն, Քանաքեռավան, Աբովյան, Չարենցավան, Վանաձոր և այլուր), ինչպես նաև դեպի Ռուսաստան, պայմանավորված է եղել գյուղում ստեղծված սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով: Արդյունքում 1990 թ. դրությամբ «առաջվա 850 տնտեսությունից մնացել է 600-ը, 5 հազար բնակչից՝ 2750-ը: 50-60 տուն կիսալքված են...: Գյուղը ծերացել ու նվազում է»[4032]:

**Ազգատոհմեր.** տարեց արծվաշենցիներն ավանդաբար պատմում էին, որ Մաղունց տոհմը, որ բնակվում էր Ներքին կամ Քաչալ թաղում, սերում էր Վանից:

Արծվաշենում հայտնի էին Ղզարանց, Թորոսանց, Թուխանանց, Ստեփանանց, Սարիբեկանց,

4011. Տարածքային վեճերն իրենց արտացոլումն են գտել գյուղի մանրատեղանուններում. Հողաչափի աղբյուր, Սպռոնի կամ Մեծ ու Փոքր Վիճասարեր և այլն: Ամառային արոտավայրերում հետագայում ադրբեջանցիները հիմնում են Մթու-դարա գյուղը:
4012. «ՀՍՀ», h. 9, Երևան, 1983, էջ 24:
4013. «Ազատամարտ», N 1, 1991, էջ 12:
4014. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 1, Երևան, 1986, էջ 453:
4015. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 130:
4016. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 3:
4017. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 8:
4018. "Свод...", с. 144-145.
4019. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 31:
4020. «Նոր Դար», 1888, N 105, էջ 3:
4021. **Բարխուտարեանց Մ.**, էջ 311:
4022. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 1, Երևան, 1986, էջ 453:
4023. "Кавказский календарь на 1910 г.", с. 200.
4024. ՀԱԱ, Պ56, ց. 18, գ. 764, թ. 121:
4025. "Кавказский календарь на 1915 г.", с. 97.
4026. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 1, Երևան, 1986, էջ 453:
4027. Նույն տեղում:
4028. Նույն տեղում:
4029. Նույն տեղում:
4030. Նույն տեղում:
4031. **Հովհաննիսյան Հ.**, Արծվաբույնը լեռներից այն կողմ, «Հայրենիքի ձայն», 10. 10. 1990, էջ 4:
4032. Նույն տեղում:



***ԱՐԾՎԱՇԵՆ. գյուղի տեսքը (1992 թ.)***

Այունց, Խրզանանց, Գյազունց (Կիրակոսյաններ), Ծառրանց, Ղլեչունց, Ղուլունց, Ընկընդարանց, Ըրիցանց (Երիցյաններ), Տերտրանց, Խչովանց, Ղահրմանանց, Թիզունց, Դամրչունց, Բալունց, Բրուտանց, Շուշանանց, Ըվալանց ազգատոհմերը:

**Դպրոց.** կրթական գործի սկզբնավորման փորձերը սկսվել են դեռևս 1907 թ.: 1915-1917 թթ. գյուղում կրոն և ռուսաց լեզու է դասավանդել Եղիշե վարդապետը, իսկ հայերենի ուսուցմամբ՝ Հովսեփ և Սոֆյա ամուսինները: Վերջիններիս մոտ ուսում ստացած Հերիք Դալլաքյանը, Ռաֆայել Սարդարյանը և ուրիշներ հիմնել են իրենց մասնավոր փոքրիկ դպրոցները:

1918/1919 ուստարում գյուղում գործել է արական միդասյա տարրական դպրոց[4033]:

Արծվաշենում պետական դպրոց բացվել է 1921 թ.[4034]: Շենքը կառուցել էր ռուսաստանյան «Զեմստվո» ընկերությունը: 1922 թ. աշնանը դպրոցի տնօրեն է նշանակվել Մ. Աստվածատրյանը: Դպրոցն ուներ իր մանկական թատրոնը, ուր աշակերտները ներկայացրել են Հովհ. Թումանյանի «Գիքորը» և այլ ստեղծագործություններ[4035]: Հետագայում գյուղում բացվել է ևս երկու դպրոց. այս երեք դպրոցներն ունեցել են 1500 աշակերտ: Վերջին տասնամյակներին, սակայն, բնակչության արտահոսքի պատճառով սովորողների քանակը պակասել էր: Արծվաշենի անկման նախօրյակին գյուղում գործում էր ընդամենը մեկ դպրոց:

**Հուշարձաններ.** տարածքը հայտնի է պատմական և մշակութային բազմաթիվ հուշարձաններով, որոնք սկիզբ են առնում հազարամյակների խորքից. բրոնզեդարյան դամբարաններ (ավերվեց արհեստական լճակի կառուցման ժամանակ), միջնադարյան եկեղեցիներ, խաչքարեր, գերեզմանոցներ, սրբատեղիներ և այլն:

**Սբ. Մինաս եկեղեցի.** գտնվում է գյուղամիջում. կառուցվել է 1872 թ.: 1888 թ. ականատեսը գրել է. «...եկեղեցին բաւական բարձր է, տանիքը կրամիտած և համեմատելով միւս գիւղերի եկեղեցիների հետ հիանալի կերպով զարդարուած է զարդերով»[4036]:

Ի դարի 30-ական թվականներին եկեղեցին վերածվել է գյուղատնտեսական պահեստի և այլևս չի գործել: Ավելին, եկեղեցու տանիքը վերանորոգելու պատրվակով հանել են ծածկի կաղնե գերանները և

4033. **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 485:
4034. Այս տեղեկությունները քաղել ենք Աշոտ Պետրոսյանի անտիպ հոդվածից: Այն սիրահոժար մեզ է տրամադրել հեղինակը, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն:
4035. **Այունց Լ.**, նշվ. աշխ., էջ 59-60:
4036. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:





***ԱՐԾՎԱՇԵՆ. Սբ. Մինաս եկեղեցի, 1872 թ.***

դրանք փոխարինել սովորական տախտակներով: Միաժամանակ փոխել են նաև կառույցի ներքին տեսքը[4037] և այն օգտագործել որպես հոգեհացի տուն[4038]:

1991 թ. թվականին նախատեսվել էր իրականացնել եկեղեցու բարեկարգման աշխատանքներ:

4037. **Առաքելյան (Մադունց) Ա.**, «Փոքր Արցախի տազնապալի զարունը, «Ավանգարդ», 12, մայիս, 1992, էջ 2:

4038. «Ազատամարտ», 1991 թ. սեպտեմբեր, թիվ 29, էջ 12: 1991 թ. նոյեմբերին՝ ինքնապաշտպանության օրերին, արծվաշենցիներին հայոց եկեղեցու հետ կապելու նպատակով կազմակերպվեց մկրտության ծես, որ կատարեց Տիրայր քահանա Սահրատյանը: Ավելի քան 60 բնակիչ՝ մեծեր և փոքրեր, մկրտվեցին Սբ. Մինաս եկեղեցում» (**Պետրոսյան Ա.**, Մկրտության ծես Արծվաշենում, «Երկիր», 1991 թ. նոյեմբեր 19, էջ 6):

Սբ. Մինաս եկեղեցին ուղղանկյուն հատակագծով և արևելքից զույգ ավանդատներով կառույց է: Ունեցել է վիմագիր հետևյալ արձանագրությունները.

Սբ. Մինաս եկեղեցի. հարավից բացված մուտքից վեր.

*Անուն սրբոյն Մինասայ շինեցաւ եկեղեցիս արդեամբ ժողովրդոց Բաշքեանդի. 1872 ամի մայիս 5-ին:*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 311: **Պետրոսեան Ա.**, Արծուաշէն. անցեալն ու ներկան, «Ազատամարտ», N 1, 1992, էջ 12:

Սբ. Մինաս եկեղեցի. հարավային ավանդատանը գտնվում էր «մի քառակուսի քար» (ըստ ամենայնի՝ խաչքար) հետևյալ արձանագրությամբ.

*Յանուն Աստուծոյ, ես Դաւիթ կանգնեցի զխաչս այս ի բարեխօսութեանդ տէր իմոյ որդ(ի) Անտիկին, թուին Ջ՞լէ :*

Հրատ. «Նոր -Դար», 1888, N 105, էջ 3:

Ծանոթ. տարեթվի հարյուրավորը հրատարակվել է Ջ (6), որը, անշուշտ, տպագրական վրիպակ է: Դատելով տեղում պահպանված խաչքարերից՝ այն պետք է վերականգնել Ջ (900, այսինքն՝ 1488 թ.) կամ (որ ավելի հավանական է)՝ Ռ (1000, այսինքն՝ 1588 թ.):

Խաչքար. եկեղեցու հարավային պատի տակ, հարդարված է զույգ խորանախաչերով, քիվին՝ մեկ տող.

*[Սուրբ] խաչս բ(ա)ր(էխաւս) Ակոբին ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

**Սբ. Հովհաննես.** «գիւղիս նախկին բնակչաց եկեղեցին»[4039] է՝ կառուցված 1607 թ., վերանորոգվել է 1857 թ.: ԺԹ դարի 80-ական թվականներից անօգտագործելի է[4040]: Չափերով փոքր է՝ կառուցված կոպտատաշ ու անմշակ քարից: Ունի միանավ թաղածածկ հորինվածք:

1991 թ. նախատեսվել էր եկեղեցին վերանորոգել, քանի որ «...ծորակողմյան հիմքերը բացվել են եւ վտանգ կա, որ կառույցը կարող է գլորվել ցած»[4041]:

Եկեղեցու պատերի շարվածքում ագուցվել են ԺԷ դարի գեղաքանդակ խաչքարեր ու տապանաքարեր, որոնց մի մասն արձանագրված է: Վիմագրերը եղծված են, հստակ ընթերցվում են միայն որոշ տարեթվեր:

Խաչքար. ագուցված է եկեղեցու արևմտյան պատին, մուտքից հարավ.

*Թվ: ՌԾԶ: (1607)*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, էջ 311:

Ծանոթ. հրատարակիչն այս տարեթիվը համարում է եկեղեցու շինության թվականը:

4039. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 311:

4040. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

4041. **Պետրոսյան Ա.**, նույն տեղում:

Խաչքար. քիվին կարդացվել է.

*Սուրբ խաչս բարեխօս Մ(ա)հակի կին Եղիսաբէթին:*

Հրատ. «Նոր -Դար», 1888, N 105, էջ 3: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 311:

Խաչքար.

*Ես Թմանս կանգնեցի սուրբ խաչս բարեխօս որդոյ իմոյ Նաւասարդին. թ(ւին) Ռ (1551), որք ընթեռնուք յաղաւթս յիշեցէք:*

Հրատ. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

Խաչքարի բեկոր. ագուցված է եղել մուտքից հյուսիս.

*...Սիմոն, տէր Մխիթար, զանէ հանգուցեալ ի տէր: Թվ(ին): ՌԾԷ: (1609)*

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Ացախ, էջ 311:

Ծանոթ. վիմագրի վերծանությունը կասկած է հարուցում: Առկա լուսանկարում խաչքարի քիվի ձախակողմյան հատվածը կոտրված է, իսկ աջ կողմում պահպանվել են գրեր, որոնք Սիմոն անձնանունը վերծանելու հնարավորություն են ընձեռում: Խորանախաչի վերին թևի մոտ պահպանվել է ելնդագիր տարեթիվը, որ նախկինում չի հրատարակվել: Ստորին խաչաբեկորը չի պահպանվել:

Եկեղեցու մոտ տարածվում է ընդարձակ, բայց կիսավեր գերեզմանոց, որտեղ եղել է Հայոց ՈԽԳ (1194) թվակիր արձանագրություն[4042]:

**Գերեզմանոց.** տարածվում է գյուղի արևելյան եզրին և զբաղեցնում է ընդարձակ մակերես: Առանձնապես ուշագրավ է գերեզմանոցի «Պատած տուն» կոչվող հատվածը, որտեղ գտնվում են 1906 թ. հերոսամարտում ընկած ութ քաջերի (Իսրայել Բալյան, Դավիթ, Ներսես, Սարիբեկ Սարիբեկյաններ, Առաքել Առաքելյան, Վարդևան Դեմիրչյան, Իսայի Դանիելյան, Մուխի Նազարյան) գերեզմանները: Տապանաքարերից հինգի արձանագրությունը ներկայացնում ենք ստորև.

Տապանաքար. 7 տող՝

*Ես եմ ի ներքո տապանիս ուստա Վարդան, / անդրանիկ որդի Հովհաննեսի Սարքիսեան. / աշխատասեր, բարեվաստակ դարբին գովական. / իմ տարեկան պատարաքս խնդրեմ անեք անխափան. / կռուի դաշտումը եղա նահատակ, / թողեցի անունս ազգիս հիշատակ. / ես փոխվեցա առ Ա(ստու)ծ, դուք բարով մնաք: 1906 թ. հունվարի 17:*

Հրատ. **Այունց Լ.**, նշվ. աշխ., էջ 39:

Տապանաքար. 3 տող՝

*Ես Ներսեսն եմ քաջ, որդին Սարիբեգանց Սարիբեգի. / հասակս էր 19 տարի, պատերազմի դաշտի վերա / կռուեցի ազգի համար, զոհվեցի 1906:*

Հրատ. առաջին անգամ:

4042. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 311: «Ազատամարտ», 1992, յունուար, N 1, էջ 12:







***ԱՐԾՎԱՇԵՆ. Սբ. Հովհաննես եկեղեցի, 1607թ.***

Տապանաքար. 6 տող՝

*Մահարձանս հարգեցեք, Մուխայիլն եմ Նազարյան, / տանուտեր ի Բաշքենդի, գյուղի միջի քաջ իշխան. / թշնամի թուրքերը հարձակվեցին մեզ վրա,*





***ԱՐԾՎԱՇԵՆ. խաչքարեր ագուցված Սբ. Յովհաննես եկեղեցու որմերում և կից, 1607 թ.***

*ձեռքս առա հրացան, | մահիս գնդակ ինձ հասավ: Ինձ պես ժիր սուրհանդակ գյուղի մասին | թողեցի լինի ինձ այն հիշատակ: | Յիշեցեք Մուխայիլիս միշտ 1906 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. 5 տող՝

*Ես Սարիբեգն եմ որդի | Սարիբեգանց Սիմոնի մեծ իշխանի | Բաշքենդ գիւղի, ի 1906 թիվ թշնամիքը | հարձակվեցին գյուղի վրա, հայր եւ որդի | կռվանք քաջաբար:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. 5 տող՝

*Աստ հանգչի մարմին Դավթի, որդի | Սարիբեգեանց Սարիբեգի. | մահս մոտեցավ. թշնամին այստեղ. | ամբողջ օր կռուեցի ազգի համար, | զոհուեցի 1906:*

Հրատ. առաջին անգամ:

Արծվաշենի շուրջը պահպանվել են հետևյալ հուշարձանները.

**Փարագյուղ (Փարաքենդ) գյուղատեղի**. գտնվում է գյուղից 1-1,5 կմ արևելք: Պահպանվել են եկեղեցին ու գերեզմանոցը:

**Շմեղ գյուղատեղի.** գտնվում է գյուղից արևմուտք՝ նույնանուն տեղամասում: Պահպանվել են եկեղեցին ու գերեզմանոցը:

**Գյուղատեղի.** գտնվում է գյուղից հյուսիս-արևմուտք, Քիլսալի (Եկեղեցաշեն) թրքաբնակ գյուղը տանող ճանապարհին: Պահպանվել են ավերակ եկեղեցին և գերեզմանոցը:

**«Ցից քար».** գտնվում է գյուղից հյուսիս: Իրենից ներկայացրել է «...ժայռից բխող մի աղբյուրի մոտակայքում ...բազալտի երկու խոշոր բյուրեղներ, որոնց վրա խաչ է փորագրված, մեկի վրա կա նաև արձանագրություն: Դրանք կոտրված վիշապաքարեր են հիշեցնում»[4043]:

**«Խաչի դյուզ».** Կարմիր շրջկենտրոն տանող երկրորդ՝ ոչ բանուկ ճանապարհի վրա՝ գյուղից 1 կմ արևմուտք, «Խաչի դյուզ» հարթավայրում, պահպանվել են հնաոճ և անարվեստ խաչքարեր:

**Խաչքար.** տեղադրված է Նոր-Սարատովկա և Կարմիր տանող ճանապարհների խաչմերուկում: Տեղափոխվել է «Ջուխտակ քար» տեղամասից, երբ վերջինս մնաց արհեստական ջրամբարի տակ: Տեղամասն այսպես էր կոչվում իրար վրա դրված մեծ ու տափակ երկու քարերի առկայության պատճառով (սրանք ևս տեղափոխվել են), որոնցից մեկի վրա կա ձիու սմբակ հիշեցնող փոսորակ: Շրջակայքի մահմեդական բնակչության համար դարձել է ուխտատեղի:

Արծվաշենի շրջակայքի արձանագրություններից մի քանիսը նախկինում հրատարակվել են՝

4043. **Հովհաննիսյան Հ.**, Արծվաբույնը լեռներից այն կողմ, էջ 4:








***ԱՐԾՎԱՇԵՆ. խաչքարեր գյուղամերձ գերեզմանոցներում***

առանց մանրամասնելու կամ հստակեցնելու դրանք կրող քարերի տեղադրությունը: Չրկված լինելով ճշգրտումների հնարավորությունից՝ վերծանությունները ներկայացնում ենք նույնությամբ.

Խաչքար.

*Ես Գորգի երեցս արարի զխաչս սուրբ Նշանիս:*

Հրատ. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

Խաչքար.

*Թ. ՌՀԴ (1225). Վրթանիսի է. աղաչեմ յաղաւթս յիշեցէք:*

Հրատ. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

Խաչքար.

*Ողորմի յիշեցէք՝ Պապին և Նաւասարդին. Թ. ՌՀ (1621) ... Ով որ կարդայ ողորմի ասի՝ Գարանին, հայր Մելիք-բէկին, մայր Խաթունին, եղբարք՝ Հայրապետին և Մելիքսէթ քահանային. Թ. ՌՀԳ (1624):*

Հրատ. «Նոր-Դար», 1888, N 105, էջ 3:

# ՀՅՈՒՍԻՍԱՐՑԱԽՅԱՆ ՀՈՒՇԵՐ

Հյուսիսային Արցախ, տանտիրոջից պարպված ու մոռացված մի հայաշխարհ, բազմաքնույթ ու բազմադարյան մշակույթով ներծծված երկրամաս:Բռնագաղթի ենթարկված յուրաքանչյուր Հյուսիսային Արցախցու սիրտն ամեն օր մաշվում է հարազատ ծննդավայրի, հայրենի գյուղի կարոտից: Նրանցից ամեն մեկը երազում իր շենն ու տունն է տեսնում, մինչդեռ ես, որ Հյուսիսային Արցախ ոտք դրի շուրջ 25 տարի առաջ և 1980-1989 թվականների ընթացքում այդ երկրամասում կտրեցի հարյուրավոր կիլոմետր կածաններ, այցելեցի բազմաթիվ գյուղեր ու հնավայրեր, այսօր կարոտում ու երազում եմ տեսնում Հյուսիսային Արցախի բոլոր գյուղերը:

Կարողությանս համեմատ չափագրել, լուսանկարել, քարտեզագրել էի բոլոր այն հնավայրերը, որոնք ինձ հաջողվել էր տեսնել: Ընդօրինակել էի պատահած բոլոր վիմագրերը, գրի առել բազում վկայություններ, տվյալներ ու պատմություններ: Մեկ խոսքով, դաշտային աշխատանքի ընթացքում հավաքել էի այն բազմազան նյութերը, որոնք լրացնելով ու ամբողջացնելով գրեթե երեսնամյա գրադարանային և արխիվային աշխատանքի ընթացքում քաղած հազարավոր տվյալներով՝ արդյունքում պատրաստվել է ներկա աշխատությունը:

Այժմ, երբ հանձին սույն աշխատության՝ վաղուց փայփայած նպատակս իրականացած եմ տեսնում, կարծում եմ ընթերցողին հետաքրքիր կլինի իմանալ նաև, թե չոր-ցամաք փաստերի այս գիրք-շտեմարանը ստեղծելու ճանապարհին արդյոք Հյուսիսային Արցախից ինչ անմոռաց հուշեր ունեմ: Չէ՞ որ ճամփորդն առհասարակ պատմելիք է ունենում, ու ես էլ շատ ունեմ, բայց ընթերցողիս չձանձրացնելու համար կբավարարվեմ դրանցից միայն մի քանիսը վերհիշելով, որոնք բոլորն էլ այսօր երազ են թվում...

## Մի նոր տարի Շամքորի ձորում

...Անքուն գիշեր էր, բայց դա ոչ այնքան ցրտից, որքան նախորդ օրերի ճնշող պատկերների ազդեցությունից: Մտքումս անընդհատ գետիշենցի ծերունու՝ վշտից քարացած հայացքն էր, որը գլխիկոր նստել էր իր իսկ ձեռքով հրդեհված պապական տան՝ դեռ մխացող ավերակի առջև: Մտաբերում էի այն մի խումբ քարացած հանդիսականների ցասմաքած դեմքերն ու հազիվ, կիսաձայն արտասանած «թուրքին թողնելու չենք» խոսքերը, և ինձ թվում էր, թե 1982-ի դեկտեմբերի 30-ը չէր և ես էլ Դաշկեսանի շրջանի Գետիշեն գյուղում չէի, այլ 1915-ն էր, Արևմտահայաստանը...

Հայկական մեռնող գյուղ, գյուղի վերջին բնակիչները՝ մի խումբ տարեց մամիկներ ու պապիկներ: Ազգի ու հարազատ հողի նկատմամբ պարտքի վերջին հատուցում՝ հայրենի օջախի հրկիզում, որ նույնն է, թե հրաժեշտ հայրենիքին ու պատմության ավարտ, ինքնասպանություն...

Մտքեր, մտածումներ, մեռնող հայոց շեների ու տիրազուրկ վանքերի տեսիլքներ և ժամանակ առ ժամանակ մինչև ոսկոր թափանցող ու սթափեցնող ցուրտ, մինչդեռ պարզկա ու աստղալից գիշերը հաջորդ օրվա համար խոստանում էր բարենպաստ եղանակ: Երկնքում հայտնվող ամենափոքր ամպն իսկ, ինձ անհանգստացնում էր. չէ՞ որ ճամփորդությունս կարող էի շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ լեռնաշխարհը զերծ էր ձնածածկույթից: Չգիտեմ՝ ինչո՞ւ էի այդքան եղանակի մասին մտածում, մի՞թե նրա համար, որ հաջորդ օրն էլի մի ավեր վանք կամ հայոց մեռնող մի գյուղ էլ հասցնեմ տեսնել...

Դեկտեմբերի 31-ը ճամփորդությանս 7-րդ օրն էր՝ արևոտ ու պարզ: Մինչև կեսօր զբաղված էի Ամենափրկիչ վանքի չափագրմամբ ու լուսանկարմամբ, իսկ մտքումս Գետիշենի վերջին բնակիչներն էին ու հայի այրած պապենական տունը:

Ամենափրկիչ վանքը բնակավայրերից առանձնացած ու կտրված տեղում է՝ շրջապատված թավ անտառներով, որոնք դեկտեմբերի վերջին այնպես մերկ ու թափանցիկ էին: Վանքից դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Շամքոր գետի խոր ու ընդարձակ հովիտը, մի աննման տեսարան է բացվում:

Հավաքելով ուսապարկս՝ սկսեցի իջնել վանքի մոտից սկիզբ առնող փոքրիկ կածանով: Հազիվ 150 մետր անց՝ աջ կողմում, աղբյուր նկատվեց: Այն բխում, բայց ավելի ճիշտ կաթկթում էր մի հսկա ժայռի տակից՝ բնության ստեղծած քարե ավազանի մեջ: Լեփ-լեցուն ավազանից ջուրը դուրս էր թափվում և հոսում ձորն ի վար: Այս աղբյուրին ժողովուրդը «Ծծեր» անունն է տալիս և դա այն պատճառով, որ ավազանի վրա կախված ժայռն ավարտվում էր տարբեր ձևի ու չափի քարե գնդիկներով, որոնցից էլ կաթկթում էր ջուրը: Ավազանի մոտ մի քանի պարզ ու անարձանագիր խաչքարեր կային: Դրանք հուշում էին, որ վայրը սրբացված էր, կամ պարզապես «Ծծերը» սուրբ աղբյուր է:

Լրացնելով տափաշիշս ջրով՝ շարունակեցի իջնել: Կածանը, անընդհատ գալարվելով անտառի մեջ, իջնում ու իջնում էր: Վերջապես 4-5 կիլոմետրից այն լայնացավ ու Շամքորին աջ կողմից միացող ձորի մեջ փռված Գլամբար (Գյուլամբյուր) գյուղի վերին ծայրում վերածվեց ճանապարհի:

Մտա գյուղ: Թեք ու քարքարոտ ճանապարհի երկու կողմերում ցանկապատված տնամերձ այգիներ ու տներ էին, բայց կարծես անբնակ: Արդեն գյուղամիջում էի և վերջապես...

Անթաքույց հետաքրքրությամբ ուղիղ աչքերիս մեջ նայելով՝ ճանապարհս կտրեց մի ծերունի: Ով լինելս և որտեղից գալս իմանալով՝ ոչ թե առաջարկեց, այլ հրամայեց մտնել իր տունը: Ծանոթացանք: Ինձ հյուրընկալողը Գրիգոր դային էր: Ընտանիքի անդամներն էին ինքն ու կինը:

Անցածս ճանապարհից մի քանի մանրամասներ պատմեցի, բայց երբ հանկարծ իմացավ, որ ինձ հետ մի շիշ «Ծծերի» ջրից ունեմ, ուղղակի խանդավառվեց: Ծեր կնոջից ոգևորված՝ բաժակ խնդրեց, դողդողացող ձեռքով, բայց առանց մի կաթիլ թափելու լցրեց, երկար ու անթարթ ջրին նայելուց հետո խմեց, կիսաձայն ինչ-որ բառեր կարծես ինքն իր մեջ արտասանելով՝ էլի խմեց: Մնացածն էլ մի այլ խցանավոր շշի մեջ փոխադրելով՝ պահեց, ինչպես ամենաթանկագին ու անմահական մի հեղուկ: Ինձ այնպես թվաց, որ ծերունու հիշողության մեջ խռնվեցին անցած տասնամյակները և այն բազում պահերը, երբ ինքն անձամբ էր աղբյուրից ջուր խմել, բայց, ըստ երևույթին, արդեն տարիներ էին, որ հնարավորություն չուներ սուրբ ու հարազատ աղբյուրին հասնել և հոգու խորքում հավանաբար վաղուց արդեն հրաժեշտ էր տվել իր կենսագրության թանկագին մասնիկը կազմող աղբյուրի ջրին, բայց ահա գտնվել է մեկը, որ «Ծծերի» ջուրն իր տունն է հասցրել...

Այդ պահից սկսած ես կարծես հարազատացա Գրիգոր դայու համար, իսկ տունը, որ ավելի խրճիթի տպավորություն էր թողնում, պահպանում էր նորածին երկու ձագերով շրջապատված հավատարիմ շունը:

–Թոռներիս կնվիրեմ, շատ կուրախանան,– ժպտալով ասաց ծեր կինը, երբ տեսավ, որ դիտում եմ ձագուկներին:

Իրիկնամուտին ճրագի լույսի տակ երեքով նստել էինք խնձորով ու չրով զարդարված սեղանի շուրջ: Միայն այդպես էլ չիմացա, թե ե՞րբ վերջացավ 1982-ը, և երբ սկսվեց 1983-ը: Գրիգոր դայու ժամացույցը վաղուց էր կանգ առել...

Ասացին, որ որդիներ ու թոռներ ունեն, բոլորն էլ՝ Հայաստանում և որ հաջորդ օրն անպայման իրենց մոտ կլինեն:

Հունվարի 1-ին թափառեցի գյուղի շրջակայքում: Միջնադարյան բազմաթռիչք կամրջի մնացորդները տեսա Շամքոր գետի վրա, վաղ միջնադարյան խաչաձև եկեղեցու ավերակները գյուղի հյուսիսային կողմում և այլն: Օրվա վերջում ուղղվեցի դեպի Գրիգոր դայու տունը և ներս չմտած՝ ինչ-որ աշխուժություն նկատեցի: Հասկացա, որ որդիներն են եկել ծերունի ծնողների նոր տարին շնորհավորելու, բայց...

Ո՛չ, տանը երեք թուրք էր հայտնվել, խժռում էին, ինչպես սոված գայլեր: Երբ տան, գուցեև մեկ շաբաթվա հացն ու մյուս մթերքները սպառեցին, դուրս եկան բակ: Նրանցից մեկը ձեռքն առավ շան նորածին ձագերին ու հետը դուրս տարավ: Ծերունի ամուսինները լուռ ու անշարժ կանգնած էին բակում: Թուրքերն անընդմեջ շատախոսելով՝ գոռում-գոչյունով, մերթ ընդ մերթ հռհռալով տեղավորվեցին տան առջև կանգնեցրած իրենց սայլակավոր մոտոցիկլետի մեջ ու հեռացան:

Ծեր ամուսինների դեմքերին այնպիսի ճնշված արտահայտություն կար, որ երկար ժամանակ սիրտ չէի անում խոսք բացել: Հանկարծ Գրիգոր դային, կարծես հայացքիցս հարցս որսալով, ասաց.

–Եթե իրենց ուզածը խաբրով չտանք, գողությամբ կամ թշնամությամբ կառնեն:

Ընքրիքի պահին կինը կարծես իմ առջև որդիներին արդարացնելու համար ասաց.

–Դե ախր ամսի 1-ին ինչպե՞ս կարող էին իրենց տան դռները կողպել ու գալ, չէ՞ որ իրենց տուն էլ մարդիկ, բարեկամներ ու ընկերներ են գնում: Ա՛յ վաղը հաստատ կգան:

Հունվարի 2-ին վաղ առավոտից Շամքորն անցնելով՝ բարձրացա դեպի Ջագիր գյուղը և համարյա մութն ընկել էր, երբ վերադարձա Գրիգոր դայունց տուն:

Ծեր ծնողները լուռ էին: Օրն անց էին կացրել՝ աչքները պահած հայաստանաբնակ որդիների ճամփին: Մխիթարելու խոսք չէի գտնում...

Գիշերվանից ձյուն էր տեղում, որը շարունակվեց նաև 3-ի առավոտյան: Գրիգոր դային ինձ ճանապարհեց մինչև գյուղի ծայրը:

Իրենցից բացի գյուղում մի ընտանիք էլ կար, մեն-մենակ ապրող Արշակ դային, ավելի ծեր ու հիվանդ: Օրվա տարբեր ժամերին նրան միշտ տեսա իր տան պատին թիկն տված, հայացքը հառած արդեն անմշակ ու վայրենացող այգուն...

## Ծանոթություն Շահեն Մեղրյանի հետ

1984 թ. Շահումյան մեկնեցի անսովոր բեռով: Բացի անբաժան ուսապարկիցս, Երևան-Շահումյան ավտոբուսի մեջ մի կերպ խցկեցի իրար լավ կապկպած 1,2 x 1,0 մ չափի 12 հատ հաստ ստվարաթուղթ, որոնցից յուրաքանչյուրը նվիրել էի Շահումյանի շրջանի մեկ բնակավայրի և որոնց վրա բացատրագրերով հանդերձ՝ փակցրել էի տվյալ գյուղի պատմական հուշարձանների լուսանկարները: Մտադրվել էի այդ ցուցանակները նվիրել Շահումյան շրջկենտրոնում գործող պատմաերկրագիտական թանգարանին, որի տնօրեն Մամիկոն Պետրոսյանի հետ ծանոթ էի նախորդ տարվանից ու ոգևորված էի ստանձնած գործի նկատմամբ նրա բարեխիղճ ու հոգատար կեցվածքից:

Արդեն սովորական դարձած երթուղին շատ երկար էր, և տեղ հասա իրիկնադեմին, երբ թանգարանն արդեն ժամեր առաջ փակվել էր: Գործը հաջորդ օրվան թողնելով՝ տեղավորվեցի տեղի հյուրանոցում, որի գործավարն էլ արդեն ճանաչում էր ինձ:

Առավոտվա մի քանի ժամերը Շահումյանի հին գերեզմանոցում անցկացնելուց հետո վերադարձա հյուրանոց, վերցրի նվերս ու գնացի թանգարան: Ենթադրում էի, որ թանգարանի հարգարժան տնօրեն Մամիկոն Պետրոսյանին հաճելի պիտի լիներ պատրաստածս ցուցանակները, քանի որ թանգարանի ունեցածի համեմատ դրանք և՛ ավելի որակով ու մեծադիր էին, և՛ ընդգրկումով ու քանակապես ավելի հարուստ: Մեծ եղավ զարմանքս, երբ լուսանկարները դիտելուց հետո, մարդը կարծես ավելի մտահոգվեց, քան ուրախացավ: Բոլորն աչքի անցկացնելուց հետո ասաց.

–Շատ լավն են, բայց սրանք թանգարանում չենք կարող ցուցադրել:

Ապա քիչ մտորելուց հետո ավելացրեց.

–Այ, եթե Միրզոնը թույլ տա, դժվարություն չենք ունենա:

Եվ էլի մի փոքր դիտելուց հետո վճռաբար ասաց.

–Հավաքի՛ր, հենց հիմա միասին գնանք ընկեր Միրզոնի մոտ ու իրեն ցույց տանք, գուցեև թույլ տա:

Գործի նման անակնկալ ընթացքից մի քիչ շվարած՝ հավաքեցի բոլորն ու ձեռքս առած, միասին ուղղվեցինք դեպի շրջկոմի շենքը: Ընդամենը մի քանի րոպե սպասելուց հետո քարտուղարուհին մեզ ներս հրավիրեց: Շահումյանի շրջանի առաջին քարտուղար Միրզոնի մասին նախկինում էլ լսել էի, բայց անձամբ ծանոթանալու առիթ մինչ այդ չէի ունեցել:

Ընդարձակ սենյակում միայն երկու հոգի նստած էին խորքում տեղադրված գրասեղանի մոտ: Մեր ներս մտնելու պահին Միրզոևը, որ մյուս ընկերոջ համեմատ, թե՛ ավելի տարեց էր ու թե՛ ավելի հաղթանդամ, աշխույժով մեզ ընդառաջ եկավ, ձեռքով բարևեց, ու հենց ոտքի վրա սկսվեց բերածս ցուցանակներին վերաբերող խոսակցությունը: Այդ ընթացքում պատի երկայնքով շարեցի 12 գյուղերի անուններով պատրաստված նկարաշատ ցուցանակները: Նույն պահին իր տեղից վեր կացավ նաև Միրզոևի գրասեղանի առջև նստած անձը, որն առաջին հերթին մոտեցավ Գյուլիստան գյուղի հուշարձանները ներկայացնող ցուցանակին և հետաքրքրությամբ սկսեց դիտել նաև մյուսները: Ապա ոգևորված ու դրվատանքի խոսքերով այնպես միացավ թանգարանում դրանք ցուցադրել-չցուցադրելու հարցի քննությանը, այնպիսի շնչով խրախուսեց ու արժևորեց աշխատանքը, որ ստեղծված մթնոլորտում Միրզոևին մնաց միայն իր բաժին ողջույնի խոսքն ասել:

Թույլտվությունը ստացված էր: Չկարևորվեց նույնիսկ հիմնական «թերությունը»՝ նկարատակերի բացատրականներում ադրբեջաներենի բացակայությունը:


*Խրխափորի ձորում Շահեն Մեղրյանի և շահումյանցիների հետ*

Այնուհետև անծանոթն իր համար մի-երկու հարցումներով պարզեց, որ Խրխափորի ձորակում դեռևս չէի տեսել «Ջինավորի խաչ»-ը, ու ինչպես կարգադրություն, ասաց.

–Վաղն առավոտյան ժամը տասին սպասի՛ր հյուրանոցում, միասին գնալու ենք «Ջինավորի խաչ», հետո էլ մի լավ քեփ կանենք...

Ցուցանակները ձեռքիս, հաճելի տրամադրությամբ Մամիկոն Պետրոսյանի հետ դուրս եկանք շրջկոմի շենքից ու կարծես հաղթանակած՝ կրկին ուղղվեցինք թանգարան:

-Ընկեր Պետրոսյան, ո՞վ էր այդ համարձակ ու հայրենասեր մարդը, որի միջամտությունն այդպես որոշիչ եղավ,– հարցրի ես:

-Շահեն Մեղրյանը...

## Երբեք չեմ մոռանա Ձեզ՝ մայր և որդի պատվական բուզլուխցիներ

Երբևէ կատարած ճամփորդություններիցս ամենից երկարատևը՝ 51 օր տևողությամբ, իրականացավ 1980 թ.: Արշավս սկսեցի Իջևան քաղաքից ու Շամշադինի գյուղերն անցնելով՝ մտա Թովուզի շրջան, այնուհետև Գետաբեկի, Շամխորի, Դաշկեսանի, Խանլարի, Շահումյանի... ու ի վերջո հասա՝ Հադրութի շրջանի հարավային գյուղերը:

Արշավիս 21-րդ օրն էր: Առավոտյան դուրս էի եկել Մարտունաշենից ու Մանաշիդն անցած՝ արդեն մոտենում էի Բուզլուխին, որտեղ եկեղեցին ու կարևոր մյուս հնությունները տեսնելուց հետո պետք է շարժվեի դեպի Վերիշեն:

Մանաշիդից Բուզլուխ տանող ճանապարհին ընդհանուր առմամբ դեպի վեր ձգվելով՝ վերջին մի քանի հարյուր մետրերը սկսում են իջնել և մտնում այն ձորակը, որից ձախ՝ հարավահայաց ձորակողին, փռված է Բուզլուխ գյուղը:

Ճանապարհի այն մասից, որտեղից սկսում ես իջնել, առջևդ բացվում է Բուզլուխի տեսարանը: Հասնելով ահա այդտեղ՝ գյուղից ընդամենը մի 3-4 հարյուր մետր հեռու, ճանապարհեզրի մի քարին նստած տեսա մոտ 10 տարեկան տղայի, որը հսկում էր քիչ հեռու արածող իրենց տնային կենդանիներին: Բարևիս վրա երեխան իսկույն ոտքի կանգնեց ու չսպասելով որևէ պատասխանի՝ շատ քաղաքավարի իրար հետևից հարցրեց.

–Ո՞վ եք, մեր գյո՞ւղ եք գալիս, որտեղի՞ց եք գալիս, հայաստանցի ե՞ք, եկեք գնանք մեր տուն:

Ես դեռ մտածում էի, թե հարցերին պատասխանելը ո՞ր մեկից սկսեմ, տղան շարունակեց.

–Երևում է, երկար ճանապարհ եք կտրել, ինչ կլինի, գնանք մեր տուն, մի փոքր կհանգստանաք, էլի ձեր գործին կգնաք:

Եթե ինձ հրավիրողը չափահաս մեկը լիներ, երևի նույնիսկ չէի էլ փորձի հրաժարվել հրավերից, բայց մտածելով, որ այդ երեխան անկոչ հյուր տուն առաջնորդելու իրավունքը դեռևս չունի, կտրականապես հրաժարվեցի:

–Չէ՛, շնորհակալ եմ,–ասացի,–գյուղում գործս արագ պիտի վերջացնեմ, որ դեռ Վերիշեն ու Ներքիշեն էլ այսօր հասնեմ:

–Լա՛վ, բայց մի տեղ, մի քիչ, մեկ է պիտի հանգստանաք, ինչ կլինի, գնանք մեր տուն:

Մինչ ես հրաժարվում էի, ու երեխան՝ համոզում, հասանք գյուղ:

–Հրես մեր տունը, դե եկեք էլի,–այս ասելով՝ բաց դարպասից ձայնեց, –մա՛մ, հայաստանցի դոնախ ունենք: Մայրը՝ երիտասարդ մի կին, կարծես հյուրընկալ որդու արարքից փառավորված, նույնքան ու ավել ջերմությամբ ընդառաջ գալով ինձ, որ դեռ կանգնել էի դրսում, ներս հրավիրեց:

Տանն ուրիշ ոչ ոք չկար, ու մինչև այցելությանս նպատակի մասին մի քանի հարցումների կպատասխանեի, կինը հասցրեց սեղանին դնել «եղուծու», հաց-պանիր ու գոմեշի մածուն:

Մոտեցանք սեղանին: Մինչ ես վայելում էի ամեն բան չափազանց համեղ թվացող տնական սնունդը, նկատեցի, որ տղան քաղցած չէր, բայց քաղաքավարությամբ ընկերակցեց ինձ:

–Արտալի հա՛ց կերեք,–ասաց իմ դիմաց նստած որդու կողքին կանգնած մայրը՝ մեղմ ու կարծես երախտագիտությամբ շոյելով տղայի գլուխը:

Հազիվ կես ժամ անց, երբ կյանքի դպրոցում ազգասիրության ու մարդկայնության հերթական դասը ստացած՝ շնորհակալությամբ հրաժեշտ տվեցի բուզլուխցի ընտանիքից, նկատեցի, որ տղան վազքով բարձրացավ դեպի մեր հանդիպման տեղը, որտեղ արածում էին իրենց կենդանիները:

Արդյոք ո՞ւր եք հիմա դուք, իմ բնավե՛ր, պատվական ու թանկագին բուզլուխցիներ...

## Պատվական հայը՝ բրաջրեցի Բաղամ պապը

1988 թ. բռնագաղթից հետո արդեն Հայաստանի Հանրապետության տարածքում առիթ եմ ունեցել հանդիպելու Հյուսիսային Արցախի գյուղերից բնավեր եղած շատ մարդկանց: Հայրենի հողի, հարազատ ծննդավայրի կորուստն ու միաժամանակ Հայաստանի պատասխանատուների անհունորեն չեզոք, օտարոտի ու ապազգային կեցվածքն այդ մարդկանց ցավն ու հուսահատությունն իրապես բազմապատկել էր:

Արմատախիլ եղած մարդիկ, որ հազարամյակներ շարունակ երկրամասի բնիկները լինելու թանկագին հանգամանքով պայմանավորված՝ իրենց մեջ կրում էին հայրենի հողից սնված, հողին կառչած ու նրա համար արյուն հեղած հայ մարդու բարձրագույն որակները, այստեղ՝ խորհրդային տնական ռեժիմի ներքո ողբերգականորեն ապազգայնացած Հայաստանի Հանրապետությունում, մնացին անկարեկից ու մեկուսացած:

Մեր կառավարության դեմքին իբրև սև խարան՝ առհավետ դրոշմված կմնա ադրբեջանական բռնատարներով Հայաստանի Հանրապետության սահմանին «բռնաթափված» ու ամսից ավել բաց երկնքի տակ մնացած Ազատ և Կամո գյուղերից տեղահանված հայերի սոսկալի ճակատագիրը, որոնց ստացածը «հայրենի» իշխանություններից ոչնչով չզանազանվեց ադրբեջանականից:

Ահա այսօրինակ ճակատագրին արժանացած մեր ազգակիցներից է Բաղամ Գրիգորյանը, որը բռնագաղթի օրերին 75-ամյա հասակում ստիպված լինելով թողնել հարազատ Բրաջուրն ու վերաբնակվել Տաշիրի շրջանում (միայն ձմռանը՝ Երևանում), ձեռքն առնելով գրիչը՝ սերունդներին ավանդ թողեց հայրենի երկրին ու նրա մարդկանց նվիրված բազմաթիվ հուշագրություններ:

Այս գրքի լույս ընծայումով շնորհավորում եմ ազգի բազմադարյան կենսափորձով իմաստնացած թանկագին մարդու՝ Բաղամ պապի 90-ամյա հոբելյանը (1914-2004):

## Ռուստամ-Ալիևցի հրեշները

1982 թ. մարտի վերջին, երբ առաջին անգամ ընկերոջս հետ այցելեցի Գետաբեկի շրջանի Ռուստամ-Ալիև գյուղը, դեռևս չգիտեի, որ գյուղն այդ անվամբ էր կոչվում ի հիշատակ վրիժառու հայի գնդակից 1921 թ. սպանված հայակեր մի հրեշի, բայց գյուղում անցկացրած հազիվ կես ժամվա ընթացքում լիուլի առիթն ունեցանք զգալու, որ հրեշ էին նաև այդ իսկ գյուղի մերօրյա բնակիչները:

Իջանք մեզ՝ շրջկենտրոնից գյուղ հասցրած փոքրիկ ավտոբուսի վերջնականգառում: Վալտերի հետ (ճարտ. Արմեն Զարյանի կրտսեր որդին է) մտադրվել էինք տեսնել Փառիսոսի բերդը, որը գյուղ հասնելուն պես նկատեցինք մոտակա ոչ շատ բարձր լեռան գագաթին: Օրվա մեծ մասն արդեն անցել էր, և մի երեք ժամից պիտի մթներ: Մտադրություն ունեինք բերդի տարածքում գիշերել, ուստի ցանկություն ունեինք հաց և թեյի համար մի քիչ էլ շաքար գնել:

Կանգառը գյուղի թեյատուն-խանութի առջևում էր, հետևաբար մենք ակամա անմիջապես հայտնվեցինք գյուղի՝ այդ մասում վեր ընկած և ուշիուշով մեզ զննող բազում հայացքների ներքո: Հարմար գտանք գնումները ճիշտ այդ տեղում վերջացնել ու մոտեցանք թուրքերենով ասած՝ «չայխանային»: Բարևելով շենքի մուտքի առջև ցցված փափախածածկ մի քանի խոժոռ դեմքերի ու դրանցից որևէ պատասխան չստանալով՝ ներս մտանք: Իրար մեջ ցածրաձայն ինչ-որ բան փսփսալով, բայց աչքերը մեզ վրա չորս արած՝ անմիջապես մեր ետևից ներս լցվեցին տասից ավելի փափախակիր թուրքեր: Մի երկու այդքան էլ ներսում նստած թեյում էին: Սրանց ևս բարևելով՝ մոտեցանք պատի մեջ պատուհանաձև բացված վաճառատեղ-մատուցարանին, որի ներսում գտնվող գործակատարն արդեն ցցվել էր իր տեղում և կարծես ուսումնասիրում էր մեզ: Մասնավոր բարև էլ գործակատարին ուղղելով՝ թուրքերենով հարցրի.

–Հաց ունե՞ք:

Նույն հարցն անմիջապես նաև ռուսերենով տվեցի, որպեսզի շեշտեմ թուրքերենիս խիստ սահմանափակ իմացությունս ու մինչ մտածում էի, թե էլ ինչ կարելի էր հարցնել, հանկարծ այդ վաճառանոց-պատուհանի փայտե դռնակն այնպիսի ուժգնությամբ ուղիղ դեմքիս առջև փակվեց, որ ամբողջ պատվեցի ծեփ ու փոշիով: Այդ վայրենի վերաբերմունքն ուղեկցվեց նստածների ու կանգնածների քմծիծաղով, արհամարհական ու հեգնական ժպիտներով: Լուռ դուրս եկանք թեյատնից ու հաշտված առաջիկա անհաց կացության հետ՝ բարվոք համարեցի գոնե տափաշիշս լրացնել շենքից հազիվ 15-20 մետր հեռու բխող հորդաբուխ աղբյուրի ջրով: Մինչ մենք հաշված վայրկյաններում կհասնեինք աղբյուրին, շենքի մուտքի առջև հասցրել էին խռնվել ներսի ու դրսի բոլոր փափախավորները: Տափաշշիս փականի բացելն ու ջրի կտրվելը մեկ եղավ: Այլևս ամեն ինչ պարզ էր, և հետագա բարդություններից խուսափելու համար ուսերիս առանք մեր ուսապարկերն ու արդեն բարձրաձայն ու լիաթոք վայրի քրքիջների ներքո բերդի ուղղությամբ շարժվելով՝ դուրս եկանք գյուղից:

Բերդասարի գյուղահայաց լանջը ձյունածածկ էր: Վրանը կանգնեցրինք բերդամիջի գյուղից աննկատ մասում: Վայելեցինք ձնահալ անշաքար թեյն ու լուսաբացին բերդից իջանք եկած ճանապարհով: Երբ վերադարձի համար կանգառում սպասում էինք ավտոբուսին, նորից հայտնվեցին մի խումբ թուրքեր և մեր որտեղացի լինելն իմանալուց հետո ասացին.

–Գիտեք, մեր գյուղի մոտերքում մի քանի եկեղեցիներ կան, բայց դրանք բոլորն էլ հույներն են կառուցել և հունական են:

Այդ ասողն ուղիղ աչքերիս մեջ նայելով՝ շարունակեց.

–Հնում այստեղ հույներ են ապրել, եկեղեցիներն էլ հունական են:

Զգալով, որ թուրքն անվերջ փորձում է ինձ զրույցի մեջ ներքաշել, ու թերևս ինձանից հակառակ տեսակետ լսելով՝ վեճի մեջ ներքաշել, ասացի.

–Գուցեև հունական են, բայց Բաքվի գիտնականներն էլ պնդում են, թե ալբանական են, հիմա ձեզանից որին հավատանք, չգիտեմ...

Ավտոբուսը եկավ, և «հունա-ալբանական» եկեղեցիների մասին իմ ու թուրքի զրույցն ինձ համար ցանկալի պահին ընդհատվեց...

## Տարօրինակ էր, բայց ինձ ոգևորեց մեկը, որ եկեղեցի էր քանդել...

Գառնակերում առաջին անգամ եղել եմ 1980 թ., այն արշավին, որ տևեց 51 օր: Այդ ժամանակից ահա արդեն անցել է գրեթե քառորդ դար, բայց չքնաղ Գառնակերով ներծծված հեքիաթը, որն ապրել եմ իրականության տեղ, երբեք ու ոչ մի օր չի լքել միտքս:

Բազում դարեր վտանգների ժամանակ ոչ միայն Շամքորի ձորահովտի, այլև հեռու-հեռուների հայության համար հուսալի ապաստան ծառայած Գառնակերում 1980 թ. միայն 9 բնակիչ էր մնացել, բոլորն էլ տարեց մարդիկ: Արտաքին աշխարհի հետ միայն կածաններով հարաբերվող գյուղում հնության դրոշմն էր կրում ամեն մի քար ու ծառ, տուն ու պարիսպ, աղբյուր ու եկեղեցի:

Ծովացած մեղրածոր կեռասենիների ու թթենիների պուրակ, մեռնող Գառնակերում փնտրում էի աշխատանքային հերոսի շքանշանակիր Հայկազ Աղաջանյանին: Տնամիջյան նեղ կածաններով մոտենում էի կենդանության նշաններ ցույց տվող հնամենի շենքերին և բնակիչ փնտրում...

Վերջապես հասա գյուղամիջի եկեղեցու արևելյան կողմում՝ Շամքորի ձորահայաց լանջին ծվարած փոքրիկ բակով տունը, որտեղ բնակվում էին ծերունազարդ ամուսինները:

Այդ գիշեր ես հյուրընկալվեցի Աղաջանյանների հարկի տակ: Տանտերը՝ մոտ 80-ամյա Հայկազ Աղաջանյանը, ողջ շրջանում հայտնի էր «գերոյ» (հերոս) մականունով: Իրիկնադեմին նստել էինք բակում զե-

տեղված փայտաշեն ննտարանին և աչքերիս առջև ունենալով ամեն ինչով դրախտին գերազանցող աննկարագրելի տեսարանը՝ հետաքրքրությամբ լսում էի Հայկազ պապի պատմությունները Գառնակերի ու գառնակերցիների մասին:

Երբ խոսք գնաց հարևան Գյուլամբուրի մոտ գտնվող Կարմիր եղցու մասին, որ նույն Դասնավանքն է, Հայկազ պապն ասաց.

–Էդ վանքը կոմսոմոլ ժամանակներս ենք քանդել, հիմա հազիվ տեղն է երևում, ի՞նչ ենք թողել, որ դեռ ուզում ես տեսնել...

Հայկազ պապը, որ երիտասարդ հասակում խավար ուժերի ձեռքին կույր գործիք դարձած՝ քանդել էր մեր նվիրական վանքերից մեկը, որտեղ Մխիթար Գոշը հեղինակել էր հռչակավոր Դատաստանագիրքը, առավոտյան՝ հրաժեշտի պահին, ինձ համար իրապես անակնկալ, ասաց.

–Հրվաքի՛ր, ու թե կըրլական ես, մի կիրք տյուս պեր, որ մեր պատմությունը խոխեքը գիդան:

Հայկազ դայու խոսքերն իբրև պատգամ՝ շուրջ քառորդ դար հավաքեցի... ու այսօր, այս գիրքը հրատարակվել է, որ «խոխեքը գիդան...»:



Գառնակերցի Հայկազ Աղաջանյանը կողակցի հետ

## Մեզ հյուրընկալելու համար ծագած վեճը Ղոթյուլում

Դա պատահեց 1985 թ. Ղոթյուլ գյուղում: Ես երկու ընկերներիս՝ Վահրամի և Վանոյի հետ էի: Օրվա ընթացքում կտրելով Շամբոր գետի խորախոր հովիտը՝ իրիկնադեմին դուրս եկանք սարահարթ ու մտանք հազիվ 25-30 տնից բաղկացած Ղոթյուլ գյուղը: Գյուղն այնքան փոքր էր, որ մեր գյուղ մտնելն ու գյուղամիջում հայտնվելը մեկ եղավ: Միանգամից հայտնվեցինք գյուղամիջում կանգնած մի քանի գյուղացիների ուշադրության կենտրոնում: Մեզ հետ հազիվ մի քանի նախադասություն փոխանակելուց հետո հյուրընկալության միանգամից մի քանի առաջարկներ եղան: Այդ առաջարկները մեկը մյուսից ավելի անկեղծ ու սրտանց էին, մեկը մյուսից ավելի հարազատ ու ջերմ: Մենք ակամա հայտնվեցինք անել դրության մեջ: Ավանդապահ և բացառիկ հյուրընկալ մեր թանկագին գյուղացիներից և ոչ մեկին չէինք ցանկանում մերժել ու մինչդեռ մտորում էինք կայացնելիք որոշման մասին, հանկարծ առավել համառ ղոթյուլցիներից երկուսի մեջ մեզ հյուրընկալելու համար նույնիսկ վեճ բորբոքվեց: Րոպեներ անց մենք հայտնվեցինք հյուրընկալելու համար ծագած պայքարում հաղթանակած հայ գյուղացու անմիջական ու ջերմ հարկի տակ: Առավոտյան՝ հրաժեշտից առաջ, ջրի գնալու պահին լուսանկարեցի մեր հյուրընկալ տանտիրուհուն, ու շնորհակալությամբ ճամփա ընկանք:



Ղոթյուլցի հյուրընկալ կինը

## Սահիկների բացօթյա ցուցադրություն Բանանցում

1986 թ. ընկերոջս՝ բանանցեցի Մարտիրոս Չալումյանի հետ մեկնեցինք Բանանց: Հանգրվանս Չալումյանների պապենական տունն էր: Այդ անգամ հետս վերցրել էի նախորդ ճամփորդությունների ընթացքում Բանանցում ու նրա մերձակայքում լուսանկարած պատմական հուշարձանների գունավոր սահիկներն ու դրանք ցուցադրելու համար նախատեսված սարքը:

Նախապես որոշված օրը՝ մութն ընկնելուն պես նշանակված էր սահիկների ցուցադրության ժամը և հայտարարված ժամին թե՛ ես ու ընկերս ու թե՛ բազմաթիվ բանանցեցիներ հավաքվեցինք գյուղամիջում, որ հայտնի էր «Փողոցք» անվամբ: Որպես էկրան՝ որոշեցինք ծառայեցնել Փողոցքի հարավային եզրին գտնվող խանութի երկհարկ շենքի սպիտակեցված պատը: Սահիկներ ցուցադրող սարքն ամրացրի Փողոցքի գրեթե կենտրոնում կանգնեցրածս եռոտանիի վրա ու կարճ նախաբանից հետո սկսեցի ցուցադրությունը: Բանանցի հրապարակը բռնվել էր մի քանի հարյուր ամեն տարիքի հանդիսատեսներով:

Բանանցեցիները հետաքրքրությամբ լսում էին շրջանի տարբեր գյուղերի պատմական հուշարձաններին վերաբերող յուրաքանչյուր պատկերին ուղեկցող բացատրություններս, բայց բոլորի ոգևորությունը մեծացավ, երբ հերթը հասավ հարազատ Բանանցի տեսարաններին ու պատմական հուշարձաններին:

Այդ օրվա սահիկների ցուցադրությունն իր ընտրված տեղով, ներկաների անմիջական ու ինքնաբուխ բազում բացականչություններով, շատ պատկերների համար իմ տված բացատրություններին հենց տեղում բանանցեցիների տված հետաքրքրական ու արժեքավոր լրացումներով բացառիկ էր տարիների ընթացքում ամենուր ու անհաշիվ կազմակերպած սահիկների ցուցադրություններիս շարքում, որը և միշտ վերհիշում եմ՝ բանանցեցի խանդավառ հանդիսատեսներիցս ինձ փոխանցված ոգևորությամբ:

## Բանանցն ապրեցնելու համար՝ Կոշի բանտ

Հրաշակերտ Բանանցի պատկերն ու միջավայրը նույնիսկ անցորդ մարդու մեջ արքնացնում ու ձևավորում են գեղագիտության և հայրենասիրության զգացումներ, իսկ տեղում ծնվածը՝ բանանցեցին, թերևս իրենից անկախ առանձնահատուկ կերպով է իր մեջ կրում բազում դարերի ընթացքում ձևավորված ու խտացած անսահման ստեղծագործ ու արարող հայ մարդու բարձրագույն որակները, արժանիքներ, որոնցով հպարտանալու իրավունք ունի ողջ հայ ժողովուրդը:

1988 թ., երբ օրհասը բախում է նաև հնամենի Բանանցի դռները, Մարտիրոս Չալումյանը որոշում է կայացնում գյուղի պաշտպանության համար զենք հայթայթել, քանի որ ինքնապաշտպանության կազմակերպման համար գյուղում եղած մի քանի որսորդական հրացանները շատ քիչ էին:

Շուտով Մարտիրոսը ձեռք է բերում նռնակներ, փամփուշտներ և երկու ընկերների հետ, յուրաքանչյուրը մի-մի ուսապարկ զինամթերք շալակելով, փորձում են կտրել Սևանի լեռնաշղթան և թրքաբնակ բազմաթիվ գյուղերի շղթան շրջանցելով՝ հասնել Բանանց:

Սակայն Գետաբեկի շրջանի տարածքով անցնելիս տղաները թուրքերից նկատվում են և բռնվում: Գործը բացվում է: Մարտիրոսին հաջողվում է թուրքերին համոզել, որ իր ընկերները վարձով են բեռնակրություն անում և տեղյակ էլ չեն ուսապարկերի պարունակությանը: Այդպիսով, ընկերներն ազատվում են, իսկ Մարտիրոսին փոխադրում են Գանձակ (Կիրովաբադ): Ադրբեջանական դատարանը Մարտիրոսին դատապարտում է 3 տարի ժամկետով, որը պիտի անցկացներ Գանձակի բանտում: Մոտ մեկ տարի Մարտիրոսը բանտում ենթարկվում է ամենօրյա կտտանքների, և դժվար չէ կռահել, թե այդ ամենն ինչով կվերջանար, եթե բանտի մի ռուս աշխատակցի միջնորդությամբ և Երևանից Իգոր Մուրադյանի ջանքերով չկազմակերպվեր Մարտիրոսի փոխադրությունը Հայաստան (այդ ընթացքում արդեն հայաթափ էին եղել ինչպես Մարտիրոսի ծննդավայր Բանանցը, այնպես էլ Հյուսիսային Արցախի մի քանի տասնյակ հայաբնակ գյուղերը): Հայրենի գյուղից զրկված Մարտիրոսի ընտանիքն (ունի երեք երեխա) ու ընկերները մխիթարվում էին, որ գոնե Մարտիրոսի կյանքին այլև վտանգ չէր սպառնում: Տարօրինակ կերպով Հայաստանի արդարադատության պատասխանատուները, իմանալով հանդերձ, թե ինչ հանցանքի համար են թուրքերը դատապարտել Մարտիրոսին, ոչ միայն նրան ազատ չեն արձակում, այլև փոխադրվելով Կոշի բանտ՝ Մարտիրոսը շարունակում է կրել մնացած 2 տարի պատժաժամկետը: Ավելորդ է նշել, որ նման «հանցանքի» համար որևէ թուրք Բաքվում ոչ թե ազատազրկված կմնար, այլ ազգային հերոսի համբավ ձեռք կբերեր...

Ազատվելուց հետո Մարտիրոսը վիրավորանքը սրտում պատմում էր, որ Կոշի բանտում իր կողքին մարդիկ էին, որոնցից մեկն ազատազրկվել էր խանդի հողի վրա կնոջը սպանելու, մյուսը՝ ազգականին, երրորդները՝ թալանի ու գողության, ուրիշները՝ թմրամոլության համար, մինչդեռ ինքը՝ հարազատ գյուղը պաշտպանելու փորձ անելու համար:

–Ես հոգեպես այնքան ընկճված չեմ եղել Կիրովաբադի բանտում, որքան Կոշում հայ բանդիտների մեջ,–ազատվելուց հետո սրտնեղված հիշում էր Մարտիրոսը:

Այժմ Մարտիրոսն իր ընտանիքով բնակվում է ազատագրված Քարվաճառի շրջանի Նոր Վերիշեն գյուղում՝ իր ձեռքերով կանգնեցրած այն տանը, որի ճակատին գրված է՝ Բանանց:

Առհասարակ նա, ով ցանկանում է իր աչքերին պարգևել խնամքով մշակված հողամասի, մերձակայքից հայտնաբերած խաչքարերն ի մի բերելով թանգարանի վերածված բակի, ամեն բան իր տեղում, կոկիկ տնտեսության անմոռաց ու գեղագիտական հաճույք պատճառող բազմաթիվ այլ պատկերներ, թող այցելի Մարտիրոսի՝ ԲԱՆԱՆՑ տունը:



Մարտիրոս Չալումյանը հարազատ Բանանցում

## Մահվանից առաջ շռայլ էր դարձել...

1989 թ. նոյեմբերի սկզբներն էին: Ես, եղբայրս ու երեք ընկերներս, որոնցից մեկը գետաշենցի էր, մյուսը՝ ազատցի, Գետաշենում էինք: Լարված և օրավուր սրվող դրություն էր: Զգում էի, որ յուրաքանչյուր անցնող օրվա հետ հողը կարծես անէանում էր մեր ոտքերի տակ:

Հերթական ամբողջ օրը գերեզմանոցի տապանագրերը գրի առնելուց ու քարերը լուսանկարելուց հետո՝ իրիկնադեմին, վերադարձանք մեր օթևանը՝ «Ծատուրանց» ավամբ հայտնի միմյանց կից չորս եղբայրների երկհարկ տները: Դրանցից մեկը, որ համեմատաբար ավելի ուշ էր լքվել և դեռ կահ-կարասիքով ամբողջ էր, տանտերը՝ մեր գետաշենցի երևանաբնակ ընկերոջ միայնակ ապրող տատիկը, մեզ էր հատկացրել, իսկ ինքը բնակվում էր դիմացի փոքրիկ տնակում:

Իրիկնադեմին մամիկը մեզ դիմավորեց ոչ թե այդ օրերի համար սովորական՝ մտահոգ, այլ ավելի՝ այլայլված դեմքով.

–Տղե՛րք, թուրքերը բռնել են Աբլահն ու Արմավիրը, այդ գյուղերում էլ հայ չի մնացել, ձեզ մատաղ, էդ տեղերը թող կանեք, մեր շենից դուրս միայն մինչև Ազատ ու Մարտունաշեն, էլ դենը չգնաք:

Ազդված ևս երկու հայ գյուղերի վախճանի մասին գուժող սոսկալի լուրից՝ դրանում մեղքի բաժին ունենալու անբացատրելի ու չափազանց ծանր զգացում ճնշեց ինձ: Մի պահ մտաբերեցի Հին Աբլահ գյուղատեղիի Սբ. Մինաս եկեղեցին, որտեղ եղել էի 1980 և 1986 թվականներին, և մոտը՝ լեռան գագաթին գտնվող Սբ. Հովհաննես մատուռը, որտեղ առաջին անգամ լինելով՝ գոնե այս անգամ բարձրանալու թաքուն հույսն ունեի...

Մի տասը օր առաջ հայաբնակ, այսօր՝ պատմության գիրկն անցած հայոց շեներ, իսկ մենք՝ հայի հազարամյա հիշատակները գոնե թղթի վրա փրկել ջանացող հանդիսականներ:

Աչքերիս առջև օրավուր հալչում էր բախտի քմահաճույքին թողնված արցախահայության հյուսիսային հատվածը, որ նույնն էր, թե փլվում էր Հայաստանի հյուսիսարևելյան պարիսպը:

Նկատում էի, որ առանց այն էլ հյուրասեր գյուղացիք անսովոր շռայլ էին դարձել: Մինչև իսկ վատնող շռայլ: Տեսնված չէր, որ գյուղացին այդքան շատ ընտանի կենդանի մորթեր ու պատահածին բաժաներ: Այդ շռայլությունը սարսափելի ազդանշան էր: Այո՛, մարդիկ կանխազգում էին Գետաշենի մոտալուտ վախճանը ևս, ու ինչպես վերջին պահին հոգին ավանդելուց առաջ մահամերձի միտքն է պայծառանում, այնպես էլ բազում դարեր ապրած Գետաշենը մահվանից առաջ շռայլ էր դարձել...

Մինչև նոյեմբերի 16-ը այդ եղերական շռայլության մեջ արձանագրեցի, լուսանկարեցի ու հաշվառեցի մեռնողի թողած մշակութային ժառանգությունը, իսկ Գետաշենը հազիվ 4 ամիս անց նախ՝ ականատեսը եղավ երեխերի՝ Ազատ և Կամո գյուղերի վախճանին և ապա մեկ տարի ու մեկ ամիս անց իր հոգին էլ ավանդեց անկելանոցում հայտնված ու վաղուց հարազատներից մոռացված անտեր ծերունու մահով...

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


## Արխիվային վավերագրեր

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), **Ս. Քամալյանի** ֆոնդ, տետր N 1, VI-11:
Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 22, ց. 1, գ. 73
ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 11, 13, 140, 145, 146, 207, 214, 224, 261, 262, 285, 296, 301, 323, 364, 372, 402, 427, 433, 482, 495, 505, 559, 605, 682, 685, 702, 705, 718, 736:
ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 44, 160, 240, 457, 500, 596, 720, 813, 817, 1079, 1081, 1104, 1246, 1254, 1268, 1270, 1273, 1274, 1687, 2492, 2634, 2742, 2743, 2860, 2882, 3340, 3342, 3363, 3368, 3400, 3406, 3436, 3444, 3446, 3458, 3460, 3764, 3798, 3800, 3802, 3809, 3811, 3814, 3818, 3819, 3825, 3828, 3830, 3831, 3833, 3834, 3835, 3836, 3841, 3843, 3846, 3848, 3850, 3857, 3862, 3864, 3866, 3868, 3869, 3870, 3872, 3873, 3874, 3875, 3877, 3880, 3882, 3884, 3887, 3889, 3891, 3892, 3893, 3895, 3896, 3897, 3899, 3903, 3905, 3906, 3907, 3912, 3915, 3917, 3919, 5835, 8882:
ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, մասն 2, գ. 3419:
ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 12, գ. 533:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, 350, 436, 1356, 1459, 2596, 3245, 3735, 4254, 4350, 4850, 5085, 5285, 5394, 5901, 6775, 8583, 8960, 9450, 9524, 11674:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, 62:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 613, 649, 811, 927:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 250:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 31, 66, 373, 421, 437, 775, 889, 1058, 1062, 1107, 1174:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 402, 531, 532, 533:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205:
ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 11, 571:
ՀԱԱ, ֆ. Պ56, ց. 18, գ. 31, 138, 160, 245, 405, 421, 435, 542, 764, 918, 1143:
ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 4, 1582, 1849, 2018, 2139:
ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 48, 259, 375:
ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, 388:
ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:
ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 381, 560:
ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 778, 866:
ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2635, 2644, 2658, 2666, 2679, 2683, 2684, 2692, 2700:
ՀԱԱ, ֆ. Պ458, ց. 1, գ. 122, 184:
ՀԱԱ, ֆ. 461, ց. 1, գ. 4, 5, 8, 9, 10, 11, 12, 15, 19, 26, 28, 33, 34, 41, 52, 56:

## Պարբերականներ

«Ազատամարտ», 12. 04. 1991: 01. 1992:
«Արարատ», 1871, 1872, 1879, 1887, 1884, 1886, 1888, 1892, 1896, 1898, 1899, 1900, 1902, 1903, 1904, 1905, 1906, 1907, 1908, 1910, 1911, 1912, 1913, 1916, 1917:
«Արձագանք», 1884, N 9: 1885, N 4: 1886, N 12, 19, 20, 21, 23, 24: 1888, N 6, 7: 1890, N 3, 8, 23, 40, 174: 1893, N 44, 50, 124, 133, 145: 1894, N 4, 58, 104: 1895, N 19, 105: 1897, N 9, 35:
«Արշալույս», 1905, N 9, 17:
«Գարդմանք», 1996, N 1, 2, 3: 1998, N 6 (11):
«Լումայ», 1902, N 4:
«Կովկասի առավոտ», 1907, N 9:
«Կռունկ Հայոց աշխարհին», Տփխիս, 1861:
«Կրթությունը և գիտությունը Արցախում», 2001, N 1-2:
«Հայաստանի Հանրապետություն», 1995, N 199:
«Հայրենիք», 10. 05. 1906:
«Հայրենիքի ձայն», 10 հոկտեմբերի, 1990 թ. N 41:
«Հայք», 1990, N 6:
«Հովիտ», 1913, N 37:
«Հորիզոն», 1912, N 36, 38, 41, 107, 114: 1913, N 21, 71, 79, 177, 266:
«Մանկավարժական թերթ» (ամսագիր), Թիֆլիս, 1878-1879:
«Մարտակոչ», 1923, N 177 (26 սեպտեմբերի): 1926, N 180, 10 օգոստոսի:
«Մեղու Հայաստանի», 1873, N 29: 1874, N 19: 1875, N 11: 1876, N 40, 46: 1878, N 25, 46: 1879, N 37, 46: 1881, N 34, 258: 1880, N 50: 1881, N 44, 120: 1883, N 18, 52, 121: 1884, N 99: 1885, N 74, 94:
«Մշակ», 1878, N 145, 139, 187: 1879, N 35: 1883, N 74, 128: 1886, N 89: 1888, N 75, 90: 1889, N 74: 1890, N 76, 85, 144: 1891, N 18, 60: 1894, N 144: 1899, N 21: 1900, N 26, 77, 92, 132: 1901, N 84, 87, 90: 1902, N 130, 187, 199: 1903, N 55, 117, 124, 135, 161, 162: 1906, N 1, 15, 24, 28, 52, 57, 59, 63, 64, 65, 68, 69, 78, 80: 1910, N 127: 1913, N 72, 123, 126, 145: 1914, N 159, 168: 1915, N 17: 1916, N 216:
«Մուրճ», 1894, N 7-8: 1896, N 3-4, 10-11: 1898, N 2-3, 4: 1899, N 6:
«Յառաջ», 22, 24. 01. 1906:
«Նոր-Դար», 1884, N 4, 121: 1885, N 58, 131, 191: 1886, N 6, 19, 65, 119, 120, 208, 144: 1887, N 46, 53, 113, 127, 138, 192, 210: 1888, N 13, 52, 87, 95, 105, 109, 148, 158, 202: 1889, N 50, 117, 144, 174, 201, 204: 1890, N 13, 116, 119, 122, 123, 125, 148: 1891, N 47, 113, 116, 167: 1892, N 52, 106, 113, 126, 129, 140, 170, 171: 1893, N 35, 39, 47, 49, 108, 133, 193: 1894, N 73, 84: 1895, N 7, 114, 116, 147, 216: 1896, N 77, 118, 120, 139: 1899, N 81, 85, 112: 1900, N 206: 1902, N 49: 1903, N 14, 51, 91:
«Սիոն», 1957, ապրիլ-մայիս:
«Տարազ», 1901, N 19: 1912, N 11:
«Ուրբաթ», 1991, N 18:

## Գրականություն

### Ադրբեջաներեն

«Ադրբեջանական սովետական հանրագիտարան» ( «ԱՍՀ»), հ. 1, Բաքու, 1976, հ. 2, Բաքու, 1978, հ. 3, Բաքու, 1979, հ. 4, Բաքու, 1980, հ. 1, հ. 5, Բաքու, 1981, հ. 6, Բաքու, 1982, հ. 7, Բաքու, 1983, հ. 8, Բաքու, 1985; հ. 9, Բաքու, 1986; հ. 10, Բաքու, 1987:
**Նարիմանով Ի., Իսմայիլով Գ.,** Հնագիտական պեղումներ Խաչբուլաղում 1959 թ. (ադրբեջաներեն), "Известия АН Азербайджанской ССР", серия общественных наук, 1961, N 3.
**Нериманов И.**, Кенчечај рајонунун археоложи абидетери, Бакы, 1958.

### Հայերեն

**Աբրահամ Կրետացի**, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973:
**Աբրահամյան Ա.**, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956:
**Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:

**Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, 1907:

**Ալիշան Ղ.,** Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:

**Ակինեան Հ. Ներսէս վ.**, Մովսես Գ Տաթևացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936:

**Այունց Լ.**, Միքայել Աստվածատրյան. Հայրենիքի պաշտպանն ու հայրենասեր գործիչը, Երևան, 2000:

Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, Փարիզ, 1960:

**Առաքել Դաւրիժեցի**, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990:

**Առաքելյան (Մաղունց) Ա.**, «Փոքր Արցախի» տագնապալի գարունը, «Ավանգարդ», 21. 05. 1992:

**Ասլանյան Ս., Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002:

**Ավագյան Ս. Ա.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978:

**Ավետիսյան Մ. Մ.**, Տեղեկագիր Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի բնակավայրերի ու բնակչության թվակազմի մասին (1917 թ.), Բանբեր Հայաստանի արխիվների, 1991, N 3:

«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», h. Գ, կազմեց Նալբանդյան Հ., Երևան, 1965:

**Բալասանյան Գ.**, Դարերի ճամփորդը, Երևան, 1986:

**Բաղրամյան Ռ.**, Կոզեճի բարբառի ուսումնասիրության շուրջ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, N 6:

**Բաղրամյան Ռ.**, Կոզեճի բարբառը, Երևան, 1961:

**Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893:

**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895:

**Բարսեղյան Լ., Խաչատրյան Ժ.**, Միջնադարյան Հայաստանի երկու ամրոցների մասին, «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1962, N 7:

**Բարօն Օգոստոս ֆոն Հակստհաուզենայ** Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս եւ ի Վիրս, Վաղարշապատ, 1872:

**Գասպար Յ.**, Գիւղական աւանդութիւններ, «Նոր-Դար», 1889, N 50:

**Գասպարեան Յովհ.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, «Նոր Դար», 1889, N 197:

**Գիտակ**, Ջագեամի հնութիւնները, «Մշակ», 1914, N 123:

**Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974:

**Գրիգորյան Բ.**, Միրզիկ, թե՞ Վարդաշեն (հատված «Հետքերն անհետանում են» հուշագրությունից) «Գարդմանք», 1996, N 2:

**Գրիգորյան Ռ.**, Հափշտակված արծիվը, «Խորհրդային Հայաստան», 1989, հոկտեմբերի 27:

**Գրիգորյան Ռ.**, Հայաստանի սահմանամերձ տարածքների զավթումը Խորհրդային Ադրբեջանի կողմից 1920-30-ական թվականներին, «Առերեսում», 1996, N 16:

**Դանիելյան Ա.**, Բանանցն աչքիս առաջ դատարկվեց, «Գարդմանք», 1996, N 3:

«Դիւան հայոց պատմութեան» (1780-1834), գիրք Ա-Բ, կազմ. **Գիւտ քահանա Աղանեանց**, Թիֆլիս, 1893:

«Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Գ, կազմ. **Գիւտ քահանա Աղանեանց**, Թիֆլիս, 1894:

«Դիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, կազմ. **Գիւտ քահանա Աղանեանց**, Թիֆլիս, 1912:

«Դիվան հայ վիմագրության», պր. 1, Անի քաղաք, կազմեց` **Օրբելի Հ. Ա.**, Երևան, 1966:

«Դիվան հայ վիմագրության», պր. 4, կազմեց` **Բարխուդարյան Ս.**, Երևան, 1973:

«Դիվան հայ վիմագրության», պր. 5, կազմեց` **Բարխուդարյան Ս.**, Երևան, 1982:

**Եգանյան Օ. Ս.**, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «Էջմիածին», 1971, Դ:

**Եգանյան Օ.**, Թարգմանչաց վանքի հայերեն ձեռագրերը, «Էջմիածին», 1971, Ե:

«**Եղիշէի** վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957:

«**Զաքարեայ Սարկաւագի** պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870:

**Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:

**Էփրիկեան Հ. Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, h. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1903:

**Թէոդորոս վարդապետ Շիրակունի**, Չարեքայ անապատ կամ մենաստան, «Արարատ», 1872:

**Թօփճեան Յ. Յակոբ**, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898; մասն Բ, Վաղարշապատ, 1900:

«Թուրքական աղբյուրներ. **Էվլիյա Չելեբի**», h. Գ, կազմեց Սաֆրաստյան Ա., Երևան, 1967:

«Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», h. Ա, կազմեց **Սաֆրաստյան Ա.**, Երևան, 1961, h. Բ, Երևան, 1964:

«Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**», հրատարակության համար պատրաստեց **Ա. Աբրահամյանը**, Երևան, 1942:

«Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», աշխատ. Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988:

«ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց` Մաթևոսյան Ա., Երևան, 1984:

«ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», h. Ա, կազմեցին` Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1974:

«ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», h. Բ, կազմեցին` Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1978:

«ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», h. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984:

**Ինճիճեան Ղ.**, Ստորագրութիւն, Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

**Լազարեանց Ս.**, Վանք Փառիսոսի և թագաւորութիւն Հայոց ի Փառիսոս, «Մեղու Հայաստանի», 1859, N 13:

**Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական Հանդէս», Թիֆլիս, 1899, N 1:

**Լալայան Ե.**, Երկեր, Երևան, 1988:

**Լեո**, Երկերի ժողովածու, h. 3, Երևան, 1969:

**Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:

**Խոջաբեկյան Վ.,** Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

**Խօջայեանց Յովս.**, Գանձակի ս. Գէորգ եկեղեցին, «Մշակ», 1915, N 177:

**Խառատյան Հ.**, Մկրտիչ և Ալեքսանդր Ջաղեթյանցները` Ղազախի Սուրբ Վարդանանց եկեղեցու կառուցողներ, «Էջմիածին», 1994, Զ-Է:

**Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987:

«Կալվածագրեր», կազմեց` **Հար. Աբրահամյան**, պրակ. 1, Երևան, 1941:

**Կարապետյան Բ.,** Հարյուր տարվա երկխոսություն, Երևան, 1990:

**Կարապետյան Ս.**, Ադրբեջանական ՍՍՀ Թոուզի շրջանի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», 1989, Ա:

**Կարապետյան Ս.**, Հայաթափ բնակավայրեր..., «Հայրենիքի ձայն», 13.01.1993: 9. 02. 1993:

**Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Լրագիր», 4 մարտի 1995:

**Կարապետյան Ս.**, VIII-XI դարերի խաչքարերը Գարդմանքում, «Գարդմանք», 1996, N 3:

**Կարապետյան Ս.**, Գարդմանահայ գաղթականությունը Վրաստանում» հոդվածում («Գարդմանք», N 1, էջ 7:

**Կարապետյան Ս.**, Գարդմանահայեր սպիտակ ջարդը Լիսում, «Գարդմանք», N 3, էջ 7, 16:

**Կարապետյան Ս.**, Մի Նոր տարի` Շամքորի ձորում (ճամփորդական հուշեր), «Գարդմանք», 1996, N 3:

**Կարապետյան Ս.**, Ճշմարտությունը զոնե պատմության համար, «Օրեր», 1997, N 16:

**Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ` Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

**Կոստանեանց Կ.**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:

**Հախումեան Աշ.**, Նիւթեր ազգային պատմութեան, «Արարատ», 1914:

**Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, h. Ա, Երևան, 1932:

«Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ **Ջուանշէրի** պատմչի», Վենետիկ, 1884:

«Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխատասիրությամբ **Ռ. Տ. Տիտանյանի**, Երևան, 1981

**Համամչեան Ե.**, Բանանց գիւղի կուրգանները, «Ազգագրական Հանդէս», երկրորդ տարի, գիրք Բ, Թիֆլիս, 1897:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 1, Երևան, 1986:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», h. 4, Երևան, 1988:

«Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը» գրքում (կազմող` **Շահինյան Ա.**, Երևան, 1984:

«Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.». փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003:

«Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974:
«Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորյալ բաժանումը» (ըստ 1-ը օգոստոսի 1988թ.), Երևան, 1988:
«Հայկական սովետական հանրագիտարան» (ՀՍՀ), h. 2, Երևան, 1976:
«ՀՍՀ», h. 3, Երևան, 1977, h. 5, Երևան, 1979, h. 8, Երևան, 1982, h. 9, Երևան, 1983:
**Հարությունյան Ա. Հ.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և իմպերիալիստական կռիվները, Երևան, 1984:
**Հովհաննիսյան Հ.**, Արծվաբույնը լեռներից այն կողմ, «Հայրենիքի ձայն», 12. 10. 1990, N 41:
«Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**», Վենետիկ, 1862:
**Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
**Ղալաչյան Կ.**, Փառքի հուշարձաններ. ալբոմ, Երևան, 1986:
**Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969:
**Ղաֆադարյան Կ.**, Հաղբատ, Երևան, 1963:
**Մաթևոսյան Ա.**, Թարգմանչաց ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-ԺԱ:
**Մաժակ**, Նամակ Գանձակից, «Մշակ», 1873, N 14:
**Մամիկոնեանց Ա.**, Պատմական անցք, «Արձագանք», 1888, N 5:
**Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, h. Գ, Երևան, 1952:
**Մանասյան Ռ.**, Ուսումնա-դաստիարակչական աշխատանքները Շամխորի շրջանի Չարդախլու գյուղի դպրոցում, Բաքու, 1964:
«Մանր ժամանակագրություններ», h. Ա, կազմեց՝ **Հակոբյան Վ. Ա.**, Երևան, 1951, h. Բ, կազմեց՝ **Հակոբյան Վ. Ա.**, Երևան, 1956:
Մատենադարան. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավ. 79:
«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ (ԺԵ-ԺԶ դդ.)», կազմ. **Փափազյան Հ.**, Երևան, 1959
**Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 248:
**Մարտիրոսյան Գ.**, Իմ սիրտը, Չարդախլու, քո լեռներում է, «Դաշնակցություն», 1991, N 18:
**Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. Ա, Երևան, 1934:
**Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. Բ, Երևան, 1936
**Մելիքսեթ-բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. Գ, Երևան, 1955:
**Մեսրոպ եպիս. Տէր Մովսիսեան**, Հայկական արձանագրութիւններ, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1913, N 2:
**Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938:
**Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Պ. Կոստիկյանի, Երևան, 2000:
**Միրիմանեանց Յ.**, Գետաշէն գիւղը, «Մուրճ», 1894, N 7-8:
**Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն, Մոսկուա, 1861:
**Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983:
**Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխատ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 25:
**Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983:
**Յովհաննէսեան Հ. Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970:
«**Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց», Երևան, 1996:
**Նազարեան Էմմանուէլ քահանա**, Տպաւորութիւններ Գանձակից, «Նոր-Դար», 1899, N 85:
**Նահատակյան Ռ.**, Փառապանծ մարշալների նախապապը, «Հայ աշխարհ», N 5 (23), 1992:
**Շահնազարյան Ա.**, Վախրամյանների իշխանությունը, Երևան, 1990:
**Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1951, օգոստոս-հոկտեմբեր, 1952, յուլիս-սեպտեմբեր:
**Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953:
**Չալոյմյան Մ.**, Բռնագաղթված բանանցեցիները Հայաստանում, «Գարդմանք», 1996, N 3:
**Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, h. Բ., 1785, h. Գ, Վենէտիկ, 1786:
«Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի յօրինեալ ի **Տ. Եսայի Աղուանից կաթողիկոսէ Հասան Ջալալեանց**», Յերուսաղէմ, 1868:
Պատմութիւն **Սեբէոսի**, աշխատասիրի. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:
**Պարսամյան Վ. Ա.**, Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985:
**Պետրոսյան Ա.**, Անտեսուած շրջանի խնդիրները, «Ազատամարտ», 1991 սեպտեմբեր, N 29:
**Պետրոսեան Ա.**, Արծուաշէն. անցեալն ու ներկան, «Ազատամարտ», N 1, 1992:
**Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, մասն Բ, Տփխիս, 1858:
Ջամբռ, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ կաթողիկոսէ Երեւանցւոյ**», Վաղարշապատ, 1873:
**Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
**Սարգսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը, Երևան, 1964:
**Սարգսյան Մ.**, Գետաշեն, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1988, N 2:
**Սելյան Բ.**, Կրզեն գյուղը, «Այգաբաց», 1991, N 47:
**Սմբատ Մ.**, Հնութիւններ Գետաբէկի շրջակայքում, «Նոր-Դար», 1893, N 36:
**Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, Տիեզերական պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթ. Վ. Հ. Վարդանյանի, Երևան, 2000:
«Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), Երևան, 1994:
**Վարդանեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992:
**Վարդանեան Յ.**, Մի քանի խօսք այրումների մասին, «Մշակ», 1914, N 154:
**Վարդանյան Ս.**, Առեղծված. ոչ՛, զավթված հողեր, «Խորհրդային Հայաստան», 18.10.1989:
Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները **Պ. Մուրադյանի**, Երևան, 1979:
«Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», «Արարատ», 1897:
**Տէր-Ավետիքեան Ստ.**, Կապ բռնողը, «Լումայ», 1896, գիրք Բ, էջ 229-248:
**Տէր-Ավետիքեան Ստ.**, «Մեր տէրը», «Լումայ», 1897, գիրք Ա, էջ 97-132:
**Տէր-Ավետիքեան Ստ.**, «Հայր սուրբը», «Լումայ», 1897, գիրք Բ, էջ 187-221:
**Տէր-Ավետիքեան Ստ.**, «Ջփողը», «Լումայ», 1898, գիրք Ա, էջ 160-190:
**Տէր-Մկրտչեան Գ.**, Խոսրով Գանձակեցի, «Արարատ», 1896:
**Տէր-Միքայէլեան Ս.**, Վարդավառի տօնը Բանանցում, «Արձագանք», 1884, N 30:
**Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, «Երկերի ժողովածու», h. 10, Երևան, 1959:
«Ցուցակ Ջեռագրաց» h. Ա, Երևան, 1965:
«Ցուցակ Ջեռագրաց» h. Բ, Երևան, 1970:
**Քաջբերունի**, Բաղս գիւղի աւերումը, «Արարատ», 1910:
**Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան (հողվածաշար), «Արձագանք», 1886, N 20, 23, 24:
«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». «Արաբական աղբյուրներ», Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

Ռուսերեն

**А. П.**, День въ Елисаветполъ, “Кавказ”, 1903, N 121.
**Абелов Н. А.**, Исследование экономическаго быта государственных крестьян Елисаветпольскаго уезда, Елисаветпольской губернии, Тифлис, 1887.
”Азербайджанская ССР, Административно-территориальное деление”, Баку, 1979.
”Акты, собранные Кавказскою археологическою коммиссиею”, т. II, Тифлис, 1868.
”Акты...”, т. IV, Тифлис, 1870.
**Апресов С.**, Перспективы медной промышленности в

Кедабекском районе, ”Экономический Вестник Азербайджана”, Баку, 1926, N 10.
“Армяно-Русские отношения в XVIII веке”, т. IV, Ереван, 1990.
”Большая Советская энциклопедия”, том I, М., 1929; т. XXIV, М., 1932.
**Вейденбаум Е.**, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888.
**Воронов Н.**, ”Сборник статистических сведений о Кавказе”, т. 1, отдел 1, часть 4, Тифлис, 1869.
**Гофман Э.**, Геологический очерк горы Кяпаз, ”Известия Кавказского музея”, том IX, вып. 2, Тифлис, 1915.
”Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии”, т. 1, (с. 1768 по 1774 г.) под редакцией Цагарели А. А., СПБ., 1891.
**Гусейнов М.**, Мустьерская стоянка в пещере Дашсалахли, “Извесия Академии Наук Азербайджанской ССР”, 1959, N 6.
**Джаша Ил.**, Русское село въ Елисаветпольской губернии, ”Кавказ”, 1900, N 285.
**Дубровин Н.**, Закавказье от 1803-1806 года, СПБ., 1866.
”Елисаветопольская губерния. свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа”, Тифлис, 1888.
**Епископосов Г. Л.**, К истории существующего административно-территориального деления Закавказских республик и продолжающихся нарушениях национальной политики КПСС в Азербайджанской ССР, ”Белая книга. документы и материалы”, книга 1-ая, т. 2, Ереван, 1989.
”Закавказье”, 1911, N 181.
”Известия АН Аз. ССР”, 1946, N 5.
**Иксъ**, Губернский городъ Елисаветополь, ”Кавказ”, 1880, N 243.
”Кавказ”, 1859, N 9; 1865, N 70; 1870, N 76; 1894, N 206; 1903, N 261; 1904, N 228. 1905, N 24.
”Кавказский календарь на 1846 г.”, Тифлис, 1845.
”Кавказский календарь на 1850 г.”, Тифлис, 1849
”Кавказский календарь на 1851 г.”, Тифлис, 1850.
”Кавказский календарь на 1852 г.”, Тифлис, 1851.
”Кавказский календарь на 1853 г.”, Тифлис, 1852.
”Кавказский календарь на 1857 г.”, Тифлис, 1856.
”Кавказский календарь на 1859 г.”, Тифлис, 1858.
”Кавказский календарь на 1861 г.”, Тифлис, 1860.
”Кавказский календарь на 1862 г.”, Тифлис, 1861.
”Кавказский календарь на 1863 г.”, Тифлис, 1862.
”Кавказский календарь на 1864 г.”, Тифлис, 1863.
”Кавказский календарь на 1865 г.”, Тифлис, 1864.
”Кавказский календарь на 1866 г.”, Тифлис, 1865.
”Кавказский Календарь на 1868 г.”, Тифлис, 1867.
”Кавказский календарь на 1870 г.”, Тифлис, 1869.
”Кавказский календарь на 1871 г.”, Тифлис, 1870.
”Кавказский календарь на 1872 г.”, Тифлис, 1871.
”Кавказский календарь на 1875 г.”, Тифлис, 1874.
”Кавказский календарь на 1879 г.”, Тифлис, 1878.
”Кавказский календарь на 1883 г.”, Тифлис, 1882.
”Кавказский календарь на 1884 г.”, Тифлис, 1883.
”Кавказский календарь на 1886 г.”, Тифлис, 1885.
”Кавказский календарь на 1888 г.”, Тифлис, 1887.
”Кавказский календарь на 1889 г.”, Тифлис, 1888.
”Кавказский календарь на 1890 г.”, Тифлис, 1889.
”Кавказский календарь на 1891 г.”, Тифлис, 1890.
”Кавказский календарь на 1892 г.”, Тифлис, 1891.
”Кавказский календарь на 1894 г.”, Тифлис, 1893.
”Кавказский календарь на 1895 г.”, Тифлис, 1894.
”Кавказский календарь на 1896 г.”, Тифлис, 1895.
”Кавказский календарь на 1897 г.”, Тифлис, 1896.
”Кавказский календарь на 1898 г.”, Тифлис, 1897.
”Кавказский календарь на 1899 г.”, Тифлис, 1898.
”Кавказский календарь на 1900 г.”, Тифлис, 1899.
”Кавказский календарь на 1901 г.”, Тифлис, 1900.
”Кавказский календарь на 1902 г.”, Тифлис, 1901.
”Кавказский календарь на 1903 г.”, Тифлис, 1902.
”Кавказский календарь на 1904 г.”, Тифлис, 1903.
”Кавказский календарь на 1905 г.”, Тифлис, 1904.
”Кавказский календарь на 1906 г.”, Тифлис, 1905.
”Кавказский календарь на 1907 г.”, Тифлис, 1906.
”Кавказский календарь на 1908 г.”, Тифлис, 1907.
”Кавказский календарь на 1910 г.”, Тифлис, 1909.
”Кавказский календарь на 1915 г.”, Тифлис, 1914.
”Кавказский календарь на 1917 г.”, Тифлис, 1916.
**Каракашлы К.**, Об айрумах, “Известия общества Обследования и изучения Азербахджана”, N 8, Баку, 1929.
**Карапетян Б.**, **Карапетян С.**, Тайны Гандзака (Кировабада) и Северного Арцаха, М., 1998.
**Карапетян М. М.**, Динамика расселения тюркоязычных кочевых племен в восточной части Армянского нагорья, конец XIV - начало XIX ”Взаимосвязь социальных и этнических факторов в современной и традиционной культуре”, сборник статей, М., 1983.
**Карапетян С.**, Дашкесанский горно-рудный регион единая экономическая основа торриториональной целостности Арцаха-Гардмана, ”Гардманк”, 1996, N 3 (на арм. яз.).
**Карбелашвили Д. П.**, Кирзан и кирзанцы, ”Известия” Азерб. филиала АН СССР, 1937, N 2.
**Кобычев В. П.**, Айрумы (к вопросу происхождения этнинима), ”Советская этнография”, 1962, N 3.
**Лазарев Л.**, Ганжа, ”Кавказ”, 1846, N 37.
”Малая Советская энциклопедия”, т. 1, М., 1933.
**Мевес В.**, Очерки Елисаветопольскаго уезда, ”Кавказ”, 1865, N 35, 36, 42, 43, 44, 46, 48, 85, 88, 95.
**Мнацаканян А.**, О двухцветной керамике Лчашена, ”Известия”, 1957, N 5.
**Муравьева Н. Н.**, Война за Кавказом в 1855 году, том 1, часть первая, СПБ, 1877.
**Мурадян П. М.**, Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988.
**Нариманов И.**, Археологические раскопки на поселении холма Сарытепе (1956-1957 гг.), “Известия Академии наук Азербайджанской ССР”, 1959, N 3.
”Отчет по Кавказскому музею за 1914 год”, Тифлис, 1917.
**Патканов С.**, Замечания на статью: Ганжа, ”Кавказ”, 1846, N 41.
**Потто В.,** Кавказская война..., т. 3, вып.1, С. Петербург, 1886.
**Раджабли А. М.**, Из истории монетного дела в Сефевидском государстве, ”Труды Музея истории Азербайджана”, т. 4, Баку, 1963.
**Реслер Э.**, Археологическия изыскания в Закавказье, “Кавказ", Тифлис, 1903, N 173, 179.
**Садыхзаде Ш. Г.,** О случайных археологических находках из окрестностей сел. Човдар, ”Известия” АН Азрб. ССР, серия общественных наук), 1963, N 6.
”Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. 29, Тифлис, 1901.
**Семеновъ И.**, Елисаветполъ, “Кавказ”, 1869, 7 (19) ноября, N 131
**Семенов И.**, Народная жизнь в Елисаветполе, ”Кавказ”, 1869, N 131.
”Тбилисская коллекция персидских фирманов”, т. II, составители: **Тодуа М. А.** и **Шамс И. К.**, Тбилиси, 1989.
**Тер-Аветисян С.**, Памятники древности Карабаха и скифская проблема, Тифлис, 1934.
”Тифлисский листок”, 1896, N 90. 1909, N 271. 1912, N 119.
**Ткачев Г.**, Путевия заметки, ”Кавказ”, 1859, N 9.
**Фатуллаев Ш. С.**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-начала XX века, Баку, 1986.
**Шарифов Д. М.,** Раскопки близ сел. Човдар, Таузского уезда, ”Изв. Азкомстариса”, вып. 4, тетрадь 2, Баку, 1929.

Այլալեզու

**Lang D. M.**, The peoples of the Hills, London, 1971.
**Lehmann-Haupt C. F.**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910.
**Patrick Donabedian, Claude Mutafian**, Artsakh Histoire du Karabagh, Paris, 1991.
**Mamiye-Clairac**, Histoire de Perse depuis le commencement de ce siecle, t. II, Paris, 1750.
**M. Chantre,** A travers l’Armnnie russe, Paris, 1893.
Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereures de Turquie Mahomet et Achmet son fils. Par le P. Fr. **Anthoine de Gouvea**, traduit de l’originale portugais. Rouen, 1646.

# ՑԱՆԿԵՐ

## Անձնանուններ*

### Ա

Աբաս-Միրզա 410, 504, 507
Աբգար 344
Աբելյան Ն. 18, 21
Աբխազավա 508
Աբրահամ 33
Աբրահամ եպս. *504*
Աբրահամ երեց 462
Աբու-Բեքր 506
Աբուլեթ 25
Աբուլսուար ամիրա 24
Աբունց Թամամ *216*
Աբունց Յակոբ *216*
Ադամով Խաչատուր 74(ծ.)
Ադիբեկյան Վ. 44
Ադիբեկյանց Տեր Պետրոս 308, *309*
Ադիխանեանց Յագոբ *173*
Ադիխանեանց Օհան Սհակիեան *173*
Ազատյան Վ. 152
Ազար *382*
Ազարեա *346*
Ազարիա 68, *346, 382, 393*
Ազարիա, ծաղկող 480
Ազարյանց Սարգիս վրդ. Տփխիսեցի 197, *401*
Ազիզ 88
Ազիզ *240*
Ազիզյանց Ս. 51
Ազիզ Պէկ *339*
Աթաբեկյանց Գրիգոր Սարգսյան 492
Աթայան 374
Աթայանց Սարգիս Հովհաննիսյան 376
Աթայլ *353*
Աթանաս 50
Աթանասյան Ա. 140
Աթանեսեան Արտեմ Խաչատուրեան 140, *173*
Աթանեսյան Մակիչ Հովհաննեսի (Բոքլի) 152
Աթիբեկյանց Սիմեոն 335
Ալահվերդի սուլթան 16(ծ.)
Ալափկեր 73(ծ.)
Ալեքսանդր Բ 54
Ալեքսանդր 23
Ալեքսանդր Մակեդոնացի 23, 509
Ալեքսանդր Մեծ - տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի
Ալեքսանոս աբեղա *224*
Ալթումով Ալեքսանդր 74(ծ.)
Ալթուն *240*
Ալթունյանց 510
Ալիշան Ղևոնդ 286
Ալի-Սուլթան 486, 507
Ալիք *153*
Ալիև Մուսեիբ 72, 73(ծ.), 74(ծ.)
Ալուղուլի 91
Ալփասլան 24
Ախմետ Հյուսեին օղլի 376
Ախունդով 20
Ակիթ 204
Ակոբ *134, 171, 223, 420, 534*
Աղա *312, 346, 472*
Աղա Ալի Մահմեդ Իրզա օղլի 40
Աղաբաբ 91
Աղաբեկյանց Ա. 44
Աղազար *306, 503*
Աղաճան *83, 248*
Աղաճանանց Ապրիամ *174*
Աղաճանանց Ավագիմ *174*
Աղաճանանց Համբարձում *174*
Աղաճանանց Յոհանէս *174*
Աղաճանանց Ոսկան *482*
Աղա Մուհամմադ խան 30, 511
Աղայանց Հովհաննես Սարգսյան 514
Աղաջանեանց Մարքարիտ *174*
Աղաջանեանց Սարքիս *174*
Աղասի Բէկ *350*
Աղասի պէկ *312*
Աղասյանց Հովհաննես 415
Աղեքսանդր, կաթողիկոս 104
Աղ Մելիք - տե՛ս Մելիք Ճալալ
Աղապէկ *369*
Աղաջանյան Հայկազ 544, 545
Աղասարյանց Աղաբեկ 75
Աղբուղա 445, 506, 507
Աղսաղ Մահմադ խան 28
Աղսարթան 245
Աղվանյանց Գրիգորիս, Գանձակի փոխանորդ 13
Աճուք խանում *475*
Ամիր *97, 169, 297, 369*
Ամիրա *527*
Ամիր աղա *170*
Ամիր Ասաթ *389*
Ամիրբեկ 91
Ամիրգունա խան 28
Ամիրխան *97*
Ամիր խան 507
Ամիրխանեանց Պողոս *225*
Ամիրհան 74(ծ.)
Ամիրհասան *482*
Ամիրճան *249*
Ամիրջան *290*
Ամիրով 74(ծ.)
Ամփեր 387
Այճի *291*
Այոն *167*
Այվազեան Գաբրիէլ, արքեպս. *222*
Այունց 533
Այունց Հայկ - տե՛ս Աստվածատրյան Միքայել
Անախաթուն *239*
Անանեանց Ղազար *174*
Անանեանց Մկրտիչ *174*
Անանեանց Յակոբ *174*
Անանեանց Պետրոս *174*
Անանեանց Սերոբ *174*
Անանիա Մոկացի 85, 129
Անանյանց Անանե *174*
Անանյանց Եղիսաբետ *174*
Անդրանիկ 203(ծ.)
Անդրեաս *339*
Անդրոնիկով Ա. 41
Անթանէսեանց Կարապետով Յոհանէս *152*
Անթառամ *353*
Անթառան *339*
Աննա *284, 297*

* Ցանկում արտացոլված չեն 1839 թ. վավերագրում տեղ գտած անձնանունները:
Շեղ էջահամարներով նշված են վիմագրերում հիշատակված հատուկ անունները:

Աննա Պավլովնա 504
Անտիկ *534*
Անտոն *294, 382*
Անտոն, վարդապետ 117
Անտոնիս դե Գուվեա 28
Ապկարյան Հարություն *250*
Ապաղայ Եղչ խան *315*
Ապավ *341*
Ապրեսյանց Զաքարիա 449
Ապրիամ *223*
Աջամ *90*
Առաւ *315*
Առաքէլ *164, 216, 291*
Առաքել Դանձուտցի 80, 207
Առաքել Դավրիժեցի 100, 103
Առաքելանց Յուսէփ *174*
Առաքելանց Սուլտան *174*
Առաքելյան Առաքել 535
Առաքելյան Մովսես 344
Առաֆելյան Նիկողայոս 360
Առըսղամ *511(ծ.)*
Առըստակես *307*
Առնոյղ 446
Առուստամ 91, *353*
Ասլի *524*
Աստվածատրյան Միքայել 530, 531(ծ.), 532, 533
Ասփա 230
Ավազանց Բարսեղ *174*
Ավազանց Թէոս *174*
Ավազանց Հեղնան *174*
Ավազեանց Ղուկասեան Սէրգէ *174*
Ավգյան (Ջոջունց) Խաչատուր Վանիկի 153
Ավգյանց Հարություն 207, 254
Աւալ *528*
Աւալեանց Մակի Պետրոսեան 312-313
Աւան *382*
Ավանէս *352, 524*
Աւար խաթուն *312*
Աստվածատրյանց Մկրտիչ 57
Աստվածատուր վարդապետ 12(ծ.), 108, 114
Ավագ 49
Ավագ, վարդապետ 50
Ավագյան Ղազարոս Ավետիքի 244
Ավագյանց Առաքել 461
Աւաք *173*
Ավգուստ Հաքստհաուզեն 14
Աւդուլքարիմ *297*
Ավետիս *153, 353*
Աւետիս *173*
Ավետիս, գրիչ 79, 81, 101, 110, 525
Ավետիս Քամալեցի, գրիչ 96
Ավետիքյան Մարգարիտ Վազգենի 152
Աւտար *393*
Ատոմ *245*
Ատրներսեհ Առանշահիկ 10
Արամ (Մեծ Սահակ) *401*
Արարատյանց Ալեքսանդր 263
Արզուման, յուզբաշի 50
Արզումանյանց Սիմեոն Ստեփանյան 376
Արզումանյանց Հովի. 44
Արիստակես, երեց 136
Արիստակես, վարդապետ 110
Արիստակես, քահանա *249*
Արխօշ *398*
Արհան *170*
Արշակ դայի 541
Արշակունիներ 9, 299
Արշամ *207*
Արսեն 51
Արտաշես Ա 9
Արտաշեսյաններ 9
Արութ *135, 351*
Արութուն *353*
Արքերյան Սարգիս Տեր-Սահակյան 343, 344
Աուն 91
Աֆանասյան 41
Աֆանասյան Եղիսաբեթ 46
Աֆանասյան Սիմեոն 49
Աֆանասյանց Մկրտիչ 39, 46, 56
Աֆանասյանց Սարգիս 46

**Բ**

Բաբաջան *321*
Բաբաջանյան Գուրգեն 513
Բաբաջանյան Համազասպ 513, 518
Բաբաքնխիյան Սիմեոն 49, 50
Բաբաքնխիյանց Գրիգոր 44, 51
Բագրայդ *420*
Բագրատ, թագավոր Աբխազաց 24, 443
Բագրատ Դ 436
Բագրատունիներ 123, 204
Բաղալանց Գրիգոր *175*
Բաղալանց Կարապետ *175*
Բաղալանց Միքայել *175*
Բաղալանց Մովսես *175*
Բաղալանց Յակոբ Համբարձումեան *175*
Բաղալանց Յոհաննես *175*
Բաղալանց Յոսեփ *175*
Բաղալանց Սուլթան *175*
Բաղալեանց Գրիգոր *175*
Բաղալեանց Դանել *175*
Բաղալեանց Զաքար *175*
Բաղալեանց Խանում Սիմօնեան *297*
Բաղալեանց Խաչատուր *175*
Բաղալեանց Հուռումսիմ *175*
Բաղալեանց Յակոբ *175*
Բաղալեանց Սարգիս Պետրոսեան *175*
Բաղալեանց Սիմէօն *175*
Բաղալյանց Մամիկոն 152
Բալախան *225*
Բալախանում *249*
Բալաղեան Հռիփսիմէ *180*
Բալաղեան Յարութ *180*
Բալայանց Կարապետ Տ. Հովսեփյան 478, 479
Բալապար *353*
Բալասան 302
Բալասանյան Իվան 324
Բալյան Իսրայել 535
Բալյանց Կ. 140
Բալյանց Հովսեփ 481
Բալյանց Ստեփան 193, 197
Բալուղյանց Ա. 56
Բալուղյանց Ջ. 51
Բալունք 533
Բախշի 324
Բակլար *165*
Բակրատ *182*
Բահաթրյան Ասրի 508
Բաղդասար *503*
Բաղդասար, արք. 479
Բաղդասար, կազմող *465*
Բաղդասարյան Սահակ, Գանձակի փոխանորդ 14
Բաղդասարյանց (Ըվըտրանանք, Քոթկունք, Պիջունք) - տե՛ս Պաղդասարանց
Բաղդասարյանց Մ. 335
Բաղդասարյանց Մատթեոս 448
Բաղդեանց Ազիզ *265*
Բաղիեանց Գրիգոր *525*
Բաղիեանց Կարաբեդ *525*
Բաղյան Գրիգոր Կարապետի 215
Բաղյան Իսահակ Տիգրանի 232
Բաղյան Սերգեյ Իսահակի 232
Բաղտասար *165*
Բաղրամեանց Սարգիս *183*
Բաղրամյան Հովի. 63, 64, 513, 518
Բաղրամյան Ռ. 287
Բաղրամյանց Գերասիմ 448
Բաճի *527*
Բասեանց Ստեփան Պօղոսեան *180*
Բատայեանց Միքայէլ *153*
Բարաղամյանց Հովհաննես 482, 483
Բարկիհարուխ, սուլթան 24
Բարխուդար *170*
Բարխուդարյանց 263
Բարխուդարյանց Սեղրակ 338, 420
Բարխուտարյանց Մակար 48, 52, 59, 78, 80, 90, 91, 95, 97, 99, 100, 105, 125, 204, 226, 245, 247, 248, 268, 286, 297, 299, 315,

318, 335, 337, 344, 355, 358, 394, 396, 413, 418, 420, 495
Բարսեղ 102, 129, *420*, 472
Բարսեղ, գրիչ 241, 250, 268
Բարսեղանց Մարդիրոս *175*
Բարսեղանց Օվանես *175*
Բարսեղյան Տեր Մկրտիչ 171
Բարունան *350*
Բեգլար 122
Բեգյան Ջիրավարդ Հովակիմի 153
Բելախյանց Ալեքսանդր 73(ծ.)
Բելկ Վ. 67, 510
Բեկլար-բեկ 407
Բեկնազարեանց Միքայէլ*175*
Բեկնազարյան Ստեփան Տիգրանի *152*
Բեկում աղա *87*
Բեյուկ-բեկ Աղասի բեկ
Բենիկ վրդ., Գանձակի փոխանորդ 14
Բեշքան *524*
Բեռնուլ 71
Բէկի Խաթուն *255*
Բէկիճան *162*
Բէկնազարեանց Գրիգոր *152*
Բէկնազարեանց Յակոբ *152*
Բէկումաղ *173*
Բլսանանք (Բալասանյաններ) 97
Բլուզ Ջաքարե 443, 445, 506
Բնիչեանց(Բանուչանց) Մկրտիչեան Ստեփան *176*
Բշիպաք *525*
Բոզեանց Գէորգ *491*
Բոլտոն Վիլիելմ Ռ. 71, 75, 76
Բորյանց Շ. 51, 76
Բրուտանք 533
Բուլղադար 286
Բուղա 10, 12, 24, 204, 506
Բունիաթով 20
Բուտալով 374

## Գ

Գաբրիել 100, *482*, 490
Գաբրիելյան Խաչատուր 344
Գաբրիէլանց Ասաք *176*
Գաբրիէլանց Ղուկաս *176*
Գագիկ Ա Բագրատունի 24, 205, 443
Գագիկ, Աղվանից կաթողիկոս 204
Գագիկ Ա Շահնշահ 123, 443
Գալուստ *350,* 385
Գառնիկ Գառնեցի 480
Գասբար *382*
Գաւիար *170*, *223*
Գաւրգ - տե՛ս Գիորգի թագավոր
Գաւրկի *268*
Գարան *538*
Գարդմանացի կամ Միհրանյաններ 9
Գեգեչկորի Ե. 508
Գեյուշև 20
Գէորգանց Միքաել *177*
Գէորգանց Յոհաննէս *177*
Գէորգեանց Աղէքսանդր *176*
Գէորգեանց Գէորգ *176*
Գէորգեանց Խիկար *176*
Գէորգեանց Կարաբեդ *177*
Գէորգեանց Մայան *177*
Գէորգեանց Միքայէլ Յովհաննի-սեան *192*
Գէորգեանց Մէջլում *176*
Գէորգեանց Շողակաթ *177*
Գէորգեանց Պողոս *176*
Գէորգեանց Սարգիս *176*
Գէորգեանց Սուլթան *177*
Գիզալ *97*
Գիլեանց Մեսրոբ *179*
Գիլեանց Դշխու *179*
Գիլինգոյլ *308*
Գիորգ *391*
Գիորգի, թագավոր *442,* 443, 493
Գիչնի *254*
Գիւլար *465*
Գիւլեանց Գալուստ Պողոսեան *179*
Գիւլիմ *164*
Գիւքան *524*
Գիրիկոր *342*
Գյագունք (Կիրակոսյաններ) 533
Գյոռխնանք-Մուշտունք (Աղբալյան-ներ) 97
Գյուրջյան Հովհաննես (Գուրջունց Հովհան) 157
Գյուրջյաններ 334
Գյուրջունց - տե՛ս Կուրջունց
Գոլիցին Ա. Դ. 30, 497, 498
Գոլում *349*
Գոհար *291*
Գորգի *537*
Գրիգոր 25, 68, 74(ծ.), 96, 122, 103, 115, *136, 170, 186, 189,* 212, *225, 349, 382, 420, 442,* 457, *500, 526*
Գրիգոր, Աղվանից կաթողիկոս *249*
Գրիգոր, գրիչ 79, 96, 110, 268, 276, 509
Գրիգոր Բյուրականցի 230
Գրիգոր Գանձակեցի 393
Գրիգոր դպիր 540, 541
Գրիգոր Մագիստրոս 40
Գրիգորանց Ավագ *177*
Գրիգորանց Գալուստ *177*
Գրիգորանց Գրիգոր Իվանի *178*
Գրիգորանց Գրիգոր Մաթէոսի *177*
Գրիգորանց Իվան *177, 178*
Գրիգորանց Հանես *177*
Գրիգորանց Ճաւ *177*
Գրիգորանց Մագթաղ Իվանի *177*
Գրիգորանց Մաթեվոս *177*
Գրիգորանց Մկրտիչ *177*
Գրիգորանց Նորընձ*177*
Գրիգորանց Շողագաթ *177*
Գրիգորանց Սոնիչկա Իվանի*178*
Գրիգորեանց Աթանես Բարսեղեան *177*
Գրիգորեանց Գրիգոր *177*
Գրիգորեանց Եղիսաբեթ *177*
Գրիգորեանց Եփրեմ *177*
Գրիգորեանց Ղազար *177*
Գրիգորեանց Մկրտիչ *177*
Գրիգորեանց Պարսեղ *177*
Գրիգորեանց Սարգիս *177*
Գրիգորեանց Սողոմոն Կարապե-տեան *175*
Գրիգորյան Բաղամ 234, 321, 543
Գրիգորյան Ս. 46
Գրիգորյան Վահան 264
Գրիգորյանց Հուսեփ Ջառաբ 48
Գրիքոր *415*
Գուղանէ *90*
Գույան Սերգի *153*
Գուլում *369*
Գուլումյան 447
Գուլումյանց Միքայել 264
Գուլունց Գոլի *178*
Գուլունց Մեսրոփ *179*
Գուլունց Պողոս *179*
Գուլունց Սարգիս *179*
Գուլունց Վարք *179*
Գուլփաշ *171*
Գևորգ Դ, կաթողիկոս *54*, 116, *222*
Գևորգ Ե, կաթողիկոս 53, 383, 463, 519, 526
Գևորգ Զ, կաթողիկոս 58
Գևորգյան Հովհաննես Գևորգի 152
Գևորգյան Վահան 117
Գօգջի *170*

## Դ

Դալի Ալի 33, 499
Դալի Ղազար 311
Դալլաքանց Ասազ *179*
Դալլաքանց Յովհանիս *179*
Դալլաքանց Յովհաննիս *179*
Դալլաքանց Յohան *179*
Դալլաքանց Տէր Գրիգոր *179*
Դալլաքյան Արզուման 530
Դալլաքյան Հերիք 533
Դալպէկ *308*
Դամրչունք (Դեմիրչյան) 533
Դանելանց Պողոս *179*
Դանելանց Տատ *179*
Դանիել *429*
Դանիելյան Իսակ Արշակի 153
Դանիելյան Իսակ 535

Դանիելյան Սմբատ 513
Դանիէլ *177*
Դանիէլեանց Արղէմ *179*
Դանիէլեանց Գրիգոր *179*
Դաստան *527*
Դաւաք *162*
Դավթյանց Սարգիս, Գանձակի փոխանորդ 13, 108, 110, 111, 113, 115, 240, 254
Դավիթ 68, *87,* 103, 110, *111*, 115, *127*, 129, *170,* 245, 250, *282*, *297*, *306, 503,* 504, *534*
Դավիթ Անհողին 443
Դավիթ Գեղամեցի, գրիչ 91, 300
Դավիթ Դ, կաթողիկոս 129
Դավիթ Զ, կաթողիկոս 129
Դավիթ Շատախեցի, գրիչ 256
Դավիթ Շինարար, թագավոր 10, 25, 436, 443
Դավիթ Սուլան 506
Դաւիթեանց Եախշի Սարգիսեան *383*
Դաւլաթաւոր *250*
Դատունց (Տատունց) Յակոբ *179*
Դատունց (Տատունց) Ստեփան *179*
Դեմետրե Ա 25, 443
Դեմիրչյան Վարդեան 535
Դոնունց Գալուստ *179*
Դոնունց Դանէլ *179*
Դոնունց Սարգիս *179*
Դոնունց Ստեփան *179*
Դուլկարանց Տէր Սարգիս *528*
Դուլկարանց Տէր Ունան *528*
Դուլունց Գարեգին 345
Դուլունց Զորի 345
Դուստի *170*

## Ե

Եաղուբ *161*
Եաղուբ-օղլի 17, 98
Եավրի *341, 350, 352*
Եարամիշ 209
Եզիդ իբն Ուսայդ 506
Եզր Ա Փառաժնակերտցի, կաթողիկոս 18, 67, 78, 204
Եթար *169*, *397*
Եիժադանց վարդապետ *247*
Ելտկուզ 441, 443
Եկատերինա Ալեքսեևնա 30
Եղեսապետ *369*
Եղի *170*
Եղիա 96, *134*, 272, *349*
Եղիա, կազմող *397*
Եղիա Ա Արճիշեցի, կաթողիկոս 474
Եղիազար *135*, 398, *400,* 401
Եղիազար, կաթողիկոս 104
Եղիազարյանց Վ. 149
Եղիասաբէթ *111*
Եղիշ *163*
Եղիշե 533
Եղիսաբեթ 49
Եղիսաբետ *164*
Եղիսաբէթ *306*, *535*
Եղիսայիթեթ *173*
Եղիսապետ *60*
Եղյանց 59
Եղյանց Ստեփանոս 117
Եղոմ (Ղոթյուլ) *255*
Ենգիբարյանց Գ. 51
Ենգիբարյանց Հովհ. 51
Ենգիբարյանց Ղազարոս Տէր Հովսեփյան 56, 365
Ենիկոլոփյան Եփրեմ 116
Եպիսկոպոսեան Մովսէս - տե՛ս Եպիսկոպոսյանց Մովսես
Եպիսկոպոսեանց Արամ Տէր-Պողոսեան - տե՛ս Եպիսկոպոսյանց Արամ
Եպիսկոպոսեանց Արտաշէս Տէր-Պողոսեան *187*
Եպիսկոպոսեանց Տէր-Պողոս - տե՛ս Եպիսկոպոսյանց Տեր-Հովհաննիսյան Պողոս
Եպիսկոպոսեանց Թագուհի Տէր-Պետրոսեան *187*
Եպիսկոպոսյան Ռոստամ 337
Եպիսկոպոսյան Գարեգին 152
Եպիսկոպոսյան Մ. 149
Եպիսկոպոսյանց Աննա 172
Եպիսկոպոսյանց Արամ 172, *187*
Եպիսկոպոսյանց Արտաշես 172
Եպիսկոպոսյանց Գարեգին 172
Եպիսկոպոսյանց Թագուհի 172
Եպիսկոպոսյանց Հովհաննես 172
Եպիսկոպոսյանց Մարիամ 172
Եպիսկոպոսյանց Մարտիրոս 321, 396, 398, 401
Եպիսկոպոսյանց Մովսես 216, 229, 231, *263,* 513
Եպիսկոպոսյանց Շողակաթ 172
Եպիսկոպոսյանց Պողոս Տեր-Հովհաննիսյան 150, 151, 159, 172, *187*
Եպիսկոպոսյանց Սիմոն 172
Եսայան Ա. 53
Եսայանց Հովակիմ 51
Եսայի *306*, 136
Եվա 92, 100
Ետկար *90*
Երեմիա, կաթողիկոս 68, 98, 476
Երեմյանց Աստվածատուր 245
Երեմյանց Արշակ 245
Երեմյանց Արսեն 245
Երեմյանց Խաչատուր 245
Երեմյանց Հերիք 245
Երեմյանց Մարիամ 245
Երեմյանց Վարդան Ոսկանյան 245
Երիցանց Առաքէլ *189*
Երիցյան Ալ. 286
Երիցյան Հ. 46
Երկաթաքարյան 147
Երմոլով Ա. Պ. 363
Երքոմ *87*
Եուղուրլու խան 381, *382*
Եփրեմ 171, 196, 218, 226, *342,* 463
Եփրեմ Դավթյանց - տե՛ս Եփրեմ Խան
Եփրեմ Խան 475
Եփրեմ Խաչաբակցի 240
Եօխտուր *353*

## Զ

Զալխան *524*
Զամետին Դմիտրի 376
Զանազան *297*
Զանունք (Զաքարյաններ, Արզումանյաններ) 97
Զատ *527*
Զատիկ *274*
Զարեհ 9
Զարկարեանց Վիրապ *60*
Զարկարյանց Մկրտիչ *60*
Զարյան Արմեն 543
Զարյան Վալտեր 543
Զաքար *90*
Զաքարեան Գուլի *175*
Զաքարյան Զաքարե 68, 11, 506
Զաքարյան Իվանե 18, 25, 68, 118, 119, 506
Զաքարյան Վաղինակ Սիմոնի 393
Զաքարյաններ 10, 118, 205, 443, 506
Զաքարյանց Գ. 44
Զաքարյանց Ս. 44
Զիատխանով Աբաս-Ղուլի-Խան 29
Զիատխանով Աշրաֆ խան 498
Զիսիկ *291*
Զիրակ 204
Զնջիլղռան Ալի փաշա 28
Զոհրապ *528*
Զրկինյանց Եզնիկ Հարությունյան 52
Զուբով Վ. 30
Զուլկադարով Համիտ-բեկ 300
Զուլղադարով 66, 279, 283, 285, 298, 300, 301
Զուլղադարով Աղիլ-բեկ 299
Զուլղադարով Ալլահյար-բեկ 66, 72(ծ.), 73(ծ.), 87, 299, 459, 460
Զուլղադարով Մամադ բեկ 459(ծ.)
Զուլղադարով Մամարզա բեկ 459(ծ.)
Զուլղադարով Մեհրալի-բեկ 299

## Է


Էարիֆ փաշա 29
Էլմ *250*
Էհդիպար (Գետաշեն) *349*
Էյվազ *136*
Էյրի Ֆաքիհ սուլթան Մուհամմադ խան 29
Էնալ *346*
Էնվեր 33
Էվազ *90*, 124
Էվատ *254*
Էվխտրինա *173*
Էտզար *369*
Էտզայր *346*
Էտկար *46*
Էքի *291*


## Ը


Ըղպաք *249*
Ըոլստում - տե՛ս Առուստամ
Ըսկընդարանք (Իսկանդարյաններ) 533
Ըստեփան *526*
Ըվալանք (Ավալյաններ) 533
Ըրիցանք (Երիցյաններ) 533


## Թ


Թազուհի *91*, *153*, 159, *342*
Թաղեոս 101
Թազախ Ախմետ օղլի 376
Թաթողլի - տե՛ս Օհանյան Գ.
Թալասում *308*
Թահիր 98
Թահմազ 30, *305*
Թահմաս Ա 494
Թաղի յուզբաշի 16(ծ.)
Թաճում (Կրզեն) *297*
Թամազ *207*
Թամամ *294*
Թամար 51, *527*
Թամար, թագուհի 443, 506
Թամրազ 68, *401*, *475*
Թամուրազ 29
Թամուր խան *87*
Թայիրեանց Աղէքսանդր Մկրտչեան - տե՛ս Թայիրյանց Ալեքսանդր
Թայիրյանց Ալեքսանդր 233
Թայիրյանց Կարապետ 207, 254
Թանկրղուլ *338*
Թանղրիվերդի 289, 290
Թանղրվերտի - տե՛ս Թանղրիվերդի
Թաջում *166*
Թառան *291*
Թառումյանց Հ. 44
Թասալի Իսրումի Աստապատեցի 48
Թաւաքալեանց 216
Թավաքալյան Համբարձում 122
Թավաքալյանց Բագրատ, Գանձակի փոխանորդ 13
Թաւրոս *168*
Թարի *247*
Թարխանեանց Սարգիս *297*
Թափուկն *346*
Թեզա *528*
Թեմուրյանց Ա. 51
Թեոդորոս, Աղվանից կաթողիկոս 204
Թէլի *189*
Թիզունց 533
Թիլնա խաթուն *308*
Թիւրայմիշ *390*
Թման *535*
Թյուլլի-Արզուման - տե՛ս Արզուման յուզբաշի
Թյունի 336
Թոքիկ *297*
Թորոսանց Խաթուն *179*
Թորոսանց Ճաւահիր *179*
Թորոսանց Մարդիրոս *179*
Թորոսանց Սանդուխտ *179*
Թորոսանց Սապետ *179*
Թորոսանց Ուման *179*
Թորոսանք (Թորոսյաններ) 532
Թորոս Արնեւցի 26
Թրվէտ *369*
Թուխանանք (Թուխանյաններ) 532
Թումադյան Գ. 46
Թուման *254*
Թումանյան Հ. 533
Թումանյանց Գարեգին 238
Թումանյանց Գր. 45, 51
Թումանյանց Ս. 44
Թումանով Համբարձում 74(ծ.)
Թումիկ *482*
Թօրչի *169*
Թօրօսանց Ասար *179*
Թօրօսանց Օհանէս *179*


## Ժ


Ժամհարյան եղբայրներ 47
Ժորդանիա Ն. 34


## Ի


Իբն-ալ-Ասիր 25
Իբրահիմ խան 30, 318, 507
Իբրահիմ փաշա 30
Իզնատիոս 268, *338*
Իշխանեանց Յոհանջան *484*
Իչիպէկ *297*
Իսախան *248*
Իսահակյանց Աղաջան 51
Իսկանդար *528*
Իսկենդերով 203(ծ.)
Իսմայիլ ամիրա 24
Իսմայիլով Գ. 233
Իսպատիար *250*
Իսրաէլ *352*
Իսրայել 50, 226
Իսրայելյան (Դդոնունց) Համբարձում Խաչատուրի 152
Իսրայելյան Հովհաննես 203
Իսրայելյան Ռաֆայել 203
Իսրայելյաններ 334
Իվանե Օրբելյան 436
Իվանովսկի Ա. 67, 510
Իփար *465*


## Լ


Լազարյան 41
Լազարյան Մ. 49
Լազարյանց Լազար Էմմանուելյան 427, 430
Լազարև Լ. 23
Լալայան Երվանդ 17, 48, 106, 204, 245, 338, 356, 394, 396, 407, 408(ծ.), 418, 481(ծ.), 505, 512
Լալայանց Կարապետ Պողոսյան 225
Լանկթամուր 218, 310
Լաշա *420*
Լապիկ Միխայիլ Ֆեոդորովիչ 514
Լիպսկի 73(ծ.)
Լիսիկյան Հ. 49
Լղար երեց 49
Լնիցկի 289


## Խ


Խաղիմ Հասան փաշա 19
Խաթուն *90*, *91*, *296*, *307*, *342*, *524*, *538*
Խալիփեանց Մայան *180*
Խալիփեանց Ստեփան *179*
Խալիփեանց Պողօս *179*, *180*
Խամբիկ *268*
Խամփար *87*
Խայոմբեն՚շ *127*
Խանբուդաղով Յուսուփ բեկ 284
Խանեկ *169*
Խանի *49*, *88*
Խան-Խոյսկի 33
Խանում *306*, *308*, *405*, *524*
Խանփար *465*
Խաչայտիր կազմող - տե՛ս Խաչատուր կազմող
Խաչայտուր *297*
Խաչատրյան 447
Խաչատրյան Համազասպ 76
Խաչատուր 33, 68, *186*, 241, 250, *353*
Խաչատուր, կազմող *290*, *291*, *292*, *293*, *294*
Խաչատուր վարդապետ, Գանձակի փոխանորդ 12, 254
Խաչատուրյան Ա. 48, 49

Խաչատուրյան Կիրակոս 403(ծ.), 412(ծ.)
Խաչատուրով Պետրոս 74(ծ.)
Խաչքուլաղյան Դավիթ 233
Խաչեսիր *391*
Խաչերես *442*
Խաչիկ *521*
Խաչիկյան Լ. 493(ծ.)
Խաչում 233
Խաչումեանց Գալուստ Սողոմօնեան 314, 369
Խասիբէկ *297*
Խասմամեդով Խուդեդան բեկ 508
Խաստրաւ *240*
Խավեն 363
Խաւջա *315*
Խարայնախ *315*
Խարասնգուր 25
Խեչում *170*, *524*
Խլազիզ (Ալազիզ) 40
Խոնդզար*171*
Խոնի *346*
Խոջայան 41
Խոջայան Շախանում 344
Խոջայան Պավել 476, 484
Խոջայանց Հայկ 266
Խոջայանց Հայկանուշ 266
Խոջայանց Հովհաննես Ոսկանյան 117, 263, 266
Խոսրով 474
Խոսրով 61, 62, *251*
Խորեն *127*
Խչովանք 533
Խրզանանք 533
Խրիմյան Մկրտիչ, կաթողիկոս 52, *316*, 461, 472
Խուհտուղտի 25, 26
Խումար *225*
Խուրս իշխան 212, 239
Խօստրով *170*

## Ծ

Ծաքր *349*
Ծաղիկ 480
Ծանունք (Ծանյաններ) 97
Ծապովեանց Կարապետ *180*
Ծապովեանց Հռիփսիմէ *180*
Ծապովեանց Յովհաննէս *180*
Ծապովեանց Սառա *180*
Ծատերեանց Գրիգոր *383*
Ծատրեան Եղսապէտ *383*
Ծատուր 88(ծ.), 103(ծ.), *268*, 282, *292*
Ծատուրեանց Անտօն *297*
Ծատուրեանց Յարութիւն *297*
Ծարուր *267*
Ծերատյանց Արշակ 466, *467*
Ծերատյանց Պողոս *465*, 466, 467
Ծիրալյան 39
Ծտորանք (Ծատուրյաններ) 533

## Կ

Կայինա *91*
Կամսարական Մանաս-բեկ 431
Կամսարականներ 431
Կանան *245*
Կատավնէսանց Սարգիս *352*
Կարապետ *97*, 96, *189*, *284*
Կարապետ, կաթողիկոս 103, 104, 115
Կարապետյան Պողոս 151
Կարասունկար 25
Կարբելաշվիլի Դ. 287
Կափռէլ *189*
Կիւլխանում *240*
Կիրակոս 100, *528*
Կիրակոս Գանձակեցի 119
Կյուրիկե Ա 245
Կյուրիկյան Ախարթան 444
Կյուրիկյան Բագրատունիներ 10
Կյուրիկյաններ 245
Կոզնովիցկի Ի. Օ. 41
Կոստանդ Շամքորեցի 240
Կոստանյանց Կ. 110
Կոտլյարևսկի Պ. 63, 64
Կորգի 50
Կորկոտյան Զ. 531
Կտրիճ Սևորդացի 10
Կուբադ Բին-ֆիրուզ 23, 29
Կուլիև 58
Կուկունյան Սարգիս 476
Կուրջունց Ապրիամ *180*
Կուրջունց Գրիգոր *180*
Կուրջունց Կարապետ *180*
Կուրջունց Մկրտիչ *180*
Կուրջունց Սաքետ *180*

## Հ

Հախնազար *90*, *350*, *352*, *465*
Հախվերդյանց Հռիփսիմե 429
Հախվերդյանց Նիկողայոս 429
Հակոբ 79, 100, 129, 457
Հակոբ, կաթողիկոս 104
Հակոբյան Հ. 63
Հակոբյանց Ս. 152
Համբո 336
Համազասպյանց Անանիա, Գանձակի փոխանորդ 13, 14, 339, 376, 448
Համզա *254*
Հայ Բագրատունիներ 10
Հայեաք *391*
Հայրապետ *127*, *247*, *306*, *538*
Հայրյանց Իշխան 274
Հայրումյանց Բաբայան Գ. 44
Համազասպ 33
Համամ *168*
Համասփյուռյանց Թադվերան 51
Համասփյուռյանց Պետրոս 51
Համասփյուռյանց Պողոս 38, 44, 51
Համբո 361
Հայրումյան Ջիրավարդ 354
Հայրունի Աշոտ 72(ծ.)
Հանեփ Մամատ Ալի օղլի 376
Հանէս *90*
Հաջի 30
Հաջի Աբբաս 71
Հաջի Ամիրխան 290
Հասան *240*, *315*
Հասան խան 511
Հասան Հյուսեին օղլի 376
Հասանանք *305*
Հարություն *50*, 129, 403, 416
Հարությունյան Արա 203
Հարությունյան Խաչատուր 344
Հարությունյան Հովսեփ 58
Հարությունյան Հռիփսիմե 171
Հարությունյան (Լկանունց) Վարդանուշ Վիրաբի 152
Հաուպտ Լեհման 72, 78, 117
Հեթում *250*
Հելենա Պավլովնա 363
Հերակլ Բ 30, 88, 133, 321, 322, 474, 486, 507
Հէղինե *291*
Հէրիք *297*
Հիւրխան *248*
Հոռում *369*
Հովասափ երեց, գրիչ 91
Հովհան Մայրագոմեցի - տե՛ս Հովհան Մայրավանեցի
Հովհան Մայրավանեցի 67, 78
Հովհաննես 40, 68, 129, 197, 480, 483, 486, 506
Հովհաննես, գրիչ 68, 81, 110, 124, 241
Հովհաննես, կաթողիկոս 12, 48, 102, 204, 255, *420*, 493
Հովհաննես Շատախեցի, գրիչ 140, 250
Հովհաննես Տուեցի 506
Հովհաննես-Սենեքերիմ 10
Հովհաննիսյան 41
Հովհաննիսյան Եգոր - տե՛ս Հովհաննիսյանց Յագոր Գրիգորյան
Հովհաննիսյան Թևոս 159
Հովհաննիսյան Հովհ. 152, 404
Հովհաննիսյանց Ա. 44
Հովհաննիսյանց Աղեքսանդր Յագորի (Եգորի) 160, *181*
Հովհաննիսյանց Ղահրաման Ս. 40, 61
Հովհաննիսյանց Յագոր Գրիգորյան 151, 160, *181*
Հովհաննիսյանց Ստեփան 152

Հովսեփ 398, 401, 486, 533
Հռիփսիմե 92
Հռիփսիմէ *405*
Հռում *165*
Հռոմ *306*
Հրայպէտ *291*
Հրապետ*264*
Հրապետանց Ղիլի *182*
Հրապետանց Մկրտիչ *182*
Հումիճան *292*
Հունանյան Մ. 39
Հուռում *171, 291*
Հուռումսիմ *135, 165*
Հուռիփսիմ *254*
Հուսեյն խան Զիյադօղլի Կաջար 28
Հուսեյն Ա, շահ 68
Հուսեյնով Մ. 440

## Ղ

Ղազան *240*
Ղազանչեանց Միքայէլ Սարգսեան *307*
Ղազանչեանց Սարգիս Ա. *307*
Ղազար 91, *135, 206,* 241, *292, 306, 346, 382, 385, 523*
Ղազարյան Ե. 44
Ղազարյան Նիկոլայ 472, 473, 474, 485
Ղազարյանց Մակի 448
Ղազարվան *527*
Ղազար-օղլի 17
Ղազվինի 23
Ղալապեկ 408
Ղալեչյանց Մարտիրոս 198
Ղահրմանանք (Ղահրամանյաններ) 533
Ղամար-Սուլթան *312*
Ղասում *291*
Ղավալ Մկրտիչ *182*
Ղավալանց Գրիգոր *182*
Ղավալանց Զաքար *182*
Ղավալյան Ավետիս Գրիգորի 153
Ղարաման իշխան 103
Ղարա Մուրադ *90*
Ղարա Մուրատ 91
Ղարա-Յուսուֆ 23
Ղարիպ խաթուն *165*
Ղզարանք (Ղազարյաններ) 532
Ղևչունք 533
Ղլպուղյան Կ. 44
Ղոխմազ *465*, 525
Ղումաթ *162*
Ղրղաշանք (Ղարաղաշյաններ) 97
Ղուլիխան *249*
Ղուլունց 533
Ղուլունց Աւետիս *182*
Ղուլունց Արութիւն *182*
Ղուլունց Գրիգոր *182*
Ղուլունց Եղի՝ որդի Արութիւնի *182*
Ղուլունց Եղի՝ որդի Գրիգորի *182*
Ղուլունց Համբարձում *182*
Ղուլունց Հոռումսիմ *182*
Ղուլունց Մարեամ *182*
Ղուլունց Յարութիւն *182*
Ղուլունց Յովհաննէս *182*
Ղուլունց Շող *182*
Ղուլունց Պօղոս *182*
Ղուլունց Սահակ *182*
Ղուլունց Սըհար *182*
Ղուկաս *90*
Ղուկաս երեց, գրիչ 91, 97
Ղուկասյան Սահակ 530
Ղուկասյանց Ալեքսանդր 59
Ղուկասյանց Աղեքսանդրյան Ն. 53, 56
Ղուկասյանց Մարիամ 59
Ղուկասյանց Նիկոլայ 59
Ղուկասով Վ. 287

## Ճ

Ճալլաղեանց Գրիգոր Յարութիւնեան *185*
Ճաղարանց Միրզա *373*
Ճաղարանց Յօհանէս *373*
Ճավճավաձե Ն. Զ. 32
Ճենեմշե *348*
Ճիւանշա *292*

## Մ

Մաբղի - տե՛ս Մաւրղի
Մաղաքյան Մամիկոն 433
Մաղաքով Վ. Գ. 31, 507, 508
Մաղունք 532
Մաթե *165*
Մաթեվոսեան (Մելիք-Մաթեվոսեան) Մամիկոն Արտեմի *183*
Մաթիոս *274*
Մաթոս *167*, *528*
Մալխասյանց Անտոն Գրիգորյան 216
Մալխասյանց Եղիսաբեթ Համբարձումյան 271
Մալխասյանց Ստեփանոս 271
Մալյանց Հ. 46
Մահմեդ (Միսկինլիի տանուտեր) 72
Մակասար *113*
Մակար Ա Թեղուտցի, կաթողիկոս 232, 240, 264, 383
Մակթաղ, *225*
Մակիչ 122
Մահի *163*
Մահմադ-խան 318
Մահմեդ աղա Արուլ-բեկ օղլի 234, 318
Մահմեդ-Միրզա 507
Մախտեսեանց Սիմոն *340*
Մաղազ *268*
Մաղալով 508
Մաղակիա *491*
Մաղաք *483*
Մաղաքիա 504
Մաղաքյանց Հովհաննես 482
Մաղաքյանց Մովսես 482
Մամադ բեկ 87
Մամախաթուն *127*
Մամարզաբեկ 87
Մամեդ 73(ծ.)
Մամեդով Գ. 138
Մամեդովա 20
Մամետ Հասան Ալլահվերդի օղլի 108(ծ.)
Մամիկոնյան Տեր Գալուստ 265
Մամիկոնյանց Ա. 51
Մամիկոնյանց Հարություն 482
Մամիկոնյանց Հովհաննես 266
Մամիկոնյանց Պողոս 472
Մամիկոնյանց Տեր-Գալստյան Մովսես 75, 266
Մամխաթուն *290*
Մամռուտ, իշխան 103
Մայիլյան 463
Մայիլյանց Ղ. 49
Մայրխաթուն *134*
Մանաս *393*
Մանասյան Գուրգեն 513
Մանասյանց Գևորգ Տեր-Ստեփանոսյան 514, 517
Մանասյանց Հ. 488
Մանգասարյան Հակոբ 463
Մանիչարանց Արութիւն *239*
Մանիչարանց Շահզիլ *238*
Մանիչարանց Պարոնեան *238*
Մանիչարանց Պողոս *238*
Մանուէլ *110*, *225*
Մանուշակեան Խաչատրեան Գրիգոր *153*
Մանուշակեանց Ազիզ *182*
Մանուշակեանց Խաչատուր *182*
Մանուշակեանց Հանէս Պողոսեան *182*
Մանուշակեանց Մարանոս *182*
Մանուշակեանց Պողոս *182*
Մանուչարյանց Գալուստ 508
Մանուչե 24
Մասլուկ *315*
Մաւրղի *164*
Մատթեոս, կաթողիկոս 46
Մարգարանց Հոնան *239*
Մարգարեանց Դաւիթ *297*
Մարգարիդ *391*
Մարգարիտ *136, 245, 297*
Մարգարյան Թանան 514
Մարգարյան Ջահան Խաչատուրի 514, 518
Մարեան *166, 167, 267, 307, 351, 369,*

*398*, *524*
Մարիամ *225*, *528*
Մարիան *136, 382*
Մարինեանց Մկրտիչ *491*
Մարկոս *398*
Մարյան *161*
Մարչենկո 56, 376
Մարտիրոս *254*, 361, 362
Մարտիրոսյան Ալեքսանդր 513
Մարտիրոսյան Հ. 39
Մարքարիտ *152*, *306*
Մելիգքի 387
Մելիք 25, *248*
Մելիք-Առուստամ 50, 467, 468
Մելիք-Առուստամյանց Եփրեմ Գրիգորյան 468, 471, 472, 475
Մելիք-Առուստամյանցներ 11, 207, 254, 262, 467-468
Մելիք-Բաբայան Կարապետ 240
Մելիք-Բեգլարյան Լուարսաբ 379
Մելիք-Բեգլարյան Հովսեփ-բեկ 49
Մելիք-Բեգլարյանց Պ. 366, 379
Մելիք-Բեկլար 411(ծ.)
Մելիք-Բեկլարեանց Աղէքսանդր բեկ *383*
Մելիք-Բեկլարեանց Թեմուրազ բեկ *383*
Մելիք-բէկ *538*
Մելիք Գաբրիել 407
Մելիք Եավրի 407, 411(ծ.)
Մելիք-Իսրայելյան 447
Մելիք Հաթամ 50
Մելիք Հախնազար 250, *264*
Մելիք-Հախիջանյան Շ. 46
Մելիք-Հախիջանով Ավրամ-բեկ 60
Մելիք Հովսեփ 321, 322
Մելիք Հովսեփ Ա 407, 408
Մելիք Հովսեփ Բ 407
Մելիք Հովսեփ Գ 407, 408, 411(ծ.)
Մելիք-Հովսեփյան Մանաս-բեկ 367(ծ.)
Մելիք-Հովսեփյաններ 426
Մելիք Ճալալ *86*, 87
Մելիք-Մաքէոսանց Ղեւանդ *183*
Մելիք-Մաքէոսանց Միրզա *183*
Մելիք-Մաքէոսանց Յարութիւն *183*
Մելիք-Մաքէոսանց Պողոս *183*
Մելիք-Մաքէոսանց Վարքի *183*
Մելիք-Մատթէոսեանց Մկրտիչ *183*
Մելիք-Մատթէոսեանց Շողազաք Ներսէսեան *183*
Մելիք-Մաքէվոսանց Խանում *183*
Մելիք-Մաքէվոսանց Հռիփսիմէ *183*
Մելիք-Մաքէվոսանց Մաքէոս *183*
Մելիք-Մաքէվոսանց Մամիկ *183*
Մելիք Մեջլում 30, 31, 50
Մելիք-Մնացական 50
Մելիք-Մնացականյաններ 11, 334, 344
Մելիք Նազար 11
Մելիք Շահնազար 407
Մելիք-Շահնազարյան Նազար 427, 430
Մելիք-Շահնազարյանց Ջավադ-բեկ 468, 475
Մելիք Ոսկան 406, 407
Մելիք Ջհանկիր (Կրզեն) *297*
Մելիք Սարգիս 100, 278
Մելիքսէթ *538*
Մելիք Պաք *216*
Մելիք-Սարգսյաններ 278
Մելիք-Ստեփանյան 58
Մելիքյան Մելիք 203
Մելիքյան Սողոմոն *233*
Մելիքյան Տիգրան *233*
Մելիքյանց Հովհաննես-բեկ 51
Մելիքշահ սուլթան 24
Մելիքսեթ 100
Մելիքսեթյան Արշակ 152
Մելիք-Քալանթարյաններ 530
Մելիք Օվանես 100
Մելքոն, կազմող *111*
Մելքոնյան Կարապետ 122
Մելքոնյան Վ. 46
Մելքում 136, *382*
Մելքումյան Բենիկ 312
Մեխով եղբայրներ 70
Մեհրաբ *528*
Մեղրյան Շահեն 541, 542
Մեռզեանց Թագուհի *183*
Մեռզեանց Սարգիս *183*
Մեսրոպ Մաշտոց 402, 440
Մեվես Վ. 14, 15, 20, 359, 494, 505
Մէլիք *291*
Մէլիք Աղաճան 278
Մէլիք Աղապէկ *312*
Մէլիք Դոնմազ *465*
Մէլիք Եոկեար *312*
Մէլիք Թամազ *341*
Մէլիք-Իսրայելեանց *183*
Մէլիք-Իսրայելեանց Դշխո *183*
Մէլիք-Իսրայելեանց Օհան Աւագեան *183*
Մէլիք-Ծատուրեանց Գալուստ Յարութիւնեան *183*
Մէլիք-Իսրայելեանց Դշխո *183*
Մէլիք Հախնազար *278*
Մէլիքճան *346*
Մէլիք Պաղի *312*
Մէլիք Սիմաւոն 250
Մէլիք Օսէփ *41*
Մէլիք Օվանէս *173*
Մէլիք Քամալ 278, *350*
Մէլիք Քեամալ - տե՛ս Մէլիք Քամալ
Մէլքէմ *312*
Միհրանյան Վարդան 204
Մինաս *111*
Մինաս, կաթողիկոս - տե՛ս Տրդատ, կաթողիկոս
Մինասյան Ա. 531
Միսայէլ *315*
Միրաբով Մամետ Ալի-Հյուսեին օղլի 59
Միրաբով Մաշադի Մամետ-Ջափար 59
Միրան *290*
Միրզա *87*, 88, 173, *305*
Միրզա, կազմող *465*
Միրզա Աղա *525*
Միրզա Հուսեյն Ռաֆֆի-զադե 33
Միրզա Միրզախան 113
Միրզաեանց Արտեմ *183*
Միրզաեանց Մկրտիչ *183*
Միրզաեանց Յոհանէս *192*
Միրզաեանց Սեհրի *192*
Միրզա Ղասում 278
Միրզայճան *83*
Միրզա Ներսեսով 31
Միրզոյան 262
Միրզոյանց Ա. 375
Միրզոև 541, 542
Միրիմանյանց Հարություն 336
Միրիմանյանց Ստեփան 265
Միրումյան Ջավահիր 59
Միրումյանց Հովհ. 57
Միքայել, իշխան 47
Միքայել, Աղվանից կաթողիկոս 506
Միքայել յուզբաշի 344
Միքայէլեանց Խալլու *184*
Միքայէլեանց Սարգիս *184*
Մխիթար 110, *134, 245,* 247, *267, 315, 346, 358, 369* , *390, 420, 535*
Մխիթար, գրիչ 100, 101
Մխիթար Աղճաղալեցի 207
Մխիթար Գոշ 26, 473, 486, 545
Մխիթարիչ 26, *420*
Մկըրտիչ բէկ *348*
Մկրտիչ 50, 60, *112,* 113, 115, 250, *255*, *316,* 398, *400,* 401
Մկրտիչեան Մկրտիչ *153*
Մկրտում *405*
Մկրտչյան Մեխակ Եփրեմի 153
Մկրտչյան (Ըբրուզունց) Էմմա Մկրտչի 153
Մյասնիկյան Ալ. 497
Մոլար Նուին 436, 444, 507, 510
Մովսես 268
Մովսես, կաթողիկոս 102, 129
Մովսես Կաղանկատվացի 509
Մովսէս *102*
Մովսէս աղա *211*
Մովսիսյան (Մուսունց) Կարեն Արշակի 153

Մովսիսյան (Մուսունց) Հայկուհի Համբարձումի 152
Մռավյանց Եղիազարյան Հարություն 56
Մրթուզա Ղուլի խան 29
Մուհամմեդ 29
Մուհամմեդ իբն Խալիդ 23
Մուհաննես-Տափար սուլթան 25
Մունթունց Եփրեմ *153*
Մուշեղյանց Գրիգոր վրդ., Գանձակի փոխանորդ 13
Մուսայելյանց Ղահրաման 335
Մուսէս *90, 130*
Մուսունց Մնացական 145
Մուրադ *338*
Մուրադ, սուլթան 27, 480
Մուրադյան Իգոր 546
Մուրադյան Մելիքսեդեկ արքեպս., Կ.Պոլսի պատրիարք 228
Մուրթուզա Ղուլի խան *267, 382*
Մուքէլեանց Բէգլար *184*
Մուքէլեանց Ջառի *184*
Մուքէլեանց Խաչատուր Ղեւոնդեան *184*
Մուքէլեանց Յոհաննէս *184*
Մուքէլեանց Ստեփան *184*
Մօնթունց Անա *183*
Մօնթունց Սարա *183*
Մօնթունց Սարգիս *183*
Մօնթունց Պետրոս *183*


## Յ


Յազիդ իբն Մազիադ 505
Յաքամ բէկ *182*
Յակոբ 268, *305*, *352, 442*, *526, 528*
Յակոբեանց Գրիգոր *181*
Յակոբեանց Ղազարեան Ստեփանոս *181*
Յակոբեանց Վիրաբեան Սարգիս *157*
Յակոբեանց Օհան *181*
Յակոբջան *321*
Յակովբ քահանա *316*
Յավրիբեկ - տե՛ս Մելիք Եավրի
Յարայմիշ *223*
Յարութ *526*
Յարութիւն *350, 352*
Յարութիւնեան Գրիգոր *217*
Յարութիւնեան Ջառ *187*
Յետկար *350*
Յոհան 204, *297*
Յոհանէս *291*
Յոհաննէսեանց Աղէքսանդր Եգորեան - տե՛ս Հովհաննիսյանց Աղեքսանդր Յագորի
Յոհաննէսեանց Յոհաննէսեան Սերգի *181*
Յովանէս *60,* 357
Յովաննիս *232*
Յովհան *268*
Յովհանեան *297*
Յովհաննէսեան Վիրաբեան Զաքար *182*
Յովհաննէսեան Վիրաբեան Միքայել *182*
Յովհաննիսեան Գրիգորեան Եգոր - տե՛ս Հովհաննիսյանց Գրիգորյան Յագոր
Յովհաննիսեան Վարթուհի *153*
Յուանէսեանց Մաքքաղ *181*
Յուանէսեանց Ստեփան Գրիգորեան *181*
Յուզբաշյանց Գրիգոր 447
Յուհան, կազմող *350*
Յուհանէս *358*
Յունան - տե՛ս Ունան, կազմող
Յուսէփ *291*
Յուրացխան *358*
Յօհաննէս *353*
Յօվանէս *162*
Յօվսէփան *111*


## Ն


Նաբաթյան եղբայրներ 59
Նաբաթյան Մ. 49
Նաբի 64
Նադիր, շահ 11, 30
Նադիրանց Առուշան *184*
Նադիրանց Հերիքնազ *184*
Նադիրանց Յեղնան *184*
Նադիրանց Սահակ - տե՛ս Ղուկասյան Սահակ
Նադիրանց Սառա *184*
Նադիրանց Տէր Գրիգոր - տե՛ս Նադիրյանց Տեր Գրիգոր
Նադիրյանց Տեր Գրիգոր 171, *184*
Նադիրյանց Սիմոն 152
Նազար 241, 250, *346*
Նազար - տե՛ս Մելիք Շահնազար
Նազարյան Մուխի (Մուխայիլ) 535, *536*
Նազարյանց Էմմանուել քահանա 48, 52
Նազարյանց Մարգարիտ 60
Նազարյանց Քասպար 60
Նազլխան *177*
Նազլուխան *465, 528*
Նազխաթուն *521*
Նազրան *482*
Նալչազարեանց Սողոմոն Յարութիւնեան *249*
Նալպանդեանց Պարսեղ *184*
Նալպանդեանց Սապետ *184*
Նահապետ կաթողիկոս 104
Նանասյան 38
Նանե *350*
Նավասարդ 91
Նաւասարդ *173*, *535*, *538*
Նաւասարդ աղա 401
Նատար *255*
Նարժափ Մամատ օղլի 376
Նարիմանով Ի. 233
Նարկիզ *264, 290*
Նեյմատովա 20
Ներկարարյանց - տե՛ս Նրկարարանց, Նրկարարեանց
Ներսես Ե Աշտարակեցի, կաթողիկոս 265
Ներսէս, Աղվանից կաթողիկոս *50, 111,* 204
Ներսէս *482*, *504, 524*
Նիազ (Գետաշեն) *338*
Նիկոլայ II 498, 502
Նիկոլսկի 510
Նիկողայոս 378
Նիկողոսյանց Սարիբեկ 461
Նրկարարանց Հերիք *184*
Նրկարարեանց Գալուստ *184*
Նրկարարեանց Խաչատուր *184*
Նրկարարեանց Վիրապ *184*
Ներսես 49, 110, 115, *255*
Նրկարարեանց Կոստանդ Գալըստեան *152*
Նրկարարեանց Մկրտիչ Գալստեան *152*
Նուբո 78
Նուրի փաշա 33, 35
Նուրինյանց Եսայի 442
Նփադիան *127*


## Շ


Շահ-Աբաս 11, 23, 24, 28, 29, 41(ծ.), 63, 91, 102, 212, 241, 268, 286, 300, *391,* 407, 467, 494, 504, 507
Շահ-Ապազ- տե՛ս Շահ-Աբաս
Շահբազբեկով 58
Շահզեղանյանց Մկրտիչ 514, 515
Շահզեղանյանց Մուսայել 514
Շահեն 513
Շահզադ *90*
Շահ Թահմազ 29
Շահմէլիք խաթուն *315*
Շահմուրադյանց - տե՛ս Շահմուրադանց, Շահմուրադեանց
Շահմուրադանց Գրիգոր *184*
Շահմուրադանց Կարապետ *184*
Շահմուրադանց Սարգիս *184*
Շահմուրադեանց Զանի *184*
Շահմուրադեանց Մինաս Գրիգորեան *184*
Շահմուրադեանց Վիրապ Յակոբեան *184*

Շահմուրադյանց Զաքար 140, *185*
Շահմուրադյանց Միքայել 152
Շահնազար *382*, *521*, *527*
Շահնազարեանց Մելիք-Մովսէս *216*
Շահնազարեանց Տէր Աբրահամ *216*
Շահնազարյան Մարտիրոս Արշակի 470
Շահնազարյաններ 407
Շահնազարյանց Տեր-Խաչատրյան Գալուստ 266
Շահնազարով Մելիք 74(ծ.)
Շահնազարով Սարգիս 74(ծ.)
Շահպազ *528*
Շահսվար *163*
Շահվերդի, խան 321, 322, *342,* 507
Շահվերդի, սուլթան 27
Շահր Վարազ 474
Շահէֆ *249*
Շահսուվարյան Ալեքսանդր 44
Շահսուվարյանց Ավետիս 44
Շահսուվարյանց Ավետիք Կարապետյան 47, 56
Շահսուվարյանց Սիրանուշ 44
Շահում *171, 255*
Շահումեանց Անա *185*
Շահումեանց Աստղիկ *185*
Շահումեանց Գրիգոր Յակոբեան Տէր-Յարութիւնեան *185*
Շահումեանց Ստեփան Յարութիւնեան *185*
Շահումեանց Յակոբ Տէր-Յարութիւնեան *185*
Շահումեանց Սապետ *185*
Շահումյան Ստեփան 34
Շաղակ *127*
Շաղոսկի *166*
Շամի Սաքի 156
Շամիլ 286
Շամխորսկի Հասան բեկ 518
Շամխորսկի Մուսախան 487, 495
Շամխորսկի Ռուստամ բեկ 518
Շանթր 62
Շատալին 368
Շարիֆով Դ. Մ. 241
Շաֆիբեկով Մելիք Մահմեդ-բեկ 423, 426
Շաֆիրեկով Մուստաֆա-բեկ 423, 426
Շեղդադյան հարստություն 10
Շեպիլը Ալ. 71, 72
Շիրազ *87*
Շիրակունի Տեր-Թեոդորոսյան Անանիա (Սմբատ) 36, 52, 56, 238, 376
Շիրակունի Թեոդորոս 52, 105, 106, 108, 117, 218, *222,* 227, 228, 229, 230, 231, 309-310, 365
Շիրակունի Հովհաննես, Գանձակի փոխանորդ 13
Շիրին (Մարտունաշեն) *389*
Շնառը *165*
Շպաք - տե՛ս Ըղպաք
Շուլց Ֆ. Է. 212, 394
Շուշանանք (Շուշանյաններ) 533
Շուշանյան Ալիխան 532
Շուշանյան Ամիրխան 532
Շուշանյան Սողոմոն 532

## Ո

Ոհան *170, 369*
Ոհանէս *391*, *521*
Ոսկան 100, 136, *162, 171*, *338*
Ոսկի *397*
Ոսկյան Հ. 78, 107
Ոսպէտ *291*
Ոստան 91
Ովան 100
Ովանէս *90*, *351, 356*, *415*
Ովանէս, կազմող *168*
Ովնան *171*
Որոյ խան *491*

## Չ

Չալումյան Մարտիրոս 173, 198, 546, 547
Չալումյան Սաբեթ Վարդազարի 152
Չապլից 409
Չարմաղան Ղատաղան-նոյին 27(ծ.), 68, 119, 507
Չելյայև 322
Չիլինգարյան Սարիբեկ Սողոմոնի 532
Չիլինգարյաններ 334
Չիլինկարեանց Թումար *185*
Չիլինկարեանց Մկրտիչ Այվազեան *185*
Չխենկելի Ա. 508
Չոլի զորապետ 26
Չոփուռանց Ալէքսանդր *185*
Չոփուռանց Մկրտիչ *185*
Չոփուռեանց Միքայէլ Եսայեան *185*
Չոփուռյանց - տե՛ս Չոփուռանց, Չոփուռեանց

## Պ

Պալ *264, 306, 391, 465*
Պաղտասար, կազմող *111*
Պահալու *171*
Պաղ *524*
Պաղդասարանց Վանես *175*
Պայ 124
Պապ *254, 538*
Պապայճան *346*
Պապաջան *240*
Պապաս *528*
Պապիկյանց Անտոն Վերդյան 272
Պապին Ավետիս 73(ծ.)
Պապյանց Արամ Անտոնի 274, *275*
Պապում 233, *353*
Պապունց Գագո - տե՛ս Վանյան Գագիկ Մակիչի
Պաջին *122*
Պառավյաններ 334
Պասկևիչ 508
Պաւզ *167*
Պաւլի-խան 366
Պաւղոս *420*
Պատի 415
Պատօ պէկ *312*
Պարեշ *166*
Պարթև 299
Պարխուտար *112*
Պարոն *90*
Պարոն Գիւղին *249*
Պարոնյանց Հակոբ Հովակիմյան 375, 376
Պարոնտեր 79
Պարսեղ *189*
Պատկանյան Մ. 23
Պեկինխան *491*
Պետրում բեկ *113*
Պետրոս 85, *305*, *350, 352,* 474
Պետրոս, կաթողիկոս 68, 100, 111, 129, 204, 241, 254, *267, 381*
Պետրոսեանց Արմաղ *188*
Պետրոսեանց Յոսէփ *188*
Պետրոսյան Աշոտ 533(ծ.)
Պետրոսյան Հրանտ 367
Պետրոսյան Ղուկաս 324
Պետրոսյան Մամիկոն 541, 542
Պետրոսյան Քամալ 336
Պետրով Իվան 461
Պէկաջ *254*
Պէկխուլթան *339*
Պէկում *297*
Պլինիոս Ավագ 9
Պողդադար *240*
Պողոս *122,* 398, 401, 486
Պողոսանց Կարապետ *185*
Պողոսանց Մաքթաղ *185*
Պողոսանց Պօղոս *185*
Պողոսեանց Հանես *185*
Պողոսեանց Մարտիրոս *185*
Պողոսյանց Հարություն (Արտեմ) Տեր-Բարսեղյան, Գանձակի փոխանորդ 12
Պողուց Յակոբ *353*
Պողօս *353*
Պոտյոմկին Պավել Սերգեևիչ 407
Պոտտո Վ. 508
Պռազյան 212, 249
Պտղոմեոս 9
Պտրոսանք (Մխիթարյաններ) 97

Պօղոս *342*
Պօղոսեանց Եղիսապետ *265*

## Ջ

Ջալալ Էդ Դին 26, 444
Ջալալյանց Բաղդասար 110
Ջալալյանց Դավիթ 25, *113,* 115
Ջալալյանց Սարգիս 76, 78, 104, 105, 230, 231, 413, 442, 483
Ջալլադանց Գրիգոր *186*
Ջալլադանց Թանկի *186*
Ջալլադեանց Անդրեաս Ստեփանեան *185*
Ջալլադեանց Սիմոն Սարգիսեան *186*
Ջալլադյան Սիրանուշ Հովհաննեսի *186*
Ջալլադյանց - տե՛ս Ճալլադեանց, Ջալլադանց, Ջալլադեանց, Ջալլադյան
Ջալլադյանց Շուշանիկ 152
Ջալավանց Արքէս *353*
Ջահանշահ 493
Ջաղեթյան Սաշա Մակիչի 153
Ջաղեթյանց 447
Ջաղեթյանց Ալեքսանդր 448, 449
Ջաղեթյանց Իվան 448
Ջաղեթյանց Մակի (Մկրտիչ) 151, 448
Ջաղէթեանց Սիմէօն Գ. *153*
Ջաւադ 336
Ջավադ խան 30, 31, 39, 247, 321, 410
Ջիլջանյանց Պետրոս 207, 254
Ջիկա - տե՛ս Ջիչա
Ջիչա *162*
Ջվանշէր *442*
Ջվանշիր 204
Ջևան *315*

## Ռ

Ռահիմ 73(ծ.)
Ռամիշվիլի Ն. 508
Ռեմերտ 409
Ռեյտենքրախ Փրիդրիխ 334
Ռիմ *523*
Ռյուլեր Է. 61, 139, 210, 234, 318, 365, 493
Ռյուշտու բեյ 33, 34
Ռոզեն 74(ծ.)
Ռշտունի Ա. 46
Ռուստամ *429*
Ռուստամ-Ալիև 120(ծ.), 530(ծ.)
Ռոստոմ 33
Ռոստոմյան (Առուստամյան) Կ. 58
Ռովադ 26, 40
Ռստիմ *90*
Ռումի Իսքենդեր 23, 29
Ռումոհո *291*
Ռուստամ *351*
Ռուստամբեկով Ասլանբեկ 122

## Ս

Սադուն *354*
Սաթունյան Գարեգին, Գանձակի փոխանորդ 13, 289, 335
Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլի 505, 506
Սալվար *249*
Սահակ *110,* 115, *420,* 493, *535*
Սահակ Սևադա 123, 205
Սահակեան Աշխէն Աւետիքեան *189*
Սահակեանց Յարութիւն *189*
Սահակեանց Սարգիս *189*
Սահակյանց Կորյուն, Գանձակի փոխանորդ 14
Սահրատյան Տիրայր 534(ծ.)
Սամա *526*
Սամոր *204*
Սամուէլ *224,* 226
Սայի *315*
Սանդուխտ 268, *297*
Սառ *167*
Սառեկ *166, 524*
Սառիկ *90*
Սասանյաններ 9
Սասնա *127*
Սասուն *315*
Սավոյիճա *312*
Սատի *204*
Սարգիս 25, 50, 91, 110, *112,* 113, 115, *127, 136,* 284, *296, 353, 255, 264, 267, 308,* 387, 398, 401, 415, 509, *527, 528*
Սարգիս, գրիչ 80, 101, 207, 254, 276
Սարգսյան Լյուդվիկոս 463
Սարգսյան Պետրոս քհն. 264
Սարգսյան Ստ. 152
Սարգսյանց Գրիգոր 461
Սարգսյանց Եղիսաբեթ 447
Սարդարյան Ռաֆայել 533
Սարիբեգանց Դավիթ *536*
Սարիբեգանց Ներսես - տե՛ս Սարիբեկյան Ներսես
Սարիբեգանց Սարիբեգ - տե՛ս Սարիբեկյան Սարիբեկ
Սարիբեգանց Սիմոն *536*
Սարիբեկանք (Սարիբեկյաններ) 532
Սարիբեկյան Դավիթ 535
Սարիբեկյան Ներսես 535
Սարիբեկյան Սարիբեկ 535
Սարխոշ Վարդենիսցի 230
Սարութեկ կամ Աղարեւ *135*
Սարուխան*341, 382, 397,* 407
Սարքիս *173, 250, 297, 341, 385*
Սարքիսեան Հովհաննես *535*
Սափարանց Հանես 322
Սափարյանց Կարապետ 489
Սաֆիքյուրդսկի Աբդուլլահ-բեկ Ալլահվերդի-բեկ օղլի 426
Սաֆիքյուրդսկի Ասլան բեկ 508
Սաքո 336
Սեղխ 476
Սեդրակեան Արիստակէս եպս. *222*
Սեիդ-մոլլա 531(ծ.)
Սեյրանյան Հովհ. 152
Սէյրանեանց Հովհաննէսեան *153*
Սեյրանեանց Սարգիս *153*
Սենեքերիմ 123-124,
Սերեբրովսկի 138
Սէրի *353*
Սերոբ *247*
Սէվլիկ *351*
Սիմաւոն *521*
Սիմեոն, կաթողիկոս 98, *337,* 474
Սիմենս եղբայրներ 240
Սիմենս Կարլ 70
Սիմենս Վալտեր 70
Սիմենս Վերներ 70
Սիմեոն, Աղվանից կաթողիկոս 476, 477
Սիմեոն Օձնեցի 240
Սիմեոնն Ս. 45
Սիմէոն *233*
Սիմէօն *390*
Սիմոնեան Շ. *153*
Սիմօն *225*
Սիրան *166*
Սիրանուն *346*
Սիրունիկ *127*
Սհար *405*
Սմբատ *293*
Սմբատ Ա, թագավոր 506
Սմբատյանց Մեսրոպ 78, 105, 108, 130
Սմիթ Ադամ 508
Սողոմոն *90*
Սոմաճ *357*
Սոյուն աղա Նովրուզ-աղա օղլի 234, 318
Սոֆյա 533
Ստեփան *189*
Ստեփանանք (Ստեփանյաններ) 532
Ստեփանեանց Եղիսապետ *382*
Ստեփանեանց Մարտիրոս *382*
Ստեփանոս 50, 51, 91, 493
Ստեփանոս, Աղվանից կաթողիկոս 12, 24, *315, 357*
Ստեփանոս Բյուզանդացի 9
Ստեփանոսյանց Մեսրոպ - տե՛ս Տեր-Ստեփանոսյանց Մեսրոպ (Մկրտիչ) Մովսիսյան
Ստեփաննոս 493, 506
Ստրաբոն 9
Սրապիոն *204*
Սրբուշ *315*
Սուար *297*
Սուլթան Բաբ *297*
Սուլթանով 284

Սուլեյման բեկ 73(ծ.)
Սուլեյման շահ *337, 381*
Սուլեյմանով 203
Սուրենյանց Գևորգ 310
Սուրխեյ-խան 507
Սև Սաքի 379
Սնքարեցի Սաքո 531

**Վ**

Վալի Ահմատ - տե՛ս Թահմազ
Վախթանգ, թագավոր 410, 507
Վահանանց Առաքել *186*
Վահապ 304(ծ.)
Վահրամ 545
Վահրամ Արևելցի 506
Վահրամ Գազեցի 119, 205, 443-445, 506, 507, 509
Վահրամյաններ 10, 443, 506, 507
Վաղարշ 9
Վալի-բեկ 234, 318
Վանական *297,* 457
Վանական վրդ. Տավուշեցի 442, 444,
Վանականեանց Լեւան *297*
Վանականեանց Յակոբ *297*
Վանականեանց Յարութիւն *297*
Վանականեանց Մարեամ *297*
Վանեանց Եղիսապէդ *186*
Վանեանց Պողոս *186*
Վանեանց Սողոմոն *186*
Վանի *169*
Վանիկ *297*
Վանյան Գազիկ Մակիչի 245
Վանո 545
Վանունց Ավագիմ *186*
Վանունց Շուշանիկ *186*
Վաչագան 9
Վառվառա *321*
Վառունց - տե՛ս Հրապետանց
Վասակ 444
Վասակով Գ. 52
Վասակով Մ. 52
Վասիլ իշխան 304(ծ.)
*Վարդ* 83
Վարդազար *352*
Վարդազար *297*
Վարդազարեանց Մատթէոս Յարութիւնեան *186*
Վարդազարյան Անտոն 116
Վարդան 97, *112,* 122, *126, 135, 223, 391,* 417, *535*
Վարդան, գրիչ 101, 230
Վարդան Մամիկոնյան 299
Վարդան վրդ. Օձնեցի, Գանձակի փոխանորդ 13, 30
Վարդանէս 267
Վարդանյան Հ. 17, 89
Վարդանյանց Գր. 499
Վարդանով Ի. 376
Վարդապետանց Նաւասարդ *186*
Վարդապետանց Վարդ *186*
Վարդապետանց Վարթ *186*
Վարդապէտեանց Զանի *186*
Վարդապէտեանց Եփրեմ *186*
Վարդապէտեանց Մկրտիչ *186*
Վարդապէտեանց Վարդան *186*
Վարդաւոր *245*
Վարդըմբեր *245*
Վարդուկ *389*
Վարթան *385*
Վարշամյան Աղա Սարգիս 442
Վերդյանց Արամ 53
Վերդյանց Գրիգոր 53
Վերդյանց Հայկ 53
Վերդյանց Հովհաննիսյան Հուսիկ (Թադեոս) 53, 56
Վերդյանց Պարույր 53
Վերդյանց Ռուբեն 53
Վերդյանց Սուրեն 53
Վերդյանց Տիրան 53
Վէլի *341*
Վէլիճան *90*
Վիլլեմ Ռուբրուք 27
Վիրաբյանց Մաքևոս 207, 254
Վիրխով 78
Վիրո, կաթողիկոս 505
Վրթանիս *538*
Վրաց Բագրատունիներ 10

**Տ**

Տակայշվիլի 33
Տանիէլ *353*
Տատունց - տե՛ս Դադունց
Տատունց Մաքթաղ *179*
Տատունց Յուէփ *179*
Տարսաիճ *491*
Տարչի 276
Տեր-Աբրահամյանց Գրիգոր 463, 464
Տեր-Աբրահամյանց Մկրտիչ 463
Տեր-Աբրահամյանց Ներսես 464
Տեր-Ակոբ 171
Տեր-Անտոնյանց Անտոն Բարսեղյան 275
Տեր-Առաքելյանց Սարգիս 425, 429
Տեր-Առաքելյանց Օհան 419
Տեր-Աստվածատրյան Ա. 46
Տեր-Աստվածատուր 171
Տեր-Ավագ 171
Տեր-Ավագյանց Հովհաննես 415
Տեր-Ավագյանց Հովհաննիսյան Միքայել (Մկրտիչ) 415
Տեր-Ավետիսյան Սմբատ 494, 495
Տեր-Ավետիսյանց Հակոբ, Գանձակի փոխանորդ 13
Տեր-Ավետիքյան Ա. 138, 152
Տեր Ավետիքյան Ավետիքյան Տեր-Ստեփանոս 171
Տեր-Ավետիքյան Եգոր 141
Տեր-Ավետիքյան Լ. 115, 152, 478(ծ.)
Տեր-Ավետիքյան Ստ. 152
Տեր-Ավետիքյան Վ. 152
Տեր-Ավետիքյանց Գրիգոր 173, 216
Տեր-Ավետիքյանց Գրիգոր Տեր-Հովհաննիսյան - տե՛ս Տեր-Ավետիքյանց Գրիգոր
Տեր-Ավետիքյանց Լևոն 171
Տեր-Ավետիքյանց Խաչատրյան Տեր-Ավետիք 171
Տեր-Ավետիքյանց Միքայել 171
Տեր-Ավետիքյանց-Բանանցեցի Ստեփան 171, 203
Տեր-Ավետիքյանց Ստեփանյան Ա. 151
Տեր-Ավետիքով 117
Տեր-Բարաղամյանց Դանիել 383
Տեր-Բարաղամյանց Եփրեմ 383
Տեր-Բարաղամյանց Թեոդորոս 383
Տեր-Բարաղամյանց Լևոն 383
Տեր-Բարաղամյանց Կարապետ 310
Տեր-Բարաղամյանց Մկրտիչ 310
Տեր-Բարաղամյանց Մովսես 383
Տեր-Բարաղամյանց Ներսես 309
Տեր-Բարաղամյանց Շուշանիկ 310
Տեր-Բարաղամյանց Սարգիս 310
Տեր-Բարաղամյանց Սերոբ 383
Տեր-Բարաղամյանց Սիմեոն Տեր-Սարգսյան 383
Տեր-Բարաղամյանց Սոնա 310
Տեր-Բարսեղ 110
Տեր Գրիգոր 52, 171, 172, 491
Տեր-Գրիգորյանց Մեսրոպ 172, 344
Տեր-Դանիելյանց Դ. 51
Տեր-Դանիելյանց Թադեոս, Գանձակի փոխանորդ 13, 472
Տեր-Դավիթ 171, *189*
Տեր-Դավթյանց Ղուկաս 364
Տեր-Եղիազարյան Հարություն 479
Տեր-Եղիազարյան Հովսեփ 479
Տեր-Եղիազարյան Մարտիրոս 479
Տեր-Եղիազարյան Պետրոս 479
Տեր-Եղիազարյան Պողոս 479
Տեր Եղիազարյանց Խաչատուր 117-118
Տեր-Եղիազարյանց Հովհաննես Դավթյան 216, 228, 524
Տեր-Եղիազարյանց Սիմոն 479, 524
Տեր-Զաքարյան Ն. 44
Տեր-Իսրայելյան Գրիգոր 172
Տեր-Իսրայելյանց Հովսեփ 138, 140, 150
Տեր-Իսրայելյանց Պետրոս 172, *187*
Տեր-Իսրայելյանց Ղևոնդ Ներսիսյան 344
Տեր-Խաչատրյանց Ս. 46
Տեր Խաչատուր *97,* 110

Տեր-Խաչատուրյան Սիմեոն 376
Տեր Ծերունի 480
Տեր-Կիրակոսյանց Սահակ 472
Տեր Հակոբ *87*, 110
Տեր-Հակոբյանց Գրիգորիս, Գանձակի փոխանորդ 13, 115
Տեր-Հարությունյան Աբգար 447
Տեր-Հարությունյանց Աբրահամ 463
Տեր-Հարությունյանց Աստվածատուր 116, *263*
Տեր-Հարությունյանց Տեր-Հովակիմյան Գրիգոր 461, 464
Տեր Հովհաննես 480
Տեր-Հովհաննիսյան Գրիգոր 365
Տեր-Հովհաննիսյան Հ. 149, 263
Տեր-Հովհաննիսյանց Գրիգոր 197, 226, *227*
Տեր-Հովհաննիսյանց Գևորգ 197
Տեր-Հովհաննիսյանց Կարապետ, Գանձակի փոխանորդ 13
Տեր-Հովսեփյանց Հովսեփ 140, 152, 160
Տեր-Հովսեփյանց Մ. 51
Տեր-Հովսեփյանց Ներսես 160
Տեր Հովսեփյանց Պետրոսյան Տեր-Իսրայել 171
Տեր-Ղուկասյան Վահան 530
Տեր-Ղևոնդյանց Մկրտիչ 500
Տեր-Մակար 60
Տեր-Մակարյան Ե. 46
Տեր-Մանվելյան Եղիա 383
Տեր-Մարգարյանց Պողոս, Գանձակի փոխանորդ 13
Տեր-Մարտիրոսյանց Քերովբե 20, 52, 55, 404, 405
Տեր-Մելիքսեթ 171
Տեր-Միքայելյան Լևոն 203
Տեր-Միքայելյան Մեխակ 203
Տեր-Միքայելյանց 150
Տեր-Միքայելյանց Անդրեաս 500
Տեր-Միքայելյանց Արմիկ 173
Տեր-Միքայելյանց Գրիգոր 172
Տեր-Միքայելյանց Երանուհի 173
Տեր-Միքայելյանց Երվանդանույշ 173
Տեր-Միքայելյանց Լևոն 172
Տեր-Միքայելյանց Միքայել 152, 172
Տեր-Միքայելյանց Մկրտչյան Երվանդ (Ստեփանոս) 173
Տեր-Միքայելյանց Մկրտչյան Ստեփանոս 151
Տեր-Միքայելյանց Ստեփանոս 514
Տեր-Միքայելյանց Վարդանյան Անդրեաս 150, 151, 172, *188*
Տեր-Մխիթարյանց Ղազար 245
Տեր-Մկրտիչ 171
Տեր-Մովսէսեան Արշակ *153*
Տեր-Մովսիսյան Մ. 107
Տերյաններ 141
Տեր Յովան *87*
Տեր-Ներսիսյանց Ներսես Աբրահամյան 149, 218, 229, 231, 232, 240
Տերյանց Գաբրիել Հարությունյան 171, 196, *197*
Տեր-Պողոս - տե՛ս Եպիսկոպոսյանց Տեր-Հովհաննիսյան Պողոս
Տեր-Սարգսյան Արզուման Խաչատրյան - տե՛ս Տէր-Սահակեանց Արզուման Խաչատուրեան
Տեր-Սարգսյան Կարապետ 314
Տեր-Սարգսյանց Գրիգոր 406, 415
Տեր-Ստեփանյանց Գ. 44
Տեր-Ստեփանոսյան Գրիգոր, Գանձակի փոխանորդ 13
Տեր-Ստեփանոսյանց Մակար 514, 517
Տեր-Ստեփանոսյանց Մեսրոպ (Մըկըրտիչ) Մովսիսյան 76, 461, 462, 463, 464, 489, 490, 491, 494
Տեր-Վարդանյան Եղիսաբեթ 152
Տեր Վարդանյանց Պետրոս 265, 472
Տեր Վրթանանք 97
Տեր Տերուն 96
Տերտրանք (Տերտերյաններ) 533
Տէր Աբրահամեանց Վարդան *463*
Տէր Ազար *391*
Տէր-Ազարեան Տէր-Սարգսեան Մամիկոն Յովհաննէսեան *316*
Տէր Ազարեանց Սարգիս Գանձակեցի 316
Տէր Ազարիա *382*
Տէր Ակոբ *170, 321, 382*
Տէր-Աղազար *346*
Տէր Աստուածատուր *170*
Տէր Առաքել *222*
Տէր-Աւաք *511(ծ.)*
Տէր-Աւէտիս *189*
Տէր Ավետիսյան Խաչատուր *152*
Տէր Ավետիսյան Յարութիւն *152*
Տէր Ավետիսյան Ստեփան *152*
Տէր-Աւետիքեանց Եղում *186*
Տէր-Աւետիքեանց Խաչատուր Ստեփանեան *186*
Տէր-Աւետիքեանց Յովհաննէս *186*
Տէր-Աւետիքեանց Յովհաննէս Ստեփանեան - տե՛ս Տէր-Աւետիքեանց Յովհաննէս
Տէր-Աւետիքեանց Ստեփան Միքայէլեան *186*
Տէր Գրիգոր *163, 357*
Տէր Դաւիթ *382*
Տէր Եղիա *267*
Տէր Ըստեփանոս *265*
Տէր-Թումա *240*
Տէր Իսրաէլ *354*
Տէր-Իսրայէլեան Կարապետ *187*
Տէր-Իսրայէլեան Տէր-Գրիգոր *187*
Տէր-Իսրայէլեան Օսէփ բէգ *187*
Տէր-Իսրայէլեանց Աննա Յարութիւնեան *187*
Տէր-Իսրայէլեանց Իսրայէլ *187*
Տէր Իսրայէլեանց Յարութիւն *153*
Տէր-Իսրայէլեանց Յովհաննէս *187*
Տէր-Իսրայէլեանց Շ. *187*
Տէր-Խաչատուրանց Աւետիս *187*
Տէր-Խաչատուրանց Կարապետ *187*
Տէր-Խաչատուրանց Ղեւանդ *188*
Տէր-Խաչատուրանց Ղեւոնդ *188*
Տէր-Խաչատուրանց Մաթեոս *187*
Տէր-Խաչատուրանց Մարիա *188*
Տէր-Խաչատուրանց Միքայէլ *187*
Տէր-Խաչատուրանց Յարութիւն - տե՛ս Տէր-Խաչատուրեանց Յարութիւն Յովսէփեան
Տէր-Խաչատուրանց Պողոս *188*
Տէր-Խաչատուրեանց Թագուհի Մամիկոնեան *188*
Տէր-Խաչատուրեանց Համբարձում Սարգսեան *188*
Տէր-Խաչատուրեանց Յարութիւն Յովսէփեան *188*
Տէր-Խաչատուրեանց Յոսէփ Մամիկոնեան *188*
Տէր-Խաչատուրեանց Յովհաննէս Յարութիւնեան *188*
Տէր-Խաչատուրեանց Սուլթան Յովհաննէսեան *188*
Տէր-Հօսէփանց Իսրաէլ *188*
Տէր-Հօսէփանց Պետրոս *188*
Տէր Ղազար *264, 306, 356, 357, 528*
Տէր-Յարութիւնեան Աբգարիոս - տե՛ս Տեր-Հարությունյան Աբգար
Տէր-Մարդիրոս *239*
Տէր Մարտիրոս *405*
Տէր-Մարտիրոսեան Դանել *227*
Տէր Մէլիքսէթ *166*
Տէր-Միքայէլեանց Անդրեաս - տե՛ս Տեր-Միքայելյանց Վարդանյան Անդրեաս
Տէր-Միքայէլեանց Երուանդանոյշ Տէր-Երուանդեան *188*
Տէր-Մկրտիչ *189*
Տէր Մկրտիչ *357*
Տէր-Մկրտիչեանց Թաթէվոս *189*
Տէր-Մկրտիչեանց Թեւան *189*
Տէր-Մկրտիչեանց Յարութուն *189*
Տէր-Մկրտիչեանց Սահակ Խաչատուրեան *189*
Տէր-Մկրտչեանց Խաչատուր *189*
Տէր Մովսիսեան *152*
Տէր Մօվսէս *112*
Տէր-Յակովբեանց Պողոսեան Աւագ *181*
Տէր Յարութիւնեան Աստուածատուր

Սղնախեցի - տե՛ս Տեր-Հարությունյանց Աստվածատուր
Տէր Յոհաննէս 111
Տէր-Յովհաննիսեան Գէորգի *49*
Տէր-Յոսէփանց Մաքթաղ *188*
Տէր-Յոսէփանց Միքաէլ *188*
Տէր-Յոսէփանց Յոհանէս *188*
Տէր-Յոսէփանց Յոսէփ Գրիգորեան *188*
Տէր-Յոսէփանց Սարգիս *188*
Տէր-Յովսէփանց Աւետիք Ներսէսեան *188*
Տէր-Յովսէփանց Յարութիւն *188*
Տէր-Յօհաննէսեան Շահինբէկեանց Գրիգոր - տե՛ս Տեր-Հովհաննիսյանց Գրիգոր վարդապետ
Տէր-Ներսէսեան Կարապետ *232*
Տէր-Պետրոս *346*
Տէր-Պօղոս *189*
Տէր-Պօղօս *305*
Տէր-Սահակեանց Արզուման Խաչատուրեան 442
Տէր Սարգիս *484*
Տէր-Սարգսեանց Կարապետ Տէր Յակովբեան 316
Տէր Սերապիոն *465*
Տէր Ոհանիս *224*
Տէր Ոսկան *267*
Տէր Ովանիս *415*, *420*
Տէր-Սահակեանց Յոհաննէս Մովսէսեան *189*
Տեր-Սահակյան Միրանույշ 152
Տէր Սիմէոն *134*
Տէր Սիմէօն *382*
Տէրուն *168*
Տէր-Օհանէս *306, 354*
Տիգրան 51
Տիրածէր *315*
Տկաչև Գ. 34, 104, 262
Տոլվաթ *170*
Տոնյան Արշակ 203
Տոնյաններ 141
Տոնունց - տե՛ս Դոնունց
Տոնունց Ն. 33
Տորմասով 16
Տռուզեան Վերտի Յարութիւնեան *215*
Տրդատ կաթողիկոս *504*
Տուղրուլ բեկ 24
Տուրսուն *349*

## Ց

Ցայգեր Ֆրիդրիխ 334
Ցիրալյան Կ. Ս. 41
Ցիրալյանց 486
Ցիրալով 36
Ցիցիանով Պ. Դ. 31, 38, 39, 64
Ցուլգադարով Ալայար-Բեկ - տե՛ս Զուլղադարով Ալլահյար բեկ

## ՈՒ

Ուլուբէկ *351*
Ուխտիկ *245*
Ուղուրլու խան 29, 30
Ունան *239*
Ունան, կազմող *291, 292, 294, 296, 297*
Ուռում (Հռիփսիմէ) *415*
Ուսեփ *170, 521*
Ուսեփանք 245
Ուստիան *170*

## Փ

Փախրադին 26
Փանահ խան 30
Փանոս *98*
Փաշի *171*
Փատլու, Գանձակի ամիրա 24, 25, 40, 123, 436
Փատլուն, որդին Աբուլեթի 25
Փարի *168*, *337, 391*, *523, 527*
Փարիխան *522*
Փիլիպպե 124
Փիլիպպոս կաթողիկոս *90*, 91, 104, 206, 256, 310, 318, 321, 357, 394, 419
Փիրադյանց 463
Փիրղալեմյան Ղ. 129(ծ.)
Փսերյան Լևոն, Գանձակի փոխանորդ 14, 38, 218, 228, 310, 367, 425, 463, 478(ծ.)
Փրիդոնյանց Ն. 429

## Ք

Քալանթար 40
Քալանթարյան Մկրտիչ 463
Քալանթարյան Շ. 44
Քամալ բեկ 321, *337*
Քամալյան Ս. 12, 86, 87, 88, 90, 93, 97, 99, 103(ծ.), 105, 108, 113, 116(ծ.), 121, 127, 282, 287, 299, 382, 390, 456, 462, 465, 491, 494, 527
Քապաճ *341*
Քաջազանց Եսայի բեկ 60
Քաջբերունի 286, 289, 457, 461(ծ.), 465
Քաջիկյան 105, 106, 108, 111, 125, 337, 406, 413, 491
Քաս *97*
Քասպարեանց Սհար 60
Քասպարյանց Հովհ. 60
Քելլե Գուստավ 71, 75, 76
Քիքունց Մակի 192
Քմալանց (Քամալյաններ) 97
Քյամրանբեկով 299
Քոչար-բեկ 407, 408, 411(ծ.)
Քուլի *346*
Քօթչին Սայակ *352*
Քօխանց Անան *352*
Քօստոնց Տէր Մուկուչ *189*
Քօստունց Ապրիամ *189*
Քօստունց Գրիգոր *189*
Քօստունց Մեխակ *189*
Քօստունց Յոհաննէս *189*
Քօստունց Պողօս *189*

## Օ

Օլտարժևսկի 50
Օհան 29, *174*
Օհանես *91, 135*
Օհանեսով Ավետիս 73(ծ.)
Օհանյան Ա. 38, 46, 56
Օհանյան Գ. 141
Օհանյան Տ. 46
Օհանջան *321*
Օհանջանյան Մ. Պ. 39
Օհրնի Ա. 72
Օղուրլու խան 507
Օմար խան 31
Օսման զորապետ 27
Օսման փաշա 27
Օվանէս *207*
Օվաք *306*
Օրբելյան 99
Օրբելյան Գրիգոր 230

## Ֆ

Ֆահրադ (Ֆերհադ) փաշա 27, 29
Ֆարավոն վրդ. 50
Ֆարզալի պէկ 382

## Տեղանուններ

### Ա

Աբասբեյլի 436
Աբաս-դարա 324
Աբասլի 456
Աբասկուլլար 278
Աբդալ 278
Աբդուլլաբեյկուրդու - տե՛ս Աղամալիողլու
Աբլահ 304, 305, *307,* 308, 309, *314,* 547
Աբովյան 532
Ագուլեցոց եկեղեցի 110
Ագուլիս *161,* 286, 287, 342, 406
Աղիշեն գյուղատեղի 251
Աղլեր 288
Ադրբեջան 9, 20, 33, 65, 71, 137, 203, 233, 277, 303, 398, 421, 435, 447, 455, 476, 506, 529, 531
Ազազանձ գյուղատեղի - տե՛ս Ազիզանք գյուղատեղի
Ազայլի 278
Ազատ (Խանլարի շրջան) 308, 310, 311, 312, 315, 316, 318, 367, 368, 393, 422, 430, 543, 547
Ազատ (Կասում-Իսմայիլովի շրջ.) 422
Ազատ (Վարդենիսի շրջ.) 465
Ազար-Ահմեդլի 422
Ազիզանց բակեր գյուղատեղի - տե՛ս Ազիզանք գյուղատեղի
Ազիզանք գյուղատեղի 86, 87, 88
Ազիզբեկով (Դալմամեդլի) 422
Ազիզբեյլի 438
Ազիզլու գյուղատեղի - տե՛ս Ազիզանք գյուղատեղի
Ազղիլի 316
Աթաբեկ 456
Աթախալ 66
Աթտի-Բուլաղ աղբյուր (Աղբաշլար գղ.) 282
Աիպլի - տե՛ս Այիփլի
Ալաբաշլի (Խանլարի շրջ.) 316
Ալաբաշլի (Շամխորի շրջ.) - տե՛ս Պրավդա
Ալախանչալի 138
Ալակյոլ 278
Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտ (Թիֆլիս) 203
Ալեքսեևկա - տե՛ս Խարխար
Ալի-Բայրամլի - տե՛ս «Զոխտակ կամուրջ»
Ալի-Բայրամլի գղ. (Խանլարի շրջ.) 317
Ալի-Բայրամլի (Ղազախի շրջ.) 438
Ալիբեյլի 278
Ալի-Իսմայիլի 66
Ալիմադաթլի 317
Ալիմարդանլի 279
Ալ-Մուտավաքիլիա - տե՛ս Շամքոր
Ալինջալի 317
Ալիուշաղի 317
Ալիքենդ 16
Ալիարակ լեռ 361
Ալիարակ լիճ 361
Ալմալիթալա 279
Ալմալու 138
Ալփոուտ 16, 422
Ալփոուտ (Ղազախի շրջ.) 438
Ախալքալաք 12
Ախալցխա 35, 530(ծ.)
Ախնջի գետ 81, 84, 103, 135, 282, 284, 298, 299, 300, 301
Ախուրջի գյուղատեղի 504
Ականա 327, *352, 353*
Ակսիփարա - տե՛ս Աշաղի-Ակսիփարա
«Ակուբանց» այգի (Բարսում) 473
Ահմադի-բաղ ձոր (Ահմեդաբաղ գղ.) 279, 298
Ահմադլու 138
Ահմեդաբաղ (Թուուզի շրջ.) 279
Ահմեդաբաղ (Կասում-Իսմայիլովի շրջ.) 422
Ահմեդբեկլի - տե՛ս Ալի-Բայրամլի
Ահմեդլի 456
Աղադան 476
Աղամալի (Ղազանչի գղ.) 66
Աղամալիողլու (Սաֆիքյուրդ գղ.) 422
Աղաջ-Ղալա բերդ 279, 280
Աղաջ-Ղալա գղ. 279, 281, 282
Աղաջ-Ղալա ժայռ (Քամանդար) 526(ծ.)
Աղաջ-Ղալայի վանք - տե՛ս Շահփեքարի վանք
Աղասիբեկլի Ներքին 317
Աղասիբեկլի Վերին 317
Աղասիբեկլու գյուղատեղի 366
Աղբաշլար 282
Աղբուլաղ գղ. 282
Աղդամ գղ. (Թուուզի շրջ.) 282
Աղ-դարա ձոր (Աղբաշլար գղ.) 282
Աղ-դարա գղ. - տե՛ս Աղդերե գղ.
Աղդերե գղ. 282, 282, 283
Աղեխուշ 317
Աղխաչ 140
«Աղխաչի զահ» տեղամաս, գազաք (Բանանց) 200
Աղկյոյնակ 438
Աղյուսաշեն (Աղվեսաշեն) գյուղատեղի 258(ծ.)
«Աղջկաբերդ» («Ղըզղալա») 467
Աղստաֆա 290, 438, 487, 525
Աղստաֆա կայարան 34, 438
Աղստաֆայի շրջան 435
Աղստև 436, 443, 451, 452, 453
Աղստև գետ 9, 439, 445, 446, 450
Աղվանից կաթողիկոսարան 129
Աղվանք 9, 12, 24, 25, 27(ծ.), 50, 61, 103, 204, 241, 249, 254, 255, 267, 299, *315,* 474, 480, 486, 493(ծ.), 504, 505, 506, 507
Աղ-Քյորփի ձոր (Թոփալհասանլի) 361
Աղքիլիսա - տե՛ս Նովո-Իվանովկա
Ամարաս 20
Ամիդ 444
Ամիրասլանլի 66
Ամիրվար - տե՛ս Ամիրվար
Ամրվար գղ. 17, 138, 203, 204, 252, 255
Այգեձոր 88, 100, 486
Այգեստան - տե՛ս Դիմաց տեղ թաղ
Այթալի ջուր գետակ 66, 115
Այթալի սար 115
Այիթալա 66
Այիփլի 73(ծ.), 492
Այսրկովկաս 9, 19, 24, 31, 33, 41, 68, 71, 407, 468, 505, 508
Այրարատյան նահանգ 119, 474
Այքենդ - տե՛ս Շուրաքենդ
Այքենդի առու գետակ 102, 113, 115
Անատոլիա 19
Անդրկովկաս - տե՛ս Այսրկովկաս
Անի 24, 26, 123, 286, 290, 334, 444, 467
Անյանց ջրաղաց 158
Աննենֆելդ (Աննինո) 15, 72(ծ.), 455, 504, 505, 508
Անջիկոպոր տեղամաս 468
Աշաղի (Ներքին) Այիփլի գղ. 80, 283, 360
Աշաղի-Ակսիփարա 438
Աշաղի-Ղուշչու գղ. 283
Աշաղի-Մյուքյուլյու գղ. 283
Աշաղի-Սալահլի 438
Աշաղի (Ներքին) Սեյֆալի 456
Աշաղի-Օքսյուզլյու 283
Աշըղլի 317, 318
Աշրալար 283
Աչաղայա 318
Ապարան 117
Աջի 17
Առան - տե՛ս Աղվանք
Առըղդամ 66, 73(ծ.)
Առդսան գետակ 88(ծ.)
Առուշանի աղբյուր (Բաղա գղ.) 466
Ասխաբաղ *175*
Ասկերանի շրջան 414(ծ.)
Ասլանբեկլի - տե՛ս Ալի-Բայրամլի (Ղազախի շրջ.)
Ասլանդուզ 64
Աստաֆ - տե՛ս Հացտափ
Ասրիկ գետ 9, 278, 282, 283, 284, 285, 298, 299, 300, 301, 302

Ասրիկ-Ջրդախան գղ. 283
Ավագ Սբ. Նշան եկեղեցի (Գետաշեն գղ.) 321, 337, 338, 343, 344
Ավեյ լեռ 440
Ատիշեն - տե՛ս Աղիշեն
Ատրպատական 17, 24, 25, 506
Արաբաչի 66
«Արաբլու հող» 40, 47, 51, 61, 364
Արագածոտն գավառ 16
Արագածոտնի մարզ 440, 498
Արան գղ. 284
Արանդուր գղ. 284
Արան-Միխայլովկա 422
Արանի-Ազատ - տե՛ս Ազատ (Կասում-Իսմայիլովի շրջ.)
Արաշ 19, 27
Արարատ 288
Արափիլի 423, 426
Արաքս գետ 27(ծ.), 508
Արդվին 57
Արեշ 286
Արքապ - տե՛ս Նովո-Գորելովկա
Արքափա - տե՛ս Նովո-Գորելովկա
Արքափա գետակ 98
Արքիկ 219
Արքինաջուր (Կոշկար) գետ 9, 138, 139, 141, 152, 156-158, 189, 206, 212, 233, 234, 240, 252, 257, 268, 269, 274-276, 317, 318, 358, 377, 406
Արիդռան 67
Արիսու 67
Արծվաշեն 100, 284, 298, 529, 530-533, *534, 535*
Արմավիր 547
Արմինիա - տե՛ս Հայաստան
Արմինիա 9
Արշակաշեն գավառ 23
Արոխդամ - տե՛ս Առըղդամ
Արջաձոր (Խաչակապ գղ.) 218
Արցախ 9, 11, 13, 218, 249, 290, 333, 409(ծ.), 414(ծ.), 530, 532
Արևելյան Հայաստան 11
Արևմտյան Հայաստան 16, 361, 475, 540
«Աֆանասյան» դպրոց (Գանձակ) 46

## Բ

Բաբաջան գետակ - տե՛ս Պապաջան գետակ
Բաբելոն 443
Բագրատաշեն 232
Բագրատունյաց թագավորություն 506
Բաղա 11, 321, 457, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 467, 487, 488, 489, 494, 495, 520, 526, 527
Բաղաջուր գետ 66, 98
Բաղենք - տե՛ս Բաղա
Բազկաքար (Կիրանց գղ.) 240
«Բալա-Բաղման» մզկիթ (Գանձակ ք.) 63
Բալա-Ղարաբուլաղ - տե՛ս Դայա-Ղարաբուլաղ
Բալաճըխ - տե՛ս Հուսկան նահատակ վանք
Բալա-Ջաֆարլի 439
Բալըղայա 422
Բալունցքաղ (Բանանց գղ.) 141
«Բալուջա» (Մարտունի գղ.) 498
Բալլուջա - տե՛ս Ղարակուլլար
Բախշի 310
Բախշիկ գյուղատեղի 207
Բախշիք - տե՛ս Կամո
Բախչաքյուրդ 422
Բակկալի գղ. 284
Բակկալի լեռ 284
Բաղանիս-Բայրում 439
Բաղերի կամուրջ (Բանանց գղ.) 157
Բաղմանլար թ-մաս (Գանձակ ք.) 33, 35, 362
Բաշիկ - տե՛ս Կամո
Բաղք 40
Բայրամլի գղ. 284
Բայրամլի - տե՛ս «Ջոխտակ կամուրջ»
Բանանց 9, 11, 100, 138-141, 145, 146, 148, 150, 152, 155-159, 171-173, *184-187*, 192, 193, 198, 200, 203, 231, 232, 250, 321, 366, 461, 514, 546, 547
Բանանցի անապատ - տե՛ս Թարգմանչաց անապատ (Բանանց գղ.)
Բաշգյուղ - տե՛ս Արծվաշեն
Բաշքյանդ - տե՛ս Արծվաշեն
Բաջանկա գետակ - տե՛ս Պապաջան գետակ
«Բաջանց թաղ» ձոր (Բարսում գղ.) 475
Բարդա 410
«Բարխուդարանց» գերեզմանոց 59
Բարխուդարլի 439
Բարձր խաչ կամ Խաչյալ սար 512
Բարսամ ճգնավոր մատուռ (Փիր գղ.) 268
Բարսում 11, 50, 74(ծ.), 207, 262, 461, 467, 468, 470, 472, 473, 474, 475, 485, 486, 497, 513, 520, 525
Բարսումասար - տե՛ս Բարսում-Սար
Բարսումի ձոր 511
Բարսում-Սար 470, 474, 476
Բարում 476, 484, 497
Բարումշեն - տե՛ս Գառնակեր
Բաքու 20, 33, 70, 71, 132, 203, 283, 320, 344, 376, 447, 460, 514, 530, 544, 546
Բդաձոր - տե՛ս Բաղա
Բեգում-Սարով 334, 431
Բելուկան 19
Բեյդեմիրլի 67
Բեյուկ-Ղշլաղ 284
Բեռլին 532
Բերդատակ 124
Բերդի-դալա 120
Բերդո վանք - տե՛ս Շամքորի վանք
Բերդուջ գետ 278
Բիտտիլի - տե՛ս Ենիաբադ
Բիրգյոզ 17, 283(ծ.), 324, 359, 360
Բյուխերովկա - տե՛ս Կամո
Բլրագլուխ 528
Բյուզանդիա 10, 27
Բյուրական 230
«Բնիչանց» (Բանուչյանների) աղբյուր (Բանանց գղ.) 192
Բոզալղանլի գղ. 284, 289, 290
Բոզ աղբյուր 527
Բոզդանլու - տե՛ս Բոզալղանլի
Բոլնիս 379
Բոլորաձորի կամուրջ (Բանանց գղ.) 157
Բոլորանց գետակ - տե՛ս Բոլորաջուր գետակ
Բոլորաջուր գետակ 157, 193, 198
Բոլչալու 318
«Բով ձորի պկատեղեր» գյուղատեղի 485
Բորչալու 12
Բորսունլու 322, 423
Բրաջուր 234, 318, 320, 321, 361, 396, 401, 407, 543
Բրտիշեն (Դուլուս) գյուղատեղի (Մարտունաշեն գղ.) 384, 385
Բուզլուխ 310, 379, 419, 542, 543
Բուլանըխ գավառ 361
Բուլանըլող - տե՛ս Հուսկան նահատակ վանք

## Գ

Գագ բերդ 436, 440, 442-445
Գագ լեռ 439-441, 443, 445
Գագա Սբ. Սարգիս վանք 20, 440-443
Գագի դաշտ 437, 441
Գազկուլու գղ. 284
Գալին-գայա - տե՛ս Հարսնաքար
Գամանլի 423
Գանձակ (Գյանջա, Ելիզավետպոլ) 10, 12-15, 18-20, 23-40, 41, 43-44, 47, 49-59, 61-63, 68, 72(ծ.), 73(ծ.), 74(ծ.), 75, 76, 116, 119, 123, *180, 187,* 203, 207, 218, 225, *227,* 228, 230, 231, *232,* 240, 241, 245, 247, 249-250, 254, 262, 286, 288, 305, 311, 316, 318, 321, 322, 335, 339, 342, 343, 355, 361, 362, 363, 364,

366, 374-376, 393,394, 401, 403-406, 408, 410, 418, 419, 422-423, 425, 426, 428, 429, 433, 444, 448, 461, 463, 468, 472, 478, 482, 486-487, 490, 496, 503, 506-508, 510, 515, 519, 525, 526, 546
Գանձակ գետ 9, 21, 34-37, 53, 61-63, 138, 157, 171, 198, 205, 207, 254-256, 276, 361, 362, 365, 377, 394, 406, 409, 418, 419, 426, 452
Գանձակ երկիր - տե՛ս Գանձակի գավառ
«Գանձակ» կայարանի աղոթատուն 59
«Գանձակ» կայարանի դպրոց 47
Գանձակեցոց Սբ. Գևորգ (Զորաբաշ) 12(ծ.)
Գանձակի բերդ 28, 31, 61
Գանձակի (Ելիզավետպոլի) գավառ 12-14, 16, 18-20, 27, 29, 40, 50, 71, 98, 240, 268, 401, 493, 500, 531
Գանձակի նահանգ 20, 70, *184,* 203, *373, 468(ծ.),* 480, 497
Գանձակի թեմ - 115, 366, 472, 485
Գանձակի (Գյանջայի) խանություն 9, 11, 12, 29, 31, 410, 507, 510
Գանձակի ձոր 103, 250, 256
Գանձակի վիճակ - տե՛ս Գանձակի թեմ
Գանձասար 20, 68, 100, 110, 129, 241, 401, 408
Գանջապասան 410
Գառնակեր 461, 470, 476, 477, 478, 480, 485, 486, 511, 520, 524, 528, 544, 545
Գառնակերի վանք - տե՛ս Ծաղկոց անապատ (Գառնակեր գյ.)
Գավազան բերդ 436, 437, 444
Գավարզին բերդ - տե՛ս Գավազան բերդ
Գարդման 9, 12(ծ.), 18, 67, 68, 110, 114, 123, 129, 204, 212, 239, 247, 410, 443, 474
Գարդման բերդ 204, 205, 506
Գարդման գետակ 128, 138, 203
Գարդման գյ. - տե՛ս Ամրվար գյ.
Գարդման վանք 204
Գարդմանա ջուր - տե՛ս Գարդման գետակ
«Գարի» կամ «Գարինի» (Գարեգինի) կամուրջ 345
Գարյաղդի - տե՛ս Աշըղլի
Գեղաշեն - տե՛ս Ճապղռան
Գեղարքունիքի մարզ 98, 137, 146, 366, 465, 470, 476, 498, 520, 532
Գեոգ-ուրդ սար 88(ծ.)
Գետաբակ - տե՛ս Գետաբեկ
Գետաբակ գետ 78, 81, 85, 113, 114, 115, 118
Գետաբակի բերդ 67, 68, 118, 119
Գետաբեկ 20, 67-72, 73(ծ.), 74(ծ.), 75, 76, 78, 85, 86, 88, 101, 103(ծ.), 115, 117, 121, 122, 240, 486, 510
Գետաբեկի շրջան 9, 16, 18, 65, 71, 79, 103, 137, 277, 300, 455, 529, 530(ծ.), 542, 543, 546
Գետաբեկի ջուր - տե՛ս Գետաբակ գետ
Գետամիջ 205, 206, 256
Գետաշեն 11, 13, 33(ծ.), 172, 312, 316, 318, 321-327, 333-337, 339, 340, 342-345, 357, 359, 368, 393(ծ.), 420, 425, 428, 431, 547
Գետիկ գետ 95(ծ.), 532
Գետիկ - տե՛ս Նոր Բաշգյուղ
«Գետի Ղոլի խաչ» եկեղեցի (Բարսում գյ.) 473
Գետիշեն 206, 207, 540
Գետիշենագետ (Խեյրաչայ) 206, 207, 317, 318, 362, 419
Գեորգիևսկ - տե՛ս Լենինքենդ
Գեորգսֆելդ - տե՛ս Լենինքենդ
Գերան-դյուզ (Գետաշեն գյ.) 322
Գերան-չայ (Գետաշեն գյ.) 322
Գերան-Չելաբերդ-երի (Գետաշեն գյ.) 322
Գերգեր - տե՛ս Կառկառ
Գերեզմանուտի քուչա փ. (Գանձակ ք.) 35
Գերմանիա 70(ծ.)
Գէորգեան դպրոց - տե՛ս Սբ. Գևորգյան դպրոց (Փիր գյ.)
Գինեձոր - տե՛ս Արլահ
Գլամբար - տե՛ս Գյուլամբար
Գյագունց աղբյուր (Արծվաշեն գյ.) 530
Գյադամիշ - Գետամիջ
Գյարյառ - տե՛ս Կառկառ
Գյըլխլի 207
Գյոգ-Իմամ մատուռ-ուխտատեղի - տե՛ս Խոսրով նահատակի մատուռ
Գյոդակղերե 79
«Գյոզալ քար» խաչքար 273
Գյոյգյոլ լիճ- տե՛ս Ալիհարակ լիճ
Գյոյմամեդլի 485
Գյոյնիյան 423
Գյոյջալի 439
Գյորան գյ. 323, 336, 343
Գյորան կայարան 323
Գյորան տեղամաս 367
Գյորանբոյ-Ահմեդլի - տե՛ս Կասում-Իսմայիլով
Գյորանլի 423, 426
«Գյուլարի հանգստարան» գերեզմանոց (Բադա գյ.) 465
Գյուլամբար 485-487, 500, 502, 519, 540, 545
Գյուլամբյուր - տե՛ս Գլամբար
Գյուլիստան 31, 334, 410, 507, 542
Գյուլիստանի մելիքություն 11
Գյուլմամեդլի (Միսկինլի) 423
Գյունաշ 511
«Գյունաշ-Արևաշեն պկատեղեր» գյուղատեղի 498
Գյունաշ թ-մաս (Չարդախլու գյ.) 512
Գյունաշլի - տե՛ս Կրզեն
Գյուվանդիկ գյ. 285
Գնըզդաղ - տե՛ս Կառուտ սար
Գոլիցինո - տե՛ս Մարտունի
Գոլիցինսկայա փ. (Գանձակ ք.) 47
Գողթն գավառ 286, 334, 480
«Գոմեր» (Խաչակապ գյ.) 250
Գորելսկ 79
Գվարզին բերդ - տե՛ս Գավազան բերդ
Գրեմու Բազար 79
Գրքմանիկ գյ. - տե՛ս Ամրվար գյ.
Գուլլար - տե՛ս Քյոլլու (Դաշկեսանի շրջ.)
Գևորգյան ճեմարան (Էջմիածին ք.) 203, 530(ծ.)

## Դ

Դագիրման դաղ սար 93
Դադի վանք 20
Դալմամեդլի ավան 422, 423, 426, 431, 433, 434
Դալյար 70(ծ.), 72(ծ.), 487, 495
Դալլյար կայարան 34
Դալլյար-Ջեիր 487
Դալլյար-Ջրդախան 487
«Դալյար Երի» կալվածք52
Դաղեթ 121
Դաղստան 12, 30, 431
Դաղրմանդաղ 79
Դաղ-Քյասաման 439, 446
Դամժալի (Դաշկեսանի շրջ.) - տե՛ս Ղաբաղթափա
Դամժալի (Խանլարի շրջ.) 358
Դայա-Ղարաբուլաղ 79
Դանայեր 358
Դանձուտ - տե՛ս Տանձուտ
Դաշբուլաղ 459, 487, 491
Դաշկեսանի շրջան 9, 16, 18, 20, 52, 65, 71, 102, 137, 251, 303, 455, 540, 542
Դաշկեսան 207
Դաշ-Սալահլի 439, 440, 443
Դասան 18
Դասնո վանք - տե՛ս Կարմիր վանք (Գյուլամբար գյ.)
Դաստափյուր - տե՛ս Դաստափոր
Դաստափոր 17, 207, 209, 210, 255
Դաստափոր գետակ 252, 255

Դաստափորի շրջան - տե՛ս Դաշկեսանի շրջան
Դավթյան դպրոց - տե՛ս Հայկազյան դպրոց (Թեհրան)
Դարբանդ 506
Դարբանդ - տե՛ս Փառխոսի վանք
Դարդերե 211
Դարյուրտ 80
Դարվանդ սար 88(ծ.)
Դեդոփլիս-Ծղարոյի շրջան 303
Դեմիրչիլյար 445
Դերբենդ 506
Դիլիջան 446, 530(ծ.)
Դիլիջանի գավառ 531
«Դիմաց տեղ» բարձունք (Բանանց գյ.) 203
«Դիմաց տեղ» քար (Բանանց գյ.) 141, 189
«Դիտավան» աշտարակ 451
Դիրաբեքիր 23
Դիքդաշ 80
Դիքջա բլուր 457
Դիք քուչա փ. (Գանձակ ք.) 33, 35
Դմանիս 436
Դյուզխալֆալու - տե՛ս Դյուզղշլաղ
Դյուզղշլաղ 445
Դյուզ-Ղըրխլի գյ. 285
Դյուզ-Յուրտ 81, 113, 116(ծ.)
Դյուզ-Ջրդախան գյ. 285
Դյուզ-Ռասուլլու 81
Դյուհարլի 491
Դոզիլար - տե՛ս Բիրգյոզ
Դոզուլար - տե՛ս Բիրգյոզ
Դոնդարլի գյ. 285
Դոնդար-Ղուշչու գյ. 285
Դվին 19, 24, 67, 444, 506
Դուլուս 318

## Ե

Եաղուբլի 17
Եզարչի-Ղազախլար 423
Ելենդորֆ - տե՛ս Խանլար
Ելիզավետպոլ - տե՛ս Գանձակ
Ելիզավետպոլի նահանգ - տե՛ս Գանձակի գավառ
Ելփակ (Յոլփակ) 424
Եկեղեցաձորի (Քիլիսադարա) կամուրջ (Բանանց գյ.) 157
Եկեղեցաձորի (Քիլիսադարա) հնավայր (Բանանց գյ.) 200
Եկեղեցաջուր գետ (Քիլիսասուլու) 279, 285, 301
Եկեղեցու քուչա փ. (Գանձակ ք.) 35
Եկեղյաց գետ 443
«Եղեցի հող» (Բանանց գյ.) 141, 189
Եղիշ Առաքյալի վանք 20
Եղնասարի անապատ - տե՛ս Եղնասարի վանք
Եղնասարի Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Եղնասարի վանք
Եղնասարի Սբ. Եղիշե առաքյալ եկեղեցի - տե՛ս Եղնասարի վանք
Եղնասարի Սբ. Սարգիս եկեղեցի - տե՛ս Եղնասարի վանք
Եղնասարի վանք (Գետաշեն) 354-357
Եղունբուլաղ գյ. 285
Ենգիջա բազար - տե՛ս Սլավյանկա
Ենիարադ 492
Ենի-Ալիբայրամլի 360
Ենիգյուն 445
Ենիհայադ 492, 504
Ենիքենդ 81
Ենիքենդ (Ղազախի շրջ.) 445
Ենիքենդ (Պապաջան) 81
Եոքն-շահառ (Մուռուտ) 404
Եվլախ 426, 508
Եվլախի շրջան 303, 421
Երզեվանք 444, 506
Երերույք 219
«Երի վանք» (Մարտունաշեն գյ.) 393
Երմողիա քահանայի վանք (Ազատ գյ.) 315
Երրորդ Ինտերնացիոնալ 492
Երուսաղեմ 54, 60, 96, 103, 104, 110, 115
Երևան 27-29, 35, 173, 203, 318, 350, 473, 474, 480, 511, 530(ծ.), 532, 541, 543, 546
Երևանի գավառ 510
Երևանի խանություն 498, 508
Երևանլի (Կարակոյունլի) 424
Երևանցոց թ-մաս (Գանձակ ք.) 35, 36, 38, 47, 52, 53

## Զ

Զագամ գավառ - տե՛ս Զակամ գավառ
Զագլիկ - տե՛ս Փիր
Զաղա գյուղատեղի - տե՛ս Ազիզանք գյուղատեղի
Զազալի 360
Զակամ - տե՛ Չեգամ
Զակամ գավառ 79, 91, 95(ծ.), 100, 122, 278, 401, 410
Զակամ գետ 66, 67, 70(ծ.), 80, 99, 102, 120, 277-279, 282-284, 297-302, 491, 493
Զակամ կայարան 457, 460, 494
Զակամ ձոր 457
Զահմետքենդ 84
Զամանլի 84
«Զատկի ծառ» սրբատեղի (Կրզեն գյ.) 297
Զաքար բուլաղ 115
Զելիմխան 445
Զեյնալ-Զինլու - տե՛ս Զինլի-Զեյնալի
Զիյադլի 360
«Զինավորի խաչ» 542
«Զինգեր» ընկերություն 74(ծ.)
Զինզաղալ - տե՛ս Ցնծահալ
Զիվլան գետակ 205
«Զորի խաչ» (Մարտունաշեն գյ.) 392

## Է

Էիրլոդ 318
Էլիանց քար (Բանանց գյ.) 141
Էլչի ճանապարհ 198, 502
Էմիր 84
Էյնալի 445
Էյվազալիլար 424
Էյրիվանք գյ. 84
Էնգելսքենդ 492
Էոքիզ դաղ 136
Էջմիածին 203, 218, 228, 230, 231, 264, 364, 478(ծ.), 516
Էրզրում 30
Էրենենցիք - տե՛ս Նովո-Գորելովկա
Էրէվան - տե՛ս Երևան
Էրքեջ 318

## Ը

«Ընապատ» գյուղատեղի (Միրզիկ գյ.) 398
Ընկուզուտ (Ղոզլու) սար (Յանխլի գյ.) 300
Ըյուքյուզ լեռ - տե՛ս Օքուզ դարա լեռ

## Թ

Թազաքենդ 492
Թաթարլի 467, 492
Թաթլի 360, 451
Թաթլի (Ղազախի շրջ.) 445
Թաթլու - տե՛ս Պառավաքար
Թալա 461
Թալին 219
Թալիշ 492
Թալիշի մելիքություն - տե՛ս Գյուլիստանի մելիքություն
Թաղլամաջ 16
Թասուքի ձոր (Կրզեն) *297*
Թավրիզ 23, 27, 28, 288
Թարգմանչաց անապատ (Բանանց գյ.) 171, 193, 196, 197, 198
Թարգմանչաց վանք (Խաչակապ գյ.) 20, 52, 105, 117, 215, 217-220, *222, 225,* 226, *227,* 228-233, 240, 250, 309, 365
Թարթառ ավան 446
Թարթառի շրջան 421
Թարս-Դալլյար 525
Թափան 211, 240
Թափանի ջուր 115
Թաքնալի - տե՛ս Մահմուդլու
Թաքնալի (Շամխորի շրջ.) - տե՛ս

Սամեղ Վուրղուն
Թբիլիսի - տե՛ս Թիֆլիս
Թբիլիսի-Բաքու երկաթուղագիծ 438
Թբխլի սար 88(ծ.)
Թելեգրաֆի ձոր 115
Թեհրան 475, 476
Թիլքլու սար 299
«Թիք-Ղաջ» կալվածք - 51
Թիֆլիս 12, 19, 20, 24, 29-31, 34, 74(ծ.), 101, 108, 174, 197, 203, 212, 265, 283, 289, 310, 343, 376, 401, 410(ծ.), 429, 436, 442, 447-449, 461, 468, 472, 475, 486, 491, 492, 506-508, 510-512, 518, 530(ծ.)
Թիֆլիսի նահանգ 203
«Թխկուտի» մատուռ (Բաղա գդ.) 467
Թյուրեք (Թյուլքիքյանդ գդ.) - տե՛ս Աղյուսաշեն
Թոզ փըրփընջան այր (Բաղա գդ.) 466
Թողանալի 360, 361
Թոմախլի - տե՛ս Մեշադիլար
«Թոուզ» կայարան 289
Թոուզ քղք. 284, 285, 300
Թոուզի շրջան 9, 16, 18, 65, 79, 80, 277, 278, 303, 455, 529, 542
Թոփալհասանլի 361, 362, 419
«Թոփրաղ-ղալա» - տե՛ս «Հողաբերդ»
«Թռած խաչ» ուխտատեղի (Գառնակեր գդ.) 485
Թռան եղցի (Բարսում գդ.) 474
Թռեղք 406
Թրիալեթ - տե՛ս Թռեղք
Թուլալլար 362
«Թուման» գյուղատեղի (Միրզիկ գդ.) 398
Թուրքիա 11, 15, 16, 29, 73(ծ.)
Թուրքմենչա 508
Թուրք-Սարով 433

## Ժ

«Ժամհարյան» եղբայրների գյուղատնտեսական դպրոց (Գանձակ ք.) 47, 51

## Ի

Իբրահիմ-Հաջիլի գդ. 285
Իգիրմիդորտ թ-մաս (Գանձակ ք.) 34, 38
Իգուլիս - տե՛ս Ագուլիս
Իլղիր 256(ծ.)
Իկոնիա 445
Իյդալի-դուրուղ 423, 426
Ինազ-բողան գետ - տե՛ս Ինեքբողան գետ
Ինեքբողան գետ 84-86, 89, 99
Ինեքբողան գդ. - տե՛ս Կովախեղդ գդ.
Ինջա գետ 433
Իշկյանույ 16
Իջևան 439, 446, 448(ծ.), 449, 461, 542
Իսախան - տե՛ս Իսաքենդ
Իսաքենդ գդ. 285
Իսրաֆիլ աղայի մզկիթ 449
Իվերիա 9
Իտամզադե 28
Իրան - տե՛ս Պարսկաստան
«Իրկիշեցիք» գյուղատեղի 475
Իրմաշլի - տե՛ս Էնգելսքենդ
Իրմաշտլու 491

## Լ

Լազիլար գդ. 285
«Լալաքա» գյուղատեղի 475
Լահիճ 362
Լեղան 492
Լեղանի Սբ. Աստվածածին եկեղեցի 493
Լենինաբադ 493
Լենինքենդ 493
Լենինֆելդ - տե՛ս Լենինքենդ
Լենքորան 64
Լեշքար 85
Լիս 12, 410(ծ.)
Լղարակ - տե՛ս Բաղա
Լղարակ գետ - տե՛ս Բաղաջուր
ԼՂՀ 9, 16, 137, 303, 414(ծ.), 421
Լճաշեն 233
Լյազգիլյար 493, 518
Լյաք 317, 362, 363, 374
Լոկունց թաղ (Բանանց գդ.) 141
Լոռի 99, 443
Լուսառատ 288
Լուցովկա 136

## Խ

Խաղարի վանք - տե՛ս Խաթրավանք
Խազնի ձոր (Բաղա գդ.) 466, 467
Խաթինլի գդ. 285
Խաթրավանք 230
Խաթունաշեն Սբ. Աստվածածին եկեղեցի 443
Խաղխաղ - տե՛ս Յանխլի
Խամշի վանք 95(ծ.)
Խանդակ 286
Խանախլար տեղամաս 363
Խանուխլար Մեծ - տե՛ս Մուսաքեյ
Խանլար 51, 303, 311, 334, 361, 363-365, 505
Խանլարի շրջան 9, 18, 71, 137, 303, 421, 422, 430, 455, 484
Խանձք 414(ծ.)
Խանքարվենդ 424
Խանքենդ - տե՛ս Ղարադաղլու
Խաչաբակ 240
Խաչակապ 20, 52, 102, 117, 212, 214-217, 228, 229, 231-233, 249, 250, 321, 365, 366, 461
Խաչակապ-Արմավիր 366, 367
Խաչբուլաղ 233
«Խաչբուլաղ» աղբյուր 234
Խաչեն 129, 324
Խաչենի գավառ 25, 85, 118
Խաչենի իշխանություն 124
Խաչքառակ 461
«Խաչի» աղբյուր (Բանանց գդ.) 192
«Խաչի դյուզ» 536
Խաչի հող (Բանանց գդ.) 198
Խաչի սար թ-մաս (Չարդախլու գդ.) 512
«Խաչի սեռ» ուխտատեղի (Չարդախլու գդ.) 517
«Խաչի փոս» գյուղատեղի (Միրզիկ) 398
Խաչյալ (Քամանդար) 526(ծ.)
«Խաչ-Քցի» ուխտատեղի-մատուռ (Խաչակապ գդ.) 216
Խասադարլի 424
Խավարաձոր 461
Խավունիս - տե՛ս Նովո-Սպասովկա
Խարկով *187*
Խարխար 85
Խեյրիմլի 446
Խիլխինա - տե՛ս Յանխլի
Խիլխինա (Ղազախի շրջ.) 446
Խինալի 424
«Խլփանց խաչ» մատուռ 180, 189
«Խնձորի» աղբյուր (Բանանց գդ.) 198, 200
«Խնձորի» աղբյուր տեղամաս (Բանանց գդ.) 198
Խնձորուտ - տե՛ս Ալմալու
Խննալու կալվածք - 66
Խննադռան գդ. 285
Խոյ 16, 287, 310, 424
Խոյլար - տե՛ս Խոյլի
Խոյլի 424
Խոռյամ 474
Խոսրով նահատակի մատուռ 61, 62
Խոտորաշեն 327
Խորանաշատի Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Խորանաշատի վանք
Խորանաշատի վանք 250, 278, 282, 283, 302, 457, 526
Խորասան 443
Խորեզմ 27(ծ.), 444
Խրամ գետ 121, 132
Խրթին անապատ 78
Խրխափորի ձորակ 542
Խուլխինա - տե՛ս Խիլխինա (Ղազախի շրջ.)
Խուլուֆ - տե՛ս Տիկ-Խուլուֆ
Խունիս - տե՛ս Նովո-Սպասովկա
Խունիսավանք 85

Խուրջին հող (Բանանց գղ.) 198

**Ծ**

Ծակ քար (Աբլահ գղ.) 304(ծ.)
Ծաղկաձոր (Խաչակապ գղ.) 232
Ծաղկոց անապատ (Գառնակեր գղ.) 406, 470, 479-482, 484
Ծաղկոց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Ծաղկոց անապատ (Գառնակեր գղ.)
Ծաղկոց անապատի վանական դպրոց 482
«Ծաղկոց» ուխտատեղի (Խաչակապ գղ.) 216
Ծակառաշեն 256
Ծերատին աղբյուր (Բաղա գղ.) 466
«Ծեր Պապ» մատուռ (Բանանց գղ.) 189
Ծիքելի-Ծղարոյի շրջան 277
Ծիլ քերծ (Միրզիկ գղ.) 398
«Ծիրանավոր» գյուղատեղի 476
«Ծիրանավոր» ուխտատեղի-մատուռ (Խաչակապ գղ.) 217
«Ծծեր» աղբյուր 504, 540
Ծովակ 465
Ծոփք 9
Ծպովանց ջրաղաց 158
«Ծռնվեր» մատուռ - տե՛ս «Ձեռնավոր» մատուռ

**Կ**

Կաբաղքափա - տե՛ս Ղաբաղքափա
Կաղիլի 519
«Կաթնասար» (Կիրանց գղ.) 240
Կալոնկա 511
Կալքար 526
Կախի շրջան 303
Կախք (Կախեթ) 24, 116
Կածարեթ 444
«Կաղնի խաչ» վանք (Կիրանց գղ.) 239
«Կաղնի խաչ» ուխտատեղի (Բարում գղ.) 476
Կաղնուտ սար - տե՛ս Փալտոու սար
Կամն 241, 314, 367, 368, 371, *373,* 543, 547
Կայեն 10
Կայմաղլի 446
«Կանգնեալ խաչ» մատուռ-ուխտատեղի (Բարում գղ.) 475
«Կանգնեալ խաչ» վանք - տե՛ս «Կաղնի խաչ» (Կիրանց գղ.)
Կապ ժայռ (Բաղա գղ.) 466
Կապաղակ 18
Կապան 40
Կապանք - տե՛ս Փառխոսի վանք
Կառուտ սար 132(ծ.)
Կասպից ծով 11, 441
Կասում-Իսմայիլով 426
Կասում-Իսմայիլով (Շամխորի շրջ.) 493
Կասում-Իսմայիլովի (Գյորանի) շրջան 9, 407, 421
Կարախանլու 289
Կարամուրադ - տե՛ս Ղարամուրատ
Կարին 288, 445
Կարկառ 73(ծ.), 79, 84, 85, 121
Կարկուջակ 426
Կարկուչակ - տե՛ս Սամեդաբադ
Կարմիր, ավան 530, 532, 536
«Կարմիր ավետարան» եկեղեցի - տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցի (Թիֆլիս)
Կարմիր-կապ 113
Կարմիր Նահատակ - տե՛ս Ավագ Սբ. Նշան եկեղեցի (Գետաշեն գղ.)
Կարմիր վանք (Գյուլամբար գղ.) 486, 487, 502, 545
Կարմիր քար (Բանանց գղ.) 198
Կարմիրի շրջան 65, 470, 476, 498, 529, 530, 531, 532
Կարս 35, 118
Կարսի մարզ 98, 99, 101, 497
Կաֆա *338*
Կենջա - տե՛ս Գանձակ
Կեչառի - տե՛ս Գանձակ
Կեջավենդ գղ. 285
Կեռստավանք բերդ (Փիք գղ.) 268
Կընդիվան 527
Կիլիկիա 244
Կիյասլի 373
Կինեվանուց ձոր - տե՛ս Աբլահ
Կիրովաբադ - տե՛ս Գանձակ
Կիրանց 52, 216, 234, 236(ծ.), 237, 240, 446
Կլիջղադ-Թափանուս գետակ 113
Կյուլամբյուր - տե՛ս Գյուլամբիր
Կյուրիկյան թագավորություն 245
Կոբալտ 240
Կոթ 68, 442
Կոլխոզբենդ 493, 494
Կողբոփոր 453
Կողբ 9, 506
Կոմինտերն 85
Կոմսոմոլ 494
Կոշ 546, 547
Կոշկար - տե՛ս Արթինաջուր
Կոսալար 494
Կոսակալ գյուղատեղի (Մարտունաշեն գղ.) 386, 387
Կոստանդնուպոլիս 11, 228
Կովախեղդ 85
Կովլար գղ. 286, 378
Կովլարսարի 373
Կովլար-Սարիլի - տե՛ս Կովլար
Կովկաս 16, 19, 31, 324, 363, 407, 446, 497, 498
Կոտման 444
Կորխ 86, 87, 136
Կորյունապատ թ-մաս (Գանձակ ք.) 14, 36, 37, 38, 47, 51, 59
Կորյունապատի Սբ. Սարգիս աղոթատուն 59
Կորչայ գետակ 426
Կոզեն - տե՛ս Կրզեն
Կոկոան ձոր (Բարսում գղ.) 475
Կվերքանց Կաբրիելի (Գևորգյան Գաբրիել) ջրաղաց 158
Կրասնոսելսկ - տե՛ս Կարմիր
Կրասնոսելսկի շրջան - տե՛ս Կարմիրի շրջան
Կրզեն 11, 278, 286-290, 297, 431, 495
Կրմզի-Ղազախլար 426
Կուճուր Շամլուղ - տե՛ս Շամլուղ Բալա
Կումլու 85
Կումլու Աշաղի (Ներքին) 85
Կյուրակչայ 426
Կունիա 511
Կուշչի - տե՛ս Խաչակապ
Կուսանաց անապատ (Մեծ Ղարամուրատ) գղ. 88, 91, 92, 100
Կուսանաց անապատ եկեղեցի (Գետաշեն գղ.) 340, 342
Կուսանաց անապատ (Մարտունաշեն գղ.) 385, 386
Կուսանաց Սբ. Աստվածածին - տե՛ս Կուսանաց անապատ
Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ (Ոսկանապատ գղ.) 407, 415-417
Կուսանոց Սբ. Տիրամոր եկեղեցի - տե՛ս Կուսանաց անապատ (Գետաշեն գղ.)
Կուսապատ 117
Կուր գետ 9, 80, 277, 286, 289, 297, 318, 363, 377, 445, 450-453, *484,* 506, 518, 526
Կուրակ գետ 9, 11, 316, 321, 323, 336, 344, 359, 360, 366, 378, 393, 418, 423, 424, 427, 429, 430, 431
Կուրբանզադե 426

**Հ**

Հաղրութի շրջան 542
Հազա-դայա սար 88(ծ.)
Հաբամլար գղ. 297
Հաթերք 305
Հաթինջան 298
Հալապ 288, 297
Հալլե 203
Հախում գետ 439, 445, 451
Հաղպատ 245, 443, 493
Հաճին - տե՛ս Հաջիշեն

Համասարաբակ - 256
Համասրապակ - տե՛ս Համասարաբակ
Հայաստան 9, 12(ծ.), 16, 18, 24, 35, 65, 68, 98, 102, 137, 146, 286, 299, 366, 375, 440, 443, 445, 446, 448(ծ.), 451, 465, 470, 473, 476, 480, 498, 505-507, 520, 529, 530, 531, 532, 541, 543, 546, 547
Հայաստանի պատմության թանգարան 247
Հայի Գետաբակ 65, 67, 68, 71, 75, 122, 497
Հայկազյան դպրոց (Թեհրան) 475
Հայ-Կովալյովկա թ-մաս (Գանձակ ք.) 37
Հաջալի 374
Հաջիալիլար 494
Հաջալիլի 426
Հաջիալեկպերլի - տե՛ս Դալլյար-Ջրդախան
Հաջիալեքպերլի (Գետաբեկի շրջ.) 85
Հաջիգեղ - տե՛ս Կամո
Հաջիլար 86, 298
Հաջիհասանլի 298
Հաջիշեն - տե՛ս Կամո
Հաջիշեն (Հաջիքենդ) 308, 311, 318, 374-376, 393, 420
Հասան Ալի սար 88(ծ.)
Հասանլի 298
Հավլաբար թ-մաս (Թիֆլիս) 12, 461, 468, 475, 510, 512
Հատիս - տե՛ս Աշըղլի
Հարամ թաղ (Արծվաշեն գղ.) 530
Հարանց գերեզմանոց (Գառնակեր գղ.) 485
«Հարանց ճգնարան» (Գառնակեր գղ.) 485
Հարանց մատուռ (Չարեք վանք) 109, 110, 115
Հարանց վանք (Մեծ Ղարամուրատ գղ.) 81, 88, 92, 95(ծ.)-97
Հարանց տախտ (Խաչակապ գղ.) 232
Հարսնաքար 240
Հարցանկի - տե՛ս Հարցհանգիստ
Հարցհանգիստ 11, 102, 206, 207, 215, 240, 241, 244, 249, 499, 500
Հացտափ 211, 240, 250, 251
Հելենդորֆ - տե՛ս Խանլար
Հեյդարլի 86
Հենգուզակ 315
Հերիքնազ 84, 86, 135
Հերցանկիս - տե՛ս Հարցհանգիստ
Հերք (Հերեթ) 24
Հիլիհանլի - տե՛ս Յանխլի
Հին Աբլահ - տե՛ս Աբլահ
Հին Աննենֆելդ - տե՛ս Ենիհայադ
Հին Բաղա - տե՛ս Բաղա
Հին Բաշքյանդ - տե՛ս Արծվաշեն
Հին Բարսում 475
Հին Գետաբակ 67
Հին Ջագամ 494
Հին Ղազանբուլաղ - տե՛ս Ղազանբուլաղ
Հին Ղարաբուլաղ 320
Հին, Վերին Ոսկեպար - տե՛ս Յուխարի-Ասկիփարա
Հին Փիբ - տե՛ս Փիբ
Հյուսեյինբեկլի - տե՛ս Ազիզբեյլի
Հյուսիսային Արցախ 9, 14, 16, 18, 148, 486, 539, 543, 546
Հյուսիսային Կովկաս 497
Հնձաձոր գետակ 485
«Հողաբերդ» (Կրզեն գղ.) 297
Հողաչափի աղբյուր 532(ծ.)
Հոռոմաշեն վանք - տե՛ս Կարմիր վանք
Հովի ձոր (Բանանց) 198
Հովհաննավանք 480
Հովնանյան դպրոց (Թիֆլիս) 203
Հոտած աղբյուր (Բանանց գղ.) 198
«Հռիփսիմյան դպրոց» (Գանձակ ք.) 45
Հրեշտակապետաց վանք (Գառնակեր գղ.) 482, *484,* 485
Հունաստան 17, 486
Հունգարիա 18
Հուսկան նահատակ վանք 464, 488, 489, 491

## Ձ

Ձեգամ 494
Ձեգամ-Ջրդախան 360, 494
«Ձեռնավոր» մատուռ (Բանանց գղ.) 198
Ձորագետ գավառ 123
Ձորագյուղ 97
Ձորո գետ 205
«Ձոր Պռակի» քարայր 485

## Ղ

Ղաբաղթափա 17, 234, 251
Ղադիլի 377
Ղազախ քղք. 14, 285, 364, 438, 439, 446, 447, 448, 449, 450
Ղազախաշեն - տե՛ս Հայի Գետաբակ
Ղազախբեյլի 449
Ղազախ-Գետաբակ - տե՛ս Հայի Գետաբակ
Ղազախ-Ելչիլախ 17
Ղազախի գավառ 68, 289, 461, 530(ծ.)
Ղազախի շրջան 9, 18, 20, 277, 435, 439, 440, 531
Ղազախլար 423, 426
«Ղազախլար» մզկիթ (Գանձակ ք.) 63
Ղազախլի -տե՛ս Հայի Գետաբակ
Ղազախլի (Դաշկեսանի շրջ.) 251
Ղազախյոլչուլար 252
Ղազախստան 365
«Ղազան» աղբյուր (Արծվաշեն գ.) 530
Ղազանբուլաղ 426
Ղազանչի (Գետաբեկի շրջ.) - տե՛ս Աղամալի
Ղազանչի (Կասում-Իսմայիլովի շրջ.) 407, 427
«Ղալա» բերդ (Ներքին Քարհատ գ.) 274
Ղալաբոյուն 298
Ղալակա 315
Ղալաչա 68
Ղալաքենդ - տե՛ս Փառիսոս
Ղալի ուս կիրճ 103(ծ.)
Ղասումալիլար 495
Ղասումբեյլի 427
Ղաշխա-չայ 80
Ղարա-արխ - տե՛ս Կասում-Իսմայիլով (Շամխորի շրջ.)
Ղարաբաղ 28, 116, 203, 287, 318, *346,* 407, 450, 507, 510, 512
Ղարաբաղի թեմ 117
Ղարաբաղի խանություն 30
Ղարաբաղլար 377
Ղարաբաղլիլար 298
Ղարաբուլաղ 17, 355, 366
Ղարաբուլաղ - տե՛ս Մարտունաշեն
Ղարաբուլաղ (Գետաբեկ գղ.) 86
Ղարադաղ 86, 427, 476
Ղարադաղ սար 512
Ղարադաղլու 424, 425, 427-429, 433
Ղարադաղլու լեռ 115
Ղարադաշ 298
Ղարադարա 115
Ղարաթաղլար 254
Ղարակովախ 16
Ղարակուլլար 254
Ղարահասանլի 449
Ղարաղոյունլու - տե՛ս Ղարանույ
Ղարաղոջալի 495
Ղարամամեդլի 86
Ղարամ-օղլի սար 512
Ղարամուսալի 429
Ղարամուրատ 12, 17, 73(ծ.), 100, *207, 401,* 457, 486, *528*
Ղարամուրատ գետ 79, 86, 88, 132
Ղարամուրատ թաղ (Շուլավեր ավան) 97, 133(ծ.)
Ղարամուրատի աղջկոց անապատ - տե՛ս Կուսանաց անապատ
Ղարամուրատի անապատ - տե՛ս Հարանց վանք (Մեծ Ղարամուրատ գղ.)
Ղարամ-օղլի լեռ 456
Ղարանույ 495

Ղարայերի 377
Ղարանըլըխի ձոր (Զոքան-Սղնախ գղ.) 301
Ղարաչինար 383
Ղարաջամիրլի 495
Ղարասախկալ 16, 363
Ղարասախկալ Երի 363
Ղարասուլեյմանլի 430
Ղարասունչու 430
Ղարավուլտոմբա 86
Ղարատալ-Դաղ - տե՛ս Ղարատալ թափա
Ղարատալ թափա 494, 495
Ղարափափախ 450
Ղարափիրիմլի 407, 427, 430
Ղարաքեշիշ - տե՛ս Բրաջուր
Ղարըքենդ 86
Ղարատալ Թափա 87
Ղարիբլի 298
Ղափանլի - տե՛ս Մամեդալիլար
Ղեղան - տե՛ս Լեղան
Ղզըլհաջիլի 430
Ղզըլ-Հաջիլի 450
Ղզլջա 377
«Ղըզլ-Հաջալի» մզկիթ (Գանձակ ք.) 63
Ղըզլղայա լեռ 66, 115
«Ղըզղալա» բերդ 504
«Ղըրխլար» մզկիթ (Գանձակ ք.) 63
Ղլիջ դաղ 113
«Ղլտեղ» 475
Ղոզդերե 298
Ղոզղարալի լեռ 86
Ղոթյուլ 254, 545
«Ղոնջա» (Գետաշեն) 355
Ղոշա 298
Ղոշաբուլաղ - տե՛ս Կորխ
Ղոշա-Քյոփրի - տե՛ս «Ջոխտակ կամուրջ»
Ղռան 298
Ղռխլի 374, 378
Ղրաղ-Քյասաման 450
Ղրըխլի (Կասում-Իսմայիլովի շրջ.) 430
Ղրըխլի (Ղազախի շրջ.) 450
Ղըմրաղա (Ղարամուրատի) Կարմիր եղցի 207
Ղուզի-Յուրտ 81
Ղուլալի - տե՛ս Այգեձոր
Ղուշկարա 378
Ղուշչի 360
Ղուշչի - տե՛ս Խաչակապ
Ղուշչի-Այրում 450
Ղուշչի-Արմավիր - տե՛ս Խաչակապ-Արմավիր
Ղուշչուլար 430
Ղուռուդերե 88
Ղուռուխի աղբյուր (Բանանց գղ.) 192
«Ղուրու-դորի» կալվածք 52

## Ճ

Ճաթղռան 498
Ճալեթի վանք 13
Ճամբարակ 531
Ճարկալար - տե՛ս Խոյլի
Ճգնավոր մատուռ (Փառիսոս) 126
Ճգնավորի խուց (Բանանց գղ.) 198
Ճգնավորի քերծ - տե՛ս Ծիլ քերծ
Ճլհան 495
Ճկեր գետ - տե՛ս Ջագիր գետ
«Ճղարանց» գերեզմանոց (Գետաշեն գղ.) 354
Ճովիզ 498
Ճրազիձոր 323, 418

## Մ

Մաարիֆ 88
Մազամլի 450
Մազի կամուրջ (Բանանց գղ.) 158
Մալաքլու 470
Մածնաբերդ 10, 241, 245, 444, 468
Մածնաբերդի վանք 247, 248, 249
Մակու 16
Մահմուդլու 495
Մաղավուզ 327, *352, 353*
«Մաղքում զադե» մատուռ (Փիր գղ.) 268
Մամաջան գետակ 99
Մամեդալիլար 495, 496
Մամռոտ (Մամրըլու) սար (Յանխլի գղ.) 300
Մամուր կալասի - տե՛ս Չարեք բերդ
Մանաշիդ *340,* 379, 419, 542
«Մանդոտ» հնավայր (Բանանց գղ.) 198
«Մանդոտա խաչ» սրբատեղի (Բաղա գղ.) 467
«Մանդոտի խաչ» ուխտատեղի (Բարսում գղ.) 473
Մանսուրլու 16, 289
Մառնեուլի շրջան 88, 135, 278, 284, 511(ծ.), 526
Մասրուց անապատ (Զորագյուղ գղ.) 98
Մարալյան Սարով 431
Մարիամազետ 362
«Մարիամյան» դպրոց (Գանձակ ք.) 47
Մարտակերտի շրջան 421
Մարտունաշեն 378, 381, 383-385, 387, 393, 419, 542, 547
Մարտունի 496, 497, 498
Մարքսովկա 451
Մելիքզադա գյուղատեղի 100
Մելիքզատա գյուղատեղի - տե՛ս Մելիքզադա գյուղատեղի
Մելիք-Մնացականյանի կամուրջ 345
«Մեծ բլուր» (Միրզիկ գղ.) 398
Մեծ Գյունե 50
Մեծ Կողմանք 9
Մեծ Հայք 9
Մեծ կամ Հին կամուրջ (Բանանց գղ.) 155, 158, 159
Մեծ Ղարամուրատ 84, 86, 88, 89, 90, 91, 97, 98, 121, 132, 130, 135, 300
Մեծշեն 327, *353*
Մեծ Շուլավեր 86, 87, 88, 89, 93, 97, 100, 133, 135, 278, 284, 491, 511(ծ.), 526
Մեծ ու Փոքր Վիճասարեր 532(ծ.)
Մեկլենբուրգ-Շվերինգ 363
Մեհրալի 498
Մեղրի 146
Մեյդան (Միջի, Թուրքի) հրապարակ (Գանձակ ք.) 38
Մեյսարի 57
Մեյրամչայ - տե՛ս Մարիամազետ
Մեշադիլար 299
Մեշադիհուսեյնլի - տե՛ս Կոսալար
Մեշադիղարալար 430
«Մեսրոպյան» դպրոց (Գանձակ ք.) 43, 44, 45
Մըռըխլու - տե՛ս Մորուխլու
Մքու-դարա 532(ծ.)
Միափոր գավառ 95(ծ.)
Միխայլովկա (Խանլարի շրջ.) 393, 394
Միխայլովկա (Կասում-Իսմայիլովի շրջ.) 430
Մինգեչաուրի ջրամբար 363
«Միջի վանք» (Մարտունաշեն գղ.) 386, 387
Միսկինլի 71, 72, 73(ծ.)
Միսկինլի - տե՛ս Ղրըխլի (Կասում-Իսմայիլովի շրջ.)
Միսկինլի (Շամխորի շրջ.) 498
Միրզիկ գղ. 115, 198, 256, 318, 321, 361, 394-398, 401, 407
Միրզիկի անապատ - տե՛ս Քարհանի վանք
Միքայելյան «Արհեստավորաց» ուսումնարան (Գանձակ ք.) 47, 56, 64
Մլզնաբերդ - տե՛ս Մածնաբերդ
Մծբին 474
Մկրծ աղբյուր 138
Մկոշանց զոմեր 113
Մկրտչի վանք (Աղդերե գղ.) 283
Մհարլու ձոր (Աղբաշլար գղ.)
Մղոզ - տե՛ս Մաղավուզ
Մմրթլու սար 87, 302, 492
Մյուլքադարլի 519
Մյուլքյուլյու 299
Մյուռնատա Սբ. Աստվածածին անապատ 403-405
Մոլլա-Այրում 299
Մոլլա-Ավազլի - տե՛ս Նիզամի
Մոլլա-Իսմայիլի - տե՛ս Ղազախլար
Մոլլալի - տե՛ս Կոմինտերն

Մոլլաջալլու թ-մաս (Գանձակ ք.) 35, 37
Մոլլաջաֆարլի 451
Մոխրաբերդ 334
Մոխրաբլուր - 16(ծ.)
Մոկոշանց գյուղատեղի 69
Մոկոշանց-Կիզկալա 113
Մոռուտ - տե՛ս Մուռուտ
Մոսկվա 20, 203, 288, 368, 494, 531
Մովսես *297*
Մորզուզուլար 424
Մորուլ 455, 504, 505
Մորուխլու 98, 120
Մռավի լ-շղթա 9, 484
Մռուտ անապատ 50
Մրեջուր գետ - 66
Մրծուին - տե՛ս Մծբին
Մրղուզ լեռ 532
Մրցունիս 256, 316, 323, 357, 358
Մուզուղուլար 430
Մուխտարիյաք 498
Մուխրան 12
Մուղան 27(ծ.), 30
Մունջուխլու 299
Մուշավախ 255
Մուռուտ 59, 361, 401, 402, 405, 407, 409, 415, 420
Մուսայալ 98
Մուսաքեյ 451
Մուսի կամ Միջի աղբյուր (Բաղա գղ.) 466
Մուսկուր 18
Մուսունց ջրաղաց 159
Մուրթունիս - տե՛ս Մրցունիս

## Յ

Յալղշլաղ 406
Յաղուբլի 98
Յանխլի 73(ծ.), 284, 298, 299
«Յանցի» աղբյուր (Բանանց գղ.) 192
«Յանցի» կամուրջ (Բանանց գղ.) 156-158
Յարաղուլու 451
«Յարի խաչ» ուխտատեղի 492
Յոլղուլուլար 430
Յոնջալու 361
Յուխարի-Այիփլի - տե՛ս Չեգամ-Ջրդախան
Յուխարի-Ասկիփարա 451
Յուխարի-Սալահլի 451
Յուխարի (Վերին) Սեյֆալի 498
Յուխարի (Վերին) Քյոնյուլլու 498
Յուխարի-Օբսյուզլյու 300

## Ն

Նաբի-Աղալի - տե՛ս Սաֆարալիև
Նադել 406
Նաղիրքենդ 431
Նալբոբան (Բանանց գղ.) 198
Նախիջևանի խանություն 508
«Նահատակ» ուխտատեղի (Գառնակեր գղ.) 485
«Նահատակի ծոր» (Ճատախ գղ.) 250
Նամխոշ 300
Նաշմիր 423, 426
Նասիբլի 300
Նարիմանովի շրջան - տե՛ս Խանլարի շրջան
Ներսիսյան դպրոց (Թիֆլիս) 203, 263, 449, 491, 530(ծ.)
Ներքի գոմեր 113
Ներքի թաղ (Գետաշեն գղ.) 343
Ներքի հանդի կամուրջ (Բանանց գղ.) 157
Ներքին Ազա 334
Ներքին Ջակամ գավառ 278
Ներքին թաղ (Գետիշեն գղ.) 206
Ներքին թաղ (Հաջիշեն գղ.) 374, 375
Ներքին կամ Քաչալ թաղ (Արծվաշեն գղ.) 530, 532
Ներքին Լղարակ 457
Ներքին հանդ 138
Ներքին Ղոբյուլ 254, 468, 475
Ներքին Ղրաղ-Քյասաման - տե՛ս Ղրաղ-Քյասաման
Ներքին Ճամբարակ 531(ծ.)
Ներքին Չորաթան - տե՛ս Չորաթան
Ներքին Սաբրուլ 113
Ներքին Քարհատ 240, 268-270, 273, 274
Ներքիշեն 543
Նիդերլանդիա 504
Նիզամի (Կասում-Իսմայիլովի շրջ.) 431
Նիզամի (Շամխորի շրջ.) 498
Նիժնի փ. (Մոսկվա) 20
«Նիատակ» («Նահատակ») սրբատեղի (Բանանց գղ.) 200
Նյուզգեր - տե՛ս Նուկզար
Նյուկզար - տե՛ս Նուկզար
Նոյեմբերյանի շրջան 232, 446
«Նովեր աղբյուր» (Բաղա գղ.) 467
«Նովերայ քօլ» տեղամաս (Բաղա գղ.) 467
Նովո-Գորելոյե - տե՛ս Նովո-Գորելովկա
Նովո-Գորելովկա 74(ծ.), 98
Նովո-Իվանովկա 98, 99
Նովո-Սարատովկա 99, 100, 282
Նովո-Սպասկոյե - տե՛ս Նովո-Սպասովկա
Նովո-Սպասովկա (Խավունիս գղ.) 81, 101
Նովո-Տրոիցկոյե - տե՛ս Մարտունի 496
Նոր Ազատ - տե՛ս Ազատ
Նոր Աննենֆելդ - տե՛ս Շամքոր
Նոր-Արմավիր 366
Նորաշեն թ-մաս (Գանձակ գղ.) 34-36, 38, 43, 45, 47, 51, 52, 59, 61, 364
Նորաշեն (Շամշադինի շրջ.) 464
Նորաշեն-Խաչակապ - տե՛ս Խաչակապ-Արմավիր
Նոր Բաղա - տե՛ս Բաղա
Նոր Բայազեդ գավառ 227, 531
Նոր Բայազեդշեն 74(ծ.)
Նոր Բաշգյուղ 530, 532
Նոր Բարսում - տե՛ս Բարսում-Սար
Նոր Բարում - տե՛ս Բարում
Նոր բերդ 245, 444
Նոր-Գետաբակ - տե՛ս Գետաբեկ
Նոր-Հաճն 532
Նոր-Սարատովկա 530(ծ.), 536
Նոր Վերիշեն 547
Նոր Փիր - տե՛ս Փիր
Նուկզար 486, 487, 498-500, 503, 504
Նունգուզար - տե՛ս Նուկզար

## Շ

Շաղիլի 431
Շակաշեն 9
Շահղաղ - տե՛ս Աղխաչ
«Շահ-Սևան» մզկիթ (Գանձակ ք.) 63
Շահվելեդլի 255
Շահումյան 541
Շահումյան ավան (Մառնեուլի շրջ.) 135, 278, 284, 511(ծ.), 526
Շահումյան գղ. (Դաշկեսանի շրջ.) 255
Շահումյանի շրջան 9, 18, 71, 88, 303, 421, 541, 542
Շահփեքարի բերդ - տե՛ս Աղաջ-Ղալա բերդ
Շահփեքարի վանք 281
Շամախի 18, 19, 27, 29, 35
Շամախու գավառ 99
Շամլուղ 300
Շամլուղ Բալա (Փոքր) 300
Շամլուղ Բեյուկ (Մեծ) 300
Շամլուտ ձոր (Աղբաշլար գղ.) 282
Շամխոր - տե՛ս Շամքոր
Շամխոր կայարան 34
Շամխորի շրջան 9, 65, 68, 120(ծ.), 124, 137, 277, 303, 455, 493, 505, 525, 542
Շամշադին 12, 288, 464
Շամշադինի շրջան 88, 289, 290, 464, 486, 488, 530, 531, 542
Շամքոր 10, 12, 19, 27, 31, 67, 85, 86, 88, 110, 121, 129, 240, 266, 410, 444, 455, 485, 495, 504, 506-510, 518
Շամքոր գետ 9, 11, 21, 66, 67, 70(ծ.), 79, 80, 85, 102-104, 109, 113, 115, 118, 119, 123, 138, 203, 250,

251, 254, 255, 257, 268, 467, 470, 472, 473, 475, 476, 482, 485-487, 492, 493, 495, 498, 500, 502, 505, 509, 525, 540, 541, 545
Շամքոր երկիր - տե՛ս Շամխորի շրջան
Շամքորեցոց Սբ. Աստվածածին (Կարմիր ավետարան) 12(ծ.)
Շամքորեցոց թաղ (Թիֆլիս) 108, 507
Շամքոր կայարան 492
Շամքորի անապատ 509
Շամքորի բերդ 506, 509
Շամքորի ձոր 103, 406, 527, 540, 543
Շամքոր քաղաքատեղի 505
Շատախ 102, 212, 249, 250, 382
Շատախ գետակ 250
Շարուկքար - տե՛ս Կիրանց
Շաքարբեկ - տե՛ս Շեքերբեյ
Շաքարբեկ գետ 79, 86, 102, 128
Շաքարբեկ լեռ 66, 102
Շաքարբեկի առու - տե՛ս Շաքարբեկ գետ
Շաքի 13, 18, 19
Շաֆ 423, 426
Շեխղլար 510
Շեյթան-շուկա հրապարակ (Գանձակ ք.) 32
Շեքերբեյ 79, 102, 250
Շըխեյբաթ 300
Շըխլի-1 451
Շըխլի-2 451
Շիբասար (Փիր գղ.) 268
Շիմշաթ 506
«Շինատակի» աղբյուր (Արծվաշեն գղ.) 530
«Շինատեղ» գյուղատեղի (Միրզիկ գղ.) 398
«Շինիխ-Այրում» տեղամաս 531
«Շինութաղի» աղբյուր (Բանանց գղ.) 192
Շիշթեփե 510
Շիշկայա 520
Շիրակի գավառ 284
Շիրվան 27(ծ.), 28, 506
Շմեղ - տե՛ս Շամլուղ
Շմեղ, գյուղատեղի 536
Շողագա - տե՛ս Ջորագյուղ
Շուլավեր - տե՛ս Մեծ Շուլավեր
Շուշանանց թաղ (Արծվաշեն գղ.) 530
Շուշի 30, 35, 110, 447, 507
Շուշիի թեմական դպրոց 203
Շուրաքենդ 17, 102

## Ո

Ոչխարաջուր գետակ 234
Ոսկաթել առաքյալի ջուր (Բանանց գղ.) 198
Ոսկան վանք - տե՛ս Հուսկան նահատակ վանք
Ոսկան ճգնավոր - տե՛ս Հուսկան նահատակ վանք
Ոսկանապատ 11, 256, 318, 321, 361, 401, 406-410, 412, 413, 415, 417, 418, 427, 484
Ոսկանապատ գետ - տե՛ս Գանձակ գետ
Ոսկանապատի անապատ - տե՛ս Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ (Ոսկանապատ գղ.)
Ոսկանապատի ձոր 410
Ոսկեթել ուխտատեղի (Գետիշեն գղ.) 206
Ոսկեպար 68
Ոսկեպար գետ 9, 436, 437, 438, 445, 450, 451
Ոսկի անապատ - տե՛ս Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ (Ոսկանապատ գղ.)
Ոսկյան - տե՛ս Օսգյան
Ոսկյանց վանք - տե՛ս Հուսկան նահատակ վանք

## Չ

Չաքարլու բուլաղ 114
Չաքախ գղ. 91, 298, 300, 301
Չախմախքար 114, 115
Չախմախի սըր - տե՛ս Չախմախքար
Չալբուռուն գղ. 102
Չալղաղ - տե՛ս Չալղաշ
Չալղաշ 102
«Չամչի» աղբյուր (Արծվաշեն գղ.) 530
Չայլի 510
Չայլի-Կոմունա 452
Չայլիլար 324
Չայլի-Քոսալար 452
Չայլու 418
Չայլու թ-մաս (Գանձակ ք.) 35, 38
Չայլուի քուչա փ. (Գանձակ ք.) 35
Չայ-Ռասուլլու գղ. 103
Չանախչի գետակ 279
Չանախչի գղ. (Դաշկեսանի շրջ.) - տե՛ս Համասարաբակ
Չանախչի գյուղատեղի - տե՛ս Տանձուտ
Չանաղչի ձոր (Աղբաշլար գղ.) 282
Չանթաղ - տե՛ս Ջանյաթաղ
Չավչավաղզե փ. 39
Չարդախլու 70, 72, 74(ծ.), 456, 461, 470, 485, 487, 488, 495, 497, 510-516, 518, 526, 531(ծ.)
Չախր-յոլի սար 512
Չամբարակ - տե՛ս Ճամբարակ
Չարենցավան 532
Չարեք անապատ - տե՛ս Չարեք վանք
Չարեքազգետի անապատ - Չարեք վանք
Չարեքա մենարան - տե՛ս Չարեք վանք
Չարեք բերդ 68, 103, 104, 118, 119, 255, 506
Չարեք գետ 104
Չարեք վանք 12(ծ.), 13, 66, 69, 102-105, 107-111, 113-118, 204, 254, 263, 264, 400, 478(ծ.)
Չափառլու բուլաղ աղբյուր 113
Չափար բուլաղ 115
Չափարլի 518
Չելաբերտի 431
Չեշմալի 300
Չեռնիգովի նահանգ 497
Չիլքին 323, 343
«Չինասթաղ» կամ «Չինաստան» թաղ (Արծվաշեն գղ.) 530
Չմանկատուկ 445
«Չոբանանց խաչ» ուխտատեղի 474
Չոբան-Արղալի 418
Չոբան-Սղնախ գղ. 301
Չոբան-Սղնախ սար (Աղաջ-Ղալա գղ.) 280, 526(ծ.)
Չոբանքենդ 120
Չոլակ 57
Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցի 47, 57, 58, 59
Չովդառ - տե՛ս Հարցհանգիստ
Չորաթան 530
Չրաղիձոր - տե՛ս Ճրագիձոր
Չրըփիրթ - տե՛ս Ջրաբերդ
«Չուգունլու» գյուղատեղի 494

## Պ

Պանանց - տե՛ս Բանանց
Պանդ - տե՛ս Սբ. Պանդալիոն մատուռ
Պանդ լեռ 316, 367, 401, 418
Պանդաջուր 402
Պանդավանք - տե՛ս Սբ. Պանդալիոն մատուռ
Պապաջան (Եմիքենդ) 81, 101, 110, 120
Պապաջան գետակ 81, 102
Պապի գոմեր 502, 503
Պառավքար 464
Պասակեր գղ. 81
Պաստուն- տե՛ս Բարսում
«Պատած տուն» 535
Պատրե քուչա փ. (Գանձակ ք.) 35
Պարտա - տե՛ս Բարդա
Պարտավ 9, 12, 19, 27(ծ.), 431, 506
Պարսկաստան 10, 11, 15, 20, 29, 30, 87, 100, *305,* 360, 407, 427, 443, 450, 474, 476, 512
Պետերբուրգ 518
Պլանքենդ 493, 518

Պյատիգորսկ 203
Պտկեսբերք - տե՛ս Պտկի Սբ. Գևորգ
Պտկի Սբ. Գևորգ ուխտատեղի (Աղե-խուշ) 317
Պրավդա 518, 519

## Ջ

Ջագիր 461, 479, 497, 519, 525, 541
Ջագիր գետ 84, 98, 504
Ջանալի 452
Ջանզա - տե՛ս Գանձակ
Ջանյաթաղ 353
Ջաջիլի 115
Ջասատի կամուրջ (Աղբաշլար գյ.) *282*
Ջարկյալար - տե՛ս Խոյլի
Ջաֆարլի (Գետաբեկի շրջ.) 120
Ջաֆարլի (Ղազախի շրջ.) 452
Ջեյրանչյոլ 495
Ջիբան գյ. 99
Ջինլի-Բոլուսլու 431
Ջինլի-Ջեյնալի 431
Ջինլու - տե՛ս Մեշադիդարալար
Ջիրափարք - տե՛ս Ջրաբերդ
Ջիրդեկ 301
Ջլովդարլու 289
«Ջոխտակ կամուրջ» գյուղատեղի 70, 79, 80
Ջողաս գետ - տե՛ս Ոսկեպար գետ
Ջվանշիր գավառ 446
Ջրաբերդ բ-մաս (Գանձակ) 34, 38
Ջրաբերդ 30, 50, 182, 326, 334, *352, 353,* 457, 530
Ջուխտակ վանք (Խավունիս) 81, 101
«Ջուխտակ քար» 536
Ջուղա 20, *80,*

## Ռ

Ռահիմլի 431
Ռիկովկա - տե՛ս Կամո
Ռուսաստան 9, 18, 20, 30, 31, 41, 147, 288, 407, 410, 426, 532
Ռուստամ-Ալիև (Ղարաբուլաղ) 120, 543

## Ս

Սաբաթ-Քեչմազ 120
Սաբանլարի քուչա փ. (Գանձակ ք.) 35
Սաբիրքենդ 525
Սաբլուղի գոմեր 113
Սազիմ գավառ - տե՛ս Ջակամ գավառ
Սազմազու 113
Սալեր 525
Սալմաստ 16
Սախալին 361
Սամադբայլու 289
Սամանլըղ - տե՛ս Սամանլու
Սամանլու 98, 120
Սամեդաբադ 431
Սամեդ Վուրղուն 525
Սանահինի վանք 13
Սանգյար 16
Սանգյար-թափա բլուր 513
Սանքրուկ 527
Սաջին սրր 115
Սավուրեցիք գյուղատեղի - տե՛ս Սվրեցիք գյուղատեղի
Սատանի խաչ 127
Սատանի սրր 114
Սարատով 288
Սարատովի նահանգ 99
Սարդարի թալա 136
«Սարի» աղբյուր (Արծվաշեն գյ.) 530
Սարի Բարսում - տե՛ս Բարսում-Սար
Սարի Բարում - տե՛ս Բարում
Սարիթալա 301
Սարի-թափա բլուր 447
Սարիկյոյնակ 121
Սարիղամիշ 419
Սարիսու 324, 379, 419
Սարով 286, 431, 432, 433
Սարու-Եալ (Մոռուտ) 404
«Սարույալ» տեղամաս (Խաչակապ գյ.) 215
Սարու-Սու ջուր (Մոռուտ գյ.) 404
Սարքյար 419
Սափի-քյուրդ 393
Սաֆարալիև 419
Սաֆարլի 301
Սաֆիքյուրդ 433
Սեյիդքենդ - տե՛ս Կիրանց
Սեյֆալի 456
Սըռսռուտ 79
Սիբիր 476
«Սիմենս» ընկերություն 70, 240, 269
Սիպտակ ջուր աղբյուր 103(ծ.)
Սիս (Մասիսի շրջ.) 288
Սիրուն խաչ (Ոսկանապատ գյ.) 417
Սլավյանկա 71, 72, 74(ծ.), 101, 121, 122, 136
Սղնախ (Կախեթ) 116, 258(ծ.), *263*
Սյունիք 12, 146, 230
Սնկապատ - տե՛ս Ոսկանապատ
Սոգութլու (Ուռուտ) 71, 74, 75(ծ.), 122
Սոլակ 67
Սոլոլակ թ-մաս (Թիֆլիս) 461
Սոմխեթ 443, 444
Սոնալար 123
Սոչի 288
Սորեկատեղեր (Բանանց գյ.) 198
Սոֆուլար 301
Սոֆուլու 452
Սպահան 100, 407
Սպիտակաշեն 497
Սպիտակ առու ձոր 485
Սպիտակշեն 525
Սպիտակ ջուր (Գետաշեն գյ.) 355
Սռսռուտ 525
Սվերդլովսկ 288
Սվրեցիք գյուղատեղի 254
Սրբեկանց թաղ (Արծվաշեն գյ.) 530
«Սրբլթոն» մատուռ (Ամրվար գյ.) 204
Սուլթանեցիք գյ. 92, 100, 101
Սուլտանե - տե՛ս Սուլթանեցիք
Սուլուկ - տե՛ս Ազատ
Սուլուկնաձոր 315
Սուլուք - տե՛ս Ազատ
Սութքուլան 30
Սուլուքի անապատ - տե՛ս Երմողիա քահանայի վանք
Սունձիլար - տե՛ս Ֆիզուլի
Սբ. Ամենափրկիչ եկեղեցի (Կամո գյ.) 368
Սբ. Ամենափրկիչ (Մեծ) եկեղեցի (Մեծ Ղարամուրատ գյ.) 89, 91
Սբ. Ամենափրկիչ վանք (Նուկզար գյ.) 486, 487, 500, 502, 504, 540
Սբ. Աստվածածին եկեղեցի (Ախրջի գյուղատեղի) 504
Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Սբ. Հովհաննես եկեղեցի (Ազատ գյ.)
Սբ. Աստվածածին եկեղեցի (Բաղա գյ.) 461, 463
Սբ. Աստվածածին եկեղեցի (Բախշիկ գյուղատեղի) 207
Սբ. Աստվածածին եկեղեցի (Բանանց գյ.) 150-160, 171, 198
Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բարսում գյ.)
Սբ. Աստվածածին եկեղեցի (Գանձակ ք.) 36, 43, 45, 47, 51, 52, 364
Սբ. Աստվածածին եկեղեցի (Գառնակեր գյ.) 479
Սբ. Աստվածածին եկեղեցի (Գետաբեկ գյ.) 68, 76
Սբ. Աստվածածին եկեղեցի (Գետաշեն գյ.) 339, 340, 343, 344
Սբ. Աստվածածին եկեղեցի (Թիֆլիս) 507
Սբ. Աստվածածին եկեղեցի (Խաչակապ գյ.) 215
Սբ. Աստվածածին եկեղեցի (Խոյլի) 425
Սբ. Աստվածածին եկեղեցի (Կիրանց գյ.) 237
Սբ. Աստվածածին եկեղեցի (Կրզեն գյ.) 289
Սբ. Աստվածածին եկեղեցի (Ղարաչինար գյ.) 383
Սբ. Աստվածածին եկեղեցի (Մարտունաշեն գյ.) 380-383

Սբ. Աստվածածին եկեղեցի (Մելիքզադա գդ.) 100
Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Մյուռոնուտա Սբ. Աստվածածին անապատ (Մուռուտ գդ.)
Սբ. Աստվածածին եկեղեցի (Ներքին Քարհատ գդ.) 268, 271, 272
Սբ. Աստվածածին եկեղեցի - տե՛ս Սբ. Գևորգ եկեղեցի (Նուկզար գդ.)
Սբ. Աստվածածին եկեղեցի (Շատախ գդ.) 250
Սբ. Աստվածածին եկեղեցի (Չարդախլու գդ.) 515, 516
Սբ. Աստվածածին եկեղեցի (Չարեք վանք) 108, 109
Սբ. Աստվածածին եկեղեցի (Ջագիր գդ.) 520, 524
Սբ. Աստվածածին եկեղեցի (Սարով գդ.) 433
Սբ. Աստվածածին եկեղեցի (Սուլթանեցիք) 100
Սբ. Աստվածածին եկեղեցի (Փիբ գդ.) 264, 265
Սբ. Աստվածածին եկեղեցի (Քյուրակ-Բասան) 419
Սբ. Աստվածածին մատուռ (Միրզիկ գդ.) 398
Սբ. Աստվածածին ուխտատեղի (Գանձակ ք.) 47
Սբ. Գաբրիել եկեղեցի (Բրաջուր գդ.) 321
Սբ. Գաբրիել եկեղեցի (Միրզիկ գդ.) 396, 397, 398
Սբ. Գրիգոր եկեղեցի (Դվին) 67
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բանանց գդ.) 100, 159, 171
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բարսում գդ.) 470-472, 474
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Գանձակ) 38, 39, 43, 46, 47, 51, 53-59, 231, 472
Սբ. Գևորգ եկեղեցի - տե՛ս Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բարսում գդ.)
Սբ. Գևորգ եկեղեցի (Գանձակ ք.) 36, 47, 52, 53, 59
Սբ. Գևորգ եկեղեցի (Գետաբեկ գդ.) 72, 75, 76
Սբ. Գևորգ եկեղեցի (Հուսկան նահատակ վանք) 489, 490
Սբ. Գևորգ եկեղեցի (Ղարադաղլու գդ.) 428, *429*
Սբ. Գևորգ եկեղեցի (Նուկզար գդ.) 500
Սբ. Գևորգ եկեղեցի - տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցի (Ջագիր գդ.)
Սբ. Գևորգյան դպրոց (Փիբ գդ.) 262, *263,* 398
Սբ. Էջմիածին 37, 39, 40, 58, 97, 117
Սբ. Թարգմանչաց եկեղեցի (Վերին Քարհատ գդ.) 275
Սբ. Թովմա եկեղեցի (Մելիքզադա գդ.) 100
Սբ. Խորան (Մեծ Ղարամուրատ գդ.) 91
Սբ. Կիրակի մատուռ 443
Սբ. Կիրակոս մատուռ (Մարտունաշեն գդ.) 383
Սբ. Կիրակոս ուխտատեղի (Գանձակ ք.) 47, 59
Սբ. Հակոբ եկեղեցի - տե՛ս Սբ. Հովհաննես եկեղեցի (Ազատ գդ.)
Սբ. Հակոբ եկեղեցի - տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցի (Գառնակեր գդ.)
Սբ. Հակոբ եկեղեցի - տե՛ս Սբ. Հովհաննես եկեղեցի (Հարցհանգիստ գդ.)
Սբ. Հակոբ եկեղեցի (Ոսկանապատ գդ.) 406, 409, 413-415, 417
Սբ. Հակոբ եկեղեցի (Փիբ գդ.) 268, 271
Սբ. Հակոբ վանք (Երուսաղեմ) 54
Սբ. Հովհաննես մատուռ (Աբլահ գդ.) 547
Սբ. Հովհաննես եկեղեցի (Ազատ գդ.) 312, 314, 316
Սբ. Հովհաննես եկեղեցի (Արծվաշեն գդ.) 534
Սբ. Հովհաննես եկեղեցի (Գանձակ ք.) 13, 31, 35, 38, 39, 43-45, 47-51, 53, 55, 57, 59, 231, 364, 403, 468
Սբ. Հովհաննես եկեղեցի (Կրզեն գդ.) 289, 290
Սբ. Հովհաննես եկեղեցի (Հաջիշեն գդ.) 375, 376
Սբ. Հովհաննես եկեղեցի (Հարցհանգիստ գդ.) 244, 245
Սբ. Հովհաննես եկեղեցի (Հին Բարսում) 475
Սբ. Հովհաննես եկեղեցի (Փառիսոս) 126
Սբ. Հովհաննես եկեղեցի (Փիբ գդ.) 265
Սբ. Հռիփսիմե եկեղեցի (Բարսում գդ.) 473
Սբ. Ղազար գերեզմանոց (Աղաջ-Ղալա գդ.) 282
Սուրբ Մալազնաբերդ - տե՛ս Մածնաբերդ
Սբ. Մինաս եկեղեցի (Աբլահ գդ.) 305-308, 547
Սբ. Մինաս եկեղեցի (Արծվաշեն գդ.) 533, 534
Սբ. Մինաս մատուռ (Բարսում գդ.) 473
Սբ. Յուղիտա ուխտատեղի (Գանձակ ք.) 47, 59
Սբ. Նահատակ եկեղեցի - տե՛ս Ավագ Սբ. Նշան եկեղեցի (Գետաշեն գդ.)
Սբ. Նահատակ ուխտատեղի-մատուռ (Ղարադաղլու գդ.) 429
Սբ. Նունեի անվան ուսումնարան (Գանձակ ք.) 47
Սբ. Ոսկյանց անապատ - տե՛ս Կուսանաց Սբ. Աստվածածին անապատ (Ոսկանապատ գդ.)
Սբ. Պանդալիոն մատուռ (Ազատ գդ.) 315, 316
Սբ. Սահակ-Մեսրոպ եկեղեցի (Խաչակապի Թարգմանչաց վանք) 218, 219
Սբ. Սահակյան դպրոց (Չարդախլու գդ.) 514
Սբ. Սարգիս եկեղեցի (Կիրանց գդ.) - տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցի (Կիրանց գդ.)
Սբ. Սարգիս եկեղեցի (Ոսկանապատ գդ.) 416, 417
Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղի (Գանձակ ք.) 14, 36, 37, 47, 56, 57, 59
Սբ. Սարգիս վանք (Գետաբեկ գդ.) 76, 78, 486
Սբ. Սարգիս եկեղեցի (Մածնաբերդի վանք) 248, *249*
Սբ. Ստեփանոս եկեղեցի (Խանձք գդ.) 414(ծ.)
Սբ. Ստեփանոս եկեղեցի («Տանձուտ» գյուղատեղի) 101, *102*
Սբ. Ստեփանոս եկեղեցի (Համասաբակ գդ.) 256
Սբ. Ստեփանոս եկեղեցի (Փիբ գդ.) 265
Սբ. Ստեփանոս եկեղեցի - տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցի (Ներքին Քարհատ գդ.)
Սբ. Ստեփանոսյան դպրոց (Քարհատ գդ.) 271
Սբ. Ստեփանոս Նախավկա 50
Սբ. Վարդան եկեղեցի (Ղազախ ք.) 448, 449
Սբ. Վարդանանց եկեղեցի - տե՛ս Սբ. Սարգիս եկեղեցի
Սբ. Վարդանանց զորավարաց եկեղեցի (Մածնաբերդի վանք) 248, 249
Սբ. Փեփրոնյա եկեղեցի (Փիբ գդ.) 268
Սբ. Օվասափ մատուռ (Միրզիկ գդ.) 398
Սուրջիե 475
Սևանի անապատ 198
Սևանի ավազան 138, 149
Սևանի լ-շղթա 9, 484, 546
Սև ծով 216
«Սևջուր» աղբյուր (Արծվաշեն գդ.) 530
Սևջուր գետ 9, 426, 433


## Վ


Վալախիա 18

Վալիջան սար (Աղդերե գղ.) 283
Վահան 530, 532
Վահանավանք 12
Վաղարշապատ 16(ծ.)
Վայիթլի 301
Վան 532
Վանաձոր 406, 532
Վանեվանք 227
«Վանքի Ջորի Անանուն» վանք (Բարսում գղ.) 474
Վարդանապատ - տե՛ս Սլավյանկա
Վարդանաշատ 68, 119
Վարդաշեն - տե՛ս Միրզիկ
Վարդենիս 230
Վարդենիսի ենթաշրջան 65, 137, 146, 366, 465, 520
Վարշավա 20
Վելիամինովյան շրջան 216
Վերի կամ Շահբազի աղբյուր (Բադա գղ.) 466
Վերին Ազա 334
Վերին Աղդան 461
Վերին Ջակամ գավառ 81, 92, 96, 100, 101, 110, 278
Վերին թաղ (Արծվաշեն գղ.) 530
Վերին թաղ (Գետիշեն գղ.) 206
Վերին թաղ (Հաջիշեն գղ.) 374, 375
Վերին Հաջիքենդ 374
Վերին Ճաքարակ 531
Վերին Ղլաշեն բլուր (Շահումյան գղ.) 255
Վերին Ղոթյուլ 254, 468
Վերին Ղրաղ-Քյասաման - տե՛ս Ղրաղ-Քյասաման
Վերիշեն 543
Վերին Սաբղուլ 113
Վերին Քարհատ 269, 270, 274, 275
Վիրք - տե՛ս Վրաստան
Վյուրտեմբերգ 18, 363
Վոլգա գետ 20
Վորոշիլովկա - տե՛ս Աշըղլի
Վրաստան 12, 18, 31, 37, 51, 57, 245, 277, 286, 303, 363, 378, 379, 474, 506, 507, 519, 526, 527
Վրաստանի թեմ 218, 289
Վրաստանի և Իմերեթի Հայոց կոնսիստորիա *54,* 117, 219, 343, 376, 463

## Ր

Ռուսկան նահատակ ուխտատեղի (Փիբ) 268

## Տ

Տաթևի Մեծ Անապատ 103
Տաճկաստան 20
«Տամբլուտ» գյուղատեղի (Միրզիկ) 398
Տամբովի նահանգ 99
«Տանձուտ» (Ջանախչի) գյուղատեղի 18, 80, 128
«Տանձուտ» (Նովո-Սպասովկա գյուղի մոտ) գյուղատեղի 101
Տաշիրի շրջան 543
Տավուշ 97, 232, 443, 444, 506
Տավուշ բերդ 506
Տավուշ գետ 9, 286, 300, 484
Տավուշ ձոր *484*
Տավուշի մարզ 65, 277, 446, 451, 530
Տատի սեռ 145
Տարսոն 244
Տափ 433
Տափ-Ղարադոյունլու 433
Տեր-Ավետիքանց ջրաղաց 158
Տեր-Մկրտչյանների թաղ (Բանանց գղ.) 141
«Տերի» կամ «Տերունց» (Տերտերի) կամուրջ 344-345
Տերունական 436, 443, 444, 506
Տերունց թաղ (Բանանց) 141
Տիգրանակերտ - տե՛ս Տկռուկ
Տիկ-Խուլուփ 525
Տկռուկ (Բարսում գղ.) 474
Տղվանա քարի տակի մատուռ (Բանանց գղ.) 198
Տոնղուզ գյոլ 115
Տոնունցթաղ (Բանանց գղ.) 141
Տուխաչևսկ - տե՛ս Կամո
Տուս-Քուստակ 9
Տփխիս - տե՛ս Թիֆլիս
Տպխիս - տե՛ս Թիֆլիս
Տուս - տե՛ս Տավուշ

## Ց

Ցագիա երի 115
Ցամաք առու ձոր 485
Ցիրալովկա - տե՛ս Սպիտակշեն
Ցից քար 173(ծ.)
Ցից քար (Գառնակեր գղ.) 485
«Ցից քար» (Արծվաշեն գղ.) 536
«Ցից քարի» աղբյուր (Արծվաշեն գղ.) 530
Ցից քարի թաղ (Արծվաշեն գղ.) 530
Ցնծա 334, 480
Ցնծահալ 256, 257

## ՈՒ

Ուղտի եղցի - տե՛ս Օխտը եղցի
Ուղտի քար ժայռ (Շահումյան գղ.) 255
Ուշի 440
Ուչիլիշչնի փ. 39
«Ուչ-թափա» կալվածք 52
Ուչքեփե 419
Ուռհա 24
Ուրկմազլի 452
Ուրմիա լիճ 17
Ուտի-Առանձնակ գավառ - տե՛ս Պարտավ
Ուտիք 9, 123, 505, 506
Ուտյաց նահանգ - տե՛ս Ուտիք

## Փ

Փաղիլի 419
Փալեբլի 302
«Փալխ-քյանդ» թաղ (Արծվաշեն գղ.) 530
Փալչխլիբուլաղ 113
Փալտոու սար - 87
Փամբակ 457
Փայտակարան 474
Փանահլար 324, 419
Փաշա-թափա բլուր 318
Փառակերտ - տե՛ս Փարագյուղ
Փառիսոս 10, 19, 70, 123, 124, 125, 127, 128
Փառիսոս բերդ 70(ծ.), 120, 127, 530(ծ.), 543
Փառիսոս գավառ 25, 123, 205
Փառիսոս գետ 67, 79, 102, 123, 126, 127
Փառիսոսի թագավորություն 127
Փառիսոսի Սբ. Ստեփանոսի վանք - տե՛ս Փառիսոսի վանք
Փառիսոսի վանք 128, 129, 130
Փառնես գավառ - տե՛ս Փառիսոս գավառ
Փարագյուղ 530, 536
Փարաքենդ 71, 130
Փարաքյանդ - տե՛ս Փարակերտ
Փիբ 75, 113, 117, *189,* 216, 233, 255, 257, 261(ծ.), 262, *263,* 264-*267,* 268, 321, 333, 398, 461, 472, 497
Փիբ (Զագլիկ) գետ 266
Փիրիլի 452
«Փիրին-գըլջա» տեղամաս (Թափան) 211
Փիրնազար (Այգելու սուրբ) 80
«Փլաքի սեռ» տեղամաս, գագաթ (Բանանց գղ.) 200
Փլաձոր լեռնաճյուղ 473
Փխակաց աղբյուր (Ճահիճաղբյուր) 528
Փոյլու 452
Փնդխլու - տե՛ս Նովո-Սարատովկա
Փնտխլու - տե՛ս Նովո-Սարատովկա
Փոլադլու 130
Փողոցք (Բանանց գղ.) 141, 546
«Փողոցքի» աղբյուր 192
Փոքր Բարսում 475
Փոքր Ղարամուրատ 85, 130, 132
Փոքր Վեդի 288

## Ք

Քամալ գղ. 97

Քամանդար 467, 525, 526, 527
Քանաքեռ 498, 510, 532
Քաշ-Ավգունց թաղ - տե՛ս Բալունց թաղ
Քավզին բերդ - տե՛ս Գավազան բերդ
Քաս գավառ 205
Քարահատի խաչ ուխտատեղի (Փիր գղ.) 268
Քարատակ գյուղատեղի (Գետիշեն գղ.) 80, 207, 468
Քարթլ-Կախեթ 12
Քարթման - տե՛ս Գարդման
Քարխանի վանք - տե՛ս Քարհանի վանք
Քարհանի Աստվածամոր վանք - տե՛ս Քարհանի վանք
Քարհանի վանք 115, 198, 398, 401
Քարհատ 20, 138, 140, 157, 216, 269, 270
Քարվաճառի շրջան 16, 18, 137, 303, 547
Քարվանսարա - տե՛ս Իջևան
Քեյխալաֆլի 453
Քեմերլի 453
«Քեռփի Գեոզ» պահակակետ (Աղբաշլար գղ.) 282
Քեշիշքյանդ 459
Քեշիշ օղլի (Քամանդար) 526(ծ.), 528
Քեչասկեր 453
Քեչի Բարսում - տե՛ս Փոքր Բարսում
Քեչիլի - տե՛ս Պլանքենդ
Քեսաման 135
Քերիմլի 79
Քիլիսա դարասի վանք (Չորան-Սղնախ գղ.) 301
Քիլիսաքյանդ թ-մաս (Գանձակ ք.) 19, 34, 35, 36, 37, 38, 47, 63
Քիլսյալի 135
Քիլսալի (Եկեղեցաշեն) 536
Քիքունց (Չղալունց) աղբյուր (Բանանց գղ.) 192
Քիքունց թաղ (Բանանց) 141
Քիքունց Մակիի (Գրիգորյան Մկրտիչ) ջրաղաց 159
Քյազիմլի 302
Քյալաք 433
Քյոլլու (Դաշկեսանի շրջ.) 276
Քյոլաման 135
Քյոխանաքի 302
Քյոհնաղալա 87, 302
Քյոհնաղշլաղ 453
Քյոնյուլլյու 528
«Քյորողլու» քարայր 100
Քյուլքափա- տե՛ս Մոխրաբլուր
Քյուրակ - տե՛ս Կուրակ
Քյուրակ-Բասան 419
Քյուրքուրթ գոմեր 113
Քյուրյուրտի սար 115
Քոզին բերդ - տե՛ս Գավազան բերդ
Քոլագիր - տե՛ս Քոլաիր
Քոլաիր 453
Քոլայիր 419
Քոշկ 256, 318,
Քոշկ (Խանլարի շրջ.) 419, 420
«Քոշկի մատուռ» 420
Քոչղերե 302
Քոչիր Բարսում - տե՛ս Փոքր Բարսում
Քոսալար 453
«Քոստ խաչ» խաչքար 475
«Քչաղբյուրի» կամուրջ (Խաչակապ գղ.) 217
«Քսապեր» եկեղեցի (Բարսում գղ.) 473
Քուշխարա 26
Քուռ գետ - տե՛ս Կուր գետ
Քուստ-ի-Փառնես 9
Քուրաքչայ 410
Քուրդունց ձոր 157

## Օ

«Օզան» մզկիթ (Գանձակ ք.) 63
Օխչուլու 495
Օխտը եղցի (Շահումյան գղ.) 255
«Օխտնաղբեր» ուխտատեղի (Խաչակապ գղ.) 217
Օձուն 219
Օղրի-եօլի (Գետաշեն գղ.) 322
Օմարաղալի 453
Օմսկ 288
«Օշեփ քար» (Գետաշեն գղ.) 355
Օջախվերդի 113
Օջաղ ղուլի 88, 527
Օսգյան 302
Օրթա-Սալահլի 453
Օրհնելի սեռ 140
Օր. Վարդուհի Տեր-Սահակյանի կար ու ձևի ձեռագործի ուսումնարան (Գանձակ ք.) 47
Օրջոնիկիձե (Մրեջուր գղ.) 135, 136
Օրջոնիկիձե (Շամխորի շրջ.) 528
Օրուզ դարա լեռ 87

## Ֆ

Ֆախրալի 426, 434
Ֆարահլի 454
Ֆիզուլի 420
Ֆիզուլի (Շամխորի շրջ.) 528
Ֆրեզկկա 71, 136

## ԳՈՒՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ալիարակ լեռ (Կեփաս, Քյափազ), լուս. Հ. Բաղալյանի:
2. Մարալ լիճ (Մարալ գյոլ), լուս. Հ. Բաղալյանի:
3. Ալիարակ լիճ (Գյոյ գյոլ), լուս. Հ. Բաղալյանի:
4. Բանանցի «Շինու հանդ» տեղամասը, լուս. հեղինակի:
5. Բանանց գյուղի տեսքը հարավ-արևելքից, լուս. հեղինակի:
6. Բանանց. հատված, լուս. հեղինակի:
7-11. Բանանց. հատվածներ, լուս. Ա. Ղուլյանի:
12. Բանանց. հատված, լուս. Հ. Զաքարյանի:
13. Բանանց, գյուղամիջի զույգ եկեղեցիներին հարող թաղամասը հյուսիս-արևելքից, լուս. Հ. Բաղալյանի:
14. Բանանց. բնակելի տուն, լուս. Ա. Ղուլյանի:
15. Բանանց. Սաքեթ մայրիկը Չալումանց օջախում, լուս. հեղինակի:
16. Բանանց, դարպաս, լուս. Հ. Բաղալյանի:
17. Բանանց, բակ, լուս. հեղինակի:
18. Բանանց, երջանիկ մանկությունը հարազատ գյուղում, լուս. Հ. Բաղալյանի:
19. Բանանց, բնակելի շենքեր, լուս. Հ. Բաղալյանի:
20. Բանանց, հատված, լուս. Հ. Զաքարյանի:
21. Բանանց, կարպետ, լուս. Հ. Զաքարյանի:
22. Բանանց, Թարգմանչաց անապատ, տեսքն արևելքից, լուս. հեղինակի:
23. Բանանց, Թարգմանչաց անապատ, ընդհանուր տեսքը հարավ-արևելքից, Ա. Ղուլյանի:
24. Փիբ, հատված, լուս. Հ. Բաղալյանի:
25. Փիբ, բնակելի տուն, լուս. Հ. Բաղալյանի:
26. Փիբ, Սբ. Ստեփանոս եկեղեցի, տեսքը հարավ-արևելքից, լուս. Հ. Բաղալյանի:
27. Խաչակապ, Թարգմանչաց վանք, տեսքը հյուսիս-արևելքից, լուս. Հ. Բաղալյանի:
28. Խաչակապ, Թարգմանչաց վանք, տեսքը արևմուտքից, լուս. Հ. Զաքարյանի:
29. Հարցիանգիստ (Չովդառ), Մածնաբերդի բերդասարը, լուս. Ռ. Աբգարյանի:
30. Հարցիանգիստ (Չովդառ), Մածնաբերդի վանքը, լուս. Ռ. Աբգարյանի:
31. Խաչակապ, «Օխտնաղբեր» խաչքարերը, լուս. Հ. Զաքարյանի:
32. Խաչակապ, Թարգմանչաց վանք, տեսքը հյուսիսից, լուս. Հ. Զաքարյանի:
33. Դաստափոր, եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք, լուս. հեղինակի:
34. Քարհատ Ներքին, խաչքար գյուղամիջում (1292 թ.), լուս. հեղինակի:
35. Արծվաշեն, հատված, լուս. Հ. Զաքարյանի:
36-37. Արծվաշեն, խաչքարեր, լուս. Հ. Զաքարյանի:
38. Արծվաշեն, տեսարան գյուղ տանող ճանապարհից, լուս. Հ. Զաքարյանի:
39-40. Գետաբեկ, Սբ. Սարգիս եկեղեցի, տեսքը հյուսիս-արևմուտքից (1980 և 1982 թթ.), լուս. հեղինակի:
41 Փառիսոս գետի հովիտը նույնանուն քաղաքատեղիի մոտ, լուս. Հ. Զաքարյանի:
42-43. Փառիսոսի բերդը, լուս. Հ. Զաքարյանի:
44. Մեծ Ղարամուրատ, Հարանց վանք, լուս. Հ. Զաքարյանի:
45. Մեծ Ղարամուրատ, խաչքար (1624 թ.) Հարանց վանքում, լուս. հեղինակի:
46. Մեծ Ղարամուրատ, Հարանց վանք, տեսքը հարավ-արևելքից, լուս. Հ. Զաքարյանի:
47-48. Մեծ Ղարամուրատ, Հարանց վանք, լուս. Հ. Զաքարյանի:
49. Գառնակեր, հատված, լուս. հեղինակի:
50. Մարտունի, ռուսական եկեղեցին, լուս. հեղինակի:
51. Գանձակ, Սբ. Հովհաննես եկեղեցի, լուս. հեղինակի:
52-54. Չարդախլու, Սբ. Աստվածածին եկեղեցի, լուս. Հ. Զաքարյանի:
55. Նուկզար, Սբ. Ամենափրկիչ վանք, տեսքն արևելքից, լուս. հեղինակի:
56. Նուկզար, Սբ. Ամենափրկիչ վանք, գավթի արևելյան ճակատից բացված լուսամուտը, լուս. հեղինակի:

57-58. Գառնակեր, Հրեշտակապետաց վանքի եկեղեցին հարավ-արևմուտքից և որմնանկարի մնացորդ խորանի մեջ, լուս. հեղինակի:
59-65. Գետաշեն, հատվածներ, լուս. հեղինակի:
66. Գետաշենցի դպրոցականներ, լուս. Հ. Սանասարյանի:
67. Գետաշեն, բնակելի տուն, լուս. հեղինակի:
68. Գետաշեն, Սբ Աստվածածին եկեղեցուն և Տեր-Մեսրոպ քահանայի տանը հարող թաղամասը, լուս. հեղինակի:
69. Գետաշեն, գետափնյա փողոց, լուս. հեղինակի:
70. Գետաշեն, երջանիկ մանկությունը հարազատ գյուղում, լուս. Հ. Բաղալյանի:
71. Գետաշեն, Խաչատուր Գաբրիելյանի տունը, լուս. հեղինակի:
72. Գետաշեն, Միքայել հարյուրապետի տունը, լուս. հեղինակի:
73-74. Գետաշեն, գյուղի կենտրոնական մասերը, լուս. հեղինակի:
75-76. Գետաշեն, Տեր-Մեսրոպ քահանայի տունը (1889 թ.), լուս. հեղինակի:
77-78. Գետաշեն, Ավագ Սբ. Նշան եկեղեցի, տեսքը հարավ-արևելքից և արևմուտքից, լուս. հեղինակի:
79-81. Գետաշեն, խաչքարերով գերեզմանոցը, լուս. հեղինակի:
82. Գետաշեն, Մելիք-Մնացականյանների տունը, լուս. հեղինակի:
83-84. Գետաշեն, հատվածներ, լուս. Հ. Բաղալյանի:
85-86. Կամո (Բախշիկ), խաչքարեր, լուս. հեղինակի:
87. Գետաշեն, Մրցունիս գյուղատեղիի եկեղեցին, տեսքը հարավ-արևմուտքից, լուս. հեղինակի:
88. Աբլահ, Սբ. Մինաս եկեղեցի, տեսքն արևմուտքից, լուս. հեղինակի:
89. Գետաշեն, Եղնասարի վանքի եկեղեցին, տեսքը հարավ-արևելքից, լուս. հեղինակի:
90-91. Գետաշեն, գերեզմանատան խաչքարերից, լուս. հեղինակի:
92-93. Կամո, Բախշիկ գյուղատեղիի եկեղեցին, տեսքը հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից, լուս. հեղինակի:
94. Ազատ, Պանդասարի եկեղեցին, տեսքը հյուսիս-արևելքից, լուս. հեղինակի:
95. Մուռուտ, բնակելի տուն, լուս. հեղինակի:
96. Մուռուտ, Սբ. Աստվածածին եկեղեցին արևմուտքից, լուս. հեղինակի:
97. Ոսկանապատ (Զուռնաբաղ), գյուղի տեսքը գետափից, լուս. Հ. Զաքարյանի:
98. Ոսկանապատ (Զուռնաբաղ), խաչքարեր Սբ. Հակոբ եկեղեցու արևմտյան ճակատում, լուս. Հ. Զաքարյանի:
99. Ոսկանապատ (Զուռնաբաղ), Ոսկանապատ (Գանձակ) գետի հովիտը գյուղի մոտ, լուս. Հ. Զաքարյանի:
100. Ոսկանապատ (Զուռնաբաղ), գյուղի տեսքը հարավ-արևելքից, լուս. Հ. Զաքարյանի:
101. Ազատ, գյուղի տեսքն հարավ-արևմուտքից, լուս. Հ. Բաղալյանի:
102. Ազատ, Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի, տեսքն արևմուտքից, լուս. հեղինակի:
103. Ազատ, Սուլուք գյուղատեղին և Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցին, լուս. հեղինակի:
104. Ազատ, Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի, տեսքը հարավից, լուս. հեղինակի:
105. Ազատ, Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի, տեսքը հարավ-արևելքից, լուս. հեղինակի:
106. Ազատ, Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցի, ներքին տեսքը դեպի արևմուտք, լուս. հեղինակի:
107. Մարտունաշեն, Երի վանք, տեսքը հարավից, լուս. Հ. Զաքարյանի:
108. Մարտունաշեն, Միջի վանք, տեսքը հարավից, լուս. հեղինակի:
109. Մարտունաշեն, Կոսակալ, տեսքը հարավից, լուս. հեղինակի:
110. Մարտունաշեն, գյուղի տեսքը արևմուտքից, լուս. հեղինակի:
111. Մարտունաշեն, Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, լուս. հեղինակի:
112. Մարտունաշեն, Սբ. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը, լուս. հեղինակի:
113. Միրզիկ, գյուղի տեսքը հարավ-արևելքից, լուս. հեղինակի:
114. Մարտունաշեն, գերեզմանոց, լուս. հեղինակի:
115. Մարտունաշեն, խաչքար գյուղի հարավային եզրին, լուս. հեղինակի:
116. Մարտունաշեն, Ջորի խաչ, լուս. Հ. Զաքարյանի:

## ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

**Շնորհակալ ենք բոլոր այն անհատներին և կազմակերպություններին, ովքեր նախապես բաժանորդագրվելով սույն աշխատությանը դրանով իսկ աջակից են եղել գրքի լույս ընծայման գործին:**

Աբգարյան Սոսե (Երևան) ....... 1 հատ
Աբրահամյան Դավիթ (Երևան) ....... 1
«ԱԳՆ-ԼՂՀ» (Ստեփանակերտ) ....... 1
Ազարյան Նաիրա (Երևան) ....... 1
Աղաջանյան Կարինե (Երևան) ....... 1
Աղասարգսյան Հրայր (Բեյրութ) ....... 1
Այվազյան Նաիրի (Երևան) ....... 1
Այվազյան Ռեմոն (Բեյրութ) ....... 1
Ասատրյան Միքայել (Երևան) ....... 1
Ավագյան Մարիամ (Երևան) ....... 1
Ավագյան Վիգեն (Բեյրութ) ....... 1
Ավետիսյան Գոքո, Հարութ (Բեյրութ) ....... 1
Արթինյան Թալին (Բեյրութ) ....... 1
Արիան Սարգիս (Բեյրութ) ....... 1
Արմենյան Ասգեն (Երևան) ....... 1
Արմենյան Սևակ (Բեյրութ) ....... 1
«Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան» (Ստեփանակերտ) ....... 1
Արևյան Արմեն (Բեյրութ) ....... 1
Բալաբանյան Ալբեր (Բեյրութ) ....... 1
Բաստրմաջյան Սևակ (Բեյրութ) ....... 1
Բեքմեզյան Հովհաննես (Երևան) ....... 2
Բիլալյան Համբիկ (Բեյրութ) ....... 1
Բոյաջյան Զավեն (Բեյրութ) ....... 1
Գայֆայան Սաքո (Բեյրութ) ....... 1
Գարագաշյան-Այնթեբլյան Վիկի (Այնճար) ....... 1
Գյոզուբեյուկյան Հովիկ (Բեյրութ) ....... 1
Գևորգյան Հրայր (Բեյրութ) ....... 1
Գրիգորյան Վալերի (Երևան) ....... 3
Դաղելյան Ներսես (Բեյրութ) ....... 1
Դավթյան Էդիթ (Երևան) ....... 1
Դավթյան Լուսինե (Երևան) ....... 1
Դեմիրճյան Մարտիկ (Բեյրութ) ....... 1
Դեմիրյան Րաֆֆի (Այնճար) ....... 1
Եսայան Եսայի (Բեյրութ) ....... 1
«Զավարյան Ուսանողական Միություն» (Բեյրութ) ....... 1
Զարմենյան Սեզար (Բեյրութ) ....... 1
Զոհրաբյան Բագրատ (Բեյրութ) ....... 1
Թագվորյան Կարո (Բեյրութ) ....... 1
Թամանյան Ալեքսանդր (Երևան) ....... 1
Թամանյան Արա (Երևան) ....... 1
Թաշճյան Լորի (Բեյրութ) ....... 1
Թովմասյան Արամ (Բեյրութ) ....... 1
Թորոս Սանահին (Բեյրութ) ....... 1
Լոզոյան Հակոբ (Բեյրութ) ....... 1
Խեդեշյան Սեդա (Բեյրութ) ....... 1
Խուդավերդյան Շաղիկ (Բեյրութ) ....... 1
Կանդահարյան Սանան (Բեյրութ) ....... 1
Կարնեշյան Շողեր (Բեյրութ) ....... 1
Հակոբյան Ալլա (Երևան) ....... 2
«Համազգայինի Մելանգթոն և Հայկ ճեմարան» (Բեյրութ) ....... 1
Հանդյան Հակոբ (Բեյրութ) ....... 1
Հարությունյան Սուսաննա (Երևան) ....... 1
Հարությունյան Վողոդյա ....... 1
Ղազանչյան Ալիս (Բեյրութ) ....... 1
Ղազարյան Տիրան (Երևան) ....... 1
Ղարագյոզյան Պիտեր (Բեյրութ) ....... 1
Ղարաքեշիշյան Պավել (Երևան) ....... 1
Ղուլյան Աշոտ (Ստեփանակերտ) ....... 1
Մայիլյան Մասիս (Ստեփանակերտ) ....... 1
Մանուկյան Բիանկա (ԱՄՆ) ....... 1
Մանուկյան Գայանե (Երևան) ....... 1
Մանուկյան Հարություն (Երևան) ....... 1
Մանուկյան Սևանա (Երևան) ....... 1
«Մաշտոցի անվան հանրապետական գրադարան» (Ստեփանակերտ) ....... 2
«ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» հիմնադրամ (Երևան) ....... 5
Մեղրյան Պետրոս (Երևան) ....... 1
Մինասյան Հայկ (Երևան) ....... 1
Մկրտչյան Շաղիկ (Բեյրութ) ....... 1
«Մշակույթի, կրթության և սպորտի նախարարություն» (Ստեփանակերտ) ....... 2
Մոմջյան Արմեն (Երևան) ....... 1
Մուրաշանյան Լարա (Բեյրութ) ....... 1
Մուրադյան Խաչիկ (Բեյրութ) ....... 1
Նալբանդյան Ժիրայր (Բեյրութ) ....... 1
Նուրիջանյան Իրինա (Երևան) ....... 1
Շաքարյան Սեպուհ (Բեյրութ) ....... 1
«ՇԵՆ» միություն (Երևան) ....... 10
Չանչանյան Հրայր (Այնճար) ....... 1
Չաքմակչյան Պապիկ (Բեյրութ) ....... 1
Չաքրյան Սեպուհ (Բեյրութ) ....... 1
Չորեքչյան Զարեհ (Բեյրութ) ....... 1
Պարտիզպանյան Մարիա (Բեյրութ) ....... 1
Պերճ Թորոս (Բեյրութ) ....... 1
Ջելեքյան Րաֆֆի (Բեյրութ) ....... 1
Սաղդջյան Սալբի (Երևան) ....... 1
Սապունջյան Գևորգ (Բեյրութ) ....... 1
Սարաֆյան Թամար (Բեյրութ) ....... 1
Սարաֆյան Սեդրակ (Բեյրութ) ....... 1
Սարդարյան Սևանա (Երևան) ....... 1
Սեթյան Հրայր (Բեյրութ) ....... 1
Սելիմ Արիս (Բեյրութ) ....... 1

Սիմոնյան Սեմ (Բեյրութ)....................................................1
«Ստեփանակերտի քաղաքային գրադարան» (ԼՂՀ, Ստեփանակերտ)..............................................................1
Սրապյան Տաճատ (Բեյրութ)............................................1
Սուլյան Տաթև (Երևան) ....................................................1
Սուպուրգջյան Շանթ Բեյրութ) .........................................1
«ՎԱՆԱ ՁԱՅՆ» ռադիոկայան (Բեյրութ)........................1
Վարդյան Թալին (Բեյրութ)..............................................1
Տազյան Վաչե (Բեյրութ) ..................................................1
Տասլակյան Մարալ (Բեյրութ)..........................................1
Տասլակյան քույր Թեոբիստե (Բեյրութ) ..........................1
Տեր-Գասպարյան Վարուժան (Երևան)...........................1
Տեր-Խաչատուրյան Արծիվ (Բեյրութ).............................1
Փափազյան Սիլվա (Բեյրութ)..........................................1
Փելթեքյան-Դարբինյան Շողիկ (Բեյրութ)......................1
Փոխսորսյան Արփիկ (Երևան) ........................................1
Փչակչյան Բենիամին (Բեյրութ) .....................................1
Քասունի Երվանդ (Բեյրութ)............................................1
Քելենջյան Ջեֆրի (Բեյրութ) ...........................................1
Քելեշյան Հովհաննես (Բեյրութ) .....................................1
Քեշիշյան Զաքար (Բեյրութ) ...........................................1
Քեշիշյան Սևակ (Բեյրութ) ..............................................1
Քյոշյան Ժակ (Բեյրութ) ..................................................1
Քյուրքչյան Սիլվա (Բեյրութ) ..........................................1
Ֆերմանյան Հրայր (Բեյրութ) .........................................1
Ֆոդուլյան Արա (Բեյրութ)...............................................1

## ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 298-387 ԹԹ.




## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ



# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ. ԱԶԳԱԲԱՇԽԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, 1914 Թ.




Քարտեզը կազմվել է քարտեզագրական ժամանակակից հիմքի վրա. հեղ. Ս. Կարապետյան, Երեւան, 2004

# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ԳՐՉՕՋԱԽՆԵՐԸ




# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՎԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ







| |
|---|
| 1 |
| 2 |





3

4





5

6





| 7 | 8 |
| --- | --- |
| 9 | |







| 10 | 11 |
|---|---|
| 12 | |









| 13 | |
|---|---|
| 14 | 15 |
| | 16 |











17 18 19 20 21











22 24
23 25
26







| 27 | |
|---|---|
| 28 | 29 |











| | |
|---|---|
| 30 | 31 |
| 32 | |
| 33 | 34 |









| 35 | |
|---|---|
| 36 | 37 |
| 38 | |







| 39 | 40 |
|---|---|
| 41 | |
| 42 | 43 |







| | |
|---|---|
| 44 | 45 |
| 46 | |





47

48







49

50 51









| | | |
|---|---|---|
| 52 | 53 | 54 |
| 55 | | 56 |
| 57 | 58 | |













| | |
|---|---|
| 59 | 61 |
| 60 | |
| 63 | 62 |
| | 64 |









| 65 | |
|---|---|
| 66 | 67 |
| 68 | |









| | |
|---|---|
| 69 | 70 |
| 71 | 72 |









| 73 | 75 |
| --- | --- |
| 74 | |
| 76 | |











| | |
|---|---|
| 77 | 78 |
| 79 | 80 |
| 81 | |







| | |
|---|---|
| 82 | |
| 83 | 84 |











| | |
|---|---|
| 85 | 87 |
| | 88 |
| 86 | 89 |











| 90 | 92 |
| --- | --- |
| | 93 |
| 91 | 94 |













| | |
|---|---|
| 95 | 98 |
| 96 | 99 |
| 97 | 100 |













| 101 | |
|---|---|
| 102 | 103 |
| 104 | 106 |
| 105 | |







107

108

109







110

111 112









| 113 | |
|---|---|
| 114 | 116 |
| 115 | |

# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**RAA ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱԶՄ**

ՆՅՈՒԹԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ **ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
ԽՄԲԱԳԻՐ **ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ**
ՍՐԲԱԳՐԻՉ **ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**ՊԱՐԳԵՎ ՖՐԱՆԿՅԱՆ**
**ՄԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ**

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ **13 ՄԱՅԻՍ, 2004**
ՏՊԱՔԱՆԱԿ **500**
ՏՊԱԳՐՎԱԾ Է **PHOTOGRAVURE ZAVEN & FILS** (ԲԵՅՐՈՒԹ)

ԵՐԵՎԱՆ 2004